ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

Գիրքը լույս է տեսել
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հաստատության հովանավորությամբ
Մաշտոցի անվան Մատենադարանը
երախտագիտություն է հայտնում
Հայկական բաժանմունքի տնօրեն
դոկտոր ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ՝
աջակցության համար

«MATENADARAN»

MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

LEVON KHACHIKIAN

WORKS

VOLUME III

«МАТЕНАДАРАН»

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ЛЕВОН ХАЧИКЯН

ТРУДЫ

ТОМ III

«Nairi»
YEREVAN 2008
«Наири»
ЕРЕВАН 2008

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՏՈՐ Գ

«ՆԱԻՐԻ»
ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 891.981.0 941: (479.25)
ԳՄԴ 83.3Հ+63.3 (2Հ)
Խ 288

Հատորը կազմեց՝ Շ. ԽԱՉԻԿՅԱՆ

Խմբագիր՝ Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Խաչիկյան Լ.

Խ 288 Աշխատություններ,- Հ Գ.,- Եր.: Նաիրի, 2008: Հ Գ., 2008, 1206 էջ:

Անվանի պատմաբան-աղբյուրագետ ակադ. Լևոն Խաչիկյանի «Աշխատությունների» ներկա հատորը կազմված է նախորդների (Ա, Բ) սկզբունքով և ամփոփում է «Մանր մենագրությունների» ծավալուն մի շարք՝ IV-XVIII դարերի ընդգրկումով և քաղաքական, տնտեսական, իրավական ու մշակութային պատմությունների խմբավորումով: Անխոնջ միջնադարագետը Հայաստանի պատմության խնդիրները դիտարկում էր ակադեմիական գիտության շրջանակներում՝ հարակից կազմավորումների պատմության աղբյուրների քաջ իմացությամբ:

Գիտնականի գրախոսություններն ու մեծարանքի անդրադարձումները պարտավորեցնող փաստեր են, իսկ անեկիրների բնութագրումները՝ նորօրյա գիտական ծրագիր: Հատորում ընդգրկված են նաև անտիպ աշխատություններ:

Գիրքը հասցեագրված է հայագետ-արևելագետներին և պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող լայն ընթերցողներին:

ԳՄԴ 83.3Հ+63.3 (2Հ)

ISBN 978-5-550-01522-3

© Մատենադարան, 2008



«ՔԱՌՅԱԿ ՀՄՏՈՒԹՅԱՄԲ» ՕԺՏՎԱԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ

*Չակերտված արտահայտությունը քաղել եմ պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանի խորենացիագիտական աշխատությանը Հրաչյա Աճառյանի տված գնահատությունից (Հայոց անձն. բառ., Գ, 439), ըստ որի գիտնականը «*հայկաբանի, կրոնագետի, բանասերի և պատմաբանի *քառյակ հմտությամբ հերքում է Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելը»:*

Ակադ. Լևոն Խաչիկյանի վերաբերմամբ այս բանաձևումը կիրառելիս կարելի է շեշտերի ու հմտությունների որոշ ետևառաջություն կատարել՝ պահպանելով նրանց գիտական լիարժեքությունը: Իր ուսուցչի՝ ակադ. Հ. Մանանդյանի հետևողությամբ ու հորդորով Լ. Խաչիկյանն էլ հայկաբանի պատրաստությամբ սկսեց իր գիտական գործունեությունը՝ քննության նյութ առնելով 40-ական թվականներին բնավ քաջալերանքի ու գնահատության չարժանացող խնդիրներ՝ «Արարածոց մեկնութիւն», «Յաղագս տարեմուտի», «Յաղագս բնութեան» մատենագրական երկերի բնագրական-աղբյուրագիտական ուսումնասիրությունն ու հրատարակության պատրաստումը: Իսկ թե կենաց երրորդ տասնամյակը չլրացած տարիքում հեղինակած այս անդրանիկ աշխատությունները ինչ կենսունակություն ցուցաբերեցին՝ կարելի է հավաստիանալ տասնամյակներ անց նրանց ունեցած վերահրապարակումներով ու վերարծարծումների փաստերով: Եվ հիրավի, «Արարածոց մեկնութիւնը» վերջին տարիներին երկակի հրատարակության արժանացավ առանձին և «Մատենագիրք Հայոցի» կազմում ընդարձակ տարբերակով, իսկ կարծեցյալ Զենոբի «Յաղագս բնութեան» երկի չորս ձեռագրի հիմամբ Լ. Խաչիկյանի վերակազմած բնագիրը

վերստին հրատարակվեց՝ անգլերեն թարգմանության ուղեկցությամբ ու բնագրական պարբերությունների համարակալմամբ (2000 թ.):

Նախախնամական կամեցողությամբ Լ. Խաչիկյանի ձեռքի վերջին գործը եւ հայկաբան-աղբյուրագետի պատրաստած բնագիրն էր՝ Թովմա Մեծոփեցու Պատմության գիտական անդրանիկ հրատարակության տեքստը՝ պատմիչի մատենագրական ժառանգությունը քննող ընդարձակ առաջաբանով: Փառք Տիրոջը և հանգիստ ոսկերաց Մեսրոպ արքեպ. Աշճյանի, որի հոգածությամբ այն լույս տեսավ Լ. Խաչիկյանի մահից (1982 թ.) տասնյոթ տարի անց*:

Մենք փորձեցինք ճանաչել գիտնականի չորս տասնամյակ ընդգրկող անընդմեջ աշխատանքի սկիզբն ու վերջը՝ գեթ խորագրերի թվարկումով, իսկ թե հայագիտական ինչ բեռով ու հայտնություններով են իմաստավորված նրանց միջև ընկած տարիները՝ մանավանդ ընթերցողը արդեն գիտե Լևոն Խաչիկյանի «Հայագիտական աշխատությունների» նախորդ երկու հատորների հրատարակությունից (Երևան, 1995, 1999 թթ.), XIV-XV դարերի ձեռագրական հիշատակարանների ծավալուն չորս հատորների ամենօրյա գործածության փաստից և առանձին գրքով կամ հոդվածի տեսքով եղած հրապարակումներից: Այժմ նրա սեղանին է դրվում «մանր մենագրությունների», առաջաբանների տեսքով լույս աշխարհ եկած հետազոտությունների, հրապարակումների, ամփոփումների, դիտողություն-դիտարկումների, գրախոսությունների ու ծրագրումների մի պատկառելի հատոր, որի յուրաքանչյուր էջը հագեցած է նորահայտ փաստերով ու եզրություններով, ճանապարհ հարթող ցուցումներով:

Կարծում եմ Հ. Մանանդյանի և Լ. Խաչիկյանի խորհրդածությունների ընթացքում պիտի ծնված լինի Փոքր Հայքի սոցիալական շարժումները ուսումնասիրելու անհրաժեշտության միտքը, որը կատարելապես նոր էջ էր հայագիտության պատմության մեջ՝ ժամանակի գաղափարական թելադրանքներով պայմանավորված որոշ վերապահելի տեղիներով: Բարսեղ Կեսարացու թղթերից քաղված ու Եվստաթիոս Հայի գործունեությունը բնութագրող աղբյուրների քննական վերլուծությունը հետագայում բերին

* Առեղծվածային մնաց հրատարակության 1000 օրինակ տպաքանակի պարագայում նրա չերևալը գրախանութներում և գրադարաններից շատերում:

տեղի ունեցող շարժումների սոցիալական բնույթի բացահայտմանը: «Կրոնական» կոչված շարժումների ծալքերը ճանաչող գիտնականը հետագայում մեկ անգամ եւս անդրադարձավ աղանդավորական շարժումներին՝ 12-14-րդ դարերի ընդգրկմամբ և վեր հանեց նրանց գաղափարախոսական հիմունքները: Փաստորեն Լ. Խաչիկյանը Թադ. Ավդալբեգյանից հետո էականորեն առաջ շարժեց հայագիտության այսօր էլ շատ անելիքներ ունեցող այդ բնագավառը:

Հայոց պատմության XIV-XV դարերի պարբերաշրջանը, նախորդ դարերում հանդես եկած պատմական ընդգրկուն երկերի ու ժամանակագրությունների սակավության պատճառով, կարոտ էր նոր աղբյուրների հիման կատարվող քննության: Եվ այդ ոչ դյուրին աշխատանքին հանձնառու եղավ արդեն պահանջվելիք ճանաչում ունեցող հայագետ Լևոն Խաչիկյանը: Բառացիորեն հազարավոր ձեռագրերի թերթումով նա հավաքեց հիշյալ դարերի հիշատակարանների ու հիշատակագրությունների իրար լրացնող ու ճշտող հարյուրավոր նմուշներ, վերծանեց, ժամանակագրեց ու ընդարձակ ներածություններով ի մի բերեց այդ նորագույն աղբյուրները, որոնցով զբաղվում են և դեռ պիտի զբաղվեն պատմաբան ու բանասեր հայագետների մի քանի սերունդներ: Առանց այդ նյութերի ու նրանց ներածական քննության մենք չէինք ունենա ութ հատորանոց «Հայոց պատմության» IV հատորը, որի մեծ մասի հեղինակն ու ամբողջի անփոխարինելի պատասխանատու խմբագիրը ինքը Լ. Խաչիկյանն է:

Նույն հատորի երրորդ բաժնում ներկայացված են «Մատենագրության և մշակույթի պատմություն» խորագրով ընդհանրացնող աշխատությունները: Նրանց մեկ մասը գրվել է իբրև բնագրական հրապարակումների ներածական, իբրև տեղական կամ միջազգային գիտաժողովներում կարդացված զեկուցում, գործուղումներից վերադարձող գիտնականի նկատումներ և կամ տարելիցների առիթով ասված խոսքեր: Նրանք բոլորն էլ ձեռագրական ինչ-որ նոր ատաղձ են ենթադրում և ուշադրության արժանի աղբյուրագիտական-բնագրագիտական, գրական կամ արվեստաբանական հարց շոշափում: Խղճմիտ մանավանդ ընթերցողը երբեմն նույնիսկ դժվարանում է հավատալ, թե պատմա-բանասիրական այնքան խոր ու հմուտ վերլուծություններից և դյուտերից հետո նույն գիտնականը կարող է XIV-XVIII դդ. հայոց բնագիտական մտքի պատմություն գրել և կամ Հովհ.

Տեր-Դավթյան Ջուղայեցու վարկադրամական-տնտեսական-առևտրական հաշվարկումներով այնքան խճողված հաշվետումար վերծանել-հրատարակել, Արևելքի տնտեսական պատմությանը տալով բացառիկ հարուստ մի սկզբնաղբյուր[*]*:*

Որքան էլ բազմազբաղ՝ Լ. Խաչիկյանը իրեն պարտավորված էր զգում հետևել հայագիտական նոր հրատարակություններին, ծանրութեթև անել հայագիտության աղերսվող անցուդարձերը: Պատահական չէ, որ նրա հեղինակակցությամբ լույս տեսած գրախոսականներից մեկը կրում է «Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները» խորագիրը: Մեկ ուրիշ դեպքում նա գոհունակություն է հայտնում XVII դարի խոշորագույն գործիչներից Ոսկան Երևանցու վաստակի գնահատության առիթով, բայց հանդիմանում է մենագրության հեղինակին՝ դավանական աչառության համար: Զանազան խմբագրությունների արխիվներում անտիպ մնացող՝ Լ. Խաչիկյանի գրած «կարծիքներն» ու «գրախոսականները» հարյուրների կարող են հասնել: Իմ սերնդի հայագետների գրեթե բոլոր հրապարակումները նրա ձեռքով էին անցնում՝ լրացվում, տպվում: Գիտնականը ճանաչում էր նախորդ սերունդների ստեղծած արժեքները և փորձում էր պահպանել նրանց գիտական ավանդները գործնականորեն: Ընդ որում խոսքը վերաբերում է ոչ միայն հայ գիտնականներին: Personalia *վերտառության տակ ներկայացված են այդ բնույթի հոդվածներից մի քանիսը:*

Վերջին խմբավորումը՝ «Հին ու նոր անելիքներ», մասամբ հայագիտության, մանավանդ ձեռագրագիտության անցած ուղու հիշեցում ու գնահատություն է, իսկ առավելապես՝ անելիքների ծրագրավորում:

Լ. Խաչիկյանը իրեն պարտավորված էր զգում ճանաչել հայագիտության գործող սպասավորների գիտական կարողություններն ու հնարավորությունները և ըստ այնմ մշակելիք թեմաների հանձնարարություններ կատարել: Ընթերցողը այստեղ բերված հրապարակումներում կգտնի ծրագրային բազմաթիվ նախագծումներ, նոր ժամանակների պատկերացումներով թելադրված վերանայումներ ու սրբագրություններ: Բավական է

[*] Ի դեպ՝ վերջին տարիներին այդ գործը հաջողությամբ շարունակում է գիտնականի դուստրը՝ հայագետ-տնտեսագետ Շուշանիկ Խաչիկյանը:

ծանոթանալ «Մատենադարանի Մայր ցուցակի «հին» ու «նոր» տարբերակների հարաբերակցությունը և մեր գիտական խնդիրը» քննությանը, և պարզ կդառնա, թե Հ. Տաշյանի «Ցուցակը» անվերապահորեն դասական համարող գիտնականը ինչո՞ւ և ինչպե՞ս է վերանայում, ի՞նչ է նրանից տարրում և ինչե՞ր է ավելացնում: Լ. Խաչիկյանի առաջարկած մոտեցումները ոչ միայն արդարացված ու հիմնավորված էին, այլ նաև բացառապես գիտական միևնույն սկզբունքների հետևելու թելադրությամբ կատարված[**]*:*

Գաղտնիք չէ, որ Լ. Խաչիկյանի ապրած ու տնօրինած տարիներին եկեղեցական մատենագրության խնդիրներով զբաղվելը չէր քաջալերվում, բայց և անկարելի էր անտեսել նրա ներկայությունը միջնադարյան մտածողության բոլոր դրսևորումներում: Ակադ. Լևոն Խաչիկյանը մեզանում առաջինն էր, որ Ս. Գիրք և հոգևոր մատենագրություն հրատարակելու հանձնախումբ և մատենաշար ստեղծեց՝ այն «Թարգմանական մատենագրություն» կոչելով, թեև այդ խորագիրն էլ չէր մեղմում պատեհապաշտ գաղափարականների բարկությունը:

Լևոն Խաչիկյանը ամեն ինչ կշռում ու գնահատում էր իր գիտելիքների ծով կուտակումով՝ չխնայելով ոչ իրեն և ոչ էլ դիմացինին: Հիրավի քառյակ և ավելի հմտություններով օժտված մարդ էր:

Երանելի մարդ և երանելի ուսուցչապետ:

Պրոֆ. ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

[**] Նրա օրոք պատրաստված հատորներից Ա-ն լույս տեսավ 1984, Բ-ն՝ 2004 թվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ*

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋՈԲԱՆՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XIV դարի 30-ական թվականներին մոնղոլական իլխանությունը հոգեվարքի ցնցումներ էր ապրում: Աբու-Սայիդ իլխանի մահից հետո (1335 թ. նոյեմբեր), փլուզվող կայսրության ողջ տարածքի վրա ծայր էին առել գահակալական պատերազմներ, Հայաստանը դարձել էր արյունահեղ բախումների թատերաբեմ: Հանգուցյալ խանի կտակով գահը գրավեց Չինգիզ խանից սերված Արփա խանը, որին հայ հիշատակագիրներից ոմանք «արքայուն» կամ «քայուն» վերագիր կոչումն են տալիս (մոնղոլներն այդպես էին անվանում քրիստոնյաներին)[1] և վկայում, որ նա բարյացակամ էր քրիստոնյաների նկատմամբ:

Հազիվ կես տարի էր անցել Արփայի գահակալությունից, երբ իշխանությունը գրավելու փորձ կատարեց Աբու-Սայիդի քեռի Ալի-Փադիշահը, որն Օյրաթ մոնղոլական ցեղի առաջնորդն էր: Լավ սպառազինված բանակով նա դուրս եկավ Բաղդադից, բախվեց Արփա խանի զորքերին, պարտության մատնեց ու սպանեց նրան: Շատերի աչքում թագավոր երևացող այս նոր բռնապետն աչքի ընկավ քրիստոնյաների նկատմամբ ծավալած հալածանքներով: «Յարոյց բազում հալածանս ի վերայ քրիստոնէից, և

---

* Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, 1972, էջ 15-80:

[1] Н. Я. Марр, Аркаун (монгольское название христиан), СПБ., 1905.

եկեղեցիսն քակեաց, և զխաչերն խորտակեաց», - գրում է նրա մասին Թումա Արծիշեցի գրիչը[2]: «Եւ արար հրաման քակել զեկեղեցիս և քակեցին ի բազում տեղիս՝ ի Մօսլայ մինչ ի Խլաթ և ի Սալամաստ», - լրացնում է նրան անանուն մի ժամանակագիր[3]:

Կարճատև է լինում նաև Ալի-Փադիշահի իշխանությունը. նրա հաղթանակից ընդամենը 5 ամիս հետո պայքարի հրապարակ են իջնում նոր ուժեր՝ Ջելաիրյան ցեղախմբի առաջնորդ Հասան-Բուզուրգը (բուզուրգ նշանակում է մեծ) և Խաջե Թուղայ (նաև՝ Հաջի Թաղա) ավագանին: Հեր քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում սպանվում է Ալի-Փադիշահը և Հասան-Բուզուրգը խան է հռչակում Հուլավուի սերնդից Մուհամմեդ անունով մի մանուկի[4]:

1335-1336 թթ. տեղի ունեցած գահակալական այս կռիվների հետևանքով, ինչպես տեսանք, մեկը մյուսին հաջորդեցին մի շարք տիրակալներ, որոնք կամազուրկ գրածոներ էին իշխանության ձգտող քոչվոր ցեղապետերի ձեռքին:

Ջելաիրյան Հասան-Բուզուրգի ու նրա կամակատար Մուհամմեդ խանի հաղթանակից հազիվ մեկ տարի էր անցել, երբ կրկին քաղաքական պայքարի հրապարակ իջան Չոբանյանները: Մոնղոլական այս գերդաստանը իլխանության կյանքում կարևոր դեր ստանձնեց Ղազան խանի ժամանակ, երբ 1295 թվականին ամիր Չոբանը դարձավ նրա կուսակիցներից մեկը, երբ քիչ հետո՝ Օլջայթու խանի ժամանակ, գրավեց գլխավոր զորահրամանատարի պաշտոնը: Մանուկ հասակում խան հռչակված Աբու-Սայիդի իշխանության առաջին տարիներին պետության ղեկը փաստորեն գտնվում էր ինքնիշխան ամիր Չոբանի ձեռքին, որն ամենաբարձր պաշտոններն ու ամենաբարեբեր վիլայեթների կառավարչությունը հանձ-

[2] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 281 (այսուհետև հիշատակարանների սույն ժողովածուն վկայակոչելու ենք «ԺԴ դարի հիշատակարաններ», իսկ հաջորդ հատորը՝ «ԺԵ դարի հիշատակարաններ», համառոտությամբ նշելով նաև վերջինիս Ա, Բ, Գ հատորը):

[3] Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 158-159 [այսուհետև՝ Սամուել (շարունակող)]:

[4] Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեսրոպ վրդ. Քեչիշյան, միաբան Զմմառի, Վիեննա, 1964, էջ 579:

նած լինելով իր որդիներին ու մերձավոր ազգականներին, հասույթների մեծագույն մասը յուրացնում էր ինքը՝ դատարկ թողնելով պետական գանձարանը: Դրությունը փոխվեց, երբ Չոբանյաններից դժգոհ քոչվոր ավագանու սադրանքով Աբու-Սայիդը թշնամական դիրք գրավեց իր զորահրամանատարի նկատմամբ: 1326 թվականին պատերազմական գործողություններ ծավալվեցին Չոբանյանների դեմ. նրանք պարտություն կրեցին: Ամիր Չոբանն ու նրա հեղինակավոր կուսակիցներից շատերը սպանվեցին այդ պայքարի ընթացքում, մի մասն էլ ազատվեց՝ ժամանակավորապես հեռանալով երկրից[5]:

1338 թվականին Չոբանի հանգուցյալ Թամուրտաշ որդու անվամբ հրապարակ իջավ մի գործիչ (արևելագիտության մեջ հայտնի է Կեղծ-Թամուրտաշ անունով), դաշնակցեց իսկական Թամուրտաշի որդի Հասան-Քուչուկի (քուչուկ նշանակում է փոքր) հետ և արշավեց Հասան-Բուզուրգի ու Մուհամմեդ խանի դեմ: Խանը սպանվեց, Ջելաիրյան Հասանը փախուստ տալով հաստատվեց արաբական Իրաքում: «Եկն սուտ Թամուրտաշն և որդին՝ չեխ Հասան, և սպանին զՄահմատ ղանն, և այլ ոչ եղև կատարեալ ղանութիւն», - վերոհիշյալ անցուդարձերի մասին գրում է անանուն մի ժամանակագիր[6]:

Շուտով, սակայն, սրվում են Հասան-Քուչուկի և Կեղծ-Թամուրտաշի հարաբերությունները, որի հետևանքով հիմնականում սմբակակոխ են լինում Հայաստանի շրջանները: Մի հայ հիշատակագիր այսպես է բնորոշել այդ ժամանակաշրջանը. «... ի թուականիս Հայոց ՉՁԷ (1338), ի ժամանակս որ ոչ ղան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև զնաւ յերերման, և քրիստոնեայք էին հալածական և փախստական.

Զի եղ ոմն անուն Դամուրտաշ,
Եւ արար զազգս մեր ի մաշ,
Եւ Քրիստոս ետ նմա մահու ճաշ,
Եւ եղև յաչս մեր հրաշ.

[5] Տե՛ս А. Али-Заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIX вв., Баку, 1956, էջ 287-288 (այսուհետև՝ Али-Заде):

[6] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. I, Երևան, 1951, էջ 110 (այսուհետև՝ «Մանր ժամանակագրություններ»):

Քրիստոսի անմահին վաշ,
Որ արար գնա լաշ»[7]:

Հասան-Քուչուկը պարտության մատնելով Թամուրտաշին, Չոբանյան դինաստիայի տիրապետության տակ է առնում մոնղոլական իշխանության մեծագույն մասը՝ Հյուսիսային Իրանը, Պարսկական Իրաքը, Ատրպատականը և գրեթե ամբողջ Հայաստանը: Լինելով անսահմանափակ իշխանության տեր մի բռնակալ, Հասան-Քուչուկը, այնուամենայնիվ, գերադասում է կառավարել Հուլավու խանից սերված որևէ գահակալի անունից:

Չոբանյաններն ու Ջելաիրյանները պատերազմեցին նաև հաջորդ տարիներին: Հայ ժողովրդի մի մեծ հատվածի համար ծանր հետևանքներ ունեցավ հատկապես Հասան-Քուչուկի արշավանքը դեպի Դիարբեքիր, ուր հաստատվել էր Ջելաիրյանների կուսակից Խաջե Թուղայը: Հետապնդելով փախուստի դիմած հակառակորդին, Չոբանյանների բանակը մտավ Մշո դաշտ, ավերեց, կողոպտեց ու գերեց ճանապարհին ընկած քաղաքներն ու գյուղերը: Այս դեպքերի մասին ուշագրավ գրանցում է կատարել Սարգիս գրիչը 1340 թվականին շարադրած մի հիշատակարանում. «Եւ ով կարէ պատմել զանօրէնութիւնս նոցա, զոր արարին և գործեցին, քանզի բազում գաւառս գերեցին և աւերելով կործանեցին, և զինչս արդիւնաց զամենայնն յափշտակեցին, և զամենեսեան քրիստոնեայք կողոպուտ արարին՝ մերկ և բոկ և ոչ թողին ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից. այլ զանասունս տաւարաց ջոկս առեալ տարան՝ զոչխարաց և զեզանց, կովուց և զցլուց և զերիվարաց. զհանդերձս ի յանձնէ մերկացուցին ... Որ երեկ տանն տանուտէր (էր) և ամենայն իրօք լի, այսօր բեկեալ սրտիւ և տրտմեալ ... ի վերայ մուրոյ նստեալ»: Գրիչն այնուհետև հայտնում է, որ այդ անօրենները դատարկեցին հացի բոլոր ամբարներն ու սրով նահատակեցին 100 մարդ[8]:

Հասան-Քուչուկն արշավեց նաև Ջելաիրյանների Արևմտյան Հայաստանում գտնվող տիրույթների վրա: Գրավեց Երզրում քաղաքը և մեկ ամսից ավելի մնալով այնտեղ՝ մեծ գումարներ կորզեց բնակիչներից:

Իսկ 1343 թվականին նա արշավեց Սեբաստիա և այլ վայրեր[9]:

[7] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 306:
[8] Նույն տեղում, էջ 324:
[9] Տե՛ս Али-Заде, նշվ. աշխ., էջ 331, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 334:

Հարկ է նշել, այնուամենայնիվ, որ Հասան-Քուչուկին հաջողվեց փոքր-ինչ մեղմել հպատակ ժողովուրդների ծանր վիճակը և գահակալական բազմամյա պատերազմներից հետո պայմաններ ստեղծել քայքայված տնտեսության վերականգնման համար: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ մի շարք հայ հիշատակագիրներ գովասանքով են խոսել նրա մասին[10]:

Հասան-Քուչուկը 1344 թ. դեկտեմբերի 15-ին խեղդամահ արվեց իր կնոջ կողմից: Վճռական մարտերից հետո իշխանությունը գրավեց Հասանի եղբայր Մելիք-Աշրաֆը: Սա գահակալ հռչակեց Նուշիրվան-և Ադել կոչված մի խամաճիկ խանի (հայերի կողմից կոչված՝ Էգիլ Նրվան), միանձնյա թագավորեց 13 տարի և անլուր բռնությունների ուահաբեկումների դաժան քաղաքականությամբ գերազանցեց իր բոլոր նախորդներին:

Բոլոր սկզբնաղբյուրներն անխտիր Աշրաֆին ներկայացնում են որպես նենգ ու արյունարբու կեղեքիչ, որ զրկում ու հարստահարում էր ոչ միայն աշխատավոր ժողովրդին, այլև առանց դատ ու դատաստանի բանտերն էր նետում տիրող դասակարգի շատ ներկայացուցիչների՝ պետական պաշտոնյաների, ֆեոդալական վերնախավին պատկանող անձանց ունեցվածքը հափշտակելու համար: Անշուշտ ավելի ծանր էր հայ հպատակների վիճակը, որոնք կեղեքվում էին նաև իրենց հավատքի համար:

Աշրաֆը ծանր հարված հասցրեց հայ ֆեոդալական երբեմնի հզոր վերդաստանների տկար և ուժասպառ պայազատներին: Տուժեցին հատկապես Զաքարյանները, որոնք շարունակում էին իշխել Անիի և Բջնիի շրջակայքում: 1350-ական թվականներին Աթաբեկ Շահնշահ Գ իշխանը զրկվեց իր բոլոր տիրույթներից: Անիի գրավման ու ավերման մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ներսես գրիչը. «Զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին գաւառն քաղաքին Անւոյ: - Եւ զաղետս և զոր ինչ արարին ի վանս և ի գեաւղս և ի գաւառս ո՞ր բերան պատմէ, կամ ո՞ր լեզու խօսի ... Սատակեցին առաջի ծնողաց զաղայսն և առաջի տղայոց զծնողսն: Եւ զորս ըմբռնեալ՝ տանէին գերիս՝ բանդից և տանջանաց մատնեալ, որոց գլուխ աթապակ և մեծ սպասալար Շահնշահ, որ հազիւ կարաց զերծանիլ ի

[10] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 331, ձեռագիր N 6333, էջ 113:

ձեռաց Թըշնամեացն»[11]:

Բջնի ամրոցի գրավման պատմությունը «Ի ժամանակս բռնակալութեան Մելիք-Աշրաֆին» փորագրված է Աթաբեկ Շահնշահի անունից կազմված արժեքավոր մի արձանագրության մեջ, ըստ այդմ, Աշրաֆի հրամանով Բջնի քաղաքը բռնագրավված ու հանձնված է եղել Հաճիբեկ անունով մեկին, որ «զքաղաքս ի հիմանց քակեց, ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց, ու զեկեղեցիքս ապականեց, որ զերկիրս ի չորս դիաց անբնակ արար ու զքրիստոնէք անխնայ կոտորեաց»[12]: Աշրաֆի սպանությունից հետո Շահնշահին հաջողվում է վերանվաճել Բջնին ու շինարարական որոշ աշխատանքներ կատարել այնտեղ, իսկ Անի քաղաքն իր շրջակայքով այլևս չի ազատագրվում և մնում է օտար զավթիչների ձեռքին:

Դժնդակ այս պայմաններից փրկվելու ոչ մի հեռանկար չունենալով, երկրից արտագաղթում էին ֆեոդալական վերնախավին պատկանող անձինք, քայքայվող քաղաքների բնակչությունը՝ առևտրականներ և արհեստավորներ: «Շեյխ Ուվեյսի պատմություն» գրվածքի անհայտ հեղինակի տվյալներով Ոսկե Հորդայի խան Ջանիբեկի իշխանության տարիներին (1342-1357) «Երկիրը (իմա՝ Ոսկե Հորդան) ծաղկում ապրեց, որովհետև Մելիք-Աշրաֆի ճնշումների հետևանքով եկան այնտեղ հաստատվեցին Թավրիզի, Սերահի, Արդեբիլի, Բայլականի, Պարտավի և Նախիջևանի խոջաներից շատերը»[13]:

Պետք չէ տարակուսել, որ արտագաղթողների մեծագույն մասը հայ վաճառականներ և արհեստավորներ են եղել, որոնք դուրս գալով ինչպես վերոհիշյալ քաղաքներից, այնպես էլ Անիից, Բաբերդից, Բերկրիից, Արճեշից և այլ վայրերից՝ հաստատվեցին Ոսկե Հորդայում (մասնավորապես Ղրիմի թերակղզում), ինչպես նաև հարևան ու հեռավոր այլ երկրներում: Պատահական չէ, որ Մելիք-Աշրաֆի տիրապետության տարիներին ընդօրինակված մի շարք ձեռագրերի հիշատակարաններում կան ուշագրավ տեղե-

[11] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 122 (Մատենադարան, ձեռագիր N 6764, էջ 264ա):

[12] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 273-274, «Վիմական տարեգիր», էջ 169-170:

[13] В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.-Л., 1941, с. 101.

կություններ բռնությունների, ահաբեկումների և պատերազմական գործողությունների հետևանքով հայրենի երկրից փախուստ տված և օտար ափերում խարխափ նետած հայերի մասին[14]: Քաղաքների տնտեսական կյանքի հետադիմության, արհեստագործության ու առևտրի անկման և քաղաքային բնակչության արտագաղթի հետևանքով տեղի էր ունենում արհեստագործության երբեմնի զարգացած կենտրոնների գյուղականացման պրոցես: Համդուլլահ Ղազվինին հիշատակում է բազմաթիվ բնակավայրեր, որոնք առաջ քաղաքներ էին, բայց իր ժամանակ գյուղերի շարքն էին անցել[15]:

Անտարակույս, մեծ չափերի էր հասնում նաև գյուղական վայրերի բնակչության արտագաղթը: Պաշտոնական փաստաթղթերի օրինակելի ձևեր պարունակող «Դաստուր ալ-Քաթիբ» ժողովածուի մեջ, որ կազմվել է Մոհամմեդ իբն Հինդուշահ Նախիջևանցին, տեղադրված է նաև մեծարժեք մի բողոքագիր, ներկայացված Սուլթան Ուվեյսին՝ մի խումբ գյուղացիների կողմից: Բողոքագրում ասված է, որ մեծ ամիրների ու բարձրաստիճան այլ անձանց կողմից աղքատության հասցված թշվառ մարդիկ թողնում են հարյուրամյա իրենց տնտեսությունները, լքում ժառանգած կամ ձեռք բերած փոքր մուլքերը և հեռանում են այլ վայրեր[16]: Արտագաղթի այս պրոցեսը, իհարկե, նոր չէր սկիզբ առել, սակայն Չոբանյանների իշխանության տարիներին շատ ավելի լայն ծավալ ստանալով, պատճառ դարձավ մի շարք նահանգների ու շրջանների տնտեսական քայքայման ու հետադիմության:

Պարսկական աղբյուրների համաձայն, Մելիք-Աշրաֆի դաժան լուծը թոթափելու համար, Թավրիզի բնակիչները մի պատգամավորություն են ուղարկում Ոսկե Հորդայի տիրակալ Ջանիբեկ խանի մոտ: Մռայլ գույներով նկարագրելով իրենց անելանելի կացությունը, նրանք աղերսում են արշավանք կազմակերպել Աշրաֆի դեմ և իրենց ազատել տառապանքներից: Պատեհ առիթից օգտվելով, 1357 թվականի սկզբներին, ռազմական մեծ պատրաստությամբ, Ջանիբեկը ներխուժում է Ատրպատական:

Մելիք-Աշրաֆի զորքերը լքում են իրեն և նա միայն երկու ծառաների

[14] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 346, 389, 390:

[15] Տե՛ս И. П. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV веков, М.-Л., 1960, էջ 95:

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 278:

ուղեկցությամբ մազապուրծ փախչում է Մարանդ, ապա՝ Խոյ, սակայն բռնվում և հանձնվում է Ջանիբեկին: Երբ Աշրաֆին տանում էին Թավրիզի փողոցներով, տանիքներ բարձրացած բնակչությունը մոխիր և ավազ էր նետում նրա վրա, պատկերելով նրա կառավարչության ներքո անապատ դարձած երկիրը: Եվ այսպես, անփառունակ, գահազրկվում ու սպանվում է Մելիք-Աշրաֆը, որի անունը վերածվեց հասարակ անվան, խորհրդանշելով արյունռուշտ ու դաժան բռնակալի[17]:

1357 թվականը, այսպիսով, նշանավորվում է Չոբանյան դինաստիայի անկումով:

***

Ոսկե Հորդայի խան Ջանիբեկը երկար չմնաց Թավրիզում: Նվաճված երկրամասերի կառավարիչ կարգելով իր Բերդիբեկ որդուն, նա նույն՝ 1357 թ. ճանապարհվեց դեպի Դաշտ-ի Ղփչաղ: Բերդիբեկը նույնպես, լուր առնելով հոր հիվանդության, կամ ըստ այլ տվյալների, իր իսկ մեղսակցությամբ դավադրաբար սպանվելու մասին, շատ չանցած վերադարձավ Դաշտ-ի Ղփչաղ: Իշխանությունը Թավրիզում անցավ մեծ հեղինակություն վայելող ամիր Ախիջուքի ձեռքը, որի շուրջ համախմբվեցին Աշրաֆի ժամանակ բարձր պաշտոններ գրաված մի շարք ամիրներ՝ շարունակելով հպատակ ժողովուրդների խոշտանգման նախկին քաղաքականությունը:

1358 թ. գարնանը Ախիջուքի դեմ արշավանք է կազմակերպում Ջելաիրյան Հասան-Բուզուրգի որդի Սուլթան Ուվեյսը, որը 1356-ին հաջորդել էր հանգուցյալ հորը: Մեկ տարի տևող պատերազմական գործողություններից հետո, որոնք տեղի էին ունենում Թավրիզում, Նախիջևանում, Ղարաբաղում և երկրի այլ շրջաններում, Ուվեյսը կատարյալ հաղթանակ է տանում, միավորում է Ջելաիրյանների ու Չոբանյանների տիրույթները և իր աթոռանիստը Բաղդադից տեղափոխում է Թավրիզ:

Տարբերվելով Չոբանյան տիրակալներից, որոնք գերադասում էին անվանապես պահպանել մոնղոլական իլխանությունը՝ գահը հանձնելով Չինգիզ խանից սերված անուժ ու կամազուրկ որևէ իլխանի, Ջելաիրյանները վերացրին խամաճիկ խաներ կարգելու ավանդույթը, այսինքն, վերջ

[17] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», Ա, էջ 335, 465 և այլն:

տվեցին իլխանությանը նաև իրավապես, և իրենց հայտարարեցին «սուլթան» ինքնիշխան տիրակալ:

Սուլթան Ուվեյսի իշխանության տարիներին Ջելաիրյանների լայնածավալ պետության տնտեսական կյանքում նկատվում է աշխուժություն. ինչ-որ չափով սանձվում են քոչվոր ցեղապետերի ու հարկահան պաշտոնյաների անլուր չարաշահումները և որոշ պայմաններ են ստեղծվում խաղաղ աշխատանքի համար: Հարկ է նշել, սակայն, որ քրիստոնյա հպատակների նկատմամբ հալածանքները չեն դադարում իսպառ: Այդ տարիներին Հայաստանի տարբեր շրջաններում շարադրված հիշատակարանների մեջ այդ մասին գտնում ենք մի շարք վկայություններ: Մեկը հայտնում է, որ «ժամանակս դառն ու փախուստ էր», «հալածում էր քրիստոնէից», մեկ ուրիշն ավելացնում, որ «յանօրինաց բռնութենէ խիստ ի նեղութիւն կայաք» և այլն[18]:

1364 թ. գահը գրավելու անհաջող փորձ է կատարում Մելիք-Աշրաֆի Թամուրտաշ որդին, որ Ջանիբեկի արշավանքից հետո տարվել էր Ոսկե Հորդա: Օգտվելով այդ երկրի ներքին խռովահույզ վիճակից, Միջին Ասիայի վրայով նա անցնում է Շիրազ, ապա հայտնվում է Արծկեի շրջանում ու պատրաստվում ապստամբություն բարձրացնել Ջելաիրյանների դեմ: Սակայն ձերբակալվում է, հանձնվում Սուլթան Ուվեյսին ու սպանվում[19]:

Սուլթան Ուվեյսը վախճանվեց 1374 թ. հոկտեմբերի 10-ին: Նրան հաջորդեց Հուսեյն որդին՝ գինեմոլ ու շվայտ մի անձնավորություն, որը պետության երկրամասերը բաժանեց իր եղբայրների միջև ու թուլացրեց երկրի ռազմունակությունը:

1375-1376 թթ. մի քանի ամսով Թավրիզը գրավում է Սպահանի, Ֆարսի ու Քիրմանի տիրակալ Շահ-Շուջան՝ Մուզաֆարյան դինաստիայից: Երկրի տարբեր շրջաններում գլուխ են բարձրացնում քոչվոր ցեղապետերը, որոնք հրաժարվելով Ջելաիրյաններին ենթարկվելուց, դուրս են գալիս մեկը մյուսի դեմ, ասպատակում հարևան շրջանները: Ոստանի հայ բնակչությունը, օրինակ, 1377 թ. մեծ զրկանքներ է կրում քրդերի խժդժություններից: «Բազումք ի քրիստոնէից սրախողող են ի քրդէն», - գրում է այդ

[18] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 450, 458, 489:

[19] Սամուել (շարունակող), էջ 169: В. Г. Тизенгаузен, Сборник ..., էջ 97:

մասին հիշատակագիրը:

Կենտրոնական իշխանության դեմ դուրս են գալիս նաև թուրքմենական Կարա-կոյունլու կոչվող ցեղախմբի առաջնորդներ Բայրամ-խոջան և Կարա-Մուհամմեդը: Այս ցեղախումբը Հայաստան էր գաղթել Իլխան Արղունի ժամանակ (1284-1291) և քոչվորական կենցաղով բնակություն հաստատել Արածանիի վերին հոսանքներում՝ մասնավորապես Բագրևանդում ու Քաջբերունիքում (թերևս նաև Նախիջևանի շրջանում): XIV դարի 40-ական թվականներից սկսած նրանք զգալի ռազմական ուժ ունեին և կազմակերպում էին ինքնուրույն կողոպտիչ արշավանքներ: 1343 թ., օրինակ, Կարա-Հասան ցեղապետի գլխավորությամբ, նրանք ասպատակել էին Խլաթի շրջանը[20]: 1377-1378 թթ. Սուլթան Հուսեյնը պատժիչ արշավանք է կազմակերպում Կարա-կոյունլուների դեմ. սրանք պարտություն կրելով, պարտավորվում են վճարել տարեկան հարկ՝ 20.000 գլուխ ոչխար[21]:

1382 թ. Սուլթան Հուսեյնի դեմ պայքար է սկսում իր եղբայր Արդաբիլի կառավարիչ Ահմեդը: Հուսեյնը պարտություն է կրում ու սպանվում: Գահակալական պայքարի հորձանքի մեջ են մտնում նոր ուժեր. Հուսեյնի զորահրամանատար ամիր Ադիլը օրինական սուլթան է հռչակում Ուվեյսի որդիներից Բայազիտին: Հրապարակ է իջնում նաև Բաղդադում հաստատված սրա եղբայր Շեյխ-Ալին: Գահի շուրջ ծավալված այս կռիվները պայմանավորված էին պետության բնույթով: Ջելաիրյանների պետությունը, արևելյան մյուս բռնապետությունների նման բաղկացած էր տնտեսապես միմյանց հետ չշաղկապված ու էթնիկապես տարացեղ երկրամասերից, ենթակա էր ներքին բուռն փոթորիկների, մանավանդ անվանի որևէ դահակալի մահվանից կամ ռազմական պարտությունից հետո:

Սուլթան Հուսեյնի սպանության և դրան հաջորդող քաղաքական անցուդարձերի մասին հակիրճ, բայց ստույգ ու վստահելի տվյալներ են գրանցել նաև հայ ժամանակագիրները: «Սուլտան Ահմատն, - գրում է նրանցից մեկը, - զերկու եղբարսն սպանեաց և ինքն նստաւ. սպան զմեծամեծս հօր իւրոյ, և կորոյս զամենեսեան: Եւ եղբայրն շարժեցաւ ընդ նմա ի պատերազմ ... և կոտորեցին երկոքին զօրքն ի դաշտին Արտազու, և ցրուեցան զօրքն»[22]:

[20] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 334:
[21] Али-Заде, նշվ. աշխ., էջ 338-339:

4470

Ահմեդին, ի վերջո, հաջողվում է պարտության մատնել իր դեմ ծառացած եղբայրներին՝ դաշնակցելով Կարա-Մուհամմեդի հետ ու հենվելով Կարա-կոյունլու թուրքմենական ցեղախմբերի զինական ուժերի վրա: Միջզինաստիական այդ պայքարից Ջելաիրյանները դուրս են գալիս խիստ թուլացած: Երկրի տարբեր մասերում գլուխ են բարձրացնում ցեղախմբերի ավագները, ծառանում կենտրոնական իշխանության դեմ, հրաժարվում հարկատվությունից:

Հայաստանի կենտրոնական շրջաններում իր միահեծան տիրապետությունն է հաստատում Կարա- Մուհամմեդը, որին մի շարք հայ հիշատակագիրներ կոչում են իրենց երկրի «ձեռնկալ» կամ «երկրակալ»: «Չար և դառն և պիղծ աւերարար երկրի» կոչվող այս բռնապետը 1385-1386 թթ. ողբերգական կացության մեջ է դնում իր իշխանության տակ գտնվող հայ հպատակներին՝ կրոնական անլուր հալածանքներով: Նրա հրամանով Վանա լճի հյուսիսային շրջաններում ամբողջովին կամ մասամբ քարուքանդ են արվում 70-ից ավելի եկեղեցիներ, գերվում ու ոչնչացվում են մեծաքանակ ձեռագրեր: Կարա-Մուհամմեդին համեմատելով Նաբուգոդոնոսոր Բ-ի հետ, որ հնում գրավեց ու կործանեց Երուսաղեմը, Խաչատուր անունով մի գրիչ ստանավոր է հյուսում նրա չարագործությունների մասին.

Ի յոււթհարիւր թուականին,
Յերեսուն և հինգ սկսեալ ամին (1386),
Ի հայկազեան ազգի սեռին,
Ի նեղութեանց ժամանակին,
Զոր այլազգիքն նեղէին,
Զքրիստոնեայք նախատէին,
Զեկեղեցիսըն քակէին:
Զոր մեզաւորս ի թիւ արկի
Նօթանասուն եկեղեցի,
Որ ի գաւառս էր Արծրունի.
Զգրունս նոցա խորտակեցին,

[22] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 569, 597:

Եւ զսեղանսն տապալեցին,
Եւ զհիմունս շարժեցին,
Զկտակարանսն գերեցին[23] *...*

Ֆեոդալական մասնատվածության և քոչվոր ցեղապետերի ինքնիշխանության հետևանքով սաստկանում է ժողովրդական զանգվածների ունեզրկումը և խորանում տնտեսության քայքայումը: Պետական գանձարկղ մուծվող հարկային գումարները տարեցտարի նվազում են և կենտրոնական իշխանության ռազմունակությունը թուլանում է այն աստիճան, որ երկիրն անզոր է դառնում արտաքին թշնամուն դիմագրավելու:

Օգտվելով խառնակ այս վիճակից 1384 թ. վերջերին Դարբանդի ու Շիրվանի վրայով Ատրպատական է ներխուժում Ոսկե Հորդայի խան Թոխթամիշը՝ 50 հազարանոց բանակով: Ապաշնորհ Սուլթան Ահմեդը, առանց դիմադրության փորձ կատարելու, փախչում է Բաղդադ: Թոխթամիշի զորքերը պաշարում են Թավրիզը: Քաղաքացիները մեկ շաբաթ հերոսաբար դիմադրում են, սակայն, ի վերջո, ընկճվում են ու 1385 թ. հունվարի 5-ին բացում դարպասները թշնամու առաջ: Մայրաքաղաքն ավերվում ու կողոպտվում է, նույն բախտին են արժանանում նաև Մարաղան ու շրջակա գավառները: Այնուհետև ընչաքաղց այդ հրոսակախմբերը բաժանվում են երկու խմբի. մեկն անցնում է Մարանդի, Նախիջևանի և Սյունիքի շրջաններով: «Երկիրն Սիւնեաց՝ երկոտասան գաւառս աւերեցին, զբազումս սպանին և գերեցին», - հայտնում է սրանց մասին Թովմա Մեծոփեցին[24]*: Սյունիքից անցնելիս Թոխթամիշի զորքերը գրավում են Որոտան ամրոցը և հայրենազուրկ անում Սմբատ Օրբելյան իշխանին՝ Իվանեի որդուն: Մեծ ավերածություններ են գործում նաև Վայոց ձորում, ուր իշխում էր Իվանեի մյուս որդին՝ Գորգունը: Սա զրկվելով կալվածքներից վշտամահ է լինում: Տուժում է նաև Հովհան Որոտնեցին՝ Սյունյաց հին իշխանական տան պայազատներից մեկը, որին փորձում են ձերբակալել՝ «վասն հայրենեացն ժառանգութեանն»: Որոտնեցին այդ ժամանակ գլխավորում էր Արևելյան Հայաստանի ամենախոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Սյունյաց համալսարանը: Խույս տալով թշնամիներից, մեծ գիտնականն իր 60 աշակերտների հետ միասին շրջում էր վայրից վայր՝ շարունակելով իր իմաստասիրական խորիմաստ դասախոսությունները: «Եւ սա, - գրում է նրան ուղեկցող աշակերտներից մեկը, - կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ, Բ (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով»*[25]*:*

Թոխթամիշի երկու մասի բաժանված զորքերը միավորվում են Ղարաբաղում, ապա Շիրվանի վրայով վերադառնում Դաշտ-ի Ղփչաղ, իրենց հետ տանելով 200.000 գերի, որոնց մեջ կային և տասնյակ հազարավոր հայեր՝ Պարսկահայքից, Սյունիքից ու Արցախից[26]

Թոխթամիշը հազիվ էր հեռացել Անդրկովկասից, աշխատավոր ժողովուրդը դեռ չէր բուժել պատերազմական ծանր վերքերը, երբ Հայաստանն ու հարևան երկրները թատերաբեմ դարձան նոր արհավիրքների՝ սկսվեցին Լանկ-Թամուրի գլխավորությամբ կազմակերպված արշավանքները:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ջաղաթայան երբեմնի հզոր պետությունը[27]*, որ միավորել էր միջինասիական երկրամասերը, XIV դարի կեսերին պառակտվել էր երկու հակամարտ մասերի՝ Մոգոլիստանի, ուր իշխում էր դեռևս քոչվորական կյանքով ապրող մոնղոլական ցեղերի ավագանին և Մավերաննահրի, ուր տեղի էր ունեցել մերձեցում արդեն կիսով չափ նստակյաց դարձած մոնղոլաթուրքական ցեղերի ավագանու և տեղաբնիկ պարսկական ֆեոդալների միջև: Մավերաննահրն իր հերթին բաժանված էր ֆեոդալական մի շարք*

[23] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 562:
[24] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 12, 98: Այսուհետև՝ Թ. Մեծոփեցի:
[25] Ակադեմիկոս Հ. Մանանդյանն այս դեպքերի ժամանակագրությունը հատուկ քննության նյութ չդարձնելով, սխալմամբ Լանկ-Թամուրին է վերագրում Սյունիքի ավերածությունը, Որոտանի գրավումը և հարակից անցուդարձերը, կարծելով, որ դրանք կատարվել են 1386 թվականի ընթացքում (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Գ, 1952, էջ 344-346):
[26] Տե՛ս Սամուել (շարունակող), էջ 171:
[27] Կոչվում էր Չինգիզ խանի Ջաղաթա որդու անունով, որին ժառանգություն էր տրվել Միջին Ասիան:

տիրույթների, որոնց իշխանները շարունակ պայքարում էին՝ հարևանի հաշվին իրենց կալվածքներն ընդարձակելու, կողոպուտի ու գերեվարության համար:

Մոնղոլական Բարլաս ցեղից սերված Թարաղայի որդի Թամուրը (1335-1405), Լանկ (կաղ) մականունով, երկարատև քաղաքական պայքարից հետո՝ 1370 թ. հռչակվեց Մավերաննահրի տիրակալ՝ Սամարղանդը դարձնելով իր աթոռանիստ քաղաքը:

Մավերաննահրի ֆեոդալական դասակարգի, մասնավորապես մոնղոլա-թուրքական ռազմաքոչվորական վերնախավերի շահերից ելնելով, Լանկ-Թամուրը, զուգակցելով խիզախ զորահրամանատարի ու խորամանկ քաղաքագետի իր ձիրքերը, մինչև իր կյանքի վերջը կազմակերպեց աշխարհավեր նվաճողական արշավանքներ՝ դեպի Ոսկե Հորդա ու Ռուսաստան, Հնդկաստան ու Իրան, Անդրկովկաս ու Փոքր Ասիա: Ամենուրեք, ուր ոտք կոխեցին Լանկ-Թամուրի զորաբանակները, տարածեցին մահ ու կոտորած, գերեվարեցին տասնյակ հազարավոր անպաշտպան մարդկանց (հատկապես արհեստավորների), ոչնչացրին նյութական ու հոգևոր մեծ արժեքներ:

Պետականությունից զրկված հայ ժողովրդի պատմության մի մեծ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները նույնանում կամ սերտորեն առնչվում են Լանկ-Թամուրի ու նրա անմիջական հաջորդների դեպի Անդրկովկաս և Փոքր Ասիա ձեռնարկած արշավանքների ու զորաշարժերի հետ, ուստի և անհրաժեշտություն է զգացվում ծանոթանալ ողջ Մերձավոր Արևելքի համար համընդհանուր նշանակություն ունեցող քաղաքական այս անցուդարձերին՝ ընդհանրապես, պատմական Հայաստանի թատերաբեմում տեղի ունեցած դեպքերին՝ մասնավորապես:

Լանկ-Թամուրի առաջին արշավանքը: *Լանկ-Թամուրն առաջին անգամ բախվեց Ջելաիրյան պետության ուժերին 1385 թ., երբ Հարավային Իրանից ներխուժեց Ատրպատական ու գրավեց Սուլթանիե քաղաքը: Կազմակերպված արշավանքը, սակայն, սկսվում է մեկ տարի ուշացումով: 1386 թ. գարնանը նա գրավում է Թավրիզը, այնուհետև անցնելով Արաքսը, մտնում է Սյունիք, գրավում Նախիջևանը և պաշարում Երնջակ (արևելյան աղբյուրներում՝ Ալանջիկ կամ Ալինջա) անառիկ բերդը, ուր, ըստ որոշ տվյալների, պահվում էին Ջելաիրյանների գանձերը: Բերդի պաշտպանությունը ղեկավարում էր Սուլթան Ահմեդի որդի Թահիրը: Թամուրյաններին*

չհաջողվեց գրավել այդ ամրությունը, որը հերոսաբար դիմադրեց մինչև 1401 թ.[28]*: Ուստի, Լանկ-Թամուրը, բերդի պաշարումը շարունակելու համար անհրաժեշտ զորամաս թողնելով, իր բանակը մասերի բաժանեց և ուղղեց Հայաստանի տարբեր շրջաններ: Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը հայտնում է, որ նրա զորախմբերը տարբեր ուղղություններով արշավելով և կոտրելով կազմակերպված դիմադրությունը, մեկ օրվա ընթացքում հասնում են մինչև Կարբի, Բջնի, Գառնի, Սուրմարի և Կողբ:*

Կողբ գյուղի բնակիչները «յոյժ զօրեղ զօրական» տանուտեր Մարտիրոսի գլխավորությամբ պատսպարվում են Բարդող (Թակալթու) լեռան վրա և գյուղի «յոյժ արի և քաջ» երիտասարդների ուժերով դիմադրում թշնամուն՝ «մեծաւ պատերազմաւ և սրտապինդ զօրութեամբ»: Լանկ-Թամուրի ձեռնարկած բազմաթիվ գրոհներն ապարդյուն են անցնում: «Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնել զլեառն զայն», - ասում է պատմիչը[29]*:*

Երկարատև է եղել նաև Պռոշյանների իշխանանիստ Շահապոնք բերդի դիմադրությունը, որի մասին տեղեկություն է հաղորդում այդ ժամանակ պատահմամբ այնտեղ գտնվող Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ի հիշատակարանում:

Համառ դիմադրություն է ցույց տվել նաև Սուրմարի բերդաքաղաքը, որի պարիսպները թշնամին հիմնահատակ տապալում է և գերում քաղաքի ու շրջակա գյուղերի բնակչությանը:

Թովմա Մեծոփեցին հայտնում է, որ Բջնի բերդը նույնպես գրավվում է պաշարվելուց հետո: Իսկ Գրիգոր Խլաթեցին, այս դեպքերի թվականը մեկ տարի առաջ բերելով, հայտնում է.

> *Զամուր տեղիսն յաւար առին*
> *Եւ շատ ոճիրըս գործեցին,*
> *Յորոց և մի էր և Բըջնին,*
> *Որ էր աթոռ երկուց պետին,*
> *Զոր առին ու քանդեցին.*
> *Զեպիսկոպոսն սպանեցին:*

[28] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 628:

[29] Թ. Մեծոփեցի, էջ 18:

Սպանվողը Այրարատյան թեմի առաջնորդ Վանական եպիսկոպոսն էր, որը, որպես հոգևոր պետ և աշխարհիկ ֆեոդալ, կազմակերպել էր դիմադրությունը:

Այնուհետև Լանկ-Թամուրի զորքերը ներխուժում են Փոքր Սյունիք, գրավում Դոփյան ֆեոդալներից սերած Հասան Ծարեցի իշխանի ամրոցները: Հասանը իր երեք որդիների՝ Սարգսի, Աղբուղայի և Շիրվանշահի հետ սրախողխող է լինում: Նրանք գրավում են նաև Այրարատի Արշարունյաց գավառում Կապուտից ամրոցը, սրի են քաշում 400 հոգու, և Երևան գյուղաքաղաքը, ուր կոտորում են 500 տղամարդ:

Հայտնի է, որ Լանկ-Թամուրը մահվան էր դատապարտում այն վայրերի բնակչությանը և, մասնավորապես, կռվի ընդունակ տղամարդկանց, որոնք կամովին չէին հայտնում իրենց հնազանդությունը արշավող իր զորաբանակներին: Ուստի կարելի է չտարակուսել, որ բոլոր այդ վայրերում Լանկ-Թամուրը հանդիպել է ուժեղ դիմադրության[30]:

Այս նվաճումներից հետո Թամուրի զորքերը մտնում են Վրաստան և 1386 թ. նոյեմբերի 21-ին գրավում ու կողոպտում Տփղիսը:

Ժամանակակից աղբյուրները սրտաճմլիկ նկարագրություններ են պահպանել Հայաստանում և հարևան երկրներում Լանկ-Թամուրի գործած ավերածությունների, բնակչության սրածության, գերեվարության, նյութական ու հոգևոր արժեքների կողոպուտի ու ոչնչացման մասին:

Ուշագրավ է, որ նրանք խտրություն չէին դնում ազգության ու դավանանքի միջև:

Այս ոչ միայն քրիստոնէին,
Այլ և տաճիկ ազգաց բնաւին,
Զի հասարակ էր նեղութիւն

30 Այս առումով հետաքրքրական է Վասպուրականի դպրոցի անվանի մանրանկարիչ Ծերուն ծաղկողի մի դիտողությունը, որ արել է իր նկարազարդած ձեռագրերից մեկի հիշատակարանում. «Եւ ով որ հնազանդէր նմա (Լանկ-Թամուրին) բազում պարգևս պարգևէր նմա, և ով որ ոչ հնազանդէր՝ զնա առ ոտն հարկանէր, և զաշխարհ նորա աւար հարկանէր» (Էրմիտաժ, VP, N 1010, էջ 251ա):

Պարսից ազգին, հայ և թուրքին[31]:

Տփղիսի գրավումից հետո Թամուրն իր զորքերով գնաց ձմեռելու Մաղանում, իսկ 1387 թ. գարնանը վերսկսեց իր արշավանքները, այս անգամ Հայաստանի հարավում և արևմուտքում:

Կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի առաջնորդ Կարա-Մահմադն իր որդի Կարա-Յուսուֆի հետ իշխում էր Վաղարշակերտի (Ալաշկերտի) ու Քաջբերունիքի շրջաններում: Լանկ-Թամուրի զորքերը՝ գաղտնաբար անցնելով Արաքսը, մտան Քաջբերունիք: Կարա-Մահմադը խույս տվեց ճակատամարտից ու նահանջելով դեպի արևմուտք՝ հասավ մինչև Ճապաղջուր, ապա ետ դարձավ, պատերազմեց ու պարտության մատնեց իրեն կրնկակոխ հետապնդող չաղաթայական զորախմբին: «Զգըլխաւորն զօրաց նորա Լօղմաղան անուն սպանին և այլ բազում զօրս ընդ նմա», - հայտնում է Թովմա Մեծոփեցին[32]:

Չաղաթայական մի այլ զորախումբ գլխովին ջախջախվեց Մուշի Առաքելոց վանքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Նրանց հետ բախվեց Փիր-Հասան ցեղապետի հրամանի ներքո գտնվող թուրքմենական զորագունդը: Տուրուբերանի տարբեր շրջանների հայ բնակչությունը, որ Թամուրյաններից խուսափելով բարձրացել էր Սասունի անմատչելի լեռները, Փիր-Հասանի այս հաղթանակով ազատվեց սրածումից ու գերեվարությունից:

Լանկ-Թամուրի բանակի այլ միավորումներ հասան մինչև Կարին, բայց ավելի առաջ գնալ նրանց չհաջողվեց[33]:

Հետդարձի ճանապարհին, 1387 թ. սեպտեմբեր ամսին, Լանկ-Թամուրը պաշարեց քուրդ ամիր Եզդինի իշխանության տակ գտնվող Վանի բերդը: 26 օր շարունակ բերդի պաշտպանները խիզախ դիմադրություն կազմակերպեցին, սակայն, ի վերջո՝ սեպտեմբեր ամսին Թամուրին հաջողվեց գրավել բերդը և, առանց ազգի ու տարիքի խտրության, դաժան հաշվեհարդար տեսնել բնակչության նկատմամբ: Թամուրի հրամանով կանանց ու

31 Գր. Ծերենց Խլաթեցի, Յիշատակարան աղէտից (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 277):

32 Թ. Մեծոփեցի, էջ 21:

33 Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 570:

մանկահասակներին գերեվարեցին, իսկ մնացած բնակչությանը, խումբ-խումբ կապելով իրար, ցած գլորեցին բերդի պարիսպներից: Գահավիժվածների թիվն այնքան շատ էր, որ վերջին նետվածներն այլևս չէին մեռնում, ընկնելով կիտված դիակների վրա:

Գրիգոր Խլաթեցին իր մի ոտանավոր հիշատակարանի մեջ այս դեպքերի մասին գրում է.

Ապա դարձեալ՝ ի Վան եկեալ,
Զամուր զըղեակըն պաշարեալ,
Վեց ու քսան աւր հըսարեալ,
Եւ ապա ի ձեռս նոցա մատնեալ,
Բազմաց օրհասըն ժամանեալ
Դուըըն մահուամբ քարավիժեալ,
Ոչ մին հազար՝ւ երկու եղեալ,
Այլ քան զերեքըն առաւելեալ,
Մինչ մըսադէզըն բարձրացեալ
Եւ որք անկեալ՝ այլ ոչ մեռեալ:
Իսկ և գերեացն ըզթիւ անցեալ
Եւ համարոյ գերազանցեալ ...[34]

Սամուել Անեցու շարունակողը բերդից գահավիժվածների թիվը 7000 է հաշվում:

Վանի աղետը Լանկ-Թամուրի դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի վերջին ողբերգական արարն էր: Նույն՝ 1387 թ. աշնանը, երկու տարի Հայաստանն ասպատակելուց և հայ ժողովրդին անասելի աղետներ պատճառելուց հետո, անբավ հարստություններով ու անթիվ գերիներով, Լանկ-Թամուրը վերադարձավ Սամարղանդ:

Պատերազմական գործողությունների ու զորաշարժերի պատճառով շատ վայրեր անմշակ էին մնացել, որի հետևանքով 1388 թ. Հայաստանում եղավ անբերրություն ու սաստիկ սով: «Շատք ի սովու մեռան և այլք՝ շուն և կատու կերան», - հայտնում է ժամանակակից մի հիշատակագիր: Իսկ

[34] «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 286-287, հմմտ. նաև նույն տեղում, էջ 277-278, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 573, 590 և այլն: Թ. Մեծոփեցի, էջ 30:

Թովմա Մեծոփեցին խոսում է նաև հարազատներին սպանելու և ուտելու դեպքերի մասին[35]*:*

Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքը: *1388-1393 թթ. Լանկ-Թամուրը Հարավային Ռուսաստանի տափաստաններում պատերազմում էր Ոսկե Հորդայի խան Թողթամիշի դեմ, իսկ այնուհետև Մուզաֆֆարյան Շահ-Մանսուրի դեմ Պարսկական Իրաքում ու Պարսկաստանում: Այդ տարիներին հայ ժողովուրդը փոքր-ինչ շունչ քաշեց և մասամբ, նույնիսկ, բուժեց նախորդ շրջանում ստացած իր ծանր վերքերը:*

Բայց շուտով (1394) Հայաստանում լուր տարածվեց, որ Լանկ-Թամուրը նոր արշավանք է ձեռնարկել: «Վայ աւուրս և ժամուս, թէ որպէս չար համբաւ առաք, - գրել է այդ մասին մի հիշատակագիր, - ձեռս թուլացաւ, միտս կուրացաւ, և ամենայն անդամօքս դողամ, զի անօրէն Լանկ-Թամուրն դայ, ասեն, սպանողն և արիւնարբու գազանն»[36]*:*

Այս երկրորդ մեծ արշավանքի ուղղությունն այլ էր. ջաղաթայական զորքերը նախ մտան Իրաք, գրավեցին Բաղդադը (այստեղ տասնյակ հազարավոր մարդկանց գլուխներից 6 խոշոր բուրգեր կիտեցին), այնուհետև գրավելով և ավերածություններ գործելով Մոսուլ, Եդեսիա (Ուռհա), Մերդին ու Ամիդ քաղաքներում, Հյուսիսային Միջագետքից անցան Արևմտյան Հայաստան: Առանց մարտերի գրավեցին Երզնկան, արշավեցին դեպի Բասեն, ընկավ նաև Ավնիկ նշանավոր ամրոցը. դիմադրության կազմակերպիչ իշխան Մսիրին և 100 զորականների բերդից ցած նետեցին: Կարս, Սուրմալու, Կողբ, Բագարան քաղաքներն ավերվեցին: Թամուրն ասպատակեց նաև Կարա-կոյունլու թուրքմենական ցեղի տիրապետած շրջանները՝ Արճեշ կենտրոնով: Կարա-Յուսուֆը խույս տվեց ու միացավ Ջելաիրյան Ահմատին, նրա հետ բաժանելով տարագրության դառնությունները:

Այրարատի գավառներն այս անգամ էլ ասպատակվեցին, բայց Թամուրն ստիպված էր շտապ հեռանալ դեպի Աղվանք՝ հակահարված տալու Թողթամիշին, որը կրկին ներխուժել էր Շիրվան[37]*:*

[35] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 32:

[36] Մատենադարան, ձեռագիր N 3717, էջ 12բ:

[37] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 40-46, Սամուել (շարունակող), էջ 171, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 618, 621, 627-28:

Թամուրի և Թողթամիշի միջև այստեղ բախում տեղի չունեցավ: Վերջինս նահանջեց, իսկ ջաղաթայները ձմռան մի մասն անցկացնելով Մուղանում, 1395 թ. փետրվարի 28-ին մեծ ուժերով, Դերբենդի վրայով, սկսեցին շարժվել դեպի Ոսկե Հորդա[38]: Ապրիլ ամսին Թերեք գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Թողթամիշի զորքերը ծանր պարտություն կրեցին: Թամուրը գրավեց Ոսկե Հորդայի նշանավոր քաղաքներ Աստրախանն ու Սարայը, որոնք թալանվեցին ու կործանվեցին:

Այս դեպքերին ժամանակակից Գրիգոր Խլաթեցի հիշատակագիրը հայտնում է, որ Թամուրը Ոսկե Հորդայում հաղթանակներ է տարել և «շատ աւեր ու գերութիւն» արել, բայց ինքը ևս կորուստներ է ունեցել և տկարացել. «Բայց և ինքն տկարացաւ զօրօքն ի սովոյ, և անթիւ պակասեցան ի զօրաց գոռոզին այնմիկ»:

Թամուրը 1396 թ. գարնանը «ընդ դուռն Ալանաց» վերադառնալով Անդրկովկաս, իր որդի Միրանշահին կարգեց կուսակալ՝ Իրանի, Իրաքի, Հայաստանի ու Անդրկովկասյան մյուս բռնագրավված երկրամասերի, կամ, ինչպես ասվում է արևելյան աղբյուրներում՝ «Հուլավուի թախթի» վրա:

Միրանշահը Երնջակի բերդի տարիներ տևող պաշարումը հաղթական վախճանի հասցնելու առաջադրանք է ստանում: Այս նպատակով Խորասանից թարմ զորախմբեր են ժամանում, բայց բերդը գրավելու նոր փորձերը ևս ապարդյուն են անցնում: Միրանշահի կուսակալության տարիներին երկրի տարբեր մասերում շարունակվում են ֆեոդալական երկպառակությունները և թամուրյանների լուծը թոթափելու փորձերը:

Բաղդադն այդ ժամանակ վերագրավվել էր Ջելաիրյան սուլթան Ահմեդի կողմից, իսկ սրա դաշնակից Կարա-կոյունլու Յուսուֆն իր ցեղակիցներով հարձակողական գործողություններ էր ծավալել Միջագետքում[39]: Միրանշահն անզոր էր իր ուժերով զսպելու այս շարժումները: Խնդիրը, սակայն, փոխվում էր, երբ խոսք էր լինում տեղական ֆեոդալների դժգոհությունների մասին. այստեղ նա վճռական էր ու դաժան[40]: 1396 թ. հար-

[38] Տե՛ս Али-Заде, նշված աշխատությունը, էջ 388:

[39] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան 1952, էջ 362-363:

[40] Տե՛ս Али-Заде, նշվ. աշխ., էջ 390:

ձակվեց Բաղեշի վրա, բռնեց ու սպանեց քուրդ ամիր Իբրահիմին, որը չարամիտ դիրք էր բռնել հայերի նկատմամբ և «բազում աւերս արար ամենայն քաղքին և գաւառին»[41]:

Հաջորդ թվականին, Պետրոս հիշատակագրի տվյալներով, թամուրյանները բռնել ու Աղթամարի կղզում բանտարկել էին Հաքքարիի (Ջուլամերիկի) քուրդ ցեղապետին ու կողոպտել Վասպուրականի հարավային շրջանները: «Զոմանց զտուն այրեցին, զոմանց զվաստակ կերան և զպահուստն զամէն գտան», - գրում է նա: Հենց նույն ժամանակ գրավում են նաև «անառիկ ամրոց Անին», որ չնայած վաղուց ի վեր կորցրել է իր նշանակությունը որպես արհեստագործության ու առևտրի կենտրոն, բայց դեռևս համարվում էր Հայաստանի ամուր բերդերից մեկը[42]:

Անդրկովկասի ժողովուրդների դժգոհությունը թամուրյանների տիրապետության դեմ 1399 թ. արտահայտվեց զինված ելույթով: Վրաց Գեորգի VII թագավորի և Շաքիի տիրակալ Սիդի Ալիի միացյալ ուժերը հարձակվեցին Երնջակը պաշարած ջաղաթայական զորքերի վրա, նրանց պարտություն մատնեցին, 13-ամյա պաշարումից ազատեցին Ջելաիրյան արքայազն Թահիրին և առավել ամրացրեցին բերդի պաշտպանությունը: Այս դեպքի մասին արժանահավատ գրանցումներ ենք գտնում հայկական մի շարք հիշատակագիրների, ինչպես նաև պարսկական պատմագիրների մոտ[43]: Պետք չէ տարակուսել, որ հայերը նույնպես մասնակցել են թամուրյանների դեմ մղված այս մարտերին. ավելին, կան տվյալներ այն մասին, որ հայերը հերոսաբար կռվել են նաև որպես պաշարված բերդերի խիզախ պաշտպաններ. գուցե հենց Երնջակի բերդում է գրանցված այս հիշատակագրությունը. «Այսօր ի դուրս ելան մեր հայերս և բերդի թուրքերն և Ժ (10) ջաղաթա սպանին, և Է (7) մարդ բռնեցին, և բազում աւար

[41] Թ. Մեծոփեցի, էջ 69:

[42] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 621:

[43] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 17, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 628, «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 278-279, 287 ևն, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ, Երևան, 1936, էջ 107-108: V. Minorsky, Transcaucasica, Paris, 1930, p. 94-96, Али-Заде, նշված աշխատությունը, էջ 390-391:

տարին»[44]*:*

Լանկ-Թամուրի երրորդ արշավանքը: *Նկատի ունենալով իր տերության արևմտյան երկրամասերում ստեղծված ոչ կայուն ու խառնակ վիճակը, Լանկ-Թամուրը, Երնջակի գրավման լուրն առնելով, 1399 թ. սեպտեմբերին ուժեղ սպառազինված բանակով դուրս եկավ Սամարղանդից ու սկսեց իր երրորդ արշավանքը դեպի Անդրկովկաս, Միջագետք, Ասորիք ու Փոքր Ասիա:*

Մտնելով Իրանի հյուսիսային նահանգները, նա անցավ Արաքսը, մտավ Մուղան և 7 ամիս շարունակ, մինչև 1400 թվականի ամառը, ավերեց, գերեց ու կողոպտեց Վրաստանի և Հյուսիսարևելյան Հայաստանի շրջանները: Գրիգոր Խլաթեցին մեզ արդեն ծանոթ հիշատակարանում այս արշավանքի մասին գրում է. «Մրմռեալ գազանութեամբ կատաղին այն Լանկ–Թամուրն, և դարձեալ եկ երրորդ անգամ անթիւ զօրօք բազմութեամբ, առաւել քան զառաջինն և զերկրորդն: Եւ եկն եկաց ի վերայ աշխարհին Վրաց յաշնանային յեղանակէն մինչև յամառայինն, ամիսս է (7), աւելի և ոչ պակաս: Եւ առեալ բազում ամրոցս, և սպան զբազումս ի նոցանէ, մինչև զամենայն արս կոտորեաց, զորոց զկանայս և զտղայս գերի խաղացոյց անթիւս և անհամարս»[45]*:*

Գեորգի VII թագավորը և նրա եղբայրները, ինչպես Թ. Մեծոփեցին է վկայում, «զամենայն ազգն Վրաց և Հայոց յամրոցս արկեալ պահէին»: Բայց գտնվում են դավաճաններ վրաց ազնվականներից, որոնք մատնում են թշնամուն բերդերի գաղտնի կածանները: Թամուրյան զորքերն այստեղ ևս մեծ ավերածություններ են գործում և «աւելի քան զվաթսուն հազար» գերի տանում[46]*: Արևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի շատ բնակավայրեր վերածվեցին ավերակների, շատ շրջաններ անբնակ դարձան:*

Սրանից հետո Լանկ-Թամուրն իր բանակն ուղղեց դեպի Փոքր Ասիա և

44 «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 610:

45 Նույն տեղում, էջ 628:

46 Թ. Մեծոփեցի, էջ 66: Սարգիս գրիչը Տաթևում շարադրած իր հիշատակարանում հայտնում է, որ «զամենեսեան ի սուր և ի գերութիւն վարեաց. թուով ՃՌ (100.000)-աւ գրեցաւ զկորուսանն» («ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 5):

ծանր հարված հասցրեց օսմանյան թուրքերին:

Օղուզ կոչվող վաչկատուն ցեղերը, որ թուրքերի նախնիներն են համարվում, Միջին Ասիայից սկսել էին ներթափանցել Անատոլիա տակավին սելջուկների նվաճողական արշավանքների շրջանում: Սակայն հիմնական զանգվածով նրանք Խորասանից արևմուտք շարժվեցին՝ տեղի տալով մոնղոլական ցեղերի հաղթական գրոհներին, և տասնամյակների դեգերումներից հետո Փոքր Ասիա մտան XIII դարի կեսերին: Օղուզների ցեղապետ Էրթողրուլը, ծառայության մտնելով Իկոնիայի սուլթանի մոտ, իր հորդայի համար բնակության երկրամաս է ստանում Անկարայից արևելք և Բուրսայից արևմուտք ընկած տարածություններում: Էրթողրուլին հաջորդում է իր Օսման որդին, որը բեկի կոչում է ստանում և ճանաչվում որպես Բյուզանդական կայսրության սահմանամերձ շրջանների կառավարիչ: Օգտվելով մոնղոլների կողմից սուլթան կարգված Թուլամորթ Գիյաս-ադ-դին Մասուդ II-ի դեմ բարձրացված ապստամբությունից, 1299 թ. Օսմանն սկսում է կառավարել ինքնուրույն: Այս թվականը հենց համարվում է Օսմանյան պետության անկախ գոյության սկիզբը: XIV դարի սկզբներին սելջուկյան սուլթանության փլատակների վրա ստեղծված 10 կիսանկախ իշխանություններից օղուզ-թուրքերի իշխանությունը ուժեղագույններից էր: Իրենց նշանավոր ցեղապետի անունով օսմանցի (օսմանլի) կոչվող այս թուրքերը XIV դարում հաղթական պատերազմներ մղեցին թուրքական մյուս իշխանությունների դեմ և օր-օրի ընդարձակելով իրենց տիրույթները՝ դարավերջին միահեծան տերը դարձան ողջ Փոքր Ասիայի:

1358 թ. սուլթան Օրխանն անցնում է Հելեսպոնտն ու գրավում Գալիպոլին, այնուհետև սկսվում են օսմանցիների նվաճումները եվրոպական մայր ցամաքում: 1393 թ. Յըլդըրըմ (կայծակնահաս) սուլթան Բայազիտը գրավում է Բուլղարիան, իսկ երեք տարի հետո՝ 1396 թ. Նիկոպոլի մոտ ջախջախիչ պարտության մատնում թուրքերի դեմ խաչակրաց արշավանքի ելած համաեվրոպական ուժերին, որոնք նախահարձակ էին եղել Հունգարիայի թագավորի գլխավորությամբ:

Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական հաղթանակների այս շրջանում էր, որ Լանկ-Թամուրը հարձակվեց Թուրքիայի արևմտյան

նահանգների վրա[47]: Կարճ ժամանակում նա օսմանցիներից գրավեց Սեբաստիա և Մելիտինե քաղաքները՝ Փոքր Հայքում, որոնց բնակչության զգալի մասը հայեր էին: Սեբաստիայի բերդի պաշտպանները համաձայնեցին զենքը վար դնել՝ պայմանով, որ իրենց արյունը չթափվի: Նենգ ու անգութ Թամուրը կարգադրեց մի փոս փորել ու կենդանի թաղել նրա մեջ 3-4 հազարի չափ մարտիկների: Այսպիսով, «կատարեց» իր ուխտը և չհեղեց նրանց արյունը[48]:

«Ի սոյն ամի, – գրում է այդ մասին մի հայ հիշատակագիր, – Թամուր բէկն էառ զՍեւաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց. և ԳՌ (3000) մարդ երկիր բացեալ և կենդանոյն թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա»[49]:

Այնուհետև նա մտավ Եգիպտոսի մամլուկների տիրապետության սահմանները, ավերեց Հալեպն ու Դամասկոսը, իսկ քիչ անց, 1401 թ. կեսերին, Մերդինն ու Բաղդադը՝ Միջագետքում: Այս վայրերում ևս թամուրյաններն անասելի անգթություններ գործեցին. հարյուր հազարավոր անմեղ մարդկանց գլուխներից բուրգեր կազմեցին, մանկահասակներին սմբակակոխ ոչնչացրեցին:

1401-1402 թթ. ձմեռն անցկացնելով Դամասկոսում, գարնանը Թամուրը ձեռնարկեց նոր արշավանք օսմանյան թուրքերի դեմ, որոնք վերագրավել էին Սեբաստիան ու Երզնկան: Անկարայի մոտ 1402 թ. հուլիս ամսին տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Լանկ-Թամուրի և սուլթան Բայազիտ I-ի միջև: Վերջինս պարտություն կրեց ու գերվեց Թամուրի կողմից: Այս դեպքերից հետո թվում էր, թե իսպառ վերացավ Օսմանյան կայսրությունը. Նրա փոքրասիական երկրամասերի վրա գլուխ բարձրացրին սելջուկյան ընկճված ավատատեր-իշխանները, որոնք թամուրյանների թողտվությամբ վերականգնեցին կիսանկախ իրենց իշխանությունները:

1403 թ. Լանկ-Թամուրը կրկին արշավեց Վրաստան ու Աբխազիա:

47 Տե՛ս А. Крымский, История Турции и ее литературы. М., 1916.

48 Տե՛ս Արապշահ, էջ 109-110: Թ. Մեծոփեցի, էջ 65: «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 288:

49 «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 3-4:

Իբրահիմ Շիրվանշահի միջնորդությամբ, որը նրա դաշնակիցն էր, հաշտվեց վրաց Գեորգի VII թագավորի հետ. վերջինս ընդունեց թամուրյանների իշխանությունն ու մուծեց մեծ փրկավճար:

Այսպիսով, 1399-1403 թթ. պատերազմական գործողությունների ավարտից հետո Լանկ-Թամուրը դարձավ ողջ Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Միջագետքի ու Սիրիայի տիրակալ: Նրա գերագույն իշխանությունը ճանաչեց նաև Եգիպտոսի սուլթանը:

1403-1404 թթ. Թամուրն իր բանակով ձմեռեց Ղարաբաղի դաշտային մասում, իսկ գարնանը մեծ ավարով ու գերիներով վերադարձավ Սամարղանդ: Մեռավ 1405 թ. փետրվարին, 70-ամյա հասակում, դեպի Չինաստան ձեռնարկած մեծ արշավանքի ճանապարհին:

Նրա մահվան լուրը ցնծությամբ ընդունվեց նվաճված ժողովուրդների կողմից: «Յայսմ ամի, – գրում է այդ մասին մի հիշատակագիր, – մեռաւ Թամուր ղան, որ Ի. մի (21) ամ իբրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա աստուած ի ձեռն, և ում կամէր արբուցանէր, զի յարևելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեց՝ զհաւատացեալսն և զանհաւատս, զամենեսեան սրախողխող արար»[50]:

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԱ-ԿՈՅՈՒՆԼՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Թամուրի մահվանից հետո նրա հսկայածավալ պետությունը, որ ստեղծվել ու գոյատևում էր բռնությամբ ու ահաբեկումով, սկսեց արագությամբ քայքայվել: Գահաժառանգների միջև ծայր առան արյունալի կռիվներ: Միրանշահը, որը հոր կողմից զրկվել էր թամուրյան պետության արևմտյան երկրների («Հուլավուի թախթի») վրա իշխելու իրավունքից և տիրում էր միայն Հայաստանի և Վրաստանի վրա, սկսում է պատերազմ իր որդու՝ Միրզա-Օմարի դեմ: Թամուրի մյուս որդին՝ Շահռուխը, որը պայքար էր մղում պետության արևելյան շրջաններում, Միրանշահի մյուս որդի

50 «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 53:

խալիլի դեմ, միաժամանակ օգնում էր Միրանշահին՝ Միրզա-Օմարի դեմ նրա մարտերում:

1405 թ. ամռանը Միրզա-Օմարի կողմից բանտ նետված Աբուբաքր եղբայրը փախչում է, միանում է հորը՝ Միրանշահին, և նրանք երկուսով արշավում են դեպի Ատրպատական՝ Միրզա-Օմարի դեմ: Զորքը լքում է Միրզա-Օմարին, և Աբուբաքրը Սուլթանիեյում իր հորը հայտարարում է փադիշահ: Օգտվելով միջդինաստիական այս պայքարից, կարճ ժամանակով (1406 թ. մայիս-հունիս) Շիրվանշահ Իբրահիմը, որն իր շուրջն էր համախմբել Թամուրյան տիրապետությունից դժգոհ և այդ ծանր լուծը թոթափելու համար առիթ որոնող տեղական մի շարք տիրակալների (Վրաց թագավորը, Շաքիի, Գանձակի ու Արդաբիլի տերերը և այլք) գրավում է Թավրիզը: Շուտով, սակայն, գահակալական պայքարի ասպարեզ է մտնում Կարա-Յուսուֆը[51]: Սա Ջելաիրյան սուլթան Ահմադի հետ միասին Լանկ-Թամուրի վերջին արշավանքի ժամանակ պարտություն կրելով Միջագետքում ապաստանել էր Եգիպտոսում, որպես քաղաքական վտարանդի: Թամուրի մահվանից անմիջապես հետո նա սկսում է ուժեր հավաքել՝ Թամուրյանների դեմ դուրս գալու նպատակով:

Կարա-Յուսուֆին հպատակություն են հայտնում և զինական օգնություն ցույց տալիս Բաղեշի քուրդ ամիր Շամս-ադ-դինը, Ոստանի ամիր Եզդինը և ուրիշներ: 1406 թ. աշնանը նա պարտության է մատնում Աբուբաքրին և գրավում Թավրիզը: 1407 թ. արշավում է Վրաստան (ճակատամարտում սպանվում է Գեորգի VII թագավորը), գերեվարում է 15 հազար մարդ: Յուսուֆի և Թամուրյանների վերջին բախումը տեղի ունեցավ 1408 թ. ապրիլի 21-ին Թավրիզի մոտակայքում: Միրանշահը, որ իր եղբայր Շահրուխից 20 հազարանոց օգնական ուժ էր ստացել, փորձում է վերահաստատել իր իշխանությունը, սակայն կատարյալ պարտություն է կրում և սպանվում: Կարա-Յուսուֆը տիրում է Հայաստանի մեծ մասին ու Ատրպատականին՝ մինչև Արդաբիլ ու Սուլթանիե: Այնուհետև նա նվաճողական կռիվներ է սկսում Միջագետքում և Փոքր Ասիայում: 1409 թ. գրավում է

[51] Այս դեպքերի մասին տե՛ս И. П. Петрушевский, Государства Азербайджана в XV в., Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку. 1949, с. 153-156.

Մերդինը, 1410 թ. Մշո դաշտում ջարդում է Աղ-կոյունլու Կարա-Յուլուք Օսմանին և պաշարում Դիարբեքիրը (Ամիդ) և Արղնին:

Օգտվելով Կարա-Յուսուֆի բացակայությունից, ջելաիրյան սուլթան Ահմադը փորձում է դուրս գալ իր «դաշնակցի» տհաճ ընկերակցությունից: Այդ նպատակով նա դաշնակցում է Շիրվանշահ Իբրահիմի հետ: Լուր ստանալով այդ մասին, Կարա-Յուսուֆը շուտափույթ հաշտություն է կնքում Աղ-կոյունլուների հետ, արագ արշավով վերադառնում է Ատրպատական և 1410 թվականի օգոստոսի 30-ին տեղի ունեցած ճակատամարտում պարտության է մատնում ապստամբներին ու խեղդամահ անում սուլթան Ահմադին[52]: Հաջորդ թվականին նա ջելաիրյաններից գրավում է նաև Բաղդադը և, այսպիսով, Ատրպատականի, Հայաստանի և Իրաքի վրա հաստատում է Կարա-կոյունլուների տիրապետությունը (1410-1468):

Աշխարհակալ մի պետության տիրակալ դառնալուց հետո էլ Կարա-Յուսուֆը չդավաճանեց քոչվորական կենցաղին ու հոգեբանությանը: Նա գահն անվանապես հանձնեց իր Փիր-Բուդաղ որդուն, իսկ ինքը Թավրիզից փոխադրվեց Հայաստանի կենտրոնական շրջաններից մեկը՝ Վաղարշակերտ (Ալաշկերտ), իրեն հարազատ մի միջավայր, ուր ապրում էին նստակյաց հայեր՝ երկրի բուն բնակիչները, և քոչվոր թուրքմեններ՝ Կարա-կոյունլու ցեղախմբի ամենառազմունակ Բահարլու ցեղը, որի առաջնորդն էր ինքը՝ Կարա-Յուսուֆը:

Կարա-Յուսուֆն իշխեց համեմատաբար խաղաղ պայմաններում: Նրա մղած պատերազմներն ու պատժարշավները մեծ մասամբ տեղական բնույթ ունեին: 1411 թվականին նա պարտության մատնեց ապստամբության դրոշ պարզած Շիրվանշահ Իբրահիմին և Վրաց Կոստանդին թագավորի միացյալ զորքերին (հիմքեր կան ենթադրելու, որ այս ապստամբությանը մասնակցել են նաև հայ ֆեոդալներ)[53]:

1416 թվականին, Ախալցխայի մահմեդականների սադրանքով, Կարա-Յուսուֆն արշավեց Վրաստան ու գրավեց Ախալցխա քաղաքը: «Եւ զամենեսեան, — ասում է ժամանակակից մի գրիչ, — առհասարակ զարկն ի

[52] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 72-73:

[53] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, Առաջաբան, էջ 13-14:

սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ»[54]: Գրիգոր Խլաթեցին հայտնում է, որ գերվածների թիվը 10 հազարից ավելի է եղել[55], իսկ Թ. Մեծոփեցին՝ «աւելի քան զվեց հազար» է հաշվում[56]:

1418 թ. Կարա-Յուսուֆն արշավեց Հյուսիսային Միջագետք, ապա մտավ Սիրիա, բայց՝ լսելով Փիր-Բուդաղ որդու մահվան լուրը, ետ դարձավ: Այդ մասին Թ. Մեծոփեցին, օգտագործելով ժողովրդական թևավոր մի դարձվածք, ասում է. «Դարձեալ գնաց յետ այսորիկ ի Տիարպէկն և էջ ի վերայ կողմանն Շամայ իբրև աղուէս, և ջղջկան տկար յետս դարձաւ»[57]:

Թամուրյանների տիրապետության և ամենամյա կործանիչ պատերազմների սարսափները ճաշակած հայ ժողովրդի համար Կարա-Յուսուֆի իշխանության տարիները խաղաղ էին թվում: «Եւ եղև, — գրում է Թ. Մեծոփեցին, — ի նոյն ժամանակս խաղաղութիւն ... և շինութիւն ամենայն աշխարհիս, մինչ զի յԱրճիշու մինչ ի գաւառն Արարատեան մարդիկ ի յաւեր ոչ բնակէին, այլ ի շէնս բնակէին. և թէպէտ հարկապահանջութիւնն բազում էր. սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»[58]: Իսկ Գիրգոր Խլաթեցին ավելացնում է, որ Կարա-Յուսուֆը.

Արար բազում խաղաղութիւն
Եւ աջողումն մարդկային.
Էր էմնութիւն և էժնութիւն,
Ամենեին անգողութիւն[59]:

Խաղաղության այս մի քանի տարիներին ժողովուրդը հնարավորություն ստացավ վերականգնելու քայքայված տնտեսությունը և, նույնիսկ, որոշ վայրերում շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ կատարվեցին: Այսպես, օրինակ, վերաշինվեց Կարս քաղաքը («Եղև շինութիւն և նորոգութիւն հռչակաւոր քաղաքիս Կարուց»)[60] և այլն:

[54] Նուն տեղում, էջ 181-187:
[55] Տե՛ս նույն տեղում, էջ 280-281:
[56] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, հրատ. Կ. Կոստանյանց, Թիֆլիզ, 1892, էջ 62:
[57] Թ. Մեծոփեցի, էջ 78:
[58] Նույն տեղում, էջ 73:
[59] «ԺԵ դարի ճիշատակարաններ», Ա, էջ 289:
[60] Նույն տեղում, էջ 134:

Երկար չտևեց, սակայն, համեմատաբար բարվոք այս շրջանը: 1419 թվականին Խորասանի և Իրանի հարավային ու արևելյան մասերի տիրակալ Շահռուխի հետ գաղտնի պայմանավորվածությամբ, Կարա-կոյունլուների պետության արևմտյան սահմանների վրա հարձակում գործեց Աղ-կոյունլու Օսմանը: Քիչ անց զինական մեծ ուժերով արևելքից արշավեց նաև Շահռուխը: Կարա-Յուսուֆը դուրս եկավ նրա դեմ, բայց մահացավ ռազմերթի ճանապարհին, 1420 թվականի նոյեմբերին:

Կարա-Յուսուֆի մահը խուճապ է առաջացնում նրա բանակում. նահանջի ճանապարհին, անգլուխ այդ զորքը մեծ խժդժություններ է գործում: Ժամանակակից մի գրիչ հաղորդում է, որ «Յամի ութհարիւր և եւթանասուն թուականի Հայոց (1421), և յետ մահուան Ղարա-Յուսուֆին, եղև խռովութիւն և յոյժ սասանումն ընդ ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազորքն ամենայն շփոթեալ՝ զմիմեանս հարկանէին և կողոպտէին»[61]:

Շահռուխն իր հսկայական բանակով, առանց դիմադրության հանդիպելու, հասնում է մինչև Խլաթ:

Կարա-Յուսուֆի Իսքանդար որդին, որ կռվում էր պետության արևմտյան սահմաններում Աղ-կոյունլու Օսմանի դեմ, պարտության է մատնում նրան և 150 հազարանոց բանակով գալիս է թամուրյաններին ընդառաջ: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Վաղարշակերտի դաշտում, Բագվանի մոտ, 1421 թ. օգոստոսի 1-ին: Կարա-կոյունլուները խայտառակ պարտություն են կրում. Իսքանդարն ու իր եղբայր Սպանդիարը (կոչվում է նաև Իսպենդ ու Ասպահան) փախչում են Մերդինի ու Մոսուլի կողմերը, իսկ Շահռուխը մեծ ավարով վերադառնում է Խորասան[62]:

Թամուրյաններն իրենց հետ տանում էին մեծ թվով գերիներ: «Կին և որդայքն ի թիւ չանկան, զոր գերեցան և կոխեցան», — հայտնում է Գր. Խլաթեցին[63], բայց շատ ավելի զոհեր է տալիս հայ ժողովուրդն այդ տարիներին բնական արհավիրքներից՝ մորեխի հետևանքով առաջացած սովից և մահտարաժամից:

[61] Նույն տեղում, էջ 254, հմմտ. նաև էջ 281:
[62] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 81, հմմտ. «ԺԵ դարի ճիշատակարաններ», Ա, էջ 250, 282 և այլն:
[63] «ԺԵ դարի ճիշատակարաններ», Ա, էջ 282:

1419 թ. «ըստ անչափութեան աւազոյ ծովու» մորեխ է հայտնվում, որ թանձրախիտ ծածկում է. «զդաշտ և զլերինս, զսար և զձոր միահաղոյն, ի Սալմաստայ մինչ յԱրզրումն»[64]: Բայց այդ տեղի է ունենում հնձի ժամանակ, ուստի հնարավոր է լինում բերքի մի մասը փրկել: Իսկ մյուս՝ 1420թ. և հետագա տարիներին մորեխն ավելի մեծ ավերածություն է գործում, որի հետևանքով սովի են մատնվում Հայաստանի բազմաթիվ շրջաններ:

Շահրուխի վերադարձից հետո Հայաստանում կրկին հայտնվում է Կարա-Յուսուֆի որդի Սպանդիարը. նա ասպատակում է Արճեշի և Արծկեի շրջանները, քանդում Բասենի և Ավնիկի ամրությունները և, հատկապես, մեծ վնասներ պատճառում Կարին քաղաքին: «զԿարնոյ քաղաքըն՝ զԱրզրում քան զամենայն խիստ աւերեց», — գրում է Գր. Խլաթեցին, գրավում է Թավրիզը, սակայն կարճատև: Շուտով հայտնվում է Իսքանդարը և փախուստի մատնում իշխանատենչ եղբորը:

Եվ այսպիսով, Իսքանդարին հաջողվում է վերահաստատել Կարա-կոյունլուների պետությունը՝ իր նախկին սահմաններով: Ժամանակակից մի հիշատակագիր հայտնում է, որ նա տիրել է «Պարսից և Բաբելացւոց, Հայոց և Միջագետաց Ասորւոց, յԱրարատեան տանէն Հայոց՝ մինչ յԵզնկայն, ի Մերդին, ի Բաղդադ, ի Սուլթանիայ, և ի Գանձակ շահաստանն Թաւրէզ և մինչ ի գետն Քուռ»:

XV դարի 20-ական թվականներին տեղի ունեցած շարունակական պատերազմների, գաղթերի ու տեղահանությունների, ինչպես նաև բնական արհավիրքների հետևանքով Հայաստանի շատ շրջաններ անմարդաբնակ էին դարձել: Ազգաբնակչության կազմի մեջ տեղի էին ունեցել զգալի փոփոխություններ, քրդական ու թուրքական մի շարք քոչվոր ցեղեր կայուն բնակություն էին հաստատել Հայաստանի բարեբեր շրջաններում: Այդուհանդերձ Իսքանդար Կարա-կոյունլուն զգալի չափով հայ էթնիկական տարրի վրա էր հենվում կենտրոնաձիգ ուժեղ պետություն ստեղծելու իր ծրագիրն իրականացնելիս: Նա իրեն շահ-ի Արման (թագավոր Հայոց) էր կոչում, պետական բարձր պաշտոնների էր առաջ քաշում հայ ֆեոդալական տների որոշ ներկայացուցիչների, իր զորքերի մեջ հավաքագրում էր նաև

[64] Նույն տեղում, էջ 225. 226. 375:

հայ ռազմիկների և այլն[65]:

1422-1427 թթ. Իսքանդարը համառ պայքար ծավալեց Հարավային Հայաստանի մի շարք շրջաններում՝ Բաղեշում, Ռշտունիքում, Խիզանում և այլուր հաստատված քրդական կիսանկախ ամիրությունների դեմ, որոնք տեղական շահերից ելնելով, բախվում էին կենտրոնական իշխանությանը, վտանգի պահին լքում էին իրենց սյուզերենին և հաճախ հանդես գալիս թշնամիների բանակում: Իսքանդարը գիտակցում էր, որ Կարա-կոյունլուների ընդարձակ պետության ամրապնդման և արևմտյան սահմանների ապահովման համար անհրաժեշտ է սանձել կիսանկախ ամիրների կենտրոնախույս ձգտումները, թույլ չտալ, որ նրանք փոխադարձաբար ասպատակեն միմյանց տիրույթները[66]: Եվ նա ծրագրված պայքար սկսեց Բաղեշի ու Ռշտունիքի քրդական ամիրությունների դեմ: 1422 թ. օգոստոսին պաշարեց Բաղեշի ամիրության կարևոր կենտրոններից Խլաթը և սպանեց իր փեսա Շամս-ադ-դին ամիրին: Խլաթի բերդը գրավել նրան չհաջողվեց, բայց այրեց քաղաքը[67]: Այնուհետև պաշարում է Աղվանք բերդը, հայերը դիմադրում են, բայց պարտվում և 200-ից ավելի զոհ են տալիս[68] : Այս վայրերից Կարա-կոյունլուները 500 գերի են վերցնում:

1423 թ. Իսքանդարը թունավորում է ամիր Եզդինի որդի Մելիք-Մահմադին, որը հոր մահվանից հետո (հավանաբար մհ. 1419 թ.) Վանի ու Ոստանի ամիրն էր դարձել: Շամբո կոչվող քրդական ցեղապետերի այս ընտանիքը տիրում է Վասպուրականի հարավային գավառների վրա:

[65] Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից («Տեղեկագիր», 1955, N 8, էջ 84-88):

[66] Ռշտունիքի ու Բաղեշի ամիրությունները, օրինակ, հաճախ դուրս էին գալիս մեկը մյուսի դեմ ու փոխադարձաբար ավերում գյուղեր ու շրջաններ: Այսպես, 1408 թ. Բաղեշի Շամս-ադ-դին ամիրը և Կարա-Յուսուֆը «շատ աւեր արարին Վանայ և Ոստանայ»: Հաջորդ տարին Շամս-ադ-դինի հեծելազորն արշավեց Շատվան (Ռշտունիքում) և այրեց այն: Ռշտունիքի ամիր Եզդինը պատասխան արշավանք կազմակերպեց. «Եւ բարկացեալ Ամիր-Եզդին գնաց և այրեաց Կ (60) գեղ ի Բաղիշոյ» (Մժ, I, էջ 119): Այս նույն անցուդարձերը Սամուելի շարունակողը (էջ 173) դնում է 1419 թ. տակ:

[67] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա., էջ 283, Թ. Մեծոփեցի, էջ 84:

[68] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա., էջ 284, Թ. Մեծոփեցի, էջ 83:

1424թ. Իսքանդարը ձերբակալում է Մելիք-Մահմադի եղբայր սուլթան Ահմադին և պահանջում առանց դիմադրության հանձնել իրեն ամիրության բոլոր բերդերը: Մերժում ստանալով, Իսքանդարը սպանում է նրան ու մեծ զորքով արշավում Ոստանիկ: Հիսուն օր ապարդյուն պաշարում է Վանի բերդը: 1425 թ. գարնանը Իսքանդարի զորքերը նորից են հայտնվում Ոստանիկում, մեծ ավերածություններ գործում ու շարունակում Վանի պաշարումը: Սուլթան Ահմադի որդի Մելիք-Ասադը ստիպված հանձնում է բերդը և անցնում Ջուլամերիկ[69]: Պարտություն է կրում ու սպանվում նաև քրդական նույն ֆեոդալական տան անդամներից ամիր Բահա-ադ-դինը, որն իշխում էր Ուրմիայում[70]: Այսպիսով, երկու տարի տևող մարտերից հետո, Կարա-կոյունլուներին հաջողվում է տիրել Շամբոյան տան բոլոր տիրույթներին:

Ի պաշտպանություն Իսքանդարի կողմից ոչնչացվող քրդական ամիրայությունների, Վանա լճի հյուսիսային շրջաններում հանդես է գալիս Աղ-կոյունլու Կարա-Յուլուք Օսմանը, որին մի հայ հիշատակագիր կոչում է «թագաւոր ամենայն Ղ՟իջագետաց, պարոնաց պարոն շահ Օթման Պահատուր»: Երեք տարի պաշարումից հետո, 1425 թվականին նա գրավում է Երզնկան, ասպատակում Արճեշի և Արծկեի շրջանները՝ գերեվարում բնակչությանը[71]: Կարա-կոյունլուները 1426-28թթ. հակահարված են տալիս Աղ-կոյունլուների ու Բաղեշի քուրդ ամիրների միացյալ ուժերին, և ապարդյուն պաշարում են Բաղեշի բերդը: Միաժամանակ պատերազմական գործողություններ են սկսում պետության տարբեր մասերում իրենց գոյությունը պահպանած կիսանկախ իշխանությունների դեմ: 1426 թվականին վերջ է տրվում Արտազի (Մակվի) հայկական իշխանությանը, որը գտնվում էր կաթոլիկ հայ ֆեոդալ Սոյուրղաթմիշի ձեռքին[72]: Այնուհետև

[69] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 84:

[70] Տե՛ս Ս. Մուրադյան և Ն. Մառնիսյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ ս. Առաքելոց-թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, էջ 111:

[71] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 326:

[72] Տե՛ս նույն տեղում, էջ 353, 376: Արտազի հայկական իշխանության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել Կլավիխոն, որը 1404 թ., որպես Իսպանիայի թագավորի դեսպան, անցնում էր Հայաստանով դեպի Սամարղանդ (տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 114-116):

Իսքանդարը հարձակվում է Շիրվանի վրա, ստիպում Շիրվանշահ Խալիլուլլահ I-ին (1417-1462) ենթարկվել Կարա-կոյունլուներին, ապա ներխուժում է Թամուրյանների տիրապետության սահմաններն ու գրավում Սուլթանիե, Զենջան ու Ղազվին քաղաքները:

Բախումը Թամուրյանների ու Կարա-կոյունլուների միջև դառնում է անխուսափելի: 1428 թ. հոկտեմբերին Իսքանդարի դեմ պատերազմական գործողություններ է սկսում Շահռուխի զորահրամանատարը, իսկ 1429 թ. մայիսին գլխավոր ուժերով հանդես է գալիս ինքը՝ Շահռուխը:

Սալմաստի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Իսքանդարը պարտություն է կրում: Թամուրյաններն ասպատակում են Հայաստանի տարբեր շրջանները. հատկապես տուժում է Վասպուրականի և Քաջբերունիքի բնակչությունը: Անդրադառնալով այդ դեպքերին Դավիթ գրիչը հայտնում է, որ Շահռուխը «աւերեալ քանդեաց բազում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ՝ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ տարաւ ի Սամըրղընդ»[73]:

1430 թ. գարնանը Կարա-կոյունլուների պետության գահը հանձնելով Իսքանդարի եղբայր Աբու-Սայիդին, Շահռուխը վերադարձավ Սամարղանդ:

Այս զորաշարժերի ու ասպատակությունների ընթացքում ժողովուրդն ստիպված էր ծվարել անմատչելի լեռնածերպերում, փախչել իր բնակավայրերից, երկիրը թողնելով անմշակ: Դրա հետևանքով 1431 թ. Հայաստանում և Ադրբեջանում սով է սկսվում, որն իր հերթին մարդկային մեծ զոհեր է կլանում:

1431 թ. Իսքանդարն սպանում է իր Աբու-Սայիդ եղբորը և վերագրավում գահը: 1434 թ. արշավում է Շիրվան, որի ընթացքում նրա զորքերն անխնայաբար ոչնչացնում են Շիրվանի զարգացած շերամապահության հիմքը՝ թթենիների այգիները: Այնուհետև արշավում են «յայնկոյս դրանն Դարբանդու» (Դաղստան). մեկ տարի մնում են այնտեղ ու «սրախողող անելով զլեռնականս և զդաշտականս» ետ վերադառնում[74]: Շիրվանշահ Խալիլուլլահի խնդրանքով 1435 թ. Շահռուխը երրորդ անգամ պատերազմական գործողություններ է ծավալում Իսքանդարի դեմ: Թամուրյանները

[73] «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 419:

[74] Թ. Մեծոփեցի, էջ 100:

պաշարում են Երնջակի բերդը: Իսքանդարը փախչում է պետության արևմտյան շրջանները: Ծանր վիճակ է ստեղծվում հայ ժողովրդի համար: Շուրջ մեկ տարի նրանք ավերում ու հրո ճարակ են դարձնում անպաշտպան գյուղերն ու շեները, կողոպտում, գերում ու հավատափոխ են անում բնակչությանը: Շատ-շատերը թողնում են իրենց հայրենի օջախը և գաղթում այլ երկրներ: Բազմաթիվ հիշատակագիրներ նկարագրել են սրտաճմլիկ այս դեպքերը: Աստվածատուր գրիչը, Կոտայքի Արծնի գյուղից, հայտնում է, որ Շահրուխը իր «անգութ, և անպորոյն, և անողորմ, զորքերով անասելի ավեր ած ի վերայ աշխարհիս Հայոց: Զի զոր սրով կոտորեաց, և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս, և զոր սովամահ եղան, և զոր մահն տարաւ, և զորս գայլք և գազանք կերան և պատառեցին, և մնացեալքն այսր և անդր փախեան բնաջինջ և մտին յաշխարհն Վրաց»[75]:

Ջգալի դատարկվում է Սյունյաց երկիրը: Բեշքեն Օրբելյանը 6000 տուն[76] հայ բնակչության գլուխն անցած, գիմադրելով Շահրուխին, անցնում է Լոռի, ուր կալվածքներ է ստանում Վրաց Ալեքսանդր թագավորից[77]:

Շահրուխն այս անգամ ևս վերջ չի տալիս Կարա-կոյունլուների իշխանությանը: Իսքանդարի Ջհանշահ եղբայրը հնազանդվում է Շահրուխին և ստանում գահը. 1436 թ. գարնանը թամուրյանները վերադառնում են Խորասան:

Իսքանդարն իր պետության արևմտյան շրջաններում պատրաստություններ էր տեսնում իշխանությունը վերստին գրավելու: Նա փոքրաթիվ ուժերով հաջող մարտեր է մղում Ակ-կոյունլուների դեմ: 1435 թ. մի ճակատամարտում սպանում է Կարա-Յուլուք Օսմանին ու բարձրաստիճան շատ գործիչների, այնուհետև արշավում Սեբաստիայի, Թոխաթի, Խարբերդի ու Դերջանի շրջանները և կազմակերպում հայ բնակչության բռնագաղթ Այրարատյան և Սյունյաց նահանգների նոսրացած բնակավայրերում նրանց

[75] «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 485:

[76] Թ. Մեծոփեցու պատմության հրատարակության մեջ ասված է. «աւելի քան զ60.000 քրիստոնեայ տունս» որ գրչագրական աղավաղում է անշուշտ: Մաշտոցի անվան Մատենադարանի բոլոր ձեռագրերը տալիս են «աւելի քան զՋՌ» (6000). ընթերցվածքը, որը գտնում ենք նաև Ղ. Ալիշանի մոտ (տե՛ս «Սիսական». Վենետիկ, 1893, էջ 96):

[77] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 117-118, «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 466-470:

վերարնակեցնելու նպատակով: Ճանապարհին ցրտից ու սովից մեռնում է 700-ից ավելի մարդ[78]:

1437 թ. Իսքանդարը բախվեց Ջհանշահի հետ և սկզբից որոշ հաջողություն ունեցավ[79], բայց դրությունը շուտով փոխվեց: Իսքանդարի հրամանատարության ներքո գործող զորախմբերը, հոգնած ու ձանձրացած հարատև պատերազմներից, լքեցին նրան ու անցան Ջհանշահի կողմը: Իսքանդարը պատսպարվեց Երնջակի բերդում՝ պայքարը շարունակելու վճռականությամբ, բայց սպանվեց իր Շահ-Կուբադ որդու կողմից[80]:

Եվ սակավ ժամանակով, ինչպես հաղորդում է Թովմա Մեծոփեցին, խաղաղություն տիրեց, որովհետև Իսքանդարի կենդանության օրոք, Խորասանից սկսած մինչև Եգիպտոս, երկիրը վրդովման և ալեկոծման մեջ էր, և միայն նրա մահվանից հետո հպատակ ժողովուրդները շունչ քաշեցին:

***

Ջհանշահն իշխեց մինչև 1467 թ.: Նրա օրոք. 1441 թ. հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն: Կաթողիկոսական աթոռը, դարավոր դեգերումներից հետո, վերահաստատվեց Հայաստանի կենտրոնում՝ Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում:

Աթոռի Էջմիածին տեղափոխելու գաղափարն արծարծվել էր XIII դարի վերջերից, երբ Հռոմկլան՝ հայ կաթողիկոսների երկդարյա նստավայրը, գրավեց ու ավերեց Եգիպտոսի սուլթան Մելիք-Աշրաֆը (1292): Այդ գաղափարի արտահայտություն պետք է համարել Ստ. Օրբելյանի «Ողբ ի սուրբ կաթուղիկէն» պոեմը, որի մեջ հեղինակը բաղձանք է հայտնում Էջմիածնում վերականգնված տեսնել՝ «զաթոռ թագաւորին և զգաւազան պատրիարգին»: Կաթողիկոսական աթոռը մայր հայրենիք տեղափոխելու նպատակով որոշակի քայլեր են կատարվում Հովհան Որոտնեցու (մհ. 1386 թ.) կողմից, որը, ինչպես հաղորդում է Գրիգոր Տաթևացին, ծրագրել էր Գանձասարը դարձնել հայ կաթողիկոսության կենտրոն, հաշվի առնելով,

[78] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 105, «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 486:

[79] Ժամանակակից մի հիշատակագիր ասում է նույնիսկ, որ «Սքանդարն դարձաւ և փախոյց զեղբայրն և նստաւ ի թախտն» («ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 484):

[80] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, Առաջաբան, էջ XXX:

անշուշտ, այն հանգամանքը, որ այդ վանքը, հնավանդ կաթողիկոսական իր աթոռով, համեմատաբար ապահով պայմանների մեջ էր Հասան-Ջալալյան ֆեոդալական գերդաստանի իշխանության ներքո[81]:

Աթոռի տեղափոխման հարցի լուծումն առավել հրամայական դարձավ 1426 թ. հետո, երբ Կիլիկյան Հայաստանի վերջին հայ իշխանավորը՝ Կոստանդին անունով, անկարող լինելով դիմագրավել Եգիպտոսի Մուզաֆար սուլթանի հարձակմանը, բազմահազար արտագաղթողների գլուխ անցած թողեց Սիսը և ապաստան գտավ Կիպրոսում: Անվանի պատմաբան Մ. Օրմանյանը իրավամբ նկատում է, որ «այլևս պատճառ մըն ալ չկար, որ հայրապետական աթոռը յուր պանդխտությունը շարունակեր, որուն միակ արդարացումը ազգային քաղաքական իշխանության Վաղարշապատէ դուրս եղած ըլլալն էր»[82]:

1431 թ. Էջմիածնի վանքը տնտեսապես ամրապնդելու և կաթողիկոսական աթոռանիստ դարձնելու նպատակով, Սյունյաց իշխան Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամը, որն Իսքանդար Կարա-կոյունլուի ամենամերձավոր խորհրդականներից էր ու, թերևս նշանակվել էր Այրարատյան երկրի կողմնապետ, վաճառքի անվան տակ Էջմիածնի վանքին է նվիրում յոթ խոշոր գյուղեր (Վաղարշապատ, Օշական, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաշլի և Մուղնի)[83]:

Կաթողիկոսական աթոռը Էջմիածին փոխադրելու նախաձեռնողները, անշուշտ, փայփայում էին քաղաքական որոշ հեռապատկերներ: Այրարատի կենտրոնում վերահաստատված հայրապետական աթոռը համահայկական կենտրոնի դեր ստանձնելով, ինչ-որ չափով շաղկապելու էր հայ ժողովրդի տարբեր բռնապետական իշխանությունների տակ հեծող հատվածները և հող էր նախապատրաստելու երկրի անկախության վերականգնման համար: Այսպիսի հույսեր կարող էր փայփայել Ռուստամ Օրբելյանը, որը պաշտոնական փաստաթղթերում մեծարվում էր «Վեհանձնյա ամիր և

[81] Տե՛ս Գր. Տաթևացի, Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի վասն արտոյն Աղթամարայ, Մատենադարան, ձեռագիր N 4669, էջ 199բ-200բ:

[82] Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս. 1914, էջ 2092:

[83] Տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի հողային կյանքի պատմությունից («Տեղեկագիր», 1955, N 8, էջ 83-100):

իշխան, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն վստահելի ծառա և ամենաազնիվ վեզիր, նորին կայսերական մեծության Սուլթանի մահրիմ...» բարձրագոչ տիտղոսներով[84]:

Մեծ էր լինելու հայ եկեղեցու միաբանական կենտրոնի դերը նաև հարևան և հեռավոր երկրներում ստեղծված հայկական գաղթավայրերի միջև մշակութային ու գաղափարական կապեր հաստատելու, ուսումնական կենտրոններ հիմնելու և հայրենի միջավայրից կտրված ու ցրված հայ զանգվածներին ազգային ավանդույթներով շաղկապելու գործում:

Էջմիածինը հայ եկեղեցու կենտրոն դարձնելու գաղափարին համակիր էին հայ ժողովրդի լայն շրջանները, որովհետև Սսի կաթողիկոսներն ու նրանց կողմից կարգված եկեղեցականները կեղեքում էին ժողովրդին: Նրանք հոգևորական էին ձեռնադրում միայն նրանց, ովքեր «տեարք էին ընչից» որովհետև «արծաթով տային զշնորհս հոգւոյն սրբոյ»: Միևնույն թեմի վրա երբեմն նշանակվում էին 3, նույնիսկ 4 եպիսկոպոսներ, որոնք «ի վերայ միմեանց յարուցեալ, զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ զաղթակղութեամբ զաշխարհս մեր կործանէյին»: Եպիսկոպոսներից շատերը շվայտ ու անբարոյական կենցաղ ունեին, «անառակութեամբ և արբեցողութեամբ և պիղծ վարուք շրջէին» և դրամով գնած լինելով իրենց պաշտոնը՝ միջոցի առջև կանգ չէին առնում հնարավորին չափ կարճ ժամանակում հարստություն դիզելու համար[85]:

1441թ. Թովմա Մեծոփեցու և Հովհաննես Կոլոտիկ Հերմոնեցու նախաձեռնությամբ Էջմիածնում գումարվում է մեծ ժողով, որին մասնակցում են 12 եպիսկոպոսներ, 18 վարդապետներ և 300-ից ավելի քահանաներ, կալվածատերեր, ձեռնավորներ, տանուտերեր և «բազմութիւն ժողովրդեան»: Այրարատյան նահանգի կառավարիչ Յաղուբ-բեկը, որ, անշուշտ, կատարում էր Ջհանշահի հրահանգը, նպաստավոր պայմաններ է ստեղծում ժողովականների համար. Նրանց «փողով և թմբկով և զուռնով» Երևանից ճանապարհ են դնում Էջմիածին[86]:

Ժողովականները բաժանված էին երկու ուժեղ խմբակցության

[84] Նույն տեղում, էջ 86:

[85] Տե՛ս Թ. Մեծոփեցի, Յիշատակարան, էջ 51-61:

[86] Նույն տեղում, էջ 68:

Վասպուրականցիների և Սյունեցիների, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր կաթողիկոսական գահին բազմեցնել իր թեկնածուին: Երկար վեճերից հետո ընտրվում է չեզոք մի անձնավորություն՝ Կիրակոս Վիրապեցին: Սակայն երկու տարի չանցած՝ 1443 թ., նա արտաքսվում է, և Սյունյաց խմբակցության կողմից կաթողիկոս է հռչակվում Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյանը, այն հոգևորականը, որի անունով հենց 1431 թվականին ձևակերպված էր էջմիածնի վանքի 7 գյուղերի կալվածագիրը:

Այսպիսով, 1441 թվականին, շուրջ հազարամյա դեգերումներից հետո, էջմիածինը կրկին դառնում է հայ եկեղեցու գերագույն պետերի աթոռանիստ կենտրոն: Ինքնուրույն պետականությունից զրկված հայ ժողովրդի համար այդ քայլը զուրկ չէր քաղաքական նշանակությունից և, ինչպես առիթ կունենանք տեսնելու, համազգային կազմակերպության դարձած էջմիածնի կաթողիկոսությունը, մանավանդ XVII դարի կեսերից, խոշոր դեր կատարեց ազատագրական գաղափարների արծարծման, ժողովրդի կենսունակ ուժերի համախմբման ասպարեզում:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Կարա-կոյունլու և Աք-կոյունլու թուրքմենական դինաստիաներով կառավարվող պետությունների քաղաքական կյանքի էպիկենտրոնը Ատրպատականն էր՝ հռչակավոր իր Թավրիզ մայրաքաղաքով: Սակայն Հայաստանը նույնպես կենտրոնական դիրք էր գրավում այդ պետությունների և՛ քաղաքական, և՛ տնտեսական ոլորտներում: Կարա-կոյունլուների պետության հիմնադիր Կարա-Յուսուֆի տոհմական բնակավայրը Վաղարշակերտն էր: Վանը, սկսած 1425 թ., արքունի տան երկրորդ խոշոր դեմքի կամ ամենախոշոր պետական գործչի նստավայրն էր, իսկ Սյունյաց հին ու անառիկ բերդերից «տուն գանձու և հարկաց աշխարհի» կոչվող Երնջակը[87], թուրքմենական տիրակալների պատսպարանն էր վտանգի պահին. այստեղ էր պահվում նրանց գանձատունը, կենտրոնական բանտը և այլն: Նշանակալից դեր էր կատարում նաև Նախիջևանը՝ որպես հեծելազորի ձմեռային կայան:

Հայաստանի նահանգները (վիլայեթները) և շրջանները (թուման կամ նահիա), որոնք իրենց մեծագույն մասով պետական (դիվանի) հողերի մեջ էին դասվում, փադիշահերի կողմից որպես սոյուրղալ տրվում էին քոչվոր ազդեցիկ ցեղերի պետերին, բարձրաստիճան զինվորականներին և կառավարող դինաստիայի ամիրզադաներին: Սոյուրղալ ստացած այդ ամիրները կամ կողմնապետերը (այսպես են կոչվում նրանք հայկական աղբյուրներում) ձգտում էին իրենց տիրույթները դարձնել ժառանգական, բայց այդ նրանց չէր հաջողվում: Պետության առաջ հանցապարտ լինելու դեպքում նրանք զրկվում էին իշխանությունից. հաճախ պաշտոնազուրկ էին արվում նաև փադիշահի ու կառավարող դինաստիայի փոփոխության հետևանքով:

Այսպես, օրինակ, Վան քաղաքն իր շրջակայքով 1425 թ. Իսքանդար Կարա-կոյունլուն խլեց Շամբոյան կոչվող քուրդ ամիրների ընտանիքից ու հանձնեց իր Յար-Ալի որդուն: Սա, որ «առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր (իմա՝ հայոց) և տաճկաց»[88] 1434 թ., վախենալով իր հոր դատաստանից, փախչում է Շիրվան. այդ բարեբեր շրջանի կողմնապետությունը հանձնվում է Ջհանշահին, իսկ նրա գահակալությունից հետո՝ Պիճ-Ասլան անունով մի ցեղապետի. սա հետագայում բանտարկվում է և նրա փոխարեն կողմնապետ է կարգվում Ջհանշահի կաթնեղբայր Մահմուդբեկը: Աք-կոյունլուների հաղթանակից հետո այս շրջանը հանձնվում է Ուզուն-Հասանի զորահրամանատար Սուլեյման-բեկ Բիժան-օղլուն, «որ էր ամբարակ և հայրապղուխ եաղուպ փաշշահին»:

Կան որոշ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս հետևելու նաև Այրարատյան նահանգի վրա իշխող ամիրների հաջորդականությանը՝ XIV դարի վերջերից մինչև Աք-կոյունլուների հաղթանակը: Հավանաբար Հայաստանի կենտրոնական այդ շրջանները հանձնված են եղել Սաադլու կոչվող քոչվորական ցեղի պետ Ամիր-Սաադին, որը վախճանված պետք է լինի 1411 թ. փոքր-ինչ առաջ (թաղված է Երևանի մոտ՝ Արգավանդ գյուղում): Նրանց հաջորդում է Փիր-Հուսեյն որդին, իսկ 1425 թ. հիշատակվում

[87] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 13: Այսուհետև՝ Ստ. Օրբելյան:

[88] Թ. Մեծոփեցի, էջ 99:

են նրա թոռները՝ Փիր-Ղաիպն ու Ավգուլը: Հիշյալ ընտանիքի տիրապետությանը վերջ է տրվում, հավանաբար, հենց այս տարիներին և Իսքանդարն այդ նահանգը հանձնում է Սյունյաց իշխան Բեշքեն Օրբելյանի մեծամեծ պաշտոնների արժանացած Ռուստամ որդուն: 1441 թ. կուսակալ է հիշվում ոմն Յաղուբ-բեկ, իսկ 1462 թ.՝ Ջհանշահի Հասան-Ալի որդին[89]:

Այսպիսով, Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու ցեղերի առաջնորդներին ու զորահրամանատարներին չի հաջողվում Հայաստանի շրջաններում ստացած իրենց օլքաները դարձնել ժառանգական տիրույթ: Ամեն մի նոր գահակալ Հայաստանի բարեբեր շրջաններից ետ է կանչում իր նախորդի նշանակած կառավարիչներին (կամ նրանցից շատերին) ու նույն այդ շրջանները հանձնում իր գահին հավատարիմ բարձրաստիճան անձանց:

Իրենց զավթած երկրամասերում շատ ավելի կայուն էին Հարավային Հայաստանի քուրդ տիրակալները: Նրանց տիրապետության տակ էին գտնվում Վանա լճի շրջակա երկրամասերը (բացի Վանից). Տուրուբերանը և պատմական Հայաստանի այլ շրջաններ: Քրդական ամենախոշոր տիրույթը Հարավային Հայաստանում Բաղեշի ամիրությունն էր, որը տարածվում էր Բաղեշի, Խլաթի. Մուշի, Խնուսի, Հուլթի և Սասունի վրա: Այդ ընդարձակ երկրամասի տիրակալ Ամիր-Շարաֆը (Ռոժակ ցեղից) 1387 թ. հնազանդվել էր Լանկ-Թամուրին և ստացել նրանից «խաղաղութեան նամակ»: Նրան հաջորդեց Իբրահիմ եղբայրը, որն անհնազանդության պատճառով 1396 թ. սպանվեց Միրանշահի կողմից: Բաղեշի ամիրությունը տրվեց Ամիր-Շարաֆի որդի Շամս-ադ-դինին: Սա գործակցեց Կարա-կոյունլուներին: Երբ Կարա-Յուսուֆն իր «տառապեալ ու անզէն» զորամասերով, Լանկ-Թամուրի մահից հետո կրկին երևաց Հայաստանում, Շամս-ադ-դինը ընդառաջ գնաց նրան՝ «յոյժ մեծարեաց զնա հացով և ջրերօք, ձիով, զինուք և ամենայն զինուորական և պատերազմական պատրաստութեամբ»[90]:

1405 թ. Շամս-ադ-դինը ներխուժել էր Վանի և Ոստանի ամիրության սահմանները, պաշարել Արծկեի բերդը և ավեր գործել նրա շրջակա գյուղերում: 1406 թ. կրկնվեց այդ արշավանքը Կարա-Յուսուֆի հետ միասին: Կարա-Յուսուֆը իրեն փեսայացած Շամս-ադ-դինի հետ ներխուժում է

[89] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ, Առաջաբան, էջ LIX.

[90] Թ. Մեծոփեցի, էջ 70:

Ամիր-Եզդինի երկիրը. «արար շատ աւեր, և այրեաց զերկիրն Վաստանայ և Վանայ. և նստաւ աւուրս Լ (30) յԱմկոյ և ի Շատուանայ»[91]:

1424 թ., Շահրուխին գործակցելու մեղադրանքով, Իսքանդարը սպանում է Շամս-ադ-դինին, բայց Բաղեշի ամիրությունը մնում է քրդական նույն Ռոժակ ցեղին պատկանող ամիրների ձեռքին՝ մինչև XVI դարի վերջերը[92]:

Վասպուրականի կյանքում նշանակալից դեր են կատարում Ոստանի քուրդ ամիրները՝ Շամբոյան ցեղից, որոնք, ըստ Թ. Մեծոփեցու, սերում էին «յազգէն Սենեքերիմեանց», այսինքն՝ Արծրունյաց հայ թագավորական տնից (մայրական գծով)[93]: Սրանց տիրապետությունը XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին տարածվում էր մի մեծ երկրամասի վրա՝ Բերկրիից մինչև Ջուլամերիկ, Խիզանից մինչև Աղբակ: Հայկական աղբյուրներում բազմիցս հիշատակվում է այս դինաստիայի կարկառուն ներկայացուցիչ Ամիր-Եզդինը, որը 1387 թ. Վանի բերդում քաջաբար դիմադրում է Լանկ-Թամուրին: Բերդի գրավումից հետո, ըստ երևույթին, Ամիր-Եզդինը փրկվում է փախուստ տալով: 1392 թ. նա խլում է Ոստան քաղաքն իր եղբորից[94]: Երբ Կարա-կոյունլուներն իշխանության գլուխ են անցնում, Ամիր-Եզդինը «հակառակ եղև Յուսուֆին»[95]: Սա հիշատակվում է մինչև 1419 թ., երբ արշավանք է կազմակերպում Բաղեշի ամիրության դեմ, որի սահմաններում այրում է 60 գյուղ[96]: 1420 թ. արդեն որպես ամիր հիշատակվում է Ամիր-Եզդինի որդի Մելիք-Մուհամեդը, որին 1423 թ. թունավորում է Իսքանդարը: Հաջորդում են սրա եղբայրները՝ Ահմադը՝ Վանում, Բահադ-էդ-դինը՝ Ոստանում և Ուրմիայում: Այս երկուսն էլ սպանվում են Իսքանդարի կողմից: Կարա-կոյունլուները 1424-1425 թթ. պաշարում են Վանը, ուր դիմադրություն էր կազմակերպել Ահմադի որդի Մելիք-Ասադը. դիմադրությունը կոտրվում է. Մելիք-Ասադն անցնում է Ջուլամերիկ[97]: Գրավվում է նաև

[91] Սամուել (շարունակող), էջ 172-173.

[92] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ». Բ, Առաջաբան. էջ LIX:

[93] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 30:

[94] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», էջ 597:

[95] Թ. Մեծոփեցի, էջ 71:

[96] Տե՛ս Սամուել (շարունակող), էջ 173:

[97] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 326. 328. 375, Թ. Մեծոփեցի, էջ 84:

Ուրմիան[98]*: Այսպիսով, Իսքանդարին հաջողվում է ժամանակավորապես գրավել քրդական այս դինաստիայի հիմնական տիրույթները: 1442 թ. Ջհանշահը մի նոր արշավանք է կազմակերպում ու գրավում դեռևս սրանց ձեռքում գտնվող Ջոլել ու Ջուլամերիկ բերդերը: Դարավերջին, Աղ-կոյունլուների պետության քայքայման շրջանում, քրդական այս ընտանիքի ներկայացուցիչ Եզդինշերը, իսկ ապա Ջահիդ-բեկը կրկին գլուխ են բարձրացնում, գրավում նախկինում իրենց պատկանող մի շարք բերդեր: 1498 թ. Ջահիդ-բեկը գրավում ու կողոպտում է նաև Աղթամար կղզին*[99]*: Մի քանի տարի անց նա հպատակվում է Շահ-Իսմայիլին ու իշխում Ոստանում 60 տարի*[100]*:*

Բացի այդ երկու խոշոր ամիրություններից, Հայաստանում կային իրենց երկրամասով փոքր ու նվազ քաղաքական կշիռ ունեցող մի շարք այլ քրդական տիրույթներ՝ Խիզանում, Հազոյում, Ջերմուկում, Սպարկերտում, Բալույում, Մժնկերտում և այլ վայրերում:

Հայաստանի քրդական ամիրություններն ու կողմնապետություններն իրենց ներքին կյանքում անկախ էին: Ամիրներն օժտված էին ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական ինքնավարության իրավունքներով. Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արքունիքը, որը կենտրոնական արքունիքի մանրանկար պատճենն էր: Կենտրոնական կառավարչության պաշտոնյաները մուտք չունեին ինքնավար այս շրջաններում: Ամիրներն ինքնուրույն կերպով դատում էին հանցագործներին, նույնիսկ մահվան վճիռ արձակում և կամ դատը հանձնում շար՝ի դատաստանին, որին մասնակցում էին տվյալ վայրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականները՝ ղադու գլխավորությամբ:

Ամիրությունների կյանքում մեծ դեր էին կատարում նրանց երկրամասերում տեղակայված քոչվորական ցեղերի պետերը և շրջանների

[98] Տե՛ս Ս. Մուրադյան, Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ ս. Առաքելոց վանքի և շրջակայից, էջ 111:

[99] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Գ, էջ 277:

[100] Տե՛ս "Schérèf-nameh ou histoire des Kurdes, par Schérèf, prince de Bidlis publiée par V. Veliaminof-Zernof", tome I, première partie, Պետերբուրգ, 1860, պարսկ. բնագիր, էջ 95:

կառավարիչները: 1445 թ., օրինակ, Բաղեշի ամիրության «մեծամեծերը» առանց կենտրոնական իշխանության հաշվի առնելու, պետական գործերից հեռացրին խելապակաս ամիր Շեյխ-Մահմուդին և ամիր հռչակեցին նրա եղբորորդի Շամս-ադ-դինին[101]*:*

Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների պետություններում փադիշահից հետո առաջին դեմքն էր համարվում ըստ հարկի նշանակվող գլխավոր զորահրամանատարը՝ ամիր-ալ-ումարան (ամիրների ամիրը), որ լինում էր թագավորող ընտանիքի անդամներից կամ ամենաազդեցիկ քոչվոր ցեղերի առաջնորդներից մեկը: Երկրորդ տեղը գրավում էր մեծ սադրը՝ մահմեդական հոգևորականության պետը, այնուհետև մեծ վեզիրը, որ գլխավորում էր վարչական պաշտոնեությանը և վարում արտաքին հարաբերությունները, սահիբ-դիվանը՝ պետական հասույթների ու ֆինանսների գործակալության պետը, մուհրդարը՝ փադիշահի կնքապահը[102]*: Գրեթե նույն սկզբունքով էր կազմակերպված նաև կիսանկախ ամիրությունների կառավարչությունը:*

Ֆինանսական ու հարկային տեղական ատյանների պաշտոնները, ըստ մեծի մասի, գրավում էին հայերը: Նրանք հայկական աղբյուրներում կոչվում են «ձեռնավոր», «խոջա», «թամղաչի» և այլ անուններով: Այդպիսի պաշտոնյաներից էր, օրինակ, Սեթի որդի խոջա Հովսեփը, որը 1479 թ. հիշատակվում է Մուշում որպես «ամենազօրելի և մեծաշուքն և իշխան Տարօնոյ գաւառիս»[103] *կամ ոմն տեր Կարապետ, որ հիշատակվում է երկու տարի հետո որպես պարոն Էման-բեկի «խազինադար» (գանձապետ), կամ Ոստանի քուրդ ամիրների արքունիքում լալայի (դաստիարակ) պաշտոն ունեցող Միրանշահը, որ 1481 թ. փադիշահի մոտ գնալով, ձեռք էր բերել հարկային որոշ արտոնություններ՝ Աղթամարի և Վասպուրականի այլ վանքերի համար: Ուշագրավ տվյալներ են պահպանվել նաև Վանի մեծահարուստ ու ազդեցիկ խոջաների և թամղաչիների մասին, որոնք գլխավոր դեր են կատարել հարկահանության, հարկերի կապալառության և, մանավանդ, առևտրի բնագավառներում:*

[101] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 585:

[102] Տե՛ս И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 198:

[103] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ, էջ 438:

Այս փաստերը վկայում են, որ Հարավային Հայաստանի քրդական ամիրություններում և փադիշահերի կողմից նշանակված կողմնապետերի կառավարչության ներքո գտնվող հայկական շրջաններում, քուրդ և թուրքմեն ցեղապետերի հետ միասին, հայ աշխատավոր գյուղացիությանը շահագործում էին նաև հայ մեծատունները: Մեծ չէր նրանց դերը կառավարչության մեջ, բայց տնտեսության տարբեր մարզերում նրանք գործունեության լայն ասպարեզ ունեին, և աշխատավոր ժողովրդից քամվող հարկերը հոսում էին ոչ միայն դեպի երկրի նոր տերերի գանձատները, այլ զգալի չափով նաև դեպի հայ խոջաների ու թամղաչիների դրամաքսակները:

Հայ իշխող դասակարգը XIV-XV դարերում գիջեց քաղաքական ու տնտեսական իր դիրքերը Հայաստանի տերը դարձած քոչվոր ցեղերի հարստահարման ներքո: Հայ ֆեոդալական տների հողազրկման, մասնատման ու անէացման պրոցեսը, որ ծայր էր առել Հայաստանում մոնղոլական իշխանության քայքայման շրջանում, մոտեցավ իր ավարտին հենց թուրքմենական ցեղապետերի տիրապետության այս տասնամյակներին:

Սյունյաց տիրակալ Օրբելյանների բնորոշ օրինակով հետևենք այդ պրոցեսին:

1385 թ., ինչպես գիտենք արդեն, Ոսկե Հորդայի խան Թողթամիշի զորքերն ասպատակեցին Սյունիքը. գրավեցին Որոտան բերդը և Եղեգիս քաղաքը Իվանե Օրբելյանի որդիներ՝ Սմբատից և Գորգունից: Գորգունը, որ իշխում էր Վայոց ձորում (Եղեգիս կենտրոնով) վշտամահ եղավ:

Լանկ-Թամուրի արշավանքների տարիներին Օրբելյաններին հաջողվեց վերստանալ իրենց կալվածքների մի մասը: 1403 կամ հաջորդ թվականին Թամուրյան Միրզա-Օմարը բռնությամբ հավատափոխ արեց Սմբատ և Բուրթել Օրբելյաններին ու սրանց եղբորորդի Տարսայիճին, որոնք հավատափոխ արված ուրիշ հայ իշխանների հետ միասին, իրենց ընտանիքներով տարվեցին Սամարղանդ[104]: Շատ չանցած (հավանաբար Միրանշահի ժամանակ) սրանք վերադարձան Սյունիք և կրկին տիրեցին իրենց կալվածքներին՝ պահելով իրենց պապերի հավատքը:

1407 թ. Բուրթելն ու իր պատանի զավակները զոհ են գնում

[104] Թ. Մեծոփեցի, էջ 67-68:

մահապատժի: Լանկ-Թամուրի մահվանից հետո սկսված գահակալական խառը պայքարի տարիներին՝ Սմբատը՝ «խաբեալ ի խրատատուաց իւրոց» գործակցում է Ջելաիրյան Ահմեդ խանին, իր զորագնդով մասնակցում նրա մղած մարտերին[105]: Ի տրիտուր իր ծառայությունների նա պարգև է ստանում Անգեղակոթ գյուղը: Բայց շուտով Ահմեդ խանը պարտություն է կրում Կարա-Յուսուֆից ու խեղդամահ արվում (1410): Սմբատը ոչ միայն զրկվում է նոր ստացած իր պարգևից, այլև Կարա-Յուսուֆը բռնագրավում է նրանից Որոտան բերդը: Հայրենազուրկ եղած Սմբատն իր Բեշքեն, Իվանե (Ստեփանոս) և Շահ որդիների հետ ապաստանում է Վրաստանում[106]: 1412թ. Գորիից ոչ հեռու գտնվող Ուփլիսցիխե գյուղաքաղաքում շարադրված մի հիշատակարանում Սմբատն ու իր Բեշքեն որդին հիշվում են որպես այդ շրջանի իշխաններ. «Իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի և որդւոյ նորին պարոն Բէշքէնի, որ յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց»[107]: Սմբատը վախճանվում է, հավանաբար, օտարության մեջ 1417 թ. քիչ առաջ: Իսկ նրա որդիներ Բեշքենն ու Իվանեն վերադառնում են Սյունիք: «Եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ տնօրինաց», — ասում է ժամանակակից մի գրիչ[108]:

Սմբատի եղբոր՝ Գորգունի որդի Տարսայիճը նույնպես, վերադառնալով սամարղանդյան գերությունից, ի վերջո կարողանում է իշխել իր հոր կալվածքում՝ Եղեգիսում: Բայց 1419 թ., ժամանակակից մի գրչի վկայությամբ, նա «յոյժ ի նեղութիւն, ի տառապանք և յաղքատութիւն անկաւ, զի նա որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել, զի խլեալ և յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գիւղ և զքաղաք, զվանք և զանապատ ... Եւ նա փախեալ և թագուցեալ էր ի ծերպս վիմաց և ի մայրիս»[109]:

1421 թ. հետո, երբ Իսքանդարը դառնում է Կարա-կոյունլուների պե-

[105] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 72-73, «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 82:
[106] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 194:
[107] Նույն տեղում, էջ 133:
[108] Նույն տեղում:
[109] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 656:

տության գահակալ, Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամն առաջ է քաշվում պետական բարձրաստիճան պաշտոնների: Սրա ջանքերով Օրբելյանները կրկին տեր են դառնում իրենց երկրին: Երկար չի տևում, սակայն, այս վիճակը: Շահրուխն իր երրորդ արշավանքի ընթացքում հարձակվում է նաև Իսքանդարի կողմից հովանավորվող Օրբելյանների տիրույթի վրա: Եվ Բեշքենը Սյունիքի ու շրջակա գավառների 6 հազար հայ գերդաստանների գլուխ անցած, պայքարելով Թամուրյանների դեմ, արտագաղթում է երկրից ու ապաստան գտնում Վրաստանում[110]:

Վրաց Ալեքսանդր թագավորը, որ Բեշքենի փեսան էր, Լոռին հանձնում է իր աներոջը: Հայաստանի այլ շրջաններից Լոռի են հասնում նոր փախստականներ և սիրով ընդունվում Բեշքենի կողմից: Սակայն, շուտով, երկյուղ կրելով Բեշքենի հզորացումից, Վրաց թագավորը թունավորել է տալիս նրան:

Զանգվածային այս արտագաղթից հետո XV դարի հետագա տասնամյակներում ևս, Սյունիքի տարբեր մասերում հանդիպում ենք Օրբելյան պայազատների: Այսպես, 1450 թ. կրկին Սյունիքումն է Ռուստամ Օրբելյանը: Սա Տաթևի վանքի վանահայր Շմավոն Անգեղակոթցուն վաճառում է Սվարանց, Տաշու, Աղանց ու Տանձատափ գյուղերը[111]: 1471 թ. Վայոց ձորում հիշատակվում է Սմբատ իշխանը՝ Տարսայիճի որդին, իսկ 1475-1490 թթ. սրա որդի Եղիշե պարոն-տերը, որպես Վայոց ձորի եպիսկոպոս[112]:

Հայաստանում տեղաբաշխված քոչվոր ավազանու հարատև ճնշման տակ իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերն օրավուր կորցնում էին նաև հայ ֆեոդալական մյուս գերդաստանները՝ Խաչենի Հասան-Ջալալյանները, Ծարի Դոփյանները[113], Վայոց ձորի ու Կոտայքի Պռոշյանները[114] և

[110] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 117:

[111] Տե՛ս Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 86:

[112] Սյունյաց իշխանների մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել Լ. Խաչիկյանի «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը» հոդվածում, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 173-178:

[113] Տե՛ս Կարապետ Տեր-Մկրտչյան, Նյութեր հայ մելիքության մասին, Ա և Բ պրակներ, Էջմիածին, 1913-1914:

[114] Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928:

ուրիշներ:

Խաչենի Ջալալ իշխանի մահվանից հետո՝ XV դարի սկզբներին, Հասան-Ջալալյան իշխանները զրկվել էին երբեմնի տիրույթներից և քարշ էին տալիս իրենց գոյությունը որպես սակավազոր գյուղատերեր՝ «ի ներքո ձեռին անօրինաց»[115]:

Դոփյան ֆեոդալական ընտանիքը ծանր հարված կրեց 1386 թ.: Լանկ-Թամուրի հրոսակների դեմ կռվի մեջ սպանվեց Փոքր Սյունիքի (Ծարի) իշխան Հասան Դոփյանը՝ իր երեք որդիների հետ միասին: 1430-ական թվականներին Հասանի թոռնորդի Այտինի իշխանության տարիներին Դոփյան իշխանների կալվածքները բռնագրավվում են պետության կողմից: Դատական ատյաններում երեք տարի քարշ գալով և նյութական մեծ միջոցներ մսխելով, ի վերջո, Այտին իշխանին հաջողվում է վերստանալ «ի ձեռաց այլազգեացն» Դոփյան իշխանների կալվածքների մի մասը:

XV դարի երկրորդ հիսնամյակում Դոփյանները բաժանվում են երեք ընտանիքների՝ Ուլուբեկենց, Այտենցոց և Ջհանշեցոց, որով և ավելի է մասնատվում երբեմնի հզոր Ծարի իշխանների տնտեսական կարողությունը:

Վասպուրականի Արտազ գավառում, մինչև 1426 թ. իշխում էր կաթոլիկ դավանանքի հայ ֆեոդալների մի ընտանիք, որի պատմությանը հնարավոր է լինում հետևել սկսած XIII դարի կեսերից: Մակու ամրոցն էր այս իշխանների նստավայրը՝ անառիկ իր միջնաբերդով, որ չկարողացավ գրավել նույնիսկ Լանկ-Թամուրը: Թամուրի առաջարկով Նուր-ադ-դին իշխանը համաձայնել էր ընդունել նրա գերիշխանությունը, ըստ պահանջի 20 հեծյալից բաղկացած մի ջոկատ տրամադրելու պարտավորությամբ: Սրա որդի Սոյուրղաթմիշը, աներես մահմեդականություն ընդունելով, դարձել էր Թամուրի թոռ Օմար-Միրզայի մերձավոր զինակիցներից մեկը. մյուս որդին՝ 1403 թ. Մակվում հյուրընկալված իսպանացի դեսպան Ռուի Գոնզալես դե Կլավիխոյի վկայությամբ՝ «ընտիր մարդ չլինելով, ավելի հայ լեզվի քերականության ուսանող և վարդապետ» էր[116]: Մակվի հայ իշխանությանը վերջ տվեց Իսքանդար Կարա-կոյունլուն 1426 թ.: Նշանավոր գրիչ Թովմա Մինասենցը իր մի հիշատակարանում այդ առթիվ գրել է.

[115] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 194:

[116] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, էջ 114-116:

«Անմխիթար կըսկիծ ենաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռն քրիստոնէից, և այն ևս առաւ ի մէնջ»[117]:

Մինչև XV դարի 80-ական թվականները հայկական ֆեոդալական մի իշխանություն էլ գոյություն ուներ Համշենի գավառում: Նույն Կլավիխոն, Սամարղանդից Իսպանիա իր դարձի ճանապարհին, 1406 թ. անցել է Համշենով և ուշագրավ տեղեկություններ գրանցել այդ իշխանության, նրա դժվարանցանելի կածանների ու ժողովրդի բարքերի մասին. «Այս երկրամասը շատ լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցքներ, որոնցով անկարող են անցնել կենդանիները: Որոշ տեղերում ժայռից ժայռ անցնելու համար՝ փայտե կամուրջ են կապել: Բեռնակիր կենդանիներն այս երկրամասում, ըստ մեծի մասի, անկարող են շարժվել, և մարդիկ ստիպված են ամեն ինչ կրել իրենց ուսերին: Հացահատիկն այստեղ քիչ է աճում...» և այլն: Այնուհետև Կլավիխոն հայտնում է, որ բնակիչները, չնայած հայ են ու քրիստոնյա, ավազակաբար են վարվում ճամփորդների նկատմամբ: Այսպես գրելու առիթը, անշուշտ, եղել է այն, որ համշենցիները ստիպել են Կլավիխոյին և նրա ուղեկիցներին վճարել իրենց հետ տարվող ապրանքների համար բարձր մաքս[118]:

Կլավիխոյի ճանապարհորդությունից քիչ առաջ Սպերի ամիրը Համշենի իշխանությունը գրավել էր պարոնաց-պարոն Առաքելից ու նրա փոխարեն մի մահմեդական կառավարիչ նշանակել՝ քրիստոնյա մի օգնականի ընկերակցությամբ: Սակայն այս վիճակը երկար չի շարունակվել: 1422 թ. պահպանվել է մի հիշատակարան, ուր Համշենի տեր է կոչվում նույն Առաքելը: Հավանաբար սրա որդին է պարոնաց-պարոն Դավիթը, որ հիշատակվում է 1425-1440 թթ. վերջում՝ իր դեռաբույս զավակ պարոն Վարդի հետ միասին: 1460 թ. հիշատակվում է Համշենի իշխան, մանկահասակ Վեքեն (Վիգեն անվան աղավաղված ձևն է), որ գերվում է Բաբերդի մահմեդական իշխանի կողմից: Եվ վերջապես 1489 թ. մի հիշատակարանի մեջ արժեքավոր տվյալներ ենք գտնում հայկական այս իշխանության վերջին տիրակալ Դավթի մասին:

Այդ թվականին կամ դրանից մեկ-երկու տարի առաջ, թուրքերը, որ 15 տարի առաջ վերջ էին տվել Տրապիզոնի կայսրությանը, գրավեցին նաև Համշենը՝ փակելով Աղ-կոյունլուների վերջին ճանապարհը դեպի Սև ծով: Հայրենազուրկ եղած Դավիթ իշխանը, փախչելով իր երկրից, պատսպարվել էր հարևան Սպերի շրջանում, որ դեռևս գտնվում էր Աղ-կոյունլու փադիշահերի տիրապետության ներքո[119]:

XV դարի 60-90-ական թվականներին Երզնկայի շրջակայքում գտնվող վանքերում բարձրագույն դպրոց էր հիմնադրել Հովհաննես րաբունապետ Համշենցին, որ ժամանակակիցների վկայությամբ՝ սերված էր «ի թագաւորական ազգէ»: Հավանական է ենթադրել, որ Հովհաննես րաբունապետը Համշենի հայ իշխանների գերդաստանից էր[120]:

XV դարի ընթացքում Հայաստանի տարբեր մասերում հիշատակվում են նաև բազմաթիվ այլ հայ կալվածատերեր ու գյուղատերեր: Այսպես, օրինակ, դարասկզբին հիշատակվում է Արագածոտնի Աղց գյուղի տեր պարոն Աղիդանը, որ բանի հավատափոխ արվելով, հայ այլ իշխանների հետ տարվել էր Սամարղանդ, հետո վերադարձել իր հայրենիքը: 1424 թ. Սանահնում հիշվում է պարոն Սողղաթմիշի թոռ ու Փաշի որդի իշխանաց իշխան պարոն Ջալալին, սրա եղբայրն էր Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկը, որին հանդիպում ենք նույն տարիներին Թմոք (Թմկաբերդ) գղյակում: 1432 թ. հիշվում է որպես Բջնի քաղաքի «Նախարար, վերակացու և առաջնորդ» ոմն Ծատուր, իսկ 1460 թ. պարոն Սարգիսը: 1442 թ. շարադրված մի հիշատակարան տեղեկություններ է պարունակում Արագածոտն գավառի Սերկևլի գյուղի հայ տերերի՝ պարոններ Ալիբեկի, Շալվեի, Վաչուտի, Քրդի և Սարգսի մասին, որոնք, անուններից դատելով, Վաչուտյան իշխանների ուժասպառ շառավիղներից են: Սրանցից Շալվեն, որ որդին է պարոն Սարգսի և թոռը պարոն Բուղլախի, գովատվում է այսպիսի խոսքերով. «Այր հսկայազօր ի մրցմունս պատերազմաց, դիւցազնական ի

[117] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 376:

[118] Տե՛ս Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия ко двору Тамура в Самарканд, в 1403-1406 гг., пер. И. И. Срезневского, СПБ., 1881, էջ 382-384: Հմմտ. նաև Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, էջ 142-143:

[119] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Գ, էջ 470:

[120] Տե՛ս Լ. Խաչիկյան, Էջեր համշենահայ պատմությունից («Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 2, էջ 115-144):

յազատաց և պայազատ ի յիշխանաց»: 1444 թ. որպես Եղվարդ գյուղի տեր հիշատակվում է «մեծազգի և փառաւոր...ազատածին» Աղիզպեկը՝ իր Ավագ և Զաքարիա որդիների հետ միասին (այս Զաքարիան տարիներ առաջ գնել էր Մուղնի գյուղը), իսկ 1465 թ. պարոն Վիշելը («ի վերակացութեան երկրիս պարոն Վիշելի»):

XIV-XV դարերի հայկական աղբյուրների խիստ թերի տվյալներով հայկական քաղաքներում կային շուրջ երեք տասնյակ տարբեր մասնագիտությունների արհեստավորներ՝ աղեգործ, աղեղզուգ, արծաթագործ, բրուտ, գդակկար, դարբաղ, դանակագործ, դարբին, դերձակ, խազագ (մետաքս մշակող), կերպասագործ, կոշկակար, կտավագործ, հյուսն, ճարտարապետ, ճոն, մազման, պայտար, նաղաշ, նետարար, ոսկերիչ, ոստայնանկ, պատկերահան, պարանագործ, ջուլհակ, քարգործ, քակկար և այլն:

Որ հայկական քաղաքների մի մասը, հանդիսանալով շրջակա բնակավայրերի տնտեսական ու վարչական կենտրոնը, դեռևս պահպանում էր իր նշանակությունը, ապացուցվում է նաև դրամագիտական նյութերով: XIV-XV դդ. հատած դրամների մեջ զգալի են նաև Բաբերդում, Անիում, Երևանում, Գառնիում, Նախիջևանում, Սալմաստում, Վանում, Ոստանում և Հայաստանի այլ քաղաքատիպ վայրերում կոփված դրամները:

Հայ արհեստավորների արտադրանքի մեծագույն մասը, անշուշտ, սպառվում էր երկրի ներքին շուկաներում՝ քաղաքամերձ շրջաններում և քոչվոր ցեղերի ամառանոցներում ու ձմեռանոցներում: Չնայած տնտեսության նատուրալ բնույթին, այս կամ այն չափով ապրանքափոխանակություն էր կատարվում նաև հայ երկրագործների ու Հայաստանում հաստատված քոչվոր ցեղերի միջև: Գրիգոր Տաթևացին իր մեկնություններից մեկում գրում է. «Այխարարոյծք սովոր են վաճառել գմիս և զճրագու և առնուլ գհաց ոչ վասն աղքատութեան, այլ զի ոչ պարապին գործել գհաց՝ ի դարմանս խաշանց գոլով»[121]: Միս ու ճարպ վաճառելով, խաշնարածները գնում էին ոչ միայն հաց ու գյուղատնտեսական այլ մթերքներ, այլ նաև հայկական քաղաքներում արտադրվող տարբեր տեսակի ապրանքներ:

Վտանգավոր ու արկածալից է եղել վաճառականի կյանքը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Քուրդ ու թուրքմեն քոչվոր

[121] Մատենադարան, ձեռ. N 1264, էջ 44:

ցեղապետերն իրենց զորախմբերով առիթ բաց չէին թողնում կողոպտելու ճանապարհներով անցնող-դարձող քարավաններին: Բարբարոն, որ 1474 թ. ապրիլի 3-ին Խիզանից անցնում էր Թավրիզ՝ Ուզուն-Հասանի եվրոպայից վերադարձող մի դեսպանի ընկերակցությամբ, հարձակման ենթարկվեց ու թալանվեց քրդերի կողմից. նրա ուղեկիցներից չորսը սպանվեցին: «Նրանք (քրդերը), — գրում է Բարբարոն, — ունեն շատ քաղաքներ (իմա՝ բերդամրոցներ) շինված բարձր վայրերում ու ծերպերում, հսկելու համար բոլոր ճանապարհներին, որպեսզի կարողանան կողոպտել անցորդներին»[122]: Այսպիսի պայմաններում, բնականաբար, առևտրական քարավանները պետք է շրջեին զինված ջոկատների ուղեկցությամբ:

Մեծատուն քաղաքացիների կյանքն ու գույքը անապահով էր ոչ միայն քարավանային ճանապարհների վրա, այլև իրենց հայրենական հարկի տակ: Երկրի բռնավոր ու ագահ տերերը միջոցի առաջ կանգ չէին առնում զրթելու համար իրենց քիչ թե շատ հարուստ հպատակների գույքը: «Ամեն պարոն գիւր տեղաց անուանի մարդն տօգանէր և թալանէր», — գրել է այդ մասին մի հիշատակագիր:

Այսպիսով, չնայած հայ խոջաներից և այլ զբաղմունքի տեր քաղաքացիներից ոմանք տարբեր ճանապարհներով մեծ հարստություն էին դիզում ու տեր դառնում շարժական ու անշարժ կալվածքների, բայց նրանց գույքը բնավ ապահով չէր տիրողների կողմից բռնագրավվելու վտանգից:

Թուրքմենների իշխանության ժամանակաշրջանում խիստ ծանր էր հարկային լուծը: Հպատակներից գանձվում էին հիմնականում այն հարկերն ու տուրքերը, որոնք գոյություն ունեին մոնղոլական տիրապետության շրջանից սկսած: Հողային ռենտան, ըստ հողի պատկանելության մուծվում էր կամ ամբողջապես պետական գանձարան (դիվանի հողերից), կամ ամբողջապես հողատիրոջը (սոյուրղալական հողերից), կամ էլ որոշակի համամասնությամբ բաժանվում էր պետական գանձարանի ու կալվածատիրոջ միջև (սեփականատիրական մուլք կոչվող հողերից)[123]:

Հարկերը շատ ծանր էին Հայաստանում մինչև Կարա-կոյունլուների տիրապետության հաստատումը: Կարա-Յուսուֆի, մասամբ նաև Իսքան-

[122] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա., էջ 183:

[123] Տես И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 190:

դարի գահակալության տարիներին հարկային լուծը նույնպես ծանր էր, բայց հանդուրժելի: Դրությունը փոխվեց Ջհանշահի ժամանակ, մանավանդ XV դարի 50-ական թվականներին, երբ նա ձեռնարկեց թեմուրյանների դեմ իր արշավանքները: Այդ տարիների մի հիշատակագիր հայտնում է, որ «յոյժ ճշդիւ հարկապահանջութեամբ տառապի ազգս հայոց ի ձեռն չար բռնակալացն թուրքաց», իսկ մեկ ուրիշն ավելացնում է. «Նեղիմք յանօրինաց բռնութենէ, եւ առաւել ի կրկնակի հարկապահանջութենէ»[124]:

Հայ աշխատավոր ժողովուրդը, բացի պետական ու կալվածատիրական հարկերից, վճարում էր նաև եկեղեցական տուրքեր՝ պտղի, սրբադրամ, տյառնական մատաղ, կողոպուտք, խոստովանադրամ, հաղորդադրամ, զանազան տուրքեր (հնաս ամուսնության և այլ առիթներով) և այլն: Եկեղեցականները հասույթի աղբյուր էին դարձրել նաև բանադրանքը: «Այժմու քահանայապետքս, — գրել է այդ մասին Գր. Տաթևացին, — պատճառանօք առնեն ընդ բանադրանօք և յետոյ մերկացուցանեն զժողովուրդն իւրեանց»:

Իրենց հասանելիք տուրքերը հոգևոր հոտից հավաքելու համար, նույն հեղինակի պատկերավոր արտահայտությամբ՝ հոգևոր հայրերը «միանգամ ի տարւոջն շրջեն ի վիճակն և լնուն զքսակն արծաթով, և պատառեն իբրև զգայլն և դարձեալ փախչին ի յորջս իւրեանց, և ոչ ինչ հոգան վասն ոչխարացն»[125]:

Հայ աշխատավոր ժողովուրդը, ինչպես նաև Առաջավոր Ասիայի մյուս նստակյաց ժողովուրդները, անդադար պայքար էին մղում հայրենի երկիրը գրաված քոչվոր ցեղապետերի ու նրանց կողմից կիրառվող վարչական ու հարկային կիշատիչ քաղաքականության դեմ:

Մոնղոլական ու թուրքական քոչվոր ցեղերը, գրավելով Հայկական լեռնաշխարհը, անբուժելի հարված հասցրին զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող գյուղատնտեսությանը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին: Ժողովուրդը կողոպտվում էր ոչ միայն պետական պաշտոնյաների ու քոչվոր ավագանու չարաշահություններից, այլև, ընդհանրապես, խաշնարած ցեղերի տեղաշարժերից, որոնք ամռան ամիսներին

[124] «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ, էջ 42, 231:
[125] Գր. Տաթևացի, Քարոզգիրք, Ամառան հատոր, էջ 298:

ելնում էին երկրի բարձրադիր ու խոտառատ մարգագետինները, իսկ ձմռան ամիսներին իջնում հարթավայրերը: Ամեն տարի պարբերաբար կրկնվող այդ տեղափոխությունների ընթացքում ոտնատակ էին արվում հայ երկրագործների քրտինքով մշակված ցանքատարածությունները, քոչվորների ճանապարհին ընկած գյուղերն ու գյուղաքաղաքները հաճախ կողոպտվում էին այդ ցեղերի սպառազեն ջոկատների կողմից:

Հայ քաղաքացիներն ու գյուղացիները, այսպիսով, ստիպված էին հարատև մարտնչել քոչվոր տիրապետողների դեմ իրենց գույքն ու պատիվը պաշտպանելու համար:

1462 թ. պահպանվել է ուշագրավ մի վկայություն թուրք հեծյալ ավազակների ու հայ մարտիկների մի բախման մասին: Մեկ հազարանոց թուրքական մի զորախումբ, Տփղիսի մոտ կայան առնելով, բռնագրավում է Ավճալայի նախիրը: Հայ քաղաքացիներից 200 «լաւ տղամարդիկ» տեղյակ չլինելով թշնամու քանակի մասին, դուրս են գալիս նրանց դեմ իրենց գույքը ետ բերելու համար: Սակայն նրանք շրջապատվում են դարանակալ թշնամիների կողմից ու գազանաբար հոշոտվում: «Եւ մեծ հեծելն ի դուս էին եկել, և երկու գիմաց բոլորել, և զամէն կոտորել և ի սուր քաշել, և զամենից գլուխն տարել», — գրում է այդ մասին ժամանակակից մի հիշատակագիր[126]:

Այսպիսի պայմաններում, բնականաբար, ամեն մի դիմադրություն, որ ցույց էր տրվում Հայաստանի տերը դարձած քոչվոր ցեղապետերին ու նրանց գլխավորած զորախմբերին, սոցիալական պայքարի յուրատեսակ մի ձև էր, պայմանավորված այն իրողությամբ, որ օտար քոչվորները երկրի տիրապետող դասն էին կազմում, իսկ նստակյաց բնիկ ժողովուրդը՝ ստորադաս և իրավազուրկ ռայայի վիճակում էր:

Պայքարի մի ձև էր նաև իրենց դիրքը չարաշահող պաշտոնյաների մասին պետական վերադաս մարմիններին գանգատներ ու բողոքագրեր ուղարկելը: Դրանք, ըստ մեծի մասի, որևէ արդյունք չէին բերում, սակայն ժողովրդական որոշ խավեր շարունակում էին հավատալ, թե փադիշահի բարյացակամ կարգադրությամբ կարող են, թերևս, ազատվել այս կամ այն անօրեն ու դաժան տիրակալից: Այսպես էին մտածում, օրինակ, Վանի բնա-

[126] «ԺԵ դարի հիշատակարաններ», Բ էջ 169:

կիչները, որոնց վրա իշխան կարգված արքայորդի Յար-Ալին՝ «առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և տաճկաց»: Վանեցիները գանգատվում են Իսքանդարին ու հայտնում, որ այլևս «ոչ կարեմք տանել վշտաց և զառնութեան նորա, զի կարի յոյժ աղքատացոյց զաշխահս մեր»[127]:

Պասիվ պայքարի ձևերից էր նաև արտագաղթը երկրից, որ մեծ չափերի էր հասել XIV-XV դարերում: Գաղթում էին ինչպես անվերջանալի պատերազմների ու գահակալական կռիվների սարսափներից, այնպես էլ իրավական ու տնտեսական ծանր ու անտանելի վիճակից:

Գիտենք արդեն, որ Սյունյաց Բեշքեն իշխանը, Սյունիքից ու հարևան շրջաններից 6000 տուն հայ բնակչության գլուխ անցնելով, 1435 թ. գաղթեց այդ ժամանակ Վրաց տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Հայաստանի շրջանները (Լոռի): Զանգվածային գաղթերի մասին ուշագրավ շատ տեղեկություններ կան մեր աղբյուրներում: Դրանցից է, օրինակ, XV դարի վերջին Ապարանի սուրբ Նշան վանքում շարադրված կոնդակը, ուր ասված է. «անօրէնքն կու նեղացուցեն զքրիստոնեայքս սուտ պատճառաւ, (և նոքա) կու թողուն զտունն, զարտն ու զայգին և զայլ ապրանքն ու փախին»[128]:

Փախչում էին և հարևան երկրներ (Վրաստան ու Շիրվան) և հեռավոր աշխարհներ (Սիրիա, Ղրիմ, Լեհաստան և այլն): Զգալի թիվ էին կազմում հայերը, մասնավորապես, հարևան երկրների մի շարք քաղաքներում. Բարբարոյի վկայությամբ, օրինակ, հնուց անտի հայարնակ Շամախի քաղաքի «բնակիչների մեծ մասը հայ են»: Իտալացի դիվանագետի տվյալը հաստատում է անգլիացի Ջենկինսընը, որը մեկ դար հետո (XVI դարի սկզբներին) այցելելով Շամախի, նույնպես արձանագրում է, թե քաղաքը «բնակեցված է գլխավորապես հայերով»[129]:

Աշխատավոր ժողովրդի իրավական ու տնտեսական ծանր վիճակն ու մղձավանջային առօրյան պարարտ հող էին եկեղեցու նկատմամբ անտարբերության, աղանդավորական գաղափարների և հակաեկեղեցական

[127] Թ. Մեծոփեցի, էջ 99:

[128] Մատենադարան, ձեռագիր N 7757, էջ 1ա:

[129] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, էջ 199, 372:

տրամադրությունների տարածման համար: Դրան մեծապես նպաստում էր հայ եկեղեցու պաշտոնեությունը՝ այլասերված իր բարքերով, բարձրաստիճան հոգևորականության մի մասի համագործակցությունը օտարազգի բռնակալների հետ:

Հայ եկեղեցու գաղափարախոսներից մեկը XIV դարի կեսերին ողբում է եկեղեցու անմխիթար վիճակը, ժողովրդի խորթացումը եկեղեցուց, երիտասարդների անտարբերությունը եկեղեցական արարողությունների նկատմամբ և այլն: «Իսկ ժողովրդականք, — գրում է նա, — ամայիք և թափառականք, կորդացեալ մտօք, մոլորեալ ի գիտութենէ. զխոստովանութիւն ոչ գիտեն ... յեկեղեցի ոչ դիմեն ... զաղօթս և զարտասուս ոչ ճանաչեն ... ի պատարագ ոչ փափագին»: «Լուա յումեմնէ, — շարունակում է նա, — զի պատմէր զմարդոյ՝ վկայեալ ի հարազատ եղբօրէ իւրմէ, զի հնգետասանամեայ գոլով և դեռ պատարագն չէր տեսեալ յեկեղեցւոջ, և զայլ յումեմնէ, թէ ժ (10) ամ աւելի ևս էր, որ մարմնոյ և արեան տեառն չէր հաղորդել»:

Հայ եկեղեցու պաշտոնյաները քարոզում էին իրենց հոգևոր զավակներին՝ հնազանդ լինել օտար ու բռնիկ տերերին, տոկալ ու համբերել բռնություններին, ի տրիտուր այսրաշխարհային զրկանքների՝ հանդերձյալ կյանքում երանության հասնելու համար:

Եկեղեցական այս քարոզները, սակայն, արձագանք չէին գտնում հուսահատ ժողովրդի լայն զանգվածներում: Հովհան Որոտնեցու (1313-1386) հեղինակավոր վկայությամբ, Հայաստանում կային աղանդավորներ, որոնք սուտ էին հայտարարում Աստվածաշունչ գիրքը, արդար և սուրբ մարդկանց ճգնությունն ապարդյուն էին համարում, ու չէին հավատում, թե վերջին դատաստան է լինելու և դժոխքի տանջանքներ են պատրաստված մարդկանց համար. ուստի սրանք քարոզում էին «ուտել, խմել, քանի որ վաղը մեռնելու ենք»[130]: Այսպես մտածող մարդիկ, բնականաբար, ձգտելու

[130] Ստորև տալիս ենք ուշագրավ այս վկայության գրաբար բնագիրը. «Սուտ առնեն զամենայն աստուածաշունչ գիրս, ունայն ցուցանեն զամենայն ջան և զվաստակս ճգնութեան արդարոց, բազումք ի մարդկանէ սանձարձակ ի մեղս յաճախեն ասելով՝ ոչ գոյ յարութիւն դատաստանի և ոչ սպառնալիք դժոխոց, կերցուք, արբցուք, զի վաղիւն մեռանիմք: Զի որք ուրանան զյարութիւնն, որ է կատարած, ուրանան և նոքա

էին այս աշխահում ստեղծելու իրենց համար կյանքի տանելի պայմաններ:

Իրենց աղանդավորական գաղափարների տարածման ու հիմնավորման նպատակով, բանավոր խոսքից բացի, այս ուսմունքի գաղափարախոսները, ըստ երևույթին, գրել են նաև տեսական աշխատություններ. հավանաբար հենց սրանց է նկատի ունեցել Հովհան Որոտնեցու աշակերտներից Մատթեոս Ջուղայեցին՝ գրելով, որ հերձվածողները «առանձին նստին հաջմունս գրելով, առանց վկայութեան ուրուք, և զանմեղսն կորուսանելով»[131]:

Եկեղեցու և նրա վարդապետության դեմ ժողովրդական լայն խավերի ընդդիմադրական տրամադրությունները որոշակի արտահայտություն են ստանում Վասպուրականում XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին: Պահպանվել է «Յաղագս չար հերձուածոյ, որ երևեցաւ յերկիրն Ռշտունեաց» խորագրով մի գրություն[132], որ Աղթամարի Դավիթ III կաթողիկոսի (1393-1433) խնդրանքով հեղինակել է Գրիգոր Տաթևացին: Ռշտունիքում տարածված «չար հերձուածի» տարածողներն ու հետևորդները, — Տաթևացու որակումով, — «դիւաբերան», «տգէտ» և «անուսումն» մարդիկ են, որոնք «ոչ գիտեն զսուրբ գիրս և ոչ զիմաստս փիլիսոփայից», բայց «հակառակասէր» լինելով հակադրվում են եկեղեցու վարդապետությանը՝ «ընդդիմաբանում են»: Տաթևացին մանրամասնություններ չի հաղորդում սրանց դավանած ու քարոզած գաղափարների մասին, պարզվում է սակայն, որ նրանք ուրանում էին «զորդին և զհոգին սուրբ», այսինքն ընդունում են միայն հայր-աստծո գոյությունը, և ապա՝ մերժում աստվածամոր պաշտամունքը:

Հայ եկեղեցու նշանավոր գաղափարախոս Գր. Տաթևացին աստվա-

զսկիզբն և զստեղծումն աշխարհի, ինքնեղ ուեմն կարծեն զինքեանքիւն արարածոցս, մանաւանդ թէ դաժան մտօք զեպիկուրեանցն իմանալ՝ թէ ոչ գոյ աստուած» (Մատենադարան, ձեռ. N 5598, էջ 100ա-100բ, Յովհ. Որոտնեցի, Ի յառաջաբանս առաքելոյն Պօղոսի՝ համառօտ և պայծառ տեսութիւն) :

131 Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 210ա:

132 Պահպանվել է Երուսաղեմի մատենադարանի N 1397 ձեռագրի մեջ (էջ 3-32): Ամբողջական խորագիրն է. «Յաղագս չար հերձուածոյն, որ երևեցաւ յերկիրն Ըռշտունեաց, Գրիգորի շնորհալից վարդապետի արարեալ բան կարճառօտ, ի խնդրոյ գերապատիւ և երկիւղազարդ հայրապետին Հայոց տեառն Դաւթի»:

ծարանական դիտողություններ կատարելով ու հենվելով եկեղեցու հայրերի հեղինակության վրա, փորձում է բացահայտել այդ գաղափարների վտանգավորությունը և նրանց դեմ պայքար ծավալելու անհրաժեշտությունը:

Նույն այս ժամանակաշրջանում տարածված աղանդավորական գաղափարների մասին ուշագրավ տեղեկություններ է գրանցել նաև ունիթոր վարդապետ Մխիթար Ապարանցին: Իր «Գիրք ուղղափառաց ըստ կաթոլիկէ սուրբ եկեղեցոյն ընդդէմ հերձուածողաց» աշխատության մեջ[133] նա խոսում է մի կնոջ մասին, որ մերժված է եղել և՛ Մակվի հայ կաթոլիկների, և՛ Աղթամարի հոգևորականների կողմից: Իր շուրջ համախմբելով մի շարք այլ կանանց (որոնց պատմիչը «սատանայի մարգարէներ» է կոչում), նա սկսում է քարոզել «բանս դիւականս»: Շատ վայրերից մեծ ընծաներով նրա մոտ են գալիս «բազմութիւն ժողովրդոց»: Նույնիսկ կաթոլիկություն ընդունած հայերից շատերը «թողեալ զաւետարանն սուրբ և մեզ (իմա՝ Մխ. Ապարանցու) քարոզութիւն գնացին առ նոսա վասն նոցա սուտ և սատանայական սքանչելեացն»: Ինչ էին քարոզում նրանք և ինչումն էր նրանց քարոզչական զորության գաղտնիքը, այս մասին տեղեկություն չի պահպանվել, բայց ասվում է, որ «ամենեքեան առաւել պատուէին, զնոսա քան զառաքեալսն և զմարգարէսն»: Մի քանի ամիս այս կանայք գտնվում էին ուշադրության կենտրոնում, ապա, հավանաբար բռնությամբ, լռեցվում ու վնասազերծ են արվում: Սակայն, անգամ տարիներ հետո, նույն Մխ. Ապարանցու վկայությամբ, նույնիսկ Հայաստանի հեռավոր վայրերում, սքանչելի պատմություններ էին հյուսվում անանուն այս աղանդավորուհու և նրա ընկերուհիների հրաշագործությունների մասին[134]:

Հայ եկեղեցու դեմ ընդդիմադիր դիրք էին բռնում ոչ միայն տարացեղ աղանդավորները, որոնք հոգևոր սնունդ էին ստանում աշխատավոր ժողովրդի հիշողության մեջ անթեղված թոնդրակյան գաղափարներից, այլև Հռոմից ու քրիստոնյա Եվրոպայից հոգու և մարմնի փրկություն ակնկալող մի խումբ հոգևոր ու աշխարհիկ գործիչներ: Սրանցից էր Հակոբ

133 Այս գրում նկարագրված դեպքերը տեղի են ունեցել 1410 թվականից առաջ:

134 Lingue Haicanae Scriptores ... Marcus Antonius v. d. Oudenrijn, Bernae, 1960, էջ 221:

վարդապետը՝ Կողբ գյուղաքաղաքից, որ 10 այլ հայ վարդապետների գլուխ անցած միացավ կաթոլիկ եկեղեցուն: Սրանց խրատելու փորձերն անօգուտ անցան: Ի վերջո, «կալան զնոսա իշխանքն Հայոց և ի պղինձ եղեալ հալեցին զնոսա, և այնպէս բարձին ի միջոյ»[135]:

[135] Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LVIII:

ՉՈԲԱՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՋԵԼԱԻՐՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Մոնղոլական իլխանության քայքայումից հետո Հայաստանը՝ հարևան երկրների հետ միասին՝ բաղկացուցիչ մասը դարձավ պետական այն կազմավորումների, որոնք իլխանության փլատակների վրա հաջորդաբար կյանքի կոչվեցին Չոբանյան, Ջիլաիրյան, *այնուհետև* Կարա-կոյունլու *և* Աղ-կոյունլու *քոչվորական ցեղերի առաջնորդների կողմից: Սրանք (մանավանդ Չոբանյաններն ու Ջիլաիրյանները) գրեթե անփոփոխ թողեցին իլխանության պետական կարգը, երկրի վարչական բաժանումը, հարկային ու ֆինանսական համակարգը և հպատակ ժողովուրդների հարստահարման ավանդական ձևերը: Իրար հաջորդող այս դինաստիաների տիրապետության շուրջ երկդարյա ժամանակաշրջանում Հայաստանը թատերաբեմ դարձավ աշխարհակործան պատերազմների և դաժան ավերիչ արյունալի կռիվների:*

Ողջ Մերձավոր արևելքի պատմության համար հետաքրքրություն ներկայացնող քաղաքական այս անցուդարձերը վաղուց ի վեր գրավել են արևելագետ պատմաբանների ուշադրությունը և ծրագրված ուսումնասիրության առարկա դարձել Իրանի, Թուրքիայի, արաբական երկրների և Շիրվանի պատմության մասնագետների կողմից: Ուսումնասիրվել են պարսկերեն և այլ լեզուներով շարադրված սկզբնաղբյուրները, ճշտվել պատմական դեպքերի հաջորդականությանն ու ժամանակագրությանը առնչվող շատ խնդիրներ: Պատմաբանների ջանքերով զգալի աշխատանք է կատարվել նաև սոցիալ-տնտեսական կյանքի երևույթների ուսում-

* «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1969, N 9, էջ 53-64:

նախրության գծով և այլն:

Իրենց բոլոր առավելություններով հանդերձ, առկա աշխատությունները թերի են մի տեսակետից. ըստ մեծի մասի, նրանց մեջ անտեսված է Հայաստանի գոյությունը որպես տնտեսական, էթնիկական ու մշակութային ինքնատիպ պատմական միջավայր, փորձ չի կատարված որոշելու քաղաքական անցուդարձերի անդրադարձը հայ ժողովրդի կյանքի տարբեր կողմերի վրա, լուսաբանելու Հայոց պատմության իրողությունները: Եվ եթե այդ բացատրվելու է հիմնականում նախահեղափոխական շրջանի արևելագիտության նպատակների սահմանափակվածությամբ, պակաս նշանակություն չի ունեցել նաև սկզբնաղբյուրների միակողմանի բնույթը: Պալատական պատմագիրները ներբողել են իրենց ժամանակի գահակալների արարքները, նկարագրել նրանց կյանքի ու կենցաղի սին մանրամասնությունները, անտեսելով ժողովրդական զանգվածների և հպատակ ժողովուրդների տնտեսական ու իրավական վիճակի հետ առնչվող երևույթները:

Այս նույն ժամանակաշրջանի հայկական սկզբնաղբյուրները՝ ձեռագրերի բովանդակալից հիշատակարաններ, ուշագրավ ու փաստալից ժամանակագրություններ և վիմական արձանագրություններ, դրականորեն տարբերվում են պարսկական սկզբնաղբյուրներից, պարունակելով արժեքավոր նյութեր հայ և հարևան ժողովուրդների ներքին կյանքի, պատերազմական գործողությունների ու գահակալական կռիվների ընթացքում նրանց կրած տառապանքների և այլ աղետների մասին: Հայկական այս սկզբնաղբյուրների մեծագույն մասը գիտական շրջանառության մեջ է դրվել վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում, ուստի ըստ արժանվույն չի օգտագործվել Մերձավոր արևելքի միջնադարյան պատմության մասին առկա ուսումնասիրություններում:

Մոնղոլական իլխանության քայքայումը. Աբու-Սայիդի մահից հետո (մհ. 30. XI. 1335 թ.) սկսվեց մոնղոլական իլխանության հոգեվարքը. Հայաստանը թատերաբեմ դարձավ գահակալական արյունահեղ պատերազմների: Հանգուցյալ խանի կտակով գահը գրավեց Չինգիզ-խանի կրտսեր որդի Թուլույի սերնդից՝ Արփան, որը հաջողությամբ դիմադրեց Ոսկե Հորդայից Այսրկովկաս ներխուժած ու մինչև Կուր գետը հասած թշնամուն:

Ժամանակակից հայ հիշատակագիրներից ոմանք Արփա-խանին «արքայուն» կամ «քայուն» վերադիր կոչումն են տալիս (մոնղոլներն այդպես էին անվանում քրիստոնյաներին[1]) և վկայում, որ նա «անչափ բարի էր քրիստոնէից» ու «հաւատար զՔրիստոս Աստուած»: Հազիվ կես տարի էր անցել Արփայի գահակալությունից, երբ իշխանությունը գրավելու փորձ կատարեց Աբու-Սայիդի քեռի՝ Օյրաթ մոնղոլական ցեղի առաջնորդ Ալի-Փադիշահը: Լավ սպառազինված բանակով նա դուրս եկավ Բաղդադից, բախվեց Արփա-խանի զորքերին, պարտության մատնեց ու սպանեց նրան: Հայ հիշատակագիրներից շատերը դառնությամբ են արձանագրում այդ դեպքերը, հայտնելով որ «պիղծ և անիծեալ» Ալի-Փադիշահը հաղթանակ տանելով «Նոր զան եդ ի թախթն՝ Մուսի անուն», որը մի խաղալիք էր սոսկ Ալի-Փադիշահի ձեռքին («ինքն Ալի-Փաշայն վարէր զհուքմն օրդուին»): Ճակատի աչքում թագավոր երևացող այս բռնապետն աչքի ընկավ քրիստոնյաների նկատմամբ ծավալած հալածանքներով: «Յարոյց բազում հալածանս ի վերայ քրիստոնէից, և եկեղեցիսն քակեաց, և զխաչերն խորտակէաց», — գրում է նրա մասին Թումա Արճիշեցի գրիչը[2]: «Եւ արար հրաման քակել զեկեղեցիս, և քակեցին ի բազում տեղիս՝ ի Մօսլայ մինչ ի Խլաթ և ի Սալամաստ», — լրացնում է նրան անանուն մի ժամանակագիր[3]:

Հալածանքը դադարում է մի քանի ամսից, երբ Աղթամարի Զաքարիա Սեֆեդինյան կաթողիկոսը ներկայանում է Ալի-Փադիշահին և, անշուշտ, մեծագին կաշառք տալով կանխում հալածանքների ծավալումը:

Կարճատև եղավ նաև Ալի-Փադիշահի իշխանությունը. Նրա հաղթանակից ընդամենը 5 ամիս հետո պայքարի հրապարակ իջան նոր ուժեր՝ Ջելաիրյան ցեղախմբի առաջնորդ Հասան-Բուզուրգը (բուզուրգ նշանակում է մեծ) և Խաչե Թուղայ (նաև՝ Հաջի Թաղա) կոչվող մի ավագանի: Հեր քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում սպանվում է

[1] Н. Я. Марр, Аркаун, монгольское название христиан, СПБ, 1905.

[2] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 281 (այսուհետև հիշատակարանները՝ սույն ժողովածուն վկայակոչելու ենք «ԺԴ» համառոտությամբ):

[3] Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 158-159 (այսուհետև՝ «Սամուէլ (շարունակող)» համառոտությամբ):

«առեցող քրիստոնէից և քակտիչն եկեղեցեաց» Ալի-Փադիշահը, և Հասան-Բուզուրգը խան է հռչակում Հուլավուի սերնդից Մուհամմեդ անունով մի մանուկի: Պարզ էր, սակայն, ժամանակակիցների համար, որ վերջինս մի խաղալիք էր սոսկ ամենակարող ցեղապետերի ձեռքին: «Եւ այժմ նստեալ կայ յաթոռ ղանութեանն մանուկ մի որ կոչի Սուլթան Մահմուտ, և կառավարեն զաշխարհս Շեխ-Հասանն և Հաջի Թաղայն», — հայտնում է մի հիշատակագիր[4]:

1335-1336 թթ. տեղի ունեցած գահակալական այս կռիվների հետևանքով, ինչպես տեսանք, մեկը մյուսին հաջորդեցին 3 տիրակալներ, որոնք կամազուրկ դրածոներ էին իշխանության ձգտող քոչվոր ցեղերի ավագանիների:

Չոբանյանների իշխանությունը. Ջելաիրյան Հասան-Բուզուրգի ու նրա կամակատար Մուհամմեդ խանի հաղթանակից հազիվ մեկ տարի էր անցել, երբ կրկին քաղաքական պայքարի հրապարակ իջան Չոբանյանները: Մոնղոլական այս վերդաստանն իշխանության կյանքում կարևոր դեր ստանձնեց Ղազան խանի ժամանակ, երբ 1295 թվականին ամիր Չոբանը դարձավ նրա կուսակիցներից մեկը, քիչ հետո՝ Օլջայթու խանի ժամանակ՝ գրավելով գլխավոր զորահրամանատարի պաշտոնը: Մանուկ հասակում խան հռչակված Աբու-Սայիդի իշխանության առաջին տարիներին պետության ղեկը փաստորեն գտնվում էր ինքնիշխան ամիր Չոբանի ձեռքին, որն ամենաբարձր պաշտոններն ու ամենաբարեբեր վիլայեթների կառավարչությունը հանձնած լինելով իր որդիներին ու մերձավոր ազգականներին, հասույթների մեծագույն մասը յուրացնում էր ինքը՝ դատարկ թողնելով պետական գանձարանը: Դրությունը փոխվեց, երբ Չոբանյաններից դժգոհ քոչվոր ավագանու սադրանքով Աբու-Սայիդը թշնամական դիրք գրավեց իր զորահրամանատարի նկատմամբ: 1326 թվականին պատերազմական գործողություններ ծավալվեցին Չոբանյանների դեմ, որոնց հետևանքով, ի վերջո, նրանք պարտություն կրեցին: Ամիր Չոբանն ու նրա հեղինակավոր կուսակիցներից շատերը սպանվեցին այդ պայքարի ընթացքում, մի մասն էլ ազատվեց՝ ժամանակավորապես հեռանալով

[4] Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մեսրոպ վրդ. Քեշիշեան, միաբան Զմմառի, Վիեննա, 1964, էջ 579:

երկրից[5]:

1338 թվականին Չոբանի Թամուրտաշ հանգուցյալ որդու անվամբ հրապարակ իջած մի գործիչ, որ արևելագիտության մեջ հայտնի է Կեղծ-Թամուրտաշ անունով, դաշնակցելով իրական Թամուրտաշի որդի Հասան-Քուչուկի (Քուչուկ նշանակում է փոքր) հետ, արշավում է Հասան-Բուզուրգի ու Մուհամմեդ խանի դեմ: Խանը սպանվում է, Ջելաիրյան Հասանը, փախուստ տալով, հաստատվում է արաբական Իրաքում: «Եկն սուտ Թամուրթաշն և որդին՝ շեխ Հասան, և սպանին զՄահմատ ղանն, և այլ ոչ եղև կատարեալ ղանութիւն», — վերոհիշյալ անցուդարձերի մասին գրում է անանուն մի ժամանակագիր[6]:

Շուտով գզվռտոց է սկսվում Հասան-Քուչուկի և Կեղծ-Թամուրտաշի միջև: Եվ քաղաքական այս դեպքերի հետևանքով սմբակակոխ են լինում հիմնականում Հայաստանի շրջանները, տառապանքներ կրում հայ աշխատավոր ժողովրդի զանգվածները: Մելիքսեթ անունով մի հիշատակագիր այսպես է բնորոշում այդ ժամանակաշրջանը. «Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉՁԷ (1338), ի ժամանակս որ ոչ ղան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև գնաւ յերերման, և քրիստոնեայք էին հալածական և փախստական.

Զի եկ ոմն անուն Դամուրտաշ,
Եւ արար զազգս մեր ի մաշ,
Եւ Քրիստոս ետ նմա մահու ճաշ,
Եւ եղև յաշս մեր հրաշ.
Քրիստոսի անմահին վաշ,
Որ արար զնա լաշ»[7]:

Պարտության մատնելով Թամուրտաշին, Հասան-Քուչուկը Չոբանյան

[5] Али-Заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв., Баку, էջ 287-288 (այսուհետև՝ «Али-Заде»): Մի հայ ժամանակագիր այս դեպքերն արձանագրում է համառոտակի այսպես. «ի ՉՀԵ (1326) վերացոյց Պուսայիտն (իմա Աբու-Սայիդն) զՉոպանն, որ զաշխարհս ի ձեռն ունէր, և մեռաւ ի փախչելն» (Սամուէլ, էջ 167):

[6] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 110 (այսուհետև՝ «ՄԺ, I» համառոտությամբ):

[7] ժԳ, էջ 306:

դինաստիայի տիրապետության տակ է առնում մոնղոլական իլխանության մեծագույն մասը՝ հյուսիսային Իրանը, Պարսկական Իրաքը. Շիրվանը և Հայաստանը՝ գրեթե ամբողջապես: Լինելով անսահմանափակ իշխանության տեր մի բռնակալ, Հասան-Քուչուկը, այնուամենայնիվ, գերադասում է կառավարել Հուլավու խանից սերված որևէ գահակալի անունից: Սկզբից թագուհի է հռչակում Օլջայթուի դուստր Սաթի-Բեկին, ապա նրան կնության է տալիս Սուլեյման անունով մի Հուլավյանի, որն անվանապես իշխում է մինչև 1344 թվականը: Բոլորի համար պարզ էր, սակայն, որ երկրի փաստական տերը Հասան-Քուչուկն է. հայերեն հիշատակարանների այն մասերում, ուր ըստ սովորության նշում էին գահակալի անունը, Հասան-Քուչուկի տիրապետության տարիներին հանդիպում ենք կամ միայն նրա անվանը («ի յաշխարհակալութեան փոքր Շեխ Հասանի»), կամ էլ և՛ նրա, և՛ դրածո խանի անուններին («ի թագաւորութեան ... Սուլայիման Բահադուր խանին և ի մեծ նոյինին՝ ի շեխ Հասանին, որդւոյ Թամուրթաշին») :

Զոբանյաններն ու Ջելաիրյանները պատերազմեցին նաև հաջորդ տարիներին: Հայ ժողովրդի մի մեծ հատվածի համար ծանր էր հատկապես Հասան-Քուչուկի արշավանքը դեպի Դիարբեքիր, ուր հաստատվել էր Ջելաիրյանների կուսակից Խաջե Թուղայը: Հետապնդելով փախուստի դիմող հակառակորդին, Զոբանյանները մտան Մշո դաշտ, ավերեցին, կողոպտեցին ու գերեցին իրենց ճանապարհին ընկած քաղաքները և գյուղերը: Մեծ հավանականությամբ այս դեպքերն է գրանցել Սարգիս գրիչը 1340 թվականին շարադրած իր հիշատակարանում: «Եւ ով կարէ պատմել, — գրում է նա, — զանօրէնութիւնս նոցա, զոր արարին և գործեցին, քանզի բազում գաւառս գերեցին և աւերելով կործանեցին, և զինչս արդիւնաց զամենայնն յափշտակեցին, և զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին՝ մերկ և բոկ և ոչ թողին ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից. այլ զանասունս տաւարաց ջոկս առեալ տարան՝ զոչխարաց և զեզանց, կովուց և զցլուց և զէրիվարաց. զհանդերձս ի յանձնէ մերկացուցին ... Որ երեկ տանց տանուտէր (էր) և ամենայն իրօք լի, այսօր բեկեալ սրտիւ և տրտմեալ ... ի վերայ մոխրոյ նստեալ»: Գրիչը, այնուհետև, հայտնում է, որ այդ անօրենները դատարկեցին հացի բոլոր ամբարները և սրով նահատակեցին 100

մարդ[8]: Սրան լրացնում է մի այլ հիշատակագիր Երզնկա գավառից՝ հայտնելով, որ «վասն ծովացեալ մեղաց մերոց զօրացեալ են ազգն նետողաց ի վերայ քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշեն, և յաւարի հարկանեն, և ի գերութիւն վարեն զբազում գաւառս, և բազում և անիրաւ հարկապահանջութեամբ դատեն զամենեսեան»[9]:

Հասան-Քուչուկն արշավեց նաև Ջելաիրյանների արևմտյան Հայաստանում գտնվող տիրույթների վրա: Գրավեց Երզրում քաղաքը և մեկ ամսից ավելի մնալով այնտեղ՝ մեծ գումարներ կորզեց քաղաքացիներից: 1343 թվականին էլ արշավեց Սեբաստիա[10] և այլն:

Հարկ է նշել, այնուամենայնիվ, որ Հասան-Քուչուկին հաջողվեց փոքր-ինչ մեղմել հպատակ ժողովուրդների ծանր վիճակը, գահակալական բազմամյա պատերազմներից հետո պայմաններ ստեղծել խաղաղ աշխատանքի համար: Դրանով պետք է բացատրել, որ մի շարք հայ հիշատակագիրներ դրվատանքով են խոսել նրա մասին: «Սակաւ մի խաղաղութիւն եւ քրիստոնէից», — գրել է մեկը, երկար կյանք մաղթել նրան մեկ ուրիշը[11]:

Հասան—Քուչուկը 1334 թվականի դեկտեմբերի 15-ին խեղդամահ արվեց իր կնոջ կողմից: Վճռական մարտեր մղելով իր հակառակորդների դեմ, իշխանությունը գրավեց Հասանի եղբայր Մելիք-Աշրաֆը: Սա գահակալ հռչակեց Նաշիրևան-ի Ադիլ կոչված մի խամաճիկ խանի (հայերի կողմից կոչված՝ էգիլ Շրվան) և միանձնյա թագավորեց 13 տարի, անլուր բռնությունների ու ահաբեկումների դաժան քաղաքականությամբ գերազանցելով իր բոլոր նախորդներին:

Բոլոր սկզբնաղբյուրներն անխտիր Աշրաֆին ներկայացնում են որպես նենգ ու արյունարբու մի կեղեքիչ, որ զրկում ու հարստահարում էր ոչ միայն աշխատավոր զանգվածներին, այլև, առանց դատ ու դատաստան բանտերն էր նետում տիրող դասակարգի շատ ներկայացուցիչների՝ պետական պաշտոնյաների, ֆեոդալական վերնախավին պատկանող անձանց՝ նրանց ունեցվածքը հափշտակելու համար: Անշուշտ, ավելի ծանր էր հայ

[8] ԺԴ., էջ 324:
[9] Նույն տեղում, էջ 325:
[10] Али-Заде, էջ 331, ԺԴ, 334:
[11] ԺԴ, 331, ձեռ. N 6333, էջ 113:

հպատակների վիճակը, որոնք կեղեքվում էին նաև իրենց հավատքի համար: Մի հիշատակագիր հայտնում է, որ Աշրաֆն ու նրա կուսակիցները «բազում նախատանօք և արհամարհանօք տանջէին և նեղէին զազգս քրիստոնէից, մինչև զմանց տունս բռնութեամբ և հերձօք և զուր բանիւք աւերել ջանան», մեկ ուրիշն ավելացնում է, որ նա «զամենայն աշխարհս աւար եհար և ապականեց, և ոչ եթող շինութիւն»[12]:

Աշրաֆը ծանր հարված հասցրեց հայ ֆեոդալական երբեմնի հզոր վերնախավերի ակար և ուժասպառ պայազատներին: Տուժեցին հատկապես Զաքարյանները, որոնք շարունակում էին իշխել Անիի և Բջնիի շրջակայքում: 1350-ական թվականներին Աթաբեկ Զազայի որդի Շահնշահ Գ. իշխանը զրկվեց իր բոլոր տիրույթներից: Անիի գրավման ու ավերման մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ներսես գրիչը: «Զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին գաւառն քաղաքին Անոյ, — գրում է նա: — Եւ զաղէտս և զոր ինչ արարին ի վանս և ի գեաւղս և ի գաւառս որ բերան պատմէ, կամ որ լեզու խօսի ... Սատակեցին առաջի ծնողաց զորդայսն և առաջի որդայոց զծնողսն: Եւ զորս ըմբռնեալ՝ տանէին գերիս՝ բանդից և տանջանաց մատնեալ, որոց գլուխ աթապակ և մեծ սպասալար Շահնշահ, որ հազիւ կարաց զերծանիլ ի ձեռաց թշնամեացն»[13]:

Բջնի ամրոցի գրավման պատմությունը «Ի ժամանակս բռնակալութեան Մելիք Աշրափին» փորագրված է աթաբեկ Շահնշահի անունից կազմված արժեքավոր մի արձանագրության մեջ. ըստ այդմ, Աշրաֆի հրամանով Բջնի քաղաքը բռնագրավված ու հանձնված է եղել Հաճիբեկ անունով մեկին, որ «զքաղաքս ի հիմանց քակեց, ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց, ու զեկեղեցիքս տապալեց, ու զերկիրս ի չորս գիւղ անբնակ արար, ու զքրիստոնէք անխնայ կոտորեաց»[14]: Աշրաֆի սպանությունից

---

[12] ԺԴ, 379, ձեռ. N 7351, էջ 115ա: Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է ուշագրավ մի զրույց, թե ինչպես Աշրաֆի հրամանով՝ դրամ կորզելու ակնկալությամբ, խոշտանգում էին նույնիսկ ողորմության ձեռք կարկառող կույր աղքատներին («Աշրաւն տեսեալ ի Թաւրէզ կոյր մի զի աղաղակէր՝ Տուք ողորմութիւն, զի ոչինչ չունիմ: Եւ սա՝ Առէք ի դմանէ բազում դրամ: Եւ չարչարեալ առին՝ ժԹ դեկան», ձեռագիր N 8076, էջ 72բ):

[13] Ալիշան, Այրարատ, էջ 112 (Մատենադարան, ձեռ. N 6764, էջ 264ա):

[14] Ալիշան, Այրարատ, էջ 273-274: «Վիմական տարեգիր», էջ 169-170:

հետո Շահնշահին հաջողվում է վերանվաճել Բջնին ու շինարարական որոշ աշխատանքներ կատարել այնտեղ: «Աստուած խղճաց մեզ, — գրում է նա, — ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերաց. վասն փրկութեան հոգւոյ և երկար կենդանութեանս մերոյ կրկին նորոգեցաք զեկեղեցիս և զբունիաթ արձանս» և այլն: Անի քաղաքն իր շրջակայքով այլևս չի ազատագրվում և մնում է օտար զավթիչների ձեռքին:

Դժնդակ այս պայմաններից փրկվելու ոչ մի հնարավորություն չունենալով, երկրից արտագաղթում էին ավատատերերի վերնախավին պատկանող անձինք, քայքայվող քաղաքների բնակչությունը՝ առևտրականներ ու արհեստավորներ: «Շեյխ Ուվեյսի պատմություն» գրվածքի անհայտ հեղինակի ավյալներով Ոսկե Հորդայի խան Ջանիբեկի իշխանության տարիներին (1342-1357 թթ.) «Երկիրը (իմա՝ Ոսկե Հորդան) ծաղկում ապրեց, որովհետև Մելիք-Աշրաֆի ճնշումների հետևանքով եկան այնտեղ հաստատվեցին Թավրիզի, Սերահի, Արդեբիլի, Բայլականի, Պարտավի և Նախիջևանի խոջաներից շատերը»[15]: Պետք չէ տարակուսել, որ արտագաղթողների մեծագույն մասը հայ վաճառականներ և արհեստավորներ են եղել, որոնք, դուրս գալով ինչպես վերոհիշյալ քաղաքներից, այնպես էլ Անիից, Բաբերդից, Բերկրիից, Արճեշից և այլ վայրերից՝ հաստատվեցին Ոսկե Հորդայից (մանավորապես Ղրիմի թերակղզուց) բացի, նաև հարևան ու հեռավոր այլ երկրներում: Մելիք-Աշրաֆի տիրապետության տարիներին ընդօրինակված մի շարք ձեռագրերի հիշատակարաններում կան ուշագրավ տեղեկություններ բռնությունների, հարբեկումների և պատերազմական գործողությունների հետևանքով հայրենի երկրից փախած և օտար ափերում խարխափող հայերի մասին[16]: Քաղաքների տնտեսական կյանքի հետա-

---

[15] В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.-Л., 1941, с. 101.

[16] Մանրաքանակ այդ կարգի մի քանի գրանցումների: 1346 թ. Հովհաննես Նաղաշը Բաբերդում գրում է. «Բազում տանուտէրք և քահանայք մուրողք տարաշխանիկ շրջէին ի հայրենի գաւառաց» (ԺԴ. էջ 346): 1351 թ. Կիրակոս գրիչը հայտնում է, որ «փախուցեալ էաք յերկրէն Ախլաթո ի պատերազմէ այլազգաց (չար) իշխանին Աշրաֆին, և գնեցաք յերկիրս Լոռոյ (իմա Կիլիկիա)» (ԺԴ, էջ 389): Նույն թվականին Ազարիա անունով մի գրիչ՝ Եկեղյաց գավառից՝ հայտնում է. «Եւ եղև զի վասն չար և դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց բազում գեղ աւեր և անբնակ եղեն

դիմության, արհեստագործության ու առևտրի անկման և քաղաքային բնակչության արտագաղթի հետևանքով տեղի էր ունենում արհեստագործության զարգացած կենտրոններ հանդիսացող շրջանների գյուղականացման պրոցես: Համդուլլահ Ղազվինին հիշատակում է բազմաթիվ բնակավայրեր, որոնք առաջ քաղաքներ էին, բայց իր ժամանակ գյուղերի շարքն էին անցել[17]:

Անտարակույս, մեծ չափերի էր հասնում նաև գյուղական վայրերի բնակչության արտագաղթը: Պաշտոնական փաստաթղթերի օրինակելի ձևեր պարունակող «Դաստուր ալ-քաթիբ» կոչվող ժողովածուի մեջ, որ կազմել է Մոհամմեդ իբն Հինդուշահ Նախիջևանցին, տեղադրված է նաև մեծարժեք մի բողոքագիր, ներկայացված Սուլթան Ուվեյսին մի խումբ գյուղացիների կողմից: Բողոքագրում ասված է, որ մեծ ամիրների ու բարձրաստիճան այլ անձանց կողմից «աղքատության հասցված թշվառ մարդիկ թողնում են հարյուրամյա և երկհարյուրամյա իրենց տնտեսությունները, լքում ժառանգած կամ ձեռք բերած փոքր մուլքերը» և հեռանում այլ վայրեր[18]: Արտագաղթի այս պրոցեսը, իհարկե, նոր չէր սկիզբ առել, սակայն Չոբանյանների իշխանության տարիներին շատ ավելի լայն ծավալ ստանալով՝ պատճառ էր հանդիսանում մի շարք նահանգների ու շրջանների տնտեսական քայքայման ու հետադիմության:

Պարսկական աղբյուրների համաձայն, Մելիք-Աշրաֆի դաժան լուծը թոթափելու համար, Թավրիզի բնակիչները մի պատգամավորություն են ուղարկում Ոսկե Հորդայի տիրակալ Ջանիբեկ խանի մոտ: Մռայլ գույներով նկարագրելով իրենց անելանելի կացությունը, նրանք աղերսում են արշավանք կազմակերպել Աշրաֆի դեմ և իրենց ազատել տառապանքներից: Պատեհ առիթից օգտվելով՝ 1357 թվականի սկզբներին, ռազմական մեծ պատրաստությամբ Ջանիբեկը ներխուժում է Ատրպատական:

Մելիք-Աշրաֆի զորքերը լքում են նրան և նա, միայն 2 ծառաների

ի մարդոյ և յանասնոյ. սա (ձեռագրի սկզբի մասի գրիչը) եղեալ յեկեղեաց գաւառէ, գնացեալ հեռաբնակ գաւառսն» (ԺԴ, էջ 390) և այլն:

[17] И. П. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV веков. М.-Л., 1960, с. 95.

[18] Նույն տեղում, էջ 278

ուղեկցությամբ, մազապուրծ փախչում է Մարանդ, ապա Խոյ, սակայն ձերբակալվում և հանձնվում է Ջանիբեկին: Երբ Աշրաֆին տանում էին Թավրիզի փողոցներով, տանիքները բարձրացած բնակչությունը մոխիր և ավազ էր շաղ տալիս նրա վրա, պատկերելու համար նրա կառավարչության ներքո անապատ դարձած երկիրը: Եվ այսպես, անփառունակ, գահազրկվում ու սպանվում է հայ հիշատակագիրների կողմից «սատանայի արբանյակ» ու «Նեռի կարապետ» կոչված Մելիք-Աշրաֆը, որի անունն իսկ հասարակ անվան է վերածվում խորհրդանիշ դառնալով արյունռուշտ ու դաժան բռնակալի[19]:

1357 թվականը, այսպիսով, նշանավորվում է Չոբանյան դինաստիայի անկումով: Ավագ անունով մի վարդապետ, մեծ հույսեր կապելով քաղաքական կյանքում տեղի ունեցած այդ տեղաշարժերի հետ, գրում է. «Բարձաւ չարն մեծ յաշխարհէ Մելիք-Աշրաֆն, և հզօր կամօք բարձրեալոյն եկն ի հիւսոյ կողմանէն հզօր և մեծ ղանն Ջանիբէկ և տիրեաց բոլոր միջերկրեա աշխարհի, որ է Ատրպետական Թավրէզ, և մինչ ի Բաղտատ և ի Միջագետս, ի Խորասան և ամենայն Պարսս»[20]:

Ջելաիրյանների իշխանությունը. Ոսկե Հորդայի խան Ջանիբեկը երկար չմնաց Թավրիզում: Նվաճված երկրամասերի կառավարիչ կարգելով իր Բերդիբեկ որդուն, նա նույն 1357 թվականին ճանապարհվեց դեպի Դաշտ-ի Ղփչաղ: Բերդիբեկն էլ շատ չանցած հետևեց իր հորը՝ լուր ստանալով նրա հիվանդության, կամ ըստ այլ տվյալների, իր իսկ մեղսակցությամբ դավադրաբար սպանվելու մասին: Իշխանությունը Թավրիզում անցավ մեծ հեղինակություն վայելող ամիր Ախիջուքի ձեռքը, որի շուրջ համախմբվեցին Աշրաֆի ժամանակ բարձր պաշտոններ գրաված մի շարք ամիրներ՝ շարունակելով հպատակ ժողովուրդների խոշտանգման նախկին քաղաքականությունը:

1358 թվականի գարնանը Ախիջուքի դեմ արշավանք է կազմակերպում Ջելաիրյան Հասան-Բուզուրգի որդի Սուլթան Ուվեյսը, որ հաջորդել էր

[19] XV դարի 30-ական թվականներին շարադրված հիշատակարաններում, օրինակ, Իսկանդար Կարա-Կոյունլուի մասին գտնում ենք «եղև երկրորդ Աշրաֆ ազգիս Հայոց» բնորոշ դարձվածքը (ԺԵ, 1, էջ 335. 465 և այլն):

[20] Մատենադարան, ձեռ. N 6230, էջ 505բ:

հանգուցյալ հորը 1356-ին: Մեկ տարի տևող պատերազմական գործողություններից հետո, որոնք տեղի էին ունենում Թավրիզում, Նախիջևանում, Ղարաբաղում և երկրի այլ շրջաններում, Ուվեյսը կատարյալ հաղթանակ տանելով, միավորեց Ջելաիրյանների ու Չոբանյանների տիրույթները, իր աթոռանիստը Բաղդադից տեղափոխելով Թավրիզ:

Քաղաքական այս անցուդարձերը համառոտակի արձանագրվել են անանուն մի ժամանակագրի կողմից՝ այսպես. «ՊԶ (1357). ԶԱշրաֆ եսպան Ջանիբէկն և Ախին[21] նստաւ: Սաստիկ պատերազմաւ կռուեցան Սուլթան Վայիսն և Ախին. յետոյ ձերբակալ արարին զԱխին և ածին առաջի Սուլթանին. և նա ետ սպանանել զնա և ինքն նստաւ խան՝ ամս ԺԷ (17)»[22]:

Տարբերվելով Չոբանյան տիրակալներից, որոնք գերադասում էին անվանապես պահպանել մոնղոլական իշխանությունը՝ գահը հանձնելով Չինգիզ-խանից սերված անուժ ու կամազուրկ որևէ իշխանի, Ջելաիրյանները վերացրեցին խամաճիկ խաներ կարգելու ավանդույթը և վերջ տվեցին իլխանությանը նաև իրավապես՝ իրենց հայտարարելով «Սուլթան», այսինքն՝ ինքնիշխան տիրակալ:

Սուլթան Ուվեյսի իշխանության տարիներին Ջելաիրյանների լայնածավալ պետության տնտեսական կյանքում նկատվում է աշխուժություն. սանձվում են քոչվոր ցեղապետերի ու հարկահան պաշտոնյաների չարաշահումները և որոշ պայմաններ ստեղծվում խաղաղ աշխատանքի համար[23]: Հարկ է նշել, սակայն, որ կրոնական անհանդուրժողականությունը և քրիստոնյա հպատակների նկատմամբ հալածանքները չեն դադարում իսպառ: Հայաստանի տարբեր շրջաններում այս տարիներին շարադրված հիշատակարանների մեջ այս մասին գտնում ենք մի շարք վկայություններ: Մեկը հայտնում է, որ «ժամանակս դառն ու փախուստ էր», «հալածում էր քրիստոնէից», մեկ ուրիշն ավելացնում, որ «յանօրինաց բանութենէ խիստ ի նեղութիւն կայեաք» և այլն[24]:

[21] Հայկական աղբյուրները ամիր Ախիջուքին Ախի են կոչում:

[22] «Բանբեր Մատենադարանի», 1969, N 9, էջ 265: Սամուէլ (շարունակող), էջ 169 (բնագիրը սրբագրված է այս երկու աղբյուրների բաղդատությամբ):

[23] Али-Заде, с. 337.

[24] ԺԴ, էջ 450, 458, 489:

1364 թվականին գահը գրավելու անհաջող փորձ է կատարում Մելիք Աշրաֆի Թամուրտաշ որդին, որ Ջանիբեկի արշավանքից հետո տարվել էր Ոսկե Հորդա: Օգտվելով այդ երկրի ներքին խառնաշփոթ վիճակից, Միջին Ասիայի վրայով նա անցնում է Շիրազ, ապա հայտնվում Արծկեի շրջանում ու պատրաստվում Ջելաիրյանների դեմ ապստամբություն բարձրացնելու: Սակայն ձերբակալվում է, հանձնվում Սուլթան Ուվեյսին ու սպանվում: Այդ մասին Սամուէլ Անեցու շարունակողներից մեկը գրում է. «Ի սոյն ամի, որ թիւն ՊԺԳ (1364) էր՝ եկ Տամուրտաշն՝ որդին Աշրաֆի, և եկն ի վերայ երկրիս, որ գայր տիրէր Թախտին, և եկեալ յԱրծկէ սպանաւ»[25]:

Սուլթան Ուվեյսը վախճանվեց 1374 թվականի հոկտեմբերի 10-ին: Նրան հաջորդեց Հուսեյն որդին՝ գինեմոլ ու շվայտ մի անձնավորություն, որ պետության երկրամասերը բաժանելով իր եղբայրների միջև՝ թուլացրեց երկրի ռազմունակությունը:

1375-1376 թվականներին, մի քանի ամսով Թավրիզը գրավվում է Սպահանի, Ֆարսի ու Քրմանի տիրակալ Շահ-Շուջան՝ Մուզաֆարյան դինաստիայից: Երկրի տարբեր շրջաններում գլուխ են բարձրացնում քոչվոր ցեղապետերը, որոնք հրաժարվելով Ջելաիրյաններին ենթարկվելուց, դուրս են գալիս մեկը մյուսի դեմ, փոխադարձաբար ասպատակում հարևան շրջանները: Ոստանի հայ բնակչությունը, օրինակ, 1377 թվականին մեծ զրկանքներ է կրում քրդերի խժդժություններից: «Բազումք ի քրիստոնէից սրախողող են ի քրդէն», — գրում է այդ մասին մի հիշատակագիր:

Կենտրոնական իշխանության դեմ դուրս են գալիս նաև թուրքմենական Կարա-կոյունլու կոչվող ցեղախմբի առաջնորդներ Բայրամ-խոջան և Կարա-Մուհամմեդը: Այս ցեղախումբը Հայաստան էր գաղթել իլխան Արղունի ժամանակ (1284-1291) և քոչվորական կենցաղով բնակություն հաստատել Արածանիի վերին հոսանքներում մասնավորապես Բագրևանդում և Քաջբերունիքում (թերևս նաև Նախիջևանի շրջանում): XIV դարի 40-ական թվականներից սկսած նրանք զգալի ռազմական ուժ ունեին և կազմակերպում էին ինքնուրույն կողոպտիչ արշավանքներ: 1343 թվակա-

[25] Սամուէլ (շարունակող), էջ 169: Ավելի մանրամասն տեղեկություն է հաղորդում Համդուլլահ Ղազվինու շարունակողը, դեպքը կատարված համարելով հիջրայի 761 (1359-1360) թվականին (տե՛ս В. Г. Тизенгаузен, նշվ. աշխ., էջ 97):

նին, օրինակ, Կարա-Հասան ցեղապետի գլխավորությամբ, նրանք ասպատակել էին Խլաթի շրջանը[26]: 1377-1378 թթ. Սուլթան Հուսեյնը պատժիչ արշավանք է կազմակերպում Կարա-կոյունլուների դեմ. սրանք պարտություն կրելով պարտավորվում են վճարել տարեկան հարկ՝ 20.000 գլուխ ոչխար[27]:

1382 թվականին Սուլթան Հուսեյնի դեմ պայքար է սկսում Արդաբիլի կառավարիչ կարգված իր եղբայր Ահմեդը. Հուսեյնը պարտություն է կրում ու սպանվում: Գահակալական պայքարի հորձանքի մեջ են մտնում նոր ուժեր. Հուսեյնի զորահրամանատար ամիր Ադիլն օրինական սուլթան է հռչակում Ուվեյսի որդիներից Բայազիտին, հրապարակ է իջնում նաև Բաղդադում հաստատված սրա եղբայր Շեյխ-Ալին: Գահի շուրջ ծավալված այս կռիվները պայմանավորված էին պետության բնույթով: Այն, արևելյան մյուս բռնապետությունների նման, բաղկացած լինելով տնտեսապես միմյանց հետ չշաղկապված ու էթնիկապես տարացեղ երկրամասերից՝ ենթակա էր ներքին բուռն փոթորիկների անվանի որևէ գահակալի մահվանից կամ ռազմական պարտությունից անմիջապես հետո:

Սուլթան Հուսեյնի սպանության և դրան հաջորդող քաղաքական անցուդարձերի մասին հակիրճ, բայց սուղ ու վստահելի տվյալներ են գրանցել նաև հայ ժամանակագիրները: «Սուլտան Ահմատն. — գրում է նրանցից մեկը. — զերկու եղբարսն սպանեաց և ինքն նստաւ. սպան զմեծամեծս հօր իւրոյ, և կորոյս զամենեսեան: Եւ եղբայրն շարժեցաւ ընդ նմա ի պատերազմ ... և կոտորեցին երկոքին զօրքն ի դաշտին Արտազու, և ցրուեցան զօրքն»[28]:

Ահմեդին, ի վերջո, հաջողվում է պարտության մատնել իր դեմ ծառացած եղբայրներին՝ դաշնակցելով Կարա-Մուհամմեդի հետ ու հենվելով Կարա-կոյունլու թուրքմենական ցեղախմբի զինական ուժի վրա: Միջդինաստիական այդ պայքարից Ջելաիրյանները դուրս են գալիս խիստ թուլացած: Երկրի տարբեր մասերում գլուխ են բարձրացնում ցեղախմբերի ավագանիները, ծառանում կենտրոնական իշխանության դեմ, հրաժարվում

[26] ԺԴ. էջ 334:

[27] Али-Заде, с. 338-339.

[28] ԺԴ. էջ 569, 597:

հարկատվությունից:

Հայաստանի կենտրոնական շրջաններում իր միահեծան տիրապետությունն է հաստատում Կարա-Մուհամմեդը, որին մի շարք հայ հիշատակագիրներ կոչում են իրենց երկրի «ձեռնկալ» կամ «երկրակալ»: «Զար և գառն և պիղծ և աւերարար երկրի» կոչվող այս բռնապետը 1385-1386 թթ. ողբերգական կացության մեջ է դնում իր իշխանության տակ գտնվող հայ հպատակներին՝ կրոնական անլուր հալածանքներով: Նրա հրամանով Վանա լճի հյուսիսային շրջաններում ամբողջովին կամ մասամբ քարուքանդ են արվում 70-ից ավելի եկեղեցիներ, գերվում ու ոչնչացվում են մեծաքանակ ձեռագրեր: Կարա-Մուհամմեդին համեմատելով Նաբուգոդոնոսոր Բ-ի հետ, որ հնում գրավեց ու կործանեց Երուսաղեմը, Խաչատուր անունով մի գրիչ ոտանավոր է հյուսում նրա չարագործությունների մասին.

Ի յութհարիւր թուականին,
Յերեսուն և հինգ սկսեալ ամին
Ի հայկազեան ազգի սեռին (= 1386),
Ի նեղութեանց ժամանակին,
Զոր այլազգիքն նեղէին,
Զքրիստոնեայք նախատէին,
Զեկեղեցիսըն քակէին:
Զոր մեղաւորս ի թիւ արկի
Եօթանասուն եկեղեցի,
Որ ի գաւառս էր Արծրունի.
Զգրունս նոցա խորտակեցին,
Եւ զսեղանս տապալեցին,
Եւ զհիմունս շարժեցին,
Զկտակարանսն գերեցին ...[29]

Ավատական մասնատվածության և քոչվոր ցեղապետերի ինքնիշխանության հետևանքով սաստկանում է ժողովրդական զանգվածների ունեզրկումը և խորանում տնտեսության քայքայումը: Պետական գանձարկղ մուծվող հարկային գումարները տարեցտարի նվազում են, և

[29] ԺԴ. էջ 562:

կենտրոնական իշխանության ազդեցությունը թուլանում այն աստիճան, որ երկիրն անզոր է դառնում արտաքին թշնամուն դիմագրավելու:

Օգտվելով խառնակ այս վիճակից, 1384 թվականի վերջերին Դարբանդի ու Շիրվանի վրայով Ատրպատական է ներխուժում Ոսկե Հորդայի խան Թոխթամիշը՝ 50 հազարանոց մի բանակով[30]*: Ապաշնորհ ու ամարդի Սուլթան Ահմեդը, առանց դիմադրության փորձ կատարելու, փախչում է Բաղդադ: Թոխթամիշի զորքերը պաշարում են Թավրիզը: Քաղաքացիները հերոսաբար մեկ շաբաթ մարտնչում են, սակայն, ի վերջո, ընկճվում են ու 1385 թվականի հունվարի 5-ին բացում դարպասները թշնամու առաջ: Մայրաքաղաքն ավերվում ու կողոպտվում է. նույն բախտին են արժանանում նաև Մարաղան ու շրջակա գավառները: Այնուհետև ընչաքաղց այդ հրոսակախմբերը բաժանվում են երկու խմբի. մեկն անցնում է հայաբնակ Մարանդի, Նախիջևանի և Սյունիքի շրջաններով: «Երկիրն Սիւնեաց՝ երկոտասան գաւառս աւերեցին, զբազումս սպանին և գերեցին», — հայտնում է սրանց մասին Թովմա Մեծոփեցին*[31]*: Սյունիքից անցնելիս Թոխթամիշի զորքերը գրավում են Որոտան ամրոցը և հայրենազուրկ անում Սմբատ Օրբելյան իշխանին՝ Իվանեի որդուն: Մեծ ավերածություններ են գործում նաև Եղեգնաձորի շրջանում, ուր իշխում էր Իվանեի մյուս որդին՝ Գորգոնը. սա վշտամահ է լինում՝ զրկվելով կալվածքներից: Տուժում է նաև Հովհան Որոտնեցին՝ Սյունյաց հին իշխանական տան պայազատներից, որին փորձում են ձերբակալել «վասն հայրենեացն ժառանգութեան». Որոտնեցին այդ ժամանակ գլխավորում էր Արևելյան Հայաստանի ամենախոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Սյունյաց համալսարանը: Խույս տալով թշնամիներից, մեծ գիտնականն իր 60*

[30] Թոխթամիշի արշավանքի ստույգ թվականը դեռևս որոշ չէ: Զեյն-ադ-դին պատմագիրը (Համդուլլահ Ղազվինիի շարունակողներից) արշավանքը դնում է հիջրայի 786-787 (մեր 1384-1385) թվականին (В. Г. Тизенгаузен, էջ 98): Թովմա Մեծոփեցին 1386 թվականն է նշում (Թ. Մեծոփեցի, էջ 12), իսկ անանուն մի ժամանակագիր, անշուշտ, մեծապես սխալվելով, արշավանքը կատարված է համարում Հայոց ՊԼ (1381) թվականին: Համադրելով առկա տվյալները և հաշվի առնելով Թոխթամիշի արշավանքին նախորդող ու հաջորդող դեպքերը, հանգում ենք այն եզրակացության, որ արշավանքն սկսված պետք է լինի 1384-ի վերջերին:

[31] Թ. Մեծոփեցի, էջ 12, հմմտ. նաև Սամուէլ (շարունակող), էջ 171:

աշակերտների հետ միասին շրջում էր վայրից վայր՝ շարունակելով իր իմաստասիրական խորիմաստ դասախոսությունները: «Եւ սա, — գրում է նրան ուղեկցող աշակերտներից մեկը, — կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ, և Բ. (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով»[32]*:*

Թոխթամիշի երկու մասի բաժանված զորքերը միավորվում են Ղարաբաղում, ապա Շիրվանի վրայով վերադառնում Դաշտ-ի Ղփչաղ, իրենց հետ տանելով 200.000 գերի, որոնց մի զգալի մասը հայեր էին՝ Պարսկահայքից, Սյունիքից ու Արցախից[33]*:*

Թոխթամիշը հազիվ էր հեռացել Անդրկովկասից, աշխատավոր ժողովուրդը դեռ չէր բուժել պատերազմական ծանր վերքերը, երբ Հայաստանն ու հարևան երկրները թատերաբեմ դարձան նոր արհավիրքների՝ սկսվեցին Լանկ-Թամուրի գլխավորությամբ կազմակերպված արշավանքները:

[32] Որոտան բերդի գրավման, Սմբատ և Գորգոն Օրբելյանների հայրենազրկման, Հովհան Որոտնեցու թափառումների մասին տվյալներ պարունակող աղբյուրները տարբեր թվականներ են հաղորդում: Հակոբ գրչի պատմածով՝ այդ դեպքերը կատարվել են 1386-ից շուրջ 2 տարի առաջ (ԺԴ, էջ 560), անանուն մի ժամանակագիր ՊԼԴ (1385) թվականն է նշում («Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 266), իսկ մեկ ուրիշը՝ ՊԼԵ (1386)-ը (Սամուէլ, էջ 171): Որոշակի տվյալ չկա նաև արշավողների ինքնությունը ստույգ որոշելու: Հակոբ գրիչը նրանց կոչում է սոսկ «գունդս անօրինաց», իսկ վերոհիշյալ ժամանակագիրները՝ «թուրք» անունն են տալիս: Նկատի առնելով, որ նրանք 1357-ին Ջանիբեկի գլխավորությամբ Ոսկե Հորդայից Հայաստան ներխուժած զորքերին նույնպես «թուրք» են կոչում («Յայսմ ամի անցին թուրք ընդ դրունս Կասբից ի Հայաստան»), կարծում ենք, որ վերոհիշյալ անցուդարձերը անտարակույս կապված են Թոխթամիշի 1384-1385 թթ. արշավանքի հետ: Ակադեմիկոս Հ. Մանանդյանն այս խնդիրը հատուկ քննության նյութ չդարձնելով, սխալմամբ Լանկ-Թամուրին է վերագրում Սյունիքի ավերածությունը, Որոտանի գրավումը և հարակից դեպքերը, կարծելով որ դրանք կատարվել են 1386 թվականի ընթացքում (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Գ, 1951, էջ 344-346):

[33] Սամուէլ (շարունակող), էջ 171:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԵ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ*

ԺԵ դարի առաջին հիսնամյակի ընթացքում պատմական Հայաստանի ղի վրա հաջորդաբար տեղի ունեցան հայ ժողովրդի համար աղետաբեր տևանքներ ունեցող մի շարք պատերազմներ՝ Թամուրյանների ու Կարա-յունլու և Ակ-կոյունլու քոչվորական ցեղերի միջև: Այդ գոտեմարտերի ու խումների պատմությունը Մ. Չամչյանից հետո դեռևս ոչ ոք հանգամա-րեն չի շարադրել:

Նկատի ունենալով, որ հրատարակվող հիշատակարանները լայնորեն տագործվելու են հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի և պատ-ւթյան, գրականության ու կենցաղի բազմապիսի հարցերի ու խնդիրների ւսումնասիրությամբ զբաղվող մասնագետների կողմից և համոզված նելով, որ նշված ժամանակաշրջանի քաղաքական խառն ու բարդ ւմության գիտական շարադրանքի բացակայությունը մեծ դժվարութ-ններ է հարուցելու նրանց առջև, անհրաժեշտ գտանք այս Առաջաբանով *րոշ-ինչ դյուրացնել նրանց աշխատանքը՝ հիշատակարանների նյութերի տագործմամբ համառոտակի շարադրելով ԺԵ դարի առաջին հիսնամյակի ղաքական անցուդարձերի պատմությունը:*

I

Հայ ժողովուրդը թևակոխեց ԺԵ դարը, երբ Լանկ-Թամուրի հրոսա-խմբերը, երրորդ անգամ լինելով, ասպատակում էին Այսրկովկասի ու քր Ասիայի երկրներն ու քաղաքները:

1399-1400 թվականներին Լանկ-Թամուրը իր բանակներով ներս

---

* ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, Առաջաբան, էջ VII-LXVI:

խումեց Վրաստան և, ինչպես հաղորդում է Սարգիս գրիչը Տաթևում ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում՝ «զամենեւեան առհասարակ ի սուր և ի գերութիւն վարեաց, թուով ՃՌ. (100000)-ու գրեցաւ զկորուստն, և զեկեղեցիս քարահատակ կործանեաց» (էջ 5)*:

Ժողովուրդը կոծում ու սգում էր իր հարազատների կորուստն ու գերությունը, իսկ Թամուրի զորքերը շարունակում էին իրենց ասպատակությունները, այս անգամ արդեն Հայաստանի արևմտյան նահանգներում: Կարճ ժամանակում նրանք գրավեցին Սեբաստիան ու Մելիտենեն, այնուհետև մտան Ասորիք՝ ավերեցին Հալեպը և Դամասկոսը, իսկ քիչ անց՝ 1401 թվականի կեսերին՝ Մերդինն ու Բաղդադը Միջագետքում:

Այս արշավանքի և Թամուրի գործած աննկարագրելի հրեշագործությունների մասին գրել են ժամանակակից շատ հիշատակագիրներ: Լսենք Երևանի N 5707 ձեռագրի ստացողներից մեկին, որը 1401 թվականին շարադրած իր հիշատակարանում խոսում է նաև նախորդ տարվա ողբալի իրադարձությունների մասին: «Ի սոյն ամի, - գրում է նա, - Թամուր-Բէկն էառ զՍեւաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց, և ԳՌ. (3000) մարդ զերկիր բացեալ և կենդանոյն թաղեալ** զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա: Եւ զայս արարեալ բազմութեամբ զօրօք գնացեալ ի Շամբն՝ ի վերայ Հալպայ և Դամասկոսի, և մատնեաց աստուած ի ձեռս նորա. էառ և անչափ կոտորումն արար ի Հալպայ քաղաք, որ Գ. (3) գլխէ մնիրս շինեաց ի տաճկանց: Եւ էանց ի վերայ Դամասկոսի, և էառ՝ Լ. (30) օր թալան արար՝ զոսկի, զարծաթ և մարգարիտ, և ԲԺՌ. (12000) ուղտ իւրն հասայ երարձ: Եւ յետ այնր հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առհասարակ ...:

Եւ եկեալ մեծաւ հաղթութեամբ ի վերայ Մերդնայ և տապալեաց զքաղաքն ի հիմանց, և արար որպէս զհող արտավարայ, բայց զբերդն որ կարաց առնուլ, այլ յերկրէն շատ գերի երեր ի քրիստոնէից» (էջ 3-4):

---

* Այստեղ և ամենուրեք ցույց են տրվում սույն ժողովածուի էջահամարները:

** Գրիգոր Խլաթեցին հայտնում է, որ չորս օր կենդանի թաղվածների ձայնը լսվում էր գետնի տակից. «Ո՜, յահագին պատուհասին, և անծանաւթ, որ ոչ պատմին, զի մինչ աւուրն չորրորդին գոռումն գայր անդընդային»:

Այս արշավանքների ընթացքում հավասարաչափ գերվում ու կոտորվում էին և՛ հայ, և՛ վրացի, և՛ թուրք աշխատավորները: Երկրին հասցրած վերքերն այնքան ծանր էին, որ նշանավոր մատենագիր և գրիչ Գրիգոր Խլաթեցին, դեպքերից քսան տարի հետո գրած իր չափածո հիշատակարանում, սարսափով է վերհիշում այդ դեպքերը: Իր հիշատակարանի վերոհիշյալ անցուդարձերի նկարագրությանը նվիրված բաժինը Խլաթեցին ավարտում է այսպես.

«Ո՜հ, զայն ղազայն, զոր արարին
Արանց, կանանց և ընդ մանկտին,
Զարսն թաղեալ մինչ կենդանին,
Հողով, ջրովըն հեղձուցին,
Իսկ բզմատաղ տըղայ մանկտին՝
Զայն կալոտիս ձիոցն արկին ...»
և այլն (էջ 279-280):

1401 թվականի վերջերին Լանկ-Թամուրը, ձմեռելու նպատակով, իր զորքերը հետ քաշեց Ղարաբաղի դաշտային մասը և նախապատրաստվեց գարնանը նոր արշավանք սկսելու Փոքր Ասիայում:

1402 թ., Անկարայի մոտ, պարտության մատնելով Սուլթան Բայազիդի (Ելդրումի) զորքերը և գերելով նրան, Լանկ-Թամուրը վերադարձավ Անդրկովկաս: Այս մասին մի հիշատակարանում կարդում ենք. «Եւ ի միւսում տարին (1401) գնաց ի Հոռմանց տունն, և էառ զԿամախ և այլ բազում տեղիս: Եւ ի միւս այլ տարին (1402) դարձաւ ի Հոռոմս և զՀլտրումն խանն կալաւ, որ ունէր անթիւ հեծեալս և անհամար զաւրս. ցրուեաց և գերեաց զամենեսեան» (էջ 52):

Մի այլ հիշատակագիր (Հովհաննես Խիզանցի գրիչը), նույն այս արշավանքի մասին գրում է հետևյալը. «Եւ յայսմ ամի (1402) եմուտ (Թամուր-Լանկ) ի տունն Հոռոմց, և նուաճեաց զամենեսեան ընդ ձեռամբ իւրով, և զամիրապետն աշխարհին՝ Ելդրում անուն ըմբռնեաց և կապեաց՝ հանդերձ որդւովն» (էջ 22):

Մեկ ուրիշն ավելացնում է, որ գերվածները «յանկան յա[յ]լ աշխար[հ], և մեռան» (էջ 33):

1403 թվականին Լանկ-Թամուրը նորից արշավեց Արևմտյան

Վրաստան և Աբխազիա: Անցյալ և այս արշավանքների ընթացքում Թամուրի գործած անգթությունները նկատի ունի Թովմա Թավրիզեցի գրիչը, երբ, 1403 թ. Շիրվանի Մաղրասա գյուղում շարադրած իր հիշատակարանում փորձում է «ստուգաբանել» Թամուր անունը, կապելով այն հայերեն «դա» և «մուր» բառերի հետ, որովհետև Թամուրը «ուր և հասանէ մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն չարչարելով, զոմն սպանելով, զոմն գերելով, զհայր ի յորդւոյ բաժանելով և զորդի ի հօրէ և այլն» (էջ 31):

1403/4 թթ. ձմեռը Թամուրն իր զորքերով (Առաքել Սյունեցու հայտնած տվյալներով նա «զօրք ունէր ութհարիւր հազար», տե՛ս էջ 35) անցկացրեց Ղարաբաղում «և ապա չուեալ գնաց յերկիրն իւր ի Սամարղանտ, և անդ սատակեցաւ» (էջ 52):

Լանկ-Թամուրը մեռավ 1405 թ. փետրվարին, 70 տարեկան հասակում, դեպի Չինաստան ձեռնարկած մեծ արշավանքի ճանապարհին: Նրա մահվան լուրը ցնծությամբ ընդունվեց ժամանակակիցների կողմից: «Յայսմ ամի, - գրում է հիշատակագիրներից մեկը, - մեռաւ Թամուր ղան, որ Ի. մի (21) ամ իբրև գրաժակ բարկութեան առեալ էր զնա Աստուած ի ձեռն, և ում կամէր արբուցանէր, զի յարևելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեաց՝ զհաւատացեալսն և զանհաւատս, զամենեսեան սրախողխող արար ...» (էջ 53):

2

Թամուրի մահվանից հետո, նրա հսկայածավալ պետությունը, որ կյանքի էր կոչվել հրի ու սրի միջոցով, և իր կազմի մեջ ուներ տարացեղ ու տարալեզու, միմյանց հետ տնտեսական ու մշակութային կապերով չշաղկապված երկրներ ու ժողովուրդներ՝ սկսեց արագությամբ քայքայվել:

Թամուրի ժառանգորդների միջև ծայր առան գահակալական ավերիչ կռիվներ: Միրանշահը, որը հոր կողմից զրկվել էր Թամուրյան պետության արևմտյան երկրների («Հուլաուի թախթի») վրա իշխելու իրավունքից, սկսում է պատերազմ իր որդու՝ Միրզա-Օմարի դեմ: Թամուրի մյուս որդին՝ Շահռուխը, որը պայքար էր մղում պետության արևելյան շրջաններում Միրանշահի մյուս որդի Խալիլի դեմ, օգնում է Միրանշահին՝ հոր և որդու անհաշտ պայքարում:

1405 թվականին Միրզա-Օմարի կողմից բանտ նետված Աբու-Բաքր

եղբայրը փախչում է, միանում է հորը՝ Միրանշահին, և նրանք երկուսով արշավում են Ատրպատական՝ Օմարի դեմ: Զորքը լքում է Օմարին, և Աբու-Բաքրը Սուլթանիայում իր հորը՝ Միրանշահին հայտարարում է փադիշահ:

1406 թվականի գարնանը Միրզա-Օմարը թարմ ուժեր հավաքելով Թամուրյան պետության արևելյան շրջաններից, կրկին արշավում է իր հոր և եղբոր դեմ: Օգտվելով միջդինաստիական պայքարից, կարճ ժամանակով Թավրիզը գրավվում է Շիրվանշահ Իբրահիմի կողմից*:

1406 թվականին գահակալական պայքարի հրապարակ են իջնում նոր ուժեր՝ Ջելաիրյան սուլթան Ահմադը և Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը: Սրանք երկուսն էլ, որպես վտարանդի, պահվում էին Մամլուկյան սուլթան Ֆարաջի մոտ: Լանկ-Թամուրի մահվանից անմիջապես հետո նրանք ազատ են արձակվում և, դաշնակցելով միմյանց՝ ուժեր են հավաքում Թամուրյանների դեմ ելնելու նպատակով:

Կարա-Յուսուֆը կարճ ժամանակում իր շուրջն է համախմբում Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի և Հայաստանի ու Ատրպատականի քուրդ ամիրների զինական ուժերը: Այսպես, նրան հպատակություն են հայտնում և ցույց են տալիս զինական օգնություն Բաղեշի ամիր Շամս-ադ-դինը, Ոստանի ամիր Եզդինը, նրա որդի Մելիքը և ուրիշները:

1406 թվականի աշնանը Կարա-Յուսուֆը պարտության է մատնում Միրանշահի որդի Աբու-Բաքրին և գրավում Թավրիզը:

Քաղաքական այս իրադարձությունները լայն արձագանք են գտել մեր հիշատակարաններում: 1407 թվականին Տաթևի վանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Մատթեոս վարդապետը հայտնում է, որ աշխատել է՝ «Ի դառն և ի նեղ ժամանակիս, որում ազգն նետողաց անցինչ կորաւ, և փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի Թորգոմածին Ղարա-Ուսուֆ անուամբ: Որ և մարտեաւ երկու անգամ և հաղթահարեաց զոմն ի թոռանց չար գազանին Թամուրին՝ չարաբարու, անհղատեսիլ և չարասիրտ Աբ[ու-Բ]աքր»:

* Գահակալական այս կռիվների մասին տե՛ս И. П. Петрушевский, "Государства Азербайджана в XV веке" աշխատությունը, հրատարակված "Сборник статей по истории Азербайджана", выпуск I, Баку, 1949, ժողովածուի մեջ (էջ 153-213):

Գրիչն ուրախությամբ է արձանագրում կատարված փաստը: Նա հույս ունի, որ Կարա-Յուսուֆը վերջ է տալու անիրավ հարկապահանջությանը և հաստատելու է խաղաղություն: «Եւ այն եւս, - շարունակում է նա, - ի վերին խնամոցն ամենակարողին աստուծոյ [եղև], որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ և զամենայն ազգ և զամենայն լեզու ի ներքոյ նոցա հնազանդ ի գերի կային ...» (էջ 76):

Թամուրյանների պարտությունից ոգեշնչված և իրենց դառն վիճակի բարելավումը տենչացող հպատակ ժողովուրդները, սակայն, շուտով պիտի հուսախաբ լինեին: Կարա-կոյունլուների դինաստիան հիմնականում շարունակեց կողոպուտի, ջարդերի ու ահաբեկման նույն քաղաքականությունը:

1407 թվականին Կարա-Յուսուֆն արշավեց Վրաստան, գրավեց մի շարք ամուր բերդեր, պարտության մատնեց վրացական զորքերին, ճակատամարտում ընկավ Գեորգի Է թագավորը (1393-1407):

Ժամանակակից Հովանես Խիզանցի գրիչը հայտնում է, որ արշավանքի ընթացքում սպանվեց 5 հազար և գերեվարվեց 15 հազար մարդ: Լսենք հիշատակագրին.

«Ահա եղև խաւար երկրիս,
Ղարա-Յուսուֆի չար համբաւիս,
Որ է պարոն Թուրքըստանիս,
Խորխտ և անյաղթ յայս աշխարհիս:
' Ի խծեալ բեկէ զմէջս ամենից՝
Ի Մէրդնայ սկսեալ բերդիս,
Մինչ ի քաղաք Թուրէժ տեղիս
Ղեղի արբոյց դառն վշտիս.
Գնալով ի տուն Վըրաց ազգիս,
Լըցաւ թունօք նըման իժից,
Մահացոյց զա[զգս] քրիստոնէից:
Ուստի առեալ բազում գերիս՝
Հնգետասան հազար ի թիւս,
Եւ հինգ հազար սպանեալ յանդիս,
Զարչարանօք ազգի ազգիս:
....
Ամուր բերդեր արձանաւոր,

Եւ քրիստոնեայք անդ փառաւոր,
Ի միասին բոցով յորդոր,
Այրեալ եղեն որպէս փայտ չոր ...» (էջ 68-70):

Հիշատակագիրն այնուհետև հայտնում է, որ Կարա-Յուսուֆը՝ այդ նոր Ներոն՝ հրաման է արձակել անխնայաբար կոտորել քրիստոնյաներին: Զափածո հիշատակարանի մնացած շարունակության մեջ խոսվում է «Խիզանա երկրի» վրա, ըստ երևույթին նույն Կարա-Յուսուֆի զորքերի կատարած արշավանքի մասին: Նրանք՝

«Յարին չխնայէն /// ոյ գինչ կայ,
Զասեն թէ կին և [թէ ա]ղայ,
Զամէն խոցեն ի յանխը[նայ],
Որ ցաւ վիրին չառողջանայ»:

Կարա-Յուսուֆի և Թամուրյանների վերջին բախումը տեղի ունեցավ 1408 թ. ապրիլի 21-ին, Հարավային Ատրպատականում, Սարդրուդի մոտ: Միրանշահը, ստանալով իր եղբայր Շահրուխից 20 հազարանոց օգնական ուժ հույս ուներ պարտության մատնել իր ախոյանին: Սակայն ճակատամարտում Թամուրյանները կատարյալ պարտություն կրեցին, Միրանշահը սպանվեց, Թավրիզը գրավվեց, Կարա-Յուսուֆը տիրեց ամբողջ Հարավային Ատրպատականին մինչև Արդավիլ և Սուլթանիե: «Թւին ՊԾԸ. (1408). յայս ամի Ղարա-Յուսուֆ էառ զԱտրպայճան Թաւրէզ» հակիրճ արձանագրում է այդ դեպքը ժամանակակից գրիչ Հակոբ Ասպիսրնկցին:

Վերջ տալով իր հիմնական հակառակորդներին, 1408-1410 թվականներին, Կարա-Յուսուֆը նվաճողական կռիվներ սկսեց Արևմուտքում: 1409թ. նա Արտուխյան Սալըխից գրավեց Մերդինը, 1410-ին հարձակվեց Ակ-կոյունլուների վրա, ջարդեց նրանց Մշո դաշտում, այնուհետև պաշարեց Դիարբեքիրը (Ամիդ) և Արղնին:

Օգտվելով այն հանգամանքից, որ Կարա-Յուսուֆը զբաղված է Ակկոյունլու Կարա-Յոլուք Օսմանի (մեր հիշատակարաններում Օթման) դեմ պատերազմներ մղելով, Ջելաիրյան Ահմեդը մտադրվում է դուրս գալ իր հին «դաշնակցի» դեմ և Թամուրյանների ջախջախման պտուղները վայելել միայնակ:

Այս նպատակով նա դաշնակցում է Շիրվանշահ Իբրահիմի հետ: Ամե-

*նույն համանականությամբ նա իր կողմն էր գրավել նաև հայ ավատական տների որոշ ներկայացուցիչների**:

Տեղեկանալով Ահմեդի դիտավորությունների մասին, Կարա-Յուսուֆը շուտափույթ հաշտություն է կնքում Կարա-Յուլուք Օսմանի հետ և արագ արշավով վերադառնում է Ատրպատական: 1410 թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցած ճակատամարտում ապստամբները կրում են լիակատար պարտություն, և Սուլթան Ահմեդը խեղդամահ է արվում: 1411 թվականին Կարա-Յուսուֆը Ջելաիրյաններից գրավում է նաև Բաղդադը: Եվ այսպիսով, Մերձավոր Արևելքի երկրների՝ Ատրպատականի, Հայաստանի, Քուրդիստանի և Իրաքի վրա հաստատվում է Կարա-կոյունլուների տիրապետությունը:

3

Այսրկովկասի ժողովուրդները, ինչպես առիթ ունեցանք նշելու, Լանկ-Թեմուրի և նրա հաջորդների անկումով հույս ունեին, որ երկրում կհաստատվի խաղաղություն, հարկային լուծը կթեթևանա և կստեղծվեն որոշ հնարավորություններ անդորր կյանքի ու աշխատանքի համար: Սակայն Կարա-կոյունլուների տիրապետության հենց առաջին տարիները ցույց տվեցին հակառակը:

1409 թվականին արդեն, հայ հիշատակագիրները տվյալներ են հաղորդում աշխատավոր ժողովրդի վիճակի հետագա ծանրացման մասին: Սոկքի գյուղերից մեկում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Հովհաննես գրիչը հայտնում է, որ «պահանջումն անարինաց խառանայ ի վերայ քրիստոնէից, և միշտ և հանապազ ի հոման և ի ծոման է աշխարհ ամենայն, և ոչ երբէք հանգիստ դադարման» (էջ 95):

Եվ ահա Հյուսիսային Ատրպատականի տիրակալ, հեռատես ու քաջարի քաղաքական գործիչ Շիրվանշահ Իբրահիմի գլխավորությամբ Այսրկովկասի ժողովուրդները, դաշնակցելով միմյանց, ապստամբություն են բարձրացնում Կարա-Յուսուֆի դեմ: Այս ուշագրավ դեպքի մասին ժամանակակից աղբյուրները չափազանց կցկտուր տվյալներ են հաղոր-

* Թովմա Մեծոփեցին հաղորդում է, որ Օրբելյան Սմբատ իշխանը, խաբվելով յուրայինների խորհուրդներից, գնում է Թավրիզ՝ Սուլթան Ահմեդի մոտ և նրանից մեծարվելով՝ պարգև է ստանում Անգեղակոթ գյուղը (Թ. Մեծոփեցի, էջ 72-73):

դում: Օտար աղբյուրների և հիշատակարանների տվյալների համեմատական ուսումնասիրությամբ հնարավոր է լինում պարզել հետևյալը. Շիրվանշահ Իբրահիմը դաշնակցում է վրաց թագավոր Կոստանդին Բ-ի (1407-1411) հետ: Վերջինս երկու հազար ընտիր հեծյալների գլխավորությամբ միանում է Իբրահիմին: Ամենայն հավանականությամբ վրաց զորախմբում կային նաև հայկական միավորումներ, ամենից առաջ Սյունիքից Վրաստան գաղթած Սմբատ Օրբելյանի ուժերից**:*

Աշխատավոր լայն զանգվածների մասնակցությունն ու ակտիվ համակրությունն ապստամբության նկատմամբ պարզ երևում է այն դաժան հաշվեհարդարից, որ ապստամբությունից հետո կատարեցին Կարա-կոյունլուները Հյուսիսային Ատրպատականում և Հայաստանում:

*Թշնամի ուժերի բախումը տեղի ունեցավ 1411 թվականին Կուր գետի ափին, Ջալալանի դաշտում (մեր հիշատակագիրները ճակատամարտի վայրը կոչում են Վատնիարյան դաշտ)***:*

* Տե՛ս И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 159-161:

** Այս մասին ուղղակի վկայություններ չկան, բայց կան կողմնակի ակնարկներ: Մինչև ապստամբությունը Կարա-Յուսուֆը բռնագրավել էր Սմբատի նստավայրը՝ Որոտան բերդը: Սմբատն իր ընտանիքի ու ազատների հետ ապաստանել էր Վրաստանում, որտեղ և, վրաց արքունիքի կողմից, ստացել էր կալվածքներ: 1412 թ. Վրաստանի Աֆխիսցիխե (Գորիի մոտ, Ախիլիսցիխե) գյուղաքաղաքում շարադրված հիշատակարանի մեջ Սմբատը կոչվում է այդ վայրի իշխան. «Իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի և որդոյ նորին պարոն Բէշքենի, որ ի յաստմանէ չարին փախեան ի հայրենեաց իւրեանց» գրված է այնտեղ (էջ 133): Արդ, դժվար է պատկերացնել, որ հայրենազուրկ արված Սմբատն ու հայ մյուս իշխանները անտարբեր մնային իրենց թշնամու դեմ պատրաստվող ապստամբության ժամանակ, և իրենց զինական ուժերով չմասնակցեին ապստամբությանը:

*** Թվականի վերաբերյալ աղբյուրներում կան հակասական տվյալներ: Ըստ Աբդուռ-Ռեզակ Սամարկանդու՝ ճակատամարտը տեղի է ունեցել 1412 թ. նոյեմբերի 6-ի դեկտեմբերի 4-ի արանքում (Շաբան ամսին), իսկ Հասան Ռումլին նշում է 1414-15 սխալ թվականը (տե՛ս И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 160): Մենք ընդունում ենք 1411 թվականը Մատթեոս վարդապետ Ջուղայեցու «Մեկնութիւն Գործոց առաքելոց» աշխատության 1411 թ. գրված հիշատակարանին համապատասխան: Այնտեղ ասված է, որ այդ թվականին Կարա-Յուսուֆը «հարեալ զՎատնիարեան դաշտն, և զկալաւ տէր նորա (զՇիրվանշահն Իբրահիմ), և սպան

Կարա-Յուսուֆը կարողացել էր հավաքագրել Հարավային Ատրպատականի քոչվոր ավագանիների և ենթակա այլ երկրների ու շրջանների զորքերը, որոնք թվական մեծ գերակշռություն ունեին ապստամբների նկատմամբ: Ճակատամարտը վերջացավ ապստամբների պարտությամբ: Շիրվանշահ Իբրահիմը, իր որդիների և մերձավորների հետ միասին, վրաց Կոստանդին Բ թագավորը, վրացական բանակի բազմաթիվ հրամանատարների հետ մեկտեղ գերի ընկան: Կարա-Յուսուֆն անձամբ սպանեց Կոստանդին թագավորին: Գազանաբար կոտորվեցին նաև վրաց բանակի երեք հարյուր զորահրամանատարներ*: Կարա-Յուսուֆի զորքերն ավերեցին ու ամայացրին Ատրպատականի և Հայաստանի շատ շրջաններ:

Այս և նախորդ տարիների անցուդարձերի մասին ուշագրավ են Մատթեոս Մանազանի 1417 թվականին շարադրված հիշատակարանի տվյալները, որ բերում ենք ստորև: «Զի դառնացաւ ժամանակս, - գրում է նա, - և թագաւորեաց ոմն Թուրքման անունն Ուսուֆ ...: Բանացեալ Ուսուֆն, պատերազմեալ ընդ որդիսն նորա (Թամուրի)՝ երիցս անգամ, և սպան զնոսա, և մնացեալքն փախըստական գնացին յաշխարհն իւրեանց: Իսկ զընական խանն Ահմատ կոչեցեալ, որ եկն կամաւն իւրով ի Բաբելոնէ ի քաղաքն Թաւրէզ, և ի վերայ նորա ևս յարուցեալ Ուսուֆն, և սպան զնա: Եւ մնացեալ աստանօր միայն ամիրայն Շըրուանայ (Իբրահիմ), յորոյ յապստամբելն, երիցս անգամ եկն ի վերայ նորա Ուսուֆն. և ի վերջին գալն՝ ձերբակալ արար զնա և զբազումս ի միջի նոցա. եւսպան զթշվառական թագաւորն վրաց զԿոստանդին, որ եկեալ էր յօգնականութիւն իշխանին Շըրուանայ և զերկիրն առ աւար և գնաց:

Զայսչափ չարիս առ գլխաւորս աշխարհիս հասոյց Ուսուֆն, իսկ առ փոքունս զի՞նչ ասացից: Զի վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին ոչ զընտանիսն գիտէն և ոչ զօտարսն, թալանէն և կոփէն զձեռնահասն իւրեանց, թէ ի ճանապարհի, թէ ի տան, թէ առանձին, թէ ի քաղաքի, և այսպէս ոչ գոյր թիւ աղաղակի մերոյ» (էջ 194-195):

զթագաւորն Վրաց Կոստանդին, և զբազումս գերի վարեալ» (էջ 119): Նույն թվականն է հայտնված նաև «Վրաց պատմության» դասագրքում (տե՛ս "История Грузии", մասն I, Թբիլիսի, 1950, էջ 301):

* И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 160-161:

Նույն Մատթեոսը նաև չափածո ողբ է հորինել աղետալի այս դեպքերի և Վրաց թագավորի սպանության առթիվ.

«Սպանաւ արքայն Վրացտանոյ՝
Այն Կոստանդին՝ գերեալն յոգւոյ,
Ի ձեռն չար ազգ Թուրքմենոյ,
Որոյ Ուսուֆ անուն գոլոյ:
Եւ մեզ էած սուգ գերագոյ ...
Զի փոխանորդ զնա ունէաք,
Մեր մեծ ազգին, զոր կորուսաք ...» (էջ 197):

Շիրվանից հաղթանակով ու մեծ ավարով վերադառնալով, Կարա-Յուսուֆն իր նստավայրը տեղափոխեց Ալաշկերտ և հաստատվեց այստեղ:

Հպատակ ժողովուրդներին տևականորեն կեղեքելու և հարստահարելու նպատակով Կարա-Յուսուֆը ստեղծեց հարկահանման ուժեղ ապարատ: Հարկերը շատ ծանր էին. այդ մասին ուշագրավ վկայություններ կան ժամանակակից մի շարք գրիչների հիշատակարաններում:

1413 թվականին Կարապետ գրիչը Մոկքի Ծպատա վանքում գրում է, որ «հարկապահանջութեամբ ազգս տապալի ի չար ազգէն նետողականի» (էջ 149):

1414 թվականին Հովսեփ գրիչը Կտուց անապատում նույնն է ասում. «հարկապահան[ջ]ութեամբ ազգս տապալի՞ ///, զի կարի ձանձրացեալ եմք յանաւրինաց բռնութենէ՝ ի քրթէ, ի թաթարէ և այլ ամենայն [պահանջողա՞ց]» (էջ 166):

1417 թվականին Հովանես գրիչը, Խիզանում, Կարա-կոյունլուների մասին գրում է.

«Անունն է չար սոցա մեծիս,
Թուրքըստանաց խորոխտ դանիս,
Ղարա-Յուսուֆ սև մակագրիս,
Որ սևէ զազգս մեր և զազինս ...
Նըւաճելով զքուրդ և զպարսիկս
Պահանջէ հարկ և տոկոսիս ...» (էջ 200):

Համանման տվյալներ հաղորդում են նաև այլ հիշատակագրիներ:

Այնուամենայնիվ, շնորհիվ այն բանի, որ Կարա-Յուսուֆի իշխանության հաջորդ տարիներն ընթացան համեմատաբար խաղաղ պայմաններում, ժողովուրդը փոքր-ինչ շունչ քաշեց և, նույնիսկ, որոշ վայրերում սկսվեցին շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ: 1412 թվականին պատմական Հայաստանի Արարատյան նահանգի տիրակալ կարգված Փիր-Հուսեին պարոնի* կառավարության ժամանակ վերաշինվեց Կարս քաղաքը: «Եղև շինութիւն և նորոգութիւն հռչակաւոր քաղաքիս Կարուց», - կարդում ենք մի հիշատակարանի մեջ (էջ 134) և այլն:

Նշված ժամանակաշրջանում, ինչպես դիպուկ արտահայտվել է Թովմա Մեծոփեցին՝ «Թէպէտ հարկապահանջութիւնն բազում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»**:

Գրիգոր Խլաթեցին նույնիսկ հաղորդում է, որ Կարա-Յուսուֆի թագավորության ժամանակ «էր էժնութիւն և էժնութիւն» (էջ 280): Սակայն, իհարկե, այս տվյալներից պետք է օգտվել մեծ զգուշավորությամբ: Մենք տեղեկություն ունենք այն մասին, որ Կարա-Յուսուֆի տիրապետության սկզբին ցորենի կապիճը*** Հայաստանում (ավելի կոնկրետ՝

* Սահարի որդի Փիր-Հուսեյնը և նրա Փիր-Ղաիբ և Ասլան որդիները հիշատակվում են 1411, 1412, 1414, և 1425 թթ. Բագարանում, Կարսում, Օշականում և Ջաղավանքում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում, որպես նշված վայրերի պարոններ (տե՛ս էջ 124, 134, 162, 335):

** Թ. Մեծոփեցի, էջ 73:

*** Ուսումնասիրողները հակասական արժեքներ են վերագրում կապիճին: Ըստ Եղիազարովի հաշիվների՝ կշռում է 3,75 փութի (150 կգ.) (տե՛ս С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, публичного и частного, вып. 1, Киев, 1919): Ըստ И. Фаас -ի՝ կշռում է 1, 25 լիտրի (տե՛ս "Записки коллегии востоковедов", том I, Ленинград, 1925, стр. 492): Ըստ Հ. Մանանդյանի՝ կշռում է 1, 224 կիլոգրամի կամ 979, 5 գրամի (տե՛ս «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930, էջ 90):

Կարծում ենք, որ շատ ավելի հավանական ու ընդունելի պետք է համարել Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանի» երկրորդ հատորի (Երևան, 1944) էջ 512-ում բերված տվյալը, ըստ որի կապիճը «միջնադարյան դեղարանության մեջ գործածվող կշիռ է, հավասար 2913,240 գրամի»: Այլ խոսքով, կապիճը մոտավորապես կշռում է 3 կիլոգրամ:

Խիզանի շրջանում) արժեցել է մոտ 33 դրամ*: Իհարկե, դա բարձր գին չէ, եթե նկատի առնենք, որ եղել են անբերրիության, մորեխի և սովի տարիներ, երբ մեկ կապիճ հացը վաճառվել է նույնիսկ 200 դրամով (1401), մեկ մոթ** հացը՝ 800 դրամով (1422), կամ մեկ բեռ հացը՝ 1000 դրամով (1428) և այլն:

Սակայն, երբ համեմատում ենք Հայաստանի վիճակն այլ երկրների հետ, միանգամայն պարզ է դառնում, թե որքան դառն ու դժվարին է եղել հայ ժողովրդի դրությունը նշված ժամանակներում: Հրատարակված հիշատակարաններից տվյալ ունենք այն մասին, որ 1401 թվականին Ղրիմում հացի սղություն է եղել և գները բարձրացել են ու հացի կապիճը վաճառվել է 30 դրամով (էջ 30): (Նույն այդ 1401 թվականին Հայաստանում նույնպես սղություն է եղել և հացի կապիճը վաճառվել է 200 դրամով, այսինքն՝ վեցից ավելի անգամ թանկ, քան Ղրիմում): Ուրեմն, նույնիսկ սղության տարիներին, երբ հացի գները բարձրացել են, Ղրիմում մեկ կապիճ հացը վաճառվել է 3 դրամով ցածր, Հայաստանի համար «էժնութեան» տարիների գներից:

Բառացի չպետք է հասկանալ նաև հիշատակարանների տվյալները Կարա-Յուսուֆի տիրապետության հետագա տարիների անդորրության ու խաղաղության մասին:

1416 թվականին Կարա-Յուսուֆն արշավեց Վրաստան և գրավելով Ախալցխան, անխնա կոտորեց բնակչությանը, ավելի քան 10 հազար գերի վերցրեց: Այս մասին ուշագրավ տվյալ է հաղորդում Գրիգոր գրիչը, Կաղոսի վանքում ընդօրինակած Գր. Տաթևացու «Քարոզգրքի» հիշատակարանում: Նա գրում է. «Այլ և գնացեալ ի տունն Վրաց, և առեալ զքաղաքն Յալցխա, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ» (էջ 186-187):

Կարևոր են նույն արշավանքի մասին նաև Գրիգոր Խլաթեցու հայտնած տվյալները.

«Եղև գընալ խան Ուսուֆին
ՅԱխըլծըխէ Վրաց քաղքին,

* XIV-XV դդ. Իրանում և Անդրկովկասում դրամը պարունակում էր 1,5 գ արծաթ:

** Մոթը կշռում է 29 կգ 376 գրամ:

Արար զազայ և գերութիւն,
Անթիւ վնաս և չարութիւն:
Այս էր ի թիւ ութհարիւրին,
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416):
Իսկ զգերիսըն զոր առին,
Յաւտար երկիր վըտարեցին՝
Բաղդատ ՚ւ ի Մըսըր հասուցին
՚Ի ի Խորասան Պարսկացտանին.
Ոչ մի հազար կամ հինգ վեցին,
Այլ քան ըզբիւրըն էր աւելին,
Նոյն սպանելոցն էր բազմութիւն
Եւ անհամար, որ ոչ թըւին» (էջ 280-281):

1418 թվականին Կարա-Յուսուֆն արշավեց Հյուսիսային Միջագետք՝ Ակ-կոյունլու Կարա-Յոլուք Օսմանի դեմ և պարտության մատնեց նրան: Այնուհետև նա մտավ Ասորիք, բայց լսելով իր Փիր-Բուդաղ որդու մահվան լուրը՝ հետ վերադարձավ:

1419 թվականին, ըստ երևույթին, Շահռուխի հետ գաղտնի պայմանավորվածությամբ, Ակ-կոյունլու Օսմանը հարձակվեց Կարա-Յուսուֆի պետության արևմտյան շրջանների վրա և գրավեց Երզնկան: Քիչ անց, Արևելքից զինական մեծ ուժերով հարձակում սկսեց նաև Միջին Ասիայի և Իրանի մեծ մասի տիրակալ սուլթան Շահռուխը: Կարա-Յուսուֆը դուրս եկավ նրա դեմ, բայց մահացավ արշավանքի ճանապարհին, 1420 թ. նոյեմբերին:

4

Կարա-Յուսուֆի մահվամբ նրա զորքի մեջ մեծ խուճապ է ստեղծվում: «Զի շփոթեցաւ զաւրքըն չարին և ցիրերաց փախուստ առին», - գրում է Գր. Խլաթեցին (էջ 281): Երեք օր նրա դիակը անթաղ է մնում: «Իսկ նա երից աւուրց. - շարունակում է Խլաթեցին, - եկին, բարձին՝ յԱրջէշ բերին»: Այնուհետև սկսվում է անկազմակերպ այդ զորքի ավերածությունները ու խժդժությունները իրենց անցած ճանապարհին: Այդ մասին «Յիշատակարան աղետից»-ում կարդում ենք.

«Իսկ զաւրք չարին՝ Միր-Ուսուֆին
Ընդ որ գնացին՝ աւերեցին» (էջ 281):

Մի այլ ժամանակակից՝ Հովհանես գրիչը, Լիմ անապատում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում, հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում նույն դեպքերի մասին: «Յամի ութհարիւր և եւթանասուն թուականի Հայոց (1421), յետ մահուան Ղարա-Յու[ս]ուֆին, - գրում է նա, - եղև խռովութիւն և յոյժ սասանումն ընդ ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազաւրքն ամենայն շփոթեալ՝ զմիմեանս հարկանէին և կողոպտէին: Որ և գունդ մի ի զաւրացն հատեալ, զորս փաւնակ կոչէին՝ հինգ հազար տուն, և եկեալ հասին յերկիրն Քաջբերունոյ, և բազում աւար և գերի առին» (էջ 254):

Կարա-կոյունլուների բանակի ներքին կառուցվածքի ուսումնասիրության համար այս վկայությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ինչպես պարզվում է, բանակի մեջ ընդգրկված գնդերից յուրաքանչյուրը թուրքմենական Կարա-կոյունլու ցեղախմբի բաղկացուցիչ ցեղերից մեկն է եղել: Փոռնակ *վաչկատուն ցեղը, ինչպես և մյուս ցեղերը, գտնվելիս է եղել Կարա-Յուսուֆի գործող բանակում իր ընտանիքներով ու գույքով՝ բաղկացած լինելով հինգ հազար տնից: Գալով Քաջբերունիք, նրանք՝ «տնով ու խոստակաւք» սփռվում են ողջ գավառով մեկ և մեծ ավերածության գործում: «Եւ դչարչարանս և զաղետս կսկծանացն ո՞ կարէ ընդ գրով արկանել, զոր առնէին ընդ տառապեալ ազգս քրիստոնէից է. (7) ամիս բոլոր», - վշտալի սրտով բացականչում է մեր հիշատակագիրը:*

Սուլթան Շահռուխը իր «Երեսուն և հինգ բիւր» (350 հազար) զորքով մտնում է Կարա-կոյունլուների տիրապետության սահմանները և հասնում Խլաթ: Կարա-Յուսուֆի խուճապահար զորքերը խուսափում են կռվի բռնվելուց և փախչում «ի ներքին երկիրն»:

1421 թվականին Կարա-Յուսուֆի Իսքանդար որդին պետության արևմտյան մասում պատրաստվում է Շահռուխի դեմ դուրս գալու: Սակայն, մինչ այդ, նա պարտության է մատնում Շահռուխի դաշնակից Ակ-կոյունլու Օսմանին և 1421 թ. մայիսին, 150 հազար հեծյալ զորքով, անցնում է Արաքսը և պատերազմական գործողություններ սկսում Շահռուխի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ալաշկերտի դաշտում, Բագավանի մոտ, 1421 թ. օգոստոսի 1-ին: Կարա-կոյունլուները՝ Իսքանդար և Սպան-

դիար (Իսպենդ)* եղբայրների գլխավորությամբ, խայտառակ պարտություն են կրում և փախչում Մերդինի ու Մոսուլի կողմերը:

Քաղաքական այս անցուդարձերի ու բախումների մասին կարևոր տվյալներ են հաղորդում մեր հիշատակագիրներից Կարապետ գրիչ Աղեթ-ցին և Գրիգոր Խլաթեցին: «Շահըռուխ չաղաթայն, - գրում է Կարապետը, - ... եկն ի Խլաթ և փախոյց զԹուրքմանն, և շատ պակասութիւն եղև մեզ և շատոց, զի Թուրքմանն զառաջինն փախեաւ ի ներքին երկիրն, և անտի դարձեալ եկն ի վեր Թուրքմանն բազում զաւրաւք՝ Ճ. և Ծ. (150) հազար ձիաւորաւք. և խիստ խայտառակ կոտորեցան ի չաղաթի զօրացն, ի գաւառն Վաղաշկերտոյ, մերձ Բաղւանայ: Բայց զի ողորմած էր Շահըռուխն և քաղցր էր բարուքն՝ թոյլ ետ նոցա փախչել մազապուրծ, և զօրս գերեցան՝ ազատ արար» (էջ 250):

Տեղի ունեցած ճակատամարտի և Կարա-կոյունլուների պարտության մասին Գրիգոր Խլաթեցին գրում է հետևյալը.

«Քանզի խրատն նախ և փախեան
Եւ յետ դարձեալ կոտորեցան,
Ըստ արժանեացն ի ձեռս անկան
Շահըռուխին և մատնեցան:
Շատք ի սրոյ նոցա մեռան,
'Ի այլքըն փախեան և գերեցան,
Չիոց կոխան սատակեցան,
Խաղք խայտառակ թալանեցան,
Ի սար 'ւ ի ձոր փախըստական:
Ընդ որ փախեան հալածեցան
'Ի ինքեանք միմեանց դահիճ դարձան» (էջ 282):

Խլաթեցին նույնպես հայտնում է, որ Շահռուխը «սասախ արար, հուքմ և հրաման ոչ կատարել զամենեսեան», այլ թույլ տվեց Կարա-կոյունլուների ջախջախված բանակի մնացորդներին՝ փախչել: Երկու հիշատակագիրներն էլ Շահռուխի այդ արարքը բացատրում են նրա «քաղցր բարքով», «ողորմածությամբ» ու «արդարադատությամբ»:

* Թ. Մեծոփեցին Սպանդիարին կոչում է Ասպահան:

Սակայն Շահռուխի համեմատաբար մեղմ քաղաքականությունը Կարա-կոյունլուների նկատմամբ բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ նա Հայաստանն ու Հարավային Ատրպատականն իր ձեռքում պահելու համար չուներ համապատասխան զինական ուժեր ու հնարավորություններ: Բացի այդ, նա ստիպված էր հաշվի նստել նաև իր ժամանակավոր դաշնակիցների՝ Ակ-կոյունլուների և Շիրվանշահերի հետ, որոնք չէին կարող հանդուրժել Թամուրյանների հզորացմանն անմիջապես իրենց սահմաններին կից*: Այսպիսով, Շահռուխը ստիպված էր բավարարվել իր գերիշխանությունն ընդունել տալով Հայաստանի ու Ատրպատականի նկատմամբ, և 1421 թվականի աշնանը, ինչպես հաղորդում է Գր. Խլաթեցին՝

«Գնաց դարձաւ ի Խորասան,
Երթեալ յաթոռն իւր բընական՝
Ի Սըմըրղընդ հայրենական»:

Պատերազմական այս գործողությունները, որ հիմնականում տեղի էին ունենում հայկական հողի վրա, մեծ զրկանքներ ու աղետներ պատճառեցին հայ ժողովրդին: Այս մասին իրենց հիշատակարաններում բազմաթիվ անմիջական տվյալներ են հաղորդում գրչի համեստ աշխատողները:

Գրիգոր Խլաթեցին գրում է, որ՝

«Կին և որդայքն ի թիւ չանկան,
Զոր գերեցան և կոխեցան» (էջ 282):

Սարգիս գրիչն ընդօրինակում է իր ձեռագիրը Շահռուխի զորքերից ահաբեկված «անհուն դառնութեամբ՝ տեղաց ի տեղս փախչելով, ի յատարաութիւն ընթանալով, անհանգիստ, քաղց[ած] և ծարաւ» (էջ 260):

Հովհաննես գրիչն իր կիսատ թողած ձեռագրի ընդօրինակությունը շարունակում է «ի քարանձաւս վիմաց լերանց, յորում փախուցեալ էաք [յերկիւղէ] անհուն զօրաց չաղաթայից և թուրքաց, յորում նեղէին զմեզ յերկուց կողմանց» (էջ 255):

Գրիգոր գրիչը հաղորդում է, որ ընդօրինակել է ձեռագիրը «ի թվ.

* Այս մասին տե՛ս մանրամասն И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 163-164:

ՊՀ. (1421), յամի յորում եկն ազգն նետ[ող]աց և աւերեաց զբոլոր ա[շխարհս] Հայաստանեայց» (էջ 256) և այլն և այլն:

Շահռուխի վերադարձից հետո, կրկին անգամ Հայաստանում երևում է Կարա-Յուսուֆի կրտսեր որդի Սպանդիարը: Նա մեծ ավերածություններ է գործում Արճեշի և Արծկեի շրջաններում, քանդում է Բասենի ու Ավնիկի ամրությունները և հատկապես մեծ վնասներ է պատճառում Կարին քաղաքին («ԶԿարնոյ քաղաքըն զԱրզրում, քան զամենայն խիստ աւերեց», - գրում է Գր. Խլաթեցին): Ապա նա արշավում ու գրավում է Թավրիզը: Սակայն շուտով նրա դեմ է դուրս գալիս Իսքանդար եղբայրը: Կարա-Յուսուֆի որդիների միջև հաշտություն է հաստատվում. Ջհանշահը ենթարկվում է Իսքանդարին, Սպանդիարը բավարարվում է արաբական Իրաքով:*

Եվ այսպիսով, Իսքանդարին հաջողվում է վերահաստատել Կարա-կոյունլուների պետությունը՝ իր նախկին սահմաններով: 1428 թվականին Կարապետ գրիչը, Իսքանդարի պետության սահմանների մասին խոսելիս, հայտնում է, որ նա «տիրեաց Պարսից և Բաբելացւոց, Հայոց և Միջագետաց Ասորւոց, յԱրարաթեան տանէն Հայոց՝ մինչ յԵզնկայն, ի Մերդին, ի Բաղդատ, ի Սուլթանիայ, և ի Գանձակ շահաստանն Թաւրէզ, և մինչ ի գետն Քուռ: Զայս ամենայն ի բռին ունէր Իսքանդար Իմիր[զ]այն» (էջ 380-381):

5

Հաստատվելով գահի վրա, Իսքանդարը, 1422-1427 թթ. ընթացքում, համառ ու երկարատև պայքար է ծավալում իր պետության սահմաններում գտնվող քրդական դինաստիաներով կառավարվող կիսանկախ ամիրություններին ու ավատական տիրույթներին վերջ տալու նպատակով:

Կիսանկախ այդ ամիրությունները, որ հաստատվել էին Հարավային Հայաստանի գավառներում՝ Բաղեշում, Խլաթում, Ոստանում, Վանում,

* Թ. Մեծոփեցին հաղորդում է, որ Սպանդիարը (Ասպահան) իրեն բաժին ընկած երկրամասում մեծ անգթություններ է գործում. «Աւերեաց և գերեաց զՄօսլ և զՍնջար և զԹկլաղ և զամենայն աշխարհն, և ապա եկն ի վերայ Ջիզիրու՝ անթիւ արիւնս արար: Եկն ի վերայ Մերտնայ և սպան երեսուն քրիստոնեայս» և այլն (Թ. Մեծոփեցի, էջ 82):

Խիզանում և այլ վայրերում, իրենց կենտրոնախույս ձգտումներով և տեղական շահերով հաճախ բախվում էին կենտրոնական իշխանությանը: Վտանգի պահին կամ քաղաքական աննպաստ պայմաններում նրանք լքում էին իրենց սյուզերենին և հաճախ հանդես գալիս նաև թշնամիների բանակում:

Իսքանդարի համար պարզ էր, որ Կարա-կոյունլուների ընդարձակ պետության ամրապնդման և արևմտյան սահմանների ապահովման համար անհրաժեշտ է նախ և առաջ սանձել կիսանկախ ամիրների կենտրոնախույս ձգտումները:

Ամիրությունների դեմ Իսքանդարի ձեռնարկած արյունահեղ պայքարի ծանրությունն ընկնում էր առաջին հերթին հայ աշխատավոր գյուղացիության վրա, որը հանդիսանում էր այդ շրջանների հիմնական արտադրող ուժը: Պատկերացում կազմելու համար, թե ինչ տառապանքներ ու զրկանքներ կրեց հայ ժողովուրդն այդ համառ կռիվների ընթացքում, անհրաժեշտ է ծանոթանալ ժամանակակից հիշատակագիրների հաղորդած ուշագրավ տվյալների հետ:

Իսքանդարը՝ «ի տարեկից իւր փախըստին, որ ի ձեռացն չաղաթին», այսինքն՝ 1422 թ. օգոստոսին, ինչպես հաղորդում է նշանավոր գրիչ Թովմա Մինասենցը իր ընդարձակ հիշատակարանում՝ «եկն բազում զաւրաւք ի վերայ Խլաթայ, և բազում անձինք քրիստոնէից ի գերութիւն վարեցան ի ձեռաց նոցա, և բազումք սրոյ ճա[րակ եղեն]» (էջ 375):

Նույն արշավանքի մասին ավելի մանրամասն խոսում է Գր. Խլաթեցին: Նա հաղորդում է, որ Իսքանդարը՝

«Հեծել արար շատ բազմութիւն
'Ի եկն ի վերայ Խլաթայ բերդին.
Բերդին վնասել ոչ կարացին,
Այլ զքաղաքն այրեցին.
Ի յԱղուվանք արշավեցին
Եւ չար ոճիրս անդ գործեցին,
Ըզբերդն առին, կոտորեցին,
Շատ քրիստոնեայք անդէն սպանին,
Քան զերկերիւրն այլ աւելի,
Զորս սրոյ ճարակ տըւին.

Թող զորս ի ծովըն խեղդեցան
Եւ քարավէժ եղեալ կորեան» (էջ 283-284):

Արշավանքը չի սահմանափակվում Խլաթի շրջակայքով, Գր. Խլաթեցին հայտնում է, որ հինգ հարյուր գերվածների թվում, բացի Խլաթի մերձակա գյուղերի՝ Ծղաքի, Աղայի, Ադեթի բնակչությունից, կային նաև մարդիկ Խիզանից ու Բաղեշից: «Յիշատակարան աղէտից»-ի հեղինակը որոշակի տվյալ է հաղորդում նաև արշավանքի դրդապատճառի մասին.

«Այս ամենայն ի պատճառէ
Այն Շամրզզին ամիրայէ ...
Որ նա արար հպարտութիւն
Ընդդէմ զօրաց Սքանդարին» (էջ 284):

Կարապետ գրիչ Խլաթեցին 1422 թվականին գրած իր հիշատակարանում հայտնում է, որ ընդօրինակությունը կատարել է «ի ժամանակս նեղ և անձուկ, որ կանք փախուցեալ ի յամուրս և ի ծերպս վիմաց ի յահէ անօրինաց, բազում աշխատութեամբ և տառապանօք» (էջ 291): Հասկանալի է, որ Կարապետ գրչի վիճակում էր գտնվում Խլաթի շրջակայքի բնակչության այն մասը, որին հաջողվել էր խուսափել Իսքանդարի զորքերից և ապաստանել լեռներում:

1423 թվականին Իսքանդարը «բազում զաւրաւք» հարձակվում է Ամրեկի վրա և գրավում այն: Թովմա Մինասենցը հայտնում է, որ իրենց իշխան Մելիք Մահմադը մեծ ընծաներով գնացել է նրա մոտ «ի գործ պատերազմին», այսինքն՝ պատերազմելու համար նրա կողմում, սակայն Իսքանդարը թունավորելով սպանել է նրան:

1424 թվականին Իսքանդարը «խաբանաւք» իր մոտ է հրավիրում Ոստանի ամիր Ահմադին և ամիր Շամս-ադ-դինին, որը Կարա-Յուսուֆից ստորադասական իրավունքներով ստացել էր Խլաթի, Մուշի, Բաղեշի և Խնուսի շրջանները: Շամս-ադ-դինը սպանվում է Խլաթում, իսկ ամիր Եզդինի որդի ամիր Ահմադին, որին ժամանակակիցները կոչում են «ամիրապետ Ոստան քաղաքի, սուլթան Ահմատ», Իսքանդարը շղթայում, ապա սպանել է տալիս Երնջակի բերդում: Նույն թվականին նա պաշարում է

Աղետալի այս դեպքերը գրավել են ժամանակակից շատ գրիչների ուշադրությունը. լսենք նրանցից մի քանիսին: Ոմն խոջա Գորգ, որ 1424 թվականին, վճարելով 1500 դրամ, հետ է գնել Իսքանդարի զորքերի կողմից գերի վերցված մի Ավետարան, իր հիշատակարանում գրում է. «Եւ յայսմ ամի (1424) ... եկն Սքանդարն յերկիրն Ռշտունեաց բազում հեծելօք, և զՎանայ բերդս խաւարեաց, և շատ աւեր էած՝ զոր սպանմամբ, և զոր գերութեամբ, և զոր այրելով: Եւ զեկեղեցիքն կործանեցին, և զգրեանքն գերի վարեցին և բերին ի քաղաքն Սղերտ ...» (էջ 467):

Նշանավոր ու մեծավաստակ գրիչ Թովմա Մինասենցը, 1425 թվականին Աղթամարում ընդօրինակած Ավետարանի հարուստ բովանդակությամբ հիշատակարանում, Իսքանդարի այս արշավանքի մասին կարևոր մանրամասնություններ է հաղորդում. «Բոլոր աշխարհս Հայոց ի յաւ և ի յաւարի, ի սուր և ի գերութիւն մատնեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց, ի ձեռս անաւրէն և անխծեալ ազգին նեռողաց. վասն զի այս բոլոր տարի մ՚ է, որ չար բռնաւորն ամիրզա Սքանդարն՝ տէրն Թավրիզոյ՝ ազգաւ Թուրք, զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլտան Ահմատն ըմբռնեալ է և երկաթի կապանաւք ի յԱկրնջոյ բերթն ի բանտի է եդեալ, խնդրելով ի նմանէ զանառիկ ամրոցն նորա. և զերկիրս Հայոց՝ զԱղբակ, և զՔարպահ, և զՈստանայ երկիրս, մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արարեալ: Եւ բնակիչք աշխարհիս մերկ և բոկ և սովալըլուկ տարաշխարհիկ եղեալ, և ոմանք յաստուածախնամ կղզիս անկեալ, ա[պաւին]ելով յԱստուած և յամենայաղթ զաւրութիւն սուրբ Խաչիս՝ ազատեցան ի գերութենէ չար բռնաւորին» (էջ 326):

Այս տարիներին Վանա լճի շրջակայքի բնակչությանը բաժին ընկած աղետներին ավելանում է նաև սաստիկ մահտարաժամը, որը նույնպես մեծ հունձ է կատարում:

1425 թվականին Իսքանդարին հաջողվում է գրավել Վանը* և այլ

* Վանի գրավման թվականի վերաբերյալ հիշատակագիրները չեն միաբանում: Մի ձեռագրի հետագա ստացող ոմն Կիրակոս, իր հիշատակարանում գրում է, որ «ի [illegible] Հայոց ՊՀԳ. (այսինքն՝ 1424-ին) [illegible]

ամրությունններ Վասպուրականում: Թովմա Մեծոփեցու գիտակ արտահայտությամբ նա «մլքում», այսինքն՝ սեփականում է քուրդ ամիրների տիրույթները:

1426 թվականին Իսքանդարը պաշարում է Բաղեշը, բայց չի կարողանում վերցնել: Ապարդյուն պաշարումը շարունակվում է մինչև 1428 թվականը: Բերկրիի վանքերից մեկում 1426-ին շարադրած իր հիշատակարանում Պետրոս գրիչը հայտնում է, որ Իսքանդարն այս երրորդ տարին է, ինչ գալիս ու ավարի է մատնում ողջ երկիրը. «Եւ մեք փախստական եղաք ամենեքեան առհասարակ՝ հայրապետք և վարդապետք, կրօնաւորք և քահանայք, տանուտէրք և տանտիկնայք, ի յաւտար աշխարհ շրջեցանք և ի գանէգուն աստարացանք» (էջ 353):

1426 թվականին Իսքանդարը պատերազմական գործողություններ է սկսում նաև իր պետության արևելյան մասերում:

Նույն այս թվականին վերջ է տրվում Հայաստանում իր գոյությունը պահպանած միակ հայկական ավատական տիրույթին՝ Մակու բերդին, ուր իշխում էր հայ իշխան Նուր-ադ-դինը: 1426 թվականին Թադեոս առաքյալի վանքում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում վանահայր Գրիգորը (ամենայն հավանականությամբ հետագայում կաթողիկոս դարձած Գրիգոր Մակվեցին) նշում է Մակվի հայկական իշխանության անկման փաստը: «Ի սոյն ամի, - գրում է նա, - ... էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր՝ որդի Ղարա-Իւսուֆին՝ զանառիկ բերդն Մակուայ, և գերկարնակ ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհ արար ...և եա (զբերդն) շ[ե]խ Բայազիթ ոմն այլազգոյ» (էջ 353): Գրիգորը զոհունակությամբ նշում է, որ վանքի նկատմամբ այդ շեյխ Բայազետը տրամադրված էր շատ ավելի բարյացակամորեն, քան հայ կաթոլիկ Նուր-ադ-դինը:

Մակվի անկումը, սակայն, ուրախություն պատճառեց միայն Թադեոս

որ պաշարել է Վանի դղյակը, բայց չի կարողացել գրավել: Նա գրում է. «Իսքանդարն ըմբռնեաց զամիրայն մեր զսուլթան Ահմատն, և եկեալ բազում զօրօք ի վերայ մեր, և յիսուն օր խաւարեաց զանառիկ դղեակս Վան, և ոչ կարաց առնուլ զսա, և սաստ երդմամբ գնացեալ ի Դաւրէժ, և ի զարնանային աւուրսն առաքեաց զզօրս և գերեաց և աւերեաց զերկիրն Ռշտունեաց» (էջ 328):

Ըստ երևույթին Վանի գրավումը տեղի է ունեցել Կարապետ Հիզանցու հիշատակարանի գրությունից հետո:

առաքյալի վանքի վանահորը և նրա նմաններին, որոնք իրենց նեղ տնտեսական շահերը վեր էին դասում ամեն ինչից: «[Անմխի]թար կըս[կիծ է]հաս բոլոր ազգացս քրիստոնէից, - գրում է Մակվի անկման առթիվ Թովմա Մեծոփեցը, - զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից. և այն ևս առաւ ի մէնջ» (էջ 376):

1427 թվականին Իսքանդարը հարձակվում է Շիրվանի վրա և ստիպում Շիրվանշահ Խալիլուլլահ Ա-ին (1417-1462) ենթակվել Կարա-կոյունլուներին:

Եվ այսպես, 1422-1427 թթ. ընթացքում, Իսքանդարը, մեծ համառությամբ ու անգթությամբ, մեկը մյուսի ետևից վերջ է տալիս Հայաստանի հարավային շրջաններում գոյություն ունեցող կիսանկախ քրդական ու հայկական համարյա բոլոր ավատական իշխանություններին և կատարում նոր նվաճումներ:

Իսքանդարը այդ թվականներին ձեռնարկած իր արշավանքներով, ինչպես հաղորդում է բազմարդյուն հիշատակագիր Թովմա Մեծոփեցը, «տիրեաց աշխարհիս մերում և էառ բռնութեամբ զանառիկ ամրոցք աշխարհիս մերոյ, այս Էզանմառչելիս և զանկոխս ոտից թշնամեաց և զսեղիս ապաստանի բոլոր աշխարհացս՝ զկզզիս Աղթամարայ, և զանառիկ ամրոցս և զմայրաքաղաքս երկրիս զՎստան, և զպարանոցատանջն զՎմուկ, և մինչ ի Հէշտա և ի Նըւան՝ բոլոր աշխարհս բռնակալեաց ընդ ձեռամբ իւրով և ընդ իշխանութեամբ: Եւ բազում և անթիւ չարիս և գառնութիւնս անասելիս և անպատմելիս լեզուաց անցոյց ընդ աշխարհս մեր, զոր ոչ կարեմ մի բստ միոջէ ընդ գրով արկանել զաւէր աշխարհիս մերոյ և [կործա]նումն բնակչաց սորին» (էջ 374):

6

Ներքնապես ուժեղ ու կենտրոնաձիգ պետություն ստեղծելու իր պլաններն իրագործելու նպատակով, բացի կիսանկախ ամիրությունններին վերջ տալու ուղղությամբ կատարած իր համառ քայլերին, Իսքանդարը ձգտում էր նաև օգտագործել Կարա-կոյունլուների պետության մեջ էթնիկապես կարևոր տեղ գրավող հայ ժողովրդի տիրող շերտերին: Նա իրեն կոչում էր «Հայաստանի թագավոր» (Շահի-արմեն), պետության բարձր պաշտոնների էր առաջ քաշում իրենց տիրույթներից զրկված հայ

ֆեոդալական անվանի տների որոշ ներկայացուցիչների*, իր գործերի մեջ հավաքագրում էր նաև ռազմիկների և այլն:

Բացի այդ, նա երբեմն նույնիսկ սիրաշահում էր Սյունիքի ու Արարատյան դաշտի որոշ վայրերի հայ բնակչությանը: Այսպես, օրինակ, Մատթեոս Ագուլեցի գրիչը, 1425 թվականին շարադրած իր հիշատակարանում, Իսքանդարի մասին ասում է, որ երբ նա «յոյժ ողորմած էր ազգիս Հայոց, եւ տաուել մեր գեղիս Ագուլեաց, իւր խաս արար, և մէկ տարի թարխան արար» (էջ 337):

Կարծես հենց այս հիշատակագրության հեղինակին նկատի ունի Թովմա Մեծոփեցին, երբ իր «Պատմության» մեջ գրում է, թե «ազէտք ումանք վասն սակաւ սիրելոյն զհաւատացելոյս թէ ազգ բարի Ը երկարութիւն կենաց խնդրէին (Իսքանդարայ), որ և կարծիք է մարդկան, թէ քան զատեալս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սորին»**:

7

1425 թվականին, Իսքանդարի կողմից ոչնչացվող քուրդ ամիրների պաշտպանության դիմակի տակ, Վանա լճի հյուսիսային շրջաններում

* Ինչպես ցույց է տալիս Պատմության ինստիտուտի գիտական աշխատող Հ. Փափազյանը «Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ XVII դարում» իր դիսերտացիոն աշխատության մեջ, այդպիսիներից էր Օրբելյան ֆեոդալական տան շառավիղներից իշխան Սմբատի թոռ Բեշքենի որդի ամիր Ռուստամը, որ 1432 թ. վաճառեց (ավելի ճիշտ վաճառքի անվամբ նվիրաբերեց) էջմիածնի վանքին, էջմիածին, Աշտարակ, Բարոժնջ, Նորագավիթ, Աղավնատուն և Թանիս-Քիրաշլի գյուղերը: Վաճառքի կալվածագրի հայերեն թարգմանության մեջ (պահպանվել է նաև բնագրի պարսկերեն պատճենը) ամիր Ռուստամը մեծարված է հետևյալ տիտղոսներով՝ «Բարձրիշխան, հռչակավոր, բարձրատոհմ բարձրապաշտօն մեծ վեզիրն, մեծատուրազոյնն մեծին փադիշահի և նախամեծարեալն ի պետութեան, գլխաւոր արժանի խորհրդական և հաւատարիմ արժանեաց, արժանին ամենայն գովասանաց խրովն երևելի ծագմամբ՝ Ամիր-Ռուստամ որդին Ամիր-Միշկինայ (այսպէ՛ս), որդի Ամիր-Սմբատայ» (տե՛ս Հ. Աբրահամյան, «Կալվածագրեր», Երևան, 1941, էջ 12):

Հ. Փափազյանն ապացուցել է, որ «Ամիր-Միշկինայ» անունը աղավաղված է, և բնագրում եղել է «Ամիր-Բեշքենայ»:

** Թ. Մեծոփեցի, էջ 105:

հանդես է գալիս Ակ-կոյունլու Կարա-Յուլուք Օսմանը, որը մեր հիշատակարաններից մեկում կոչվում է «Թագաւոր ամենայն Միջագետաց, պարոնաց պարոն շահ Օթման Պահատուր» (էջ 403): Նա Կարա-կոյունլուների արևմտյան սահմանամերձ շրջանների վրա հարձակում էր սկսել տարիներ առաջ: 1422 թվականին նա տասներեք շաբաթով պաշարել էր Երզնկան և մեծ ավերածություններ գործել շրջակայքում: Այս մասին ժամանակակից գրիչ Սիմեոնը հայտնում է հետևյալը. «Երեկ Աւթմանն ի վերա մեր և գաւռն աւարեց, և ԺԳ. (13) շաբաթ ի վերա քաղաքիս նստաւ և զվաստակն կերցուց, և ով որ ի ձեռք անկաւ՝ զամէն սպանեց և զամէն ծառս բանեց և խիստ խսարեց: Եւ ով որ ի յափ ընկաւ՝ նա բերին ծախեցին. և հանց խսարեց, որ մօթ հացն ԸՃ. (800) դրամ եղաւ և մօթ աղն ի ՌՄ. (1200) դրամ. և ոնց որ յԱնի անկ եղաւ» (էջ 289-290):

Ոմն Ավետիք 1425 թվականին շարադրած հիշատակարանում արձանագրում է, որ Երզնկան երեք տարի պաշարումից հետո գրավված է Օսմանի կողմից: «Եկն տէրն Ամթայ ի վերայ Եզնկիս, — գրում է նա, — և ... հրդեհեաց զգեղաւանսն առհասարակ և զվանորայս ...: Եւ երեք ամ ի խսար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց» (էջ 344):

Գրավելով Երզնկան, Օսմանը, դաշնակցելով Իսքանդարի կողմից սպանված Բաղեշի ամիր Շամս-ադ-դինի եղբայր Սավլայանի գլխավորած Ռոժիկ քրդերի հետ, մտնում է Վանա լճի հյուսիսային գավառները: «Եւ եկ[ի]ն ի վերա երկրին արինակեր գազանքն՝ զօրքն Օթմանին և հեծեալքն Ռօշկանին, և առ և գերի արարին զերկիրս զորս և կարացին, և շատոց արիւն հեղին (էջ 329), — գրում է Խառաբաստի վանքում Հակոբ գրիչը: Նա հայտնում է նաև, որ զոհվածների թվում է գտնվում «մեծ րաբունապետ», նշանավոր գրիչ և հիշատակագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցին:

Նույն արշավանքի մասին ավելի կարևոր են Թովմա Մինասենցի հաղորդած տեղեկությունները: «Դարձեալ պատմեցից, — գրում է նա, — և այլ ևս աղէտ և կսկիծ արժանի արտասուաց, որ եկն եհաս ազգիս քրիստոնէից: Վասն զի Աւթման բէկն՝ տէրն Ամթայ, ջատագով եղեալ մերոյ իշխանացս, և եկեալ բազում զաւրաւք, և զերկիրն Արճիշոյ և զԱրծկոյ բնաջինջ գերի վարեալ և սրոյ ճարակ արարեալ» (էջ 326):

Իսքանդարն անկարող էր հակահարված տալ Օսմանին, որովհետև այդ ժամանակ զբաղված էր նվաճումներ կատարելով իր պետության

արևելյան սահմաններում: Ուրմիան գրավելուց և Շիրվանը հպատակեցնելուց հետո, 1427 թվականին նա սկսեց մեծ արշավանք Շահռուխին պատկանող երկրամասերում, գրավեց Սուլթանիե, Զենջան և Ղազվին քաղաքները:

Բախումը Թամուրյանների և Կարա-կոյունլուների միջև դարձավ անխուսափելի: 1428 թվականի հոկտեմբերին Իսքանդարի դեմ պատերազմական գործողություններ սկսեց Շահռուխի զորահրամանատարը, իսկ 1429 թվականի մայիսին գլխավոր ուժերով հանդես եկավ ինքը՝ Շահռուխը: Նա ջարդեց Իսքանդարին Սալմաստի մոտ և սկսեց ասպատակել Ատրպատականն ու Հայաստանը: Աշխատավոր ժողովուրդը թալանվում, բնաջնջվում և գերեվարվում էր երկուստեք, թե՛ Շահռուխի զորքերի և թե՛ Իսքանդարի պարտություն կրած բանակի կողմից:

Ժամանակակից հիշատակագիրները կարևոր տվյալներ են հաղորդում քաղաքական աղետալից այս իրադարձությունների մասին: Գրիգոր գրիչը Գառնիի գավառում 1429 թվականին շարադրած հիշատակարանի մեջ գրում է. «Ի յայսմ ամի եկն չաղաթէն արևելից՝ ի Սամարղանդայ՝ Շահռուխ անուն, որդի Լանգ-Թամուրին, բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք, և էառ զԴաւրէժ քաղաք, և զթուրքման ազգն աւառ էառ և զբազումս գերի վարեաց ...: Եւ ազգս քրիստոնէից փախստական ի ձերպ և ի ծակ մտած և ի յիւրեանց բնակութենէն էլած: Եւ փախուցեալ թուրքմանն թալանեաց զաշխարհս Հայոց. զհաց և զգինի հանին և մեծ աւերութիւն ածին աշխարհիս, և ի խիստ վտանգի կայ ազգս, ահն ու երկիւղ պատել է, կու վախեն, թէ զամէն ազգս գերի վարեն յորժամ գարնանէ» (էջ 391):

Այս արշավանքի ընթացքում հատկապես տուժում են Վասպուրականի և Քաջբերունիքի հայերը, որոնցից Շահռուխի զորքերը մեծ թվով գերիներ են քշում Սամարղանդ: Երեք տարի անց՝ 1432 թվականին մեծ վշտով վերհիշում է այս դեպքերը Դավիթ գրիչը, Երերան անապատում գրած իր հիշատակարանում: «Վասն ծովացեալ մեղաց մերոց, — հայտնում է նա, — եկեալ [է՞]ր թագաւորն Պարսից Շահռուհ յաշխարհս Հայոց յերկրորդ գալստեան իւրոյ: Եւ աւերեալ քանդեաց զբազում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ՝ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ տարաւ ի Սամըրղընդ» (էջ 419):

Շահռուխն այս անգամ ևս պահպանեց Կարա-կոյունլուների պետությունը: Նա գահը հանձնեց Իսքանդարի եղբայրներից Աբու-Սեիդին, որը ճանաչեց Թամուրյանների գերիշխանությունն իր նկատմամբ ու ստացավ Շահռուխից հրովարտակ՝ Հարավային Ատրպատականը, Ղարաբաղը ու Հայաստանը տիրակալելու մասին:

Շահռուխը 1430 թվականի մայիսին թողեց Ատրպատականը և ուղևորվեց դեպի Խորասան: Աբու-Սեիդի մասին հրատարակված հիշատակարաններում կա միայն համառոտ մի գրանցում, ուր ասված է. «ՊՀԸ. (1429). միջին գալն [Շահռուխին], և Բուսաիտն /// ի թա՞խտն] եդիր» (էջ 506):

Այս զորաշարժերի ու ավերածությունների ժամանակ, աշխատավոր ժողովուրդը ստիպված էր ծվարել անմատչելի լեռնաձերպերում, փախչել իր բնակավայրերից և երկիրը թողնել անմշակ: Այդ բանի հետևանքով 1431 թվականին Հայաստանում առաջ է գալիս սարսափելի սով, որն իր հերթին մեծ թվով մարդկային զոհեր է քաղում:

Շահռուխի հեռանալուց ոչ շատ հետո, նորից հրապարակ է գալիս Իսքանդարը, մեծ ավերածություններ է գործում Հարավային Ատրպատականում, պարտության է մատնում ու սպանում իր եղբայր Աբու-Սեիդին, և կրկին անգամ իր ձեռքն է առնում իշխանությունը՝ 1431 թվականին:

Օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից և Կարա-կոյունլու եղբայրների միջև մղվող միջգահատիրական պայքարից, Հարավային Հայաստանում նորից գլուխ են բարձրացնում քուրդ ամիրները: Վանի և Ոստանի ամիր Եզդինի թոռներից մեկը՝ Փիրի-Բեկ անունով, որ տիրում էր Ամուկ բերդին, սկսում է մեծ ավերածություններ գործել Վանա լճի արևելյան և հյուսիսային շրջաններում: 1431 թվականին նա գրավում է Աղթամար կղզին: «Եւ ի գերութիւն վարեաց, — հայտնում է Թովմա Մինասենցը, — զսպասս և զզարդս երկնանման տաճարին, զբոլոր ծովեզերայս վանորայիցս և գեղորայիցս զԱստուածաշունչ մատեանքս և զայլ անօթք սրբութեանցն, և ցան և ցրիւ ընդ ամենայն աշխարհ տարածեաց» (էջ 505, այս մասին տե՛ս նաև էջ 433, 434-435 և 436):

8

1434 թվականին, երբ դեռևս ժողովուրդը շունչ չէր քաշել Շահռուխի երկրորդ արշավանքի և հաջորդող աղետալի իրադարձությունների ծանր

հետևանքներից, մի կողմից Իսքանդարի և մյուս կողմից՝ Շիրվանշահ Խալիլուլլահի և Շահրուխի միջև վերսկսվեցին պատերազմական գործողությունները:

Պատերազմի առիթը հետևյալն էր: Իսքանդարի որդիներից մեկը՝ երիտասարդ Յար-Ալին, որը իշխան էր կարգված «ի յամուրն Տոսպ գաւառի, ի յոստն Վարագայ, ի Վան քաղաքի ... և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և տաճկաց»*, գժտվում է իր հոր հետ, և երկու հազար հեծյալ զորամասով փախչում Շիրվան: Իսքանդարի պահանջը՝ որդուն իրեն հանձնելու մասին անտեսվում է Շիրվանշահ Խալիլուլլահի կողմից, և Իսքանդարը, օգտագործելով այդ առիթը, 1434 թվականին կրկին անգամ արշավում է Շիրվան՝ այն նվաճելու մտադրությամբ:

Այս արշավանքի ընթացքում Իսքանդարի զորքերն անխնայաբար ոչնչացրին Շիրվանի այգիները և զարգացած շերամապահության համար անհրաժեշտ բազա հանդիսացող մեծաքանակ թթենիները: Մի ամբողջ տարի Իսքանդարը մնաց Շիրվանում և ամայացրեց երկիրը**:

Շիրվանշահ Խալիլուլլահն օգնություն խնդրեց Շահրուխից, և վերջինս ձեռնարկեց թվով երրորդ իր արշավանքն Իսքանդարի դեմ: Շիրվանշահի ու Շահրուխի դաշնակից զորքերը պաշարեցին Երնջակի բերդը. Իսքանդարն ստիպված էր փախչել իր պետության արևմտյան շրջանները:

1435 թվականին շարադրած իր մի հիշատակարանում Թովմա Մեծոփեցին գրում է. «Արդ, գիտելի է, զի մինչ ոչ էր աւարտեալ սուրբ գիրս, անաւրէն թագաւորն Շահրուհ եկն բազում զօրօք յաշխարհս մեր, եւ նստաւ ի վերայ բերդին Երընջակու, եւ թուրքմանն էջ ի ներքին կողմ աշխարհիս Հայոց» (էջ 667):

Անասելի ծանր դրություն ստեղծվեց հայ ժողովրդի համար: Շահրուխի արյունարբու զորքերը, շուրջ մի տարի շարունակ բնաջնջում էին խաղաղ բնակչությանը, ավերում ու հրդեհում գյուղերն ու շեները, կողոպտում ու թալանում, գերում ու հավատափոխ անում քրիստոնյաներին: Ժողովրդի դառն հեծեծանքի աղեկտուր ձայնը լսվում էր աշխատավոր գրիչների

* Թ. Մեծոփեցի, էջ 99:

** Նույն տեղում, էջ 99-100:

սրտաճմլիկ հիշատակարաններից:

Մխիթար գրիչը, որին 1437 թվականին հանդիպում ենք հայրենի երկրից փախստական, օտար հորիզոններում, սարսափով վերհիշելով անցյալի դառնությունները, հաղորդում է հետևյալը. «Եկաւ Շահռուղ միրզէն՝ անիծեալ շունն նետողական, բազում և անթիւ զօրաւքն, և աւէր էած աշխարհին Հաոց, և բազումս գերեաց և կոտորեաց, քակեաց և այրեաց և ի հաւատոց էհան: Եւ մեք տեսաք և վայ կարդաինք անձանց մերոց և լսելեացս: Եւ մեք լալագին աչաւք և դառն սրտիւ թողաք զծնողս, զեղբայր, զքոյր և զմայր և եկաք մինչև ի Համիթ քաղաք» և այլն (էջ 471):

Աստվածատուր գրիչը՝ Կոտայքի Արծնի գյուղից, շատ շատերի հետ մեկտեղ փախել էր իր հայրենիքից ու ապաստան գտել Հյուսիսային Հայաստանում, վրացական պետության հովանու ներքո: Նա իր հիշատակարանում հայտնում է, որ Շահրուխն իր «անգութ, և անագորոյն, և անողորմ» զորքերով «բազում և անասելի աւեր ած ի վերայ աշխարհիս Հայոց: Զի զոր սրով կոտորեաց, և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս, և զոր սովամահ եղան, և զոր մահն տարաւ, և զորս գայլք և գազանք կերան և պատառեցին, և մնացեալքն այսր և անդր փախեան բնաջինջ և մտին յաշխարհն Վրաց» (էջ 485):

Եվ, իրոք, հարևան Վրաստանը գլխավոր այն վայրն էր, ուր պատսպարվելու և պաշտպանվելու հույսով դիմում էին Հայաստանի տարբեր շրջաններից կեղեքված ու թալանված հազարավոր աշխատավոր գյուղացիներ: Դրա պարզ ու անմիջական ապացույցը գտնում ենք հենց հրատարակված հիշատակարաններում: Շահրուխի երրորդ արշավանքին անմիջապես հաջորդող տարիներին (1436-1438) Վրաստանում և այդ ժամանակ Վրաստանի տիրապետության տակ գտնվող հայկական շրջաններում ընդօրինակվում են մեծաքանակ հայերեն ձեռագրեր:

1436 թվականին Թբիլիսիի արվարձան Կրծանիսում Հովհաննես Գանձակեցի գրիչն ընդօրինակում է մի Գանձարան, հաջորդ թվականին Սանահնի վանքում Շարակնոց է ընդօրինակում Տաթևի տարագիր եպիսկոպոս Շմավոնը: 1438 թվականին Հաղբատում է գտնվում և ընդօրինակում մի ճաշոց մեզ արդեն ծանոթ Աստվածատուր գրիչը՝ Կոտայքի Արծնի գյուղից: Նույն՝ 1438 թվականից մեզ հասել են ձեռագրեր ընդօրինակված՝ «ի մայրաքաղաքս Տփղիս», «յերկիրս Ախալցխայ», «ի մայրաքաղաքն, որ

կոչի Դորի», «ի Մուխրանիս, ի գեղս, որ կոչի Վարդիսուպան» և այլն (տե՛ս էջ 486, 487, 489):

Հայ տարագիր ժողովրդի անունից է կարծես խոսում այն անանուն հիշատակագիրը, որը 1438 թվականին, ի դեմս վրաց Ալեքսան թագավորի (1412-1443), իր երախտագիտությունն է հայտնում Վրաց պետականությանը: Հանձինս Վրաց թագավորի, նա տեսնում է այն քաղաքական ուժը, որն ի վիճակի է պաշտպանելու հայերին, ուստի և նա երկար կյանք է մաղթում նրան՝ «զաւրաւք և զաւակաւք իւրովք՝ ի փառումն և ի հերքումն անաւրինաց խմբից» (էջ 488):

Շահրուխի զորքերն իրենց երրորդ արշավանքի ժամանակ ավերում են նաև Սյունյաց նահանգը: Օրբելյան իշխան Բեշքենը, Սմբատի որդին, որը Կարա-Յուսուֆի օրոք վտարվել էր Սյունիքից, բայց Իսքանդարի ժամանակ նորից վերահաստատվել իր տիրույթներում*, ստիպված է լինում իր բնտանիքով՝ Ռուստամ որդու հետ միասին, «ազատաւք և ժողովրդաւք» կրկին անգամ ապաստանել Վրաց պետության սահմաններում: Ալեքսանդր թագավորից նա Լոռիում ստանում է կալվածքներ:

Շահրուխի երրորդ արշավանքի ու Սյունիքում գործած ավերածությունների մասին մեծ արժեք են ներկայացնում իր միաբանակիցների հետ միասին Լոռի գաղթած Շմավոն եպիսկոպոսի 1437 թվականին Սանահնում գրած հիշատակարանի տվյալները: Ստորև մեջ ենք բերում այդ հիշատակարանի պատմական մասին մի ընդարձակ և պերճախոս հատված. «Որդի անակն սատանայի Շահրրուխն, որդի Լանկ-Թամուրին, յազգէն Պարսից, եկաւ բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք ի կողմանց հարաւոյ, և եկեալ տապալեաց զաշխարհս մեր, և արար կապուտ կողոպուտ, և գերի էառ զամենայն, և փախըստական արար զաշխարհակալս մեր՝ զկոչեցեալն Ասկանդար՝ զորդին Յուսուֆին, յազգէն Թորգոմա: Եւ զաղէտն և զկոծն և զազգի ազգի վիշտ և զդառնութիւն ժամանակիս ընդ գրով ո՞ կարէ արկել, զի այս երրորդ գալն էր և աւերելն և եկեղեցեաց մերոց խաւար ածելն: Եւ վասն աւերման հրեշտակաբնակ աթոռոյն մեր Եւստաթէի սուրբ Առաքելոյն,

* Այս վերահաստատությունը, անշուշտ, կատարվել էր Բեշքենի որդի Ռուստամի գործուն օժանդակությամբ, որը, ինչպես տեսանք, Իսքանդարի պետության մեջ բարձր պաշտոններ էր գրավում:

զի բնաջինջ աւեր ածին և, առհասարակ, զտներն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին. և միաբանաւք մերովք փախստական և ցանուցիր եղաք յաշխարհս Վրաց՝ աստուածապարգև իշխանաւս մեր և ամենայն աւրհնութեանց արժանաւոր պարոնաց պարոն Բէշքենաւս, և ազատաւք, և ժողովրդաւք» (էջ 469-470):

Շահրուխի զորքերն իրենց ասպատակությունները տարածում են մինչև Գանձակի և Աղստաֆայի շրջանները: 1436 թվականին Աղստաֆայի մոտ նրանք հարձակվում են մի խումբ հայերի վրա, որոնք մեծ կարավանով Գանձակից շարժվում են դեպի Վրաստան, ազատվելու համար Շահրուխի հրոսակախմբերից: «Եկաք մինչև Աղեստև, – պատմում է թալանվածներից Հոհաննես գրիչը, –հանդիպեցաւ ջաղաթին իլղարն՝ բազում հեծելայ. և թալանեցին զմեզ ու զամէն քրիստոնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին. այլ ձմերան աւուրք և ցուրտ» (էջ 461):

9

Շահրուխն այս անգամ ևս հնարավոր չգտավ վերջ տալ Կարա-կոյունլուների իշխանությանը: Նրա զորքերն արշավանքի ընթացքում պաշարել էին նաև Վանի բերդը, ուր գտնվում էր Իսքանդարի Ջհանշահ եղբայրը: Վերջինս, անհուսալի համարելով իր դրությունը, նպատակահարմար գտավ դուրս գալ բերդից և հնազանդվել Թամուրյաններին: Շահրուխը Կարա-կոյունլուների տիրույթները հանձնեց իրեն հպատակություն հայտնած Ջհանշահին և հարուստ ավարով ու բազմաթիվ գերիներով, 1436 թվականի գարնանը թողեց Հայաստանի և Ատրպատականի սահմանները:

Այս դեպքերի մասին ուշագրավ են Հովհաննես Արծկեցի գրչի տվյալները: Նա հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի դառն և ի չար ժամանակիս, յորում եկն ազգն Չաղաթից, թագաւորութեան Շահռուխին, և փախոյց զԱքանդարն, /// և հեծեալն Շահռուխին եկն ի վերայ ամրոցին Շամիրամայ, որ է բերդն Վանայ, զի /// անդ[է՞ր] եղբայրն Սքանդարին Ջհանշահն, և նա ել ի բերդէն և գնաց առ Շահռուխն, և ներեաց դմա, և ետ զԹախտն թամանովս, և գնաց» (էջ 484):

Կարապետ գրիչը ևս համառոտ արձանագրում է այդ դեպքն այսպես. «Ջիհանշայն գնաց հնազանդութեամբ մօտ ի Շախրուխն, և նստաւ նորին հրամանաւ ի Թաւրէզ» (էջ 457):

Իսքանդարը, իր փախուստից (1435) հետո, Կարա-կոյունլուների պետության արևմտյան շրջաններում պատրաստություններ էր տեսնում դիմադրություն կազմակերպելու համար: Նույն 1435 թվականին, ընդամենը երեք հազարանոց բանակով, Երզրումի մոտ նա պարտություն է մատնում Շահրուխի դաշնակից Ակ-կոյունլուների մի քանի անգամ իր ուժերից գերազանցող բանակին: Ճակատամարտում սպանվում են Կարա-Յուլուք Օսմանը, նրա որդին և շատ անվանի մարդիկ:

Կարապետ գրիչն այս դեպքերի մասին գրում է. «Իսքանդարն փախստական գնաց ի ներքին աշխարհն և սպան զՂարայ-Օթմանն և զորդին և զայլ բազումք ընդ նմա» (էջ 457): Այնուհետև, հալածվելով Շահրուխի որդի Ջոկայի գլխավորությամբ գործող զորաբանակից, Իսքանդարը ստիպված էր փախչել Սեբաստիայի կողմերը: Իսկ երբ Շահրուխն իր զորքերով թողեց Հայաստանն ու Ատրպատականը, Իսքանդարը, օգնություն ստանալով օսմանյան թուրքերից, կրկին անգամ իշխանությունը վերագրավելու փորձ կատարեց: Նա, ավերելով Սեբաստիայի, Թոխաթի, Խարբերդի ու Դերջանի շրջանները, գերեց ու տեղահանեց մեծ թվով հայերի և նրանց՝ մերկ ու քաղցած, քշեց Արարատյան և Սյունյաց նահանգները, այնտեղ բնակեցնելու համար: Ճանապարհին շատերը մահացան:

«Եւ [Իսքանդարն] գնաց մինչև Սեւաստ, – հայտնում է այս մասին ժամանակակից Սարգիս գրիչը, – և բազում գաւառք աւերեաց, և գրաւումս յազգէ Հայոց գերի արար և եբեր, բազումք ի մերկութենէ և ցրտոյ ի սարին մեռան, և բազումք սովամահ եղեն»* (էջ 486):

Այս նույն ժամանակ Արճեշի ու Արծկեի վրա ասպատակություններ է կատարում մեզ արդեն ծանոթ քուրդ ամիր Փիրի-Բեկը կամ Փիր-Ալին, որի ձեռքին էր գտնվում Ամուկ բերդը: Նա «հանապազ ելանէր ի բերդէն և գայր ի վերայ երկրիս Արճիշոյ և Արծկոյ. չարչարէր, գանձս սպանանէր և գանձս զաղայսն գերի առնէր» և այլն (էջ 484)**:

* Թ. Մեծոփեցու «Պատմութեան» տվյալներով, ճենց միայն մի ցուրտ գիշերվա ընթացքում, տեղահանված ու գաղթեցվող հայ բնակչությունից մահացել են յոթ հարյուր հոգի (էջ 105):

** Հմմտ. Թ. Մեծոփեցի, էջ 110-111: Մեծոփեցին հայտնում է նաև, որ ժամանակաշրջանում, այդ նույն Փիր-Ալին, «տէր և իշխան» կարգվելով իրենց աշխարհում (այսինքն՝ Քաջբերունիքում)՝ «ձգեալ է զամենայն հաստատեալս ի ներքոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն մարդագլուխ 40 թանկայ առնուն, թող զրահոյ եւ պչակէ՝ ի ծերոց եւ ի տղայոց, յորբոց եւ յայրեաց, ի կուրաց՝ յաղքատաց եւ ի անանկաց: Եւ ամենեքեան կենդանի մեռեալ եւ սովեալ կան» (էջ 111):

1437 թվականին, ուժեր հավաքելով, Իսքանդարը վերջին փորձն կատարեց իշխանությունը վերագրավելու ուղղությամբ: Սկզբում նա որոշ հաջողություններ ունեցավ և վերագրավեց պետության արևմտյան շրջանները: Մեզ արդեն ծանոթ Հովհաննես Արծկեցի գրիչը հայտնում է նույնիսկ, որ «Սքանդարն դարձաւ և փախոյց զեղբայրն և նստաւ ի թախտն» (էջ 484):

Սակայն դրությունը շուտով փոխվեց: Իսքանդարի հրամանատարության ներքո գործող Կարա-կոյունլուների զորախմբերը, հոգնած ու ձանձրացած անվերջ ու հարատև արշավանքներից և պատերազմներից՝ լքեցին նրան և անցան Ջհանշահի կողմը. Իսքանդարը պատսպարվեց Երնջակի անառիկ բերդում, որտեղ և սպանվեց իր որդի Շահ-Կուբադի ձեռքով: Ժամանակակից Սարգիս գրիչն այդ մասին գրում է. «Եւ ինքն (Սքանդարն) գնաց ի վերայ Ջհանշին, և ի նորա զաւրութենէն հեծելն ամէն յեղբայրն դարձաւ, և նա փախեաւ ի յեղբաւրէն՝ ի Ջհանշահէն, և ամրացաւ ի յամուրն Երնջակայ, և ընկալաւ զհասն ի յաւիտենական տանջանացն» (էջ 486):

Նույն տվյալը համառոտակի արձանագրում է նաև Կիրակոս գրիչը 1438 թվականին Բաղեշում շարադրած հիշատակարանում. «Յայսմ ամի (իմա՛ գրելուց ամիսներ առաջ՝ այսինքն 1437-ին) Սքանդար ... սպանաւ ձեռամբ որդւոյ իւրոյ, և նստաւ ի թախտն Ջհանշէն» (էջ 487):

Եվ սակավ ժամանակով, ինչպես հաղորդում է Թովմա Մեծոփեցին իր «Պատմության» մեջ, երկիրը խաղաղացավ, որովհետև նրա կենդանության օրոք, Խորասանից սկսած մինչև Եգիպտոս, աշխարհը վրդովման ու ալեկոծման մեջ էր: «Ի զՊՀ. (1421) թուականէն ի հետ, մինչ ի մահ սորա (1437) ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խռովութեան», - գրում է նա*:

* Թ. Մեծոփեցի, էջ 108:

10

Ջհանշահն իշխեց մինչև 1467 թվականը: Ժամանակակից գրիչներից շատերը, ըստ երևույթին, համեմատելով Ջհանշահին իր նախորդի հետ, նրան անվանում են «խաղաղարար», կամ «խաղաղասեր» թագավոր: Այդ մասամբ ճիշտ է. Ջհանշահի թագավորության օրոք Հայաստանի տարածքի վրա տեղի չունեցան մեծ մասշտաբի այնպիսի արշավանքներ ու ասպատակություններ, իրենց աղետաբեր ու կործանարար հետևանքներով, ինչպիսիք լինում էին Իսքանդարի տիրապետության համարյա բոլոր տարիներին: Սակայն Ջհանշահի ժամանակ ևս պատերազմներն անպակաս էին: 1440 թվականին Ջհանշահը մեծ արշավանք ձեռնարկեց դեպի Վրաստան, որի թագավոր Ալեքսանդրը չէր ներկայացել Ջհանշահին իր հպատակությունը հայտնելու համար և հրաժարվում էր սահմանված հարկը վճարելուց: «Զի ոչ եկն առ նա յողջոյն խաղաղութեան և ոչ ետ զսահմանեալ հարկս թագաւորական», - գրում է Հովհաննես գրիչն իր հորինած վկայաբանական գրվածքի մեջ (տե՛ս էջ 507): Ջհանշահը «ժողովեալ աւելի քան զբաւն հազար այրս, առեալ գնաց ի տունն Վրաց»: Կարա-կոյունլուների զորքերը նախ գրավեցին Թբիլիսին: Վերոհիշյալ Հովհաննեսն այդ առթիվ գրում է. «Եւ նոքա երթեալ ի քաղաքն Տփխիս՝ քանդեցին, աւերեցին և զքաղաքն հրոյ ճարակ տուին, և զամենայն եկեղեցիս ի հիմանց տապալեցին»:

Վրաստանի հարավային շրջաններում Ջհանշահը կոտորեց ավելի քան ութ հազար և գերեվարեց ավելի քան ինը հազար մարդ, գերազանցապես հայերից: Այնուհետև նրանք պաշարում են Սամշվիլդե բերդը: Երկու ամիս***

* Գերվածների ու սպանվածների թվի մասին հիշատակագիրների հաղորդած տվյալների մեջ կա որոշ անհամապատասխանություն: Վերոհիշյալ թվական տվյալները տվել ենք հրատարակված մի շարք հիշատակարանների (տե՛ս էջ 504, 514, 532, 546, 644 և այլն) և Թ. Մեծոփեցու «Պատմության» մեջ (էջ 120) եղող թվական տվյալների քննության ու համադրության ճանապարհով:

** Տարբեր տվյալներ են պահպանվել նաև բերդի պաշարման տևողության մասին: Ոմանք 3 և նույնիսկ 4 ամիս են ասում: Թ. Մեծոփեցու տվյալներով պաշարումը տևել է մեծ Զատկից մինչև Պենտեկոստեի օրը, այսինքն 50 օր, իսկ Հովհաննեսի շարադրած «Վկայաբանության» մեջ պաշարման տևողությունը նշված է ընդամենը 40 օր:

պաշարվելուց հետո, Կարա-կոյունլուներին հաջողվում է խաբեությամբ գրավել բերդն ու դաժան հաշվեհարդար տեսնել բնակչության նկատմամբ: Սամշվիլդեի աղետի լուրը արագ տարածվում է ողջ Հայաստանում, անմեղ զոհերի համար սգում է հայ ժողովուրդը Լոռիից սկսած մինչև Վասպուրական:

1441-1443 թթ. և հետագա տարիներին շարադրված հիշատակարաններում Սամշվիլդեի կոտորածի մասին կան բազմաթիվ կարևոր տվյալներ: Ծանոթանանք դրանց մի մասի հետ: Հաղբատի վանքում 1441 թվականին ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում անանուն մի գրիչ հայտնում է. «Զի յայսմ ամի զանն Դաւրիժու Ջահանշահ ... եկեալ բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք մահմետականաւք՝ եկն ի Վերաստան, ի վերա Վրաց, զի ոչ հնազանդէին ազգն Վրաց զանին Թաւրիժու ... Եւ իբրև զկատաղած գազան յարձակեցան ի վերայ Հայոց, և սուր եդեալ ի վերա, և սպանին իբրև հազարաց հնգից անողորմ. և աւելի քան զվաթսուն կրաւնաւ[ո]ր և քահանայ սրով և քարիւ քարկոծեցին և սպանեցին, և բազում եկեղեցիք ի հիմանց տապալեցին, և զբազում մանկունս ի մարցն խլէին և ընդ քարիւ հարկանէին, և մայրն զայն տեսանէր. և զբազում մանկունս անմեղս մերկացուցանէին և սրով խոցոտէին, և տղայն ճչէր և աղաղակէր և լայր, և անաւրէնքն ծիծաղէին ...: Բազում կանայք զտղայն ի գիրկն առնէին և քար ի վայր ան[կ]անէին: Եւ Գ. (3) ամիս նստան ի վերա ամուրին Սամշուլտու, և յորժամ խաբէութեամբ առին զբերդն, թէ որպէս յափշտակեցին զինչսն կամ որպէս բաժանեցին զայրքն ի կանանցն, կամ որպէս խլէին զորդ[ի]քն ...» (էջ 514-515):

Հիշատակարանի շարունակությունը չի պահպանվել, սակայն պակասն առանց թերության լրացնում է Ոհաննես Թմոգվեցի գրիչը, որին 1442 թվականին հանդիպում ենք Արագածոտն գավառի Սերկևլի գյուղում, գյուղի հայ տերերից մեկի՝ պարոն Շալուեի համար ձեռագիր ընդօրինակելիս: Շատ կողմերով հետաքրքիր իր հիշատակարանի մեջ Ոհաննես Թմոգվեցին Սամշվիլդեի աղետի մասին գրում է հետևյալը. «Եւ ի սոյն ժամանակի եղև կոտորումն անմեղ քրիստոնէիցն Սամշուիլդոյ...: Վասն զի շարժեցան ի սատանայէ ազգն Ակիւթացւոց Ջահանշահ միրզէն, և առ ընդ իւրեան զբազմութիւն լեգէոն զաւրացն, և նստաւ ի վերա բերդին Դ. (4) ամիս, և ի նեղութիւն էարկ զնոսա, զի բազումք մեռան ի վշտաց: Եւ

անաւրէնքն երդուեցան յԱստուած կենդանի, թէ առնել չենք ձեզ վնաս: Եւ նոքա վստահացեալք ի սուտ երդումն նոցա՝ բացին զդուռն բերդին, և անաւրէնքն դիմեցին ի ներքս և սուր ի վերա եդեալ կոտորեցին անխնայաբար աւելի քան Վ. (3000): Եւ զողբումն և զաղխոզարմ և զկսկիծ դառնութեան ոչ կարեմ ընդ գրով արկանել, զի զոմանս սրով խո[ղ]խողեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս բրաւք ջարդեցին, զոմանց զգլուխն հատին և Գ. (3) մինրա շինեցին*: ... Եւ էր թիւ գերելոցն աւելի քան Ք. (9000), որ բաժանեցին ի վերայ իւրեանց ...: Զոմանս ի նոցանէ յարևելս տարան՝ ի Խորասան, զոմանս յարևմուտս՝ ի Համմաստան, զոմանս ի հարաւ՝ ի յԱրաբստան, զոմանս հիւսիս՝ ի Լակզստան ...» (էջ 532)**:

Ճամշվիլդեի աղետից երկու տարի հետո՝ 1442 թվականին, Ջհանշահը Ճապախի կողմերում գրավում է «զանառիկ բերդն Ջրուել և զՋուլամերկ» (էջ 536):

1445 թվականին նա մեծ բանակով արշավում է Ախալցխա: Ժամանակակից գրիչ Կարապետը, Վանում շարադրած հիշատակարանում հայտնում է, որ Ախալցխայում Ջհանշահը «բազում քրիստոնեայս գերի արար, զոր տեսաք աչօք մերովք զխիղճ և զկսկիծ սոցա» (էջ 584): Ցավոք, այլ մանրամասնություններ այս արշավանքի մասին չեն պահպանվել:

1446 թվականին Ջհանշահը գրավում է Բաղդադը: Նրա այս արշավանքի մասին տվյալներ է հաղորդում Հովսեփ գրիչը: «Եւ հրաման արարեալ, - գրում է նա Ջհանշահի մասին, - ժողովեաց զամենայն Թորգոմացիս յարևելից (այսինքն՝ Կարա-կոյունլու թուրքմեններին), և բազում զօրօք գնաց ի վերայ Բաղդատայ, և կալաւ եզեալ, և ոչինչ կարաց առնել, բայց ի զօրականացն կոտորեցաւ ԲՌ. (2000) այր ու Գճ. (300) պարոն» (էջ 595): Հովսեփ գրչի հիշատակարանի գրությունից հետո, նույն 1446

* Թ. Մեծոփեցին հայտնում է, որ այդ երեք մինարաները (բուրգերը) շինվել են 1664 մարդու գլուխներից:

** Մեզ արդեն ծանոթ վարքաբանական գրվածքի հեղինակ Հովհաննես Սամշվիլդեում սպանվածների թիվը մեկ հազար է հաշվում («Սպանին ի նոցանէ աւելի քան զՌ. հոգի»), իսկ գերվածներինը՝ ավելի քան 10 հազար. «Եւ հրամանս առեալ, - գրում է նա, - չար բռնաւորն՝ զամենայն կանայս և զորդիս նոցա գերի առնուլ՝ աւելի քան զԺՌ. (10000) ոգի, և ցրուեալ յամենայն կողմանս Տանկաստանեաց՝ ի Մսր և ի Խորասան» (էջ 508):

թվականին, Բաղդադը գրավվում է: Այդ մասին են վկայում Թովմա Մինասենցը և Վարդան գրիչը. վերջինս արձանագրում է, որ «յամի ՊՂԵ. (1466) ... Լաւ (Ջհանշայն) զանառիկ քաղաքն զԲաղդատն» (էջ 597):

1449 թվականին Ջհանշահը հարձակվում է Թամուրյանների տիրույթների վրա: Հովհաննես գրիչը հակիրճ խոսքերով սոսկ նշում է միայն, որ նա «գնաց ի Հրէ (Հերաթ) ու ի Խորասան (էջ 639):

1450 թվականին Ջհանշահը մտադրվում է վերագրավել Երզնկան և հարևան շրջանները Ակ-կոյունլուներից, որոնք տեր էին դարձել այդ շրջաններին Կարա-Յուլուք Օսմանի ժամանակ, 1425 թվականին: Այս նպատակով նա 60 հազարանոց բանակով մտնում է Ակ-կոյունլուների պետության սահմանները, գրավում է Երզնկան, Կամախի շրջանից գերում է 10 հազար բնակչություն, ավերում է Ներքին և Վերին Դերջանները, Բաբերդը, Կեղին, Սատաղը և այլ շրջաններ, այնուհետև փորձում է նաև գրավել Ակ-կոյունլուների նշանավոր քաղաքները՝ Ամիթը, Արղնին ու Մերտինը, բայց անհաջողության հանդիպելով հետ է վերադառնում: Արշավանքի ընթացքում Ջհանշահի զորքերը թալանում, սպանում են անպաշտպան բնակիչներին, բռնաբարում կանանց և այլն:

Այս արշավանքի մասին գրել են մի շարք ժամանակակից հիշատակագիրներ՝ Մարտիրոս եպիսկոպոսը Թորդանի վանքում, Գրիգոր գրիչը Երզնկայում, ձեռագրի ստացող Ղազարը Տիվրիկում և ուրիշները: Սակայն, ամենից բովանդակալից տվյալները գտնվում են Դավիթ Խարբերդցու 1453 թվականին շարադրած հիշատակարանում, որի մեջ նա խոսում է նաև անցյալ տարիների պատմական անցուդարձերի մասին: «Ի թուականութեան Հայոց ՊՂԹ. (1450), - գրում է նա, - Ելեալ սուլթանն Թավրիզու Ջիհանշահ անուն, բազում և անթիւ զաւրաւք՝ ԿՌ. (60000) - աւ, ելեալ էառ զԵզնկայն յազգէն Թուրքմանաց, որ էր ազգաւ: Պայընտուր (խոսքը Ակ-կոյունլուների մասին է) և կալեալ զիշխանն Եզնկա քաղաքին*, և Խ. (40) անուանի ամիրայ զհետ նորա, և տարեալ յարևելս կորուսին: Եւ Կամխայ աստուածաշէն երկիրն եւ ահաստարակ գերեաց իբրև անձինս ԺՌ. (10000)՝ ընդ այր և ընդ կին, թող զայն, որ մաշեցան. և զՆերքին Դերջանն, և Վերին

* Երզնկայի իշխանի անունը, ինչպես հայտնում է Ղազար Տիվրիկեցին, եղել է «Խութլուպակ» (էջ 645):

Դերջանն, զԲաբերդ, զԿեղի, զԿոճակն, և զԳայլգեան, զՇիւեան, զՍատաղ առհասարակ գերեաց ...:

Եւ գնացեալ նստաւ ի վերայ Ամթայ, և ի վերայ Արղնու և ի վերայ Մէրտինու ... և ոչինչ կարաց առնել կամ զԱրղնի, կամ զԱմիթ, կամ զՄէրտին, այլ դարձաւ յաշխարհ իւր»*:

Այսպիսով ակնհայտ է դառնում, որ «խաղաղարար» Ջհանշահը, աննշան չափով միայն տարբերվելով իր եղբորից, Գայուսա գրչի խոսքերով ասած, «իբրև էառ զիշխանութիւնն ... սկսաւ սայ աւերել և տապալել զբազում քաղաքս և զգաւառս, և ամայի և անմարդաբնակ առնել» (էջ 537):

Ջհանշահի ժամանակ հարկապահանջությունը հպատակ ժողովուրդներից անասելի ծանրացավ: Թ. Մեծոփեցին հաղորդում է, օրինակ, որ Սամշվիլդեի ավերումից հետո, մահմեդական բարձրաստիճան հոգևորականության խորհրդով Ջհանշահը հայերից հավաքվող հարկերն ընդհանրապես, և մասնավորապես խարաճը անչափ բարձրացրել**:

Հարկերի ծանրացման մասին նշումներ ունեն նույնիսկ այն գրիչներն ու հիշատակագիրները, որոնք Ջհանշահին «խաղաղասէր» են անվանում: Այն Թումա գրիչ, 1444 թվականին հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի թագաւորութեան Ջհանշահին, որ տիրեաց երկու թախտի՝ Հայոց և Ասորոց, և արար խաղաղութիւն ոչ սակաւ, բայց հարկապահանջութիւնն բուռն և ծանր էր ի վերայ քահանայիցս» (էջ 567)***:

Նույն այս թվականին Թովմա Մինասենցն իր ժամանակը «դառն և չար» կոչելով, հայտնում է, որ տիրողները «տառապեցուցանեն և նեղեն զազգս քրիստոնէից ազգի ազգի կեղեքմամբ, և անողորմ հարկապահանջութեամբ, և յաշխարհէ յաշխարհ վտարմամբ իւր զգերի՝ տամբ և ընտանեաւք» (էջ 563):

Եվ այսպես, բազմաթիվ հիշատակագրեր, Ջհանշահի իշխանության բոլոր տարիներին, միմյանց նման արտահայտություններով, խոսում են

* Հիշատակարանը հրատարակված է Գ. Սրվանձտյանի «Թորոս Աղբար»-ի Բ հատորում, էջ 379-381:

** Թ. Մեծոփեցի, էջ 124:

*** Սա խոսում է միայն քահանաների մասին, որոնք, անտարակույս, տնտեսական ավելի բարենպաստ վիճակում են գտնվել, քան աշխատավոր գյուղացիությունը:

հարկային անասելի ծանր լծի և ժողովրդի դառն վիճակի մասին. մեկը գրում է, որ «Նեղիմք յանաւրինաց և յանիրաւ պահանջողաց», մյուսը՝ «յոյժ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց», մի երրորդը՝ «դրկեն զազգս Հայոց և քահանայից ի յընչից իւրոց և դառն անողորմ», մի չորրորդն աղերսում է Աստծուն կործանել Ջհանշահին, «որ տասել հարկապահանջութիւն խնդրէր ի քրիստոնէից» և այլն, և այլն:

II

Ջհանշահի թագավորության օրոք՝ 1441 թվականին, հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն՝ կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխվեց Էջմիածին: Կաթողիկոսական Աթոռի Արևելյան Հայաստան տեղափոխելու ուղղությամբ հայ հոգևորականության որոշ շրջաններ, հատկապես Սյունյաց մետրոպոլիտությունը, գործունեություն էին ծավալել դեռևս ԺԴ դարի վերջերին: Այդ պլանների արգասիքը պետք է համարել Ստ. Օրբելյանի «Ողբ ի սուրբ Կաթուղիկէն» պոեմը, որի մեջ հեղինակը բաղձանք է հայտնում Էջմիածնում վերականգնված տեսնել «զԱթոռ թագաւորին և զգաւազան պատրիարգին»:

Կաթողիկոսական Աթոռի Արևելյան Հայաստան տեղափոխելու ուղղությամբ աշխատանքը ավելի մեծ ծավալ է ընդունում Կիլիկյան հայկական պետականության թուլացման և անկման շրջանում՝ ԺԴ դարի երկրորդ հիսնամյակում: Գրիգոր Տաթևացին հայտնում է, որ Հովհան Որոտնեցին (մ. 1386 թ.) իր ժամանակ կամեցել է «սուրբ Աթոռն փոխել ... ի յԱղուանս, որ ճշմարիտ կաթողիկոս է և սուրբ Աթոռն Գրիգորիսի»: Նա հայտնում է նաև, որ «սրբոյն Ռստակիս[ի] աջն առ մեզ է և Գեղարդն սուրբ և այլ բազում սրբութիւն»*:

Մենք արդեն առիթ ունեցանք նշելու, որ 1432 թվականին, Կաթողիկոսական Աթոռը Էջմիածին տեղափոխելու պաշտոնական ձեռնարկումից և Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելուց ինը տարի առաջ Սյունյաց իշխան Բեշքենի որդի Ռուստամը Էջմիածինն էր «վաճառել» վեց մեծ գյուղ: Այս մի վճռական քայլ էր Սյունյաց իշխանների կողմից Էջմիածինը Կաթո-

* Գրիգոր Տաթևացի, «Բանք զեղեցիկ և յոյժ պիտանի վասն Աթոռոյն Աղթամարայ», Մատենադարան, ձեռագիր N 4669, էջ 199բ-200բ:

գիկոսական նստավայր դարձնելու ուղղությամբ: Նրանց կողմից առաջադրված կաթողիկոսացուն՝ Գրիգոր Մակվեցին, որի անունով էր ձեռնարկված «վաճառված» կալվածքների հանձնումը վանքին, մինչև Կիրակոս Վիրապեցու ընտրությունը մի հիշատակարանում կոչվում է «հայրապետ սուրբ էջմիածնի» էջ 522):

Կաթողիկոսական Աթոռի էջմիածին փոխադրելու գործի նախաձեռնողները, անշուշտ, ունեին քաղաքական որոշ հեռանկարներ: Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատյան դաշտում, վերահաստատված «Հայրապետական Աթոռը» գոյություն ունեցող պայմաններում պետք է նպաստեր համահայկական կենտրոն ստեղծելու գործին, պետք է որոշ չափով շաղկապեր միմյանց հայ ժողովրդի տարբեր բռնապետական իշխանությունների լծի տակ հեծող հատվածները:

Անշուշտ, էջմիածնի վանքը տնտեսապես ապահովող աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի համար խորթ չէին նաև շահադիտական որոշ ակնկալություններ: Կաթողիկոսական Աթոռը հսկայական հասույթներ էր ձգելու Հայաստանի տարբեր նահանգներից, ինչպես և աշխարհով մեկ ցրված բազմաթիվ հայկական գաղթավայրերից:

Էջմիածինը հայ եկեղեցու կենտրոն դարձնելու գործը շահագրգռում էր նաև երկրի տերերին: Արարատյան նահանգի տիրակալ Յաղուբ-Բեկը քաջ գիտակցում էր այդ քայլի քաղաքական ու տնտեսական նշանակությունն իր համար և ամեն կերպ օժանդակություն էր ցույց տալիս գործի կազմակերպիչներին: Կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Երևան հավաքված հոգևորականներին, ավատատերերին ու պարոններին Յաղուբ-Բեկը էջմիածին է ուղևորում իր զորքի պաշտպանությամբ, «փողով և թմբկով և զուռնով»:

Սսի աթոռի դեմ կազմակերպված շարժումը համակրություն էր վայելում նաև հայ աշխատավոր ժողովրդի լայն շերտերում, որովհետև Սսի կաթողիկոսները և նրանց կողմից կարգված եկեղեցական պաշտոնյաներն անմասն չէին ժողովրդի կեղեքմանը: Նրանք հոգևորական էին ձեռնադրում

նրանց, ովքեր «տեարք էին ընչից»*, որովհետև «արծաթով տային զշնորհս հոգւոյն սրբոյ»: Պատահում էր նրանք միևնույն թեմի վրա նշանակում էին երեք, երբեմն չորս եպիսկոպոսներ, որոնք «ի վերայ միմեանց յարուցեալ՝ զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ գայթակղութեամբ զաշխարհս մեր կործանեցին»:

Հրատարակված հիշատակարանների մեջ կարևոր տվյալներ կան Գր. Լուսավորչի աջի Սսից գողացվելու և ի վերջո էջմիածին բերվելու, 1441 թվականին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրության, ինչպես և դրան հաջորդող իրադարձությունների մասին:

Կարապետ գրիչը, օրինակ, 1442 թվականին շարադրված իր հիշատակարանում արձանագրում է, որ «ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց, որոց էր գլուխ մեծ րաբունապետն Թովմայ և Յովհաննէս վարդապետն. և եդին զտէր Կիրակոսն յէջմիածին՝ կաթողիկոս ամենայն Հայոց, և նոր նորոգեցաւ Աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի» (էջ 536, տե՛ս նաև Ոհաննես Թմոգվեցու ընդարձակ հիշատակարանը, էջ 531-532):

12

Սրանով մենք ավարտեցինք ԺԵ դարի առաջին հիսնամյակի ընթացքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների և աղետաբեր ու հարատև պատերազմների համառոտ տարեգրությունը**:

Այս ակնարկով նպատակ ենք ունեցել նաև ցույց տալ հայ ժողովրդի անասելի ծանր վիճակը Լանկ-Թամուրի արշավանքների և դրանց հաջորդող Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի մղձավանջային տիրապետության ժամանակաշրջանում:

Պատկերը լիակատար դարձնելու համար, անհրաժեշտ է համառոտ

* Այս և հաջորդ երկու փոքրիկ մեջբերումները քաղված են Թ. Մեծոփեցու «Յիշատակարանի» «Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան» գլխից (Հրատ. Կ. Կոստանեանցի, Թիֆլիս, 1892, էջ 51-61):

** Ինչպես արդեն ասացինք, պատմական այս համառոտ ակնարկի հիմնական նպատակն է եղել որոշ չափով դյուրացնել ընթերցողների աշխատանքը, որպեսզի անհրաժեշտության դեպքում ամեն ոք հնարավորություն ունենա շաղկապելու հիշատակարանների հաղորդած տվյալները Մերձավոր Արևելքի պատմության ժամանակակից դեպքերին:

թվարկումով շարադրել նաև ԺԵ դարի առաջին հիսնամյակի ընթացքում տեղի ունեցած բնական աղետների՝ մորեխի, մահտարաժամի, ինչպես և սղության տարիների ու համատարած սովերի սրտաճմլիկ տարեգրությունը՝ գործյալ հրատարակված հիշատակարանների տվյալներով:

ԺԵ դարը սկսվում է սաստիկ սովով: 1401 թվականին Ասորիքի կողմերից գալիս է «սաստիկ և թանձր» «չորաթևան» մորեխ (էջ 3), որն ավերում է «զբազում տեղիս և զգաւառս» (էջ 17). առաջ է գալիս «սով սաստիկ ընդ ամենայն երկիր, որ բերէր կապիճ հացն Մ. (200) դրամ» (էջ 8):

Ժողովրդի տնտեսական ծանր վիճակի, անընդհատ զորաշարժերի ու գաղթերի հետևանքով ԺԵ դարի ընթացքում մի շարք անգամ երկրում տարածվում են սուր-վարակիչ հիվանդություններ՝ զանազան «մահտարաժամեր», «մանկամահներ» ու «անասնամահներ»: 1404 թվականին Ստեփանոս գրիչը Ուշատնիքի Տշող գյուղում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ «եղև մահտարաժամ սաստիկ ի վերայ երկրի», որին զոհ է գնում նաև գրչի հայրը (էջ 43):

Շատ ավելի մեծ զոհեր է տանում 1407 թվականի մահտարաժամը, որի բռնկման օջախը, ըստ երևույթին, Սյունիքն է եղել: Այդ մասին տվյալներ են հաղորդում երեք տարբեր հիշատակագրիչներ: Լսենք դրանցից Հոհաննես գրչին. «Զի այսմ ամի, - հաղորդում է նա, - մահտարաժամ շարժեցաւ ի վերայ աշխարհի, զաղայոց վերջը արար, որ բերանով չէ պատմելի, ի քանէ, ի երևանէ, ի յանէ թէ մին տղ[այ] մնաց՝ ԺԵ. (15) տարոյ ի վեր, պակաս՝ մեռաւ» (էջ 82, տե՛ս նաև էջ 75, 80): Ըստ երևույթին, այս մահտարաժամը եղել է ծաղկի կամ կարմրուկի ուժեղ բռնկում:

1413 թվականին մահտարաժամը հնձում է հատկապես մատաղահասակ երեխաներին: «Գծագրեցաւ սուրբ մատեանս, - հայտնում է ոմն Հովհաննես գրիչ Խիզանում, - ի դառն և բազմավրդով ժամանակիս, որ մահտարաժամ է անկեալ վասն մեղաց մերոց յաստուածատուր բարկութենէն, և կոճոպէ և յափշտակէ զմատաղ մանկունս ի գրկաց ծնողաց և մորմոքեցուցանէ զծնողս և զեղբայրս» (էջ 152):

Երեք տարի անց՝ 1410 թվականին սաստիկ մահտարաժամ է բռնկվում Եկեղյաց գավառում: Այդ մասին տվյալ հաղորդող Գրիգոր գրիչը, որն աշխատում էր Երզնկային մերձ գտնվող Կապոսի վանքում, հրա-

ժարվում է մանրամասնություններ հաղորդելուց: «Ո՛վ կարասցէ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացս», - բացականչում է նա (էջ 186):

1419 թվականին, Շահրուխի և Ակ-կոյունլուների միատեղ ձեռնարկած արշավանքի ժամանակ, սովը, մահտարաժամը և մորեխը հանդես են գալիս միասին: Ստեփանոս Ուշտունցի գրիչը հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի դառն ժամանակիս, որ ... եկն ազգի-ազգի պատուհաս ի վերայ երկրի՝ սով, սրածութիւն, մահտարաժամ: Եւ յայսմ ամի եկն մարախ բազում ի յաշխարհս մեր, և եկեր զամենայն բոյս դալարի, և եղև նեղութիւն մեծ, յորում էր թիւս Հայոց ՊԿԸ. (1419)» (էջ 226):

Մորեխը, որ շարժվում էր արևելքից, տարածվում է Սալմաստից մինչև Էրզրում, այսինքն՝ համարյա ողջ պատմական Հայաստանում. «Թանձրախիտ ծածկեաց զդաշտ և զլերինս, զսար և զձոր, միահաղոյն, ի Սալմաստայ մինչ յԱրզրումն, և կերաւ շատ վաստակ ի բազում տեղիս, յորմէ սատակեցան մարդիկք, և եղև սղութիւն», — տեղեկություն է տալիս Գրիգոր Խլաթեցին 1419 թվականին Ցիպնա վանքում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում (էջ 225):

Թովմա Մինասենցի տվյալների համաձայն, 1419 թվականի մորեխի գործած վնասներն այնքան ծանր չէին, որովհետև նա՝ «ըստ անչափութեան աւազոյ ծովու» եկավ հնձի ժամանակ, ուստի հնարավոր եղավ բերքի մի մասը փրկել («Իրք մի կերաւ զվաստակ և իրք մնաց»): Ավելի սարսափելի էր հաջորդ տարին՝ 1420 թվականը: «Եւ միւս այլ տարին, — շարունակում է Մինասենցը, — ձայն եղաւ և խիստ ուէր էած» (էջ 375, նաև 239):

Հայոց Արևելից շրջաններում մորեխը ավերածություններ էր գործում յոթ տարի շարունակ, այսինքն՝ 1413-1420 թվականների ընթացքում: «Է. (7) ամ է, որ մարախ զամենայն աշխարհ աւերեաց, և դեռևս եմք ի կասկածի» (էջ 374), — գրում է այդ մասին անհայտ մի գրիչ, 1420 թվականին:

1423 թվականին նույնպես մահտարաժամն ու մորեխը զուգակցում են միմյանց, որի հետևանքով երկրում տարածվում է սով: «Սաստիկ սով եղև, — արձանագրում է ժամանակակից մի գրիչ, — մի մոթ հացն Պ. (800) դրամ եղև» (էջ 307):

Մահտարաժամից տուժում է հատկապես Վանա լճի շրջակայքի բնակչությունը, որովհետև, ինչպես հաղորդում է Թովմա Մինասենցը, իր

բովանդակալից հիշատակարաններից մեկում 1423 թվականից սկսած մահտարաժամը «մնաց Բ. (2) տարի ի բոլոր ծովուս, և բազում տունք աւերեցան և ծնաւղք անզաւակ մնացին» (էջ 375):

Թովմա Սպատկերցին 1423 թվականին մորեխի գործած ավերածությունները նկարագրում է ուշագրավ մանրամասնություններով և գեղարվեստական վառ պատկերներով*: «Ձի առաջին տարին, — շարունակում է Սպատկերցին, — ինքն թևաւորն [եկն] և սերմանեաց, և ի միւս այլ տարին՝ ի գարնան յեղանակին ընդ խոտոյն ի վեր փչեաց՝ առաւել քան զբոյս, մինչ զի լի եղև ի խորութիւն ձորոց և ի լայնութիւն դաշտաց, ի գագաթունս լերանց. էր երկիր առաջի նորա իբրև դրախտ փափկութեան և վերջ նորա՝ դաշտ ապականութեան ...: Եկեր զամենայն խոտ և սպառեաց զամենայն վաստակն սերմանեալ, նուազէին անասունք, լքեալ զատարկացան երկրագործք ի վաստակելոյ, խցեալ կալնուին զերդ և զպատուհան ի ներքս լինելոյ նոցա, մինչ զի զերդս պահէին աւելելով կամ մաղ ի վերայ դնելով, և ապա հաց եփէին ի ներքս կամ ուտէին: Ամենայն ժողովք ջուրց պարզք և բարեհամք՝ փչահոտեալ ադմային արիւնասեակ իբրև զեգիպտացւոցն լինէր ի ներքս կուտելոյ նոցա: Անբնակ ի մարդոյ և յանասնոյ գեօղք լինէին գնալով նոցա յայլ տեղոջէ յայլ. քակտեցաւ ամենայն միաբանութիւն, որ հացիւ և կերակրով էին շաղկապեալ» (էջ 301-302):

Տառապյալ ժողովուրդը բնական այս մեծ արհավիրքի դեմ պայքարելու ոչ մի միջոց չուներ: Միակ բանը, որ կարողանում էին անել, տան երդիկները մաղով ծածկելն էր: Հավատում էին նաև, որ կան թռչուններ, որոնք սուրբ ջրի հետքով գալիս ու կոտորում են մորեխին: 1419 թվականի մորեխի ժամանակ Վանի ու Ոստանի ամիր Եզդինը մարդ է ուղարկում սրբազան ջրի ետևից, և, իբր, ջրի հետքով թռչուններ են գալիս ու վերջ տալիս մորեխին: «Իշխան աշխարհիս մերոյ Ամիր-Եզդինն, — հայտնում է Թովմա Մինասենցը, — առաքեաց մարդ և երեր ջուր, և հաւ եկն

* Նրա հաղորդած տվյալները փաստորեն կարող են օգտագործվել երկրագործական վնասատուների դեմ պայքարի գործով զբաղվող մեր մասնագետների կողմից՝ հարցի պատմությունն ուսումնասիրելու ժամանակ: Նա կարծում է, որ մորեխը, որպես պատժիչ զորախումբ, ուղարկված է աստծու կողմից՝ մեղքերի մեջ թաթախված մարդկանց խրատելու համար:

զկնի ջրոյն, և սատակեաց զմարախն, և ազատեցաւ երկիրս» (էջ 375):

1428 թվականին Ստեփանոս գրիչը իր ժամանակը բնորոշում է որպես «թշվառ և չար» ժամանակ, որովհետև, — շարունակում է նա, — «եղև թանկութիւն սաստիկ, որ մի բեռ հացն է Ռ. (1000) դրամ» (էջ 381)*:

Թ. Մեծոփեցին հաղորդում է, որ Արճեշի շուկայում մի մոթ ցորենի գինը բարձրանում է մինչև 60 թանկայի**: «Եւ մեռանէին ամենայն մարդիկք՝ բնիկք և օտարականք», — հայտնում է նա***:

1437 թվականի մահտարաժամը մեծ հունձ է կատարում Ասորիքում և Հայաստանում: «Կոտորեցան անթիւ տղայք և մանկունք», — գրում է Կարապետ գրիչը Վանում (էջ 473): Իսկ Ավետիք գրիչը Բաղեշում հայտնում է, որ մահտարաժամի սաստկությունից այնքան շատ մարդ էր մահանում, որ նրանց թաղմամբ զբաղված լինելով, քահանաները ժամանակ չէին ունենում հաց ուտելու (էջ 476):

1446 թվականին հացի մեծ սղություն է լինում: Ստեփանոս գրիչը Բաղեշում գրած իր հիշատակարանում արձանագրում է, որ «մին բեռն ցորեան եղև ի Կ. (60) թանկայ» (էջ 592):

1449 թվականին «յելանելոյն արևու մինչև ի մուտս արևու, ի հիւսիսոյ մինչ ի հարաւ» տարածվում է ժանտախտը: Ըստ երևույթին, հիվանդության տարածողները մկներն էին, որ նույն այդ թվականին, Ներսես եպիսկոպոս Աղթամարցու վկայությամբ, տարածվել էին ողջ աշխարհում («Եւ ժանգն ապականեաց զվաստակ դաշտաց, և մուկն եռաց յամենայն երեսս դաշտաց և ապականեաց զվաստակս», էջ 633):

Այդ «սաստիկ մահտարաժամը» այնպիսի չափեր էր ընդունել և այնքան մեծ մահացումներ էր տալիս, որ մերտինցի ժամանակակից մի հիշատակագրի վկայությամբ՝ «ոչ ոք ետես կամ լուաւ ի հնոց կամ ի նորոց

* Նույն թվականին, ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Ատրպատականում և Հայաստանում առաջ է գալիս սարսափելի սով, որ նույնպես մարդկային մեծ զոհեր է տանում: Որոշ վայրերում, նույնիսկ, մարդ են ուտում, իսկ Թավրիզում, ինչպես հավաստիացնում է Դավիթ գրիչը, «զեւղն մարդոյ որպէս զանասնոյ վաճառէին միմեանց» (էջ 419):

**XIV-XV դդ. Անդրկովկասում և Իրանում գործածության մեջ եղող արծաթ թանկան (թենգա) կշռում էր 6 գրամ:

*** Թ. Մեծոփեցի, էջ 94-95:

այսպիսի դառնալուր պատիժ» (էջ 634):

Այդ նույն հիշատակագիրը ճշգրիտ ձևով նկարագրում է նաև հիվանդության ընթացքը և ախտանիշերը: Նա գրում է. «Մինն այս է դառնութիւն սորա, զի բոլոր ամ մի է և երեք ամիս, որ ի Մէրտինս է և ոչ վերանայ. և երկրորդ եղեռնագոյն դառնութիւն, որ մի անգամ և երկու հանէ խոց և աղջամայ դաւուրս բաղում, և դարձեալ կրկին հանէ և մեռանի. և երրորդ դժնեայ դառնութիւն ամին, զի յոր տունն որ մտանէ՝ բնաջինջ անէ ամենայնիւ. չորրորդ սաստկութիւն սորա, զի ոչ տայ իմանալ զցաւն, երևի թէ անվնաս է և իսկոյն մեռանի ...» (էջ 635):

Այնուհետև հիշատակագիրը խոսում է ժանտախտի հետևանքով երկրի ամայացման և անմարդաբնակ դառնալու մասին: «Ըստ ամենայն գաւառս տարածեցաւ, — գրում է նա, — և բաղումս լայնքին արար, և զբաղում աւանս անմարդաբնակս, շատ մայր առանց որդւոյ արար, և շատ ծնող առանց զաւակաց, բաղում տուն առանց տանուտէր, և բաղում հարսն առանց փեսայի» (էջ 636):

Այսպիսով, ինչպես պերճախոս կերպով վկայում են ժամանակակից հիշատակագիրները, ԺԵ դարի առաջին հիսնամյակում գրեթե չի եղել ոչ մի խաղաղ ու հանգիստ տարի: Երկիրն ավերվել է, ու ժողովուրդը բնաջնջվել կամ օտար նվաճողների արշավանքներից ու ասպատակություններից, կամ սովից կամ մահտարաժամերից, կամ այդ բոլոր պատճառներից՝ միաժամանակ:

13

Հայ ժողովուրդն այդ դաժան ու վշտալի ժամանակներում, ուժերի մեծ լարումով շարունակում էր զարգացնել իր գրականությունն ու մշակույթը: Երկրի տարբեր մասերում, նույնիսկ թշնամի բանակների կողմից խուճապահար փախուստի օրերին և նրանց աչքից անձավներում ու լեռնաձերպերում պատսպարվելով, շարունակում էին իրենց ուսուցչական ու վարդապետական գործունեությունը Հովհան Որոտնեցու (մհ. 1386 թ.) և Գրիգոր Տաթևացու (մհ. 1409 թ.) անվանի աշակերտներից շատերը:

ԺԵ դարի առաջին կեսի հիշատակարանները հարուստ են այդ ժամանակ ստեղծված գիտական ու գեղարվեստական արժեքների, ինչպես և ուսումնական հաստատությունների գործունեության ու վիճակի մասին արժեքավոր տվյալներով:

Մեզ հետաքրքրող ժամանակներում են ապրել ու ստեղծագործել հայ միջնադարյան գիտության ու գրականության բազմաթիվ անվանի գործիչներ՝ Գրիգոր Տաթևացին, Հակոբ Ղրիմեցին, Մատթեոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին, Մկրտիչ Նաղաշը, Առաքել Բաղիշեցին և բազմաթիվ մանր ու խոշոր այլ հեղինակներ, տաղուն ու բազմարդյուն գրիչներ ու ծաղկողներ, որոնց արժեքավոր հիշատակարանների մեծագույն մասն առաջին անգամ լույս է ընծայվում սույն ժողովածուի մեջ*:

---

* Ստորև տալիս ենք ԺԵ դարի առաջին հիսնամյակում շարադրված միայն կարևոր աշխատությունների ժամանակագրական ցանկը, որ կազմել ենք հրատարակվող հիշատակարանների տվյալներով:

1. 1401 թ. հրապարակվում է Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխատությունը, գրված Թավրիզեցի խոջա Մասուդշահի պատվերով, բաղկացած է չորս հատորից:
2. 1401 թ. Առաքել Սյունեցու «Ադամգիրք» ընդարձակ պոեմի Ա. (ըստ Պոտուրյանի Գ.) խմբագրությունը:
3. 1403 թ. նույն «Ադամգրքի» Բ. և Գ. խմբագրությունները:
4. 1405 թ. Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատությունը:
5. 1407 թ. Գր. Տաթևացու «Քարոզգրքի» ձմռան և ամռան ընդարձակ հատորները, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի կենցաղի ու վիճակի մասին բազմաթիվ արժեքավոր տեղեկություններով:
6. 1408 թ. Գր. Տաթևացու «Լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Յոբայ» աշխատությունը:
7. 1408 թ. կամ դրանից քիչ առաջ, Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրությամբ լույս է տեսնում հոգևոր երգերի ու մեղեդիների «Գանձարան» կոչվող ժողովածուն:
8. 1411 թ. Մաթեոս Ջուղայեցու «Մեկնութիւն գործոց առաքելոց» ուշագրավ և երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին կարևոր նշանակություն ունեցող հատվածներով լի աշխատությունը, որը մինչ այժմ չի գրավել մասնագետների ուշադրությունը:
9. 1415 թ. Հովհան Կոլոտիկի (Գր. Տաթևացու աշակերտներից) «Հաւաքեալ ի յաւսուր բանից սուրբ վարդապետաց ի պատճառս իմաստից ... մարգարէին Եսայեայ» աշխատությունը:
10. 1416 թ. նշանավոր տիեզերագետ ու տոմարագետ Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տոմարի» բազմաբովանդակ ու արժեքավոր տիեզերագիտական աշխատությունը, որ կազմված է Մեծոփի դպրոցում, Թովմա Մեծոփեցու խնդրանքով, հեղինակի կարդացած դասախոսությունների մշակումով:

Մշակութային նշանավոր կենտրոնները ԺԵ դարի առաջին կեսին, ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում խոշոր վանքերին կից ստեղծված ուսումնական հաստատություններն էին:

Մինչև 1408 թվականը շարունակում էր գործել Հայաստանի ամենանշանավոր ուսումնական հաստատությունը՝ Տաթևի համալսարանը, Գրիգոր Տաթևացու տնօրինության տակ: Համալսարանը բաժանված էր երեք «ուսումնարանների», որոնցից մեկում Տաթևացին «ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրալուր ձայնի եղանակաւ. մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ սմա

11. 1422թ. Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից» կոչվող պատմական փիլասոփությունը:
12. 1427 թ. Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն աւետարանին Ղուկասու» աշխատության նոր խմբագրությունը՝ կատարված Թովմա Մեծոփեցու կողմից:
13. 1428 թ. Թովմա Մինասենցի ընդարձակ հիշատակարանը՝ 1419-1428 թթ. պատմական անցուդարձերի մասին:
14. 1434 թ. Առաքել Բաղիշեցու «Պատմութիւն Հովասափու և Բարաղամու» չափածո գրվածքը:
15. 1435 թ. Թովմա Մեծոփեցու խմբագրությամբ՝ «Համագիր մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի» աշխատությունը:
16. 1436 թ. Մկրտիչ Նաղաշի դավանաբանական գրությունը կաթոլիկների դեմ «Պատասխանի լատինացոց թղթոյն ի Մկրտիչ նկարագրէ, զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին և մեծ րաբունապետին Թումայի» խորագրով:
17. 1443 թ. Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը» Կաթողիկոսական Աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու, կաթողիկոսի ձեռնադրության և Կիրակոս Վիրապեցու ամտորման մասին (տե՛ս Կ. Կոստանյանցի հրատարակությունը, Թիֆլիզ, 1892 թ.):
18. 1444 թ. Եսայի վարդապետի «Տոմար արեգական և լուսնի» տոմարագիտական լուրջ աշխատությունը, որը կարոտ է մասնագիտական ուսումնասիրության:
19. 1446 թվականից քիչ առաջ Թովմա Մեծոփեցին ավարտել է նաև իր մեծարժեք «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» աշխատությունը (Հիշատակարան չունի):
20. 1449 թ. Մկրտիչ Նաղաշի Վարք-հիշատակարանը, գրված Աստվածատուր վարդապետի կողմից:

Նշված ժամանակաշրջանում գրվել են նաև բազմաթիվ այլ մեծ ու փոքր աստվածաբանական ու մեկնողական աշխատություններ, բանաստեղծություններ, աշխարհիկ թեմաներով տաղեր և այլն:

նորա: Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւնն: Եւ ի միւսումն զներքին և զարտաքին գրեանս»*:

1402 թվականին Մատթեոս Ջուղայեցի նշանավոր վարդապետը կարգվում է Տաթևի համալսարանի գլխավոր դասախոս: Այդ մասին տեղեկություն է հաղորդում Թումա Սյունեցի գրիչը, Գր. Տաթևացու «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի» աշխատության Մար գավառի Քարավաճառ գյուղում կատարած ընդօրինակության հիշատակարանում: Նա հայտնում է, որ Տաթևացին «զծաղկեալն ամենայն բարութեամբ և զարդարեալն ամենայն շնորհիւ վարդապետական խոհեմութեամբ և փիլիսոփէական արհեստիւ» Մատթեոս Ջուղայեցի վարդապետին համարում էր իր հոգևոր որդին և «ժառանգ վարդապետութեան իւրոյ», և որ 1402 թ. «ջանիւ մեծ վարդապետին Գրիգորի և աղաչանաւք գրոց աշակերտեալ անձանց նստավ (Մատթէոսն) յաթոռ տէլէտութեան» (էջ 25):

1408 թվականին, Սարգիս գրչի խոսքերով արտահայտված, «վասն իւիք ինչ պատճառի» Գրիգոր Տաթևացին թողնում է իր նստավայրը և գալիս Մեծոփավանք: Նրա շուրջը կարճ ժամանակում հավաքվում են բազմաթիվ աշակերտներ և նա դասախոսություններով մեկնում է Հին կտակարանի Հոբի գիրքը, Արիստակեսի և Գեորգի «Խրատ գրչութեան» աշխատությունը և Հովհաննի Ավետարանը: Այս մասին խոսում են մի շարք հիշատակագրեր: Լսենք իրեն՝ Գրիգոր Տաթևացուն. «Եւ ի թուականութեանս հայոց ՊԾԷ. (1408) ամի, — գրում է նա, — եկեալ մեր յերկիրս Քաջբերունի, և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփոյ, ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց: Եւ ընթերցմամբ հաւաքեցի զժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն Առիստակիսի և Գէորգեայ՝ ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու Աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսումնասէր անձանց» (էջ 86):

Մեծոփի վանքում նա մնում է լրիվ մի տարի, ապա գալիս են նրա

* Մատենադարան, ձեռագիր N 7823, էջ 42-43 (տե՛ս նաև մեր «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» հոդվածը, տպագրված Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» XXIII հատորում, 1946, էջ 428):

սիրելի աշակերտները: Առաքել Սյունեցու գլխավորությամբ, և գիշերով «գողանում» նրան: Այս դեպքը տեղի է ունենում 1409 թ. հոկտեմբեր կամ նոյեմբեր ամսին: Շատ չանցած, նույն թվականի դեկտեմբերի 27-ին, նա վախճանվում է Տաթևի վանքում: Գր. Տաթևացու մահը սգում են նրա բազմաթիվ աշակերտներից ու դասընկերներից շատերը, տեղեկություններ հաղորդելով նաև նրա կյանքի վերջին դրվագների մասին:

Թովմա Մեծոփեցին իր հիշատակարաններից մեկում հայտնում է, որ ինքը 1406 թվականին, 12 ընկերակիցների հետ միասին մեկնել է Տաթև՝ Գր. Տաթևացու համալսարանում սովորելու մտադրությամբ: Ապա նա շարունակում է. «Եւ կացաք առ նմա ամս Բ. (2) խնամածութեամբ և սիրով նորին: Եւ յեր[րոր]դ ամին ... եկեալ բնակեցաւ յերկիրս Քաջբերունեաց, ի սուրբ ուխտս Մեծոփայ: Եւ ժողովեաց բազում վարդապետս և կրօնաւորս, աւելի քան զութսուն ոգիս*: Եւ զամ մի լման դասս վարդապետութեան զամենեսեան լուսաւորեաց ...: Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի: Եւ մեք եկեալ գնացաք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք և գրոց աշակերտաւք, և հասաք նմա յերկիրն Արայրատեան, լալով, ողբով, արտասուօք, աղիողորմ կոծմանօք, և ոչ կարացաք դարձուցանել զնա: Եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան: Եւ մինչ դեռ յառաջատի պարէաք և հոգով և մարմնով ուրախ էաք, խոկոյն համբաւ մահու խռովեցոյց զմեզ, զի յետ բաժանելոյն մեր ի նմանէ ԼԶ. (36) օր միայն եկաց ի մարմնի ...» (էջ 101):

Գրիգոր Տաթևացու մահից հետո նրա և Հովհան Որոտնեցու աշակերտներից շատերը, երկրի զանազան վայրերում փորձեր են կատարում բանալ նոր դպրոցներ, որոնք, սակայն, կարճատև կյանք են ունենում և չեն կատարում այն խոշոր դերը, ինչ տարիներ շարունակ կատարել էր Տաթևի դպրոցը:

Սյունիքի Հերմոնի վանքում դասախոսություններ է կարդում Տաթևացու աշակերտ Հովհաննես Կոլոտիկը: Հերմոնի վանքը Սարգիս

* Թ. Մեծոփեցու հիշատակած 12 աշակերտներից Սարգիսը, 1409թ. գրած իր հիշատակարանում, Մեծոփա վանքում Տաթևացու շուրջը խմբված աշակերտների թիվը կրկնակի անգամ ավել է ցույց տալիս. «Եւ ես ժողովեալ առ ոտս սորա անձինք ՃԿ. (160) արեղայ և Ը. (8) վարդապետ և այլ միակեցունք» գրում է նա (էջ 93):

Վրիմեցի գրչի կողմից կոչվում է «վարժապետական աթոռ»: Գրիչն այդտեղ ընդօրինակում է Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գիրքը», ինչպես ինքն է ասում՝ «առ ոտս մեծ վարժապետին ... Յովաննիսի՝ աշակերտին Գրիգորի Հայոց փիլիսոփայի, որ և կրկին ընթերցմամբ լուսաւորեալ առաջնորդեցայ ի նմանէ» (էջ 164):

1421 թվականին Կարապետ Դերջանցին մի «Քարոզգիրք» է ընդօրինակում Հերմոնի վանքում՝ «առ ոտս մեծ րաբունապետին Յովհաննիսի»: Նա խնդրում է հիշել իր քեռորդիներին, որոնք «դասատուն» գնալու համար տվել են նրան մի դրաստ (էջ 258):

1443 թվականին Հովհաննես Կոլոտիկ վարդապետը դեռ ողջ էր «ականջօք խլացեալ» և «սպիտակ մօրուօք» և «մօտեալ գերեզմանի»* (ուստի՝ խորին ծերության հասակում) և շարունակում էր մեծ դեր խաղալ հայ եկեղեցու կյանքում:

Նույն ժամանակ Եղվարդ գյուղի վանքում դպրոց էր բացել Գր. Տաթևացու աշակերտներից մեկ ուրիշը՝ Սիմեոն Բաբունին, որը վախճանվեց 1428 թվականին Կոտայքի Ջաղավանքում, որի վանահայրն էր կարգված իր կյանքի վերջին տարիներին:

Սիմեոն Բաբունու գործունեության մասին Եղվարդի վանքում կարևոր տվյալներ է հաղորդում մի գրիչ, Սիմեոնի պատվերով գրված մայր օրինակից, 1444 թվականին, ընդօրինակելով մի Յայսմաւուրք: Նա խնդրում է հիշել «զարդիւնական և մեծ վարժապետն Հայոց զՍիմէոն, որ յայնմ ժամանակի (իմա՝ 1410-1420 թթ.) փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն, և մեծաւ յուսով և եռափափագ սիրով սկսաւ նորոգել և զարդարել զվանորայս Արարատեան նահանգիս ...: Նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանս, որ մէջ գեղին, և բազում արդիւնս արարեալ անդ ...: Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զՀինն և զՆոր մատեան Աստուածաշունչ գրոց, զնուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն» (էջ 561):

Սիմեոնի ուսուցչական գործունեության մասին խոսում են նաև այլ հիշատակագրիչներ (տե՛ս, օրինակ, էջ 143):

Անվանի էր նաև Մեծոփա վանքի դպրոցը, որտեղ դասախոսում էր

* Թ. Մեծոփեցի, «Յիշատակարան», էջ 84:

Թովմա Մեծոփեցին ու որոշ ժամանակ նաև նշանավոր տիեզերագետ Հակոբ Ղրիմեցին: 1416 թվականին Հակոբ Ղրիմեցին, ինչպես ինքն է ասում «զՏումարն դաս ասացի ի հռչակաւոր վանքս Մեծոփու, ի խնդրոյ Թումայ րաբունապետին»: Այնուհետև նա շարադրում է իր դասախոսությունները տիեզերագիտության մասին, «զի գիրքն լիցի ուսումնասէր մակացու արանց» (էջ 181):

Մեծոփի դպրոցում Թովման «դաս է ասում» (դասախոսությամբ մեկնաբանում է) կամ այդ նպատակով խմբագրում ու մշակում զանազան մեկնողական աշխատություններ, որոնցից են «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու» և «Համառօտ մեկնութիւն չորեքտասան Թղթոցն Պաւղոսի» աշխատությունները:

ԺԵ դարի սկզբին, Երզնկայում, շարունակում էր դեռևս իր գործունեությունը նշանավոր վարդապետ Գեորգ Երզնկացին (Հակոբ Ղրիմեցու ուսուցիչը):

Գեորգին շատ բարձր է գնահատում նրան որոշ ժամանակ աշակերտած Հովհաննես Երզնկացի գրիչը, որը 1408 թվականին, «յուսալ զհամբաւս համալսարանի տանս Արևելեան» (այսինքն՝ Տաթևի համալսարանի), թողնում է իր հայրենիքը և գալիս Սյունիք, Գր. Տաթևացու դասախոսությունները լսելու համար: Նա ժամանակի երեք նշանավոր վարդապետներին՝ Գր. Տաթևացուն, Գեորգ Երզնկացուն և Հակոբ վարդապետին մեծարում է հավասար չափով, նույնիսկ հայտնում է, որ դժվարանում է «զատանել զկարգ շարադրութեան սոցա, թէ զորս նախադաս գրեցից կամ զորս զկնի որոյ, զի զանազան պատուականութիւնս երևի ի սոսա, յիւրաքանչիւրսն անհամեմատ միմեանց» (էջ 141):

Դպրոցներ էին ստեղծվել նաև հայկական հեռավոր գաղթավայրերում: Ղրիմի դպրոցի ղեկավարն էր Սարգիս վարդապետը, որը Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի մոտ գտնվող սուրբ Անտոնի վանքի վանահայրն էր: Իր աշակերտների կողմից նա մեծարվում է «մեծ վարդապետ» և «քաջ հռետոր» կոչումներով: Ուշագրավ է, որ Սարգիսն իր աշակերտների համար մեկնում էր հատկապես փիլիսոփայական բովանդակությամբ աշխատություններ՝ Արիստոտելի ու Պորփյուրի հայերեն թարգմանությունները և դրանց մասին Հովհան Որոտնեցու գրած մեկնությունները: Այս մասին տվյալ է հաղորդում Սարգսի աշակերտներից Թադեոս Ավրամենցը: Նա

հայտնում է. «Յայսմ աւուր (այսինքն՝ 1428 թ. նոյեմբերի 30-ին) սկիզբն արար մեծ վարդապետս և քաջ հռետորս և արին տէր Սարգիս դաս տալ և ուսուցանել (զլուծմունս իմաստասիրական գրոց Յովհաննու Որոտնեցւոյ) ... մեզ՝ եղբարցս՝ տէր Թորոսին և տէր Սիմէոնին և ինձ՝ հետևեալ փանաքոյս Թադէոսի» (էջ 389-390, տե՛ս նաև էջ 394-395):

Վերոհիշյալ դպրոցներից բացի, Հայաստանի տարբեր վայրերում ստեղծվել էին նաև մի շարք այլ դպրոցներ, որոնցում դասախոսություններ էին կարդում ոչ անվանի կամ նվազ հեղինակություն ունեցող մի շարք վարդապետներ:

14

Վանական ու եկեղեցական կալվածատիրության և տնտեսության մասին ևս ԺԵ դարի առաջին կեսի հիշատակարաններն արժեքավոր ու հետաքրքրական տեղեկություններ են պարունակում: Եկեղեցական կալվածները, չնայած նույնպես ենթակա էին պետական պաշտոնյաների ու առանձին տիրողների չարաշահումներին և հարկահանմանը, սակայն, ընդհանուր առմամբ, զերծ էին մնում հափշտակումներից և վայելում էին հարկային որոշ արտոնություն:

ԺԵ դարի ամենանշանավոր եկեղեցական գործիչ և մատենագիր Գրիգոր Տաթևացին իր «Քարոզգրքում» Հայաստանի նվաճողներին նմանեցնում է փշերով ամրացված ցանկապատի, որը պատսպարում է ու պաշտպանում այգին, այսինքն՝ քրիստոնեական եկեղեցին: Նա քարոզում է հնազանդվել երկրի տիրողներին, որովհետև «այժմ քրիստոնեայք ի ներքոյ բռնաւոր իշխանաց խաղաղութեամբ ունին զիւրեանց եկեղեցականութիւնն»*:

Թովմա Մեծոփեցին տեղեկություն է հաղորդում այն մասին, որ 1402 թվականին, Մեծոփա վանքի վերաշինման ժամանակ, Քաջբերունիքի վրա Թամուրի կողմից իշխան կարգված շեխ Ահմատը՝ «գայր և անձամբ առնոյր ի վերայ անձին իւր զքարինսն, և բերէր դնէր ի հիմն սուրբ եկեղեցւոյն»**:

Վանքերի ու եկեղեցիների արտոնյալ այս վիճակը հաշվի առնելով,

* Գիրք Քարոզութեան, որ կոչի ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 452:

** Թ. Մեծոփեցի, էջ 58:

հայ աշխարհիկ ավատատերերից շատերը դեռևս իրենց ձեռքում գտնվող փոքրաթիվ կալվածքներն ապահով տիրելու ակնկալությամբ դրանք «նվիրաբերում էին» զանազան վանական հաստատությունների, նախօրոք դրանց ղեկավար պաշտոններում նշանակելով իրենց մերձավոր ազգակիցներին կամ հլու և հպատակ անձանց:

1410-ական թվականներին Սյունյաց մետրոպոլիտական աթոռը գտնվում էր պարոն Սմբատի որդի տեր Ստեփանոսի ձեռքին (մհ. 1422 թ.): Ստեփանոսին հաջորդող Շմավոն եպիսկոպոսը, ինչպես և նրա հետագա հաջորդներից շատերը, նույնպես Սյունյաց Օրբելյան իշխանական տան հետ մերձավոր կամ հեռավոր ազգակցական կապեր ունեին:

Ժառանգաբար հաջորդում էին միմյանց նաև Աղթամարի և Գանձասարի կաթողիկոսները, Սանահնի վանահայրերը, ինչպես և Բջնիի ազդեցիկ եպիսկոպոսները, որոնց իրավասության տակ էր գտնվում երկար ժամանակ Արարատյան նահանգը, և բազմաթիվ այլ եպիսկոպոսական աթոռների ու վանական խոշոր հաստատությունների առաջնորդներ:

Որոշ վանքերի նույնիսկ հաջողվում էր մեծացնել իրենց կալվածքները՝ ինչպես նվիրաբերությունների ու գնումների, այնպես էլ գյուղական համայնքներին պատկանող վարելահողերի ու արոտավայրերի սեփականման ճանապարհով:

Ուշտունյաց գավառում գտնվող սուրբ Վարդանի վանքի առաջնորդ Թումայի ջանքերով Կարա-Յուսուֆի տիրապետության տարիներին (1407-1420) վանքը վերաշինվում է «ի հիմանց» և Վանի ու Ոստանի ամիրների՝ ամիր Եզդինի և Մելիք-Մահմադի օժանդակությամբ վանքը ձեռք է բերում մի շարք նոր կալվածքներ: Այդ մասին Թովմա Մինասենցը հայտնում է հետևյալը. «Կրտրրվաւ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն Նաքրագրնի վէցքու հողն արտ, ամիրաց մըլքաթըղթովն և նըշանովն՝ սուրբ Վարդանայ մուլք գրնվաւ և (մի բառի տեղ դատարկ) էգին, և Կաթողիկոսենց արտերն, և Պէշգէնի գրախտն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք, շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վարդանայ, ի Գաւաշ գեաւղս» և այլն (էջ 565):

Նույնպիսի տվյալներ իր մի այլ հիշատակարանում հաղորդում է Թ. Մինասենցը նաև Ոշտունիքի սուրբ Հակոբի վանքի մասին: Ստեփաննոս Փիր վարդապետի առաջնորդության ժամանակ (1412) վերաշինվում է վանքը, «յաջողութեամբ աստուծոյ ժողովին ի տեղիս և այլ կրօնաւոր և

աշխարհականք՝ գործաւոր վանացս», – գրում է նա:

Վանքի վանահայր Սիմեոն վարդապետը զանազան ճանապարհներով ձեռք է բերում նոր կալվածքներ: «Սա ստացաւ, – գրում է Թ. Մինասենցը, – և բազում մուլք և արտորայք, այգի և ծառատունկք վանիցս, զոր ինքեամբ գնեաց՝ տրօք քրիստոնէից, և զոր յօրդորեալ զքրիստոնեայս՝ զքահանայս և զաշխարհականս, ետ գնել նոցա ի հալալ արդեանց իւրեանց մուլք և անդաստան վանիցս» (էջ 581):

Կալվածքների բնույթի ու չափի մասին մոտավոր պատկերացում կազմելու համար ավելորդ չի մեջ բերել նաև հիշատակարանի այն հատվածը, որտեղ թվարկվում են նոր ձեռք բերված կալվածքները. «Եւ արդ, այսօրիկ են նոր առած և արծաթագին մուլք վանացս: Զինչ որ բնական մուլք է վանացս՝ թէ կաղամախի պրակն, և թէ արտ, և թէ ափն, որքան և է ի յԸնծափու դաշտն՝ յայտնի է ամենեցուն, և երկու արտ ի Շատուան, և ծառ ի Գանձակ, և երկու արտ ի Դեղձիան, և հինգ արտ և Սաղաթիէլ երիցանց այգւոյ կէսն ի Մոխրաբերդ, և Օմար Շամշանի բաժին հողն, ԺԳ. (13) արտ, և խոտունցն, և փագախն, և կալն, և Մանդուկանց Ամիրպէկի այգին՝ ծառերովն՝ ի Մոխրաբերդն ...: Եւ երկու արտ ի Նարեկ, և մէկ՝ ի Բախվանց» (էջ 582):

Ուրեմն, վանքը տարբեր ճանապարհներով իր ունեցած կալվածքներին ավելացրել է 26 արտ, մեկ ու կես այգի, մեկ ծառաստան, խոտհունձ, փարախ, կալ և այլն:

Ձեռքի տակ ունենք նաև Խառաբաստի վանքի կալվածքները նշող փաստաթուղթ գրված Կարա-Յուսուֆի տիրապետության տարիներին: Պարզվում է, որ վանքը 1410-ական թվականներին ուներ 19 արտ, 70 մաթ ջրովի հող, 20 մաթ անջրդի հող, երեք ջրաղաց և մի այգի[*]:

Վանքերն ու առանձին բարձրաստիճան հոգևորականներ զբաղվում էին նաև վաշխառուական գործարքներով: «Աղվանից» կաթողիկոս Մաթեոսը, օրինակ, հայտնում է 1434 թվականին, որ ինքը Առաքելի որդի Հովհաննես երեցին պարտք է տված եղել «ՋՌ. (6000) դեկան սաակ ու Ի. (20) թաղար ցորեն՝ զապալու չափովն»: Պարտապանը մահանում է և պարտքի դիմաց ընտանիքը ոչինչ չի ունենում վճարելու, բացի մեկ ձիուց,

* Տե՛ս Ղ. Փիրղալեմյան, «Նոտարք Հայոց», էջ 31-32:

թամրից և մեկ Ավետարանից: «Տանուտէրք և ք[ահանայք], — հայտնում է կաթողիկոսը, — մէջ ընկան, Աւետարանս ու Ա. ձի, Ա. թ[ամր] բերին, թէ իրբմին չունին, երես գրին, թէ /// խեղճ են, ես այլ խոջայի, ձին ու թամրն յետ տվի, զԱւետարանն առի» (էջ 439): Հետագայում նա այդ Ավետարանը վաճառում է 1200 դահեկանով:

Քրիստոսատուր Կաֆայեցու մի ընդարձակ հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ղրիմի հայ վանքերի եկամտի կարևոր աղբյուր են եղել նաև բանկերում դրված տոկոսաբեր դրամագլուխները: Հիշատակագիրը 1431 թվականին հայտնում է, որ Կաֆա քաղաքի մերձակայքում գտնվող սուրբ Անտոնի վանքին, միաբաններից Եսայի կրոնավորի մայրը նվիրաբերել է «Ճ. (100) սոմ ի պանքն եդեալ, անզրդուէլի, մնալով անդ ի կումինին գլուխքն, որ է Ճ. (100) սոմ, և մուտքն նորին յամենայն ամի առնել վանքս Ռն. (1400) ասլ[խտակ]» (էջ 414):

Բանկային նման գործարքների բուն Հայաստանում կատարված լինելու մասին այս ժամանակաշրջանի հիշատակարաններում և այլ կարգի սկզբնաղբյուրներում վկայություններ չեն պահպանվել:

Հրատարակվող հիշատակարաններում կան մի շարք տեղեկություններ վանքերում աշխատող հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաների և «վանաց գործաւորների» մասին: 1425 թվականին Բերկրիի Հուսկան որդու վանքում կային 48 միաբաններ ու գործավորներ (էջ 339): 1420 թվականին հիշատակվում են այդ վանքի գործավորներից՝ Գորգի տնտեսը, Մկրտիչ մանակալը, Մեծատուր հովիվը (էջ 242): 1425 թվականին Ագուլյաց վանքի միաբան Մկրտչի պարտականությունն է եղել «զարդիւնս հասարակաց» ժողովել շտեմարաններում, իսկ տնտես Յարութը «սպասաւորել» է միաբաններին (էջ 337):

Կարելի է ենթադրել, որ վանքի «գործաւորների» վիճակում էին գտնվում նաև գրիչները: Նրանք, անշուշտ, գերազանցապես, իրենք էին գործարքի մեջ մտնում և պայմանավորվում ձեռագրի պատվիրատուի հետ, որոշում էին ընդօրինակության վարձը և այլն: Սակայն կան տվյալներ, որոնք խոսում են այն մասին, որ գրչի աշխատավարձի մի մասը պատկանում էր վանահորը, եպիսկոպոսին կամ այն անձնավորությանը, որի հրամանի տակ էր աշխատում տվյալ գրիչը: Այս տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննես գրչի կողմից 1407

թվականին ընդօրինակված Յայսմաւուրքի Գ. հիշատակագրությունը (տե՛ս էջ 71):

Բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, աշխարհիկ ավատատերերի նման ունեցել են ճորտեր ու ծառաներ, որոնք սպասավորել են նրանց, կատարել զանազան հանձնարարություններ, երբեմն, նույնիսկ, հանդես են եկել որպես զինված ջոկատներ՝ բանի ուժով ի կատար ածելու համար իրենց եկեղեցական ավատատիրոջ այս կամ այն հրամանն ու կարգադրությունը:

Մկրտիչ Նաղաշի զորեղ ծառաները երբեմն հարձակվել են թշնամի բանակների փոքր զորամիավորումների վրա և ազատագրել գերիներին: Այս մասին որոշակի տվյալ կա Նաղաշի Վարք-հիշատակարանում: «Առաքէր (Մկրտիչն) ի ծառայից իւրոց արս զօրեղս և սրտապինդս, և խլէին զգերիս յանաւրինաց և բերէին ի նորաշէն վանս իւր ապաստանի», — գրված է այնտեղ (էջ 626):

Նման մի վկայություն էլ պահպանված է Տաթևի եպիսկոպոս Ստեփանոսի Վարքի մեջ: Սրա եպիսկոպոսության տարիներին Տաթևի միաբաններից մեկը սիրահարվում է մի աղջկա, փախչում է վանքից ու հեռավոր մի գյուղում ամուսնանում նրա հետ: «Իսկ ազատորդին տէր Ստեփաննոս, — կարդում ենք վարքաբանական այդ գրվածքում, — քանզի ունէր բազում ճորտս այլազգիս, հեծեալ նոքօք ի ձի, և գնացեալ ի գեօղն յայն, քարշեաց զաբեղայն և զաղջիկն բռնութեամբ ...» և այլն[*]:

Հիշատակարանում կան նաև կարևոր տվյալներ վանականների և ընդհանրապես հոգևորականության ընկած բարքերի մասին:

1444 թվականին Այրիվանքում ընդօրինակված Յայսմաւուրքի անծանոթ գրիչը հայտնում է, որ «շատ անկարգութիւն և անօրէնութիւն մտեալ է յեկեղեցի»: «Քահանայք զանազան զգեստուք պճնեալ և զուեւորեալ իբր այլազգի, և աբեղայք թողեալ զվանս և զանապատս և զամենայն հոգևոր ուսմունս՝ ի գիւղս բնակէին» (էջ 561): Վանականներից շատերն իրենց հարկի տակ պահում էին կանանց՝ սանամայրերի, քույրերի և մորաքույրերի անվան տակ: Սիմեոն բարունապետը (մհ. 1428 թ.), առանձնելով

[*] Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903, էջ 313:

Զագավանքի վանահայրութիւնը «զվանքն պարըսպեաց և ամրացոյց, և որոշեաց ի յաշխարհականացն, զի աբեղայ ի շուրջ պատի կողմն բնակեսցէ, և սահմանայր մի արարաց է քոյրաքոյր և մայրաքոյր. և ամառն և ձմեռն ի մի վայր ժողովին ի քնոյ ժամն» և այլն (էջ 562):

15

Հրատարակվող հիշատակարաններում կան նաև որոշ տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի տարբեր մասերում շարունակում էին գոյություն ունենալ ու իշխել փոքրաթիվ կալվածքների վրա հայ ավատատեր քայքայված տների որոշ ներկայացուցիչներ, ինչպես նաև նորելուկ մեծատուններ ու կալվածատերեր:

Սյունյաց Օրբելյան իշխաններից Սմբատի, նրա որդի Բեշքենի, թոռ Ռուստամի, Ստեփանոս և Եմավեն եպիսկոպոսների մասին եղած տվյալների հետ արդեն մասամբ առիթ ունեցանք ծանոթանալու: Սրանք իրենց «զաւակօք, զօրօք և ամենայն հնազանդելովք» հիշատակվում են Սյունիքի տարբեր վայրերում և Լոռիում գրված մի քանի հիշատակարանների մեջ (տե՛ս էջ 4, 77, 133, 194, 258, 292, 382 և 392):

Հատկապես ուշագրավ է 392 էջի (N 418) հիշատակարանը, որտեղ, որպես վկաներ նախկինում Սյունավանքին պատկանած մի Ավետարանի հետ վերադարձման, ստորագրում են Սմբատի որդի Բեշքեն իշխանի ազատներից մի քանիսը՝ Լեշի որդի Դիլանճին, Էլբասանի որդի Պաշարաթը (հավանաբար եղել է Լոր գյուղի տերը) և Դավարար գյուղի տեր՝ Սեթիկի որդի Ավագը:

Թովմա Սյունեցի գրիչը 1411 թվականին շարադրած իր հիշատակարանում նշում է Ծար գավառի իր ժամանակի Դոփյան իշխաններին՝ «պարոն Վահրամայ, պարոն Տուտէնին, պարոն Շրուանին, պարոն Սատօին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին», ինչպես նաև այդ նահանգի հանգուցյալ իշխաններին, որոնք են՝ Դոփի որդի Հասանը, նրա ամուսին Խոնձան, սրանց զավակներ ու շառավիղներ պարոն Գրիգորը, Սարգիսը, Ճանշան (Շահնշահ), Ջհանշան, Աղբուղան, Շրվանը, և «Թագադրած իշխան» Սադունը (էջ 122):

Սյունյաց Օրբելյանների և Խաչենի իշխանական տների մասին հատկապես կարևոր են Մատթեոս Մնոզանի հաղորդած տեղեկությունները՝

1417 թվականի Գանձասարում ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում: Նա գրում է. «... Այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բիւրթելեանց՝ գնաց փախստական ի տունն Վրաց, որոյ անուն Սըմբատ կոչիւր, և անդ ի յօտարութեանն վախճանեցաւ: Եւ մնացեալ Բ. որդիք իւր (Նկատի ունի Բուրթելին ու Ստեփանոսին) եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց: Իսկ տանս Խաչենոյ բարեպաշտ այն կայր՝ Զաղայ անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք նորին, և որդիք Զաղային՝ Արղութէն և Ջալալադաւլէն, և եղբարք նորին Էլէգումն և Էլէգանն՝ են ի ներքոյ ձեռին անօրինաց. և այսպէս պակասեալ է իշխանութիւնս տանս Հայկազեան (էջ 194):

ԺԵ դարի առաջին կեսին հայկական կիսանկախ իշխանություն է գոյություն ունեցել նաև Համշենում: Այդ իշխանության մասին մեր պատմագրության մեջ ոչինչ չի ասված: Հրատարակվող հիշատակարաններից երկուսը, և նրանց լույսի տակ Ռույ Գոնզալես դե Կլավիխոյի ուղեգրական հուշերի մի հատվածը (որը նոր իմաստ է ստանում) հնարավորություն են ընձեռում որոշ խոսք ասելու հայկական այդ իշխանության մասին:*

*Համշենի առաջին մեզ հայտնի իշխանը եղել է պարոնաց պարոն Առաքելը: Կլավիխոն, որ Լանկ-Թեմուրի նստավայրից Իսպանիա վերադառնալու իր ճանապարհին 1406 թ. սեպտեմբերի 13-15-ին անցել է այս իշխանության միջով, այն անվանում է Արրաքիել (Arraquiel): Հայտնում է նաև, որ երկրի անունով «Արրաքիել» էր կոչվում նաև երկրի տերը**: Կլավիխոյի ճանապարհորդությունից քիչ առաջ այդ իշխանությունը գրավվել էր Սպերի ամիրի կողմից: Վերջինս, ինչպես հաղորդում է Կլավիխոն, բանակցելով Առաքելին, «մի խլամ կառավարիչ նշանակեց նրա տեղ՝ կառավարելու համար Արրաքիելի հողերը, բայց միաժամանակ, մի*

* Լ. Խաչիկյանն ինքը հետագայում ամփոփ աշխատություն գրեց Համշենի հայկական իշխանության մասին (տե՛ս «Աշխատություններ», հ. Բ, էջ 122-149) – **Խմբ.**:

** Նա, անշուշտ, սխալվում է. ինչպես հայտնի է «Առաքիել» երկրանուն տեղական ոչ մի աղբյուր չի նշում: Ակնհայտ է, որ Առաքել իշխանի անունով ժամանակակիցների կողմից Համշենը կոչվել է «Առաքելի երկիր»:

քրիստոնյա փոխկառավարիչ նշանակեց նրա օգնական»*:

Ըստ երևույթին, այդ գրությունը երկար չի շարունակվում և Առաքելին (դժվար է ասել երբ) հաջողվում է կրկին տեր դառնալ իր երկրին: Համենայն դեպս պարզ ու որոշակի տվյալ ունենք այն մասին, որ 1422 թվականին «պարոնաց պարոն Առաքելը» կրկին իր երկրի տերն է, և նրա **խնդրով Համշենում ընդօրինակվել է Գր. Տաթևացու Քարոզգրքի մի** ձեռագիր (տե՛ս էջ 515, առաջին ծանոթագրություն):

1425 թվականին որպես Համշենի իշխան հիշատակվում է արդեն պարոնաց պարոն Դավիթը, ամենայն հավանականությամբ՝ Առաքելի որդին (էջ 344): Այս Դավթի իշխանությունը շարունակվել է երկար տարիներ: 1440 թվականին Համշենի Խուժկա վանքում Աստվածատուր դպրի կողմից ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում նույն այդ պարոն Դավիթը, իր դեռաբույս զավակի՝ պարոն Վարդի հետ միասին, դարձյալ հիշվում է որպես Համշենի իշխան (էջ 510):

Համշենի ճանապարհների, լանդշաֆտի ու ժողովրդի բարքի մասին կարևոր են Կլավիխոյի ուղեգրության հետևյալ տողերը. «Այս Արրաքիելի բոլոր երկրամասը շատ լեռնոտ է, նեղ արահետներով, որ կիրճերից է անցնում, և սրանք այնքան ժայռոտ և զառիվեր են, որ բեռնակիր ձիեր չեն կարող առաջ երթալ: Մի կարգ տեղերում նրանք ստիպված են եղել փայտյա կամուրջներ շինել ժայռից ժայռ՝ անցնելու համար լեռների կատարները: Բեռնակիր կենդանիները անպետք են այստեղ, բայց բեռնակիր մարդիկ կրում են բեռներն իրենց ուսերի վրա: Շատ քիչ հացահատիկ է աճում այդ շրջանում» և այլն: Այնուհետև Կլավիխոն հայտնում է, որ շրջանի բնակիչները, չնայած հայ են և քրիստոնյա, բայց ավազակաբար են վարվում ճամփորդների նկատմամբ: Այսպես գրելու առիթը, անշուշտ, եղել է այն, որ համշենցիները ստիպել են Կլավիխոյին և նրա ուղեկիցներին վճարել ապրանքների համար բարձր մաքս: «Ազատ անցնելու համար, — գրում է Կլավիխոն, — նրանք մեզ ստիպեցին ապրանքներից ուղերաժ տալ, անցքի արտոնության համար»**:

Համշենի կիսանկախ իշխանության պատմության համար մեծ

---

* Հ. Հակոբյան, «Ուղեգրություններ», հ. Ա, ԺԳ-ԺԶ դար, Երևան, 1932, էջ 142:

** Նույն տեղում, էջ 143:

կարևորություն ունեցող փաստաթուղթ է Երուսաղեմի Մատենադարանի N 1617 ձեռագրի մեջ ընդօրինակված գրությունը, որը հասցեագրված է պարոն Դավթին: Այնտեղ ասված է. «... Պարոն Դաւիթ, յառաջն դուն գայս ուխտէ Աստուծոյ, որ ճամփորթ[ի] համար լաւ լինաս ու զճամփորթի ապրանքն հանց պահես՝ որպէս զԱստուծոյ տված հոգիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա և թէ այլազգ, ատ քեզ ավանդ: Եւ զինչ քեզ ես Շամշադինս ավանդ դնեմ՝ դայն առնուս, այլ աւելի տամահութիւն չլինայ: Վրայ այս բանիս գրէ մօտ ի Սպերու տէրն, որ բեռն բեռ բանէ, թամպալիթ՝ թամպալիթ, կլոման՝ կլոմայ, խուրճին՝ խուրճի, պողչան՝ պողչայ. և բեռին տալիքն ընդ սաղւաթ ընդ ամէն խարճ, մինչև Բասենու սինօռն՝ դան որ պիտ առնուն՝ զան յիստակ գրեն, որ [թա]մահ և ստութիւն չլինայ ի մէջն» (էջ 345):

Այս գրության հեղինակը, ամենայն հավանականությամբ, քուրդ ամիր Շամս-ադ-դին Ռոժիկն է, որ Կարա-Յուսուֆից ստացել էր Խլաթի, Մուշի, Բաղեշի և Խնուսի շրջանները:

Դավիթը, որն ընդունել էր Իսքանդարի հպատակությունը (1425 թ. հիշատակարանի մեջ որպես թագավոր նշված է Իսքանդարի անունը), ըստ երևույթին, կախման մեջ էր Շամս-ադ-դինից: Վերջինս այս գրությամբ ձգտել է կարգավորել Համշենի մաքսատների գործունեությունը և ապօրինի գանձումների առաջն առնել, որոնցից, ինչպես տեսանք, դժգոհում է իր «Ուղեգրության» մեջ նաև Կլավիխոն: Դավիթը Շամս-ադ-դինի պատվերը կատարելու համար, ինչպես ասված է գրության մեջ, պետք է կարգադրություն աներ Սպերի տիրոջը: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ Դավթի ժամանակ Սպերի իշխանությունը ենթարկվում էր Համշենին: Գրության մեջ առաջարկվում է նաև «յիստակ գրել» առևտրականների բեռներից պահանջվող մաքսի չափը՝ «մինչև Բասենու սինօռն», թերևս պետք է ենթադրել, որ Դավթի իշխանության սահմանը հասնում էր մինչև Բասեն:

Դժբախտաբար մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս ավելի բան ասելու Համշենի հայկական այս կիսանկախ իշխանության մասին, որոշելու նրա սկզբնավորման ու վախճանի տարեթվերը և այլ անհրաժեշտ մանրամասնություններ:

Մի քանի հիշատակարաններ տվյալներ են պարունակում նաև Հայաստանի այլ վայրերում ծվարած մանր ավատատերերի ու կալվածա-

տերերի մասին:

1424 թվականին Սանահնում գրված մի հիշատակարանի մեջ նշվում է «Ճիան աւրհնութեան իշխանն իշխանաց պարոն Զաքարին» (էջ 316): Մի այլ հիշատակարանից, գրված Տփղիսում, հայտնի է դառնում, որ Զաքարին պարոն Փաշի որդին է և, իր եղբայր Հովհաննես արքեպիսկոպոսի հետ միասին, վախճանվել է 1432 թվականին (էջ 420): Այս Հովհաննես արքեպիսկոպոսը՝ Ոսկեփոր մականունով, մեզ հայտնի է նաև այլ հիշատակարաններից. նա ամենուրեք կոչվում է «եպիսկոպոս Անւոյ», նրան 1426 թվականին հանդիպում ենք Թմոք (Թմկաբերդ) «անառիկ դղյակում» (էջ 354, 534-535 և այլն): Այս տվյալներն ի մի բերելով հնարավոր է եզրակացնել, որ իշխանաց իշխան Զաքարին Անիից Վրաստան տեղափոխված իշխանական տներից մեկի վերջին շառավիղներից է*:

1432 թվականին հիշվում է որպես Բջնի քաղաքի «Նախարար, վերակացու և առաջնորդ» ոմն Մասուր (էջ 421):

Ոհաննես Թմոքվեցու կողմից Արագածոտն գավառի Սերկևլի գյուղում 1442 թվականին շարադրված հիշատակարանից տեղեկություններ ենք ստանում այդ գյուղի հայ տերերի՝ պարոններ Ակիբեկի, Ճալուեի, Վաչխուտի], Քրդի և Սարգսի մասին: Գրիչը հատկապես մանրամասն տվյալներ է հաղորդում պարոն Ճալուեի (իր ընդօրինակած ձեռագրի պատվիրատուի) մասին և գրվատում է նրան հետևյալ խոսքերով. «Այր հսկայազաւր ի մրցմունս պատերազմաց, դիւցազնական ի յազատաց և պայազատ ի յիշխանաց, ի յազանց և ի տոհմէ ազատազգեան սեռից պարոն Ճալուէ, որդի մեծի իշխանին աստուածասէր պարոն Սարգսին, և թոռն պարոն Բուղլախին»: Հիշատակվում են նաև նրա երկու կանայք (երկուսն էլ կենդանի՞), եղբայրները՝ պարոն Գրիգոր և պարոն Փանուել, երիտասարդ որդին՝ պարոն Դավիթ և ուրիշները (էջ 533):

1443 թվականին հիշվում է ոմն իշխան որդի Ջաջուռի (էջ 549): 1444 թվականին որպես Եղվարդի տեր հիշատակվում է «մեծազգի և փառաւոր ... ազատածին» Աղիզպեկը՝ իր Ավագ և Զաքարիա որդիների հետ միասին (էջ 561 և այլն):

---

* Այդ մասին տե՛ս П. М. Мурадян, Армянская эпиграфика Грузии, (Тбилиси), Ереван, 1988, стр. 48-64 – **խմբ.**:

Մեջբերված տվյալներն ուշագրավ են այն տեսակետից, որ որոշ լույս են սփռում հայ ավատական տների հոգեվարքման երկարատև պրոցեսի վրա, և ցույց են տալիս, թե ինչպես հայ ավատատերերի դասակարգը, գործակցելով երկրի նվաճողներին, նոր պայմաններում ևս շարունակում էր պահպանել իր նախկին տիրույթների մի մասը:

16

Հրատարակվող հիշատակարանների մեջ քաղաքների և արհեստների մասին տվյալներն աննշան են: Եվ դա բոլորովին էլ անսպասելի չէ: Մոնղոլական աշխարհավեր արշավանքներից հետո, հայկական քաղաքները մտան քայքայման և հետադիմության շարունակ՝ էլ ավելի խորացող ընթացքի մեջ: Զարգացած արհեստագործությունը քայքայվեց: Միջազգային տարանցիկ առևտրի մեջ ներգրավված մի շարք նշանավոր քաղաքներ, որոնցից էին Անին, Կարսը, Խլաթը, Կարինը և այլն, կամ աստիճանաբար անմարդաբնակ դարձան, կամ էլ շարունակում էին քարշ տալ իրենց կիսակենդան գոյությունը, սոսկ որպես վարչական կենտրոններ:

Այնուամենայնիվ, սխալ կլիներ կարծել, թե մեր հետաքրքրող ժամանակաշրջանում քաղաքային կյանքը և արհեստագործությունը Հայաստանում խափանվել էին ամբողջովին և ամենուրեք:

Հրատարակվող հիշատակարանների տվյալներով պարզվում է, որ ԺԵ դարի առաջին հիսնամյակում Հայաստանում նշանավոր քաղաքներ էին Ոստանը, Վանը, Մուշը, Խիզանը, Արճեշը, Էրզրումը, Բաղեշը, Կարսը, Երզնկան և մի շարք այլ քաղաքներ ու գյուղաքաղաքներ:

Ուշագրավ է նաև, որ հենց այս ժամանակաշրջանում է բարձրանում Երևանի նշանակությունը, որպես Արարատյան նահանգի վարչական կենտրոն: 1405 թվականին ոմն ստացող Հակոբ մի Ավետարան է նվիրում «Երևանոյ հրաշալի և յորդոր» ժամատեղերին, բայց դեռևս շարունակում է Երևանը, ըստ երևույթին, հին ավանդույթով կոչել գյուղաքաղաք (էջ 50):

Շատ չանցած, սակայն, Երևանն արդեն «մայրաքաղաք» է կոչվում և սկսում է որոշակի դեր կատարել Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքում: 1410 թվականին արդեն Երևանում կային անվանի գրիչներ, որոնց Թովմա Մեծոփեցին ընդօրինակել է տալիս Գր. Տաթևացու Քարոզգիրքը («Ի գաւառիս Այրարատեան, յանապատս Երևանոյ, առ դրան

սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ», էջ 106):

Զգալի թվով հայ առևտրականներ ու արհեստավորներ կային նաև Տփղիսում, Թավրիզում, Տրապիզոնում, Սամսունում, Ամիթում, Սեբաստիայում և բազմաթիվ այլ մերձավոր և հեռավոր քաղաքներում, որոնք այս կամ այն չափով պահպանել էին իրենց նշանակությունը, որպես արհեստագործության կենտրոններ, և շարունակում էին որոշ դեր կատարել միջազգային տարանցիկ առևտրի մեջ:

Մկրտիչ Նաղաշի Վարք-հիշատակարանի մեջ կա ուշագրավ վկայություն Ամիթի հայկական գաղութի կյանքում արհեստավորների կատարած մեծ դերի մասին: Ամիթի Կաթուղիկե եկեղեցու վերաշինության (1447) հանգամանքները նկարագրելիս, Նաղաշի Վարքի հեղինակ Աստվածատուր վարդապետը հայտնում է, որ այդ գործում Մկրտիչ Նաղաշին մեծ օգնություն էին ցույց տալիս «տանուտերքն քրիստոնէից»: Այդ տանուտերերի շարքում նա նշում է Ճանիման Թիլիուրանցուն, Սաղաթ ոսկերչին, «որ էր երեսփոխան և հրամանատար», Ակերփանոս ոսկերչին, Ցերկեն Դանիելին, Աբրահամին և Սիմեոն զարբնին: Սրանք «ինքեանք տային ինչս բազումս և կերակուրս, և զամենեսեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին» (էջ 629):

Ոսկերիչ արհեստավորներ հիշատակվում են նաև մի շարք այլ վայրերում. այսպես, օրինակ, 1425 թվականին Երզնկայում հիշատակվում է տատացոի եղբայր Հովհաննես ոսկերիչը (էջ 344): 1440 թվականին Ոստանում ոսկերիչ Քրիստոսատուրը (էջ 510), 1449 թվականին Ագթամարում մի ձեռագիր է ստանում Հովհաննես ոսկերիչը (էջ 634): Ուրուն անունով մի ոսկեգործ 1419 թ. ձեռք է բերում մի ձեռագիր Ավետարան (էջ 237) և այլն:

Բացի ոսկերիչներից, քաղաքներում հիշատակվում են նաև հետևյալ արհեստավորները՝ Սարգիս ներկարարը (էջ 136) և Խնդութեկ գերձակը (էջ 167) Ոստանում, Պապուհեր զարբինը՝ Վան քաղաքում (էջ 569), Կարապետ ոգնձագործը՝ Բաղեշում (էջ 592) և ուրիշները:

Ավելի հետաքրքիր են գյուղերում բնակվող և աշխատող արհեստավորների մասին եղած տվյալները: Այդպիսիներից, այլևայլ առիթներով, հիշատակվում են՝ կոշկակար Թովման՝ Տշող գյուղում (էջ 204), հյուսներ Հովհաննեսը՝ Աղեթ գյուղում (էջ 249) և Պետրոսը՝ Նարեկ գյուղում

(էջ 510), ուսթա Ամիր-Սարգիսը և նրա որդի ուսթա Էվազշահը (մասնագիտության մասին տվյալ չկա)՝ Վանիշատ գյուղում (էջ 355), բրուտ Պետրոսը՝ Մոկքի Սուրբկանց գյուղում (էջ 434), գերձակ Դարգասալը՝ Սերկեփ գյուղում (էջ 536) և այլն:

1440 թվականին մի ձեռագիր Յայսմաւուրքի նվիրաբերության ակտի տակ, որպես վկա, ստորագրում է նաև ոմն քարխանաճի (արհեստանոցի տեր) Առաքելի որդի Ավտալ (էջ 512):

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ աշխատանքի գործիքների, հագուստի, կոշիկի, կահկարասու և այլ արհեստագործական արտադրանքների համար գյուղացիները ամեն անգամ հարկ չունեին քաղաք մեկնելու. մեծ գյուղերում կային հյուսներ, բրուտներ, կոշկակարներ, դերձակներ, անշուշտ նաև զարբիններ և այլ արհեստավորներ:

Հիշատակարանները հնարավորություն են տալիս մասամբ պարզելու նաև պատվիրատուի և արհեստավորի հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր: Արհեստավորները, ամենայն հավանականությամբ, աշխատել են և՛ իրենց սեփական նյութով, և՛ պատվիրատուի նյութով, նայած հանգամանքներին ու պայմանավորվածությանը:

1427 թվականին ոմն Սարգիս եպիսկոպոս, ցանկանում է ձեռագիր գրել տալ, և հայտնում է, որ «զթուղթն ու զամէն նիւթ» տվել է ինքը, բայց ինչ-ինչ պատճառներով գրիչը չի համաձայնել կատարել նրա պատվերը (էջ 363):

Նույն այդ թվականին, մի այլ պատվիրատու, ոմն Աբրահամ, Գրիգոր Արծկեցի գրչին վճարում է նաև ընդօրինակվող Ավետարանի թղթի գինը՝ «Խ. (40) դրամ» (էջ 366): Այս անգամ արդեն պարզ է, որ արհեստավորը՝ տվյալ դեպքում գրիչը՝ աշխատել է իր սեփական նյութով:

Ըստ պայմանավորվածության, տարբեր են եղել նաև աշխատավարձերը: Հովհաննես Ապարանեցի գրիչը, 1401 թվականին, ընդօրինակության վարձը ստացել է զուտ դրամով 2000 դահեկան: «Եւ առի, — գրում է նա, — շուքրանա դրոցս ԲՌ. (2000) դահեկան, որ առնէ կէսն Ռ. (1000) դահեկան՝ թանկա Թավրեզի» (էջ 15):

Մեզ ծանոթ Հովհաննես Խիզանցի գրիչը՝ ընդօրինակության համար աշխատավարձ է ստացել խառն ձևով՝ և՛ դրամով (մեծ մասը), և՛ բնամթերքով: Նա անձնապես ստացել է ընդամենը 2150 դրամ, 6 կապիճ հաց, 1

լիտր յուղ և 2 լիտր մեղր (էջ 71): Չպետք է կասկածել, որ որոշ դեպքերում գրիչն ընդօրինակության վարձն ամբողջովին կարող էր վերցնել բնամթերքով:

Հիշատակարանները հնարավորություն են տալիս պարզելու նաև ԺԵ դարի առաջին հիսնամյակի շուկայական մոտավոր գները որոշ ապրանքների նկատմամբ: Իհարկե, տվյալներն այնքան պատահական են, և վերաբերում են տարբեր վայրերի ու տարեթվերի, որ դրանց հիման վրա տնտեսագիտական հարցեր առաջ քաշել ու լուծել գրեթե անհնար է: Այնուամենայնիվ, ավելի ստույգ տվյալների բացակայության պայմաններում, անշուշտ, դրանք էլ արժանի են ուշադրության:

Մենք արդեն տեսանք, որ շուրջ 310 թերթից բաղկացած Ավետարանի գրության համար անհրաժեշտ թղթի գինը 1427 թվականին պատվիրատու Աբրահամը վճարել է 40 դրամ (էջ 366):

Այդ առիթով նշել ենք նաև, որ 1407 թվականին 6 կապիճ ցորենի արժեքը Հովհաննես Խիզանցի գրիչը հաշվում է 200 դրամ, այլ խոսքով մի կապիճ ցորենի արժեքը եղել է մոտավորապես 33 դրամ: Հացի գինը, բնականաբար, հսկայական տատանումներ է տվել քաղաքական խառն իրադարձությունների՝ պատերազմների ու ասպատակությունների ժամանակ, ինչպես նաև սովի, մորեխի և բնական այլ աղետների հետևանքով:

Նույն Խիզանում, վերոհիշյալ տվյալից ընդամենը վեց տարի առաջ, մեկ կապիճ հացը վաճառվել է 200 դրամով (վեց անգամ թանկ 1407 թվականի գնից), որովհետև, ինչպես հաղորդում է Զաքարիա գրիչը՝ «էին մարախ և եղև սով սաստիկ ընդ ամենայն երկիր» (էջ 8):

1413 թվականին գրված մի հիշատակարան հնարավորություն է ընձեռում մոտավոր չափով որոշելու նաև կովի և եզան գինը: Այդ թվականին ոմն Մարտիրոս 600 դահեկանով վաճառում է իր հանդուցյալ հորեղբոր Ավետարանը և ստացած դրամով գնում է «մին կով և մին եզն» (էջ 160):

Անտարակույս, նոր նյութերի, հատկապես վիմական արձանագրությունների և հետագա դարերի հիշատակարանների ու կալվածագրերի մեջ եղող տվյալների ուսումնասիրության միջոցով որոշ հնարավորություններ կստեղծվեն վերոհիշյալ ապրանքների շուկայական գների ստուգման ու

ճշտման համար:

Ահա համառոտակի թվարկմամբ այն կարևոր բնագավառները, որոնց մասին արժեքավոր տվյալներ են պարունակում ԺԵ դարի առաջին հիսնամյակի ընթացքում գրված հիշատակարանները: Եթե վերհիշենք, որ հայ ժողովրդի ԺԵ դարի առաջին հիսնամյակի պատմության ուսումնասիրության համար մասնագետների ձեռքի տակ, բացի Թ. Մեծոփեցու «Պատմությունից» և Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից» գրվածքից, հայերեն լեզվով կարևոր այլ սկզբնաղբյուրներ չկան, ապա ավելի ցայտուն կդառնա հրատարակվող հիշատակարանների արժեքն ու նշանակությունը:

17

Հիշատակարանները շարադրել են ձեռագրերի ընդօրինակության ու նկարազարդման ծանր և դժվարին գործի համեստ մշակները՝ գրիչներն ու ծաղկողները:

Նրանց մեծագույն մասը իրենց գիտակցական կյանքի ողջ ընթացքում օր ու գիշեր, զբաղվել են ձեռագրերի ընդօրինակությամբ, դրանով իսկ հայթայթելով իրենց և իրենց ընտանիքի սուղ պարենը:

Գրիչների կյանքի ու աշխատանքի պայմանների մասին հիշատակարաններում կան պերճախոս ու բովանդակալից բազմահարուստ տվյալներ:

ԺԵ դարի ամենաբազմարդյուն գրիչներից է արճիշեցի Հովհաննես Մանգասարենցը (կամ Մանգասարի որդին): Նա ծնվել է մերձավորապես 1417-1419 թվականներին, ապրել է 86 տարի, և 14 տարեկան պատանի հասակից մինչև իր մահը, 72 տարի շարունակ, ընդօրինակել է ձեռագրեր:

Նրա աշակերտներից մեկը՝ Զաքարիա գրիչը, 1505 թվականին շարունակելով Հովհաննեսի մահով կիսատ մնացած ձեռագրի ընդօրինակությունը, կարևոր տվյալներ է հաղորդում իր ուսուցչի կյանքի ու գործունեության մասին: Նա գրում է. «Եւ արդ, գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարդապետին իմոյ տէր Յոհաննիսի Մանգասարենց քաջ քարտողին, որ ՀԲ. (72) տարի՝ ամառն ու ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ. (40) Այսմաւուրք և Տարենգիրք, իսկ փոքր գիրք՝ Տեառ և Աղօթամատոյց, Շարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր՝ Ծ. (50) — Կ. (60) և այլ աւելի, և Աւետարան ԼԲ. (32): Եւ զայս Յոհան գլուխս ի ծերութեան ժամանակիս, որ աչք չէր հայիլ և ձեռքն կու դողայր, բազում

չարչարանօք հազիւ կարաց աւարտել, և այլ չկարաց գրիչ բռնել մինչ ի վախճան, որ յանգեաւ ի Քրիստոս ՁԶ. (86) ամաց» (էջ 587):

Այսպիսով, իր կյանքի ընթացքում Հովհաննես Մանկասարենցը, որ դեռ երիտասարդական տարիներին գրած հիշատակարաններում գանգատվում է իր աչքերի տկարությունից, ընդօրինակել է 132 մեծ ու փոքր ձեռագրեր:

Հովհաննեսը, անշուշտ, միայնակ չէր, և նրա նման իրենց ողջ կյանքն անց են կացրել գրքերի բազմացման տաժանակիր աշխատանքի մեջ Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մինասենցը և բազմաթիվ այլ գրիչներ ու ծաղկողներ:

Ծանր են եղել նրանց կյանքի և աշխատանքի պայմանները, նրանք ստիպված են եղել շարունակել գրքերի ընդօրինակությունը քաղցած ու ծարավ, անտուն և անօթևան, տկար և հիվանդ վիճակում, գաղթի ու փախուստի ճանապարհին, օտար նվաճողների հրոսակախմբերի կողմից բռնվելու, կողոպտվելու և սպանվելու վտանգի տակ:

Իրենց տխուր վիճակի մասին ևս, գրիչներից շատերը հաղորդում են կենդանի ու խոսուն բազմաթիվ տվյալներ: Արիստակես գրիչը, Դարանաղյաց գավառի Ավագ վանքում 1408 թվականին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում խնդրում է անմեղադիր լինել իր սխալների նկատմամբ, «զի շաղգամով մալէզն (այսուրով պատրաստած կերակուր) և կորեկէ ճաշն օգնական եղև մեզ ի գրելն» (էջ 89). Յանց գրչի աղքատիկ կերակուրը «ճաթրուր» է եղել, իսկ ջուրը՝ «ցուրտ»:

Գրիգոր գրիչը Խառաբաստի վանքում տառապում է սաստիկ գլխացավից, բայց ընդօրինակվող գրքի հետաքրքրությունը մոռացնել է տալիս գլխացավը.: «Վա՜, ի գլխի ցաւէս, թէ որպէս նեղին, — գրում է նա, — բայց փափաքումն բանիս կու յաղթէ» (էջ145):

Ծերունի Սարգիս գրիչը 1416 թվականին, «աչօք կուրացած» շարունակում է ձեռագրի ընդօրինակության ծանր աշխատանքը: Նա գանգատվում է իր վիճակից. «Վա՜յ,որ ձեռս կու դողայ, ու ազգի ազգի կիրս կու ախրեմ, ի՞նչ առնեմ, որ ծեր եմ ու աչքս վատատես է, Խ. (40) տարի է, որ գիր կու գրեմ, թողութիւն արարէք» (էջ 184): Նույն գրչին հանդիպում ենք նաև չորս տարի հետո, 1420 թվականին, ավելի անմխիթար վիճակում, բայց դարձյալ ձեռագիր ընդօրինակելիս: «Բայց գիտեմ, — գրում է նա, — որ

գրիս բազում պակասութիւն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ՝ մեր կարն այդ չափդ էր, ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն չորացած էր, միջի մատամբս ծրեցայ» (էջ 245):

Մելքիսեթ գրիչը ցերեկը չի կարողացել աշխատել, «քանզի ցորեկն պղտիկ էր, և ցնորն շատ, և սիրտս խռոված յեղբարէ», ուստի ստիպված՝ հիմնականում աշխատել է գիշեր ժամանակ, խավար ճրագի ներքո: «Խոշորութեան անմեղադիր լէր, ո՛վ եղբայր, — աղերսում է նա, — զի գիշերն եմ գրեր՝ ի ճրագն, յամէն գիշեր Ը. (8) թուղթ և ցորեկն՝ երկու թուղթ կամ երեք» (էջ 387):

Թորոս գրիչն աշխատել է 1431 թվականի սովի ու արշավանքների ժամանակ, նրան մեծ չափով խանգարել է նաև ցուրտը՝ «որ և թանաքն մեռցաւ և ոչ եկաւ պիտոյ», — գանգատվում է նա (էջ 417):

Ավելի ծանր է եղել Սիմեոն գրչի դրությունը: 1439 թվականին նա հայտնում է, որ «մին աչքս կու ցաւէր, նա խփեցի ու մին աչովն գրեցի՝ խիստ աշխատանաւք»: Ձեռագրի ընդօրինակության ընթացքում նա մի քանի անգամ գանգատվում է աչքի սուր ցավերից, ի վերջո, երբ հաջողությամբ ավարտում է սկսած գործը, ուրախացած արձանագրում է՝ «Ահայ ազատեցար շլրած աչկունք, կզացած շլնեկունք, կո[տրած] ոտկունք» (էջ 497):

Գրիչների մի մասը, տոգորված լինելով քրիստոնեական գաղափարախոսությամբ, մեծ մշակութային նշանակություն են վերագրել իրենց կողմից ընդօրինակվող եկեղեցական բովանդակությամբ ձեռագրերին: Նրանցից մեկը դիմում է իր հետագա ընթերցողներին և աղերսում լավ խնամել գիրքը, «զի գիրքն (իմա՛ սուրբ Գիրքը) մարդոյ հոգի է և կեանք. իմ դատաստանն, թէ Գրէանքս չէին՝ նա աշխարհըս ամէն ի կռապաշտութիւն անկանէր» (էջ 148):

Բայց գրիչների մեծամասնությունն անտարբեր է մնացել ընդօրինակվող ձեռագրերի բովանդակության նկատմամբ, և օգտագործել է ամեն պատեհ առիթ, ձեռագրի մի անկյունում կամ դատարկ մնացած մի քանի տողերի վրա, բարբառախառն ու կենդանի լեզվով դիմելու իր ընթերցողներին, գանգատվելով աշխատավորին վիճակված տխուր կյանքից ու ծանր առօրյայից: Այսպիսով, ստեղծվել են այն բազմաթիվ հիշատակագրությունները, որոնք պատշաճ տեղ են բռնում հրատարակվող ժողովածուի մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԵ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ[*]

1

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԺԵ դարի երկրորդ կեսը հայ պատմագրության ամենաաղոտ շրջաններից է, այդ ժամանակի պատմությունը հնարավոր է շարադրել հիմնականում հայերեն ձեռագրերի հիշատակարանների ընձեռած նյութերով:

Այդ աշխատանքն առաջին անգամ փորձեց կատարել Միքայել Չամչյանը ԺԸ դարի 80-ական թվականներին: Սակայն, ձեռքի տակ ունենալով 1451-1500 թթ. ընթացքում շարադրված այժմ հայտնի մեկ հազարից ավելի հայերեն հիշատակարաններից միայն մի քանիսը, ինչպես նաև հիմնական ուշադրությունը դարձնելով մահմեդական իշխողների միմյանց դեմ մղած պատերազմների պատմության ու հայ կաթողիկոսների հաջորդականության պարզելու հարցերի վրա, Չամչյանը, փաստական որոշ նյութ հավաքելով հանդերձ, չկարողացավ հաջողությամբ լուծել իր առջև դրած խնդիրը (տե՛ս «Պատմութիւն հայոց», հատոր Գ, Վենետիկ, 1786, էջ 497-511):

Հաջորդ քայլն այս ուղղությամբ կատարվեց Չամչյանից մեկ դար հետո, բազմավաստակ հայագետ Ղ. Ալիշանի կողմից: 1890 թվականին լույս տեսավ նրա «Այրարատ» ծավալուն աշխատությունը, որի գրվածքներից մեկը («Թուրքման տիրապետողք ի Հայս ի ԺԵ դարու» խորագրով)

---

[*] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, VII-CXLIII:

նվիրված է հենց ԺԵ դարի քաղաքական պատմության հարցերին (տե՛ս «Այրարատ», էջ 321-330): Օգտագործելով մի շարք կարևոր հիշատակարաններ, Ալիշանը այդ գրվածքում կարողացել է հիմնականում ճիշտ լուծել թուրքմեն տիրապետողների ժամանակագրությունը, որոշ դեպքերում անդրադառնալով նաև նրանց տիրապետության տարիներին տեղի ունեցած քաղաքական կարևոր անցուդարձերին: Այնուհանդերձ, այդ շարադրանքը ևս չէր կարող հիմք ծառայել ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի գիտական պատմության համար, թեկուզ և այն պատճառով, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին այստեղ նվիրված է ընդամենը 3 էջ (6 սյունակ):

ԺԵ դարի պատմության մշակման գծով լուրջ ու արդյունավետ աշխատանք ծավալվեց վերջին տասնամյակում: Հանգուցյալ ակադեմիկոս Հ. Մանանդյանը «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» մեծարժեք մենագրության Գ. հատորում, օգտագործելով տպագրությամբ իրեն մատչելի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև ռուս արևելագետներ Վ. Մինորսկու և Ի. Պետրուշևսկու արժեքավոր ուսումնասիրությունները, ավելի հանգամանորեն քան նախորդները կանգ առավ Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու քոչվորական ցեղերի տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի պատմության հարցերի վրա և տվեց այդ շրջանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի կոնսպեկտիվ, բայց ընդհանուր գծերով ճշմարտացի նկարագիրը: Ցավոք, ակադ. Հ. Մանանդյանի հիշյալ աշխատության Գ. հատորի բնագիրը հրատարակվեց որոշ համառոտումներով (հատկապես իր վերջին մասում), ուստի նրա ԺԵ դարի պատմության շարադրանքը մինչ օրս անմատչելի է ընթերցողներին: Ակադ. Մանանդյանն իր «Քննական տեսության» Գ. հատորի առաջաբանում գրել է. «Գիտական լրիվ ուսումնասիրությունն այս դարերի պատմության (ի նկատի ունի ԺԱ-ԺԵ դարերը - Լ. Խ.) հնարավոր կլինի, անշուշտ, այն ժամանակ, երբ հրատարակված կլինեն այս ժամանակներին վերաբերող բոլոր վիմական արձանագրությունները, հայերեն ձեռագրերի... հիշատակարանները, հայ և օտար չհրատարակված սկզբնաղբյուրները ու նյութական կուլտուրայի անհայտ մնացած հուշարձանները» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր III, Երևան, 1952, էջ 9-10):

Բարեբախտաբար, այժմ արդեն, այդ աշխատանքի մի զգալի մասը

կատարված է: 1951 թվականին լույս տեսավ Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ (13-18-րդ դդ.)» աշխատության առաջին հատորը, իսկ 1956 թ.՝ երկրորդը: 1955 թվականին տողերիս գրողի աշխատությամբ հրապարակվեց «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի առաջին մասը, 1401-1450 թթ. հիշատակարաններով, 1956 թվականին հրատարակվեց նաև «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» աշխատության առաջին պրակը, ԺԵ-ԺԶ դարերի հրովարտակների բնագրերով և հայերեն ու ռուսերեն թարգմանություններով (կազմող Հ. Փափազյան) և այլն:

Սույն ժողովածուի հրատարակությամբ, որի մեջ ամփոփված են 1451-1480 թթ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները, հնարավորություն է ստեղծվում արդեն, շատ ավելի բազմազան ու բովանդակալից նյութերի հիման վրա, քան մատչելի էր նախորդ ուսումնասիրողներին, անդրադառնալ հայ ժողովրդի պատմության ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի պատմության հարցերին:

Ձեռնարկելով այդ աշխատանքը, հույս ունենք, որ ոչ միայն կդյուրացնենք ժողովածուի նյութերից օգտվող մասնագետների աշխատանքը, այլև զգալի չափով կնպաստենք հայ ժողովրդի պատմության ծանր ու մղձավանջային, միևնույն ժամանակ և դեպքերով հարուստ ու բովանդակալից այդ ժամանակաշրջանի գիտական մշակման գործին:

Ա

ԺԵ դարի առաջին հիսնամյակը, ինչպես առիթ ենք ունեցել նշելու «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի առաջին մասի առաջաբանում, փակվեց հայ ժողովրդի համար անբարենպաստ պայմաններում: Կարա-կոյունլուների ընդարձակածավալ պետության գահակալ Ջհանշահը 1450 թվականին 60 հազարանոց մի բանակ էր հանել Աղ-կոյունլուների դեմ*:

---

* Կարա-կոյունլուները Արղուն խանի (1288-91) գահակալության տարիներին հաստատվել էին Միջագետքում Դիարբեքիրի շուրջ, իսկ Ակ-կոյունլուները՝ Կապադովկիայում, Սեբաստիայի շուրջ:

Ջհանշահի զորքերը, ավարի ու ավերի մատնելով Աղ-կոյունլուների տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի նահանգները, գրավեցին Երզնկան, գերեցին Կամախի, Դերջանի, Բաբերդի, Կեղիի և Սատաղի շրջաններից բազմահազար հայերի: «Եւ Ջ(1451) թւին (Ջհանշահը) զՎաթայ երկիրն և զԲաղիշուն արար գերի և գեառին. վա՜յ հազար բերան, որ զայս խրղճերս տեսաւ աչօք մերօք ի ժամանակին մերում» (Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 515: Ստորև այս աղբյուրը վկայակոչում ենք ՄԺ համառոտությամբ): Այս դեպքերի մասին գրանցումներ են կատարել մի շարք հիշատակագիրներ՝ Գրիգոր գրիչը 1451 թվականին Երզնկայում, Դավիթ եպիսկոպոսը 1453 և 1457 թթ. և ուրիշներ: Հատկապես մանրամասն ու կարևոր է Դավիթ եպիսկոպոսի 1457 թ. հիշատակարանը, որի պատմական մասը իրավամբ դիտվել է որպես ժամանակագրություն և հրատարակվել Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ»-ի II հատորում (էջ 210-212): Ըստ այդ հիշատակարանի, Երզնկայի գրավումից հետո Ջհանշահը Միջագետք է ուղարկում իր նշանավոր զորավարներից Ռուստամ Թարխան-օղլուն: «Եւ ապա,- գրում է Դավիթը,- առաքեաց զոմն զաւրագլուխ ի Միջագետս՝ Թրխան-Ալղի անուն: Եւ նա եկեալ գերեաց զԹիլգուրան, և աւերեաց զնա, և չարչարեաց զբազում քրիստոնեայս և նահատակեաց» (ՄԺ, II, էջ 210):

Այնուհետև Թարխան-օղլին պաշարում է Մերտին քաղաքը և 1451 թ. օգոստոսի 30-ին ապարդյուն գրոհով փորձում է գրավել այն: Վեց օր հետո քաղաքացիներն ապստամբում են իրենց տիրոջ՝ Աղ-կոյունլու Ջհանգիրի դեմ և քաղաքը հանձնում Կարա-կոյունլուներին, որոնք սրի են քաշում ու կողոպտում բնակիչներին: Տուժում են հատկապես հայերը: «Եւ կոտորեաց նշան եղիր ի վերայ քրիստոնէիցն և բազում չարիս արար,- գրում է այդ

Կարա-Յուսուֆը 1390-ին կազմեց մի իշխանություն «կեդրոնը հաստատելով Սասունի լեռներուն վրայ»: «Գրեթէ միեւնոյն ժամանակ՝ Ագգոյունլուներէն Գարա Օսման կամ Գարա Սոլուկ (Սեւ տզրուկ) կը հիմնէ իր կարգին իշխանութիւն մը և իրեն կը հնազանդեցնէ Թոգատի և Սեբաստիոյ շրջակայքը և կը տիրէ Հալէպի, Դամասկոսի և Մերտինի, որոնց իշխանները մէկ օրուան մէջ կ՚սպաննէ»: Ա. Ալպօյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, Բ, Գահիրէ, 1955, էջ 132:

մասին Դավիթ եպիսկոպոսը,- զոր թէ գրէի մի ըստ միոջէ նա գիրք մի լինէր զինչ եղայի քաղուածս, և այլ շատ» (Նույն տեղում, էջ 210):

Ջհանգիրի և Թարխան-օղլու միջև փոփոխակի հաջողությամբ մարտեր են տեղի ունենում նաև 1452 և 1453 թվականներին: Կարա-կոյունլուների զորքերը համալրվում են Ջհանշահի Մահմադ-Միրզա որդու զինական ուժերով, սակայն նրանց չի հաջողվում գրավել Ամիդ քաղաքը, ուր կենտրոնացել էր Ջհանգիրն իր հիմնական ուժերով: 1453 թվականի զատկին Կարա-կոյունլուների ու Ջհանգիրի միջև կնքվում է հաշտություն. Մերդինը վերադարձվում է Ջհանգիրին: Այս քայլով Կարա-կոյունլուները խորացնում են Աղ-կոյունլու երկու եղբայրների՝ Ջհանգիրի և Ուզուն-Հասանի միջև սկսված գահակալական պայքարն ու երկպառակությունը, բռնելով Ջհանգիրի կողմը: Այնուհետև Կարա-կոյունլուները հարձակվում են Ուզուն-Հասանի վրա, այս անգամ ևս չունենալով զգալի հաջողություն:

Հինգ տարի անց և Արևմտյան Հայաստանի աշխատավոր ժողովրդին ծանր տառապանքներ հասցրած պատերազմն ավարտվում է Կարա-կոյունլուների համար, նոր տարածքներ զավթելու առումով, ապարդյուն: «Եւ ոչինչ կարաց առնել, կամ զԱրղնի, կամ զԱմիթ, կամ զՄէրտին, այլ դարձաւ յաշխարհ իւր»,- գրում է Դավիթ եպիսկոպոսը Թարխան-օղլու մղած պատերազմի վախճանի մասին (տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, N 38 հիշատակարան, էջ 31): Թշնամի կողմերի միջև հաշտություն է կնքվում («արարին խաղաղութիւն ընդ միմեանս») Կարա-կոյունլուները վերադարձնում են նույնիսկ հայկական 4 գյուղերից գերեվարած 500 բնակիչներին և այլն (նույն տեղում):*

Պատերազմի նման վախճանը հազիվ թե հնարավոր լինի բացատրել Կարա-կոյունլուների թուլությամբ: Ամենայն հավանականությամբ Աղ-կոյունլուների տիրույթների վրա կատարած այս արշավանքի (որին, ի դեպ, Ջհանշահն անձնապես չէր մասնակցում) հիմնական նպատակն էր ապահովել թիկունքը՝ Արևելքում մեծ մասշտաբի նվաճողական պատերազմներ վարելու համար:

* Ստորև այս ժողովածուի հիշատակարաններից արված քաղվածքների կից, փակագծերում, տալիս ենք միայն նրանց համարները և էջերը:

Ջհանշահը Թամուրյան Շահրուխի վասալն ու դրածոն էր. ճաշակած լինելով Թամուրյանների ռազմական ուժի զորությունը Շահրուխի ու իր եղբոր՝ Սկանդարի միջև տեղի ունեցած երկարատև ու Կարա-կոյունլուների համար աղետաբեր բախումների ժամանակ, նա անհնազանդության նշաններ ցույց չէր տալիս Շահրուխի կենդանության օրոք:

Դրությունը, սակայն, փոխվեց Շահրուխի մահից (1447 թ.) հետո: Ուլուղբեկի կարճատև թագավորության ժամանակ Թամուրյան գահը դարձավ կռվախնձոր, տեղի ունեցան միջդինաստիական տարբեր խմբավորումների ուժեղ բախումներ, որից օգտվեցին քոչվորական ցեղերի ավագանիները՝ երկրի քաղաքական կյանքում իրենց վերապահելով ինքնիշխան դեր: Թամուրյան երբեմնի հզոր պետության ուժերը ջլատվեցին:

Ահա քաղաքական այսպիսի պայմաններում Ջհանշահը որոշեց օգտվել ստեղծված նպաստավոր դրությունից և նվաճողական պատերազմ սկսել Արևելքում:

1452 թվականին, զինական մեծ ուժերով, Ջհանշահը ձմեռեց Սոտանում: «Եկն Ջհանշայ փաթշահն և ի յՍոտան նստաւ բոլոր ձմեռ մի՝ բազում զօրօք»,- հայտնում է այդ մասին Գրիգոր գրիչը (հշտկ. N 25, էջ 21): Իսկ 1453 թվականի սկզբներին «երկու հարիւր հազար հեծելով» Ջհանշահը ներխուժեց Թամուրյանների տիրույթները (հշտկ. N 173, էջ 131): Լուրջ դիմադրության չհանդիպելով Կարա-կոյունլուները նույն թվականին գրավեցին Պարսկական Իրաքը և Ֆարսիստանը՝ այսինքն ողջ Արևմտյան Իրանը:

Քաղաքական այս անցուդարձերին անդրադարձել են բազմաթիվ հիշատակագիրներ: Այսպես, 1453 թվականին Վանում Ավետարան ընդօրինակող Վարդան գրիչը հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարել է «ի թագաւորութեան Ջհանշահ միրզին, որ յայսմ ամս գնաց ի Պարս՝ ի պատերազմ, և էառ զուռնն Խորասանայ» (հշտկ. N 44, էջ 35): Հովհաննես գրիչը նույն թվականին մի Մաշտոց էր ընդօրինակում Վարագում, «ի յաշխարհակալութիւն Ջիհանշայ ղանին, նշանաւոր տարի, որ զՉաղաթի տեղիքն կալաւ՝ զՇիրազ և զԱսպահան և զայլ քաղաքսին» (հշտկ. N 45, էջ 35):

Սպահանի գրավման մասին մանրամասնություններ է պատմում դեպքերից տարիներ հետո (1462 թ.) մի Հայսմավուրք ստացող ոմն Թումաշահ, Արճեշում շարադրած ընդարձակ ու կարևոր հիշատակարանում: Նա հայտ-

նում է, որ «Եւ [Ջհանշահ փաթշահն] բազում հեծիւք և անթիւ զօրօք, և գնացեալ եմուտ ի տունն Իրաղայ (=Իրաք), և զամենեսեան դրաւեաց ընդ ձեռամբ իւրով, և հասեալ ի մեծ քաղաքն Ասպահան, որ է Շօշ քաղաքն... որ էր ամուր և բազմամբոխ: Որոց ընդդիմացեալ նմա պատերազմեցան. և յաղթեալ նոցա՝ առ զքաղաքն, և զամենայն զօրսն սրոյ ճարակ տուեալ և ի սուր սուսերի մաշեալ՝ քանդեալ և աւերեալ. և զգլուխ գետոյն կապեալ ի վերայ քաղաքին, զի որք ի նրգմունս և ի ներքնատունս և ի գարանս մտեալ էին և թաքուցեալ՝ ամենեքեան զրաստոյ հեղձամղձուկ եղեալ սատակեցան: Որ և քաղաքն ամենայն տապալեցաւ ի վերայ նոցա, զի հողաշէն էր» (հշտկ. N 221, էջ 172):

Գրավելով Արևմտյան Իրանը, Ջհանշահն առանձին երկրամասերի իշխանությունը հանձնում է իր որդիներին: «Որդիքն [Ջհանշահի] թագաւորեալ նստան ի Շիրազ և յԱսպահան և ի Քրման»,- հայտնում է Խաչատուր գրիչը Կոուց անապատում շարադրված իր հիշատակարանում (հշտկ. N 225, էջ 181):

1455 թվականին Ջհանշահն արշավում է Բաղդադ, որտեղ իշխում էր իր եղբորորդիներից մեկը (տե՛ս V. Minorsky, Jihān-shāh Qara – qoynlu and his Poetry (Reprinted from BSOAS, 1954, XVI, 2, p. 294): Բաղդադյան արշավանքի և հետագա քաղաքական անցուդարձերի մասին փոքր-ինչ ուշացած գրանցումներ է կատարել 1457 թ. Հովհաննես գրիչը Ցիպնա վանքում: «Յայսմ ամի,- գրում է նա,- Ջիհանշայ ղան էառ զԲաղդատ, և Կ. (60) պարնութիւն կալան, և ԿՌ. (60.000) ոգի ի սուրն քաշեցին, և ԼՌ. (30.000) ջորեբեան մալ ի Ղափանն տարան» (հշտկ. N 112, էջ 81):

Բաղդադից դառնալու ճանապարհին Ջհանշահն անցնում է Բաղեշի, Մուշի և Խլաթի շրջաններով և, ի պատասխան Բաղեշի քուրդ ամիրի անհնազանդության, ավերածություն է գործում նշված վայրերում. վերցնում է մեծ ավար և գերում հայ բնակչությունից 1500 հոգի: Այս մասին նույն Հովհաննես գրչի վերոհիշյալ հիշատակարանում կարդում ենք. «Եւ դարձեալ, արքանեակն սատանայի Ջիհանշայ ղանն եկել ի վերայ Բաղըշու, Մշու և Խլաթայ, առ՛ և աւար արար և տարաւ ՌՇ. (1500) գերի՝ կին և տղայ և սարկաւագ. և զամէն գերի Շ. (500) թամուրի կու ծախին (հշտկ. N 112, էջ 81):

Զսպելով ապստամբական տրամադրությունները Բաղդադում և Բադեշի քրդական ամիրության սահմաններում, Ջհանշահը 1457 թվականին ձեռնարկում է արևելյան երկրորդ խոշոր արշավանքին:

*Այս անգամ նա խորանում է դեպի արևելք և գրավում Թամուրյան տիրույթների զգալի մասը՝ Համադանը, Ռեյը, Ղազվինը, Դիյանը, Խորասանը և այլ «քաղաքս անթիւս», իսկ այնուհետև մտադրվում է գրավել նաև Թամուրյան պետության մայրաքաղաք Հերաթը «Եւ կամի երթալ Հրէ»)**:

1458 թվականի հունիս ամսին, պարտության մատնելով Թամուրյան գահի հավակնորդ Միրզա-Իբրահիմին, Ջհանշահը մտնում է Հերաթ:

Սակայն նվաճված անծայրածիր երկրները տևական ժամանակով իրենց ձեռքում պահելու համար Կարա-կոյունլուները չունեին անհրաժեշտ ուժեր: Շուտով Թամուրյան պետության մեջ զարթնում են գահակալական կռիվները. սուլթան Աբու-Սայիդը, պարտության մատնելով գահի մյուս հավակնորդներին, գրավում է իշխանությունը և դեսպաններ ուղարկելով Ջհանշահի մոտ, պահանջում է նրանից վերադառնալ Ատրպատական: Ջհանշահին, որն այդ օրերին լուր էր ստացել իր Հասան-Ալի որդու գլխավորությամբ Ատրպատականում ծագած ապստամբության մասին, այլ բան չէր մնում, քան հաշտության դաշինք կնքելով Աբու-Սայիդի հետ՝ հրաժարվել Արևելյան Իրանում կատարած նվաճումներից:

Հասան-Ալին բանտարկված էր Մակվի բերդում: 1458 թվականին նա, ինչպես հաղորդում է Բաղիշեցի մի գրիչ՝ «Ելաւ ի զընտանէն և էառ զԹավրէզ» (հշտկ. N 136, էջ 101): Ապստամբ ամիրզադայի շուրջն են խմբվում Աղ-կոյունլուներին գործակցած լինելու մեղադրանքով Ջհանշահի կողմից բանտարկված մի շարք ավագանիներ ու զորահրամանատարներ՝ Պիր-Ալյանը, Արապշահը և այլք: «ՋԷ (1458) ... Հասան-Ալին ելաւ Արճէշ: Պիր Ալյանն ելաւ զՎան գերեաց ... Ի նոյն (1461) ամին Հասան Ալին Մանծկերտ շինեաց, Արճիշու եկեղեցեաց զլուխն նորոգեաց» (Մժ, I, էջ 143):

Պիր-Ալյանը 1439-1445 թթ. հիշատակարաններում ու այլ աղբյուրներում կոչվում է Վանի և Ոստանի «կողմնապետ», իսկ Արապշահը Ջհանշահի կողմից կարգված էր Երզնկայի կառավարիչ: 1456 թվականին Աղ-կոյունլու Ջհանգիրը, կրկին անգամ զժտվելով իր Ուզուն-Հասան եղբոր հետ, զինական օգնություն էր խնդրել Ջհանշահից: Վերջինս, ուրախությամբ ընդառաջելով Ջհանգիրին, Դավիթ եպիսկոպոսի վկայությամբ՝ «ետ նմա զԵզնկայ քաղաքն և ասաց նմա գնալ յԵզնկայ և զԱրապշայ պակն, որ յԵզնկայ էր, առնուլ ընդ իւր և երթալ պատերազմել ընդ Հասան պակն» (Մժ, II, 211):

* Այս և նախորդ արշավանքի ընթացքում Ջհանշահի կատարած նվաճումների թվարկումը գտնում ենք մի շարք հիշատակարաններում: Տե՛ս, օրինակ, հշտկ. N 111, էջ 79, հշտկ. N 118, էջ 86 և այլն:

Արապշահը, սակայն, չենթարկվեց Ջհանշահի կարգադրությանը. նույն աղբյուրի տվյալներով նա «ոչ իշխեաց գալ պատերազմել ընդ Հասան պակն» և խույս տալով գնաց Ջհանշահի մոտ: Ջհանգիրը իր Ուայիս-բեկ եղբորն ուղարկելով Ջհանշահի մոտ՝ գանգատվեց Արապշահից: «Եւ Ճհանշահն,- շարունակում է իր պատմությունը Դավիթ եպիսկոպոսը,- զԱրապշահն թալանեց և գնդանեց, և փոխանակ Արապշին եկ Ճհանկրին այլ հեծել» (Նույն տեղում):

Նոր առաքված զորքերի հրամանատարներն էին՝ Ռուստամ Թարխան-օղլին, Ալիշաքար բեկն իր որդու հետ և Փիրի-բեկը: Ջհանգիրը Կարա-կոյունլուներից ստանալով զինական այս օժանդակությունը, ճակատեց Ուզուն-Հասանի դեմ, սակայն նրա զորքի մի մասը անցավ Ուզուն Հասանի կողմը, մյուս մասը լքեց պատերազմի դաշտը, իսկ Կարա-կոյունլու զորապետերը կրեցին խայտառակ պարտություն: Ռուստամ Թարխան-օղլին գերվեց ու սպանվեց, մյուսները (բացի Փիրի-բեկից) նույնպես գերվեցին ու բանտարկվեցին Ուզուն-Հասանի կողմից: Այս բոլորից հետո միայն Ջհանգիրը հնազանդվեց իր եղբորը և նրա մոտ «հեծելբաշ» ուղարկեց իր Սուլթան-Համզա որդուն (Նույն տեղում, էջ 211-212): Աղ-կոյունլու երկու եղբայրների միջև ծագած գահակալական պայքարը Կարա-կոյունլուները չկարողացան խորացնել և օգտագործել ի նպաստ իրենց: «Ի ՋԱ (1452) երէկ Ճիհանշան ի յԵզրնկան և խաղեաց Գ (3) ամիս և էառ, և ոչ թալանեաց: Եւ առաքեաց զգլխաւոր ամն անուն Թարխան-աղլի ի վերայ ազգին Պայի/ն/տուրաց, որ էր պարոն Հասան պէկն և խաղեաց զԱմիթ և ոչ ինչ կարաց առնուլ և կոտորեցաւ ի Հասան պակէն և յետս դարձօ: Եւ յետ Գ (3) ամաց դարձեալ առաքէ Ճիհանշան գնա բազում զաւրօք ի վերայ Հասան պակին, և խաղեաց զԱմիթ և Հասան պակն ժողովէ ԴՌ (4000) մարդ, զի այլ ոչ ունէր և կռուեցօ և յաղթեաց և բմպանեաց զԹարխան-օղլին և եսպան,

և անչափ ոսկի, և արծաթ, և ձի, և ջորի, և մալ առին անասելի»: (Մժ, II, էջ 152)

Հասան-Ալին հոր դեմ ապստամբությունը բարձրացրեց հենց Ուզուն-Հասանի այս հաղթանակից հետո: Հասան-Ալու ապստամբության ու հարակից դեպքերի մասին ուշագրավ տվյալներ են գրանցված ստանցի խոջա Արղլ-Ալիզի կողմից 1459 թվականին ձեռք բերված ճաշոցի հիշատակարանում, որի սկզբի մասը, ցավոք, փնասվել ու դարձել է անընթեռնելի. պահպանված մասից ավելորդ չենք համարում մեջ բերել մեկ հետաքրքրող հատված: «... Վասն ծովացեալ մեղաց մերոց,- գրված է այնտեղ,- արձակեցաւ ի յերկաթոյն (խոսքը Հասան- Ալու Մակվի բերդից ազատվելու մասին է - Լ. Խ.) և բազում աւեր արար քաղաքաց, և զինչ բռնած կայր հօրն ազատեաց՝ զՂլիճ-Ասլանն և զորդին իւր (հավանաբար՝ Սեիդ-Ղասում - Լ. Խ.), զԱրապշէն և զորդին նորա. և ժողովեաց առ ինքն, և արար իւր բազում հեծելս: Եւ յետոյ առաքեաց զՂլիճ-Ասլանն ի վերայ Վանայ բերդին, զի առցէ զնա, և ոչ կարաց: Եւ ապա խորհուրդ չար արար վասն երկրիս մերոյ, և արար շատ աւեր և թա[լան]» (հշտկ. N 154, էջ117):

Օգտվելով խառնակ այս դրությունից Աղթամարը գրավելու և կողոպտելու անհաջող փորձ է կատարում քրդական Ռոժիկ ցեղի ավագանիներից մեկը՝ Սեիդ-Ալին: Զինված իր հրոսակախմբով, ունենալով երկու լաստանավ, նա 12 օր շարունակ սպասում է կղզու դիմաց՝ ցամաքում գտնվող Ախավանց գյուղում՝ Աղթամար թափանցելու, «զամենեսեան ի սուր սուսերի մաշելու» և «զսրբութիւնս գերի վարելու» մտադրությամբ:

Զաքարիա կաթողիկոսը, սակայն, իր ուժերով պատերազմում է նրա դեմ, գրավում է նրա լաստանավերը և փրկում Աղթամարը կողոպուտից (հշտկ. N 154, էջ 117): Այնուհետև, լուր ստանալով Ջհանշահի վերադարձի մասին, գնում է ընդառաջ, հանդիպում նրան Խոյ քաղաքում և պատմում «զաւերումն աշխարհիս»: Ջհանշահը «բազում զօրօք» արշավում է անհնազանդ իր որդու վրա: 1459 թվականին ճնշվում է Հասան-Ալու գլխավորած ապստամբությունը:

Զաքարիա կաթողիկոսի և Ջհանշահի վերահիշյալ տեսակցության մասին կարևոր տվյալներ են գրանցված իր՝ Զաքարիայի նորահայտ մի կոնդակի և արճիշեցի խոջա Թումաշահի արդեն մեզ ծանոթ հիշատակարանի մեջ:

Զաքարիայի կոնդակն օգտագործված է Պետ. Մատենադարանի N4779 ձեռագրի մեջ, որպես պահպանակ, և հասել է մեզ թերի վիճակում: Կոնդակն ուղղված է ինչ-որ թեմի բնակչությանը, եկեղեցական սպասների հավաքման նպատակով այնտեղ նվիրակներ ուղարկելու առնչությամբ: Սկզբում Զաքարիան ծանուցում է իր հոգևոր հոտին, որ ինքը կարևոր ծառայություններ մատուցած լինելով Ջհանշահին, բարձր պատիվների է արժանացել նրա կողմից և ստացել Էջմիածնի կաթողիկոսական աթոռն ու Գր. Լուսավորչի աջը: Դժբախտաբար կոնդակի հենց այդ տողերն են տուժել, որտեղ կաթողիկոսը տվյալներ է գրանցել իր քաղաքական գործունեության մասին: Պահպանված տողերից հնարավոր է լինում պարզել, որ ինչ-որ մարդիկ (հավանաբար Հասան-Ալու գլխավորությամբ ապստամբածները), «կամէին սպանանել զինքն և զիւր մարդիկն»: Զաքարիան, տեղեկանալով այդ վտանգի մասին, ինչ-որ ճանապարհներով կարողացել է խափանել նրանց մտադրությունը: «Մեք էլ,- գրում է նա,- ի մէջ մտաք և ի մեզանէ ԲՃՌ. (200.000) դեկան եղաւ՝ խլըսեցի զիւրեանքն ի մահուանէ: Փատշահն, [որ] տեսաւ ասաց՝ երբ դու էնց լաւ մարդ ես Էջմիածին [և] աջն քեզ» և այլն (էջ 173, տողատակ):

Հայտնի է, որ Էջմիածնի կաթողիկոսական աթոռի շուրջը լարված պայքար էր ծավալվում հայ եկեղեցական ու աշխարհիկ ավատատերերի երկու ուժեղ խմբակցությունների միջև: Առաջին խմբակցության մեջ միավորվում էին Այրարատի և Սյունիքի ավատատեր-կալվածատերերն ու մենատները, որոնք ձգտում էին տնտեսապես ու քաղաքականապես Էջմիածինը ենթարկել իրենց: Մյուս խմբակցությունը, նույն ձգտումներով, հենվում էր Վասպուրականի հայ իշխող դասերի վրա: Թովմա Մեծոփեցու մահվանից հետո (1446 թ.) վասպուրականցիների գաղափարական ու գործնական ղեկավարությունն անցավ Աղթամարի կաթողիկոսների ձեռքը: Սրանք իրենց համարում էին «Թագաւորացն, ի Թոռանց և ի շառաւիղէ արքային Գագկայ» և ձգտում էին եկեղեցական իրենց ազդեցությունը տարածել բովանդակ Հայաստանի վրա:

Էջմիածնի կաթողիկոսության ու Գր. Լուսավորչի աջի հանձնումը Զաքարիա կաթողիկոսին՝ ժամանակակիցների կողմից, իրավամբ, դիտվեց որպես աղթամարցիների հաղթանակ և ոգևորությամբ ընդունվեց Վասպուրականի եկեղեցականների ու մեծատունների շրջաններում:

Արճիշեցի խոջա Թումաշահն իր ընդարձակ հիշատակարանում Զաքարիա կաթողիկոսի ու Ջհանշահի հարաբերությունների և էջմիածնի աթոռը Զաքարիային հանձնելու մասին մանրամասն տվյալներ է հաղորդում. «[Ջհանշահ փադիշահն] զամենայն առնն թաթարաց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, և դարձեալ եկն ի Թախթն իւր՝ ի քաղաքն ճահատան, որ է Թաւրէզ: Որոյ ընդառաջ գնացեալ մեծ հայրապետն տէր Զաքարիայն՝ աթոռակալ սուրբ խաչին Աղթամարայ, որ էր Թագաւորազն՝ ի Թոռանց և ի շառաւեղէ արքային Գագկայ՝ բազում ընծայիւք և պատարագաւք: Զոր յոյժ սիրով ընկալաւ զնա արքայն արքայից Ջհանշահ փադիշահն և զշխայն Բէկում-խաթունն, և պատուեալ մեծարեցին զնա և ետուն նմա խըլայ և պարգև զաջ սուրբ Լուսաւորչին մերոյ՝ զսրբոյն Գրիգորի և զպատիւ պատրիարգութեանն: Որոյ... եկեալ յաստուածարեալ և յաստուածանկար սուրբ Գրիգորաշէն և երկնահանգէտ կաթուղիկէ սուրբ էջմիածինն... նստաւ ինքնակալ պատրիարգ ընդհանուր ամենայն քրիստոնէական ազգի (իմա՛ Հայոց), որք են ընդ ամենայն սրբոյ տիեզերաց» (հշտկ. N 211, էջ 172-173), նույնը մեջ է բերել իր «Պատմութեան» մեջ նաև Առաքել Դավրիժեցին (տե՛ս 1884 թ. հրատ., էջ 324-325):

1460 թվականին արդեն Զաքարիան Աղթամարից տեղափոխվել էր էջմիածին և ճանաչվել շատ թեմերում որպես ամենայն Հայոց կաթողիկոս: Արճիշեցի ոմն Ստեփանոս 1460 թվականին ձեռք բերած Ավետարանի հիշատակարանում հայտնում է, որ Զաքարիան «յայսմ ամի տիրեաց էջմիածնին և Լուսաւորչի սուրբ աջոյն» (հշտկ. N 180, էջ 40), իսկ Հովհաննես գրիչը Արծկեում Ճաշոց է ընդօրինակում «ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ընդհանրի Հայոց կաթողիկոսի և պատրիարգ Վաղարշապատու էջմիածնի՝ աթոռակալի սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի» (հշտկ. N 177, էջ 135): Այս կարգի տվյալներ գրանցված են նաև այլ հիշատակարաններում: «Ջժ (1461) թվին Զաքարիա կաթողիկոս նստաւ էջմիածին: Լուսաւորչի աջն յԱղթամարա եբեր խաչալամով: Ի նոյն ամին Հասան Ալին Մանծկերտ շինեաց, Արճիշու եկեղեցւոյ գլուխն նորոգեաց: (Մժ, I, էջ 143)

Զաքարիան քաջ գիտակցում էր, որ մահմեդական փադիշահի բարյացակամությամբ միայն էջմիածնի կաթողիկոսական աթոռը գրավելով հարցը չի փակվելու: Վասպուրականից դուրս հեղինակություն և հենարան ստեղծելու և օրինական կաթողիկոս Գրիգոր Ջալալբեկյանցի ու հակա-

ռակորդ խմբակցության մյուս գործիչների նյութած դավերի առաջն առնելու մտադրությամբ Զաքարիան շինարարական աշխատանքներ է ծավալում էջմիածնում և շրջակայքում: Իր անդրանիկ կոնդակներում պարծանքով է շեշտում նա այդ հանգամանքը: Հայտնում է, որ Ջհանշահի մոտ եղած ժամանակ փադիշահն իրեն ասել է հետևյալը. «զինչ հասըլ կայ տո քեզ, որ զինչ ուէր կայ շինես. էս քանի տարի զ[աշ]խարհս կերան ու աւէր պահեցին»: «Մեք էլ եկաք,- շարունակում է նա,- շատ վարպետ բանեցաք, որ զպակասութիւն և զթեր[ութիւն] լընունք ի յԱյրարատեան գաւառս» և այլն (էջ 173, տողատակ):

Խոսելով Զաքարիա կաթողիկոսի գործունեության նեղ անձնական ու խմբակային դրդապատճառների մասին, բնավ չպետք է մոռանալ էջմիածնի ու Աղթամարի կաթողիկոսական աթոռների միավորման դրական նշանակությունը դարեր շարունակ պետականությունից զրկված հայ ժողովրդի կյանքում:

Դառնալով ամենայն Հայոց կաթողիկոս, Զաքարիան սկսում է միջամտել նաև երկրի քաղաքական գործերին: Զաքարիան թունավորվել է 1463 թ. «ՋԺԲ (1463) թվին Զաքարիա կաթողիկոսն դեղեցին՝ մեռաւ»: (Մժ, I, էջ 143):

Օգտվելով Ջհանշահի երկարամյա բացակայությունից և Կարա-կոյունլուների պետության ներսում ծագած երկպառակություններից, Բաղեշի Շարաֆ ամիրը անհնազանդության նշաններ էր ցույց տալիս և հրաժարվում էր հարկատու լինել Ջհանշահին:

Հասան-Ալու գլխավորած ապստամբությունը ճնշելուց հետո, հավանաբար 1461 թվականին, Ջհանշահը Բաղեշի ամիրի դեմ է ուղարկում 12000 հեծյալ մարտիկներից բաղկացած պատժիչ զորախմբեր: Սրանք պաշարում են Խլաթի բերդը և, ինչպես հաղորդում է հիշատակագիր խոջա Թումաշահը՝ «գնացեալ աւերեալ քանդեցին զնա և բազում աւար մի ժողովեալ՝ նստան ի վերայ բերդին, և նեղէին առնել զնա, և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառն նոցա»:

Ինչպես միշտ, նույնպես և այս անգամ, պատերազմական գործողություններից տուժում են հիմնականում շրջակա գավառների անպաշտպան թողնված հայ գյուղերը: Ջհանշահի զորքերն սկսում են գերեվարել բնակ-

չությանը, քանդել ու ավերել գյուղերն ու շեները, տապալել եկեղեցիները, կողոպտել նյութական ու մշակութային արժեքները և այլն:

Զաքարիա կաթողիկոսը ժողովրդին գերությունից ու կոտորածից փրկելու համար փորձում է հաշտարարի դեր կատարել Ջհանշահի և ամիր Շարաֆի միջև*: Ստանալով Ջհանշահի հավանությունն ու համաձայնությունը, Զաքարիան «ձիընթաց արշաւամբ» ճեպում է Բաղեշ և համոզում ամիր Շարաֆին վճարել «կայսերական հարկը» և հնազանդվել Ջհանշահին: Համաձայնությունը կայացվում է. հարկը Զաքարիայի ձեռքով մուծվում է Ջհանշահի գանձարանը, Խլաթի պաշարումը վերացվում է և «ամենայն խառնիճաղանջ ժողովուրդն՝ գնայ և գտանիկ» ազատվում են «ի ձեռաց անօրինաց և ի դառն գերութենէ»:

Ստանձնելով և հաջողությամբ իրագործելով հաշտարար-դիվանագետի պատասխանատվությունները, Զաքարիան մեծ պատիվների է արժանանում Ջհանշահի և քուրդ ամիր Շարաֆի կողմից, աճում է նրա հեղինակությունը նաև որպես ամենայն հայոց կաթողիկոսի:

Այս տարիներին** Ջհանշահի դեմ Շիրազում ապստամբություն է բարձրացնում Փիր-Բուդաղ որդին, և նա ստիպված է լինում արշավել որդու դեմ: Այս արշավանքի մասին է, անշուշտ, ակնարկում խոջա Թումաշահը, երբ իր հիշատակարանում գրում է. «Եւ եղև կրկին անգամ գնայ Ջհանշայ փադշահին ի տունն Իրաղա, ի Շիրազ և ի Քրման» (հշտկ. N 221, էջ 175):

Փիր-Բուդաղը պարտություն է կրում և ուղարկվում Բաղդադ, կառավարչի պաշտոնով:

Ջհանշահի բացակայությունից օգտվելով, կենտրոնական Հայաստանում կրկին հայտնվում է Հասան-Ալին, որ նույն Թումաշահի հաղորդած տվյալի համաձայն «շրջէր թափառական զվերին կողմամբ գաւառին Արարատեան»: Նա, «հենգութեամբ չարախօսաց ոմանց» (ըստ Մ.

* Ի միջի այլոց, Մ. Չամչյանից սկսած պատմագրության մեջ տարածվել է այն սխալ տեսակետը, որ, իբր, Ջհանշահի ճակատակողն այս պատերազմում եղել է Աղկոյունլու Ջհանգիրը:

** Ըստ Ղադի Ահմադ ալ-Ղաֆֆարի ալ-Ղազվինու՝ 1460-1461 թթ. (տե՛ս V. Minorsky, նշվ. աշխ.), ըստ Մ. Չամչյանի՝ 1462 թվականին (տե՛ս «Պատմ. Հայոց», հ. Գ, էջ 505):

Օրմանյանի, այստեղ ակնարկված է էջմիածնի հոգևորականության Գրիգոր Ջալալբեգյանցի կուսակից խմբակցությունը), մտադրվում է «ըմբռնել զմեծ պատրիարքն զտէր Զաքարիայն և պահանջել ի նմանէ գանձս և ինչս»:

Լուր ստանալով այդ մասին, Զաքարիան, վերցնելով իր հետ Գրիգոր Լուսավորչի աջը և այլ սրբություններ, գաղտագողի ճանապարհ է ընկնում դեպի Աղթամար:

Բախտախնդիր մի ամիրզադայի հալածանքներից փախուստ տվող կաթողիկոսը, ոտք դնելով Վասպուրականի սահմանները, ջերմ ընդունելություն է գտնում հայ բնակչության կողմից:

Հասնելով Հուսկան որդի սուրբ Ստեփանոսի վանքը, որ գտնվում էր Աղթամարի հոգևոր իրավասության ներքո, Զաքարիան դուրս է գալիս ծպտյալ փախստականի իր վիճակից, իր ձեռքն է առնում հայ ժողովրդի որոշ խավերի պատկերացմամբ հայության մշակութային ու քաղաքական ինքնության սիմվոլը մարմնավորող Լուսավորչի աջը, վեր է պարզում մի ընտիր «խաչալամ», որի մի երեսին նկարված էր Քրիստոսի, իսկ մյուսին՝ Գր. Լուսավորչի, Տրդատ թագավորի և Հռիփսիմեի պատկերները, և բազմամարդ շքախմբով շարժվում է դեպի Աղթամար: Նրա հանդիսավոր ուղևորության մասին ուշագրավ մանրամասնություններ է գրանցել նույն խոջա Թումաշահ հիշատակագիրը: «Եւ եկ,- գրում է նա,- համբաւ գալոյ նորա՝ հանդերձ սուրբ աջովն և խաչալամովն, որ բարձրացեալ կայր ի ծայրս ձողոյ և խաչակի կառուցեալ ի գլուխ նորա. ընդ որ գրոհ տուեալ ամենայն բնակչաց գաւառացն ընդ որ գայր հայրապետն. և ամենեքեան ընդ յառաջ ընթանային խնկօք և մոմեղինօք և զենմամբ խոյոց և զուարակաց... Եկեալ հասն ի գաւառն Տոսպայ, և մտեալ ի քաղաքն Վան՝ բազում եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և բազմամբոխ ժողովրդօք, ձիօք և ձիաւորօք, և խաչալամն առաջի, և քահանայք յառաջ և յետոյ երգէին քաղցր եղանակօք, և այնպէս պերճ և փառաւոր եմուտ ի քաղաքն Վան» (հշտկ. N 221, էջ 175):

Օտար բռնապետական լծի տակ կեղեքվող ու պետականությունից զրկված հայ ժողովրդի կողմից այդ մի ցույց էր, որով նա դրսևորում էր իր նվիրվածությունը ազգային ավանդույթներին ու դժգոհությունն օտար տիրապետությունից:

Կաթողիկոսին Վանից Աղթամար ուղեկցելու դուրս եկավ հսկայական

բազմության, որի մեջ հատուկ խանդավառություն էին ցուցաբերում «ազատագունդ խոջայքն Վանայ՝ ձիօք և ձիաւորօք սպառազինեալք»: Ոստանի հայերը Զաքարիային դիմավորեցին ոչ պակաս շուքով, սակայն տեղի քուրդ ամիրի և մահմեդական մյուս իշխողների աչքում վտանգավոր երևաց հայ կաթողիկոսի բազմամարդ շքերթը և նրանք «խորհեցան խորհուրդ չար, զի զաղտագողի նենգեսցեն հովուապետին»: Զաքարիային այլ բան չէր մնում, քան առանց հապաղելու Աղթամար մտնելը: Եվ նա, օրհնելով իր ուղեկիցներին, 1461 թվականի դեկտեմբերի 11-ին «էառ զսուրբ աջն Լուսաւորչին և եմուտ ի նաւն և գնաց յաստուածարեան կղզին յԱղթամար, ի հայրենի ժառանգութիւն իւր»:

1463-1465 թթ. ընթացքում Ջհանշահը գտնվում էր Իրաքում, և պատերազմում էր իր Փիր-Բուդաղ որդու հետ, որին, ինչպես ասացինք, Շիրազից հետո կառավարիչ էր կարգել Բաղդադում:

Փիր-Բուդաղը դիմադրում էր համառորեն:

Ջհանշահի այս արշավանքի մասին մեր հիշատակարաններում կան ուշադրության արժանի գրանցումներ: Այսպես, 1464 թվականին Արգելանի անապատում աշխատող Ղազար գրիչը հայտնում է, որ Ջհանշահը «բազում զաւրաւք պաշարեաց զքաղաքն Բաբելոն (իմա՛ Բաղդադ)» (հշտկ. N 264, էջ 218): 1465 թ. Վանում աշխատող Վարդան գրիչը գրում է, որ «այս Բ. (2) ամ է, որ նստեր է [Ջհանշահը] ի վերայ Բաղդատ քաղաքին և խսարեր է զորդին իւր զՓիր-Պուտախն» (հշտկ. N 286, էջ 234), իսկ Հովհաննես Մանդասարենց նշանավոր գրիչը, ըստ երևույթին նախորդ գրչից մի քանի ամիս հետո շարադրելով բազմաթիվ իր հիշատակարաններից մեկը, գրում է արդեն, որ «Յայսմ ամի սպան չարաչար Ջհանշահ փաղշահն զորդին իւր զՓիր-Պուտախ խանն ի Բաղդատ, և եկն ի Թավրէզ ի թախթն» (հշտկ. N 287, էջ 236): Նույնն է կրկնում նաև մի ժամանակագրության անհայտ հեղինակ. «ՋԺԴ (1465) թվին Ջհանշէն (ձեռագրում Ջաղաթէն-Լ. Խ.) զՓիր-Պուտաղն սպանեց»: (Մժ, I, էջ 143): «Եւ Փիր-Պուտախն գնաց թագաւորել Պաղտատայ, զիւրեանց էր, և հայրն հակառակեցօ ի հետ որդոյն, և գնաց բազում զօրօք ի վերայ որդուն և խսարեց Բ (2) ամ և բազում հնարիւք նազմով և այլ բանիւ և ոչ կարաց առնուլ. յետո կամօ երայ զդուռն քաղաքին և սուտ երդմամբ սպանին եղբայրքն իւր զինքն և բարձօ ի կենաց» (Մժ, II, էջ 152):

Փիր-Բուդաղի ապստամբությունը ճնշելուց հետո Ջհանշահը նախապատրաստվեց Աղ-կոյունլուների դեմ վճռական մարտի, հույս ունենալով վերջնական պարտության մատնել Կարա-կոյունլուների մշտական ու անհանգիստ այդ ախոյաններին:

Թուրքմենական այդ երկու ազգակից ցեղերը Փոքր Ասիա էին գաղթել դեռևս ԺԳ դարում, իլխան Արղունի գահակալության տարիներին (1284-1291), և բնակություն հաստատել Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքներում (տե՛ս А. Мюллер, История ислама, III, СПб, 1896, էջ 313-314): ԺԴ դարի երկրորդ կեսերին Աղ-կոյունլուները իշխում էին Պատմական Հայաստանի մի ընդարձակ մասի վրա՝ Ամիդից մինչև Սեբաստիա: Սակայն Փոքր Ասիայի պատմական թատերաբեմի վրա ակտիվ դեր սկսեցին կատարել նրանք ԺԵ դարի սկզբներին, Լանկ-Թամուրի արշավանքներից հետո: Նույն դարի 20-ական թվականներից Աղ-կոյունլուների ու Կարա-կոյունլուների միջև ծայր են առնում ռազմական բախումներ ու գոտեմարտեր՝ բովանդակ Հայաստանի վրա իրենց տիրապետությունը տարածելու համար: Ըստ որում, Աղ-կոյունլուները Կարա-կոյունլուների դեմ դուրս էին գալիս միշտ թամուրյանների հետ դաշնակցած և հարվածում էին իրենց ախոյաններին թիկունքից:

Ջհանշահի արևելյան հաջող արշավանքներով, ինչպես տեսանք, Թամուրյանների վտանգը Կարա-կոյունլուների համար վերացավ, բայց այդ ժամանակ արդեն Աղ-կոյունլուները ռազմական մեծ ուժ ունեին ու կարող էին գործել նույնիսկ առանց դաշնակիցների:

1454 թվականին, երբ Ջհանշահը նվաճումներ էր կատարում արևելքում և գրավել էր «զՇիրազ, և զԽորասան, և զայլ բազում քաղաքս և զերկիրս յաշխարհէն Ջաղաթայից», Վանա լճի հյուսիսային շրջանների վրա արշավեց Աղ-կոյունլու Ուզուն-Հասանը: Այդ շրջանների բնակչության համար ստեղծվեց ծանր կացություն, շատերը սպանվեցին, գերվեցին ու կողոպտվեցին: Արճեշցի գրիչ Հովհաննես Մանդասարենցը շատերի հետ միասին ստիպված էր թողնել իր տունն ու տեղը և ապաստարվել անմատույց Լիմ կղզում: Արճեշում սկսած և Լիմում ավարտած Ավետարանի հիշատակարանում, ականատես գրիչը Ուզուն-Հասանի վերոհիշյալ արշավանքի մասին այսպիսի տողեր է գրանցել. «Բայց մեք կամք ի յահ և ի փախ, զի զաւրքն Ուզուն-Հասանի հանապազ կու գերեն զմեզ և թալանեն: Ի յայսմ տառա-

պանս կալով գրեցի զսուրբ Աւետարանս ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ և ի կղզիս, որ կոչի Լիմն» (հիշատ. N 52, էջ 41):

Նույն այս արշավանքի մասին հետաքրքրական տվյալներ է հաղորդում նաև Սուխարա վանքում աշխատող Իգնատիոս գրիչը: «Վասն վրդովման և տատանեալ դառն ժամանակիս,- գրում է նա,- ի յահէ Թշնամեաց փախեան երկիր, և ամենք ամրացան յանապատ կղզիս Լիմն կոչեցեալ և շատք ցրուեցան յերկիր Ամկու, և վասն ծովացեալ մեղաց մերոց անկան ի ձեռս հեծելի՝ թալանեցան, կողոպտեցան, շատ որ սպանան...» (հիշատ. N 51, էջ 39):

Հաջորդ տարիներին բուռն թափով շարունակվում է Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների հայ ժողովրդի համար ավերարար մրցակցությունը: Ըստ որում, ինչպես տեսանք, Ջհանշահը, զինական ուժեր տրամադրելով ու սիրաշահելով Ուզուն-Հասանի Ջհանգիր եղբորը՝ բորբոքում է Աղ-կոյունլու եղբայրների գահակալական գզվառը, իսկ Ուզուն-Հասանը, իր հերթին, Ջհանշահի դեմ պայքարի է գրգռում Բաղեշի քուրդ ամիրներին ու գահը տենչացող անհնազանդ ամիրզադաներին*:

Եվ ահա, գրավելով Պարսկական Իրաքն ու Ֆարսիստանը և վերջ տալով ներքին գժտություններին, Ջհանշահը մեծ արշավանք է կազմակերպում Աղ-կոյունլուների դեմ: Նախորդ տարիներին հաջող պատերազմներ մղած Ջհանշահը չէր կասկածում պատերազմի հաջող վախճանի վրա և նպատակ էր դրել ոչ միայն գրավել Աղ-կոյունլուների հիմնական ամրությունն Ամիդը, այլև հասնել մինչև Դամասկոս:

Իր գլխավոր զորահրամանատար Ղասիմ Փարվանաչու հետ միասին Ջհանշահը «բազում զորօք» դուրս եկավ Թավրիզից 1467 թվականի մայիսին: Սակայն նրա զորքերը չեն շտապում թշնամու սահմաններին մոտենալ, այլ սկսում են կողոպտել ու ավերել ճանապարհին ընկած հայկական շրջաններն ու գյուղերը: Ի վերջո, նոյեմբերի սկզբներին, Կարա-

---

* Ղադի Ահմադ ալ-Ղաֆֆարի ալ-Ղազվինին կոմպիլյատոր հեղինակը տեղեկություն ունի այն մասին, որ Հասան-Ալին, հոր դեմ բարձրացրած ապստամբության պարտությունից հետո (1457 թ.), ապաստան էր գտել Ուզուն-Հասանի մոտ՝ Դիարբեքիրում, այնուհետև միացել էր Բաղդադում ապստամբած իր Փիր-Բուդաղ եղբորը (տե՛ս V. Minorsky, նշվ. աշխ.):

կոյունլուների մեծ բանակը հասնում է Ճապաղջուր, բայց Ուզուն-Հասանը բռնում է նրանց առաջխաղացման ճանապարհը, պաշտպանություն կազմակերպելով բարձր լեռների վրա:

Ջհանշահը բանակ է դնում Սանճախ կոչվող վայրում: Քոչվոր ավագանիների ռազմական խորհուրդը որոշում է շարժվել դեպի Աղճադալա ձմեռելու համար՝ գարնանը, Երզնկայի վրայով, պատերազմական գործողությունները վերսկսելու մտադրությամբ: Հիմնական բանակը ճանապարհելով, Ջհանշահը «ԲՌ. (2000) պարանօք եկաց անդ (ի Սանճախ) աւուրս Գ. (3) յուտել և ի խմել, զի վաղվին հասանէ զօրացն»: Սակայն Ուզուն-Հասանը, որն ուշադրությամբ հետևում էր թշնամի բանակի շարժումներին, տասը հազարանոց զորախմբով, անսպասելիորեն հարձակվեց Ջհանշահի կերուխումից հանգստացող թիկնապահ զորքի վրա: Կարա-կոյունլուները նույնիսկ չկարողացան ուշքի գալ անակնկալից և դիմադրել հարձակվողներին: Եվ այսպես, 1467 թվականի նոյեմբերի 10-ին, անփառունակ իր վախճանը գտավ 70-ամյա Ջհանշահը: «ՋԺԶ (1467) թվին Ջհանշէն (ձեռագրում Ջադաթէն – Լ. Խ.) սպանաւ: Հասան Ալին եկաւ ի Մակու. է (7) ամիս թագաւորեաց՝ ի Նաւասարդէն մինչ ի Վարդավառն: Հասան պէկն սպանեց զՀասան Ալին, ինքն թագաւորեաց ի Թարվէզ Թ (9) տարի» (Մժ. I, էջ 143): Այս սպանդի ժամանակ զոհվեցին բազմաթիվ Կարա-կոյունլու նշանավոր «պարոնայք և իշխանք»: Ջհանշահի որդիներից երկուսը գերվեցին. մեկը գլխատվեց, իսկ մյուսը կուրացվեց Ուզուն-Հասանի հրամանով*:

---

* Հենվելով պարսկալեզու աղբյուրների վրա, Ի. Պետրուշևսկին Ջհանշահի վերջին այս արշավանքի ու պարտության պատմությունը շարադրում է այսպես. «1467 թ. մայիսին Ջհանշահը, իր գլխավոր ամիր Ղասիմ Փարվանաչու հետ միասին, մեծ զորքով արշավանքի դուրս եկավ Ուզուն-Հասանի դեմ: Հարավային Հայաստանի Մուշի հարթավայրում Ջհանշահի զորքը պարտություն կրեց Աղ-կոյունլուներից և տվեց մեծ կորուստներ: Այդ ստիպեց Ջհանշահին գումարել քոչվոր ռազմական ավագանիների ժողով, որտեղ նահանջի որոշում կայացվեց...: Աղ-կոյունլուների բանակը սկսեց հետապնդել Հարավային Հայաստանից Ադրբեջան նահանջող Ջհանշահի զորքին: Ճապաղջրի մոտ Ուզուն-Հասանին լուր տվեցին, որ Ջհանշահը, ճանապարհելով իր որդուն և գլխավոր ուժերը, ինքը, փոքրաթիվ վերջապահ ջոկատով, կանգ է առել հանգստի լեռնային մի կիրճում: Ուզուն-Հասանը անակնկալ հարձակվեց նրա վրա գիշերով» և այլն (Տե՛ս И. П. Петрушевский, "Го-

Ջհանշահի վերջին այս արշավանքի ու սպանության մասին մեծ հետաքրքրություն ներկայացնող գրանցումներ են արել բազմաթիվ հիշատակագիրներ ու ժամանակագիրներ: Հատկապես ուշագրավ են անանուն ժամանակագրի և Մկրտիչ Խիզանցի ու Մովսես Արծկեցի գրիչների հաղորդած տվյալները:

«Ի ՋԺԷ. (պետք է լինի ՋԺԶ=1467). երէկ Ջիհանշան ի վերայ Հասան պակին և հասեալ մինչ ի Ճապաղջուր. և Հասան պակն էառ զառաջքն ի հեռաստ բարձր լերամբ, և նա եկ ի տեղին որ կոչի Սանճախ. և զորսն առաքեաց դէպ Աղջախալան, և ինքն ԲՌ. (200) պարաւնօք եկաց անդ աւուրս Գ. (3) յուտել և ի խմել, զի վազին հասանէ զօրացն և եղանէ լեզնկան և անցի գալ ի վերայ Հասան պակին: Եւ Հասան պակն իմացեալ զչար խորհուրդ նորա ԺՌ.-ո (իմա՛ 10.000-ու) բօլորեց զՃիհանշան և եղև կռիւ, և բռնեցին զՃիհանշան Բ. (2) որդովն, և սպանին ի միում աւուր ԳՌ. (3000) հոգի պարոնայք և իշխանք, ազատք և ռամիկք, և զառ և զԹալանն զոր արարին ո՞վ կարէ ասել» (Մժ, II, էջ 152-153, հմմտ. նաև Մժ, I, էջ 168 և Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, չորրորդ հատոր, Երուսաղէմ, 1956, էջ 60):

Ոչ պակաս արժեք է ներկայացնում Մկրտիչ Խիզանցու հիշատակարանի ստորև բերվող հատվածը. «Ի Թվ. Հայոց Ջ. և ԺԷ. (1468) ... եկ Ջհանշայ զանն ի քաղաքէն Շահաստանայ, որ է Թավրէզ բազում հէնիւ և զարաւք, և կամէր երթալ ի վերայ քաղաքին Ամթայ, և այլ ի վայր՝ մինչ ի Դամասկոս: Եւ ի յերթալն ի ճանապարհին բազումք զոզային ի յանէ սորայ, զի այս Ջհանշայս բազում գաւառաց և քաղաքաց տիրէր...: Արդ, ի չուել

сударства Азербайджана в XV в." (Сборник статей по истории Азербайджана, выпуск I, Баку, 1949, էջ 158):

[1] Մեր կարծիքով, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք անդրադառնում են Ջհանշահի այս արշավանքին, ինչպես նաև անանուն մի ժամանակագիր (տե՛ս Մժ, I, 168 և Մժ, II, 152-153) դեպքերը պատմում են ավելի մանրամասնորեն ու ճշմարտացի: Հետևապես չի կարելի ճիշտ համարել Ի. Պետրուշևսկու հաղորդած այն տվյալը, թե իբր, Ջհանշահի զորքերը Մշո դաշտում խոշոր պարտություն են կրել Աղ-կոյունլուներից, որից հետո էլ որոշել են նահանջել Ատրպատական: Պարզ է, որ Մշո դաշտից Ատրպատական նահանջել ցանկացող զորքերը, ինչ ճանապարհ էլ նրանք ընտրած լինեին, չէին կարող հայտնվել Ճապաղջրում:

ճանապարհի սորա բազում գաւառք աւերեցան և բնակիչք գաւառացն փախչէին ի յայրս և ի ծերպս վիմաց, սովալլուկ մեռանէին: Եւ եկեալ եհաս ի գաւառն Տարաւնոյ՝ ի դաշտն Մշոյ. և անդ բազում աւերս արարին զաւրքն նորա, զի բազում էին և անհամար և ոչ ճանաչէին զաստուած, և ասէին, թէ ի՞նչ է քրիստոնեայն, և քրիստոնէին աչք և բերան կա՞յ: Եւ դիմեցին ի վանքն Ղազարու, և զվարդապետն խորովեցին ի կրակն և նահատակեցին, և անցին գնացին: Եւ ի ճանապարհին իջավանեցան, և զաւրքն ի յիրմէն ի բաց արձակեաց, և անաւ և անկասկած գոլով ի Թշնամեաց, ասելով, թե ոչ ոք է ի վերայ երկրի, որ կարէ կալ առաջի իմ և սուր քաշել ի յերեսս իմ: Զոր ասդ արարեալ Թշնամեացն՝ դիմեցին ի վերայ նորա, և առին յաւարի զինչսն, և զնա սպանին և զորդիս նորա: Եւ ի սպանմանէ սորա բազում աւերք եղեն յամենայն տեղիս, եւ առաւել ի յերկիրս Հայոց. և բազում եկեղեցիք աւերեցան և բազում քրիստոնեայք սրով և սովով մեռան» (հշտկ. N 345, էջ 271):

Այս և հաջորդ տարիների քաղաքական անցուդարձերի ճշմարտացի նկարագիրը, ինչպես ասացինք, տրված է նաև Մովսես Արծկեցու չափածո հիշատակարանում, որը հորինված է Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից»-ի նմանողությամբ:

Սկսվում է այսպես.

«Յինն հարիւր Հայոց Թվական
Ընդ որ ԺԶ. (16) այլ յաւելան (=1467)
Այն մեծ արքայն արևելեան՝
Խաղաղարարըն Ջըհանշայն,
Յամէն դիմաց եհան հրաման
Որ զօրք բազում ժողովեցան,
Եւ էջ նոքօք զԱտրեատան՝
Առ ի յաղթել զմիր Հասանն:
Իսկ Հասան բէկ քաջ փահլուանն
Զօրօքն իւրով որ գումարան,
Ի քուն եգիտ ըզՋըհանշայն,
Զօրացն ի զատ, անպահապան.
Որ և սպան անդէն ըզայն

Եւ զՄուհամատ որդի նորայն»
(հշտկ. N 424, էջ 333):

Կարա-կոյունլուների զինական ուժերը, ասացինք, որ հեռու էին գտնվում Ջհանշահի համար կորստաբեր ճակատամարտի վայրից և չէին կորցրել իրենց մարտունակությունը: «Իսկ չար հեծեալքն, որ չեւ դարձան՝ առին բազում առ և թաղթան»,- հայտնում է նրանց մասին Մովսես Արծկեցին (նույն տեղում):

Սակայն Կարա-կոյունլուների պետության մեջ հակասություններն այնքան էին սրվել ու քոչվոր ավագանու բարքերն այն աստիճանի քայքայվել, որ մի բռնակալի սպանությունն իսկ բավական եղավ իր բաղկացուցիչ մասերով կենտրոնի հետ չշաղկապված, ուժի ու ահաբեկման ճանապարհով հնազանդության մեջ պահվող տարացեղ երկրների ու ազգությունների անջատման և հսկայածավալ այդ պետության կատաստրոֆիկ անկման համար:

Ջհանշահը նորանոր նվաճումներ էր կատարում Ատրպատականի և Հայաստանի գյուղացիության շահագործումն ու կազմակերպված կողոպուտը հրեշավոր չափերի հասցնելու ճանապարհով:

Ժամանակակից բազմաթիվ հիշատակագիրներ սրտաճմլիկ նկարագրություններ են թողել Ջհանշահի տիրապետության տարիներին ժողովրդի կրած տառապանքների մասին:

Գրիգոր գրիչը 1455 թվականին Հաղբատում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում, Ջհանշահի տիրապետությունը բնորոշում է հետևյալ տողերով. «Ի դառնութեան տաճկաց Ջիհանշահի, ի դառն և ի նեղ ժամանակիս, յիշխանութեան այլազգեան սեռի, որ յահէ և յերկեղէ նոցա մաշեալք և հալածական լինէաք, փախստեալք և մոլորեալք, գերեալք և տառապեալք, ի յառաւել խստութենէ հարկապահանջութեան և ի հոլովութենէ գերելոցն և ի չքաւորութենէ ընչից ոչ կարէր օգնել եղբայր եղբօր և ոչ որդիք ազգս ազգիս... (հշտկ. N 66, էջ 51): Ճիշտ տասն տարի այս գրանցումից հետո նույնպիսի գույներով է նկարագրում ժողովրդի վիճակը Հավուց-թառում մի Ճաշոց ընդօրինակած Ստեփանոս գրիչը: Նա հայտնում է, որ Ջհանշահը 7 տարի է, ինչ մտել է Խորասան և այդ տարիներին «զաշխարհս սասանուն և երերուն պահեաց՝ ի հարկապահանջութիւն, ի տառապանս և ի չարչարանս, այնպէս և հայր զորդիս ուրանային» (հշտկ. N 258, էջ 214):

Այս Ստեփանոսին ձայնակցում է Դարանաղյաց գավառի Ավագ վանքում աշխատող մի այլ Ստեփանոս: Իր ապրած ժամանակը «դառն ու դժար» որակելուց հետո նա հայտնում է, որ «ազգս տաճկաց... չար դարձան քան զգազան և ծարաւիք են քրիստոնէից արեան, և նոր ի նորոյ չար յայտնեն քրիստոնէից, զի զխարաճն Դ. (4) ֆլորի արարին, և կապուտ արկին ի գլուխ քրիստոնէից, և զմեռեալն ի քաշ տան տանել, և այլ չարիք բազում խոկան և խորհեան ի վերա քրիստոնէից» (հշտկ. N 256, էջ 211):

Ժողովրդի տնտեսական ու իրավական վիճակի նմանօրինակ նկարագրություններ պահպանվել են նաև մի շարք այլ հիշատակարաններում (տե՛ս, օրինակ, Հովհաննես գրչի հիշատակարանը, շարադրված 1465 թ. Գեղարքունյաց գավառի Կած գյուղում և այլն):

Հարկային լծի ծանրացման, քրիստոնյա հպատակների նկատմամբ կրոնական ճնշման ու արհամարհական վերաբերմունքի այս տարիները միաժամանակ բնական արհավիրքների՝ սովի ու համաճարակների տարիներ էին:

Մելքիսեթ գրչի 1453 թվականին շարադրած հիշատակարանից տեղեկանում ենք, որ «յայսմ ամի մորեխ եղև և շատ աւերք էած ի տեղիս տեղիս» (հշտկ. N 42, էջ 33): Մորեխին հաջորդեց սովը. 1453 թվականը «սովեալլուկ տարի» կոչելով, մշեցի մի գրիչ հայտնում է, որ «սովն պատեալ էր զամենայն մարդ, ի մեծէ մինչև ի փոքր, որ չէ յիշելոյ զայն» (հշտկ. N 41, էջ 33):

1458 թվականին Հայաստանի մի շարք շրջաններում բռնկվում է համաճարակային ինչ-որ հիվանդություն «եկն յայսմ ամի մահ և կոտորեաց զբազումս, ի թուականիս մեր Ջէ.»,- գրում է այդ մասին բաղիշեցի մի գրիչ (հշտկ. N 136, էջ 101): Հովհաննես գրագրի ամուսին Թանսուխը և գեղարքունիկ զավակ Պաղտասարը զոհ են գնում այդ մահտարաժամին, անմխիթար ողբի մեջ թողնելով գրագրին (հշտկ. N 151, էջ 114):

1463 թվականին Տարոնում ու Բաղեշում հայտնվում է մորեխ ու մեծ վնասներ պատճառում: «Յայսմ ամի մորեխն երեկ և զաշխարհս ապականեաց»,- տեղեկացնում է Ստեփանոս գրիչը Տարոնի Եղրդուտ մենաստանում (հշտկ. N 236 էջ 194): Նրան լրացնում է որոշ մանրամասնություններով Բաղիշեցի Հովսեփ գրիչը. «... աստուած ի մեր մեղացն բարկացաւ և առաքեաց ի վերայ մեր մորեխ վնասակար, զոր ի տեղիս-տեղիս կերաւ զվաս-

տակն և դարձեալ ողորմութեամբն աստուծոյ վերացաւ և ամէն ի ծովն հեղձան» (հշատ. N 237, էջ 194):

Ըստ ինքյան հասկանալի է, որ տասնյակ տարիներ շարունակ բռնությունների ու ծանր հարկապահանջության տակ տառապող և հասարակական ու տարերային աղետների ենթակա ժողովուրդները բնավ շահագրգռված չպետք է լինեին Ջհանշահի պարտությունից ու սպանությունից հետո Կարա-կոյունլուների դինաստիայի կայունացմամբ:

Կարա-կոյունլուների նկատմամբ ժողովրդի տածած ատելության ու նրանց լծից ազատագրվելու բաղձանքի արտահայտություններ ենք գտնում բազմաթիվ հիշատակարանների մեջ: Այդպիսիներից է, օրինակ 1467 թվականին վանեցի Կարապետի շարադրած հիշատակարանը: Գրանցելով տեղեկություն այն մասին, որ Ջհանշահը «յայսմ ամի ելեալ բազում զօրօք և կամի պատերազմել ընդ Հասան-բէկին», գրիչն աղերսում է Աստծուն զորություն տալ Ուզուն-Հասանին և պարտության մատնել Ջհանշահին: Գրչի կարծիքով Ուզուն-Հասանը «պարիսպ ամուր է քրիստոնէից(հշատ. N 330, էջ 259):

Մի այլ գրիչ, մեծ հույսեր կապելով Ուզուն-Հասանի հաղթության հետ, ցնծությամբ արձանագրում է այսպիսի տողեր. «Ողորմածն Աստուած յետս դարձոյց և ույժ և զաւրութիւն ետ Հասան բակին, ... ի սուր սուսերի մատնե[ա]լ զինքն (զՋհանշահն) որդւովք և հեծելովք, և զքրիստոնէք ազատեց ի գերութենէ» (հշատ. N 348, էջ 273):

Մենք դեռ առիթ կունենանք տեսնելու, թե որքան անհիմն էին Ակ-կոյունլուների հաղթանակի հետ կապած հույսերը. այնուամենայնիվ այս տվյալը պերճախոս վկայում է այն մասին, որ Կարա-կոյունլուների ու Ակ-կոյունլուների վերջին գոտեմարտի ժամանակ հայ ժողովրդի լայն զանգվածների համակրությունը Ուզուն-Հասանի կողմն էր:

Անհրաժեշտ է նշել, որ Ուզուն-Հասանը, իր հաղթանակն ապահովելու համար երբեմն, իրոք, սիրաշահում էր հայ մեծատուններին, հովանավորում հայ եկեղեցու նշանավոր գործիչներին և ձգտում կարգավորել հարկահանության գործը:

Ջհանշահի սպանությունից հետո երկրում սկսվեցին գահակալական կռիվներ նրա որդի Հասան-Ալու և Սքանդարի որդի Հուսեյն-Ալու միջև: Այս պայքարից հաղթանակով դուրս եկավ Հասան-Ալին, որը, արագորեն

դատարկելով արքունի գանձարանը, դրամական առատ պարգևներով իր շուրջը համախմբեց հարյուր (ըստ Մովսես Արծկեցու՝ երկու հարյուր) հազարանոց մի բանակ, որի կազմում նշանակալից դեր էին կատարում քրդերը*:

Այս հսկայական բանակը սակայն չկարողացավ կասեցնել Ակ-կոյունլուների հաղթարշավը:

1468 թվականի գարնանը Ուզուն-հասանը երեսուն հազարանոց զորքով շարժվեց դեպի արևելք և բանակ դարկեց Խոյի դաշտում: Ճակատամարտը տեղի ունեցավ Մարանդի մոտ: Հասան-Ալու զորքի մեծ մասը լքեց իրեն և Ուզուն-Հասանը առանց դժվարության պարտության մատնեց Կարա-կոյունլու վերջին փադիշահին:

Քաղաքական այս անցուդարձերի մասին հակիրճ, բայց բովանդակալից տվյալներ է գրանցել մեզ հայտնի անանուն ժամանակագիրը, այդ անցքերին անդրադարձել են նաև մի շարք հիշատակագիրներ:

Ջհանշահի պարտության ու սպանության մասին տողերից հետո անանուն ժամանակագիրը գրում է. «Եւ ժամանակն այն ձմեռնամուտն էր, և ոչ կարաց գնալ Հասան պակն յարևելք, ապա գարուն եկ Հասան պակն ԼՌ. (30.000)-աւ և գնաց մինչ ի դաշտն Խոու և էառ զամենայն խաղաղութեամբ և սիրով: Եւ գայ որդի Ճիհանշին Ալի պակն ընդդէմ նորա ՃՌ. (100.000) մարդով ի Մարանդ և գիմամարտ և կոտրվի և փախչի, և Հասան պակն

* Հավանաբար Հասան-Ալու գործակիցներից էր նաև Ոստանի Քուրդ ամիր Եզդինշերը, որն այդ նույն ժամանակ ասպատակում էր Ռշտունիքը: 1469 թ. Գրիգոր ծաղկողը, Տալչող գյուղում շարադրած հիշատակարանում խոսում է այս ասպատակությունների ժամանակ իրենց կրած տառապանքների մասին: Նա գրում է. «Այն անիծեալ Եսափնշէրն եկեալ և քալան արար զերկիրս Ռշտունեաց, յաւուր տօնի ծննդեան Քրիստոսի...: Եւ մեք փախուցեալ դառն սրտիւ և լալօտ աչօք, ծիծաքարսխ և տառապանօք, անկեալ ի յօտար երկիր, ի տեղիս տեղիս»: Այնուհետև չափածո մի քանի տողով նա խնդրում է ձեռագրի պատվիրատուին, որ կարեկ ողորմի իրեն, որ ինքն ուտի և «ի գարուն եկէ բարով», իրենց ծանր վիճակի մասին նկարելով հետևյալ դիպուկ տողեր՝

«Թալնած ենք ու մէկ չունիմ,
Քաղցած ենք ու մէկ հացով» (հշատ. N 365, էջ 282-283):

անու զզօրս նորա և զքսիսն և մտանէ ի Թօրէզ (իմա՛ Թավրէզ)» (Մժ. II, էջ 153, Ն. Պողարեան, Մայր ցուցակ, չորրորդ հատոր, էջ 60, հմմտ. նաև Մժ. I, էջ 168):

Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել նաև Մովսես Արծկեցու չափածո հիշատակարանի համապատասխան տողերը.

«Հասան-Ալին, այն չար գազանն,
Որ ի Մակու էր ի դրնդան,
Ելեալ գնաց դէպ ի Ղափան,
Եւ կոտորեաց զհաղինայն,
Այնչափ երեւ պարգեւ մարդկան,
Վասն այն բազումք ժողովեցան,
Քան զերկերիւրքն հազարեան
Այլ աւելի անգ զումարան:
Իսկ ի գալ միւսն ամեան (= 1468)
Աղ-ղոյունլիքըն զօրացան,
Ելին յաշխարհըն Հայաստան,
Մինչ յճրասխայ յափըն հասան:
Հասան-Ալին՝ հեզ հիմարն այն
Մրտեալ նըստաւ ի կարճ միջայն,
Զօր զօրքն անզէն ապստամբեան,
'Ի ի Թշնամիքն եկեալ խառնան:
Հասան-Ալեանքըն զարհուրեան
'Ի ի բանակէն ելեալ փախեան,
Զօր և եկեալ սուլտան Հասանն
Միացեալքն անթիւ հեծանողեցան,
Նստեալ ի Թաղթըն Շահաստան
Զաշխարհս էած իւրն հուան,
Երկիր բոլոր խաղաղացան,
Որպէս ի մօր գիրկըն տղայն»

(Հշտկ. N 424, էջ 333-334: Հմմտ. նաև հշտկ. N 366, էջ 283):

Հասան-Ալին, յուրայինների հետ միասին մազապուրծ ճողոպրում և ապաստան է գտնում Թամուրյան սուլթան Աբու-Սայիդի (1452-1469) մոտ:

Աբու-Սայիդը պատրաստություններ է տեսնում Ուզուն-Հասանի դեմ ելնելու, բայց Ատրպատականն է մտնում մեծ ուշացումով, 1468 թվականի աշնանը: Թամուրյանների բանակը սովորած էր մտածել ձմեռելու մասին. սկզբից նրանք բանակ են դրվում Ղարաբաղում, ապա անցնում Մուղան ու Կասպից ծովի ափերը: Աբու-Սայիդը հույս ուներ, որ Թամուրյանների հին դաշնակից շիրվանշահերը ծովային ճանապարհով կմատակարարեն իր բանակին անհրաժեշտ անդամթերք: Սակայն շիրվանշահ Ֆարուխ-Յասարը (1462-1500), տեսնելով, որ ուժերի գերակշռությունը Ուզուն-Հասանի կողմն է, լքում է իր դաշնակցին: Եվ այսպես, քաղցից ուժասպառ եղած Թամուրյան բանակը, 1469 թվականի ձմռանը, բնաջնջվում է Աղ-կոյունլուների, Շիրվանշահի և Սեֆյան շեխերի միացյալ զորքերի կողմից (И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 169-171):*

Ժամանակակիցների վրա մեծ ազդեցություն գործեցին Ուզուն-Հասանի տարած փայլուն հաղթանակները, և մեր հիշատակագիրներից շատերը զարմանքի արտահայտություններով լի տողեր են գրանցել այդ առթիվ:

Այսպես, Հովհաննես Մանկասարենցը, 1469 թվականին շարադրած իր մի հիշատակարանում հայտնում է, որ Ուզուն-Հասանը «կալաւ Ա. տարի Գ. փաթշահ կորոյս՝ զօրօք և զաւակօք՝ զՋհանշահն, զՀասան-Ալի և զսուլտան Բուսաիտն. և իշխեաց ի Շամայ գանէն մինչև Խորասան» (Հշտկ. N 363, էջ

---

* Ի. Պետրուշևսկին, հենվելով պարսկալեզու աղբյուրների վրա, այս դեպքերը պատմում է փոքր-ինչ այլ կերպ: Ըստ նրա, Աբու-Սայիդը պատրաստություններ է տեսնում Ուզուն-Հասանի դեմ ելնելու Ջհանշահի պարտության ու սպանության լուրը ուշացումով ստանալուց անմիջապես հետո, սակայն մինչ պատրաստություններ կտեսներ աշխատանքը սկսելը՝ Ուզուն-Հասանը պարտության է մատնում նաև Հասան-Ալուն (տե՛ս И. Петрушевский,, նշվ. աշխ., էջ 169):
Մենք առաջնորդվեցինք Մովսես Արծկեցու հիշատակարանի տվյալներով, որտեղ գրված է.

«Հասան-Ալին, իւրքն ամենայն
Փախեալ հասին ի Զագաթայն,
Ջհուայինն առեալ եկան
Եւ զբասատուն որդին լըման» (Հշտկ. N 424, էջ 334):

281)։ Նույն թվականին Մոկքի Փասավանք գյուղում աշխատող Իսրայել գրչի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ուզուն-Հասանը «ի Հալպայ մինչև ի տունն Սմրղնդայ էառ և հարկատու արար» (հշտկ. N 364, էջ 281)։ Հաջորդ՝ 1470 թվականին Հակոբ Խարբերդցին, անդրադառնալով նույն դեպքերին, հայտնում է, որ Ուզուն-Հասանը «տիրեաց է ի Բաբելոնէ մինչ ի Շիրազ քաղաք և ի Տրապիզոն, զոր բաղում քաջութիւն արարեալ ի բաղում տեղիս, և ի միում ամի Գ. ղան յաղթեաց և սպան զնոսա՝ զՃիհան-շայն, և զորդիքն իւր, և զՊուսայիտ ղանն, և էառ զնոցա տեղիքն և զամրոցքն» (հշտկ. N 368, էջ 297) և այլն։

Այսպիսով, մեկ տարի ու մի քանի ամիսների ընթացքում մղած հաղթական պատերազմներով Ուզուն-Հասանը տապալեց Կարա-կոյունլուների դինաստիան և Աղ-կոյունլուների տիրապետությունը հաստատեց հսկայածավալ մի պետության վրա, որի կազմի մեջ էին մտնում մի շարք երկրներ՝ Հայաստանը, Ղարաբաղը (մինչև Կուր գետ), հարավային Ադրբեջանը (բացի Արդաբիլից), Քրդստանը, Դիարբեքիրը, Արաբական Իրաքը, Պարսկական Իրաքը, Լուրիստանը, Ֆարսը, Քրմանը։

Բ

Ուզուն-Հասանը, ժամանակակիցների վկայությամբ, քաղաքական խոշոր գործիչ էր։ Ի տարբերություն քոչվոր ցեղերի մյուս պետերի, որոնք սովորաբար մտահոգված էին լինում միայն նվաճված երկրների ու ժողովուրդների կողոպուտով, նա քաջ ըմբռնում էր իր տիրապետության տակ ընկած երկրների քայքայված տնտեսությունը վերականգնելու կարևորությունը՝ պետական գանձարանը լցնելու համար։ Նա միաժամանակ ձգտում էր նաև իր կողմը գրավել նորաստեղծ կայսրության մեջ բնակվող նստակյաց ժողովուրդներին։ Հպատակներից հարկերի գանձման գործը կարգավորելու, հարկահանության ժամանակ ֆեոդալների ու պետական պաշտոնյաների անսանձ չարաշահումների առաջն առնելու նպատակով, Ուզուն-Հասանը հրատարակեց հարկերի չափը սահմանող և հարկահանման սկզբունքները նշող օրենքների «Կանուննամե» կոչվող ժողովածուն, որը երկար ժամանակ (մինչև ԺԶ դարի վերջը) կիրառության մեջ էր Իրանում և Օսմանյան կայսրության արևելյան երկրամասերում։

Այս միջոցառումները սակայն տևական արդյունք չտվեցին և հայա-

տակ ժողովուրդների վիճակի մեջ էական բարելավում տեղի չունեցավ։ Նշանակալից փոփոխություն տեղի չունեցավ նաև հայ ժողովրդի իրավական գոյավիճակի մեջ։ Ուզուն-Հասանը շարունակեց կրոնական անհանդուրժողականության տրադիցիոն քաղաքականությունը, սահմանեց քրիստոնյաներին տարբերակելու վիրավորական նշան, արգելեց կոչնակումը եկեղեցիներից և այլն։

Այս մասին 1470 թվականին կարևոր տվյալներ է հաղորդում Վերին-Նորավանքում աշխատող Հովհաննես գրիչը. նա գրում է. «Քանզի եղև այսմ ժամանակի հարկապահանջութիւն ի տաճկաց. քանզի եկն Ուզուն-Հասանն և էսպան զՋհանշէն՝ որդի Ղարա-Ուսուֆին և զորդիքն իւր, և նստաւ ի թախտն նորա, և եղև թապութիւն յոյժ և հալածումն քրիստոնէից, և խափանեցին զհնչումն զանգակին, և քրիստոնեայք նշանաւ շրջէին» (հշտկ. N 382, էջ 299)։

Ավելի պերճախոս է 1476 թվականին մի Տաղարան ընդօրինակած Ստեփանոս Ձմշկածագեցի գրիչը, որը շարադրել է պատմական հարուստ բովանդակությամբ չափածո մի հիշատակարան*։

Հայ ժողովրդի տնտեսական և իրավական ծանր վիճակը բացատրելով հայերի իսկ գործած «մեղքերով», մեր բանաստեղծ-հիշատակագիրը հաղորդում է այսպիսի տվյալներ.

«Հարկապահանջն յամէն տեղի
Քաշէ ծեծէ զազգըս Արամի.
Խընդրէ արծաթ 'ւ ընտիր ոսկի,
Յայնմ որ չունի փող պըղնձի։
Կապուտ նշան եդ քրիստոնեայ,
Զի բաժանին յանօրինաց.

* Հիշատակարանը, թերի լինելով, չի պահպանել գրչի անունը, սակայն կարելի է չտարակուսել, որ նրա հեղինակը նշանավոր ռաբունապետ Հովհաննես Համշենցու աշակերտ Ստեփանոս Ձմշկածագեցին է։ Բանաստեղծական շնորհով օժտված այս գրիչը 1464 թ. Ավագ վանքում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում (տե՛ս հշտկ. N 256, էջ 206-212 և N 257, էջ 212-213), որոնց ընդարձակ մասերը նույնպես գրված են կանոնավոր չափածոյով, անդրադառնում է հարկապահանջության ծանրացման խնդրին, օգտագործելով նման արտահայտություններ։

Զմեռնայն ի ցած տանել աստ,
Զուտով չափել զկիսս մանկանց...:
Այլ և զհարումն զանգակի՝
Զգուշակ փողոյն Գաբրիէլի
Եւ խափանել յամէն տեղի՝
Գեղ 'ւ անապատ 'ւ ի քաղաքի:
(Հիշ. N 496, էջ 394):

1467 թվականից ծայր առած պատերազմների, խոշոր զորաշարժերի ու բնակչության տեղահանումների հետևանքով 1468 թվականին բռնկվեց ծանր համաճարակ, որը տեղատվության ու մակընթացության տատանումներով, տևեց երկար տարիներ, ավերիչ ազդեցություն գործելով Հայաստանի բոլոր շրջաններում: Այս մահտարաժամի մասին ողեկտուր տողեր են շարադրել բազմաթիվ հիշատակագիրներ՝ Ոստանում, Խարբերդում, Արճեշում, Աղթամարում, Տփղիսում և այլ վայրերում:

1470 թվականին Ոստանում շարադրված մի հիշատակարանում գրված է. «Այս երկու ամ է-, որ թանգութիւն, և ամենայն իրաց պակասութիւն, և մահտարաժամ յաշխարհէս չէ վերացեալ» (Հիշ. N 383, էջ 299): Նույն թվականին Խարբերդցի Հակոբ գրիչը հայտնում է, որ «աստուածասաստ բարկութեամբ իջաւ աշխարհ որ կոչի մահտարաժամ. և բոլոր տարի մի է, որ կայ ի մեր քաղաքս և յերկիրս և ոչ վերանայ: Եւ շատ դրունք փակեցան, և շատ հայր անորդի արար և շատ մայր անզաւակ, շատ եղբայր անեղբայր արար և շատ քոյր անեղբայր, շատ քահանայ անորդի մնաց և շատ ծծկան աղայ անհայր, անմայր մնաց» (Հիշ. N 380, էջ 297):*

*Արճիշեցի նշանավոր գրիչ Հովհաննես Մանգասարենցը 1470 թվականին զբաղված էր մի ճաշոցի ընդօրինակությամբ. այդ աշխատանքի ընթացքում համաճարակի զոհ դարձան նրա բոլոր որդիները՝ Մեհերը, Սահարբեկը և Մխիթարը**: Վերջինիս մահվան կապակցությամբ որդեկորույս հայրը ձեռագրի վերջում գրանցել է այսպիսի տողեր. «մահտարաժամ է անմեղ տղայոցս, աչքս կուրացել է ի բազում լալոյս. մէջքս կոտրել է, ձեռս թուլացել է, զի իմ մէկ որդին Մխիթար զողորմելի հայրս սևեց յայս աւուրքս և ես մնացի անմխիթար» (Հիշ. N 384, էջ 300):*

Մահվան այս համաճարակի մասին խոսում են նաև Հայրապետ գրիչը Աղթամարում (1470 և 1471 թթ.), Աստվածատուր գրիչը Տփղիսում (1474 թ.) և, կրկին անգամ, Հովհաննես Մանգասարենցը Արճեշում (1479 թ.) (տե՛ս Հիշ. N 386, էջ 303, N 393, էջ 312, N 456, էջ 362, N 554, էջ 437): Վերջինս նույնիսկ նկարագրում է հիվանդության ընթացքը և տարաբախտ ծնողների հոգեկան տվայտանքները, հիշելով անշուշտ իր զավակների կսկծալի մահը:

Դառնանք կրկին քաղաքական անցուդարձերի շարադրմանը:

Պարտության մատնելով Թամուրյաններին, Ուզուն-Հասանը սկսեց ամրապնդել իր նվաճումները երկրի ներսում, հնազանդեցնել ու ինքնիշխանությունից զրկել բոլոր այն կիսանկախ ֆեոդալ տիրակալներին, որոնք գործակցել էին իր թշնամիներին և կամ կենտրոնական իշխանությանը չենթարկվելու նշաններ էին ցույց տալիս:

Հիմնական հարվածն ուղղվեց Բաղեշի քրդական ամիրության դեմ: Այդ մասին Մովսես Արծկեցին գրում է.

«Իսկ յանցանելն երրորդ ամեան,
Որ և զթաղթն ինքեանք կալան (իմա՝ 1470 թ.)
Հասան փադշահըն մեծ սուլտան
Զօրս առաքեաց ի Քրդստան»:

Այս արշավանքը նշանակալից արդյունք չտվեց: Ընդհակառակը, «մեծ զորավար» Սուլեյման-բեկ Բիժան-օղլու գլխավորած բանակը, երկու ամիս անարդյուն պաշարելով Բաղեշը, ստիպված է լինում վերադառնալ Վան՝ ձմեռելու: «Քանզի քրդերըն զօրացան կարաւանել զնա կամեցան», - ասում է Մովսես Արծկեցին:

1471 թվականին արշավանքը վերսկսվում է ավելի խոշոր զինական

* «Ի թվին ՋԺԸ (1469) մահ անկաւ յամենայն աշխարհ առաւել ի Մերտին: Նաղաշ վարդապետն ողբ ասաց» (Մժ., I, էջ 168):

** Հիշատակարանից դժվար է լինում որոշակի պարզել, թե «Մխիթար»-ը Հովհաննես Մանգասարենցի համաճարակին զոհ դարձած երրորդ որդու անունն է: Կարելի է կարծել նաև, որ այդ (Մխիթար) բառը վերաբերում է Սահարբեկին, որը միակ որդին լինելով ի մխիթարություն հոր, նույնպես մահացավ, անմխիթար թողնելով նրան:

ուժերով, Ուզուն-Հասանի նշանավոր երեք զորավարների՝ Սուֆի-Խալիլի, Սուլեյման Բիժան-օղլու և Բայանդուր-բեկի հրամանատարությամբ: Նույն հիշատակարանից տեղեկանում ենք, որ.

«Ի Մուշ գնաց Խալիլ իշխանն
Եւ ի Բաղէշ՝ քաջ Սուլէյմանն,
Եւ Բայանդուռ Ղօչ իմիրզայն՝
Կայաւ զբոլոր Խլաթայ թումանն»:

Սուֆի-Խալիլի դեմ Մուշում դուրս է գալիս Քարիմ աղան, որը մտադրվում է նրան հաղթելուց հետո «զքրիստոնեայքն զամենայն տանջել չարեօք զանազանեան»: Սակայն, ըստ Մովսես Արծկեցու, հայերի պաշտպան Մշո սուրբ Կարապետը, որին նա անվանում է «Թագաւոր Տարօնեան»

«Եհար, վանեաց զՔարիմ աղայն
Եւ զզօրս նորա զամենեսեան,
Զի շատք ի ձիւնքն մրսեցան,
'Ի այլքն սրոյ ճարակ եղան»:

Բայանդուր բեկը վեց ամիս պաշարելուց հետո գրավում ու կործանում է Խլաթի բերդը և «զպահողքն բերդին այն սրար իւրեանքն զօրական» (հշտկ. N 424, էջ 334-336):

Բաղեշի պաշարումը երկարում է և տևում մեկ տարի հինգ ամիս. ի վերջո 1473 թվականին, Սուլեյմանին հաջողվում է գրավել բերդը և կոտորել քրդերին: «Զբազումս ի Մարաց ազգէն կոտորեաց և Հայոց ազգիս յոյժ ողորմած է, զի վերի ոչ առնէ»,- գրում է մի հիշատակագիր Բաղեշի գրավման կապակցությամբ (հշտկ. N 461, էջ 365):

Աղ-կոյունլուները հարձակվում են նաև Բուխտան երկրի (Բոհտանսու գետի հովիտը) քրդերի վրա, գրավում են «եօթն բերդն յերկրին Բուխտան», ապա, հետապնդելով քրդերին, մտնում ու գրավում են նաև Ջեզիրեն, հաղթական արշավից հետո վերադառնալով «ի գաւառն Բզնունեան, որ Արծկէ յորջորջի»:

Այս բոլորից հետո միայն Ուզուն-Հասանն իր զինական ողջ ուժը ուղղում է դեպի Արևմուտք՝ Օսմանյան թուրքերի դեմ:

Աղ-կոյունլուների ու թուրքերի միջև տեղի ունեցած բախումների ու

մարտերի մասին խոսելուց առաջ անհրաժեշտ է փոքր-ինչ կանգ առնել Օսմանյան կայսրության ստեղծման ու նվաճումների պատմության վրա, նկատի ունենալով այդ դեպքերի սերտ առնչությունը Արևմտյան Հայաստանի բնակչության պատմության հետ և աղետաբեր հետևանքները բովանդակ հայ ժողովրդի հետագա կյանքի համար:

Օսմանյան կայսրությունն իր անվանակոչումը ստացավ Օսման-բեյից, որը ԺԳ դարի վերջին տարիներին, որպես Իկոնիայի սելջուկյան սուլթանության վասալ, իշխում էր Փոքր Ասիայի արևմտյան ծայրամասի՝ Բյուզանդական բզկտված կայսրության սահմանակից այն շրջանին, որի մեջ էին գտնվում Բիլեջիկ և Էսկիշեհիր քաղաքները: 1299 թվականին, օգտվելով Իկոնիայի սուլթանության լիակատար քայքայումից, Օսմանն իրեն հայտարարեց անկախ տիրակալ: Սրա որդի Օրխան բեյի գահակալության ժամանակ, 1326 թվականին, օսմանցիները, գրավելով Բրուսա քաղաքը, դուրս եկան Միջերկրական ծովափ:

ԺԴ դարի հաջորդ տասնամյակներում և ԺԵ դարի առաջին կեսին՝ Մուրադ Ա (1359-1388), Բայազիտ Ա Իլդրում (1388-1403), Մահմադ Ա Չելեպի (1413-1421) և Մուրադ Բ Ղազի (1421-1451) սուլթանների գահակալության տարիներին օսմանցիները մի շարք հաղթանակներ տարան Փոքր Ասիայում ու Եվրոպայում: Իսկ Մահմադ Բ Ֆաթիհի (1451-1481) ժամանակ թուրքական սուրը, ամենուրեք սարսափ տարածելով, ճանապարհ հարթեց օսմանյան պետության առաջխաղացման համար և՛ Եվրոպայի, և՛ Ասիայի աշխարհամասերում:

1453 թվականին Կոստանդնուպոլսի գրավումով վերջ է տրվում կիսակործան Բյուզանդական կայսրության գոյությանը[*]: 1458 թվականին գրավվում է Աթենական հերցոգությունը. 1459 թվականին Սերբիան որպես փաշայություն միակցվում է Թուրքիային. 1460 թվականին ավարտվում է Մորեայի գրավումը: 1461 թվականին, արհամարհելով Ուզուն-Հասանի

[*] Կոստանդնուպոլսի գրավման աղետալի փաստին անդրադարձել են մեր հիշատակագիրներից մի քանիսը (տե՛ս, օրինակ, հշտկ. N 38, էջ 30-31), ինչպես նաև բանաստեղծներ Առաքել Բաղիշեցին և Աբրահամ Անկյուրացին, այդ առթիվ գրած իրենց ողբերում (տե՛ս Հ. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957):

միջամտությունը, որը Տրապիզոնյան կայսրությունը համարում էր Ակ-կոյունլուների հովանու տակ գտնվող մի երկիր, Մահմադ Բ-ն վերջ է տալիս նաև Բյուզանդական երբեմնի հզոր կայսրության վերջին այդ հիշատակին:

Տրապիզոնի գրավմանը ժամանակակից Սանփանոս գրիչը 1464 թ. Ավագ վանքում շարադրած իր հիշատակարանում հայտնում է, որ գրավելով քաղաքը, օսմանցիները «բաժանէին զորդիսն և զդստերս ի մարց և ի հարց և զեղբայր յեղբարց. և աղիողորմ էր լալն և աղաղակն, զոր ոչ կարեմ ընդ գրով արկանել, և զեկեղեցեացն և զսրբութեանցն վնասն որ եղեն ո՛վ կարէ թուել» (Հիշ. N 256, էջ 211):

Քիչ անց գրավվում են նաև Լեսոս կղզին, Բոսնիան և բազմաթիվ այլ երկրներ ու շրջաններ, իսկ 1471 թվականին նաև Ղարամանիան:

Այսպիսով, մի-երկու տասնամյակի ընթացքում թուրքերի ձեռքն են անցնում Սև և Միջերկրական ծովերի բոլոր այն նավահանգիստները, որոնք որպես առևտրի ու փոխանակության միջազգային նշանակություն ունեցող կետեր, կենսական նշանակություն ունեին ինչպես Ակ-կոյունլուների, այնպես էլ եվրոպական մի շարք պետությունների (հատկապես Վենետիկի) համար:

Բնական է, որ այսպիսի դրության հետ չէին հաշտվելու տուժած կողմերը: Վենետիկը փորձեց օսմանցիների դեմ ստեղծել եվրոպական ու արևելյան երկրների մի զինակցություն, սակայն այդ փորձը չպսակվեց հաջողությամբ՝ շահագրգռված կողմերի միջև սուր ներհակությունների առկայության հետևանքով:

1469 թվականին Ուզուն-Հասանն Իտալիա ուղարկեց լայն լիազորություններով օժտված մի դեսպանություն, որի կազմում կարևոր դեր էր կատարում հայ խոշոր առևտրական խոջա Միրաքը: Ուզուն-Հասանի դեսպանները հասան Վենետիկ և, ինչպես հաղորդում է իր ուղեգրության մեջ վենետիկյան դեսպան Կատերինո Զենոն, «մեծ ընծաներ [բերելով] իրենց տիրոջից, առաջարկում էին զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և [Եգիպտոսի] սուլթանի դեմ, պայմանով, որ վենետիկցիները չթերանան իրենց նավատորմով հարձակվելու երկու իշխանությունների վրա» (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ա, [illegible] Երևան, 1932, էջ 156):

բարը. Վենետիկից անցան Հռոմի պապի, ապա նաև Նեապոլի թագավորի մոտ, առաջարկելով նույնպիսի դաշինք:

Բանակցությունները ի վերջո ավարտվեցին հակաօսմանյան լիգայի ստեղծմամբ, որի կազմի մեջ էին մտնում եվրոպայում Վենետիկի հանրապետությունը, Պապը, Նեապոլի թագավորությունը և Հունգարիան, իսկ Ասիայում Ակ-կոյունլուների պետությունը, Ղարամանիան և Կիպրոսը:

Ուզուն-Հասանին օգնության խոստումներ շատ տրվեցին, սակայն եվրոպական դաշնակիցները չկարողացան Արևմուտքից հարձակվել թուրքերի վրա, ինչպես և, բոլոր ճանապարհները թուրքերի կողմից գրավված լինելով, անկարող գտնվեցին բավարար քանակությամբ հրետանի ու վառոդ ուղարկել: Պատերազմն սկսվելու ժամանակ ողջ Ղարամանիան գտնվում էր արդեն օսմանցիների ձեռքում: Այսպիսով, հակաօսմանյան լիգան ձևական բնույթ էր կրում, և Թուրքիայի դեմ պատերազմող միակ իրական ուժը Ակ-կոյունլուներն էին:

Ուզուն-Հասանի մեծ արշավանքը թուրքերի դեմ սկսվում է 1472 թվականին: Իր որդի Սուլթան-Խալիլին նշանակելով Շիրազի կառավարիչ և նրա վրա պարտականություն դնելով «պահել գլխավոր արևելքը»*, «Ուզուն-Հասանը գալիս է Տարոն, հիմնահատակ ավերում քրդերի ձեռքին գտնվող ինչ-որ բերդ (թերևս Մուշի բերդը) և վեզիր Օմար-բեկի ու զորավար Յուսուֆի հրամանատարության տակ գործող հարյուր հազարանոց մի հեծելազոր է ուղարկում «Հասանց տան», այսինքն՝ Օսմանյան կայսրության սահմանները: Ակ-կոյունլուներն սկզբից ունենում են նշանակալից հաջողություններ. մեծ ավերածություններ գործելով իրենց ճանապարհին՝ նրանք, Կեսարիայի ու Երզնկայի վրայով, հասնում են Թոխաթ: Քաղաքը գրավվում է, ամբողջովին կողոպտվում: Այս արշավանքին են վերաբերվում Մովսես Արծկեցու հետևյալ տողերը՝

* «Ի թվին ՋԻԲ (1473) առեալ Հասան փադշահն զԱմիր պակն ՀԲՌ (72.000) հոգով, գնացեալ մինչև ի Թոխաթ աւարեաց և գերեաց:
Ի թվին ՋԻԳ (1474) շարժեցաւ բազում զօրօք և գնաց ի Շամբ, եւառ զՄէլաթէնի, պաշարեց զՊիրայ Գ (3) ամիս, նեղմեց և չկարաց առնուլ: Եւեկ Շամայ հեծեալն ի դեմ, բայց

«Քաղաքըն մեծ Թոխաթ հասան,
Ոսկի, արծաթ եղև թալթան,
Կումաշն ամէն հրով կիզան»:

Թոխաթի գրավումից հետո Աղ-կոյունլուների բանակը դիմում է դեպի Ղարամանիա: Մահմադ Բ-ի որդի Մուստաֆան, որը Ղարամանիայի կուսակալ էր նշանակված, ստիպված նահանջում է դեպի Քութահիա: Սակայն քիչ անց, 1472 թվականի օգոստոսին, Կոնիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Աղ-կոյունլուները կրում են պարտություն, զորահրամանատար Յուսուֆը գերի է ընկնում, Ուզուն-Հասանի որդիներից երեքը սպանվում են (տե՛ս Գ. Այվազովսկի, Պատմութիւն Օսմանեան պետութեան, հտ. Ա, Վենետիկ, 1841, էջ 210-127, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 174):

Միևնույն ժամանակ Աղ-կոյունլուները կռվում էին նաև Եգիպտոսի մամլուկյան սուլթանության դեմ, մի հանգամանք, որ անշուշտ ջլատում էր նրանց ուժերը և նպաստում օսմանցիներին: Այս ճակատում ևս նրանք չունեցան հաջողություն: Մովսես Արծկեցին հայտնում է, որ Փադիշահը (այսինքն Ուզուն-Հասանը) պաշարել էր Հալեպը, բայց քաղաքացիները չէին հնազանդվել նրան:

Այսպիսով, 1472 թվականին, օսմանցիների ու Աղ-կոյունլուների միջև տեղի ունեցան երկրորդական նշանակություն ունեցող մարտեր, փոփոխակի հաջողություններով: Պատերազմը բորբոքվեց 1473 թվականին: Գարնանը Մահմադ Բ սուլթանը (հիշատակագրիչների կողմից «Չիթախ» կոչված) հարյուր հազարանոց բանակով արշավի դուրս եկավ:

Դեպքերին ժամանակակից անանուն մի հիշատակագիր հայտնում է, որ «յայսմ ամի եկն անօրէն խոնդկարն, որ Չթախ կոչի, բազում և անթիւ զօրօք ի Հոռոմց աշխարհէն յաշխարհս մեր: Եւ եկն նախ ի յԵզնկայն և այրեաց զքաղաքն» (Հշտկ. N 434, էջ 343):

Խասս Մուրադ փաշայի հրամանատարությամբ գործող օսմանյան առաջապահ գունդը հանդիպեց Ուզուն-Հասանի զորքերին, որոնք ծուղակ էին պատրաստել նրանց համար: Վերոհիշյալ անանուն հիշատակագիրն այսպես է նկարագրում թշնամի բանակների Մալաթիայի մոտ տեղի ունեցած առաջին բախումը. «... Եւ սակաւ զօրօք յառաջ գային ընդդէմ Չթախին: Իսկ Չթախն ոչ գիտէր զարանամուտ զօրաց մերոց, և յառաջ եկան և

մտան ի պատերազմ ընդ սակաւ զօրացն, որ ընդդէմ նոցա կայր, և զարանամուտքն հասին զկնի, փակեցին զզօրսն Չթախին, և եղև սաստիկ պատերազմ յառաւօտէ մինչև ցերեկոյ: Յառաջ յաղթեցան զօրքն մեր, և հրամանաւ աստուծոյ յաղթեցան զօրքն Չթախին, վասն զի, եւ հողմն սաստիկ և փչեաց զերկրին փոշին ի վեր Չթախին, և այնպէս փոշի եղև, որ մին զմին ոչ կարէր տեսանել: Եւ զօրքն մեր զհետամուտ սաստկապէս կոտորեց [զզաւրս] Չթախին, և [զՄուրատ փաշայն][*] բռնեալ և ածին Հասանին և սպանին: Եւ ողորմութեամբն աստուծոյ [ազատեցաւ] աշխարհս մեր ի զօրաց Չթախին» (Հշտկ. N 434, էջ 343):

Ուշագրավ են նաև հիշատակարանի շարունակության մեջ նկարագրված անցքերը: Այս պարտությունը հուսալքում առաջ բերեց օսմանյան բանակում: «Իսկ փադիշա[ը՞]հն նոցա, որ խոնդկար կոչի,- շարունակում է մեր հիշատակագիրը,- փախեաւ և եմուտ ամրոցն անպիտան զօրօքն, իբրև վաթսուն հազարաւ: Վասն զի ամրոցն, որ յետևին էին բերեալ իբրև զքաղաք մի բոլոր էր մեծութեամբ և մեծամեծ գնչիով և տախտակով պատ[եալ]»:

Օսմանյան բանակի փախուստն ու հուսալքումը սակայն երկար չի տևում. խմբելով իրենց ուժերը, նրանք պատրաստվում են հակահարձակման:

Երկրորդ անգամ թշնամի բանակները բախվեցին Դերջանի դաշտում, 1473 թվականի օգոստոսի 12-ին: Այս անգամ Աղ-կոյունլուները կրեցին ծանր պարտություն. Ուզուն-Հասանը, թողնելով պատերազմի դաշտում ամեն ինչ՝ փրկեց իր կյանքը փախուստով: Նրա որդի Զեյնալը, որը բանակի աջ թևի հրամանատարն էր, սպանվեց կռվի դաշտում: Օսմանցիների ձեռքն անցավ պատերազմական մեծ ավար. հազարավոր թուրքմեններ գերվեցին:

Աղ-կոյունլուների պարտությունը բացատրվում է հրազենի պակասով և նրանց բանակի կազմակերպչական հնամենի ձևով. այդ բանակը, ըստ էության, իրենից ներկայացնում էր միայն քոչվոր ցեղերի աշխարհազոր, իսկ Օսմանյան բանակն այդ ժամանակ կազմված էր հիմնականում ենիչերիների մշտական զորադնդերից (И. Петрушевский, նշվ. աշխ.,

* Հիշատակարանի այս մասը վնասված ու անընթեռնելի է եղել. լրացնում ենք ըստ իմաստի, այլ աղբյուրների տվյալներով:

էջ 174)։

Ուզուն-Հասանի պարտության լուրը արագությամբ տարածվեց Հայաստանում և ուրախությամբ արձանագրվեց հայ մի շարք հիշատակագիրների կողմից։

Թուրքական բանակը իր անցած ճանապարհին կողոպտում ու այրում էր շրջակայքի հայկական գյուղերն ու ավանները և գերում բնակչությանը։ Խախտյաց գավառում և, մասնավորապես, Բաբերդում օսմանցիների գործած անգթությունների մասին կարևոր տվյալ է հաղորդում դեպքերից տարիներ հետո (1480 թ.) Մարտիրոս գրիչը, որն Ամիրդոլվաթ նշանավոր բժշկի պատվերով շարադրել է հիշատակարան թուրքերի կողմից Բաբերդից գերված և Կոստանդնուպոլսում վաճառված մի Սաղմոսարանի համար։ Այստեղ գրված է. «Յորժամ գնաց մեծ խոնդքար սուլտան Մուհամատն ի վերայ Ուզուն-Հասանայ և կոտորեաց զնա, արար փախստական, բանի դերձեալ գնաց ի Թավրէժ. և սա դարձաւ եկաւ ի խախթեան գաւառ, ի քաղաքն Բաբերթ կոչեցեալ, այրեաց և աւերեաց և գերի եբեր Ըստամպօլ Սաղմոսարան մի լաւ և ընտիր աւրինակ» և այլն (հշտկ. N 563, էջ 441)։

1473 թվականի օգոստոսի 12-ի այս ճակատամարտով Արևմտյան Հայաստանի մի մասը վերջնականապես ընկավ օսմանյան թուրքերի ծանր ու իր հետևանքներով ողբալի լծի տակ։

Աղ-կոյունլուների պարտությունից հետո պետության մեջ գլուխ են բարձրացնում կենտրոնախույս ուժերը*. Ուզուն-Հասանի որդիներից Ուղուրլու-Մուհամեդը 1474 թվականին ապստամբություն է բարձրացնում հոր դեմ, ապստամբությունը ճնշվում է մեծ դժվարությամբ. Ուղուրլու-

* «Ի թվին ՋԻԴ (1475) գնաց Մահմատ պակն ի Շիրազ ի հօրեղբօրն ի տեղն. եւ հայրն բարկացաւ, փախուցին անտի մինչև ի Խարբերդ. և գնաց ի Հալապ: Եւ սուլտանն Մսրայ ետ նմայ բազում ինչ: Եւ ի միւս տարին գնաց ի Հոռոմ, և ընկալաւ զնայ Հոռմաց տանն տէրն՝ ետ նմա զՍեւաստ» (Մժ., I, էջ 169, ավելի մանրամասն՝ Մժ., II, էջ 153)։

«Ի թվին ՋԻԶ (1477) եկ (Ուղուրլու-Մահմատն – Լ. Խ.) գնաց յեզնկան և խարմանք ապանաւ ի մարգրաջմէն, ի ձեռն Պայընտուրին, եհաս սուգ ոչ սակօ» (Մժ., I, էջ 169)։

«Ի թվին ՋԻԶ (1477) եկ յեզնկան և խարէութեամբ սպանաւ ի մայրգրաջէն՝ ի Սալըտի խարունէն, զի էր խիստ կախարդ. ի ձեռն Պայինտուրին մեռաւ. և եղև սոսք շատոց և ամենայն ով գնա ողբաց» (Մժ., II, էջ 153)։

Մուհամեդը պարտությունից հետո ապաստան է գտնում օսմանցիների մոտ։

Իր կենդանության վերջին տարիներին Ուզուն-Հասանը, խուսափելով ուժեղ ու հզոր հակառակորդներից, թալանչիական պատերազմներ է մղում թույլ հարևանների դեմ։ Ասպատակության ասպարեզ է դառնում հատկապես Վրաստանը, որն այդ ժամանակ մասնատված էր չորս անկախ իշխանությունների (Քարթլի-Արևելյան Վրաստան, Իմերեթ-Արևմտյան Վրաստան, Կախեթ և Սամցխե կամ Մեսխեթ)։

Դեպի Վրաստան առաջին խոշոր արշավանքը սկսվեց 1476 թվականի սկզբներին*։ Օգտվելով այն առիթից, որ վրաց թագավոր Բագրատ Զ-ն (1466-1478) կռվի էր դուրս եկել լեզգիների դեմ, Ուզուն-Հասանը, հարյուր հազարանոց հեծյալ ու հետևակ բանակով, ներխուժեց Վրաստան և լուրջ դիմադրության չհանդիպելով, գրավեց և ավերեց Տփխիսը և ասպատակիչ խմբեր ուղարկեց երկրի տարբեր մասերը։

Դորու վրա հարձակվող զորախմբին հաջողվեց գրավել բերդը, կոտորել բերդի երեք հարյուր պաշտպաններին և 15 օր խուզարկումներ կատարելով անտառից դուրս բերել մեծ թվով գերիներ։ Այլ զորախմբեր հասան մինչև Աբխազիա և մինչև «ի կատար լերինն Կովկասու»։ Ամենուրեք կողոպտելով ու բնակչությանը սրի քաշելով, Ուզուն-Հասանի բանակը հետ վերադարձավ Վրաստանից մեծ ավարով և գերիներով։

Ուզուն-Հասանի կազմակերպած այս արշավանքի մանրամասնությունների, նրա զորքերի գործած ոճիրների մասին գրանցումներ են կատարել մի շարք հիշատակագիրներ, որոնցից ուրույն տեղ են գրավում մեզ արդեն ծանոթ Ստեփանոս Ձմշկածագեցի բանաստեղծ-հիշատակագիրը և Սամցխեի աթաբակ Ղորղորեի (Ղվարղվարեի) իշխանության սահմաններում գտնվող Բաենի Էկլեաց գյուղում աշխատող Մելքիսեթ գրիչը։

Ծանոթանանք նախ Ստեփանոս գրչի հիշատակարանի համապատասխան հատվածին.

«Յինքն հարիւր Հայոց թուի
Եւ ի քսանհինգ սկսեալ ամի (=1476),
Որ տանուտէր Կարիճն ասի,

* Ուզուն-Հասանը Վրաստանի վրա արշավանքի էր դուրս եկել նաև 1466-1467 թթ. ու գանձել 16.000 դուկատ փրկագին (տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 175)։

Հասան փաղշահըն մեծ սուլտան
Յամէն գիմաց հրաման եհան,
Որ զորք բազում ժողովեցան,
Վասն աւերմանցն Վրաց տան:
Հարիւր հազար թիւ էր համակ
Ի ձիաւոր 'ւ ի հետևակ.
Տփխիս մտին խիստ համարձակ,
Առեալ արին զնա աւերակ:
Բագրատ թագաւորն Վրաց տան
Գնացեալ էր ի Լակզստան
Վասն կուոյ և բարկութեան,
Մնացեալ աշխարհն անտիրական...:
Զթուրքմանի ձայնն երբ լուան
Ամենեքեան եղեալ փախեան,
Մայրս 'ւ մացառուտս գնացեալ մտան,
'Ի այլքն ի բերդերն ամրացան:
ԶՏփխիս առեալ և նուաճին,
Զմնացեալսն ինքեանց հնազանդէին.
Գունդ մի հեծեալ պատրաստեցին
Գորոյ վերայ յուղարկեցին:
Ընդ հասանելն՝ բզբերդն առին,
Զարսըն սրով կոտորեցին՝
Զերեք հարիւրսն՝ որք անդ կային:
Զկին և զտղայսն գերեցին,
Հայս եղեալք մայրին մտին,
Տասնևհինգ օր որոնեցին,
Զամենեսեան ըմբռնեցին,
Զոր կապանօք առեալ բերին:
Զարսըն սրով խողխողէին,
Զպառաւ կանայս այլ ընդ նոսին,
Զքահանայսըն գենուին
Առեալ զարիւնն ըմպէին:
Ո՛վ կարէ գրով պատմել,

Կամ զմեռեալսն համարել,
Ըզմանչիւն նոցա լսել:
Որք ի յարիւնան էին շաղախել...»
(հշտկ. N 496, էջ 394-395):

Ոչ պակաս արժեք է ներկայացնում Մելքիսեթ գրչի հիշատակարանը: «Ի թուականութեանս Հայոց Ջ. և ԻԵ. (1476) ամի, ամսոյն սեպտեմբերի*,- գրում է նա,- ժողովեցան անթիւ զաւրքն տաճկաց և գնացին զազա ի Վրաստան, և իջեալ բանակեցաւ առ ափն Քուռ գետոյն, ի քաղաքն Փայտակա[րա]ն, որ այժմ ասի Տփխիս. և սփռեաց զաւրսն իւր յաշխարհն Վրաց, և հասեալ մինչև ի սահմանս Ափխազից, և եկեալ ի կատար լերինն Կովկասու, և անդի ժողովեցին բազում աւարս և գերիս ի մի վայր, և շատ ոճիրս գործեաց: Քանզի ԼԲՌ. (32.000) գերեցաւ և ԽԸՌ. (48.000) մարդ ի սուր սուսերի մաշեցաւ: Զայս ամենայն մեր լսեալ և տեսեալ վարհուրէաք...» և այլն (հշտկ. N 522, էջ 415):

Հիշատակագիրները տարբեր թվական տվյալներ են հաղորդում այս արշավանքի ընթացքում գերեվարվածների ու սրի քաշվածների մասին: Մելքիսեթ գրիչը, ինչպես տեսանք, սպանվածների թիվը 48 հազար, իսկ գերվածներինը՝ 32 հազար է հաշվում: Գրիգոր և Հովսեփ գրիչները հայտնում են, որ Ուզուն-Հասանի զորքերը «արարին ԼԶՌ. (36.000) գերի, թո՛ղ զայլսն, զոր սպանին և սրախոխ արարին (հշտկ. N 495, էջ 392): Զաքարիա գրիչը 1477 թվականին, վերհիշելով նախորդ տարվա արշավանքի սարսափները, գրում է, որ Ուզուն-Հասանը «առ ու գերի արաւ զաշխարհն Տփխիս՝ ԿՌ. (60.000) մարդ: ԼՌ. (30.000) ի սուրն անցուցին, ԼՌ. (30.000 գերի. վայ ինձ հազար բերան» (հշտկ. N 525, էջ 418): Անանուն մի ժամանակագիր, սպանվածների մասին տվյալ չհաղորդելով, միայն գերիների

* Մատենադարանի N 903 ձեռագիր Մաշտոցի 1բ էջի վրա կատարված են ընտանեկան նշանավոր դեպքերի գրանցումներ: Դրանցից մեկում ասված է. «Աստուածայաւր [ծնաւ ի թվ.] ՋԻԴ. (1475), որ Ուզուն-Հասան գնաց ի Վրաստան»: Հավատ ընծայել այս վկայությանը չենք կարող, որովհետև մեր հիշատակագիրները միաբանում են վրաց աղբյուրների հետ, որոնք նույնպես արշավանքի տարին համարում են 1476 թվականը (տե՛ս Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ. հատոր, Երևան, 1936, էջ 135):

թիվը վաթսուն հազար է համարում: «ՋԻԶ. (1477) թվին,- գրում է նա,- Հասան պէկն Վրացտուն գնաց և բազում գերիս արար, թուով ԿՌ. (60.000)» (ՄԺ I, էջ 143): «Ի թվին ՋԻԷ (1478) մտանէ Հասան պակն ի Կուռճիստան և աւերէ զՏփխիս: Զի Մելիքն գնացել է[ր] ի կոխ ի գլխի բացն (իմա՛ Բեխիալուխն): Եւ գերեաց, և եդ զզօրսն ի Տփխիս, և եկեղեցիս բազում քակեաց, և ի նոցանէ խոցեալ մեռաւ: Եւ Կորիզու մելիքնին եկին ջարդեցին և առին զՏփխիսն ի տաճկնուն» (ՄԺ, I, էջ 169):

Այս տվյալներից եթե նույնիսկ ընդունելի համարենք նվազագույնը, դարձյալ պարզ կլինի, որ Ուզուն-Հասանի այս արշավանքով Վրաստանը ծանր հարված կրեց: Չպետք է կասկածել միաժամանակ, որ գերվածների ու սպանվածների մեջ կային հազարավոր հայեր, որոնք ԺԴ դարի 30-ական թվականներից, ինչպես և դրանից առաջ ու հետո, գաղթել ու բնակություն էին հաստատել հարևան Վրաստանի սահմաններում:

Դեռևս չէր դադարել այս արշավանքից դժբախտացած ընտանիքներում լացն ու կոծը, երբ Ուզուն-Հասանը, մեկ տարի միայն հանգիստ առնելով, կրկին արշավեց դեպի Վրաստան:

Վերը հիշատակված անանուն ժամանակագրության շարունակության մեջ գրանցված ենք գտնում հետևյալ տողերը. «ՋԻԶ. (1477) թվին դարձեալ գնաց [Ուզուն-Հասանն] Վրացտուն և արահեղ եղև ի արքայն Գէորգա և եկեալ մեռաւ» (ՄԺ, I, էջ 143):

Շատ ավելի արժեքավոր են Ուզուն-Հասանի վերջին այս արշավանքի մասին ձեռագիր մի Հայսմավուրքի ստացող ոմն Ամիրի գրանցած տողերը: «Ի սմին ժամանակի,- գրում է նա 1478 թվականին,- եկն Հասան պարոն ի Վրացտուն և քակեաց, և բազումս սրով կոտորեաց, և աւէրս էած, և քառասուն հազար անձն գերեաց. և զտառապանքս նոցայ ո՞ կարէ գրով արկանել: Բազումս եկ[եղ]եցիք քակեցին, զխաչ և զգիրս կորուցին զայլ անաւթ եկեղեցու: Եւ ինքն չարաչար մահուամբ սատակեցաւ, որպէս մանկակոտորն Հերովդէս անիծեալն» (հշտկ. N 538, էջ 425):

Այսպիսով, Ուզուն-Հասանը, այս արշավանքի ժամանակ «արահեղ եղև» և «չարաչար մահուամբ սատակեցաւ» 1478 թվականի հունվարի 5-ին:

Գ.

Աղ-կոյունլուների աշխարհակալ դինաստիայի հիմնադիր Ուզուն-Հա-

սանի մահից հետո երկրում մեկ ծայր առան գահակալական կռիվներ նրա հինգ որդիների միջև: Ազդեցիկ ու զորավոր քոչվոր ցեղերի ավագանիները, որպես գահի թեկնածու առաջ քաշելով հանգուցյալ փադիշահի որդիներից որևէ մեկին, ձգտում էին փաստական տերը դառնալ ողջ պետության:

Գահի շուրջը ծագած երկարատև ու արյունահեղ այս կռիվները պայմանավորված էին Աղ-կոյունլուների պետության բնույթով: Այն, նման արևելյան մյուս բռնապետությունների, բաղկացած լինելով տնտեսապես և քաղաքականապես չշաղկապված ու պատահականորեն միավորված էթնիկապես տարացեղ երկրամասերից, ենթակա էր ներքին բուռն փոթորիկների՝ անկախ որևէ գահակալի մահվանից կամ ռազմական պարտությունից անմիջապես հետո:

Իշխանությունը սկզբում գրավեց Ուզուն-Հասանի անդրանիկ որդի Սուլթան-խալիլը, որը սպանել տվեց գահը տենչացող իր եղբայրներից Մաքսուդին: Սակայն Սուլթան-խալիլին վիճակված էր թագավորել ընդամենը վեց ամիս. «ՌԻԶՀԷ (1477)... Սոլթանն թագաւորեց» (ՄԺ, I, 194): Նրա եղբայրներից Յաղուբը, ստանալով Բայանդուրի ու Մուսիլու քոչվոր ցեղերի ռազմական օժանդակությունը, դուրս եկավ ավագ եղբոր դեմ և 1478 թվականի հուլիսի 17-ին, Խոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, պարտություն մատնեց նրան (И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 175):

Քաղաքական խառն այս անցուդարձերի ժամանակ Վայոց-ձորի Արկզանք գյուղում Դավիթ գրիչն ընդօրինակում էր մի ճառընտիր: Ձեռագրի 217-րդ էջի ընդօրինակման ժամանակ դեռևս թագավորում էր խալիլը:

«Ի ղանութեան նոր փաթշահոյս
Խալիլ-Սուլտանն նստեալ այժմուս,
Անարեկեալ ի Վրացոյս» -

գրում է այդ մասին Դավիթը: Իսկ երբ մեր գրիչն ավարտեց ձեռագրի ընդօրինակության աշխատանքները՝ խալիլն արդեն սպանված էր: «Եղև Աւարտ գրչոյս,- գրում է նա գլխավոր հիշատակարանում,- ի թվիս Հայոց ՋԻԷ. (1478), և ի ղանութեան Յաղուպ-պէկին, որդոյ Հասան-բէկին, թոռինն Աւթմնայ, զոր յայսմ ամի էսպան զեղբայրն իւր զՍուլտան-խալիլն և էառ

դաւլթանութիւնն» (Հիշատ. N 541, էջ 427):

Նույն դեպքերի մասին տվյալներ է գրանցել 1479 թվականին Առեստ գյուղում նաև Մելքիսեթ գրիչը. *«Հասան-բէգն մեռաւ և թագաւորեաց որդին՝ Սոլթան-Խալիլն, և միւս որդին Աղուբէկն (իմա՝ Յաղուբ-բէկ) յարեաւ բազում զաւրաւք ի վերայ եղբօրն, և եսպան զնա, և ինքն թագաւորեաց ամենայն աշխարհի»* (Հիշատ. N 553, էջ 436):

Յաղուբը թագավորեց տասներկու տարի՝ 1478-1490 թթ.: Նա ռազմական գործին անընդունակ, թույլ բնավորության տեր մարդ էր, ուստի երկրի փաստական իշխանությունը գտնվում էր նրա հոր՝ Ուզուն-Հասանի անվանի զորահրամանատարների՝ Սուլեյման բեկ Բիժան-օղլու (հիշատակարաններում կոչվում է Մեծ կամ Քաջ իշխան Սուլեյման), Բայանդուր բեկի (հիշատակարաններում Բայանդուռ Կոչ ամիրա) և Մովսիլու ցեղի պետ Սուֆի-Խալիլի ձեռքում:

Փորձառու այս զորահրամանատարների միջոցով Յաղուբին հաջողվեց հաղթական պատերազմներ մղելով վերականգնել Աղ-կոյունլուների պետության քաղաքական վարկն ու տերիտորիալ ամբողջականությունը: 1479 թվականին Յաղուբի զորքերն արշավեցին Արևելք՝ թամուրյանների դեմ: *«Այժմ գնացեալ է բազում զօրօք ի յԱրևելս դէմ Չաղաթին»*,- հայտնում է Յաղուբի մասին վերը հիշատակված Մելքիսեթ գրիչը (նույն տեղում):

Հաջորդ՝ 1480 թվականին, Բայանդուր բեկի հրամանատարությամբ, Աղ-կոյունլուները ջարդ տվեցին Եգիպտոսի ու Սիրիայի սուլթան Սեյֆ-ադդին Կաիտ-բեյի (1468-1496) զորքերին, որոնք գրավելով Եդեսիան, մտադրվել էին շարունակել իրենց առաջխաղացումը և տիրել Դիարբեքիրին:

Հակոբ Արծկեցի գրիչը 1480 թվականին շարադրած իր հիշատակարանում այս արշավանքի մասին գրում է. *«Ի սոյն ամի եղև մեծ պատերազմն ի յՈւրհայ քաղաք, վասն զի Պաղ անուն զօրավարն Մսրայ սուլթանին (Սեյֆ-ադդին Կաիթբեյ, 1468-1496) եկեալ բազում զօրօք ի վերայ յՈւրհայոյ, և առեալ զերկիրն քաղաքօքն, և նստեալ ի վերայ բերդին՝ փլուց բովանդակ և ի յառ եբեր: Իսկ Աղուպ փատշահն, որդի Հասան*

փատիշահին... առաքեաց զքաջ զօրավարն իւր զԿոչ Բայանդուռն բազում զօրօք: Եւ պատերազմեցաւ ընդ Պաղին օրինօք, ճակատ առ ճակատ, և յաղթեալ նմա՝ կոտորեաց զզօրս սորա և փախստական արար շապաղ իւրեան հեծելին և յղորկեաց արմաղան Հռոմոց սուլթանին»* (Հ. Ոսկյան, Տարոն-Տուրուբերանի վանքերը, էջ 184-185): *«ՋԼ (1481) թվին գնաց Սուլէման և Բայանտուրն ի վերայ Շամա և պատերազմեցաւ Ուրհա և առին զփաշայն»* (ՄԺ, I, էջ 144):

1484 թվականին Ստեփանոս գրչի ընդօրինակած հիշատակարանից տեղեկանում ենք, որ Յաղուբը մեծ ու ավերիչ արշավանք է ձեռնարկել Վրաստանում, հատկապես ծանր հարված հասցնելով Տփխիս մայրաքաղաքին:

«[Յաղուբ-բէկն],- գրում է նա,- բազում [քա]ղաք և տեղիք էառ և աւեր արար, և գնաց ի Վր[աց]տուն, և զաւ[ր]քն սփռեալ տարածեցան յերկիր/// և մտեալ ի մեծ քաղաքն Տփխիս, և սուր ի [վերայ եղ]եալ կոտորեցին անհասարակ զծերս և զտ[ղայս, ան]հասարակ՝ զքահանայքն և [սա]րկաւագ[ունքն] ի յեկեղեցս միջին զենուին: Եւ զորս փախըստա[կան ի] մացառս մայրոյ որոնէին և գտեալս [զենուին՝ որ]պէս զանասուն, և զբազումս գերեցուցին /// աւերեցին և բազում նեճիրս գործեցին /// փախստական արարին /// (Մատենադարան, ձեռ. N 7593, էջ 273բ):

Այս նույն արշավանքի մասին 1487 թվականին, փոքր-ինչ ուշացած տվյալ է գրանցել Սյունեցի մի գրիչ. *«[Եաղուպ-պէկն] գնաց աւերեաց զերկիրն Տփխեց, զեկեղեցի, զխաչ, զամենայն կործանեաց, շատ գերեցոյց քրիստոնէից»*:

Այս նույն 1487 թ. Բաղեշի քրդերը սրբազան պատերազմ («ղազա») էին հայտարարել և մեծ վնասներ էին պատճառում Բաղեշի ամիրության հայ բնակչությանը:

Դրությունը մխիթարական չէր նաև օսմանցիների կողմից գրավված հայկական շրջաններում և Թուրքիայի հայաշատ քաղաքներում: Սուլթան

---

* Ի. Պետրուշևսկին, հենվելով Շարաֆ բեկի վրա, այս պատերազմում Աղ-կոյունլուների զորքերի հրամանատար է համարում Սուլեյման-բեկ Բիժան-օղլուն (տե՛ս նշվ. աշխ., էջ 175). մեր կարծիքով, Հակոբ Արծկեցի գրիչը, լինելով ժամանակակից նկարագրած դեպքերին, առավել արժանի է վստահության:

Մահմադ Բ-ի հրամանով, 1479 թվականին, բռնի տեղահանվեցին, ու տարվեցին Կոստանդնուպոլիս Ղարամանիայի հայերը: Տարագրվածներից մեկը այդ «սուրկունի» մասին հայտնում է հետևյալը. «Ի թուականիս Հայոց ՋԻԸ. (1479) սուրկուն արար խոնտքարն զՂարամանին աշխարհին զհայ ազգս, և զիս՝ զանպիտան հոգս զՄարտիրոս՝ հետ բերին ի Կոստանդնուպօլիս (Հիշատ. N 563, էջ 441):

1480-ական թվականներին մի քանի անգամ բախվեցին օսմանյան և եգիպտական բանակները, և ամեն անգամ, երկուստեք կոտորածներից, գերությունից ու կողոպուտից անմասն չէին մնում ճակատամարտերի թատերաբեմ հանդիսացած շրջանների հայ ռայաթները («Հանդէս ամսօրեայ», 1927, սյուն. 433):

1487 թվականին Բուդաղ-բեկի հրամանատարությամբ գործող օսմանյան զորքերից շատ դառնություններ կրեցին Սեբաստիայի շրջակայքի հայերը: Փիլիպպոս գրիչը, որն այդ ժամանակ Սեբաստիայում զբաղված էր մի ճաշոցի ընդօրինակությամբ, իր ժամանակը բնորոշելով «դառն ու նեղ» խոսքերով, պատմում է, որ «Բուտախ-բեկն զաստուր ունէր խոնդքարէն և էառ բազում հեծել, եկաւ ի վերայ Անթափու և ջարդեցաւ, և շատ աւար էած Սեբաստիոյ երկրիս, և բազումք սրախողող մեռան, և շատ տեղ աւերեցաւ» (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 343):

Մի տարի հետո (1488 թ.) նույնպիսի ծանր վիճակ ստեղծվեց Սիս քաղաքում և շրջակա գավառներում բնակվող հայերի ու այլազգիների համար, երբ օսմանցիները արշավանքի դուրս եկան Եգիպտոսի սուլթանի դեմ: «Յայսմ տարոջս,- գրում է այդ մասին Մարգարա անունով մի գրիչ,- եբեկ խոնդքարի ազէն ի վերայ Մսրայ սուլտանին և զՍիս առաւ և գիր բերդորայքն զամէն. և շատ ազգի ազգի պատուհաս եբեկ ի վերայ աշխարհիս վասն մեղաց մերոց. և աստուած յայլ ակէթարէն ազատէ» (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 343):

Յաղուբի թագավորության վերջին տարիներին սրվեցին հարաբերությունները Աղ-կոյունլուների և Արդաբիլի Սեֆյան շեյխերի միջև:

Սեֆյան շեյխերի ֆեոդալական դինաստիան, որ ԺԵ դարի սկզբներից տիրում էր Արդաբիլի շրջանին, պատմական ասպարեզ իջավ որպես շիա ադանդին պատկանող դերվիշական միաբանության ժառանգական հոգևոր առաջնորդների ընտանիք:

Սեֆյանների հիմնական հենարանը հանդիսանում էին թուրքազգի այն յոթ քոչվոր ցեղերը, որոնք հետագայում ստացան ղզլբաշ (կարմրագլուխ) անունը: Դրանցից միայն Շամլու և Ռումլու ցեղերն էին հաստատվել Արդաբիլի շրջակայքում, իսկ մյուս հինգ ցեղերը, կամ նրանց բաղկացուցիչ խմբերը, մնում էին Աղ-կոյունլու ցեղային խմբավորման մեջ և թափառում էին Արդաբիլից շատ հեռու ընկած երկրամասերում (Զուլկադար ցեղը, օրինակ, բնակություն էր հաստատել Մարաշի կողմերում):

Ղզլբաշ բոլոր ցեղերը, դառնալով Սեֆյան շեյխերի վասալներ, համարվում էին նրանց մյուրիդները և ամեն տարի, իրենց «սուրբ» շեյխի առաջին իսկ կոչով, խմբվում էին նրա դրոշի ներքո, «անհավատների» դեմ սրբազան պատերազմ վարելու համար. իսկ անհավատ համարվում էին բոլոր այն ժողովուրդները, որոնց հնարավոր էր կողոպտել, գերել ու կեղեքել: Նրանց ասպատակությունների հիմնական զոհերն էին լինում Դաղստանն ու Վրաստանը:

Հայ անանուն մի հիշատակագիր, որի մեծարժեք գրության հետ ստորև առիթ կունենանք ի մոտո ծանոթանալու, ուշագրավ տվյալներ է հաղորդում ղզլբաշ մյուրիդների ամենամյա հավաքույթների և իրենց շեյխերի հրամանին հլու՝ նրանց ձեռնարկած արշավանքներին մասնակցելու մասին: Նա գրում է. «Զի էր սահմանք և սովորութիւն նոցա, որ յամենայն ամի փութային ի կոչն նորա (իմա՝ Սեֆյան շեյխի) յամենայն աշխարհէ կարմրագտակ սոֆիքն, և զինուորէին նմա իւրեանց թոշակօքն, և փոխանակ առնելոյ ի նմանէ ինքեանք տային նմա բազում ոսկի և արծաթ, և յամենայն պատերազմունս, ընդ որ երթայր, յօժարութեամբ կռուէին և մեռանէին առաջի նորա» (Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, հ. Բ, էջ 1159-1161, (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 353-356 և այլն):

Շեյխ Հայդարի իշխանության տարիներին (1456-1488) Սեֆյան ավատական աշխարհազորը, վերոհիշյալ հիշատակագրի հաղորդած տվյալներով, բաղկացած էր լինում 40 հազար նվիրված ու անկաշառ զինվորներից, ուստի Արդաբիլի շեյխերը ռազմական ու քաղաքական պատկառելի ուժ ունեին:

Դաղստան կամ Վրաստան արշավելիս, նրանք անցնում էին Շիրվանի վրայով, ոտնատակ տալով Շիրվանշահերի երկիրը: Մի հանգամանք էր այս, որ չէր կարող չսրել ֆեոդալական երկու այդ իշխանությունների՝ Սեֆյան-

ների ու Շիրվանշահերի փոխհարաբերությունները: Եվ ահա, 1488 թվականին, երբ ողջ Առաջավոր Ասիան թատերաբեմ էր դարձել ռազմական գործողությունների, երբ «աշխարհն Ջախաթային բազում պատերազմունք և արեան հեղումն եղև, և Մսրա սուլտանն և Հոռոմոց խոնդքարն զմիմեանս ջարդեցին և կոտորեցին», Սեֆյան շեյխ Հայդարը «ժողովեաց թղթով իւրով զամենայն սօֆիան իւր՝ յամենայն երկրէ»: Նրա կոչով հավաքվեցին 40 հազար ղզլբաշներ, և նա ձեռնարկեց մի նոր արշավանք դեպի Դաղստան:

Սակայն այս անգամ Շիրվանշահ Ֆառուխ-Յասարը (1462-1500) արգելեց նրանց անցնել իր երկրով: Զայրացած ղզլբաշները արհամարհեցին նրա արգելքը և ուժով մտան Շիրվան, Դաղստանում կատարելիք «ղազայի» զոհ դարձնելով Շիրվանի մահմեդական ու հայ բնակչությանը: Հրեշավոր ոճիրներ գործեցին նրանք, կոտորեցին հազարավոր անմեղ մարդկանց՝ առանց տարիքի ու սեռի խտրության, մորթեցին բանդ անասուններին, հրդեհեցին Շիրվան քաղաքը... Այս արշավանքի ընթացքում Շիրվանի ազգաբնակչության կրած անլուր տառապանքների մանրամասն նկարագրությունը պարունակող հիշատակարանից մեջ ենք բերում մի ուշագրավ հատված: «Եւ զամենեսեան,- գրված է այնտեղ,- որ ի ձեռն էած (Շեյխ-Հայդար) ի քրիստոնէից և ի տաճկաց՝ զարս և զկանայս՝ սրով կոտորեաց, և զքաղաքն ամենայն հրով այրեաց՝ կումաշօքն և որ ինչ էր ի նմա...: Եւ զանասունսն զամենայն՝ զձի և զջորի, զուղտ և զոչխար սրով կոտորեաց, և այնպէս ոչ խնայեաց ի մարդ և յանասուն» (Նույն տեղում):

Շիրվանշահ Ֆառուխ-Յասարը, անզոր լինելով սեփական ուժերով հակահարված տալու ղզլբաշներին, օգնություն խնդրեց Յաղուբից: Վերջինս ղզլբաշների դեմ ուղարկեց ուժեղ մի բանակ՝ անվանի զորավար Սուլեյման-բեկ Բիժան-օղլու հրամանատարությամբ: Աղ-կոյունլուներին մեծ զոհերի գնով միայն հաջողվեց պարտության մատնել Շեյխ-Հայդարին: Վերոհիշյալ ընդարձակ հիշատակարանում պատմական այս անցուդարձերը նկարագրված են այսպես. «Զի զօժ արկեալ տէրն Շամախու ի Թաւրէզ, առ փադշահ փեսայն իւր Աղուպ, և ծանոյց նմա. և նա յուղարկեաց զիշխանն մեծ Սուլէման բազում զօրօք, որ գնացեալ ջանիւ մեծաւ մարտեան և յաղթեալ կոտորեցին առհասարակ զամենեսեան և ինքեանք ևս շատք մեռան» (Նույն տեղում): «ՋԼԷ (1488) թվին Սուլէման պէկն զկարմրագլուխ շիխ Հայդարն էառ բազում զօրօք» (Մժ, I, էջ 144):

Այս է, Յաղուբ փադիշահի գահակալության ընթացքում Հայաստանում ու հարևան երկրներում տեղի ունեցած քաղաքական անցուդարձերի համառոտ տարեգրությունը. հարատև պատերազմներ, գերեվարություն, սով ու ավեր, զանգվածային կոտորածներ և այլ արհավիրքներ. ահա հայ ժողովրդի կյանքի մշտական ուղեկիցները: Անտարակույս, նույն դառնությունններն էին ճաշակում Աղ-կոյունլուների լայնածավալ պետության մեջ ապրող բոլոր ժողովուրդները, առանց ազգության ու դավանանքի խտրության, սակայն հայ ժողովրդի դրությունն ավելի էր սաստկանում կրոնական այն հալածանքներով, որոնք հատկապես սուր բնույթ ստացան Յաղուբի թագավորության տարիներին: Բազմաթիվ հիշատակագիրներ, մեկը մյուսից անկախ, աշխատելով Հայաստանի տարբեր ծայրամասերում, նույնանման տվյալներ են հաղորդում քրիստոնյա հպատակների նկատմամբ Յաղուբի վարած քաղաքականության մասին:

Այսպես, 1486 թվականին Թավրիզում նահատակված նշանավոր հայ վաճառական ու դիվանագետ խոջա Միրաքի վարքաբանության հեղինակ Գրիգոր Ձորթան Արճիշեցին Յաղուբին կոչում է «այր ժանտ և անօրէն, անգութ և անողորմ, հալածիչ քրիստոնէից», հայտնում է, որ «սա խափանեաց ի քրիստոնէից թամբով ձի հեծնուլ, զնշանն ժամուց և զանգակաց, զգենմունս, և սպիտակ զօտի առանց կապուտի, և այլ բազում չարիս արար» (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 337-343):

Ժամանակակից մի այլ տեղեկատու՝ Բարսեղ անվամբ գրիչը հայտնում է, որ Յաղուբը «շատ փորձութիւն և նեղութիւն և վիշտ հասոյց քրիստոնէայ ազգին և եկեղեցականացն կարգաւորաց. և հայեղէն միան խափանեց, և զմեռեալն ի ցած ասաց տանել, և զժամ զարնուլն խափանեց, և եկեղեցիք քակեց ի հիմանէ, և քրիստոնէից աւրէնքն ճանգարեց, և շատ զատնութիւն արար ի վերայ քրիստոնէից» (Ա. Սիւրմէեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի..., Երուսաղէմ, 1935, էջ 68):

Քրիստոնյաների նկատմամբ հալածանքի այս քաղաքականության հիմնադիրը Յաղուբը չէր անշուշտ: Մենք արդեն առիթ ենք ունեցել ցույց տալու, որ այդպիսի սահմանափակումների ու կրոնական հալածանքների հիմքը դրել էր դեռևս Ուզուն-Հասանն իր հաղթանակից անմիջապես հետո: Այնուամենայնիվ պետք է ենթադրել, որ Յաղուբը գերազանցեց իր հորն այս բնագավառում, խստացնելով քրիստոնյա հպատակների ճնշումն ու

հարստահարումը:

Յաղուբը լուրջ փորձեր արեց նաև Սյունիքում և Այրարատում իրենց գոյությունը պահպանած փոքրաթիվ ու սակավազոր հայ ֆեոդալներին բռնի մահմեդականացման ճանապարհով ներձուլելու ուղղությամբ:

Փառշյան իշխաններից սերված Հովհաննես եպիսկոպոսը 1488 թվականին Այրիվանքում շարադրած իր հիշատակարանում հայտնում է, որ «յայսմ ամի խ. (40) ապատարգի կալան, թէ տաճկացէք. այլ ողորմածն Աստուած ձեռնտու և աւգնական եղև նոցա... որ է. (7) ամիս կալուչական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոյն Քրիստոսի ոչ դարձան» (Մատենադարան, ձեռ. N 4859, էջ 650բ):

Անշուշտ, հայ ժողովրդի իրավական ու տնտեսական վիճակի խիստ ծանրությունն ի նկատի ուներ Ներսես Խիզանցի գրիչը, երբ շարադրում էր իր հիշատակարանում «Բազումք մահ խնդրեն անձանց իւրեանց ի բազմանալոյ անօրէնութեան» պերճախոս տողերը (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 346-347):

Յաղուբ փադիշահը մեռավ 1490 թվականի վերջերին, Ղարաբաղում, թունավորվելով (ըստ ոմանց՝ թյուրիմացաբար) իր մոր և եղբոր կողմից: Դեպքերին ժամանակակից անանուն մի ունիթոռ ժամանակագիր այս կապակցությամբ գրում է. «[ՌԴՃ]Ղ. (1490) թվին գնաց [Յաղուբ բէկն] ի Ղարաբաղն. մայրն և իւր եղբայրն մահադեղ արբուցին Յաղուբ բէկին, նա իմացաւ՝ մօրն և իւր եղբօրն՝ Յուսուփ բէկին մահադեղէն խմեցոյց, ի միասին մեռան ի Ղարաբաղն» (Մժ, I, էջ 194):

Յաղուբի մահվանից հետո ողջ երկիրը փոթորկվեց գահակալական արյունահեղ պատերազմների հոսանքով և այդ պայքարը, կարճատև տեղատվություններով, ուղեկցեց Աղ-կոյունլուներին մինչև նրանց պետության վերջնական անկումը՝ 1502 թվականին:

Դսեղցի Հովհաննես գրիչը, 1491 թվականին շարադրած իր հիշատակարանում, Յաղուբի մահվանից հետո ստեղծված քաղաքական կացությունը բնորոշում է հակիրճ ու ճշմարտացի հետևյալ տողերով. «Ջ. և խ. (1491) ամին, ի ցաւալից և տրտմագգեաց ժամանակիս, որ եղև մահ և կորուստ Ազուբէկին՝ որդոյ Հասան-բէկին: Որ եղև յետոյ նորա աղմուկ և խռովութիւն ի մէջ տաճկաց. նորա տկարացան և անկան» (Մատենադարան, ձեռ. N 6875, էջ 81ա):

Փաստական իշխանությունը երկրում գտնվում էր Ուզուն-Հասանի մեկ որդուն ծանոթ զորահրամանատարներ աթաբեկ Սուֆի-խալիլի և մեծ վեզիր Սուլեյման-բեկ Բիժան-օղլու ձեռքին: Սրանք, ինչպես և նշանավոր այլ ամիրաներ, ձգտում էին Աղ-կոյունլուների գահի վրա բազմեցնել իրենց խաղալիք դարձած Բայանդուրի թագավորող դինաստիայից սերված որևէ ամիրզադայի՝ պետության կառավարչությունն ամբողջովին ստանձնելու համար:

Եվ ահա, քոչվորական մրցակից ցեղերի զորավոր առաջնորդների կամքով, երկրի տարբեր մասերում միաժամանակ փադիշահ են հռչակվում չորս տարբեր ամիրզադաներ:

Թավրիզում, Սուֆի-խալիլի ջանքերով, գահ է բարձրանում Յաղուբի որդի Բայսունղուրը (1490-1492)*. Իրաքում մեծ ամիր Բայանդուր բեկը փադիշահ է հռչակում Յաղուբի եղբայր Մեսիհին. Համադանում Փոռնակ քոչվորական ցեղի ամիր Շահ-Ալին առաջ է քաշում գահի մի այլ հավակնորդ՝ Ուզուն-Հասանի թոռներից Մահմուդին: Գահը գրավելու փորձ է կատարում նաև Ուզուն-Հասանի թոռներից՝ Ռուստամը (այս մասին տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 176):

Սուֆի-խալիլին հաջողվում է 1490-1491 թթ., հօգուտ Բայսունղուրի, պարտության մատնել գահի մյուս թեկնածուներին: Մեսիհն ու Մահմուդը**

* «Ջխ (1491) թվին Եաղուբ փատշահն մեռաւ ի մէջ ձմեռան և Սոփի խալիլն թագաւորեցոյց զԲայսանղուրն» (Մժ, I, էջ 144): «[ՌՃԴ]Ղ (1490) թվին ... Սոփի խալիլն էառ զՅաղուփ բէկի որդին՝ զԲայնսանղուրն և թագաւորեցոյց, և բազումք ի թագաւորական ցեղիցն սպանէց: Նուէմբեր ամսոյ ի վերջին, մեծամեծ պարոնէքն յամէն յաղացան խալիլ բէկին. նա զարունքն գնաց ի յե/// Փոռակն Շահ-Ալին վերայ, սպանեց զնա և զԹաղուղու Մահմատի որդին: [ՌԴՃ]ՂԱ (1491) թվին անդի դարձաւ ի Վանայ աշխարհն Սուլէյման բէկին վերայ. Սուլէյմանն սպանեց զնա, օգոստոս ամսոյ ի մուտն էառ զԲայնսաղուրն և դարձաւ ի Թօրէզ» (Մժ, I, էջ 194-195):
«ՋԼԷ (1488) թվին Սուլէման պէկն զկարմրագլուխ շիխ Հայտարն էառ բազում զօրօք»:
«Ջխ (1491) թվին Եաղուպ փատշահն մեռաւ ի մէջ ձմեռան. և Սոփի-խալիլն թագաւորեցոյց զԲայսանղուրն» (Մժ, I, էջ 144):

** Փոռնակ ցեղի ամիր Շահ-Ալու և նրա կողմից փադիշահ հռչակված Մահմուդի պարտության ու սպանության մասին կարևոր են ԺԵ դարի անանուն մի ժամանակագրի գրանցած հետևյալ տողերը. «Նուէմբեր ամսոյ ի վերջին (1490 թ.) մեծամեծ

սպանվում են այդ պայքարի ընթացքում, իսկ Ռուստամը բանտարկվում է Երնջակի բերդում:

Քաղաքական խառն այս անցուդարձերը գրավել են հայ հիշատակագիրներից շատերի ուշադրությունը, որոնց շարքում իր ուրույն ու ակնառու տեղն ունի Մովսես Արծկեցին, 1491 թվականին շարադրած ընդարձակ հիշատակարանով: Նա գրում է. «Զի մեռաւ Աղուպ փատշահն ի Թախթն իւր՝ ի Թաւրէզ, և մնաց ընդ իւր մայրն և եղբայրն: Եւ Սոֆի-Խալիլն եդ ի Թախթն զորդի փատշահին զԲայսանղուրն, և կոտորեաց ի յազգէ փատշահին, որ էին Բայանդուռ, աւելի քան զքսան մեծամեծ պարոնայք: Եւ բազում զօրս ժողովեալ և աճապարեալ գնաց ի յԷրաղ, և անդ ի Համադան կռուեալ, և բազում պարոնայք ի սուր անցան» (Մատենադարան, ձեռ. N 4822, էջ 471ա):

Սուֆի-Խալիլին, սակայն, վիճակված չէր ճաշակելու իր հաղթանակի պտուղները: Շուտով նրա դեմ է դուրս գալիս Սուլեյման-բեկ Բիժան-օղլին և հարավային Հայաստանի (հատկապես Վասպուրականի) շրջանները դառնում են մրցակից հզոր ամիրների պայքարի թատերաբեմ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներքին գահակալական այս կռիվները, տեղի ունենալով Հայաստանում, անմիջական կերպով ազդում էին նաև հայ աշխատավոր ժողովրդի վրա, պատճառելով նրան ծանր զրկանքներ, ավելորդ չենք համարում շարադրել պատերազմական գործողությունների համառոտ տարեգրությունը:

Սուլեյման-բեկը 1490 թվականին «բազում զաւրաւք» արշավել էր «ի վերայ բերդին Ամդոյ» (Մատենադարան, ձեռ. N 6495, էջ 436բ): 1491 թվականի սկզբներին, երբ Սուֆի-Խալիլն ուղի էր հարթում իր համար պետության ղեկը գրավելու, Սուլեյմանը դեռևս գտնվում էր «ի դաշտին Համթայ, առ ստորոտ Սեաւ լերինն» և պատերազմում էր Սուֆի-Խալիլի եղբորորդի Գուլաբի հետ, որը «մեծ պարոն և ուլուբէկի» էր: Դաժի հակառակորդների դեմ տարած հաղթանակից հետո Խալիլն իր ուժերն ուղղեց դեպի Ամիդ, վտանգավոր ու զորավոր իր հակառակորդի՝ Սուլեյման-բեկի դեմ: Բայց մինչ նա կհասներ Բերկրի, Սուլեյմանն արդեն «կռուեալ կոտորեաց

պարընէՖն յամէն յաղացան Խալիլ բէկին: Նա զարումն գնաց ի յն / / Փոլ[ն]ակ Շահ-Ալին վերայ, սպանեց զնա և զնդղոլո Մահմատի որդին» (Մժ, I, էջ 194):

զզօրսն Գուլաբուն և եսպան զնա»: Խալիլը արագ արշավով դիմեց դեպի իր թշնամին և հասավ Մանձկերտի դաշտը, սակայն Սուլեյմանը, ինչպես հաղորդում է Մովսես Արծկեցին իր մեծարժեք հիշատակարանում, «միւս կողմավն ծովուն» (այսինքն Վանա լճի հարավով) գալիս-հասնում է «յերկիրն Գաւաշից, հանդէպ Աղթամարայ» և սկսում տենդագին զորք հավաքել («և անդ զօրաժողով առնէր»):

Սուֆի-Խալիլը Մանձկերտում պատերազմի է բռնվում Սուլեյմանի կողմնակիցների հետ և, շատերին ջարդելուց հետո, Վանա լճի հյուսիսով հետ է վերադառնում Սուլեյմանին պարտության մատնելու և նրան պատկանող Վանն ու շրջակա գավառները տիրելու հավակնություններով:

Մովսես Արծկեցին հայտնում է, որ Խալիլի զորքերը «ընդ անցանելն աւերեցին զերկիրս Արծկոյ, և աւար հարին, և բազում ոճիրս գործեցին, և մարդիք սպաննեցին»: Այնուհետև Խալիլը, նույն հիշատակագրի տվյալներով, «գնացեալ աւերեաց զԱմուկ, զՎան և զՈստան երկրովն և արար առ և թալան և շատ աւերք: Եւ զվաներն առաւել աւերեցին, զի զգարանոն գտին, և զգրեանոն և զամենայն սպաս եկեղեցեացն յաւար առին» (Մատենադարան, ձեռ. N 4822, էջ 470ա-470բ)[*]:

Մի այլ գրիչ, Աղթամարցի Մատթեոսը, լրացնելով Մովսես Արծկեցուն, հայտնում է, որ Խալիլը Վանը կողոպտելուց ու ավերելուց բացի, վերցրել է նաև մեծ թվով գերիներ («աւերեալ և բազումս աւար և գերի արարեալ»): Գտնվելով Աղթամար կղզու հանդիպակաց ափին, «զայրանայր ի վերայ մեր, որպէս գազան պիղծն այն [Խալիլ] և բազում չարիս խորհէր, թէ առնում զսեղն և զամենայն սրախողխող առնեմ և զբրջութիւնն քակեմ»,- գրում է այդ մասին Աղթամարցի նույն հիշատակագիրը («Հանդէս ամսօրեայ», 1955, էջ 140)[**]:

[*] Սուֆի-Խալիլի գերած ձեռագրերից մի քանիսը հետագայում փրկագնվել են հայերի կողմից ու դարձյալ նվիրաբերվել վանքերին: Այդպիսիներից են օրինակ Մատենադարանի NN 959 և 5860 Մաշտոցները:

[**] Թերևս Սուֆի Խալիլը նպատակ ուներ գրավել Աղթամարը ոչ միայն ավարառության, այլ և Սեֆյան Շեյխ-Հայդարի անչափահաս որդիներին գերելու նպատակով: Եվրոպական մի շարք աղբյուրներ միաբերան վկայում են այն մասին, որ Շեյխ-Հայդարի որդիները, հատկապես հետագայում շահ հռչակված Իսմայիլը, երկար ժամանակ պահվել են Աղթամարում, հայ կուսակրոնների խնամակալության ներքո:

խալիլը Սուլեյման-բեկի վրա հարձակվելուց առաջ, իր դաշնակից Ռստանի քուրդ ամիր Եզդինշերին համոզում է դարանամուտ լինել և հարվածել Սուլեյմանին թիկունքից: Սակայն նրան չի հաջողվում ծուղակի մեջ գցել փորձված ու անվանի զորավարին: Սուլեյմանը, նախահարձակ լինելով, նախ ջարդում է «զբուրդն Եզդինշէր, որ եկեալ էր յետնէ դարան գործել նմա, անձինս ԳՌ. (3000)» և ապա, ժամանակ չկորցնելով, հարձակվում է խալիլի վրա. «Եւ անտի դարձեալ՝ դիմեաց ի վերայ Սօֆուն»,- հայտնում է նույն հիշատակագիրը (Մատենադարան, ձեռ. N 4822, էջ 471բ):

Ճակատամարտը տեղի է ունենում 1491 թվականի օգոստոսի սկզբին Վանի դաշտում: Սուֆի-խալիլը պարտություն է կրում և սպանվում:

Խալիլի պարտության և սպանության լուրը հրճվանքով են ընդունում Աղթամարի միաբանները. նրանցից ոմանք, զայրույթով հիշելով Աղթամարը գրավելու և կողոպտելու մասին խալիլի ունեցած մտադրությունը, Աղթամարի սուրբ խաչի միջամտությամբ են բացատրում նրա կրած պարտությունը: «Որով սատակեալ սուրբ խաչի զաւրութեամբ,- գրում է Մատթեոս Աղթամարցին,- յետս դարձոյց զնա [զՍուֆի-խալիլն], և գնաց ի Սուլիման բէկն, և կոտորեաց զնա ի դաշտին Վանայ. և կորեաւ անիծեալն սատանայ Սոֆի անունն այն»: Այս դեպքերի մասին շատ համառոտ գրում է անանուն ժամանակագրություն. «Ջխ (1491) թվին ... Յաւուր ամառնամտին գնաց [Սոփի խալիլն] ի վերայ Վանա և Թայանեաց, և ամիս մի նստաւ անդ, զոր լուեալ Սուլէման պէկն՝ յարուցեալ եկն ի վերայ Համզա, էառ զթախտ նորին և նստաւ տարի մի, և ապա որդի Մաղսուտին Ռստամն եկեալ ի զնտանէն էառ զթախտն և նստաւ Է (7) տարի» (Մժ, I, էջ 144):

Պարտության մատնելով իր հակառակորդին և դառնալով Աղ-կոյունլուների պետության փաստական տերը, Սուլեյման-բեկ Բիժան-օղլին անհրաժեշտ չգտավ գահազուրկ անել Սուֆի-խալիլի գրածո փադիշահ Բայսունղուրին: Վերջինս շարունակեց կատարել մարիոնետի իր դերը, այս անգամ արդեն ունենալով նոր «էմիր ալ-ումարա» (ամիրների ամիր) Սուլեյման-բեկի հրահանգիչ ձայնին:

1491 թվականին, երբ Աղ-կոյունլուները, զբաղված լինելով ներքին կռիվներով, ժամանակ ու հնարավորություն չունեին պաշտպանելու իրենց պետության սահմանները, աշխուժության որոշ նշաններ ցույց տվեցին

Քարթլիի թագավոր Կոստանդին Բ-ն (1479-1505) և Սամցխեի աթաբեկ Կվարկվարեն:

«Եւ յետ այսորիկ,- գրում է Մովսես Արծկեցին,- համարձակեցան ազգն վրաց, և ելեալ ի դուրս՝ շատ աւերք արարին, և գնայ և զաւճիկ թալանեցին, և շատ վրդովմունք եղև, և գեղք և գաւառք աւերեցան» (Մատենադարան, ձեռ. N 4822, էջ 471բ):

Արծկեցուն ուշագրավ մանրամասնություններով լրացնում են երկու այլ հիշատակագիրներ՝ Դսեղցի Հովհաննես գրիչը և Մելքիսեթ գրիչը «ի գաւառէն Դուգարոյ»:

Սրանցից առաջինը հայտնում է, որ Յաղուբ բեկի մահվանից հետո, երբ «աղմուկ և խռովութիւն» ընկավ Աղ-կոյունլուների պետության մեջ ու նրանք «տկարացան և անկան», «ազգս քրիստոնէից և Թագաւորն Կոստանդինէն յարեան և ուղիղ եղան և գնացին մինչև ի Գեղարքունի, մինչև Շիրակվան...: Եւ էառ զլաւոյ բերթն Թագաւորն, և ունի իշխանութիւն ի վերայ երկրիս և երկիրս ի յահէ անաւրինաց մնեալ կան ի բերթերն և ի ձորերն, զի խիստ սաստնեալ կան» (Մատենադարան, ձեռ. N 6875, էջ 81բ):

Մելքիսեթ գրիչը տեղեկություն է հաղորդում Սամցխեի աթաբեկի գլխի Արզրում կատարած արշավանքի մասին: «Յորում ամի մեռաւ Եաղուպ խանն,- գրում է նա,- և այլքն... մի զմի կոտորեցին, մինչև մնաց և ոչ մի ի յազգէն Պաինդրոյ. Եւ ելեալ պարոնն վրաց Ղուրղուրէ ԼՌ. (30.000) մարդով ի վերայ քաղաքին Արզրումայ, և աւարի առ զերկիրն և արար գրաւաքն հարկատու» (Գ. Սրուանձտեան, Թորոս աղբար, Ա, էջ 119-121):

Աղ-կոյունլուների այս հարատև արշավանքներն ու տեղահանումները, որոնց ուղեկցում էին սպանություններ, գերեվարություն ու տեղահանումներ, բնականաբար խիստ բացասաբար պետք է անդրադառնային ժողովրդական տնտեսության վրա: Եվ իրոք, 1491-1492 թթ. Հայաստանում «Եղև սղութիւն հացի և ամենայն իրաց, կապեցաւ ամենայն աշխարհս, որ ոչ կարէին ի տեղաց ի տեղ երթալ»,- հայտնում է Մովսես Արծկեցին: Անանուն մի հիշատակագիր նույն այս սղության մասին գրանցել է հետևյալ ողբաձայն տողերը. «Ո՜հ, ո՜հ, զայս դառն տարիս, ցորեանն ի Կ. (60) թ[ան]կ[այ] ու չկա, կորեկն ու գարին ի Ծ. (50) թ[ան]կ[այ] . և աղքատք

ամէն խիստ տառապին և անիծէն զՍօֆին» (Մատենադարան, ձեռ. N 4782, էջ 220ա)[*]:

Սուլեյման-բեկի հաղթանակով դահակալական պատերազմների հորձանքը կանգ չառավ: Նրա դիկտատուրան ևս կարճատև եղավ: Սուֆի-Խալիլին նա պարտության մատնեց, ինչպես տեսանք, 1491 թվականի օգոստոսին, բայց իշխանության ղեկը կարողացավ իր ձեռքում պահել ընդամենը մի քանի ամիս՝ մինչև 1492 թվականի մայիսի կեսերը:

Սուլեյման-բեկի դեմ քոչվոր ավագանիների դժգոհությունը գլխավորեց Բայանդուրի դինաստիայի կրտսեր ճյուղի ներկայացուցիչներից Դանա-Խալիլի որդի Իբրահիմ Այբա-Սուլթանը: 1492 թվականի մայիսի 15-ին Այբա-Սուլթանը Երնջակի բերդից ազատ արձակեց գահի հավակնորդ Ռուստամին և արշավեց մայրաքաղաքի վրա: Քոչվոր ցեղերի ամիրների մեծ մասն անցավ Ռուստամի և Այբա-Սուլթանի կողմը և նրանց հաջողվեց, առանց մեծ դժվարությունների, պարտության մատնել Սուլեյման-բեկին ու Բայսունղուրին:

Այս դեպքերի մասին հավաստի տվյալներ է գրանցել անհայտ ժամանակագիրը: «[ՌԴՃ]ԳԲ. (1492) թվին,- նշում է նա,- Իբրահիմ Միրզէն բազում զորօք եկեալ, մայիս ա[մս]ոյ ի ԺԵ. (15) Ռստամ Միրզէն հանեց և գնաց Սուլէյման բէկին վերայ: Ս[ու]լէյմանն փախաւ ի Քուրդստան և սպանաւ ի ձեռն Դանա-Խալիլ[ի] որդոյն Նուր-Ալի բէկին» (Մժ, I, էջ 195): «... ապա որդի Մաղսուտին Ռստամն ելեալ ի զնտանէն էառ զթախտն և նստաւ է (7) տարի» (Մժ, I, էջ 144): Սուլեյման բեկի Թավրիզից փախուստի ստույգ օրը հնարավոր է լինում որոշել հետևյալ հիշատակագրությամբ.

[*] Ժողովրդի վիճակը լրիվ պատկերացնելու համար ավելացնենք նաև, որ նույն այս տարիներին Հայաստանում տարածվում են զանազան տարափոխիկ հիվանդություններ: «Եւ եղև ջերմ յոլով և ցաւ ազգի ազգի ի մարդիկ»,- հաղորդում է Մովսես Արծկեցին 1491 թվականի մեզ հասած հիշատակարանում: Նույն գրչի երկու տարի հետո շարադրած հիշատակարանից տեղեկություն ենք առնում շատ ավելի մեծ թվով զոհեր պատճառող համաճարակային մի այլ հիվանդության բռնկման մասին: «Ի սոյն (1493) ամի,- գրում է նա,- եղև աստուածասաստ պատուհասն ի վերայ երկրի, զի վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մահտարաժամ և տարածեցաւ ի վերայ ծովեզերիս. և եղև շատ խեղճ և ողորմ բաներ, և բազում տունս աւերեցան և դրունս փակեցան (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 233-235):

«Այսուր փախեաւ Սուլիման բէկն ի Թաւրիզու. Թվ. ՋԽԱ. (1492) արեգի Գ. (3) աւուր ամառնամտին, յերեւաց Ռոստամ միրզի» (Մատենադարան, ձեռ. N 4782, էջ 305բ):

Հայկական շարժական տոմարի ՋԽԱ. (1492) թվականի ամանորը համընկել է հուլյան տոմարի նոյեմբերի 18-ին, իսկ արեգի 3-ը՝ հունիսի 1-ին, ուստի իրավացի է հիշատակագիրը այդ օրն ամառնամուտ կոչելով:

Այսպիսով, Ռուստամը գրավում է գահը 1492 թվականի հունիսի 1-ին և նոր ամիրների ամիր Այբա-Սուլթանի խնամակալությամբ թագավորում մինչև 1497 թվականը:

Գահազուրկ արված Բայսունղուր փադիշահն իր մայրական պապ Շիրվանշահ Ֆառուխ-Յասարի զինական օժանդակությամբ ապարդյուն և իր համար կորստաբեր փորձ կատարեց գահը վերադարձնելու:

«Հուսէին-Ալի բէկն,- գրում է անհայտ ժամանակագիրը,- էառ զԲայնսաղուր միրզէն, գնաց ի Շրվան, ձմեռն եկաց ի տեղն, գարունքն եկաւ ի Շրվանա և էրեկ ի Բաղարչայն» (Մժ, I, էջ 195):

Բայսունղուրի ու նրա կուսակիցների դեմ միասնաբար դուրս են գալիս Ռուստամի ու Սեֆյան շեյխ Հայդարի երիտասարդ որդի Սեիդ-Ալու զորքերը: 1493 թվականին Ախարի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Բայսունղուրը պարտություն կրելով գերվում է և տարվելով Թավրիզ՝ խեղդամահ է արվում: «Սախո-Ալի բէկն գնաց կովեցաւ, յաղթեց ու զԲայնսաղուրն բռնեց ՌԴՃՂԳ. (1493) թվին, տարավ ի Թարվէզ, խեղդեցին»,- գրում է անանուն հիշատակագիրը:

Ռուստամն իր համար կայուն հենարան ստեղծելու նպատակով սկսում է պետական հողերից շատ բաշխումներ կատարել քոչվոր ցեղերի ավագանիներին: Հասան-բեկ Ռումլուն հայտնում է, որ մեկ հարյուրամյակի ընթացքում, Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու փադիշահներից և ոչ մեկը այնքան սոյուրղալներ չի բաժանել, որքան իր հնգամյա թագավորության տարիներին Ռուստամ փադիշահը (տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 177): Թերևս մասամբ դրանով պետք է բացատրել Աղ-կոյունլուների կործանման եզրին հասած պետության խիստ կարճատև կայունացումը:

Նախորդ տարիների դահակալական կռիվների ու պատերազմների դառնությունները ճաշակած ժողովուրդը Ռուստամ փադիշահի թագավորության տարիներին փոքր-ինչ շունչ է քաշում: Մեր հիշատակագրերը

1492-1497 թթ. ընթացքում շարունակում են ժողովրդի վիճակի մասին տխուր տվյալներ գրանցել, իրենց ապրած ժամանակը «խիստ նեղ ու դժար» համարելով և այլն (տե՛ս, օրինակ, Մատենադարան, ձեռ. N 4155, էջ 137բ, ձեռ. N 4154, էջ 221ա և այլն): Այնուամենայնիվ, նրանք խիստ արտահայտություններ քիչ են գործածում և հարկահանության ծանրացման կամ զանգվածային հալածանքների, սպանությունների ու գերեվարության մասին չեն խոսում:

Սակայն, ընդհանուր առմամբ, Աղ-կոյունլուների պետության հպատակ ժողովուրդների դրությունը այն աստիճանի ծանր էր, քոչվոր ավագանու կենտրոնախույս ձգտումները պետական ապարատի նեխման հետևանքով այն աստիճանի անսանձ ձևերով էին արտահայտվում, որ պետության մասնատումը կանխելու համար արմատական միջոցառումներ էին պետք: Այդպիսի միջոցառումների կիրառման խիզախ փորձ կատարեց Ուզուն-Հասանի թոռ Ահմադը: Սա ծնվել ու մեծացել էր Օսմանյան կայսրության սահմաններում, որտեղ, Ուզուն-Հասանի դեմ բարձրացրած անհաջող ապստամբությունից հետո ապաստան էր գտել իր հայրը՝ Ուղուրլու-Մուհամմեդը:

Տեղյակ լինելով Աղ-կոյունլուների պետության ներքին դրությանը, Ահմադը, որին կարճահասակության համար Գյոդա-Ահմադ էին կոչում, նախապատրաստվում էր գրավելու Աղ-կոյունլուների անկայուն գահը:

1497 թվականի գարնանը նա գալիս է Երզնկա, որտեղ իր կողմնակիցները նախօրոք արշավանքի համար անհրաժեշտ քանակությամբ ձիեր էին հավաքել: Քոչվոր ավագանիների մի մասը, Այբա-Սուլթանի գլխավորությամբ, միանում է Ահմադին, և վերջինս սկսում է իր արշավանքը Ռուստամ փադիշահի դեմ:

Դեպքերի ընթացքն ունիթու ժամանակագիրը պատմում է այսպես. «ՌՆՂԷ (1497) թվին Ուղուրլու-Մահմատի որդին՝ Սոլթան Ահմատն Ստամբոլ էր. դուս երեկ, Ըռստամն գնաց դէմ, կուիվ չկարաց, էրեկ ի Ղաճարին հեծէլն ժողովեց: Սոլթան Ահմատն էրեկ ի Թարվէզ. Ըռստամն էրեկ ի վերայ. Ջուղու դաշտումն կռվեցան. Ըռստամն յաղթվեցաւ, սպանաւ բազում զորօք» (Մժ, I, էջ 195):

1497 թվականի մայիսի 3-ին Ահմադը բազմեց Աղ-կոյունլուների

գահին: Նա իշխեց ընդամենը 8 ամիս, բայց այդ կարճատև ժամանակամիջոցում հսկա ջանքեր գործադրեց քոչվոր ավագանու ուժերը ջլատելու և կենտրոնական իշխանության վարկն ու հեղինակությունը բարձրացնելու համար: Նա մահապատժի ենթարկեց ու բանտերը նետեց կենտրոնախույս ձգտումներ ունեցող բազմաթիվ անվանի քոչվոր ցեղապետերի, հետ խլեց Ռուստամի կողմից շռայլորեն բաժանված սոյուրղալները և իր համար ամուր սոցիալական հենարան ստեղծելու նպատակով, անց կացրեց հարկային նոր ռեֆորմ, որով չեղյալ հայտարարվեցին շարյաթով չնախատեսված մոտ երկու-տասնյակ նորահնար հարկեր ու տուրքեր (տե՛ս И. Петрушевский, Внутренняя политика Ахмеда Ак-Койунлу. Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, стр. 144-152):*

Բնականաբար իր այս միջոցառումներով Ահմադն իր դեմ պետք է հաներ ոչ միայն թուրքմենական ցեղերի հզոր առաջորդներին, այլև տիրող դասակարգերի բոլոր ներկայացուցիչներին, անկախ նրանց ազգային պատկանելիությունից: Եվ իրոք, հայ բարձրաստիճան ու ազդեցիկ հոգևոր պետերից մեկը՝ Աղվանից կաթողիկոս պարոնտեր Առաքելը՝ ընդարձակ ու հետաքրքիր բովանդակությամբ իր հիշատակարանում, Ահմադի մասին գրում է հետևյալը: «Եւ ի միւս ամին (1497) [յ]արեաւ ոմն արքանեակ առաւանայի և կամարար բէկիարեան դասուն ի Հոռոմաց տանէն՝ Սուլթան-Մահմուդ (իմա՛ Ահմադ) անուն, ի յազգէն Պայանդուրի, որդի Նաւղուրլուին (իմա՛ Ուղուրլու), էառ զթախտն Դավրէժու և եսպան զԸռստամ պէկն, և զբազումս ի ցեղէն Պայանդուրի ի սուր սուսերի մաշեաց և բազում ոճիրս գործեաց անասելի» (Մատենադարան, ձեռ. N 6964, էջ 138բ):

Ահմադի դատաստանից խուսափած և Իրաք փախած Այբա-Սուլթանը և Ֆարսիստանի փոխարքա Ղասում-բեկը (Փուռնակ ցեղից) իրենց շուրջը համախմբեցին Ահմադի ներքին քաղաքականությունից դժգոհ բոլոր տարրերին և ապստամբություն բարձրացրին: Ահմադն Ատրպատականում զորք հավաքեց և արշավեց ապստամբների դեմ, սակայն 1497 թվականի դեկտեմբերի 13-ին Սպահանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում

---

* «ՋԽԶ (1497) թվին որդի Եղուրլուին՝ Ահմատ խանն ելեալ ի Հոռոմաց էառ զԸռստամն և նստաւ Ը (8) ամիս» (Մժ, I, էջ 144):

պարտություն կրեց ու սպանվեց:

Անանուն ժամանակագիրը Ահմադի գահակալության ու վախճանի մասին գրում է հետևյալը. «Ահմատն գնաց ի Թարվէզ, սկսաւ մեծ պարնէքն բանիլ, Իպայ-Սօլթանն փախեաւ, դիմաց Էրաքաստոնն (իմա՝ Իրաք. սխալմամբ տպված է «Էր աքաստոնն»). Ահմատն հետեւն գնաց, Իպէն յետ դարձաւ Ահմատն սպանեց ձմեռն» (Մժ, I, էջ 195):

Ահմադի սպանությունից հետո երկրի փաստական իշխանությունը դարձյալ անցավ ամենակարող ամիրների ամիր Այբա-Սուլթանի ձեռքը: Սա, ինչպես հաղորդում է նույն անանուն ժամանակագիրը, «զՌուստամի որդին՝ զԱլվանդ իմիրզէն բերեր ի Թարվէզ, թագաւոր եդիր» (նույն տեղում):

Ժամանակագրություններին հատուկ այս չոր ու ցամաք գրանցումը վերաբերում է գահակալական պայքարի վերջնական արդյունքին: Նրա շարադրողը լռությամբ է անցել այդ դեպքերի առնչությամբ հայ ժողովրդի կրած տառապանքների կողքով: Բարեբախտաբար նույն պատմական անցուդարձերը իրենց արձագանքն են գտել նաև հիշատակարանների մեջ և մեր հիշատակագիրները, դեպքերին մոտենալով հայ ժողովրդի շահերի ու ակնկալությունների տեսանկյունից, մանրամասնորեն գրանցել են հատկապես այն փաստերը, որոնք առնչվում են ժողովրդի կյանքին ու վիճակին: Հատկապես արժեքավոր տվյալներ է պարունակում Քաջբերունիքի Ասպիսնակ գյուղում 1497-1498 թթ. Բարսեղ գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանը, որն իր ընդարձակությամբ ու հարուստ բովանդակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում այդ թվականներին շարադրված հիշատակարանների շարքում: Բարսեղը հայտնում է, որ 1498 թվականի փետրվար ամսին «Եղև փորձութիւն և նեղութիւն Հայոց ազգիս, զի արեանարբու և գազանաբարոյ զօրքն Խամալէեան և հեծեալքն Պարսկաստանից շրջեցան ի Հայաստան աշխարհն. նախ ի գաւառն Վասպուրական՝ ի Վան և Ոստան, անթիւ բազմութիւն հեծելոց, որ էր ԺՌ. (10.000), ընդ ինքեանս ունելով զնորընծայ փաղշահն զԱլուանդ. և կացին անդ ԺԵ. (15) աւր ուտելով և առնելով, ծեծելով և խլելով զրկեցին զաստապեալ ազգս Հայոց»:

Նորընծա փադիշահի հետ շրջող տասնհազարանոց զորախումբը Ոստանի ու Վանի շրջանից անցնում է Քաջբերունիք և որոշում ձմեռել Արճեշում ու շրջակա գյուղերում. «և ձմեռնացան քաղաքովն և երկրովն»,-

հայտնում է Բարսեղ գրիչը: Խիստ ծանր վիճակ է ստեղծվում Քաջբերունյաց գավառի հայերի համար: Զինավառ այդ բարբարոսները, ձմռան սաստկասաստույց ցրտին, բնակարաններից դուրս էին վարում մարդկանց ու անասուններին և «ինքեանք մտանէին ի ներքս՝ զրաստօքն իւրեանց»,- հայտնում է նույն հիշատակագիրը և շարունակում. «և զկերակուրն, զոր ամբարեալ էին մարդոյ և անասնոյ՝ զամենեսեան ըմբռնեցին և առին: Եւ նովաւ ոչ բաւացան, սկսան չարչարել զքրիստոնեայսն վասն խոտի և յարդի, գարոյ և գինոյ և վասն կերակրոյ և ըմպելոյ»:

Այս բոլորից հետո հայերի վրա դնում են մինչ այդ չտեսնված ու չլսված չափով գլխահարկ՝ «Ի գլուխ ԲՌ. (2000) դահեկան»: Բարսեղ գրիչը խոսում է նաև հարկահանության ժամանակ կիրառվող խոշտանգումների մասին: «Եւ բազում տանջանօք,- գրում է նա,- չարչարէին զքրիստոնեայս, կախէին և ծեծէին և ի բանդ արկեալ՝ պահէին յերկաթս մինչև չտային զհարկս» և այլն:

Հեռանալու կամ փախչելու ճար չկար «վասն սաստկութեան ձմռանն», ուստի «քրիստոնեայքն անճարեկ եղեալ ոչ գիտէին եթէ զինչ արասցեն»: Եվ այս անտանելի վիճակը տևում է այնքան ժամանակ «մինչև հատաւ խոտն և յարդն և գարին», և միայն ամեն ինչ սպառելուց, ժողովրդին մինչև վերջ թալանելուց հետո է, որ նորընծա Ալվանդ փադիշահն ու իր զորքերը հեռանում են Քաջբերունիքից. «Գնացին ի Թարէզ և խառնեցան ընդ Իբայ-Սուլթանին» (հիշատակարանի ընդօրինակությունը գտնվում է Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագիր ցուցակում):*

*Նոր էր Ալվանդը Թավրիզում բազմել Աղ-կոյունլուների գահին, երբ պայքարի ասպարեզ մտան գահի նոր հավակնորդներ՝ Յաղուբի որդի Մուրադ խանը, որն այդ ժամանակ գտնվում էր Շամախիում և Ալվանդի եղբայր Մուհամմադը**:*

---

* Ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում - խմբ.:

** Ի. Պ. Պետրուշևսկին, բազմիցս վկայակոչված իր արժեքավոր աշխատության մեջ, հայտնում է, որ Գյոդա-Ահմադի սպանությունից հետո Այբա-Սուլթանը փադիշահ էր հռչակել Մուրադին, և հետո միայն, գժտվելով նրա հետ ու բանտարկելով նրան Մարաղայի մոտ գտնվող Ռույինդիզ բերդում, ճանաչել էր Ալվանդին որպես փադիշահ (տե՛ս նշվ. աշխ., էջ 179):

Մուհամմադի մասին հայ հիշատակագիրները որևէ տվյալ չեն հաղորդում, եթե անտեսենք Ալեքսիանոս գրչի 1498 թվականին Մաքենյաց վանքում շարադրած հիշատակարանի մի փոքր հատվածը, որտեղ Մուրադխանի հետ միասին հիշատակվում է նաև ոմն Ահմադ-խան (հավանաբար կարդալու է Մահմադ-խան): Սակայն ունիթոռ ժամանակագիրը մանրամասն խոսում է Բայանդուրի թագավորող դինաստիայի պայազատներից մեկի՝ ոմն Լաթիվ-բեկի մասին, որն իր գործունեության շատ կողմերով հիշեցնում է մեզ Մուհամմադին:

Լաթիվ-բեկը, իր որդիների հետ միասին 1498 թվականին ձերբակալվել է Այբա-Սուլթանի կողմից և նետվել Երնջակի բերդը: Մի տարի անց՝ 1499 թվականին, Լաթիվ-բեկի կողմնակիցներին հաջողվում է ազատ արձակել նրան բանտից, զորք հավաքել և նրա հրամանատարությամբ արշավել Այբա-Սուլթանի և Ալվանդի դեմ, որոնք այդ ժամանակ գտնվում էին Իրաքում:

«Մին տարին անցաւ,- գրում է ժամանակագիրը,- Աւղուլ-Բաղըն էրեկ բերդիս հէսար, բերդի մարդն զԼաթիւ բէկն հանէց գնդանէ, վէր եկին զԱւղուլ-Բաղըն բռնեցին գրին բերդումն. Լաթիւ-բէկն գնաց զԻպայ-Սուլթանն սպանեց Էրաղատանն (իմա՛ Իրաքում), զԱլւանդին էառ ու իրեր ի թախթն» (Մժ, I, էջ 195):

Անվանի իրանագետ Ի. Պ. Պետրուշևսկին, հենվելով պարսկական աղբյուրների վրա, Այբա-Սուլթանի պարտությունն ու սպանությունը կապում է Մուհամմադի անվան հետ: Նրա ձեռքի տակ եղած տվյալներով 1498 թվականին Ալվանդի դեմ ապստամբություն է բարձրացնում քոչվոր ավագանիների մի խմբավորում, որպես գահի թեկնածու առաջ քաշելով նրա եղբայր Մուհամմադին: 1499 թվականին Ազիզբեկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մուհամմադին հաջողվում է պարտության մատնել Այբա-Սուլթանին ու Ալվանդին. Այբա-Սուլթանը սպանվում է այդ ճակատամարտում (տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 17):

Ունիթոռ ժամանակագրի Լաթիվ-բեկի մասին հաղորդած և պարսկական աղբյուրների Մուհամմադի գործունեությունը բացահայտող տվյալնե-

Ինչպես կտեսնենք ստորև, մեր հիշատակագիրները դեպքերի ընթացքը այլ կերպ են շարադրում:

րի համադրումը թվում է, թե հնարավորություն է ընձեռում նույնացնելու այս երկու անձնավորություններին: Եվ եթե լրացուցիչ աղբյուրներ գտնվեն այս նույնացումը հաստատող, ապա Մուհամմեդի գործունեության մասին հայտնի տվյալները կլրացվեն Լաթիվ-բեկի մասին ունիթոռ ժամանակագրի հաղորդած ուշագրավ մանրամասնություններով:

Գահի մյուս հավակնորդ՝ Յաղուբ փադիշահի որդի Մուրադի քաղաքական գործունեության մասին ընդարձակ տեղեկություններ են գրանցել մի շարք հիշատակագիրներ, հատկապես Վանական ու Բարսեղ գրիչները:

Մուրադի քաղաքական ասպարեզ իջնելու ժամանակ Վանական գրիչն ընդօրինակում էր մի Մաշտոց. հիշատակարանում իր ապրած ժամանակաշրջանի մասին նա գրում է. «Ի նեղ և դառն ժամանակի, որ եղև հալածումն ի վերայ ամենայն քրիստոնէից», իսկ շարունակության մեջ մանրամասնություններ է հաղորդում այդ հալածանքի մասին, անդրադառնալով Մուրադի գործունեությանը: «Զի եկն Մուրատ-խանն,- գրում է նա,- ի Շամախոյ, որդի Յաղուպ-բէկին, և չուեալ եկն ի Բաղարչայն՝ էած հալածումն ի վերայ ամենայն քրիստոնէից: Տանջէր գաշխա[րհա]կանս և զկարգաւորքս և ասէր. «Տուք զչիղրայն, թաւուլթ-ի ջիղրայն, թասխր-ի թաւ[ա]ութ» (այսինքն՝ «տվեք գլխահարկը, գլխահարկի տարբերությունը և տարբերության թերացումը»). զի ոչ գիտէին, թէ զինչ բարբանջեցեն և տանջեցեն զհաւատացեալս: Եղև հալածումն ի յերկրիս Վայիձորոյ, փախեաւ ամենայն երկիր ի լերինս և ի ծերպս վիմաց»:

Վայոց-ձորի և Երնջակի շրջաններում Մուրադ-խանի գործերը շարունակում են իրենց կողոպուտն ու բռնությունները մինչև մայիս ամիս: Վանական գրիչը, խուսափելով հարստահարիչներից, ստիպված է լինում վայրից վայր տեղափոխվել, փախստի կանգառներում շարունակելով ձեռագրի ընդօրինակման աշխատանքները:

«Ի ամսեանն հինգերորդի,- հայտնում է նա,- եկն Իպի-Սուլտանն ի Դուլէվրեժոյ, և եղեն ճակատ առ ճակատ, և յաղթահարեալ զՄուրատ-խանն և արար զնայ ձերբակալ, և եդ ի բանտի» (Մատենադարան, ձեռ. N 960, էջ 307ա-307բ):

Այս դեպքերին անդրադառնում է, ինչպես ասացինք, նաև Բարսեղ գրիչը: Թշնամի ուժերը, ըստ նրա հիշատակարանի, հանդիպում են միմյանց Երասխի ափին: «Եւ ոչ կարէին պատերազմել,- գրում է նա,- վասն հորդա-

հոսումեան գետոյն, մինչև փոքր մի նստաւ ջուրն: Եւ ապա պատերազմեալ՝ արարին բազում կոտորումն: Եւ առ Իբայ-Սուլթանն [զՄուրատ]-խանն տարեալ ընկեց ի բերդն Մակուայ և արար զպալուլական ի գլեակս նորա»:

Հենց նույն այս օրերին, երբ Այբա-Սուլթանը պարտության մատնեց ու բանտարկեց Մուրադին, նրա դեմ դուրս եկավ Ուզուն-Հասանի Ջհանգիր եղբոր որդի Ղասումը, որն իշխում էր Ամիդում և Մերդինում: «Եւ իբրև լուաւ զառաջանալն Իբայ-Սօլթանին,- գրում է Բարսեղը,- հարուցեալ բազում հեծելօք [Ղասում պարոնն] և եկն պատերազմել ընդ նմա»:

Այբա-Սուլթանը, ժամանակ չկորցնելով, արշավում է Ղասումի վրա. Թշնամի բանակները հանդիպում են միմյանց «ի ստորոտ լերին ի Սուկաւ, որ է Քոսադաղ», և 17 օր կանգնում դեմ-դիմաց, չիշխելով նախահարձակ լինել:

Երկյուղ կրելով Թշնամու գերազանց ուժերից, Ղասումը խույս տալով ճակատամարտից՝ հետ է նահանջում: Այբա-Սուլթանին չի հաջողվում հետապնդել ու ջարդել հակառակորդին, ուստի նա իր զայրույթը թափում է Բասենից մինչև Կարին ընկած գավառների անպաշտպան հայ գյուղերի վրա: Բարսեղն այս մասին գրում է. «Իբայ-Սօլթանն զհետ գնացեալ ոչ եհաս նոցա, վասնորոյ զբարկութիւն սրտին յանմեղ քրիստոնեայսն եհան, եւ սպատակաւ քանդել և աւերել և Թալանել զգաւառն Բասենոյ և զԱւրնկոյ...: Եւ շրջեցան հեծելազաւրքն ի յերկիրն ամենայն, և առին զամենայն առ և գաւառ մինչև ի Կառնոյ քաղաքն, որ է Թէօդուպոլիս»:

Դարձի ճանապարհին, Աղիովտում, Այբա-Սուլթանը կարգադրում է մի կամուրջ կառուցել, որպես շինանյութ օգտագործելով հայկական մի հին գերեզմանատան տապանաքարերը:

Մերձավորապես նույն այս ժամանակ (հավանաբար 1489 թ. աշնան սկզբներին) մեծ հալածանք է սկսվում էջմիածնի կաթողիկոսության նկատմամբ: Ծանր հարկապահանջություններից նեղված Սարգիս կաթողիկոսը էջմիածնից փախուստ է տալիս Հաղբատ (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 373): Հաղբատում ենք գտնում նրան նաև հաջորդ՝ 1499 թվականին: Հակոբ Նետարենց գանձասացը, իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում, հայտնում է, որ «Յայսմ ամի... աւերեցաւ մեծ կաթողիկէն էջմիածինն և կաթողիկոսն տէր Սարգիսն փախստական եղև» (Մատենադարան, ձեռ. N 8761, էջ 347ա):

Մարենոցաց վանքում աշխատող Ալեքսիանոս գրիչը 1498 թվականին շարադրած հիշատակարանում ուշագրավ տվյալ է հաղորդում այն մասին, որ Այբա-Սուլթանը երեք տարվա մալը հավաքել է բռնությամբ՝ երեք ամսվա ընթացքում: «[Այսմ ամի եղև] խռովութիւն խիստ,- գրում է նա,- Իբա-Սուլթան անուն պարոն էառ զԱհմատ-խանն և զՄուրատ խանն զերեք տարէն մալն Գ. (3) ամսումն էառ» (Մատենադարան, ձեռ. N 3629, էջ 289բ): Այսպիսով, միանգամայն պարզ է դառնում, որ խանական այս տարիներին սանձարձակ քոչվոր ավազակները ժողովրդին ոչ թե հարկադրում, այլ բառիս ուղղակի իմաստով կողոպտում ու խոշտանգում էին:

Ծանր դրություն էր ստեղծվել հայերի համար նաև Վասպուրականում: Օգտվելով Աղ-կոյունլուների ներքին երկպառակություններից, սկսում են իրենց դիրքերն ամրապնդել Հարավային Հայաստանի քուրդ ամիրները: «Եւ զաւրացան ազգքն Մարաց», «ազգն Մարաց դարձեալ զօրացան»,- գրում են այդ մասին 1498-1499 թվականներին մի շարք հիշատակագիրներ:

Ոստանի քուրդ ամիրը՝ Եզդինշերի որդի Ջահիդ-բեկը՝ սկսում է ասպատակել Ռշտունիքի, Հեշատի, Սալմաստի, Աղբակի, Վանի և Բաղեշի շրջանները:

Այդ ասպատակությունների մասին մեր հիշատակագիրները մանրամասն տվյալներ չեն գրանցել, սակայն ստորև բերվող համառոտ ակնարկներն իսկ ուշագրավ են ու հետաքրքրական:

Մարգարա գրիչը Աղբակի էրնկանի գյուղում 1499 թվականին շարադրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակման աշխատանքները կատարել է «ի դառն և ի նեղ ժամանակի, զի ոչ կայր փախչախ, և ազգն Մարաց աւերեցին և քանդեցին զՅէշատ, զՍալմաստ, զԱխլրյակ, զՎան, և զՈստան, և զԱխթամար» (Մատենադարան, ձեռ. N 5222, էջ 278ա):

1498 թվականի նոյեմբերի կեսերին Ջահիդ-բեկը գրավում է Աղթամարի կաթողիկոսների նստավայր ու հայրենական կալվածք Աղթամար կղզին, որը վաղուց ի վեր գրավում էր քոչարաղ ավարառուների ախոր-

*ժակը**:

Աղթամարի գրավման և այնտեղ կենտրոնացված նյութական ու մշակութային մեծ արժեքների կողոպտման մասին ողբաձայն տողեր են շարադրել մի շարք հիշատակագիրներ, որոնց շարքում դարձյալ առաջին տեղ է գրավում Բարսեղ գրիչը, իր ընդարձակ հիշատակարանով: Նա գրում է. «Իսկ ի հասանելն մեր ի Նաւասարդն, դարձեալ եղև սուր անմխիթար ազգիս Հայոց, զի նենգաւոր և ոխակալ ազգն Մարաց դարձեալ զօրացան և եկեալ ասպատակեցին զերկիրն Ըռշտունեաց և արարին բազում առ և թալան: Աւրըստաւրէ սպասէին առամն վասն աստուածապահ կղզոյն Աղթամարայ, ասելով. թէ՝ Զինչ ի ծովու բոլորս մալ և գանձ կայ, ամենայն անդ է եղեալ: Վասն որոյ ի գիշեր ժամու կալան Դ. (4) փուռն (իմ՛ լաստ) և մտեալ ԲՃ. (200) թուրք յանաւին կղզին Աղթամար, և առին զամենայն ոսկի և արծաթ, զգանձ և զկտմաշ, զգիրք և զԱւետարան, զաչ և զխաչ, և արարին զԱղթամար որպէս հուղս մրգապահաց»:

Այս նույն ժամանակ, կամ փոքր-ինչ առաջ, Այրարատյան նահանգի վրա արշավում է Սամցխեի աթաբեկ Ղվարղվարեն (մհ. 1498 թ.): Նրա զորքերը իրենց հետ ավար են տանում նաև ձեռագրեր, որոնցից մեկը փրկագնվում է 1499 թվականին Ախալցխայում, ամն Մուրատի կողմից (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 376):

Մի խոսքով, Ալբա-Սուլթանի փաստական իշխանության տարիներին Հայաստանում չկար խաղաղ մի անկյուն, ամենուրեք ժողովուրդը հեծում էր հարկային ծանր լծի տակ, կեղեքվում խաղալիք դարձած և արպտությամբ իրար հաջորդող անզոր փադիշահերի ու նրանց հրամանատար քոչվոր ցեղերի ավագանիների կողմից: Հայ բազմաչարչար գրիչներից մեկը, թարգման հանդիսանալով իր ժամանակի իշխող տրամադրությունների, այդ խառնակ տարիները բնորոշում է պատկերավոր ու դիպուկ այսպիսի տողերով. «Քանզի ի դառն և ի նեղ ժամանակի գրեցաւ, որ ամենայն ազգս Հայոց իբրև գծով ալէկոծին ի ձեռն անաւրինաց, և շրջին յաշխարհէ

---

* Բարսեղ գրչի գրավման ամսաթիվը նշում է այսպես՝ «Ի հասանելն մեր ի Նաւասարդն». իսկ 1498 թվականի նավասարդի 1-ը (ամանորը) ըստ հայկական շարժական տոմարի, համընկել է նույն տոմարի նոյեմբերի 17-ին (տե՛ս Recherches sur la chronologie Arménienne, par M. Éduard Dulaurier, Paris, 1859, p. 387).

յաշխարհէ, և հանգիստ ոչ գտանեն» (Մատենադարան, ձեռ. N 5396, էջ 292ա):

1499 թվականին Ալվանդ փադիշահի ու ամիրների ամիր Ալբա-Սուլթանի դեմ, ինչպես տեսանք վերը, դուրս է գալիս Ալվանդի եղբայր Մուհամմադը (ըստ անհիթառ-ժամանակագրի՝ Լաթիֆ-բեկը): Ալիգբեկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթանակ տանելուց, Ալբա-Սուլթանին սպանելուց և Ալվանդին փախուստի մատնելուց հետո, Մուհամմադը, 1499 թվականի մայիսին հաստատվում է գահի վրա:

Բանակից ազատվելով կրկին գահակալական պայքարի ասպարեզ է մտնում Մուրադը: 1499 թվականի վերջերին, Սպահանի մոտ մարտի են բռնվում այս երկու ամիրզադաները: Մուհամմադը սպանվում է կռվի դաշտում և հրապարակի վրա մնում են Աղ-կոյունլուների գահի երկու մրցակիցներ՝ Ալվանդն ու Մուրադը: 1500 թվականին սրանց միջև կնքվում է հաշտություն. պետությունը բաժանվում է երկու խոշոր մասերի: Ալվանդը, նստելով Թավրիզում, իշխում է Ատրպատականի, Հայաստանի և Քուրդիստանի վրա, իսկ Մուրադին բաժին են ընկնում արաբական ու պարսկական Իրաքները և Ֆարսը: Դիարբեքիրի, Քրմանի ու Եզդի վրա իշխում են Բայանդուրի դինաստիայի այլ ամիրներ (տե՛ս И. Петрушевский, *նշվ. աշխ., էջ 179):*

Իշխանության ոլորտների այս բաժանումից հետո էլ Աղ-կոյունլուների պետության մեջ կարգը չի վերահաստատվում. երկրի տարբեր մասերում շարունակվում են տեղական նշանակություն ունեցող մարտեր. Բայանդուրի դինաստիայից սերված ամիրզադաներն ու քոչվոր ցեղերի ամիրները դուրս են գալիս մեկը մյուսի դեմ և այլն:

Հակոբ անվամբ մի գրիչ ստեղծված անկայուն ու խառնակ դրության պատկերը նկարագծում է հետևյալ խոսքերով. «Արդ, գրեցաւ սա (Աւետարանս) ի թուիս Հայոց ՋԽԹ. (1500) ամի, ի դառն և ի դժար ժամանակի, որ Թաւրիզոյ փատշահութիւնն խաբաներ էր և Աղ-Օղլուցող ազգն յիրար անկած էին և պարոնութիւն սոցա ոչ հաստատէին, և աշխարհս կայր յերերման, վասն զի միմեանց ոչ հնազանդէին և յԳ. (3) - Դ. (4) դիմաց բաժանեալ էին փատշահութիւնն և զմիմեանս կոտորէին: Եւ շատ հայ և թուրք թալանեցան, և գեղք և քաղաքք աւերեցան, և ազգք բրդաց կոտորեցան և սպանեցան» (Մատենադարան, ձեռ. N 7979, էջ 295բ):

Օգտվելով խառնակ այս դրությունից, իշխանությունը գրավելու անհաջող փորձ է կատարում Ջհանշահ Կարա-կոյունլուի որդիներից մեկը: 1499 թվականին, հայտնվելով Գանձակի կողմերում, նա սկսում է զորք հավաքել: 1500 թվականին նրա և Ալվանդի միջև տեղի է ունենում ընդհարում Ղոչ կոչվող դաշտում. Կարա-կոյունլու ամիրզադան* պարտություն է կրում ու փախչում: Հայ հեղինակներից այս մասին տեղեկություն են պահպանել անանուն ժամանակագիրը (տե՛ս ՄԺ, I, էջ 195) և Հակոբ Արծկեցի գրիչը: Վերջինս իր մի հիշատակարանում այդ մասին գրել է հետևյալ տողերը. «Աղ-Օղլուի թագաւորութիւնն անհաստատ էր և յիրար անկած, և միւս գիմաց Ղարայ-Օղլու ոմն եկաւ, և կռուեալ յոյժ կոտորեցան և կորեան» (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 376-377):

ԺԵ դարի վերջին տասնամյակի քաղաքական անցուդարձերի վերը կատարված համառոտ շարադրանքն իսկ բավարար նյութ է մատակարարում համոզվելու համար, որ Աղ-կոյունլուների պետությունն ապրում էր իր հոգևարքի ծանր օրերը:

Արդաբիլի Սեֆյաններին պատմականորեն վիճակված էր նեխած այդ պետական օրգանիզմի գերեզմանափորը լինել և հին ավերակների վրա աշխարհակալ մի նոր պետության հիմքերը գնել:

1488 թվականին դեպքերի առնչությամբ մենք արդեն առիթ ունեցանք թռուցիկ մի ակնարկով ծանոթանալու Արդաբիլի Սեֆյան ֆեոդալական իշխանության կազմավորման ու քաղաքական կյանքի ասպարեզ մտնելու պատմության հետ: Այդ թվականին Շեյխ-Հայդարը պարտություն կրեց ու սպանվեց Շիրվանշահ Ֆառուխ-Յասարի և Յաղուբ փադիշահի դաշնակցած զորքերից: Այդ պարտությունից հետո Սեֆյաններն այնքան թուլացան, որ նույնիսկ զրկվեցին իրենց հենակետ Արդաբիլից ու մյուս տիրույթներից: Շեյխ-Հայդարի անչափահաս որդիները գերվեցին և, ինչպես հայտնում են Վենետիկցի դեսպաններ Կատերինո Զենոն, Ջովաննի

* Սրա ով լինելը պարզված չէ: Հնարավոր է ենթադրել, որ անանուն այս Կարա-կոյունլուն Բարանի Բոզվորական ցեղի ետ Սուլթան Հուսեյնն է եղել, որի տիրապետության տակ էին գտնվում Սևանա լճի մոտ գտնվող (արևելյա՞ն) շրջանները (հմմտ. И. Петрушевский, Азербайджан в XVI-XVII веках, Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, срт. 226).

Անջոլելլոն ու ԺԵ դարի անանուն վաճառականը, արգելվեցին Աղթամարում, հանձնվելով հայ հոգևորականության խնամքին*:

Տեսանք նաև, որ Ռուստամ փադիշահը Բայսոնղուրի ու նրա հովանավոր Շիրվանշահ Ֆառուխ-Յասարի դեմ պայքարի ընթացքում օգտագործեց Շեյխ-Հայդարի ավագ որդի Սուլթան-Ալուն, վերադարձնելով նրան Արդաբիլը: Ղզլբաշների դաշնակցությամբ միայն Ռուստամին հաջողվեց 1493 թվականին ջարդել իր հակառակորդին:

Հասնելով քաղաքական իր նպատակին, Ռուստամը սկսեց երկյուղ կրել իր «դաշնակիցներից» և 1494-1495 թթ. Աղ-կոյունլուները կրկին անգամ գրավեցին Արդաբիլը և Սեֆյանների մյուս տիրույթները:

1499 թվականի գահակալական պայքարի ու խառնակության թեժ օրերին Սեֆյան Շեյխ-Իսմայիլը, որն այդ ժամանակ ընդամենը 13 տարեկան պատանի էր, Ղզլբաշ ցեղապետերի թելադրանքով ու խնամակալությամբ, սկսում է իր շուրջը համախմբել Ատրպատականում, Փոքր Ասիայում և Քուրդիստանում ցրված ու ղզլբաշ աղանդին հարող ցեղերի զինական ուժերը: 1499 թվականի վերջերին Կաղզվանում նրա դրոշի տակ էին գտնվում արդեն 7 հազար հավատարիմ ու անձնազոհ ղազիներ («հավատի մարտիկ»): 1500 թվականի սկզբներից ղզլբաշներն սկսում են ասպատակություններ սփռել Սամցխեի աթաբեկության սահմաններում ու Շիրակում, իսկ նույն թվականի աշնանը մտնում են Շիրվան և գրավում Շամախին: Ջարանի կոչված վայրում Շեյխ-Իսմայիլի ու Շիրվանշահ Ֆառուխ-Յասարի միջև տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում հաղթանակ են տանում ղզլբաշները, իսկ Ֆարուխ-Յասարը սպանվում է փախուստի ճանապարհին:

Կարապետ Բերկրեցի գրիչը, 1501 թվականին շարադրած հիշատակարանում, նկատի ունենալով Շեյխ-Իսմայիլի այս արշավանքը, գրում է. «Սոֆին շատ աւերք արար, և գնաց ի Շամախի, և էառ զՇամախի, և եսպան զՇրուանշէն» (Մատենադարան, ձեռ. N 1591, էջ 389բ): Նույն արշավանքի մասին խոսում է նաև Հակոբ Արծկեցի գրիչը, 1501 թվականին ընդօրի-

* Հ. Հակոբյան, «Ուղեգրություններ», Ա, էջ 271-273: Ի դեպ, Շեյխ-Հայդարի բոլոր երեք որդիների Աղթամարում արգելվելու մասին խոսում է միայն Անջոլելլոն, մյուս երկու ուղեգիրները տվյալ ունեն միայն կրտսեր որդի՝ ապագա շահ Իսմայիլի մասին:

նակած Ավետարանի հիշատակարանում: «Եկաւ,- գրում է նա,- Կարմիր-գլուխ Սոֆին և զԱզօղլու ազգն կորոյս. և աշխարհս եղաւ յերերման» (Ե. Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 616):

Շեյխ-Իսմայիլի գործունեության առաջին շրջանի, Շիրվանի ու Թավրիզի գրավման և հարակից դեպքերի մասին կարևոր սկզբնաղբյուր է նաև «Վկայաբանութիւն սուրբ նահատակացն տէր Ներսէսին և եղբաւրն իւրոյ խոճայ Դավլաթիարին» անտիպ գրվածքը, որը պահպանվել է Պետ. Մատենադարանի N 4876 Հայսմավուրքի մեջ (տե՛ս մայիսի 7-ի վարքերի շարքում):

Ստորև մեջ ենք բերում վարքաբանության սկզբնավորությունը. «Ի ժամանակի, որ զաւրացաւ անաւրէն պեղծ Իսմաէլն. և որդին էր անիծեալ չար գազան Շըխ-Հայդարին. և եկեալ յանկարծակի, մտեալ ի մէջ Շարուանայ տանս: Եւ սպան ըզփաթիշահն Շրանշահն և մեծամեծք պարոնայք և փառաւոր խոճունայք, և բազում քրիստոնեայք յանկան ի ձեռն անաւրինին և մաշեցան ի սուր սուսերի, և գիւղօնք ի յերկիր անկան և կերակուր եղան թռչնոց և գազանաց, որ չէ եղեալ արհաւիրք յԱդամա մինչև ի վերջ. և կալաւ զաթոռն Շրուանու...»:

1501 թվականին Շեյխ-Իսմայիլը Շարուրում ջարդ է տալիս Աղ-Կոյունլու Ալվանդի զորքերին և հանդիսավոր մուտք է գործում Թավրիզ: Այս մասին ևս տեղեկություն ունի վարքաբանական գրվածքի անհայտ հեղինակը: «Ապայ դարձեալ ի յետև,- գրում է նա,- մտեալ յերկիրն Հաւրրէժան և էառ ըզԴավրէժ, և նստեալ յանդ, և կոտորեաց զպարոնայքս և մեծամեծս և գերեաց նոյնպէս»:

Ալվանդը իշխանությունը վերագրավելու փորձ է անում 1502 թվականին, բայց կրում է վերջնական պարտություն: Ղզլբաշները պարտության են մատնում նաև Աղ-կոյունլու մյուս փադիշահ Մուրադին:

Եվ այսպիսով վերացվում է Աղ-կոյունլուների աշխարհածավալ պետությունը, որի կազմի մեջ, սկսած 1468 թվականից, մտնում էր նաև ողջ Հայաստանը:

Հայաստանի ու հարևան երկրների վրա իրենց կայուն տիրապետությունն են հաստատում նոր աշխարհակալներ՝ Ղզլբաշ ցեղերի Սեֆյան շեյխերը:

Ի՞նչ հետևանքներ ունեցավ դինաստիաների այս փոփոխությունը հայ

ժողովրդի պատմական կեցության և հետագա զարգացման համար, հայտնի է արդեն ընդհանուր գծերով և ավելի մանրամասնորեն կպարզվի, երբ կհրատարակվեն ԺԶ ու հետագա դարերի հիշատակարանները, տնտեսական կարգի փաստաթղթերը, ինչպես նաև պարսկերեն ու այլ լեզուներով ձեռագիր նյութերը:

Ավելորդ չենք համարում սակայն նշել այստեղ, որ Աղ-կոյունլու քոչվորական ցեղերի տիրապետության տապալումով ու Ղզլբաշ ցեղերի իշխանության հաստատումով հայ ժողովրդի աշխատավոր զանգվածների սոցիալ-տնտեսական գոյավիճակի և իրավական կեցության մեջ էական որևէ փոփոխություն տեղի չունեցավ:

Երկիրը բաժանվեց Ղզլբաշ ցեղերի տիրապետության ու ազդեցության ոլորտների: Այն բոլոր հարկերն ու տուրքերը, որ հայ ռայաթները մինչ այդ վճարում էին Աղ-կոյունլուների պետական պաշտոնյաներին ու քոչվոր ցեղերի ավագանիներին, այժմ սկսեցին գանձել երկրի նոր տերերը:

Թե ինչպես էին Ղզլբաշ ցեղերն իրենց տիրապետությունն իրացնում նոր գրավված երկրամասերում, պարզվում է Բարսեղ Արճիշեցի գրչի բազմարժեք մի հիշատակարանից: Նկարագրելով ԺԶ դարի առաջին տարիների քաղաքական անցուդարձերը Արճեշում ու նրա շրջակայքում, Բարսեղը գրում է. «Եւ յետ այսր ամենայնի ապա եկին Շ. (500) տուն կարմիր գլուխ Սոֆիք, Ծ. (50) խալֆայ, և Ժ. (10) բանակ արարին զքաղաքն և զերկիրն, և բաժանեցին ի վերայ և նստան» (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 249):

Այս տեղի ունեցավ 1501 թվականին: Քիչ հետո, հավանաբար 1504 թվականին, նրանք սկսեցին իրենց հպատակեցրած հայ գյուղացիներից պահանջել այն աստիճանի ծանր մալ (ռենտա), որ մինչև այդ չէր լսված ու տեսնված: «Դ՜. բիւր (այսինքն՝ չորս միլիոն դահեկան) մալ ուզեցին յաւուր բարեկենդանին,- գրում է նույն Բարսեղը,- որ և անկան յամէն գլուխ ԴՌ. (4000) դեկան և յամէն գուղան ԺՌ. (10.000) դեկան: Եւ ողորմելի քրիստոնեայքն ոչ գիտէին, թէ զինչ արասցեն: Դիմեցին չար կատաղիքն ի վերայ Բ. (2) տան մէկ հաւօլայ և բազում տանջանօք չարչարէին, կախէին և ծեծէին. և ոչ գտանէր դրամ»:

Հարկահանությունն ավարտվում է նրանով, որ ղզլբաշները կողոպտում են ժողովրդին մինչև վերջին հնարավորությունը. խլում են ամեն ինչ՝

ոսկե ու արծաթե զարդեր (ապարանջան, գինդ, լանջանոց), հագուստ և այն ամենը, ինչ նյութական արժեք էր ներկայացնում «թէ ի վերայ հողոյ և թէ ի ներքոյ հողոյ»: «Զամէն գինչ ունէին տուին և դեռ ոչ կարացին ազատիլ»,- հայտնում է հիշատակագիրը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը ոչինչ չկորցրեց Աղ-կոյունլուների պետության կործանումից և ոչինչ չշահեց Սեֆյան զզլբաշների հաղթանակով:

2.

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ինչպես տեսանք նախորդ էջերում, Հայաստանը ԺԵ դարի երկրորդ կեսին, գտնվելով սկզբից Կարա-կոյունլու, իսկ 1468 թվականից՝ Աղ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերի գերիշխանության տակ, անդադար կրում էր իր վրա տիրողների ձեռնարկած նվաճողական պատերազմների և ներքին գահակալական կռիվների ավերիչ ու կործանարար ազդեցությունը, չունենալով քաղաքական կյանքի ինքնուրույն հուն:

Սակայն սխալ կլիներ սրանից հետևեցնել, թե պատմական Հայաստանը, իր բոլոր նահանգներով, լիովին զրկվել էր սոցիալ-տնտեսական իր ինքնությունից և դարձել քոչվորական կենցաղով ապրող տիրապետողների տնտեսական ու վարչական սիստեմի դիմազուրկ կցորդը: Ուստի, հասկանալի է ըստ ինքյան, որ հայ ժողովրդի պատմության մեջ զբաղեցնող ժամանակաշրջանի ըստ հնարավորին ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է ի մի բերել և քննարկել բոլոր այն պատահական ու ժլատ տվյալներն ու ակնարկները, որոնք ցրված են սկզբնաղբյուրների մեջ և փոքրիշատե հնարավորություն են տալիս մերձենալ ժողովրդի ներքին կյանքի, տնտեսության ու մշակույթի հարցերին:

Այս առումով ևս հիշատակարանները, ինչպես նաև նրանց առընթեր հանդիպող կալվածագրերը, նվիրաբերական արձանագրությունները և նման այլ աղբյուրներ՝ արժանի են ուշադիր ու խուզարկու քննության: Սրանց ընձեռած տվյալներն են, որ օգնում են հիմնական գծերով ուսում-

նասիրել Հայաստանի վարչական բաժանման, կիսանկախ ամիրությունների և կուսակալությունների ներքին կյանքի ու իրավասությունների, հայ ֆեոդալական տների ու եկեղեցական կալվածատիրության, հայկական գյուղական համայնքի կազմակերպչական սկզբունքների ու ֆունկցիաների, քաղաքների, առևտրի ու արհեստագործության, գանձվող հարկերի ու տուրքերի հետ առնչվող հարցերի մի զգալի մասը:

Փորձենք համառոտակի անդրադառնալ այդ հարցերին:

Ա

*Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների տիրապետության տակ ընկած Հայաստանի հարավային նահանգներում ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում ևս շարունակում էին իրենց գոյությունը քրդական դինաստիաներով կառավարվող կիսանկախ ամիրությունները: Կարա-կոյունլու Սքանդարը 1422-1427 թվականներին համառ պայքար մղեց քրդական այդ ամիրությունների դեմ: Նրան հաջողվեց բռնությամբ, խորամանկությամբ ու խաբեբայությամբ ջլատել քրդական այդ իշխանությունների ուժերը, հնազանդեցնելով նրանց գահին: Ջհանշահի թագավորության տարիներին նրանք կրկին գլուխ բարձրացրին, վերականգնեցին իրենց իշխանություններն ու քաղաքական կշիռը, հմտորեն օգտագործելով Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների քաղաքական հակամարտությունը**:*

Հայաստանի ամենախոշոր ու զորեղ քրդական ամիրությունը՝ Բաղեշի

---

* Բերում ենք մեր աղբյուրներում եղած ժամանակագրությունը. «Ի ՊԿԸ (1419) Ամիր Եզդին բարկացեալ Վաստանայ՝ գնաց ի Բաղիշու երկիրն և այրեաց Կ (60) գեօղ՝ մինչև ի գաւառն Սեղմայ: Ի սոյն ամի մարախն զամենայն բոյսս կերաւ, բայց ի մեր բոյսս վնաս ոչ արար. հազար ամանաթ ի տանէցոյ մի դադարիք. ով չցանեց՝ ոսնն աւերեցաւ (Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց Պատմագրաց, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 173):

«Ի թվին ՊՀԲ (1423) մեռաւ մելիքն Վաստանայ՝ և ճայրն նորա ամիր Եզդին և իւր որդին: Ի ՊՀԳ ամին Սքանդարն սպան զԵզդին և աւերեաց զերկիրն, և զՎան Բաղաւ՝ և զՎաստան անմարդաբնակ արար: Ի սոյն ամի իշխանութեան Սքանդարին և ի պարոնութեան սուլտան Ահմատին և ի կաթողիկոսութեան տէր Պօղոսին յերուսաղէմ Յարութեան դուռն՝ Բ. ամ փակեալ կայր» (Նոյն տեղում, էջ 173-174):

ամիրությունն էր, որը խլխանական վարչական բաժանման տրադիցիայով շարունակում էր կոչվել նաև «Խլաթի թուման»: Ռոժակի ցեղին պատկանող Բաղեշի ամիրների տիրապետությունը տարածվում էր Բաղեշի, Խլաթի, Մուշի, Խնուսի, ինչպես և Բասենի ու Ախնիկի վրա. որոշ ժամանակ նրանց էր ենթարկվում նաև Մանազկերտի շրջանը:*

1390 թվականին Բաղեշի ամիր է հիշվում Ամիր-Շարաֆը (տե՛ս Ավագ քահանայի վկայաբանությունը, «Հայոց նոր վկաները», գիտ. հրտ., էջ 158): Նրան հաջորդում է Շամս-ադ-դինը, որը Կարա-Յուսուֆից, որպես սո-յուրղալ, ստանում է արդեն իր բնատիրքին պատկանող երկրամասը: Սկանդարի իշխանության սկզբի խառը տարիներին Շամս-ադ-դինը գործակցում է Շահրուխին և ձգտում անկախանալ Կարա-կոյունլուներից: Գրիգոր Խլաթեցին նրան «չար սատանի արբանեակ» և «Նեռին կարապետ» կոչելով, հայտնում է.

> *«Որ նա արար հպարտութիւն*
> *Ձհնազանդեցաւ Սկանդարին»*
> *(ԺԵ դարի հշատ., Ա, էջ 284):*

1424 թվականին Սկանդարին հաջողվում է մյուս քուրդ ամիրների հետ միասին ժամանակավորապես ենթարկել նաև Շամս-ադ-դինին, սակայն Բաղեշի ամիրությունը շարունակում է գոյություն ունենալ և նշանակալից դեր կատարել Հայաստանի քաղաքական կյանքում նաև ԺԵ դարի հետագա տասնամյակներում:

Շարաֆ-բեկի «Քրդերի պատմության» մեջ Ռոժակ ցեղի ամիրների պատմությունը շարադրված է գերազանցապես ավանդությունների հիման վրա, ուստի զարմանալի չէ այն հանգամանքը, որ նրա հաղորդած տվյալները հաճախ հերքվում կամ ճշտվում են ժամանակակից հայ հիշատակագիրների գրանցած ստույգ ու վավերական տվյալներով:

Այսպես, նշանավոր ամիր Շամս-ադ-դինից հետո, ըստ Շարաֆ-բեկի, Բաղեշի ամիրությունն անցնում է նրա կամազուրկ ու պետական գործի համար ընդունակություններ չունեցող որդուն՝ Ամիր-Շարաֆին: Սրա կին Շահում-

---

* [Բաղեշի քուրդ ամիրայության վերաբերող լրացուցիչ տեղեկություններ տե՛ս այս

խաթունը ամուսնու կենդանության օրոք կենակցում է Միր-Սեյիդ Ահմադ Նասր-ադ-դինի հետ. իշխանությունը փաստորեն գրավվում է վերջինիս կողմից: Ամիրությունը պառակտվում է մի շարք մասերի: Այս անկայուն ու խառն դրությունը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև Ամիր-Շարաֆի որդին, հասակ առնելով, գրավում է իշխանությունը: Սրան հաջորդում է որդին՝ Իբրահիմը, իսկ վերջինիս՝ ամիր Հաջի-Ահմադը (1443 թ. Բաղեշում սա կառուցում է մզկիթ ու քարվանսարա. մեռնում է 1465 թվականին): Հաջի-Ահմադի որդի Իբրահիմից հետո Աղ-կոյունլու Ուզուն-Հասանը Բաղեշի ամիրությունը խլում է Ռոժակի ցեղից: Այս դինաստիան կրկին հաստատվում է իր տիրույթներում 1494-95 թվականներին, Շահ-Մահմադի ջանքերով (տե՛ս Charafnameh ou histoire des Kurdes par Scheref, prince de Bidlis, publiée par V. Veliaminof-Zernof, tome I, première partie, *Պետերբուրգ, 1860, պրսկ. բնագիր, էջ 377-387):*

Բաղեշի ամիրների այս ժամանակագրությունը, հատկապես ԺԵ դարի 40-60-ական թթ. նկատմամբ, խիստ վերանայման կարիք է զգում:

Ըստ հիշատակարանների, 1445 թվականին Բաղեշի ամիր էր խելագար Շեյխ-Մահմուդը: Ամիրության մեծամեծները հեռացրին նրան և ամիր հռչակեցին նրա եղբորորդի Շամս-ադ-դինին: Այս վերջինս հիշատակվում է 1446-1455 թթ. Բաղեշում և Արճեշում շարադրված հիշատակարաններում որպես Ջհանշահին ենթակա «պարոն ամիր» կամ «Քրդաց ամիր»:

1459 թվականից մեր հիշատակագիրները Բաղեշի ամիր են համարում արդեն Ամիր-Շարաֆին, որը, ինչպես առիթ ունեցանք նշելու, Ջհանշահի արևելյան արշավանքների տարիներին ապստամբել էր Կարա-կոյունլուների դեմ և ամրանալով իր իշխանության բերդերում, դիմադրություն էր ցույց տալիս Ջհանշահի կողմից ուղարկված տասներկու հազարանոց պատժիչ զորախմբերին: Սրանք, ապատակելով ու կողոպտելով ամիրության անպաշտպան թողնված գյուղերը, պաշարել էին Խլաթի բերդը և «զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ և ի Մուշ, Խութ և ի Սասունք և յամենայն գաւառն նոցա»:

Պատերազմական գործողությունները Կարա-կոյունլուների ու Բաղեշի ամիրության զինական ուժերի միջև դադարում են այն ժամանակ, երբ Զաքարիա կաթողիկոսի միջնորդությամբ Ամիր-Շարաֆը համաձայնում է «Հարկն կայսերական» վճարել Ջհանշահին ու ենթարկվել Կարա-կոյուն-

յուներին (տե՛ս հշտկ. N 221, էջ 174-175):

Այսպիսով, պարզվում է, որ Ջհանշահի արշավանքը Բաղեշի ամիրության դեմ ձեռնարկված էր կենտրոնական իշխանությանը ենթարկվել չկամեցող ամիրին հնազանդեցնելու համար: Կարա-կոյունլուներն իրենց բավարարված զգացին այն բանից հետո, երբ Ամիր-Շարաֆը համաձայնեց վճարել «կայսերական հարկը»: Իր իշխանության տակ գտնվող ռայաթների նկատմամբ Ամիր-Շարաֆն այնպիսի ինքնիշխան տեր ու տնօրեն էր համարվում, որ այս դեպքից մի-երկու տարի հետո Բաղիշեցի Հակոբ գրիչը իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ աշխատանքը կատարել է «ի ղանութեան Ամիր-Շարաֆին», ավելորդ համարելով նշել նույնիսկ Ջհանշահ փադիշահի՝ Ամիր-Շարաֆի սյուզերենի անունը:

Բաղեշի ամիրայության մեջ մանր շրջանները կառավարվում էին հատուկ հաքիմների՝ «գավառապետների» կողմից, որոնք սովորաբար լինում էին քրդական այն ցեղերի առաջնորդները, որոնց էլ բնակություն էր հաստատել տվյալ շրջանում: Ամիր-Շարաֆի ժամանակ, օրինակ, Տարոնում հաստատված էր քրդական Դմլի (Դումբուլի) ցեղը. նրանք «տեղի առեալ բնակէին ի նոյն գաւառն Տարօնոյ, առ ստորոտաւ լերինն այնմիկ Տօրոսի, ի մերձակայ (Իննակնեան վանից) դեօղսն»: Հավանաբար հենց այդ Դմլիների ցեղապետն էր Հովհաննես եպիսկոպոսի վկայաբանության մեջ Տարոնի գավառապետ կոչված խալիլը: Սրա կարգադրությամբ, 1463 թվականին, վերոհիշյալ Հովհաննես եպիսկոպոսը, ամբաստանված լինելով ինչ-որ մզկիթի քարերով եկեղեցի կառուցելու հանցանքի մեջ՝ ձերբակալվում է և ուղարկվում Բաղեշ՝ Ամիր-Շարաֆի կողմից դատվելու համար: «Եւ կապեալ զնա յուղարկեաց ի Բաղէշ քաղաք՝ առ ամիրապետն Շարաֆ» - գրված է վկայաբանության մեջ (տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտ. հրտ., էջ 300): Այս փաստերից կարելի է եզրակացնել, որ Տարոնի հաքիմ խալիլի, ինչպես և մյուս «գավառապետների» դատական իրավասությունները սահմանափակ էին:

Բաղեշի ամիրությունը, անշուշտ, Հարավային Հայաստանի ամենահզոր քրդական իշխանությունն էր, բայց ոչ միակը: Վանա լճի հարավային շրջանները գտնվում էին Խիզանի քրդական ամիրության տիրապետության տակ: 1417-1442 թվականների հիշատակարաններում, որպես Խիզանի ամիր բազմիցս հիշվում է Ամիր-Դայութը, ըստ Շարաֆ-բեկի՝ Ամիր-Սուլեյմա-

նի որդին: Դայութի ինքնիշխանությունն ի նկատի ուներ կազմարար Ներսես Մանգասին, երբ 1431 թվականին շարադրած հիշատակարանում մեծարում էր նրան «թագաւոր» տիտղոսով, գրելով՝ «ի թագաւորութեան մերոյ Ամիր-Դայութի, և ի ղանութեան Սքանդարի» (ԺԵ դարի հշտկ., էջ 412):

ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի հիշատակարանների տվյալներով Խիզանի ամիրության վրա հաջորդաբար իշխել են՝ ամիրզա Ղասումը (հիշված 1455 թ., տե՛ս հշտկ. N 80, էջ 59), Ամիր-Սուլեյմանը (հիշված 1456, 1459 թթ., տե՛ս հշտկ. N 104, էջ 76 և N 155, էջ 118), Ամիր-Մելքը (հիշված 1468 թ., տե՛ս հշտկ. N 350, էջ 274) և Դավութ-բեկը (հիշված 1497 թ., տե՛ս Մատենադարան, ձեռ. N 5402, էջ 338ա): Շարաֆ-բեկի տվյալներով այս Դավութը իշխել է 39 տարի (Scharaf-Nameh, էջ 212):

Վասպուրականի կյանքում նշանակալից դեր էին կատարում նաև Ոստանի քուրդ ամիրները՝ Շամբոյան ցեղից: Մի շարք հիշատակարաններ հնարավորություն են տալիս պարզելու, որ եղել են տարիներ, երբ քրդական ամիրների այս ընտանիքի իշխանության տակ էին գտնվում Վանը, Ոստանը, Աղբակը, Քարքանը, այլ խոսքով «Ոստանայ երկիրս մինչ ի Բաղէշ» (տե՛ս, օրինակ, ԺԵ դարի հշտկ., Ա., էջ 326, 375-376): Տիրելով Աղթամարի հարևան շրջաններին, նրանք հաճախ փորձ էին կատարում գրավելու ու կողոպտելու Վասպուրականի միակ հայկական այդ իշխանությունը: Քրդական այս դինաստիայի պատմության ու տիրակալների ճյուղագրության հետ կապված մի շարք հարցեր հնարավոր է լինում պարզաբանել հիշատակարանների միջոցով: Դինաստիայի հիմնադիր պետք է համարել, ըստ երևույթին, Ամիր-Եզդինին, որը 1390 թվականին հիշվում է որպես Վանի տեր (տե՛ս Մատենադարան, Արխիվային բաժին, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 119, General catalogue of the armenian Manuscripts in the Bodleian Library, էջ 106):

Այս Ամիր-Եզդինը 1392 թվականին իր եղբորից գրավում է Ոստանը (ԺԴ դարի հշտկ., էջ 597). հիշատակված է քրիստոնյաների նկատմամբ չարանենգ դիրք գրաված ծագումով թուրքմեն իր Փաշա-խաթուն կնոջ հետ միասին 1386-1419 թթ. շարադրված հայկական մի քանի վկայաբանությունների մեջ:

Ամիր-Եզդինին հաջորդեց որդին՝ Մելիք-Մահմադը, որ դեռևս 1412 թվականին հիշատակված է հոր հետ միասին որպես Ռշտունիքի կողմնա-

պետ (տե՛ս ԺԵ դարի հիշատ., Ա, էջ 220 «Ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ամիր-Եզդինին և որդոյն իւրոյ Մելիք-Մահմադին»):

1423 թվականին Մելիք-Մահմադը թունավորվեց Սրանդարի կողմից և նրան, ըստ երևույթին, հաջորդեց եղբայրը՝ Ոստանի տեր Սուլթան-Ահմադը: Սա ևս, Բաղեշի ամիր Շամս-ադ-դինի հետ միասին խաբանոք հրավիրվեց Սրանդարի մոտ, բանտարկվեց Երնջակի բերդում, ապա սպանվեց, հավանաբար 1424 թվականին: Ամենայն հավանականությամբ ամիր Եզդինի և Փաշա-խաթունի որդիների եղեռնական այս վախճանն է նկատի ունեցել Գոհար-Մելիքի վկայաբանության ընդօրինակողներից մեկը, երբ վարքի վերջում ավելացնում էր այսպիսի տողեր. «Իսկ անիծեալ խաթունն Փաշայ, յետոյ բերանն ցեցուեալ սատակեցաւ և Գ. որդիք նորա ի սուր սուսերի մաշեցան ի ձեռաց Թարքաց (իմա Սրանդարի - Լ. Խ.). և զամենայն ամրոց և զքաղաքս առին, որ և զուկերս նոցա հրով այրեցին…» («Հայոց նոր վկաները», էջ 196):

Շարաֆ-բեկի տվյալներով Ոստանի ամիրությունը մի քանի տասնամյակ խլված է եղել Շամբոյան ցեղից և վերադարձվել է Ասադ-եդ-դին Ռուկերադուկի կողմից (Scharaf-Nameh, էջ 92-95): Հավաստել կամ մերժել այս տվյալը չենք կարող. հիշատակարաններից գիտենք սակայն, որ Ամիր-Եզդինի թոռներից Փիր-բեկը ԺԵ. դարի 30-ական թվականներին շարունակում էր իշխել Ռշտունիքի կողմերում: 1431 կամ 1433 թվականին նրան հաջողվեց նույնիսկ գրավել ու կողոպտել Աղթամար կղզին: Հայտնի է նաև, որ 1462 թվականին Ոստանը գտնվում էր դարձյալ քրդերի ձեռքին, նրանց իշխանն «էր ազգաւ քուրդ՝ ժանտ և անօրէն, ամենևին թշնամի քրիստոնէից» (հիշատ. N 221, էջ 176): Խոսքը այստեղ, ամենայն հավանականությամբ, Ամիր Եզդինշերի մասին է, որ մերձավորապես նույն տարիներին գերել էր Ոստանի եկեղեցիների սրբությունները, իսկ 1469 թ. (կամ քիչ առաջ) կողոպտել էր Ռշտունիքի հայերին (հիշատ. N 356, էջ 282):

Ըստ Շարաֆ-բեկի, Ասադ-եդ-դինին հաջորդել է որդին՝ Եզդինշերը: Եթե սա 1460-ական թթ. հիշված Եզդինշերը չէ, ապա՝ երրորդն է այդ անունը կրող Ոստանի քուրդ ամիրներից: Այս Եզդինշերը 1490 թվականին, երբ հազար հոգուց բաղկացած զորախմբով, որպես Սուֆի-խալիլի դաշնակից, մասնակցում էր նրա և Սուլեյման Բիժան-օղլու պայքարին: Եզդինշերը իր ուժերով պետք է դարանամուտ լիներ ու հարձակվեր Բիժան-օղլու վրա

թիկունքից, սակայն Աղ-կոյունլուների փորձված զորամասը ծուղակի մեջ ընկավ. մինչև Սուֆի-խալիլի հետ ճակատամարտի բացվելը նա ջարդեց Ոստանի ամիրին:

Եզդինշերին հաջորդել է Զահիդ-բեկը: Սա, ինչպես տեսանք, 1498 թվականի նոյեմբերին գրավեց ու կողոպտեց Աղթամար կղզին, և «բազում աւերս արար, և անչափ մալ ու մանդրուն՝ հայի և տաճկի, առաւրի և բնականի թալանեաց և տարաւ (Մատենադարան, ձեռ. N 6324, էջ 303ա): Մի շարք գրիչներ արձանագրում են, որ Զահիդ-բեկի ժամանակ «ազգն Մարաց դարձեալ զօրացան»: Ըստ Շարաֆ-բեկի Զահիդ-բեկը հպատակվել է Շահ-Իսմայիլին ու իշխել Ոստանում 60 տարի (Scharaf-Nameh, էջ 95):

Բացի Բաղեշի, Խիզանի ու Ոստանի քրդական խոշոր ամիրություններից Հայաստանում գոյություն ունեին նաև տարածքով փոքր և նվազ քաղաքական կշիռ ունեցող քրդական այլ ամիրություններ՝ Հազզոյում, Սասունում, Ջերմուկում, Սպարկերտում, Բայույում, Մծնկերտում և այլ վայրերում:

Պատմական Հայաստանի մյուս շրջաններում իշխում էին թուրքմենական ազդեցիկ ցեղերի ավագանիները, բարձրաստիճան զինվորականները և կառավարող դինաստիայի ամիրզադաները: Սրանք փադիշահների կողմից ստանում էին բարեբեր հողային տիրույթներ (ոլքաներ), իրենց ձեռքում կենտրոնացնելով այդ տիրույթների (որոնք հաճախ ընդարձակ երկրամասեր էին լինում) վարչական ու զինվորական կառավարչությունը: Հայ հիշատակագիրները նրանց «կողմնապետ» կոչումն են տալիս:

Ոլքաների ամիրները ձգտում էին իրենց տիրույթները դարձնել ժառանգական, սակայն այդ միշտ չէր նրանց հաջողվում: Հանցապարտ լինելով պետության առաջ՝ նրանք զրկվում էին իշխանությունից: Ամիրները հաճախ պաշտոնազուրկ էին արվում նաև փադիշահների ու կառավարող դինաստիաների փոփոխության հետևանքով:

Հիշատակարանները հնարավորություն են տալիս հետևելու Վանի «կողմնապետության» ամիրների հաջորդականությանը ԺԵ դարի 30-ական թվականներից մինչև դարի վերջերը*:

* Հավանաբար Փիր-Հուսեյնի դուստրն է Մելիքխաթուն անունով կինը, որ 1443 թ. նույնպես է գալիս որպես Վաղարշապատի տեր և Գրիգոր Մակվեցուց ԺԵ. հազար դինար ստանում այդ գյուղի դիմաց: (Ջամբռ, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի

Քրդական ամիրությունների դեմ Սքանդարի ձեռնարկած համառ պայքարից հետո Վանի օլքան հանձնվեց ոմն Պիճ-Ասլանի, որը, ամենայն հավանականությամբ, Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի միության բաղկացուցիչ ցեղերից մեկի ավագներից էր:

Զարչի Մուրադի վկայաբանության մեջ, որ շարադրել է 1484 թվականից հետո Գրիգոր Զորթան Արճիշեցին, տեղեկություն կա այն մասին, որ 1439 թվականին Վանի իշխանն էր Պիճ-Ասլանը. կառավարչության գործերին մասնակցում էր նաև նրա Սեիդ-Ղասում որդին:

Պիճ-Ասլանը հիշատակվում է, որպես Վանի ու Ոստանի կողմնապետ նաև 1444 ու 1445 թվականներին: Թումա Մինասենց նշանավոր գրիչը 1445 թվականին շարադրած իր հիշատակարանում Ջհանշահից հետո հիշատակում է Պիճ-Ասլանին, անվանելով նրան «կողմնապետ մերոյ աշխարհիս, որ տիրէ Վանայ և Ոստանայ» (ԺԵ. դարի հշտկ., Ա, էջ 579, հմմտ. նաև էջ 566):

Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների բախումների ժամանակ Պիճ-Ասլանը կասկածելով, թերևս ոչ առանց հիմքի, անհավատարմության մեջ Ջհանշահի կողմից բանտարկվել է: 1458 թվականին, փախչելով բանտից հարել է Հասան-Ալուն և մասնակցել Ջհանշահի դեմ բարձրացրած նրա ապստամբությանը, Վանը վերագրավելու ուղղությամբ ապարդյուն փորձեր կատարելով: 1459 թվականին Ոստանում գրված մի հիշատակարանում տվյալ կա այն մասին, որ Հասան-Ալին «առաքեաց զՊիճ-Ասլանն ի վերայ Վանայ բերդին, զի առցէ զնա, և ոչ կարաց» (հշտկ. N 154,

Սիմէօնի կաթողիկոսի Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 100-101): Իսքանդարը Վանը Քրդերից՝ գրավում է 1425 թվին: Իսքանդարի որդիներից մեկը՝ Յար-Ալին (Յարալի) իշխան էր կարգված «ի յամուրն Տոսպ գաւառի ի յոստն Վարագայ ի Վան քաղաքի... և առնէր անիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և տաճկաց» (Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն («Լանկ-Թամուրի արշավանքը Հայաստան»), աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 170): Նրա տրամադրության տակ էր 2000 հեծյալ: Նա փախչում է Շիրվան 1434 թվին, դրանից հետո իշխանությունը հանձնվում է Ջհանշահին: 1436-ին նա Վանում պաշարված էր, բայց հանձնվում է Շահռուխին և նրա կողմից ստանում Կարա-կոյունլուների գահը:

Դրանից հետո միայն կարող էր Պիճ Ասլանը դառնալ Վանի կողմնապետ (ԺԵ, Ա, էջ XXI, XXVI, XXVIII):

էջ 117):

Վանի բերդն այդ ժամանակ արդեն գտնվում էր Ջհանշահի կաթնեղբայր Մահմուդ-բեկի ձեռքին, որը 1462 թվականի նշանավոր հիշատակարանում կոչվում է «գառողն Մահմուտ բէկ», «որ նստէր յամուրն Շամիրամայ՝ ի բերդն Վանայ (հշտկ. N 221, էջ 175-176):

Հիշատակարաններում գրանցված որոշ տվյալներից, ինչպես նաև Մուրատ Վանեցու վկայաբանությունից (սպանվել է 1485 թ.) հայտնի է դառնում, որ Աղ-կոյունլուների հաղթանակից հետո Վանի «կողմնապետությունը» հանձնվել է Ուզուն-Հասանի նշանավոր զորավար Սուլեյման-բեկ Բիժան օղլուն, «որ էր աթաբակ և հայրագլուխ Եաղուպ փաթշահին («Հայոց նոր վկաները», էջ 320): 1487 թվականին Վանից ոչ հեռու գտնվող Սպգա վանքում շարադրված հիշատակարանի մեջ Սուլեյման-բեկը հիշված է, որպես տեղի պարոն (Մատենադարան, ձեռ. N 955, էջ 246ա), իսկ մի այլ հիշատակարանում տվյալ կա այն մասին, որ «Յայսմ ամի (այսինքն՝ 1478 թ.) գնաց Սուլէյման պարոն ի վերայ Մոկաց, և Մոկաց պարոն փախեաւ, և էառ զերկիրն ամենայն և հնազանդեցոյց» (Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 347):

Այսպիսով, Վանի օլքայի օրինակով պարզվում է, որ Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների տիրապետության տասնամյակներում, հակառակ այն բանի, որ քոչվոր ցեղերի ավագանիներն ու զորահրամանատարները ձգտել են ամուր կերպով հաստատվել իրենց հանձնված օլքաներում, այդ շրջանները դարձնելով ժառանգական տիրույթ, սակայն այդ ուղղությամբ նրանց ջանքերը ցանկալի արդյունք չեն տվել:

Հիշատակարանների հաղորդած կցկտուր տվյալները հնարավորություն են տալիս փոքրիշատե հետևելու նաև Այրարատյան նահանգի վրա իշխող ամիրների հաջորդականությանը ԺԵ դարի սկզբից մինչև Աղ-կոյունլուների դինաստիայի հաստատումը:

ԺԵ դարի առաջին քառորդում Զագավանքում, Օշականում, Բագարանում և Կարսում շարադրված մի քանի հիշատակարաններից պարզվում է, որ պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի մեծ մասն այդ ժամանակ գտնվում էր Սաաթլու *քոչվորական ցեղի ավագանիների ձեռքում: Նրանք իշխանություն էին հաստատել այդ շրջաններում, ամենայն հավանականությամբ, Ամիր-Սաաթի ժամանակ, որը վախճանված պետք է*

լինի 1411 թվականից առաջ: 1411, 1412 և 1414 թվականներին, Բագրևանդում, Կարսում և Օշականում աշխատող գրիչները, որպես պարոն հիշատակում են Ամիր-Սաաթի որդի Փիր-Հուսեյնի անունը, իսկ 1425 թվականին, Զագավանքում շարադրված մի հիշատակարան տալիս է Ամիր-Սաաթի թոռներ Փիր-Ղաիբի և Ակզուլի անունները (տե՛ս ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 124, 134, 162, 335): Ըստ երևույթին, Ամիր-Սաաթի այս թոռներով էլ ավարտվում է քոչվորական այդ ընտանիքի տիրապետությունը Այրարատում: ԺԵ դարի 30-ական թվականներին Սքանդարի կողմից Այրարատյան նահանգի կառավարիչ է նշանակվում Սյունաց իշխան Բեշկեն Օրբելյանի մեծամեծ պաշտոնների ու տիտղոսների արժանացած Ամիր-Ռուստամ որդին (այս մասին տե՛ս Հ. Փափազյան, «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից» հոդվածը, տպ. Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» մեջ, 1955, N 8-ում, 86-88):

Սքանդարի եղեռնական վախճանից հետո պաշտոնանկ եղած Ռուստամն ապաստան էր գտել Լոռի գաղթած իր հոր մոտ (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 468):

1441 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Էջմիածին տեղափոխվելու և նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ Այրարատյան նահանգի կուսակալ հիշվում է ոմն Յաղուբ-բեկ, որի նստավայրն էր Երևանը:

1462 թվականին Այրարատյան նահանգի «վերին կողմերը» ենթարկված էին արդեն Ջհանշահի Հասան-Ալի որդուն:

Բերված փաստերից կարելի է հետևեցնել, որ տարբերվելով հարավային Հայաստանում գոյություն ունեցող քրդական կիսանկախ ամիրություններից, որոնք ժառանգաբար կառավարվում էին տեղական քուրդ ամիրների դինաստիաների կողմից, Հայաստանի մյուս մասերում թուրքմենական քոչվոր ավագանիներից և ոչ մեկը չկարողացավ կայուն տիրապետություն հաստատել: Կենտրոնական իշխանության կողմից որպես առանձին երկրամասերի կառավարիչներ ուղարկվող «կողմնապետները», ինչպես նաև օլքաներ ստացող քոչվոր ավագանիները, հակառակ իրենց ձգման, չկարողացան ժառանգական տերը դառնալ իրենց հանձնված շրջանների: Ամեն մի նոր գահակալ իր համար ամուր հենարան ստեղծելու նպատակով պետության եկամտաբեր շրջաններից (որոնց մեջ,

անտարակույս, մտնում էին նաև կենտրոնական Հայաստանի շրջանները) հետ էր կանչում նախորդների կողմից կարգված կառավարիչներից շատերին և նրանց փոխարեն այդ նույն շրջանները հանձնում իր գահին հավատարիմ քոչվոր ավագանիներին ու զինվորական բարձրաստիճան հրամանատարներին:

Հայաստանի քրդական ամիրություններն ու «կողմնապետությունները» իրենց ներքին կյանքում անկախ էին: Ամիրներն օժտված էին ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական իմունիտետ իրավունքներով: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արքունիքը, որը կենտրոնական արքունիքի մանրանկար պատճենն էր: Կենտրոնական պետության գործակալությունների պաշտոնյաները մուտք չունեին ինքնավար այդ շրջաններում: Ամիրներն ինքնուրույն կերպով դատում էին պատժապարտ հանցագործներին, նույնիսկ մահվան վճիռ արձակում և կամ դատը հանձնում շար՛ի դատարանին, որին մասնակցում էին տվյալ վայրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականները՝ ղազու գլխավորությամբ*:

Կալվածքների վաճառքը, օտարումը, նվիրաբերությունը և նման կարգի այլ տնտեսական գործարքներ հաստատվում էին ամիրների կողմից՝ «ամիրայ մրլքաթրգթովն և նըշանովն» (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 565): Կնքված որևէ համաձայնագրի խախտողները պարտավորվում էին տուգանք վճարել տեղի ամիրին և այլն**:

Ամիրությունների ներքին կյանքում մեծ դեր էին կատարում տվյալ շրջանում հաստատված քոչվորական ցեղերի ավագանիները: 1445 թվականին, օրինակ, Բաղեշի ամիրության «մեծամեծները», առանց կենտ-

---

* Տե՛ս Բաղեշում, 1390 թ. նահատակված Ակաց Բակկարի վկայաբանությունը (Հայոց նոր վկաներ, էջ 158) և «Պատմութիւն կնոջ միոյ որում անուն էր Շնոհիար». նահատակվել է Բաբերդում, 1494 թ. (ձեռ. N 7366, էջ 421բ) ինչպես նաև Ոստանում, 1398 թ. նահատակված Թամար կամ Գոհար-Մելիքի վկայաբանությունը (Մատենադարան. Արխիվային բաժին, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 119, էջ 166):

** Մանրամասն մի փաստ ևս. 1461 թ. ոմն Պողոս վարդապետ, ի դիմաց ժողովրդությունից գանձված գումարների, հանձնում է Արծկեի Մանչկագործ վանքին 1600 թանկայի արժողությամբ իր «ճալալ ապրանքը»: Այդ առթիվ գրված համաձայնագիրն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ով ի յայս գավիս ի դուրս եղանէ Ռ. (1000) թանգայ տուգանք տայ ամիրին» (հշտկ., N 201, էջ 160):

բռնակալան իշխանության միջամտության, պետական գործերից հեռացրին խելագարված ամիր Շեյխ-Մահմուդին, նրա փոխարեն ամիր կարգելով եղբորորդուն՝ Շամս-ադ-դինին (ԺԵ դարի հիշ., Ա, էջ 585):

Հայաստանի ամիրությունների ու «կոմսապետությունների» բնակչության մեջ հայ էթնիկական տարրը գերակշռում էր:

Վարչական ու հարկային տեղական ապարատներում հայ խոշոր առևտրականներն ու վաշխառուները, իսկ երբեմն նաև հոգևորականության ներկայացուցիչները գրավում էին եկամտաբեր պաշտոններ: Այսպես, օրինակ, Թովմա Մեծոփեցու հաղորդած տվյալի համաձայն Արճեշում «առաջնորդ քաղաքի», այսինքն ձեռնավոր է եղել ոմն Ստեփանոս քահանա (Թ. Մեծոփեցի, էջ 47 և 113): Ձեռնավորության պաշտոնում քահանա հորը հաջորդել է Հովհաննես որդին, որն իր դիրքն ամրապնդելու և մահմեդական բռնակալների վստահությունը շահելու դիտավորությամբ հավաքել է Քաջբերունյաց գավառի բոլոր բնչազուրկ ու անտուն տառապյալներին, որոնք բառ պատմիչի «դրա մի միջոց տէր ոչ էն» և բռնի քշելով նրանց Արճեշ ու հանձնելով պետական պաշտոնյաներին, պահանջել է յուրաքանչյուրից Լ-Խ (30-40) թանկա գլխահարկ (Թ. Մեծոփեցի, էջ 117):

1481 թվականի մի հիշատակարանում ուշագրավ վկայություն է պահպանվել Վասպուրականի շրջաններից մեկում իշխող ոմն էման-բեկի արքունիքում «հացինադարի» (գանձապետ) պաշտոն գրաված տէր Կարապետ անունով մարդու մասին. «Յիշխանութեան աշխարհիս մեծ և հրոխտ պարոնին էման-բէկին, որ տէր Կարապետս հացինադար է» (Նոր-Ջուղա, ձեռ. N 544): Գանձապետության պաշտոնը թույլ էր տալիս վաշխառու այս հոգևորականին իր միջոցներով կառուցելու սուրբ Գևորգ վանքի գմբեթը:

Նույն թվականի մի այլ հիշատակարանում ինքն իր մասին տվյալներ է հաղորդում Ոստանի տերերի արքունիքում «լալայի» (դաստիարակ) պաշտոն ունեցող Միրանշահը: Սա, Աղթամարի տանուտերերի ու Ոստանի հայ թամղաչիների կամավորությամբ մեկնել է փադիշահի դուռը և մեծ գումարներ ծախսելով ձեռք բերել հարկային որոշ արտոնություններ և Աղթամարի ու այլ վայրերի եկեղեցիներին պատկանող ձիթհաններից գանձվող հարկը նվիրել է այդ սրբավայրերին, որպես ձիթացին:

Նա գրում է. «Ես՝ Լալա-Միրանշէս, աստուծոյ կարողութեամբն ու

սուրբ Խաչիս գնացի ի փաթշահի դուռն, և յինէ շատ խարճ արարի և գլխամղլն, որ առանն էր ի յետ կորեցի և տեղացս էրի, Աղթամարայ տանուտէրացս մեծի և փոքու և Ոստանայ թամղաչոց կամաւորութեամբն, և ի յԱղթամարայ մայն դրի. և ձիթահացներու հարճն սուրբ Խաչին և այլ եկեղեցեացն ձիթացին տու[ին]ք դամղին փոխան և ոխֆ արարինք սուրբ Խաչին» (Մատենադարան, ձեռ. N 5333, էջ 334ա):

Հիշատակարաններում և ձեռագիր կալվածագրերի ու նվիրաբերական արձանագրությունների մեջ հիշատակված են բազմաթիվ հայ խոջաներ, որոնք, եթե դատելու լինենք տարբեր վանքերի նրանց կողմից նվիրաբերված մեծագին պարգևներով՝ հսկայական գումարներ էին կուտակել առևտրի, վաշխառության ու հարկերի կապալառության ճանապարհով:

Այդ կարգի խոջաներից էր, անշուշտ, պարոն Սեթի որդի խոջա Հովսեփը, որը 1479 թվականին Մուշում ձեռք բերած ձեռագրի հիշատակարանում Պողոս գրչի կողմից մեծարվում է այսպիսի խոսքերով. «Հավատարիմ և ողորմած աղքատաց և տնանկաց, ամենապատվելի և մեծաշուքն և իշխան Տարոնոյ գաւառիս խոճայ Յովսէփ» (հիշ., N 556, էջ 438): Դիվանական այս խոսքերի միջոցով միայն հնարավորություն չունենք պարզելու, թե ինչ նկատի ուներ գրիչը խոջա Հովսեփին Տարոնի իշխան կոչելու համար: Այնուամենայնիվ, հիշելով նաև նրա հորը հատկացված «պարոն» տիտղոսը, կարելի է չտարակուսել, որ այդ խոջան միաժամանակ տեր էր նաև կալվածքների:

Շատ հիշատակագիրներ հետաքրքրական փաստեր են հաղորդում հատկապես Վանի «ազատագունդ» խոջաների մասին: Սրանք էին, որ 1461 թվականի դեկտեմբերին «ձիօք և ձիաւորօք սպառազինեալ», մեծ շուքով Վանից Ոստան ուղեկցեցին Գրիգոր Լուսավորչի աջը հափշտակած Զաքարիա կաթողիկոսին, որն էջմիածնից գաղտագողի փախուստ տալով մեկնում էր Աղթամար:

Վանի այս խոջաներից ու թամղաչիներից շատերը հանվանե հիշատակվում են 1476 թվականին Ազարիա գրչի շարադրած հիշատակարանում: Դրանցից էին թամղաչիներ Էզգարը, Շաղավաթը, Մուսեխը և Սմբատը, որոնք Վանի Պողոս-Պետրոս եկեղեցին ազատեցին ձկան և ընկույզի թամղայից: Հիշատակարանի շարունակության մեջ Ազարիա գրիչը թվարկում է նաև Մելիք Բախտիարի, ռես Փերիջանի և ռես Սարխոշի հետ

միասին՝ տասը անվանի խոջաների անուններ, որոնք վերացրել են Վանի եկեղեցիներից գանձվող «ախֆերու չարէքն» և այլն (Հշտկ. N 506, էջ 404-405):

Այս կարգի փաստերը, որոնց թիվը կարելի է բազմապատկել, վկայում են այն մասին, որ հարավային Հայաստանի քրդական ամիրություններում և կենտրոնական իշխանության կողմից նշանակված «կողմնապետների» իրավասության ներքո գտնվող հայկական շրջաններում, քուրդ և թուրքմեն ցեղապետների և ավագանիների հետ գործակցում էին նաև հայ մեծատուն խոջաները, թամղաչիները և ձեռնավորները:

Խիստ աննշան էր երկրի քաղաքական կյանքում հայ մեծամեծների կատարած դերը, սակայն տնտեսության բնագավառում նրանք գործունեության լայն ասպարեզ ունեին. և աշխատավոր ժողովրդից գանձվող հարկերը հոսում էին ոչ միայն դեպի ամիրների գանձատները, այլ որոշ չափով նաև՝ դեպի հայ խոջաների դրամարկղները:

Սակայն սխալ կլիներ կարծել, թե հայ ժողովրդի իշխող վերնախավը ամենուրեք դիմափոխվել ու ընդունել էր խոջայի և վաշխառուի կերպարանք: Ընդհակառակը, հիշատակարաններն ընձեռում են նյութեր, որոնք այս կամ այն չափով հնարավորություն են տալիս ծանոթանալու Հայաստանի այլևայլ մասերում իրենց գոյությունը դեռևս պահպանած ավատատերերի, նրանց կալվածքների և երկրի տնտեսական ու մշակութային կյանքում կատարած նրանց դերի հետ: Ավատական այդ տիրույթները, միմյանցից բաժան-բաժան, տիրող թուրքմեն ու քուրդ ամիրներին ենթակա շրջանների հարևանությամբ կամ գերիշխանության տակ լինելով, զինական ու քաղաքական տեսակետից մեծ կշիռ չունեին անշուշտ: Սակայն լինելով հայ ժողովրդի անկախ գոյության վերջին հանգրվանները, նրանք սնում էին ազատագրական պայքարի գաղափարներ ու որոշակի դեր էին կատարում ժողովրդի մշակութային ավանդույթների պահպանման ու զարգացման գործում:

Բ

Քննության ենթակա ժամանակաշրջանում Հայաստանում պահպանված ավատական տիրույթների ու կալվածքների մեծագույն մասը պատվարել էր իրեն վանական կալվածատիրության ցուցանակներով:

Հասկանալու համար հայ ավատական դասի ուշագրավ այս կերպարանափոխության տնտեսական ու քաղաքական դրդապատճառները, անհրաժեշտ է մի երկու խոսքով բացահայտել հայ եկեղեցու նկատմամբ մահմեդական իշխողների վարած քաղաքականությունը:

Իր դարավոր գոյության ընթացքում հայ եկեղեցին, արտահայտելով իշխող դասակարգի շահերը, շոշափելի ծառայություններ էր մատուցել երկրի ոչ միայն հայ, այլև օտար տերերին և, ի տրիտուր իր ծառայությունների, տիրողների կողմից միշտ էլ, այս կամ այն չափով, հովանավորվել ու ստացել էր որոշ արտոնություններ: Աստիճանաբար, հայ ավատատերերի դասի վերացմանն ու մասնատմանը զուգընթաց, եկեղեցին իր վրա վերցրել էր նաև ժողովրդի ներքին գործերի տնօրինման ֆունկցիաներ, մի հանգամանք, որի հետ չէին կարող հաշվի չնստել երկրի մեկը մյուսին հաջորդող զավթիչները:

Ուշագրավ է, որ այս կամ այն դինաստիայի կամ առանձին տիրակալի համար ստեղծված ծանր քաղաքական կացության ժամանակ, նրանք, հայ ժողովրդական զանգվածների համակրանքը շահելու կամ օգնությունն ապահովելու մտադրությամբ, անհրաժեշտ էին համարում սիրաշահել հայ հոգևորականության ազդեցիկ շերտերին, եկեղեցու արտոնություններն ընդարձակելու, նվերներ բաշխելու, երբեմն նույնիսկ եկեղեցիներ կառուցելու ճանապարհով:

Հայտնի է, օրինակ, որ Ջհանշահի որդի Հասան-Ալին, իր հոր պարտությունից ու սպանությունից հետո, երբ նախապատրաստվում էր հակահարված տալու Աղ-կոյունլուներին.

«Եկեղեցի շինեաց զՄակուայն,
«Որոյ անուն սուրբ Վարդան,
Եւ նա չեղև իւրն օգնական
Կամօք վերինն հայրական» (Հշտկ. N 424, էջ 334):

Ուզուն-Հասանը ևս, 1472 թվականին, երբ ճանապարհ էր ընկել օսմանցիների դեմ պատերազմելու, պատշաճ գտավ նվերներ բաշխել Դիադին հեղինակավոր վանքին: Այս մասնակի դեպքերին, անշուշտ, նշանակություն չէր տրվի, եթե չլինեին հայկական վանական հաստատությունների նկատմամբ մահմեդական իշխողների հովանավորիչ քաղաքականությունը

բացահայտող բազմաթիվ անտարակուսելի փաստեր:

Վերջերս, հմուտ իրանագետ Հ. Փափազյանի աշխատությամբ, Մատենադարանի կողմից հրատարակվեց ԺԵ-ԺԶ դարերից պահպանված պարսկերեն հրովարտակների արժեքավոր ժողովածուն, որը Հայաստանի ու հարևան երկրների սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը լուսաբանող բազմապիսի ու ճոխ նյութեր է պարունակում (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956): Այդ հրովարտակներից հինգերորդը, տրված Ուզուն-Հասանի կողմից 1475 թվականին Խարաշամբի հայ կուսակրոն հոգևորականությանը, հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ էջմիածնին ենթակա բոլոր կուսակրոններն ազատ են եղել խարաջ ու ջիզյա հարկերից: «Հին ժամանակներից ի վեր մինչև օրս,- գրված է այդ հրովարտակում,- երբեք այնպիսի օրենք չի եղել, որ Ուչքիլիսայի (էջմիածին) կրոնավորներից ու սևագլուխներից խարաջ և ջիզյա պահանջեն» (նշվ. աշխ., էջ 49): Նույնպիսի արտոնություններ են վայելել նաև Գանձասարի կաթողիկոսի հոգևոր իշխանության տակ եղող կրոնավորները: Ջհանշահի կին Բեգում-խաթունի կողմից 1462 թվականին տրված հրովարտակում ուղղակի կարգադրված է նրանցից «ջիզյայի և Բեյթ-ուլ-մալի պատրվակով» ոչինչ չպահանջել, նրանց չարքատաններից ուլաղ չվերցնել, չիջևանել նրանց պատկանող վայրերում և այլն: Չպետք է կասկածել, որ նույնպիսի արտոնյալ վիճակում էին գտնվում նաև Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա վանական հաստատությունների կրոնավորները:

Պարսկերեն հրովարտակներն առաջնակարգ նյութեր են պարունակում նաև վանական հաստատություններին պատկանող կալվածքների նկատմամբ մահմեդական իշխողների հովանավորիչ դերը պարզելու տեսակետից:

Ջհանշահ փադիշահը անթվական մի հրովարտակով կարգադրում է պետական ամեն տեսակ հարկերից՝ մալից (հողային ռենտայի պետությանը տրվող մաս), իխրաջաթից (արտակարգ ծախսեր) և դիվանական ավարիզից (պետության նկատմամբ հարկային պարտավորություններ) ազատ համարել Տաթևի և Վաղադնի վանքերին պատկանող կալվածքները: Հրովարտակում ասված է, որ այդ արտոնությունը տրված է նախկին գահա-

կալների հրամանագրերի օրինակով: Պետական բոլոր կարգի պաշտոնյաները,- ասված է հրովարտակում,- պետք է ենթարկվեն հրովարտակի ոգուն և Տաթևի վանահայր Եմավոնի «ցանքսերից, վարելահողերից ու բերքից մալ ու խարջ չպահանջեն, նրա մարդկանց մուսալլամ և ցուցակագրումից ազատ ճանաչեն (նույն տեղում, էջ 44):

Այսպիսի արտոնություններից, հարկավ, օգտվում էին հայկական բոլոր վանական հաստատությունները, ուստի պարզ են դառնում տնտեսական այն շարժառիթները, որոնք դրդում էին հայ ավատական տների ԺԵ դարի սակավաթիվ ներկայացուցիչներին իրենց պատկանող կալվածքները նվիրաբերել իրենց իսկ իշխանության տակ գտնվող վանքերին, նախօրոք այդ վանքերի վանահայրության պաշտոնը դարձնելով իրենց ընտանիքի ժառանգական ստացվածք:

Հայ աշխարհիկ ու հոգևոր կալվածատիրությունը քննության ենթակա ժամանակաշրջանում այն աստիճանի ներաճված էր մեկը մյուսի հետ, որ հաճախ դժվար է լինում որոշել նրա դասային կերպարանքը: Եվ ահա կյանքի է կոչվում սոցիալական մի նոր տերմին՝ «պարոն-տէր», որը հատկացվում է բոլոր այն հայ կալվածատեր-ավատատերերին, որոնք շարունակում են իրենց ձեռքում պահել իրենց հայրենական կալվածքները, լինելով միաժամանակ և՛ «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և՛ «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ):

Պարոն-տէր էին կոչվում Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսները, Սյունյաց եպիսկոպոսները, Հավուց-թառի և բազմաթիվ այլ վանքերի առաջնորդներն ու թեմերի եպիսկոպոսները:

Սակայն ոչ ամեն դեպքում էր միևնույն անձնավորության ձեռքում կենտրոնանում որևէ ընտանիքի ժառանգական տիրույթի երկփեղկված իշխանությունը: Կան դեպքեր, երբ որպես այս կամ այն տիրույթի կամ կալվածքի տեր հանդես են գալիս աշխարհիկ պարոններ, իրենց գործակից ունենալով տեղի հոգևոր իշխանության պետերին, որոնք գերազանցապես լինում էին կամ այդ պարոնի մերձավոր ազգականներից, կամ էլ նրա հին կամակատարներից ընտրվածներ:

Վանական կալվածատիրության անվանական քղանցքով պատվարված այս կարգի տնտեսություններն ի նկատի ուներ Մատթեոս Ջուղայեցին, երբ 1411 թվականին շարադրած իր «Քննութիւն գործոց առաքելոց»

աշխատության մեջ գրում էր. «Թէ, ոչ գոյ բարուք իշխան վանիցն, զոր ինչ լինի ի վանսն՝ յիշխանքն անցանի, և վանքն աւրանցան» (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 159ա):

Հայ կալվածատիրության կերպարանափոխված այս ենթատեսակի մեջ կարելի է դասել Պռոշյան, Հասան-Ջալալյան և մի շարք այլ ավատական տների ժառանգական տիրույթները:

Եղել են նաև դեպքեր, երբ վանական հաստատությունների վրա իշխանություն են բանեցրել ուղղակի աշխարհական մարդիկ, առանց հոգևոր գործակիցների: Այսպիսի դեպքեր ի նկատի ուներ նույն Մատթեոս Ջուղայեցին, երբ «Մի զղանար» բնաբանով քարոզի մեջ գրում էր. «Մածուկ զայ կաշին նորա, որք ոչ ունին աստիճան ինչ յեկեղեցոյ և են աշխարհական կամ միայնակեց և առնուն ի ձեռն առաջնորդութիւն եկեղեցոյ» (Մատենադարան, ձեռ. N 2229, էջ 133բ):

Եկեղեցու առաջնորդությունը հափշտակած այս կարգի աշխարհիկ մարդկանցից մեկի մասին հիշատակություն ենք գտնում 1455 թվականին Կոզրում, Լասամորչի և սուրբ Սուքիասանց եկեղեցիների հովանու ներքո ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում: Գրիչը հայտնում է, որ այդ եկեղեցիների «առաջնորդ էր Թաթար անուամբ և եղբայր նորա Փասխ» (Հիշատ. N 69, էջ 54):

Հայաստանի ծայրագավառներում կարող էին լինել, անշուշտ, նաև այնպիսի կալվածատերեր, որոնք անհրաժեշտություն չէին զգում պատսպարել իրենց տիրույթները վանական ցուցանակներով. սակայն այդ կարգի կալվածատերերի մասին մեր տվյալները խիստ անբավարար են: Ուստի, առանց վարանման կարելի է պնդել, որ հայ աշխարհիկ ու հոգևոր կալվածատիրության միաձուլման ու սերտաճման այս երևույթը, մերթ եկեղեցականի, մերթ աշխարհիկի գերակշիռ դերով բնորոշ էր ողջ Հայաստանի համար:

Այս անհրաժեշտ լուսաբանումից հետո թռուցիկ ակնարկով ծանոթանանք բոլոր այն հայ ավատական տիրույթների հետ, որոնք օտարերկրյա տիրակալների անդադար հարվածներից մասնատվելով՝ շարունակում էին դեռևս պահպանել իրենց կիսանկախ գոյությունը ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում:

Հարավային Հայաստանում ամենախոշոր հայկական ավատական

տիրույթը Աղթամարն էր: Աղթամարի ավատական իշխանությունը, զուգակցված հոգևոր իշխանության հետ, սկզբնավորվեց 1113 թվականին, երբ Խաչենիկ Արծրունի սերնդից՝ Աբլմսեհ Կյուրապաղատի որդի Դավիթը հայտարարեց իրեն ինքնագլուխ կաթողիկոս: Մինչև ԺԳ դարի 70-ական թվականները կաթողիկոսական աթոռը ժառանգում էին այս նույն ընտանիքին պատկանող եկեղեցականները: 1272 թվականից, սակայն, Աղթամարի կղզին ու կաթողիկոսությունը դարձան Սեֆեդին Արծրունի ընտանիքի ժառանգական ստացվածքը: Այս Սեֆեդինը ամուսնացել էր Դավիթ կաթողիկոսի եղբորորդի (*) Խաչենիկ Արծրունի Մարիամ դստեր հետ, որպես օժիտ ստանալով Աղթամար կղզու կեսը: Հետագայում, կարիքի մեջ ընկած իր աներոջից նա գնեց նաև Աղթամարի մյուս կեսը և կաթողիկոսական աթոռին նստեցնելով իր Ստեփանոս որդուն՝ հիմք դրեց Աղթամարի աշխարհական ու եկեղեցական տիրակալության նոր դինաստիայի: Իսկ Ստեփանոսից սկսած, Աղթամարի կաթողիկոսական աթոռը անցնելով հորեղբորից եղբորորդուն, կամ մի այլ մերձավոր ազգականի, մինչև ԺԶ դարի վերջերը, որպես ժառանգական տիրույթ, մնում է այս ընտանիքի ձեռքում (տե՛ս Ն. Ակինյան, Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 42 և հտ.): Սրանք, թերևս, ունենալով իրական հիմք, իրենց համարում էին «Թագաւորազն» «ի թոռանց և ի յառաջեալ արքային Գագկայ» (տե՛ս, օրինակ, Հիշատ. N 221, էջ 172):

Աղթամարի կղզու վրա, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, կար 600 տուն զուտ հայ բնակիչ ունեցող մի փոքրիկ քաղաք, որ օտարազգիների կողմից Արմենիկ էր կոչվում: Այդ քաղաքի ուշագրավ նկարագրությունը գտնում ենք անանուն Վենետիկցի վաճառականի ուղեգրության մեջ (1511-1520): «Կղզու վրա,- գրում է նա,- կա մի փոքրիկ քաղաք, երկու միլի շրջագծով, քաղաքն ունի այնքան տարածություն որքան կղզին: Այս քաղաքը կոչվում է Արմենիկ, շատ բազմամարդ է և միայն հայ քրիստոնյաներն են բնակվում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի, ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար...: Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց, հիանալի մի դաշտով, որ ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով, կան շատ մշակված հողեր ու գեղեցիկ պարտեզներ՝ ծառերով, որոնք արտադրում են ամեն տեսակ պտուղ» (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ա, էջ 300-

301):

Կարելի է ենթադրել, որ բացի կղզուց, Աղթամարի կաթողիկոսներին էր պատկանում կղզու հանդիպակաց ափի վրա գտնվող բարեբեր գյուղերի մի մասը: Ստույգ տվյալ ունենք այն մասին, որ 1463 թվականին, 1000 թանկա գումարով, Աղթամարի վանքը գնել է մի նոր գյուղ (այս մասին քիչ հետո): Աղթամարի կաթողիկոսների եկամուտների մի խոշոր մասն էլ գոյանում էր ենթակա թեմերից գանձվող եկեղեցական հարկերից ու տուրքերից:

Ժամանակակիցների կողմից Աղթամարը դիտվում էր որպես «տեղի ապաստանի ամենայն աշխարհացս» և իր ընչեղությամբ ու հարստությամբ գրգռում էր Ոստանի քրդերի ախորժակը: «Զինչ ի ծովու բոլորս մայ և գանձ կայ՝ ամենայն անդ է եղեալ»,- այդպես էին մտածում նրանք և կղզին կողոպտելու հաճախակի փորձեր կատարում:

ԺԵ դարի 60-ական թվականները Աղթամարի կաթողիկոսության աննախընթաց հաջողությունների ու փառքի տարիներն էին: Զաքարիա Գ. կաթողիկոսը, ի դիմաց Ջհանշահին մատուցած ծառայությունների, ստանալով Էջմիածնի կաթողիկոսությունը՝ իր իշխանությունը տարածեց գրեթե ողջ հայ եկեղեցու վրա: Ստանձնելով ինքնակամ դիվանագետի պաշտոն, նրան, ինչպես գիտենք արդեն, հաջողվեց հաշտեցնել Բաղեշի ապստամբ ամիր Շարաֆ-բեկին Ջհանշահի հետ, ուստի «մեծարանաւք խրկյաւ եղև երկուց զաւրաց այլասեռից՝ ի թուրքման փաթշահէն և ի քուրթ ամիրայէն»: Այնքան ուժեղ էր զգում իրեն այս «թագաւորացն» կաթողիկոսը, որ Լուսավորչի գահը գրավելուց հետո մտորում էր նաև Կարա-կոյունլուների թևածությամբ Արծրունյաց թագավորությունը վերականգնելու հնարավորությունների մասին: Գահի թեկնածուի ընտրությունը պետք է, անշուշտ, կատարվեր Զաքարիայի մերձավոր ազգականների շրջանից: Եվ որքան էլ աննշան լինեին այդ ընտանիքի աշխարհական պայազատները, նրանցից մեկին, Զաքարիայի եղբայր Գուրջիբեկի որդի Սմբատին, վիճակված էր «թագավորի» դեր ստանձնել հայկական թագավորության «վերականգնման» հանդեսին, որը տեղի ունեցավ Զաքարիայի մահից[*]

[*] Հայ իշխաններ (Սիւնիք)

- Հովհ. Որոտնեցին «գոլով ի գաւառէն Որոտնու ի գեղջէն Վաղանդու՝ որդի մեծի իշխանին Իւանէի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»

հետո՝ 1465 թվականին, նրա հաջորդ ու գործի շարունակող Ստեփանոս կաթողիկոսի ժամանակ:

Սմբատը հիշատակվում է միայն Աղթամարում գրված մի երկու հիշատակարանում, 1465-1471 թվականներին, որպես «թագաւոր» կամ «պարոն»: Նրա «գործունեության» մասին գիտենք միայն մի փաստ. 1465 թվականին նորընծա այս «թագավորը», 210 թանկա գումարով վաճառում է ոմն Հովհաննես կրոնավորի՝ իր հորեղբայր Զաքարիա կաթողիկոսից նվեր ստացած ձեռագիր Ճաշակնոցը:

Որքան էլ հիմնազուրկ և անիրականանալի էին Աղթամարի կաթողիկոսների սին երազները կաթողիկոսական գավազանի հետ մեկտեղ թագավորական գայիսոն ունենալու մասին, այնուամենայնիվ դրանք ևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից և ցուցանիշ են Վասպուրականում պահպանված այդ միակ հայկական ավատական իշխանության քաղաքական ու տնտեսական կշռի:

Հայկական ավատական տիրույթներ, շատ ավելի մեծ չափով քան հարավային Հայաստանում, պահպանվել էին Սյունիքում, Խաչենում և կենտրոնական ու հյուսիսային Հայաստանի այլ շրջաններում:

Համեմատաբար առատ տվյալներ են պահպանվել Վայոց-ձորի Պռոշյանների մասին: 1461 թվականին Սրկղունքում շարադրված մի

(Թովմա Մեծոփեցի, «Պատմագրութիւն», աշխ. Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 11):

- «Բռնաւորն Յուսուփ, տէրն Թաւրիզու, էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանէ վասն բարեխօսութեան նոցա եկաւ. եւ նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետի...» (նույն տեղում, էջ 46):
- «զորդի Իւանէին զթոռն Բուրթէլին՝ զԲուրթէլ անուն յազգէ Օրբէլեանց՝ զտէրն Որոտան եւ զեղբայր նորին Սմբատ անուն տարան ի Սմրղանդ. ընտանեօք իւրովք, զոր յետոյ աստուածային ողորմութեամբն եւ աղօթիւ նոցա դարձան ի հայրենիս իւրեանց» (նույն տեղում, էջ 108-109):
- «Տէրն Եղեգեաց Տարսայիճ անուն՝ զորդի Գորգունին ուրացուցին» (նույն տեղում, էջ 109):
- «Ի ՊՁէ (1438) թվականիս մեր թագաւորն Վրաց Ալէքսան անուն՝ դեղ մահու ետ իշխանին Պեշքէնի՝ որդոյն Սմբատայ Օրբելեանց՝ թոռինն Բուրթէլի...» (նույն տեղում, էջ 203-204): Պեշքէնի հանգուցյալ եղբայրն է եղել Ստեփաննոս եպիսկոպոսը (Տաթևում թաղված) (նույն տեղում, էջ 205-206):

հիշատակարանի մեջ Վայոց-ձորի իշխաններ են համարված պարոն Ջուման և պարոն Իվանիկը (Հիշտ. N 196, էջ 157): 1473 թվականին արդեն պարոն Ջուման հիշվում է առանց Իվանիկի ընկերակցության: «Եւ մերում նահանգի պարոնութեանս պարոն Ջումին»,- գրում է հիշատակագիր Դավիթը (Հիշտ. N 438, էջ 346): Երկու տարի հետո շարադրված մի այլ հիշատակարանում Ջումայի և նրա մերձավորների մասին գրված են ուշադրության արժանի մանրամասնություններ: Պարզվում է, որ «ապարապետ Հայոց», «իշխանաց իշխող» պարոն Ջուման սերված է Պռոշյաններից («թոռին մեծին Պռոշայ»), ունեցել է պարոն Ղլարբեկ, Ուրուսբեկ, Թուման-բեկ անունով որդիներ և պարոն Հայկազ, Ամիր-Վասակ, Խաղբակ, Ամիր-Հասան անունով եղբորորդիներ: Նրա եղբայրներից Հովհաննեսն ու Ստեփանոսը գրավել են Վայոց-ձորի արքեպիսկոպոսական աթոռը, նստավայր ունենալով Այրիվանքը (Հիշտ. N 474, էջ 375, հմմ. նաև Հիշտ. N 501, էջ 400):

Հովհաննես ու Ստեփանոս եպիսկոպոսները կենդանի էին տակավին 1488 թվականին և շարունակում էին կառավարել իրենց հայրենի թեմը: Այդ մասին տվյալ է գրանցել ինքը՝ Հովհաննես եպիսկոպոսը, իր եղբայր Ստեփանոսին անվանելով «եպիսկոպոս... Կոտայից երկրիս» (Մատենադարան, ձեռ. N 4859, էջ 650բ): Նույն հիշատակարանում նա դառնորեն արձանագրում է, որ Յաղուբ-բեկի թագավորության տարիներին մեծ հալածանք է սկսվել քրիստոնյաների նկատմամբ: «Զի ժամանակս դառն էր, որ այլազգեաց շատ նեղութիւն քաշեցաք»,- գրում է նա: Հալածանքի հիմնական նպատակն է եղել հավատափոխության պահանջ ներկայացնելով իշխանություններից զրկել հայ սակավաթիվ ավատատերերին և կամ բռնի մահմեդականացման ճանապարհով ուծացնել նրանց: Հիշատակարանի շարադրման թվականին (1488) տիրողների կողմից բանտ են նետվում 40 հայ «ազատորդի»-ներ. նրանց ներկայացվում է հավատափոխության պահանջ: Այդ ազատորդիներից էին նաև հիշատակագրի եղբորորդի պարոն Հայկազը և պարոն Ավագը, որոնք «է. (7) ամիս կալանաւոր կացին, և բազում տուգանք տվին, և հաւատոցս Քրիստոսի ոչ դարձան» (Մատենադարան, ձեռ. N 4859, էջ 650բ):

1493 թվականին Այրիվանքում շարադրված մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այդ տարի վախճանվել է Ստեփանոս եպիսկոպոսը և նրան հաջորդել տեր Բարսեղը, լինելով նույնպես «թոռն մեծին Պռոշայ»

(Գ. Սրվանձտեանց, Թորոս աղբար, Բ, էջ 304):

Պարոն Ջումայի թոռներից մեկը՝ պարոն Արղութան 1498 թվականին իշխում էր Զորավանքում*: Վանական անունով մի գրիչ, հետապնդվելով Մուրադ խանի ավազակաբարո զորքերից (այն ժամանակ, երբ «եղև հալածումն ի յերկրիս Վայոցձորոյ»), վայրից վայր տեղափոխվելով, ի վերջո կայան գտավ այդտեղ:

Պռոշյան իշխանների մասին 1475 թվականին շարադրված հիշատակարանում, ինչպես տեսանք, պարոն Ջուման մեծարված է «ապարապետ Հայոց» և «իշխանաց իշխող» տիտղոսներով: Հայ ավատական տների անկման ու մանրացման այս շրջանում այդպիսի մեծադղորդ տիտղոսներ շռայլվում էին առատորեն, և դրանց միջոցով հազիվ թե հնարավոր լինի պարզել այս կամ այն հայ իշխանի քաղաքական ու տնտեսական կշիռը: Այնուամենայնիվ, պարոն Ջումայի և նրա ազգականների մասին առկա տվյալներն իրավունք են տալիս եզրակացնելու, որ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում էլ, Վայոց-ձորի որոշ մասերը շարունակում էին մնալ Պռոշյանների իշխանության ներքո:

Հիջրեթի 853 (մեր՝ 1451) թվականին կազմված պարսկերեն մի կալվածագրից (Մատենադարան, Արխիվային բաժին, Պարսկերեն վավերագրերի ֆոնդ, N 934) պարզվում է, որ ամիր Բեշքենի որդի Ռուստամը վաճառել է Տաթևի վանահայր Շմավոն Անգեղակոթցուն իրեն պատկանող Սվարանց, Տաշու, Աղանց և Տանձատափ գյուղերը (տե՛ս Հ. Փափազյանի «Մի էջ արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից» հոդվածը, էջ 86): Կասկածից դուրս է, այսպիսով, որ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում էլ Սյունիքում որոշ կալվածքներ ունեին Օրբելյան տան ժառանգները: Հիշատակարաններում սակայն, նրանց մասին կան միայն սակավաթիվ ակնարկներ:

---

* Ըստ Ղ. Ալիշանի, Զորավանքը նույնն է Յուրայ վանքի կամ Յուանքի հետ և գտնվում է Տաթևից ոչ հեռու, Յուրայ բերդի սահմաններում (տե՛ս «Սիսական», էջ 244): Կարծում ենք սակայն, որ Զորավանքը Մարտունու շրջանի Զորագյուղի կամ Շողագա գյուղի մոտ գտնվող, այժմ ավերակ, վանքն է, որի մասին տվյալներ է հաղորդում իր «Տեղեկագիր Գեղարքունի ծովակաց գավառի» աշխատության մեջ Մ. Սմբատյանը (էջ 509-510):

Տեսանք, որ 1461 թվականին Սրկղունքում շարադրված հիշատակարանի մեջ, Փառշյան Ջումայի հետ մեկտեղ հիշատակված էր ոմն պարոն Խանիկ: Դատելով անունից, որ հատուկ է Օրբելյաններին, կարելի է ենթադրել, որ այս Խանիկը ծագումով Սյունյաց Օրբելյաններից էր:

1471 թվականից հասել է մեզ Սյունիքում կալվածքներ ունեցող Օրբելյան մի այլ իշխանի՝ Ստեփանոսի որդի, Սմբատի թոռ և Իվանիկի թոռնորդի պարոն Սմբատի հիշատակարանը մի Ավետարան գնելու մասին (Հշտկ. N 399, էջ 317): Նույն Սմբատն է հիշված 1495 թվականին, որպես Վայոց-ձորի արքեպիսկոպոս պարոն-տեր Եղիշեի հայր, «իշխանաց իշխան պարոն Սմբատ» տիտղոսով (Բ. Սարգսյան, Ցուցակ, Ա, էջ 585)*:

Եղիշե արքեպիսկոպոսի մասին տվյալներ կան նաև 1475 և 1490 թվականներին շարադրված հիշատակարաններում, որոնցում նա կոչվում է «յազգէ Բուրթէլյանց» կամ «թոռն մեծին Բիւրթէլեանց»: Նրան հատկացված պարոն-տեր կոչումը իրավունք է տալիս եզրակացնելու, որ Եղիշեն օժտված է եղել նաև աշխարհիկ իշխանությամբ, տիրելով Բուրթելյան տան երբեմնի ընդարձակ կալվածքների մի մասին:

Արցախում շարունակում էին իշխել Հասան-Ջալալյան և Դոփյան ավատական տների սերունդները: ԺԵ դարի 50-ական թվականներին Խաչենի տերն էր պարոն Ջալալի որդի Աղպաստ իշխանը: Սրա որդին էր Սայտուն, իսկ թոռը՝ Վելիջանը: 1473 թվականին «ի գաւառիս Խաչենաձորոյ» գրված մի Ավետարանի հիշատակարանում ասված է, որ ընօրինակության աշխատանքները կատարվել են «ի տէրութեան տեղւոյս պարոն Վելիջանին» (Հշտկ. N 435, էջ 344): Վելիջանը 1480 թվականին Գանձասարի վանքում թողել է նվիրատվական մի արձանագրություն: «Ես Վելիջան,- գրված է այնտեղ,- և եղբարքս իմ, որդիք Սայտունին, թոռն մեծին Աղբաստու տեառն Խաչենու, տուաք Ալմանայ իւր Դ. սահմանաւն ի սուրբ

* Այստեղ պարոն Սմբատը համարվում է Տարսայիճի որդի, մինչդեռ վերը վկայակոչված հիշատակարանի տվյալներով, նրա հոր անունը եղել է Ստեփանոս: Կարծում ենք, այնուամենայնիվ, որ գործ ունենք միևնույն անձի հետ, ենթադրելով, որ նրա հայրը կոչվել է Օրբելյանների ընտանիքում շատ տարածված Ստեփանոս-Տարսայիճ երկանուններով: Ստեփանոս-Տարսայիճ էր կոչվում նաև 1314-1331 թթ. Սյունյաց մետրոպոլիտ եղած Օրբելյան իշխանը:

ուխտս Գանձասարայ» («Վիմական տարեգիր», էջ 174):

Գանձասարի կաթողիկոսությունը Խաչենի Հասան-Ջալալյանների ժառանգական ստացվածքն էր համարվում: Գանձասարի կաթողիկոս են եղել Աղպաստի եղբայր Հովհաննեսը (մհ. 1470 թ.), Սայտունի թոռ Սարգիսը (մհ. 1554 թ.) և շատ ուրիշներ, նույն այս ընտանիքից:

Խաչենի Հասան-Ջալալյաններից կախման մեջ էին Դոփյան իշխանական տան սերունդները, որոնք մեզ հետաքրքրող հիսնամյակում 3 ընտանիքների էին բաժանված՝ Ուլուբեկենց, Այտենեցոց և Ջհանշեցվոց (տե՛ս Հակոբ Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադյան, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 89):

ԺԵ դարի կեսերին Դոփյան իշխաններից ամենահեղինակավորն էր Տուրսունի որդի Այտին իշխանը, որ հաջորդել էր հորը 1430 թվականին: Մի արձանագրության մեջ նա հիշվում է որպես «պարոն Փոքր Սիւնեաց, Ակնոյ և Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ՝ մինչ ի Ճոգվարայ» (Կարապետ եպս., Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Էջմիածին, 1914, էջ 88-89):

Դոփյանների մասին Խաչիկ վրդ. Դադյանի ձեռագրերի ցուցակում հրատարակված պատմական փոքրիկ գրվածքում ասված է, որ «ի ժամանակի սորա (Այտինի), ի զօրանալ Իսմայելացւոց և ի նուազիլ տանս Հայոց գիր և գան լինելն իշխանացն Հայոց՝ յարեան այլազգիքն և զմայրն մեծ իշխանին Հասանայ պէթալմոլ արարին: Գնաց պարոն Այտինն ի գիւան և երեք ամ աշխատեաց և բազում ինչ տուեալ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զմանօրայքն և զշինարէնքն» (Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի, Ա, էջ 89):

Այսպիսով, Այտինին հաջողվում է, հավանաբար Ջհանշահի թագավորության տարիներին, դատական ատյաններում երեք տարի քարշ գալուց և հսկայական միջոցներ վատնելուց հետո, կրկին տեր դառնալ իր հայրենական կալվածքներին:

Դոփյանները մահմեդական իշխողներից իրենց կալվածքները պատվարելու համար հաճախ խոշոր նվերներ էին տալիս իրենց իշխանության տակ գտնվող վանքերին: Հաթերքի Դադի վանքի զանգակատան արձանագրություններից մեկում խոսք կա Դոփյան չորս իշխանների (Շահանշահի որդի, Հասանի թոռ Սեյտի. Վահրամի որդի, Հասանի թոռ Գրիգոր իր

եղբայրների հետ միասին. Տուրսունի որդի, Ազրումայի թոռ Այտին և Հասանի որդի, Ճհանշահի թոռ Շահանշահ) կողմից Դադի վանքին կալվածքներ նվիրաբերելու մասին: Կալվածքների ստացողն է Աթաղ եպիսկոպոսը, որը նվիրատու ազգակից իշխանների կողմից կոչված է «մեր ճռճառը»: Պետք չէ կասկածել, որ Դոփյանների «ճռճառը» եպիսկոպոսը սերված է նույն իշխանական տնից (Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 209):

Հայ իշխանազունները ոչ միայն միաբանում էին իրենց վանքերը տնտեսապես ամրապնդելու համար, այլև բախվում էին՝ իրարից կալվածքներ շորթելու մտադրությամբ:

1456 թվականից պահպանվել է մի ուշագրավ փաստաթուղթ, որը հնարավորություն է տալիս վեր հանելու հայ ավատատերերի առօրյա սահմանավեճերից ու կռիվներից մի դրվագ, ինչպես նաև ցույց է տալիս Դոփյանների կախումը Հասան-Ջալալյաններից:

Արայա կոչվող կալվածքի պատկանելության շուրջը վեճ է ծագում Մեչլիսի որդի, Ջալալի թոռ Ուլուբեկի և Մեհրասպի որդի, Արղութի թոռ Շահանշի միջև: «Ի մեր հայրենեացս մէջն խաւսք իյաւ» գրված է փաստաթղթում: Պարոն Ուլուբեկի մարդկանցից մեկը սպանվում է այդ վեճի ժամանակ և կռվող կողմերը դիմում են իրենց սյուզերեն Աղբաստին: Սահմանավեճը հարթելուց հետո կազմվում է հատուկ համաձայնագիր, վիճելի կալվածքը ճանաչվում է որպես Ուլուբեկի հայրենիք: Համաձայնագիրը վավերացվում է՝ Գանձասարի առաջնորդ Եղիա եպիսկոպոսի, Հովհաննես կաթողիկոսի, պարոն Աղբաստի, նրա եղբայրներ Ագեկի ու Ամիր-Հասանի, ինչպես նաև Տուրսունի որդի Միրզայու և ոնե Պատասի (հավանաբար՝ Ջալալի որդի) ստորագրություններով և ավարտվում «ով որ այս սահմանս գաւի անի՝ սատանայ նաւեալ լինի» խոսքերով:*

Ակնամայից մատյաններում են Մաթևոս Ջուղայեցու գտած խոսքերը ժամանակի հայ իշխանների մասին: «Այժմ մնացեալ ոսա իշխանքն Հայոց,-

---

* Ուշագրավ այս համաձայնագիրը հրատարակված է Մ. Բարխուդարյանի «Արցախ»-ում (էջ 187), որպես ՋԵ. (1456) թվականի և Ս. Ջալալյանի «Ճանապարհորդության» Բ մասում (էջ 243-244), որպես ՋԷ. (1458) թվականի փաստաթուղթ: Նկատի ունենալով այն հանգամանքը որ Ջալալյանի վերծանումը լի է աղաղակող սխալներով, համաձայնագրի թվականը համարում ենք 1456-ը:

գրում է նա,- զմիմեանց չիք հատանեն, և զարմանալի ես, զի բոլոր երկիրս աւեր և վասն աւերածիս կուրին» (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 215բ):

Հայ խոշոր կալվածատերերից էին նաև Գանձքի շրջակայքում գյուղեր ունեցող այն իշխանները, որոնք իրենց համարում էին Գրիգոր Պահլավունու սերնդից: 1487 թվականին Համաց-թառի Ամենափրկիչ վանքի վանահայր Զաքարիա վարդապետը՝ այդ «ազատազուն» բնատերքի պարոն-տերը, վերստանում է նախկինում իրենց պատկանած Մանկուս, Աղանիկ, Կուտիս, Հայոց-թառ, Կուտաց վանք, Աղանասար, Թանիս, Սուրբ Սարգիս գյուղերը գլխովին և Կոխտ գյուղի 3 դանկը (կեսը): Նշված ինը գյուղերի կալվածացրում Զաքարիան հանդես է եկել ոչ որպես Ամենափրկիչ վանքի վանահայր և չի նշել, որ այդ գյուղերը նվիրաբերվում (վաքֆ են արվում) վանքին: Այս կապակցությամբ Սիմեոն Երևանցին, իր նշանավոր «Ջամբռ»-ում գրում է. «Արդ, Զաքարիա վարդապետս գայսոսիկ ի յանձնայն, չիք անուն ստես, և զանուն Ամենափրկչին ոչինչ յիշէ ի գալարայացն, զի ասաց ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շուտայց և հարուստ, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տունք և ընչիւք, և իւրեանց էր համարեալ գեօղն և վանքն առանց խտրութեան» (Ջամբռ, էջ 277):

Սիմեոն Երևանցին իր այս տողերով տվել է հայ աշխարհիկ ու վանական կալվածատիրության միաձուլման և սերտաճման երևույթի խորն ու ճշմարտացի նկարագիրն ու բացատրությունը:

ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում հայկական ավատական փոքր մի իշխանություն կար նաև Քարթլի վրաց թագավորությանը ենթակա Լոռիում: Այդ մասին մեզ հասած միակ ավյալը գրանցել է 1494 թվականին Ճառընտրում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում Ֆալուս Դպիր. նա հայտնում է, որ աշխատանքը կատարել է «պարոնութեան Լոռոյ պարոն Ղլլին, և ի գլխաւորութեան երկրիս պարոն Պաւթին, և եղբօրորդւոյն իւրոյ պարոն Ամիրջանին» (Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագիր ցուցակից):

Այս միակ վկայության հիման վրա անհնարին է որոշել Լոռվա հայկական իշխանության տեղադրությունը, սահմանները, կշիռն ու զորությունը: Այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ Լոռվա «պարոնությունը» ունեցել է իր դատական ատյանը («գլխաւորութիւն»), պետք է մեծ հավանականությամբ ենթադրել, որ եղել է ավատական կիսանկախ իշխանություն:

Բացի վերը թվարկած, համեմատաբար խոշոր ու ազդեցիկ ավատական տիրույթներից, Հայաստանի այլևայլ մասերում շարունակում էին գոյություն ունենալ հայ մանր կալվածատերեր: Սրանք շարունակում էին իրենց ձեռքում պահել առանձին գյուղեր ու կալվածքներ, հաճախ ստիպված լինելով հագնել կրոնավորի սքեմ:

Ծանոթանանք այդ կարգի մանր հողատեր-կալվածատերերից մի քանիսի հետ: 1452 թվականին Եղվարդում հիշատակվում է տեր Մանուել եպիսկոպոսը, «որդի պարոն Աւաքին, թոռն պարոն Ապիրբէկին» (հշտկ. N 20, էջ 16): 1465 թվականին շարադրված մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Եղվարդ գյուղը իր շրջակայքով գտնվել է ոմն պարոն Վիշելի վերակացության ներքո. «ի վերակացութեան երկրիս պարոն Վիշելին» (հշտկ. N 284, էջ 232):

1460 թվականին, Բջնիում, որպես «առաջնորդ» հիշված է պարոն Սարգիսը (հշտկ. N 172, էջ 131), 1467 թվականին Բյուրականում՝ պարոն Բաբաճանը, իր կնոջ՝ իշխանուհի Թամարի հետ միասին.

«Այլ և զպարոն Բաբաճանի
Եւ զԹամար իշխանուհի...»
գրված է հիշատակարանում (հշտկ. N 370, էջ 288):

1499 թվականին Կեչառույքի վանքի առաջնորդ էր պարոն-տեր Փիլիպպոսը: Պարոն-տեր տիտղոսը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Փիլիպպոսը Կեչառույքում ունեցել է և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ իշխանություն:

Այս ցանկը կարելի է կրկնապատկել այլ սկզբնաղբյուրների, հատկապես վիմական արձանագրությունների, ընձեռած տվյալներով: Սակայն կարծում ենք, որ մեջ բերածն էլ բավական է համոզվելու համար այն բանում, որ Հայաստանի մի շարք շրջաններում, հարմարվելով քաղաքական ու սոցիալական նոր պայմաններին, պատվարելով իրենց եկեղեցական հողատիրության ցուցանակներով, շարունակում էին գոյություն ունենալ հայ ավատական մանր իշխանություններ:

Մեծ չէր այդ իշխանությունների տնտեսական և քաղաքական կշիռը վաղուց ի վեր անկախությունից զրկված և օտար տիրակալների հարկային ծանր լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի կյանքում, սակայն կարևոր դեր

էին ստանձնել նրանք դարերի ընթացքում ստեղծված մշակութային արժեքների պահպանման և հայրենի երկրի կորցրած ազատության վերականգնման ձգտումներն արծարծելու և վառ պահելու գործում:

Գ.

Հիշատակարանները շատ ավելի հարուստ ու բովանդակալից տվյալներ են պահպանել հայկական վանական հաստատությունների, նրանց կալվածքների ու տնտեսության, եկամտի ու հասույթի աղբյուրների, ինչպես նաև երկրի մշակութային կյանքում կատարած նրանց դերի մասին:

1468 թվականին Խիզանում աշխատող Մկրտիչ քահանա գրիչը, խոսելով Ջհանշահի վերջին արշավանքի ու սպանության մասին, ջերմ տողեր է ձոնում նրա հասցեին: «Եւ բազում եկեղեցիք ի յաւուրս սորա շինեցան և նորոգեցան,- գրում է նա,- և էր խաղաղու[թիւն] Հայոց աշխարհիս. և բազմացան քահանայք և կարգաւորք և վանորայք. և էր շինութիւն ի բոլոր իշխանութեան սորա» (հշտկ. N 345, էջ 271):

Նախորդ էջերում մենք արդեն առիթ ունեցանք տեսնելու, թե ինչպիսի «խաղաղություն» ու «շինություն» էր տիրում Հայոց աշխարհում Ջհանշահի ժամանակ: Բայց, որ, իրոք, Ջհանշահի տիրապետության դառն ու դժվարին տարիներին Հայաստանում վերանորոգվեցին ու կառուցվեցին մի շարք վանքեր ու եկեղեցիներ, այդ հարցում մեր քահանա գրիչը չէր շեղվում ճշմարտությունից, և նրա խոսքը չէր մնում «ձայն բարբառոյ յանապատի»:

Ծանոթանանք մի քանի փաստերի:

1460 թվականին, Մելքիսեթ արեղայի ջանքերով, վերաշինվեց Վանից հյուսիս գտնվող Երերանի վանքը: Շինարարական այս աշխատանքների մասին մանրամասն տվյալներ է գրանցել ինքը՝ Մելքիսեթ մրաչան արեղան. «Շինեցի զժամատունս, և զկրկին գաւիթս, և զերկու տնտեսատունս՝ ամառան և ձմեռան, և այլ բազում հոգաբարձութեամբ աշխատեցայ ի տուն և ի գուռն, ի յանդաստան և ի վախմըն. ըստ կարողութեան անձին մերում նորոգեցաք զվանքս և շնորհազարդ զարդարեցաք զեկեղեցիս զգեստիւք պատարագաց, նաև մանկամբք սուրբ Սիոնի (հշտկ. N 174, էջ 132):

Նույն թվականին, Մարուգե ճգնավորի ջանքերով, կառուցվում է Ս.

Գեորգ վարդապետի վանքը «... շատ չարչարեցաւ և շինեաց զսուրբ ուխտս ի կարգէ» (Հիշտկ. N 180, էջ 140):

1460 թվականին, ինչպես նշեցինք քաղաքական անցուդարձերին նվիրված էջերում, Աղթամարի Զաքարիա Գ. կաթողիկոսը Ջհանշահի կողմից ստացավ նաև Էջմիածնի կաթողիկոսությունը և իր նստավայրը տեղափոխեց Էջմիածին:

Ինքնագիր իր մի կոնդակում, որ առաջին անգամ հրատարակվում է մեր կազմած ԺԵ դարի հիշատակարանների երկրորդ հատորի ժողովածուի մեջ (տե՛ս էջ 173-174, տողատակ), Զաքարիան մանրամասն տվյալներ է հաղորդում Էջմիածնի աթոռին տիրելու հանգամանքների մասին և վերապատմում այն զրույցը, որ տեղի է ունեցել իր և Ջհանշահ փաղիշահի միջև, այդ պարգևը իրեն տալու ժամանակ: «Եւ առաց փաթշահն,- գրում է նա,- զինչ հարդ կայ առ քեզ, որ զինչ ասեր կայ չինեմ, էս քանի տարի զԱշխարհս կերան և աւեր պահեցին», «Մեք էլ եկաք,- շարունակում է Զաքարիան,- շատ վարպետ բանեցաք, որ զպակասութիւն և զխեղու[թիւն] լնունք ի յԱրարատեան գաւառս»: Եվ իրոք, 1461 թվականից, տեղեկություն է հասել մեզ այն մասին, որ Զաքարիա կաթողիկոսը Էջմիածնում «զժամատեղս պայծառացոյց և անկրկին պահեաց ի մէջ այլազգեաց ահից, և զհի/ /րատաւս յօրդորեաց և լնացոյց առատաձիր պարգևաւք» (Հիշտկ. N 195, էջ 156):

Շարունակենք մեր թվարկումը.

1464 թվականին ոմն Դանիել վարդապետ միաբանելով Հավուց Թառի Ամենափրկչին «կրկին զարդարեաց և աճեց և նորոգեաց» վանքը (Հիշտկ. N 258, էջ 214):

1469 թվականին Սարգիս Բյուրականցին կառուցում է Տեղերի տաճարը (Հիշտկ. N 370, էջ 290):

1475 թվականին Աւագտեր վարդապետը «վերստին նորոգեաց շինութեամբ և պայծառութեամբ ժամատեղաց» Բջնաձորի կամ Բոլորաբերդի անապատը՝ Վայոց-ձորի Սրկզանք ամրոցի մոտ (Հիշտկ. N 475, էջ 378):

1476 թվականին ոմն տեր Կարապետ Վանում «վերստին նորոգեաց զսուրբ գումբեթն և զժամատունն և զդուռն սուրբ եկեղեցւոյն և զարդարեաց գեղեցիկ շուրջաւաք և ժամատեղաւք» (Հիշտկ. N 506, էջ 403):

1490 թվականին «Եսափափաք տենչմար» ոմն Ավան աղա նորոգեց Խորոսինկի վանքը, և այլն, և այլն:

Վանքերի նորոգման, ընդարձակման, նոր շինություններով ճոխացման թվարկված մեծածախս աշխատանքները կատարվում էին վանահայրերի, եպիսկոպոսների ու աշխարհական մեկենասների կողմից, անշուշտ, ոչ միայն հոգու փրկության համար:

Ջերմեռանդ վանականության սոցիալական ու տնտեսական դրդապատճառների մասին մենք արդեն առիթ ունեցանք որոշ խոսք ասելու:

Այժմ աշխատենք պարզել, թե ինչ ճանապարհներով էին վանքերն ընդարձակում իրենց կալվածքները ու բազմապատկում շահույթի աղբյուրները:

Նոր կալվածքների ձեռք բերման հիմնական աղբյուրը նվիրաբերությունն էր: ԺԵ դարի նվիրաբերությունները, չնչին բացառությամբ, կազմում էին մանր հողակտորներ, արտեր, այգիներ ու պարտեզներ: Ձեռքի տակ ունենք այդ կարգի նվիրաբերությունների մասին բազմաթիվ փաստաթղթեր, գրանցված և՛ հիշատակարաններին առընթեր և՛ նրանցից անկախ, պաշտամունքային ձեռագրերի (Ավետարան, Հայսմավուրք, Ճառընտիր) զատարկ թերթերի ու լուսանցքների վրա: Որոշ վանքեր ու եկեղեցիներ իրենց գրանների լավագույն ձեռագրերն օգտագործել են ստացված նվերների մասին արձանագրություններ գրանցելու նպատակով, ուստի և ստեղծվել են նվիրատվությունների յուրատեսակ ցուցակներ, որոնցում տվյալներ կան նաև նվիրատուների, նրանց ազգականների, նվիրաբերության առարկայի ու բնույթի մասին:

Այս կարգի ցուցակներից իր հիմնական մասով մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին է վերաբերում Վանի Պողոս-Պետրոս եկեղեցու ցուցակը, որի գրության համար պատշաճ են համարել օգտագործել Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթուղիկեայց թղթոց» ստվար աշխատության զատարկ թերթերն ու լուսանցքները (տե՛ս Մատենադարան, ձեռ. N 4673): Ծանոթանանք այդ ցուցակի նվիրաբերական գրանցումներից մի քանիսի հետ: Ձեռագրի 579ա էջի ստորին լուսանցքում գրված է. «Քրիստոս Աստուած, քո սուրբ ծնողի բարեխաւսութեամբդ լուսաւորեա զհոգի բարեպաշտ տանուտրացն զԳուլերուն... (թվարկված են Գուլերի ազգականներից 17-ի անունները), որ ետուն զայգին ոսք սուրբ առաքելոցս Պետրոսի և

Պօղոսի, անջինջ յիշատակ նոցա, ամէն»:

639ա էջի ստորին լուսանցքում.

«Քրիստոս Աստուած քո սուրբ և սարսափելի անարբինութեամբդ լուսա և մաքրեայ յազգս մեղաց զհոգի Գրիգոր քահանայի Մերունեաց, որ իւր որդիքն տվին զարան սուրբ առաքելոցս ընծայ և աղնական լուսայինն»:

652բ էջի ստորին լուսանցքում.

«Տէր Աստուած ողորմեա Կարապետին և ծնողացն և ամուսնոյ իւրոյ, որ գնեաց զարան և ետ ընծայ սուրբ առաքելոցն յիշատակ»:

ԺԴ-ԺԵ դարերի տարբեր ձեռագրերում նույն գրքի մեջ գրանցված են մի քանի այլ արձանագրություններ ևս՝ մեկ այգու և երեք արտերի նվիրաբերման մասին (տե՛ս ձեռ. N 4673, էջ 638բ, 653ա, 664ա, 673ա և այլն):

1461 թվականին ոմն Հովհաննես 8 ֆլորինով գնում է մի այգի և նվիրում սուրբ Նշան անունը կրող ինչ-որ վանքի: Նվիրաբերական արձանագրության մեջ մանրամասնորեն ցույց են տրված այգու սահմանները, կալվածագիրը վավերացված է տոյիս Ամենավագի, մի քանի խոջաների և այլ հեղինակավոր անձանց ստորագրություններով: Վերջին պարբերության մեջ ասված է. «Ես Յոհանէս և իմ եղբօր որդիքս Աղէքսանոս և Մովսէսն Ը. (8) ֆլի. (ֆլորի) տուաք և գնեցաք զայգին և տուաք ի սուրբ Նշանն յիշատակ Ամինատնին հոգուն. այլ մարդոյ տալի տալպա չկա: Ի թվ. Ջ. և Ժ. (1461)» (A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by F. Conybeare, London, 1913, N 18):

Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1465-1489) Հայոց-ձոր գավառի Կեմ գյուղի, «տանուտէրայ կամօք» ոմն Հերենլոսի որդի Ստեփանոս նվիրում է, Պուտալկի վանքին իր «հերենական գնած մուլքն՝ զՓոս արտն» և Թադեոս առաքյալի վանքին՝ «զձորի դրան արտն» (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 229-230):

Տվյալներ ունենք «Կորի մի արտ, Բ. (2) ծառով» Գեորգ զորավարի վանքին (Մատենադարան, ձեռ. N 4814, էջ 255բ), մի այլ արտ՝ «խոտերովն և ջրովն»՝ Տուսա գյուղի ս. Գեորգ Զորավարի եկեղեցուն (Մատենադարան, ձեռ. N 4740, էջ 74բ) և բազմաթիվ այլ վարելահողեր ու այգիներ տարբեր վանական հաստատություններին նվիրաբերելու մասին չհրապարակված

արձանագրական վավերագրեր:

Բացի անշարժ կալվածքներից, վանական հաստատությունները նվեր էին ստանում նաև այլ կարգի «ոխֆ»-եր:

Այսպես, օրինակ, ԺԴ դարում ապրած Ամիր-Աղիզ անունով մեկը պարտավորվում է ձրիաբար իր ջրաղացում աղալ Մուղնու վանքի ողջ աղունը, տարին մեկ օր իր հոր հոգու համար պատարագ տալու պայմանով: Այս մասին շարադրված արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Վարձիգույս որդի Ամիր-Աղիզին եկի ի Մուղնոյ վանքս, զրի յիշատակ իմ հօրուս, որ զինչ վանուցն աղուն լինի՝ իմ ջաղացն աղցվի, որ զինչ միաբանք լինին վանքս՝ ուտեն...: Եւ միաբանք վանիցս՝ Իգնատիոս եպիսկոպոս և այլ արեգայքս ի տարին մէկ ժամ կատարենք Վարձիգույին հօգուն քանի վանքս էնք, և չեա մեզ հաստատուն պահաւզքն արհնին յԱստուծոյ ամէն, և ով որ որ վանքս լինին՝ զայս կատարեն» (Մատենադարան, ձեռ. N 3646, էջ 256ա):

Նույնպիսի պարտավորություն է վերցնում իր վրա, սուրբ Քառասնից վանքի նկատմամբ Փարսամ անունով մի ջրաղացպան: Այդ առթիվ կազմված արձանագրության մեջ ասված է, որ նա «ոխֆ» է արել վանքին «ջաղչի վարձն» (Մատենադարան, ձեռ. N 4815, էջ 1ա):

Նույն սուրբ Քառասնից վանքը, նույն տարիներին, ոմն Աղուպշահի որդիներից «ոխֆ» է ստանում «դաշտպահութիւն», այլ խոսքով նվիրատուները իրենց վրա են վերցնում վանքի դաշտերի պահպանության գործը (նույն տեղում): Վարդան անունով մի նախրապան ԺԵ դարում պարտավորվում է առանց վարձի արածացնել Վանի Պողոս-Պետրոս եկեղեցու քահանաների կովերը: Գրանցելով այդ պարտավորությունը իրենց պատկանող մի Հայսմավուրքի էջերում, եկեղեցու քահանաները այն՝ պարտադրելով տարածում են ապագայի բոլոր նախրապանների վրա, և անիծում բոլոր նրանց, ովքեր երբևէ կհամարձակվեն վարձ պահանջել իրենց կովերն արածացնելու համար: Այդ առթիվ ձեռագրում արված համառոտ գրանցման մեջ ասված է. «Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զնախորորդ Վարդանն, որ զսուրբ Պօղոսու իրիցանու կովերու վարձն թարխան արար... որ և յետ սորա յանդգնի և առնու՝ նա պատժի ի սուրբ Առաքելոցս» (Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 588բ):

Ամն ներկարար էմնագին, իր ծնողների, եղբայրների ու որդիների

հետ միասին պարտավորվում է ձրի ներկել Վանի նույն Պողոս-Պետրոս եկեղեցու քահանաներին պատկանող գործվածքները: «Զասրբ Պօղոսու քահանայից ներկ թարխան արար»,- գրված է պարտավորագրի մեջ (Նոր-Ջուղա, ձեռ. N 544, տե՛ս Ս. Տէր-Աւետիսեանի Ցուցակը):

1493 թվականին Շահմելիք անունով մի կին Կյուրգի վանքին նվիրում է «Խալկին մի կէս մոթնոց», այսինքն՝ կես մոթի տարողությամբ պղնձի աման (Գ. Սրուանձտեան, Թորոս Աղբար, Ա, 217):

1510 թվականին Ներքին-Մարմետ գյուղաքաղաքի քահանաներն ու տանուտերերը՝ Մելիք Պախտիարը, Ոսկս Սաղաթիարը, Խամզաչի Մուսեխը և ուրիշներ («և գայլն ամենայն») պարտավորվում են ամեն տարի 20 բեռ ձուկ (տառեխ) տալ սուրբ Կարապետի վանքին. «Յամէն տարի Ի. (20) բեռն ձուկն ռսֆ արարին յիշատակ իւրեանց հոգոյն և իւրեանց ծնօղացն»,- գրված է այդ պարտավորագրի մեջ (Մատենադարան, ձեռ. N 4869, էջ 669բ):

1573 թվականին ոմն Նալբանդ Հակոբջան «ռսֆ» է անում սուրբ Սահակի վանքին, պարտավորվելով անվարձ պայտել վանքի առաջնորդի ձին (ՄՅՎ, սյուն 680):

Այսպիսով, պարզվում է, որ հայկական վանքերն ու եկեղեցիները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ոչ միայն ընդարձակում էին իրենց անշարժ կալվածքները՝ նոր այգիներ, վարելահողեր, խոտհարքներ, տներ նվեր ստանալով, այլև շահվում էին տարբեր դրամական ու արհեստի տեր մարդկանցից նրանց ջրաղացներից, ներկատներից, ձիթհանքներից և այլ արհեստի գործատներից ձրիաբար օգտվելու արտոնություն ստանալով:

Անտարակույս, վանական հաստատությունների ստացած նվերների մի զգալի մասը արվում էր կամովին: Նվիրատուներից շատերը համոզված էին, որ իրենց և մերձավորների հոգիները փրկվելու են վանքի միաբանների կողմից նվերների դիմաց խոստացված պատարագների ամենակարող զորությամբ: Սակայն եկեղեցականներն իրենք, միջոցների առաջ կանգ չէին առնում մեղավորների հոգու «փրկության» գործին միջամտելու համար, և որոշ վանքեր սահմանել էին նույնիսկ «մեղաց գին» կոչված տուրքը: Ամեն ոք կարող էր «մեղաց գին» անվան տակ շոշափելի որևէ նվեր կամ գումար վճարելով մաքրագործել իր հոգին: 1429 թվականից

մեզ հասել է Գրիգոր Լուսավորչի Գերեզման կոչվող վանքում գրված մի փաստաթուղթ «մեղաց գնի» մասին: «... Այլ և,- գրված է այնտեղ,- թողութիւն արարել... տէր Շուքրանի բազում մեղացն սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ և Լուսաւորչին արժանաւոր աղօթիւքն, զի երկու հարիւր սպիտակ մեղաց գին ետ ի վանիցս պակասութեան, որոյ Աստուած ոչ յիշէ զիւր մեղքն» (Ղ. Փիրղալեմյան, Նոտարք հայոց, էջ 92):

Վանքերի առաջնորդներն ու ազդեցիկ միաբանները, երբ ցանկանում էին իրենց կալվածքներին կցել որևէ նոր գրավիչ այգի կամ արտ՝ գործը, իհարկե, ինքնահոսի չէին թողնում, այլ եռանդուն ջանքեր գործադրելով ձգտում էին համոզել դրանց տերերին, որպեսզի նրանք այդ այգին կամ արտը կամովին և անվարձահատույց նվիրաբերեն վանքին:

Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սուրբ Առոմի վանքի վանահայր Հայրապետի նամակը, հասցեագրված Զամինից գյուղի քահանա Ստեփանոսին, ռես Վարդանին և ազդեցիկ տանուտերերին (ըստ հնագրական տվյալների շարադրված պետք է լինի ԺԶ դարի սկզբներին): Տեր Հայրապետը մեծ ցանկություն ունի վանքի սեփականությունը դարձնելու այդ գյուղում գտնվող ինչ-որ պարտեզ: Իր այս ցանկության մասին նա գրում է պահանջի շեշտով, առանց շեղումների ու երկարաբանության, այսպես. «Եւ արջեւ ի ձեզ և ի ձեզանէ կու խնդրեմ, որ զէդ բաղչէդ տաք ի վանք՝ ի դուռն սուրբ յԱռոմի, յիշատակ ձեր և ձեր ննջեցելոց»: Գյուղի քահանային շահագրգռելու համար Հայրապետ վանահայրը խոստանում է նրան նվիրել իր մի Ավետարանը, որը որպես «ամանաթ» գտնվելիս է եղել քահանայի մոտ: «Որ տիրութիւն անես և կանդ/ն/իս ու զմեր խնդրուածս կատարես, քեւ է»,- գրում է նա (Մատենադարան, ձեռ. N 6324, էջ 306բ):

1489 թվականին Արտամետում շարադրված մի հիշատակարանի տողերում գտնվում է Դավիթ երեցի նվիրաբերական արձանագրությունը, իր ողջ ունեցվածքը Արտամետի Աստվածածնի վանքին նվիրաբերելու մասին: Այդ արձանագրության վերջում կան ուշադրության արժանի այսպիսի տողեր. «Եւ զարձեալ, Աստուած զայն տանուտէրն աւրհնէ, որ վերայ Աստուածածնի կենայ ու հող տանի. որ անհաւատ ու անօրէն մարդ շատ կան, որ յաստուծոյ չեն երկընչեր. վասն որոյ պատճառ առնեն և այլ և այլ չար սերմանեն զկապած և զփակած ռսֆ» (Մատենադարան, ձեռ. N 5537,

էջ 298ա-298բ):

«Կապած և փակած ոխք»-երը վանական հաստատություններից հետ խլելու հաճախակի փաստերը թելադրել են վանականներին նվիրաբերական ակտերը փակել յոթնապատիկ անեծքի բանաձևերով, ուղղված այն անձնավորությունների դեմ, որոնք երբևէ կհամարձակվեին վեճի բռնվել վանքի հետ և խլել նվիրաբերված այս կամ այն կալվածքը:

Սակայն չեն օգնել նույնիսկ այդ անեծքները և հաճախ, որևէ մեկի կողմից նվիրաբերված կալվածքը, կրկին գրավվել է նվիրատուի ազգականների կամ ժառանգների կողմից, մի հանգամանք, որ բառ ինքյան կասկածի տակ է առնում նվիրաբերությունների որոշ մասի կամովին լինելը:

Ծանոթանանք բնորոշ մի փաստի. 1489 թվականին «աստուածասէր և բարեմիտ» ոմն քրիստոնյա Մարտիրոս, Արտամետի Կարնեկց սուրբ Աստվածածնի վանքին «ոխք» է անում Ջալիմելերի կոչված արտը: «Ով որ այլայլէ, կամ հակառակէ, կամ զաւէ, անէ՛ զպատիժն յԱստուծոյ առցէ», - գրված է այդ նվիրաբերության մասին մեզ արդեն ծանոթ հիշատակարանում (նույն տեղում, էջ 296բ):

Չնայած անեծքի կաշկանդիչ ուժին, որոշ ժամանակ անց, նույն արտը խլվում է վանքից: Առաջին նվիրաբերությունից 62 տարի հետո, 1551 թվականին, ոմն Եգզանբախշ, տեր Հովանես ու Թահար, և «զամենայն ազգատոհմն իւրեանց» նույն Ջալիմելերի կոչված արտը կրկին «ոխք» են անում նույն Կարնեկց սուրբ Աստվածածնի վանքին (տե՛ս նույն տեղում):

Նշեցինք, որ ԺԵ դարի համար բնորոշ են վանքերին արվող մանր նվիրաբերությունները: Սակայն սխալ կլիներ կարծել, որ այս շրջանում չէին լինում խոշոր կալվածքների, առանձին գյուղերի ու գյուղամասերի նվիրաբերություններ: Գանձասարի վանքը, օրինակ, հենց այս տարիներին Հասան-Ջալալյան ու Դոփյան իշխաններից ստացել է մի շարք գյուղեր: Ուշագրավ է, սակայն այն, որ հայկական վանքերը կալվածքներ էին ստանում ոչ միայն հայ, այլև օտարազգի իշխողներից: «Պատմութիւն վասն Բոխա խաչին» գրվածքի մեջ պատմվում է այսպիսի ուշագրավ դեպք. Վարագա վանքի վանականները 1451 թվականին բոխ բույսից պատրաստում են մի խաչ, որը, իբր, հրաշքներ է գործում: Այդ խաչի զորությամբ,- ասված է պատմության մեջ, - բուժում են նաև տեղի քուրդ ամիրի

անդամալույծ որդուն: Դրա դիմաց քուրդ ամիրը «զայն տեղն, ուրանօր իւրն բնակէր՝ շուրջանակի արտորէիւք՝ ետ սրբոյ վանիցն յիշատակ և վախմ արքունական նամակաւ և բազում իշխանացն այլազգեաց մատանեաւ կնքեալ անջնջելի յիշատակ, յորում այժմ կայ և վայելեն [յ]աջորդք սուրբ ուխտին Վարագայ: Եւ ոչ ոք կարէ իշխել հպել և կամ մերձենալ անդանօր անդաստանին, հերկել և կամ ցանել և կամ սերմանել առանց առաջնորդաց հրամանին, ո՛չ այլազգիք, ո՛չ քրիստոնեայք» (ԼՑՎ, էջ 89):

Մեծ ու հարուստ վանական հաստատությունները ձեռք էին բերում նոր կալվածքներ նաև գնումների ճանապարհով:

1463 թվականից հասել են մեզ Աղթամարի կաթողիկոսության առաջնորդ Ներսես եպիսկոպոսի երկու կոնդակների սևագրությունները: Դրանցից մեկում կոնդակագիրը խնդրում է իր թեմի հայերին նյութական օժանդակություն ցույց տալ «խախտեալ և սպերն թափեալ» սուրբ խաչ վանքը վերաշինելու համար: Ավելի կարևոր բովանդակություն ունի մյուս կոնդակը. այստեղ Ներսես եպիսկոպոսը հայտնում է, որ «գնեաց մի կալ մատ ի վանքս և խիստ նեղութիւն կու հասուցին վանացս» և որ «տէր գիւղոյն ծախեց մեզ ի Ռ. (1000) թանկայ»:

Այդ հազար թանկայի կեսը՝ վանքը վճարել է գյուղի տիրոջը կանխիկ, իսկ մյուս կեսը վճարելու համար Ներսես եպիսկոպոսը խնդրում է հավատացյալներին օժանդակել վանքին: «Եւ դուք,- գրում է նա,- ձեր հոգւոյդ համար և այս սուրբ եկեղեցեացս, թէ հոգւոյ էք պահել և թէ էմայ (՞) տուք ի ձեռն գզա (վանական ժողովարարների), որ բերեն» և այլն (Մատենադարան, Պատառիկների հավաքածու, N 1449):

Այսպիսով, Աղթամարը կամ նրան ենթակա վանքերից մեկը* 1463 թվականին տեր է դառնում մի նոր գյուղի:

Գրիգոր Տաթևացին իր «Քարոզգրքի» ամառան հատորում ունի այսպիսի ուշագրավ տողեր. «Այժմու քահանայապետք... պատճառանօք առնեն ընդ բանադրանօք և յետոյ մերկացուցանեն զժողովուրդն իւրեանց»

* Ներսես եպիսկոպոսի կոնդակում հիշատակվում են սուրբ Աստվածածին, Սալնապատի սուրբ Կարապետ, սուրբ Գրիգոր և սուրբ Խաչ անուններով սրբությունները: Դժվար է որոշել գյուղը Աղթամարի սուրբ Խաչ վանքի համա՞ր է գնվել, թե՞ վերը հիշված վանքերից մեկ ուրիշի:

(էջ 298): Այսինքն՝ որևէ շինծու պատրվակով բանադրում են այս կամ այն համայնքի բնակչությանը և վերացնում բանադրանքը միայն այն բանից հետո, երբ «մերկացնում»՝ թալանում են ժողովրդին:

Հայտնի են դեպքեր, երբ բանադրանքը շահույթի աղբյուր է դարձել: Այս մասին է վկայում Աթանանց գյուղի բնակչությանը Զաքարիա Գ կաթողիկոսի կարգադրությամբ տրված օրհնության գիրը, որը պատահմամբ փրկվել է կորստից, օգտագործվելով որպես Մատենադարանի N 5512 ձեռագրի պահպանակ: Օրհնության այդ գրից տեղեկանում ենք, որ սուրբ Աստվածածնի անունով մի վանք Աթանանց գյուղում ունեցել է «օխլի արտ», այսինքն վանքին նվիրված վարելահող: Սակայն տարիներ առաջ այդ վարելահողը խլվել է վանքից ու տրվել «անօրինաց»: Այդ իսկ պատճառով «առաջին սպասաւորքն սուրբ եկեղեցոյս՝ նախնիքն մեր՝ գիր անիծից և բանադրանաց գրել էին այն անիրաւ մարդկանց»: Անեծքի ու բանադրանքի այդ գիրը մնացած է եղել գյուղի վրա մինչև ռևս Բաղշայիշի ժամանակ (թվարկվում են նաև Բաղշայիշի ժամանակակից «գեղի տանուտէրքը»), երբ «սոքա ամենեքեան միաբան վառեցան ի սէրն Քրիստոսի և ի սուրբ Աստուածածնին, և զայն արտն խաղ (խմա՛ հախ) ու մուլք տուին Աստուածածնին, և զայն առաջին անիծիցն թուղթն պատառեցին և զանէծքն ի յաւրհնութիւն փոխեցին»: Օրհնության գրի մեջ անեծքի սարսուռ ազդող խոսքեր են ուղղված բոլոր նրանց հասցեին, ովքեր երբևէ կհամարձակվեն այդ վարելահողը կրկին անգամ խլել եկեղեցուց:

ԺԵ դարում ընդհանրապես և դարի վերջին տասնամյակներում մասնավորապես մեծ ծավալ է ստանում աշխատավոր ժողովրդի գաղթը հայրենի երկրից դուրս: Ապարանից սուրբ Նշանի վանքում 1497-1507 թթ. շարադրված մի կոնդակում, որը հասցեագրված է Կթանից գյուղի քահանաներին, այդ մասին գրված է. «Գիտացիք, որ անիրէնքն կու նեղացուցեն դքրիստոնայքս սուտ պատճառաւ, կու թողուն զտունն, զարտն ու զայգին և զայլ ապրանքն ու փախին»:*

Նշելով այս տխուր իրողությունը, կոնդակի հեղինակները անիծում են բոլոր նրանց, ովքեր տեր են կանգնում գյուղից փախածների մլքին:

* Կոնդակի մերձավոր ժամանակը որոշվում է այնտեղ հիշատակված Աստմ կաթողիկոսի անունով, որը աղբյուրներում հիշված է հենց 1497-1507 թվականներին:

«Զինչ ի յայս գիրս և յԱւետարանս աւրհնութիւն կայ,- գրված է այնտեղ,- ի վերայ այն մարդոյն, որ այլ անոր (փախչողի) մլքին տիրութիւն չէնէ...: Ով որ ոչ լսէ և զայս առնէ՝ նա Զէ. պատիճ պատուհասն ի վերայ Կայենի եբեր՝ նայ առնու... աստէնս մարմնով անիծած և անդէն տանջի ի գառն գժոխքն ի տառապել, ամէն» (Մատենադարան, ձեռ. N 7757, էջ 1ա):

Առաջին հայացքից դժվար է լինում ըմբռնել կոնդակի իմաստը: Ճատերը թողել են իրենց ողջ ունեցվածքը՝ տունը, արտն ու այգին, և փախել այլ աշխարհ: Արդ, ինչո՞ւ են Ապարանից վանքի կրոնավորներն արգելում համայնքագյուղացիներին տեր կանգնել անտեր ու անժառանգ մնացած այդ մլքերին: Մեզ թվում է, թե ուրիշներին արգելելով, վանքն իրեն էր վերապահում այդ կալվածքների սեփականումն ու օգտագործումը, ելնելով հայ եկեղեցական կանոններով սրբագործված այն սկզբունքից, ըստ որի՝ անժառանգ մնացածների գույքը պատկանում է եկեղեցուն: «Եւ այս է, զոր կարգեալ է Հայաստան եկեղեցիս, զի մեռելոյն ինչքն քահանային է»,- գրել է այդ մասին Մատթեոս Ջուղայեցին («Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից», Մատենադարան, ձեռ. N 5232, էջ 76ա):

Որոշ վանական հաստատություններ, ինչպես և առանձին հոգևորականներ, զբաղվում էին նաև վաշխառուական գործարքներով, տոկոսով փող էին տալիս կարիքավորներին և այլն:*

Անշուշտ, պարտապանների հիմնական մասը հարկերի ծանրության

* Ձեռքի տակ ունենք ԺԶ դարի առաջին տասնամյակներից երկու մուրհակ, որոնցում որպես փոխատուներ հանդես են գալիս կրոնավորներ: Նկատի ունենալով, որ այդ կարգի միջնադարյան փաստաթղթերից հայտնի են միայն եզակի օրինակներ, ավելորդ չենք համարում ստորև մեջ բերել այդ մուրհակները.

1. Գրված է, հավանաբար, Երզնկայում 1504 թվականին. «Ի թվականին Ջ. և ԾԳ. Ես Յոհան արեղայս առի Ժ. (10) կարմիր փող ի Սարգիս վարդապետէն ի փոխ, և զգիրս գրաւ դրի առ նայ, մինչև զփողերն տամ և զգիրս առնում: Տէր Յովանիսին վկայութեամբ գրեցաւ գիրս հոկտեմբերի Է. (7)» (ձեռ. N 4834, էջ 58ա):
2. Գրված է Ամիդում, 1536 թվականին.

«Ի թվին ՋՁԵ., մարտի ԻԳ. Ես Մաղաքիա վարդապետս ի յԱմիթ ԻԶ. (26) սոլթանիա ֆլորի առի ի Խարբերդու խոճա Շահրումն, վկայութեամբ տէր Ներսէս աւագերեցուն, և խոճա Սահակին, և խոճա Սարխոշին, և տէր Եղիին, և Աստուած ի վերայ ամենայնի վկա» (ձեռ. N 5353, էջ 1ա):

տակ կցած գյուղացիությունն էր: Մանոթմանանք մի փաստաթղթի կարևոր մասի հետ.

«Աստուած օրհնէ զԴանձակ գեղ, որ միաբան մի խորհուրդ եղեն և տուին զՄստակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց և ննջեցելոց, եթէ մելիք, եթէ համբալ, եթէ մեծ, եթէ փոքր՝ ամենեքեան տուին: ԻԵ. (25) դուռուշ կայր ընդ գեղն ի վերայ արտի տիրոջն. մեք գեղովս ողջ միաբան տուինք Թումայ սուրբ Առաքելոյն յիշատակ անջինջ և անհակառակ... (Մատենադարան, ձեռ. N 4868, էջ 320բ):

Վանքերից շատերը, ավելի ճիշտ նրանց մեծամասնությունը, հողագործությունից ու այգեգործությունից բացի, զբաղվել են նաև անասնապահությամբ, ինչպես և ունեցել են ջրաղացներ, ձիթհաններ, խանութներ ու եկամտաբեր այլ հաստատություններ: Վանքերի տնտեսական գործունեության այս բնագավառների մասին ևս հիշատակարաններն ու նվիրաբերական արձանագրությունները կարևոր տվյալներ են պահպանել: Այսպես, ԺԵ-ԺԶ դարի գրչությամբ հասել է մեզ Թումա եպիսկոպոսի գրությունը Դատվանում ինչ-որ վանք վերաշինելու և վանական քայքայված տնտեսությունը վերականգնելու մասին: Աղճատված այդ գրությունը մեծ դժվարությամբ հնարավոր է լինում վերծանել. «Ես Թումայ եպիսկոպոս ///նք///ք/// տոյար (գուցե պետք է կարդալ «տուար») մի չկէր Դատվան, տուն մի շէն չկէր. շինեցի[ի] փայտն ու մարագ ու սրահ ու բակեր, պո[հ]գուկս. (՞) գնեցի Ճ. (100) գլուխ ոչխար ի գրուց բերի, գութան կապեցի Գ. (3), խոփ ու ձևիչ Գ. (3), խարաւարի խոփ Զ. (6), Գ. (3) նոր բահ, կացին Բ. (2), յոգ Գ. (3), ուրագ /// ակիշ ու շամփուր Ե. (5), պղինձ Զ. (6), եզն ԺԴ. (14), կովերն Ը. (8)» (Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանի ձեռագր. բաժին, HC N 39 ձեռագիր, էջ ա):

Թումա եպիսկոպոսը վերականգնում է Դատվանի վանքի տնտեսությունն ավերակների վրա, երբ այնտեղ նույնիսկ «տուն մի ի շէն չկէր»: Զնայած դրան, հենց սկզբից եպիսկոպոսին հաջողվում է վանքի համար ձեռք բերել 100 գլուխ ոչխար, 8 կով, 14 եզ և անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ:

Որ երկրագործության զուգընթաց վանական տնտեսությունները զբաղվում էին նաև անասնապահությամբ, երևում է նաև այլ փաստաթղթից. 1498 թվականին տեր Դավիթ երեց Արտամետի Կարմկաց սուրբ

Աստվածածնի վանքին նվիրում է իր ողջ ունեցվածքը՝ իր «կայ ու չկէն»: Նվիրաբերությունը կատարվում է Արտամետ ու Զվարտան գյուղերի համայնքի բոլոր անդամների վկայությամբ: Այդ կապակցությամբ շարադրված գրության մեջ, ի թիվս նվիրաբերված շարժական ու անշարժ այլ գույքերի, հիշատակված են նաև խոշոր ու մանր եղջերավոր անասուններ. «ոչխար՝ թէ մէկ է, թէ հարիւր է, զուար՝ թէ մէկ է, թէ Ծ. (50), թէ ջուլ է, թէ ջվալ է, թէ տուն է, թէ անց է, թէ գուռ է, թէ գուրս է, թէ խոփ է, թէ ձևիչ է, թէ բահ է, թէ փայտատ է, թէ գինչ և իցէ՝ Ռ. (1000)-էն մինչև ի մէկ, մէկէն մինչև ի հազար ոսկի եմ արեր ի դուռն Կարմկեց սուրբ Աստուածածնին» (Մատենադարան, ձեռ. N 5537, էջ 298ա):

Վանական տնտեսությունների մասին մեր գիտելիքները փոքր-ինչ հարստանում են նաև այն հիշատակարանների տվյալներով, որոնցում, այս կամ այն կապակցությամբ, վանքի միաբաններից հետո, թվարկվում են նաև վանքի տնտեսն ու բոլոր գործավորները, իրենց զբաղմունքի բնագավառներով: Ծանոթանանք այդ կարգի հիշատակարաններից երկուսի խնդրի լուսաբանմանը նպաստող հատվածների հետ:

Լիմ կղզում 1421 թվականին շարադրված մի հիշատակարանում «զամենայն գործաւորք դրան սուրբ եկեղեցւոյ»-ի շարքում հանդիպում ենք տնտեսին, մաճկալին և հովվին (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 254): Գրիգոր Լուսավորչի գերեզման կոչվող վանքում հիշատակված են «տնտես և հովիւք և իշավարք և լծուարք և այլ աշխատաւորք» (Ղ. Փիրղալեմյան, Նոտարք հայոց, էջ 91-92):

Մատթեոս Ջուղայեցին հնարավորություն է տալիս պարզելու նաև «այլ աշխատաւորք»-ի ինչ լինելը. նա թվարկում է վանքերում հանդիպող պարտականություններն ունեցող գործավորներին՝ «ա. աղօնարար, բ. եփող ապրին, գ. թխող հացին, դ. փայտաբերն, ե. ջրբերն, զ. բաժանողն, է. հոգացողն զհաց և զըմպելի և զվաճառ» (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 162բ):

Այս և լրացուցիչ այլ տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ վանքերը իրենց կալվածքները մշակում էին հիմնականում, իրենք, այդ նպատակով պահելով անհրաժեշտ քանակությամբ քաշող անասուններ

(եզներ ու գոմեշներ)*, ինչպես նաև ունենալով գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքներ (գութան, խոփ, ձեփ, բահ, կացին, փայտատ, մանգաղ, լոգ-կեռ դանակ և այլն):

Վանական տնտեսությունների վրա աշխատում էին «վանից գործավորները», որոնք, գերազանցապես, վարձկան մշակներ էին: Սակայն այն վանքերը, որոնք ունեին սեփական գյուղեր, օգտագործում էին նաև այդ գյուղերի բնակիչների կոռային աշխատանքը: Այս մասին ԺԵ դարից ուղղակի վկայություններ չեն պահպանվել, բայց կան տվյալներ հետագա դարերից: Այսպես, ԺԷ դարում, հին ավանդույթների հիման վրա Տաթևում գրանցված «Հուշավարն, այսինքն վանքական վիճօրէից հողոց տասանորդքն» արժեքավոր ցուցակում, Տաթև, Ավարանց, Աղանց, Տանձատափ և վանքապատկան մյուս գյուղերի բնակիչների վանքի նկատմամբ ունեցած պարտավորությունների շարքում ամեն անգամ նշվում է նաև հետևյալը. «Գլխավին, բոլոր գեղովն» պարտավոր են ամեն տարի, առանց վարձատրության «մէկ օր վարեն, Բ. օր (կամ Գ. օր) հունձ անեն, և մէկ օր ալ ջաւ անեն ինչ բան որ լինի, և մէկ օր եղնարածքն վանքիս համար խոտ հարեն» (Մատենադարան, ձեռ. N 6271, էջ 678):

Վանական հաստատությունները բարեխոսում էին նաև այն մարդկանց և նրանց մերձավորների հոգիների փրկության համար, որոնք կամովին ստանձնելով այս կամ այն պարտավորությունը, նպաստում էին վանական տնտեսություններում տարվող աշխատանքներին: Այդպիսի մեկն էր ուստա խալիֆը, որը ԺԵ դարի անթվական մի արձանագրության տվյալներով. «յամէն տարի Բ. (2) գութան է տուէր սուրբ Վարդանայ» (Մատենադարան, ձեռ. N 1524, էջ 921բ):

Վերը բերված փաստերը հիմավոնք են տալիս եզրակացնելու, որ վանքերի մեծագույն մասը, եթե ոչ բոլորը, իրենց պատկանող կալվածքների մի մասը մշակում էին սեփական միջոցներով: Վանական տնտեսությունների գոյությունն արդյունավետ կլիներ, անշուշտ, այն դեպքում, երբ տվյալ վանական հաստատությունը վանքի շրջակայքում ունենար համեմատաբար ընդարձակ տարածությամբ վարելահողեր: Իսկ երբ վանքը այլևայլ ճանապարհներով ձեռք էր բերած լինում տարբեր և միմյանցից հեռու գտնվող գյուղերում առանձին արտեր, խոտհունձներ, այգիներ ու այլ կալվածքներ. այդ դեպքում բնական է ենթադրել, որ դրանք մշակվում էին ոչ թե վանքի կողմից, վանքապատկան անասուններով ու գործիքներով, այլ տարբեր պայմաններով վարձակալման էին հանձնվում այդ կալվածքի գտնված վայրի բնակիչներին: Վարձակալության կարող էին տրվել նաև վանքապատկան մասսիվ ու ընդարձակ հողամասերն այնպես, ինչպես, ըստ երևույթին, այդ կատարում էր Վարագա վանքը, եթե դատելու լինենք «Պատմութիւն բաղա խաչին» մեզ արդեն ծանոթ գրվածքից: Վերհիշենք, այնտեղ ասված էր, որ ոմն քուրդ ամիր «զայն տեղն ուրանօր ինքն բնակէր՝ յուրջանակի արտօրէիւք» նվիրել է Վարագա վանքին, և որ «ոչ ոք կարէ իշխել հայի և կամ մերձենալ անդանօր անդաստանին, հերկել և կամ ցանել և կամ սերմանել առանց առաջնորդաց հրամանին, ոչ այլազգիք և ոչ քրիստոնեայք»:

Պետք է ենթադրել, ուրեմն, որ վանքի անդաստանը հերկել, ցանել կամ սերմանել ցանկացողներին այդ բանը թույլատրվում էր «առաջնորդաց հրամանով», բնականաբար, արդյունքի մասը վանքին տալու պայմանով:

Ցավոք, վանքապատկան կալվածքների մշակման պայմանների, գյուղացիների պարտավորությունների և հարակից այլ հարցերի լուսաբանման համար, առայժմ ուշադրության քիչ թե շատ արժանի տվյալներ չկան, ուստի վաղաժամ է խորանալ այդ բնագավառում:

Վանքերի տնտեսական գործունեության մասին մեր խոսքն ավարտելուց առաջ նշենք նաև, որ նրանցից շատերը ունեին ջրաղացներ, ձիթհանքեր ու եկամտաբեր այլ հաստատություններ:

Նոր Ջուղայի հայերեն ձեռագրերի հավաքածուի N 481 Ավետարանում պահպանվել է 1442 թվականին գրանցված մի փաստաթուղթ այն մասին, որ Ֆրա Պետրոս Սալիթաղեցին, ոմն Մխիթարի որդի խորշահին պատկանող հողում կառուցել է ջրաղաց: «Զամենայն պիտոյքն, այսինքն՝ զքարն, զչիցն, զնաւն և զայլ ամենայն փայտերն, որ ի պէտք է շինութեանն,

* 1457 թվականին Թովմա առաքելոյի վանքի վանահայր Աբրահամը, «աջնամբերի փարէն» ամբողջովին իր վանքի պետքերի համար ծախսելու արտոնություն ստանալու նպատակով Աղթամարի վանքին տալիս է չորս եզ ու չորս գոմեշ (Լ. Փիրղալեմյան, Նոտարք հայոց, էջ 186-187): Պետք է ենթադրել, ուրեմն, որ և՛ Աղթամարի, և՛ Թովմա առաքյալի վանքերի բաշող անասունները հաշվվում էին տասնորդներով:

գամենայն մեր պատրաստեցինք»,- գրում է ֆրա Պետրոսը, պայմանով, որ ջրաղացի երկու բաժինը պատկանի վանքին իսկ մեկ բաժինը՝ խարբաշեցին:

Արբերդի վանքի միաբանների շարքում 1470 թվականին հիշատակվում է նաև ջրաղացպան Մկրտիչը (Հիշ. N 386, էջ 303), ուստի ջրաղաց է ունեցել նաև այդ վանքը:

Խառաբաստի վանքը ԺԵ դարի առաջին կեսին երկու ակ ջրաղաց ուներ Բոլորամարգ գյուղում և երկու ջրաղաց՝ Խառաբաստում (Վ. Փիրղալեմյան, Նոտարք հայոց, էջ 31-32):

Լալա-Միրանշահի 1481 թվականի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Աղթամարը և այլ եկեղեցիներ ունեցել են ձիթաղացներ: Դրանցից գանձվող հարկը (խարճը) բաշխվել է եկեղեցիներին որպես ձիթագին (Մատենադարան, ձեռ. N 5333, էջ 334ա):

Վանի սուրբ Վարդան եկեղեցու ձեռագրերից մեկում ԺԵ դարում կատարված մի արձանագրության մեջ կարդում ենք. «Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զՂուկասն, որ զձիթաղացն ոսվ էրետ սուրբ Վարդանայ, ու բանի չի շինած՝ յամէն տարի Ի. (20) դիտր ձէթ տայ» (Մատենադարան, ձեռ. N 1524, էջ 37ա): Պարզ է, ուրեմն, որ ձիթաղաց պետք է ունենար նաև այդ եկեղեցին:

1648 թվականի նվիրաբերական մի արձանագրության մեջ խոսվում է այն մասին, որ Սարգիս դարբինը նվիրել է կէս կգու սուրբ Գեորգ վանքին իր դարբնի սալը (Մատենադարան, ձեռ. N 4690, էջ 646ա): Այս տվյալը իրավունք է տալիս եզրակացնելու, որ որոշ վանքերի կից եղել են նաև գործատներ, տվյալ դեպքում՝ դարբնոց:

Տարբեր դարերից տվյալներ ունենք նաև վանքերին պատկանող խանութների մասին: Այսպես, օրինակ, 1565 թվականին վանեցի խոշոր վաճառական ու վաշխառու՝ Մելիք Ղուլիջանը Տիրամայր եկեղեցուն է նվիրել «դուքան մի յիւր դուքաններացն» (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 292) և այլն, և այլն:

Այսպիսով, հայկական վանական հաստատությունները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում զգալի տնտեսական ուժ էին ներկայացնում. նրանք ոչ միայն շարունակում էին պահել իրենց ձեռքում շարժական ու անշարժ մեծաքանակ կալվածքներ, այլև օգնության ձեռք էին կարկառում և իրենց շվաքի տակ պատսպարում երբեմնի հզոր հայ

ավատական տների մասնատված և ուժասպառ շառավիղներին: Ինքնուրույն պետականությունից զուրկ հայ ժողովրդի կյանքում նրանց, ինչպես տեսանք, վիճակված էր կատարել նաև աշխարհիկ որոշ ֆունկցիաներ:

Դ

Հայ եկեղեցին, ինչպես նախորդ դարերում, այնպես էլ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, շարունակում էր կիրառել դատական իր ֆունկցիան: Ինչպես մահմեդական բարձրաստիճան հոգևորականությունը՝ մահմեդական հպատակների նկատմամբ, այնպես էլ հայ հոգևորականությունը՝ հայերի նկատմամբ իրավասու էր դատական վճիռներ կայացնելու քաղաքացիական դատական ատյաններին ենթակա ամեն կարգի հարցերում (ժառանգական վեճեր, ամուսնալուծություն և այլն): Նույնիսկ քրեական բնույթի փոքր զանցանքները, որոնք վերաբերելով հայ համայնքների ներքին կյանքին՝ չէին շոշափում պետության շահերը, քննարկվում ու լուծում էին ստանում հայ եկեղեցու դատական ատյաններում:

Հայ կաթողիկոսների կողմից եկեղեցական տուրքեր գանձելու նպատակով ամեն տարի թեմերն ուղարկվող նվիրակները, ինչպես նշված է Զաքարիա կաթողիկոսի 1462 թվականի մի կոնդակի մեջ, իրավունք էին ստանում «հրամանաւ և իշխանութեամբ ի մեր (կաթողիկոսի) անձի տեղ կապել և արձակել, իրաւունս և դատաստանս առնել» և այլն (էջ 174, տողատակ): Դատական վեճեր հարթում էին, սակայն, ոչ միայն կաթողիկոսական նվիրակները, այլև ամեն մի շրջանի կենտրոնական վանական հաստատության հեղինակավոր վարդապետները, որոնք վճիռներ էին կայացնում հայ եկեղեցական «կանոնգրքի», Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», ինչպես նաև սովորութային իրավունքի նորմերին համապատասխան:

1408-1411 թվականներին, Քաջբերունիքի բնակավայրերից մեկում վեճ է ծագում հանգուցյալ Կարապետ քահանայի որդիների միջև, հոր թողած ժառանգության, հատկապես ձեռագիր Ավետարանի ու Նարակնոցի բաժանման կապակցությամբ: «Եւ անդաւ աղաղակ և աղմուկ ի մէջս իւրեանց վասն Աւետարանիս և Նարակնոցիս»,- գրված է այդ մասին շարադրված հիշատակարանում: Վեճը հարթելու համար Մեծոփա վանքից գալիս են նշանավոր վարդապետներ Թուման և Հովհաննեսը: Նրանք

բաժանում են «զամենայն ինչ որ կայր՝ երեք բաժին»: Վիճելի Ավետարանը վարդապետների որոշմամբ տրվում է Հայրապետ եղբորը, իսկ Շարակնոցը՝ Ղազարին (տե՛ս ԺԵ դարի հիշատ., Ա, էջ 125):

Հայ հոգևորականության դատական ֆունկցիան ավելի ցայտուն երևում է Գրիգոր Ծերենց Խլաթեցու (մհ. 1425 թ.) մի նամակից, որի բարձրաստիճան հասցեատիրոջ անունը, դժբախտաբար, չի պահպանվել:

Նամակագիր Գրիգոր Ծերենցը տեղեկացնում է, որ ոմն Ղազար* լուր է տվել իրեն, թե հասցեատերը դժգոհություն է հայտնել այն կապակցությամբ, որ «մարդիկք ի մեղանէ սարսին և ի դատին անկանին և բէգին յիշեն», այսինքն՝ շատերը, անբավական մնալով Խառաբաստի վանքի վարդապետների դատական որոշումներից, խորշում են վանական դատարաններից և դիմում մահմեդական դատական ատյաններին:

«Մեր օրէնքս այս է,- գրում է Խլաթեցին,- թէ հարսին զարդերքն ու բաժինքն է, թէ փեսային, թէ տղայ եղեալ է միջին՝ այն ամենայն տղային է, և թէ տղայ չէ եղեալ ի մէջ՝ ուրան է զայն՝ գնացելոյ հօրին հօրան: Եւ թէ այլ մնայ՝ փեսային հօր տուածն յիւր տէրն դառնայ, և աղջկայ հօր տուածն՝ յիւր տէրն դառնայ, ապա կերածն ու մաշածն չպայ յիշումն: Մեր առաջնորդաց հրամանքն այս է, և որ ապի չինի՝ մասն ու բաժին ընդ անհաւատսն դիցէ, և դուք ողջ լերուք ի տէր Աստուծով» (Մատենադարան, ձեռ. N 8076, էջ 74բ):

Այս կարևոր նամակը ոչ միայն հաստատում է այլ աղբյուրներից ևս հայտնի իրողությունը՝ հայ հպատակների քաղաքացիական դատական գործերը հայ հոգևորականության կողմից անօրինելու մասին, այլև հնարավորություն է տալիս պարզելու, որ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» իրոք գործածության մեջ է եղել միջնադարյան Հայաստանում: «Մեր առաջնորդաց հրամանքս այս է» խոսքերով, մեծ հավանականությամբ Գրիգոր Ծերենցը ակնարկում է Գոշի «Դատաստանագրքի» առաջին մասի ՃԻԱ. կանոնը՝ «Յաղագս դատաստանաց առնակնոջ մահուան և անդրէն

* Հավանաբար Մեծոփա վանքի միաբան Ղազար կրոնավորն է, որի մասին տվյալներ կան 1410-1435 թթ. Մեծոփա վանքում շարադրված մի քանի հիշատակարաններում (տե՛ս ԺԵ դարի հիշատ., Ա, էջ 104, 451, 454): Եթե ճիշտ է այս ենթադրությունը, ապա կարելի է, թերևս, նամակը հասցեագրված համարել Թովմա Մեծոփեցուն:

զաւակաց բաժնի նորա, որ կոչի պռոյգք»: Այդ կանոնում Գոշն ուղղակի ասում է, որ այդ հարցում հայկական սովորույթը տարբերվում է մահմեդական ու հունական սովորույթից, այդ իսկ պատճառով պատշաճ է համարում կնոջ մահվան դեպքում, «թէ մնացէ զաւակ՝ հոգասցի հոգւոյ նորա պէտք եւ մնացեալն զաւակին լիցին: Իսկ եթէ զաւակ չիցէ մնացեալ... դարձցի անդրէն բաժինն ի ձեռս ծնողացն կամ եղբարցն նորա. եւ ըստ նորին պատուիրելոյ հոգասցին զհոգի զկտակեամբն առնն, եւ որ սակաւ մնայ նոցա լիցի... (Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 289-290):

Չի կարելի կասկածել, որ հայ եկեղեցին, ունենալով դատական ինքնավարություն, նշանակալից դեր էր կատարում ժողովրդի կողմից դարերի ընթացքում մշակված սովորույթների ու իրավական պատկերացումների պահպանման գործում, իսկ այս վերջին հանգամանքը, իր հերթին, կարևոր լծակներից մեկն էր հայ ժողովրդի ինքնագիտակցության պահպանման և օտար նվաճողներին դիմագրավելու գործում:

Մեծ էր վանական հաստատությունների դերը նաև ուսումնական գործում, ինչպես նաև անցյալում ստեղծված գրական ու պատմական հուշարձանների՝ ձեռագիր մատյանների պահպանման և ընդօրինակությունների միջոցով բազմացնելու բնագավառում:

Հրատարակվող հիշատակարանների գրչության վայրերի ցանկն ըստ ինքյան պարզաբանում է, թե ո՛ր շրջաններում և ի՛նչ կենտրոններում էին հիմնականում շարունակվում ձեռագրերի ընդօրինակման մեծ ծախսեր ու ջանքեր պահանջող աշխատանքները: Նշենք միայն, որ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի անընդհատ արշավանքների ու պատերազմների և բնական արհավիրքների տարիներից մեզ հասած հարյուրավոր ձեռագրերն ինքնին վկայական են հայ ժողովրդի գրասիրության ու մշակութային գործունեության անկոտրում ծարավի:

Անհրաժեշտ տնտեսական ու քաղաքական պայմանների բացակայությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում Հայաստանում չկային Գլաձորի կամ Տաթևի համբավավոր համալսարանների նման ուսումնական ու մշակութային խոշոր կենտրոններ: Սակայն Հայաստանի տարբեր շրջաններում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ևս գոյություն ունեին տարրական ու բարձրագույն տիպի

ուսումնական հաստատություններ, որոնք զգալի դեր էին կատարում հայ եկեղեցու համար բանիմաց ու գրագետ վարդապետական կադրեր պատրաստելու գործում:

Ամենանշանավոր ուսումնական հաստատությունն այս տարիներին, անշուշտ Դանիել վարդապետի[*] աշակերտ՝ Հովհաննես րաբունապետ Համշենցու գլխավորած համալսարանն էր՝ Սեպուհ լեռան Ավագ վանքում, ապա՝ նրա մոտակայքում գտնվող Կապոսի վանքում:

Այս համալսարանի մասին մեզ հայտնի հնագույն տեղեկությունը գտնում ենք Ստեփանոս գրչի կողմից 1463 թվականին Ավագ վանքում շարադրված հիշատակարանում, ուր գրված է. «... այլ և համարէն եղբարցս մերոց սրբազանից, որք հաւաքեալ կան յայսմ համալսարանիս՝ ի վանքս Աւագ, առ ոտս առատաշնորհ երջանիկ րաբունապետիս (Յովհաննիսի) և երկուս դասագլխացս՝ տէր Աբրահամիս և տէր Մարգարէիս»: Հիշատակարանի շարունակության մեջ այս Աբրահամը կոչվում է անհաղթ փիլիսոփա և համարվում «սկիզբն և պատճառ դասատանս»:

Նույն գրիչը կարևոր տվյալներ է հաղորդում Ավագ վանքի համալսարանի մասին նաև հաջորդ՝ 1464 թվականին, Դիոնիսիոս Արիոպագացու աշխատությունների իր ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում: Պարզվում է, որ Համշենցի րաբունապետի շուրջը «յայս յարանիս՝ ի վանքս Աւագ» հավաքված են եղել «անձինք լ. (30), որք պարկեշտք և գովելիք»: Դրվատանքի ջերմ խոսքեր ուղղելով «քաջ րաբունի» Հովհաննեսի հասցեին, Ստեփանոսը չի մոռանում հիշատակել նաև նրա աջակից Աստվածատուր վարդապետ Ջերմացուն.

«Որ ջերմեռանդ սիրով վառի
Ի շինութիւն այս սուրբ ուխտի»:

Չեն մոռացվում նաև գրչի աշակերտակիցները. հանվանե հիշատակվում են նրանցից շատերը (հմմտ. N 256, էջ 207-208):

Որոշ չէ, թե մինչև ո՞ր թվականն է Հովհաննես Համշեցին դասավանդել Ավագ վանքում. գիտենք միայն, որ 1489 թվականին արդեն նրա գլխավորած ուսումնական հաստատությունը Ավագ վանքից

փոխադրված է եղել Կապոսի կոչվող սուրբ Հակոբի վանքը:

Համալսարանի հռչակը տարածված էր Հայաստանի արևմտյան բոլոր նահանգներում և հայկական գաղթավայրերում: Համշենցու մոտ ուսանում էին կաֆայեցիներ, տրապիզոնցիներ, տիվրիկցիներ, դարանաղցիներ, սեբաստացիներ, հաղբատցիներ և այլ վայրերից եկած ուսանողներ: 1489 թվականին Տարոնի Գլակա վանքի սաներից մեկը Գրիգոր հայտնում է, որ «առի զհամբաւ Յովհաննէս քաջ րաբունապետին, որ է աշխարհաւ Համշենցի, ի թագաւորական ազգէ, եւ է նստեալ կայ ի գաւառն Եկեղեաց, ի դրունս սուրբ Յակոբին, և ունի աշակերտս բազում, և ուսուցանէ հանգոյն նախկին վարդապետաց»: Տեղեկանալով այդ մասին Գրիգոր Տարոնացին, ինչպես ինքն է ասում, «յուզի անկեալ եկա և մտի ի համալսարանս նորա և նստա ի յունկնդրութիւն աստուածային իմաստութեան, զոր աւրըստաւրէ պատմէր հոգւովն սրբով և տպաւորէր ի միտս աշակերտացն»:

Հովհաննես Համշենցին վախճանվեց 1497 թվականին, Կապոսի վանքում, մինչև իր կյանքի վերջին օրերը ղեկավարելով համբավավոր համալսարանը:

1463-1497 թվականների ընթացքում Եկեղյաց գավառի Ավագ և Կապոսի վանքերում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում Հովհաննես Համշենցու և նրա գլխավորած համալսարանի մասին շատ է խոսվում: Մի շարք հիշատակագիրներ Հովհաննեսին վերագրում են ազնվական ծագում, համարելով նրան «ի թագաւորական ազգէ» (օրինակ՝ Մատենադարան, ձեռ. N 55, էջ 161ա) կամ «պարոն-որդի» (հմմտ. N 256, էջ 207): Կարելի է ենթադրել, որ նա սերվել է հայ ավատական այն ընտանիքներից, որի ներկայացուցիչները ԺԵ դարի առաջին կեսում իշխում էին Համշենում, որպես կիսանկախ տիրակալներ[*]:

Ինչ գիտելիքներ էր հաղորդում իր ունկնդիրներին Հովհաննես Համշենցին, առայժմ չգիտենք: Նրա աշակերտներից մեկը՝ Մաղաքիա Բերդակեցին, 1494 թվականին շարադրած չափածո հիշատակարանում, իր

[*] Այս ընտանիքից ցարդ հայտնի են հետևյալ իշխանները՝ Առաքել (իշխել 1406-1422 թթ.), Դավիթ (իշխել 1425-1440 թթ.) և Վարդ (իշխել 1440 թ.): Սրանց մասին տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Առաջաբան, էջ

ուսուցչին մեծարում է այսպիսի խոսքերով.

«Սա լոյս ծագի մէջ աշխարհի,
Լուսաւորող սա համայնի՝
Հայոց տառապեալ ազգի,
Ուսուցանող սա միշտ լինի
Ի տուէ և ի գիշերի:
Զխրթնածածուկ բանս մատենի
Յայտնէ մանկանցս Սիոնի,
Զբանս աշնու սա ի մտի
Իբր կերակուր ի բերանի.
Ծակէ ծամէ ի խորհրդի
Կակղէ զիմաստ բանի,
Լնու ի միտս լսողաց՝
Աշակերտացն որպէս տղի»
(Մատենադարան, ձեռ. N 620, էջ 298ա):

Թէ ինչպիսի՞ գրքերի խրթնածածուկ իմաստներն էին պարզաբանվում Հովհաննես Համշենցու կողմից, հնարավոր է լինում որոշել հենց նրա աշակերտների ընդօրինակած ձեռագրերով. դրանք են Գրիգոր Նյուսացու (Մատենադարան, ձեռ. N 620), Գրիգոր Նազիանզացու (Մատենադարան, ձեռ. NN 112, 115), Բարսեղ Կեսարացու (Մատենադարան, ձեռ. N 620), Դիոնիսիոս Արիոպագացու (Մատենադարան, ձեռ. NN 114, 1309) աշխատությունների ժողովածուները, «Մեկնութիւն նուրբ գրեանց» ուշագրավ բանասիրական գործը (Մատենադարան, ձեռ. N 55) և այլ ձեռագրեր:

Որ աստվածաբանական-իմաստասիրական բովանդակության վերոհիշյալ աշխատություններն ընդօրինակվում էին Համշենցու սաների կողմից ոչ միայն բազմացման, այլև ուսուցողական նկատառումներով, այդ պարզ երևում է այդպիսի ձեռագրերից մեկի (Գրիգոր Նազիանզացու աշխատությունների ժողովածու) հիշատակարանից, որ շարադրված է Հովհաննես գրչի կողմից 1497 թվականին: Այստեղ իր արդեն հանգուցյալ ուսուցչին գրիչն անվանում է «բացայայտող այսմ տառի», այսինքն՝ Գրիգոր Նազիանզացու գրությունները մեկնաբանող:

Այսպիսով պարզվում է, որ Հովհաննես Համշենցու գլխավորած համալսարանը միջնադարյան բարձրագույն տիպի ուսումնական հաստատություն էր և պատրաստում էր հայ եկեղեցու համար անհրաժեշտ աստվածաբան վարդապետներ:

ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի հիշատակարաններում տվյալներ են պահպանվել նաև ուսումնական այլ հաստատությունների և առանձին նշանավոր վարդապետների ու րաբունապետների մասին:

Այսպես, ԺԵ դարի 50-ական թվականներում Թբիլիսիում աշխատել է Ստեփանոս անունով մի րաբունի՝ Կարապետ րաբունապետի աշակերտներից: Վերջինիս մասին 1452 թվականին Թբիլիսիում շարադրված մի հիշատակարանում գրված է. «Նաև զգերապատիւ և գնրբահայեաց և զպարզաբեալն իմաստութեամբ և զբարձրացեալն աստիճանաւ ըստ հոգոյ հայր և զուսուցիչ սորա (Ստեփանոս րաբունու) զԿարապետ րաբունապետ, որ լցեալ աշխատութեամբ ուսոյց զվարդապետական և զերաժշտական գիտութիւնս» (Հշտկ. N 22, էջ 18):

1462 թվականին Կաուց անապատում հիշվում է Թովմա Մեծոփեցու աշակերտներից Ստեփանոս վարդապետը, «որ է հոգևոր հայր մեր և խրատիչ ամենայն բարութեանց, որ և զուգուած քարոզեաց ի գիշերի և ցերեկի մեզ, և է փիլիսոփայ երիցական արհեստի և ծաղիկ ժամատեղաց, և է գիտակ ամենայն Հին և Նոր կտակարանաց աստուածային գրոց գիտութեան, որ յար և նման է վարժապետին իւրոյ Թումայ վարդապետին» (Հշտկ. N 225, էջ 182):

1470 թվականից տեղեկություն ունենք Խարբերդի մոտակայքում գտնվող Սուր վանքում հիմնադրված դպրոցի մասին: Այս դպրոցի ուսուցիչ Սիմեոն րաբունապետը, ինչպես ասված է մի հիշատակարանում, հաստատվել էր «կանապա[տ]ն, որ կոչի Սուր վանք, և [դպ]րոց կ[ար]գեալ բազում [ա]շ[ա]կե[ր]տաց՝ լու[սաւ]որելով ըզ[հ]եռա[ւ]որս և զմերձա[ւ]որսն» (Հշտկ. N 380, էջ 297):

Դպրոց է եղել նաև Վայոց-ձորի Բոլորաբերդ անապատում: 1475 թվականին այստեղ մի Ավետարան ընդօրինակած Ավագուէր գրիչը (հետագայում վարդապետ) հայտնում է, որ աշխատել է «առ ոտս երից երանեալ և քաջ հռետորի և բանիբուն վարդապետի և անյաղթ փիլիսոփայի՝ վարժապետիս իմոյ Սարգսի, զի որպէս զարեգակն փայլէ

յազգս Հայոց» (հիշտ. N 474, էջ 375):

Անշուշտ, դպրոցներ կային նաև այլ վանքերին կից և, բացի այդ, ամեն մի վարդապետ կամ գրչության արվեստի հմուտ վարպետ պահում էր մեկ-երկու աշակերտ, ուսուցանելով նրանց գործնական իր գիտելիքները՝ գրչության, մանրանկարչության, մագաղաթ պատրաստելու կամ թուղթ կոկելու եղանակներ և այլն:

Այդպիսի բազմաթիվ վարդապետներից մեկը 1497 թվականին Արգելանի վանքում «բազում աշխատութեամբ ուսոյց զմեզ (խմբ՝ Հովսեփ Ալթամարցի գրչին) զարուեստքս՝ գծնել մագաղաթս, և գրել սորին, այլ և ընկարել» («Հանդէս ամսօրեայ», 1940, էջ 210):

Գրիչներից ու ծաղկողներից շատերն իրենց անպաճույճ ու սրտաբուխ հիշատակարաններում պարտք են համարել երախտագիտական խոսք ասել նաև իրենց ուսուցիչների մասին, որոնք «զաւն և զմուար» այդ տարիներին իրենց նման, մեծ զրկանքներով ու ջանասիրությամբ ընդօրինակել են ձեռագրեր և գրչության արվեստի գաղտնիքներն են բացել իրենց աշակերտների առաջ:

Այսպիսով, մշակութային կյանքը Հայաստանում ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում, չնայած քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմաններին՝ չէր մարել իսպառ: Հայաստանի տարբեր շրջաններում, տնտեսապես ապահով այս կամ այն վանական հաստատության հովանու ներքո, դեռևս շարունակում էին ուսումնասիրել հայ հին գրականության հուշարձանները, ընդօրինակում ու բազմացնում էին հին ձեռագրեր և իրենց գիտելիքներն էին հաղորդում երիտասարդ սերնդին նախկին համբավավոր ուսուցիչների՝ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու նման գիտուն ու բանիմաց, սակայն ջանասեր ու աշխատասեր հետնորդները:

Ե

Հայ ժողովրդի ամենաստվար հասարակաշերտը՝ աշխատավոր գյուղացիությունը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, կրելով օտար տիրապետողների կեղեքիչ լծի հիմնական ծանրությունը և հարստահարվելով սեփական տերերի կողմից, շարունակում էր արյուն-քրտինքով հերկել հայրենի հողը: Բնականաբար, մեզ համար հատուկ նշանակություն

են ստանում հիշատակարանների ու ձեռագիր մյուս աղբյուրների բոլոր այն տվյալները, որոնք, այս կամ այն չափով, նպաստելու են հայ աշխատավոր գյուղացու արտադրական կենցաղի, գյուղական համայնքի կազմակերպչական սկզբունքների, սոցիալական շերտավորման և հարակից հարցերի լուսաբանման գործին:

«Գյուղական համայնք» գիտական տերմինը միջնադարյան հայկական աղբյուրներում բնականաբար չի հանդիպում: Այդ ինստիտուտի մասին խոսելիս ԺԴ-ԺԵ և ժամանակամերձ դարերի սկզբնաղբյուրներն օգտագործում են «ժողովուրդ» տերմինը՝ «ժողովուրդ գեղիս» (Մատենադարան, ձեռ. N 7991, էջ 237բ), «ժողովուրդ Ճամպայ» (Հ. Աբրահամյան, Կալվածագրեր, էջ 11), «Սալախանի ժողովուրդ» (Մատենադարան, ձեռ. N 4512, էջ 155ա) և այլն:

Գյուղական համայնքի հետ առնչվող պաշտոնեության մասին ակնարկներ պարունակող սկզբնաղբյուրներում առաջին հերթին հիշատակվում են ձեռնավորներն ու տանուտերերը (ռայիսները): Այդ պաշտոնյաների գոյությունն անհրաժեշտ էր նկատվում բոլոր գյուղերում: Մաթեոս Ջուղայեցին «անկարգ շէն» է համարում այն գյուղը, որ «ոչ ունի ձեռնաւոր և տանուտէր» (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 83բ), իսկ նրա ուսուցիչ Գրիգոր Տաթևացին՝ որբ այն տունը, «որ չունի տանուտէր,... գեղ, որ չունի ձեռնաւոր (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 83բ):

Արձանագրական ու մատենագրական մի շարք տվյալներից հայտնի է դառնում, որ ձեռնավորները տեղական ավատատերերից նշանակվող պաշտոնյաներ են եղել, որոնք հարկագրել են հարկահանման օբյեկտները, որոշել հարկի չափը, հսկել հարկահանման գործին*:

Ձեռնավորները նշանակվում էին գավառապետների, ամիրների կամ հարկային խնդիրներ վարող ավատատերերի կողմից՝ տվյալ շրջանի կամ գյուղի ազդեցիկ, ունևոր և փարթամ ընտանիքների ավագներից. նրանք պետության կամ ավատատիրոջ շահերն էին պաշտպանում գյուղերում:

Գյուղական համայնքի ավագը աղբյուրներում կոչվում է ռես կամ

* Մանրամասնությունները տես մեր «ԺԴ.-ԺԵ. դարերի հայկական գյուղական համայնքի մասին» հոդվածը, տպագրված «Պատմա-բանասիրական հանդեսի» 1958 թ. N 1-ում (էջ 110-133):

տանուտեր*:

Ռեսի պաշտոնը ընտրովի էր, և որոշ տվյալներից դատելով, ընտրությունը կատարվում էր տարին մեկ անգամ: Մի ձեռագիր Ավետարանի գնման մասին 1590 թվականին գրանցված արձանագրության մեջ ասված է, որ «գիրս գրեցաւ էն տարիս, որ Ամիր-Բարօն տանուտէր էր», իսկ 1606 թվականի մի հիշատակարանում «գնեցաւ այգիս ըռէս Շադաւաթի տարին»:

Այս տվյալներից, սակայն, սխալ կլիներ եզրակացնել, թե ամեն տարի ընտրվում էին նոր ռեսներ և ընտրությունը կատարվում էր այս կամ այն անձնավորության գործարար հատկությունների հաշվառմամբ միայն: Ընդհակառակը, կան տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ռեսի պաշտոնը գրավում էին գյուղերի ամենափարթամ ու ազդեցիկ ընտանիքների անդամները և այն ժառանգական դառնալու տենդենց ուներ:

Այսպես, 1537 թվականի մի հիշատակարանում խոսք կա ոմն Կարապետ «փոքր տանուտէրի» մասին, որը «վեց ամ տանուտրութիւն արար գեղջս Վաղարշապատու, ի ԻԲ. (22) ամաց փոխեցաւ առ Քրիստոս» (Ա. Տեր-Ավետիսյանի ձեռագիր ցուցակում նկարագրված մի Ավետարանի հիշատակարանից):

1471 թվականին Խժիշկ գյուղի տանուտեր է եղել ոմն «իմաստուն երիտասարդ պարոն Վաշօ (Վաղօ), որդի պարոն Միրաշի (հշտկ. N 408, էջ 324):

1498 թվականին մեզ ծանոթ Բարսեղ գրչի Ասպինակ գյուղում շարադրած հիշատակարանում հիշված է «զնոր տանուտէրն զպարոն Ջաջուան, որ տղայհասակ Ի. (20) ամաց ի տանուտրութիւն հաստատեցաւ և է

* Տանուտեր տերմինը նախարարական շրջանից մինչև ուշ միջնադար՝ բազմիցս փոխել է իր բովանդակությունը: ԺԴ.-ԺԵ. և հետագա դարերում **տանուտեր** էին կոչվում ինչպես գյուղական համայնքի ընտրովի առաջնորդները, այնպես էլ գերդաստանների ավագ անդամները, որոնց ձեռքում էր կենտրոնացված տվյալ ընտանիքի տնտեսության ղեկավարությունը: Գյուղերի և առանձին տների տանուտերերին միմյանց հետ չշփոթելու համար մեր շարադրանքում առաջինի նկատմամբ գործ ենք ածում ռես (ռայիս) տերմինը, որը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի աղբյուրներում նույնպես շատ գործածական է:

ձեռնատր գեղիս»:

Այս տվյալները, կարծում ենք, բավարար են ցույց տալու համար, որ գյուղի ռեսների ընտրության ժամանակ մեծ նշանակություն էր տրվում թեկնածուի ընչեղությանն ու սոցիալական դիրքին, և այդ պաշտոնը գրավում էին հարուստ ու ազդեցիկ ընտանիքների ներկայացուցիչները նույնիսկ այն դեպքում, երբ նրանք շատ երիտասարդ (նոր միայն 16-20 տարեկան) լինելով՝ հազիվ թե ինքնուրույն կարողանային վարել գյուղական համայնքի ներքին, բարդ ու դժվարին, գործերը:

Մեծ էր ռեսների գործունեության շրջանակը: Նրանց գլխավորությամբ էր կատարվում հողաբաժանությունը, առուների ու ջրանցքների անցկացումն ու մաքրումը*, հարևան գյուղական համայնքների միջև ծագած վեճերի հարթումը, հարկերի բաշխումը գյուղական համայնքի մեջ ընդգրկված տների վրա, հարկահանության վրա հսկողությունը և այլն, և այլն:

Օգտվելով իրենց դիրքից ու իշխանությունից գյուղերի ռեսներն ու ձեռնավորները հնարավորություն ունեին տարբեր ճանապարհներով շահվել գյուղացիների հաշվին: Մատթեոս Ջուղայեցու հաղորդած ուշագրավ մի տվյալից կարելի է եզրակացնել, որ նրանք, հաճախ, գյուղացիների վրա էին բարդում պետությանը կամ կալվածատիրոջը տրվող հարկերի նաև այն մասը, որը պետք է վճարեին իրենց գերդաստանները: Ջուղայեցին «ծածուկ գողերի» շարքն է դասում այնպիսիներին, որոնք «յաղքատս գրկեն և այնպէս երևեցուցանեն, թէ մեք աւելի տամք և յաղքատացն առեալ տան և զինչս իւրեանց պահեն» (Մատենադարան, ձեռ. N 2229, էջ 133ա: Հմմտ. Գր. Տաթևացու հետևյալ տողերի հետ. «Եւ որ առաջնորդ է գեղի և ի գեղջէն գրկէ՝ բոլոր գեղին լինի գող», Քարոզգիրք, ամառան հատոր, էջ 25):

Այսպիսիներից էր ըստ երևույթին, Մութ գյուղի ռեսը, որը, հավանաբար հանդիպելով գյուղական համայնքի դիմադրությանը, վերացրեց «աղջկան յաղկ» և «շանիգաղէ» հարկերը և պարտավորվեց մյուս գյուղացիների հետ մասնակցել ինչ-որ հարկի վճարմանը: Պահպանվել է այդ մասին

* Վերը հիշատակված ռես Ամիր-Բարոն, օրինակ, իր տանուտիրության շրջանում, ինչպես հաղորդում է նրան ժամանակակից հիշատակագիրը՝ «վերի աղբիւրն հանեց և վարի առուն Սալբաղցուցէ չոկեց»:

շարադրված համաձայնագիրը, որ հնագրական տվյալներից դատելով՝ ԺԵ դարից է: Այնտեղ գրված է. «Քրիստոս Աստուած աւրհնէ զպաէս Ստեփանոսն և զիւր որդիքն, որ ողորմեցաւ գեղիս Մթայ, և եթող զաղջկան յաղին, որ ի գեղատանին և զշանիպաղէն (իմա՝ «շանակիսակ» - ապօրինի պահանջմունք) և զմեր շարաֆի ///բաէսն ի հետ գեղին տայ և զաւերանիքն ի վերայ գեղիս չի դնէ: Քրիստոս Աստուած զինքն աւրհնէ և զիւր որդիքն և զիւր եղբարքն, և զգեղի տանուտէրքն, որ կամակից եղան՝ զէս բաղադաթս ի գեղէս ի վեր կալին: Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն և իւրեանց ծնողացն, ամէն: Ով որ յիրար տայ կամ առնու կամ ի յաւան ձգէ՝ նայ զանէծքն զԿայենին առնու...» (Մատենադարան, ձեռ. N 4814, էջ 129ա):

Գյուղական համայնքի պաշտոնեության մասին խոսելիս չպետք է անտեսել նաև գզրին: Որ բոլոր գյուղերն ունեցել են իրենց գզիրները, այդ երևում է Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1465-1489) Մամատանից շրջանի գյուղերից մեկի բնակչությանը ինչ-որ վանական հաստատության կողմից ուղղված գրությունից: Այստեղ գյուղական համայնքի պաշտոնեությունն ու բնակչության սոցիալական կազմը թվարկված է այսպես. «Թէ րաես է ու թէ տանուտէր, թէ գզիր է, թէ հարուստ է և թէ աղքատ» (Մատենադարան, ձեռ. N 9645, էջ 203):

Գզիրը ռեսին ստորադրված պաշտոնյա էր. վերջինիս կարգադրություններն ու հրահանգները նա հաղորդում էր համայնքի անդամներին և, ըստ երևույթին, մասնակցություն ուներ նաև հարկերի ու տուրքերի կամ դրանց մի մասի հավաքման գործին: Նրա պարտավորությունների մասին կարևոր վկայություն է պահպանված «Խազայ իմաստասիրի Տաւագեւյ ասացեալ վասն բանական հոգւոյ գիտութեան» խորագրով միջնադարյան մի գրվածքում (Մատենադարան, ձեռ. N 1113, էջ 105ա-112բ): Այստեղ մարդու մարմինը նմանեցված է քաղաքի, իսկ նրա անդամները՝ ձեռք, ոտք և այլն՝ «գործաւորաց քաղաքի»: «Որկրամոլութիւն նման է գզրի, որ ժողովէ յամենայնէ զպիտոյս և զհարկ քաղաքին» կարդում ենք այդ գրվածքում: Ճիշտ է, խոսքն այստեղ քաղաքի ու նրա «գործաւորների» մասին է, բայց հազիվ թե քաղաքի ու գյուղի գզիրների պարտավորությունները մեծ չափով տարբեր լինեին միմյանցից:

Գյուղական համայնքների տնտեսական ու վարչական կյանքում մեծ դեր էին կատարում տանուտերերը՝ տնտեսապես ապահով, ունևոր և ազդե-

ցիկ գերդաստանների ավագները: Իրենց գերդաստանի ներսում նրանց խոսքն օրենք էր, գործը՝ անառարկելի: Գրիգոր Տաթևացին երգ երգոցի մեկնության մեջ գրում է. «... Այսպէս և տանուտէրք տանց իւրեանց և վէճակացուց միաբանից, իշխանք երկրի և քահանայք ժողովրդոց» (Մատենադարան, ձեռ. N 1264, էջ 432ա), այսինքն՝ ինչպես իշխանները տեր են իրենց երկրի, վանքի առաջնորդները միաբանների, քահանաներն իրենց հոգևոր հոտի նկատմամբ, այնպես էլ տանուտերերը իրենց տան անդամների նկատմամբ: Տանուտերերի համաձայնությամբ ու կամքով էր օտարվում գյուղական համայնքին պատկանող այս կամ այն արտն ու արոտավայրը, ամեն պարագայում նրանք էին հանդես գալիս որպես կալվածքների վաճառքի կամ գնման մասին շարադրված փաստաթղթերի վավերացնողներ ու նման կարգի գործարքների վկաներ, նրանք էին, որ գյուղի շահերն էին պաշտպանում հողատիրոջ կամ պետական պաշտոնեության առաջ, մի խոսքով, ինչպես ասված է 1462 թվականի մի հիշատակարանի մեջ Մարմետի տանուտերերի մասին, նրանք էին, որ «վարեն և ուղղեն խաղաղութեամբ զգեաւղս և պահեն ի յաւեր առ ու պահանջողաց զաղքատսն» (Հիշատ. N 225, էջ 183):

Մարմետի նման խոշոր բնակավայրում, որ հաճախ կոչվում է գյուղաքաղաք, տանուտերերի քանակն անցնում էր 30-ից: 1462 թվականի հիշատակարանում հանվանե թվարկվում են նրանք, մեծարվելով «պարոն» տիտղոսով՝ «պարոն Սադաղէն Վարդանայ որդին, պարոն Էգկարշէն՝ Խաչատրու որդին, պարոն Դովլաթշէն՝ Մաղթումի որդին, պարոն Դուաշիբէկն՝ Թաթարի որդին, պարոն Սարգիսն՝ Բիադտի որդին, պարոն Մկրտիչն՝ Սաղաթիլայ որդին», և 25 այլ տանուտեր «պարոններ» (նույն տեղում):

Հիշատակագիրը բաղձանք է հայտնում, որ այս տանուտերերի որդիները կմեծանան, «ի չափ հասակի հասնեն և զտունս հաւր իւրեանց և զգեղաւս ի շէն պահեն»: Տեղեկություն ունենք այն մասին, որ հիշատակագրի բաղձանքը մասամբ իրագործվել է: Վերը թվարկված տանուտեր պարոններից երկրորդի՝ Էգկարշահի կամ Էգգարի որդի Բախտիարը 1510 թվականին հիշատակվում է որպես «զՎանայ քաղաքի և երկրի մելիք»: Նրան հաջողվում է Շահ-Իսմայիլից ստանալ հատուկ հրովարտակ և փրկել Վանի պաշարված բնակչությանը «կարմիրգլուխ» (ղզլբաշ) Բերամ-բեկի զորքերի կոտորածից ու գերությունից: Այս դեպքը պատմող հիշատա-

կարանի մեջ Ներքին-Մարմետի վերոհիշյալ տանուտերերի 1510 թվականին ապրող ժառանգները թվարկվում են այսպես՝ «զգեօղի տանուտրայքն՝ զմեյլիք Բախտիարն ու զրէս Սաղաթիարն, զթամղաչի Մուսեխն, զՂասումն, զԱրապշէն, զՂօշասարն, զխօջնազարն... զՄիրաղան, զՔամալն, զՆաւասարդն, և զԴուլամիրն և զայլն ամենայն»: Սրանք խոստանում են տարին 20 բեռ ձուկ տալ սուրբ Կարապետի վանքին (Մատենադարան, ձեռ. N 4869, էջ 669ր):

Փոքր գյուղերում, բնականաբար, ընչեղ ու ազդեցիկ տանուտերերը մեծ թիվ չէին կազմում: 1474 թվականի մի հիշատակարանում Մաղավանք գյուղի ազդեցիկ մարդիկ թվարկված են այսպես. «... Եւ աւրհնեսցէ տանուտէր և առաջնորդ գեղիս՝ զրէս Աւետշէն՝ իւր ծաղկեալ որդովքն, զպարոն Սօլթանշէն՝ իւր զաւակօքն, զՅոհանէսն՝ իւր որդովքն, զԴանարէկն՝ իւր զաւակաւքն, և զայլ ամենայն ժողովուրդք գեղիս՝ զմեծ և զփոքր, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զտղայ» (հշտկ. N 460, էջ 364):

Նույն պատկերն ենք տեսնում նաև Մուղնի գյուղում 1491 թվականին: Այստեղ շարադրված մի հիշատակարանի մեջ հանվանե նշված ենք գտնում միայն 4 տանուտերերի անուններ. «Եւ տանուտէրքս գեղիս՝ զՃահափ, զխուճա Մովսէս, զՄատաղէն, զեպտուրաշխն» (Մատենադարան, ձեռ. N 6293, էջ 461բ):

Այս և նման բազմաթիվ հիշատակարաններում նշվում են միայն գյուղի ունևոր և ազդեցիկ, ուստի և համայնքի կյանքում նշանակալից դեր կատարած գերդաստանների տանուտերերի անունները: Դժվար չէ սրանից եզրակացնել, որ գյուղական համայնքների մյուս գերդաստանների ավագները, որոնք նույնպիսի «տանուտէրեր» էին իրենց ընտանիքում, էական դեր չէին կատարում համայնքի ներքին կյանքում և գյուղական տանուտերերի անվանական թվարկման ժամանակ անտեսվում էին, մտնելով սոսկ «այլ ամենայն ժողովուրդք գեղիս», կամ «շինականք», կամ «հողագործք» հավաքական տերմինների տակ:*

* Զաքարիա կաթողիկոսի այլ առիթով հիշատակված կոնդակի մեջ, որն ուղղված է եկեղեցական թեմերից մեկի բոլոր բնակիչներին, ժողովրդի դասային կազմը բացահայտված է այսպես. «Եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք, ազատք, տանուտէրք, արուեստաւորք և հողագործք մեծ և փոքր»: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս արհեստավորներն ու հողագործները նշված են տանուտերերից հետո, որպես նրանցից ստորադաս սոցիալական դասեր: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև կոնդակի շարունակության մի հատվածը: Զաքարիա կաթողիկոսը ինքնագրությամբ տեղեկացնում է, որ Ջհանշահից ստանալով էջմիածնի կաթողիկոսությունը, եկել է էջմիածին և Արարատյան գավառում մեծ կառուցումներ կատարել. դրանից հետո՝ «զինչ պատ[ուա]կան եպիսկոպոսք և վարդապետք, ազատորդիք և Երևանի տան[ու]տէրք ամենեքեան ի յաջոռ ժողովեցան և մեծ սիրով ընկալան զմեզ և հնազանդեցան» (էջ 173-174, ստորատակ):
Էջմիածնում գումարված այս ժողովի մասնակիցների շարքում հիշատակված «Երևանի տանուտէրք»-ը գյուղական ազդեցիկ ու հարուստ բնակիչների ավագներն էին անշուշտ, որոնք միջանկյալ դիրք էին գրավում «ազատորդիների» ու «արուեստաւորների և հողագործների» միջև:

Գյուղական ազդեցիկ տանուտերերին մյուս գերդաստանների ավագներից տարբերակելու համար, երբեմն, առաջինների նկատմամբ գործ է ածվում «գլխաւոր տանուտէր» տերմինը: Մելքիսեթ և Կարապետ վանեցիների վկայաբանության մեջ (նահատակվել են 1403 թ.), օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Եւ կալեալ ութ հոգի՝ կրակեցին և զմինն ի գլխաւոր տանուտէրացն հարեալ խոցեցին ի գլուխն և ի կուշտն սրով» («Հայոց նոր վկաները», գիտ. հրտ., էջ 200):

Չնայած սոցիալական ու տնտեսական հողի վրա գյուղական համայնքի ներսում առաջացած շերտավորման, որի մասին դեռևս առիթ կունենանք խոսելու, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համայնքի տնտեսական ու իրավական հիմքերը դեռևս բավարար չափով ամուր էին և համայնքը միասնական ուժերով կարողանում էր դիմագրավել հողաբաժանման ենթակա վարելահողերի բռնագրավման փորձերին, լինեին դրանք ֆեոդալ-հողատերերի, վանական հաստատությունների, թե գյուղական տանուտերերի կողմից: Գյուղական համայնքը հանդես էր գալիս, որպես տվյալ գյուղի հողային ֆոնդի տնօրինող: Համայնքի իրավասության տակ գտնվող հողային ֆոնդի մեջ մտնող ամեն մի հողակտոր դիտվում էր որպես համայնքային հողի անկապտելի մաս, անկախ այն հանգամանքից, թե տվյալ գեղջուկ ում ձեռքում էր գտնվում նրա օգտագործման իրավունքը:

Որևէ հողամասի օգտագործման իրավունքի ստացման ժամանակ, ամեն պարագայում, պահանջվում էր գյուղական համայնքի միասնական

կամքն ու համաձայնությունը:

Բերենք մի բնորոշ փաստ. 1445 թվականին (կամ մի քանի տասնյակ տարի դրանից հետո) կազմված նվիրաբերական մի արձանագրության մեջ ասված է. «Քրիստոս Աստուած պահէ զքահանայս և զտանուտէր և զայլս գեղջիս Աղւայ՝ զմեծ և զփոքր առհասարակ, որք կամեցան և զսուրբ Ովաննէսն շինեցին վանք, որ ի վաղուց ժամանակէ հանգել էր»: Այդ գյուղի համայնքը, հանդես գալով միաբանաբար, տնտեսական իր միջոցներով վերաշինում է սուրբ Հովհաննեսի վանքը և իր հողային ֆոնդից վանքին «յուսագին» է տալիս մի արտ (Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 306-307):

ԺԶ դարի անթվական նվիրաբերական մի փաստաթղթի մեջ նույնպիսի տվյալ կա Ուշտունիքի Գանձակ գյուղի մասին: «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ,- ասված է այնտեղ,- որ միաբան մի խորհուրդ եղեն և տուին զԹստակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց և ննջեցելոց» (Մատենադարան, ձեռ. N 4868, էջ 321բ):

Այլ կապակցությամբ տեսանք, որ Զաքարիա կաթողիկոսի կենդանության օրոք (մհ. 1464 թ.), Աթանանց գյուղի համայնքը ստիպված է եղել իր վրա դրված անեծքի թուղթն օրհնանքի վերածելու համար սուրբ Աստվածածնի վանքին նվիրաբերել հողային իր ֆոնդից մի արտ: Այս կապակցությամբ շարադրված արձանագրության մեջ թվարկված են գյուղի ռես Բաղշայիշը և 13 «աստուածասէր տանուտէրքը» (Սաղաղա, Մելիք, Կարապետ, Թումա երեց, Թումա քահանա, Ավետիս, Հովսեփ, Ներսես, Սարգիս, Հովհաննես, Միրախ, մի այլ Հովհաննես, Ջանփրեկ և «այլ միաբան գեղի տանուտէրքս»), որոնք «ամենեքեան կամեցան ի սէրն Քրիստոսի և ի սուրբ Աստուածածինն, և զայն արտն խաղ ու մուլք տուին Աստուածածնին»(Մատենադարան, ձեռ. N 5512, էջ 1ա):

Կարելի է մեջ բերել այս կարգի տասնյակ այլ փաստաթղթեր, որոնք բոլորն էլ միաբերան վկայում են այն մասին, որ գյուղական համայնքի տնօրինության տակ գտնվող հողային ֆոնդից որևէ արտ օտարելու կամ նվիրաբերելու համար պահանջվում էր տվյալ գյուղական համայնքի բոլոր տանուտերերի համաձայնությունը:

Գյուղական համայնքը հաճախ հանդես է գալիս նաև որպես շարժա-

Սոր գյուղի տանուտերերից մեկը մի Ավետարան է նվիրում իր հայրենի գյուղին և պատվիրում, որ «Մի ոք իշխեսցէ զսա իւրն սեփականել՝ քահանայ կամ տանուտէր, այլ գ[ե]ւղն ամէնքն խնամ տանեն ի վերա և պահեն, զի Աւետարանս գեղին եմ տուեր» (Հիշատ. N 375, էջ 293, հմմ. նաև Մատենադարան, ձեռ. N 6348, Հովհ. ավետարանչի նկարի վերին մասում գրված հիշատակագրությունը):

Այս տվյալները, սակայն, բնավ չեն խոսում այն մասին, որ որևէ գյուղի սահմանների մեջ գտնվող բոլոր հողերն, անխտիր, գտնվում էին գյուղական համայնքի իրավասության ներքո: Ընդհակառակը, կան տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս եզրակացնելու, թե գյուղական հողային տարածությունները ստորաբաժանված էին արդեն մի շարք ենթախմբերի (համայնքի տնօրինության տակ գտնվող վարելահողեր և արոտավայրեր, մասնավոր սեփականություն դարձած հողեր, գյուղատերերի կողմից սեփականացված հողեր, վանական հաստատությունների կողմից օգտագործվող կամ նրանց սեփականությունը դարձած հողեր և անմշակ ու խոպան հողային տարածություններ):

Բնականաբար, ամենածավալուն խմբի մեջ մտնում էին այն վարելահողերն ու արոտավայրերը, որոնք գյուղական համայնքին պատկանող հողային հիմնական ֆոնդը լինելով, պարբերաբար, մեկ կամ մի քանի տարին մեկ անգամ (նայած տվյալ շրջանում գոյություն ունեցող սովորույթին) բաժանվում էին գյուղական համայնքի լիիրավ բնտանիքների միջև՝ ըստ ծխաքանակի:

Համայնքային հողերի պարբերաբար կրկնվող հողաբաժանումների մասին Հայաստանի տարբեր շրջաններից ունենք բազմաթիվ վկայություններ՝ ԺԹ դարի վերաբերյալ: Որ այդպիսի հողաբաժանումներ եղել են նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այդ մասին կարելի է դատել ոչ միայն հետագա դարերի տվյալների քննության ու վերլուծության ճանապարհով, այլև հենվելով ԺԴ-ԺԶ դարերի աղբյուրներում պատահականորեն գրանցված մի-երկու ոչ ուղղակի վկայությունների վրա:

Ծանոթանանք դրանց: ԺԴ դարի նշանավոր իմաստասեր Հովհաննես Որոտնեցին (մհ. 1386 թ.), իր «Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի» աշխատության մեջ, «Բաժանական հասարակութիւն» հասկացությու-

(«անդաստան գեղից»), դրանով իսկ հավաստելով, որ գյուղական համայնքի վարելահողերը ենթակա են եղել բաժանումների (տե՛ս Յովհան Որոտնեցի, Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի, Երևան, 1956, էջ 6):

ԺԶ դարի մի փաստաթղթի տվյալներով, Ոշականքի Բեսալենք գյուղի տանուտերերը միաբան պարտավորվում են սուրբ Գեորգի վանքին ամեն տարի տալ «ամէն բաժին կես կապիճ ցորեն սերմ» (Մատենադարան, ձեռ. N 9223, ժէ., էջ 1բ): Մեծ հավանականությամբ, այստեղ, «բաժին» տերմինի տակ պետք է հասկանալ այն հողաբաժինները, որոնք համայնքի կողմից տված են եղել օգտագործման հավասար անձերից բաղկացած բազմանդամ ընտանիքների և կամ սակավաշունչ մի քանի ընտանիքներից կազմված ժամանակավոր խմբերի (հողաբաժանման համփաչարեքային սկզբունքով): Որ վերոհիշյալ պարտավորությունը ստանձնած «բաժինների» տերերը հավասար քանակությամբ հող են ունեցել, այդ երևում է այն բանից, որ նրանցից յուրաքանչյուրը պարտավորվում է վանքին տալ հավասար քանակությամբ (կես կապիճ) ցորեն: Ըստ ինքյան հասկանալի է, որ պարբերաբար կրկնվող հողաբաժանումների դեպքում միայն գյուղական ընտանիքները կարող էին ըստ շնչաքանակի, հավասար չափով հող ունենալ:

Կարծում ենք, որ սխալ գործած չենք լինի, եթե ԺԹ. դարում Հայաստանի բազմաթիվ շրջաններում կիրառվող համփաչարեքային հողաբաժանության ձևը համարենք հատուկ նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին: Թվում է, թե դրա համար ունենք նաև բավարար կռվան: Մեզ արդեն, այլ կապակցությամբ, ծանոթ է Ոշականքի Գանձակ գյուղում շարադրված նվիրաբերական արձանագրությունը, որի կարևոր մասում ասված է. «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ, որ միաբան մի խորհուրդ եղեն և տուին զԽատակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց և ննջեցելոց, եթէ մեկք, եթէ համբայ, եթէ մեծ, եթէ փոքր՝ ամենեքեան տուին» (Մատենադարան, ձեռ. N 4868, էջ 321բ)*:

* Դժվար չէ նկատել, որ այստեղ գործածված «համբայ» տերմինը, ըստ իմաստի համապատասխանում է նման կարգի նվիրաբերական ակտերի մեջ բազմիցս գործածված «տանուտէր» տերմինին: Եվ հենց այն հանգամանքը, որ «տանուտէր»-ը հնարավոր են համարել փոխարինել «համբայ»-ով, ըստ ինքյան ենթադրել է տալիս

Գյուղական համայնքի հողային ֆոնդից ստանալով մեկ կամ մի քանի ամբողջական բաժին վարելահողեր, ունենալով անհրաժեշտ քանակությամբ քաշող անասուններ ու գյուղատնտեսական գործիքներ, ինչպես նաև ապահովված լինելով աշխատավոր ձեռքերով, տանուտերերի կամ համփաների գերդաստանները, ինչպես արդեն ասացինք, գյուղերում մեծ ազդեցություն ու կշիռ ունեին և, ինչպես կտեսնենք ստորև, տնտեսապես կախման վիճակի մեջ էին պահում չքավոր համագյուղացիներին: Ուստի հասկանալի է, թե ինչու հայ գյուղացու խոսակցական լեզվում «համփա» բառը պետք է ստանար նաև «ունևոր դասին պատկանող անձ» նշանակությունը (Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, III, էջ 35, նաև Материалы для изучения экономического быта гос. крестьян Закавказского края, т. I, вып. I, Тифлис, 1885, էջ 20-21):

Ձեռագրերի հիշատակարաններում բազմիցս հանդիպում ենք այդպիսի տանուտերերի կամ համփաների, որոնք տնտեսապես ապահով լինելով, հնարավորություն էին ունենում հանդես գալու որպես մեծագին ձեռագրերի պատվիրատուներ ու գնորդներ: Հիշատակարաններից շատերի մեջ թվարկված են այդ տանուտերերի բազմաքանակ «արեան մերձաւորները»: Մեծ մասամբ հնարավորություն չի լինում պարզելու, թե նույն հարկի տա՞կ են ապրել, արդյոք, արյունակից այդ ազգականները, թե՞ զատ-զատ ընտանիքներով. սակայն որոշ դեպքերում հիշատակարաններն ընձեռում են այդպիսի հնարավորություն:

Այսպես, օրինակ, 1462 թվականին, որպես Աղթամարում ընդօրինակված մի Ավետարանի ստացողներ, հիշվում են Գիշուկ և Ճամշա ամուսինների 6 արու զավակները՝ Սարգիս, Խաչատուր, տեր Ավագ, Ստեփանոս, Հովհաննես: Այնուհետև թվարկվում են այդ եղբայրների կանայք, որդիներն ու թոռները, ընդամենը 66 անուն (հշտկ. N 226, էջ 185): Կարծում ենք, որ

համփաչարեքային հողաբաժանման սկզբունքի տարածված լինելը նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Հողաբաժանման այդ ձևի կիրառման ժամանակ բազմամարդ գերդաստանները, բավարարելով ամբողջական հողաբաժին ստանալու համար անհրաժեշտ շնչաքանակի նորման (16 հոգի), կամ գերազանցելով այն՝ ստանում էին մեկ լրիվ, երբեմն մի քանի (համապատասխան գերդաստանի շնչաքանակի) հողաբաժիններ (համփաներ):

բազմասերունդ այդ եղբայրները միասնաբար մի ձեռագիր կարող էին ստանալ այն դեպքում միայն, եթե կազմեին մի մեծ գերդաստան, ապրեին մի հարկի տակ:

Հրատարակվող հիշատակարաններից շատերի մեջ տվյալներ կան ազգակցական նույն սկզբունքներով կազմված բազմանդամ ընտանիքների մասին, որոնք իրենց կազմում ունենում էին հաճախ ընտանիքի 16, 17, 18 և ավելի անդամներ:

Բազմանդամ ու մեծ գերդաստանների գոյությունը մեր հետաքրքրող ժամանակաշրջանում հավաստվում է նաև այլ աղբյուրներով: Թովմա Մեծոփեցին, օրինակ, հաղորդում է, որ Շահռուխի 1430 թվականի արշավանքի ժամանակ Քաջբերունյաց գավառի Մաշտառեց գյուղից՝ «ի միոջէ տանէ» գերվեցին 10 հոգի (Պատմ. Լանկ-Թամուրի, էջ 92): Պետք է ենթադրել, անշուշտ, որ 10 հոգի գերի տված ընտանիքի անդամների թիվը, առնվազն կրկնակի անգամ մեծ էր: Շատ ավելի ուշագրավ է բազմանդամ գերդաստանների մասին Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» մեջ բերված տվյալը, որը սակայն վերաբերում է ԺԷ դարի սկզբին և միայն Խարբերդի ու Սեբաստիայի շրջաններին: Խարբերդի մասին լեհահայ հեղինակը զարմանքով արձանագրում է հետևյալը. «Եւ անդ եւս մեծամեծ տներ էին, որպէս Սեբաստու: Անդ տեսաք մէկ տունն քառասուն օջաղ. և ամէնքն հօր հնազանդ. և թէ հայրն մեռանէր՝ մեծ եղբօրն հնազանդէին. և այսպէս մեծ սէր և միաբանութիւն մեծ տեսաք երկիրն այն, զոր այլ տեղ երկու եղբարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին բնակել ի միում տան» («Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 157-158):

Գյուղական համայնքի բոլոր անդամներին պատկանող ու պարբերաբար հողաբաժանման ենթակա հողային ֆոնդից զատ, գյուղերում կային նաև այս կամ այն ընտանիքի կողմից սեփականացված կամ սեփականության դառնալու ընթացքի մեջ մտած հողակտորներ:

Գրիգոր Տաթևացին իր Քարոզներից մեկում ունի այսպիսի ուշագրավ արտահայտություն. «զանդաստանս ինչ յորժամ ի բազում ամս կալնու ոք՝ հայրենիք լինի նմա» (Քարոզգիրք, ձմռան հատոր, էջ 593):

Այս ուշագրավ վկայություն է, համայնքի ազդեցիկ ու ունևոր տանուտերերը, օգտագործելով իրենց կշիռն ու հեղինակությունը, առանց մեծ արգելքների ի վիճակի էին իրենց գերդաստանների կողմից մշակվող այս

կամ այն արտը նոր հողաբաժանումների ժամանակ կրկին ու կրկին պահել իրենց ձեռքում և, ի վերջո, «պարսպով և նշանիւ սահման դնելով»,- ինչպես ասում է Գրիգոր Տաթևացին (Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 298),- հանել գյուղական համայնքի հողաբաժանման ենթակա հողային ֆոնդից:

Պետք է ենթադրել, որ մեր հետաքրքրող ժամանակաշրջանում այս ճանապարհով գյուղական համայնքի հողային ֆոնդի որոշ մասն արդեն, ամրացված լինելով այս կամ այն գերդաստանին, «հայրենիք» դառնալու ընթացքի մեջ էր մտել:

1470 թվականին Աղթամարում շարադրված նվիրաբերական մի արձանագրության մեջ թվարկված են Արբերդ գյուղի արտերից մի քանիսի անունները. դրանք են՝ Ճիտկանց արտ, Ներկարարենց արտ, Աշըղի արտ (Մատենադարան, ձեռ. N 8928, էջ 289ա-289բ): ԺԵ- ԺԶ դարի անթվական մի փաստաթղթի համաձայն, Աթանանց գյուղի տանուտերերի կամքով Վարդպատրիկի վանքին նվիրաբերում են վեց արտ՝ «գխաչի արտն, ու գձոր արտն, ու զուռուտն, ու Շապխոնց քաշն, ու Զաւգերոնց արտն, ու Զաւգերոնց Թումի արտն» (Մատենադարան, ձեռ. N 6324, էջ 305ա):

1567 թվականին շարադրված մի հիշատակարանում կա տվյալ այն մասին, որ ոմն տէր Ներսես, Բաղեշից ոչ հեռու գտնվող Մարգոտ գյուղի «պղնձագործ Մախսուտի արտերն, զՄահտեսի Մուրատի արտն», ինչպես նաև երկու ձեռագիր ու մի արծաթե սկիհ է նվիրում սուրբ Աստվածածնի վանքին (Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ, էջ 257):

Բերված փաստերն ուշագրավ են այն տեսակետից, որ նվիրաբերվող արտերի մեծագույն մասը կոչվում է այս կամ այն անձնավորության կամ գերդաստանի անուն-ազգանունով (Ճիտկանց, Շապխոնց, Զավգերոնց, պղնձագործ Մախսուտի, մահտեսի Մուրատի և այլն): Ակնհայտ է, որ վերոհիշյալ արտերը բոլորի կողմից ճանաչված իրենց անունները կարող էին ստանալ այն դեպքում միայն, երբ տվյալ գերդաստանը կամ տանուտերը տվյալ արտը մշակած լիներ «բազում ամս»:

Համայնքապատկան հողերի մի մասի օգտագործման իրավունքի սեփականման պրոցեսը Հայաստանում սկսել էր դարեր առաջ, ուստի համայնքի մեջ ընդգրկված փարթամ գերդաստաններից շատերը մեր հետաքրքրող ժամանակաշրջանում տիրում էին զգալի քանակությամբ

այգիների, վարելահողերի և այլ կալվածքների:

Դրանց տնօրինման գործին համայնքն իրավասու չէր միջամտելու և յուրաքանչյուր «հայրենատեր» գերդաստան կարող էր ցանկացած ձևով տնօրինել (նվիրաբերել, վաճառել, օտարել) իրեն պատկանող վարելահողը կամ խոտհարքը: Մերձավոր ազգականների համաձայնությունը, սակայն, այդ դեպքում պարտադիր էր: Նույնիսկ այն դեպքում, երբ գերդաստանը բաժանվել էր առանձին ընտանիքների, նախկինում ողջ գերդաստանին պատկանող վաճառված կամ այլ ճանապարհով օտարված այս կամ այն կալվածքը ենթակա էր հետ գնման, եթե ազգականներից որևէ մեկը համաձայն չէր օտարման այդ ակտին: Գրիգոր Տաթևացին այս կապակցությամբ գրում է. «Եւ որ կամի զհայրենիս ազգատին յետ գնել՝ պիտոյ է... նախ, որ լինի ազգական նմա , զի օտարն ոչ կարէ գնել (Քարոզգիրք, ձմեռան հատոր, էջ 86):

Ազգականների հետագա միջամտությունից վախեցման որևէ հաստատության նվիրաբերված կալվածքները զերծ պահելու մտադրությամբ, նվիրաբերական արձանագրությունների մեջ անհրաժեշտ էին համարում հատուկ շեշտել, որ ազգականներից և ոչ մեկը իրավունք չունի երբեք վեճ բացելու տվյալ նվիրաբերության առթիվ. համարձակվողների հասցեին ուղղվում էին անեծքի սարսուռ ազդող խոսքեր: Գիտենք արդեն, որ 1489 թվականին ոմն Դավիթ երեց՝ Արատամեսի Կանկեց սուրբ Աստուածածնի վանքին նվիրաբերել էր իր ողջ ունեցվածքը: Այդ մասին շարադրված հիշատակարանի վերջում Դավիթ երեցը գրանցել է այսպիսի տողեր. «Ով որ հակառակէ յետ իմ անցման, կամ դաւէ առնէ, կամ դայպայ առնէ մազի մի չափ, թէ ազգ է, թէ աղբօր զարմ է, թէ հօրեղբօր զարմ է՝ դաւէ և տայպայ անէ, եկեղեցոյ Փարզիանգէն հանէ և ցրւէ, նա զանէծքն օծին և գկայենին, գՅուդային և զնեռան առցէ, ամէն» (Մատենադարան, ձեռ. N 5537, էջ 298ա):

«Հայրենիք» դարձած կալվածքների օտարման մասին պահված արձանագրությունները զգալի թիվ են կազմում. դրանցից մի քանիսի հետ այլ կապակցությամբ արդեն ծանոթացել ենք, ծանոթանանք ևս մի-երկու փաստերի:

1474 թվականին ոմն տեր Հովհաննես իր «մայրենի» (այսինքն՝ մորից ժառանգություն ստացած) այգին նվիրաբերում է Արքարոց սուրբ Նախավկայի վանքին, հատուկ շեշտելով, որ այդ նվիրաբերությունն անդարձ է և ծոյ ում դաւէ չի լինի, ոչ եղբաւր, ոչ եղբաւրորդոյ, ոչ ազգի և ոչ աւտարի, ոչ որդոյ և ոչ թոռան» (Պետ. Մատենադարան, ձեռ. N 9093, էջ 435բ):

1465-1489 թվականներին ոմն Ստեփանոս Հերենրսի որդի, Հայոց ձորի Կեմ գյուղի տանուտերերի կամքով, Պուտուկի վանքին է նվիրում իր «հերենական գնած մուլքն՝ զՓոս արտն»: Նվիրաբերության պայմանն այն է, որ «մինչ երէց որ եկեղեցոյն ծառայութիւն առնէ՝ զէն արտի բերքն այն ուտէ, և ի տարին հինգ անգամ զՀերենրսենց գերեզմաներն օրհնէ» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք պատմ. Հայոց, Բ, ձեռ N 4515, էջ 229-230):

Որոշ գյուղերում «հայրենիք» կամ «մուլք» կոչվող կալվածքներն այնքան ընդարձակ տարածություն էին բռնում, որ գյուղի հողային ֆոնդը երկփեղկվել էր համայնքային և մլքային բաժինների: Այդպես էր, օրինակ, Քարվակ գյուղում, որտեղ կար հատուկ «մլքի դաշտ»: Այդ դաշտում գտնվող իր «հալալ մուլքը» ԺԶ դարում ոմն Թերձակենց Թումա նվիրաբերել ժամկանց սուրբ Ավետարանին (Մատենադարան, ձեռ. N 3850, էջ 99ա):

Գյուղերի սահմաններում կային նաև ընդարձակ տարածություն բռնող ապառաժ, անջրդի, ճահճային կամ մի այլ պատճառով երկրագործական աշխատանքի համար ոչ պիտանի հողեր: Դրանք կարող էին դառնալ այս կամ այն գերդաստանի սեփականությունը, եթե նրանք, միջոցներ ներդնելով ու ջանքեր գործադրելով, կարողանային օգտագործելի դարձնել այդ հողերը:

1507 թվականին ընդօրինակված մի Ավետարանի մեջ կա հետաքրքրական մի գրանցում. ոմն Ստեփանոս ինչ-որ սուրբ Կիրակոսի վանքին նվիրում է գանձագին մի պարտեզ ու մի ջրաղաց: Բացի այդ բարեգործությունից, նույն Ստեփանոսը՝ «ձամ կորդեց, ոխթ արար Կիշայ կարմրինին»,- ասված է նվիրաբերական ուշագրավ այդ արձանագրության մեջ: «Կորդ» նշանակում է խոպան, անվար հողամաս, իսկ «կորդել», բնականաբար, նշանակելու է խամ կամ խոպան հողը մշակել, դարձնել օգտագործելի: Այսպիսով պարզվում է, որ վերը նշված Ստեփանոսը իրավասու էր ցանկացած ձևով վարվելու ինչպես իր կողմից գնված պարտեզի ու ջրաղացի, այնպես էլ «կորդած», այսինքն մշակելի դարձրած արտի հետ:

Ըստ երևույթին համանման բովանդակություն ունի նաև Պետ. Մատե-

նագարանի N 4868 ձեռագրում ԺԶ դարում գրանցված՝ ստորև բերվող նվիրաբերական արձանագրությունը. «Աստուած օրհնէ զԿեցհայ Եղէգեց ծաղկեալ ծերունի Շատարևենց Աղաջան, որ գիր հալալ մուլքն՝ դըրայուտն ոխու արար՝ զկէսն սուրբ Աստուածածնին և զկէսն սուրբ առաքելոյն Թումայի» (ձեռ. N 4868, էջ 320բ):

Կարծում ենք, որ Շատարևենց Աղաջանը իրավասու էր ցանկացած ձևով տնօրինելու նվիրաբերվող հողամասը, որովհետև այն «քայլուտ», այսինքն՝ քարքարոտ տեղ է եղել և մշակելի դարձվելով նվիրատուի ջանքերով, համարվել է նրա «հալալ մուլքն»:

Գյուղական համայնքի ներքին կյանքի ուսումնասիրության տեսակետից ուշագրավ է նաև նախորդ նվիրատու Ստեփանոսի «կորդած» արտի նվիրաբերման նպատակը: Այն «ոխն» է արվում «Կեշայ գետի կամրջին», պայմանով, որ այդ արտի մշակողի վրա դրված լինի կամուրջը շեն պահելու պարտականությունը: «Ով որ ցանէ՝ զկամուրջ շէն պահէ»,- գրված է այնտեղ (Ե. Լալայան, Ցուցակ, N262, սյուն 629: Հմմտ. նաև «Թորոս աղբար», Բ, էջ 270, ուր մեջ է բերված 1578 թ. մի արձանագրություն, ինչ-որ մեկի կողմից սուրբ Գևորգ Զորավարի վանքին «զկամրջնճի արտ, ճոթով» նվիրաբերվելու մասին):

Մոկքի Ոզմի գյուղի տանուտերերի բարեգործությունները թվարկող ԺԷ դարի մի արձանագրության մեջ, որ գրանցված է Մատենադարանի կողմից վերջերս ձեռք բերված մի Ավետարանի հատակտորների վրա, խոսք կա նաև այն մասին, որ տանուտեր Մարտիրոսն ու իր Առաքել եղբայրը «Բ. (2) կճ. (կապիճ) ցորեն տուին աւրին» (Մատենադարան, ձեռ. N 9660, էջ 1բ): Իսկ 1651 թվականից պահպանված մի արձանագրությունից տեղեկանում ենք կապիճ ու կես ցորենի մի արտի գնման մասին. գնողներն արտի արդյունքը հատկացնում են համայնքին, որպեսզի «տաւ խանելոյ աւրն ուտեն» (Ե. Լալայան, Ցուցակ, սյուն 199):

Արդ, երբ առանձին տանուտերեր հող էին տանում համայնքի բոլոր անդամներին շահագրգռող կամուրջը կամ առուն շեն պահելու կամ մաքրելու աշխատանքներին, ապա առանց վարանման կարելի է ենթադրել, որ այդպիսի նպատակների համար համայնքը ևս հողային իր ֆոնդից կարող էր հատկացնել առանձին վարելահողեր:

Խոսելով վանական կալվածատիրության մասին, բավարար փաստեր

մեջ բերելով, ցույց տվեցինք, որ վանքերից շատերն իրենց պատկանող հողերի վրա ստեղծում էին սեփական տնտեսություններ: Իսկ ունեցե՞լ են, արդյոք, այդպիսի տնտեսություններ իրենց պատկանող գյուղերում հայ և օտարազգի կալվածատերերը. այս հարցին վճռական պատասխան տալու համար անհրաժեշտ տվյալներ չկան: Գիտենք սակայն, որ նրանք իրենց պատկանող գյուղերում ունենում էին զգալի քանակությամբ վարելահողեր, որոնք վարձակալման էին տրվում տվյալ կամ մերձակա գյուղերի բնակիչներին:*

*Այս կապակցությամբ ծանոթացել ենք արդեն Բեռավենք գյուղի համայնքի սուրբ Գևորգ վանքի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին խոսող արձանագրության հետ: «Արարիչն Աստուած,- գրված է դրա սկզբում,- զԲէչաօինից տանուտէրքն աւրհնէ առհասարակ: Արտ մի ոխն էր տուած այս եկեղեցոյս. յետ ժամանակաց տաճիկ մի գեղի տէր էլաւ և զարտն խլեց և արար չարեք հող՝ Աւանի ձեռօք, Աստուած շողորմի իրենց» և այլն (Մատենադարան, ձեռ. N 9223, ԺԷ., էջ 1բ): Մեջ բերված հատվածը մեկնաբանում ենք այսպես. տարիներ առաջ գյուղի տանուտերերի միաբան համաձայնությամբ մի արտ է նվիրված եղել սուրբ Գևորգի վանքին, սակայն դրությունը փոխվել է, երբ գյուղի տեր է դարձել «տաճիկ մի»: Մահմեդական այս գյուղատերը խլել է գյուղական համայնքին պատկանող, բայց վանքին նվիրաբերված արտը և այն դարձրել «չարեք հող». այլ խոսքով նա սեփականել է այդ արտը, բերքի մեկ քառորդը ստանալու պայմանով վարձակալման հանձնելու համար**:*

---

* Տարսայիճ Օրբելյանի կին Մինախաթունը 1292 թ. Նորավանքին նվիրաբերել է այգիներ, այդ առթիվ փորագրել տված արձանագրության մեջ նվիրատուն անհրաժեշտ է համարել շեշտելու, որ «այս տուրս ոչ ի զրկանաց, ոչ ի գեղէ, ոչ ի պարոնանոցաց, այլ մեր հալալ դրամագին՝ ազատ յամէն հարկաց, որ ոչ ում հաշիւ չկայ ի հետ» («Վիմական տարեգիր», էջ 135): Հակված ենք կարծելու, որ այստեղ գործածված «պարոնանոց» տերմինի տակ պետք է հասկանալ հենց այն հողաբաժինը, որ կալվածատերերը յուրացնում էին, կտրելով գյուղական համայնքի հողային ֆոնդից:

** «Չարեք» տերմինը գործածական է եղել հարևան երկրում մինչև ԺԹ դարը: Ադրբեջանական պատմության մասնագետ Ա. Ալի-Զադեի տվյալներով «Чахар-йек (=չարեկ) платили малоземельные крестьяне, отдававшие землевладельцу одну четвертую часть годового дохода» (տե՛ս А. А. Али-Заде, Социально-эко-

Գյուղական համայնքի անդամները տարվա մեջ մի քանի օր պարտավոր են եղել ձրի աշխատել կալվածատիրոջ համար: Այդ մասին, ինչպես վերն ասացինք, տվյալներ են պահպանվել ԺԵ դարում Տաթևի վանքում, հին ավանդույթների հիման վրա կազմված «Հուշավարն, այսինքն վանքական գիւղօրէից հողոց տասանորդքն» ուշագրավ ցուցակում (Մատենադարան, ձեռ. N 6271, էջ 678):

Համայնքի անդամները կալվածատիրոջ նկատմամբ ունեցել են նաև այլ պարտավորություններ. այսպես օրինակ, անվճար խնամել են տնային թռչուններ: Այս մասին ուշագրության արժանի տվյալ է պահպանվել Գրիգոր Նարեկացու ընդարձակ վարքում, որ մուտք է գործել Գրիգոր Ծերենցի (մհ. 1425 թ.) խմբագրած Հայսմավուրքի մեջ: Նարեկ գյուղի քուրդ տերը,- ասված է այդտեղ,- հաւ մի ... յիւր շինականն եա թուխս դնել»: Թխսկան հավն իր ճուտերով, դժբախտ պատահարով, ընկնում է երկնաքարի տակ և սատկում. «Իսկ այն կինն, որ զհաւն ի թուխս եդեալ էր, ահաբեկ եղեալ յահէ քրդոյն՝ յուսացաւ յԱստուած և յաղօթս սրբոյն Գրիգորի»: Եվ, իբր, ձայնահարույց Գրիգոր Նարեկացու զորությամբ, ջախջախված հավն իր ճուտերով կրկին կենդանանում է, խեղճ ու ահաբեկված շինական կնոջն ազատելով քուրդ բեկի բարկությունից (տե՛ս «Գիրք որ կոչի Այսմաւուրք», 1730, էջ 395):

Այս տվյալը թույլ է տալիս կարծելու, մանավանդ եթե նկատի առնենք նաև ԺԹ դարից հայտնի փաստերը, որ գյուղատերերը նույն սկզբունքով կարող էին իրենց շինականներին խնամելու հանձնել նաև մանր ու խոշոր եղջերավոր անասուններ:

Այսպիսով, որքան էլ աղքատիկ ու ակնարկային են ասկա նյութերը, դրանք, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս մասամբ որոշելու

номическая и политическая история Азербайджана XIII-XIV вв. Баку, 1956, էջ 239): Բերված փաստաթուղթը կարելի է մեկնաբանել նաև ուրիշ ձևով, եթե «չարեք հող» տերմինն այլ կերպ հասկացվի: Հայտնի է, որ համփաչարեքային հողաբաժանման սիստեմով՝ գյուղական համայնքի հողերը բաժանվում էին համփաների, չարեքների, պենդների և այլ մասերի և հատկացվում գյուղական համայնքի գերդաստաններին, նրանց շնչաքանակի համապատասխան: Չարեք հող (այսինքն՝ համփայի մեկ քառորդի չափով հող) ստանում էին չորս շնչից բաղկացած ընտանիքներ:

կալվածատերերի նկատմամբ համայնքի անդամների ունեցած պարտավորությունները և հիմնավորում են վերն ասածն այն մասին, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գյուղական հողատարածությունները հիմնականում բաժանվում էին հինգ խմբերի՝ ա) հողաբաժանման ենթակա համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր և այլն, բ) տարբեր ճանապարհներով մասնավոր սեփականություն («հայրենիք», «մուլք») դարձած այգիներ, պարտեզներ, վարելահողեր, գ) գյուղատերերի կողմից սեփականացված վարելահողեր, որոնք արվում էին վարձակալման, դ) վանական հաստատություններին նվիրաբերված հողակտորներ և, վերջապես, ե) անմշակ, խոպան ու ճահճոտ հողային տարածություններ:

Գյուղական համայնքը Հայաստանում ու հարևան երկրներում շերտավորման էր ենթարկված մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից դարեր առաջ: Ե դարից արդեն տվյալ ունենք այն մասին, որ գյուղական բնակչությունը տնտեսական ու սոցիալական իր դրավիճակով շերտավորված էր 3 խմբերի՝ թվանիկների, տառապյալների ու վար և այգի չունեցողների: Թվանիկներից եկեղեցին գանձում էր պտուղ հարկի դիմաց՝ 4 գրիվ ցորեն, 6 գրիվ գարի և 16 փաս քացցու, «տառապյալները» հացի կեսն էին տալիս և գինի՝ որքան կարողանային, իսկ «որոյ վար և այգի ոչ է» ազատվում էին պտղի վճարելուց (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 66):

ԺԵ դարում, անշուշտ, համայնքի շերտավորման պրոցեսն ավելի խորացած էր և բազմաթիվ տվյալներից դատելով, հարուստ ու փարթամ գերդաստանների կողքին կային ընտանիքներ, որոնք անկարող էին սեփական միջոցներով զբաղվել վարուցանքով:

Հիշատակարանների ու կալվածքների օտարման մասին շարադրված փաստաթղթերի մեջ, երբ հարկ է լինում խոսել գյուղական որևէ համայնքի բոլոր անդամների մասին, հաճախ գտնում ենք այսպիսի արտահայտություններ՝ «թէ մեծ է և թէ փոքր, թէ հարուստ է և թէ աղքատ, թէ բնական է և թէ նորէկեց» (Մատենադարան, ձեռ. N 4883, էջ 614բ):

Գյուղական հարուստ գերդաստանների, նրանց տնտեսական ու սոցիալական դիրքի մասին վերը բերված տվյալները համարելով բավարար, փորձենք անհամեմատ շատ ավելի սուղ ու ակնարկային տվյալներով փոքր-ինչ լուսաբանել աղքատ գերդաստանների տնտեսական ու իրավական

վիճակին առնչվող որոշ հարցեր:

Համայնքից ստացած վարելահողը ինքնուրույն միջոցներով մշակել անկարող գյուղական ընտանիքներից մի քանիսը միանալով կազմում էին հարակաշություններ կամ հաղկիցների ընկերություններ: Նրանք, փոխադարձ համաձայնությամբ, երկրագործական աշխատանքների (վար, հունձ) ամիսներին միացնում էին իրենց անասուններն ու գյուղատնտեսական գործիքները և հերթով վարում ու հնձում կամավոր սկզբունքներով կազմված ժամանակավոր այդ ընկերությունների մեջ մտնող անդամների արտերը:

Հարակաշության մասին տվյալ ունի Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» Բ. մասի ՃԻԱ. հոդվածում, որը կրում է «Յաղագս դատաստանաց այգեգործաց, ընկարաւոր մաճուորաց հարակշաց և վարձկանաց» խորագիրը («Դատաստանագիրք հայոց», էջ 432-433):

Հայ ժողովրդական առակներից մեկում հարակաշներ էին դարձել աղվեսն ու խեցգետինը: «Աղուէսն ու խեչափառն բարեկամացան մէկ մէկի և եղան եղբարք և սկսան և արին ցանք ի միասին և ի ժամ հնձելոյ աշխատեցան ի մէկ, որպէս աւրէն է հողագործաց»,- ասված է առակում (Ն. Մառ, Ժողովածուք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 37): Ցորենի շեղջը կուտելուց հետո աղվեսը մտադրվում է նենգել իր ընկերոջն ու բերքի երկու երրորդը վերցնել իրեն: «Նախնայն և ի գեղչխ տանուտէրքն պատեհ են տեսել, որ դու մին բաժին առնուս և ես երկուս»,- ասում է նա խեցգետնին: Սակայն վերջինս, խորամանկությամբ, կարողանում է մեծ բաժինն ինքը ստանալ (Նույն տեղում, էջ 37-38):

Այս նույն հարցի մասին ուշագրավ տվյալի ենք հանդիպում Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի 1251 թվականին շարադրված և Արևելյան Հայաստան առաքված Կանոնական խրատների մեջ: Խրատների նախավերջին կանոնը ազգագրական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այնտեղ ասված է. «Ի գրկանաց և ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստոնեայքն և ի նենգելոյ զիրեարս՝ արք և կանայք, հաղկիցք, և խապկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, գնաւղք և վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ և յաւիտենական կենացն» (տե՛ս մեր «Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին» հոդվածը տպագրված Մատենադարանի «Բանբեր»-ում, N 4, [illegible] էջ 277-278):

Կաթողիկոսը, այսպիսով, զգուշացնում է իր հոտին, որ մեծ պատժի են արժանանալու հանդերձյալ կյանքում բոլոր նրանք, ովքեր կզրկեն, կխաբեն ու կնենգեն իրենց ընկերներին: Արվեստակիցների, այսինքն միևնույն արհեստով զբաղվող և համքարության մեջ ընդգրկված արհեստավորների, զինվորակիցների, գնողների ու վաճառողների հետ միասին, կանոնի մեջ հիշատակվում են նաև «հաղկիցք» և «խապկիցք» տերմինները:

Հայ բառարաններում պահվել է «հախկ» բառը՝ «ընկերակից գութանավորներից ամեն մեկին ընկած վարելու հողի բաժին» իմաստով (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատր. բառարան, 3, էջ 12): Այսպիսով պարզ է, որ «հաղկիցք» էին կոչվում ընկերակիցների այն կամավոր խմբերի անդամները, որոնք միավորվում էին վար ու ցանքի, թերևս նաև հնձի ու կալսման աշխատանքները միասնական ուժերով, լծկան անասուններով ու գործիքներով կատարելու համար: Հասկանալի է, որ այդ կարգի խմբերի մեջ ընդգրկվում էին միայն գյուղական այն ընտանիքները, որոնք առանձին-առանձին վերցրած անկարող էին մշակելու իրենց հողաբաժինները:

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նույն կանոնի մեջ հիշատակված «խապկիցք» տերմինը:

Գյուղերում կային շատ ընտանիքներ, որոնք ունեին աննշան թվով կաթնատու անասուններ: Օրվա ընթացքում ստացած չնչին քանակությամբ կաթով, նրանք զրկված պետք է լինեին յուղ ու պանիր պատրաստելու հնարավորությունից: Սակայն հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր արտադրական կենցաղում մշակել էր այդ դրությունից դուրս գալու ուշագրավ եղանակ՝ կաթ փոխ տալու միջոցով: Նույն վիճակի մեջ գտնվող մի քանի գյուղական ընտանիքներ, փոխադարձ համաձայնության գալով, պայմանավորվում էին օրվա ընթացքում իրենց ստացած կաթը որոշ չափով ամանով հերթով տալ այդ խմբի մեջ մտած ընտանիքներից մեկին: Այս ճանապարհով, խմբի մեջ մտած յուրաքանչյուր ընտանիք հնարավորություն էր ձեռք բերում իր կաթից յուղ ու պանիր պատրաստելու: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, թուրքերեն լեզվով կոչվում է «դար» կամ «խար», «խապ» (տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, III, էջ 303-304), այստեղից էլ «խապկիցք» տերմինը, որի տակ հասկացվում էր փոխօգնության այս խմբի մեջ մտած գյուղացիներից յուրաքանչյուրը: Հայ ժո-

գավառական առակներից մեկում պահպանված է կարևոր վկայություն տասը այծ ունեցող մի այրի կնոջ մասին, որը հենց, լինելով «խապկից», «յամէն օր շերեփ մի ջուր լնոյր ի կաթն և ի խափ (կամ՝ խապ, խաբ) տայր»: Իր այծարած որդու «Ե՞ր առնես դայդ վնասդ» հարցին մայրը տալիս է այսպիսի պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմռանս թացան լինի»: (Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 238-239):

Հարկիցների ու խապկիցների խմբի մեջ միավորվել կարող էին այն ընտանիքները, որոնք, այնուամենայնիվ, չէին զրկվել խպառ սեփական տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ արտադրական միջոցներից:

Գյուղական համայնքներում կային նաև այնպիսի ընտանիքներ, որոնք ինքնուրույն տնտեսություն չունեին բնավ, կամ էլ ունեին այնպիսի մանր տնտեսություն, որի արդյունքով անկարող էին կերակրվել: Այդպիսի ընտանիքներից էին, հիմնականում, դուրս գալիս վարձկաններն ու մշակները, որոնք վարձվում էին հարուստ համագյուղացիների կողմից երկրագործական եռուն աշխատանքների ժամանակ (վար, հունձ և այլն), ինչպես նաև դառնում էին գյուղական հովիվներ և «գործավորներ» (տնտես, մաճկալ, հովիվ, իշվար) վանական հաստատություններում:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ձեռագրերից մեկում, Բ. մասի ձԻԱ, հոդվածի մեջ ծանոթ վերնագիրը խմբագրված է այսպես. «Վասն որ մարապան մտեն և մշակ այլ մարդոյ»:

«Մարապայ» տերմինը, ըստ Ստ. Մալխասյանցի, նշանակում է «երկրագործ, որ նստած է կալվածատիրոջ հողի վրա ու մշակում է այդ հողը, որոշ պարտականություններ կատարելով հօգուտ կալվածատիրոջ» (Հայերէն բացատր. բառարան, III, էջ 271): Այս բացատրությունը ճշտման ու լրացման կարիք ունի: Մխ. Գոշի վերոհիշյալ հոդվածի խորագրում ասված է, որ մարապան կամ մշակը վարձվում են «այլ մարդոյ» կողմից, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կամ Գոշի հոդվածի միջնադարյան խմբագրի ժամանակ «այլ մարդ» կարող էր լինել ոչ այնքան կալվածատերը, որքան գյուղական փարթամ ու ընչեղ գերդաստանի տանուտերը: Ավելին, եթե մշակը, ամենայն հավանականությամբ, աշխատում էր իրեն վարձողի հողի վրա, ապա հիմք չունենք պնդելու, որ նույն փոխհարաբերությունը գոյություն ուներ վարձողի ու մարապայի միջև: Բացառված չէ,

որ վերջինս կարող էր աշխատել իր հողամասի վրա, բայց ուրիշի քաշող անասուններով ու սերմացուով: Պնդել, որ մեծատուն համագյուղացիներից տնտեսական այդպիսի կախման մեջ ընկած գյուղացիներն էին հենց, որ կոչվում էին «մարապայ» չենք կարող, սակայն այդ կարգի հարաբերությունների գոյությունը հավաստող տվյալներ կան:

Այսպե՛ս, 1503 թվականին, Նորընծա ոմն Հովհաննես երեց, Սթունի գյուղի բնակիչ Ճֆլայի անվամբ մեկին տալիս է երեք եզ, և նույնքան եզ էլ՝ Ճանեխի գյուղի բնակիչ Խալիֆին: Այս երկուսը պարտավորվում են Հովհաննես երեցի տված սերմերով ցանել իրենց հողակտորները, պայմանով որ տարին 85 լիտր ձեթի գին ուղարկեն Երուսաղեմ, Հովհաննես երեցի և նրա մերձավորների հիշատակին:

Ստորև մեջ ենք բերում այդ պայմանագրի կարևոր մասը. «Ի թվականութեանս Հայոց ՋԾԲ. (1503), ես նորընծայ Յովանէս երէցս որ յիշատակ գրի իմ հոգոյս և ամենայն՝ արեան մերձաւորացն իմոց: Տվել եմ Գ. (3) եզն ի Ճֆլայուն որդին Սամղանայ, ի գեղն որ կոչի Սթունի. Գ. (3) եզն այլ որ կոչի Ճանեխ, ի Խալիֆէն, որ վարեն զգետինքն իմ ցորենան ու իմ գարովն, ուռամբ ու շուշմայով, ու ալ գինչ որ լինի...: Եւ գինչ որ Աստուած տայ ամէն տարի... ՁԵ. (85) լտեր գին յուղարկեն ի սուրբ Երուսաղէմ, ու զայլն աղքատացն և ուխտաւորացն բաժանեն...» (Օքսֆորդ, Բոդլեան գրատուն, Ms. March. 438, Մատենադարան, Անհատական արխիվներ, թղթ. 122, էջ 2007):

Այսպիսի բովանդակությամբ պահպանված այս միակ պայմանագիրը գրանցվել ու հասել է մեզ, որովհետև գործարքը բարեգործական բնույթ ունի: Իրենց հողն ուրիշի լծկանով ու սերմացուով մշակող գյուղացիները, տվյալ դեպքում, պարտավորվում են ոչ թե բերքի մի մասը լծկան անասունների ու սերմացուի տիրոջը՝ Հովհաննես երեցին հանձնել, այլ վերջինիս հոգու փրկության համար լուսացուի գին են ուղարկում Երուսաղեմի եկեղեցիներին: Սակայն պայմանագրի պատմական արժեքը դրանով բնավ չի նվազում: Այդ փաստաթղթի հիման վրա կարելի է վստահորեն եզրակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական գյուղերի ունևոր վերնախավը (տանուտերեր, քահանաներ և այլն) շահագործում էր արտադրության միջոցների մի մասից զրկված համագյուղացիներին, տալով նրանց լծկան անասուններ ու սերմացու և ստանալով նրա՛նց հողա-

կտուրների վրա, նրա՛նց ջանքերով ու քրտինքով աճեցրած բերքի զգալի մասը:

Աշխատենք պարզել ևս մի հարց. արդյո՞ք որևէ գյուղում բնակություն հաստատած բոլոր անձինք կամ ընտանիքներն էին համարվում տվյալ գյուղական համայնքի լիիրավ անդամներ, թե՞ կային այնպիսիները, որոնք չէին օգտվում համայնքի անդամների բոլոր իրավունքներից: Սկզբնաղբյուրներում կան միայն թռուցիկ ակնարկներ գյուղական համայնքի կյանքի այս բնագավառն աղոտ կերպով լուսաբանելու համար:

Մարմետ գյուղի մասին շարադրված մեզ ծանոթ հիշատակարանում կան այսպիսի տողեր՝ «... և այլք, որ անուանքն ի միտս չի գար, թէ մեծ է և թէ փոքր, թէ հարուստ է և թէ աղքատ, թէ բնական է և թէ նորէկից, ամենեքեան՝ մեծ և փոքր» (Մատենադարան, ձեռ. N 4883, էջ 614ա):

Այստեղ հակադրված են միմյանց գյուղի բնակիչներն ըստ իրենց սոցիալական (մեծ և փոքր) և տնտեսական (հարուստ և աղքատ) դրվածքի: Սակայն կա նաև մի այլ հատկանիշ, որով տարբերակվել են գյուղի բնակիչները: Հիշատակագիրը տարբերակում է նաև «բնական»-ներին, այսինքն՝ գյուղի բուն բնակիչներին և «նորէկեց»-ներին, այսինքն՝ այլ վայրերից տվյալ գյուղը եկած ու բնակություն հաստատած անձանց: Որ գյուղական բնակչության այս երկու կատեգորիաների միջև գոյություն է ունեցել իրավական ու սոցիալական ինչ-որ տարբերություն՝ այդ երևում է նաև Մաթեոս Ջուղայեցու «Վասն քարոզութեան բանի» աշխատության մի հատվածից, որտեղ հեղինակը ցանկանում է ցույց տալ, որ «բարկության գեր» մարդկանց հաճախ նետում է տարբեր որոգայթների մեջ: Որոգայթներից մեկն էլ համարվում է հետևյալը. «Եւ դեն (բարկութեան) մի համբերեր զոցա, զի նոքա օտար են և եկք և դու բնիկ. հայրենիքս քո է և զոքա առ քեզ են եկեալ և ոչ դու առ նոսա. և զոքա զքո ապրանքդ կուտեն ու քեզ վնաս տանեն: Արդ, Վարեա՛ զնոսա» (Մատենադարան, ձեռ. N 6607, էջ 47բ):

Ինչքան էլ անորոշ համարվեն մեր հեղինակի խոսքերը, այնուամենայնիվ, կարծում ենք, դրանք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ «բնիկ» գյուղացիները, այլ խոսքով՝ համայնքի լիիրավ անդամները, «նորէկեց»-ներին չէին համարում համահավասար իրավունքներով օժտված: Նրանց պատկերացմամբ այն «նորէկեց»-ները «իրենց ապրանքն

են ուտում», ուստի և իրենք իրավասու են նրանց վանդելու գյուղից («Արդ, վարե՛ա զնոսա»):

Միջնադարյան Հայաստանի և, մանավանդ, ԺԵ դարի գյուղական համայնքի կազմակերպության ու պաշտոնեության, հողային ֆոնդի տնօրինման, դասային կառուցվածքի, արտադրական կենցաղի և հարակից հարցերի մասին առկա տվյալները, անշուշտ, հնարավորություն չեն ընձեռում լուսաբանելու համայնքի բարդ կյանքի բոլոր կարևոր կողմերը: Այնուամենայնիվ արդյունքը շոշափելի է և հույս է ներշնչում, որ այս ուղղությամբ աշխատանքը հնարավոր է շարունակել ձեռագրական նոր նյութեր երևան բերելով:

Զ

Անդրադառնանք այժմ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակի քաղաքային կյանքի ու արհեստագործության հարցերին:

Նյութերի պակասը հնարավորություն չի տալիս հարցերի այս խումբը ևս անհրաժեշտ խորությամբ լուսաբանելու: Հայաստանի քաղաքների, արհեստագործության ու առևտրի մասին հիշատակարանների և օժանդակ այլ աղբյուրների մեջ պատահականորեն գրանցված տվյալները խիստ աղքատիկ են: Լրացուցիչ որոշ տվյալներ հնարավոր է լինում քաղել միայն ԺԵ-ԺԶ դարերում՝ Հայաստանում և հարևան երկրներում ճամփորդած եվրոպական դիվանագետների ու առևտրականների ճանաչողական մեծ արժեք ներկայացնող ուղեգրություններից:

Հայաստանի ու հարևան երկրների միջնադարյան ծաղկուն քաղաքներին անբուժելի հարված հասցրին մոնղոլները՝ իրենց ավերիչ արշավանքներով ու երկարատև, ժողովրդի կենսական հյութերը քամող տիրապետությամբ: Մոնղոլական ու միջինասիական քոչվոր խաշնարած ցեղերը, բնակություն հաստատելով Անդրկովկասի ու Փոքր Ասիայի բարեբեր դաշտերի վրա, իրենց համար ամառային ու ձմեռային արոտավայրեր դարձրեցին նախկինում տեխնիկական կուլտուրաների մշակման հարուստ տրադիցիաներ ու զարգացած գյուղատնտեսություն ունեցող մի շարք շրջաններ: Այսպիսով, Ժ-ԺԳ դարերում, որպես միջազգային առևտրի կարևոր հանգրվաններ ու արհեստագործության զարգացած կենտրոններ բարձրացած քաղաքներից շատերը, զրկվելով տնտեսական իրենց հիմքից՝

արագորեն անկման դիմեցին: Քաղաքների մի մասն էլ քայքայվեց ու կազմալուծվեց միջազգային նշանակություն ունեցող կարավանային ճանապարհների փոփոխության, ինչպես նաև անընդհատ պատերազմների ու ֆեոդալական խժդժությունների հետևանքով:

ԺԴ դարում արդեն, Հայաստանի տնտեսական կյանքում նշանակալից որևէ դեր չէին կատարում Անիի ու Կարսի նման փարթամ քաղաքները, որոնք նախկինում հայտնի էին իրենց միջազգային կապերով, «ի ծովէ և ի ցամաքէ» հարստություններ դիզած մեծատուն առևտրականներով և ճարտար ու հմուտ արհեստավորներով:

ԺԴ դարում Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող տրանզիտային առևտրի ամենաբանուկ ուղին անցնում էր Շիրվանով ու Կասպից ծովի վրայով: Արևելյան մետաքսն ու համեմունքները տարվում էին Աստրախան, ապա Ազով ու Ղրիմի ծովափնյա քաղաքները, իսկ այստեղից՝ նավերով տեղափոխվում էին Իտալիա: Միջազգային տարանցիկ առևտրի այդ հիմնական ուղեգծի բոլոր կարևոր հանգրվաններում ստեղծվել էին հայկական գաղթավայրեր. հայ առևտրականները կարևոր դեր էին կատարում այդ առևտրի մեջ:

Դրությունը փոխվեց, սակայն, ԺԴ դարի կեսերից, երբ Ոսկյա հորդայի և Իլխանության մեջ մղվող հաճախակի արյունահեղ պատերազմների հետևանքով այդ ուղեգիծը դարձավ անապահով ու վտանգավոր: Աստրախանի վրայով կատարվող առևտրին վճռական հարված հասցվեց 1395 թվականին, երբ Լանկ-Թեմուրը գրավեց ու կործանեց այդ քաղաքը:

ԺԵ դարում սկսեցին ավելի աշխուժանալ Միջերկրական ծովի, հատկապես Կիլիկյան ծովեզերքի նավահանգիստները, դառնալով միջազգային առևտրի ամենակարևոր հանգրվաններ, ինչպես նաև Տրապիզոնը՝ Սև ծովի վրա:

ԺԵ դարի կեսերից միջազգային առևտրի նորմալ ընթացքը խափանվեց թուրքական նվաճումներով: 1453 թվականին նրանց ձեռքն անցավ «Արևելքի ու Արևմուտքի ոսկյա կամուրջը» հանդիսացող Կոստանդնուպոլիսը, 1461 թվականին՝ Տրապիզոնի կայսրությունը, իսկ տասը տարի հետո՝ 1471 թվականին՝ նաև Կիլիկյան ծովեզերքը՝ Ղարամանիան:

Եվրոպական ու Ասիական երկրների միջև, այսպիսով, խրվեց մի սեպ, որն առաջին հերթին խիստ բացասաբար անդրադարձավ միջազգային

առևտրի ու ապրանքափոխանակության վրա: Ահա, այսպիսի պայմաններում էր, որ բարձրացավ մի կողմից Թավրիզի, մյուս կողմից Հալեպի ու Սիրիական նավահանգիստների առևտրական դերը: Սրանք դարձան Արևելյան երկրների ու եվրոպական առևտրական կապիտալի առաջամարտիկ Վենետիկի առևտրական ընկերությունների անմիջական շփման ու ապրանքափոխանակության ամենակարևոր կետեր:

Թավրիզից դեպի Հալեպ տանող կարավանային ուղիներն անցնում էին Հայաստանի վրայով: Ամենակարճ ու բանուկ ուղին Թավրիզից անցնում էր Մարանդ, Խոյ, ապա՝ Բերկրի, Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ: Բաղեշից ճանապարհը երկփեղկվում էր. դեպի Եդեսիա ու Հալեպ գնալու համար անցնում էին կամ Նփրկերտի ու Ամիդի, կամ էլ Հըսնիքեֆի ու Մերդինի վրայով: Իր կարևոր նշանակությունը դեռևս պահպանել էր նաև Թավրիզից դեպի Կարին ու Երզնկա տանող ուղեգիծը: Երզնկայից Հալեպ (Սեբաստիայի վրայով) ուղևորվում էին հատուկ կարավաններ, որոնցից մեկի հետ ճանապարհորդելու համար 1478 թվականին ստիպված էր մեկ ամիս Երզնկայում սպասել վենետիկյան դիվանագետ Յոսաֆաթ Բարբարոն (Ուղեգրություններ, Ա, էջ 209):

Վենետիկը ձգտում էր առևտրական իր գործակալների գործունեության շառավիղը տարածել դեպի արևելք ու խուսափել արևելյան առևտրականների տնտեսապես ոչ շահավետ միջնորդություններից: Սակայն այդ բնագավառում նրանք մեծ հաջողություններ չունեին: Մշտական բնակություն հաստատելով Հալեպում, նրանք այստեղ էին կատարում հիմնականում առևտրական իրենց գործարքները, փոխանակում իրենց մահուդն արևելյան ապրանքների՝ խամ մետաքսի, բրդի, գզթորի, ճարպի, քրքումի, կաշվի, բամբակի և համեմունքների հետ:

Հալեպում կատարվող միջազգային այս առևտրի ու ապրանքափոխանակության մեջ նշանակալից դեր էին կատարում հայ խոջաները: 1478 թվականին արդեն, Հալեպում կար Աստվածածնի անվամբ հայկական մի եկեղեցի, որի հովանու ներքո պարոն Ֆարաճի պատվերով մի Ավետարան ընդօրինակեց Մելքիսեթ գրիչը (հշտկ. N 550, էջ 433): 1500 թվականին Հալեպի հայ գաղութի ռայիս Հիսայի տրամադրած միջոցներով այստեղ կառուցվեց Քառասուն մանկանց անվամբ մի սրբատեղի և հյուրատուն.

«Այլ և խըցեր հանդրստարան,

Ի գալ հիւրոցն ատարական,
Զի հանգիցեն խաղաղական,
Հանդերձ գրաստիւքն իւրեանց որ կան:
Շինեաց դարպաս թագաւորական,
Որ ժամատեղ էր ամառան,
Քահանայից տեղ հանգստեան,
Զի վայելեն խաղաղական»
(Ա. Սիւրմէեան, Ցուցակ Հալէպի, Ա, էջ 151):

Հալեպի երկու հայկական հնագույն գերեզմանատներում (Սալիպեի և Ազիզյեի) կան ԺԶ դարից 14 արձանագիր տապանաքարեր, որոնցից 13-ը պատկանում են հին Ջուղայեցի «Հալապ քաղաքում դարից մնացած» խոջաների (Ա. Սիւրմէեան, Պատ. Հալէպի ազգային գերեզմանատանց և արձանագիր հայերէն տապանաքարերու, Հալէպ, 1935, էջ 12-13, 25): Ջուղայեցիները, հիմնականում, Շամախուց Հալեպ էին տանում խամ մետաքս և դրա դիմաց վենետիկցիներից գնում մեծ քանակությամբ կտորներ ու կերպասներ:

Թավրիզից Հալեպ տանող առևտրական ուղեգծի Հայաստանից անցնող հատվածի վրա գտնվող ամրոց-քաղաքների մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում վենետիկցի անանուն մի վաճառական, որը 1511-1520 թվականներին առևտրական գործերով շրջել էր Հայաստանի ու Իրանի նշանավոր վաճառաշահ կենտրոններում:

Վանա լճի շրջակայքի մասին ստացած իր տպավորությունները նա շարադրում է այսպես. «Երկիրը բարեբեր է՝ լի գյուղերով, և գյուղացիները մեծագույն թվով հայեր են: Այս ծովի շուրջը կան յոթը փառավոր ամրոցներ, բնակված քրդերից ու հայերից, բոլոր այս ամրոցներում ես առևտուր եմ արել, որովհետև Թավրիզից գնալիս անցա մեկ կողմից և վերադարձիս՝ մյուս կողմից, այսպես ծովը գտնվում էր մեջտեղում» (Ուղեգրություններ, Ա, էջ 300):

Նրա նշած յոթը ամրոց-քաղաքներն էին՝ Դատվանը, Ոստանը, Վանն ու Բերկրին՝ լճի արևելյան կողմում, և Արճեշը, Արծկեն (Ադիլջեվազ) Խլաթը և Դատվանը՝ հյուսիսարևմտյան կողմում:

Այս քաղաքներից մի քանիսի մասին նույն հեղինակը, ինչպես և այլ ուղեգիրներ ու հիշատակագիրներ՝ հաղորդում են լրացուցիչ կարևոր տեղեկություններ:

Այսպես, նկարագրելով Վանի անառիկ ամրոցը, վենետիկցի ուղեգիրը հայտնում է, որ «ամրոցի ներքևում կա մի մեծ քաղաք, և բնակչության մեծ մասը հայեր են, իսկ ամրոցի ներսում բոլորը քուրդ են: Այս վայրը մի մղոն հեռու է ծովից և լավ մատակարարված է մթերքներով» (Նույն տեղում, էջ 302):

Վան քաղաքը ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում շարադրված հիշատակարաններում հիշված է բազմիցս: Այստեղ ընդօրինակված շուրջ 30 մեզ հայտնի ձեռագրերի հիշատակարանները, այս կամ այն չափով, հնարավորություն են ընձեռում ծանոթանալու քաղաքի խոջաներից շատերի, ճարտար հյուսների, ոսկերիչների և այլ արհեստավորների հետ: Ուշագրավ է հատկապես 1476 թվականին Վանում շարադրված այն հիշատակարանը, որտեղ խոսվում է նաև հյուսն Մլխամի մասին, որը «զսուրբ Պօղոսի և զՊետրոսի ժամատունքս ծածկեց և շատ աշխատեցաւ ի վերայ սոցա»: Պարզվում է, որ հյուսնությունը այս Մլխամի ընտանիքի ժառանգական արհեստն է եղել. հյուսն է եղել նրա հայր Ավետիսը, ինչպես և որդի Կարապետը: «Յիշեցէք...,- գրված է հիշատակարանում ,- զխուս Մլխամն, և զծնաւղսն իւր զխուս Աւետիսն և զՄամա-խաթունն, և զկենակիցն իւր զՇուքրանն, և զորդիքն իւր զխուս Կարապետն և զԽըլղաթն, և զամենայն արեան մերձաւորսն իւրեանց» (հշտկ. N506, էջ 404):

Այս անուղղակի վկայությամբ հավաստվում է արհեստագործության առանձին մասնաճյուղերի ժառանգականության դարավոր կիրառությամբ սրբագործված սկզբունքի կենսունակությունը հայկական քաղաքներում:

Վանեցի «ազատազունդ խոջաների» սոցիալական դիմապատկերը բնորոշ գծերով հնարավոր է լինում ամփոփել 1565 թվականից մեզ հասած մի հիշատակարանի միջոցով, որը նվիրված է մելիք Ղուլիջանի բարեգործությունների գրվառմանը: Իր միջոցներով մեծանուն այս խոջան վերանորոգում է Սալնապատի սուրբ Աստվածածնի և Վերին-Վարագի վանքերը, կառուցում է Ներքին-Վարագի պարիսպը և շինություններ ու նորոգումներ կատարում մի շարք այլ վայրերում: Հիշյալ սրբավայրերին նա վաքֆ է անում Գուսնենց ու Զրվանդանց գյուղերում ունեցած իր ջրաղացները, սալահատակել է տալիս Վանի Թավրիզի դռնից սկսվող փողոցը՝ մինչև Պողոս-Պետրոս եկեղեցին, սահմանում է, որ ամեն տարի իր ջրա-

գացից ու անից 1400 հաց բաժանվի աղքատներին մեծ պասի շաբաթ և կիրակի օրերին, «դուքան մի չիր դուքաներացն» նվիրում է Տիրամոր եկեղեցուն, որպեսզի «Էն դուքնի վարձովն իր քառասունքն կատարեն», պատվիրում է, որ իր մահվանից հետո ամեն կիրակի իր այգիներից 5 լիտր խաղող, տանձ ու խնձոր բերեն ու բաժանեն իր գերեզմանի վրա «մինչև այգիքն վերանան» և այլն և այլն (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 291-292):

Այսպիսով, մելիք Ղուլիջանը հանդես է գալիս միաժամանակ որպես առևտրական, ջրաղացների տեր, այգետեր և դրամատեր: Բարեգործական նպատակներով նրա կատարած մեծածախս շինարարական ու վերանորոգչական աշխատանքների համար միայն նա հսկայական դրամական միջոցներ պիտի ծախսեր, մի բան, որ ի վիճակի էր անելու, անտարակույս, մեծ հարստությունների տեր մեկը:

Հայ հիշատակագիրները Վանից հետո, տարբեր առիթներով, ամենից շատ խոսում են Արճեշ քաղաքի մասին, որը մեզ հետաքրքրող ժամանակներում հայտնի էր նաև որպես գրչության աչքի ընկնող կենտրոն: Այստեղ էր աշխատում միջնադարյան հայ ամենաբեղուն գրիչներից մեկը՝ Հովհաննես Մանկասարենցը, որն իր կյանքի ընթացքում (ապրել է 86 տարի, մահացել է 1505 թվականին) ընդօրինակել է 132 մեծ ու փոքր ձեռագիր:

1465 թվականին ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Մանկասարենցը շարադրում է արճիշեցի խոջա Գրիգորի ընտանիքի սրտաճմլիկ պատմությունը, որին կանդրադառնանք քիչ հետո. նշենք այստեղ, որ խոջաների տարաբախտ այդ ընտանիքի անդամները «ի վաճառ» էին գնում հեռավոր երկրներ ու քաղաքներ՝ Թավրիզ, Սուլթանիա, Սպահան և այլն (հշտկ. N 287, էջ 235-236):

Արծկէ քաղաքը ևս, գտնվելով կարավանային բանուկ ճանապարհի վրա, որոշ դեր էր կատարում որպես հանգրվան ու ապրանքափոխանակության կետ: Այստեղից ևս, մեզ հետաքրքրող ժամանակներից հասել են մեծ քանակությամբ հիշատակարան ունեցող ձեռագրեր, որոնց մեջ տվյալներ կան նաև արծկեցի խոշոր առևտրական-խոջաների մասին: Դրանցից էին 1466 թվականին հիշված ձեռագրի պատվիրատու Հովհաննեսն ու նրա «պարոն» որդիներ Գորգն ու Ամիրբեկը (հշտկ. N 308, էջ 246): Արծկեցի էր

նաև ԺԵ դարի վերջերին ապրող նշանավոր գանձասաց Հակոբ Նեսարբենցը. ազգանունից դատելով նրա հայրը կամ նախնիները եղել են նետագործ արհեստավորներ:

Ավելի մեծ նշանակություն ուներ, անշուշտ, Խլաթ քաղաքը, որը Յոսաֆաթ Բարբարոյի վկայությամբ, ուներ հազար տուն, ուրեմն, պետք է ենթադրել, ոչ պակաս քան հինգ հազար բնակիչ (Ուղեգրություններ, Ա, էջ 187): Դժբախտաբար Խլաթի նկատմամբ մեր հիշատակագիրները խիստ ժլատ են:

Գլխավոր ճանապարհի վրա հաջորդ խոշոր առևտրական կայանն ու ամրացված կետը՝ Բաղեշ (Բիթլիս) քաղաքն էր, որը միաժամանակ վարչական կենտրոնն էր Հայաստանի ամենազորեղ քրդական ամիրության: Մեզ ծանոթ վենետիկցի վաճառականը հայտնում է, որ քրդերից բացի, քաղաքում բնակվում են «նաև շատ հայ քրիստոնյաներ», և որ «շատ վաճառականներ մեկնում են այս քաղաքից առևտուր անելու Հալեբում, Թավրիզում և Բրուսայում» (նույն տեղում, էջ 298): Պետք չէ տարակուսել, որ այդ վաճառականները հայեր էին: ԺԵ դարի ընթացքում Բաղեշը զգալի դեր է կատարել նաև Հայաստանի մշակութային կյանքում. այստեղ է ծնվել Առաքել Բաղիշեցի նշանավոր բանաստեղծը. Բաղեշի շնորհալի գրիչների ընդօրինակությամբ ԺԵ դարի երկրորդ հիսնամյակից հասել է մեզ 17 ձեռագիր:

Հայ հիշատակագիրներն ու եվրոպական ճանապարհորդներն ակնարկներ ունեն նաև Հայաստանի մյուս քաղաքների՝ Երզնկայի, Խիզանի, Մուշի, Ոստանի, Աղթամարի, Խարբերդի, Բաբերդի, Սղերդի և ուրիշների մասին, որոնք գտնվելով կամ գլխավոր, կամ օժանդակ առևտրական ուղեգծերի վրա, այս կամ այն չափով, մասնակցություն ունեին միջազգային տարանցիկ առևտրին:

Երզնկան ԺԵ դարի երկրորդ կեսում երկու անգամ (1457 և 1483 թվականներին) քարուքանդ եղավ այդ քաղաքի համար սովորական երկրաշարժից: 1457 թվականի երկրաշարժի մասին ժամանակակից մի հիշատակագիր հայտնում է հետևյալը. «Եղև անհագին շարժ յԵզնկայն և կործանեաց զքաղաքն և զբոլոր պարիսպն յատակէն տապալեց. և մեռան ի նմին ժամու ի շարժէն անձինք ԲԺ. (12) հազար» (հշտկ. N 128, էջ 95):

Այս ծանր աղետից 17 տարի հետո Երզնկա այցելած Բարբարոն համարում է այն «մի մեծ քաղաք, բայց մեծ մասամբ քայքայված այս միջո-

ցին» (Ուղեգրություններ, Ա, էջ 195)։

Տասը տարի հազիվ էր անցել Բարբարոյի այցելությունից, երբ իր վերքերը դեռևս չբուժած քաղաքը, շրջակա գյուղերի հետ միասին, կրկին կործանվեց ավելի ուժգին շարժի ցնցումներից։ 1483 թվականին շարադրված հիշատակարաններից երկուսի մեջ ուշագրավ տողեր են գրանցված այդ շարժի մասին։ «Եւ արդ,- կարդում ենք նրանցից մեկում,- գրեցաւ սա ի դառն և ի նեղ ժամանակիս, զի վասն ծովացեալ մեղաց իմոց Երզընկա քաղաք տապալեցաւ, և ԺԸՌ. (18.000) ոգի ի ներքև հողու մնաց, և այլ ոչ մնաց մի կենդանի» (Մատենադարան, ձեռ. N 6879, էջ 364ա)։ Մյուս հիշատակարանում տվյալներ են գրանցված ոչ միայն քաղաքում, այլև շրջակա գյուղերում զոհվածների թվի մասին. «Եղև շարժ և Եզրնկա քաղաքն Ի. (20) գեղով ընկղմեցաւ՝ մարդով և անասնաւք, մինչև ԼՌ. (30.000) մարդ ի գիր եկաւ»։

Թվում է, թե քաղաքն այլևս չէր վերաշինվելու։ Սակայն, լինելով Թավրիզից դեպի Փոքր Ասիայի կենտրոնական քաղաքները, ինչպես և Սև ու Միջերկրական ծովերի նավահանգիստները տանող ճանապարհի վրա, Երզնկան, շատ չանցած, դարձյալ վերաբնակեցվեց ու շենացավ։ ԺԶ դարի ուղեգիրները խոսում են նրա մասին, որպես առևտրական կարևոր կետի, իսկ անգլիացի վաճառական Ջոն Նյուբերին, 1581 թվականի աշնանը լինելով Թավրիզում, հայտնում է, որ այնտեղ շատ սիրված է ու լավ վաճառվում է մի տեսակ մետաքս սատին, որը Հայաստանի Երզնկա ու Արզրում (Կարին) քաղաքների լավ ապրանքներից է (Ուղեգրություններ, Ա, էջ 453)։

ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում Երզնկան ու նրա շրջակայքի հայկական վանքերը նշանակալից դեր էին կատարում նաև Հայաստանի մշակութային կյանքում։ Ինչպես առիթ ունեցանք նշելու, Ավագ և Կապուտ վանքերում էր հաստատվել ժամանակի ամենահեղինակավոր վարդապետ Հովհաննես Հաճենցին, իր շուրջը միշտ ունենալով Հայաստանի տարբեր շրջաններից բազմաթիվ աշակերտներ։

Յոսաֆաթ Բարբարոն տեղեկություն է հաղորդում նաև Բաբերդ քաղաքի մասին, համարելով այն Տրապիզոնից Պարսկաստան տանող ճանապարհի նշանավոր հանգրվաններից մեկը։ «Քաղաքը պարունակում է հազար հինգ հարյուր տուն»,- գրում է նա, հնարավորություն տալով

եզրակացնելու, որ ԺԵ դարի 70-ական թվականներին Բաբերդն ունեցել է առնվազն 7000 բնակիչ։ Նույն դիվանագետ-ուղեգրի վկայությամբ՝ «շատ լավ» բնակեցված է եղել նաև Մուշ քաղաքը (Ուղեգրություններ, Ա, էջ 195, 197) և այլն։

Առևտրի ու արհեստագործության զարգացման իրենց աստիճանով, անշուշտ, հետ էին մնում Վանա լճի հարավում գտնվող քաղաքներն ու բնակավայրերը։ Բարբարոյի ճամփորդության տարիներին Ոստանը քայքայված մի քաղաք էր և «երեք հարյուր տնից ավել չուներ»։ Չնայած դրան, նա որոշ դեր էր կատարում ներքին առևտրի մեջ՝ մատակարարելով մեծ քաղաքներին գյուղատնտեսական մթերքներ։ Հայտնի է, որ ԺԶ դարի սկզբներին Ոստանից Թավրիզ վաճառահանում էին մեղր, օծանելիք ու պանիր։ Վենետիկցի անանուն վաճառականն այդ մասին գրում է. «Ավելի մեծ քանակությամբ մթերք կա այստեղ, քան ուրիշ որևէ տեղ, և մեծ քանակությամբ սպիտակ մեղր է շինվում այստեղ, որ ժամանակ առ ժամանակ ուղարկվում է Թավրիզ ծախելու, օծանելիքի ու պանրի հետ միասին (Նույն տեղում, էջ 301)։

Ըստ երևույթին, ավելի բազմամարդ ու հայաշատ էր Խիզանը. մեզ հետաքրքրող հիսնամյակից պահպանվել են Խիզանում ընդօրինակված երկու տասնյակ ձեռագրեր։

Հայաստանի մշակութային կյանքում բացառիկ դեր էր կատարում Աղթամար կղզու վրա գտնվող գյուղաքաղաքը, որը կոչվում էր Արմենիկ։ Եվրոպական ուղեգիրների վկայությամբ գիտենք արդեն, որ միայն հայերով բնակեցված այդ գյուղաքաղաքում կար 600 տուն (ընտանիք)։ ԺԵ դարի երկրորդ կեսին շարադրված հիշատակարաններում տվյալներ կան Աղթամարում բնակվող ու աշխատող մի շարք հյուսների, ինչպես և Մուրատշահ ոսկերչի մասին (Մատենադարան, ձեռ. N 7585, էջ 267ա)։ Աղթամարը միաժամանակ գրչության ամենախոշոր կենտրոնն էր Հայաստանում և մեծ արվեստով գրված ձեռագրեր էր մատակարարում նույնիսկ հեռավոր շրջանների, հրատարակվող հիշատակարաններից շուրջ 60-ը շարադրված են հենց Աղթամարում։

Քաղաքային կյանքի ու արհեստագործության մասին խոսելիս չպետք է անտեսել այն հանգամանքը, որ հայ առևտրականներից ու արհեստավորներից շատերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, գաղթելով հայրենի

երկրից, բնակություն էին հաստատել հարևան երկրների վաճառաշահ քաղաքներում, ինչպես նաև հայկական հնավոր գաղթավայրերում Վոլգայի ափերին, Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում, Եգիպտոսում, Թուրքիայի ծովափնյա քաղաքներում և այլ վայրերում: Մեր նպատակից դուրս համարելով խոսել հնավոր գաղթավայրերի մասին, փոքր-ինչ անդրադառնանք պատմական Հայաստանի հարավ-արևմուտքի, Շիրվանի, Վրաստանի և Իրանի քաղաքների հայ գաղութների կյանքին:

Ակ-կոյունլուների նախկին մայրաքաղաք Ամիդի հայ գաղութի պատմության սկզբնավորումը թաղված է դարերի խորքում: 1517 թվականից հասել է մեզ ուշագրավ մի փաստաթուղթ, որն իրավունք է տալիս եզրակացնելու, թե մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ամիդի քաղաքային կյանքում հայ առևտրականներն ու արհեստավորները կարևոր դեր էին խաղում:

Տարոնի սուրբ Ղազարի վանքը նշված թվականին Ամիդ է ուղարկում Թադեոս եպիսկոպոսին, վանքի կարիքները հոգալու համար ժողովարարություն անելու նպատակով: Եվ ահա, Ամիդի հայ համայնքի «քահանայքն ու խոճանայքն» որոշում են դառնալ սուրբ Ղազարի վանքի թեմ ու վիճակ և եկեղեցական տուրքերն այսուհետև վճարել այդ վանքին: Երկուստեք համաձայնությունը հաստատվում է հատուկ արձանագրությամբ, որի տակ ստորագրում են քաղաքի նշանավոր անձինք՝ խոջաներ ու արհեստավորներ՝ «Սարխօշ Ապտլմսեհ, Յաւաճ, կոշկակարենց Ապտալյան, սառաֆ Քարիմ, ապրցի Կիրակոս, խօճայ Այտին, նղարաճի Այվատ, շարաֆ Յոհան, խօճայ Ուսֆ, կոլոնց Սարգիս, խօճայ Սահակ, Քօսայ Մուրատ, դաղանչի Այտին, խօճայ Տարդրվուշ, Ներսէս էրէց, Առաքել էրէց, Յոհաննէս էրէց սուրբ Սարգսին, խօճայ Լութվին, խօճա Ղրիճ, խօճայ Ապտալյան Սուլփկանց, Զարքաղենց Յովանէս, Մշցի Շիրին, Ղարայխաւենց Մուրատն, Փօշկանց Ապսէխտն, դասպ Ապտալյան, լողն դշիր (՝) Քօք Սաֆար, սառաֆ Եաղուպ, ներկարար Կիրակոս, կտակար Մուրատ, Սարում, կտակար Լթվին, Աւանենց Ապտլմսեհ, խոճայ Տայուտ, խարուճայ Այսէխտ, Փահտին, խասպ Մուրատն, Դօխթ էր[է]ց, Յակոբ էրէց, Պաղտասար էրէց» (Բ. Սարգիսյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 480-482):

Նշանավոր քաղաքացիների անվանց սոսկական այս թվարկումն իսկ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Ամիդի հայ համայնքն իր

կազմում ուներ բազմաթիվ խոշոր առևտրական-խոջաներ, լումայափոխ-փոխառուներ (սառաֆ) և տարբեր զբաղմունքի տեր արհեստավորներ (նղարաճի, դաղանչի, դասապ, ներկարար, կոշկակար, գդակկար և այլն):

Բազմաթիվ հայեր էին բնակվում նաև դեպի Սիրիական նավահանգիստները տանող կարավանային ճանապարհի Հայաստանից դուրս ընկնող ուղեմասերի վրա գտնվող քաղաքներում: Հալեպի մասին մենք արդեն առիթ ունեցանք խոսելու, նշենք, որ հոծ հայություն կար նաև Հըսնիքեյֆ վաճառաշահ քաղաքում, որտեղ կար նույնիսկ հայ եպիսկոպոսական առանձին թեմ. 1446 թվականին Հըսնիքեյֆի եպիսկոպոս էր Գրիգոր անունով մեկը (ԺԵ. դարի հշտկ., Ա., էջ 603): Յոսաֆաթ Բարբարոյի վկայությամբ, այդ քաղաքում կային «հյուսվածքեղենի վաճառականներ, որովհետև քաղաքը մեծ անցուդարձ ունի» (Ուղեգրություններ, Ա, էջ 182), իսկ վենետիկցի անանուն վաճառականը, Բարբարոյից 40 տարի հետո այցելելով նույն վայրը, հայտնում է, որ «այնտեղ կա բազմաթիվ բնակչություն՝ քրիստոնյա, մահմեդական և հրեա, շատ հարուստ առևտրական մի համայնք» (Նույն տեղում, էջ 294):

Շիրվանշահերի պետության ամենանշանավոր քաղաքը ԺԵ դարում Շամախին էր: Բարբարոն նկարագրելով Շամախին, գրում է. «Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն, և շինում են մետաքս, կտավ և ուրիշ բաներ իրենց եղանակով» (Նույն տեղում, էջ 199): Խոսելով բնակչության ազգային կազմի մասին, Բարբարոն հայտնում է, որ «բնակիչների մեծ մասը հայ են»: Իտալացի դիվանագետի տվյալը հաստատում է անգլիացի Ջենկինսոնը. մեկ դար հետո այցելելով Շամախի, նա ևս արձանագրում է, որ քաղաքը «բնակված է գլխավորապես հայերով» (Նույն տեղում, 372):

Շամախու շրջանը միջազգային առևտրին մասնակցում էր հիմնականում խամ մետաքսով: 1394-1427 թվականներին Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում ճանապարհորդած Հ. Շիլտբերգերը, խոսելով այն մասին, որ Շիրվանից արտահանում են «ամենից լավ մետաքսը», հայտնում է, որ այդ խամ մետաքսից «պատրաստում են լավ գործվածքներ Դամասկոսում, Քաշանում ինչպես և Բրուսայում: Մասամբ այդ մետաքսն արտահանվում է նաև Վենետիկ ու Լուկկա, որտեղ նրանից պատրաստում են գերազանց որակի թավիշ»:

Ուշագրավ են նաև նույն ճանապարհորդի դիտողությունները հայերի աշխատասիրության ու արհեստագործության մեջ ունեցած հմտության մասին. նա գրում է. «Շատ հավատարիմ ազգ են հայերը, լինեն նոքա քրիստոնյաների կամ հեթանոսների հետ, միշտ նոցա հետ սիրով են և նոցա կողմն են պահում. նոքա շատ խելոք մարդիկ են և շատ աշխատասեր. գեղեցիկ կտավներ են գործում թավշից, ծիրանիից և մետաքսից, նմանապես ավելի շքեղ և թանկագին ոսկեզօծ կտավներ են գործում քան հեթանոսները» (տե՛ս Վ. Սուրենյանի «Հանս Շիլդբերգերի կյանքի և ճանապարհորդության մասին» հոդվածը, տե՛ս Հանդես գրականական և պատմական, երրորդ գիրք, Մոսկվա, 1890, էջ 165):

ԺԵ. դարի երկրորդ կեսից սկսած, ինչպես նշեցինք, մետաքսն ու արևելյան մյուս ապրանքները կարավանային ճանապարհներով տարվում էին Հալեպ և այնտեղ վաճառվում վենետիկցիներին, կամ փոխանակվում նրանց հետ, տեղը ստանալով մահուդ և այլ գործվածքներ:

Փոխանակային այդ առևտրի մեջ հայ վաճառականները, հատկապես հին ջուղայեցիները, նշանակալից դեր էին կատարում: Եվ կասկածից դուրս է, որ մեծ մասամբ նրանց ձեռքով էր արտահանվում Շամախու շրջանում մշակվող մետաքսը: 1566 թվականին անգլիացի վաճառական Արթուր Էդվարդսը, Շամախուց Լոնդոն ուղարկած իր մի նամակում, հայտնում է, որ այդտեղից տարեկան 400-500 ջորու բեռ մետաքս են տեղափոխում Հալեպ հայկական մի գյուղի (իմա՛ Ջուղայի) վաճառականները: Նրանք և ուրիշ հայ վաճառականներ, նույն նամակագրի վկայությամբ, Հալեպից «ամեն տարի բերում են չորս-հինգ և վեց հազար կտոր կերսեյներ և կերպասներ, բացի նրանցից որ ուրիշներն են բերում» (Ուղեգրություններ, Ա, էջ 412):

Հայ վաճառականների կողմից արտահանվող ու ներմուծվող ապրանքների չափը, իհարկե, կարող էր նույնը չլինել մեզ հետաքրքրող հիսնամյակում, բայց որ այդ առևտուրը նույնությամբ տեղի էր ունենում Էդվարդսից տասնամյակներ առաջ, այդ մասին կարելի է չկասկածել:

Հայկական բազմամարդ գաղութներ կային նաև մերձկուրյան այլ քաղաքներում:

ԺԵ-ԺԶ դարերում, որպես փոխանակային առևտրի աշխույժ կենտրոններից մեկը զգալի դեր էր կատարում Վրաստանի սահմանագլխին գտնվող Արաշ քաղաքը: Ջենկինսոնի վկայությամբ այն «վրացիների սահմանի վրա

ամենից գլխավոր ու բարգավաճ առևտրական քաղաքն է, և այնտեղ մշակվում է ամենամեծ առատությամբ մետաքս, և այնտեղ են գալիս թուրքերը, սիրիացիները և ուրիշ օտարականներ առևտուր անելու» (Ուղեգրություններ, Ա, էջ 372): 1490 թվականին խոջա Ղուպարի պատվերով Արաշում Ազարիա գրիչն ընդօրինակել է մի Ավետարան (Մ. Սմբատյան, Երնջակ, էջ 254-258). այս միակ փաստն իսկ բավարար է համոզվելու համար, որ Արաշում ևս հաստատվել էին զգալի քանակությամբ հայեր:

Հայկական գաղութ կար նաև Շամբրան քաղաքում: 1459 թվականին, Տաթևի եպիսկոպոս Շմավոնը, ըստ երևույթին քարոզչական գործերով, ճամփորդում էր Շիրվանում: Շամրան (իմա՛ Շամբրան) քաղաքում նրան հաջողվեց ձեռք բերել Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանցի» մի ձեռագիր (հշտկ. N 161, էջ 123):

Նույն Շմավոն եպիսկոպոսը, որը, ըստ երևույթին, գրասեր մի անձնավորություն էր, վերը նշված իր ճամփորդության ժամանակ, Շամախի քաղաքում ևս գնել էր ձեռագիր մի գիրք (Իգնատիոսի «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին», տե՛ս հշտկ. N 160, էջ 123):

Տվյալներ կան այն մասին, որ մեծ քանակությամբ հայեր կային նաև Դերբենդի շրջակայքում: Այստեղ ԺԶ դարում հայերը ունեին իրենց գերեզմանատունը, իսկ Նիզաբադի մոտ կար հայկական գյուղ: Կասպից ծովում հայ վաճառականները պահում էին նաև առևտրական նավեր (այդպիսի մի նավ 1579 թվականին Հակոբ անունով մի հայ վաճառականից գնեցին անգլիացիները, տե՛ս «Ուղեգրություններ», Ա, էջ 442-443):

Հայ առևտրականներն ու արհեստավորները որոշ դեր էին կատարում նաև Ատրպատականի բոլոր նշանավոր քաղաքներում՝ Թավրիզում, Մարաղայում, Արդաբիլում, Սուլթանիայում և այլ վայրերում:

Սերտ կապեր ունենալով իտալական քաղաքների հետ, ծանոթ լինելով եվրոպացիների վարքուբարքին և իմանալով եվրոպական լեզուներ, հայ վաճառականներից ոմանք հաճախ ստանձնում էին նաև դիվանագիտական ծանրակշիռ հանձնարարություններ: Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու դահակալների կողմից մեծապես հարգված այդպիսի նշանավոր մի վաճառական էր խոջա Միրաքը, որը 1486 թվականին նահատակվեց Թավրիզում: Երեք այլ դիվանագետների ընկերակցությամբ, 1469 թվականին Ուզուն-Հասանի

կողմից խոջա Միրաքն ուղարկվել էր Վենետիկ, Հռոմ և Նեապոլ՝ Թուրքիայի դեմ ռազմական դաշինք կնքելու առաջարկով: Նրա ոճրագործ սպանության մասին, տեղեկություն ստանալով մի ջենովացուց՝ մանրամասն տվյալներ է հաղորդում Յոսաֆաթ Բարբարոն, ինչպես նաև մի շարք հայ վարքագիրներ ու հիշատակագիրներ (Մատենադարան, ձեռ. N 8452, էջ 88ա-89բ, N 6273, էջ 343 և այլն):

Հիշատակարանները հնարավորություն են ընձեռում որոշ տվյալներ քաղել նաև Վրաստանի քաղաքներում Թբիլիսիում, Գորիում և Ախալցիխեում բնակություն հաստատած հայերի, մասամբ նաև նրանց զբաղմունքի ու վիճակի մասին:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում, հատկապես, 1462 թվականին Թբիլիսիում շարադրված մի հիշատակարան, որը դժբախտաբար, մատչելի է մեզ սխալաշատ մի ընդօրինակությամբ: Հիշատակարանը հնարավորություն է տալիս պարզելու, որ թշնամիներին և ավազակային խմբերին հակահարված տալու և իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար՝ քաղաքներում գոյություն ունեին աշխարհազորական ջոկատներ:

1462 թվականի Զատկի նախօրեին (ապրիլի 22-ին) հազար հոգուց բաղկացած թուրքական ինչ-որ հրոսակախումբ հարձակվում է ու գերում Հաւճալոյու (իմա՝ Ավճալա, Թբիլիսիի արվարձաններից) ավարը: Այս լուրը երբ տարածվում է քաղաքում, իսկույն ավազակներին հակահարված տալու վճռականությամբ, նրանց դեմ են ելնում 200 քաջ տղամարդիկ: Սակայն նրանք սխալ տվյալներ ունեին թշնամու ուժի մասին, կարծում էին որ «քիչ հեծել է»: Եվ երբ, հետապնդելով թշնամու 20 հոգուց բաղկացած խմբին, նրանք անցել էին՝ «ինչուր ի Լաւճին, ի ջրի էն գեհն. հետեակ, զգրած, նետերն հատած, և անորոշ (՞), և անալեհ», երկու կողմից շրջապատվում են թշնամու հիմնական ուժերի («մեծ հեծելի») կողմից, և անհավասար կռվում իսպառ բնաջնջվում: Բարբարոս ավազակներն իրենց հետ տանում են սպանվածների գլուխները, այնպես որ տարաբախտ քաղաքացիները չեն կարողանում ճանաչել իրենց հարազատների դիակները:

Հիշատակագիրը դառն կսկիծով շարադրելով այս տխուր եղելությունը, իրավացիորեն նկատում է, որ Թբիլիսիի հայերի համար այդ տարվա Զատիկը «սև զատիկ» եղավ (հշտկ. N 216, էջ 169):

Բացի արժեքավոր այս հիշատակարաններից մեզ հետաքրքրող ժամա-

նամյակում Թբիլիսիում շարադրվել են հինգ այլ հիշատակարաններ ևս: Դրանցից մեկում, ինչպես նշել ենք, տեղեկություն կա այն մասին, որ ԺԵ դարի 50-ական թվականներին Թբիլիսիում կար Ստեփանոս րաբունու կողմից գլխավորվող վանական մի դպրոց (հշտկ. N 22, էջ 17-18):

Բնակություն հաստատելով հարևան երկրներում, հայ արհեստավորներն ու վաճառականները, ստեղծարար ու տքնաջան աշխատանքով նպաստում էին քաղաքային կյանքի զարգացմանը և դրացիական ջերմ կապեր հաստատում իրենց հյուրընկալող ժողովուրդների հետ: Հայ ժողովրդի ստեղծած դարավոր մշակույթը, շփման ու փոխազդեցության համար նպաստավոր այս պայմաններում հարստանում էր նոր արժեքներով և, իր հերթին, բարերար ազդեցություն գործում հարևան ժողովուրդների մշակույթի վրա:

Հայաստանի և հարևան երկրների հայաբնակ քաղաքների մասին մեր գիտելիքները, ինչպես տեսանք, մանրամասն չեն: Առկա տվյալների մեծ մասը վերաբերում է միջազգային տարանցիկ առևտրի բնագավառում այդ քաղաքների խաղացած դերին: Ներքին շուկայի, քաղաքների ու դրանց մերձակա գյուղերի տնտեսական կապերի ու փոխհարաբերության հետ առնչվող մի շարք կարևորագույն հարցեր մնում են դեռևս լուսաբանության կարոտ:

Մեծ հավանականությամբ պետք է ենթադրել, որ հիշատակված քաղաքներից շատերը, կարավանային ճանապարհների հանգրվան լինելուց բացի, այս կամ այն չափով պահպանել էին իրենց նշանակությունը որպես արհեստագործության կենտրոններ: Ուստի, չնայած գյուղատնտեսության նատուրալ բնույթին, չպետք է կասկածել նաև այն բանում, որ այս կամ այն չափով ապրանքափոխանակություն էր կատարվում քաղաքների ու գյուղերի, ինչպես նաև Հայաստանում հաստատված խաշնարած քոչվոր ցեղերի և նստակյաց հայ երկրագործների միջև:

Գրիգոր Տաթևացին «Երգ երգոցի» իր մեկնության մեջ գրում է. «Ոչխարարոյծք սովոր են վաճառել զմիս և զճրագու և առնուլ զհաց ու զվան աղքատութեան, այլ զի ոչ պարապին գործել զհաց՝ ի դարմանս խաշանց գոլով (Մատենադարան, ձեռ. N 1264, էջ 44: Հմմ. նաև Հովհան Կոլոտիկի «Մեկնութիւն Եսայեայ», Մատենադարան, ձեռ. N 1128, էջ 150ա):

Միս ու ճարպ վաճառելով, խաշնարածները գնում էին ոչ միայն հաց

ու գյուղատնտեսական ուրիշ մթերքներ, այլև, անտարակույս, արհեստագործական արտադրանքի տարբեր տեսակներ, որոնք արտադրվում էին հայկական քաղաքներում: Հիշատակարանները և օժանդակ այլ աղբյուրներ հնարավորություն են տալիս հավաստելու արհեստի շուրջ 30 տարբեր մասնաճյուղերի գոյությունը ԺԴ-ԺԵ դարերի հայկական քաղաքներում: Ստորև, այբբենական շարքով թվարկում ենք այդ արհեստները.

Աղեգործ (Ջուղ.)[*]

Աղեղգուզ (հշտկ. N 147, էջ 111)

Անձուղագործ (Ջուղ.)

Արծաթագործ (Ջուղ.)

Բարակգործ (հշտկ. N 189, էջ 149)

Բրուտ (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 434, 457)

Գդակկար (հշտկ. N 183, էջ 144)

Դաբաղ (հշտկ. N 25, էջ 21)

Դանկրար կամ դանակագործ (խմա՛ սրեր ու թրեր պատրաստող արհեստավոր - ԺԴ դարի հշտկ., Ա, էջ 363, 366, 370)

Դարբին (ԺԵ դարի հշտկ. Ա, էջ 43, 193, 629, հշտկ. N 151, էջ 114, N 180, էջ 240 և այլն)

Դերձակ (ԺԵ դարի հշտկ. Ա, էջ 167, 536)

Խազազ (խմա՛ մետաքս մշակող - հշտկ. N 321, էջ 253)

Կերպասագործ (հշտկ. N 177, էջ 135)

Կոշկակար կամ Կաւշկար (հշտկ. N 274, էջ 227, Բ. Սարգսյան, Ցուցակ, հատ. Բ, 182)

Կտաւգործ (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 363, 365)

Հիւսն (հշտկ. N 101, էջ 73, N 393, էջ 313 և այլն)

Ճարտարապետ (ձեռ. N 7274, էջ 320բ)

---

[*] Յուրաքանչյուր արհեստի անունը տալուց հետո, փակագծերի մեջ տալիս ենք հիշատակարանի համարը, որի մեջ հիշված է այդ արհեստի տեր որևէ անձնավորություն կամ այն աղբյուրը, որից քաղված է տվյալ արհեստի գոյության մասին տվյալը: «Ջուղ.» համառոտությամբ նշում ենք մեր «Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը» հոդվածը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 78-79):

Ձոն (հշտկ. N 103, էջ 75, N 320, էջ 253)

Մազման (ԺԴ դարի հշտկ. Ա, էջ 274)

Նալբանդ (ձեռ. N 7979, էջ 296ա)

Նաղաշ (հշտկ. N 97, էջ 71, N 156, էջ 119 և այլն)

Նաղարանի (հշտկ. N 357, էջ 91բ)

Նետարար (ձեռ. N 293, էջ 13ա)

Ներկարար (հշտկ. N 214, էջ 167, N 337, էջ 265):

Ոսկերիչ կամ ոսկեգործ (հշտկ. N 181, էջ 141, N 358, էջ 278, Մտնդ., ձեռ. N 9422-ի կազմը, N 7274, էջ 320բ և այլն)

Ոստայնանկ (Ջուղ.)

Պատկերահան (հշտկ. N 448, էջ 554)

Պարանգործ (Ջուղ.)

Պղնձագործ (հշտկ. N357, էջ 277, N 544, էջ 430)

Ջուլհակ (հշտկ. N 31, էջ 25)

Քարգործ կամ Քարտաշ (հշտկ. N 468, էջ 371 և նաև Նչեցի, Մկն. Եզեկիէլի)

Քսակակար (Հայոց նոր վկաները, էջ 157)

Անտարակույս, մեր ցանկը խիստ թերի է. նրանից բացակայում են մի շարք արհեստներ, որոնք, անտարակույս, կային հայկական քաղաքներում սակայն չեն հիշատակվել (օրինակ՝ թամբագործ, կաշեգործ և բազմաթիվ այլ արհեստներ), սակայն նպատակահարմար գտանք թվարկել միայն այն արհեստները, որոնց մասին, ինչպես ասացինք, տվյալներ կան ԺԴ-ԺԵ դարերի հիշատակարաններում և, մասամբ էլ, նույն շրջանի այլ աղբյուրներում:

Դժվար չէ համոզվել այն բանում, որ արհեստագործության թվարկված մասնաճյուղերի արտադրանքը, ի բացառյալ մի-երկուսի, չէր կարող բնավ, կամ մեծ չափով վաճառահանվել հեռավոր շուկաներում, ուստի և, բնականաբար, սպառվում էր հիմնականում տվյալ քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերում և քոչվոր ցեղերի ամառանոցներում ու ձմեռանոցներում:

Խիստ անբավարար ու միակողմանի են սկզբնաղբյուրներում պահված տվյալները նաև կարավանային երթևեկության ձևերի, քաղաքացիների անձի ու գույքի ապահովության, առևտրականներից ու արհեստավորներից

գանձվող հարկերի և հարակից այլ հարցերի մասին: Այնուամենայնիվ, որոշ հնարավորություն ունենք թեթևակիորեն շոշափելու նաև այդ հարցերը:

«Վաճառականն, որ զբեռն է բարձեալ և ունի զկնիք թագաւորին՝ խաղաղութեամբ երթայ զճանապարհն իւր» ,- լավատեսորեն գրել է իր քարոզներից մեկում Գրիգոր Տաթևացին (Քարոզգիրք, ամարան հատոր, էջ 731), սակայն մեզ հետաքրքրող տասնամյակներում բոլոր ճանապարհների վրա վխտում էին ավազակային սպառազեն խմբեր, ուստի և հաճախ խաղաղությամբ չէին ավարտում իրենց ճանապարհը ոչ միայն թագավորական կնիք (թամղա) ունեցող վաճառականները, այլ նույնիսկ արքունի պաշտոնյաներն ու դեսպանները:

Յոսաֆաթ Բարբարոն 1474 թվականի ապրիլի 3-ին, Ուզուն-Հասանի կողմից Վենետիկ ուղարկված և հայրենիք վերադարձող մի դեսպանի ընկերակցությամբ դուրս եկավ Խիզանից, բռնելով Թավրիզ տանող ճանապարհը: Կես օրվա ճանապարհ հազիվ էին կտրել բարձրաստիճան ուղևորները, երբ մի բարձր լեռան վրա՝ հարձակում կրեցին քրդերից: Ավազակները, ինչպես պատմում է Բարբարոն, «սպանեցին հիշյալ դեսպանին, իմ քարտուղարին և ուրիշ երկուսի, և վիրավորված լինելով ինձ ու մնացյալներին, նրանք առին մեր բեռները և ուրիշ ինչ որ գտան» (Ուղեգրություններ, Ա, էջ 183): «Նրանք (քրդերը),- շարունակում է Բարբարոն,- ունեն շատ քաղաքներ (խոսքը, անշուշտ, բերդերի ու ամրությունների մասին է - Լ. Խ.) շինված բարձր վայրերում ու եզերքներում, հսկելու համար բոլոր ճանապարհներին, որպեսզի կարողանան կողոպտել անցորդներին» (Նույն տեղում, էջ 183):

Այսպիսի պայմաններում, բնականաբար, առևտրական կարավանները պետք է շրջեին զինված ջոկատների ընկերակցությամբ և ամեն մի խոջա դրամի քանակները հաշվելու կարողությունից զատ, քաջ ծանոթ պետք է լիներ նաև զենքի գործածությանը: Մատթեոս Ջուղայեցին իր աշխատություններից մեկում ուղղակի հայտնում է, որ առևտրականները որևէ երկիր մեկնելուց առաջ մեծ պատրաստություն պետք է տեսնեն և զենք ու հեծյալ պետք է ունենան իրենց հետ՝ ավազակների հարձակումներից ապահով լինելու համար: «Արդ,- գրում է նա,- որք կամին յերկրէ յերկիր երթալ՝ բազում ինչ խորհին և ապա ընթանան...: Զի զէնք և հեծեալս առնուն ընդ յինքեանց (ճանապարհորդք), զի թշնամիքն յաղթեալ սատակեսցեն զնոսա

(Մատենադարան, ձեռ. N 2229, էջ 160բ):

Թե որքան վտանգավոր ու արկածալից է եղել առևտրականի կյանքը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այդ մասին պերճախոս տվյալներ է հաղորդել Հովհաննես Մանգասարենց գրիչը, 1465 թվականին, արճիշեցի ողբացյալ մայր Խայիմ-Խաթունի պատվերով ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում: Այս Խայիմ-Խաթունի «գեղեցիկ ու քաղցրատես» Կարապետ որդին, որ առևտրական գործերով մեկնել էր Սուլթանիա՝ «ի դառնալն ի տուն մատնեցաւ ի ձեռս արեանարբու ջալատ տաճկաց, որ անմեղ նահատակեցին սրով և խանջալով»: Մյուս որդին՝ խոջա Հովհաննես, նույնպես երիտասարդ հասակում «յԽսպահան սրով սպանաւ ի ձեռաց անօրէն հարամկաց»: Ավագ եղբայրների վտանգավոր շավղով ընթացավ նաև Խայիմ-Խաթունի փոքրիկ որդի Եղգանբաշխը, «և նա տղայ հասակաւ գնաց ի վաճառ յԱրճէշ»: Սակայն դարձի ճանապարհին, Թավրիզում, ինչ-որ հիվանդությունից վախճանվեց նաև այս ընտանիքի երրորդ ներկայացուցիչը: «Եւ ողորմելի հայր սոցա Գրիգորն,- հայտնում է Մանգասարենցը,- խոց սրտով և դառն կենաւք գնաց տարաղէմ յԽսպահան վասն որդոյն Յօհաննիսին, և ի դառնալն հեծեծանօք կսկծու մահ եղև ի յՍուլթանիա» (հշտկ. N 287, էջ 235-236):

Արճիշեցի տարաբախտ այս ընտանիքի կրած ծանր հարվածներին, այս կամ այն չափով, ենթակա էին բոլոր հայ վաճառականները, որոնք երթևեկում էին միջազգային նշանակություն ունեցող վտանգավոր ճանապարհներով: Կարապետ գրիչը 1451 թվականին ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում տվյալներ է հաղորդում վանեցի մի կնոջ՝ Փաշայի հարազատների մասին: Սրա Սուլթանշահ եղբայրը «ի ճանապարհ գնաց և ոչ գիտացին թէ զինչ եղև», իսկ որդին՝ Ջանիբեկը նահատակվեց Խիզանում «և զմարմինն էլ ոչ եգիտ հայր նորա, և այն խոցովն և լալովն եմուտ ի գերեզման» (հշտկ. N 5, էջ 6):

Հարուստ ու փարթամ քաղաքացիների կյանքն ու գույքն անապահով էր ոչ միայն կարավանային ճանապարհների վրա, այլև իրենց հայրենական հարկի տակ: Երկրի բռնավոր ու ագահ տերերը միջոցի առաջ կանգ չէին առնում զրկելու համար քիչ թե շատ հարուստ իրենց հպատակների գույքը: «Յետ մահուան հօրն բռնաւորքն շորթեն զինչքն»,- գրում է Գրիգոր Տաթևացին («Լուծմունք Յոբայ», Մատենադարան, ձեռ. N 1115, էջ 51ա):

«Բազում անգամ աղքատ հանգիստ ի քուն լինի, իսկ մեծատունն կալեալ կապեն և կոտեն, մինն հազար խնդրելով և միւսն բիւր», լրացնում է իր ուսուցչին Մատթեոս Ջուղայեցին («Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից», Մատենադարան, ձեռ. N 5232, էջ 93ա):

Իսկ Կարապետ Բերկրեցի գրիչը 1501 թվականին շարադրած իր հիշատակարանում, անշուշտ, բազմաթիվ դեպքերի ականատես լինելով, հայտնում է, որ «ամէն պարոն գիր տեղաց անուանի մարդն տաւգանէր և թալանէր» (Մատենադարան, ձեռ. N 1591, էջ 389բ):

Այդպիսի պարոններից մեկն էր Սպատկերտի քուրդ ամիրը, որը 1432 թվականին բանտ էր նետել ամեն մի հայ քահանայի և մի տարի պահելով բանտում կողոպտել էր նրա ողջ ունեցվածքը: Այս մասին ուշագրության արժանի տեղեկություն է պահպանվել Ամիրզա գրչի վկայաբանության մեջ: Այս Ամիրզան «յաւուր տօնի գլխատման սուրբ Կարապետին գնաց առ ամիրայն իւր ի սպամ»: Քուրդ ամիրի և Ամիրզա գրչի միջև տեղի է ունենում հետաքրքրական խոսակցություն:

Ամիրն ասում է. «Տաճկացիր և ես տամ քեզ զինչ և կամիս: Եւ ասաց սուրբն (իմա՛ Ամիրզա գրիչը) տուր ինձ խայլ զայն քահանայն, որ տարի մի անպարտ ի բանտին կոճեր ես և թալաներ և զինչն առեր» և այլն (Մատենադարան, ձեռ. N 4515, էջ 139-140):

Այսպիսով, չնայած հայ խոջաներից ու այլ դրամագլխի տեր քաղաքացիներից ոմանց տարբեր ճանապարհներով հաջողվում էր մեծ հարստություն կուտակել, տեր դառնալ շարժական ու անշարժ կալվածքների, այնուամենայնիվ, նրանց գույքը երբեք ապահովված չէր տիրողների կողմից բռնագրավվելու վտանգից:

Է

Հայ ժողովրդի իրավական, սոցիալական ու տնտեսական վիճակը ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում տեսանք, որ շատ ծանր էր: Սակայն պատկերը թերի ու անավարտ կլիներ, եթե հատուկ չանդրադառնայինք Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների հարկային քաղաքականությանը, չպարզեինք հայ ռայաթներից գանձվող հարկերի և տուրքերի տեսակներն ու չափերը:

Ջհանշահի թագավորության տարիներին Հայաստանի տարբեր

շրջաններում շարադրված հիշատակարաններում բազմաթիվ վկայություններ են գրանցվել հարկային կեղեքիչ քաղաքականության մասին: 1453 թվականից հետո, երբ Ջհանշահը սկսեց թամուրյանների դեմ իր արշավանքները, հպատակ ժողովուրդների, որոնց թվում և հայերի, հարկային լուծն առավել ծանրացավ:

1454 թվականին Բաղենից վանքում շարադրված մի հիշատակարանի մեջ ասված է, որ «յոյժ ճշգիւ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց ի ձեռն չար բռնակալացն թուրքաց» (Հշտկ. N 53, էջ 42. հմմ. նաև N 77, էջ 57): 1465 թվականին, Գեղարքունյաց գավառի Կած գյուղում շարադրած իր հիշատակարանի մեջ Հովհաննես անունով մի գրիչ հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի դառնացեալ ժամանակիս, յորում նեղիմք յանօրինաց բռնութենէ, եւս առաւել ի կրկնակի հարկապահանջութենէ» (Հշտկ. N 282, էջ 231):

Հարկային գիշատիչ այս քաղաքականությունը կարճ ժամանակով դադար առավ Աղ-կոյունլուների դինաստիայի հաղթանակից հետո: Ուզուն-Հասանը, անցնելով իշխանության գլուխ, հարկահանության գործը կարգավորելու և պետական պաշտոնյաների ու ավատատերերի անլուր չարաշահումների առաջն առնելու նպատակով, հրատարակեց օրինական հարկերի տեսակների, դրանց չափերի ու հարկահավաքման ձևերի մասին «Կանուն-նամե» կոչվող օրենքների գիրքը: Այս միջոցառումներով Ուզուն-Հասանի թագավորության առաջին տարիներին փոքր-ինչ բարվոքվեց հպատակ ժողովրդների տնտեսական վիճակը, սակայն շատ կարճատև ժամանակով:

Ուզուն-Հասանի թագավորության վերջին տարիներին, մանավանդ նրա անմիջական հաջորդ Յաղուբի ժամանակ, հարկահանության բնագավառում չարաշահումները մտան իրենց տրադիցիոն հունի մեջ, ոչինչ չթողնելով Ուզուն-Հասանի բարենորոգումներից:

Հպատակ ժողովուրդների դրությունն ավելի ծանրացավ դարավերջին, երբ Աղ-կոյունլուների պետությունը սկսեց հոգեվարքի ցնցումներ ապրել: 1497 թվականին շարադրված մի հիշատակարանի մեջ գրանցված են այսպիսի հատկանշական տողեր. «Ի շփոթ և ի դառն ժամանակիս, յորում նեղեն և հարկապահանջեն զքրիստոնեայքս յամենայն կողմանց վասն անչափ մեղաց մերոց» (Մատենադարան, ձեռ. N 4154, էջ 221ա):

1498 թվականին Վայոց-ձորում ապստամբում էր Յաղուբ փադիշահի

որդիներից՝ զանի հավակնորդ Մուրադ-խանը. սա «տանջէր զաշխա[րհա]կանս և զկարգաւորքս և ասէր. տուք դշիրդայն (իմա՝ ջիզիան), Թաւաուք-ի ջիզրայն, Թախիր-ի Թա[ս]լուք» (Մատենադարան, ձեռ. N 960, էջ 307ա):

Ամիրների ամիր Այբա-Սուլթանը, որ ԺԵ դարի 90-ական թվականներին ամենաազդեցիկ դեմքն էր Աղ-կոյունլուների փլուզվող պետության մեջ, 1498 թվականին «էած աւեր աշխարհի. գերեք տարէն մայն Գ. (3) ամսումն էառ» (Մատենադարան, ձեռ. N 3629, էջ 289բ) և այլն:

Կարելի էր մեջ բերել նաև բազմաթիվ այլ վկայություններ, որոնց մեջ, նման արտահայտություններով, հիշատակագիրները անդրադառնում են հարկապահանջության հարցին և խոսում ժողովրդի տնտեսական խիստ ծանր կացության մասին, սակայն հարկի տեսակների ու չափերի որոշման գործին այդ կարգի վկայությունները քիչ են օգնում: Շատ ավելի առատ նյութեր կան հայերեն լեզվով պահպանված նվիրաբերական ակտերի, հայ որոշ մատենագիրների աշխատությունների մեջ, ինչպես նաև Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու գահակալների պարսկերեն հրովարտակներում ու պաշտոնական այլ կարգի փաստաթղթերում, որոնց տվյալներն ամփոփված են Ի. Պետրուշևսկու և Հ. Փափազյանի արժեքավոր ուսումնասիրություններում (տե՛ս И. П. Петрушевский, Государства Азербайджана в XV веке, *նշվ. աշխ. էջ 190-192, և Հ. Փափազյանի «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» աշխատության ա պրակի բնագրերը ու հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինների բառարանը, էջ 103-123):*

Անդրադառնանք այդ նյութերին, խմբավորելով դրանք հարկային հիմնական տերմինների շուրջը:

1. Պետական ռենտա - հարկ. *Աղբյուրներում հիշատակվում է տարբեր անուններով՝* մալ, *կամ* մալոջահաթ, բահրա *կամ* բահրաչե *և* խարաջ:

Ռենտա-հարկի հիմնական մասն էր կազմում և գանձվում էր եկամտաբեր բոլոր օբյեկտներից՝ գյուղական համայնքի օգտագործման տակ եղող վարելահողերից ու արոտավայրերից, մասնավոր սեփականության դարձած այգիներից, արտերից և այլն:

Գանձվում էր բերքի կամ արդյունքի մեկ հինգերորդի չափով: Մատթեոս Ջուղայեցին իր «Մի գողանար» բնաբանով քարոզում ծածուկ գողերի

շարքին դասելով իշխանին տրվելիք «հաս»-ը չվճարողներին, հայտնում է, որ «օրէն է... ի Ե. (5)-էն մին իշխանին լինել, քանզի գինք արեան նոր են: Արդ, եթէ որ խորէ անդի, որպէս և մեծ է իշխանն՝ նոյնպէս և մեղք նորա. պարտական լինին արեան նորա (Մատենադարան, ձեռ. N 969, էջ 151բ):

Հարկահանների չարաշահումներից զերծ մնալու մտահոգությամբ, գյուղական համայնքները պայքարում էին մալի որոշակի չափ սահմանելու համար. և այդ հարկը հիմնականում գանձվում էր հարկային մատյաններում գրանցված անփոփոխ չափերով ողջ գյուղական համայնքից:

Թե ի՞նչ սկզբունքով էր համայնքի անդամների վրա բաշխվում ըստ հարկային ցուցակների ողջ գյուղական համայնքից գանձվելիք հարկը, հնարավոր է լինում ընդհանուր գծերով պարզաբանել շուրջ 1504 թվականին շարադրված մի հիշատակարանի տվյալներով: Այստեղ, մանրամասնորեն նկարագրվում են Արճեշի բնակիչների կրած տառապանքները քաղաքը գրավողների կողմից գրավվելուց հետո: Նոր բնակալները քաղաքացիներից պահանջում են ահռելի քանակությամբ՝ 400 բյուր, այսինքն՝ 4 միլիոն դահեկան մալ: Պահանջվող գումարը բաժանվում է բնակչության վրա ըստ շնչաքանակի ու զութանի: «Եւ անկան յամէն գլուխ ԴՌ. (4000) դեկան և յամէն զութան ԺՌ. (10.000) դեկան»,- գրված է հիշատակարանում:

Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ մալի բաշխման այս ձևը, երբ որպես հարկադրման միավոր հաշվի էին առնվում և՛ տվյալ վայրի բնակիչների շնչաքանակը, և՛ զութան (իմա՝ զութանի սարքը, անհրաժեշտ քանակությամբ, առնվազն 3 լուծ, եզներով) ունենալու հանգամանքը, Սեֆյանների նորամուծությունը չէր, այլ գալիս էր նախորդ շրջանից:

Եկամտաբեր այս կամ այն օբյեկտից գանձվող մալն ամբողջությամբ կամ նրա մի մասը պետության կողմից, որպես «ուլուֆե» (կեր, ռոճիկ), հաճախ, հանձնվում է զինվորական ու պետական պաշտոնյաներին: Նրանք, ունենալով իրենց ձեռքում համապատասխան փաստաթուղթ (հավալե), ներկայանում էին անձամբ, կամ իրենց կողմից լիազորված մարդկանց միջոցով և ստանում մալի իրենց հասկացված բաժինը՝ տվյալ գյուղական համայնքի տանուտերերից:

Պետական ռենտա-հարկի վճարման այս ձևը արտահայտությունն է

գտել հայ ժողովրդական առակներից մեկում. աղվեսը, գտնելով մի թղթի կտոր, տալիս է այն գայլին ասելով. «Այս չափ ժամանակս աշխատել եմ և զմարդիկ բարեխօս եմ ձգեալ և ի պարոնէն գիր և հուքմ եմ հանեալ, որ յամէն գեղ և յամէն գեհ, ուր հանդիպիս, ոչխար մի քեզ տան և յամէն տան հաւ մի քեզ բաժին հանեն... գնա, առ դրօ ոյոֆայն»: Առակի տարբերակներից մեկում աղվեսը բացատրում է, որ այդ թուղթը պետք է ներկայացնել «ի գեղին տանուտէրքն», այնտեղ նշված չափով «ոյոֆայ» ստանալու համար (Մ. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, էջ 85-86):

2. Կալվածատիրական ռենտա. Կոչվում է տասանորդ, մուլք, մալիքանե, բահրաշե-յե մալիքանե, ուջրաթ-ուլ մասալ:

Գանձվում էր բերքի կամ արդյունքի մեկ-տասներորդի չափով: Այս հարկի չափի մասին կարևոր տվյալ է պահպանվել 1480-ական թվականներին Վանում գրանցված ստորև բերվող ուշագրավ փաստաթղթի մեջ. «Ով հարք և եղբարք, ընթերցողք և լսողք յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զՎանայ տանուտէ[ր]քն՝ զխոջայ Արապշէն, և զխոջայ Խզրշէն, և զխոջայ Մուրատշէն, և զբալէս Խումարշէն, և զտանուտէրքս՝ զմեծ և զփոքր, որ ի Սուլիման-բէկի աւուրքս բազում բարութիւնս արին, զի ջանն խափանեցին, և զդահիանզդէն վերուցին, որ զմլքանէն տասնէն մէկ առնուն, ու զքահանայքն յանօրինաց հարկապահանջութենէն ազատեցին» (Մատենադարան, ձեռ. N 5315, էջ 576ա):

Փաստաթղթի մեջ խոսվում է քրիստոնյաների համար վիրավորական չվան կապելու տարբերանշանի վերացման և Վանի հոգևորականության դահյանզդահ (բառացի՝ տասն-տասնմէկ) հարկից ազատելու մասին: Հարկային նորայուր այս տերմինը, անտարակույս, համանիշ է մուլք, մալիքանէ և վերոհիշյալ մյուս տերմիններին, որոնք բոլորն էլ ունեին հողային ռենտայի կալվածատիրոջը վճարվող բաժնի իմաստ: Պարզվում է, ուրեմն, որ կալվածատիրական ռենտան գանձվում էր բերքի մեկ տասներորդ չափով («որ զմլքանէն տասնէն մէկ առնուն»):

Մլքի չափի մասին հիշատակության արժանի տվյալ է պահպանվել նաև Դադի վանքի զանգակատան արձանագրության մեջ: Դոփյան իշխանական տան մի քանի պայազատներ նվիրում են իրենց վանքին մի շարք կալվածքներ, ի ձեռն Ավագ եպիսկոպոսի: Նրանք արձանագրում են. «Տաւաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճաճաւոր էր, քանի որ իւր պէտք է

վարէ, տասածով ազատ է: Իսկ եթէ այլ մարդ վարէ, տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ» (Մ. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 209):

Այստեղից ևս պարզ է դառնում, որ հողատերը, տվյալ դեպքում վանքը, գանձում էր կալվածատիրական ռենտա բերքի մեկ տասներորդի չափով («տասանորդ»):

3. Գլխահարկ. Աղբյուրներում, կոչվող ջիզյա, երբեմն նաև խարաջ: Գանձվում էր, հիմնականում, ոչ մուսուլման հպատակներից՝ քրիստոնյաներից և հրեաներից, հենց որ նրանք չափահաս էին դառնում:

Որոշակի տարիք չկար գլխահարկման համար սահմանված: Հարկային պաշտոնյաները, որոշելու համար թե այս կամ այն պատանին ենթակա է հարկման, թե ոչ, կիրառում էին այսպիսի միջոց՝ թելով չափում էին երեխայի վիզը և ստացված երկարությամբ թելի ծայրերը ատամներով բռնել տալով փորձում էին այդ թելի օղակը անցկացնել նրա գլխով: Եթե թելը չէր անցնում գլխով, ապա պատանին համարվում էր չափահաս, ուստի հարկատու*:

Հարկագրման այս ձևը կիրառվում էր նաև ԺԹ դարում: Այդ մասին վկայում է Ստեփանոս Զմշկածագցի բանաստեղծ-գրիչն իր ընդարձակ հիշատակարանում, որից քաղվածքներ արեցինք քաղաքական պատմությունը շարադրելիս:

Նա գրում է.

«Հարկապահանջն յամէն տեղի
Քաշէ ծեծէ, զադզըս Արամի.
Խնդրէ արծաթ ՚ւ ընտիր ոսկի,
Յայնմ, որ չունի փող պըղնձի:
Կապուտ նշան եդ քրիստոնեայց,

* ԺԷ դարի նշանավոր պատմագիր Զաքարիա Սարկավագը կենդանի ու ճշմարտացի գույներով նկարագրում է հարկերի վերակացու Ասլան աղայի գործունեությունն իր հայրենի Քանաքեռ գյուղում, մանրամասն բացատրելով նաև այն հնարները, որոնցով այդ խորամանկ ու արնախում պաշտոնյան «որոշում էր» երեխաների չափահասությունը (տե՛ս Զաքարիա սարկավագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 66):

Չի բաժանին յանօրինաց.
Զմնեալն ի ցած տանել ասաց,
Զուանով չափել զվիզս մանկանց...»

ԺԵ դարի տարբեր տարիներից, գլխահարկի չափի մասին ունենք ուշադրության ու քննության արժանի վկայություններ:

Այսպես, Թովմա Մեծոփեցին իր «Պատմության» մեջ խոսում է Կարա-կոյունլուների փաշաներից մեկի՝ քուրդ ամիր Փիր-Ալու կամ Փիրի-բեկի մասին, որի ձեռքում էր գտնվում 1430-ական թվականներին Անուկ բերդը: Սա «տէր և իշխան» կարգվելով Քաջբերունյաց շրջանին (շուրջ 1435 թ.), Մեծոփեցու խոսքերով՝ «ձգեալ է զամենայն հաւատացեալս ի ներքոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն մարդագլուխ 40 թանկայ առնուն, թող զբահրայ և զշարէք՝ ի ծերոց եւ ի աղայոց, յորբոց եւ յայրեաց, յաղքատաց եւ ի տնանկաց» (Թ. Մեծոփեցի, էջ 111):

Հուլավյանների ժամանակ Իրանում և Այսրկովկասում կիրառվող դրամական միավորը դիրհեմը հայկական աղբյուրների դրամն էր, որը ԺԴ դարի սկզբներին կշռում էր 2,15 գր արծաթ, բայց դարի վերջին, Ջելաիրյանների ժամանակ, կորցրել էր իր կշռի կեսից ավելին և բաց էր թողնվում 1,05 գր և, նույնիսկ, 0,85 գր արծաթի քաշով: Լանկ-Թամուրի տիրապետության տարիներին (ԺԵ դարի սկզբին) տեղի ունեցավ դրամական համակարգի փոփոխություն, և Թամուրյանների տիրույթներում գործածության մեջ դրվեց Թամուրյան թանկան, որը կշռում էր 6,2 գր մաքուր արծաթ (Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана, Труды о-ва обследования и изучения Азербайджана, вып. 3, Баку, 1929, էջ 29):*

* Անհրաժեշտ է նշել սակայն, որ միջնադարյան Հայաստանում գործածվող դրամական, ինչպես և չափի ու կշռի միավորների որոշման ուղղությամբ դեռևս քիչ բան է արված, և ինչպես «թանկա» այնպես էլ «դրամ», «դանկեան» և մյուս տերմինների մասին այստեղ ասվածը ենթակա է հետագա ճշգրտման ու հիմնավորման: Այդ հույժ կարևոր աշխատանքը կատարելիս պետք է օգտագործել ինչպես Հայաստանի Պատմական թանգարանի և այլ թանգարանների դրամական հարուստ հավաքածուների նյութերը, այնպես էլ մեր միջնադարյան մատենագրության (որոնց թվում նաև հիշատակարանների) ընձեռած տվյալները:

«Թանկայի» կապակցությամբ նշենք 1480 թվականին շարադրված «Առակ իմաստասիրական և բանալի մտաց մարդկան» թվաբանական խնդրի մեջ եղող տվյալը, որը թվում է, օգտակար կարող է լինել դրամագետներին. այնտեղ խոսվում է ո՛չ սովորական, այլ դրամական ավելի խոշոր միավոր հանդիսացող՝ «բազատրական թանկայի» մասին և ասվում, որ «այն թանկէն բազատրական էր, որ մէկն Ե. (5) շահոսի էր, և էր ամէն թանկայ ԻԴ. (24) դէկան, և ամէն դէկան՝ Լ. (30) պլիկ» (տե՛ս հշտկ. N 565, էջ 444):

Որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև Երուսաղեմի ձեռագրերից մեկի 1413 թվականի հիշատակարանի ստորև բերվող հատվածը՝ ֆլորինի և դրամի հարաբերությունը պարզելու տեսակետից. «Ռ. (1000) դրամ, որ է ֆլորի ԻԲ. (22) և ավաճ նոր կապել, և ԹՃ. (900) դրամ ավաճ որ արծաթեցին, որ է ֆլորի Ի. (20), և ի Սամիսոն ավաճ ոսկիօրել Գ. (3) ֆլորի, որ է ջումլայ ԽԶ. (46) ֆլորի» (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, երրորդ հատոր, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1954, էջ 18):

Այսպիսով, Թ. Մեծոփեցու հիշատակած «Մարդագլուխ 40 թանկայ» գլխահարկի տակ պետք է հասկանալ 40X6,2, այսինքն՝ 248 գրամ արծաթ:

1464 թվականին Երզնկայի շրջանի Ավագ վանքում շարադրած հիշատակարանում, գլխահարկի մասին կարևոր տվյալ է հայտնում Ստեփանոս գրիչը: Նա գրում է. «Արդ, գրեցաւ սա... ի դառն և ի դժար ժամանակի, զոր անաւրէն ազգս տաճկաց զաւրացեալ կան ի վերայ քրիստոնէից և պահեն ի հալածանս: Այլ և չար զարձան քան զգազան և ծարաւիք են քրիստոնէից արեան, և նոր ի նորոյ չար յայտնեն քրիստոնէից, զի զխարաճն Դ. (4) ֆլորի արարին, և կապուտ առկին ի գլուխ քրիստոնէից, և զմեռեալն ի քաշ տան տանել, և այլ չարիք բազում խոկան և խորհեան ի վերա քրիստոնէից, զոր տէր Աստուած զաւարտն ի բարին առնէ» (հշտկ. N256, էջ 211):

Ֆլորինը կշռում էր 3,5 գրամ ոսկի, ուրեմն 1464 թվականին Արևմտյան Հայաստանում, ավելի որոշակի ասած՝ Երզնկայի շրջանում, գլխահարկ էին գանձում 4X3,5, այսինքն՝ 14 գրամ ոսկի, կամ մոտավորապես 240 գրամ արծաթ (եթե ոսկու և արծաթի հարաբերությունը ԺԵ դարում համարենք 1:17):

Հաջորդ տեղեկությունը, որ ունենք գլխահարկի չափի մասին, պահպանվել է 1491 թվականին Մոգնի գյուղում շարադրված հիշատակարանում: Այստեղ ասված է, որ Յաղուբ-բեկի թագավորության տարիներին «բազում չարք յայտնեցաւ, զի ամենայն կարգաւորէ՝ աբեղայից և յաշխարհականաց, ի միայնակեցից և սարկաւագաց հարկս պահանջէին կախելով և

չարչարելով Ճ. (100) թ[ան]կ[այ] առեր և պակաս» (Մատենադարան, ձեռ. N 6293, էջ 460ր):

ԺԵ դարի վերջին թանկայի կշիռն ընկել էր ամենուրեք: Շիրվանշահ Ֆառուխ-Յասարի (1462-1500 թթ.) կտրած թանկաները, օրինակ, սկզբից կշռում էին 3,0 գրամ արծաթ, իսկ վերջին տարիներին բաց էին թողնում նույնիսկ 1,90 և 1,75 գրամ կշիռ ունեցող թանկաներ: Այդպիսի մեծ անկում Աղ-կոյունլուների կտրած թանկաների կշռի մեջ չի նկատվում, այնուամենայնիվ, 1491 թվականի թանկան լավագույն դեպքում կարող էր կշռել 4,15-4,40 գ արծաթ (Е. А. Пахомов, նշվ. աշխ., էջ 29): Այսպիսով, 1491 թվականի հիշատակարանի մեջ նշված 100 թանկան, այն ժամանակ կիրառության մեջ եղող թանկաներով հաշված, բառ երևույթին կշռում էր մերձավորապես 415 կամ 440 գրամ արծաթ:

ԺԵ դարի տարբեր թվականներից գլխահարկի չափի մասին առկա տվյալների համադրությունից ստացվում է այսպիսի պատկեր.

1435 թ. - 40 թանկա - 248 գրամ արծաթ

1464 թ. - 4 ֆլորին - 14 գրամ ոսկի կամ 240 գրամ արծաթ:

1491 թ. - 100 թանկա - 415-440 գրամ արծաթ:*

* 1498 թվականին, երբ շատ տեղերում, ինչպես տեսանք, երեք տարվա մալը՝ երեք ամսում հավաքեցին, միևնույն ժամանակ հոկայական չափերով ավելացրին քրիստոնյաներից պահանջվող գլխահարկը: «Այլ և բազում հարկ ձգեցին ի վերայ քրիստոնէից, որ ի գլուխն ԲՌ. (2000) դանեկան: Եւ բազում տանջանօք չարչարէին զքրիստոնեայս՝ կախէին և ծեծէին և ի բանդ արկեալ պահէին յերկարս՝ մինչև չտային հարկս», հայտնում է ժամանակակից հիշատակագիրը:

Դանեկան դրամական հին տերմինը ԺԵ դարի հիշատակագիրների կողմից կիրառվում էր դրամական հիմնական միավորի՝ թանկայի փոխարեն: 1401 թվականին մի գրիչ հայտնում է, որ «առի շռէրանս գրոցս (այսինքն՝ գրչության վարձ - Լ. Խ.) ԲՌ. (2000) դանեկան, որ առնէ կէսն Ռ. (1000) դանեկան՝ թանկա Թարեզի» (ԺԵ դարի հիշտկ., Ա, էջ 15), այլ խոսքով, գրիչը «թանկա Թարեզի» դրամական տերմինն օգտագործում է «դանեկանի» իմաստով: Ուստի 1498 թվականին քրիստոնյաներից գանձել են 2000 դանեկան կամ թանկա գլխահարկ: Եթե նույնիսկ ենթադրենք, որ հարկը հավաքվում էր 1,75 գրամ արծաթ կշիռ ունեցող խիստ արժեզրկված թանկաներով, որ կիրառության մեջ էին այդ տարիներին Շիրվանում, դարձյալ 1498 թ. գլխահարկի համար կստանանք անտեղի ու անհավատալի մի գումար - 3500 գրամ արծաթ:

Պարզ է ուրեմն, որ Ջհանշահի թագավորության տարիներին (1435 և 1464 թթ.) 240-248 գրամ արծաթով գանձվող գլխահարկը ԺԵ դարի վերջին տասնամյակում գանձվում էր համարյա կրկնակի անգամ բարձրացված չափով (415-440 գրամ արծաթ):

Թվական այս տվյալները ավելի խոսուն կլինեն, երբ մեզ հաջողվի որոշել ամենակենսական մթերքների՝ հացի գինը ԺԵ դարի տարբեր տասնամյակներում: Փորձենք անել այդ՝ հիշատակարանների ընձեռած նյութերով:

Հովհաննես անունով մի գրիչ 1407 թվականին Խիզանում ընդօրինակած Հայսմավուրքի վերջում թողած հիշատակագրության մեջ մանրամասն թվական տվյալներ է հաղորդում այն մասին, թե ձեռագրի ընդօրինակության համար պատվիրատուն որքան գումար է ծախսել: Պարզվում է, որ ծախսվել է ընդամենը 3000 գրամ, բառ որում, այդ գումարի մի փոքր մասի՝ 200 գրամի դիմաց պատվիրատուն գրչին տվել է բնամթերք՝ 6 կապիճ ցորեն (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 71):

ԺԵ դարում, թանկայի հետ մեկտեղ Հայաստանում շրջանառության մեջ էր նաև դրամական դիրհեմ (դրամ) միավորը, որը, ինչպես ասացինք, ԺԴ դարի վերջերին կշռում էր շուրջ 1 գրամ արծաթ: Ուրեմն, մեկ կապիճ ցորենը Խիզանում 1407 թականին արժեցել է շուրջ 34 գրամ արծաթ:

Ցորենի գնի մասին մեր ձեռքի տակ եղած մյուս բոլոր վկայությունները, դժբախտաբար, վերաբերում են սովի ու անբերրիության տարիներին:

Այսպես, 1401 թվականին նույն Խիզանում շարադրված մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ «եղև սով սաստիկ ընդ ամենայն երկիր, որ բերէր կապիճ հացն Մ. (200) դր[ամ]» (ԺԵ դարի հշտկ., Ա, էջ 8):

1422 թվականին, երբ Աղ-կոյունլու Կարա Յուսուֆ օսմանը պաշարել էր Երզնկա քաղաքը, այնտեղ այնպիսի սով առաջացավ, որ «մոթ հացն Ը Ճ. (800) դրամ եղաւ և մոթ աղն ի ՌՄ Ճ. (1200) դրամ» (Նույն տեղում, էջ 289-290): Հաջորդ՝ 1423 թվականին «սաստիկ սով եղև». Բաբերդի շրջանում.

Նկատի ունենալով, որ ԺԵ դարի վերջին տարիներին, իրար հաջորդող փադիշահներն ու հոշվոր ցեղերի ավագանիները հարստահարում ու կողոպտում էին ժողովրդին ավազակների նման, գլխահարկի չափի մասին թվական այս տվյալը հնարավոր չենք համարում օգտագործել, որպես գլխահարկի որոշյալ չափ:

«մի մոմ հացն Փ. (800) դրամ եղև» - հայտնում է մի ճաշոցի նորոգող Հովհաննես քահանան (նույն տեղում, էջ 307):

1446 թվականին Բաղեշի շրջանում «եղև թանկութիւն մեծ, որ մին բեռն ցորեան եղև ի Կ. (60) թանկայ» (նույն տեղում, էջ 592):

1468 թվականին, դարձյալ Խիզանում գրված մի հիշատակարանից տեղեկություն ենք ստանում այն մասին, որ «թանգութիւն եղև յամենայն տեղիս և զկապիճ հացն ՃԻ. (120) թանկայ գնեցաք» (հշտկ. N 345, էջ 271):

1492 թվականին, հավանաբար Վասպուրականում գրված մի հիշատակագրության մեջ ասվում է. «Ո՜հ, ո՜հ, զայս դառն տարիս, ցորեանն ի Կ. (60) թկ. (թանկայ) ու չկա, կորեկն ու գարին ի Ծ. (50) թկ., և աղքատք ամէն խիստ տառապին և անիծեն զՄօֆին. թվ. ՋԽԱ. (1492)» (Մատենադարան, ձեռ. N 4782, էջ 220ա)*:

Բերված վկայություններից օգտվել կարողանալու համար անհրաժեշտ է պարզել՝ կապիճ, մոր ու բեռ ընդեղենի չափերի տարողությունը: Ցավոք, միջնադարյան Հայաստանում գործածվող չափի ու կշռի այս տերմինները, դրամական տերմինների նման, դեռևս չեն բացատրված համապատասխան մասնագետների կողմից, և միևնույն տերմինի մասին կան բազմաթիվ հակասական կարծիքներ ու ենթադրություններ:

Վերցնենք, օրինակ, կապիճ տերմինը: Ըստ ակադ. Հ. Մանանդյանի՝ այն կշռորդ է 1,224 կիլոգրամի կամ 979,8 գրամի (տե՛ս «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930, էջ 90). Ի. Ցասսի կարծիքով՝ կշռորդ է 1,25 լիտրի (տե՛ս Записки коллегии востоковедов, том I, Ленинград, 1925, էջ 492). Ստ. Մալխասյանցը «Հայերեն բացատրական բառարանի» 2-րդ հատորի հավելվածում հայտնում է, որ կապիճը «միջնադարյան դեղարանության մեջ գործածվող կշիռ է, հավասար

* Բացի հացի գների մասին մեջ բերված վկայություններից, մի հիշատակարան հնարավորություն է տալիս որոշելու կովի ու եզի շուկայական մերձավոր գինը 1413 թվականին: Հիշատակարանը շարադրված է ոմն Աբրահամի որդի Մարտիրոսի կողմից, որը հայտնում է, թե «Աւետարանս ծախեցի Յակոբ Քահանային Ո. (600) դանեկան. գինս առի մին կով ու մին եզն» (ԺԵ դարի հշտկ., Ա., էջ 160): Ուրեմն, մեկ կովն ու եզը ԺԵ դարի առաջին տասնամյակներում հնարավոր է եղել գնել 600 դանեկանով:

2913,240 գրամի», կան և ուրիշ կարծիքներ: Դժբախտաբար այս կարծիքներից և ոչ մեկը չի կարող ճիշտ համարվել ԺԵ-ԺԶ դարերում Հայաստանում գործածված կապիճ չափի նկատմամբ: Այս բանում համոզվելու համար բավական է ծանոթանալ ԺԶ դարից պահպանված նվիրատվական մի արձանագրության հետ, ուր խոսվում է Ապարանից սուրբ Նշան վանքին ոմն մահդասի Գուլամիրի կողմից «տարին Ե. (5) կապիճ հաց» տալու մասին:

Արդ, եթե ընդունենք ակադ. Հ. Մանանդյանի, Ի. Ցասսի կամ Ստ. Մալխասյանցի կարծիքները կապիճի տարողության մասին, ապա ստիպված պետք է լինենք հավատալու, որ մահդասի Գուլամիրը իրավունք է ձեռք բերել հիշատակվելու Ապարանից վանքից վեր առաքվող աղոթքներում տարին 5-6 կամ, լավագույն դեպքում, շուրջ 15 կիլոգրամ ցորեն տալու պայմանով, մի բան, որ շատ հեռու է հավանական լինելուց:

Կարծում ենք, որ կապիճի չափը որոշելու համար կարևոր նշանակություն ունի Երեմիայի «Բառգրքի» տվյալը. այստեղ կապիճի դիմաց, որպես բացատրություն գրված են «մարզան» և «սոմար» տերմինները, որոնք, հայտնի է, նույնպես ընդեղենի չափեր են (տե՛ս Հ. Ավգերեան, «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց», Վենետիկ, 1821, էջ 109):

Սոմարը տարածված չափ էր Երևանի խանության մեջ ԺԷ-ԺԹ դարերում և կշռորդ էր 3 փութի կամ 50 կիլոգրամի (տե՛ս օրինակ, В. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII вв., Ереван, 1940, стр. 113):

Մարզանը, որքան մեզ հայտնի է, կիրառման մեջ է եղել Սյունիքում և Ղարադաղում: Այժմ էլ ղարադաղցիները գործածում են այն որպես 36 կիլոգրամի կշռորդ: Հնարավոր է ենթադրել, որ Երեմիայի ժամանակ (ԺԷ դարում) մարզանը ավելի մոտ է եղել սոմարին և, թերևս, նույնպես կշռորդ է եղել 3 փութի: Այսպիսով հանգում ենք այն եզրակացության, որ կապիճը ևս կշռորդ է եղել մերձավորապես 3 փութի:

Այս եզրակացությունը հաստատվում է հայ գյուղացու տնտեսության ու արտադրական կենցաղին լավատեղյակ Ս. Եղիազարովի տվյալներով. իր «Исследование по истории армянского права, публичного и частного» (вып. I, Киев, 1919) ուսումնասիրության մեջ Եղիազարովը կապիճը համարել է բեռի (6-7,5 փութ) կես մասը և նույնացրել է քալի հետ.

«*Канич,- գրում է նա,- вероятно, равнялся 3 и 3 ¼ пудам, что носильщик мог носить на спине» (նույն տեղում, էջ 89):*

Կարծում ենք, որ ճիշտ պետք է համարել նաև մող *կամ* մոր *չափին Եղիազարովի տված բացատրությունը. ըստ նրա «մողը, նույնն է պարսկերեն՝ սոմարը, կշռում է 10 լիտր կամ 120 ֆունտ, այսինքն՝ 3 փութ» (նույն տեղում):*

Որ կապիճն ու մողը միևնույն տարողությունն ունեցող չափի տարբեր շրջաններում գործածվող անուններ լինելով, կշռում են շուրջ 3 փութ, կարելի է համոզվել նաև հետևյալ դատողություններով: Միջնադարում ցորենն ու ալյուրը վայրից վայր էին տեղափոխվում ու վաճառահանվում շուկաներում գրաստներով (մեծ մասամբ ավանակներով), որոնց բարձում էին երկու պարկ, յուրաքանչյուրը՝ 3-3,5 փութ ծանրությամբ: Իսկ որ մի պարկը միջնադարում կոչվում էր մող, այդ մասին ուշագրավ տվյալ ունենք հայկական ժողովրդական առակներից մեկում: Ծանոթանանք այդ առակի մեզ շահագրգռող հատվածին. «Այր մի յամէն տարի հարիւր մոթ հաց վաստակէր և այնու զռոճն իւր կառավարէր: Եւ ի միում տարւոջ ի հարիւրէն քսան պակաս հաց եղև. նա անդադար հոգայր և կոծէր զինքն, թէ այսչափ հացովս ի նորն զիա՞րդ կարեմ ելանել: Իսկ աստուած յանդիմանել կամեցաւ զնա. առաքեաց զհրեշտակ իւր և ասաց նմա, թէ արի, երկու մոթ հաց բարձիր և տար կնոջ մի այրւոյ...: Եւ նա բարձեալ գրաստուն՝ տարաւ առ այրի կինն» և այլն (Ն. Մառ, Ժողովածուք առակաց Վարդանայ, Բ, էջ 243):

Պարզ է ուրեմն, որ սույն առակի տվյալներով ևս, երկու մող ցորենը մեկ գրաստի բեռ է, *այլ խոսքով մողը, ուստի և կապիճը կշռում է 3-3,5 փութի, իսկ բեռը՝ 6-7 փութի:*

Վերադառնանք այժմ հացի գների մասին վերը բերված տվյալներին. դրանցում գործածված դրամական տերմինները մեզ արդեն ծանոթ են. չափ ու կշռի տերմինների այս բացատրությունից հետո 1401, 1422, 1423, 1446, 1468 թվականների սովի ու սղության տարիների նկատմամբ ստանում ենք հացի գնի տատանման այսպիսի պատկեր.

1401 թ.	*3 փութ հացը արժեր*		*200 դրամ արծաթ*		
1422 թ.	«	«	*800*	«	«

1423 թ.	«	«	*800*	«	«
1446 թ.	«	«	*186 (?)*	«	«
1468 թ.	«	«	*744*	«	«

Ոչ սովի տարվա վերաբերյալ ունենք վկայություն միայն 1407 թվականից, երբ 200 դրամի դիմաց տրվել է 6 կապիճ հաց. կամ այլ խոսքով մեկ կապիճ (3 փութ) հացն արժեցել է 34 դրամ արծաթ: Կարծել, թե ԺԵ դարի հաջորդ առատ տարիներին հացի գինը, փոքր շեղումներով, տատանվել է 34 դրամ արծաթի շուրջը, չենք կարող, նկատի ունենալով անընդհատ պատերազմները, սղությունները և քաղաքական ու բնական այլ արհավիրքներ: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ընդունենք, որ լավ բերքի տարիներին ցորենը վաճառվել է 1407 թվականի գնից դիցուք մեկուկես անգամ թանկ, 50 դրամով, դարձյալ գլխահարկի չափի համար կստանանք պատկառելի թվեր:

1435 թվականին տեսանք, որ գանձվում էր 248 դրամ արծաթի չափով գլխահարկ. այդ դրամով կարելի էր գնել շուրջ 15 փութ ցորեն:

1491 թվականին, գանձվում էր գլխահարկ 415-440 դրամ արծաթի չափով. այդ գումարով կարելի էր գնել շուրջ 28 փութ ցորեն:

Մենք հեռու ենք այն մտքից, թե ստացված այս թվերը անվիճելի են: Այնուամենայնիվ նրանք հնարավորություն են տալիս հաստատապես պնդելու, որ գլխահարկը հայ հպատակներից գանձվող ամենածանր հարկերից մեկը լինելով ԺԵ դարի ընթացքում շարունակ բարձրացվել է և դարի վերջում գանձվել, 1435 թվականի համեմատությամբ, շուրջ երկու անգամ ավելի:

4. Թաֆավութ-և ջիզյա. *Բառացի նշանակում է «ջիզյայի տարբերությունը»: Այսպես էին կոչվում գլխահարկի վրա ժամանակի ընթացքում բարդված գումարները, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին ջիզյայից զատ ու զատվում, որպես առանձին պարտավորություն (Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, էջ 109):*

Վերը վկայակոչեցինք արդեն 1498 թվականի այն հիշատակարանը, ուր տվյալ կար Մուրատ-խանի մասին, որը «տանջէր զաշխա[րհա]կանս և զկարգաւորս և ասէր. տուք զջիզրայն, թաֆաութ-ի ջիզրայն, թախիր-ի

թալալուլթ»։

5. **Չերիք** (գրված՝ «չարեք» ձևով)։ Բառացի նշանակում է «աշխարհազոր», ըստ երևույթին, գանձվում էր ոչ մուսուլման սեփականատեր հպատակներից, այն բանի համար, որ նրանք ազատված էին զինվորական ծառայությունից։

Չերիք վճարելու պարտավորությունից ազատ չէին նաև հայ վանական հաստատությունները. նրանք ևս վճարում էին «ուխտերոյ չարէք»։

1476 թվականին մեզ արդեն ծանոթ հիշատակարանում Վանի «բարեպաշտ և հաւատարիմ» սանուտերերը հիշատակության արժանի են համարվում նաև այն բանի համար, որ «ամէն եկեղեցեաց ուխտերու չարէքն բաղլեցին», այսինքն՝ վերացրին (հշտկ. N506, էջ 405)։

Նույնպիսի բարեգործության մասին է խոսվում նաև անթվական մի արձանագրության մեջ: «Քրիստոս Աստուած,- գրված է այնտեղ,- քո սուրբ յարութեամբդ ողորմեա ամենայն հաւատացելոց, եւ առաւել Դավլաթբարին և Խուրամին, Միրաշին և Թումին, և ծնողաց նոցին, և ամենայն ազգականացն, որ ուխտերոյ չարէքն բաշխեցին, արարիչն աստուած զիւրեանց մեղքն թողու, ամէն: Ընդ նոսին զեռնկանց Կարապետն, որ միջնորդ եղև այս բարի գործոյն, ամէն» (Մատենադարան, ձեռ. N 4674, էջ 512ա)։

Հիշատակության արժանացած անձինք, լինելով հարկահանության կապալառուներ կամ պաշտոնյաներ, ազատել են մեկ դեպքում Վանի եկեղեցիների, մյուս դեպքում ինչ-որ վանական հաստատության կալվածքները (ուխտերը) չարեք (իմա՝ չերիք) հարկից, նրանց փոխարեն, ըստ երևույթին, իրենք պարտավորվելով վճարել այդ հարկը։

Շահ-Իսմայիլ Ա-ի 1505 թվականի հրովարտակում կա «չերիքի ոսկի» («զար-և չերիք») հարկային տերմինը, որից պետք է հետևեցնել, որ այդ հարկը գանձվում էր դրամով (Մատենադարանի պարսկ. հրովարտակները, էջ 55)։

6. **Իխրաջաթ.** Նշանակում է արտակարգ ծախսեր. այս տերմինի տակ հարկային մատյաններում գրանցվում էին բոլոր այն տուրքերը, որոնք հպատակները վճարելու էին զինվորական, վարչական ու պետական պաշտոնյաներին, կամ այն պարտավորությունները, որոնք ունեին հպատակները նույն անձանց նկատմամբ: Ըստ Ի. Պետրուշևսկու, գանձում էին 6 դինար եկամտի դիմաց 1,5 դինար, այսինքն եկամտի 25%-ը (И. П. Петрушевский, Из истории героической борьбы азербайджанского народа в XIII-XIV вв., Баку, 1841, էջ 47)։

Դրանց մեջ մտնում էին.

ա) **Ալաֆե և ուլուֆե.** Տուրք, որ հատուցում էին հպատակները երթևեկող զինվորական ու պետական պաշտոնյաներին, որպես նրանց ու նրանց ձիերի կեր (И. П. Петрушевский, Внутренняя политика Ахмеда Ак-Коюнлу, նշված ժողովածու, էջ 147, Государства Азербайджана, նույն տեղում, էջ 191, Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկ. հրովարտակները, էջ 103)։

բ) **Կոնալղա.** Զինվորականներին, արքունի սուրհանդակներին և պաշտոնական գործերով երթևեկող այլ անձանց ու նրանց թիկնապահներին հյուրընկալելու պարտավորություն (И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 147, 191, Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 111)։ Գռփող ու հարստահարող այդ «հյուրերին» հայ ժողովուրդը սրամտորեն «բռնահյուր» անունն էր տալիս (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N, 3, էջ 73-74)։

գ) **Ուլաղ.** Զինվորականներին ու պետական պաշտոնյաներին փոխադրական միջոցներ, հիմնականում ձիեր տրամադրելու պարտավորություն: Գրաստների հավաքագրում կատարվում էր նաև պատերազմների ու զորաշարքերի ժամանակ (И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 147, 191, Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 121-122)։

7. **Շիգար ու Բիգար.** Այսպես էր կոչվում բերդերի, ճանապարհների ու ջրանցքների շինարարության, ինչպես և պատերազմների ժամանակ հպատակների անվճար աշխատանք կատարելու պարտավորությունը: Հայկական աղբյուրներում հայտնի է «կոռ» անունով։

Մաթևոս Ջուղայեցին նկատի ունենալով այդ պարտավորության ավերիչ հետևանքները գյուղական տնտեսության համար, իրավամբ նկատում է, որ կոռից ազատվելու հույսով լինում էին ուրացության դեպքեր: «Քանի՞ են պատճառ ուրացութեան» հարցին տված իր պատասխաններից մեկում նա ասում է. «Վասն տառապանաց, զոր կոռ առեն, զի ազատ լինիցին» (Մաթ. Ջուղայեցի, Քննութիւն գործոց առաքելոց, Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 140ա)։

Առաքել Սյունեցին իր «Երգ խրատականի» մեջ, ցանկանալով փոքր-

ինչ գավեշտական պատկերներով ցույց տալ, որ ժողովուրդը դժկամությամբ է հաճախում եկեղեցի և սրբավայրը դարձնում է կատակի վայր, գրում է.

«Ոմանք ի ժամ գան և նստին,
Կէսք մի ննջեն և մրափին,
Ոմանք կցեալ ձեռաւք կանգնին
Եւ խաչ չհանին ի յերեսնին...
Զի չեն եկեալ յուսով ի ժամ,
Այլ կռո հաշւին և կամ տուգանս»
(Մատենադարան, ձեռ. N 7777, էջ 186բ):

Բացի «բիգարից» հպատակները պարտավոր էին ձրի աշխատել նաև զանազան արտակարգ պատահարների ժամանակ («ավարիզաթ») և կամ այդ պարտավորության դիմաց վճարել դրամական տուրք (Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 105):

8. Մուսուլմանական տներին, ինչպես և այլ առիթներով, «Նվեր» անվան տակ ավատատերերն ու պետական պաշտոնյաները հպատակներից գանձում էին հատուկ տուրքեր: Դրանցից էին.

ա) **Փիշքաշ**. Նվերներ այլևայլ առիթներով.

բ) **Նովրուզի**. Նոր տարվա առաջին օրը հատուցվող նվեր-տուրք,

գ) **'Իդի**. Մուսուլմանական տներին հատուցվող նվեր-տուրք:

դ) **Սավարի**. Տուրք, որ գանձվում էր այն դեպքում, երբ տվյալ վայրից անցնում կամ այնտեղ իջևանում էր փադիշահը, ինչպես և բարձրաստիճան պետական պաշտոնյաներից որևէ մեկը:

ե) **Սալամի** կամ **սալամանէ**. Շնորհավորական տուրք, որ տրվում էր ավատատերին տվյալ վայրը այցելելու կապակցությամբ և այլն (դրանց մասին տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 147, 190-191, Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 116, 119, 122):

Այս տուրքերից մի-երկուսի մասին հայկական աղբյուրներում ևս պահպանվել են ակնարկներ:

Մատթեոս Ջուղայեցին, օրինակ, հայտնում է, որ «Յորժամ թագաւորի դէմ ընդառաջ գնամք՝ ընծիւք գնամք և եղն բարձրացեալ սպանանեմք ընդդէմ նորա» կամ «Յարժամ թագաւորի դէմ ընդառաջ ոչ գնան բարեաւ

(իմա՝ նվերներով) նորա պատուհասեն» («Քննութիւն գործոց առաքելոց», Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 265ա-266բ):

Գրիգոր Տաթևացին իր քարոզներից մեկում տվյալ է հաղորդում այն մասին, որ «մեծամեծներին» (իմա՝ ավատատերերին ու պետական պաշտոնյաներին) որևէ առիթով ներկայանալու կամ խնդիրք անելու դեպքում նրանց «ազերս» (նվեր) են մատուցել: Նա գրում է. «Յորժամ ազերս տանեն մեծամեծաց, և զայն ևս կաշառ է. թէ առնու զայն և զնորա խնդիրսն կատարէ, կամ փրկէ ի զրկողաց, կամ փոխարէնս կշռէ՝ այնպիսին բարի կաշառ է: Եւ չար է յորժամ առնուն զկաշառս և զազերս և զնորա (ազերստուի) կամսն ոչ կատարեն» (Գիրք քարոզութեան, ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 461): Հովհան Ծործորեցին ևս խոսում է այս մասին. «Որպէս որ առ իշխան մատուցեալ՝ նախ զազերս իւր նուիրէ, որով համարձակեալ զխնդրուածս հայցէ»,- գրում է նա (Մկն. սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, Կ. Պոլիս, 1825, էջ 137):

9. **Ռասմ** կամ **ռուսումաթ** (կարգ, սովորույթ): Այսպես էին կոչվում այն տուրքերը, որ գանձվում էին հպատակներից պետական բարձրաստիճան ու կրտսեր պաշտոնյաների օգտին, որպես հավելյալ ռոճիկ (Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 119): Դրանցից էին.

ա) **Ռասմ աս-սուդուր**. Տուրք մահմեդական հոգևորականության գլխավորի - սադրի օգտին.

բ) **Ռասմ ալ-վիզարաթ**. Վեզիրի օգտին.

գ) **Ռասմ-ե դարուղեգի**. Ոստիկանապետի օգտին.

դ) **Ռասմ-ե ումմալ**. Ֆինանսական պաշտոնյաների օգտին:

1458 թվականին ընդօրինակված մի Հայսմավուրքի հիշատակարանում թվարկվում են այդ տուրքերը կամ «չար բադիաթները», լրացուցիչ հարկային տերմինների հետ միասին: Հիշատակարանում ասված է, որ ոմն արժանավոր տանուտեր Հայրապետ «արար բարի յիշատակ հոգւոյ իւրոյ, զի խէսօք (*) կարգաւորքն ազատ արար ի հարկէ և ի չար բադիաթէ այլազգեացն՝ **ի դառուղից** և **ի պարճէ**, **ի մուխթըսիբէ** և **ի թամղաչոց**: Զամենայն յիւր տանէն երետ և խափանեաց» (Նոր-Ջուղա, ձեռ. N 423):

Այս հիշատակարանի տվյալներով կարող ենք լրացնել վերոհիշյալ ցանկը երեք նոր «ռասմերով».

ե) **Պարոնի** օգտին.

գ) **Մուհթասիբի** օգտին (հարկերն ու տուրքերը ճշտող, շուկայի չափին ու կշռին հետևող պաշտոնյա).

է) **Թամղաչու** օգտին (արհեստավորների ու առևտրականների արդյունքի վրա հսկող և բաժ հավաքող պաշտոնյա):

10. **Չիլթաղաթ** (արաբ. գրպարտություն) ընդհանուր անունով էին կոչվում այն բոլոր ապօրինի տուրքերն ու տուգանքները, որոնք կեղծ ու պատիր զանազան հնարների դիմելով, «զուր ու բուխտան ասել[ով] ի վերայ անպարտ արանց» (Մաթ. Ջուղայեցի «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից», ձեռ. N 5232, էջ 70բ) շորթում էին հպատակներից պետական պաշտոնյաները:

Պետք է ենթադրել, որ ապօրինի այդ տուգանքները բարդվում էին հիմնականում քրիստոնյա հպատակների վրա: Այս ենթադրության համար բավարար հիմք է տալիս Մատթեոս Ջուղայեցին, ուրացության պատճառներից մեկն էլ համարելով տուգանքն ու ղալանը: «(Ուրացութիւն լինի) վասն տուգանաց ու ղալանի»,- գրում է նա (Մատենադարան, ձեռ. N 1402, էջ 140ա):

Ստեփանոս գրիչը 1456 թվականին Ռշտունիքի Շատվան գյուղում ընդօրինակած Մաշտոցի հիշատակագրություններից մեկում հայտնում է, որ իր միջոցներով կառուցել է տվել ժամատուն, որի համար կողոպտվել ու քարկոծվել է և ստիպված է եղել վճարել 200 թանկա ղալան: «Բճ. (200) թանկ[այ] այլ ղալան առին վասն դորա»,- գրում է նա (Հշտկ. N 102, էջ 74 տողատակ):

1488 թվականին մի Ճաշոց ընդօրինակող Հովհաննես գրիչն ի նկատի ուներ նաև անօրինակ չափերի հասած «չիլթաղաթը», երբ իր ժամանակը բնորոշում էր հետևյալ խոսքերով. «Ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում կամք ի նեղութիւն և ի տառապանս ի ձեռն այլասեռից ազգաց, զի զամենեսեան չարչարեն և նեղեն, տուժեն և տուգանեն, կեղեն և կեղեքեն, և այլ ազգի-ազգի վշտաց տանջեն» (Մատենադարան, ձեռ. N 4805, էջ 417ա):

11. **Թամղա.** Այսպես էր կոչվում արհեստանոցներից, հանույթի մշակման այլ օբյեկտներից, ձիթհաններից, ինչպես նաև ձկնորսարաններից գանձվող հարկը:

Թամղան գանձում էին ֆինանսական հատուկ պաշտոնյաներ՝ թամ-

ղաչիները, որոնք կապալով վերցնելով այդ հարկի գանձման պարտավորությունը, չարաշահելով իրենց պաշտոնը՝ մեծապես շահվում էին դրանից: Հայկական քաղաքներում ու քաղաքատիպ վայրերում թամղաչի էին դառնում սովորաբար հայ խոջաները: ԺԵ դարի հիշատակարաններում և կալվածագրերում բազմիցս խոսվում է հայ թամղաչիների մասին, որոնք խարդախ ճանապարհներով կուտակած իրենց հարստություններից փշրանքներ տալով հայ վանական հաստատություններին, «բարեգործի» համբավ էին ապահովում իրենց համար:

Ծանոթանանք բազմաթիվ հայ թամղաչիներից մի քանիսի հետ.

1476 թվականին Վանում թամղաչի էին Էգզարը, Շաղավաթը, Մուսեխը և Սմբատը: Սրանք պարտավորվում են Վանի եկեղեցիներն ազատել ձկան և ընկույզի թամղայից՝ «զձկան թամղէն և զընկուզի բաթլեցին»*,- գրված է բազմաթիվ նվիրատվությունների մասին տվյալներ պարունակող բովանդակալից հիշատակարանի մեջ (Հշտկ. N 506, էջ 404):

Մերձավորապես նույն տարիներին մի այլ թամղաչի՝ Խոսրով որդի Մուրատը զիջում է Վանի Պողոս-Պետրոս եկեղեցուց գանձվող ձկան թամղայի կեսը՝ դարձնելով այն 4 դահեկան, իսկ Քարափոս կոչվող ձկնորսարանի թամղան՝ լրիվ վերացնում:

Այս բարեգործության մասին պահպանվել է երկու տարբեր գրանցում, մեկը Պողոս-Պետրոս եկեղեցուն պատկանող մի Հայսմավուրքի, իսկ մյուսը մի Ճառընտրի մեջ:

Ահա այդ գրանցումները.

1. «Քրիստոս Աստուած ողորմեա թամղաչի Մուրատին և ծնողաց նորին՝ հօրն Խոսրովին և մօրն Ամպար-խաթունին, որ զխէքըներուն հարահաղն վերոց և զձկան թամղէն արար չորս դեկան, ով որ յանդգնի՝ նզոված եղիցի» (Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 224ա):

2. «Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զթամղաչի Մուրատն և զծնօղքն իւր զԽոսրովն և զԱմբար-խաթունն, և միամիտ սրտիւ աստուած-ողորմի տուէք, որ զՎանայ խէքըներու խորի հաղն, զձկան կէս թամղէն ի վեր եհան ու զՔարափոսայ թամղէն խափանեց...» (Մատենադարան, ձեռ. N 1524, էջ 519ա):

* Արաբ. «բաթլ» - بطل բառից՝ «անվավեր», «չեղյալ» նշանակությամբ:

Այս գրանցումներում, բացի ձկան թամղայից, հիշատակվում է ևս մի հարկ, որի գանձումը դարձյալ կատարվել է թամղաչիների կողմից: Մեկ դեպքում այն գրանցված է «խէքներու խորի հաղ», մյուս դեպքում «խէքրներուն հորահաղն» տարբերակներով:

Բարբառային հնչյունափոխությամբ աղավաղված հարկային նորայուր այդ տերմինը, ըստ երևույթին, պետք է վերծանել «ճեճճերի ճորի ճախ» ձևով, դրա տակ հասկանալով ջուլհակներից գանձվող ճարկը:

Այսպիսի մեկնաբանության տալու համար թերևս հիմք կարող են ծառայել նաև Ավանի եկեղեցու 1285 և 1287 թթ. արձանագրությունները, որոնց մեջ կա «հորակտաւ ի ջուլհակէ» կամ «զջուլհակերոյն հորակտան» հարկային տերմինը, որը համեմատելի է քննության նյութ մեր «խէքրներուն հորահաղ» տերմինի հետ (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18, 21):

Վերոհիշյալ N 5313 Հայսմավուրքում, բացի մեջ բերված ուշագրավ գրանցումից, կան և բազմաթիվ ուրիշները, որոնցից հատուկ արժեք է ներկայացնում Եգգանրաղշ Աղթամարցու և նրա եղբայրների բարեգործությունները գովառող և ստորև բերվող գրանցումը.

«Դարձեալ յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱղթամարցոնց Եգգանրաղշն, և զեղբայրն զՄուրատն և զԽալիֆէն, և զծնաւղսն իւրեանց զՄիրանշէն, զԿիրակոսն. յիշեցէք լի բերանով և աստուած-ողորմի ասացէք, որ զաղչկան խարանեց խաղն և զէգեաններուն բաղլեց: Քրիստոս աստուած զերկնից արքայութիւն իւրն պարգևեացէ և իւր ծնօղացն, ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱղթամարցոնց Էգգանրաղշն, որ զտախրկի դրամն ու զիգու գինին բաղլեց: Քրիստոս Աստուած զինքն ի յանաւրինաց ազատէ և որ յետ սորա յանգգնի և աննէ՝ զմասն Յուդային առնու և զխաչահանուացն, ամէն...» (Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 588):

Անտարակույս, Եգգանրաղշ Աղթամարցին ևս նշանավոր մի թամղաչի է, նրա «բաղլած», այսինքն չեղյալ համարած հարկերը չորսն են.

1. Խարանեց խաղ (ուղղելի՝ հախ)
2. Էգեաններու [հախ]
3. Տախրկի դրամ
4. Իգու գինի

«Խարանեց հախ»-ի կամ, սրբագրված ձևով «հարաանեհարկի»

մասին խոսք կլինի ստորև:

«Էգեաններու հախ»-ը սրբագրելի է «այգեանների հախ» ձևով: Եթե այգեստան ասելով հասկացել են այգու մեջ եղող հնձանը, ապա պետք է ենթադրել, որ հատուկ հարկ է գանձվել հնձաններից:

Դժվար բացատրելի է նաև «տախրկի դրամ» հարկային տերմինը: Հավանաբար այստեղ գործ ունենք ճախարակ բառի բարբառային ձևերից մեկի հետ, ուստի և «տախրկի դրամը» գանձվել է ճախարակով թել մանողներից: «Իգու, (իմա՝ այգու) գինի» տերմինը բացատրության կարոտ չէ:

Մեզ արդեն ծանոթ է Լալա-Միրանշահի 1481 թվականի հիշատակարանը, ուր խոսք կա «ձիթահացներու» (իմա՝ ձիթհանների) հարճի (խարճ-հարկը) սուրբ խաչին և այլ եկեղեցեացն ձիթագին» տալու մասին:

Պարզ է ուրեմն, որ հատուկ հարկ է գանձվել նաև ձիթհաններից:

ԺԶ դարի անթվական մի արձանագրությունից պարզվում է, որ թամղա էին գանձում նաև այն անձնավորություններից, որոնք իրենց «տավարը» վարձու էին տալիս: «Դարձեալ յիշեցէք,- գրված է այնտեղ,- հաւատարիմ տանուտէրն Խոջայզարէն, զԹումէն և զճաղբայգին, զինչ որ տաւար տան վարձու՝ նայ թազմէն (իմա՝ թամղէն) բաթալեցին» (Մատենադարան, ձեռ. N 4880, էջ 296ա):

Այսպիսով, ԺԵ դարի սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս որոշելու թամղա կոչվող հարկի մի շարք տարատեսակները, որոնք գանձվում էին ձկնորսարաններից, ձիթհաններից, հնձաններից, ջուլհականոցներից, ճախարակ բանեցնողներից և այլն:

Շատ ավելի սուղ են մեր տվյալները վաճառականներից գանձվող թամղայի մասին: Վենետիկցի անանուն վաճառականն իր ուղեգրության մեջ հայտնում է, որ Պարսկաստանում միշտ գոյություն է ունեցել այսպիսի կարգ. «Յուրաքանչյուր վաճառական, որ քաղաքում մի խանութ ունի, վճարում է օրական կամ երկու և կամ վեց սպիտակ, կամ մինչև իսկ մի դուկատ, համապատասխան իր գործին. նույնպես յուրաքանչյուր արհեստի վարպետի վրա մի վճարում է դրվում, համաձայն իր վիճակի» (Ուղեգրություններ, Ա, էջ 314): Այնուհետև նույն հեղինակը հայտնում է, որ առևտրականներից գանձվում է բաժ, վաճառվող ապրանքի հինգ տոկոսի չափով, եթե նա մուսուլման էր, կրկնակի չափով ավելի (10 տոկոս), եթե նա քրիստոնյա էր (նույն տեղում, էջ 315):

12. Բացի պետական ու կալվածատիրական վերոհիշյալ հարկերից ու տուրքերից, գյուղացիությունը պարտավոր էր զանազան տուրքեր վճարել նաև գյուղական պաշտոնեությանը՝ ռեսին, գզրին և այլն: Այդ տուրքերի մասին ունենք մի քանի կողմնակի վկայություններ ԺԴ, ԺԵ և հետագա դարերի հիշատակարաններից:

Այսպես, 1313 թվականին Վսկայ գյուղի (Տայքո՞ւմ) տանուտեր Դավիթը պարտավորվում է գյուղից դուրս հարս տանելու դեպքում նախկինում գանձվող 12 ստակ դրամի դիմաց՝ վերցնել 6 ստակ («... հարս տանի՝ ԺԲ. ստկէն Զ. թողել է, Զ. կառնում» գրված է հիշատակագրության մեջ, տե՛ս ԺԴ դարի հշտկ., էջ 95):

Ամենայն հավանականությամբ այս նույն հարկն է հիշատակված նաև Բջնիի Զաքարիա իշխանի (ԺԴ. դար) փորագրել տված արձանագրության մեջ, ուր հիշատակված են ամիրահարկ, հարսանեհարկ, կոխահամար, կալաթաղար, սայլի սղն. (սպիտակն) և մահկանէ հարկային տերմինները (Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 273, Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 226):

ԺԵ դարի անթվական մի արձանագրության տվյալներով Մթայ (=Մո՞ւթ) գյուղի ռես Ստեփանոսը հրաժարվում է գանձելուց «դաղչկան յաղկն» կոչվող տուրքը (Մատենադարան, ձեռ. N 4814, էջ 129ա): Ըստ երևույթին այս տերմինի տակ ևս պետք է հասկանալ գյուղից աղջիկ ամուսնացնելու ժամանակ ռեսին տրվող տուրքը, որի մասին «խարսնեց դրամ» կոչումով ակնարկ կա նաև ԺԷ դարի անթվական մի արձանագրության մեջ: Վերջինս պահպանվել է խիստ վնասված վիճակում (բոլոր տողերի վերջին բառերը ընկել են), բայց, այնուամենայնիվ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում (տե՛ս Մատենադարան, ձեռ. N 9660, էջ 1բ):

Արձանագրության սկզբում փառաբանական խոսքեր են ուղղված «Ողմայ տանուտէրացն» հասցեին, «որ չար [բաղ]ազաթ կայր ի վերայ գեղին՝ թողին», ապա թվարկվում են այդ «չար բաղազաթները» (նորահնար պահանջմունք, հարկ), որոնց մեծ մասը տողերի վնասված լինելու հետևանքով չեն հասկացվում: Ընթերցվող տողերից արժանի են ուշադրության հետևյալները. «Աստուած ող[որ]մի Թումին, որ գլուխն ԸԶ. (՞) կորեկ եթո[ղ], գխարսնեց դրամն արար Բ. շայի»: Ապա հիշատակված է մի այլ տանուտեր, որ «գմատղու վարձն եթող», երկրորդը՝ որ «գսուլն

արար Գ. ամթմանի»: «Սուլ» նշանակում է ջրաղացի խողովակ, նավ, ուստի կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը ջրաղացներից գանձվող ինչ-որ տուրքի մասին է: Տանուտերերից մեկ ուրիշը, ասված է նույն արձանագրության մեջ, «տուն մի մանած ու գուրպէ մի եթող». պետք է ենթադրել, ուրեմն, որ յուրաքանչյուր գյուղական ընտանիք պարտավոր է եղել որոշ քանակությամբ մանած թել և գուլպա տալ տանուտերին և այլն:

1596 թվականի մի հիշատակարանից տեղեկանում ենք «ալըղան» կամ «ալեղան» կոչվող ինչ-որ տուրքի գոյության մասին: Հիշատակարանում ասված է, որ Բասդ գյուղում «ամէն տուն չափ մի ցորեն կուտային ի յըալէն ալեղան», բայց Կակոս անունով մեկը, դառնալով ռես և «դմտաւ ածեալ զօր մահուն և գերկիւղն աստուծոյ՝ վերուց զայն չար զաքալն ի գեղջէն» (Ա. Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի, 1948, էջ 358-359):

Գյուղական համայնքի ներքին կյանքին վերաբերող այս մանր տուրքերի մասին մեր գիտցածը շատ քիչ է: Առայժմ դժվար է ասել նույնիսկ, որ այդ բոլոր տուրքերը յուրացնում էին տանուտերերն ու ռեսները: Եվ շատ հնարավոր է ենթադրել, որ դրանց գոնե մի մասը, այլևայլ ճանապարհներով, դարձյալ մուտք էր գործում պետական պաշտոնյաների ու ֆեոդալ տերերի գրպանները:

13. **Եկեղեցական հարկեր ու տուրքեր.** Հայ աշխատավոր ժողովուրդը հարկվում էր նաև եկեղեցական պաշտոնեության՝ կաթողիկոսների, թեմական առաջնորդ եպիսկոպոսների, վանահայրերի և շարքային քահանաների ու երեցների կողմից:

«Տուրքն որ առ Աստուած,- գրում է Մատթեոս Ջուղայեցին,- չափով և համարով է, այսինքն՝ ըստ ընչից իւրեանց, զի համարով Ժ. (10)-էն զմինն խնդրէ» («Քարոզ վասն աղօրհնութեան», Պետ. Մատենադարան, ձեռ. N 2229, էջ 179):

Սակայն սխալ կլիներ այս տվյալից եզրակացնել, որ հայ եկեղեցին ԺԵ դարում ժողովրդից իրոք գանձում էր հարկ՝ արդյունքի մեկ տասներորդի չափով:

Գրիգոր Տաթևացին իր քարոզներից մեկում հարց է առաջադրում, թե «Ո՞րն է այժմ տասանորդ մեր և երախայրիք» և տալիս այդ հարցին պարզ ու որոշակի հետևյալ պատասխանը. «Ասեմք եթէ այն է, զոր պտուղ կոչեմք ի

կալէ և հնձանէ և ի ծառոց: Եւ դարձեալ, սովոր եմք ի մուտս աշնան, յորժամ արմտիք ժողովին ի կալոյ և յայգւոյ և ի ծառոց՝ երթամք ի սուրբ տեղիս ի վանորայս, և պաշտօն առնեմք, մատաղօք զքահանայս և զաղքատս կերակրեմք. հացն ի կալոյն բաժին, և մորթելիքն յանասնոց, և դրամն յայլ ընչից» (Քարոզգիրք, ամարան հատոր, էջ 481):

Կալից և հնձանից վերցվող պտղի կամ երեխայրիքի, *ինչպես նաև եկեղեցական մյուս տուրքերի մասին շատ ավելի մանրամասն տվյալներ են պահպանվել կաթողիկոսական հնագույն կոնդակներում: Այդպիսիներից է Գրիգոր ԺԱ կաթողիկոսի 1541 թվականի կոնդակը, ուղղված Ստեփանոս Նախավկայի վանքի թեմին:*

Ծանոթանանք կոնդակի եկեղեցական հարկերին վերաբերող հատվածին.

«Զինչ երէց որ ի թեմս կայ, նոցա տանէն զինչ հասք որ լինի՝ մուտքն նախավկային է. տեառնական մատաղն որ լինի՝ երին, մորթին իւր աթոռոյն է, յանկարծամահ որ լինի քառասնիցն ու մատաղն եպիսկոպոսին է, և կողոպուտքն՝ լաւ խալին մի կամ լաւ շուրջառ տան յաթոռն:

Զերեխայրիս կալոյ և հնձանաց. *Երեխայրիքն այն է՝ յեզնագլուխ կէս մարգան հաց, յամէն հնձանէ մէկ զորակ գինի տան:*

Զսրբանուէրն, *որ է սրբադրամ, այդ եկեղեցւոյ և խաչի յասագին է... որ ի շատէն շատ և ի փոքրէն փոքր, որպէս ասէ տէրն յԱւետարանն, թէ որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, և յորում սակաւ՝ սակաւ, որ յամէն տարի Ա. անգամ սրբադրամ ժողովեն, որ սրբոցն է բաժին» (Մատենադարան, ձեռ. N 8017, էջ 4բ-5ա):*

Եպիսկոպոսներին ու թեմական առաջնորդներին բաժին ընկնող «հասք»-ի մասին արժեքավոր են նաև «Կանոնք ազգի ազգի մեղաց...» խորագրով մեզ հասած կանոնական խրատների մեջ գրանցված տվյալները:

«Առաջնորդաց հասք,- ասված է այնտեղ,- տուն քահանային և տուն գերէցաւագին, դպրին, ժամկոչին, տէրունին, աստուծոյ և խաչի և սրբոց*

* Հմմ. նաև Կանոնգիրք N 655, էջ 32բ, ուր եպիսկոպոսներին հարկատու սոցիալական խավերը թվարկված են այսպես, «տուն քահանայիցն ու տանուտէրացն և ազատացն»:

մատաղն, սուրբ խաչի պտուղն, սրբադրամն, չհասն Ճ. (100) դրամ արծաթ, պտտիկն Խ. (40) դրամ, կանամբին ԺԵ. (15) դրամ, մէկ կշիռ իւղ, Ա. կշիռ պանիր, Ա. հաւ» (Մատենադարան, ձեռ. N 8509, էջ 88ա-88բ):*

Հոգևոր առաջնորդներն իրենց հասանելիք տուրքերը հոգևոր իրենց հոտից հավաքելու համար, Գրիգոր Տաթևացու պատկերավոր խոսքերով արտահայտված. «միանգամ ի տարւոջն շրջին ի վիճակն և լնուն զքսակն արծաթով, և պատառեն իբրև զգայլն, և դարձեալ փախչին ի յորջս իւրեանց, և ոչ ինչ հոգան վասն ոչխարացն» (Քարոզգիրք, ամարան հատոր, էջ 288):

*Վերը հիշատակված կանոնական խրատների, ինչպես և մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին մերձավոր այլ աղբյուրների մեջ** տվյալներ կան նաև «իրիցական հասք»-ի, այսինքն երեցների ու քահանաների եկամտաբեր աղբյուրների մասին:*

Կանոնական խրատների մեջ գրված է: «Իսկ իրիցական հասք – պսակին՝ Գ. դրամ, այրն Ը. դրամ, կին Բ. դրամ, հողադրամ Ա. դրամ, գերեզման օրհնելոյ Ա. դրամ, խաչի համբոյր և այլ ինչ որ սահմանեալ կայ սուրբ հայրապետաց: Ննջեցելոց՝ բազմականն զինչ ունի անպակաս. ով տառապեալ է, Ա. կտաւ, ծերոց՝ կապուտ, տղայոց՝ սպիտակ, թէ ունևոր է՝ կարպետն է, բարձն, չվանն, հագուստն անպակաս տան ի վանքն» (Մատենադարան,

* Առաջնորդներն իրենք խախտում էին երբեմն չհասության համար սահմանված ազգակցության աստիճանները, նյութական փոխհատուցում ստանալով դրա դիմաց: Այս մասին ունենք պերճախոս վկայություն «Այս է աւրէնք հայրապետաց» խորագրով, կիսագրագետ մեկի կողմից ԺԶ. դարում ընդօրինակված հոդվածում: Այնտեղ ասված է. «Ազգականութիւն ԺԲ. (12) ճեղ է, երէ Ա. պակաս լինի՝ Ա. եզ մի վանից արտոին ճախ է, թէ Բ. պակաս լինի՝ հրամանք չկա...: Խնամութիւն Ժ. (10) ճեղ է, թէ Ա. պակաս լինի՝ զօչ մի վանաց արտոին, թէ երկումն պակաս լինի՝ մեղօք [է], չի լինի[ի]: Կնքայպայութիւն Ը. [8] ճեղ է, թէ մէկ պակաս լինի՝ լիտր մի ձէթ վանիցն արտոին ճախ է, թէ Բ. պակաս լինի[ի]՝ մեղօք է, հրաման չկայ:

Ով այսպէս բաներս այնէ կամ խառնվի՝ ԳՃԿԶ. հայրապետաց անիծեալ եղեցի» Մատենադարան, ձեռ. N 1634, էջ 159ա):

** Տե՛ս, օրինակ, Գարեգին վրդ [Հովսեփյանի] «Քահանաների վարձատրությունը ԺԴ. (՞) դարում» հոդվածի մեջ հրատարակված «Էրիցական հախն ու իրօւնքն այս է» փոքրիկ բնագիրը («Արարատ», 1915, էջ 217-218):

ձեռ. N 8509, էջ 88բ)։

Մահացածի ունեցվածքի տնօրինման մասին կանոնական այս սահմանման ամենուրեք կիրառված լինելը հաստատում է Մաթեոս Ջուղայեցին. նա գրում է. «Եւ այս է զոր կարգեալ է ի Հայաստան եկեղեցիս, զի մեռելոյն ինչքն քահանային է» («Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից», ձեռ. N 5232, էջ 76ա)։

Եկեղեցականները, սակայն, չէին բավարարվում «Հայաստան եկեղեցու» կանոններով սահմանված տուրքերով. հայ հպատակները ստիպված էին վճարել նաև «խոստովանագրամ» և «հաղորդագրամ» կոչված տուրքերը, որոնք Գրիգոր Տաթևացու նման ամենագետ եկեղեցականի վկայությամբ իսկ՝ «խորթ է, յագահութեանց երիցանց սահմանեալ և ոչ ըստ կանոնաց» («Գիրք հարցմանց», էջ 684)։

Այսպիսով, հայ եկեղեցին հօգուտ իր հօտից գանձում էր հետևյալ հարկերն ու տուրքերը.

ա. Պտուղ և երէխայրիք կալոյ և հնձանոյ.

բ. Տեառնական մասող.

գ. Կողոպուտ.

դ. Սրբանուէր կամ սրբագրամ.

ե. Խոստովանագրամ.

զ. Հաղորդագրամ.

է. Զանազան տուգանքներ (չհաս ամուսնության և այլ առիթներով) և այլն։

Սակայն հայ եկեղեցին ոչ միայն հարկահավաք, այլև հարկատու էր։ Իրենց հասույթների զգալի մի մասը թեմական առաջնորդ եպիսկոպոսներն ու վանքերի հայրապետները պարտավոր էին վճարել մահմեդական իշխողներին։

Աստվածատուր վարդապետ Մկրտիչ Նաղաշի վարքագրության մեջ (շարադրված է 1449 թ.), նկատի ունենալով Աղ-կոյունլուների տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի շրջանները և Միջագետքի հայաշատ վայրերը, փոքր-ինչ չափազանցնելով գրում է. «Եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ գիմուկան հարկի կային և եպիսկոպոսք՝ մաքսապետք, զի զամենայն զոր ինչ ստանուին ի քրիստոնէից՝ ի մաքս տային» (ԺԵ դարի հշտկ., Ա., էջ 625-626)։

Անտարակույս, նույն վիճակում էին գտնվում նաև հայկական մյուս եպիսկոպոսական թեմերը։

1530 թվականից պահպանվել է ուշագրավ մի հիշատակարան Կամախի եպիսկոպոսական «մալ»-ի չափի մասին։ Այնտեղ ասված է. «Ես՝ Մաղաքիա վարդապետս Դերջանեցի… գնացի ի յՍտամպալ առ մեծ աշխարհակալն սուլթան Սուլէմանն, զի Կամխայ և Աւագ վանացն եպիսկոպոսութեան մալն ԺԲՌ. (12.000 սպիտակ) էր, և յոյժ նեղացաւ վանքն և երկիր, և այլ ոչ կարէին տալ։ Վասն այն հարկեցա ի բազմաց և գնացի ի սուլթան Սուլէմանն ի թվին ՋՀԹ. (1530) և ի ԶՌ. (6000) իջուցի զմալն, և զարեգակից խարաճն ու զխաղանճն բարձաք ի բաց, և եկեղեցեաց նորոգման հրաման առաք. եկաք դարձեալ յԱւագ վանք» (Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարան, ձեռ. N 55, էջ 298-299, տե՛ս Ս. Տեր-Ավետիսյանի ձեռագիր ցուցակ և «Հանդէս ամսօրեայ», 1952, N 10-12, էջ 581, Ն. Ակինյանի «Մաղաքիա վ. Դերջանցի…» հոդվածը)։

Հարկավ շատ քչերին էր հաջողվում սուլթանների ու փադիշահների տեսությանն արժանանալ և կիսով չափ իջեցնել «եպիսկոպոսական մալը», ուստի սխալված չենք լինի կարծելով, որ եկեղեցու կողմից գանձվող հարկերի ու տուրքերի մի զգալի մասը, դարձյալ մտնում էր մահմեդական բռնակալների գանձարանները։

***

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական այսպիսի ծանր պայմաններում, անընդհատ ու ավերիչ պատերազմների թոհուբոհում, քաղցի ու համաճարակային հիվանդությունների իրար հաջորդող տարիներին են ստեղծվել ԺԵ դարի հայերեն ձեռագիր կոթողները, որոնց հիշատակարաններն իրենց մեծ մասով առաջին անգամ հրատարակվում են սույն ժողովածուի էջերում։

Թե ինչ արժեք են ներկայացնում նրանք որպես պատմական սկզբնաղբյուր, երևում է հենց առաջաբանի փոխարեն գրած «Հայաստանը ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում» խորագրով համառոտ այս ուսումնասիրությունից, որը հնարավոր էր շարադրել գերազանցապես հիշատակարանների մեջ ցրված մեծարժեք ու բազմաբովանդակ նյութերի հիման վրա։

Մեր նպատակը չի եղել բնավ սպառել հրատարակվող հիշատակա-

ռանների պարունակած բոլոր նյութերը. այդ պատմաբանների, լեզվաբանների, գրականագետների, մանկավարժության և գիտության այլ բնագավառների պատմության մասնագետների մի քանի սերնդի գործ է[*]*:*

Եթե մեր ուսումնասիրությունը գոյզն ինչ չափով դյուրացնի հիշատակարանների սույն ժողովածուն ուսումնասիրողների աշխատանքը, դրանով մենք հասած կլինենք մեր նպատակին:

[*] Հարկային և պարտույթային առանձին տերմիններ Լ. Խաչիկյանի սույն աշխատության հրապարակումից հետո քննության են առնվել Ս. Հակոբյանի «Հայ գյուղացիության պատմության երկու հատորներում (Երևան, 1957, 1964), ինչպես նաև Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների բառաքննություն» (Երևան, 1968) և «Վիմագրական պրպտումներ» (Երևան, 1986) գրքերում - խմբ.:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՂԵՇԻ ՔՈՒՐԴ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամիր-Շարաֆին հաջորդել է նրա եղբայր Իբրահիմը. Միրան-շահին լուր են տալիս, որ նա «ոչ կամի հնազանդիլ քեզ»:

«Եւ Իբրահիմն այն էր յոյժ ատեցող Քրիստոսի եւ քրիստոնէից ազգի, եւ ոչ իբրեւ զեղբայրն իւր սիրող ամենայն քրիստոնէից, այլ կամէր բառնալ զհաւատս մեր: ... ի յ845 թուականին ելեալ զօրօք իւրովք, եկն (Միրան-շահն) ի յԱրճէշ քաղաք ... եւ եկն ի վերայ Բաղիշու յանկարծակի. եւ ամիրայն Իբրահիմ եկն առ նա եւ ըմբռնեալ սպան զնա, եւ բազում աւերս արար ամենայն քաղաքին եւ գաւառին: Եւ Տէրն Ոստանին Եզդին ամիրայն անկեալ ի մէջ նոցա՝ հաշտութիւն արար նոցա: Եւ զորդի Ամիր-Շարաֆին՝ փոքր տղայն Շամշադին անուն, եդ ամիրայ, եւ գնաց ի Թավրէզ» (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 111-112):

- Ռշտունեաց ամիր Եզդինը հակառակում է Ղարա-Յուսուֆին, երբ նա Թամուրի մահվանից հետո՝ 1406-ին կրկին հրապարակ է իջնում. «Թուրքման Յուսուֆ յետ սատակման Թամուրին ի ՊԾԵ (= 1406) թվականին առեալ զսակաւ զօրս իւր տառապեալ եւ անզէն, ելեալ ի բանտէն Դամասկոսի, եւ եկն վերստին յաշխարհս մեր, նախ ի քաղաքն Բաղէշ: Եւ որդի Ամիր-Շարաֆին Շամշադին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա, եւ յոյժ մեծարեաց զնա հացով, ձիով եւ ջորով, զինուք եւ ամենայն զինուորական պատերազմական պատրաստութեամբ. եւ առեալ եկն ի վերայ աշխարհին Ռշտունեաց եւ վանակերտին Վարագայ: Եւ նոքա պատրաստեալ զզօրս իւրեանց՝ ելին ընդ առաջ նորա, աւելի քան զերկոտասան հազար եւ խաբեալ զՄելիքն բարեբարոյ եւ սիրօղն եւ ողորմածն քրիստոնէից նենգաւոր ազգն մարաց, խոյս եառին եւ փախեան: Եւ նոքա աւերեալ զաշխարհն հրով եւ կողոպտելով, եւ սպանութեամբ եւ ապա եկեալ ի հնազանդութիւն Եզդին ամիրայ եւ Մելիք որդին» (Նույն տեղում, էջ 113-114):

ՄԵԼԻՔ-ՄԱՀՄԱՏ, ՈՐԴԻ ԱՄԻՐ-ԵԶԴԻՆԻ (ԵԶԴԻՆՇԵՐԻ)

Կողմնապետ Վանի և Ոստանի, «բռնակալ» Ռշտունիքի, հիշված 1415-ից. Թունավորվել Իսքանդարի կողմից 1423 թ.:

- «Իշխանութեան գաւառիս մերոյ Մելիք Մահմատի, յաւ պահէ զմեզ,

ստացուած գինքն հետ իւր առաջնորդին դաւէ « - գրում է Աստուածատուր գրիչը 1417 թ. Նարեկայ վանքում (ԺԵ, I, էջ 204)

- «Ի բռնակալութեան մերոյս նահանգի Ամիր-էզդնին և որդոյն իւրոյ Մելիք-Մահմադին, որոց աւգնական և պահապան լիցի Նոցա տէր ստուած, վասն զի յոյժ խնամածուք են ազգիս Հայոց...» (Աստուածատուր գրիչ, 1418 թ.) (ԺԵ, I, 220):

- «Իշխանութեան մերոյ նահանգիս Մելիքի՝ որդոյ Ամիր-Եզդին մելիքին» (Նարեկ գիւղ, Ստեփանոս գրիչ, 1419 թ.) (ԺԵ, I, 231):

- «Ի բռնակալութեան նախանկիս մերոյ բարձրանուն Մէլէքի» (Նարեկ գիւղ, գրիչ Իգիտ, 1420 թ.) (ԺԵ, I, էջ 243):

- «Ի պարոնութիւնն էզդինշէրին և որդոյ նորին Մելէքին» (Վարագ, 1421 թ.) (ԺԵ, I, էջ 265):

- «Իսկ ի յՊՀԲ (1423) թվին... Սրանդարն... դեղ մահու արբուցեալ իշխանին մերոյ Մէլիք-Մահմադին՝ սպան զնա և անհնարին սուգ և անմխիթար տրտմութիւն եհաս աշխարհիս մերոյ (գրիչ Թումայ Մինասենց, Աղթամար) (ԺԵ, I, էջ 375)

ԱՄԻՐ-ԵԶԴԻՆ (ԵԶԴԻՆՇԵՐ)

- Պեռ. թուին Հայոց (1392) էառ Ամիր-էզդին զՍասան քաղաք յեղբօրէն իւրմէ, նաւասարդի ամիս, ի յայտնութեան պահոց երեքշաբթի» (ԺԴ, էջ 597):

- (Ի բռնակալութեան) ... երկրիս մերում Ամիր-Եզտրնի» (գրված է Տշող գյուղում, (Ոշտունիք), 1410 թ.) (ԺԱ, I, էջ 114):

- 1418-ից հիշվում է որդու՝ Մէլիք-Մահմադի հետ՝ (ԺԱ, I, էջ 220) «Ի բռնակալութեան մերոյս նահանգի Ամիր-էզդնին և որդոյն իւրոյ Մելիք-Մահմադին (մեռել է 1419-23 թթ. արանքում)

- «Այս ամիր-Եզդինս, որ հակառակ եղեւ Յուսուֆին, տէրն Ոստանայ...» (Թ. Մեծոփեցի, «Պատմագրութիւն», աշխ. Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 115)

ՔՈՒՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Եւ զանն Թուրիզու սուլթան Ահմատ ելեալ գնաց փախստական, ճանապարհաւն Ըռշտունեաց Ոստանու, առաջնորդութեամբ ամիրային

մարաց Եզդնայ՝ ի Բաբելոն Բաղդատ քաղաքն» : Սա 1386 թ. է վերաբերում (նույն տեղում, էջ 8):

- 1437 թ. խլաթի ամիրն էր Սեւդինը. «Նահատակութեամբ նոր վկային Յոհանու, որ մականուն Խղլու կոչի»-ի մեր (Ձեռ. N 5313, էջ 581բ): Նա հիշվում է հետևյալ կերպ. «և սիրեցեալ եղև յաչս ամիրապետի քաղաքին Սեւդին կոչեցեալ»:

- 1387 թ. «յամիրայն Խութայ շէխ Շարաֆ անուն (նույն տեղում, էջ 25):

- նույն թվականին. «Դարձաւ ի Բաղէշ քաղաք: Եւ ամիրայն Ամիր Շարաֆ գնաց առ նա (առ Լանկ-Թամուր — Լ. Խ.), և սիրով ընկալաւ զնա, եւ խաղաղութեան նամակ ետ նմա. եւ ազատութիւն եղեւ ամենայն աշխարհին (նույն տեղում, էջ 34):

- «Եկաւ չար գազանն այն (Լանկ-Թամուր — Լ. Խ.) ի դուռն քաղաքին Արծկու, եւ իշխան քաղաքին Սահանդ անուն գնաց առ նա...» (նույն տեղում, էջ 36-37):

- «Եւ անտի չուեալ գնաց ի գաւառն Տոսպայ ի վերայ Վանայ ամրոցին Հայոց. և առ ժամայն ամիրայն Եզդին, յազգէ Սենեքարիմեանց, ոչ եկն առ նա...» (նույն տեղում, էջ 37-38):

- «Եւ չարախօսեն նմա (Միրան շահին) զԲաղէշ քաղաքի ամիրայէն Իբրահիմ անուն, որ նստաւ ամիրայ յետ եղբօր իւրոյ Ամիր-Շարաֆին...: Եւ Իբրահիմն այն էր յոյժ առեցող Քրիստոսի եւ քրիստոնէից ազգի: Եւ եկն ի վերայ Բաղիշու յանկարծակի. եւ ... ըմբռնեալ սպան զնա (զԻբրահիմ) ...: Եւ զորդի Ամիր- Շարաֆին՝ փոքր տղայն Շամշատին անուն, եդ ամիրայ եւ գնաց ի Թաւրէզ» (նույն տեղում, էջ 111-112):

- «Տէրն Ոստանին՝ Եզդին ամիրայն... (Միրանշահի ժամանակ)» (նույն տեղում, էջ 71):

- «Եւ որդի ամիր Շարաֆին Շամշատին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա՝ յոյժ մեծարեաց զնա (զԿարա-Յուսուֆն) հացով և ջօրիօք, ձիովք, զինօք և ամենայն զինուորական պատրաստութեամբք»:

- «Եզդին ամիրայն և Մելիք որդին» (նույն տեղում, էջ 114):

- «Այս ամիր Եզդինս, որ հակառակ եղեւ Յուսուֆին, տէրն Ոստանայ ի յ842 թ. սպան զկաթողիկոսն Աղթամարայ զտէր Զաքարիա անուն» (նույն տեղում, էջ 115):

- «Եւ յերկրորդ ամին եկն ի վերայ Բաղիշու (Սքանդարը) և խլաթայ, կոչեաց զամիրայն Ճամշատին փեսայ իւր և ասէ «տուր ինձ զբերդն խլաթայ»... (սպանում է) (Նույն տեղում, էջ 140):

- «Բնական տեարք [Արծկէ] քաղաքին՝ Սաւալան անուն» (Նույն տեղում, էջ 151):

-«առաջնորդութեամբ պիղծ եւ անհաւատ քրդով մի Սեդին անուն՝ ի տանէ եւ ի յազգէ բարեբարոյ եւ աշխարհաշէն ամիրային Եզդնի եւ Մելիքին, որ ունէր զերկիրն Բերկրոյ...» (Նույն տեղում, էջ 156):

- «քաղաքապետին Արծկու Սահանդ անուն» (Նույն տեղում, էջ 195):

ԱՄԻՐ-ԱԼԱԴԻՆ
ԱՄԻՐ-ՋԵՆԴԻՆ

«... յիշխանութիւն (Ախլաթոյ) Միր-Ալադնի և Ամիր-Ջէնդնի, որ է զեռ ըմբռնած ի մէջ կղզոյն Ախթամարայ» (ԺԴ, էջ 622):

«Յայսմ ամի (1398) ըմբռնեցին զպարոնն Հայքարա, որ էր յոյժ խնամակալու ազգիս քրիստոնէից, առաւել քան զնախնիքն իւր, զի ըմբռնեցին զնա և զորդին ի բանդի ի մէջ ծովու, և զաւրաւք բազմաւք եկին ի Ձորն Դիզա և աւար հարին մինչ ի Ջուլամէրկ և ի Գաւառ» (ԺԴ, էջ 621):

Սուլթան-Ահմատ, *ամիրապետ Վանի և Ոստանի. 1424 թ. Իսքանդարի կողմից բանտարկվեց Երնջակում, ապա սպանվեց.*

- «Սքանդարն ... զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլտան Ահմատն ըմբռնեալ է և երկաթի կապանաւք ի յԵրընջոյ բերթն ի բանտի է եդեալ, խնդրելով ի նմանէ զանառիկ ամրոցս նորա. և զերկիրս Հայոց՝ զԱղբակ, և զՔարպահ, և զՈստանայ երկիրս, մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արարեալ» (գրիչ՝ Թումայ Մինասենց, Աղթամար, 1425 թ., ԺԵ, I, էջ 326):

- «անօրէն Իսքանդարն ըմբռնեաց զամիրայն մեր զսուլթան Ահմատն, և եկեալ բազում զօրօք ի վերայ մեր, և յիսուն օր խաղեաց զանառիկ զղեակս Վան, և ոչ կարաց առնուլ զնա. և սաստ երդմամբ գնացեալ ի Գաւրէժ, և ի զարնանային աւուրն առաքեաց զզօրս և գերեաց և աւերեաց զերկիրն Ռշտունեաց» (գրիչ Կարապետ, Հիզան, 1425 թ., ԺԵ, I, 328):

- «զՎանայ բերդն առին ի քրդուն Սքանդար ամիրէէն, ի ՊՀԴ (1425) ամին» (ԺԵ, I, էջ 328):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

(IV ԴԱՐ)

IV դարի 60-70-ական թվականներին, Փոքր Հայքում, սարուկների, կոլոնների և քաղաքի ու գյուղի մյուս դասերի միջավայրում ծավալվեց ուժեղ սոցիալական շարժում ընդդեմ ստրկատիրական կարգերի և քրիստոնեական եկեղեցու: Այդ շարժումը, նման IV-V դարերում աղանդավորական քողի տակ բանկված ժողովրդական մյուս ելույթների ու ընդվզումների, ճնշվեց կայսրության և եկեղեցու կողմից:

Այդ շարժման ուսումնասիրությունը կարևոր է ու շահեկան նախ այն պատճառով, որ այն խոր ճգնաժամ ապրող ստրկատիրական կարգերի դեմ մղված ժողովրդական շարժումների երկար շղթայի բնորոշ օղակներից մեկն է և ապա՝ նրա ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում նոր փաստերի լույսի տակ դիտելու և վեր հանելու Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի մի շարք կողմերը, որոնց մասին հայկական աղբյուրներում պահպանվել են միայն ժլատ ու անբավարար ակնարկներ:

Անշուշտ, սույն աշխատությամբ այդ շարժման հետ առնչվող բոլոր հարցերն ու խնդիրները չեն, որ ստանալու են իրեց լուծումը:

Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի ճամփաբաժանում, ռազմական, առևտրական, տնտեսական ու մշակութային սերտ կապեր ունենալով հարևան երկրների հետ՝ Փոքր Հայքը Հայաստանի այն մասն էր, ուր ավելի շուտ, քան Հայաստանի մի այլ մասում, առեղծվեցին մարդաշատ քա-

---

* Լ. Խաչիկյան, Երևան, 1951, 112 էջ:

դաքներ, գյուղական համայնքներում սկսվեց քայքայման պրոցես և հասունացան անհրաժեշտ նախապայմաններ՝ ստրկատիրական արտադրական հարաբերությունների քայքայման համար:

Հայաստանի և Հռոմի միջև տասնամյակներ տևող կատաղի գոտեմարտերից հետո, հռոմեական զավթիչներին հաջողվեց տեր դառնալ Փոքր Հայքին և կտրել այդ տարածքն իր մայր օրգանիզմից: Նվաճումից հետո հայկական այդ շրջաններից ստեղծեցին նախ «Արմենիա» պրովինցիան, որը, սակայն, երկար չպահպանվեց: Դրանից հետո Փոքր Հայքը հաճախ նվիրվում էր Հռոմից վասալական կախման մեջ գտնվող այս կամ այն «թագավորին», իսկ այնուհետև այն միակցվեց Կապադովկիա պրովինցիային: Դիոկղետիանոսի ժամանակ (284-305), անջատվելով Կապադովկիայից, Փոքր Հայքը վեր է ածվում ուրույն վարչական միավորի՝ Մելիտինե մայրաքաղաքով: Թեոդոս Ա. կայսրը Փոքր Հայքը բաժանում է երկու մասի: Առաջինը՝ Սեբաստիա և Սատաղ գլխավոր քաղաքներով պրովինցիայի հյուսիսային մասից, իսկ երկրորդը՝ Մելիտինե քաղաքով հարավային մասից և Կապադովկիական մի քանի շրջաններից[1]: Այս փոփոխությունները կատարվեցին 378-386 թթ.:

Փոքր Հայքը, Հռոմեական կայսրության Արևելյան սահմանների պաշտպանության տեսակետից, կարևորագույն նշանակություն ուներ: Այս պատճառով այնտեղ անց կացվեցին ստրատեգիական մի շարք ճանապարհներ, կառուցվեցին բերդեր, ամրություններ ու քաղաքներ, որոնց մասին կարևոր տեղեկություններ են պահպանել ոչ միայն հին աշխարհագիրներն ու «մղոնաչափ»-երը, այլև մեծաքանակ կառուցողական արձանագրությունները[2]:

Ճանապարհներից մեկը շրջանցիկ ձևով միացնում էր Փոքր Հայքի բոլոր կարևորագույն ստրատեգիական ու տնտեսական կենտրոնները

[1] Կ. Գյուտերբոկ, «Հռոմեական Հայաստանը և Հռոմեական սատրապությունները Դ–Զ դարերում», Վիեննա, 1914, էջ 24-35:

[2] Հատկապես շատ արձանագրություններ են պահպանվել 3-րդ դարից, երբ կայսրության համար մեծ վտանգ ստեղծվեց Իրանում տեղի ունեցած պետական հեղաշրջման և Սասանյանների հաղթանակի հետևանքով:

(Մելիտինե - Սեբաստիա - Նիկոպոլիս - Սատաղ - Զիմարա)[3], և Մելիտինեից ու Սատաղից տարբեր ուղղությունների բաժանվելով կապում էր Փոքր Հայքը կայսրության կենտրոնների, Մեծ Հայքի և հարևան մյուս երկրների հետ:

Բնական է, որ այդ ճանապարհները խաղաղ ժամանակներում օգտագործվում էին առևտրական նպատակներով և ամրացնում էին Փոքր Հայքի տնտեսական ու մշակութային կապերը՝ թե՛ պրովինցիայի ներսում և թե՛ կայսրության սահմաններից դուրս:

Արդեն II դարում Փոքր Հայքում կային մի շարք խոշոր քաղաքներ: Դրանցից մեկի ծագման մասին Պրոկոպիոս Կեսարացին թողել է հետաքրքրաշարժ մանրամասնություններ: Նա գրում է.

«Հին ժամանակ կար մի ավան, այսպես կոչված Փոքր Հայքում, Եփրատ գետից ոչ հեռու, որտեղ կայազորով կանգնած էր հռոմեական զինվորների մի զորամաս: Այդ ավանը կոչվում էր Մելիտինե, իսկ զորամասը՝ լեգիոն: Այստեղ հարթ տեղում հռոմեացիները ժամանակին կառուցել էին քառանկյունաձև ամրություն: Այն լիակատար բավարարում էր զինվորներին՝ որպես ապաստարան, և այստեղ նրանք պահում էին իրենց զինվորական դրոշները: Հետագայում, հռոմեական կայսր Տրայանոսի ցանկությամբ, այդ վայրը ստացավ քաղաքի կոչում և դարձավ այս երկրի մայրաքաղաքը: Ժամանակի ընթացքում Մելիտինե քաղաքը դարձավ մեծ ու բազմամարդ:

Ինչպես պատմում է Պրոկոպիոսը, քաղաքի ընդարձակման հետևանքով պարիսպներից ներս շենքեր կառուցելն անհնար դարձավ, ուստի քաղաքը զարգացավ ամրության մոտ գտնվող հարթության վրա: Այստեղ կառուցվեցին՝

«Տաճարներ, շենքեր, կառավարչական հիմնարկներ, առևտրական հրապարակ, տարբեր ապրանքների համար կրպակներ... սրահներ, բաղնիքներ, թատրոններ և այն բոլորը, ինչ ծառայում է մեծ քաղաքի զարդարմանը»[4]:

Զարգացման նման ընթացք ապրեցին նաև Փոքր Հայքի մյուս խոշոր

[3] А. Ранович, "Восточные провинции Римской Империи в I-III вв.", Москва-Ленинград, 1949, стр. 119.

[4] Прокопий Кесарийский, "О постройках" III, 4, 15-18. Перевод С. П. Кондратьева, ("Вестник Древней Истории", 1939, N 4 (9), стр. 246).

քաղաքները (Սեբաստիա, Սատաղ և այլն), որոնցում հիմնական բնակիչներ հանդիսանում էին հայերը:

IV դարն Արևելյան Հռոմեական կայսրության պատմության մեջ դասակարգային լարված պայքարի՝ ստրուկների ու կոլոնների ապստամբությունների և հուզումների ժամանակաշրջան էր: Ստրկատիրական կարգերը ճգնաժամ էին ապրում և պահանջվում էր ուժերի ու միջոցների մեծ լարում ժողովրդական ապստամբությունների ճնշման և առկա կարգերի պահպանման համար:

Ստրկատիրական ռեակցիայի պահպանության ծանրությունն ընկնում էր գարձյալ ստրուկների, ճորտական կախման ընթացքի մեջ մտած կոլոնների և քաղաքային աշխատավորական շերտերի վրա: Քաղաքներում հաստատված ստրկատիրական վերնախավերը վարում էին շվայտ ու փարթամ կյանք: Նրանց կենցաղը այսպես է նկարագրում ժամանակակից հեղինակը.

«Նրանք շինության բոլոր տեսակների համար անհամար բանակությամբ տնային ծառաներ ունեն՝ կառավարիչներ, մառանապետներ, հողագործներ, հանույքի և շինության համար ստեղծված անհրաժեշտ ամեն տեսակի արհեստների տիրապետողներ՝ խոհարարներ, մատռվակներ, որսորդներ, քանդակագործներ, նկարիչներ, տարատեսակ հաճույքներ կազմակերպողներ: Նրանք ունեն ուղտերի քարավաններ... ձիերի երամակներ, ոչխարների ու խոզերի նախիրներ, իրենց սեփական նախրապաններով: Նրանք ունեն իրենց հողը, որը բավարար է կերակրելու այդ ամբողջ (հոտը)...: Բաղնիքներ ունեն քաղաքներում, ամառանոցներում: Տները փայլում են տարբեր տեսակի մարմարներով...: Տների մի մասը տաքացվում է ձմռանը, մյուս մասը՝ սառեցվում ամռանը. հատակները զարդարված են երփներանգ խճանկարներով, առաստաղները ոսկեզօծված են...»[5]:

Քաղաքներում էին հաստատված նաև կայսրության կառավարչական ու զինվորական բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք իրագործում էին հայաբնակ այդ շրջանների շահագործման պետական քաղաքականությունը:

[5] Творения иже во святых отца нашего Василия Великого архиепископа Кесарии Каппадокийския, изд. третье, ч. IV. Сергиев-Посад, 1892, стр. 97-98.

Քաղաքային բնակչության ունևոր դասերից էին նաև առևտրականները, վաշխառուները և արհեստավորները: Կայսրությունը IV դարում ամփոփում է արհեստավորական ու առևտրական կոլեգիաների վերածումը պետական կազմակերպությունների. նրանց ղեկավարությունը հանձնում է նշանակալի ավագների, որոնք պատասխանատու են դառնում տվյալ կոլեգիայի պետական պարտավորությունների կատարման գործում: Որդիները պարտավորվում են զբաղվել իրենց ծնողների արհեստով և զրկվում են իրենց կոլեգիաները թողնելու և իրենց բնակավայրերից հեռանալու իրավունքից:

Պետությունը՝ բարձր մաքսեր հավաքելու հետ միասին, մի շարք անհրաժեշտ ապրանքների (հացահատիկ, անասուն և այլն) հայթայթումն ու վաճառքը հայտարարում է պետական մենաշնորհ:

Ներքին առևտուրը գլխավորապես, իսկ տարանցիկը մասամբ, իրագործվում էր մասնավոր անձերի միջոցով, որը նույնպես զարգացած էր: Հարուստ առևտրականներն ու վաշխառուները պաշտոնապես դիտվում էին որպես պլեբեյական դասի ներկայացուցիչներ, սակայն նրանք հնարավորություն ունեին դրամով գնելու պատվավոր կոչումներ, տիտղոսներ, ստրուկներ ու ծառաներ և նշանակալից դեր էին խաղում հասարակական կյանքում:

Քաղաքներում բնակվում էին նաև քաղքավոր մանր հողատերեր: Նրանք պարտավոր էին, որպես քաղաքային կուրիաների (սենատների) անդամներ՝ հարկեր հավաքել, ստանձնել պաշտոններ և հետևել քաղաքի բարեկարգությանը: Իրենց միջոցներով նրանք պետք է բարեկարգ վիճակում պահեին ջրմուղները, բաղնիքները, թատրոնները և քաղաքային «ինքնավարությանը» ենթակա մյուս հասարակական հիմնարկները: Նրանց մի մասի դրությունն այն աստիճան ծանր էր, որ ինչպես Մարքսն է գրել, նրանք ազատվելու համար իրենց վզին բռնի փաթաթած պարտավորություններից, նույնիսկ գերադասում էին վաճառվել ստրկության[6]:

Փոքր Հայքի գյուղացիության տնտեսական վիճակն ու իրավական դրությունն ավելի ծանր էր, քան կայսրության մյուս պրովինցիաների գյու-

[6] К. Маркс и Ф. Энгельс, “Сочинения, т. XXVII, стр. 685 (Կ. Մարքսի նամակը Վ. Զասուլիչին):

դացիության դրությունը:

Կայսերական օրենքներով կար երկու տիպի հողային սեփականություն՝ պետական *(territoria) և* կալվածական *(possessiones), բատ այդմ էլ կային երկու կարգի հողագործներ՝* պլեբեյ *և* կոլոն*: Պլեբեյն իր կողմից մշակվող հողակտորի տերն էր և որոշված հարկը մուծում էր պետության գանձարանը: Իսկ կոլոնը՝ մշակելով կալվածատիրոջ հողը վարձակալական հիմունքներով հարկ էր վճարում և՛ պետությանը և՛ հողատիրոջը: Կոլոնները իրենց հերթին բաժանվում էին երկու խմբի՝* «ցուցակավոր» կոլոններ *(coloni adscriptitii) և* «ազատ» կոլոններ: *«Ցուցակավոր»-ները մշտապես և ժառանգաբար ստիպված էին վարձակալել իրենց կողմից մշակվող հողը:*

Ժամանակակից աղբյուրները ծայր աստիճանի ծանր են նկարագրում անվանապես ազատ հողագործների և մյուս աշխատավորների դրությունը: Բարսեղ Կեսարացին, օրինակ, նկարագրում է սրտաճմլիկ մի պատկեր, թե ինչպես սովամահության դատապարտված հայրը, իր ընտանիքը փրկելու համար, երկար տվայտանքներից հետո, ստիպված է լինում վաճառքի հանել իր սիրասուն որդիներից մեկին:

IV-V դարերում հրապարակվում են պետական մի շարք էդիկտներ, *որոնցով ավելի ու ավելի է սահմանափակվում կոլոնների ազատությունը: Կալվածատերերը պատասխանատու են դառնում իրենց կալվածքի վրա գրանցված կոլոններից գանձվող պետական հարկերի վճարման համար և, որպեսզի ապահովեն հարկերի անխափան գանձումը, ձեռք են գնում գյուղացու գույքի վրա, նրանց ամրացնում են հողին, տեղափոխությունը դիտում են որպես փախուստ և բռնի ուժով հետ են դարձնում անտանելի տնտեսական վիճակից փախչողներին:*

Հողին ամրացնելու պրոցեսը IV դարի կեսերին այն աստիճանի խորացել էր, որ գյուղացիները նույնիսկ զրկվել էին՝ առանց տիրոջ գիտության ու թույլտվության՝ ամուսնանալու իրավունքից: Այս առթիվ Բարսեղ Կեսարացու կանոններից մեկում կարդում ենք.

«Ամուսնություն, որ կնքվում է առանց տիրոջ համաձայնության՝ շնություն է: Այդ պատճառով հոր կամ տիրոջ կենդանության օրոք իրար հետ կապվածները ենթակա են պատասխանատվության, մինչև տերը չհայտնի իր համաձայնությունը՝ համակեցության մասին: Այդ ժամանակ միայն նա (այդ կապը) ստանում է ամրություն»[7]:

Կոլոնները աստիճանաբար զրկվում են նաև քաղաքացիական բոլոր իրավունքներից: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նրանք չէին կարող ստանձնել պետական որևէ, նույնիսկ ամենաստորին կարգի պաշտոն: Կղերական դառնալու համար նրանք պետք է ստանային իրենց տերերի հաճությունը, որը, սակայն, տրվում էր միայն բացառիկ դեպքերում[8]*:*

Եվ այսպես, արդեն IV դարի վերջին, կոլոնների մի զգալի մասի փաստական ճորտացումը իրավական սանկցիա է ստանում: Նախկինում պետության հպատակ կոլոնը դառնում է կալվածատիրոջ կամքի հլու կամակատարը:

Վատթարանում է նաև «ազատ» կոլոնների դրությունը: Օրենք է հրատարակվում այն մասին, որ որդին պարտավոր է մշակել իր հոր վարձակալած հողակտորը: Բազմապիսի արգելքներ են ստեղծվում «ազատ» կոլոնի այլ վայրեր տեղափոխվելու առաջն առնելու համար, և աստիճանաբար այս դասն ապրում է նույն էվոլյուցիան դեպի ճորտական վիճակ[9]*:*

Թե՛ քաղաքում և թե՛ գյուղում արտադրող հիմնական դասակարգը ստրուկներն էին, որոնց աշխատանքն օգտագործվում էր գյուղատնտեսության, արհեստի ու առևտրի և տնային աշխատանքների մեջ: Այդ իրավազուրկ և կիսաքաղց մարդիկ հաճախ փորձում էին փախուստի ճանապարհով ազատվել ստրկությունից, սակայն, բռնվելով շղթայվում էին և ստիպված, ավելի ծանր պայմաններում, շարունակում էին իրենց անվարձահատույց տաժանելի աշխատանքը:

Հարկահանությունը կայսրության հպատակներից կատարվում էր ավազակաբարո ձևերով: Ինչպես հաղորդում է Բարսեղ Կեսարացին՝

---

[7] Творения иже во святых отца нашего Василия Великого архиепископа Кесарии Каппадокийския, изд. третье, часть VII. Сергиев-Посад, 1892, стр. 50. Աշխատության բնագրում բազմիցս օգտագործում ենք Բարսեղ Կեսարացու երկերի սույն հրատարակության VI և VII մասերը՝ Вас. VI և Вас. VII համառոտությամբ:

[8] Ю. Кулаковский, "История Византии", т. I, Киев, 1918, стр. 73.

[9] М. Левченко, "История Византии", Москва-Ленинград, 1940, стр. 13-15.

հարկահանության պաշտոնին ձգտում էին դրամաշորթ անձինք՝ իրենց բարեկամներին օգնելու, թշնամիներից վրիժառու լինելու և իրենց այլ ցանկությունները իրագործելու համար: Հարկադրումը, նույն հեղինակի դիպուկ արտահայտությամբ, նմանվում էր «ստրուկների վաճառքի»[10]:

Չկային չափ ու կշռի հանրատարած միավորներ. հարկատու գյուղացին անտեղյակ էր, թե իր արտադրանքի ո՞ր մասն է հանձնելու պետությանը և ի՞նչ կշռաչափով են պահանջելու իրենից հարկը: 386 թվականին հրապարակվում է մի հրաման, ըստ որի հարկահանների բոլոր դիվաններն ու բոլոր քաղաքները պետք է ունենային «պղնձե կամ քարե գրվաններ իրենց քսեստներով և կամ կապիճներով ու կշռակոտորներով, որպեսզի հարկատուները՝ աչքի առաջ ունենալով այս զանազան չափերը, գիտենան, թե ինչ պետք է տան հարկահաններին»: Նույն հրամանով սահմանվում է նաև հարկի չափը, կայսրության բոլոր պրովինցիաների համար՝ «ցորենի հինգերորդը, գարու քառասներորդը, գինու և ճարպի քսաներորդը»: Միակ բացառությունը կազմում է Փոքր Հայքը:

«Մենք պարտավորվեցինք,- ասված է հրամանում,- որ Հայաստանում, հեռավորության պատճառով, հարկահաններին տան ցորենի և գարու քառասներորդը, իսկ գինու և ճարպի տասնուհինգերորդը»[11]:

Այսպիսով, Փոքր Հայքի բնակչությունը ստիպված էր «հեռավորության պատճառով» մոտ 20-25 տոկոսով ավելի հարկ վճարել, քան կայսրության այլ շրջանները:

Բացի բնահարկից, կայսրության Արևելյան շրջաններից գանձվում էին նաև զինվորների վարձատրության համար դրամական հատուկ հարկ (πραγματευτικόν χρυσίον), որը ամենածանր հարկերից մեկն էր և գանձվում էր ամենախիստ միջոցներով, և բազմաթիվ այլ հարկեր:

[10] Bac. VI, 284.

[11] Օրենսգիրք Թեոդոսյան, գիրք XII, Տիտղոս 6-րդ: Հրաման Վաղենտիանոս, Թեոդոսիոս և Արկադիոս կայսրների դատարանի գանձերեց Միննգիոսին, հարկահանների գործակալ վերակացուների վերաբերյալ. (տե՛ս Ն. Ադոնց, «Բյուզ. կայսրների կարգադրությունները Հայաստանում», պատմ. հատվածներ IV և VI դարերին վերաբերյալ, «Լումայ» 1902, III, էջ 177-178):

Պահանջված հարկերի վճարման համար հարկատուները, ստիպված, ձեռք էին կարկառում վաշխառուներին ու ընկնում նրանց ճիրանների մեջ: Բարսեղ Կեսարացու մի շարք նամակներից պարզվում է, որ վաշխառուներն այնպիսի ծանր պայմաններով էին փոխ տալիս, որ կարճ ժամանակում վաշխի տոկոսները հասնում էին հսկայական չափերի[12]:

Վաշխառուները պարտքի դիմաց հաճախ պարտապաններին ստրկության էին վաճառում կամ տեր դառնում նրանց ողջ ունեցվածքին: Մեզ հասել են մատենագրական ակնարկներ այն մասին, որ IV դարում Մեծ Հայքում և Բյուզանդական Հայաստանում «պարտական»-ները տոկոսների ու ստրկության ահից փախուստի ճանապարհն էին բռնում:

Աշխատավոր ժողովրդին հարկապահանջության ենթարկող մյուս հաստատությունը քրիստոնեական եկեղեցին էր:

Կապադովկիան կայսրության այն շրջաններից էր, որտեղ քրիստոնեությունն ամենից շուտ սկսեց տարածվել և արմատներ ձգել: Կապադովկիայի (Կեսարիայի) եկեղեցին, սկսած III դարից մեծ հեղինակություն էր վայելում: Փիրմիլիանոսի ժամանակ (մհ.269) Կեսարիան համարվում էր աստվածաբանական կրթության հանրահռչակ կենտրոններից մեկը: Նրան չէր զիջում Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտինեն, որտեղ քրիստոնեական տարրերը բավականին ուժեղ էին և քաղաքական կյանքում որոշակի դեր էին խաղում, ինչպես այդ ցույց է տրված պատմագիտական երկերում:

Փոքր Հայքի եկեղեցին մտնում էր Կեսարիայի թեմի մեջ: Բարսեղ Կեսարացին իր թղթերում հաճախ հիշատակում է «Չորեքքաղաքյան Հայք» (Τετράπολις Ἀρμενία) կարևոր թեմը, որը գտնվում էր Փոքր Հայքում իր հոգևոր իրավասության ներքո: Այդ թեմի մեջ էին մտնում Փոքր Հայքի հայաշատ կենտրոններ՝ Սեբաստիան, Նիկոպոլիսը, Սատաղը և «Գաղութք Հայոց»-ը (Κολονία Ἀρμενίας): Այդ քաղաքների հայ եպիսկոպոսները հաստատվում էին իրենց աթոռներում և օծվում Կեսարիայի եպիսկոպոսի կողմից: Եպիսկոպոսների ընտրությունը կատարվում էր այն հաշվով, որ աթոռի թեկնածուն տիրապետի հայերեն լեզվին և տեղյակ լինի հայ

[12] Bac., VI, 228 և այլն:

իրականությամբ, ժողովրդի սովորույթներին ու բարքերին[13]:

IV դարի կեսերին ինչպես Արևմտյան Հռոմեական կայսրության բոլոր եկեղեցիները, այնպես էլ Կեսարիայի եկեղեցին՝ դարձել էր խոշոր հողատեր: Եկեղեցական կալվածքների վրա աշխատող ստրուկները և կոլոնները գտնվում էին նույն անմխիթար տնտեսական ու իրավական վիճակում, վարձակալելով հողը ծանր պայմաններով: Բացի դրանից՝ հոգևորականությունը նույնպես զբաղված էր վաշխառությամբ և այդ ճանապարհով կուտակում էր հսկայական միջոցներ:

Բարձրաստիճան հոգևորականության շարքերը, մեծ մասամբ, լրացնում էին հարուստ կալվածատեր և ստրկատեր ընտանիքների անդամները[14]: Հոգևորական բարձրաստիճան պաշտոնները, որպես մենաշնորհ, առանձնում էին տիրող դասերի ներկայացուցիչները, որովհետև եկեղեցին IV դարում արդեն ճանաչվել էր կալվածատեր-ստրկատերերի կողմից, որպես իրենց շահերի պաշտպանության ու շահագործվողներին հնազանդության մեջ պահելու համար անհրաժեշտ մի հաստատություն:

Եկեղեցին, որպես խոշոր կալվածատեր, հսկայական հասույթների տեր դառնալով, միաժամանակ ամրացնում էր իր տնտեսական դիրքերը այն բազմիպիսի տուրքերով ու «նվերներով», որ պարտավոր էր մուծել եկեղեցու գանձարանը աշխատավոր ժողովուրդը:

Բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները կարճ ժամանակում կուտակում էին հսկայական անշարժ ու շարժական կալվածքներ և իրենց նիստ ու կացով ու կենցաղով չէին տարբերվում աշխարհիկ

13 Բ. Կեսարացին իր նամակներից մեկում հայտնում է կոմես Տերենտիոսին, որ իր համար դժվար չէր լինի Հայաստանին եպիսկոպոսներ տալ, որովհետև Թեոդոտ եպիսկոպոսի թեմում (Նիկոպոլիս) «կան երկրպագելի, խելացի, (հայոց) լեզուն իմացող և այս ժողովրդի (հայերի) մյուս հատկությունների մասին տեղեկություններ ունեցող մարդիկ», Вас., VI, 216.

14 Որպես օրինակ կարելի է հիշատակել Բարսեղ Կեսարացուն: Նրա ծնողները, որ Կապադովկիայի ունևոր ստրկատերերից էին, իրենց որդու դաստիարակին, գման օգտագործման իրավունքով, նվիրել էին բազմաթիվ ստրուկներ:

տերերից[15]:

Կալվածատեր-ստրկատերերի սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության իր վրա դրված պարտականությունները իրագործելու համար եկեղեցին, մշակեց այնպիսի գաղափարախոսություն, որն օգնում էր սոցիալական առկա հարաբերությունները աստվածային կամքին համապատասխան հայտարարելու և այդ հարաբերությունների դեմ ուղղված ամեն մի շարժում ճնշելու գործին:

Սուրբ Գիրքը պաշտոնական եկեղեցու հայրերի մեկնաբանությամբ հռչակվեց որպես մտածելու և գործելու միակ ճիշտ ուղեցույց: Կույր հավատքը քրիստոնեական կրոնի հիմքերի մասին համարվեց իսկական հավատացյալի համար պարտադիր, որովհետև, ինչպես արտահայտվեց Աթանաս Ալեքսանդրացին. «վարդապետությունն Աստծու մասին պետք է ուսուցանվի ոչ թե մտածողական փաստարկներով, այլ հավատքի և երկյուղած ու բարեպաշտ մտածողության միջոցով»[16]:

Աշխատավորության համար կյանքը վեր էր ածվել կատարյալ տանջանքի, բնական է ուստի, որ նա «երկյուղած ու բարեպաշտ մտածողությամբ» չէր կարող աչքերը հառել դեպի երկինք, անդրաշխարհային վայելքների հույսով: Եվ իրոք, IV դարում, Արևելյան Հռոմեական կայսրության տարբեր մասերում, բռնկվում են ստրուկների ու կոլոնների ապստամբություններ, որոնք, ի վերջո, մահացու հարված հասցրեցին ստրկատիրական կարգերին և հիմք դրեցին ավատատիրական կարգերին:

Ստրկատիրությունը մի հարվածով չտապալվեց. ընդարձակ պատմական ժամանակաշրջան պահանջվեց, որպեսզի ստրուկների ապստամբությունների և «բարբարոսների» համատեղ հարվածների ներքո ստրկատիրական կարգերը վերջնականապես փլվեին: Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել:

IV դարում արդեն, Հռոմեական կայսրության մեջ, ինչպես տեսանք, առկա էին ուժեր, որոնք իրենց սոցիալական ու տնտեսական գոյավիճակով մոտ էին կանգնած ստրուկներին և նրանց բնական դաշնակիցներն էին

15 Այս տեսակետից կարևոր աղբյուր է որպես տեսաբան հռչակված Գրիգոր Նազիանզացու կտակը, որից պարզվում է, որ նա տեր էր շարժական ու անշարժ բազմաթիվ կալվածքների:

16 Афанасий, "Творения, III, стр. 34.

ընդդեմ կայսրության:

Ճնշագործվող արտադրողների IV-V դարերի ելույթներում ակնառու է սերտ համագործակցությունը ստրուկների, կոլոնների և քաղաքային ընչազուրկ շերտերի միջև:

Հողի վրա ամրացված ստրուկների ու կոլոնների համար ապստամբության նպատակն արդեն չէր կարող լինել միայն անձնական ազատությունը և հայրենիք վերադառնալը (ինչպես էր ստրուկների նախկին ապստամբությունների ժամանակ): Նրանց նպատակն էր ազատվել ոչ միայն անձնապես, այլև ազատել իրենց ընտանիքը, հայրենական օջախը և իրենց կողմից մշակվող հողը:

Հազիվ թե գտնվի կայսրության որևէ պրովինցիա ու շրջան, որտեղ տեղի ունեցած ստրկական ու կոլոնական շարժումների մասին տեղեկություններ պահպանած չլինեն ժամանակակից սկզբնաղբյուրները:

Ստրուկների ու կոլոնների IV դարի ապստամբությունները և ընդվզումները հանդես են եկել մերթ կրոնական քողի տակ՝ որպես հերձվածողական շարժումներ, մերթ որպես կրկեսային պարտիաների բախումներ, մերթ որպես բանակում բռնկված հուզումներ:

Աչառու և միակողմանի սկզբնաղբյուրների լուրջ քննությամբ երբեմն հաջողվում է ներթափանցել ու վեր հանել դրանց սոցիալական բովանդակությունը՝ խոշոր կամ նվազ հաջողությամբ:

Արևելյան Հռոմեական կայսրության տակ հեծող հայ ժողովրդի հատվածը, ակտիվ մասնակցելով կայսրության տնտեսական ու քաղաքական կյանքին և ենթարկվելով կրկնակի ճնշման ու հարստահարման, չէր կարող խաղաղ նստել դասակարգային այդ թեժ գոտեմարտերի շրջանում: Եվ իրոք, IV դարի 60-70-ական թվականներին Փոքր Հայքում, կրոնական քողի տակ ծավալվեց սոցիալական մի ուշագրավ շարժում:

II

IV դարի 60-70-ական թվականներին Փոքր Հայքում ծավալված սոցիալական շարժման մասին սկզբնաղբյուրները տեղեկություններ են հաղորդում կապելով այն Եվստաթիոս Սեբաստացու անվան հետ:

Եվստաթիոսը սակայն, որպես Սեբաստիայի եպիսկոպոս և որպես եկեղեցական գործիչ՝ ժամանակավորապես իր մերձավոր գինակիցներով

հարել է ժողովրդական շարժմանը, ունենալով բոլորովին այլ նպատակներ ու քաղաքական շահեր[17]:

Որպեսզի հնարավոր լինի Եվստաթիոսի մասին եղած ուշագրավ փաստերի միջից զատել այն բոլորը, ինչ վերաբերում է բուն ժողովրդական շարժմանը, անհրաժեշտ է նախ ծանոթանալ նրա անձնավորության ու հայացքների հետ:

Եվստաթիոս Սեբաստացին ծնվել է հայ եպիսկոպոս Եվլալիոսի ընտանիքում, մոտավորապես 305-315-ական թվականներին:

Նա իր ուսումն ստացել է Ալեքսանդրիայում, այն տարիներին, երբ Ալեքսանդրիայի եկեղեցին հետևում էր Արիոսի ուսմունքին, որը երկար ժամանակ իշխում էր Հռոմեական կայսրության Արևելյան պրովինցիաներում, և որին հարողները անհաշտ պայքար էին մղում «ուղղափառ» եկեղեցու դեմ: Այդ պայքարն անկասկած խարսխված էր սոցիալ-տնտեսական այն խորը հակամարտությունների վրա, որ գոյություն ունեին կայսրության ծայրագավառների ժողովուրդների և կայսրության, ինչպես և այդ ծայրագավառների աշխատավորության ու արիստոկրատիայի միջև: Արիոսականությանը հարող հասարակական շերտերը գտնում էին, որ գիտությունը հավատից վեր է, հավատը պետք է ստուգվի բանականությամբ: Եկեղեցին պետք է առաջնորդվի ոչ թե դոգմայով, այլ իր

[17] Եվստաթիոսի անունը հաճախ է հոլովվում եկեղեցական պատմություններում: Մերթ նա հիշատակվում է որպես արիոսականության մի թևի՝ հոգեմարտների պարագլուխ, իսկ ավելի հաճախ՝ որպես անամուսնական (անապատականների) շարժումը Հայաստանում և հարևան երկրներում տարածող մի գործիչ: Սակայն նրա մասին մինչ այժմ ամբողջական մի ուսումնասիրություն չի գրվել: «Բազմավէպ» ամսագրի տվյալներով (1932 թ. էջ 351-352) Ա. Սուքրյանի (1857-1882) արխիվում պահվում է մի անավարտ աշխատություն Եվստաթիոսի մասին, ուր հավաքված են Բարսեղ Կեսարացու նամակներում և Սոկրատի ու Սոզոմենի «Պատմություններում» գրված տեղեկությունները նրա մասին: Սուքրյանը, ըստ հոդվածի տվյալների, ցավով է արձանագրել այն հանգամանքը, որ Եվստաթիոսը հանդգնություն է ունեցել պայքարելու Բարսեղ Կեսարացու դեմ: «Կարելի է հետևցնել,- գրել է հոդվածագիրը Ա. Սուքրյանի աշխատության հիման վրա,- թէ այն (իմա՝ Եվստաթիոսը) իրավցնէ կարող, եզական և փայլուն դեմք մը պիտի ըլլար եթե այնպիսի բուռն, ծայրահեղ և փոփոխամիտ նկարագրի տեր չըլլար և իր կրոնական վարդապետությանց մեջ ակար ու կասկածելի կողմեր չունենար»:

բարոյական ու քաղաքական դրույթները պետք է հիմնավորի գիտության տվյալներով[18]:

Պաշտոնական եկեղեցու գաղափարախոսների ելակետն այս խնդրի մասին ճիշտ հակառակ դիրքերից էր բխում: Ամենանշանավոր եկեղեցական հայրերից մեկը՝ Բարսեղ Կեսարացին, գասում էր այսպես՝

«Ես գիտեմ, որ կա Աստված, բայց թե ինչ է նրա էությունը, ըմբռնողությունից վեր եմ համարում: Իսկ ինչպես եմ փրկվում - հավատի օգնությամբ....: Հետևաբար Աստծո անհասանելիության գիտակցությունը, Աստծո էության գիտակցությունն է: Մեզ փրկություն է բերում ոչ թե հետազոտությունը՝ ինչ է Աստված, այլ դավանանքն (այն մասին), որ կա Աստված»[19]:

Իրենց տեսական աշխատությունների մեջ և «ուղղափառ» եկեղեցու դեմ մղած իրենց բանավեճերում արիոսականները և նրանց ժառանգորդները (կիսարիոսականներ, հոգեմարտներ և այլք), օգտագործում էին գիտության և փիլիսոփայության նվաճումները, նրանք զեկավարվում էին «դիալեկտիկայի օրենքներով», իրենց համարում էին «հավատի քննիչներ և հետազոտողներ»:

Արիոսականներից շատերը, ուսումնասիրելով Արիստոտելի աշխատությունները լոգիկայի մասին, իրենց վեճերը կառուցում էին սիլլոգիզմների ձևով: Այդպիսիներից մեկը՝ Եվնոմիոսը, ինչպես վկայում է Բ. Կեսարացին, իր բոլոր ասածները փոխ էր առել աշխարհիկ իմաստասիրությունից, որը նրան «խելքից հանել էր» և հասցրել նոր գաղափարների»[20]:

Անհա արիոսականության ու «ուղղափառության» գաղափարական պայքարի այս տարիներին Եվստաթիոսը, ապրելով և ուսանելով Ալեքսանդրիայում, կազմակերպվում է որպես արիոսականության մի թևի՝

---

[18] А. П. Лебедев, "Вселенские соборы IV и V веков", Сергиев-Посад, 1896.

[19] Вас., III, 40.

[20] Աեցիոսը, համաձայն Սոկրատ Սխոլաստիկոսի («եկեղեց. պատմ.», էջ177), նույնպես հարել էր արիոսականներին, Արիստոտելի «Ստորոգութիւնք» աշխատությունն ուսումնասիրելուց հետո («իսկ զայս առնէր ստորոգութեանցն Արիստոտելի հաւատալով»):

մակեդոնյանների դրույթների ջերմ կողմնակից[21]:

Պատմական այլ սկզբնաղբյուրներ և հատկապես «Եկեղեցական պատմության» հեղինակ Սոզոմենոսը, Եվստաթիոսին կապում են անապատականների (անաքորետների) հետ: Սոզոմենոսը գրում է.

«Հայերի, Պափլագոնացիների և Սևծովյան բնակիչների մեջ վանական կյանքի սկիզբը, ասում են, դրեց հայկական Սեբաստիայի եկեղեցու գլուխ Եվստաթիոսը: Նա մտցրեց երկյուղած վարքի բոլոր կողմերին վերաբերող կանոններ...»[22]:

Անապատականների շարժումը սկսվեց IV դարի կեսերին Եգիպտոսում, իսկ հետագայում տարածվեց նաև քրիստոնեական այլ երկրներում: Շարժման հարողները թողնում էին իրենց ընտանիքը, հեռանում բնակավայրերից և իրենց կյանքն անցկացնում անմարդաբնակ անապատներում:

Անտոն Անապատականը (մհ. 357 թ.), որ համարվում է այդ շարժման հիմնադիր, իր մերձավոր աշակերտներից մեկի տվյալներով «գկարգն եկեղեցւոյ առաւելապէս պատուէր, և զամենեսեան, որք վիճակեալ էին յաստիճան քահանայութեան, կամէր յառաջ քան զինքն պատուել: Իսկ որ եպիսկոպոսք և երիցունք էին՝ ոչ ամաչէր ինքն խոնարհացուցանել զգլուխն...»[23]:

Անտոնը թշնամական դիրք էր բռնել հերձվածողական ու հերետիկոսական շարժումների նկատմամբ և քարոզում էր իր հետևորդներին՝ հարաբերության մեջ չմանել հերձվածողների հետ[24]:

---

[21] «Նա (Եվստաթիոսը) անցյալում ուսանում էր Արիոսի մոտ և մինչ ծաղկում էր Ալեքսանդրիայում, լինելով Արիոսի հետևորդ և համարվելով նրա ամենաանկեղծ աշակերտներից մեկը, հորինում էր նենգ պարսավանքներ միածնի մասին» (Вас. VII, 232):

[22] Церковная история Эрмия Созомена Саламинского, СПб, 1851г., кн. III, гл. 14.

[23] Աթանաս Ալեքսանդրացի, «Վարք երանելոյն Անտոնի միայնակեցի» («Վարք հարանց և քաղաքավարութիւնք նոցին», հտ. Ա, Վենետիկ, 1885, էջ 63):

[24] Աթանասը մեջ է բերում Անտոն Անապատականի խրատներից մեկը, ուր ասված է. «Մի ինչ լիցի միաբանութիւն ձեր առ հերձուածողսն և մի բնաւ ամենևին առ կա-

Ուշագրավ է նաև, որ անապատականության հիմնադիրը, հենվելով Ավետարանի վրա, բնական էր համարում ստրուկի ծանր աշխատանքը տիրոջ համար և քարոզում էր համբերատարություն և անտրտունջ հնազանդություն[25]*:*

Անապատականները, ընդհանուր առմամբ, հեռու էին կանգնած ակտիվ սոցիալական ու քաղաքական պայքարից և մտահոգված էին միայն իրենց «հոգու փրկությամբ»: Ուստի և պարզ է, որ եկեղեցին լուրջ հիմքեր չուներ անապատական շարժման հանդեպ թշնամական դիրք բռնելու: Ընդհակառակը, այդ շարժումն օրինականացնելով, եկեղեցին կբարձրացներ իր հեղինակությունը ժողովրդի աչքում և կունենար կազմակերպված մի ուժ, մի ամուր բռունցք՝ եկեղեցու դիրքերի ամրապնդման և ժողովրդական մասսաների ընդվզումները կանխելու համար: Շուտով ամենուրեք անապատական միաբանությունները մերվեցին եկեղեցու հետ, և ծնվեցին վանքերը:

Այսպիսով, Եվստաթիոսը հրապարակ է իջնում որպես անապատական շարժման ջատագովներից ու տարածողներից մեկը՝ գտնվելով հոգեմարտների (կինիկոսականների) գաղափարների ազդեցության ներքո:

Նա՝ ավարտելով իր ուսումը, Ալեքսանդրիայից վերադառնում է հայրենիք և Կեսարիայի արքեպիսկոպոս Հերմոգենից հոգևոր կոչում ստանում: Ապա մեկնում է Կոստանդնուպոլիս և տեսակցություն է ունենում հոգեմարտների կուսակցության պարագլուխ Եվսեբիոս Կեսարացու հետ: Վերադառնալով իր հայրենակիցների մոտ՝ Փոքր Հայք, օծվում է եպիսկոպոս և վայելելով փիլիսոփայի համբավ, ձեռք է բերում բազմաթիվ աշակերտներ: Անկյուրիայի եկեղեցական ժողովում Եվստաթիոսը հանդես է գալիս Նիկիայի դավանանքի դեմ: Այստեղից մեկնում է Սելևկիա և իր համախոհներին կազմակերպում ընդդեմ պաշտոնական եկեղեցու, լինում է նաև

մակոր ինքնակամ արհամարանօք, Բանզի գիտէ զիարդ և ես փաղչէի ի նոցանէ վասն քրիստոսամարտութեան նոցա և օտարափառ բարուցն» (նոյն տեղում, էջ 78):

[25] Անտոնն իր մի այլ խոսքում ասում է. «Ծառայն ոչ իշխէ ասել՝ վասնզի երեկ գործեցի այսօր ոչ գործեմ և ոչ զառաջին ժամանակն համարելով դադարեսցէ զառաջիկայ աւուրն, այլ զօրհանապազ, որպէս յԱւետարանին գրեալ է» (նոյն տեղում, էջ 31):

Ասորիքում, Եգիպտոսում և այլ վայրերում: Մելիտինեում հրավիրված ինչ-որ ժողովում նրան կարգալույծ են անում, սակայն նրան հաջողվում է կրկին վերականգնել իր դիրքը և հաստատվել հայրենի քաղաքում Սեբաստիայում, որպես եպիսկոպոս (357–378 թթ.):

Սրանք են Եվստաթիոսի կյանքի առաջին շրջանի հիմնական դրվագները:

370-ական թվականների սկզբներին Սեբաստիայում տեղի են ունենում «հերետիկոսական» և հակաեկեղեցական գաղափարներով տոգորված ժողովրդական հուզումներ, որոնք մտահոգում են հարևան թեմերի եպիսկոպոսներին:

Նիկոպոլսի եպիսկոպոս Թեոդոտի ջանքերով 372 թվին հրավիրվում է եկեղեցական ժողով Սեբաստիայի հուզումները զսպելու և Եվստաթիոսի դավանանքի հարցը պարզելու օրակարգով:

Նախքան ժողովին ներկայանալը Բարսեղ Կեսարացին (որը մինչ այդ մեծ հարգանքով է խոսում Եվստաթիոսի մասին և ակնածում է նրանից, համարելով նրան բարձր բարոյական հատկություններով օժտված մի գործիչ) տեսակցում է նրա հետ: Նրանց զրույցը տևում է 2 օր, և Բարսեղը համոզվում է կրկին, որ Եվստաթիոսը մի մարդ է, «որ նույնիսկ ոչ կարևոր որևէ բանում փախչում է ստից, որպես ինչ որ սարսափելի բանից» և եզրակացնում է, որ իրենք հավատի հարցերում «նույնիսկ մանրամասնությունների մեջ տարակարծիք չեն միմյանց հանդեպ»: Սակայն տեսակցությանը ներկա գտնվող Սեբաստիայի երեց Պիմենը, ընդհակառակը, խիստ քննադատում է Բարսեղին և բացահայտում իրեն, որպես «ուղղափառ» եկեղեցու հակառակորդ[26]*:*

Բարսեղի նամակում, որ ուղղված է Բյուզանդական Հայաստանի կառավարիչ կոմես Տերենտիոսին, արժեքավոր տվյալներ կան, որոնք լույս են սփռում Սեբաստիայի դեպքերի և Եվստաթիոսի դիրքորոշման վրա: Պարզվում է, որ բաժանվելով Բարսեղից, Եվստաթիոսը, ինչ-ինչ նկատառումներով, թաքցնում է իրենց տեսակցության ու զրույցի ճշգրիտ արդյունքը, և հակառակ եղելության, հավատացնում է իր աշակերտներին ու կողմնակիցներին, որ հավատի հարցերում ինքն ու Բարսեղը հակա-

[26] Вас. VI, 213, 215.

ռակորդներ են:

Այս դեպքերը ուշագրավ են մի շարք կողմերով: Նախ, պարզվում է, որ Սեբաստիայի գործիչների մեջ, որոնք մեղադրվում են ուղղափառ եկեղեցու հանդեպ գործած ինչ-որ մեղքերում, միաբանություն չկա: Եվստաթիոսը ձգտում է «չարատավորել» իրեն, որպես ուղղափառ եկեղեցու հակառակորդ: Ընդհակառակը՝ Սեբաստացի այլ գործիչներ՝ Պիմեն երեցը, Բարսեղն ու Սոփրոնիոսը[27] դիմադրում են Եվստաթիոսին և պահանջում են բացահայտորեն դուրս գալ պաշտոնական եկեղեցու դեմ: Բարսեղը խոսում է Նիկոպոլսի եպիսկոպոս Թեոդոտի ջանքերի մասին՝ եկեղեցական ժողովի միջոցով Եվստաթիոսին պատժելու և Սեբաստիայի շրջանում հաստատված «հերետիկոսական» շարժման առաջն առնելու ուղղությամբ: Այս նշանակում է, որ արդեն 372 թվին Սեբաստիայի հարևան թեմերի եպիսկոպոսները հասկացել էին այդ շարժման վտանգավորությունը և մտահոգված էին գործուն միջոցառումներով կանխել շարժման հետագա զարգացումն ու տարածումը: Նամակից ապա պարզվում է, որ Սեբաստիայի դեպքերը գրավել էին արդեն նաև կայսրության պաշտոնյաների ուշադրությունը:

Ուշագրավ են նաև հաջորդ՝ 373 թվականի դեպքերը: Եվստաթիոսը ցանկանալով ապացուցել, որ ինքը հավատարիմ է ուղղափառ եկեղեցու սկզբունքներին, իր կամքով թե հարկադրաբար, ստորագրում է Բարսեղ Կեսարացու շարադրած «հավատո հանգանակը», որը կազմված էր Նիկիականի համապատասխան, բայց հատուկ կետով նզովում էր հոգեմարտներին:

> «Ճշմարիտ իմաստությունը,- գրված է այնտեղ,- նզովում է նաև նրանց, ովքեր սուրբ հոգուն անվանում են ծառա, որովհետև նման խոսքերով նրան իջեցնում են արարածի աստիճանի»[28]:

Սակայն այս ստորագրությամբ Եվստաթիոսի և Կեսարիայի

[27] Bac. VI, 242.

[28] Այս «Հավատո հանգանակի» տակ Եվստաթիոսը գրում է. «Ես՝ եպիսկոպոս Եվստաթիոս, կարդալով առաջի քեզ՝ Բարսեղիդ, իմ կարծիքը, և համաձայնվեցի վերոգրեալին, և ստորագրեցի մեր եղբայրներ Ֆրոնտոնի, քորեպիսկոպոս Սևերիոսի և մի քանի այլ կղերականների ներկայությամբ» (Bac. VI, 252-253).

պաշտոնական եկեղեցու միջև լարված դրությունը չի մեղմանում: Ընդհակառակը, Սեբաստիայում տեղի են ունենում լուրջ դեպքեր: Հարևան թեմերի եպիսկոպոսներն ահաբեկված հետևում են այդ դեպքերին և վախենում են քայլ անգամ հեռանալ իրենց թեմերից[29]:

Բարսեղ Կեսարացու դեմ Եվստաթիոսը գրում է «ընդարձակ ճառեր», որոնք «լի են ամեն կարգի չարախոսությամբ», Սեբաստացի Բարսեղն ու Սոփրոնիոսը, նույնպիսի ելույթներ են ունենում Բարսեղ Կեսարացու դեմ, իսկ Սիմպլիկիա հերետիկոսուհին այնպես խիստ ու անխնա քննադատության է ենթարկում նրան, որ վերջինս ուղղում է այդ կնոջն իր ամենախիստ նամակը և ահաբեկում վերջին դատաստանով[30]:

376 թվականին Կեսարիա է գալիս կուսակալ Դեմոսթենեսը, որ համակրում էր Եվստաթիոսին:

Այս հանգամանքը տարօրինակ չպետք է թվա, որովհետև կայսրության բյուրոկրատական ապարատի ներկայացուցիչները՝ տեղական ստրկատիրական ավագանու և եկեղեցու անջատողական ձգտումների առաջն առնելու նպատակով, օգտագործում էին նաև տեղական ընդդիմադիր տարրերի դժգոհությունը՝ կենտրոնական իշխանության ամրապնդման և ժողովրդական շարժումների առաջն առնելու նպատակով:

Եվստաթիոսն ու նրա մերձավոր կուսակիցները Դեմոսթենեսի համար վտանգավոր ուժեր չէին, ընդհակառակը, զգուշաբար շոյելով նրանց, հնարավոր էր թերևս սոցիալական պայքարի ուղուց շեղել ժողովրդական այն շերտերին, որոնք Եվստաթիոս Սեբաստացուն դեռևս շարունակում էին դիտել որպես իրենց շահերի պաշտպան:

> «Սեբաստիայում,- հայտնում է Դեմոսթենեսի մասին Բ. Կեսարացին,- նա մի քանի օր նիստ գումարեց, զբաղվելով քաղաքացիների քննությամբ, և նրանց, ովքեր մեզ (ուղղափառներիս) հետ հարաբերության մեջ են (քաղաքային) սենատի անդամներ կոչեց, և դատապարտեց հասարակական պաշտոնների կատարման, իսկ Եվստաթիոսի կուսակիցներին նշանակեց ամենաբարձր մեծարանքներով»[31]:

[29] Նույն տեղում, էջ 285:

[30] Bac. VI, 237.

[31] Bac. VII, 165.

Այս տարիներին Եվստաթիոսին հաջողվում է իր կողմը գրավել նաև գաղատացիներին ու պոնտացիներին: Նիկոպոլսի թափուր եպիսկոպոսական աթոռի շուրջը Բարսեղի և Եվստաթիոսի միջև ծագած երկարատև վեճը նույնպես ավարտվում է Եվստաթիոսի հաղթանակով: Նիկոպոլսի եպիսկոպոս է նշանակվում նրա ամենամերձավոր զինակիցներից մեկը՝ Ֆրոնտոն եպիսկոպոսը[32]: Ուշագրավ է նաև, որ Եվստաթիոսը, դեռ մինչև այդ (373 թվականից) սկսել էր անվավեր հայտարարել «ուղղափառների» կատարած ձեռնադրությունները և իրեն հարած հոգևորականներին ձեռնադրում էր կրկին անգամ[33]:

Մոտավորապես հենց այս ժամանակներում տեղի է ունենում եկեղեցու հանդեպ ընդդիմադիր տարրերի միավորման տեսակետից մի շատ նշանակալից դեպք. սեբաստացիները դաշնակցում են «Եվիպպիոսի հետևորդների» հետ:

Այս մասին Պատրոֆիլոս եպիսկոպոսի 376 թվին գրած իր երկու նամակներում Բարսեղը կարևոր տվյալներ է հաղորդում: Առաջին նամակում նա գրում է.

«Եվիպպիոսի որդիները և Եվիպպիոսի թոռները փառահեղի դեսպանների միջոցով օտար կողմերից Սեբաստիա կանչվելով՝ իրենց կառավարչության տակ առան ժողովրդին, տիրեցին սուրբ սեղանին և դարձան թթխմոր այնտեղի եկեղեցիների համար»[34]:

Մյուս նամակից պարզվում են լրացուցիչ մանրամասնություններ:

[32] Սրա մասին Բ. Կեսարացին գրում է. «Սկզբից կրում էր ճշմարտության պաշտպանի դիմակ, իսկ հետագայում ամոթալի կերպով դավաճանեց հավատին և ինքն իրեն, դավաճանության դիմաց որպես պարգև, ստանալով անպատիվ անուն, որովհետև չնայած ինչպես ինքն էր կարծում, ընդունեց նրանցից (սեբաստացիներից) եպիսկոպոսական աստիճան, սակայն ... ներշնչեց իր հանդեպ ողջ Հայաստանում ընդհանուր զարշանք» (Bac. VII, 170):

[33] Այդ մասին Բարսեղը գրում է՝ «Նա համարձակվեց ոմանց հանդեպ կրկնել ձեռնադրությունը, մի բան որ մինչ այժմ, որքան հայտնի է, չի արել հերետիկոսներից և ոչ մեկը»: (Bac. VI, 262):

[34] Bac. VII, 190.

«Նրանք (խոսքը նույն աղանդավորների մասին է - Լ. Խ.), կանչվելով Սեբաստիա, տեր դարձան եկեղեցիներին, պատարագեցին սուրբ խորաններում, այնտեղի կղերականների կողմից հայտարարվելով եպիսկոպոս իրենց հացը բաժանեցին ժողովրդին, և որպես սրբեր ու նրանց հետ հարաբերության մեջ գտնվողներ նրանց ուղեկցությամբ շրջագայեցին ողջ երկիրը»[35]:

Ովքեր էին «Եվիպպիոսի որդիներն ու թոռները», որոնք այդպիսի ջերմ ընդունելություն են գտնում Սեբաստիայում:

Այս հարցի պատասխանը գտնելու համար ուղղակի վկայություններ և փաստեր չունենք: Այնուամենայնիվ հնարավոր է պարզել հետևյալը:

360-ական թվականներին Միջագետքում ծնունդ է առնում մի աղանդավորական հոսանք, որին հարողներն իրենց անվանում էին «մըցըլին» աղոթողներ: Նրանք շուտով, մեսալյան [կամ մծղնեներ] անվան տակ, իրենց բուն հայրենիքից դուրս գալով, Ասորիքի և Հայաստանի վրայով տարածվեցին մինչև հեռավոր երկրներ:

Մեսալյաններն իրենց ողջ ունեցվածքը վաճառում էին, արդյունքը բաժանում աղքատներին և հրաժարվում կենցաղական բոլոր գրավչություններից: Նրանք արհամարհում էին հասարակական ու պետական կարգերը, երկսեռ խմբեր կազմած շրջում էին բազմամարդ քաղաքներում և մուրացկանությամբ հոգում իրենց մարմնական սուղ պահանջները: Նրանք մերժում էին եկեղեցական արարողությունները և ժխտում պաշտոնական եկեղեցու մկրտությունն ու հաղորդությունը և այլն[36]:

Առաջին լուրջ հալածանքը մեսալյանների դեմ սկսվում է Եդեսիայում, որ նրանք բազմաքանակ հետևորդներ էին վաստակել: Արտաքսվելով Եդեսիայից, մեսալյանները քաշվում են Պամֆիլիայի կողմերը, սակայն այնտեղ ևս, ինչ-որ ժողովում դատապարտվելով՝ անցնում են Փոքր Ասիա և իրենց կողմն են գրավում մի շարք մենաստաններ: Նրանց դեմ խիստ

[35] Bac. VII, 198:

[36] Կարապետ Արքեպ., Մծղնեից աղանդը («Արարատ» ամսագիր, 1895, հունվար, էջ 6-7): Հ. Փափազյան, Եկեղեցական պատմություն, Վենետիկ, 1848, էջ 193-195:[Առավել հանգամանորեն տե՛ս Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 73-85] - Խմբ.:

պայքար է սկսում Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտինեի եպիսկոպոս Լետոյիոսը: Հրդեհում են նրանց մենաստանները, շատերը զոհ են գնում այդ հրդեհին: Փրկվածները Մելիտինեից փախուստ տալով, սիրալիր ընդունելություն են գտնում մի այլ հայ եպիսկոպոսի մոտ, որի անունը չի պահպանվել:

Մխիթարյան հեղինակներից մեկը ենթադրում է, որ այդ աղանդավորներին ապաստան տված հայ եպիսկոպոսը, ամենայն հավանականությամբ, Ներսես կաթողիկոսն է եղել, «որ յամի տեառն 365, ըստ աւանդելոյ մատենագրաց ազգիս խնամ կալաւ զդատարկաշրջիկ կրօնաւորս»[37]: Այս կարծիքի հեղինակը, ըստ երևույթին, ի նկատի ունի Փավստոսի «Պատմության» մեջ, Շահապիվանի Ա ժողովի մասին պահպանված տվյալները, որոնք բնավ չեն հաստատում նրա ենթադրությունը:

Մեր կարծիքով, Մելիտինեի եպիսկոպոսի հալածանքներից խույս տված մեսալյաններին ապաստանող հայ եպիսկոպոսը Սեբաստացի Եվստաթիոսն է եղել, և Բարսեղի կողմից «Եվիպպիոսի որդիներ և թոռներ» անվանված աղանդավորները հենց նույն մեսալյաններն են[38]:

Ուղղակի վկայություններ այս կարծիքի հաստատման համար, ինչպես ասացինք, չունենք: Բայց մեսալյանների ու Սեբաստացի աղանդավորների գաղափարների համադրությունը գալիս է ապացուցելու, որ վերոհիշյալ անցուդարձերը պատահականորեն չեն նմանվում իրար և որ ճիշտ են այն պատմաբանները, որոնք ազգակից են համարում մեսալյաններին և

[37] Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 195:

[38] **Եվիպպիոս** անունը կրող մի գործիչ կապված է Բարսեղ Կեսարացու հետ հետևյալ կերպ: Վաղենտ կայսրը՝ լինելով արիոսական՝ ուղարկում է Կեսարիա պրեֆեկտ Եվիպպիոսին և մի այլ պաշտոնյայի, որոնք ապարդյուն ջանքեր են գործ դնում Բարսեղի վրա ազդելու և նրան արիոսական դարձնելու համար: Բարսեղը բանադրում է նրանց: Թերևս, մեսալյաններին կոչելով «Եվիպպիոսի որդիներ և թոռներ», Բարսեղը ցանկացել է շեշտել, որ եկեղեցու և իր համար միատեսակ թշնամիներ են և՛ արիոսական պրեֆեկտը, և՛ Սեբաստիա հրավիրված աղանդավորները: Հնարավոր է սակայն, որ դրանց միջև ինչ-որ այլ, ավելի սերտ, կապ գոյություն ունի, որը մեզ չհաջողվեց պարզել առկա աղբյուրներով:

սեբաստացիներին[39]:

Դրանք երկուսն էլ մարդկության համար փրկության միակ ճանապարհը համարում են անձնական բարեմասնությունները և անդադար աղոթքները, բայց ո՛չ եկեղեցում, ժխտում են պաշտոնական եկեղեցու կազմակերպությունը, արհամարհում են տիրող հասարակական հարաբերությունները, իրենց շարքերն ընդունում են երկսեռ բոլոր մարդկանց՝ հավասար իրավունքներով ու սկզբունքներով, պայմանով, որ նրանք բաժանեն կամ վաճառեն իրենց ողջ գույքը և հրաժարվեն մասնավոր սեփականությունից:

Այսպիսով, պարզվում է Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար կարևոր մի դրվագ՝ 370-ական թվականներին Սեբաստիայում կատարվում է մերձեցում տեղական աղանդավորների ու մեսալյանների միջև:

Եկեղեցու դեմ պայքարի ելած այս ուժերը, միավորվելով, ժամանակավորապես հաջողություններ են ունենում:

«Նրանց կողմն անցած եկեղեցիները,- գրում է Բ. Կեսարացին,- նման ծակ անոթների, ընդունեցին իրենց մեջ ներհոսող հերետիկոսական ապականությունը»[40]:

Սեբաստիայի «հերետիկոսները» իրենց հակառակորդների հանդեպ կիրառում են պայքարի գործարար միջոցներ. Բարսեղի կողմնակիցներից մեկը՝ Ասկղիպեոսը գանահար է լինում նրանց կողմից և մեռնում, նրանք հրդեհում են ինչ-որ վանական միաբանության սրբատեղին և կից շինությունները[41], և ամենուրեք հալածում են ուղղափառ եկեղեցու հոգևորականներին:

[39] Տե՛ս օրինակ, Möller, Kirchengeschichte, I, S. 377. D. Angelov, Der Bogomilismus auf dem Gebiete des Byzantinischen Reiches", Sophia, 1948 և այլն:

[40] Bac. VII, 177.

[41] Տուժված կրոնավորներին ուղղված մխիթարական իր նամակում Բարսեղն այդ դեպքի մասին գրում է. «Լսեցի Ձեր դեմ կազմակերպված ծանր հալածանքի մասին և այն մասին, որ զատկից հետո այդ մարդիկ ... կրակի են մատնել Ձեր աշխատանքի արդյունքները: Ձեզ համար պատրաստելով անձեռակերտ կայան, իսկ իրենց համար վաստակելով հուր» (Bac. VII, 206).

Ահա ինչպես է ողբում ուղղափառ եկեղեցու համար ստեղծված ծանր ու անմխիթար կացությունը Բարսեղ Կեսարացին.

«Հափշտակված են ուրախությունն ու հոգևոր խնդությունը, ողբի են վերածվել մեր տոները, աղոթատները գոցված են: Բեմում չի կատարվում հոգևոր պաշտոնը, չկան քրիստոնեական ժողովներ, ուսուցիչները չեն նախագահում, չկան փրկարար խրատներ, ոչ հանդեսներ, ոչ գիշերային երգեցողություն, ոչ այն երանելի ուրախությունը, որին եկեղեցական հավաքույթներում հանձնվում են Աստծուն հավատացող հոգիները...»[42]:

Եվ այս բոլորն այն պատճառով, որ «հերետիկոսական չարիքը» տարածվել է ամենուրեք և ուղղափառ եկեղեցին օր ավուր զիջում է իր դիրքերը նրա հանդեպ:

«Հերետիկոսները» իրենց ազդեցության տակ առած շրջաններում իրագործում են մի շարք միջոցառումներ, որոնցով գրավում են ժողովրդի սերն ու համակրանքը և իրենց համար հենարան ստեղծում աշխատավորական լայն խավերում:

«Նրանց իշխանության տակ է գտնվում մկրտությունը, հանգուցյալների հուղարկավորությունը, այցելությունը հիվանդներին, վշտացյալների մխիթարությունը, օգնությունը կեղեքվածներին, ամեն տեսակի նպաստներ, խորհուրդների հաղորդակցությունը: Այս բոլորը իրագործվելով նրանց կողմից, ժողովրդի համար դառնում է հերետիկոսների հետ միաբանելու հանգույց: Այդ պատճառով, որոշ ժամանակ անցնելուց հետո, եթե նույնիսկ գա ազատությունը, այլևս չի լինի հույս ի դեպ ժամու խաբեության մեջ ընկածներին կրկին դարձնելու դեպի ճշմարտության գիտակցությունը»[43]:

Ահա այսպես մռայլ է պատկերացնում եկեղեցու վիճակը և հեռանկարը Կեսարիայի արքեպիսկոպոսը:

Սակայն պաշտոնական եկեղեցին և կայսրությունը չէին կարող երկար ժամանակ պասիվ հայեցողի դերում դիտել, թե ինչպես Փոքր Հայքի

[42] Bac. VII, 179.

[43] Bac. VII, 182.

մեծ մասում և կայսրության այլ պրովինցիաներում, խոր արմատներ ձգելով, տարածվում են Սեբաստիայի շրջանում պայքարի դրոշ բարձրացրած տարածվող գաղափարները: Եկեղեցին հարձակման անցնելու համար դիմում է վճռական քայլերի:

Պայքարի գլխավոր կազմակերպիչ Բարսեղ Կեսարացին Սեբաստիայի շարժման դեմ նախապատրաստում է միասնական ճակատ՝ թե՛ Կեսարիայում, և թե՛ իր հոգևոր իշխանության սահմաններից դուրս:

«Ուղղափառ» եկեղեցու բոլոր ուժերը համախմբելու նպատակով, նա իր նամակներում ուղղված իր իշխանության տակ գտնվող թեմերին, խորհուրդ է տալիս ժամանակավորապես պայքարը դադարեցնել բոլոր այն հոսանքների դեմ, որոնք սուրբ հոգին չեն համարում արարած (դավանաբանական հարցերում սեբաստացիները հոգեմարտ էին, ուստի և հոգուն արարած էին համարում)[44] *և այդ բոլորին ընդունելով եկեղեցու գիրկը, իրավամբ մտածում էր Բ. Կեսարացին, եկեղեցին նոր կողմնակիցներ կշահի, իսկ եկեղեցու դեմ պայքարի ելած սեբաստացիների շարքերը կնոսրանան: Նա գրում է.*

«Եվ այսպես, քանի որ շատ բերաններ են բացվում Սուրբ հոգու դեմ և շատ լեզուներ են սրվում նրա դեմ պարսավանքներում, խնդրում եմ Ձեզ, սահմանափակեցեք պարսավողներին...: Եվ հաղորդակից եղեք նրանց հետ, ովքեր Սուրբ հոգուն չեն կոչում արարած, որպեսզի պարսավողները միայնակ մնան... և իրենց սակավությամբ կորցնեն ուրիշների աչքում վստահությունը»[45]:

Մյուս գործարար քայլը, որին դիմում է Բարսեղ Կեսարացին, Արևմտյան եպիսկոպոսներից օգնություն հայցելն է:

Իտալական և գալլիական եպիսկոպոսներին առաքած իր թղթերից մեկում (376 թ.) նա գրում է.

«Ահա տասներեքերորդ տարին է, ինչ հերետիկոսների կողմից մեր դեմ հալա-

[44] Նույն Բարսեղը իր 24-րդ ճառում, ուղղակի հայտնում է, որ հոգեմարտությունից բխում է «օտարացում Աստծուց, արհամարհում ստրկության, ծառայական պարտավորությունների» և այլն (Bac. IV, 357).

[45] Bac. VI, 235.

ծանր է սկսվել, որի ընթացքում եկեղեցիներին ավելի վիշտ է պատճառվել, քան այն ժամանակվանից ի վեր, ինչ բարձրացված է Քրիստոսի Ավետարանը»:

Ճշմարիտ հավատացյալները կրում են բազում զրկանքներ միայն այն պատճառով, որ չեն հետևում հերետիկոսներին: Բարսեղը նկարագրելով եկեղեցու ծանր վիճակը, աղերսում է ուղարկել իրենց մոտ կարող գործիչներ, հերետիկոսների կողմից իրենց հասցված վերքերը բուժելու համար[46]:

Հակառակ դեպքում գրությունը հղի է ծանրագույն հետևանքներով և ոչ միայն Արևելքի համար.

«Որովհետև,- գրում է Բ. Կեսարացին,- հերետիկոսական չարիքը ամայացուցիչ է և վտանգ կա, որ մեր եկեղեցիները կլանելուց հետո, ի վերջո, կսպրդի նաև Ձեզ հարևան երկրների (ապականությունից) ողջ մնացած մասը»[47]:

Սեբաստիայի շարժման հետագա ընթացքի մասին տվյալները պակասում են: Բարսեղ Կեսարացու վերջին նամակը, որի մեջ հետաքրքրական տեղեկություններ կան շարժման մասին, գրված է 377-ին: Իր կյանքի վերջին տարիներին Բարսեղը (մհ. 378 թ.) ծանր հիվանդ է եղել և, ըստ երևույթին, հնարավորություն չի ունեցել շարունակելու իր պայքարը Եվստաթիոսի և Սեբաստիայի «հերետիկոսների» դեմ:

Սակայն փաստերի թերին լրացնում են այլ պատմական սկզբնաղբյուրներ, և հատկապես Գանգրայի ժողովի կանոնները:

Փոքր Հայքի հարևան Պափլագոնիայի մայրաքաղաք Գանգրայում հրավիրվում է եկեղեցական ժողով: Ժողովական 15 եպիսկոպոսները կազմում են 20 կետից բաղկացած մի կանոնական գիր, որով նզովում են Սեբաստիայի շարժման մասնակիցներին, մեկ առ մեկ քննելով և նզովքի դատապարտելով նրանց դավանաբանական ու բարոյագիտական հայացքները: Ժողովի մասնակիցները գրում են մի շրջաբերական թուղթ ուղղված հայ եպիսկոպոսներին, որով պատվիրում են անհաշտ պայքար ծավալել այդ «հերետիկոսների» դեմ, այդ թղթին կցում են նաև ժողովի որոշումների համառոտ շարադրանքը:

[46] Bac. VII, 176.

[47] Նույն տեղում, 180:

Մինչ այժմ չի պարզված ժողովի գումարման ճշգրիտ տարեթիվը: Այդ հարցի առթիվ կան հակասական ու անհամոզիչ մի շարք կարծիքներ, որոնց կանդրադառնանք Գանգրայի ժողովի կանոնների հայկական թարգմանության բնագրի մասին խոսելիս (տե՛ս «Հավելված»):

Այժմ իսկ ասենք, որ ժողովը, հավանորեն, գումարված պետք է լինի Բարսեղ Կեսարացու մահվանից (378 թ.) ոչ շատ հետո: Այսպես ենք կարծում, որովհետև նախ՝ Գանգրայի ժողովականների ցուցակից բացակայում է Բարսեղ Կեսարացու՝ սոցիալական այդ շարժման ամենամոլի հակառակորդի անունը, և ապա Սոկրատը, իր «Եկեղեցական պատմության» մեջ, համառոտակի շարադրելով Եվստաթիոսի և Սեբաստիայի «հերետիկոսների» գաղափարները, հայտնում է, որ «ժողով ... ի Գանգրա Պափղագոնիոյ եղեալ, զնա (զԵւստաթիոս) ընդեաց, և զաղանդն նորա նզովեաց այս յետոյ եղև»[48]:

Վերջին արտահայտությամբ ակնարկված է, որ ժողովի գումարման և շարժման սկզբնավորման տարեթվերի միջև երկարատև ժամանակ է անցել:

Այսպիսով, պետք է ընդունել, որ Բարսեղ Կեսարացու մահվանից որոշ ժամանակ հետո, տիրապետող եկեղեցին կարողացել է միահամուռ ճակատ ստեղծել Սեբաստիայի «հերետիկոսների» դեմ, կարգալույծ է արել Եվստաթիոսին և նզովել շարժման մասնակիցներին:

Սոզոմենոսը հաղորդում է, որ Գանգրայի ժողովից հետո Եվստաթիոսը թողել է իր տարօրինակությունները և դարձի է եկել[49]:

Այս վկայությունը վավերական պետք է համարվի:

Եվստաթիոս Սեբաստացին, լինելով հոգեմարտական կուսակցության պարագլուխներից մեկը և անապատական շարժման ջերմ կողմնակից, պաշտոնական եկեղեցու և Բյուզանդական կայսրության դեմ վճռական պայքարի դուրս չէր գալիս: Ընդհակառակը, հետևելով նրա գործունեությանը, մենք արդեն տեսանք, որ նա իր անկայուն ու փոփոխական դիրքով շարունակ ձգտում էր հաշտության եզրեր գտնել եկեղեցու հետ, բարեկամական

[48] Սոկրատայ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմութիւն», Վաղարշապատ, 1897, էջ 206:

[49] Церковная история Эрмия Созомена Саламинского, кн. III, гл. 14. СПб, 1851, стр. 201.

կապերով մերձենալ կայսրության պաշտոնյաներին և շեղել Սեբաստիայում բռնկված սոցիալական շարժման ընթացքն իր նպատակակետից:

Դատապարտվելով Գանգրայի ժողովում, Եվստաթիոսը և նրա մերձավոր աշակերտները լքում են սոցիալական պայքարի ելած իրենց դաշնակիցներին: Իսկ ովքե՞ր են դրանք:

Ֆ. Էնգելսը, իր «К истории первоначального христианства» *հոդվածում, այն հարցին, թե սոցիալական որ շերտերից էին համալրություն ստանում նախնական քրիստոնեական համայնքները, պատասխանում է*

«Գերազանցապես ցածր շերտերին պատկանող «ճնշվածներից ու հարստահարվածներից», ինչպես և վայել է հեղափոխական տարրին: Իսկ ովքե՞ց էին կազմված վերջիններս: Քաղաքներում ժողովրդի բոլոր շերտերի ազատ մարդկանցից..., ապա ազատ արձակվածներից ու գլխավորապես ստրուկներից... և պրովինցիաների գյուղական շրջաններում պարտքերից ավելի ու ավելի ստրկության մեջ ընկնող մանր գյուղացիներից»[50]:

Երբ քրիստոնեական եկեղեցին պետության կողմից «ընդունվեց» և սկսեց ժողովրդին հնազանդության և պասիվության մեջ պահելու իր պարտավորության իրագործումը, Էնգելսի ցույց տված հասարակական շերտերն ընդդիմադիր գիծը բռնեցին քրիստոնեական եկեղեցու հանդեպ և սկսեցին կազմակերպել իրենց առանձին համայնքները, որոնք եկեղեցու կողմից դիտվում էին որպես հերետիկոսական կամ աղանդավորական համայնքներ:

Սեբաստիայի շարժման ամենաակտիվ մասնակիցները ստրուկներն էին և քաղաքի ու գյուղի «ճնշվածներն ու հարստահարվածները»:

Շարժման թեժ օրերին եպիսկոպոսական աթոռից վտարված Գրիգոր Նյուսացին իր հետաքրքրական նամակներից մեկում աղանդավորական շարժումների մասնակիցների սոցիալական կազմի մասին հայտնում է ուշագրավ տվյալներ:

«Նրանք,- գրում է նա,- ովքեր երեկ չէ առաջին օրն են դուրս եկել արհես-

[50] К. Маркс и Ф. Энгельс, "О религии и борьбе с нею", т. II, Москва, 1933, стр. 558.

տանոցից, շտապում են իսկույն դավանաբանության ուսուցիչ լինել: Ոմանք թերևս ծառաներ են եղել ու փախել են ծառայությունից, խորին պատվով իմաստաբանում են անըմբռնելի նյութերի մասին: Դուք անշուշտ անտեղյակ չեք, թե ինչպիսի մարդկանց մենք ի նկատի ունենք. ամբողջ ***քաղաքը՝ շուկան և փողոցները լի են այդպիսիներով. Հացավաճառների, զգեստավաճառների, դրամափոխների, նպարավաճառների մասին է մեր խոսքը...»***[51]:

Բարսեղ Կեսարացու տվյալներով, իր եղբոր փոխարեն Նյուսայի եպիսկոպոս է նշանակվում «մի քանի օբոլով գնված մի ստրուկ», որը հավատի հարցերում շատ ավելի արմատական մտածող էր, քան իրեն նշանակողները, Դոար գյուղում շարժման ղեկավարն էր իր տիրոջից փախած մի ծառա, և ընդհանրապես, շարժման մասնակիցներից շատերը ստրուկներ կամ «աննշան» և «անաստված» մարդիկ էին[52]:

Հասկանալի է ուստի, թէ ինչու Գանգրայի ժողովականները հայ եպիսկոպոսներին հասցեագրված իրենց ուղերձում ուշադրություն են հրավիրում այն բանի վրա, որ Սեբաստիայի «հերետիկոսների» ուսմունքը չպետք է դիտել որպես մեկի կողմից մշակված ու հիմնավորված մի բան:

«Իւրաքանչիւր,- գրում են նրանք,- զինչ և ի միտս արկանէր՝ զայս յաւելոյր, և ճանոյ բուէր նոցին: Իբրև անքագասար խորհուրդս ինչ ընկալեան վասն բշնամանաց եկեղեցւոյ և վնասելոյ անձանց իւրեանց»:

Գանգրայի ժողովի կանոնների և մյուս աղբյուրների միջոցով, անշուշտ, անհնար է վեր հանել ու քննարկել Սեբաստիայում և հարևան շրջաններում ծավալված «հերետիկոսական» շարժման գաղափարախոսությունը բավարար չափով և մանրամասնորեն: Այնուամենայնիվ, այդ աղբյուրները, որքան էլ դրանք միտումնավոր լինեն և աղավաղեն ճշմարտությունը, հնարավորություն են տալիս ծանոթանալու շարժման

[51] Գր. Նյուսացու սույն նամակը գրված է 381-ից քիչ հետո:

[52] Вас., VII, 161-170. Սիմպլիկիա «հերետիկոսուհուն» ուղղած նամակում Բարսեղը հայտնում է, որ եթե հարկ լինի իր արդարությունն ու իրավացիությունը հավաստելու համար վկաներ հրավիրելու, ապա հանդես եկողները «չեն լինի ստրուկներ», պարզ է, որ նա ցանկանում է ասել, թե իր հակառակորդուհու կուսակիցները ստրուկներ են (Вас., VI, 237).

սոցիալ-տնտեսական, բարոյական ու գաղափարական մի շարք կարևոր դրույթների հետ:

III

Եկեղեցու գաղափարախոսությունը խարսխված է այն սկզբունքի վրա, որ մարդկությունը իր առօրյա կյանքում հակված է շեղվելու աստվածային ուղուց և գործելու այնպիսի մեղքեր, որոնց հատուցումը հանդերձյալ կյանքում լինելու է դժոխքն իր արհավիրքներով: Եկեղեցին, ըստ այդ սկզբունքի, իր բոլոր հաստատություններով ու պաշտոնյաների բազմությամբ, կոչված է մեղմելու Աստծո բարկությունը մարդկության հանդեպ և քավելու մարդկանց գործած հանցանքները: Հաշտարարի այդ դերը եկեղեցին ի վիճակի կլինի անխափան իրագործելու, եթե նա տնտեսապես ապահով լինի, եթե հավատացյալները առատառատ պարգևներով «հանուն Աստծո» օգնեն նրան, եթե կղերականությունն ազատ լինի իր ապրուստի հոգսերից:

IV դարում արդեն, եկեղեցին իրեն ապահովել էր ընդարձակ կալվածքներով, ուներ հսկայական հասույթներ:

Կղերականների մեծամասնությունը «Աստծո տան» հասույթներն օգտագործում էր իր ընտանիքի ու մերձավորների համար բարեկեցիկ ու փարթամ ապրուստի միջոցներ ապահովելու նպատակով: Այսպիսով, ոտնահարվում էին վաղ քրիստոնեական համայնքների սկզբունքները: Մարդկությունը բաժանվում էր երկու կաստաների՝ կղերականության, որի աղոթքներին Աստված ունկնդրում է և աշխատավոր ժողովրդի, որի լեզուն անհասկանալի է Աստծուն[53]:

[53] Այս սկզբունքը հիանալի պարզությամբ շարադրված է միջնադարյան մի քարոզում, որից արժե մի հատված մեջ բերել. «... Թէպէտ բնութեամբ (քահանայն) ամէն մարդոյ հաւասար է, այլ կարգին մեծ է քան զմարդ և հրեշտակաց հաւասար, որպէս նայիպ թագաւորին և ժողովուրդն. և ում որ խնդիրք լինի թագաւորէն՝ միջնորդի ձեռամբն կատարի. և ով որ վնասակար լինի՝ տայ կաշառս վազիրին և նա նորա միջնորդութեամբ հաշտի թագաւորն ընդ մահապարտին: Այսինքն մարդիկ հանապազ մեղանչեն և պատժապարտ լինեն աստուծոյ, վասն այն գան առ քահանայն և տան ժամի և պատարագի (դրամ) և քահանայն առնու և իւր արժանաւոր աղաւթիւքն - պատարագաւն միջնորդէ և զԱստուած հաշտեցնէ ընդ մեղաւորին...» (Մատենադարան, ձեռ. N 1109, էջ 221ա):

Եկեղեցու կողմից սրբագործված այս սկզբունքի դեմ անապատականները (ուստի և անապատական շարժման նշանավոր գործիչներից Եվստաթիոս Սեբաստացին) չէին հաշտվում: Նրանք այն տեսակետն էին պաշտպանում, որ ամեն ոք, զսպելով իր մարմնական պահանջները և արհեստականորեն տանջելով իր մարմինը, ի վիճակի է առանց եկեղեցու միջնորդության իր աղոթքները լսելի դարձնել աստծուն: Սակայն այստեղից նրանք չէին հանգում եկեղեցու անհրաժեշտությունը մերժելու գաղափարին: Ընդհակառակը, Սեբաստիայում սոցիալական պայքարի ելած աշխատավորական շերտերը և նրանց ղեկավարները կարևորագույն այս հարցն այլ ձևով էին լուծում: Նրանք, համաձայն Գանգրայի ժողովի կանոնների, մերժում էին պաշտոնական եկեղեցին առանց զիջման և որոշակիորեն:

«Ոյք ուսուցանեն,- կարդում ենք այնտեղ,- զտունն աստուծոյ և որ ի նա ժողովն ժողովիցին արհամարհել՝ նզովեալ լիցին»[54]:

Այսպիսով, նրանք ոչ միայն արհամարհում են պաշտոնական եկեղեցու աղոթատները, այլև բոլոր հավատացյալներին, որոնք դիմում են եկեղեցի: Հաջորդ՝ Զ(6), Է (7) և Ը (8) կանոնները լրացուցիչ մանրամասնություններ են պարզում եկեղեցու հանդեպ Սեբաստիայի հերետիկոսների բռնած դիրքի մասին:

Պարզվում է, որ նրանք չեն վճարում եկեղեցուն հասանելիք հարկերն ու տուրքերը, կամ հավաքում ու օգտագործում են դրանք իրենց համայնքների կարիքների համար (Կանոնք Է. Ը.):

Արհամարհելով պաշտոնական եկեղեցին, նրանք գումարում են իրենց սեփական ժողովները՝ առանց ուղղափառների մասնակցության: Այսպիսով, նրանք իրենց բոլոր կապերը խզում են պաշտոնական եկեղեցուց:

Սեբաստիայի շարժման մասնակիցները պայքարում են իրենց

[54] Գանգրայի ժողովի կանոնների հայերեն թարգմանության բնագիրը առված է «Հավելվածում»:

սկզբունքների իրականացման համար՝ կազմակերպելով ընդդիմադիր համայնքներ: Նրանք մերժում են եկեղեցու պաշտոնյաներին և իրավասու են համարում իրենց՝ տնօրինելու եկեղեցական հաստություններն այդ նորաստեղծ համայնքների պետքերի համար:

Նրանց այս սկզբունքից տրամաբանորեն բխում է այն վերաբերմունքը, որ նրանք ունեին ամուսնացած հոգևորականության հանդեպ (հիշենք, որ այդ ժամանակ նոր-նոր միայն, անապատական շարժման ազդեցության տակ, մշակվում էր կղերականության կուսակրոնության սկզբունքը):

Գանգրայի ժողովի Դ կանոնի համաձայն, սեբաստացիները խորշում էին «յերիցուէ, որ ամուսնացեալ իցէ» և գտնում էին, որ «ոչ իցէ արժան ի նոցանէ աւրհնս առնուլ»:

Եկեղեցին իր հեղինակությունն ու ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա խորացնելու նպատակով, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն լայնորեն օգտագործում էր սրբերի պաշտամունքը: Քրիստոնեական կրոնի համար հեթանոսներից հալածված ու զոհված մարդկանց շուրջը եկեղեցին հորինում էր ազդեցիկ պատմություններ: Եկեղեցու այդ նահատակները դիմագրավելով անլուր ճնշումների ու հալածանքների, զոհելով իրենց կյանքը հանդերձյալ աշխարհում դասվել են սրբերի շարքը: Աստված ունկնդրում է նրանց ձայնին և նրանք եկեղեցու պաշտոնյաներն են Աստծո ատյանում: Այդ սուրբ մարդկանց մասունքներն ամփոփող վայրերը, որոնց համար կառուցվում էին հատուկ շենքեր՝ մատուռներ ու եկեղեցիներ, ինչպես և այն վայրերը, որտեղ զոհվել էին նրանք՝ սուրբ վայրեր էին համարվում: Այդ վայրերից վեր առաքված աղոթքները,- քարոզում էր եկեղեցին,- նույն սրբերի բարեխոսությամբ, ունկնդրվում են Աստծո կողմից և փրկություն բերում հավատացյալներին, ուստի հավատացյալները պարտավոր են դիմել սրբերին, տոնել նրանց հիշատակը և, բնականորեն, փարթամ պահել նրանց անվամբ կառուցած եկեղեցիներն ու մատուռները: Այս էր պահանջում եկեղեցին: Սեբաստիայի հերետիկոսները, հակառակ անապատականների (որոնք այս հարցում ևս եկեղեցու դեմ ոչինչ չունեին), դեմ են դուրս գալիս նաև սրբերի պաշտամունքին:

Ամեն ոք իր հոգու փրկության պատասխանատուն է, մեղավոր մարդը փրկության հույս չի կարող ունենալ նույնիսկ այն դեպքում, երբ եկեղեցու երկրային և երկնային պաշտոնյաները միաբերան աղոթում ու բարեխոսում

են այդ առթիվ Աստծո առաջ: Ուստի նրանք սոսկ արդար մարդիկ են եղել և իրենց արդարությամբ փրկել են միայն իրենց հոգիները: Դատելով այսպես, նրանք մերժում են սրբերի պաշտամունքը, նրանց նվիրված տոներն ու հանդեսները: Այս հարցին է վերաբերում Գանգրայի ժողովի Ի. (20) կանոնը[55] և ժողովականների ուղերձի մի հատվածը, ուր ասված է. «Եւ ի տեղիս ուր մարտիրոսք եղեալ էին՝ արհամարհէին, և որ ի մատրունս ժողովէին և պաշտօն պաշտէին՝ մեղադիր լինէին»:

Սեբաստացի հերետիկոսները դուրս էին գալիս եկեղեցու դեմ նաև ագապի հարցում: Ագապը (հուն. «սէր»), նման Հայաստանում կատարվող «քելեխների», հասարակական մի ճաշկերույթ էր, որ արվում էր հանգուցյալի հոգու փրկության համար: Եկեղեցին շահագրգռված էր այդ հին սովորույթի պահպանմամբ, որովհետև, նախ՝ մեծ նյութական շահ էր ստանում ագապից և ապա՝ դրա միջոցով լրացուցիչ կերպով հաստատություն էր գտնում իր համար էական նշանակություն ունեցող այն սկզբունքը, ըստ որի, հոգու փրկության համար արտաքին ազդակներն անհրաժեշտ են:

Մեզ հետաքրքրող շարժման մասնակիցները, ավելորդ համարելով, մերժում էին նաև ագապը: Գանգրայի ժողովականները նրանց նզովում են նաև այս կապակցությամբ: ԺԱ. (11) կանոնում գրված է.

«Ով արհամարհեն զայնոսիկ, որք հաւատով ագապս առնեն և վասն պատուի տեառն կոչեն զեղբարս և ոչ կամին հաւասարել և յանձն առնուլ և արհամարհիցեն, նզովյալ եղիցին»:

Այսպիսով, Սեբաստիայի հերետիկոսները, խզելով իրենց բոլոր կապերը պաշտոնական եկեղեցուց և արհամարհելով եկեղեցու կազմակերպությունը, ստեղծում են առանձին համայնքներ, ուրույն կազմակերպությամբ և սոցիալ-տնտեսական ու գաղափարական ուրույն հիմքերի վրա:

[55] Ի. (20) Կանոնը հայերեն թարգմանության մեջ աղավաղված է, ահա և տալիս ենք հունարեն բնագրի թարգմանությունը. «Եթէ ոք ամբարտավանութեամբ և պարտանօք խոտիցէ զկցուրդս մարտիրոսաց կամ զպատարագս եղեալս պաշտամունս ի նոսա և զյիշատակս նոցին, նզովեալ լիցի». Hefele, էջ 180. Հ. Տաշյան, Վարդապետություն առաքելոց անվավերական կանոնաց մատյանը, Վիեննա, 1896, էջ 63-65:

Նրանք, ելնելով վաղ քրիստոնեական համայնքների մասին եղած, գուցե և մտացածին, պատկերացումներից, պահանջում էին հավասարացյալների հավասարության վերականգնում: Աստծո որդիների հավասարությունից նրանք դուրս էին բերում քաղաքացիական հավասարության և նույնիսկ, ունեցվածքի հավասարության սկզբունքը: Նրանք լայն ագիտացիա են տանում ծառաների միջավայրում, առաջարկում են խզել ստրկական շղթաները և փախչել տերերից, որովհետև Աստված բոլորին ստեղծել է հավասար իրավունքներով և Աստծո առաջ գոյություն չպետք է ունենան տերեր ու ծառաներ:

«Այլ զծառայս, ի պատճառս աստուածպաշտութեան, պատրեն արհամարհել զտեարս իւրեանց և հեռանալ ի ծառայութենէ, նոցա և ոչ ամենայն փութութեամբ պատուել և պաշտել զնոսա, նզովեալ լիցին». կարդում ենք Գանգրայի ժողովի Գ(3) կանոնում:

Նրանց քարոզները լայն արձագանք էին գտնում ստրուկների և եկեղեցական ու աշխարհիկ տերերի հողերին ամրացված կիսաճորտ կոլոնների միջավայրում. «Ծառայք ի տերեանց հեռացան և անարգեցին զտեարս իւրեանց» հայտնում են նույն ժողովականները հայ հոգևորականությանը հասցեագրած իրենց ուղերձում:

Փախուստի և այլ ճանապարհներով ազատություն գտած նախկին ծառաները, հարելով շարժմանը, դառնում էին այդ համայնքների իրավահավասար անդամներ: Ավելին, նրանցից շատերը իրենց անձնական բարեմասնությունների ու կազմակերպչական ընդունակությունների շնորհիվ իրավահավասարների այդ համայնքներում գրավում էին ղեկավար ու առաջատար դիրք[56]*:*

Այդ համայնքների տնտեսական հիմքը գույքային հավասարությունն էր, ավելի որոշակի ասած՝ մասնավոր սեփականության մերժումը: Մտնելով համայնքի մեջ, ամեն մի անդամ պարտավոր էր հանձնելու համայնքի տնօրինությանն իր ողջ ունեցվածքը: Նրանք համոզված էին, որ հարուստները, որոնք չեն հրաժարվում իրենց ողջ ունեցվածքից, չեն կարող

[56] Այդ կապակցությամբ արդեն նշել ենք, որ շարժման ղեկավարներից շատերը նախկին ստրուկներ ու ծառաներ էին:

հույս ունենալ հանդերձյալ կյանքի վրա:

«Եւ վասն մեծատանց,- գրում են Գանգրայի ժողովականները,- որ ոչ ամենայն խոտ յընչից հեռանային՝ իբրև անյոյս համարէին յԱստուծոյ»:

Պայքարի ելնելով սոցիալ-տնտեսական տիրող հարաբերությունների դեմ, նրանք չէին կարող անխախտ պահել այդ հարաբերությունների վրա խարսխված ընտանիքը և ընտանեկան բարոյականությունը:

Շարժման թշնամիների՝ Բ. Կեսարացու, Սոկրատի, Սոզոմենոսի խեղաթյուրված տվյալներով, նրանք պիղծ էին համարում ամուսնությունը, քանդում էին ամուսնական կապերը, հայտնելով, որ ամուսնացածները «արքայություն ոչ կարեն մտանել» (Ա կանոն), կանանց առաջարկում էին թողնել իրենց ամուսիններին, (ԺԴ կանոն), չէին խնամում ու սնուցանում իրենց որդիներին և ծնողներին (ԺԵ և ԺԶ կանոնք) և այլն:

Այս տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ շարժմանը հարած հասարակական շերտերը, ձգտում էին ստեղծել նոր տիպի ընտանիք՝ մերժելով եկեղեցու կողմից սրբագործված ընտանիքը, ուր իշխում էր տղամարդու բռնությունը, և ուր ուժեղանում էր մասնավոր սեփականության կուտակումը: Նրանք երեխաների ու ծերերի խնամակալության պարտականությունը դնում էին ողջ համայնքի վրա, «իմ» ու «քո»-ի սկզբունքը մերժելով նույնիսկ այս դեպքում: Երեխաների դաստիարակության ու ծերերի խնամակալության պատասխանատու գործը այդ համայնքներում իրագործվում էր հատուկ հաստատությունների միջոցով: Նրանք հիմնում էին մանկատներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, խնամում էին հիվանդներին, մխիթարում տառապյալներին, ամեն կարգի նպաստներով օգնում կարիքավորներին և այլն[57]*:*

Վերոհիշյալ հաստատությունները նորաստեղծ այդ համայնքներում այն աստիճան բարվոք վիճակի մեջ էին, որ Բարսեղ Կեսարացու տվյալներով, ժողովուրդը գայթակղվելով, դիմում էր նրանց մոտ և միաբանում նրանց: Եկեղեցին ստիպված էր հակամիջոցներ փնտրել և կառուցել նման տիպի հաստատություններ, որպեսզի աշխատավորների հետագա հոսանքը

[57] Вас., VII, 182.

դեպի այդ համայնքները կանխի[58]:

Կանայք այդ համայնքներում իրավահավասար էին տղամարդկանց: Սեռերի համահավասարության սկզբունքն իրագործվում էր կյանքի բոլոր բնագավառներում: Կանայք ակտիվորեն ու եռանդուն մասնակցում էին ուղղափառ եկեղեցու դեմ մղած պայքարին: Սիմպլիկիա հերետիկոսուհին իր խարազանիչ նամակներով ու գործունեությամբ Կեսարիայի եպիսկոպոսի ամենաոխերիմ թշնամին էր դարձել: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքից ելնելով՝ շարժման կին մասնակիցները փոխում էին նաև իրենց արտաքին հարդարանքը, հագնում էին տղամարդու զգեստ (ԺԳ կանոն) և կտրում իրենց մազերը, որ ըստ Գանգրայի ժողովականների, Աստծու կողմից տրված են կանանց որպես «յիշատակ հնազանդութեան» (ԺԷ կանոն): «Կանայք արտաքս քան զսովորութիւն հանդերձ կարգի կանանց՝ զարանց զգեստ ագանէին» կարդում ենք նույն հարցի մասին ժողովականների ուղերձի մեջ:

Համայնքներում սահմանված էին ասկետական կյանքի պայմաններ. մարմնական կարիքները հասցված էին մինիմումի. որոշ համայնքներում արգելված էր մսի գործածությունը («ոմանք ի նոցանէ ի միս ճաշակելոյ խորշէին և կասկածէին)»: Մերժելով եկեղեցու կողմից սահմանված պահքի օրերը, նրանք կիրակի օրերին էին պաս պահում և այլն:

Ուշագրավ են նաև Սեբաստիայի հերետիկոսների հայացքները

[58] Ըստ պատմական տեղեկությունների՝ Բարսեղ Կեսարացին Կապադովկիայում և Ներսես կաթողիկոսը Հայաստանում, միջոցների առաջ կանգ չառնելով, զարկ էին տալիս բուժական ու խնամակալական հաստատությունների կառուցմանը: Որոշ ուսումնասիրողներ (տես օր. J. Markwart, Die Entstehung der Armenischen Bistümer, Roma, 1932, S. 229). կարծում են, որ Ներսեսը, Կ. Պոլսից 357 թ. Հայաստան վերադառնալիս, երկար ժամանակ մնացել է Եվստաթիոսի մոտ և, ծանոթանալով Սեբաստիայում հիմնադրված հաստատությունների հետ, միտք է հղացել կատարել այդպիսի գործեր նաև Հայաստանում: Մարկվարտը և նրան հետևողները չեն ըմբռնել, որ եթե Ներսեսը իրոք Հայաստանում հիմնել է նման հաստատություններ, ապա այդ արել է ոչ թե բարեգործական ու մարդասիրական նկատառումներով, այլ հետապնդել է այլ նպատակներ, նախ՝ պայքարել ժողովրդական շարժումների դեմ և ապա՝ դեմագոգիկ միջոցառումներով բարձրացնել եկեղեցու հեղինակությունը:

դավանաբանական հարցերի մասին: Նրանք ժխտում էին Նիկիայի «Հավատո հանգանակը» պաշտոնական եկեղեցու կողմից միակ ճիշտ ու անառարկելի համարվող բանաձևը քրիստոնեական եռաստվածության (հայր, որդի, հոգի) մասին:

Նրանց կարծիքով աշխարհի արարչագործության ու կառավարման գործում մասնակից են երկու գերագույն և ամենակարող ուժեր՝ Մեծ աստված և Փոքր աստված:

«Բանն-որդին բնության անուն չի, այլ ինչ-որ հարգանքի կոչում է, սուրբ հոգին... չի հարաբերակցվում աստվածային և երանելի բնությանը, այլ մեկն է արարածներից և զուր տեղն ու պատահականորեն է միացված հորն ու որդուն»[59]:

Բարսեղ Կեսարացու հաղորդած այս արժեքավոր տվյալի հիման վրա հնարավոր է ենթադրել, որ Սեբաստիայի շարժման մասնակիցների աշխարհայացքը շոշափման որոշ եզրեր ուներ մանիքեության հետ:

Ժխտելով սուրբ որդու և հոգու գոյությունը, որպես եկեղեցու քարոզած եռաստվածության հայր Աստծուն հավասարազոր և նրանից անբաժանելի ուժեր, և եռաստվածության փոխարեն հավատալով երկու՝ «Մեծ» և «Փոքր» աստվածների գոյությանը, նրանք, ամենայն հավանականությամբ, «Մեծ Աստծուն» էին վերագրում բնության ու մարդկային հասարակության մեջ բոլոր «բարի» երևույթների արարչությունը, և ընդհակառակը՝ «Փոքր աստվածը» նրանց կարծիքով բնության ու հասարակության չար ուժերի մարմնացումն էր:

«Մեծ Աստվածը» ամեն ինչ ստեղծել է մարդկության բարօրության համար և տվել է մարդկությանն ազատ կամք, որով նա ընդունակ է ընթանալու ճիշտ կամ սխալ ճանապարհով, գործելու բարություն կամ չարություն, վարելու իր կյանքն արդարացի կամ անարդար սկզբունքներով:

Սուրբ Գիրքը, մանավանդ այն մեկնությամբ, ինչ առաջարկում է եկեղեցին, ըստ շարժման գաղափարախոսների, չի բացահայտում մարդկանց աստվածային կամքը: Մարդն ի վիճակի է ճանաչելու Աստծուն բանականության միջոցով, ուստի և բանականությունը վեր է դոգմայից ու նախապաշարմունքից: Հավատը,- կարծում էին նրանք,- բանականության

[59] Bac., VII, 181.

արթնացումն է մարդու մեջ, այդ իսկ պատճառով Աստծուն ճանաչել կարող են բոլոր նրանք, ովքեր կռվում են չարի դեմ, «մաքրվում են» չարից և իրենց բարեմասնություններով ու գործունեությամբ ընթանում են արդար ճանապարհով:

Եկեղեցին քարոզում էր, որ Քրիստոս-Աստվածը իջնելով իր երկնային գահից և տառապելով ու խաչվելով մարդկանց հոգիների փրկության համար՝ հիմնել է իր եկեղեցին և դրանով իսկ՝ ավարտել է իր միսիան:

Այս մտքի հետ աշխատավոր և իրավազուրկ խավերը չէին կարող հաշտվել:

Չարիքն ու աշխատավորների տառապանքը,- մտածում էին նրանք,- Քրիստոսի այսաշխարհային գործունեությամբ ոչ միայն չի դադարել և չի մեղմացել, այլ ընդհակառակը, նրա եկեղեցին վեր է ածվել մի հաստատության, որը սրբագործում է ստրկատիրոջ անլուր շահագործումը և պահանջում է ծառաներից անտրտունջ ու լուռ արյուն և քրտինք թափել տիրոջ համար: Ուստի Սեբաստիայի հերետիկոսները, միջնադարյան մյուս աղանդավորների նման[60], կարծում էին, որ բարի Աստվածը կրկին գալու է աշխարհ հաստատելու համար «իսկական արդարացի» հարաբերություններ, պատժելու համար բոլոր նրանց, ովքեր չարի կամակատարներն են:

Ահա տեսական այս դրույթներով էին առաջնորդվում Սեբաստիայի և Փոքր Հայքի մյուս շրջաններում ծավալված ժողովրդական շարժման մասնակիցները:

Սեբաստիայի շարժումը հաջողություն չունեցավ և չէր էլ կարող ունենալ: Ստրկատիրական կարգերը Արևելյան Հռոմեական կայսրության մեջ դեռևս այնքան ուժեղ էին, որ կայսրությունն ի վիճակի էր ճնշելու ժողովրդական ընդվզումները և շարժումները:

Գանգրայի ժողովից հետո Փոքր Հայքի հերետիկոսների ուժերը ջլատվում են և, շարժումն ապրում է իր տեղատվության շրջանը: Սակայն Սեբաստիայում մշակված գաղափարները, որոնց իրագործման համար համախմբվել էին ու դաշնակցել ստրուկները, կոլոնները և քաղաքի

[60] В. Волгин. История социалистических идей, ч. I, Москва-Ленинград, 1928, стр. 74.

աշխատավոր խավերը, տարածվում են Փոքր Հայքի սահմաններից դուրս՝ գտնելով իրենց համար դասակարգային պայքարի պարարտ հող:

Այս տեսակետից ուշագրավ ակնարկներ են պահպանվել Արշակունյաց Հայաստանի մասին:

IV

IV դարի կեսերին Արշակունյաց Հայաստանն ապրում էր դասակարգային և ներդասակարգային սուր բախումների ու գոտեմարտերի շրջան: Լինելով երկու հարևան հզոր պետությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Արևելյան Հռոմեական կայսրության կռվախնձորն ու ռազմական թատերաբեմը՝ Հայաստանն այդ ժամանակ կրում էր երկկողմանի ծանր հարվածներ: Մերթ պարսիկներն էին ավարի մատնում աշխատավոր գյուղացու դառն քրտինքի արդյունքները և բնաջնջում բնակչությունն ու երկրի մշակութային արժեքները, մերթ նույն դերն ստանձնում էր Հռոմեական Կայսրությունը:

Հայաստանն ի վիճակի կլիներ դիմագրավել թշնամի գերազանց ուժերի գրոհները և պահպանել իր պետական անկախությունն ու ազատությունը, եթե կարողանար ամրապնդել պետական իշխանությունը և միավորել երկրի քաղաքական ու զինական ողջ ուժերը: Մինչդեռ նախարարական կենտրոնախույս ուժերը տանում էին երկիրը ջլատման ուղիով, իսկ հայ եկեղեցին, այդ ազդեցիկ և ուժեղ հողատերը, իր հովանու տակ առնելով Արշակունյաց պետության թշնամի նախարարական տներին, ձգտում էր նաև քաղաքական տեսակետից դառնալ Հայաստանի տերը[61]:

Հայ եկեղեցին իր մեծածավալ կալվածքների վրա ամրացված գյուղացիներին ու ստրուկներին ամարդի ու դաժան շահագործման էր

[61] Արշակունիների և հայ եկեղեցու միջև տասնամյակներ տևող ներդասակարգային սուր պայքարի բնորոշ դրվագներից է Հայր Մարդպետի սպանությունը Ներսես կաթողիկոսի սադրանքով: Մարդպետի «մեղքը» եկեղեցու հանդեպ կայանում էր նրանում, որ նա ձգտում էր հափշտակել եկեղեցու բարեբեր կալվածները: «Զխարդ,- ասում էր նա կաթողիկոսին,- զայսպիսի տեղիս (իմա՝ կաթողիկոսական բարեբեր կալվածները) կանանցահանդերձ մարդկանց առեալ է ... զայս տեղիս ի բաց հանեմ, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի (Փավստոս, IV, ԺԴ, էջ 97):

ենթարկում: Եկեղեցու դեմ ատելությամբ էին լցված նաև նախարարների և արքունի տան կալվածքների գյուղացիները, որովհետև յուրաքանչյուր գյուղական համայնք, իր հողերից պարտավոր էր բաժին հանել եկեղեցուն այնքան, ինչքան ստանում էին 5-7 գյուղական ընտանիքներ միասին վերցրած: Գյուղացին պարտավոր էր անխափան մուծել եկեղեցական գանձարանը «զկարգս պտղոյն և զտասնորդացն», այսինքն՝ բերքի 1/10 մասը և պտղի հարկը[62]:

Եպիսկոպոսներին հետաքրքրում էր «զօշաքաղութեամբ ... զհարկս միայն պահանջել և ագահութեամբ զոսկոյ և զարծաթոյ մթերս ... մթերել»[63]:

Փավստոսը մեզ թողել է իր կալվածքները ուռճացնելու ու ժողովրդին կեղեքելու մարմանջով տարված մի այդպիսի եպիսկոպոսի՝ Հովհանի, կենդանի դիմանկարը:

Հովհանը Փառեն կաթողիկոսի որդին էր: Նա շահագիտական նկատառումներով, ի վիշտ և ի տանջանս շինականի, քահանա էր ձեռնադրում այնպիսի մարդկանց, որոնք իրենց իսկ վկայությամբ են «այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ»: Նա, որպես ուղտ, չորեքթաթ սողում էր թագավորի առաջ և կատարում այլ խեղկատակություններ: «Իսկ թագաւորքն,- գրում է Փավստոսը,- զմուրհակս գիւղից կամ ագարակաց գրեալ և կնքեալ գնէին ի վերայ ողինն Յոհաննու... և ի թագաւորացն Հայոց առացալ իւր դեզս և գանձս...»:

Նույն Հովհանին ժամանակակից այլ բարձրաստիճան հոգևորականներ և նրանց որդիները գինարբուքի ու պոռնկության վայրեր էին դարձնում եկեղեցիները և իրենց անբարոյական վարքով ու առօրյայով ոչնչով չէին տարբերվում աշխարհիկ տերերից:

Պերճախոս է նաև նույն պատմիչի գնահատականը կաթողիկոս Զավենի մասին: Զավենը Փավստոսի ավյալով.

«... Զամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց, զի ոչ ըստ կրօնիցն ազգին քահանայքն զգենուին, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զխոտորնակսն ի վերայ ծնգացն ունել: Եւ զարդարէին զհանդերձս իւրեանց պէս պէս

[62] Փաւստոս, V, ԼԱ, էջ 194:

[63] Սահակ Պարթևի կանոններից. տես՝ «Կանոնագիրք Հայոց», Թիֆլիզ, 1913, էջ 19:

նարօտօք և սիգային որպէս ոչ վայել էր, և զմորթ մեռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ագանէին...»: Ինքը՝ կաթողիկոս Զավենը պճնվում էր թանկարժեք մորթիներով և «անկրօնութեամբ և ագահութեամբ կայր... զամենայն աւուրս կենաց իւրոց»[64]:

Ուշադրության արժանի է վերոհիշյալ վկայության այն հատվածը, ուր ասված է, թե Զավենի ժամանակ քահանաները հագնում էին «հանդերձ զինւորաց»: Հոգևորականների զինվորական հանդերձանք կրելու և զինվորականներին բնորոշ կենցաղով իրենց առօրյան անցկացնելու մասին այս վկայությունը հաստատվում է նաև այլ աղբյուրներով[65]: Կարելի է կռահել, որ զինվորական համազգեստն իր գեղեցկությամբ չէր հրապուրում հոգևորականությանը: Ժողովրդին հնազանդության մեջ պահելու համար հովհանատիպ եպիսկոպոսների քարոզներն ու աղոթքները, անշուշտ, այնքան զորավոր չէին կարող լինել, որքան զինվորի հատու սուրը: Եվ կղերականությունը ստիպված է լինում անեծքը բերնին և սուրը ձեռքին ապահովել իր գիրքը և պաշտպանվել ժողովրդական հուզումներից:

Աշխատավոր ժողովրդի մի մասը եկեղեցու դեմ իր դժգոհությունն արտահայտում էր նրանով, որ թողնում էր քրիստոնեությունը և կրկին պաշտում իր հեթանոս աստվածներին[66]:

Ուրիշները, դառնացած սոցիալ-տնտեսական առկա հարաբերություններից և փրկության ելք չգտնելով, դիմում էին պասիվ պայքարի միջոցի: Նրանք թողնում էին իրենց տունն ու ընտանիքը, և բնակություն հաստատելով անմարդաբնակ լեռնաձերպերում ճգնությամբ ու աղոթքով նախապատրաստվում իրենց «անդրաշխարհային երանության»:

IV դարի կեսերին արդեն, Հայաստանում կային մեծ թվով անապա-

[64] Փաւստոս, VI, Բ., էջ 223:

[65] Ներսես կաթողիկոսի (548-557) և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոններում, ինչպես և Դվինի ժողովի (645 թ.) որոշումների մեջ խիստ պատիժներ են սահմանված այն եկեղեցականների դեմ, որոնք պճնվում և իրենց վարք ու բարքով նմանվում են զինվորականներին (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», էջ 110-111 և «Կանոնք Դունայ ժողովոյն», էջ 12):

[66] Մ. Խորենացին ներանոսության մասին գրում է. «Թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչև զայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց», (Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 316):

տականներ, որոնք աստիճանաբար սկսեցին կազմակերպել միաբանություններ և հիմք դրեցին առաջին վանքերին:

Այս շարժումն անցանկալի հետևանքներ կարող էր ունենալ եկեղեցու համար: Սակայն եկեղեցին ժամանակին հասկացավ այդ և կարողացավ շեղել շարժման ուղղությունը և նորաստեղծ վանական միաբանությունները ծառայեցնել եկեղեցու դիրքն ու հեղինակությունը ուժեղացնելու գործին: Եվ շատ չանցած, ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում, անապատականների միաբանությունները միավեցին եկեղեցու հետ: Ճիշտ է, V դարի սկզբներին դեռևս կային մարդիկ, որոնք հիշելով վանական հաստատությունների հին բովանդակությունը, ցանկանում էին վանքն անջատել եկեղեցուց, սակայն Սահակ կաթողիկոսը (387-436), հատուկ սահմանադրությամբ («Թէ, որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց»)[67] անհրաժեշտ համարեց դատապարտել նրանց, ովքեր՝

«Կարծեցին ագիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել և այլ զոմն՝ վանք և տխմար բանիւ խուեանց կամեցան կռիւ և հերձուածս մուծանել ի միաբանութիւն հաւատոյ»[68]:

Սահակը՝ մերժելով եկեղեցու համար վնասակար այդ կարծիքը՝ պնդում է, որ եկեղեցիներն ու վանքերը այլ բաներ չեն և երկուսն էլ կոչված են աղոթքներով մարդկանց մեղքերը քավելու և աշխարհի խաղաղությունը

[67] Այս «Սահմանադրութիւնը» Մատենադարանի N 659 ձեռագրում (էջ 227բ) վերնագրված է այսպես. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նախատակէն տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին հայոց և զնորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց»:

[68] «Կանոնգիրք Հայոց» հրատարակություն Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1913, էջ 29: Տեղին է ասել, որ հրատարակիչն առանց որևէ ձեռագրական ու տրամաբանական հիմքի, այս սահմանադրությունը, ինչպես և այլ կանոնախմբեր, հրատարակել է բաժանելով անիմաստ պարագրաֆների ու հոդվածների, որոնք թյուրիմացության մեջ են գցում ընթերցողին և աղավաղում են բնագրի նախնական կերպարը: [«Կանոնգիրք Հայոց»-ի երկհատորանոց գիտական հրատարակություն լույս տեսավ պրոֆ. Վ. Հակոբյանի աշխատասիրությամբ: Հ. Ա, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1971] – խմբ.:

խնդրելու համար, այն տարբերությամբ միայն, որ եկեղեցիների սպասավորներն ամուսնացած քահանաներ են, իսկ վանական միաբանության անդամները՝ կուսակրոններ[69]:

Ծառաների փախուստը տերերից, պարտապանների փախուստը վաշխառուից, և անկազմակերպ, տարերային դասակարգային պայքարը դառնում են նաև Մեծ Հայքի ներքին կյանքի բնորոշ երևույթները: Եկեղեցականներն ստիպված են լինում հատուկ կանոններ մշակել՝ ապստամբ ծառաների ձերբակալման և հարակից հարցերի մասին:

Աթանաս Աղեքսանդրացուն վերագրված կանոնախմբերից մեկում կա հետևյալ հարցը. «Եթէ քահանայի ծառայ ապստամբիցէ և գնասցէ ի տեառնէ իւրմէ, և նա այլ ծառայս արձակիցէ. զի կալցեն զգնացեալ ծառայն և զարձուցեն առ տէրն իւրեանց, և ի հասանելն առ միմեանս սպանումն լինի ի միջին, վնասակարութիւնն սպանութեանն քահանայն կրիցի՞ եթէ ոչ…»[70]:

[69] Անապատական միաբանությունները եկեղեցական հաստատություններ դարձնելու գործում հիշատակության արժանի աշխատանք է կատարել Գինդ անապատականը: Նա Փավստոսի տեղեկություններով «գլուխ (էր) աբեղայից և վարդապետ միանձանց և առաջնորդ մենակեցաց և վերակացու վանորայից և ուսուցիչ ամենայն անապատաւորաց» (էջ 230): Նրա բազմաթիվ աշակերտները (Վաչակ, Արտոյտ, Մարախ, Տրդատ) եղբայրանոցներ ու վանքեր են հիմնում Հայաստանի այլ և այլ գավառներում, նրանք վարում են խիստ ասկետական կյանք. «Ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս և ի քարածերպս երկրի, և միահանդերձք բոկագնացք զգաստացեալք խոտաճարակք բնդաբուտք արմատակերք, զորէն գազանաց ի լերինս շրջէին՝ լեշկամաշկօք և մորթօք այծենեօք…»: Նրանք բոլորն էլ զբաղվում էին ակտիվ քարոզչական գործունեությամբ. «Ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս և ի սփիւռ հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց…»:
Վերոհիշյալից պարզ է, որ սրանք, չնայած վարք ու բարքով նման չէին եկեղեցու պաշտոնեությանը, սակայն իրենց գործունեությամբ նպաստում էին նույն եկեղեցու տնտեսական ու գաղափարական հիմքերի ամրապնդմանը:

[70] Մատենադարան, ձեռ. N 873, էջ 66բ. Մենք հնարավոր և անհրաժեշտ ենք համարում օգտագործել թարգմանական կանոնախմբերի տվյալները այս կամ այն հարցի լուսաբանման նպատակով, որովհետև դրանց թարգմանիչներին հետաքրքրել է ոչ թե տվյալ երկի գիտական ու գրական արժանիքը, այլ նրա օգտագործելիության

Անտարակույս, այդպիսի հարցերի քննությամբ եկեղեցին սոխված է լինում զբաղվել, որովհետև կյանքն ինքը հրատապ է դարձնում դրանց լուծումը:

Կառավարող դինաստիան իր պայքարը կենտրոնախույս նախարարական ուժերի դեմ հաջող իրականացնելու համար հնարավոր է համարում օգտագործել նաև ժողովրդական լայն զանգվածների դժգոհությունը, ուղղելով այն ուժեղ պետականության թշնամիների և արտաքին վտանգի դեմ: Այս նպատակով Արշակ Բ-ն (346-369 թթ.), երկրի սրտում, «ի թիկանց կուսէ լերինն Մասեաց», կառուցում է մի քաղաք՝ Արշակավան անունով[71]:

Քաղաքի շինության, բնակչության կազմի, եկեղեցու և նախարարների միասնական բողոքի և քաղաքի կործանման մասին Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին հաղորդում են իրար լրացնող կարևոր տեղեկություններ.

Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Պետերբուրգ, 1883, էջ 90-95.

«Ջայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 288-289.

«... Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց...:

(Այնտեղ հավաքվում են) ատենդառուք, և պարտականք, և ծառայք, և վնասակարք, և գողք, և

ննարավորությունը Հայաստանի ներքին կյանքի համանման երևույթների լուսաբանման համար:

[71] Արշակավանի կառուցման ու կործանման թվականները պարզ չեն: Հ. Մարկվարտը կործանումը դնում է 358 թվականին՝ անհիմն նկատառումներով: Հավանական է ենթադրել, որ նախարարական ուժերի գրոհը Արշակավանի վրա տեղի է ունեցել Արշակի թագավորության վերջին տարիներին՝ 366/7 թվականներին:

Իբրև եկ հրաման արքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդկոյզք, վնասակարք, զանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, զերփողք, յափշտակողք, ժլատք: Բազում վնաս առնէին և անգր անկանէին, բազում կանայք զարս թողուին և անգր անկանէին, բազում արք զիւրանց կանայս թողուին... բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անգր անկանէին. բազում ատենդառուք, զաւանդս լի պահեստս բարձեալ, անդ անկանէին զերփէին աւերէին զերկիրն ամենայն...»:

սպանողք, և կնահանք և այլք այսպիսիք...:

Եւ բազում անգամ բողոքեալ նախարարացն և ոչ ինչ լուաւ նոցա Արշակ: (Նախարարները նույնիսկ դիմում են Շապուհին, ի վերջո)... Նախարարացն հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց, *քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց եւ յանցաւորաց...»:*

Խաղ եպիսկոպոս, ապա ահռորից վերադարձած Ներսէսը՝ անարդյունք ջանքեր են թափում համոզելու թագավորին, որ Արշակավանը պետք է կործանել: Ներսեսը, արդյունքի չհասնելով, անիծում է քաղաքը, և նրա «ամենակարող անեծքի» ուժով «մատնեաց Տէր զգիւղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս հարուածոցն... ոչ ավելի եղև հարուածոցն ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդեցաւ. քան զքաան հազարք սատակեցան երդք մարդկան»:

Ինչպես դժվար չէ կռահել վերոհիշյալ երկու վկայություններից, Փավստոսն ամեն կերպ ցանկանում է վարկաբեկել Արշակավանի

բնակիչներին, նրա կարծիքով քաղաքը շենանում է գող, մարդասպան, հափշտակող, անբարոյական մարդկանցով, սակայն խորաթափանց Խորենացին իր մի արտահայտությամբ (մեր կողմից ընդգծված) պարզում է Արշակավանի բնակչության դասակարգային կազմը: Դրանք իրենց տերերից փախած ստրուկներ և շինականներ էին կամ ծանր պարտքերից անհուսալի աղքատության հասած ազատ մարդիկ, որոնք՝ պատսպարվելով Թագավորի դաստակերտում, պատրաստ էին գործակցել Թագավորին՝ կենտրոնախույս նախարարների և եկեղեցու դեմ, հանուն ուժեղ հայկական պետականության նրա մղած պայքարում: Բայց Արշակավանը կործանվում է, գազազած նախարարները՝ սրի մատնելով «քսան հազար երդք մարդկան», հաշվեհարդար են տեսնում փախուստի ճանապարհով նախարարների և եկեղեցականների ճնշումից ազատվել ցանկացողների նկատմամբ:

Այսպիսի ծավալուն սոցիալական շարժումը, հանդես գալով կալվածատիրական ճնշման ու այդ ճնշումը սրբագործող եկեղեցու դեմ, անտարակույս պետք է ունենար նաև իր գաղափարախոսությունը: Տարաբախտաբար այդ հարցի մասին աղբյուրներում գտնում ենք միայն աղոտ ակնարկներ:

Փավստոսը հաղորդում է, որ «բազում կանայք զարս թողուին և անդր (յԱրշակաւան) անկանէին, բազում արք զիւրեանց կանայս թողուին...»: Մեզ թվում է, որ չի կարելի անուշադիր անցնել այս տողերի վրայով: Մենք արդեն տեսանք, որ Սեբաստիայի շարժման մասնակիցները թշնամիների կողմից մեղադրվում էին այն բանի համար, որ իրենց համայնքների դռները բաց էին անում բոլոր այն մարդկանց առաջ, ովքեր հրաժարվում էին ամուսնական կապերից (Գանգրայի ժողովի Թ. կանոն): Գանգրայի ժողովականների ուղերձից պարզվում է, որ ի կատարումն այս դրույթի «բազում կանայք հեռացան յարանց իւրեանց», նույնպես և տղամարդիկ՝ իրենց կանանցից: Եթե վերհիշենք, որ Սեբաստիայի շարժման ամենաակտիվ մասնակիցներն իրենց տերերից փախած ծառաներ էին, որ նրանք իրենց համայնքներում խրախուսում էին մարդկանց իրավահավասարության սկզբունքը, ապա մենք թերևս հնարավորություն ունենանք մերձեցման եզրեր գտնելու Արշակավանի քաղաքացիների և Փոքր Հայքի հերետիկոսների գաղափարներում: Ուշադրության արժանի է նաև այն իրողութ-

յունը, որ հենց այս լարված պայքարի օրերին, Արշակը կաթողիկոսությունից զրկում է Ներսեսին և նրա փոխարեն կաթողիկոս է օծել տալիս ծագումով ստրուկ մի մարդու[72]*:*

Այս հարցի լուսաբանման գործում լրացուցիչ պարզություն է մտցնում Աշտիշատի ժողովն իր որոշումներով:

Ժողովի գումարման, ինչպես և Արշակ Բ-ի օրոք տեղի ունեցած մյուս կարևոր քաղաքական անցուդարձերի ճշգրիտ ժամանակի որոշման համար Փավստոսն ամուր հենակետեր չի տալիս: Շարադրության ընթացքից դատելով, Աշտիշատի ժողովը պետք է հրավիրված լինի Ներսեսի կաթողիկոսության առաջին տարիներին, մինչև նրա Կ. Պոլիս գնալը:

Ցավոք, մենք չգիտենք, թե որ թվին է Ներսեսը կաթողիկոս օծվել[73]*:*

Դատելով որոշումներից, պետք է ենթադրել, որ ժողովը հրավիրել է այն ժամանակ, երբ անապատական շարժումը Հայաստանում խորն արմատներ էր ձգել, և եկեղեցին ձգտում էր շարժումն իր համար անվտանգ և օգտակար հունի մեջ դնել: Իսկ այդ հարցն ամբողջ սրությամբ եկեղեցու առաջ կարող էր ծառանալ, անտարակույս, ոչ առաջ 360-ական թվականներից[74]*:*

Եվ ահա, ժողովրդական հուզումների պոռթկման տարիներին, երբ Արշակավանում պատսպարված ծառաներն ու պարտապաններն իրենց վարակիչ օրինակով Մեծ Հայքի բնակչության աշխատավորական խավերին մղում էին պայքարի ասպարեզ՝ ընդդեմ խոշորագույն կալվածատեր եկեղեցու և նախարարների, եկեղեցին որոնում է շարժման առաջն առնելու

---

[72] Այս դէպքի կապակցությամբ Փավստոսը գրում է. «... Փոխանակ Ներսիսի զՉունակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա գլուխ քրիստոնէութեանն եւ էր ստրուկ ի ստրկաց արքունի» (Փ ա վ ս տ ո ս, ԺԵ, էջ 105):

[73] Հ. Մարկվարտի հաշիվներով Ներսեսի օծման տարեթիվը պետք է լինի 356-ը (տե՛ս Die Entschtehung der Armenische Bistümer, Roma, 1932), սակայն նրա առաջարկած ժամանակագրությունը չափազանց վիճելի է:

[74] Փավստոսի պատմությունը լի է ժամանակագրական անճշտություններով: Դեպքերի հաջորդականության շփոթումն այդ պատմական երկասիրության հատուկ և բնորոշ կողմերից մեկն է: Եվ այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետև այն գրված է V դարի կեսերին, պատմվող դեպքերից շուրջ մեկ դար հետո, գլխավորապես ավանդությունների ու զրույցների հիման վրա:

համար հակամիջոցներ:

Սեբաստիայի հերետիկոսների գործունեության կարևոր կողմերից մեկն էր՝ հիվանդանոցների, մանկատների, անկելանոցների հիմնումը: Նման հիմնարկությունների նպատակն էր՝ ապահովել մանուկների, ծերերի ու հիվանդների ապրուստի միջոցները՝ շարժման մասնակիցների համատեղ ջանքերով:

Ներսեսը, եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու և սոցիալական շարժման առաջն առնելու նպատակով, եկեղեցու միջոցների մի մասը տրամադրում է «բարեգործական» հաստատություններին, և Հայաստանի տարբեր մասերում հիմնում է հիվանդանոցներ, որբանոցներ, ուրկանոցներ և նման այլ հաստատություններ:

Շահագործման դեմ պայքարի դուրս եկած ծառաներն ու շահագործման ենթակա հասարակական մյուս շերտերի ներկայացուցիչները միավորվում էին՝ ստեղծելով հավասարության սկզբունքի վրա խարսխված իրենց համայնքները: Ի հակադրություն դրա, Աշտիշատի ժողովականները.

«Կարգեցին, կացուցին, կանոնեցին, յօրինեցին և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրու զկարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինաց»:

Այսինքն, ողջ Հայոց աշխարհը հայտարարեցին մի վանական միաբանություն, որի մեջ բոլոր դասակարգերի ներկայացուցիչները միմյանց հանդեպ «ընկերներ» են. սակայն այն տարբերությամբ, որ այդ համաշխարհի միաբանության մեջ ծառաները[75] պետք է հնազանդ լինեն իրենց տերերին («ծառայից պատուիրէր կալ յարգարն հնազանդութեան իւրեանց տերանց»), հավատացյալները պետք է ընդունեն հոգևորականությանը,

[75] «Ծառայ» տերմինը հայ հին մատենագրության մեջ գործածված է և «ստրուկ», և, ավելի հաճախ, «շինական»- «ռամիկ» նշանակությամբ: «Շինական» տերմինին որպես հակադիր, առավել գործածված ենք գտնում «ազատ» տերմինը, երկուսն էլ որպես դասային տարբերակիչ տերմիններ: Իսկ երբ գործ է ածվում «տէր»-ը, ապա նրա հետ, դրվում է «ծառայ», այս անգամ որպես սոցիալական տերմինի սոցիալական հակադրույթ:

որպես աստծո երկրային ներկայացուցիչ, բոլոր շահագործվողները, անսայլ Քրիստոսի պատվիրանին, աջ այտից ապտակ ստանալով՝ ձախը պետք է խոնարհաբար դնեն հարվածի տակ: Սրանք էին այդ միաբանության սկզբունքները:

Կալվածատերերի ու շահագործող մյուս դասերի պարտավորություններն այդ «միաբանության» մեջ նույնպես մշակվում են Աշտիշատի ժողովականների կողմից: Ժողովի անունից Ներսես կաթողիկոսը.

«Ամենայն աշխարհին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առհասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ աշակերտս, և սիրել իբրև զընտանիս, և մի անարժանս և աւելի տարապայման հարկօք նեղել քան զչափն...»[76]:

Այսպիսով, եկեղեցին, «տարապայման» ու անօրեն հարկերն արգելելով, արդարացի է համարում «պայմանաւոր», այսինքն օրինականացված հարկերի գանձումը ծառաներից, պահանջելով, սակայն, որ վերջիններս խոնարհաբար ու առանց դժգոհության ծառայեն իրենց տերերին և անխափանորեն վճարեն այդ հարկերը:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ դասակարգային լարված հակամարտությունները նման կարգի «համաշխարհի միաբանություններ» ստեղծելով անհնարին էր մեղմել: Եվ ժողովրդական դժգոհություններն ու հուզումները Հայաստանում չեն դադարում ինչպես վերջին Արշակունիների տիրապետության տարիներին, այնպես էլ հետագայում, երբ երկրի քաղաքական կյանքի պատմությունը, Սասանյան Պարսկաստանի հաղթանակից հետո, ընթանում է այլ ճանապարհով: Ուրույն քաղաքական ու տնտեսական պայմաններում դասակարգային պայքարը V դարում հարստանում է նոր բովանդակությամբ և ստանում է արտահայտության ուրույն եղանակներ:

V

V դարում սոցիալական կյանքի ամենաբնորոշ երևույթը մծղնեաների շարժումն է Մարզպանական Հայաստանում և բորբորիտների շարժումը՝

[76] Փաւստոս, IV, Դ, էջ 64-65:

Բյուզանդական Հայաստանում:

Մեծ Հայքի քաղաքական ու մշակութային կյանքում մինչ այդ տեղի էին ունեցել նշանակալից տեղաշարժեր: Արշակունյաց դինաստիան պարտություն էր կրել արտաքին թշնամու և կենտրոնախույս ուժերի դեմ մղած համառ մարտերում:

Հայ ժողովուրդը պարսիկ տիրապետողների և նրանց կամակատարների հարկային կեղեքիչ լծի ծանրության և իր մշակույթի ու դարավոր ավանդույթների ոտնահարման պայմաններում, մղում էր ավելի ակտիվ քաղաքական և սոցիալական պայքար: V դարում բռնկվում են ժողովրդաազատագրական այն մեծ պատերազմները Պարսից բռնապետության դեմ, որոնք, իրավամբ, պատվավոր տեղ են բռնում հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագների շարքում:

Հայ պատմագրության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ միջնադարում, երբ երկրի բոլոր դասակարգերը միասնական ճակատով դուրս են եկել դիմագրավելու արտաքին թշնամուն, դասակարգային պայքարը ժամանակավորապես տեղատվություն է ապրել: Այո, ինարկե, մասամբ ճիշտ է, սակայն չի դադարեցնում իր պայքարը համազգի շահագործողների դեմ:

V դարի գյուղացիական-սոցիալական շարժումների կազմակերպիչներն ու գործող ուժերը հանդես են եկել մծղնյաների գաղափարական դրոշի ներքո, ուստի և եկեղեցին ձգտել է առաջին հերթին չեզոքացնել մծղնեությունը, որպես գաղափարախոսություն:

Այդ նպատակով հրավիրվել է եկեղեցական ժողով, եկեղեցու նշանավոր ներկայացուցիչները ստիպված են եղել իրենց տեսական աշխատություններում քննարկել ու մերժել մծղնյաների գաղափարները, անհաշտ հալածանք են ծավալել՝ շարժումը արմատախիլ անելու նպատակով:

Մծղնյաների մասին մեզ հասած սակավաթիվ պատմական վկայությունները, գրված լինելով բացառապես հակառակորդ բանակի ներկայացուցիչների կողմից, հայհոյանքներից ու մի քանի անորոշ ակնարկներից ավելի բան չեն տալիս:

Շարժման էությունը չի բացահայտված նաև XIX և XX դարերի հայագիտական երկերում: Մեր պատմագրության ներկայացուցիչներն այն դիտել ու քննարկել են որպես հերձվածողական մի ուսմունք, մի

«ապականագործ վարդապետություն», որը ծագել է Հայաստանից դուրս և «պաղատացողի ու գառնակերպ սպրդել նաև մեր աշխարհը»[77]:

Կ. Տեր-Մկրտչյանը գրել է մի ընդարձակ ուսումնասիրություն մծղնյաների գաղափարական ժառանգորդների մասին[78]: Նրա համոզմունքով, աղանդավորական բոլոր շարժումները, որոնց թվում նաև մծղնյաների շարժումը, կարող էին տարածվել այնպիսի ժողովուրդների միջավայրում, որոնք օժտված են «կենդանի երևակայությամբ», այսինքն պասիվ կրողներ են իրենց հայրենիքից դուրս ստեղծված այս կամ այն, զուտ գաղափարական, ուղղությունների ու հոսանքների[79]: Այսպիսով, մծղնյաների շարժումը, ըստ Կ. Տեր-Մկրտչյանի, սոցիալական հիմքերից զուրկ, կենսական պահանջներ չառաջադրող մաքի մի ուղղություն էր:

Հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից Լեոն, որը հատուկ հոդվածով անդրադարձել է միջնադարյան աղանդավորական շարժումներին[80], նույնպես չի կարողացել արժանի գնահատական տալ մծղնյաների պրոգրեսիվ շարժմանը:

Նա իրավացիորեն գրում է, որ «հինգերորդ դարի շարժումները միայն պարսկական զրադաշտականության դեմ չէին ուղղված, ինչպես ներկայացնում են Եղիշեն և Փարպեցին - միաժամանակ անողոք կռիվ Հայոց եկեղեցին պիտի մղեր և իր ներքին թշնամու դեմ, որ հավասարություն էր պահանջում ամենքի համար»: Սակայն նա չի կարողանում բացահայտել շարժման սոցիալական էությունը. «Սիրիշ մի անուն չկա, որ ծածկե մծղնեության հասկացողությունը, ինչպես այդ անում է կոմունիզմ անունը»:

Աղանդավորական շարժումների ուսումնասիրությունը Հայաստանում գիտական հիմքերի վրա դրվեց, երբ հստակ դարձավ, որ հասարակական ու քաղաքական բոլոր ուսմունքները գերազանցապես ստամվածաբանական հերետիկոսություններ պետք է լինեին: Ֆր. Էնգելսն այս

[77] Բ. Սարգսյան, «Գրիգոր սարկավագապետ», Բազմավէպ, 1904, էջ 124-125:
[78] Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, von K. Ter-Mkrttschian, Leipzig, 1893.
[79] Die Paulikianer..., էջ 41-42:
[80] Տե՛ս նրա «Կոմունիզմը հայոց պատմության մեջ» հոդվածը («Նորք», I, 1922 թ.):

առթիվ, իր «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատության մեջ, գրում է.

«Երբ դասակարգային այս պայքարներն այն ժամանակ (միջնադարում - Լ. Խ.) կրոնական կնիք էին կրում, եթե առանձին դասակարգային շահերը, կարծիքներն ու պահանջները թաքնված էին կրոնական շղարշի տակ, դա ամենևին չի փոխում գործի էությունը և հեշտությամբ բացատրվում է իր ժամանակի պայմաններով»[81]:

Առաջնորդվելով այս դրույթներով՝ հայ նոր պատմագրության ներկայացուցիչները ճիշտ մեկնակետից սկսեցին քննարկման ենթարկել պավլիկյանների շարժումը VII-IX դարերում, Թոնդրակեցիների շարժումը IX-XI դարերում, ինչպես նաև, հարևանցի կարգով, մծղնյաների շարժումը:

Մծղնյաների մասին սկզբնաղբյուրները, ինչպես ասացինք, հաղորդում են չափազանց կցկտուր տեղեկություններ: Եզնիկ Կողբացու վկայությամբ, նրանք ամուսնությունը պղծություն են համարում: Այս առթիվ նա գրում է.

«Նաև կուսանք սրբոյ եկեղեցւոյ ոչ վասն այնորիկ պահեն զկուսութիւն, եթէ ամուսնութիւն տուեալ յաստուծոյ՝ պղծութիւն համարիցեն, որպէս Մարկիոն և Մանի և մծղնեայք»[82]:

Շահապիվանի ժողովի (հրավիրված է 444 թ.) ԺԹ. (19) և Ի. (20) կանոնների համաձայն, մծղնեությունը Հայաստանում այնպիսի չափեր է ընդունել, որ կողմնակիցներ է գտել նաև նախարարների, ոստանիկների[83],

[81] Ф. Энгельс, Крестьянская война в Германии. 1931 г. Москва-Ленинград, стр. 32.

[82] Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 199: Քիչ հետո նույն հեղինակը գրում է «Այլև յարութիւն մարմնոյ չհաւատալ ուստի իցէ Մարկիոնի և Մանեայ և այլոցն նոյնպիսեաց» (էջ 202): Շատ հավանական է ենթադրել, որ «նույնպիսիների» շարքում Եզնիկը նկատի է ունեցել, ինչպես նախորդ օրինակում, հենց նույն մծղնյաներին:

[83] «Կանոնագիրք Հայոց»-ում տպված է «ոստիկան», ուղղում ենք «ոստանիկ», Մատենադարանի N 659 ձեռագիր կանոնագրքի համաձայն, որի 254ա էջում կարդում ենք. «Ապա թէ ոստանիկինքն գտանիցին պղծութիւնքն...» և այլն:

ինչպես և հոգևորականների ներկայացուցիչներից: Նախարարների ու ազատների մասնակցությունը մծղնեական շարժմանը բացատրվում է այն բանով, որ շարժման ամենասուր կողմն ուղղված էր եկեղեցու դեմ, իսկ տնտեսական հողի վրա ներդասակարգային պայքարն ու հակամարտությունները եկեղեցականների և աշխարհիկ իշխանների միջև, ինչպես ուշագրավ փաստերով ապացուցել է ակադ. Հ. Մանանդյանը «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» իր աշխատության մեջ, շարունակվել է և սուր բախումների առիթ տվել նաև Մարզպանական Հայաստանում[84]:

Ժողովականները ծանր պատիժներ են սահմանում մծղնեության դեմ:

«Եթէ ոք ի մծղնէութեան գտցի,- կարդում ենք ԺԹ. կանոնում,- աղուէսադրոշմ ի ճակատն դիցի և ի տեղիս ճգնաւորաց յապաշխարութիւն տացեն: Ապա եթէ դարձեալ ի նմին գտցի՝ զջիղսն երկոսին կտրեսցեն և ի գողենոց տացեն, զի մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, դոյն պատուհաս և աբեղային: Ապա եթէ արք կանամբք և որդովք գտցին յաղանդին, զարանց և զկանանց և զիրագէտ մանկանց զջիղսն կտրեսցեն, աղուէսադրոշմ ի ճակատն դիցեն և ի գողենոց տացին յապաշխարութիւն և մանկունք, որք չիցեն գիտացեալ զպղծութիւնն, կալցին և տացին ի ձեռս սուրբ պաշտօնէից աստուծոյ, որ սնուսցեն և ուսուցեն զնոսա ի հաւատս ճշմարիտս և յերկիւղ տեառն»[85]:

Ժողովի գումարման անհրաժեշտության մասին կանոնների առաջաբանում տրված են ուշագրավ տվյալներ: Մեսրոպի ու Սահակի մահվանից հետո սրվում են դասակարգային հակամարտությունները.

«... Ի ցամաքեալ սիրոյն բազմանայր անօրէնութիւնն, և ոչ ոք էր, որ քաղէր զորոմն, և կորէր զգաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սէգն և տարածէր օր ըստ օրէ[86] և լինէր յաճախումն մծղնէից, կնահանից, պոռնկաց, անձնակամաց, գողաց,

[84] Տե՛ս «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 141-144:

[85] «Կանոնագիրք Հայոց», էջ 80:

[86] Այս հատվածը կարծես գրված է Գանգրայի ժողովականների ուղերձի ազդեցությամբ, այնտեղ ևս սեբաստացիների կապակցությամբ գրված է. «Եւ եթէ ոչ էաք ի հրամանէ նոցայն սրբոյ ժողովեալք և ի բաց կտրեալ զվնասակար զաղձն և քաղեալ զորոմն ի ցորենոյն, եղեալ տարածեալ զայր սէգ մեղացն». թվում է, թէ այս նմանությունը պատահական չէ:

և ամենայն չարագործաց յաշխարհիս Հայոց»[87]:

Մծղնյաների մասին մի այլ վկայությունը գտնվում է «Գիրք հերձուածոց»-ում. այնտեղ, որպես ճխԴ. (144) հերձված, խոսվում է մծղնեության մասին.

«Մծղնեացոց աղանդն ի պիտագորականացն բուսաւ և զօրացաւ. երբեալ բանակեցան առ Պիսիդեաւ, և զոր ինչ գործեն գարշելի է խօսել մեզ: Եւ անուանք աղանդոցն անուանեն՝ Գունգուշեանք, Սղլեանք, Արեգակնող, Բանջարակեր»[88]:

Այս վկայությունը խիստ կարևոր է երկու կողմով: Նախ՝ «Գիրք հերձուածոցի» հեղինակ Եպիփան Կիպրացին կամ նրա խմբագիրները, մծղնյաներին կապում է պիթագորականների հետ, որոնք իր իսկ տվյալներով զոհ չէին մատուցում աստվածներին և հրաժարվում էին շնչավոր կենդանիներով կերակրվելուց[89]: Եվ ապա, նա հայտնում է մծղնյաների մի շարք անունները:

Ինչպես միջնադարյան շատ աղանդներ, այնպես էլ մծղնեությունը, հանդես է եկել մի շարք անունների տակ: Ըստ տեղական առանձնահատկությունների ու ժամանակի, նրանք կոչվել են գունգուշեանք, արեգակնող, բանջարակերք *և այլն*[90]:

Ահա այն ամենը, ինչ սկզբնաղբյուրները հաղորդում են մծղնյաների մասին:

Կ. Տ. Մկրտչյանն իր մեկ հոդվածում[91] աշխատում է տալ Մծղնյա բառի մեկնությունը: Ըստ նրա՝ հայկական «մծղնյա» բառը պարզապես նշանակում է «մեսալյան», և առնչվելով նույն բառի ասորական ձևին (որ հնչում է այսպես և «մցլին») նշանակում է «աղոթող»: Այս կարծիքը, որն

[87] «Կանոնգիրք Հայոց», էջ 57-58. հրատարակությունը ճշտել ենք N 659 ձեռագրի հետ համեմատելով:

[88] «Գիրք հերձուածոց», հրտ. Միաբանի, Վաղարշապատ, 1892, էջ 19:

[89] Նույն տեղում, էջ 2:

[90] Թոնդրակեցիները ևս, տարբեր ժամանակներում ու վայրերում կոչվել են տարբեր անուններով (**թոնդրակեցի, թուլայլեցի, կաշեցի** և այլն):

[91] Կ.վ., «Մծղնեից աղանդը», («Արարատ, 1895թ., էջ 7):

ընդունված է մի շարք անվանի հայագետների կողմից[92], հնարավորություն է տալիս ընդարձակելու մեր գիտելիքները մծղնյաների մասին:

Նրանք, ինչպես տեսանք, ամուսնությունը դիտում են որպես պղծություն, ավելորդ են համարում զոհ մատուցել աստծուն, հրաժարվում են մսից (այդ պատճառով էլ կոչվում են նաև բանջարակերք) և այլն: Նրանք փրկության միակ միջոցը համարում են հանապազօր աղոթքները (այդ պատճառով էլ կոչվում են «մծղնյա» - աղոթող) և դեմ են դուրս գալիս եկեղեցու գերիշխանությանը, եկեղեցական կարգերին ու տիրող հարաբերություններին (այդ պատճառով էլ եկեղեցին այդպիսի դաժան պատիժներ է սահմանում նրանց դեմ): Այս բոլոր կողմերով մծղնյաները կապվում են Փոքր Հայքի «հերետիկոսների» և նրանց հետ ձուլված մեսալյան աղանդավորների հետ:

Իսկ այս տվյալների հիման վրա, մենք միջոց ենք ստանում խորացնելու մեր գիտելիքները մծղնյաների մասին, և դիտելու այդ շարժումը, նման IV դարի Փոքր Հայքի շարժումների, որպես սոցիալական մի ընդվզում: Հայագետ Բ. Սարգսյանի կարծիքով՝ մծղնյա աղանդավորները «Սահակա և Մեսրովպա կողմեն շուտով հալածվեցան, առանց խոր արմատներ ձգելու ժողովրդյան վարուց և բարուց վրա»[93]:

Այս տեսակետը, իհարկե, վերապահելի է: Ինչպես տեսանք, մծղնյաները հատկապես աշխուժանում են Սահակի և Մեսրոպի մահվանից հետո և 444 թվականին միայն, եկեղեցու և նախարարության ամենաազդեցիկ ներկայացուցիչները հավաքվում ու խիստ պատիժներ են սահմանում մծղնեության դեմ: Սակայն, իհարկե, շարժումը չի ճնշվում նույնիսկ Շահապիվանի ժողովի կողմից սահմանված նզովքներից ու պատիժներից հետո:

V դարի վերջին, նույն ուժգնությամբ, եկեղեցին շարունակում է իր պայքարը՝ այդ շարժումն արմատախիլ անելու մտադրությամբ: Ժամանակի առաջավոր մշակութային գործիչներից շատերը կղերականների կողմից

[92] Տե՛ս օրինակ, Մ. Աբեղյանի, «Հայ հին գրականության պատմություն», մասն Ա., էջ 625-626:

[93] Տե՛ս նրա «Գրիգոր սարկավագապետ» հոդվածը («Բազմավէպ», 1904 թ., էջ 125):

ամբաստանվում են մծղնյաների հետ կապեր ունենալու մեջ և կրում խիստ հալածանքներ[94]*:*

Այդ գաղափարները չեն մոռացվում նաև Փոքր Հայքում: Ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Աբեղյանը, Փոքր Հայքի բորբորիտները, որոնք երկար տարիներ մեծ մտահոգության առիթ են եղել կայսրության պետական պաշտոնեության և Կեսարիայի եկեղեցու համար, նույն մծղնյաներն են, այլ խոսքով՝ Փոքր Հայքի մեզ հետաքրքրող շարժման գաղափարական ժառանգորդները:

Բորբորիտների ճնշման գործը հանձնարարվում է հայ եկեղեցու ամենահեղինակավոր վարդապետ Մեսրոպին, որը՝ չկարողանալով նրանց «դարձի բերել», ինչպես հաղորդում է լավատեղյակ պատմիչը.

«Ի գործ արկանէր զբռնաւորացուցիչ զաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս: Իսկ յորժամ այնու ևս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս և գունակ-գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին» (իմա՝ բազում տանջանքների ենթարկելուց հետո դուրս էին քշվում իրենց բնակավայրերից)[95]:

Փոքր Հայքի շարժման գաղափարներն այլ սոցիալական պայման-ներում ժառանգում ու զարգացնում են նաև նրանց հեռավոր սերունդները:

Փոքր Հայքում VII-IX դարերում բռնկված պավլիկյանության գաղափարախոսության սկզբունքներից շատերը նույնպես ընդհանուր շոշափման եզրեր ունեն Սեբաստիայի «հերետիկոսների» գաղափարների հետ: Պավլիկյանները նույնպես չէին ընդունում եկեղեցին որպես աստծու պաշտամունքի վայր, ժխտում էին հոգևորականության դերը, մերժում էին սրբերի բարեխոսությունը[96] *և այլն:*

---

[94] Ի նկատի ունենք Ղ. Փարպեցու թղթի տվյալները իրեն աղանդավորության մեջ մեղադրելու մասին: Մեր բանասիրությունն ապացուցել է, որ Փարպեցուն մեղադրել են հենց մծղնեության մեջ (տես՝ Մ. Աբեղյան, «Պատմ. հայ հին գրականության», Ա., էջ 625-626):

[95] Կորիւն, «Վարք Մաշտոցի», Թիֆլիս, էջ 26:

[96] «Սոքա (պավլիկյանները) զբարեխօսութիւն սրբոցն ոչ ընկալան» ասված է Մատենադարանի N 687 ձեռագրի 385բ էջում:

Եվ այսպես, IV դարի 60-70-ական թվականներին Փոքր Հայքի աշխատավորների ընդվզումն անհետևանք չմնաց: Լինելով IV-V դարերի ստրուկների ու կոլոնների բազմաթիվ շարժումներից մեկը, այն նույնպես նպաստեց ստրկատիրական կարգերի քայքայումն արագացնելու գործին: Չնայած շարժումը ճնշվեց եկեղեցու և կայսրության համատեղ ջանքերով, սակայն շարժման հիմնական մասնակիցների մշակած առաջավոր գաղա-փարները, օգնած լինելով հանուն ազատության ու հավասարության նրանց մղած ակտիվ պայքարին, յուրացվեցին նաև հայ ժողովրդի հետագա սերունդների կողմից, որոնք սոցիալ-տնտեսական այլ պայմաններում համառ պայքար էին մղում ընդդեմ ավատատիրական հասարակարգի կեղեքման, ճորտական շահագործման:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Բարսեղ Կեսարացին ծնվել է 329 թվին Կապադովկիայի հարուստ ընտանիքներից մեկում: Հիմնել է վանական միաբանություններ, գրել է կանոններ այդ միաբանությունների համար: 370 թվից եղել է հայրենի քաղաքի եպիսկոպոս, մեռել է 378 թվին[1]:

Նրա բազմաթիվ աշխատություններում, հատկապես արժեքավոր նամակներում, հարուստ և ուշագրավ տվյալներ կան Սեբաստիայի շարժման ընթացքի ու գաղափարախոսության մասին:

Բարսեղն իր առաջին նամակներում մեծ համակրանքով է արտահայտվում Եվստաթիոս Սեբաստացու մասին, գովաբանում է նրա ընդունակությունները և բարոյական արժանիքները:

373 թվականն այն շրջադարձային տարին է, որի ընթացքում գժտվում են Եվստաթիոսը և պաշտոնական եկեղեցու գրահող ու ջերմ պաշտպան Բարսեղ Կեսարացին:

Վերջինս բազմաթիվ կրքոտ նամակներ է առաքում այլևայլ անձանց ու կազմակերպում է Սեբաստիայում բռնկված շարժման ճնշումը: Այդ նամակները՝ չնայած իրենց միակողմանիության և միտումնավորության,

[1] [Նրա մասին տե՛ս Կ. Մ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976] – **Խմբ.**:

կարևոր ու վստահելի տվյալներ են հաղորդում շարժման ընթացքի և գաղափարախոսության մասին:

Այս տեսակետից հատկապես կարևոր են նրա NN 1, 75, 94, 95, 114, 120, 123, 133, 203, 215, 229, 231, 234, 235, 236, 255 նամակները (տե՛ս Творения иже во святых отца нашего Василия Великаго архиепископа Кесарии Каппадокийския, изд. третие, часть VI, часть VII, Сергиев Посад. 1892).

2. ՍՈԿՐԱՏ ՍՔՈԼԱՍՏԻԿՈՍԻ «ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Սոկրատը ծնվել ու գործել է Կոստանդնուպոլսում. իր պատմությունը գրել է 439-443 թթ. ընթացքում՝ օգտագործելով IV և նախորդ դարերի շատ հեղինակների գրվածքներ:

Նրա «Պատմությունը», որն ընդգրկում է 133 տարվա մի ժամանակաշրջան (306-439 թթ.), փաստական հարուստ տվյալներ է պարունակում IV-V դարերի եկեղեցական կյանքի, ժողովների և մասամբ նաև, քաղաքական անցուդարձերի մասին:

Սոկրատի աշխատությունը, 696 թվին, Ներսեհ Կամսարականի հրամանով, թարգմանել է հայերենի Փիլոն Տիրակացին: Այդ ընդարձակ թարգմանությունից բացի, կա նաև համառոտ ու փոփոխված մի խմբագրություն, որը կոչվում է «Փոքր Սոկրատ»:

Եվստաթիոս Սեբաստացին Սոկրատի «Պատմության» մեջ հիշատակվում է մի քանի անգամ: Սեբաստիայի շարժման ուսումնասիրման համար հատկապես փաստալից է «Պատմության» երկրորդ մասի ԽԳ (43 գլուխը, որի սկզբի մասը բերում ենք ստորև:

«Քանզի Եւստաթիոս Սեբաստիոյ Հայոց և ոչ ի պատասխանատուութիւն եղև ընգալեալ, վասն զի յեղափոխեալ ի ճառէն իւրմէ և եպիսկոպոսէն Կեսարու Կապադովկիոյ յառաջագոյն նզովիւր, վասն զի անպատշաճ քահանայութեանն հանդերձ ագանէր: Բայց այս գիտելի է զի ի տեղւոջն Եւստաթեայ Մելիտոս կարգեցաւ եպիսկոպոս, վասն որոյ սակաւ ինչ յետոյ ասասցուք: Իսկ Եւստաթիոս և յետ այսորիկ յորում սակս նորայ եղելումն ժողովն ի Գանգրա Պափլագոնիոյ դատապարտեցաւ, վասն զի յետ նզովելոյն զնա ի Կեսարու ժողովուն բազումս ինչ առ եկեղեցականն

տպաւորմունս գործէր: Քանզի զամուսնանալ արգելոյր և ի կերակրոց ի բաց կալ աւրհնարէր, և այսոհիմ զբազում ամուսնացեալս ի զուգաբանութենէն որոշէր, և զեկեղեցիսն թողեալ ի տունս տայր առնել հաղորդութիւն, և զծառայս ձևով աստուածպաշտութեամբ ի տէրանց մեկնէր: Ինքն զիմաստասիրի ունելով զձև և հետևապատն իւր աստար պատմուճանի տայր հելել, և զկանայս կարիլ յարդարէր, և զոմանս որոշեալս ի պահս խախտէր, իսկ ի տէրունականան պահել ուսուցանէր, և ի տունս ամուսնացելոցն աղօթս առնել արգելոյր, և Ֆանանայ որ կին ունէր յոր աւրհնամ ժողովրդականութեանն եղեալ լինէր յառհ(ն)ութենէն և ի հաղորդութենէն որպէս ի պղծոց խոտորեալ հրամայէր: Եւ այս բազումս հույս առնելով և ուսուցանելով նորա, ժողով որպէս ասացի ի Գանգրա Պեփղագոնիոյ եղեալ, զնա բնգեաց, և զաղանդն նորա նզովեաց. այս յետոյ եղև»[2]:

3. ՍՈԶՈՄԵՆՈՍԻ «ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Սոզոմենոսն իր «Պատմությունը» գրել է 443-446 թվականների ընթացքում: Մեզ հասած վիճակում այն ընդգրկում է 100 տարվա եկեղեցական ու քաղաքական անցուդարձերի շարադրանք (323-423 թթ.): Եվստաթիոսի և Սեբաստիայի շարժման մասին նրա հաղորդած տեղեկությունների մեջ շատ քիչ բան կա, որ հայտնի չլինի նախորդ աղբյուրներից և Գանգրայի ժողովի կանոններից: Նրա մոտ նոր է միայն այն տվյալը, ըստ որի Եվստաթիոս Սեբաստացին անապատական կարգերի հիմնադիրն է Հայաստանում, Պափլագոնիայում և Պոնտոսում:

Ստորև տալիս ենք Սոզոմենոսի «Պատմության» ամենաուշագրավ այն երեք հատվածները, որոնք վերաբերում են Եվստաթիոսին և Սեբաստիայի սոցիալական շարժմանը:

Այդ հատվածները քաղել ենք Սոզոմենոսի «Պատմության» ռուսերեն թարգմանությունից, (“Церковная история Эрмия Созомена Саламинскаго” СПб, 1851 г.).

Ա) «Հայերի, Պափլագոնացիների և Մերձպոնտոսյան բնակիչների մեջ վանական կյանքի սկիզբը, ասում են, դրեց Հայկական Սեբաստիայի եկեղեցու գլուխ Եվստաթիոսը: Նա մացրեց երկյուղած վարքի բոլոր կողմերին վերաբերող կանոններ, այսինքն՝ ինչպիսի ուտելիքներ գործածել և ինչպիսիներից հեռու մնալ, ինչպիսի զգեստներ հագնել, ինչպիսի սովորություններ պահպանել, և գծագրեց խստակյաց կյանքի ողջ պատկերը: Այնպես որ, Բարսեղ Կեսարացու անվամբ գրված ճգնավորական գիրքը, ոմանք վերագրում են Եվստաթիոսին:

Ասում են, որ, խստությունը չափից ավելի սիրելով, Եվստաթիոսը թույլ է տվել եկեղեցու որոշումների հետ բոլորովին չհամաձայնող որոշ խստություններ. սակայն ոմանք էլ պաշտպանում են նրան այդ կշտամբանքից և մեղադրում են նրա մի քանի աշակերտներին, որոնք դատապարտում էին ամուսնությունը, արգելում էին աղոթել ամուսնացած մարդկանց տներում, արհամարհում էին ամուսնացած քահանաներին, տերունական տոներին պաս էին պահում, հավաքվում էին ժամերգության մասնավոր տներում, խույս էին տալիս միս ճաշակած մարդկանցից և չէին ցանկանում հագնել սովորական պատմուճաններ ու հագուստներ, այլ գործ էին ածում տարօրինակ ու անսովոր զգեստներ, և շատ այլ նորմուծություններ էին անում:

Խաբվելով նրանցից շատ կանայք՝ թողնելով իրենց ամուսիններին և չկարողանալով ժուժկալություն պահպանել, ընկնում էին շնության մեջ, իսկ ոմանք էլ՝ բարեպաշտության պատրվակով, խուզում էին գլխի ծամերը և չէին հագնվում այնպես, ինչպես վայել է կանանց, այլ այնպես, ինչպես հատուկ է տղամարդկանց:

Այդ պատճառով հարևան եպիսկոպոսները, հավաքվելով Պափլագոնիայի մայրաքաղաք Գանգրայում, հայտարարեցին, որ կբանադրեն նրանց կաթողիկե եկեղեցուց, եթե չենթարկվեն ժողովի որոշմանը և չհրաժարվեն բոլոր վերը ասածներից:

Այդ ժամանակից, ասում են, Եվստաթիոսը, ցանկանալով ցույց տալ, որ ինքը մտել ու կատարել է այդ ոչ թե սնափառությամբ, այլ իր սիրագործությամբ աստծուն հանոյանալու համար, փոխեց իր զգեստը և հագնվեց եկեղեցու բոլոր պաշտոնյաների պես: Իր կենցաղով լինելով այսպիսին, նա, չնայած, ճիշտն ասած, պերճախոսությամբ չէր փայլում (որովհետև այդ գիտությունը չէր սովորել) զարմանք էր արթնացնում նաև իր խոսքով, որովհետև զարմանալի վարքի տեր էր և համոզելու չափազանց կարող անձ, այնպես որ իր մոտ եկած շատ արանց ու կանանց տրամադրեց վարել ժուժկալ ու ճգնավորական կյանք... Ահա այդպիսին էր, ըստ ավանդության, այն մարդը, որը երբ երկրներում հիմնադրեց վանական խստակեցությունը» (Սոզոմենոս, գիրք III, գլ. 14):

Բ) «Իսկ Եվստաթիոսին ականջանները բանադրեցին հետևյալ պատճառներով, երբ նա դեռ քահանա էր, նրա հայրը՝ Կապադովկիայի Կեսարիայի եպիսկոպոս Եվլա-

[2] Սոկրատայ սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմութիւն» աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, էջ 205-206:

լիսը դատապարտեց նրան և արգելեց աղոթքներին հաղորդակցվելուց, այնուհետև, Պոնտական Նեոկեսարիայում նա չընդունվեց հաղորդակցության ժողովի կողմից, և արտաքսվեց Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Եվսեբիոսի կողմից՝ իր վրա դրված որոշ պարտականություններ չկատարելու համար. նմանապես՝ նա զրկվեց եպիսկոպոսությունից Գանգրայի ժողովի կողմից, որպես ոչ ուղղափառ քարոզող, գործող և մտածող, մեղադրվեց երդմնազանցության մեջ Անտիոքի ժողովում, ձգտեց փոխել Մելիտինեի ժողովի սահմանումները, և, վերջապես, ինքը շատ ոճրագործություններում մեղավոր լինելով՝ ցանկանում էր դատավոր լինել և ուրիշներին կոչում էր ոչ ուղղափառ» (Սոզոմենոս, գիրք IV, գլ. 24)։

Գ) «Հենց որ Մակեդոնը զրկվեց Կոստանդնուպոլսի աթոռից, սկսեց խորհել նման ակակյանների ու եվդոկսյանների, բայց ուսուցանում էր, որ որդին աստված է հոր նման՝ իր բոլոր կողմերով և էությամբ, իսկ սուրբ հոգուն, կոչելով ծառայ, կամակատար և սուրբ հրեշտակներին վայել այլ անուններով, չէր ընդունում նույն գերազանցությունների հաղորդակից։ Այս ուսմունքը նրա հետ բաժանում էին Էլևսիոսը, Եվստաթիոսը և ճակատակորդ աղանդի կողմից Կոստանդնուպոլսում տապալված ուրիշները։ Նրանց միացավ Կոստանդնուպոլսի, Բյութանիայի, Թրակիայի, Հելլեսպոնտի և հարևան նահանգների ժողովրդի ոչ փոքր մասը, որովհետև նրանց կյանքը, որի վրա ժողովուրդն ամենից ավելի է ուշադրություն դարձնում, անաղարտ էր, ընթացքը՝ ծանրաբարո, ժամանակի անցկացման կանոնները՝ նման վանականի, խոսքը՝ պարզ, բարքը՝ գրավիչ...» (Սոզոմենոս, գիրք IV, գլ. 27)։

4. ԳԱՆԳՐԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գանգրայի ժողովի կանոնները հասել են մեզ հունարեն բնագրով և լատիներեն ու հայերեն թարգմանություններով։

Ժողովի գումարման տարեթիվը դեռևս գիտության կողմից վերջնականապես չի պարզված։ Կան հակասական մի շարք կարծիքներ։ Եկեղեցական պատմիչ Սոզոմենոսի վկայությամբ ժողովը հրավիրված պետք է լինի Նիկիայի (325 թ.) և Անտիոքի (341 թ.) ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում։ Ոմանք, հիմք ընդունելով այն իրողությունը, որ ժողովի որոշումները ձեռագիր կանոնգրքերում, իբրև, տեղադրված են Անտիոքի

ժողովի որոշումներից առաջ[3] հակված են ընդունելու Սոզոմենոսի կարծիքը։ Գանգրայի կանոններում Եվստաթիոսը չի հիշվում որպես Սեբաստիայի եպիսկոպոս։ Վերոհիշյալ կարծիքին հարողները հնարավոր են համարում օգտագործել նաև այդ փաստը, և ենթադրում են, որ ժողովը հրավիրված պետք է լինի մինչև Եվստաթիոսի Սեբաստիայի եպիսկոպոս դառնալը[4]։

Բալերինին ժողովի գումարման տարեթիվը փորձում է մերձավորապես որոշել մասնակից եպիսկոպոսների անունների քննությամբ։ Նրա կարծիքով մասնակիցների ցանկում հիշված Եվսեբիոսը՝ Կեսարիայի եպիսկոպոս Եվսեբիոսը պետք է լինի։ Այս նույնացումը, ըստ նրա, հնարավորություն է տալիս որոշելու ժողովի գումարման մերձավոր ժամանակը 362-370 թվականների միջև։

Dom Ceillier-*ը Բարսեղ Կեսարացու նամակներում չգտնելով հիշատակություն այն մասին, որ Եվստաթիոսը նզովվել է ինչ-որ ժողովի կողմից և ելնելով այն փաստից, որ Բարսեղի կրտսեր եղբայր Պետրոսը 380 թվականին դարձել է Սեբաստիայի եպիսկոպոս, կարծում է, որ ժողովը հրավիրված պետք է լինի հենց 380-ին։*

Այս կարծիքը ժողովի գումարման ամենավաղ հնարավոր տարեթվի որոշման համար զուրկ չէ հիմքից։ Իրավամբ, հարցի լուծման համար որոշիչ դեր չեն կարող կատարել ո՛չ ձեռագիր կանոնգրքերում ժողովի կանոնների բռնած տեղը, ո՛չ ժողովից տասնամյակներ հետո ապրած հեղինակների (Սոկրատ, Սոզոմենոս) անորոշ ու հակասական տվյալները, և ո՛չ էլ այն փաստը, որ ժողովականները Եվստաթիոսի մասին խոսելիս չեն նշում նրա Սեբաստիայի եպիսկոպոս լինելը[5]։

Հարցի լուծման համար միակ վստահելի աղբյուրը Բարսեղ Կեսարացու գրություններն են։

---

[3] Հայկական ձեռագիր կանոնգրքերում Գանգրայի ժողովի կանոնները սովորաբար տեղադրված են լինում Նեոկեսարիայի կանոններից հետո, և Անտիոքի կանոններից առաջ (տե՛ս օր. ձեռ. NN 2677, 2964, 6409 և այլն)։

[4] Hefele, Histoire des Consiles, t. II, Paris, 1869, p. 184-185.

[5] Ժողովականները, նզովելով Եվստաթիոսին, նրան կարգալուծ են հայտարարել (տե՛ս Սոկրատ, էջ 206). ուստի և նրանք կարիք չունեին մեծարելու իրենց կողմից նզովքի արժանացած թշնամուն եպիսկոպոսի կոչումով։

Մենք առիթ ունեցանք ցույց տալու, որ շուրջ երկու տասնամյակ Եվստաթիոսը գտնվել է Բարսեղի ուշադրության կենտրոնում:

357-377 թվականների ընթացքում գրած իր բազմաթիվ նամակներում Բարսեղը հաղորդել է կարևոր տվյալներ Եվստաթիոսի գործունեության և Սեբաստիայի սոցիալական շարժման ընթացքի մասին: Նա իր նամակներից մեկում[6] նույնիսկ հայտնում է, որ Եվստաթիոսն իր հին մեղքերի համար դեռևս վաղուց, Մելիտինեում հրավիրված ինչ-որ ժողովի կողմից, զրկվել է եպիսկոպոսությունից, սակայն կարողացել է վերականգնվել իր գիրքերում, և հետագայում միայն խորացրել է իր պայքարը եկեղեցու դեմ[7]:

Բնական է ենթադրել, որ եթե Գանգրայի ժողովը հրավիրված լիներ Բարսեղի կենդանության օրոք, ապա նա որևէ կերպ կանդրադառնար դրան և, անտարակույս, կլիներ ժողովի գործոն մասնակիցներից մեկը:

Այս ենթադրությունն ամուր հենակետ է ստանում, երբ ուշի ուշով քննում ենք այն կանոնախմբերը, որոնք կազմել է ինքը՝ Բարսեղ Կեսարացին, իր ժամանակ եկեղեցուն հուզող հարցերի մասին: Այդ կանոնախմբերի մի շարք հոդվածներում Բարսեղը նզովում է և ապաշխարություն է սահմանում այնպիսի մեղքերի համար, որպիսիք, ինչպես պարզվում է Գանգրայի կանոններից, գործում էին հենց Սեբաստիայի «հերետիկոսները»:

Բարսեղ Կեսարացու և Գանգրայի ժողովի նույն հարցերին վերաբերող կանոններից բերենք մի երկու բնորոշ օրինակ.

Կանոն Բարսեղի, Ձեռ N 659	Կանոնք Գանգրայ ժողովոյն
Որ զամուսնութիւն անարգէ կամ զարշ համարի, նզովեալ է. Ա ամ ապաշխարեսցէ (Կանոն ՀԱ, էջ 153ա):	Որք զամուսնութիւն մեղադրեն և անգոսնեն... և զարշելի համարիցեն... նզովեալ լիցին (Կանոն Ա):
Թէ ոք արհամարհեսցէ զքահանայ կանամբի և զարշ համարեսցի, եղիցի նզովեալ (Կանոն ՀԲ, էջ 153բ):	Որք երկմտեն և խորշեն յերիցու, որ ամուսնացեալ իցէ, որպէս թէ ոչ իցէ արժան ի նորանէ առնուլ՝ նզովեալ լիցին (Կանոն Դ):
Կին քահանայի եթէ փոխեսցէ զհերս իւր և զգեղն այլակերպեսցէ, նզովեալ է, Ա ամ ապաշխարեսցէ (Կանոն ԾԷ, էջ 152ա):	Եթէ ոք ի կանանց կարճեսցէ իբրև աստուածապաշտութիւն և զհերս փոխեսցէ... նզովեալ լիցի (Կանոն ԺԷ):
Կին մի իշխեսցէ զհանդերձ առն ագանել, և որք ագանին՝ Ա ամ ապաշխարեսցեն (Կանոն ԾԻ, էջ 158բ):	Կին ոք որպէս թէ պանս ինչ համարէ փոխել զգեստ կանանց և զարանց զգեստ ինչ ագաւ... նզովեալ լիցի (Կանոն ԺԳ):

[6] Bac. VII, 233.

[7] Սոկրատը հիշատակություն ունի նաև Եվստաթիոսի առթիվ Կեսարիայում տեղի ունեցած ինչ-որ ժողովի մասին: («Վասն զի,- գրում է նա,- յետ նզովելոյն զնա ի Կեսարիոյ ժողովուն բազումս ինչ առ եկեղեցականսն տպաւորմունս գործէր», էջ 205-206): Դժվարանում ենք սակայն, որոշակի որևէ բան ասել այս ժողովի գումարման ժամանակի ու նպատակների մասին:

Համեմատիր նաև Բարսեղի ԿԸ. և ՀԸ. կանոնները նույն կանոնախմբից (ձեռ. N 659, էջ 153ա, 154ա) Գանգրայի ժողովի Թ. ԺԴ. և Ի. (հայկ. խմբագրություն) կանոնների հետ:

Վերոհիշյալ զուգորդություններից կարելի է հանգել այն արդյունքին, որ Բարսեղ Կեսարացին, Սեբաստացիների դեմ մղած պայքարի այն շրջանում, երբ ուղղափառ եկեղեցին դեռևս ի վիճակի չէր վճռական հարձակումներ գործելու և եկեղեցական ժողովով դատապարտելու իր քաղաքական ու սոցիալական հակառակորդներին, անգործ չէր նստած: Բարսեղը, իր թեմերին ուղղած կանոնական հրահանգներում հատուկ կետերով նզովքի է դատապարտում այդ «հերետիկոսների» գաղափարներն ու գործնական միջոցառումները և հող է նախապատրաստում վճռական հակահարձակման անցնելու համար:

Սակայն ամենայն հավանականությամբ, Գանգրայի ժողովը գումարվել նրա մահվանից (378 թ.) հետո, այլապես նա չէր կարող որևէ կերպ իր

նամակներում չխոսել ժողովի մասին և չմասնակցել ժողովի աշխատանքներին:

Այս եզրակացությունը հաստատվում է կարծես նաև Սոկրատ Սքոլաստիկոսի մեզ արդեն ծանոթ մի ակնարկով: Նա իր «Եկեղեցական պատմության» մեջ հայտնում է, որ՝ «Ժողով ... ի Գանգրա Պափլագոնիոյ եղեալ. զնա (զԵւստաթիոս) ընգեաց, և զաղանդն նորա նզովեաց, **այս յետոյ եղև**»[8]:

Ընդգծված արտահայտությունից պարզ է դառնում, որ Գանգրայի ժողովի գումարման և Եվստաթիոսի, որպես «հերետիկոս» հրապարակ իջնելու տարեթվերի միջև երկարատև ժամանակ է անցել: Ուստի և ժողովը չէր կարող գումարվել ո՛չ Անտիոքի ժողովից առաջ (341 թ.), ո՛չ էլ Եվսեբիոս եպիսկոպոսի ժամանակ (362-370 թթ.) և ո՛չ էլ Բարսեղ Կեսարացու կենդանության օրոք (մհ. 378 թ.), այլ կայացել է 378-ից հետո: Ինչպես ասացինք Dom Ceillier-ը կարծում է, որ Բարսեղի եղբայր Պետրոսի Սեբաստիայի եպիսկոպոս դառնալու տարին՝ 380 թվականը, պետք է համարել նաև Գանգրայի ժողովի գումարման թվականը:

Դժվարանում ենք ընդունել նրա այս կարծիքը, որովհետև եթե որոշ տվյալներով Եվստաթիոսին, որպես Սեբաստիայի եպիսկոպոս, հաջորդել է Բարսեղի եղբայր Պետրոսը, ապա Սոկրատի տվյալներով «ի տեղւոյն Եւստաթայ Մեղիտոս կարգեցաւ եպիսկոպոս»[9]:

Այնուամենայնիվ սխալված չենք լինի, եթե Գանգրայի ժողովի գումարման ժամանակը որոշենք 380-ական թվականների սկզբներին:

Գանգրայի ժողովականները, ինչպես արդեն ասել ենք, անհրաժեշտ են համարել հատուկ համախոսական թուղթ ուղարկել հայ եկեղեցու պաշտոնյաներին: Այդ թղթում համառոտակի շարադրելով Սեբաստիայի «հերետիկոսների» գաղափարական, սոցիալական ու բարոյական ուսմունքի հիմնական դրույթները Գանգրայի ժողովականները կոչ են անում անհաշտ պայքար ծավալել նրանց դեմ: Հասկանալի է, որ նման

[8] Սոկրատայ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմութիւն» Վաղարշապատ, 1897, էջ 206:

[9] Սոկրատ, էջ 205: Նույն տվյալն է հաղորդում նաև Սոզոմենոսը (տե՛ս «Церковная история», էջ 292):

թղթի անհրաժեշտությունը չէր զգացվի, եթե սեբաստացիների գաղափարները լայն արձագանք գտած չլինեին Հայաստանում: Այսպիսով, անտարակույս, Գանգրայի կանոններն ու ժողովականների ուղերձն ուղղակի կերպով վերաբերում են Հայաստանին, և IV դարի սոցիալական շարժումների պատմության համար վստահելի աղբյուրներ են:

Ժողովի կանոնները և հատկապես ժողովականների ուղերձը, որպես հայկական ձեռագիր կանոնգրքերի բաղկացուցիչ մասեր, կրել են մի շարք փոփոխություններ և որոշ չափով հեռացել են նախնական բնագրից: Կանոնները թարգմանվել և մուտք են գործել Հայոց առաջին Կանոնգրքի մեջ, ըստ երևույթին, 485-499 թվականների ընթացքում[10]:

Հովհան կաթողիկոս Օձնեցին (718-729) հայ եկեղեցու գաղափարական հակառակորդների դեմ մղած իր պայքարի ընթացքում անհրաժեշտություն է զգացել «սուրբ հայրերի» կանոնական կարևոր ասույթներն ու եկեղեցական ժողովների կանոնները «ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ... արմատացուցանել»:

Հավաքելով իր նպատակի համար օգտակար բոլոր նյութերը, որոնց թվում նաև Գանգրայի ժողովի մեզ հետաքրքրող կանոնները, Օձնեցին կազմել է հայկական Կանոնգրքի այն խմբագրությունը, որը որոշ հավելումներով ու փոփոխություններով օգտագործվել է հայ եկեղեցու կողմից երկար դարերի ընթացքում:

Կանոնգրքի իր խմբագրության հիշատակարանում Օձնեցին հայտնում է, որ.

«Գրեցաք ի սմա ոչ միայն զկանոնական սահմանեալն նոցա (սուրբ հարց) շարակարգութիւնս, այլ և զժամանակն և զպատճառն ի սոյն այս ի ներքս ածեալ յաւելաք. ընդ նմին և զգլուխս անձնիւրոց համառօտեալ բանիւ ի սկզբան անդ նախակարգեցաք, զի անաշխատաբար անդուստ զբանն յիւրում տեղւոջ գտցէ

[10] Այդ հնագույն Կանոնգիրքը կազմված է եղել Նիկիայի, Անկյուրայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի և Լավոդիկեի կանոններից: Տե՛ս Հ. Տաշյան, «Վարդապետութիւն առաքելոց անվավերական կանոնաց մատյանը», Վիեննա, 1896, էջ 233-236:

խնդրողն...»[11]:

Եվ իրոք, մեզ հասած ձեռագիր կանոնգրքերում Գանգրայի կանոնախումբը, մի շարք այլ կանոնախմբերի նման, սկզբից ունի ցանկ և առաջաբան ժողովի գումարման ժամանակի («Այս կանոնք յետ Նիկիայ ժողովոյն եղան»), վայրի («ի Գանգրա բերդն») և պատճառի («ի խնդրոյ և վասն Եւստաթիացոց հերձուածոյն») մասին: Օձնեցու այդ առաջաբանին ձեռագրերում հաջորդում է Գանգրայի ժողովականների ուղերձը հայ եպիսկոպոսներին, որը սակայն նույնպես կրել է խմբագրական որոշ փոփոխություններ:

Գանգրայի կանոնախմբի հունարեն բնագիրը բաղկացած է 20 կանոններից և մի վերջաբանից: Մեզ հասած հայկական թարգմանությունը տուժել է նաև իր այս մասում: 20-ի դիմաց Հայկական կանոնգրքերի մեծ մասն ունեն 24, իսկ մի քանիսն էլ՝ 23 կանոն, ընդ որում 20-րդը չի համապատասխանում հունարեն բնագրին:

Դժվար է այժմ պնդել, թե վերոհիշյալ հավելումը նույնպես արդյունք է Հովհան Օձնեցու խմբագրության, սակայն անվիճելի է, որ այն պատկանելի հնություն ունի[12]:

Գանգրայի կանոնախումբը, որպես հայկական կանոնգրքի բաղկացուցիչ մասերից մեկը՝ գտնվում է բոլոր ձեռագիր կանոնգրքերում:

Մատենադարանի ժողովածուում կան շուրջ 50-ի չափ կանոնգրքեր, որոնցից, Գանգրայի ժողովի կանոնների բնագիրը կազմելիս, օգտագործել ենք հետևյալները.

A – N 2677, ժամանակ՝ 1697 թ., գրիչ՝ Ավետիք. Գանգրայի կանոնները գտնվում են ձեռագրի 135բ–139ա էջերում: Այս ձեռագրի բնագիրը հիմք է ծառայել մեր հրատարակության համար:

[11] Ձեռ. N 783, էջ 195բ-196բ: Նաև Հ. Տաշյան, «Վարդապետություն առաքելոց...», էջ 244-248:

[12] Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին կից Մատենադարանի N 131 ձեռագիր կանոնագրքում, որն ընդօրինակված է Հովհաննես գրչի կողմից 1098 թվականին, Գանգրայի ժողովի կանոնները նույնպես 23-ն են (Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյանի կազմած «Ն. Ջուղայի Հայկական Ձեռագրերի ցուցակ», էջ 1817-1822: Ցուցակը պահվում է ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվում):

B – N 2883, ժամանակ՝ 1665 թ., գրիչ՝ Հովհաննես, էջ 48ա-51ա: Բնագիրը պատկանում է A-ի խմբագրությանը, որոշ դեպքերում տալիս է բնտիր ընթերցվածքներ:

C – N 659, ժամանակ՝ 1368 թ. գրիչ՝ Մաղաքիա, էջ 97ա-102բ: Բնագիրն անկախ է մյուս ձեռագրերից և կազմում է ուրույն խմբագրություն. կանոններն այլ դասավորություն ունեն և լի են բազմապիսի ու մեծաքանակ ընդմիջարկություններով ու հավելումներով, որոնք, ընդհանուր առմամբ, զուրկ են հետաքրքրությունից: Այս իսկ պատճառով ձեռագիրն օգտագործել ենք միայն առաջաբանի բնագիրը կազմելիս, իսկ կանոնների տարընթերցվածքների բաժնում միայն Բ., Դ., Է., Թ. կանոնների բնագրերն ենք տվել C ձեռագրից:

D – N 2964, ժամանակ՝ 1562 թ., գրիչ՝ Հովհաննես, էջ 54բ-60ա: Գանգրայի կանոնախումբը ցանկ չունի, առաջաբանը պատկանում է այլ խմբագրության և ներկայացնում է Գանգրայի ժողովականների ուղերձի համեմատաբար քիչ ձևափոխված փոփոխակը: Ա., ԺԵ., ԺԶ., ԺԸ., ԺԹ. կանոնները համընկնում են C ձեռագրի համապատասխան կանոններին, իսկ մյուս՝ Բ.-ԺԴ., ԺԷ., Ի.-ԻԴ. կանոնները պատկանում են A. ձեռագրի խմբագրությանը:

E – N 6409, ժամանակ՝ ԺԳ դար, գրիչ՝ անհայտ, էջ 39ա-41բ: Պատկանում է A-ի խմբին: Իր ընթերցվածքներով համարյա նույնանում է B-ի հետ:

F – N 3369, ժամանակ՝ ԺԷ դար, էջ 47ա-51ա: Պատկանում է D-ի խմբին:

G – N 8926, ժամանակ՝ ԺԶ դար, գրիչ՝ Եղիազար, էջ 65ա-68ա: Պատկանում է A-ի խմբին[13]:

Այսպիսով, մեր կողմից օգտագործված վերոհիշյալ ձեռագրերում

[13] Ձեռքի տակ ենք ունեցել նաև մի շարք այլ ձեռագրեր՝ օրինակ NN 3097, 3369 և այլք: Սակայն, բնագիրն անարժեք տարընթերցվածքներով չծանրաբեռնելու նպատակով նրանց առանձնահատկությունները չենք նշել: [«Կանոնք Գանգրայ, գլուխք ԻԴ» բնագրի «Կանոնագիրք Հայոց»-ի կազմում գիտական հրատարակություն է կատարել հայագետ Վազգեն Հակոբյանը, տե՛ս նրա աշխատասիրությամբ լույս տեսած «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, Երևան, 1964, էջ 188-201, 579-585]- **Խմբ.**:

Գանգրայի կանոնախումբը պահպանված է երեք խմբագրությամբ:

Կանոնների հայերեն թարգմանական բնագիրը համեմատաբար անաղարտ պահպանվել է ABEG ձեռագրերում:

Ժողովականների հայ եպիսկոպոսներին հասցեագրված ուղերձը ձևափոխված ու դարձված է կանոնխմբի առաջաբան: Ըստ որում, համեմատաբար քիչ է տուժել այդ ուղերձը D և F ձեռագրերում (հրատարակում ենք առանձին): D-ի խմբի առաջաբանի տվյալները լրացվում են A-ի խմբի տվյալներով և, ընդհանուր առմամբ, ուղերձի բովանդակությունը բավարար չափով արտահայտվում է այդ առաջաբաններով:

Ստորև բերում ենք Գանգրայի կանոնխմբի հայկական թարգմանության բնագիրը, կազմված վերոհիշյալ ձեռագրի հիման վրա:

ԿԱՆՈՆՔ ԳԱՆԳՐԱՅ

Գլուխ ԻԴ.

Ա. Վասն որ զամուսնութիւն պիղծ համարին.
Բ. Վասն որք զմսակերութիւն պիղծ համարին.
Գ. Վասն ծառայից, որ զտեարս արհամարհեն.
Դ. Վասն որ խոտեն զամուսնացեալ քահանայս.
Ե. Վասն որք զեկեղեցի արհամարհեն.
Զ. Վասն որք արտաքոյ եկեղեցւոյ ժողովս առնեն.
Է. Վասն որք զրկեն զեկեղեցին ի պտղոց.
Ը. Վասն որ առանց եպիսկոպոսին ծախեն զպտուղս.
Թ. Վասն որք չամուսնանան՝ զարշ համարելով.
Ժ. Վասն որք ամբարտաւանեն յամուսնացելոցն վերայ.
ԺԱ. Վասն որք անգոսնեն զագապսն.
ԺԲ. Վասն որք հանդերձիւք արդարանան.
ԺԳ. Վասն կանանց, որ զարանց հանդերձ զգենուն.
ԺԴ. Վասն կնոջ, որ յառնէն ելանիցէ.
ԺԵ. Վասն որ զորդիս թողուն և ոչ սնուցանեն.
ԺԶ. Վասն որ զծնաւղս իւր ատիցէ.
ԺԷ. Վասն կանանց, որ զհերս փոքրեն.
ԺԸ. Վասն որ զաւր կիրակէին պահեն և ի գործ արկանեն.
ԺԹ. Վասն որք ոչ պահեն զկանոնեալ յաւուրսն.

Ի. Վասն որք ոչ պահեն քառասուն աւր աղուհացիցն.
ԻԱ. Վասն զատկի հինգշաբաթւոյն.
ԻԲ. Վասն որք երթան ի ժողովս մարտիրոսաց.
ԻԳ. Վասն որք յառաջ քան զպատարագամատոյցն ճաշակեն.
ԻԴ. Վասն որք առանց ադաբողնի սաղմոսեն.

ԱՌԱՋԱԲԱՆ

(Ըստ D և F ձեռագրերի)

Այս կանոնք յետ Նիկիայի ժողովոյն եղան և կարգեցան ի Գանգրա բերդի, ԺԵ. եպիսկոպոսաց: Վասն զի ժողովեցաւ սուրբ ժողով եպիսկոպոսաց յեկեղեցին գանգրայոց վասն ինչ պիտոյից եկեղեցւոյ և ի խնդրոյ և վասն [եւ] սատաթիացոց հերձուածոյն: Զի գտանէր իբրև բազում ինչ իրս և կարգս, որ որոշեալ էին ի Նմանէն, և յիրաւի սահմանեցին դարձեալ: Եւ յայտ կամեցան առնել զնոսա ամենայն փութութեամբ, զի բարձցին իրքն, որ չարաչար լինէին ի Նմանէ: Զի ի մեղադրութենէ նորա, որ մեղադիր առնէր զամուսնութիւնն և ասէր՝ զի ոչ որ եւս, որ ընդ ամուսնութեամբ իցէ և անցանիցէ՝ յոյս գտանի այն պիտոյն զառնալոյ և կենաց հասանելոյ: Վասն այսպիսի իրաց բազում կանայք հեռացան յարանց իւրեանց և մինչդեռ ի նոյն իրս էին, չկարացին հանդուրժել վասն այսպիսի իրաց և շնացան: Այլ և այլ եւս մեծամեծս անարգէին զեկեղեցի և արհամարհէին զկարգս եկեղեցւոյ և որք յեկեղեցւոջ անդ էին: Եւ որոշեալ իւրեանց ժողովս առնէին և պաշտօն և վարդապետութիւն այլ իմն՝ ընդդէմ կարգաց եկեղեցւոյ: Նոր իմն ագանելիս ագանէին. և ժողովէին զպտուղս եկեղեցւոյ և յանձինս իւրեանց ագանէին և անձանց զարդ առնէին: Եւ որք ընդ նոսա էին պէս պէս, և այլ ընդ այլոյ կերպարանս նկարէին, իբրև այսպիսի ինչ ագանելիս յուսացեալ էին, իբրև զքաւութիւն այսպիսի ինչ իրօք ընդունիցին:

Եւ այսպիսի ինչ իրս՝ ծառայք ի տերանց հնազանդ և անարգեցին զտեարս իւրեանց և կանայք, արտաքս քան զսովորութիւն հանդերձ կարգի կանանց, զարանց զգեստ ագանէին և սուտ կարծէին արդարանալ: Եւ այլ բազում ինչ անէին՝ զհերս փարքէին ի պատճառս աստուածպաշտութեան՝ արտաքոյ քան զբնութիւն կանանց, պահս ի կիրակի պահէին, և զսուրբ զպատարագ օրն անգոսնէին, և զպահս, որ ըստ կարգի եկեղեցւոյ սրբոյ կարգեալ էր և պահէին, նորա անգոսնէին և անփոյթ առնէին, իբրև ոչ ուղիղ եղեալ: Եւ ոմանք ի նոցանէ ի միս ճաշակելոյ խորշէին և կասկածէին: Ի տունս, որ ամուսնութիւն կրէր, աղօթս ոչ կամէին առնել և ուր լինէր աղօթք՝ զայնպիսին անգոսնէին և արհամարհէին: Բազում անգամ առնել յիշատակ աշխարհականի ումեք, իբրև այն թէ պղծեալ յամուսնութենէ անտի էր՝ չմերձենային և ոչ ճաշակէին: Եւ յերիցանց, որ ամուսնացեալ էին՝ ամբարհաւաճէին ի վերա և վերագոյն ինչ միտս ստանային, և պաշտօնն, որ ի նոցանէ պաշտէր՝ չհպէին: Եւ ի տեղիս ուր մարտիրոսք եղեալ էին՝ արհամարհէին, և որ ի մատրունս ժողովէին և պաշտօն պաշտէին՝ մեղադիր լինէին: Եւ վասն մեծատանց, որ ոչ ամենայն իրօք յինչից հեռանային՝ իբրև անյոյս համարէին յաստուծոյ և բազում այլ ինչ, զոր թուել ոք ոչ բաւեսցէ: Քանզի ամենայն որ ի նոցանէ հեռացան ի կարգացն աստուծոյ, և եկին յարտաքոյ քան զկանոնս, ըստ իւրեանց մտաց իւրաքանչիւր խմն օրէնս կարգեցին և ընկալան: Եւ ոչ կամօք ինչ հաւանութեամբ առնէին, այլ իւրաքանչիւր զինչ և ի միտս արկանէր՝ զայս յաւելոյր և հաճոյ թուէր նոցին: Իբրև անթագաւոր խորհուրդս ինչ ընկալան վասն թշնամանաց եկեղեցւոյ և վնասելոյ անձանց իւրեանց:

Վասն այսպիսի իրաց հարկ եղև ժողովոյ:

ԱՌԱՋԱԲԱՆ

(Ըստ ABCE ձեռագրերի)

Այս կանոնք յետ Նիկիայ ժողովոյն եղաւ, խսկ յետ զնելոյ զկանոնս և կարգելոյ և ծաւալելոյ ընդհանրական կաթուղիկէ եկեղեցի և ուրախ եղեալ ամենեցուն տային ուրհնութիւն ի բարձունս:

Եւ եկեալ ի մի վայր վարդապետք կողմանց արևելից հիւսւսոյ եպիսկոպոսք ժե. ի մեծ եկեղեցին գանգրացւոց, առ սուրբն Եւսեբիոս, զի առաւել եւս կարգեսցեն և հաստատեսցեն զեղեալ կանոն մեծի ժողովոյն, ինչ որ պիտոյ էր ի յօւթիւն եկեղեցւոյ: Քանզի էր ի կողմանսն յայնոսիկ եւստա[թիա]ցւոց հերձուածութիւնք, որք առէին անմուսութեամբն իւրեանց, եթէ որք ընդ ամուսնութեամբ են և մեղան՝ անյոյս են ի փրկութենէ: Եւ այլ խմն այլաշան կարգս ի մէջ բերեալ թիւրէին զուղիղ կարգս եկեղեցւոյ: Որք և կանանց զհանդերձս առնացիս զգեցուցանէին, այլ և փոքրել զվարսս գլխոյ իւրեանց, զոր արգելն Պաւղոս, որք և զմաւկերութիւն պիղծ համարէին: Եւ այլ զի՞նչ եւս պատմեսցուք զազգի ազգի զայլանդակ գործս նոցա. մինչև հեռանալ ծառայից ի տերանց, և ազախնաց ի տիկնանց, և կանանց յարանց: Այլ և զպտուղս և զպասս եկեղեցւոյ ագանելիս իւրեանց առնել և այնու սուրբ անուանել զանձինս իւրեանց: Զի եթէ ոչ էաք ի հրամանէ հոգւոյն սրբոյ ժողովեալք և ի բաց կորեալ զվնասակար զաղձն և բաղեալ զորոմն ի ցորենոյն՝ ելեալ, տարածեալ զայր սէպ մեղացն:

Եւ ահա, անդրէն հաստնէաք ի միաբանութիւն սահմանադրութեան յեկեղեցին գանգրացւոց, որոց անուանք են այսոքիկ՝ Եւսեբիոս, Հեզանիոս, Եւգենիոս, Ոլոմպիոս, Բիւթանիոս, սուրբն Գրիգորիոս, Եւղալիոս, Հիպատոս, Պրոեսիոս, Բասիլիոս, Բասոս, Եւգենիոս, Փիլետոմն, Հերակ-

դէս, Պապոս, որ էր[14] ի կողմանս արեւմտից, արեւելից, հիւսիսոյ և հարաւոյ, որք ժողովեցան և եկին ի հրամանէ հոգւոյն սրբոյ ի ժողովն՝ ի Գանգրայ և հաստատեցին զկանոն նիկիական մեծի ժողովոյն և առաքեցին ի շինած և ի լրումն եկեղեցւոյ սրբոյ: Ողջ լերուք ի տէր:

Աղաչեմք զամենեսեան և վկայութիւն դնեմ[ք] առաջի աստուծոյ՝ ի Քրիստոս Յիսուս, յոյս փրկութեան ունել ի ձեռն ապաշխարութեան արդարոց և մեղաւորաց և մի անյոյս լինել ի փրկութենէն, որ ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր:

[14] Թերևս պետք է կարդալ «որք» փխ. «որ էր»:

ԳԱՆԳՐԱՅ ԿԱՆՈՆԻՍ

(Ըստ ABDE ձեռագրերի)

[Կանոն] Ա.

Ոյք զամուսնութիւն մեղադրեն և անգոսնեն կամ որ ոչ ննջէ ընդ առն իւրում, իբրև իցէ հաւատացեալ և երկիւղած, և զարշելի համարիցին և մեղադիր առնիցեն, իբրև այն՝ թէ յարքայութիւն ոչ կարեն մտանել, այնպիսիքն նզովեալ լիցին.

Բ.

Ոյք ուտեն միս առանց արեան և զոհելոյ և մեռելոտւոյ, զի ամենայն երկիւղածութեամբ և հաւատովք լիցի, և դատապարտեսցեն զայնպիսիսն վասն ուտելոյն, իբրև այն՝ թէ յոյս ոչ ունիցին առ աստուած, նզովեալ լիցին[1]:

Գ.

Ոյք զծառայ, ի պատճառս աստուածպաշտութեան, պատրեն արհամարհել զտեարս իւրեանց, և հեռանալ ի ծառայութենէ նոցա, և ոչ ամենայն փութութեամբ պատուել և պաշտել զնոսա, իբրև իցեն տեարքն քրիստոնեայք և երկիւղածք, նզովեալ լիցին[2]:

[1] C. ձեռագրում որպես Բ. կանոն բերված է հետևյալը. «Որք զմիսն պիղծ համարին ուտել, որպէս թէ որ ուտենն զրկիցին ինչ յարքայութենէն, նզովեալ լիցին»:

[2] Գ. կանոնին համապատասխանում է C. ձեռագրի Գ. կանոնը, հետևյալ բովանդակությամբ՝ «Որ աստուածպաշտութեան կերպարանովք անհնազանդին տերանց իւրոց, իբրև այն՝ թէ ծառայքն քրիստոնեայք և զտեարս արհամարհեն, նզովեսցին»:

Դ.

Ոյք երկմտեն և խորշեն յերիցուէ, որ ամուսնացեալ իցէ, որպէս թէ ոչ իցէ արժան ի նոցանէ ասրէնս առնուլ, նզովեալ լիցին[3]*:*

Ե.

Ոյք ուսուցանեն զտուն աստուծոյ և որ ի նա ժողովն ժողովիցին արհամարհել, նզովեալ լիցին:

Զ.

Ոյք արտաքս քան զեկեղեցին ժողովս ժողովիցին և արհամարհիցեն զեկեղեցին և կամիցին զեկեղեցւոյ պէտս գործել, իբրև ոչ իցէ երէցն ըստ կամաց եպիսկոպոսին լեալ, նզովեալ լիցին:

Է.

Ոյք զպտուղ եկեղեցւոյն կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ կամ տալ և ոչ կամաւք եպիսկոպոսին, որ ձեռնադրեացն զայնպիսին յայսպիսի իրս և կամաւք նորա չառնիցէ և չգործիցէ, նզովեալ լիցին[4]*:*

Ը.

Որ տայցէ կամ առցէ զպտուղ արտաքոյ քան զեպիսկո-

[3] D. ձեռագրում Դ. կանոնից հետո արտագրված է Ը. կանոնը, իսկ Ե. Զ. Է. կանոնները բացակայում են:

[4] Որպես Է. կանոն C. ձեռագրում կարդում ենք. «Որք ուսուցանեն զաւէնս և զկարգս տան աստուծոյ և ոմանք արհամարհեն և անգոսնեն զժողովուրդն և զուսանելն, նզովեալ լիցին»: Իսկ Է. կանոնի բովանդակությունը շարադրված է ձեռագրի Թ. կանոնում, այսպես. «Որք զպտուղ եկեղեցւոյ արգելցեն և արտաքս քան զեկեղեցին տան առանց հրամանի երիցուն, այսպիսիքն նզովեալ լիցին»:

պոսն կամ որ կարգեալն է ի տնտեսութիւնն տուրս տալոյ, տալին և առնլին նզովեալ լիցին:

Թ.

Ոյք կուսանան և պահեն զանձինս իւրեանց, որպէս՝ թէ զարշ իցէ ամուսնութիւն և ոչ վասն բարւոյ և սուրբ պարկեշտութեանն, նզովեալ լիցին:

Ժ.

Ոյք կոյսք իցեն վասն աստուծոյ և գերիվերոյ են ամուսնացելոցն և ամբարհաւաճիցեն, նզովեալ լիցին:

ԺԱ.

Ոյք արհամարհեն զայնոսիկ որք հաւատով ագապս առնեն և վասն պատուի տեառն կոչեն զեղբարս, և ոչ կամին հաւասարել և յանձն առնուլ և արհամարհիցեն, նզովեալ լիցին:

ԺԲ.

Ոյք յարանց պահս[5] *ինչ համարեցան զարտումն*[6] *և զտըրտում հանդերձ ինչ ագանել, որպէս թէ այսպիսի ինչ իրաւք արդարասցին, և զատապարտիցեն զայնոսիկ ոյք աճիւ և երկիւղիւ և ոչ փառասիրութեամբ զսովորական հանդերձսն ագանին, նզովեալ լիցին:*

ԺԳ.

Կին ոք, որպէս թէ պահս ինչ համարէ փոխել զզեստ կանանց և զարանց զգեստ ինչ ագաւ կամ զկերպարանս ինչ այնպիսի առացաւ, նզովեալ լիցի:

[5] «Պահք» բառը այստեղ նշանակում է «ճգնություն», «ասկետություն»:

[6] Կոպիտ վերարկու:

ԺԴ.

Կին, որ թողու զայր իւր հեռանալ ի նմանէ, որպէս թէ ի հաւատս կացցէ, առանց կամաց առնն, և կամ անգոսնեսցէ զայր իւր՝ եթէ ես գեղուղէշ երեսս ունիմ կամ մեծազգի եմ կամ ընչաւէտ եմ քան զքեզ և ելանիցէ յառնէ իւրմէ, պատուհաս կրեսցէ, և նզովեսցեն և եկեղեցւոյ ի բաց հանցեն[7]:

ԺԵ.

Այք ընդ վայր հարկանեն, թողուն զորդիս իւրեանց և ոչ անուցանեն, և որչափ ձեռնհաս իցեն՝ ոչ փոյթ առնիցեն վասն աստուծոյ կարգին և ննդեանն մինչև ի կատարման հասակին, այլ որպէս ի պատճառս պահոց և վանականութեան՝ արհամարհիցէ և անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի:

ԺԶ.

Եթէ ուրուք որդի յորոյ ծնեալն է առաւել հաւատացեալ իցէ և առաքինի ի կարգս աստուծոյ, հեռանայցէ որպէս ի պատճառս աստուածպաշտութեան և արհամարհիցէ և ոչ զարժանն և ոչ զիրաւ պատիւ ծնաւղացն հատուցանիցէ իբրև ծնաւղաց, քան զամենայն աստուածպաշտութիւն մեծ և ահաւոր թուեսցի և հատուցումն բարեաց, այնպիսին նզովեալ լիցի:

ԺԷ.

Եթէ ոք ի կանանց կարծեսցէ իբրև աստուածպաշտութիւն և զհերս փոքրեսցէ, զոր ետ աստուած յիշատակ հնազանդութեան, իբր թէ ընդ ոտն եհար և արհամարհեաց զհրամանն հնազանդութեան, նզովեալ լիցի:

[7] ԺԴ. կանոնը հունարեն բնագրից անչափ հեռացած և ընդարձակված է հետագայի ընդմիջարկություններով, պետք է լինի՝ «Կին, որ թողու զայր իւր հեռանալ ի նմանէ, որպէս թէ ի հաւատս կացցէ, նզովեալ լիցի»:

ԺԸ.

Եթէ ոք իբրև ի կարծիս պահոց արհամարհիցէ զաւր կիրակէի և ի պահոց թիւ արկ[ցէ] կամ ի գործ, որպէս զայլ աւուրս, ո՛չ գտցէ հանգիստ յարքայութեանն աստուծոյ և մեծ ժողովն մերժէ և նզովէ:

ԺԹ.

Եթէ ոք ի պահողաց արտաքս քան զհարկ ինչ մարմնաւոր, այսինքն ցաւոց եւ վշտաց՝ ամբարհաւաճեաց և ամբարտաւանեաց և զտուեալ և զկարգեալ պահս հասարակաց, որ պահի յեկեղեցւոջ՝ ելոյծ և արհամարհեաց, իբրև կրիցի ի նմա կատարեալ միտք և խորհուրդք, նզովեալ լիցի:

Ի.

Եթէ ոք ի մարդկանէ՝ կատարեալ հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ՝ զքառասուն աւր զպահսն ի գլուխ ոչ տանիցի, այնպիսին նզովեալ լիցի[8]:

ԻԱ.

Եթէ ոք զքառասունսն պահեսցէ սուրբ և ի զատկի հինգշաբաթի աւրն քան զհաղորդել աւրհնացն և զբաժակին սրբելոյ եթէ այլ ինչ աւելի համարձակիցի ուտել, զպահսն զոր պահեաց՝ ընդունայն և ի մեծ ժողովոյն՝ նզովեալ:

ԻԲ.

[8] Ի. կանոնով ավարտվում է հունարեն բնագիրը: Հայերենում այն անճանաչելի փոխվել է կամ, ավելի ճիշտ, նրա փոխարեն, ԻԱ. ԻԲ. ԻԳ. և ԻԴ. կանոնների հետ մեկտեղ, մուտք է գործել մի բոլորովին այլ կանոն: Ստորև բերում ենք Ի. կանոնի հունարեն բնագրի թարգմանությունը՝ «Եթէ ոք ամբարտաւանութեամբ հպարտանամ խոտիցէ զկցուրդս մարտիրոսաց (τὰς συναξίας τῶν μαρτύρων) կամ զաստուածեղէն պաշտամունս ի նոսա և զյիշատակս նոցին, նզովեալ լիցի»:

Եթէ ոք երթիցէ ի ժողովս մարտիրոսաց զգոյշ և պատրաստ լիցի սրբութեան, յորդորման, պաշտաման, խոնարհութեան, աղաւթից, զի մեծ վարձս առցէ: Ապա եթէ ոք երթիցէ ամբարտաւանութեամբ հպարտանաւք ի ցոյցս տեսողաց և դիտել զնմանիս իւր, նզովեալ լիցի:

ԻԳ.

Եթէ ոք յառաջ քան զարձակել ժողովուրդն, կատարեալ հաւատով և առողջ մարմնով, յառաջ քան զկատարել տէրունական խորհրդին երթեալ հաց կերիցէ կամ այլ ինչ, այնպիսին նզովեալ լիցի:

ԻԴ.

Երէց կամ սարկաւագ առանց արարողնի ի բեմ մի ելցէ, կամ խունկ ծխել և գրքով սաղմոսել ի բեմի, և կամ գիրս կարդալ ի բեմի, և կամ ի սպասու կալ սեղանոյն, ո՛չ է ընդունելի պաշտաւն նորա: Աղէ՛, կա՛ց այնպիսի կերպարանաւք առաջի մահկանացու իշխանի, եթէ ընկալցի՞ զքեզ: Եթէ ոք անցցէ ընդ կանոնս, այնպիսին նզովեալ լիցի:

ՎԵՐՋԱԲԱՆ

(Ըստ ABEG ձեռագրերի)

Զայս գրեմք և ոչ խափանեմք ոչք յեկեղեցի աստուծոյ գիրս ստանալ կամ զճարտարութիւն կամ զպահոն կամին, այլ որք ընդունին գիրս պահոցն ի պատճառս ամբարտաւանելոյ ի վերայ այնոցիկ, որք միամտութեամբ կեան և ո՛չ նենգութեամբ կամ պատրանաւք, այլ որք բարձրամտեն արտաքս քան զգիրս և քան զկարգս կանոնաց եկեղեցւոյ և նոր կարգս կացուցանեն: Այլ մեք և ընդ կուսութիւնն խոնարհութեամբ զարմանամք, և զպահս պարկեշտութեամբ և հեզութեամբ և աստուածպաշտութեամբ ընդունիմք, և զհեռանալն խոնարհութեամբ յերկրաւորացս ընդունիմք, և զամուսնութեամբ բնակութիւն պարկեշտութեամբ պատուէմք, և զմեծութիւն հանդերձ արդարութեամբ ոչ անգոսնեմք, և զմէկին և զլոկ և զարհամարհեալ ագանելիս վասն պիտոյից միայն մարմնոյ՝ առանց ամենայն խոտելոյ գովեմք, այլ զլոյծ և զշախշախ և զշեղտամեղտ ագանելիս և զգնացս ոչ ընդունիմք: Եւ զտունս աստուծոյ պատուեմք և զժողովսն, որ ի նոսա, որպէս զսուրբս և զաւգտակարս ընդունիմք. իբրև ոչ փակեմք կամ զրաւեմք զաստուածպաշտութիւնս ի տունս կամ ի տաճարս, այլ քան զամենայն տեղիս, որ յանուն աստուծոյ շինեալ են՝ պատուեմք և որ ի նոսա ժողովեալ են՝ ի հասարակաց աւգուտ ընդունիմք: Եւ զառաւելագոյն գործս և զբարեգթութիւնս, որ յեղբարս, որ ըստ աւանդութեան եկեղեցեաց և կարգաց, որ աղքատս լինի՝ երանեմք: Եւ զուղիղ գործ ընկալեալ առեմք, որ ինչ տուաւ և կարգեցաւ ի սուրբ գրոց և յառաքելոց[9]. յեկեղեցի լինել մեզ աղաւթս առնեմք, զի կատարեսցի:

Զայս կանոնս, զոր եդաք և գրեցաք ի Գանգրայ, վասն հաստատութեան կարգի արարինք, ոչ աւելի ինչ և ոչ աւտարոտի ի մէջ բերեալ, այլ զոր սուրբ ժողովն կանոնեցին՝ զնոյն ի լրութիւն բովանդակեցաք: Քանզի են ոմանք, որ ագիտութեամբ ինչ գործելով, կուտեն անապաշխար բեռինս անձանց, ըստ գրեցելոյն, եթէ՝ ի մէջ ագիտաց ճշմարտութիւնն պատառի, զի եթէ կարի փոքր մեղք իցեն և ընդ ապաշաւանաւք ոչ անկանիցի՝ մահու չափ լինին, ըստ առաքելոյն, որ ասէ՝ են մեղք որ մահու չափ են:

[9] Այսքանով ավարտվում է հունարեն բնագիրը:

ՏԱՐԸՆԹԵՐՑՎԱԾՔՆԵՐ

1 B Գանձրեա 2 E Գլուխք ԻԳ, 3 BE զարշ փխ. պիղծ, 4 BE որ, B զարշ, 5 BE զուէր, 17 BE թողուցուն, չիք և ոչ սնուցանեն, 20 AE ոչ պաճեն, 21 A աւուրս զպահս, 23 A Վասն զառկին հինգշաբաթու չլուծանել զպահս, 24 A ի ժողովս մարտիրոսաց զգոյշ կալ ի պաշտաւն, E չիք ամբողջ տողը, 27 A սաղմոս ասեն, 31 F բերդն, եպիսկոպոսք, 33 F Իգաթիացոց փխ. [Եւ]ստաթիացոց, 41-42 F չիք Վասն - իւրեանց, 45 D արհամարհեն, 49-50 F յանձանց, 53 F ընդունէին, 55 F զպեսս փխ. զռեարս, 60 F ի կիրակէին, 70 F տանէին փխ. տտանային, 71 F տեղս փխ. ի տեղիս, 78 F չիք իւրեանց մսոց, 79 D հաւաստարութեամբ փխ. հաւանութեամբ, 84 F սուրբ ժողովոյս], որ սուրբ եպիսկոպոսք ժողովեցան և կարգեցին կանոնս զայս ի Գանգրայ բերդն, 89 BE չիք կաթուղիկէ, C եկեղեցւոյ, 91 BE կողմանց-կողմանց, 93 AC կարգեսցեն] և ուղղեսցեն, 96 ABE Եստացւոց, C Եւստացւոց, D Սոսաթիացոց ուղղում եմ՝ Եւստա[թիա]ցւոց, 99 C կարգ խմն, զուգորդ, 102 AC Այլ և, 104 A աղախնեաց, C աղախնայց, 106 ABE առնել փխ. անուանել, 113 B Հեղիանոս, A Ուղիպոս, E Ուղղիպոս, C Բիւթոնիպոս, 114 B և այլոս, A Հիպատոս, 115 C Պրուբեսիոս, AC Եւգինիոս, ABE Հերակղիոս, 116 A ի կողմն կողմանս, 121 AC Աղաչեմ, 126 B չիք վերնագիր 129 ABD Որք փխ Որք, B չիք և անգոսնեն, 130 D իւրում] առանց կամաց առն, 135 D կանոնի սկզբից ունի՝ Որք ուտեն միս հեղձուցիկ կամ մեռելոտի կամ զենածոյ և զարիւնն ընդ նմին և կամ [որք ուտեն... 136 D չիք լիցի, 137-138 D թէ որք ուտենն զրկին յարքայութենէն նզովեալ լիցին փխ. իբրև այն... լիցին, 137 ABC եթէ, 138 BE ունիցին, 140 ABD որք ծառայ, 143 D «երկիւղած» բառից հետո ունի՝ խոնարհք և մարդասէրք, եւ ծառայն արհամարհիցէ ծառայն, 146 ABD Որք, 147 DF ընդունել փխ. առնել, 156 ADE լիցի, 158 ADE Որք, 159 BE և որ ոչ, կամ որ, 161 ABD լիցի, 163 D «զպտուղ»-ից հետո ունի՝ եկեղեցւոյ, կամ զողանան ի պտղոյ եկեղեցւոյն առանց հրամանաց եպիսկոպոսին կամ որք կարգեալն են ի տնտեսութիւն՝ առցէ կամ յայլում տացէ թէ ի կերակրոց, թէ ի յայլ մտից՝ տալին և ընդունելին նզովեալ լիցին, 168 D զարշելի, ABD ամուսնութիւն] և

հեռանայցեն, D «սուրբ» բառից հետո ունի՝ և պարկեշտութեան կուսութեան, որ ասէ. թէ կուսանն զանառն հոգայ, այլ պիղծ համարի ամուսնութիւնն, 171 A գերիվերոյ, D գերիվերոյ զայցեն փխ. գերիվերոյ են, 175 D «տեառն» բառից հետո ունի՝ կամ որք կատարեն զյիշատակս վկայից և կոչեն զեղբայրս, ըստ առաքելոյն, որ ասէ. մի թողուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք, և արհամարհիցէ ոք և չերթիցէ՝ նզովեալ լիցի, 179 BDE զորոտում և զոխուր փխ. զարտումն և զորոտում, 183 BDE «ագահին» բառից հետո ունեն՝ և զարավիցեն այսպիսեաւքս, 188 A չիք թէ, 190 BDE աղջիկ փխ. մեծացգի, D աղջիկ և ընչաւէտ, 192 D արասցեն նմայ փխ. կրեսցէ, 195 E չիք ընդ վայր, 202 E չիք իցէ 206 A թուիցի, B հասուցումն, 211 D «արհամարհեաց» բառից հետո ունի՝ զհնազանդութիւնն եւ անարգեաց զկանոնս առաքելական, եթէ կին մարդ մի գերծցի և նա ընդ առն եհար զհրամանն, նզովեալ, 219 A արտաքոյ, 227 D չիք այնպիսին, 230 AED բաժակին, 231 D սրբոյ, 232 BD ընդունայն է, D սուրբ փխ. մեծ, 240 A զժողովեալ ժողովուրդն, 244 D հղ կանոնը վերնագրված է՝ Վասն սպասաւորաց և պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ, 246 BE սաղմոս ասել, 250 DE Արդ, եթէ ոք, 263 A չիք և զհեռանայն-ընդունիմք, 264 A զամուսնութեան կարգ փխ. զամուսնութեամբ բնակութիւն, 267 A զլծոյ, 270 AB ի նոսա ժողովին, 276 A չիք որ յեղբարս, 278 A յանձին կալեալ փխ. ընկալեալ, 285 G ինչ ինչ, E ինչ յարատ փխ. ինչ, 289 ADE չիք որ ասէ:

ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 12-14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ*

Հայկական, ավելի ճիշտ, արևելյան վերածննդի հետ առնչվող բարդ հարցերի լուսաբանման համար խորը մասնագիտական քննարկման առարկա պիտի հանդիսանան ինչպես հայկական քաղաքների տնտեսական ու սոցիալական կյանքի բոլոր կողմերը, այնպես էլ այդ քաղաքներում առաջացած և միայն դրանցով բացատրվող մշակութային այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ճարտարապետական կոթողները, ձեռագրերի մանրանկարները, գեղարվեստական արձակ ու չափածո երկերը, փիլիսոփայական, պատմական, դավանաբանական և անգամ քարոզչական գրականության հարուստ նյութերը:

12-13-րդ դարերում առաջացած ու այդ դարերին հատուկ ժամատները, որպես հասարակական հավաքույթների վայրեր ու ժողովատեղեր, լինելով հայկական գլխատան *ճարտարապետական սկզբունքների մշակման ու զարգացման արդյունք, արտահայտություն չե՞ն, արդյոք, հայկական վերածննդի:*

Մի՞թե 12-14-րդ դարերում Կիլիկիայում և բուն Հայաստանում նկարազարդված Ավետարանները, իրենց խորհող ու հսկամարմին ավետարանիչներով, Թախծոտ հիսուսներով, գորովագութ, սիրով լի հայացք ունեցող Աստվածամայրերով և բնության ու կյանքի պատկերներով հարուստ լուսանցազարդերով՝ արտահայտություն չեն այդ վերածննդի:

Արդյոք, Հայկական վերածննդի արդյունք չէ՞ Անեցի բանաստեղծ

---

* Դասախոսություն՝ կարդացված Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական Համալսարանի XVI գիտական սեսիայում, 1944 թվի նոյեմբերի 15-ին: Ն. Մառի անվ. կաբինետի աշխատ./Երևանի համալս., 1947, N 2, էջ 181-209

Վարդանը, որն իր, քչերին ծանոթ, «Ի կառս աստուածութեան» ներբողով հիմք է դրել միջնադարում լայն տարածում գտած գեղարվեստական գրականության մի ժանրի, (գանձ-ի) և ի դեմս Աստծո կառքին լծված չորս խորհրդանիշ կենդանիների (մարդ, առյուծ, արծիվ, եզ) ներբողել է մարդու ստեղծագործական հանճարը, մտքի թռիչքը, ամենակարող ուժն ու կառուցողական-աշխատանքային հնարավորությունները*:

Եվ, վերջապես, նույն տնտեսական ու սոցիալական հողից չի՞ սնվել անվանի մտածող ու հումանիստ Մխիթար Գոշը, որն իր «գծագրության»** մեջ դատապարտել է վրաց և հայ այն հոգևորականությանն ու իշխաններին, որոնք դավանական տարբերությունների հիման վրա թշնամություն էին սերմանում երկու հարևան ժողովուրդների միջև:

Անշուշտ, այս և նման հարցերի պատասխանը, որ տրվելու է նյութական մշակույթի հուշարձանների և, որ ամենակարևորն է, մեր ձեռագրական անսպառ աղբյուրների մանրակրկիտ ու տևական ուսումնասիրությունից հետո, լինելու է դրական:

Ձեռքի տակ ունենալով ձեռագրական որոշ նոր տվյալներ, մենք ցանկանում ենք սույն հոդվածով միայն առաջ քաշել հայ աղանդավորական-հերձվածողական հոսանքների գաղափարական ու սոցիալ-տնտեսական հիմքերի հետ կապված որոշ հարցեր, որոնք սերտ կերպով առնչվում են առաջադրված խնդրին: Հասկանալի է, որ քննարկվող հարցերի վերաբերմամբ վերջնական եզրակացություններ կարող են արվել միայն այն ժամանակ, երբ հավաքված կլինեն մեծաքանակ ու ավելի բովանդակալից նյութեր:

I

Վերածննդի հետ առնչվող բոլոր ու բազմապիսի երևույթների մայրն ու օրրանը քաղաքն է՝ իր բազմատարր ու բազմազգ բնակչությամբ, աշխույժ տնտեսական ու սոցիալական կյանքով և հակամարտություններով: Արդ, ի՞նչ էին իրենցից ներկայացնում հայկական, նաև Իրանի ու

* Բնագրի հրատարակությունն ու հանգամանալից ուսումնասիրությունը տե՛ս Ա. Մնացականյան, Անիի բանաստեղծ Վարդան Անեցին և նրա ներբողը, «Բանբեր Մատենադարանի», N 10, Երևան, 1971, էջ 261-294 - խմբ.:

** Գիտական հրատարակությունը տե՛ս «Գանձասար», Զ (1996), էջ 336-402 - խմբ.:

Անդրկովկասի քաղաքներն այն դարերում (11-13), երբ Հայաստանում իրոք առկա էին եվրոպական վերածննդի հիմքում ընկած համարյա բոլոր սոցիալական ու մշակութային նախադրյալները:

Քաղաքներ էին կոչվում մարդկանց համատեղ բնակության այնպիսի վայրերը, որոնցում յուրաքանչյուր անհատ իր աշխատանքի ու արտադրանքի գծով բավարարում էր համաքաղաքացիների այս կամ այն պահանջը, և իր հերթին, սպառում էր այլ մարդկանց արտադրանքը: Հենց այսպես էլ հասկանում է «Քարոզ վասն անապատաւորաց» հոդվածի հեղինակը, երբ գրում է «... զի կարօտ եմք միմեանց, վասն որոյ ժողովիմք ի բնակութեան քաղաքաց՝ զի զմիմեանց լցցուք զպէտսն»[1]:

Միմյանց պետքերը հոգալու համար քաղաքներն ապահովված էին վաճառափողոցներով, կրպակներով, իջևաններով, բաղնիքներով, հրապարակներով, անգամ անընտանիք մարդկանց ու օտարականների համար հատուկ սեղանատներով, զվարճության ու հեշտանքի հաստատություններով, օրավարձու մշակների հավաքատեղիներով և այլն:

Քաղաքային ազգաբնակչության հիմնական շերտերն էին. Առևտրականները, որոնք իրենց հերթին բաժանվում էին ենթաշերտերի: Առևտրականության մի մասը քաղաքներում հաստատված և վաճառափողոցներում ու կրպակներում առևտուր անողներն էին («որք ի վաճառափողոցս նստեն գնել և վաճառել», Ն. Շնորհալի «Թուղթ ընդհանրական»): Սրանց բնորոշ նկարագիրը տրված է Ստեփանոս Օրբելյանի «Բան դիմադրական ընդդէմ Հերձուածողաց» աշխատության մեջ.

«Դոքա (առևտրականները), մամոնայի ծառայելով, գանձեն գանձս երկրի առաւել քան զամենայն ազգս. և ագանին բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինին առատապէս իբրև զմեծատունն, և Ղազարոս[2] անկեալ առ դուրս նոցա ոչ տան ի փշրանացն: Եւ ի վաճառն՝ տունն մութն գործեն... և խաբեն զտխմարս:

[1] Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան) ձեռագիր N 573, էջ 42ա: [Նույն միտքը գրեթե բառացիորեն կա նաև Մխիթար Գոշի «Թուղթ առ վրացիսն» (կամ Գծագրութիւն...) երկում, տե՛ս «Գանձասար», Զ(1996), էջ 243 - խմբ.]:

[2] Իմա՛ աղքատ մարդ - խմբ.:

... Ի տայլերն (այսինքն՝ նարդն) խաղալով զմիմեանց մեծութիւնս յափշտակեն և ոչինչ համարին մեղս» (N 573, էջ 113բ):

Առևտրականության մյուս շերտը, խոշոր առևտրականությունը, իրենց «ռամզաներով» (արտոնագիր) շրջող գործակալների միջոցով մասնակցում էին միջազգային առևտրին, թե՛ տեղական՝ հայկական և թե՛ ներմուծվող ապրանքներով: Հայ առևտրականների գործարքների շրջանակների մեջ էին մտնում Կանտոնից սկսած մինչև ֆրանսիական ու իտալական քաղաքները. Կիևից, Նովգորոդից ու Սուզդալից սկսած մինչև Հաբեշստան, վայրեր, որոնցից շատերում, որպես արդյունք աշխույժ առևտրական կապերի ու նրանց հետ հայ ազգաբնակչության գոյության, կառուցվել էին հայկական եկեղեցիներ:

Նրանց առևտրական գործարքների մասին պարզ պատկերացում կարող ենք կազմել, եթե ի նկատի ունենանք, որ նրանք դեռևս 12-13-րդ դարերում պահանջ են զգացել ստեղծելու դրամական գործարքների մի համակարգ, որ ամենայն հավանականությամբ նախատիպն է արդյան բանկերի:

«Իմաստուն վաճառականք,- գրում է այդ մասին իր առակներից մեկում Վարդան Այգեկցին,- յորժամ երկնչի[ն] յաւազակաց ի ճանապարհին, ոչ տանին զգանձս իւրեանց ընդ ինքեանս, այլ տան ի փոխս զգանձս իւրեանց (յ)այնպիսի վաճառական, որ ունի յաշխարհն իւրեանց տուն և գանձ. և առնուն ի նմանէ ձեռագիր և երթայ խաղաղութեամբ. և տանի զձեռագիր վաճառականին, և առնու զգանձ իր ի տանէ նորա»[3]:

Անշուշտ, այս համակարգը հսկայական պրակտիկ նշանակություն է ունեցել Արևելքի և Արևմուտքի վաճառաշատ քաղաքների հետ ամենօրյա կապեր ունեցող հայ առևտրականության համար:

Կուտակելով հսկայական դրամական միջոցներ՝ այս շերտի առևտրականներից շատերը տեր էին դառնում նաև անշարժ կալվածքների: Բավական է հիշել, որ մանազկերտցի վաճառական ճարի որդի Ումեկը 40.000 դուկատով գնել էր Գետիկը, իսկ Անիի վաճառական Ավետիքի որդի Սենոփ Սահմադինը՝ Երևանը, Մրենը, Օշականը:

Առևտրականության ինչպես առաջին, նույնպես և վերոհիշյալ՝ երկ-

[3] Н. Я. Марр, Сборники притч Вартана, т. II, стр. 284.

րորդ շերտերը միաժամանակ զբաղվում էին վաշխառությամբ, որի սկզբունքների ու մշակված կանոնների մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել մեր գրչագրերում: Այսպես, օրինակ, Մատենադարանի N 2189 գրչագրում բերված են 10 կետից կազմված կանոնները փոխատու-վաշխառուի և փոխառուի հարաբերությունների մասին: Ըստ այդ հոդվածի՝

ա) Փոխատուն յորժամ և յորում տեղւոջ որ կամի՝ առնու ([զ] փոխն),

բ) Որքան ժամանակն յապաղէ փոխն՝ առաւելու և շահ նորա.

գ) Որք փոխ տան յերից մինն խնդրեն, այսինքն՝ երաշխաւոր առնուն, կամ գրաւ կամ գիր-դապալա, վասն ոչ զլանալոյ... (N 2189 էջ 65ա-67ա):

Վարդան Այգեկցին իր անտիպ քարոզներից մեկում հայտնում է, որ փոխատուները տալով «դահեկանս ի ժամ նեղութեան՝ վասն հացի և գինոյ և այլ ինչ պիտոյից կախեն զնեղեալ աղքատն և առեն՝ թէ զայս քան չափ գինոյ և զայս քան չափ ցորենոյ տուր, և [տուր] իմ դահեկանս...» (N 8030, էջ 212բ): Այսպիսով, իրենց արծաթը տալով «ի վարձու այնոցիկ, որք նեղին ի բռնութենէ իշխողաց» վաշխառուները, Ներսես Շնորհալու արտահայտությամբ, քամում էին «զաղքատութեան վաստակս նոցա ի շահս վաշխիցն» (Ներս. Շնորհ. Թուղթ ընդհ. էջ 107):

Քաղաքային ազգաբնակչության ամենաբազմամարդ ու ազդեցիկ շերտերից էին արհեստավորները, որոնք, անկասկած, մտնում էին համքարական կազմակերպությունների մեջ: Մեր մատենադարանի N 695 և այլ գրչագրերում պահպանված հրապահանում, որ 1222 թվին «ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր» են թարգմանել երեք անեցիներ (Առաքել աբեղայ մականուանեալ՝ Վառ, Մխիթար Կլէկանց և Շերանն), արհեստների վերաբերյալ պահպանվել է մի հետաքրքրական մաս, որ չնայած օգտագործված է այլոց կողմից, ավելորդ չենք համարում հատվածաբար տալ նաև այստեղ. «Հանց ասեն, թէ (1) դարբին *տեսանես յերազի՝ մեծ մարդ է. թէ ինքն դարբնութիւն առնէ՝ գանձ գտանի, թէ լինի դարբին՝ զմարդու բանն յատեանն կատարէ՝ հանց մարդ է: (2)* Գուսանն *հանց մարդ լինի, որ յայլոց շահ գայ: (3)* Սլեհարարն *հանց մարդ լինի, որ օգնական է: (4)* Սառաճն *և (5)* Մազմանն՝ *կանայք լինին: (6)* Լկամարարն՝ *ատենահաս մարդ լինի: (7)* Նետարարն՝ *ուղորդախօս մարդ լինի և ուղորդ: (8)* Թամբխարարն՝ *իրաւարար մարդ լինի: (9)* Նալբանդն *յայլոց լաւարար մարդ լինի (10)* Կոպղայխարարն *առաջնորդ մարդ լինի: (11)* Փոռեզիկն *... (12)*

Պղնձագործն հաւատացեալ մարդ է և չարչարկոտ: (13) Ցորենածախն երկրակալ մարդ է: (14) Ոսկերիչն՝ ատախօս: (15) Ներկրարն հանց մարդ լինին, որ իւր ձեռնէն լաւութիւն գայ այլոց, և դէպ ինքն սուտ շատ ասեն: (16) Կամարարն սրբահաւատ մարդ է, աղօթարարն յերազն լաւ մարդ լինի: (17) Դերձակն՝ հաւատով մարդ է: (18) Մուճկրարն և (19) Ջուլհակն հանց մարդ լինին, որ զայլոց բարին կամենան. (20) Սպարարն և (21) Բրուտն հայնեցոյն լաւ մարդ լինին, նայ եւ գիտնական լինին, որ զայլոց փուտ հանին: (22) Հալաւարարն սրբահաւատ մարդ է: (23) Հացարարն՝ ուղորդարար և պարծն լինի: (24) Դռամզարկն և (25) փողզարկն, (26) պրկազարկն, (27) տօպօպզարկն և այլն ի յայս նման, ամէնն անիրաւ մարդիք են, և սոցին ձայնն ամենևին հիւանդութիւն է. (28) գողն հիւանդ մարդ է. (29) բամբակածախն՝ հիւանդութիւն է, (30) ճանումն՝ կամքն կատարի, (31) ճիփւն (հովիվ?) և (32) Մոճեռեճն և (33) խարպանդայն և (34) ուղտապանն և (35) բոճեպտարն, այդ ամէնդ թատպիրարար մարդիք են: (36) Մայալումն գլխաւոր մարդ է. (37 պարտիզպանն և (38) բաղնեպանն և (39) դարպասպանն՝ այս ամէն գանձ են և տղայք. և (40) Խարգործն հարուստ մարդ է և հարկեոր. (41) Ջահրարն՝ տխմար մարդ, (42) փայտ կտրողն՝ ճաշուշ է, (43) Նաատն գզրփախուց մարդ է (44) սանտրարարն լաւ մարդ է (45) նոյնարարն հալալբան մարդ է, ապա թէ ի բանի լինի՝ մարդուն բախտն է»[4]: Այս առթիվ եղած ու հայտնի նյութերի վրա ես կավելացնեմ մի փոքրիկ վկայություն N 573 գրչագրից: Մեզ հետաքրքրող հատվածը պարունակող քարոզի անծանոթ հեղինակը, ցանկանալով իր ընթերցողներին բացատրել շատախոսության վնասները, պատկերավոր բազմաթիվ օրինակներ է բերում, ինչպես և զուգահեռ է անցկացնում բերանի ու քաղաքի դռնապանների միջև. այս կապակցությամբ նա գրում է՝ «Բերանն նման է դռնապանաց քաղաքի, որ զընտանիսն իւր ոչ թողու արտաքոյ քաղաքին, այսպէս և թէ հասանէ խօսքն մինչև ի շրթունս բերանոյն, ոչ է պարտ, թէ թողցէ զնա արտաքս, յորոց ի պահելն զոյ կենդանութիւն....» (էջ 37բ):

Վերոհիշյալ հատվածի «զընտանիսն քաղաքի» բառերի տակ մենք հակված ենք տեսնելու այնպիսի որակավոր արհեստավորների, որոնց

[4] Ձեռ. N 695, էջ 218բ-219բ:

գաղթը կամ փախուստը բացասաբար պիտի ազդեր տվյալ քաղաքի արտադրանքի վրա, ուստի հասկանալի է, որ քաղաքի ինքնավար մարմիններն ու համքարությունները, իրենց հրամանի ներքո գործող քաղաքային պահակազորի միջոցով պետք է աշխատեին արգելել արհեստավորների տեղափոխությունները: Միայն այս լուսաբանմամբ է հասկանալի դառնում բերված հատվածի «յորոց (գնալ ցանկացողների) ի պահելն զոյ կենդանութիւն (քաղաքի համար») արտահայտությունը:

Ինչպես ինքնապաշտպանության, այնպես էլ անհրաժեշտ դեպքում, պատերազմներ մղելու նպատակով, քաղաքներն ունեին քաղաքացիներից կազմված զորախումբ, որոնցից մեկի՝ Անի քաղաքի զորախմբի մասին «Պատմութիւն քաղաքին Անւոյ» անտիպ բնագրում պահպանվել է մի հետաքրքիր վկայություն:

«Իսկ ի սոյն (ՉԾ ԼԵ-1186) թւին,- ասված է այնտեղ,- յարեան զօրօք քաղաքացիքն յԱնւոյ և գնացին ի վերայ ամուր բերդին, որ Ծարաքար անուանի, որ էր բնիկ ժառանգութիւն տեառն Բարսղի կաթողիկոսին Հայոց և եղբարցն.... և տիրեցին բերդին և օրհնեցին զԱստուած» (N 7584, էջ 683)* :

Անտարակույս, արհեստավորության մեջ ևս կար շերտավորում, կային վարպետներ ու սևագործներ, ուստի և անխուսափելի ներհակություններ դրանց միջև, սակայն այս առթիվ գրական փաստեր առայժմ չունենք: Եղած ու մեզ հայտնի աղբյուրները հնարավորություն են տալիս միայն պնդելու, որ արհեստի մասնագիտական պատրաստություն չպահանջող աշխատանքների համար վարձվում էին մշակներ, որոնք լինելով սեփականազուրկ, ըստ Մխիթար Գոշի արտահայտության՝ «յաղագս աղքատութեան և աւուրն պիտոյից» շուկա էին հանում իրենց միակ սեփականությունը՝ բազուկների ուժը:

Ինչպես կարելի է եզրակացնել Վարդան Այգեկցու մի առակից և ձեռագրական այլ տվյալներից, քաղաքներում մշակների վարձման համար կային հատուկ որոշված կետեր՝ վարձակալման հրապարակներ: Քաղաքա-

* Բնագիրն այժմ հրատարակված է, տե՛ս Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 109-110 - խմբ.:

յին բնակչության ամենաիրավազուրկ շերտը հենց այս վարձկաններն էին, որոնց մասին ձեռագրական ու տպագիր առկա նյութերի հիման վրա առայժմ կարելի է ասել հետևյալը: Վարձվում էին նրանք ամեն տիպի սև աշխատանքների համար. փորում ու մաքրում էին առուներ, կատարում էին երկրագործական աշխատանքներ, ուղարկվում էին զանազան հանձնարարություններով այլ և այլ վայրեր, բառ որում, հաճախ համաձայնում էին կատարել նաև վտանգավոր ճամփորդություններ և այլն և այլն (այս առթիվ տե՛ս Մխ. Գոշի՝ վարձկաններին վերաբերող կանոնները):

Քաղաքներում նրանց թիվը հաճախ գերազանցում էր պահանջից, ուստի, աշխատանքի չվարձվելու հետևանքով, օրվա աղքատիկ պարենը հայթայթելու հնարավորությունից զուրկ մնալը, արտասովոր դեպք չէր վարձկանների համար[5]: Նրանք վարձվում էին ինչպես մեկօրյա, այնպես էլ տևական աշխատանքների, բառ որում, ինչպես պարզվում է մի քարոզից (գրչ. N 3839, էջ 72-77), վարձողը վարձը չվճարելու միջոցով հնարավորություն էր ունենում վարձկանին, հակառակ նրա ցանկության, աշխատեցնել իր գործի վրա, իսկ երբեմն աշխատեցնել նաև գիշերներն ու կիրակի օրերը:

Վարդան Այգեկցու մի այլ անտիպ քարոզից կարելի է եզրակացնել, որ աշխատանքային օրվա ընդունված տևողությունը 12 ժամ էր:

Արդեն մեկ անգամ օգտագործված «Վասն անապատաւորաց» քարոզից կարելի է եզրակացնել, որ բազմաթիվ վարձկանների միատեղ աշխատեցնելու դեպքում նրանց աշխատանքը հսկվում էր հատուկ պաշտոնյայի՝ վերակացուի կողմից. «սովոր են վարձկանք փոյթ առնել գործոյն մերձ գոլով վերակացուին» (N573, էջ 40ա-բ): Այս փաստը նշանակալից է անկախ աշխատանքի բնույթից. աշխատանքը հսկելու և վարձկաններին արդյունավետ աշխատել ստիպելու համար հատուկ պաշտոնյա պահելու անհրաժեշտությունն ինքնին մի փաստ է, որ ցայտուն կերպով երևան է հանում վարձակալողի ու վարձկանի սոցիալական հարաբերակցությունը: Մատթեոս Վարդապետի «Գիրք ութն խորհրդոց մեղաց» (1750 թ., էջ 45) քարոզների ժողովածուի քարոզներից մեկում հեղինակը, թվելով արծաթասիրության պատճառները, հայտնում է նաև, թե արծաթասիրությունը հե-

[5] Н. Марр, Сборники притч Вартана, т. II, стр. 147.

տևանք է ծուլության, զի արծաթ ունեցողը հնարավորություն ունի ապրելու ազատ ու անաշխատ՝ «զայլ ոք ի վարձու» առնելով:

Որպես քաղաքային բնակչության շերտերից մեկը, պետք է հիշատակել նաև սեփականությունից ու աշխատանքից զուրկ սինլքորներին (օգտագործում ենք մեր մատենագիտության մեջ գործածված տերմինը): Կիրակոս Գանձակեցին նկարագրելով Գանձակ և Կարին քաղաքների գրավումը մոնղոլների կողմից, հայտնում է, որ նրանք սրի քաշեցին և գերեցին քաղաքի ողջ բնակչությունը, պահելով միայն սակավաթիվ սինլքորների: Վերջիններիս օգնությամբ մոնղոլները հույս ունեին հայտնաբերել քաղաքացիների թաքցրած գանձերն ու կահ-կարասիները: Հավանական է, որ մոնղոլներին հայտնի էին «սինլքորք» տերմինով մեզ հայտնի անօթևան և անինչ մարդկանց ու քաղաքացիների միջև եղած հակամարտությունները, որոնք և ցանկանում էին օգտագործել իրենց նպատակների իրագործման համար:

Քաղաքներում բնակվում էին նաև մեծ թվով ազնվականներ, կալվածատերեր ու հոգևորականներ, որոնք նույնպես մտնելով նոր՝ առևտրավաշխառուական հարաբերությունների ոլորտի մեջ, մասնակցում էին քաղաքային կյանքին ու առօրյային, կորցնելով իրենց դասակարգի ավանդական կերպարը:

Որպես նորագույն ազնվականության բնորոշ տիպար, բավական է հիշել եզակի պատմական հետաքրքրություն ներկայացնող կեղծ-Շապուհ Բագրատունու Պատմության հերոսներից մեկին՝ Դերենիկ Արծրունուն, որն իր առօրյան անց էր կացնում «ի մոյաանն Վանայ» քաղաքացիների և եկող-դարձող առևտրականների հետ անվերջ խնջույքների ու քեֆերի մեջ: Արծրունյաց տան այդ ավագագույն անդամն իր շքեղ խնջույքների համար միջոցներ հայթայթելու նպատակով ստիպված է լինում մեկը մյուսի ետևից վաճառել իր բոլոր կալվածքներն ու բերդերը: «... և առնոյր զգինն բերդերոյն,- հայտնում է պատմիչը,- և զգեղերոյն զանձս, ուտէր և ըմպէր...»: Կալվածքներից հետո իր միակ հավատարիմ ընկերոջ՝ Գնունյաց իշխան Գուրգ-Ջաֆրանի հետ մեկտեղ նա ստիպված է լինում վաճառքի հանել ազնվականի համար օդի պես անհրաժեշտ ձին ու զենքերը[6]:

Քաղաքային կյանքի ու առևտրավաշխառուական հարաբերություն-

[6] Շապուհ Բագրատունի, «Պատմություն», 1921, էջ 40:

ների կնիքը չէր կարող չընդունել իր վրա նաև հայ հոգևորականությունը: Վարդան Այգեկցին իր «Վասն գրկանաց և գողութեան և վաշխից» քարոզում ուղղակի հայտնում է, որ «Սատանայ՝ ոչ միայն ի ողէտ մարդիկ սերմանէ զաս (զտոկոսն, որ վաշխ կոչեն), այլ և ի քահանայս, որ աղ և լոյս համարեցան լինել ժողովրդեանն Աստուծոյ. և զայս ախտս ագահ արծաթասիրութիւնն տա գործել որ հաւասար է կռապաշտութեան» (Ձեռ. N 8030, էջ 212բ):

Հոգևորական բարձրագույն պաշտոնների վաճառքը, կաշառակերությունն այն աստիճանի էին հասել, որ Կոստանդին կաթողիկոսի կանոնական հրամաններում (1243 թ.) հատուկ հոդվածներ են մտել այդ երևույթի առաջն առնելու նպատակով («եպիսկոպոսք արծաթով առնեն զձեռնադրութիւն, զպարգևսն Աստուծոյ անարժանից ծախելով... և անարժան քահանայք և պոռնկեայք և յայտնի բոզս նստուցեալ, առնէին քահանայագործութիւն» կարդում ենք այդ կանոններում (Կիր. Գանձ., էջ 278)[7]:

Մեր մատենադարանի N 2189 գրչագրում պահպանված է «Կանոն յաղագս պէս-պէս յանցանաց» չափազանց հետաքրքիր հոդվածը, որից ավելորդ չեմ համարում բերել քաղաքային բարքերի հետևյալ նկարագիրը. «Եւ լուաք վասն քահանայից, որք ի քաղաքի, և վասն սարկաւագաց, թէ առանց խորութեանց յաւուրս պահոց ոչ արգելուն զինքեանս ի գինոյ, այլ և անչափ հագեցմամբ արբեցութեան ախտին հրապարակին ի մէջ գինարբուացն: Եւ անպարկեշտաբար նստին ի ժողովս, և խրախուսանան գուսանական երգով և կաքաւս լկտի խաղուց...» են (էջ 163ա):

Ահա այս ամենասեղմ շարադրությամբ, 12-13-րդ դարերի հայկական քաղաքները գծագրվում են մեր առջև որպես առևտրավաշխառուական և արհեստավորական աշխույժ ու ամենօրյա հարաբերությունների կենտրոններ, տարբեր ու իրենց շահերով հակադիր սոցիալական շերտերով, որոնց բարքերը, սովորությունները, գործելակերպն ու հետաքրքրությունները հակադիր էին ինչպես ավատականության բարոյական նորմերին, այնպես էլ այդ ավատականության վրա խարսխված եկեղեցու դոգմաներին ու

[7] Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսը եկեղեցու օգտին հարկ էր վերցնում պոռնկատներից, իսկ Ստեփանոս Օրբելյանը պաշտպանում էր նրա վարքագիծը:

էությանը:

Սակայն քաղաքներն իրենց տնտեսական ու սոցիալական նոր հարաբերություններով օազիսներ չէին Հայաստանում և ողջ առաջավոր Ասիայում. նույն հարաբերություններն ազդել ու փոխել էին նաև գյուղի կերպարը, որը սպառելով քաղաքներում արտադրվող ապրանքներն ու մատակարարելով բազմամարդ քաղաքներին կենսամթերք, ինչպես և հաճախակի հարաբերությունների մեջ մտնելով քաղաքներում նստող վաշխառուների հետ, ավատական նատուրալ տնտեսության վրա խարսխված բնակավայրից նույնպես փոխվել ու դարձել էր առևտրավաշխառուական քաղաքի կցորդ:

Առևտրական ու կալվածատեր-ազնվականի շահերը հաճախ բախվում էին, որովհետև առևտրականը ստիպված էր վճարել կալվածատիրոջը բարձր մաքսեր, որոնք այնքան շատ էին գանձվում, որքան կալվածատերը ճաշակում էր հեռավոր վայրերից բերվող թանկարժեք գործվածքների, համեմունքների և այլ ապրանքների համն ու հմայքը: Բացի մաքսերից առևտրականը, ինչպես և մյուս հպատակները, վճարում էին նաև այլ հարկեր, մի հանգամանք, որ կրկնակի անտանելի էր առևտրականի համար, զի բարձր հարկերի շնորհիվ ներքին շուկան աննշան չափով էր կարողանում միայն սպառել առևտրականի առաջարկած ապրանքները:

Արհեստավորության և կալվածատեր-ազնվականի շահերի բախման եզրերը նույնպես հասկանալի են:

Վարձկանների շահերը բախվում էին վարձակալողների շահերին, որովհետև վարձակալողի նպատակն էր հնարավորին չափ քիչ վճարելով, շատ աշխատեցնել վարձկանին, իսկ վերջինս, իր և ընտանիքի ապրուստի միջոցների հայթայթման համար վաճառքի հանելով իր բազուկները, չէր կարող բավարարվել չնչին վարձատրությամբ:

Բախվում էին քաղաքային և ընդհանրապես հոգևորականության շահերն առևտրականության և արհեստավորության շահերին, որովհետև վերջիններս ժխտելով «Մկրտութեանն լուացումն, և ձեռնադրութիւնն սուրբ, հաղորդութիւն կենարար սուրբ խորհրդոյն, և քրիստոնէաբար թաղումն»[8] ժխտում էին քահանաների անհրաժեշտությունը, երբ եկեղեցին

[8] Ն. Շնորհալի, «Թուղթ ի Միջագետս», էջ 381:

քարոզում էր, թե «քահանան միջնորդ է ընդ Աստուած և ընդ մարդիկ: Զմարդկան կարիք և գաղօթս առ Աստուած հանէ և զԱստուծոյ շնորհն առ մարդիկ իջուցանէ...»[9]:

Ահա այսպիսի սոցիալ-տնտեսական հակադրություններով են պայմանավորված հայկական ավատատիրության գաղափարական ինստիտուտի՝ եկեղեցու դավանանքի դեմ ուղղված բազմաթիվ ուսմունքները, որոնք ծնունդ են առնում Հայաստանում, մերթ որպես հերձված պաշտոնական եկեղեցուց, մերթ որպես հերետիկոսություն, իսկ հաճախ էլ որպես նույն պաշտոնական եկեղեցու գիրքերից ելնող, սակայն բառ ամենայնի, այդ եկեղեցու դոգմաներին հակադրվող ուսմունքներ:

Հնարավորին չափ սեղմ կերպով շարադրենք այդ ուսմունքներից ամենաառանձնացվածների սկզբունքային դրույթները, աշխատելով տալ նաև, որքանով հնարավորություն են ընձեռում աղբյուրները, այդ ուսմունքների առաջացման սոցիալ-տնտեսական նախադրյալները և ծագման սոցիալական միջավայրը:

2

Հայ առևտրականությունը եվրոպական ու բյուզանդական քաղաքներում շարունակ շփման մեջ էր գտնվում հռոմեական ու բյուզանդական եկեղեցիների դավանանքին պատկանող ժողովուրդների ու անհատների հետ, որոնք, հիմք ունենալով հայկական եկեղեցու ուրույն կազմակերպությունն ու դավանանքը, երբեմն սահմանափակում էին նրանց գործունեության չափն ու հնարավորությունները: Մի այլ պատճառ ևս գոյություն ուներ առևտրականության որոշ խավերի դժգոհության՝ հայ եկեղեցու ինքնավարությունը: Խաչակրաց առաջին արշավանքների հետ որոշ խմբավորումներ Հայաստանում կապում էին վառ հույսեր: Ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուքն իր ուղեգրության մեջ հայտնում է, որ Կոստանդնուպոլսում հայ առևտրականներն իրեն ցույց են տվել մի գիրք, որտեղ պատմված է եղել ոմն Ակարոնի (Ագաթոնի) մարգարեությունը՝ մոտ ապագայում ֆրանկների օժանդակությամբ հայկական անկախ և ուժեղ թագավորության ստեղծելու մասին: Նույն բանը Ռուբրուքը լսել է նաև

[9] Ձեռ. N 573, էջ 52ա:

Նախիջևանում մի հայ քահանայից և իր կողմից ավելացնում է, որ հայերն այդ մարգարեությանն ավելի են հավատում քան Աստվածաշնչին[10]: Բարեբախտաբար մեր գրչագրերում պահպանվել են այդ մարգարեության բազմաթիվ արտագրություններ[11] և մենք հնարավորություն ունենք մանրամասն ծանոթանալու Կ. Պոլսում հայ առևտրականների կողմից Ռուբրուքին ցույց տրված մարգարեության մանրամասն բովանդակությանը:

Այնտեղ պատմված է, որ Ագաթոն անունով մի փիլիսոփա (?) մահվան անկողնում գուշակել է, որ մոտ է այն ժամանակը, երբ պիտի ծնվի ու տիրի «ի վերայ աշխարհին Հռովմայ» հայկական ծագում ունեցող Կոստանդին անունով մեկը, որը, հարձակվելով արևելյան երկրների վրա և պարտության մատնելով նետողաց ազգին, կազատի նրանցից մինչև Դավրեժ քաղաքն ընկած երկրները: Աշխարհով մեկ «ի պիղծ և անօրէն ազգէն նետողաց, վասն բազում չարեաց և հարկապահանջութեան» ցրված հայերը կվերադառնան իրենց հայրենիք, և իրենց զորավարի (որ կլինի Մամիկոնյան տոհմից) ու այլ իշխանների միջոցով կնտրեն Կոստանդինից ու կստանան Արշակունյաց ազգից Վաղարշակ անունով մի թագավոր և կը «զօրանան երկրորդ Արշակունիք ի վերայ աշխարհիս հայոց»:

Նստով Վաղարշակը լուծելով հայերի վրեժը բյուզանդացիներից, կտիրի Բյուզանդական կայսրության երկրներին՝ Կուր գետից մինչև «Եւթնաբլուրն» (Բյուզանդիոն), հայոց կաթողիկոսության աթոռին կնստեցնի Գրիգոր Լուսավորչի սերունդից մեկին և կիրականացնի հայերի երազանքը: Կգան օրեր,- ասված է մարգարեության մեջ,- երբ «խաղաղանայ երկիր իբրև զդրախտ Աստուծոյ, և այնչափ եղիցի խաղաղութիւն և շինութիւն և ցնծութիւն և ուրախութիւն մինչ կենդանիքն ապաշաւեն զմեռեալսն, և ասեն՝ աւա՜ղ է ձեզ, որ ոչ էք կենդանի ի ժամուս յայսմիկ...»[12] (Ձեռ. N 1839)* :

[10] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 16-17:

[11] Ագարոնի մարգարեության հնագույն օրինակը մեր մատենադարանում N 1382-ն է, որ արտագրված է 1219 թվին:

[12] Վերջին արտահայտությունը հիշում է իր ուղեգրության մեջ նաև Ռուբրուքը:

* Համգամանալի բնությունը հմմտ. Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք առաջին, Երևան, 1957, էջ 33-56 - խմբ.:

Հետաքրքիր է, որ Եվրոպայում Լուդովիկոս VII-ի (1137-1180) հետ կապում էին հույսեր այն մասին, որ նա պիտի տեր դառնա մինչ Հերակլի գործերի վայրերը (Դավրեժ), և հավատում էին, որ այդ մասին Աստված հայտնել է մի հայի[13]:

Թե ինչ ընդհանրություններ և ներքին կապեր կան այս մարգարեության և 1250 թվին Խաչեն գավառում ծագած ժողովրդական շարժման մեջ, որը գլխավորում էր առևտրական կարևոր մագիստրալին մոտ գտնվող Ծար գյուղի վարձկան ջրաղացպան Դավիթ «մոլորեցուցիչ»-ը, այդ մասին տեղեկություն պահպանած միակ աղբյուր Կիրակոս Գանձակեցու Պատմության հիման վրա, դժվար է ասել: Սակայն ուշագրավ են այն հանգամանքները, որ Դավիթը, ինչպես հաղորդում է Կիրակոսը (էջ 312) հավատացնում էր ժողովրդին, որ ինքն Արշակունյաց ազգից է, որ իր որդիներից մեկը Հայոց թագավոր, իսկ մյուսը՝ կաթողիկոս պետք է դառնա: Եթե համոզեցուցիչ համարվի Դավթի այս գրույթի և Ագաթոնյան մարգարեության մեջ ընդհանրություն տեսնելու մեր հակումը, ապա Դավիթ «մոլորեցուցիչ»-ի գլխավորած ժողովրդական շարժումը, ինչպես և Գանձակի առևտրականների Դավթին բանտարկելուց ազատելու փաստը նոր և հետաքրքիր լուսաբանում կարող է ստանալ:

Ուժեղ և անկախ հայկական պետականություն ստեղծելու գաղափարն արծարծող դասերի, առաջին հերթին առևտրականության դրդմամբ է, որ հայոց եկեղեցին ԺԲ դարից որոշ քայլերի է դիմում, սկզբից բյուզանդական, ապա լատինական եկեղեցիների հետ միաբանության եզրեր գտնելու ուղղությամբ: Բանակցությունները չեն պսակվում, և չէին էլ կարող պսակվել հաջողությամբ, ուստի և այդ խավերը չստանալով ցանկալի արդյունք կաթողիկոսության ու արևմտյան եկեղեցիների բանակցություններից, հիմնավորում են իրենց տնտեսական ու սոցիալական պահանջներն ու ձգտումները մի նոր գաղափարախոսությամբ, որ լինելով, ըստ էության նորաստեղծ մի աշխարհայեցողություն, դավանական որոշ եզրերով համընկնում էր բյուզանդական եկեղեցու՝ երկաբնակության հետ:

Զննելով ձեռքի տակ այդ ուսմունքի գաղափարախոսների սեփա-

[13] Ղ. Ալիշան, «Ներսէս Շնորհալի և պարագայք իւր», էջ 183: Ալիշանը հենվում է Օտտո «Պատմ. գործ Փրեդերիկ կայսեր» աշխատության վրա:

կան գրվածքները, որոշ գաղափար կարող ենք կազմել նրանց մասին Ստեփաննոս Օրբելյանի «Բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն և առ նոյն լուծումն դիմադրաբար» վերնագիրը կրող աշխատությունից[14]: Օրբելյանը հայտնում է, որ այդ ուսմունքը տարածվել է հայկական բոլոր քաղաքներում և քաղցկեղ հիվանդության նման վարակում է ողջ մարմինը:

«Կիլիկիայ բոլոր տեղի էր մեր պարծանաց,- գրում է նա,- յայս իսկ վարակեալ կայ. և գլխավոր քաղաք, որ ի Հոռոմ ի սոյն մոլորեալ են: Եւ հասաւ մինչև առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն Տփխիս, և ի հին տուն Բագրատունեացն՝ յԱնի, որ ի Շիրակն այ (այսպէս), և Թավրէժ շահաստան և այլ բազում տեղիս: Ահա, ո՞չ մնաց ի Հայոց ի հայրենի աւանդութեան...:

Աւա՜ղ և եղո՜ւկ զիս, որո՞յ ժամանակի եղաք սպասաւորք, բովանդակ անդամօք հեղգացաք ի պատուիրանացն Աստուծոյ և հասեալ եմք անհնարին վիրօք մեղաց, և ո՛չ գոյ բժիշկ և ո՛չ սպեղանի, և ո՛չ սփոփումն..» (ձեռ. N 573, էջ 63ա-բ):

Ստեփաննոս Օրբելյանի աշխատությունից, որն այդ ուսմունքի գաղափարախոսներից մեկի հայացքների իմաստասիրական եղծումն է, կարող ենք եզրակացնել, թե քննվող ուսմունքի քարոզիչները պնդել են և աշխատել իմաստասիրական դատողություններով (հաճախ հենվելով Արիստոտելի և այլ փիլիսոփաների գրույթների վրա) ապացուցել, որ Քրիստոսը «մարդ է և որդի մարդոյ, և ոչ Աստուած՝ որդի Աստուծոյ»: Այս առթիվ հետաքրքիր է Օրբելյանի աշխատության վերջաբանը, որտեղ նա ամփոփում է իր եզրակացությունները: «Ո՜վ եղկելի...,- գրում է նա,- պատառեցար զպատմուճան մարդեղութեան որդոյն Աստուծոյ, անկար ի ճշմարտութենէ: Ոչ միայն Նեստորի, այլև այլոց չարափառ հերձուածողացն եղեր զաւանակից, այլ և (ի) հրէութիւն անկար ճշմարիտ, զի նոքա գոչէին առ տէրն «դու մարդ ես...», այնպէս և դու քարոզես հաստատապէս, թէ նա մարդ է և որդի մարդոյ, ոչ Աստուած որդի Աստուծոյ...» (էջ՝ 193բ):

Այս ուսմունքի դրույթները, մի ուսմունք, որ Օրբելյանի արտահայտությամբ ապականել է «զմեծ մասն Հայոց», արժանի են մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրման, մենք ստիպված ենք բավարարվել ուսմուն-

[14] Մենք օգտագործում ենք N 573 գրչագրում պահպանված բնագիրը:

քի միայն մեզ հետաքրքրող և հատուկ գլուխներով Օրբելյանի կողմից քննարկված դրույթների թվարկմամբ: Աշխատությունը բաժանված է 12 գլուխների. առաջին գլխից երևում է, որ ուսմունքի քարոզիչները «զմի և զանբաժան բնութիւն որդոյն Աստուծոյ ժպրհին հանդգնաբար բաժել և յերկուս բաժանել, և դնել անդ անձինք՝ կամք, կիրք, գործք»:

Վեցերորդ գլուխը նվիրված է նրանց ուսմունքի այն դրույթին, որով «ապականեն զԱստուածային խորհուրդն ջրով և խմորով»:

Յոթներորդ գլխից պարզվում է, որ հերձվածողները «ի խաչին ուրանան զաստուածութիւն, և մարդ խոստովանին զոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած, այլայլեն զերեքսրբեան սրբասացութիւնն և ոչ տան ասել խաչեցար և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդութեանն ասէք խաչեցար»:

Տասնմեկերորդ գլխից պարզվում է, որ «հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղն զգառն սուրբ զատկին, և զաւետնական, և զազատս, որ է հոգեհանգիստն, և զամենայն օրհնութիւնս խաչի և եկեղեցոյ և այլ զնմունք և նուէրք, որ լինին Աստուծոյ»:

Հետաքրքիր է, որ վերջին թեզը երևան է եկել հայ աղանդավորական համարյա բոլոր հոսանքների մեջ[15]:

3

Հայ պաշտոնական եկեղեցու համար ավելի վտանգավոր էին այլ հասարակական շերտերի միջավայրում ձևավորված գաղափարները, շերտեր, որոնց հուզում էր այն հարցը թէ «Վասն էր չարքն ի հանգիստ կան, և մեծատունք են և փափկանան միշտ և յուրախութեան են հանապազ և մեք... կարօտ ամենայն բարեաց»[16]:

Այս շերտերի գաղափարախոսության ելակետային դրույթը դժոխքի, դրախտի, այսինքն, որ միևնույն է՝ անդրաշխարհային կյանքի ժխտումն էր. մի դրույթ, որ արմատականն էր միջնադարյան հերետիկոսական բոլոր դրույթներից: Այս գաղափարախոսության դեմ են ուղղված Վարդան Այգեկցու քարոզներից մեկը և Գրիգոր Մարաշցու «Վայք ողբոց» աշխատության մի հատվածը:

Այգեկցու քարոզը վերնագրված է այսպես՝ «Պատմութիւնք և բանք վասն դժոխոցն, թէ ստոյգ է և կայ դժոխք Աստուծոյ վկայութեամբ և ամենայն սրբոց նորա, և ոչ լոկ և սուտ սպառնալիք միայն, որպէս և կարծեն ագէտք և մեղսասէրք և աստեղաբաշխք և այլք, որ կարապետք են Նեռինն»[17]:

Դժոխքը համարելով «սուտ սպառնալիք միայն» այդ գաղափարախոսության հետևորդները, բնականաբար, պետք է իրենց ուշադրությունը սևեռեին իրական կյանքի վրա ու աշխատեին այնտեղ ստեղծել այն, ինչ եկեղեցին խոստանում էր տալ երկնային դրախտում, և այս աշխարհում հաշիվները մաքրեին այն դասակարգերի հետ, որոնց գործած անարդարությունների հատուցումը եկեղեցին հետաձգում և խոստանում էր տալ դժոխքում:

Այս ուսմունքը հերձված չէ եկեղեցու ներսում, այլ նաև ժխտումն է: Քրիստոնեական գաղափարախոսության հիմքում ընկած է երկու, իրար հակադիր կենաց գոյության դրույթը: Պետք է տոկալ, համբերել, մեռցնել անձը, արժանանալու համար հավերժական-երանավետ կյանքի անսպառ հաճույքների վայելման թույլտվությանը: Իսկ եթե չկան դրախտն ու դժոխքը, և կա միայն երկրայինը, ապա էլ ի՞նչ դեր ունի կատարելու եկեղեցին իր բազմաթիվ պաշտոնյաներով, ծիսակատարություններով, տոներով, հարկահաններով, էլ ինչո՞ւ պետք է շինականը հանդուրժի կալվածատիրոջ, վարձկանը՝ վարձակալողի, առևտրականն իրենից հարկեր ու մաքսեր

[15] Այս գաղափարը, ըստ մեր մատենադարանի N 3276 գրչագրի, առաջին անգամ հայտնել է Հովհան Մայրավանեցին իր հետևորդներով, հարցնելով որ՝ «Թէ որ իւրն իւրով անձամբ որով մեղաւն, և նովիմբ չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ պատարագք: Եւ (Յոհան) իւր կամարարօքն ի նեղն արկեալ ծիծաղէին և զանասունն բերեալ առաջի կացուցանէին և այսպէս ասէին՝ ա՛յ տառապեալ չորքոտանի, թող թէ նա զիւր ժամանակն մեղս արար և մեռաւ, դու ի՞նչ մեղար, որ ընդ նմա մեռանիս...» (էջ 483):

[16] Ձեռ. N 2189, էջ 229ա:

[17] Վարդան Այգեկցին իր «Վասն անզղջութեան և վասն շնորհի զղջման» քարոզում (Տարոնում կարդացված քարոզների ցիկլից) գրում է նույն գաղափարախոսության մասին հետևյալը՝ «Ապա ժամանակս վերջին է և սկսան երևիլ կարապետք Նեռինն անիծեալ ածին, որք ասեն թէ չիք մեղաց հատուցումն, և չիք յարութիւն կամ դժոխս: Գան և այլք և ասեն թէ Աստուած ողորմած է և ոչ դատէ զոք. գիտացիք, որ սատանայ խաբի բերանով նոցա, զի լսեն հեշտասէրք մեղաւորքն և ագէտքն, և ուրախութեամբ յամեն ի մեղսն...» (Ձեռ. N8356, էջ 105ա):

պահանջող ազնվական-կալվածատիրոջ հարստահարություններն ու գոյությունը:

1149 թվին գրած իր ողբերի մեջ Գր. Մարաշեցին լայն տարածում գտած այս ուսմունքի առաջն առնելու համար ավելի լավ բան չի գտնում, քան դժոխքին չհավատացողներին դժոխքով վախեցնելը: «Եւ [որ այ]սօր չհաւատայ թէ կա դժոխք,- գրում է նա,- յայն ժամ հաւատայ երբ տանջանի ի հուրն և անօգուտ շատ ապաշաւէ: Եւ թէ գա ոք առ ձեզ և ասէ թէ մի դողայք յահէ դժոխոցն, զի Քրիստոս քակեաց զնա... գիտեցէք որ սատանայ խօսի ի բերան նորա, զի լսեն ոգէոք և մեղաւորք և ուրախացեալ զոհանան զԱստուծոյ և անհոգ մնան ի մեղքն...»[18]:

Այս միևնույն գաղափարախոսությունը, ըստ երևույթին, տարածված է եղել նաև Ասորիքի Համայք նահանգի հայերի մեջ, որոնց ուսմունքի հերքմանը նվիրել է իր ամենաարժեքավոր թղթերից մեկը Ներսես Շնորհալին (տե՛ս Թուղթ. ընդհ., էջ 333-400): Հերքելով նրանց դրույթները, Շնորհալին հայտնում է, որ նրանց կարծիքով «ոչ գոյ դրախտն Աստուծոյ, զոր գրեաց Մովսէս, և ոչ ծառ կենաց, և ոչ ծառ գիտութեան, և ոչ պտուղ նիւթեղէն, զոր եկեր Ադամ, այլ օրինակ միայն գրեցան այսորիկ»[19]:

Այնուհետև Շնորհալին հայտնում է, որ այդ «հերձուածողների» համար «սուտ և անգոյ է և տապանն Նոյի... և ծառն Սաբեկայ, և խոյն... և գաւազանն Մովսէսի և Ահարոնի... և ծովն Կարմիր, և ընկղմելն ի նա փարաւոնի և զօրացն...և մանանայն... և վէմն» և այլն և այլն (էջ 367), այսինքն ողջ Սուրբ Գիրքը:

Շնորհալու համար հասկանալի է, որ այս ուսմունքից բխող բնական հետևությունն անաստվածությունն է, որովհետև «անէ» համարելով այն բոլորն ինչ Ստեղծել է Աստված մարդկանց համար անտեսանելի, այդ «Հերձուածողներն», ըստ Շնորհալու, «այնուհետև գրոյորիցն արարչէն բառ անզգամին տայ խորհել, որ ասէ ի սրտին, թէ չիք Աստուած»: Ներսես Շնորհալու խորաթափանց միտքը ճշգրտորեն որոշում է նաև այս ուսմունքի գաղափարական ակունքները, հայտնելով որ այդ կարծիքների արտահայտիչները «զծածկեալ գարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոն-

[18] Ձեռ. N 108, էջ 7-8:

[19] Թուղթ. ընդհ., էջ 366-367:

րակեցւոյ վերստին շարժեն ի կործանումն լողացն ասելով եթէ եկեղեցի ոչ շինեալն է ի մարդկանէ, այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալք են՝ խաչ օրհնել և եկեղեցի և այլքն, ոչ են ընդունելի» (էջ 373), իսկ «Մաշտոց գիրքը» չընդունել նշանակում է մերժել կնունքը, մկրտությունը, պսակը, թաղումը, օծումը և այլն[20]:

Անշուշտ, այս ուսումնքի բոլոր դրույթների մանրակրկիտ քննությունը ևս պետք է դիտվի որպես հայ աղանդավորական ու հերետիկոսական գաղափարների ուսումնասիրման կարևորագույն հարցերից մեկը, դժբախտաբար, ուսումնասիրողը մեր դավանաբանական-աստվածաբանական գրականության մեջ միայն պաշտոնական եկեղեցու ջատագովների կողմից գրված նյութեր կարող է օգտագործել ինչպես այս, այնպես էլ մյուս ուսմունքների հետ ծանոթանալու համար:

Թերևս հերձվածողների կողմից գրված որոշ հատակոտորներ պահպանված լինեն մեր միջնադարյան առակներում, որոնք հաճախ եզակի արժեք ներկայացնող պատմական փաստաթղթերի դեր կարող են կատարել (հիշենք «աղվես գետաստր» առակը և այլն):

Հետաքրքիր ու անսպառելի նյութեր կարող են գտնվել նաև գրչագիր Քարոզգրքերում ու Ճառընտիրներում, որոնք ցարդ գրավել են միայն սակավաթիվ բանասերների ուշադրությունը և բոլորովին չեն օգտագործվել սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանման տեսանկյունով:

Այժմ անցնենք գլխավորապես մահմեդական շրջաններում, որպես արգասիք Փոքր Ասիայի, Իրանի ու Անդրկովկասի քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների կուլտուր-տնտեսական մերձեցման, լայն տարածում

[20] Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկը (տե՛ս Ձեռ. N 5619, էջ 112ա), 1305 թվի դիմաց գրում է «Յարեան ոմանք, որ պահօք եզնէին, բայց զեկեղեցի, զհանայ, խոստովանութիւն արհամարհէին, և խմայեալքն յինքեանս ջանային հարշել [նոցա]: Եւ բնչիւ զերծան ի նոցանէ կացեալ քրիստոնեայք»: Թվում է, թէ Շնորհալու կողմից հերքվող գաղափարների կրողների և սույն վկայության մեջ հիշատակվածների միջև ընդհանրություն տեսնելու խնդրում առարկություններ դժվար ծագեն:

Մնում է ցավել, որ հեղինակը զլացել է որևէ մանրամասնություն հաղորդել այդ՝ եկեղեցի, հանայ և խոստովանություն արհամարհողների մասին և անգամ անհրաժեշտ չի համարել տալ նրանց գործունեության վայրը:

գտած, սակայն իր ակունքներով հայկական հերձվածների հետ անմիջականորեն առնչվող մի ուսմունքի քննությանը, որը լայն արձագանք է գտել նաև հայ ժողովրդի աշխատավոր ստվար շերտերում:

Այդ ուսմունքի դրույթների հետ ծանոթանալուց առաջ անհրաժեշտ է մի համառոտ ակնարկ նետել 12-13-րդ դարերի Իրանի, Անդրկովկասի և հատկապես Հայաստանի քաղաքական պատմության վրա:

4

Սելջուկները, չնայած Ալփ-Արսլանի (1063-72) և Մելիք-Շահի (1072-92) վեզիր Նիզամ ալ-Մուլքի ջանքերի, չկարողացան Մերձավոր Արևելքում ստեղծել ուժեղ կենտրոնական իշխանություն, ուստի, հենց ԺԱ դարի վերջերից սկսում են բաժանվել և անկախ ու կիսանկախ կյանքով ապրել «մեծ Սելջուկների» հսկայածավալ պետության այս կամ այն շրջաններում: Այսպես՝ սելջուկների սերնդից Կավուրդը անկախություն է ձեռք բերում Քիրմանում, ապա անջատվում է կենտրոնական իշխանությունից Իկոնիան՝ որպես անկախ սուլթանություն, 1118 թվին անկախանում է նաև Իրաքը և այլն:

Օգտվելով Սելջուկյան իշխանության թուլությունից, իր ցրված մասերի միացման և ուժեղ կենտրոնական իշխանություն ստեղծելու ճանապարհն է բռնում նաև Վրաստանը, Դավիթ Շինարարի (1089-1125), նրա թոռ Գեորգի III-ի (1156-1184) և վերջինիս դուստր Թամար թագուհու (1184-1207) թագավորության տարիներում:

Թամար թագուհին իր ներքին և արտաքին մտածված քաղաքականությամբ, Հայաստանի հյուսիսային շրջանների հայկական ավատատերերի ազգային ու տնտեսական հնարավորությունները կարողանում է ուղղել միևնույն նպատակակետին, և հայ իշխաններ Զաքարե ու Իվանե Երկայնաբազուկների, Մահկանաբերդի Արծրունիների և այլ հայ իշխանների օժանդակությամբ կարողանում է ստեղծել վրաց-հայկական ուժեղ մի պետություն, որի սահմաններում մշակութային ու տնտեսական ծաղկման լայն հնարավորություններ են ստանում նաև հայկական բազմաթիվ շրջաններ:

Վրաստանի և Հայաստանի արևելքում ծաղկում է նույն դարաշրջանում Շիրվանի մահմեդական իշխանությունը, սկզբից Շամախի, ապա Բաքու մայրաքաղաքներով:

Ահա վերոհիշյալ անկախ իշխանություններն ու թագավորություն-

ները 12-13-րդ դարերում նույն սոցիալ-տնտեսական, ժողովուրդների ստեղծագործական ավանդույթին ու հնարավորությունների համագործակցության և քաղաքային կյանքի աննախընթաց զարգացման բազայի վրա, ճարտարապետության, գրականության և ընդհանրապես մշակույթի բնագավառում ստեղծում են այն ոճը, որը գիտության մեջ ընդունված է հնացած տերմինով կոչել «սելջուկյան»:

Քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների տնտեսական ու մշակութային մերձեցման համար հատկապես բարենպաստ պայմաններ էին ստեղծվել հայկական հողի վրա: Այրարատում, Դվինի շրջակայքում, Անիում, Գանձակում և բազմաթիվ այլ գավառներում ու շրջաններում կողք կողքի բնակվում էին թե՛ քրիստոնյաներ և թե՛ մահմեդականներ, ու հարգելով միմյանց կրոնական համակարգերը, գրական փոխազդեցությունների արգավանդ հող էին ստեղծել վաղուց ի վեր:

Վերոհիշյալ, և սոցիալ-տնտեսական բազմաթիվ այլ նախադրյալների գոյության պայմաններում, շատ բնական է, որ հայ և մահմեդական բնակչության առաջավոր շերտերում պետք է հասունանար հավատքի տարբերությունների հիման վրա հրահրվող կրոնական անտագոնիզմից հրաժարվելու և այդ ժողովուրդների մշակութային ու տնտեսական մերձեցման հնարավորություններ ստեղծելու հումանիստական գաղափարը[21]:

Որ այսպիսի գաղափար ծնվել է և ժողովրդական լայն խավերում ունեցել արձագանք, կարելի է նկատել բազմաթիվ գրական աղբյուրներում, մեր թեզի ապացուցման համար կարելի է բավարարվել միայն մի քանի բնորոշ փաստերի նշմամբ:

Ակադեմիկոս Ն. Յա. Մառը իր "Сборники притч Вардана" *աշխատության երկրորդ հատորում (էջ 168-70) հրատարակել է մի առակ հետևյալ բովանդակությամբ. երկու հոգի, մեկը քրիստոնյա, մյուսը մահմե-*

[21] Նույն պրոցեսը նկատել է Вл. Гордлевский-ն իր "Государство Сельджукидов Малой Азии" աշխատության մեջ (Москва-Ленинград, 1941 г.): Նա գրում է. "...В Малой Азии давно распространились религиозные учения, подрывавшие христианство (гностицизм, манихейство). Грани между исламом и христианством стирались, у официальных исповедников ислама спокойно уживались и представления от еретического христианства заимствованные от туземного населения", стр. 168.

գական, միասին ճանապարհ են գնում ու վիճում են հավատքի վերաբերյալ. մահմեդականը պատմում է, թե ինչպես մի խեղճ մարդ շալակած աղի ծանրությունից նեղված՝ խնդրում է Աստծուն ազատել իրեն տանջալից կյանքից ու տանել արքայություն: Աստուծո կողմից ուղարկված հրեշտակը կատարում է նրա խնդիրը և նա «գնաց ի դրախտն,- պատմվում է առակում,- և ետես լեառն մի լուսեղէն... և լծեալ կայր ՀԲ. (72) լուծք ՀԲ. (72) գիհաց քարշէին: Ցուցանէ առակս, թէ ... լուսեղէն լեառն Աստուծոյ (Աստուած - Լ. Խ.) է, և ՀԲ. լուծքն՝ ՀԲ. միլաթն է, որ ամէն դէմ իւր քարշէ թէ ես եմ յառաջ, եւ (=իսկ – Լ. Խ.) Աստուածն ամենեցուն է և անշարժ»:

Առակի բարոյախոսական մասի հեղինակի դրույթը պարզ է, աշխարհում բնակվող բոլոր, ըստ Աստվածաշնչի յոթանասուն և երկու, ազգություններն ու ժողովուրդները (միլաթք) իրենց հավատքի տարբերություններով ու միմյանց հանդեպ ունեցած թշնամությամբ հանդերձ, լծված են և քարշում են միևնույն լյառը, որ Աստվածն է, իսկ Աստված «ոչ կամի զհակառակութիւն և զընդդիմութիւն հաւատացելոց իւրոց, այլ սէր և միաբանութիւն նոցին» (անդ, էջ 172):

Այն միտքը, որ կրոնական տարբերություններն էական չեն ու Աստծո առաջ մարդիկ դատվելու են ոչ ըստ իրենց դավանանքի ու կրոնական այս կամ այն համակարգին պատկանելու, այլ գործելակերպի ու վարքագծի, հետաքրքրական ձևով շարադրված է նույն ժողովածուի ("Сборники притч Вардана") մի այլ առակում: Քրիստոնյա քահանան ու մահմեդական Ղատին զրուցում են միմյանց հետ, առաջինը եզրակացնում է, որ «ոչ ամենայն մուսուլման իրաւ ու ճշմարիտ մուսուլման է յայս ժամանակս և ոչ ամենայն քրիստոնեայ քրիստոնեայ է»: Ղատին համաձայնում է քահանայի հետ՝ «բէշիշ, զինչ ասացիր իրաւ է» ասում է նա:

Կրոնական համակարգերի և այս կամ այն համայնքին պատկանող հասարակական շերտերի միջև գոյություն ունեցող ներհակությունների ու թշնամանքի անարդարացիության ու վնասակարության գաղափարն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Մեզ հասել է խոշոր գեղարվեստական ու գիտական արժեք ներկայացնող միջնադարյան մի պոեմ, որի հեղինակը շոշափում է սիրո առաջ հավատքի տարբերությունների հետևանքով եղող արգելքների անզոր և անիրավացի լինելու խնդիրը:

Պոեմի հերոս Հովհաննես Քեշիշ-Օղլին (Քահանայի որդի) համարձակություն և ուժ է ունենում արհամարհելու կրոնական տարբերություններն ու հասարակական կարծիքը և ամուսնանալու մահմեդական ղատու դուստր գեղեցկուհի Աշեի հետ:

Այս բովանդակությունը հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունք չէ. մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում քրիստոնյաների ու մահմեդականների միմյանց հետ ամուսնանալու դեպքերը ոչ միայն եզակի ու քաղաքական նպատակներ ու ակնկալություններ ենթադրող դեպքեր էին (հիշենք Իվանեի դուստր Թամթայի ամուսնությունը Խլաթի մահմեդական իշխանի, Տարսայիճ Օրբելյանի՝ Ստեփանոսի հոր ամուսնությունը մոնղոլուհի Մինա խաթունի հետ և բազմաթիվ նման դեպքեր), այլև կատարվում էին հասարակության ցածր շերտերում:

Հռչակավոր Շիրվանցի բանաստեղծ Խաքանին մահմեդական հոր և քրիստոնյա, հավանաբար հայ կամ ասորի մոր զավակ էր, Նիզամի Գյանջևու մայրը քրդուհի էր, ուստի և տարօրինակ չէ, երբ Խաքանին իր երգերից մեկում նկարագրում է իր սերը մի աբխազուհու (=վրացուհու) նկատմամբ: «Լուսերես և գանգրահեր այդ գեղեցկուհու պատճառով ես բնակիչ դարձա Աբխազիայի և խոսեցի վրացերեն...»[22], գրում է նա:

Իսկ Նիզամին Հայաստանի ծաղկավետ ու վեհանիստ լեռներն է ուղարկում Ֆարհատին իր երազների դիցուհուն փնտրելու համար:

Թերևս կարիք չլիներ մեր նյութի առընչությամբ շարադրել վերոհիշյալ փաստերը, եթե քրիստոնեության ու մահմեդականության միջև սկզբունքային տարբերությունների բացակայության գաղափարը մահմեդական առաջադեմ խավերի կողմից, ըստ որոշ տվյալների, մշակված չլիներ որպես փիլիսոփայական ու կրոնական մի համակարգ, որպես նոր սոցիալական ու տնտեսական կյանքի համապատասխան ու խարխլված ավատականության սրբագործողի դերում հանդես եկող ամեն տեսակ կրոնական համակարգերին հակադիր հավատքի նախագիծ:

Այդ կրոնափիլիսոփայական դրույթները շարադրված ու հերքված են իր վերջնական ձևավորումը Գրիգոր Տաթևացու կողմից ստացած մի աշխատության մեջ, որը պահպանվել է բազմաթիվ արտագրություններով

[22] А. Н. Болдырев, Два Ширванских поэта, Низами и Хакани. См. Памятники эпохи Руставели. Ленинград, 1938, стр. 137.

ու հրատարակված է 1926-27 թվերի «Հանդէս ամսօրեայ»-ի համարներում:

Գրիգոր Տաթևացու կողմից մշակված բնագիրը կոչվում է «Ընդդէմ կորուսեալ ազգին տաճկաց, որք կարապետ են Նեռին և նոր հեթանոսք հարձուածովն Արիոսի և Կերինթոսի»[23] և նրա «Գիրք հարցմանց» մեծածավալ ու մեծարժեք աշխատության գլուխներից մեկն է հանդիսանում: Հեղինակը՝ աշխատության 16-րդ գլխում բերում է այդ նոր ուսմունքի գաղափարախոսների դրույթները քրիստոնեության դեմ և աշխատում է հերքել դրանք:

«Այլազգիները» (օգտագործում ենք հեղինակի տերմինը) քրիստոնեական եկեղեցու հայրեր չեն, որոնց դրույթների հերքման համար հնարավոր լիներ առաջ բերել Սուրբ գրքից ու եկեղեցու հայրերից ցողմաւոր հատվածներ ու աստյթներ այս կամ այն հարցի կապակցությամբ: «Նոքա ոչ ունին զՍուրբ գիրքն,- գրում է հեղինակը,- վասն այն ամենայն առարկութիւնք նոցա, որ է ըստ բնական գիտութեան և ըստ զգայի իրաց՝ ոչ ինչ եղբակացուցանի յԱստուած»:

Հետևությունը պարզ է, այդ ուսմունքի քարոզիչներն ու գաղափարախոսներն իրենց աշխարհայեցողության աղբյուրը ոչ թե Սուրբ գրքերի գոյման են համարում (միևնույն է, Աստվածաշունչն է այն, թե Ղուրանը), այլ «զգայի իրերը», այսինքն՝ նյութական աշխարհը, իրական մարդկային հարաբերությունները, և «բնական գիտությունը» հակադրում են կրոնական դոգմային: Ուստի տարօրինակ չէ, երբ Դր. Տաթևացին, կամ լավ ևս է ասել՝ աշխատության հեղինակը[24], ինչպես «այլազգիների» դրույթների, այնպես էլ իր հերքումների շարադրման ընթացքում հաճախ հիշատակում ու հենվում է Արիստոտելի և այլ փիլիսոփաների ասույթների վրա:

Նախ հեղինակը հայտնում է, որ այլազգիները սուրբ են համարում որպես երկնքից իջած գրքեր Մովսեսի Հնգամատյանը (Թավրեթ), Սաղմոսները (Զապուր), Ավետարանը (Ինճիլ) և Ղուրանը (Ֆուրղան), այսինքն՝

---

[23] Կերինթոսը Ա. դարի հերձվածող էր, ուրանում էր Քրիստոսի աստվածությունը և մարմինների հարությունը:

[24] Ինչպես ասացինք, Տաթևացին միայն այդ ուսմունքի դեմ եղած վիճաբանական հոդվածների ամփոփողն է, և նման տիպի գրվածքներ հանդիպում են գրչագրերում անկախ Տաթևացուց:

սուրբ են և՛ քրիստոնյաների կրոնի հիմքում ընկած գրքերը, և՛ մահմեդական կրոնի:

Մահմեդի, Մովսես ու Դավիթ մարգարեների և Քրիստոսի ուսմունքների միջև եղած տարբերությունների ժխտման տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում N 7260 ձեռագրում պահպանված հոդվածներից մեկը: Հոդվածի անծանոթ հեղինակը քրիստոնյաների Մահմեդին որպես մարգարե չընդունելու փաստը բացատրելիս հայտնում է, որ այն չպետք է դիտվի որպես երկու կրոնների հակադրության արդյունք, և կամ որևէ այնպիսի մեկնաբանություն, ըստ որի, իբր, Մահմեդի ուսմունքը չի առնչվում, այլ հակադիր է քրիստոնեական վարդապետությանը:

Մահմեդին քրիստոնյաները չեն ընդունում միայն այն պատճառով, որ նա «մեզ ոչ ինչ է ուսուցել,- գրում է հեղինակը,- մեք աստուածապաշտ էաք երբ նա եկեկ... վասն այնորիկ և ոչ ճանաչեմք զնա», իսկ մահմեդականները, ըստ հայ հեղինակի համոզման, պարտավոր են ճանաչել ու հարգել իրենց մարգարեին և չշեղվել նրա ուսմունքից «զի (Մահմեդ) զձեզ ի հաւատքի եբեր և ի կռապաշտութենէ դարձոյց...», այսինքն հեթանոսությունից դարձի բերեց ճշմարիտ հավատքի: Թե ազգերի ու կրոնական տարբեր դավանանքների և համակարգերի ժխտման այս գաղափարախոսությունն ինչպիսի դրական հետևանքներ կարող էր ունենալ Առաջավոր Ասիայի բազմազգ ու բազմակրոն ժողովուրդների միջկուլթային ավելի սերտ մերձեցման գործում, բարենպաստ զարգացման ու խորացման հնարավորությունների առկայության դեպքում, ինքնըստինքյան հասկանալի է:

Քննարկելով «այլազգիների» ուսմունքի սկզբունքները, նկատում ենք մի բացառիկ կարևոր ու նշանակալից երևույթ: Նրանց արտահայտած գաղափարներից շատերը հայ աղանդավորական ու հերձվածողական, մեղ արդեն ծանոթ ուսմունքներից կատարված փոխառություններ են: Այսպես, օրինակ, «այլազգիները» Քրիստոսին համարում են սոսկ մարդ (մարգարե-փեղամպար), և ոչ Աստված, մի դրույթ, որ արծարծվել է հայ աղանդավորական ուսմունքներում, ինչպես քննության ենթակա, այնպես էլ ավելի վաղ ժամանակներում:

Այնուհետև հոգին համարում են մահկանացու, իսկ եթե հոգին մահկանացու է ապա, և, ինչպես ճիշտ նկատել է Գրիգոր Տաթևացին «... ոչ մարմնոյն իւրէ յարութիւն, և ոչ դատաստան և հատուցումն գործոց»

(«Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 27):

Այս գրույթը, որ մեզ արդեն ծանոթ է, որպես միջնադարյան հայկական աղանդավորական շերտերի կողմից արտահայտված գաղափարներից մեկը, ըստ էության հանգում էր հանդերձյալ կյանքի ժխտման գաղափարին, և իրավացի է Գրիգոր Տաթևացին, երբ գրում է թե՝ «այս քան զամենայն հերձուած չարագոյն է, և ընդդէմ աստուածեղէն Գրոց, որ և բառնայ զհաւատ յարութեան և զգործոց հատուցման» («Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 25):

Քննարկվող «Ընդդէմ կորուսեալ ազգին Տաճկաց...» աշխատության մեջ բերված ու հերքված են նաև այդ «այլազգիների» գաղափարախոսության բազմաթիվ այլ գրույթներ, որոնցից հիշատակության արժանի են սուրբ երրորդության վերաբերյալ նրանց դատողությունները: Այդ հարցին Գր. Տաթևացին ավելի մանրամասնորեն անդրադառնում է իր մի այլ աշխատության մեջ[25]:

Որոշ գաղափար կազմելու համար այդ նոր ուսմունքի գաղափարախոսների գիտական պատրաստության ու իրենց ուսմունքի շարադրման ոճի ու մեթոդի մասին, ավելորդ չենք համարում հատվածաբար բերել այստեղ սուրբ երրորդության մասին նրանց դատողությունները:

«... Իսկ հեթանոսք (իմա՛ այդ նոր ուսմունքի գաղափարախոսները) առարկեն (երրորդութիւնն անձանց այսպէս), զի որպէս Պետրոս մարդ է, և Պօղոս մարդ է, Յիսուս մարդ է, ապա են երեք մարդ և ոչ մի. նոյնպէս թէ հայր է Աստուած, որդի Աստուած, հոգի Աստուած, ապա ուրեմն երեք են Աստուածք և ոչ մի»[26]:

Երրորդության մասին նրանց դատողությունները հանգում են հետևյալին՝

ա) Ուրանան զերրորդութիւնն անձանց,

բ) զբարի և զչար Աստուծոյ ասեն,

գ) ուրանան զմարդեղութիւն բանին,

դ) զյարութիւն մարմնական ասեն, և այլն:

[25] «Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ, Տեսութիւն ի բանն Մարգարէին, որ ասէ՝ Հոգի տեառն ի վերայ իմ», Ձեռ. N 3982, էջ 314ա-327բ:

[26] Անդ, էջ 315ա:

Որ վերոհիշյալ ուսմունքի գրույթներից մի քանիսը մահմեդականության գրույթների հետ առնչվելով, միմյանցից անկախ, հիմք չեն տալիս մեզ այդ «Նոր հեթանոսների» ուսմունքը որպես կրոնական տարբեր համակարգերի փոխարեն մի նորի ստեղծման փաստ արձանագրելու, դա հասկանալի է: Եղած փաստերը թվում են բավարար այդպիսի հարցադրման համար, հարցադրում, որ մասնագիտական ու նորագույն փաստերի օգտագործմամբ կատարված ուսումնասիրություններից հետո, շատ հնարավոր է, որ նախադրյալներ կստեղծի հարց առաջադրելու հայկական հողում ծագած, տնտեսական ու սոցիալական հարաբերությունների արդյունք աղանդավորական ուսմունքների ոչ միայն Բյուզանդիա և Բալկանների վրայով դեպի Եվրոպա ներթափանցելու մասին, այլև Հայաստանում և հարևան երկրներում տարածում գտած մի նոր գաղափարախոսության նախադրյալներից մեկը հանդիսանալու մասին, գաղափարախոսություն, որն առաջ է քաշել ժողովուրդների մշակութային ու տնտեսական մերձեցման անհրաժեշտություն:

Ամփոփենք մեր եզրակացությունները:

12-14-րդ դարերում Հայաստանն իր հարևան երկրների հետ միասին, ապրում էր տնտեսական ու մշակութային կյանքի վերածնունդ: Առևտրադրամային հարաբերություններն օր-օրի լայնացնում ու խորացնում էին ավատատիրության հիմքերի ճեղքվածքը: Հին կարգերի գաղափարախոսները, սկսած ԺԱ դարից օր-օրի սպասում էին այդ փլուզմանը, կործանման օրը՝ Նեռի կերպարը հանգիստ չէր տալիս հայկական եկեղեցու հայրերին:

«Ո՛վ, որդեակք իմ,- բացականչում է նրանցից մեկը՝ նշանավոր քարոզիչ Վարդան Այգեկցին,- վերջին է ժամանակս, և սառեցաւ հոգիք մարդկան և սիրտք ի շնչոյ դիւաց, ցամաքեցաւ ի սրտից մերոց սէրն Աստուծոյ, և եղաք ամենեքեան աշխարհասէրք և մեղաւորք, արիւնահեղք, զրկողք, և շնացողք և գազրագործք և կախարդասէրք և անհնազանդք, խաբեբայք և կեղծաւորք, որպէս և ես եղէ, հեշտասէրք, և ծոյլք և ժլատք և անողորմք, հպարտք և ոխակալք, մատնիչ և խռովարարք, չարանախանձք և ատեցողք, հայհոյիչ և մարդապաշտ, աստուածավաճառք և գրգռողք, անբարտաւանք և փառասէրք, անհամբեր և մախացողք, կամապաշտ և անձնասէրք...» և

այն[27]*: Ուստի «...լինելոց է մեծ յերևումն Նեռին: Ապա յիրաւի բարկացաւ Աստուած, և ջնջէ զազգս մարդկան ի ձեռն անծանօթ և խուժադուժ ազգաց...»*[28]*,- եզրակացնում է նա:*

Սակայն Հայաստանին վիճակված չէր տեսնել այդ մոտալուտ փլուզումը: Փոթորիկն ու արհավիրքը սկսվեցին բերքահավաքի ժամանակ, և արվեստի ու գիտության հասուն պտուղները, ծառերի հետ մեկտեղ տապալվեցին գետին:

Մոնղոլական հորդաների աշխարհավեր կրունկների տակ մոխրակույտերի վերածվեցին հայկական վերածննդի օրրանները՝ ծաղկուն քաղաքները, իրենց համաշխարհային առևտրական կապերով, ներքին տնտեսական ու մշակութային նոր հարաբերություններով:

Հայաստանի որոշ շրջաններում, շնորհիվ քաղաքական համեմատաբար խաղաղ պայմանների ու տնտեսական որոշ նախադրյալների, վերածննդյան մշակութային ու գիտական ավանդույթները պահպանվեցին ու որոշ պտուղներ տվին նաև ԺԴ դարի առաջին տասնամյակներում, սակայն մոնղոլների հասցրած հարվածն անբուժելի էր և կործանարար, ուստի արևելյան, *այդ թվում և* հայկական վերածնունդը, *որի բնորոշ կողմերից մեկը հերետիկոսական ու հերձվածողական գաղափարախոսությունների առաջացումն ու տարածումն էր ժողովրդական լայն շերտերում, աստիճանաբար թուլացավ ու մարեց:*

Սակայն ծաղկման ու վերածննդի դարերում ստեղծված մշակութային ու գիտական արժեքների ուսումնասիրման և մշակման գործը հույժ կարևոր և արդյան գիտության կողմից առաջադրվող խնդիր է, որովհետև նրանք չկորան անհետ և անհետևանք:

Մշակութային ու գիտական այդ արժեքներն արևելյան շքեղ ու լավորակ ապրանքների հետ միասին թափանցեցին Եվրոպա, և շնորհիվ համապատասխան ու բարենպաստ պայմանների՝ գաղափարական սնունդ տվեցին հումանիստական գաղափարների ծաղկմանը մի շարք երկրներում:

Նրանք անհետ չկորան նաև բուն երկրում:

---

[27] Ձեռ. N 9100, էջ 207բ:

[28] Ձեռ. N1634, էջ 96ա:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԶԵՆՈՆԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

1. Զենոն իմաստասերի հրատարակվող աշխատությունը հասել է մեզ երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրություններով:

Ընդարձակ խմբագրության պատկանող միակ բնագիրը պահվել է Հայկ ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարան) N 5254 ձեռագրում, որն արտագրված է 1280 թվականին, Դեղձուտի վանքում, Գեորգ գրչի կողմից (A. ձեռագիր)[1]:

Համառոտ խմբագրության պատկանող ձեռագրերն են.

N 627 (666) – B.

Թերթ՝ 275, մեծություն՝ 17x13, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ բոլորագիր, ժամանակ ՉԿԳ.-1314 թ., գրիչ՝ Խաչիկ:

Բովանդակություն.

1. էջ 25ա-152բ. Լուծմունք Գրիգոր Աստուածաբանի ճառերի («Յովհաննիսի եզնկացւո, որ և Ծործորեցո տիեզերալոյս վարդապետի ասացեալ»):

2. էջ 153ա-204բ. Լուծմունք Բարսեղ Կեսարացու ճառերի.

---

* Գիտական նյութերի ժողովածու, N 2, Երևան, 1950:

[1] Այս ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս առաջաբանի վերջում:

3. էջ 205ա-213ա. Լուծմունք Արիստոտելի վասն Աշխարհաց գրոցն.

4. էջ 213ա-236բ. Լուծմունք Պորփիւրի.

5. էջ 236բ-261բ. Ստորոգութեանցն Արիստոտելի լուծմունք.

6. էջ 262ա-269ա. Լուծմունք Սահմանաց գրոց.

7. էջ 269բ-275բ. *Յաղագս գիտութեան պիտանացու սեռից (Զենոնի իմաստասիրի):*

N3487 (Սևան. 104)[2] – C

Թերթ՝ 144, մեծություն 14,5x12, նյութ՝ թուղթ. կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ նոտրգիր, ժամանակ՝ ՊԼԸ-1389 թ., գրիչ՝ Հակոբ Ղրիմեցի, տեղի «ի գաւառիս Եկեղեաց, ի հռչակաւոր վանիս, որ կոչի Կապոսի»:

Բովանդակություն

1. էջ 4-95. «Համառօտ հաւաքումն յաղագս հոգոյ և զաւրութեանց նորին»:

2. էջ 97-165. «Յաղագս առաքինութեանց հոգոյն»:

3. էջ 166-276. «Յաղագս բնութեան հրեշտակաց»:

4. էջ 278-287. *(Զենոնի իմաստասիրի յաղագս բնութեան)*, անվերնագիր:

N 1823 (1854) – D

Թերթ՝ 405, մեծություն՝ 20x15, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ բոլորագիր, ժամանակ՝ 1731 թ., գրիչ՝ Մեսրոպ, տեղի՝ Էջմիածին:

Բովանդակություն

1. էջ 13ա-231բ. «Սիմէոնի Գառնեցւոյ եպիսկոպոսի արարեալ մեկնութիւն գրոցն Պռոկղի»:

[2] Ն. Մառի կազմած «Ցուցակ համառօտ ձեռագրաց վանից Սևանայ» (Մոսկվա, 1892 թ.) աշխատության մեջ սույն ձեռագիրը նկարագրված է N 85-ի տակ: Զենոնի աշխատությունը, վերնագիր չունենալով, չի նշվել Ն. Մառի կողմից:

2. էջ 234ա-345բ. «Նուաստ Մարկոս վարդապետի... աշխատասիրեալ առ ի հաւաքումն բանից. որ հայի առ վեց աւուր գործս Աստուծոյ, ի խնդրոյ Սարգիս կրօնաւորի»:

3. էջ 346ա-386բ. «Արիստոտելի վերլուծական» և այլն.

4. էջ 386բ-392բ. *«Զենոնի իմաստասիրի յաղագս պիտանացու սեռից»*.

Այսպիսով՝ ընդարձակ խմբագրությունից մեզ հասել է մեկ ձեռագիր (A), իսկ համառոտից՝ երեք (B, C, D):

Զենոնի աշխատության այլ արտագրություններ, ինչպես մեր, այնպես էլ այլ մատենադարաններում, մեզ հայտնի չեն: Կարելի է ենթադրել միայն, որ համառոտ խմբագրության մի արտագրություն կա վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում, որովհետև «Հայկազյան լեզվի Նոր բառգրքի» մեջ մուտք են գործել որոշ բառեր այդ խմբագրությունից:

Այսպես օրինակ՝ «եռակաբար» բառի օրինակների շարքում մեջ է բերված Զենոնի աշխատության «Յաղագս չափուց» ենթագլխի՝ «Տեղին է եռակարար՝ վերին, ստորին, միջին» (բնագիր էջ 83ա, տող 13-14) և «Զև եռակաբար առի՝ եռանկիւնի, քառանկիւնի և բոլոր» (էջ 83ա, տող 20-21) հատվածները: «Անկրական» բառի կապակցությամբ՝ «Յանկրական լուսոյ և հրոյ» (բն. Յաղագս գրից» ենթագլուխ, էջ 81ա, տող 13-14) հատվածը և համապատասխան հատվածներ՝ «Համեստական», «Պազպաջմունք», «պատշաճական», «Պղնձոտ», «Սեաւնալ» և մի շարք այլ բառերի օրինակների բաժնում:

Որպես աղբյուր մեջբերված հատվածների, նրանք նշել են Տոնական *ժողովածուն[3] և ոչ մի հիշատակություն չունեն Զենոնի մասին:*

2. Զենոնի բնագրի մասին տպագիր մատենագրական աշխատություններում համարյա ոչինչ չի ասված:

1930 թվականին պրոֆ. Մելիքսեթ-բեկովն իր «К ИСТОРИИ ТОЧНЫХ

[3] Զենոնի աշխատության այլ ընդօրինակություններ գտնելու նպատակով՝ մենք ծանոթացանք Մատենադարանի NN 993, 996 ձեռագիր Տոնականների հետ: Այդ աշխատանքը չտվեց ցանկալի արդյունք:

наук в Армении и Грузии» աշխատության մեջ[4] հայտնել է, որ էջմիածնում գտնված է Էլեացի Զենոնի հունարեն բնագրով մեզ չհասած «Περὶ φύσεως» («Բնության մասին») աշխատությունը:

Համառոտ խմբագրության բոլոր երեք ձեռագրերի հետ առաջին անգամ ծանոթացել է ակադ. Հ. Մանանդյանը և դրանց ուսումնասիրությամբ կազմել համառոտ խմբագրության համահավաք բնագիր, նպատակ ունենալով հրատարակել այն[5]:

1942 թվականին, Մատենադարանի ձեռագրերի թեմատիկ բիբլիոգրաֆիայի մեջ համձնարարված բաժինները կազմելու ժամանակ, N 5254 ձեռագրի հարուստ նյութերի շարքում մեր ուշադրությունը գրավեց անվերնագիր մի արժեքավոր փիլիսոփայական բնագիր, որը, ինչպես պարզվեց հետագայում, Զենոնի հրատարակվող աշխատության ընդարձակ խմբագրությունն էր (Ա բնագիր):

3. Ընդարձակ խմբագրության բնագիրը իր ծավալով կրկնակի մեծ է համառոտից: Այն բաղկացած է հետևյալ մասերից:

(Յաղագս չարի և բարւոյ) - Ձեռագիր N 5254, էջ 238բ. Յաղագս կատարեալ գիտութեան բանի, էջ 239ա. Յաղագս գործնականին, զոր ի վերա կատարելութեան բանի առաղրեցին – 240ա. (Յաղագս տնաւրինականին) – 240ա. Յաղագս բարոյականին – 240բ. Յաղագս Բաղաքականին – 240բ. Յաղագս միմիոսութեան – 241ա. Յաղագս ժամանակի, առանձին – 241ա. Յաղագս պիտանացու սեռից – 242ա. (Յաղագս գրից) – 242բ. Յաղագս կարգաց – 243ա. Յաղագս շրջանացն – 243բ. Յաղագս չափուց – 244ա. Յաղագս զաւրութեանց – 245ա. Յաղագս ազդմանց – 246բ. Յաղագս աստուածախաւսութեան սկզբան և կատարածի, առանձին – 248բ. Յաղագս բնութեան, առանձին – 249ա. Յաղագս սահմանաց և բաժանմանց, զոր ի վերա բնութեան առաղրեցին – 249բ. Յաղագս ապացուցի և տրամաբանութեան – 251բ. Յաղագս իմաստակութեան և վերլուծութեան – 251բ. Յաղագս էականութեան, առանձին – 252ա. Յաղագս ի ձեռն խնդրականի, զոր ի տեսականէն առաղրեցին – 252բ. Յաղագս անմեկնելի որոշման ստորագրութեան էակացս – 252բ. Յաղագս զանազանութեան – 254ա. Յաղագս գոյացուցիչ և մշտաբուխ Բառակին, որ է աստուածաբանական շարժման և նյութի, առանձին – 254բ. Յաղագս ունայնի, առանձին – 255ա. Յաղագս անբաւի – 255ա. (Թարգմանչի կողմից խորհրդածություն) – 255բ.

4. Գլուխների և ենթագլուխների սույն դասավորությունը թվում է տարօրինակ:

Նախ, այն հակասության մեջ է մտնում աշխատության «Յաղագս ազդմանց» ենթագլխում շարադրված այն մտքի հետ, ըստ որի «մակացելին է արհեստ և բաժանի ի տեսակս չորս՝ ի գործնական և ի բանական, ի տեսական և յիմացական» (բն. էջ 86բ, տող 21-23). և կամ. «(իմաստասիրութիւն) է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց: Արդ՝ արհեստիցն է գործնականն իսկ արհեստ՝ բանականն և մակացութեանցն է տեսականն, իսկ մակացութիւն՝ իմացականն» (Բն. «Յաղագս սահմանաց և բաժանմանց» ենթագլուխ, էջ 90ա, տող 40-90բ, տող 3):

Արդ՝ սպասելի էր տեսնել աշխատության կառուցվածքը վերոհիշյալ սկզբունքով, այսինքն, Յաղագս պիտանացու սեռից գլխից հետո (որի վերջին ենթագլուխն է «Յաղագս ազդմանց»-ը), պետք է շարադրվեին գործնական, և ապա՝ բանական, տեսական ու իմացական «մակացությունների» ենթագլուխները: Սակայն մեզ հասած բնագիրը սկսվում է «Յաղագս չարի և բարւոյ» ենթագլխով, որը, ինչպես պարզվում է նույն՝ «Յաղագս ազդմանց» ենթագլխից, իմացականի մասը պետք է կազմեր:

Ըստ այդ ենթագլխի «իմացականին (մասունք են)՝ չար և բարի (ա), ժամանակ (բ), կատարելութիւն բանի (գ), սկիզբն և կատարած (դ), բնութիւն՝ սահմանական և արարչական (ե), էականութիւն (զ), նիւթ և շարժումն (է), ունայն (ը), անբաւ (թ)...» (Բն. էջ 87ա, տող 7-11):

Իսկ բնագրում «իմացական»-ի այս ենթագլուխներն անջատված են միմյանցից ու ցրված աշխատության այլ և այլ մասերում, որով և խախտված է բնագրի տրամաբանական շարադրանքը:

Երկրորդ՝ մի շարք գլուխների վերնագրերում հանդիպում ենք «առանձին» բառին («Յաղագս բնութեան, առանձին», «Յաղագս

[4] Տե՛ս Вопросы философии и социологии марксизма, изд. ЗКУ, кн. II, Тбилиси, 1930, стр. 192.

[5] Հարևանցի կերպով ծանոթանալով մեր կատարած աշխատանքին՝ ակադ. Հ. Մանանդյանն իր կազմած բնագիրը 1946 թվականին հանձնեց մեզ: Խնամքով կատարված այդ աշխատանքը, համահավաք բնագիրը կազմելու ընթացքում մեծապես օգնեց մեր աշխատանքին, որի համար և հայտնում ենք նրան խորին շնորհակալություն:

ժամանակի, առանձին» և այլն), և «զոր ի վերա (այս կամ այն ենթագլխի) առադրեցին» արտահայտությանը:

Ինչի՞ համար են այս անդեմ արտահայտությունները, հեղինակի գրչի՞ց են դրանք դուրս եկել, թե՞ խմբագրական հավելումներ են, իսկ եթե խմբագրական հավելումներ են՝ ի՞նչ նպատակի են ծառայել:

5. Հայ իմաստասիրական գրականության մեջ տարածված է եղել Եղիասին վերագրված «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատությունը: Նրա ազդեցությամբ գրվել են մի շարք փիլիսոփայական երկեր ու մեկնություններ:

Այդ աշխատության մեջ, ի տարբերություն մեր բնագրի, իմաստասիրությունը բաժանված է ոչ թե չորս, այլ երեք բաղկացուցիչ մասերի:

«Իմաստասիրութիւն,- ասված է այնտեղ,- յերիս բաժանի՝ ի տեսականն, ի գործնականն, ի բանականն»[6]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ բացակայում է իմաստասիրության զենոնյան բաժանման չորրորդ բաղկացուցիչ մասը՝ իմացականը:

Առաջնորդվելով արիստոտելյան հեղինակավոր մեկնիչի այս դրույթով, Զենոնի բնագրի խմբագիրներից մեկը, ըստ երևույթին, ընկել է բնական տարակուսանքի մեջ, և այդ երկու աղբյուրների միջև գոյություն ունեցող ակնհայտ հակասությունն աշխատել է մեղմել լուծարքի ենթարկելով Զենոնի բնագրի «իմացական»-ին վերաբերող ենթագլուխները:

Իմացական մակացության «Յաղագս չարի և բարւոյ» առաջին ենթագլուխը նա տեղավորել է աշխատության սկզբում, երկրորդ՝ «Յաղագս ժամանակի» ենթագլուխը՝ «Յաղագս գործնականի» գլխից հետո, և այսպես հերթականությամբ նաև մյուս ենթագլուխները:

Հարթելու համար իր խմբագրական աշխատանքի ակնառու թերությունները, նա դիմել է երկու միջոցի. որպես ամբողջության լուծարքի ենթարկած և բնագրի տարբեր մասերում տեղավորված իմացականի ենթագլուխների վերնագրում նա ավելացրել է «առանձին»[7] բառը, իսկ հաջորդ գլուխների հետ այդ տեղահանված ենթագլուխները շաղկապելու նպատակով, ստեղծել է նաև «զոր ի վերա առադրեցին» այս կամ այն ենթագլխի անդեմ (ո՞վ առադրեց) դարձվածքը[8]:

Վերոհիշյալից զատ, ըստ երևույթին, նույն խմբագիրը, «Յաղագս պիտանացու սեռից» գլխից հետո և բնագրի վերջում թողել է համառոտ ամփոփումներ՝ աշխատության բովանդակության մասին: Այդ հատվածները թողեցինք բնագրում, անջատելով բուն տեքստից աստղանիշերով (տես՝ էջ 87բ, տող 11-26 և էջ 97բ, տող 18-98բ, տող 7):

Եվ ահա, այսպիսի խմբագրական աշխատանքի շնորհիվ, ընդարձակ բնագիրը մեզ հասել է գլուխների անտրամաբանական շարահյուսությամբ:

6. Խմբագրի աչքից վրիպել է «Յաղագս ազդմանց» ենթագլխում գտնվող ուշագրավ հատվածներից մեկը, որը հնարավորություն է տալիս վերականգնելու Զենոնի աշխատության բնագրի սկզբնական կառուցվածքը:

Ընդհանուրի բերելով, «Յաղագս պիտանացու սեռից» գլխում շարադրված մտքերը բնության մասին, հեղինակը համառոտակի հայտնում է դրանից հետո շարադրվելիք նյութի ծրագիրը բաժիններով և ենթաբաժիններով:

«Մակացելին,- գրում է նա,- է արհեստ, և բաժանի ի տեսակս չորս՝ ի գործնական և ի բանական, ի տեսական և յիմացական: Եւ գործնականն՝ ի տնօրինական, ի բարոյական և ի քաղաքական: Եւ բանականն՝ յապացուցական, ի տրամաբանական, յիմաստական, ի բաժանական, ի վերլուծական, ի սահմանական: Եւ տեսականն, ի ձեռն որոյ խնդրականն, ի գիտաւորականն, յանմեկնելի որոշումն, ի ստորոգութիւնս էակացն, յանդէմ կացադրութիւնս, ի պատճառ մակացութեան, ընդ որով՝ մասամբ վերաբերութիւն, յեղանակ վարդապետականին: Իմացականին (մասունք են)՝ չար և բարի, ժամանակ, կատարելութիւն, սկիզբն և կատարած, բնութիւն սահմանական և

[6] Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի, ընծայեալ եղիասի իմաստասիրի. ի լոյս էած Յ. Մ ա ն ա ն դ ե ա ն. Ս. Պ. Բ. 1911 թ., էջ 14:

[7] «Առանձին» բառը գտնվում է միայն իմացականի ենթագլուխներին կից: Այդ բառը բացակայում է միայն «Յաղագս չարի բարւոյ» և «Յղ. կատարելութեան բանի» ենթագլուխներից, որոնցից առաջինը չունի նույնիսկ վերնագիր:

[8] Այս դարձվածքը գրված է միայն իմացականի ենթագլուխներին հաջորդող գլուխների վերնագրերում:

արարչական, էականութիւն, նիւթ և շարժումն, ունայն, անբաւ»: (Բն. էջ 86բ, տող 21-էջ 87ա, տող 11):

Ինչպես դժվար չէ նկատել, մեջ բերված հատվածի և աշխատության գլխակարգության միջև, բացի վերջին՝ «իմացական» գլխի բաժինների ցրիվ վիճակից, էական այլ տարբերություն չկա:

Միակ ենթագլուխը, որի մասին մեջ բերված հատվածում հիշատակություն չկա, «Յաղագս միմոսութեան» ենթագլուխն է: Այն հատված է ճարտասանական ինչ-որ երկից, ոչ մի առնչություն չունի Զենոնի բնագրի հետ, և, ինչպես կտեսնենք, իսպառ բացակայում է համառոտ խմբագրությունից:

7. Այսպիսով, միջոց ենք ստանում վերականգնելու Զենոնի աշխատության սկզբնական կառուցվածքը: Վերականգնված բնագիրը բաղկացած է հինգ գլուխներից և 24 ենթագլուխներից հետևյալ դասավորությամբ:

1. ՅԱՂԱԳՍ ՊԻՏԱՆԱՑՈՒ ՍԵՌԻՑ

ա. (Յաղագս գրից), *բ.* Յաղագս կարգաց, *գ.* Յաղագս շրջանաց, *դ.* Յաղագս չափուց, *ե.* Յաղագս զաւրութեանց, *զ.* Յաղագս ազդմանց.

2. ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՆԱԿԱՆԻ

ա. (Յաղագս անարհեստականին), *բ.* Յղ. բարոյականին, *գ.* Յղ. քաղաքականին.

3. (ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս սահմանաց և բաժանմանց, *բ.* Յղ. ապացուցի և տրամաբանութեան, *գ.* Յղ. իմաստակութեան և վերլուծութեան.

4. (ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս խնդրականի և դիտաւորականի, *բ.* Յղ. անմեկնելի որոշման և ստորոգութեան էակացս, *գ.* Յղ. ընդդիմակայիցն.

5. ՅԱՂԱԳՍ ԻՄԱՑԱԿԱՆԻՆ

ա. Յաղագս չարի և բարւոյ, *բ.* Յղ. կատարեալ գիտութեան բանի, *գ.* Յղ. ժամանակի, *դ.* Յղ. սկզբան և կատարածի, *ե.* Յղ. բնութեան, *զ.* Յղ. էականութեան, *է.* Յղ. շարժման և նիւթի, *ը.* Յղ. ունայնի, *թ.* Յղ. անբաւի:

8. Համառոտ խմբագրության բնագրերը ժամանակով կրտսեր են ընդարձակից, սակայն, ծագել են ավելի հին ձեռագրերից, քան A. բնագրի նախագաղափարը:

Համառոտ խմբագրության կազմողը օգտագործել է մի բնագիր, որի մեջ գլուխների շարահյուսությունը խախտված չի եղել, այլ ունեցել է ճիշտ այն կառուցվածքը, որն աշխատեցինք վերականգնել «Յաղագս ազդմանց» ենթագլխի տվյալներով:

Համառոտ խմբագրության B և D բնագրերը պարունակում են ընդարձակի 1-ին և 2-րդ գլուխներն ամբողջապես, 4-րդ գլխից Բ. և 5-րդ գլխից Ը. և Թ. ենթագլուխները: Բացի այդ B և D բնագրերում մուտք է գործել «Յաղագս բովանդակութեան» վերնագրով մի ենթագլուխ (տես՝ Բն. էջ 88ա, տողատակ), որն անտարակույս ոչ մի առնչություն չունի Զենոնի աշխատության հետ: Այդ մասին B բնագրի արտագրողը թողել է ուղղակի վկայություն. նա հետագայում մտած այդ ենթագլուխը վերնագրել է «Յաղագս բովանդակութեան, յայլ գրոց» խոսքերով, ցանկանալով ասել, որ այն բնագրի մեջ է մուծված հետագայում այլ գրքից[9]:

Այսպիսով, համառոտ խմբագրությունը կազմված է հետևյալ գլուխներից ու ենթագլուխներից:

1. ՅԱՂԱԳՍ ՊԻՏԱՆԱՑՈՒ ՍԵՌԻՑ

ա. (Յաղագս գրից), *բ.* Յղ. կարգաց, *գ.* Յղ. շրջանաց, *դ.* Յղ. չափուց, *ե.* Յղ. զաւրութեանց, *զ.* Յղ. ազդմանց.

[9] Ղ. Ալիշանին ծանոթ է եղել այդ գլխի բովանդակությունը: Նա իր «Հին հաւատք...» աշխատության 64-րդ էջում մեջ է բերել Հրասափ, սարսափ, Քարսափ, ճազատ ծովային հողմերի անունները՝ համապատասխան այդ գլխի:

2. (ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՆԱԿԱՆԻՆ)

ա. (Յաղագս տնաւրինականին), բ. Յղ. բարոյականին, գ. Յղ. քաղաքականին.

3. (ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս անմեկնելի որոշման և ստորոգութեան էակացս.

4. (ՅԱՂԱԳՍ ԻՄԱՑԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս անբաւի, բ. Յաղագս ունայնի:

C բնագիրը (Հակոբ Ղրիմեցու) թերի է արտագրված, այն ավարտվում է «Յաղագս ազգմանց» ենթագլխի կեսին, «... ի ձեռն որոյ խնդրականն» բառերով (ըն. էջ 87ա, տող 2), ուստի և պարունակում է միայն «Յաղագս պիտանացու սեռից» գլուխը:

9. Հրատարակվող բնագրի նախնական վերնագիրը մեզ չի հասել:

A ձեռագրի գրիչը, սահմանազատելու համար աշխատությունը նախորդ հոդվածից (գուշակություններ), որպես վերնագիր գրել է «Այլ բան» բառերը: Ըստ երևույթին, Գևորգ գրչի նախագաղափար օրինակի սկզբից ընկած է եղել մի թերթ: Այդ թերությունը նկատվում է նաև այն ենթագլխի բովանդակությունից, որն A բնագրում արտագրվել է սկզբում («Յաղագս չարի և բարւոյ»):

Ենթագլուխը հեղինակը կազմել է հինգ ենթաբաժիններից, որոնցից պահվել են միայն երրորդի վերջին մասը և չորրորդն ու հինգերորդը (տե՛ս ըն. էջ 93ա, տող 13):

Անվերնագիր է նաև C բնագիրը, իսկ B և D բնագրերում առաջին գլխի վերնագիրը՝ «Յաղագս պիտանացու սեռից», ընդհանրացված և դարձված է ողջ աշխատության վերնագիր:

Աշխատության նախնական վերնագիրը որոշելու գործին այս անգամ էլ նպաստում է «Յաղագս ազգմանց» ենթագլուխը: Այդտեղ հեղինակը «Մակացութեան արհեստ»-ը բաժանելով մեզ արդեն հայտնի չորս բնագավառների, տալիս է դրանցից յուրաքանչյուրի սահմանումն ու քննության ենթակա հարցերը: Նա գրում է.

«Սահման գործնականին են՝ կամք, յաւժարութիւն, ընտրողութիւն, բարկութիւն, ցանկութիւն: Եւ բանականին՝ անուն և բայ, բան և բացերևական բան, ստորասութիւն և բացասութիւն: Իսկ տեսականին՝ զգացութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախորհութիւն, միտք: Եւ իմացականին՝ որոշմունք մտաց, իմաստք և խորհուրդք, գիտութիւն և յառաջտեսութիւն» (ըն. էջ 87ա, տող 13-22):

Իսկ այս բոլորի ընդհանրությունը, հանրագումարը, ըստ հեղինակի՝ է բնությունը, *բնության ուսումնասիրությունը. «Իսկ կալմունք արհեստից է բնութիւն...» գրում է նա (էջ 87ա, տող 23):*

Եվ քանի որ աշխատության մեջ քննարկված են վերոհիշյալ բոլոր հարցերը նշված հերթականությամբ, ուստի, բնական է ենթադրել, որ աշխատությունը կրել է «Յաղագս բնութեան» վերնագիրը:

10. Հեղինակի մասին վկայություն պահպանած միակ բնագիրը D-ն է. այդ ձեռագրում աշխատությունը վերնագրված է այսպես՝ «Զենոնի իմաստասիրի Յաղագս պիտանացու սեռից»:

Դիոգենես Լաերտացու (3-րդ դար, մ. թ.) հեղինակավոր վկայությամբ՝ հունական մատենագիրների շարքում գործել են Զենոն անվամբ ութ հեղինակներ, որոնցից չորսը եղել են իմաստասերներ: Դրանք են.

1. Զենոն Էլեացի (5-րդ դար, ն. մ. թ.).

2. Զենոն Մնասեասի որդի, ստոյիկյան դպրոցի հիմնադիր (320՟-370՟).

3. Զենոն Սիդոնացի, էպիկուրյան փիլիսոփա (2-րդ դար, ն. մ. թ.).

4. Զենոն Տարսոնացի, ստոյիկյան փիլիսոփա.

Արդ վերոհիշյալ Զենոններից ո՞րն է հրատարակվող աշխատության հեղինակը:

11. Այս հարցի վերջնական պատասխանը հնարավոր կլինի առաջադրել վերոհիշյալ Զենոնների մասին եղած մասնագիտական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ և նրանց աշխատություններից մեզ հասած բեկորների քննությամբ, մի աշխատանք, որ վեր է մեր հնարավորություններից:

Ստորև մեր կողմից շարադրվող մի քանի հարևանցի դիտողությունների միակ նպատակն է՝ նպաստել հետագա ուսումնասիրողներին՝ հեղինակի որոշման ուղղությամբ կատարելիք իրենց աշխատանքներում:

Հայաստանում, իմաստասիրական դպրոցի գործունեության շրջանում և հետագայում, Արիստոտելի ու Պլատոնի հետ մեկտեղ իմաստասիրական մտքի ուշադրության առարկա է եղել ստոիկյան դպրոցի հիմնադիր Զենոնը: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև 5-7-րդ դարերում Հայաստանում, փիլիսոփայական գրականությունը ստեղծվեց ու զարգացավ նոր-պլատոնական փիլիսոփայական դպրոցի այս կամ այն թևին հարած եկեղեցական գործիչների թարգմանչական ու ստեղծագործական գործունեության շնորհիվ:

Իսկ նոր-պլատոնականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ «ստոիկյան, էպիկուրյան և սկեպտիկյան ուսմունքների ֆանտաստիկ զուգակցումը Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական բովանդակության հետ»[10]:

Մարքսի այս դրույթը հիմնավորվում է նաև հայկական փիլիսոփաների մի շարք արտադրանքներով, որոնց նպատակն է եղել «ֆանտաստիկ զուգակցմամբ» հաշտեցնել միմյանց պլատոնական, արիստոտելյան և ստոիկյան փիլիսոփայական ուղղությունները:

Համառոտաբար ծանոթանանք նման գործունեության արդյունք հանդիսացող աշխատություններից մեկի հետ, որ կրում է «Սահմանք փիլիսոփայականք» վերնագիրը և արժանի է հատուկ ուսումնասիրության[11]:

«*Սահման* է, ըստ *Պղատոնի* բան ի սեռէ և ի տարբերութենէ, և կամ տարբերութեանց մեկնողական էութեանց բանից խրաց: Իսկ ըստ *Արիստոտելի* բան, որ զինչէրն գոլ յայտնեսցի զինչգոլոյն զինչէն ճառասար կարողութեամբ: Իսկ ըստ *Զենոնի* բան ըստ վերլուծութեան կատարողին յառաջ բերել...:

«*Անուն* է ձայն արարողի կամ կրողի կամ ձայն նշանական ըստ զուգադրութեան առանց ժամանակի, որոյ ոչինչ է մասանցն նշանակ արտորոշեալ, բայց ձայն նշանական ըստ զուգաւորութեան ճանդերձ ժամանակաւ: Իսկ որպես *Պղատոն*՝ ձայն գործոյ նշանակ, իսկ անուն է երկոխում(բ)Է ճառաւակ մասն նուաստ բանի, յոր նախ յանշաւտի բան: Իսկ որպես ստոյիկեանքն՝ անուն է ձայն նշանական որպես մարդ...:

[10] Маркс и Энгельс, Собр. соч., I, V, стр. 122.

[11] Ձեռագիր N 464, էջ 202ա-215ա: Նույն աշխատությունը պահվել է նաև N 5244 (A) ձեռագրում, թերի վիճակում. գրիչն այդ առթիվ գրում է. «Աւրինակս այս չափ էր, և բանս ոչ աւարտեցաւ, և (ի) գիշերի գրեցաւ, զի շտապ էր»:

«Զայն է ըստ *Պղատոնի* վիրաւորումն աղոյ անզգայական և անմարմին. իսկ ըստ *ստոյիկեանց*՝ աղ վիրաւորեալ՝ լսելեաց զգալի և մարմին: Իսկ ըստ *Արիստոտելի*՝ ճայթիւն և շարժութիւն աղոյ...:

«Տրամութիւն է անբան ամփոփումն, շարժումն անբանի մասին անձին՝ որպէս [ասէ] *Զենոն*...»[12]:

Այն դեպքում, երբ «Սահմանք փիլիսոփայականք»-ի հեղինակը որևէ իմաստասիրական տերմինի սահմանումը ձևակերպելիս ձեռքի տակ չի ունեցել Զենոնի կարծիքը, նա ամենուրեք փոխարինել է այն ստոիկյան դպրոցի կողմից այդ հարցի առթիվ մշակված կարծիքով: Որովհետև, ինչպես ասացինք, նրա նպատակն է եղել հաշտեցնել միմյանց վերոհիշյալ երեք փիլիսոփայական ուղղությունները:

Սույն փաստերն իրավունք են տալիս կարծելու, որ 5-7-րդ դարերում հայ իմաստասերների միջավայրում, ստոիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի ուսմունքն ուշադրության առարկա էր կենտրոնում, ուստի բնականորեն, հայ թարգմանիչները շահագրգռված պետք է լինեին հայերենի թարգմանելու նրա (և ոչ ուրիշ մի Զենոնի) որոշ աշխատությունները:

Ավելացնենք նաև այն, որ Դիոգենես Լաերտացին ստոիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի աշխատությունների շարքում նշում է նաև Περὶ φύσεως («Յաղագս բնութեան») վերնագրով մի աշխատություն[13]*: Իսկ ինչպես աշխատեցինք պարզել, հրատարակվող բնագրի վերնագիրը եղել է նույնը՝ «Յաղագս բնութեան»:*

Ուստի և, իմաստասեր Զենոնի ով լինելու հարցի վերջնական պարզաբանումը թողնելով փիլիսոփայության պատմության մասնագետներին, անհավանական չենք համարում, որ հրատարակվող բնագիրը ստոիկյան դպրոցի հիմնադիր, Մնասեասի որդի Զենոնի, հունարենով մեզ չհասած Περὶ φύσεως աշխատության թարգմանությունն է:

13. Թարգմանության ժամանակի որոշման համար հրատարակվող բնագիրը ուղղակի վկայություններ չի պահպանել: Բնագրի բառամթերքի ու

[12] Ձեռագիր N 464, էջ 202բ, 203ա և 211ա:

[13] Diog. Laert., VII, 4. Զենոնի ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատությունները մեզ չեն հասել:

լեզվի մանրակրկիտ քննության ճանապարհով հնարավոր է միայն մերձավորապես որոշել թարգմանության դարաշրջանը:

Զենոնի երկի թարգմանիչը ծանոթ է եղել 5-7-րդ դարերում կատարված թարգմանություններին: Դրա վրա հատկապես ակնհայտ է Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանական բնագրի ազդեցությունը: Այդ երևում է ոչ միայն Թրակացու քերականության թարգմանության միջոցով ժողովրդականություն ստացած բազմաթիվ տերմինների նույնիմաստ գործածությունից այդ երկու բնագրերում[14], այլև, համանման հատվածների առկայության դեպքում, ամբողջական հատվածների բառացի նույնությունից:

Երկու բնորոշ օրինակների համադրությամբ պարզ կլինի Զենոնի երկի թարգմանչի ծանոթությունը Թրակացու քերականության հայերեն բնագրին:

ԱՐՈՒԵՍՏ ԴԻՈՆԻՍԵԱՅ ՔԵՐԱԿԱՆԻ[15]

Քերականութիւն է հմտութիւն, որ ի քերդողացն և ի շարագրաց իբրու բազում անգամ ասացելոց:

Եւ մասունք են նորա վեց. նախ՝ վերծանութիւն, ներկուռ ըստ առոգանութեան, երկիր՝ զրուցատրութիւն ըստ ներգոյս քերդողական յեղանակս, երիր՝

ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ

Քաղաքականացն նախադրի քերականութիւն, և է քերականութեանն երեք տեսակք՝ հմտութիւն, քերթութիւն, քերթողութիւն: Եւ սաի՝ հմտութիւն մասնական իրաց: Եւ մասունք են վեց՝ վերծանութիւն ներկուռ ըստ առոգանութեան, զրուցատրութիւն ներգոյս ըստ քերդողական յեղա-

[14] Այդպիսի տերմիններից են. ածանց, ածանցական, առոգանութիւն, բայ, բան, բառ, բացատրութիւն, գերակատար, դերանուն, երկբայ-ացեալ, զրուցատրութիւն, ընդունելութիւն, խնդրական, հասարակաբար, հմտութիւն, հնագէտ, հոմանուն մակբայ, յարաձգական, նախադրեալ-նախադրութիւն, ներգործութիւն, ներգոյ, ներկայ, ներկուռ, շաղկապ, շարադրութիւն, պատառ, պարունակ, պարփակեալ, սեռ-սերք, ստորադաս, ստուգաբանութիւն, վանկ, վերաբերութիւն, վերծանութիւն, տաղ, տառ, քերականութիւն, քերդողական, քերդած, տրամաբանութիւն, ցուցական, փաղանուն, փաղառութիւն և այլն:

[15] Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915.

լեզուաց և ճնազէտ պատմութեանց առ ձեռն բացատրութիւն, չորիր՝ ստուգաբանութեան գիւտ, հինգերիր՝ համեմատութեան տեղեկութիւն, վեցերիր՝ դատումն քերդածոց (էջ 1):

... Եւ բանի մասունք են ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յօդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ (էջ 12):

նակս, լեզուաց և ճնազէտ պատմութեանց առ ձեռն բացատրութիւն, ստուգաբանութեան գիւտ, համեմատութեանց տեղեկութիւն, դատումն քերդածոց (էջ 88ա-բ):

Եւ են մասունք բանի ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յօդ դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ (էջ 88բ):

14. Չնայած այս և բազմաթիվ այլ ընդհանրությունների, որ գոյություն ունեն Զենոնի «Յաղագս բնության» աշխատության թարգմանական բնագրի և 5-րդ դարում կատարված թարգմանական երկերի միջև[16] հրատարակվող բնագիրը չի կարող համարվել այդ շրջանի արտադրանք:

Այս եզրակացությունը հիմնավորվում է հետևյալ փաստերով.

ա. Կան 5-րդ դարի թարգմանական գրականության մեջ ստեղծված ու գործածված 58 բառեր ու տերմիններ, որոնք՝ լայնորեն օգտագործվելով այդ շրջանի թարգմանական երկերում, հետագայում դուրս են եկել գործածությունից[17]:

Այդ բառերից հրատարակվող բնագրում գտնում ենք միայն մեկը՝ «տեսարան»:

բ. Վերահիշյալ առաջին շրջանի թարգմանություններում հունական ἀντί նախադրությունը, առանց բացառության, թարգմանված է «հակառակ» բառով, որ, հետագայում կրճատվելով, տվել է «հակ» նախադրությունը[18]:

Զենոնի բնագրում բազմիցս հանդիպում ենք «հակ» նախադրութ-

[16] Հարյուրից ավելի տերմիններ կան հրատարակվող բնագրում, որոնք առաջին անգամ օգտագործվել են Փիլոն Եբրայեցու երկերի և «Պիտոյից գրքի» թարգմանության մեջ:

[17] Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 107-110:

[18] Նույն տեղում, էջ 112-113:

յամբ կազմված բառերի («հակադարձարար» (էջ 90բ), «հակադրութեամբ» (էջ 90բ), «հակադարձին» (էջ 92բ) և այլն), իսկ «հակառակ»՝ ոչ մի անգամ:

գ. Առաջին շրջանի թարգմանական երկերում δια նախադրությունը ոչ մի անգամ չի թարգմանված «տար» նախադրությամբ: Այդ երկերում շարունակ գործ են ածվել «զանազանութիւն», «զանազան», «ընտրեմ» բառերը, փոխանակ հետագայում գործածվող «տարբերութիւն», «տարբեր», «տարորոշեմ» բառերի: Հրատարակված բնագրում «տար» նախադրությամբ բառերի գործածությունը սովորական է, դրանցից են՝ «տարածմամբ» (էջ 82բ), «տարբերի» (էջ 93ա), «տարբերութիւն» (էջ 91բ), «տարորոշ» (էջ 92ա) և այլն:

դ. «Շաղ» նախադրությունը, ի բաց առյալ «շաղկապ» բառի, թարգմանական դպրոցի երկրորդ և երրորդ շրջանի թարգմանական երկերում, ամենուրեք, փոխարինված է «շար» նախադրությամբ: Զենոնի երկի թարգմանության մեջ ևս «շաղ» նախադրությամբ կազմված բառի չենք հանդիպում:

ե. «Մակացութիւն» և «Ներհակ» տերմինները ստեղծվել են թարգմանական դպրոցի գործունեության երկրորդ շրջանում[19]:

Առաջին շրջանի թարգմանական երկերում այդ բառերի գործածության ոչ մի դեպք չկա: Զենոնի երկի թարգմանության մեջ ոչ միայն գործածվել են այդ բառերը, այլև նրանցով ստեղծված մի շարք բառաբարդություններ («Մակացելի», «Ներհակարար» և այլն):

Թարգմանական-իմաստասիրական դպրոցի ծագման ժամանակի հարցը, հայագիտության ամենախճճված ու վիճելի հարցերից է: Հրապարակի վրա կան մի շարք իրարամերժ և հակասական կարծիքներ: Գ. Տեր-Մկրտչյանի փաստական, ամուր կռվաններով հիմնավորված կարծիքի համաձայն, այդ դպրոցի առաջին շրջանի երկերից մեկի թարգմանությունը

[19] Н. Адонц, Цит. Соч., стр., CIXXXIX. Հ. Մանանդյան, Հուն. դպր., էջ 132-133:

կատարված պետք է լինի 480-484 քառամյակում[20]:

Այսպիսով, պետք է եզրակացնել, որ Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատության թարգմանությունը կատարվել է առաջին շրջանի թարգմանություններից, ուստի, 480-ական թվականներից հետո:

15. Զենոնի «Յաղագս բնութեան» երկի թարգմանությունը չի կարող կատարված լինել նաև վերոհիշյալ թարգմանչական դպրոցի գործունեության երկրորդ շրջանում[21]:

Հօգուտ այս եզրակացության ունենք երկու կարգի փաստեր: Նախ՝ երկրորդ շրջանում ստեղծված իմաստասիրական տերմինները, համարյա առանց բացառության, նույնությամբ օգտագործված են Զենոնի երկի թարգմանչի կողմից[22]. և երկրորդ՝ Զենոնի թարգմանիչն անփոփոխ ձևով արտագրել է այդ շրջանի թարգմանչական երկերից այն հատվածներն ու նախադասությունները, որոնք առկա են եղել իր կողմից թարգմանվող բնագրում:

Այդպիսի հատվածներ ու նախադասություններ մեծ քանակությամբ գտնում ենք Արիստոտելի «Ստորոգութեանց» թարգմանական բնագրում:

Այդ երկու բնագրից բերենք զուգահեռ շարադասմամբ մի քանի բնորոշ օրինակներ.

[20] Տե՛ս Գ. Տ. Մկրտչյան, Տիմոթեոս կուզի հակաճառության թարգ. թվականը («Արարատ» 1908, էջ 564-589) և նույն հեղինակի, Հայ մատենագրության հնագույն թվականները («Շողակաթ», էջ 154-163):

[21] Այս շրջանում կատարված թարգմանություններից են Արիստոտելի աշխատությունները և նրանց յամբլիկյան մեկնությունները:

[22] Այդպիսի տերմիններից են՝ անելութիւն, անհատ, անմասն, ապացոյց, առնել, բաղկացելիք, բաղկացուցիչ զանազանութիւն, բացասութիւն, բացասական բան, բացերևութիւն, դիւրաշարժելի, ենթակայք, եռանկիւնի, երևակայութիւն, զանազանութիւն, ի զինչէութեան, էակ, լինելութիւն, կայ, կայմունք, հակադարձ, հակադրութիւն, համանուն, մակարդակ, մակացելի, նախադասութիւն, նախերգութիւն, ներհակաբար, շարաբանութիւն, շարադրութիւն, շարամանութիւն, շարունակ, որակութիւն, ունակութիւն, ունել, ուր, պատահմունք, ստորասութիւն, ստորոգութիւն, վերլուծութիւն, տարորոշ, տրամատել և այլն:

«ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ[23]	ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»
Իսկ յայնցանէ, որ և ոչ ըստ միում շարամանութեան ասացեալ են, իւրաքանչիւր ոք կամ գոյացութիւն նշանակէ, կամ որակ, կամ քանակ, կամ առինչ, կամ ուր, կամ երբ, կամ կալ, կամ ունել, կամ առնել, կամ կրել (էջ 362)	Իսկ երկրորդ ստորոգութեանցն ի տասն բաժանի՝ ի սեռս, որ է գոյացութիւն, որակ, քանակ, առինչ, ուր, երբ, կալ, ունել, առնել, կրել (էջ 92ա):
Եւ քանակին՝ է ինչ որ տարորոշ է, և է ինչ որ շարունակ, և այնք որ դիրն ունին առ միմեանս՝ յիւրեանց մասանց բաղկացեալ, և է որք ոչ յայնցանէ են, որ զդիրն ունին, և է տարորոշեալն, որգոն՝ թիւ, բան. և շարունակն, որպէս՝ գիծ մակերևոյթ, մարմին և առ այսոքիւք ևս ժամանակ և տեղի (էջ 372):	Եւ քանակին՝ է որ տարորոշ է և որ շարունակ և այնք որ դիր ունին: Եւ տարորոշ է բան և թիւ, և շարունակ է գիծ, մակերևութիւն, մակարդակ, տեղի. իսկ ժամանակ՝ բան և թիւ յաւէտ դաս ինչ ունել (էջ 92ա):

Յաղագս ճակակայց	Յաղագս ընդդիմակայիցն
Իսկ յաղագս ճակակայց՝ ըստ քանի յեղանակս սովորեցաք ճակակայիլ՝ ճառելի է: Եւ ասի այլում ճակակայիլ քառակարար կամ իբր առինչ. կամ իբր ներհակք, կամ իբր պակասութիւն և ունակութիւն, կամ իբր ստորասութիւն և բացասութիւն (էջ 396):	Ընդդիմակայքն քառակարար ասին: Զի է որ առինչունակապէս, և է որ ներհակաբար, և է որ ունակաւորն և պակասաբար, և է որ ստորասութեամբ և բացասութեամբ (էջ 92բ):

Շարժութեան տեսակք են վեց՝ լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, ըստ տեղւոյ փոփոխութիւն, այլայլութիւն (էջ 406):	... Ըստ շարժման բաժանի ի տեսակս վեց, որ է լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, այլայլութիւն, ըստ տեղո փոփոխութիւն (էջ 92բ-93ա):

Մի օրինակ էլ բերենք Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» աշխատության յամբլիքյան մեկնության հայերեն բնագրից.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՊԵՐԻ ԷՐՄԵՆԵԱՍ» ԳՐՈՑՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ[24]	ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»
Իմացմունք ... նշանակք են իրաց, իսկ ձայնքն՝ իմացմանցն նշանակք, այլ և գրեցեալքն՝ ձայնիցն նշանակք (էջ 490):	...Եւ բանականին գծածք ձայնից են նշանակք և ձայնք իմացմանց (էջ 86բ):

Թարգմանական այս հատվածների կապը միմյանց հետ անկասկած է, սակայն դրանց մեջ կան նաև էական տարբերություններ: Այսպես, «Ստորոգութեանց» հայկական բնագրի «մարմին» տերմինի դիմաց Զենոնի երկի թարգմանիչը գործ է ածել «մակարդակ» տերմինը:

«Ընկողմանում»-ի դիմաց «Ընդկողմանումն»
«Կացութիւն»-ի դիմաց «ընդկացութիւն»
«Հակակայ» - «ընդդիմակայ»
«իբր առինչ» - «առինչունակապէս»
«շարժութիւն» - «շարժումն»
«գրեցեալք» - «գծածք» և այլն:

Այս տարբերությունները պատահական չեն, այլ արդյունք են այդ բնագրերի տարբեր թարգմանական շրջանների արտադրանք լինելուն:

16. Սույն եզրակացությունը հիմնավորվում է հետևյալ նշանակալից

---

[23] Կորիւնի վարդապետի, Մամբրէի վերծանողի և Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք:

[24] Կորիւնի վարդապետի, Մամբրէի վերծանողի և Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք:
Հմմ. նաև Արիստոտելի «Ստորոգութեանց» բնագրի 378, 386, 404 էջերը. Զենոնի բնագրի 91-92 էջերի հետ և այլն:

փաստերով.

ա. Կան մի խումբ բառեր ու բառարարդություններ, որ հատուկ են, գրեթե առանց բացառության, իմաստասիրական ու թարգմանչական դպրոցի երկրորդ շրջանի թարգմանական երկերին[25]:

Հրատարակվող բնագրում բազմաթիվ այդ բառերից գործածվել է միայն մեկը («իմացուած»):

բ. Թարգմանական այս երկրորդ շրջանում ստեղծվել ու լայնորեն օգտագործվել են «Փար» նախադրությամբ սկսվող բազմաթիվ բառեր («փարարարձեմ», «փարադրեմ», «փարադրութիւն» և այլն), որոնք հետագայում գործածությունից դուրս են եկել: Նրանք բացակայում են նաև հրատարակվող բնագրից:

գ. Թարգմանչական առաջին երկու շրջաններում հունական ἐν նախադրությունը հաճախ թարգմանվել է արհեստականորեն ստեղծված «ըն» և «ն» նախդիրներով[26]: Այս հունաբանությունը երկար կյանք չի ունեցել և գործածությունից հանվել է երրորդ շրջանի թարգմանիչների կողմից: Հրատարակվող բնագրում այդ նախադրությունը թարգմանված է կամ «ընդ» («ընդկողմանումն», «ընդկացութիւն») և կամ «ի» «յ» («յենթակայում», «ի զինչէումն») նախադրություններով:

դ. Պորփյուրի «Ներածութեան» թարգմանության հատուկ են «ի ներում զինչէն» և «ի ներում որպիսի ինչէն» հունաբան արտահայտությունները:

Թարգմանչական դպրոցի գործունեության երրորդ շրջանում, Դավիթ Անհաղթին վերագրվող «Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի» աշխատության մեջ, այդ ձևի գործածումը փոքր-ինչ պարզեցվել է ու ստացել՝ «ի ներ զինչէումն», «ի ներ որպիսի ինչէումն» ձևերը.

Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեջ այդ խրթնաբանության պարզեցման ուղղությամբ արվել է երկրորդ քայլը: Նշված երկում

[25] Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը, էջ 127-128:

[26] Որպես օրինակ բերում ենք մի հատված Արիստոտելի «Ստորոգութեանց» մեկնությունից: «... եւ ոչ ըն միում յայլոցն ստորոգութեանցն, ոչ ըն գոյացութեան և ոչ ըն քանակի և նայլսն նամե նեսեան զկիրս, բայց միայն նորակի և նորակութեան» (տե՛ս Կորիւնի, Մամբրէի, Դաւթի մատենագրութիւնք, էջ 410):

հանդիպում ենք «ի զինչէումն» ձևին[27]: Նույն պարզ ու հայացված ձևին հանդիպում ենք նաև Զենոնի երկի թարգմանական բնագրում:

ե. Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հրատարակվող բնագրում կան մի շարք հունաբան նորաստեղծ տերմիններ ու բառեր, որոնք բնավ չեն օգտագործվել նախորդ շրջանների թարգմանություններում, և սակավ բացառությամբ, նույնիսկ մուտք չեն գործել «Հայկազյան լեզվի նոր բառգրքի» մեջ: Դրանցից են գաւազ[28] (էջ 84բ), եռակարար* (էջ 83ա), երկմասնարար (էջ 87բ), Զանազանիչք (էջ 93ա), էագոյն (էջ 97բ), ընդկայութիւն (էջ 92բ), խոնաւումն (էջ 96բ), կարճարտութիւն (էջ 90բ), կացագրութիւն (էջ 87ա), համեստական* (էջ 88ա), հասողական (էջ 96բ), հաստագիմակայ (էջ 82ա), հաստրանական (էջ 90բ), հատուցական (էջ 90բ), հիմնական (էջ 95բ), միտոտար (էջ 85ա), մշտակացութիւն* (էջ 82բ) և այլն), շարանութիւն (էջ 84բ), շարատութիւն (էջ 90բ), ունակարէն (էջ 92բ), պաղպաջմունք* (էջ 83ա), պարփակող (էջ 81ա), պղնձոտ* (էջ 84ա), սեռանամ* (էջ 91ա) և այլն:

Այսպիսով, Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատությունը թարգմանված պետք է լինի թարգմանչական դպրոցի երկրորդ շրջանում կատարված թարգմանություններից առնվազն մի քանի տասնամյակ հետո:

17. Երրորդ շրջանի կարևորագույն թարգմանական արգասիքներից է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» մեծարժեք աշխատությունը:

Այդ և Զենոնի երկի համատեղ քննությունը ցույց է տալիս, որ թարգմանական սույն երկու բնագրերը սերտ ազգակցական կապերով մերձենում են միմյանց:

Մի քանի օրինակով ցույց տանք այդ մերձեցումների բնույթը:

[27] Հ. Մանանդյան, Հունաբան դպրոց, էջ 188, 189:

[28] Աստղանիշներով ցույց ենք տալիս այն բառերը, որոնք մոտ են «Հայկ. բառգիրք», Զենոնի «Յղ. բնութեան» աշխատության համառոտ խմբագրության միջոցով:

ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»	ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹԻ «ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ»[29]
... Քան զի բնականն ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց: ... Իսկ դարձեալ է բնական, որ սահմանի ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց (էջ 96ա):	Ամենայն սահման բնաւորեցաւ ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց լինել (էջ 136):
Ուստի՞ յայտ է սահման, յագարակայնոցն ցուցմանէ, ... Յորմէ՞ առնու՝ յենթակայէ և ի կատարմանէ (էջ 89բ):	Ուստի՞ առի սահման. և պարտ է գիտել՝ եթէ սահման առի ի փոխաբերութենէ գիւղից և ագարակային սահմանաց: ... Ուստի՞ առնու սահման, և պարտ է գիտել՝ թէ, սահմանք կամ յենթակայէ առնուն և կամ ի կատարմանէ (142-143):
Հուպ ենթակա... հուպ կատարումն... հեռի ենթակա... հեռի կատարումն (էջ 89բ):	Հուպ ենթակայ և հեռի ենթակայ, և հուպ կատարումն և հեռի կատարումն (էջ 151-152):
Իսկ (սահման) տեսականին՝ զգայութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտ (էջ 87ա):	Քանզի պարտ է գիտել զհինգ գիտական զօրութիւնս. զգայութիւն, զերևակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս (էջ 185):
Քանզի են սահմանք իմաստասիրութեան գիտութիւն էակացս, գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց, խոկումն մահու, նմանութիւն աստուծոյ, արուեստ արուեստից և (մակացութիւն) մակացութեանց... սիրելութիւն իմաստութեան, որք են վեց (էջ 89բ):	Իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն... գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց... խոկումն մահու... նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան... արուեստ արուեստից և մակացութիւն մակացութեանց ... սիրելութիւն իմաստութեան (էջ 154):
Յաղագս գործնականին. իր է տնօրինական, բարոյական, քաղաքական (էջ 87բ):	Գործնականն բաժանի ի բարոյականն, ի տնօրինականն, ի քաղաքականն (էջ 209):
Իսկ սահմանական բաժանի ի տեսակս չորս տրամաբանութեամբ, այսպէս, թէ զի՞նչ է, և ուստի է, և որպիսի՞ են, և վասն է՞ր է (էջ 89բ):	... Ասեն թէ պարտ է յամենայն իրողութիւնս զչորս զայսոսիկ խնդրել զգլուխս՝ եթէ է՞, և զինչ է՞, և որպիսի ինչ է՞, և վասն էր է՞ (էջ 121):

[29] Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք:

Բացի այս օրինակներից՝ համեմատվող բնագրերում կան նաև այլ ընդհանրություններ: Կան մի խումբ կարևորագույն իմաստասիրական տերմիններ, որոնց մի մասը գործածված է միայն, իսկ մյուս մասը՝ առաջին անգամ, *այդ բնագրերում:*

Այդպիսի տերմիններից են՝ անգոյ, անմասն, աննիւթ, առանձնական, ատենական, բաժանումն, բաղխոհական, բժշկականութիւն, բնաւորեցաւ, բնութիւն, գիտութիւն, դատաւորութիւն, դերութիւնք, ընդունակ, ընտրողութիւն, թուականութիւն, իմանալի, իմաստասիրութիւն, խառնուածք, կատարեալք, կատարելագոյն, հատումն, նիւթականք, տնօրինական, քաղաքական և այլն:

Այս ընդհանրությունների հիման վրա դժվար չէ եզրակացնել, որ Զենոնի աշխատության թարգմանությունը նույնպես պետք է կատարված լինի թարգմանչական դպրոցի գործունեության երրորդ շրջանում:

18. Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության հայկական բնագրում կա մի ուշագրավ հատված. «Հոգիք մարդկան երկուս զօրութիւնս բնաւորեցան ունել, տեսական և կենդանական: ... Կենդանականս ունի զայսոսիկ՝ կամաւորութիւն, ընտրողութիւն, յօժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն» (էջ 191):

Հունարէն բնագրի համապատասխան մասում կարդում ենք.

Ζωτικαὶ δὲ αὗται βούλησις καὶ προαίρεσις θυμὸς καὶ ἐπιθυμία[30]:

Ինչպես տեսնում ենք՝ հունարեն բնագրում հոգու կենդանական զորությունները չորսն են, «յօժարութիւն»-ը չի նշված այնտեղ:

Հայ թարգմանիչը իրեն կարող էր թույլ տալ՝ բնագրից շեղվելով, ավելացնել այդ բառը, եթե ձեռքի տակ ունենար վերոհիշյալ հավելումով մի հեղինակավոր աղբյուր: Այդպիսի աղբյուր իրոք գոյություն ուներ հանձինս Զենոնի հրատարակվող աշխատության, որտեղ կա հետևյալ հատվածը.

«Քանզի սահմանք գործնականին են՝ կամք, յաւժարութիւն, *ընտրողութիւն, բարկութիւն, ցանկութիւն» (էջ 87ա, տող 13-15):*

Վերհիշենք նաև որ ἐν τῷ τί ἐστι արտահայտությունը միայն Զենոնի և Դավթի քննարկվող երկու բնագրերում է թարգմանված հայերենին հարազատ ու պարզ «ի զինչէումն» արտահայտությամբ. (Նախորդ շրջաններում այն թարգմանել են՝ «ի ներում զինչէն» կամ «ի ներ զինչէումն» ձևով):

Բերված փաստերը բավարար են՝ ցույց տալու համար, որ կամ վերոհիշյալ երկու բնագրերը թարգմանվել են նույն գործչի կողմից և կամ նրանց թարգմանիչները եղել են ժամանակակիցներ ու թարգմանչական նույն դպրոցի համամիտ ներկայացուցիչներ:

Այս եզրակացությունը, ցավոք, չի օգնում Զենոնի աշխատության թարգմանության ժամանակի ճշգրիտ որոշմանը, որովհետև թարգմանչական դպրոցի երրորդ շրջանի ժամանակագրական սահմանները դեռևս մշուշապատ են ու անորոշ: Այնուամենայնիվ, թարգմանական այդ դպրոցի գործունեությունն ավարտված պետք է լինի Անանիա Շիրակացուց տասնամյակներ առաջ, մերձավորապես 7-րդ դարի սկզբում:

19. Զենոնի աշխատության թարգմանիչը հայ եկեղեցու իդեոլոգներից է. նա իր թարգմանությանը կցած վերջաբանում (բն. էջ 97բ, տող 18-36), որոշակի կերպով շարադրում է իր հավատո հանգանակը Նիկիայի հավատո

[30] Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, (Commentaria in Aristotelem graeca, vol. XVIII), Berolini, 1904, p. 79, 8-9.

հանգանակի նմանողությամբ[31]:

Վեցերորդ դարի ողջ ընթացքում հայ եկեղեցին ստիպված էր մի շարք ճակատներով պայքարի ելնել իր ինքնության պաշտպանության և սոցիալ-տնտեսական դիրքերի ամրապնդման համար:

Դեռևս Եզնիկ Կողբացին գրել էր. «Եկեղեցւոյ սրբոյ գործ այն է, զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել, և զհերձեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս՝ գրովք սրբովք յանդիմանել»[32]:

«Առանց գրոց» այսինքն առանց Աստվածաշնչի «հանդիմանվողները» զինված էին արտաքին գիտություններով, իրենց քաղաքական ու տնտեսական պահանջները հիմնավորում էին հին հունական փիլիսոփաների ասույթներով և այլն:

Ահա նրանց դեմ պայքար մղելու նպատակով է, որ հայ եկեղեցին դիմում է հին հունական փիլիսոփայության, Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի և այլ իմաստասերների աշխատությունների թարգմանությանը:

20. Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատությունը հայ իմաստասիրական մտքի վրա, որքան մեզ հայտնի է, խորն ազդեցություն չի թողել:

Հետագայում, 13-14-րդ դարերում այդ աշխատությունը նորից գրավել է գիտական շրջանների ուշադրությունը: Մոռացված այդ բնագիրը նորից արտագրվել է մի քանի անգամ (1280, 1314, 1389 թվականներին), դարձել քննության առարկա և, ըստ երևույթին, ծառայել է նաև ուսուցողական նպատակների:

Գլաձորյան համալսարանի շրջանավարտներից մեկն իր ավարտական ատենախոսության մեջ, որ գրված է «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Սաղմոս խե, 5) բնաբանով, մեջ է բերել մի ընդարձակ հատված Զենոնի աշխատության «Յաղագս գրից» ենթագլխից (էջ 1ա, տող 16-1բ, տող 17)[33]:

21. Հրատարակվող համահավաք բնագիրը կազմել ենք առկա բոլոր չորս ձեռագրերի տված ընթերցվածքների մանրակրկիտ ուսումնասիրութ-

[31] Հմմ. «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 18 («Սահմանք հաւատոյ ՅԺԸ»-ից), էջ 51 («Եզնկայ Կողբացւոյ թարգմանչի ի Հայս»):

[32] Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 78:

[33] Մատենադարան, ձեռագիր N 631, էջ 89բ-90ա:

յամբ:

Այդ ձեռագրերն են.

A – Մատենադարան N 5254

B – Մատենադարան N 627

C – Մատենադարան N 3487

D – Մատենադարան N 1823

Տողատակերում նշել ենք նույնիսկ աննշան տարբերությունները, չհաշված մի քանի ակնհայտ գրչական սխալներ: Կասկածելի դեպքերում միշտ առաջնություն ենք տվել A (ընդարձակ խմբագրության) ձեռագրի ընթերցվածքներին, ի նկատի ունենալով նրա հնությունը, ամբողջականությունը և գրչի վարպետությունը:

Պետք է նշենք սակայն, որ չնայած մեր ջանքերին, մեզ չհաջողվեց բնագիրը ներկայացնել անթերի վիճակով: Համապատասխան բնագրի այն մասերում, որոնք պահպանվել են միայն ընդարձակ խմբագրության մեջ, մնացին մի քանի չհասկացված ու մեկնության կարոտ հատվածներ:

Բարեբախտաբար այդպիսի հատվածների թիվը շատ չէ:

22. Ստորև տալիս ենք A (5254) ձեռագրի մանրամասն նկարագիրը:

Թերթ՝ 256+1, մեծություն՝ 17x12x5, կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ, վիճակ՝ վնասված (սկզբից, միջից և վերջից ընկած են թերթեր, պրակներ), գրություն՝ միասյուն, տողեր՝ 24-26, բառանջատում՝ չունի, գիր՝ բոլորագիր, գրիչ և ստացող՝ Գէորգ, ժամանակ՝ ՉԻԹ – 1280 թ., տեղի՝ Դեղձուտի վանք, ի Մանկանաբերդ, նիշատակարաններ՝ 54բ. 47բ. 6բ. 17բ. 44բ. 86ա. 91բ. 125ա, 130բ. 135ա. 180ա, 202բ. 205բ. 209բ, 222բ, 227ա, 132ա էջերում

Բովանդակություն

Սկզբից թերի է, պահպանվել են 12 պատռված թերթերի լուսանցքները:

ա. 1ա-6բ. Սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի յառակաց մեկնութենէ: Ոչ է սա կաթողիկոսն Հայոց, այլ ազգական նորին: Եւ էր թիւն Հայոց ՈԽԶ (1197). և գայս վասն այն գրեցաք, զի ճանաչակ լինի ոմանք վասն անուանցն.

«Հանդերձ ավ. մխեալ ի ճենոփ. գրոց առակաց Սողոմոնի...

բ. 6բ-17բ. Մեկնութիւն յեսայեայ մարգարէի «Աններելք են արբոց մարգարէիցն բանք...

գ. 17բ-20բ. Նախերգան երկոտասան մարգարէից «Յար և մեծատր վկայ են գրոց բնատրական բնութիւն մարդկան...

դ. 20բ-31ա. Ներսիսի Հա(յ)ոց վերադիտողի. ի խնդրոյ նորին եղբաւրն Գրիգորիսի առաջին վերադիտողի (մեկնութիւն երկոտասան մարգարէից): «Սիրոյ զաւրութին գերազանց է քան զբնութիւն...

ե. 31բ-44բ. Պատճառ աւետարանին Յովհաննու [համավածաբար շարահարված են Սո(եփանոսի), Բ(ա)րս(եղի), Եփր(եմի), Եւսեբ(իոսի) և Նանայի ասույթները] «Որք առաջին հանդիսիցն լինին տեսողք...

զ. 45ա-46բ. (Պատճառ աւետարանին Ղուկասու) «Ղուկասու աւետարանս երրորդ է ըստ կարգի...

է. 46բ-54բ. Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի յաղագս խորանաց աւետարանին «Մատեանք աստուածագիծք և հոգեբուխ վարդապետութիւնք...

ը. 54բ-55բ. Վասն Յակոբա՝ հաւր Յովսիփու (և) վասն Աննայի՝ մաւր Աստուածածնին

թ. 56ա-65բ. (Քաղուածոյ մեկնութիւն տեսլեանն Եզեկիելի մարգարէի). համավածաբար շարահարված են Եփրեմի, Ստեփանոսի, Յովհաննու, Գր. Նիւսացւոյ, Եւագրի, Սարկաւագի և այլոց ասույթները: «... սկ. թերի) և յամին երեսներորդի...

ժ. 65բ-71բ. Վասն քագաւորացն Իսրայէլի, գիտելի է ի Սողոմոնէ և այսր, թէ որպէս են զկնի միմեանց... «Աստուածային իրագործութեամբն հրաշագործե քագաւորութիւնն Դաւթի...

ժա. 72ա-76ա. (Գիրք պատճառաց Դաւթի Քոբայրեցւոյ): Սկիզբը թերի է, պահպանվել են Գր. Նյուսացու հինգ գրքերի «Պատճառները»):

ժբ. 76ա-89ա. Դաւթի վարդապետի պատճառ պահոց գրոցն Բարսղի. (Տրված են ա ԼԳ ճառերի «պատճառները»):

ժգ. 89ա-91բ. Սկիզբն և պատճառ Հարցողաց գրոցն Բարսղի: «Տեսցուք թէ ուստի է սկիզբն մեծաստոր կրաւնաւորութեան...

ժդ. 91բ-93ա. Պատճառ և սկիզբն վեցաւրեա գրոց սրբոյն Բարսղի «Տեսցուք վասն վարուց սքանչելի Բարսղի...

ժե. 93բ-119ա. Սկիզբն և պատճառ գրոցն (Գրիգորի) Աստուածաբանի (17 ճառերի «Պատճառներ»):

ժզ. 119ա-125ա. Սկիզբն և պատճառ գրոց, զոր արարեալ է բազմախոհուն ամենիմաստ սքանչելին Փիլոն (7 աշխատությունների «պատճառներ»):

ժէ. 125ա. Այս են անուանք խեցեմորթացն(11 անուն):

ժը. 125բ-131բ. (Աղիւսակք բուոց անկխնաւորաց) (Վերջից թերի, 127 թերթից հետո կան ընկած թերթեր, 131 թերթը ներքևից պատռված է):

ժթ. 133ա-135ա. Ի բնութեան գրոց «Որպէս ոչ մարդոյ, կամ մարդ զոր ոչ է արժան գործել...

ի. 135բ-136ա. Ծայրաքաղ ի մնացորդացն մեկնութիւն (է).«Որ ասէ զԴաւթէ ի թագաւորութեանն...

իա. 136ա-145բ. Սկիզբն և պատճառ Եւագրին... (15 ճառերի «պատճառներ»):

իբ. 145բ-162բ. Եղիայի ասացեալ՝ ասորոց վարդապետի, պատճառ վերլուծութեան ի խաւսս սրբոյն Գրիգորի Աստուածաբանի (14 ճառերի «պատճառներ»): Ձեռագրից ընկել է 3 տետր՝ Չ. Պ. Ջ. համարակալությամբ:

իգ. 163ա-180բ. (Նոննոսի մեկնութիւնք Գրիգորի Աստուածաբանի հինգ ճառիցն)Սկսվում է «մեկնութիւն այնոցիկ, որ և յառաջնումն արձանականին եղեն...» գլխի Է. (Յաղագս Անտիոքեի) հոդվածով: Ավարտվում է «Նմանապես պատմութիւն և այնոցիկ, որ յերկրորդում արձանականին» գլխի Ը. հոդվածով: Ձեռագրից ընկել է 2 տետր՝ Վ. և Տ. համարակալությամբ:

իդ. 181ա-181բ. Յաղագս աւէտիս որդութեան (՚) «Եւ զաւէտիս որդութեան ոմանք եղին ի կարգի կրթման...

իե. 181բ. Այլ ուստ բան (մի քանի տող):

իզ. 181բ-182բ. Այլ բան ուսուէք (Ծննդաբանութիւն և ամ նահապետաց հրէից) «Սիմէոն եղբայր Յովնաթանու...

իէ. 182բ-190ա. Սակաւ մի բան ի բառուախաւսէն (30 հոդված) Տարբեր է բառայախոսի Ն. Մառի կատարած հրատարակություններից, և արժանի է հատուկ ուսումնասիրության:

իը. 190ա-202բ. Խոսք Փիլոնի (Ժամանակագրություն Անանիայ Շիրակունւոյ): «Նախաստեղծն Ադամ կեցեալ ամս...

իթ. 202բ-204ա. Յաղագս աստուածութեան իմաստասիրութիւն «Հերմես նշանաւոր փիլիսոփա ասէ Գ. զաւրութիւնք երկնից...

լ. 204ա-204բ. Սրբոյն Եղիշէի (Համառօտ ի մեկնութենէ Արարածոց) «Հաստութիւն Աստուծոյ յետ յանցանացն...

լա. 205ա-205բ. (Անուանք մարգարէից) Սկզբից թերի.

լբ. 205բ-206ա. Այս են անուանք թարգմանչացն, որք առ Պտղոմէիւ «Ի ցեղէն Ռոբինի՝ Յովսէպոս...

լգ. 206ա. Յաղագս երկոտասանիցն, թէ յորոց ազգաց (էին) «Պետրոս և Անդրէաս ի ցեղէն Նեփթաղեմի... Յովհաննէս ի ցեղէն Ղեւայ»

լդ. 206ա-207ա. Յաղագս երկոտասանիցն (Դորոթէոսի եպիսկոպոսի) «Վասմականն Դորոթէոս...

լե. 207ա-209բ. Յաղագս ՀԲ աշակերտացն տեառն Դորոթէոսի եպիսկոպոսի և մարտիրոսի գրեալ «Առաջին Յակոբոս եղբայր տեառն...

լզ. 210 A ա. Շարադրութիւն գրոց ըստ եբրայեցոց, զոր ընկալաւ եկեղեցի, այս են «Արարածք, Ելք, Ղեւտացիք...

լէ. 210 A բ. (Այբուբենք եբրայեցւոց, Ասորւոց և Տաճկաց), վերջից թերի, «ալփ, բէ, գիմալ...

լը. 210 B ա-212բ. (Գրիգորի Երուսաղեմացւոյ սահմանք զանազանք առորոշեալք ըստ սրբոց և ծայրագոյն վարդապետաց յաղագս

տարբերական և այլ և այլ անուանց).սկզբից թերի մեկ տետրակի չափով. վերնագիրը վերականգնում ենք համաձայն N 464 ձեռագրի էջ 189-ի:

լբ. 212բ-217բ. Արիստոտելի («Պերի երմէնեաս գրոց»Յաղագս բանի» գլխի, ԺԲ պրակի մեկնութիւն). միջից թերի 2 թերթ. «Արդ զոյ զէակն...

խ. 217բ-220բ. Ճարտասան, յաղագս բնութեան(տեքստը սխալ է կազմված 218 և 219 թերթերը պատկանում են հաջորդ հոդվածին):

խա. 220բ-222բ. Սահմանք փիլիսոփայականք (տեքստը սխալ է կազմված, պետք է կարդալ հետևյալ դասավորությամբ՝ 220բ-221բ. 218ա-219բ. 222ա-222բ.) «Սահմանք դնելով փիլիսոփայական բանի...

խբ. 222բ. (Յաղագս առոգանութեանց) «Առոգանութիւնք են Ժ. շեշտ, բութ...

խգ. 222բ. Արիստոտելի Ժ. ստորոգութիւնք, վերջից թերի. «Գոյացութիւն, որակ, քանակ...

խդ. 223ա-223բ. (Յաղագս շարժմանց) սկզբից թերի. «... լինին և են որ յարևելից...»

խե. 223բ-227ա. (Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի, թերևս Համամայ Արևելցւոյ), 224 թերթը մասն է մի այլ հոդվածի. «Առաջին գործք հրամանին Աստուծոյ...

խզ. 227բ. (Իմաստասիրական ծառ)

խէ. 228ա-230բ. Գոյն և գիտ և զաւրութիւն ականցն, Եպիփանու (Կիպրացւոյ). Տարբեր է տպագրից. «Սարդիոն շիկագոյն, արինատեսիլ...

խը. 231ա-237ա. (ի բժշկարանէն Յաղագս բնութեան մարդոյ) սկզբից թերի, վերնագիրը լրացնում ենք համաձայն N 464 ձեռագրի. «...Պտուղ առողջ, եւ առաւել...

խթ. 237ա-237բ. Յաղագս շարժման «Շարժումն լինի ի հողմոյ բնութենէ...

ծ. 238բ-256ա. Այլ բան (Զենոնի իմաստասիրի յաղագս բնութեան). «...Եւ դարձեալ զանազանի նախադասութեամբ...

ծա. 256ա-256բ. (Յաղագս ստորոգութեանց)«Այս են մասունք աշխարհի...

ծբ. 256բ. Դաւթի փիլիսոփայի (էակաց գիրք), վերջից թերի, ընկել են մի քանի թերթեր, «Ի քանիս բաժանի էակն և յորս...

Կարևոր հիշատակարաններ

ա. էջ 54բ. «Որք ազդիք ի սմանէ զհոգևոր եղբարսս իմ զՎարհամ և զՍտեփաննոս յաղաւթս յիշեցէս. քանզի մինչ ցայս վայր զաւրինակն սոքայ շնորհեցին. և ոչ միայն այս, այլ և պանդխտութեանս իմոյ մխիթարիչք էին՝ հոգևոր և մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխտանէաք, որ և Քրիստոս հատուսցէ զվարձս: Եւ յայսմ աւուր գնալով սոցա յերկիրն իւրեանց յԱյրարատեան գաւառն, տրտմութիւն հասուցին ինձ, զիս միայն թողլով, այլ աջողեսցէ սոցա խնամիչն ամենայնի, ամենայն ուրէք ուր և երթայցեն: Եւ զիս զԳէորգ որդի Պաքուաա թոռին Հզարայ, յերկրէն Խաչինոյ, ի մեծահռչակ քաղաքանէն Գանձասարայ, որ մակացու էի յերկիրս Մահկանաբերդոյ ի վանս Դեղձուտի՝ առ ոտս Առաքել վարդապետի, յաղաւթս յիշեսջիք. ի թվիս ՉԻԹ (1280), ազոստոսի Ժ. (10) գրեցաւ»:

բ. էջ 47բ. «զԳէորգ բնաւել քահանայ՝ զտէր գրոցս յիշեցէք ի Քրիստոս, ընդ նմին և զանարժանս՝ զԱւետիսս».

գ. էջ 91բ. «Ով և մեծ աստղ, զարմանք բանս ու ահեղ, զի յայս գունոցս եմ ես տգեղ, ինչ գոյն չամաչեմ ի գրոցս տգեղ, զիարդ դնեմ ես դուռն նեղ, և չմտանեմ ես բազմամեղ, ինչ ազատ է ինձ ասել երբ անկցուղ եմ ես գործել, այսու երևիմ ես թէ խաբիմ, վա՜ է զիս եղբայր, զինչ անիմ»:

դ. էջ 132ա. «Թվն. ՌՃԼԹ. (1690), յամսեանն յունվարին մէկն, տարեմուտն, ես Թոխաթեցի Դաւիթ յանագ սարկաւագս յեղի տուփս այս ծաղկաւէտ ժողովածոյ վարդապետաց և իմաստասիրաց բազում շահ, ընթերցողաց օգուտ՝ ծովապատ կղզին Կտուցայ, դուռն սուրբ Աստուածածնին և Կարապետոյ յեղի տուփս այս, եղբարք ընթերցեն, ևս առաւել վարդապետաց օգուտ սայ եղիցի. յիշատակ անջնջելի յանձին իմոյ...

ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ[1]

Ձեռագրերի համեմատությամբ պատրաստեց հրատարակության

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

1. ՅԱՂԱԳՍ ՊԻՏԱՆԱՑՈՒ ՍԵՌԻՑ[2]

Արդ, են սեռք պիտանացուք[3] վեց՝ դիրք, կարգք[4], շրջանք, չափք, զաւրութիւնք, ազդմունք:

[Յաղագս դրից]

Արդ, դիրք ի տեսակս[5] վեց բաժանին[6]:

Առաջին է ունայնին անգոյութիւն[7] պարունակեալ յանբաւէն, և ի մէջս իւր կառուցմամբ բարձեալ ունի[8] զբոլորն ի նոյն տրամագծին[9] և փոփոխեալ շարժմամբ[10]: Երկրորդ է[11], որ յանկրական[12] հրոյ և լուսոյ երկին բաղկացեալ պարփակեալ[13] յունայնէ, յայնցանէ[14] է և նիւթ և բնութիւն

[1] A վերնագրի փոխարեն՝ «Այլ բան», B *չիք* Զենոնի իմաստասիրի, ունի յաղագս [գիտութեան], C *չիք* վերնագիրը
[2] D Զենոնի Իմաստասիրի Յաղագս պիտանացու սեռից
[3] C պիտանացու սեռք, D Արդ պիտացու
[4] B կարգ
[5] D և տեսակս
[6] AB բաժանի
[7] B ունայն գիտութիւն, C ունայնին անբաւութիւն (ուղղված՝ անգոյութիւն), D անգիտութիւն
[8] C *չիք* ունի
[9] A տրամագծի, B տրամագծին
[10] A անփոփոխ և շարժմամբ || («փոխանակ» բառի տեղ, ամենուրեք դնում են || նշանը) և փոփոխեալ շարժմամբ, B շարժմամբ, D շարմամբ
[11] *չիք* է
[12] D անկրական
[13] BCD *չիք* պարփակեալ
[14] BCD *չիք* յայնցանէ է

անմարմին[15] կենդանեաց: Երրորդ՝ հաստատութիւն ջրայարկին պարունակեալ ընդ վերնովն վասն յաւէտ կիզողութեանն[16] արգելման[17], և դարձեալ՝ պարփակող արտադատութեան[18] և հոսման զգալեացս: Զորրորդ[19] դիրք ծովուն[20], որ[21] յաւզոյն հաստատեալ կայ[22] առանց ծորման եզերիցն և փակեալ ընդ հաստատնովն[23], և բաղկացուցիչ[24] և բնակարան զեռնոց[25] և կիտաց[26] մեծամեծաց[27], և շուրջ զերկրաւս[28] տալ զաւրութիւն[29] ախտաժետութեանց[30] և առողջութիւն մարմնական[31] կենդանեացս[32], ի ձեռն հողմոցն բերման ի զգայութիւնս իւրաքանչիւր[33]: Հինգերորդ է[34] երկրիս[35] շարադրութիւն[36], որ թանձրութեամբ՝ լերամբք[37] և բլրաւք[38], դաշտաւք և ձորովք[39],

[15] B մարմին || անմարմին
[16] B յաւետակիզողութեան
[17] C *չիք* արգելման
[18] B արտադատողութեան
[19] C երրորդ || չորրորդ
[20] D ծովու
[21] B *չիք* որ
[22] D կալ || կայ
[23] BD ընդ հաստատովն
[24] BD *չիք* և [բաղկացուցիչ]
[25] B զեռնոցն, D զեռնոց
[26] A կիտիցն, B կիտացն
[27] A մեծամեծացն, B մեծամեծ
[28] D զերկրեաւս
[29] C զաւր || զաւրութիւն
[30] B ախտաժետութեանս
[31] BCD մարմնոյ || մարմնական
[32] A կենդանեաց
[33] B իւր իւրաքանչիւր
[34] CD *չիք* է
[35] B երկրի, AD երկիրս
[36] BC շարադրութիւնս, D շարոցդրութիւնս
[37] B լերամբ
[38] B բլերօք
[39] BD ձորօք

հաստատեալ[40] ի կողմանց, ի խիտ և ի հոծ աւդոց, և յոլորտս[41] ջրովք ծովուն փակեալ կայ չորեքանկիւնի[42] ձևով: Եւ ընդ սիրտ[43] երկրիս[44] գետք հրայիցք[45] աւդոց[46] և ջրոց խառնացեալ լինին ընդ ամենայն երակս, ուստի աղբերք[47] և հողմք[48] վերագնացեալ[49] շարժմամբք[50]. և այսպէս[51] ծովուց և գետոց ընդունակք[52], և որ ի ջուրս և որ ի ցամաքի են ծննդականք[53] ամենեցուն[54] գոյացուցիչ[55] և պաճարող[56] կենաց գոլ: Վեցերորդ[57] է միջոցք աշխարհիս, որ ի[58] յաւդոց բռնադատեալ ուռուցմամբ, ի ներքս[59] արգելման ի փորուած[60] մեկնութեան երից հաստադիմակայիցն[61], զաւդ և կապուածս[62] աշխարհիս բաղկանալ[63], որ է պատճառ կենդանութեան և է բնակութիւն[64]:

[40] A հաստատեալք
[41] B հոլորտս, D յոլորդս
[42] A Դ. իւք անկիւնի
[43] B սիրտս
[44] D երկիրս
[45] BCD հրաշից,
[46] BCD օդից
[47] ABC աղբիւք
[48] B հողմունք
[49] A ի վերագնացեալք
[50] B շարժմունք
[51] C եւն ‖ և այսպէս
[52] AB ընդունակ
[53] C ծնունդք ‖ ծննդականք
[54] AB ամենիցուն
[55] C գոյացուիչ
[56] B պատճով ‖ պաճարող
[57] A վեց գ. է, C վեցերորդ, B վեցերորդ են
[58] CD *չիք* ի
[59] C ի ներք
[60] A ի փորուած
[61] B հաստադիմակայից, D հաստադիմադիմակայիցն
[62] ABD կապուած
[63] B բաղկանս
[64] D բնակութիւնն

Եւ սահմանք աստեղատանցն[65] ի մէջս իւր, ընդ հաստատովն[66], զի ի վարմանէ աւդոյն[67] ըստ իւրաքանչիւր[68] տանցն անսխալ շրջագային[69] աստեղքն, յորս կարգեալ են ըստ ժամանակի և ըստ տեղեացն[70] սահմանի:

Յաղագս կարգաց[71]

Կարգ ըստ երից բաժանի. ըստ առաքինութեան, ըստ աւրինի և ըստ բնականութեան[72]:

Զի ըստ առաքինութեան[73] և ըստ աւրինի են հրեշտակք[74] և մարդիկ՝ զուգեալք ի[75] տնաւրէնութեան իմացս[76]: Իսկ ըստ բնականութեան[77] ամենեքեան[78], որ յաշխարհիս բնաւորեցան գոլ յուրաքանչիւր բնական[79] սահմանս:

Արդ՝ որք ըստ առաքինութեան և ըստ աւրինի[80] ոչ վարեալք՝ անկարգութիւնք և կործանմունք[81] հանդիպին[82] և հետևին նորին կենացն: Եւ որ զբնականն[83] արտաքս ելեալ փոխի[84] իսկապէս քակտումն[85] և եղծումն լինի

[65] A աստեղացն, C աստեղատեացն
[66] D ընդ հաստատովն
[67] ACD ադոյն
[68] C ընդ երկաքանչիւր
[69] D շրջակային
[70] BD տեղացն
[71] C *չիք* վերնագիր
[72] BCD բնակութեան ‖ բնականութեան
[73] C ըստ առաքինութեանն
[74] A հրշտակք, BD հրեշտակ
[75] B *չիք* ի
[76] A իմաց
[77] BC բնակութեան
[78] AC ամենայն, D ամենայն որք ‖ ամենեքեան որ
[79] C իւր ‖ բնական
[80] AC ըստ աւրինին
[81] B կործման քանդի ‖ կործանմունք
[82] A *չիք* հանդիպին և, նորին
[83] AB ըստ բնականն
[84] B փոփի
[85] B քատկում

բնութեանն[86]:

Իսկ աստեղատունքն[87] կարգեալ են ի պարունակս աղոց[88] և ի[89] շաւեղս[90] աղավարութեանն[91], ոչ զմիմեամբք եղանեն[92], և ոչ փոխին յիւրաքանչիւրոցն[93]:

Յաղագս շրջանաց[94]

Շրջանք[95] բոլորին ըստ երից յեղմանց[96] բաղկանայ, որ է՝ տպաւորութիւն, բացերևութիւն, մշտակացութիւն, զի տպաւորեալ աշխարհս յանբաւին[97] և[98] բացերևեալ ի ձեան ունայնին[99] ի գոյն և ի ձև[100] և ի տեսակս[101] սեռի: Եւ ի նոյն դարձեալ մշտակային ըստ տպաւորութեան[102], ուստի բացերևեցան[103] անշարժելի[104] բնութեամբ. քանզի ի[105] նոյն անգրէն զկատարումն առնու բոլորն[106] համանգամայն զանազանութեամբ:

86 BCD քակտումն լինի բնութեանն և եղծումն
87 A աստեղատունք, C աստեղունքն
88 D յօղոց
89 C *չիք* ի
90 CD շաւիղս
91 BD աղավարութեան
92 CD եղանել
93 D խռաքանչիւրոց
94 AD շրջանացն, C *չիք* վերնագիր
95 A Գ. շրջանք, B շրջան
96 B յեղման
97 B անբաւին
98 CD *չիք* և [բացերևեալ]
99 A ունայնի
100 B ի ձև || և ի ձև
101 B ի տեսակս երևի
102 B ըս տպաւորութեան
103 BCD բացերևեցան || բացերեւեցան
104 D անշարելի
105 BCD *չիք* ի
106 D բոլորին

Իսկ երկնիցն[107] շրջանս իմանալի է զպարունակս[108] աղոցն առել, և ոչ զհաստատութիւն[109] ջրայարկին[110], որ ընտրողականն[111] է, և ոչ զերրորդ[112] երկինս[113], այլ որ ընդ հաստատունովս[114] են աղք պարունակեալ, ըստ եւթն բաժանման ընդ միմեամբք կարգեալ, բոլորութեամբ[115] շուրջ գլով զանդնդովք հարթ ըստ[116] չորեցունց[117] կողմանց աշխարհիս, յորս[118] աստեղատունքն[119] բաժանեալ և յամենայն վայրս աղոցն[120] ցրուեալ[121] տարածմամբ ի յերկուս[122] կիսագունդս[123] անդադար շրջագայութեամբ[124], դիմաք յարևելից[125] յարևմուտս, որք ընդ նոյն[126] շաւեղս վարին:

Իսկ մոլորակք[127] են[128] եւթն, բաժանեալ ըստ եւթն սահմանս աղոցն[129], որք են[130] այսորիկ՝ Երևակն, Լուսնթագն[131], Հրատն[132], Արեգակն,

107 A երկնից
108 C զպարունակ
109 D հաստատութիւն
110 D ջրարկին
111 BCD զորս ընտրողականն || որ ընտրողականն է
112 D զերորդն
113 AB երկին
114 C ընդ հաստատունովքս, B ընդ հաստատովքս
115 B բոլորութիւն
116 CD *չիք* ըստ
117 C զչորեցունց
118 A յոր
119 D աստեղքն, B աստեղատունք
120 CD աղիցն
121 B գրեալ
122 AB յերկուս || ի յերկուս
123 AD կիսագունդսն
124 A շրջագայութեան
125 B յարեւելս
126 D *չիք* նոյն:
127 B մոլորականք
128 D *չիք* են
129 C աղոց որք, D աղոց որ
130 A որք են՝ հրատ, արեգակն և այլքն
131 B լուսնթագ
132 B հրատ

լուսաբերն, փայլածուն, լուսինն[133]. քանզի սոքա ինքնաշարժ դիմաւք յարևմտից յարևելս[134] շրջագային և ըստ իւրաքանչիւր տանցն[135] զժամանակս գոյացուցանեն ի շրջանս իւրեանց:

Յաղագս չափուց[136]

Չափք աշխարհիս ըստ չորից բաժանի՝ ըստ տեղոյ[137] և ըստ գունոյ, ըստ ձևոյ[138] և ըստ թուականութեան:

Քանզի տեղին է եռակարար՝ վերին, ստորին և միջին[139]. և զանազանի ըստ կողմանց վերինն և այլն[140] ևս: Իսկ գոյն[141] քառակի ասի՝ սպիտակ, կապոյտ[142], սեաւ[143], սաւս[144]: Եւ ի սոցանէ[145] բաղկանան երանգք[146], երփունք, փայլմունք, պաղպաջմունք[147] և այլ զանազանեալք[148] ի միում ենթակայումն[149]: Իսկ ձև քառակի[150] ասի՝ եռանկիւնի[151], քառանկիւնի[152],

[133] B յուսին
[134] A յարևեալս CD ևս || ըստ
[135] C իւրաքանչիւր իւր տանց, B տանց
[136] B չափոց, C *չիք* վերնագիր
[137] B ըստ ամենայն տեղս, A *չիք* և ... և
[138] C և ըստ ձևոյ, A ձևո
[139] AB միջին || և միջին
[140] D այլևս
[141] A և || իսկ, CD գոյնն
[142] CD կարմիր || կապոյտ
[143] B սև, D սեաւն
[144] BCD դեղին || սաւս
[145] B ի սոցանէն
[146] B երկինք || երանգք, C երանգն, D երագն
[147] C *չիք* պաղպաջմունք, D պաղպաճմունք
[148] A զանազանեալ
[149] A ենթակաումն, B ենթակաում
[150] A եռակաբար B եռակաբոլոր, C քառակարար || քառակի
[151] AB եռանգիւնի
[152] AB քառանգիւնի

երկայն[153] և բոլորակ[154]. և ի սոցանէ[155] ըստ այլ տեսակս[156] զանազանի ձև[157]: Իսկ թիւ եռակի բաժանի. զի է որ դար ասի՝ ըստ հանգիտութեան հատած ի սեռիցն[158] և է որ կոճատ[159] ըստ անզուգութեան[160] անհարթ[161] տեսակացն[162], և դարձեալ՝ որ[163] յանհատիցն[164] բաղկանայ, իսկ որ ըստ այսոցիկ ոչ են[165] անբաւք[166] և անչափք ասին:

Իսկ սահմանք աստեղատանցն[167] ի ձեռն ժամանակի մոլորակացն[168] չափի, թուով[169] շրջագայիցն[170]: Քանզի ընտրեցան[171] աստեղատունք ամսոց երկոտասան[172] եռակի՝ ըստ չորեցունց[173] կողմանց աշխարհիս, ըստ նիւթոյ[174] և ըստ յեղման հասարակաց[175], ըստ երկրիս[176] մասանց, և ըստ անդամոց

[153] AB *չիք* երկայն
[154] BCD բոլոր
[155] D սոցանէ || ի սոցանէ
[156] BC այլ ամենայն տեսակս, CD ըստ տեսակս || ըստ այլ տեսակս
[157] BCD ձևս
[158] B հաստակիցն եռիցն, C հատած ի սեռից, D հատանի ի սեռից || հատած ի սեռիցն
[159] B կոն ամենայն || կոճատ
[160] B անզգուգութեան
[161] B հարթ
[162] CD տեսակաց
[163] BCD *չիք* որ
[164] B սոյն հատիցն, D որպէս անհատիցն
[165] C որք, կոչեն ||, որ, ոչ են
[166] B նոքա || անբաւք
[167] B սահմանքս տեղացն, C աստեղացն
[168] B բոլորակացն || մոլորակացն
[169] A Կ՟ թուով
[170] B շրջանիցն
[171] B և ընդրեցան, CD ընտրեցան և
[172] B ԲԺ-անեղ || երկոտասան
[173] C զչորեցունց || ըստ չորեցունց
[174] B ըստ անիւթոյ, C ըստ թուոյ || նիւթոյ
[175] AD հասարակացն
[176] B երիս || երկրիս

մարդոյն[177]*, և ըստ ծննդականութեանն*[178]*, որք անուանադրեն*[179] *խոյ, Ցուլ*[180]*, Եկաւորի*[181] *ըստ արևելից, որ է աւդ և գարնանային*[182] *համարակածիր*[183]*. Խեցգետի*[184]*, Առիւծ, Կոյս՝ ըստ հիւսիսոյ*[185]*, որ է հուրն և ամառնային*[186] *յեղանակ*[187]*. Կշեռ*[188]*, Կարիճ*[189]*, Աղեղնաւոր՝ ըստ արևմտից, որ է հող*[190] *և աշնանային*[191] *համարակածիր*[192]*, Այծեղջիւր*[193]*, Ջրհոս*[194]*, Ձուկն՝ ըստ հարաւոյ*[195]*, որ է ջուր*[196] *և ձմեռնային յեղանակ:*

Իսկ ըստ երկրի ցաւակից լինին[197] *և ըստ մասանց մարդոյն*[198] *խոյն Պարսից*[199]*, որ է գլուխն*[200]*. Ցուլն Բաբելացոց*[201]*, որ է պարանոցն*[202]*.*

[177] BCD մարդոյս
[178] AB ըստ ծնընդականութեանն
[179] B անդրէն *պաս ուղղված* անուանդրէնն, C անուանարէնն, D անուանագրէնն
[180] D Ծոյն
[181] D Եկաւորն, C Երկաւոր
[182] C գարնան
[183] B համարակածիրն, A համարակածք
[184] A իսկ Խեցգետի, BCD Խեցգետին
[185] B ըստ հիւսոյ, C ըստ հիւսիսոյ
[186] D ամառային
[187] B յեղանակն
[188] BCD Կշիռ
[189] B Կարիճն
[190] A հողմ, BCD հողն
[191] C աշնան
[192] A համարակածք, B համարակ, D համարակած
[193] D Այծեղջիւր
[194] D Ջրհոս
[195] B ըստ հարաւու, CD որ է հարաւ || ըստ հարաւոյ
[196] C ջրոյ, D *չիք* որ է ջուր
[197] A ցաւակիցն լինել B լինել || լինեն
[198] B մարդոյս || մարդոյն, CD *չիք* և ըստ մասանց մարդոյն
[199] C Պարսիկք
[200] A և գ[լուխ]ն || որ է գլուխն
[201] CD Բաբելացիք
[202] A և պա[րանոցն] || որ է

Եկաւորին[203] *Գամրաց, որ է ուսքն*[204]*. Խեցգետինն*[205] *Հայոց*[206]*, որ է լանջքն*[207]*, Առիւծն*[208] *Ասիացոց*[209]*, որ է*[210] *կողքն*[211]*. Կոյսն Ելլադացոց*[212] *և Յունաց*[213]*, որ են*[214] *ձեռքն*[215]*. Կշեռն Արաբացոց*[216]*, որ են կոթունքն*[217]*. Կարիճն*[218] *Իտալացոց, որ են*[219] *սրունքն*[220]*. Աղեղնաւորն*[221] *Կրետացոց, որ են երանքն. Այծեղջիւրն*[222] *Ասորոց, որ են*[223] *բարձքն*[224]*. Ջրհոսն Եգիպտացոց*[225] *և են ծունկքն*[226]*. Ձուկն Հնդկաց և Կարմիր ծովուն*[227]*, որ են*[228] *թաթք ոտիցն: Իսկ ըստ*[229] *ծննդաբաշխութեան՝ արականք են վեց*[230] *խոյ, Եկաւորի*[231]*, Առիւծ,*

[203] BCD Եկաւորն
[204] A և ո[ւսք]ն || որ է ուսքն
[205] A Խեցգետին
[206] CD Հայք || Հայոց
[207] A և լ[ա]ն[ջք] || որ է ... D լանջք
[208] BD Առիւծ
[209] AD Ասիացիք, B Ասորոց
[210] B որ են
[211] A աջն [աջ ձե՞ռքն] || կողքն, D կողք
[212] A Ելլադացիք
[213] A *չիք* և Յունաց
[214] BC և են
[215] A և ձ[ա]խ ձ[եռքն] || որ են ձեռքն
[216] A Կիպրիկեցիք || Արաբացոց
[217] A կշ[ռի՞ց] || որ են կոթունքն, C կռունթքն
[218] A կարիճ
[219] BC և են || որ են
[220] A և ա[ռնացի] ան[դա՞մն] || և են սրունքն
[221] A Աղեղնաւոր, D *չիք* Աղեղնաւորն - երանքն
[222] A Այծեղջիւրն
[223] CD և են || որ են
[224] A և բ[արձք]ն || որ են բարձքն
[225] B Եգիպտացիքն, D Եկիպտացւոց
[226] A սն [բերևս՝ սն. = սրունքն] || և են ծունկքն, B ծունկն
[227] BCD *չիք* և Կարմիր ծովուն
[228] BCD և են || որ են
[229] C *չիք* ըստ
[230] A *ջնջված է* են վեց
[231] BCD Եկաւոր

Կշեռ[232], Աղեղնաւոր, Ջրհոս, իսկ իգականք՝ Ցուլ[233], Խեցգետի[234], Կոյս[235], Կարիճ[236], Այծեղջիւր[237], Ձուկն:

Յաղագս զաւրութեանց[238]

Զաւրութեանց չորք են տեսակք՝ արտաքերութիւնք, արտահոսութիւնք, արտադատութիւնք[239], արտաարութիւնք[240], ուստի ծննդաբաշխականն և բժշկականն[241] բաղկանայ:

Զի ծննդաբաշխութիւնն[242] բաժանի ի տեսակս երիս՝ ի խոնաւայինս[243], ի ցամաքայինս[244], ի յերկակենցաղս[245]. ըստ ժամանակի, ըստ նիւթոյ և[246] ըստ կողման արտաքերի:

Իսկ հոգոյ[247] ելումն անյեղլի, կամ հատումն անպակասաբար, կամ սեղծումն արտաքոյ, կամ լինելութիւն[248] ըստ նիւթի խառնակցութեանցն[249] անմարմնաբար, այլ ոչ ըստ ժամանակի և ըստ կողման և ըստ

[232] BC Կշիռ, D Կշիռն
[233] D Ցուլն
[234] B Խեց || խեցգետի, CD Խեցգետին
[235] D Կոյսն
[236] D Կարիճն
[237] B Այծ, D *չիք* Այծեղջիւր
[238] B և վասն զաւրութեանց, D զօրութեանն, C *չիք* վերնագիր
[239] B արտադատողութիւն, C արտդատութիւնք, D արտադասութիւնք
[240] D արտաաւրութիւնք, AD արտադրութիւնք, B արտաւորութիւնք, C արտատութիւնք
[241] B բժշկական
[242] B ծննդաբաշխութեան
[243] C Ի խոնաւին
[244] C ի ցամաքային, D և ի ցամաքայինս
[245] AB յերկակենցաղս, D երկակենցաղս || ի յերկակենցաղս
[246] A *չիք* և
[247] A հոգոյն, D հոգւոյ բերումն
[248] B լինելութեանց
[249] C խառնակցութեան, D խառնակցութեանց

թանձրութեան նիւթոյ[250] ի հոսմանէ[251] բաղկացումն բնութեան[252], և ոչ այլայլակ առնի[253], այլ որ զանազանի ըստ մարմնոյ[254] կրից կամ[255] խառնից:

Իսկ որ ոչն արտաքերի ըստ մարմնոյ շարառնութեան[256] ոչ[257] այսպէս գոյացումն բնութեանն[258], այլ այլ[259] իմն[260] վերագոյն[261] աճումն բնութեան[262] և անյեղլի, առանց ծննդեան[263], յանկրական հրոյ և լուսոյ՝ անմարմին և անմահ կենդանութեամբ, և կամ թէ համանգամայն ի միջէ[264] նիւթոյ գլինելութիւն[265] առեալ՝ անթուելի[266] բազմութեամբ:

Իսկ բժշկականութիւն է ըստ մզան[267] և ըստ ուղղոյ[268], ըստ արեան և ըստ մաղձոյ[269], և[270] յորմէ[271] նեարդք[272] և ջիլք և ոսկերք[273] և երակք[274] և միսք

[250] A նիւթի, B նիւթ
[251] B յայնմանէ || ի հոսմանէ
[252] B բնութեանն
[253] B առնէ
[254] A մարմնոյն
[255] C կայ || կամ, A խառնից կամ կրից
[256] B շարառնութիւն, CD շարախառնութեան
[257] CD ոչ է
[258] D բնութեան, B բնութեան ի վերայ գյ(*պատռված*) բնութեն (*պատռված*)
[259] A *չիք* այլ
[260] B յայլ իմն
[261] B *չիք* վերագոյն
[262] A *չիք* բնութեան, C բնութեանն
[263] B ծնընդէն
[264] B ի միջոյ
[265] C զլինելութիւնն, D լինելութիւն
[266] A անթընելի || անթուելի
[267] B ըստ բզազան (*պատռված*) || ըստ մզան
[268] C ըստ ըղղոյ
[269] B ըստ մաղձի
[270] A *չիք* և
[271] B յարենէն || յորմէ, CD յորմէ են
[272] D յաւղք, BC աւղք || նեարդք
[273] ACD ոսկր
[274] B *չիք* երակք

և մորթք բաղկանան. զի բաժանեն[275] յաւդուածն[276] և խառնուածն յարական[277] և յիզական[278] մասունս:

Իսկ զանազանութիւնք[279] խառնուածոյն չորս զանազանի. ըստ մարմնոյն՝ փափու[280] և գոսար[281]. և ըստ[282] գունոյն[283] շէկ, թուխ[284], խարտեաշ[285], պղընձոտ[286]. և ըստ մազոյն[287] գռուզ, ձաղկ[288], գանգուր[289] և նուրբ[290] կամ ստուար[291]. և ըստ ամոքացն[292] և հոտոցն[293] դառն[294], քաղցր, թթու և կծու[295]:

Իսկ մաղձն[296] և արիւնն են բարձրութիւն[297] նիւթիցն և հաստատութիւն[298] յեղմանցն, և զանազանին[299] ըստ ժամանակի[300] յեղանակացն: Եւ

[275] B և զի բաժանի, D բաժանին, A բաժանի
[276] D յաւուածն || յաւդուածն,
[277] B յարուական
[278] BD իզական
[279] A զանազանութիւն, B զանազանութեամբ
[280] A փափա, C առոյգ || փափու
[281] A գոտր
[282] A ըստ || և ըստ
[283] C ըստ գունոցն
[284] BCD կամ թուխ
[285] B խարտեշ
[286] D պղընձուր
[287] B ըստ մաղձոյն
[288] C չիք ձաղկ
[289] D գռուռ
[290] A և կամ նուրբ
[291] D չիք կամ ստուար - դառն
[292] A սաամոքացն || ամոքացն
[293] BD լինդիցն || հոտոցն
[294] B դառնամաղցի կամ կծու
[295] CD կծու || և կծու
[296] A մաղձ
[297] D չիք են բարձրութիւն – յեղանակացն
[298] B հաստութիւն || հաստատութիւն
[299] C զանազանի
[300] B չիք ըստ ժամանակի

ի սոցանէ լինին[301] առողջութիւնք և հիւանդութիւնք դժուարինք. զի ըստ զոյգ և ըստ կշեռ[302] բարեխառնութեան[303] լինի[304] առողջութիւն[305], իսկ ըստ առաւելութեան՝ պէս պէս[306] հիւանդութիւնք: Քանզի ի սեաւամաղձութենէն[307] լուսնոտք[308], և ի միտաւտարենէն՝ ուրկութիւնք[309], և ի խստութենէն[310] արգանդի[311] արեանն[312] ամլութիւնք[313], և ի[314] ցրտոյ[315] թիկանց՝ արուին[316] անարութիւնք[317]: Այսք ըստ առաւելութեանցն բաղկանան[318]:

Իսկ վարք կենացն[319] ի բնութենէն[320] վարժելով[321] հարկաւար[322] պնդի[323], ուստի նախանձ և փառասիրութիւն[324] և ցանկութիւն[325], զաւրավիգն[326] լինել, յորմէ պատերազմունք մարտիցն[327] բաղկանան. և խոր-

[301] B լինեն, C լինի
[302] BCD կշիռ
[303] B բարեխառնութիւնք լինին առողջութիւնք
[304] A չիք լինի
[305] B առողջութիւնք
[306] CD պէս պէս լինին
[307] B ի սեւայմաղձութենէն, C սև մաղձութենէն, D սեաւմաղձութենէն
[308] C լուսնոտքն, D լուսոտք
[309] B ուրկութիւն, C ուրկութիւնն, D ունակութիւնք || ուրկութիւնք
[310] A ի խստութենէ, B չիք և ի խստութենէն
[311] BCD արգանդին
[312] B արեան
[313] C ամլութիւնն, D ամլութիւն
[314] B չիք ի
[315] A ցրոյ
[316] C չիք արուին
[317] D անարութիւն
[318] BCD չիք Այսք ըստ առաւելութեանցն բաղկանան
[319] A վարքն կանանցն || վարք կենացն
[320] D ի բնակութենէն
[321] ABD պատժելով || վարժելով
[322] BCD հարկաւորաբար
[323] BC պնդի
[324] D փառասիրութիւնն
[325] B ցանգութիւն, C ցանկութիւնն
[326] B զօրաւիգն, D զօրավիգն
[327] CD մարտից

հուրցք[328] միշտ ի շնորհս[329] անձին խրում ընկալեալ[330] ծնանի զիմացուածս բանի[331] և ներգործութեան, զի է, որ ըստ մարմնոյ և է, որ ըստ հոգոյ[332] աւգտի:

Իսկ մահ է լուծումն զգայութեանց[333] և քակտումն[334] և որոշումն[335] նիւթոցն[336], զի է[337], որ պատահմամբ՝ ըստ խառնիցն[338] և է, որ բնական՝ ըստ կրիցն: Եւ լինի պատահումն ըստ ժամանակի ի պատերազմի[339], կամ[340] յայլ[341] որոգայթից[342], կամ յախտից հիւանդութենէ ի մէջս[343] կենացն[344] ծախիլ: Իսկ բնականն է[345] ըստ զաւրութեան մինչև[346] ի պակասել ջերմութեան ուժոյն[347], և գիտելի է ի ծնելութենէն ըստ ժամանակի, ի շրջապայութենէ[348] մոլորակացն[349], իսկ[350] ըստ զաւրութեան[351] նիւթոյ յեղանակացն[352] այլ է

[328] CD խորհուրդ
[329] CD ի շնորհ
[330] BCD վկայեալ || ընկալեալ
[331] B բանից
[332] C *չիք* է, որ [ըստ հոգոյ], D հոգւոյ
[333] A զգաութեանցն
[334] B քօկտումն
[335] B յորոշումն
[336] A նիւթիցն
[337] D զի || զի է
[338] C և ըստ խառն, B ըստ խոնաւիցն || ըստ խառնիցն
[339] D ի պատերազմին
[340] BC և կամ, D *չիք* կամ
[341] D այլ
[342] BC որոգայթից և
[343] B ի մէջ
[344] BCD կենաց
[345] D ի սկզբանէ || իսկ բնականն է, B բնական || բնականն է, C բնական
[346] D մինչև
[347] D ջերութեան ուոյն
[348] A ի շրջապայէ, B ի շրջապայի, D ի շրջապային || ի շրջապայութենէ
[349] A մոլարացն, B մոլորակաց
[350] B *չիք* իսկ – յեղանակացն
[351] C զօրութեանն, D զօրութեանց
[352] A եղանակացն

պատճառ զգայական մարմնոյ և աւդն[353], զի ըստ բարեխառնութեանն[354] և յառոյգ[355] սերմանեաց[356] Երկրին, յորմէ շաւշափի և կերակրի՝ առողջութիւնք և աճմունք[357] բաղկանան[358]:

Իսկ սոցին[359] հակառակն[360] պէս պէս ցաւոց և խառն մահուան[361] լինել պատճառ, որ ըստ շարժման աւդոյն[362] դառնութեան[363], ի[364] ժամանակս եկամտացն, ըստ նիւթոյ[365] յեղմանցն[366] և ըստ խառնուածոյ[367] մարմնոյն[368], պատահիլ ազդմամբք[369] ի սիրուն բարձումն կենդանութեան[370] լինել[371]:

Արդ, որք[372] ըստ ժամանակի[373] և ըստ[374] զաւրութեան ոչ են՝ անեղին[375] են սրանչելագործութիւնք և ոչ բնութեան[376] նիւթականացն[377]:

[353] AC աւդ, D յօդ
[354] B զի բարեխառնութեան
[355] B առոյգ, D յառոյգն
[356] C սերմանութեանցն
[357] B աճումն
[358] B բաղկան, D բաղկանայ
[359] BC սոցա
[360] B հակառակըն
[361] B խառնման || խառն մահուան
[362] D շարժման յօդոյն
[363] B դառնութիւն
[364] B *չիք* ի
[365] ABD նիւթի
[366] B յեղմացն
[367] B ըստ խառնուածոյ, D խառնուածոց
[368] B մարմնոյ
[369] B ազդմբ. ի սիրուն բծու (*պատովով*)
[370] A կենդանութեանն, D ի կենդանութեան
[371] A լինի
[372] ABD որ
[373] B ամենայն ժամանակի
[374] A *չիք* ըստ [զաւրութեան]
[375] A անեղի, B անեղին || անեղին են
[376] B ի բնութեան, C բնութեանն
[377] BD նիւթականաց

Յաղագս ազդմանց[378]

Ազդումն բնութեանց եռակի բաժանի. զի են, որ[379] սնուցիչք[380] են և են, որ[381] իմաստնացուցիչք[382] և են, որ[383] մակացելիք:

Արդ՝ սնուցչացն երկու են տեսակք[384] նիւթ և ժամանակ[385]. զի քառակի ըստ հանդիպութեան հանդիպմանցն ոռոգանել զսերմանս[386] տնկոց[387] և բուսոցն[388] զանազանութեանց:

Իսկ իմաստնացուցիչք[389] երկակի բաժանին[390] ըստ տեսանելեաց[391] և ըստ ձայնից[392]: Եւ տեսանելին եռակի բաժանի՝ ի գոյն, ի ձև[393] և ի կերպարան: Իսկ գոյն[394] ըստ չորից բաժանի՝ սեաւ, սպիտակ, կապոյտ և սաւս[395], իսկ խառնուածք[396] ի սոցանէ բաղկանան[397] ի զանազան տեսիլս գունոց[398]: Նոյնպէս և ձևքն[399] քառակի[400] զանազանին[401] ըստ

[378] C *չիք* վերնագիր
[379] B որք
[380] C սնուցիչ
[381] A և որք || և են որ
[382] BC իմաստնացուցիչք են, D իմաստացուցիք են
[383] B և որ || և են որ
[384] C տեսակ
[385] A ժամանակք
[386] D սերմանս
[387] BD տնկոցն, AD բուսոց
[388] C բուսոց և տնկոց
[389] AD իմաստացուցիչք
[390] BD բաժանի
[391] C տեսանելեացն
[392] C ձայնիցն
[393] A և ի ձև, C *չիք* և
[394] C գոյնն
[395] B ի սպ[իտա]կ, կապոյտ, սեաւ և դեղին, C սպիտակ, կարմիր, սեաւ և դեղին, D բսպիտակն, կարմիր, սեաւ, դեղին
[396] A խառնուածքն, B խառնակութիւնքն
[397] B բաժանի || բաղկանան
[398] C գունից || տեսիլս գունոց, B գունոցն
[399] CD ձևք || և ձևքն
[400] B ըստ քառակի, D ըստ քառից || քառակի
[401] AB զանազանի

կրի[402] բաժանականին[403], որ է եռանկիւնի և քառանկիւնի[404], երկայն և[405] բոլորակ[406]: Իսկ ի ձևի[407] կատարեալ է բոլորակն ըստ ձևոյ և ըստ շարժման[408] աշխարհիս ի նոյն անդրէն դառնալ:

Իսկ կերպարան է ի դէմս[409], և դէմք՝ յանհատի[410], և անհատ[411] ի տեսակի[412], իսկ տեսակ՝ ի սեռի: Եւ է[413] կերպարան իսկապէս ի վերայ ծննդեանց[414] և եղմանց և ստեղծմանց, որ յանհունս[415] արտաբերեալ[416] զանազանին՝ նմանք և աննմանք, ի ձեռն անզոյգ ժամանակի և շարժման[417]: Իսկ պիտակաբար, որ[418] ոչ ընդունի գրնականութիւն[419], որպէս ի վերայ[420] չորեցունցն[421] երևի ախտաստացականից[422]. և սառինց[423] և վերադասականաց[424], և ի[425] վերայ գերագունին[426] սահմանի[427], զի արտաբերեալ

[402] B ըստ կարի, C ըստ կպի (*պատռված*, կե՞ռպի)
[403] D բաժանականի
[404] ABC եռանգիւնի և քառանգիւնի
[405] D *չիք* և, C և երկայն, A երկարն
[406] B բոլոր
[407] BCD ձև || ի ձևի
[408] D շարժման
[409] C ի դէմ, B ի դեմի
[410] D դէմ անհատի, B և դէմսն հանդիպ (*պատռված*)
[411] AB անհատն
[412] AB տեսակն
[413] C եւ || եւ է
[414] B ծնընդոց, CD ծնեյոց
[415] AB յանհունսն
[416] C տարաբերեալ
[417] D շարժման
[418] C *չիք* որ
[419] CD գրնակոյթիւն, B գրնութիւն || գրնականութիւն
[420] BCD *չիք* ի վերայ
[421] C չորեցունց
[422] BCD ախտաստացականի
[423] D սառոնց || և սառոնց
[424] D վերոյդասականաց
[425] C *չիք* ի
[426] A գերագունի
[427] B *չիք* սահմանի

զանազանին ըստ լինելութեան նիւթոյ[428]: Եւ ի սոցանէ են, որ կամաւ[429] և են, որ ակամայ[430] և, որ[431] ոչ կամաւ և ոչ ակամայ՝ բռնադատութիւն, զի ոչ յումեքէ հարկի:

Իսկ ձայն է[432] տարրական[433], բաժանեալ ի տեսակս չորս[434] անկենդանական[435], զգայական[436], բանական և պիտակարար բանական[437]: Զի անկենդանականն, միջնորդաւ ուռուցմանց[438], նշանակք են մարմնոց և բախման[439] նիւթոց[440]: Իսկ զգայականն[441] նշանակք են առ միմեանս սակս ծանուցութեան տեսակացն: Եւ բանականին[442] գծածք ձայնից են նշանակք և ձայնք իմացմանց[443], իսկ իմացուածն[444] իրին և իրն անիրին:

Բայց բաղկանայ իմացուածն ի տեսլենէն[445] և ի ձայնէն ի մարդս բնաւորեալ, ըստ շարադրութեան[446] և առժամայն[447] իմացմանց: Իսկ աստուածայնոցն[448] ոչ այսք[449] բաղկացեալ իսկապէս, այլ երբեմն

[428] C ըստ նիւթոյն || ըստ լինելութեան նիւթոյ
[429] C կամաւ են
[430] C ակամայ են
[431] A և է որ
[432] BD ձայն որ է, C ձայն է որ է
[433] B տարական
[434] A բ. [երկու] || չորս
[435] B անկենդանականն
[436] B սգայական
[437] A բնական և պիտակարար բնական
[438] D ուռուցմանցն
[439] BC բարախման, D ևս բախման
[440] A նիւթից
[441] A զգաականն, B սգաականն
[442] B բանական են || բանականին, C բանականի
[443] B իմացուածն
[444] B իմացիծն
[445] C ի տեսլենէ
[446] C շարադրութեանն
[447] D առժաման
[448] B կրկնված է «աստուածայնոցն»
[449] B այս

պիտակարար եղով[450]:

Իսկ մակացելին է արհեստ և բաժանի ի տեսակս[451] չորս՝ ի գործնական[452] և ի բանական[453], ի տեսական[454] և յիմացական[455]: Եւ գործնականն[456] ի տնաւրինական[457], ի բարոյական[458] և ի քաղաքական[459]: Եւ բանականն՝ յապացուցական[460], ի տրամաբանական[461], յիմաստական[462], ի բաժանական[463], ի վերլուծական[464], ի սահմանական[465]:

Եւ տեսականն[466], ի ձեռն որոյ խնդրականն*՝ ի դիտաւորականն[467], յանմեկնելի որոշումն, ի ստորոգութիւնս էակացն[468], յանդէմ կացագրութիւնս[469], ի[470] պատճառ մակագրութեան, ընդ որով՝ մասամբ վերաբերութիւն[471], յեղանակ[472] վարդապետականին: Իմացականին[473] չար և

[450] D պիտակարեր եղով
[451] C չիք տեսակս
[452] CD ի գործնականն
[453] CD ի բանականն
[454] C ի տեսականն, D ի տնտեսականն || ի տեսականն
[455] C և յիմացականն, D իմացականն
[456] A գործնական
[457] BCD տնաւրինականն
[458] A բարոական, BD ի բարոյականն, C ի բարուական
[459] BC ի քաղաքականն, D քաղաքականն
[460] BCD յապացուցականն
[461] BCD ի տրամաբանականն
[462] C յիմաստասիրականն || յիմաստականն
[463] BC ի բժշկականն || ի բաժանական, D ի բժշկական, A բաժանական
[464] BC ի վերլուծականն
[465] BC ի սահմանականն, AD վերլուծական սահմանական
[466] B և ի տեսականն
* C ձեռագիրն ավարտվում է «խնդրականն» բառով և հետևյալ հիշատակագրությամբ՝ «զՅակոբ Ղրիմեցի, սպասաւոր բանի, աղաչեմ յիշել ի Տէր»:
[467] B ի դիտաւորկնւ (պատռված)
[468] B ի ստորոգութեան էակացն
[469] B յանդէմակացադրութեան, D բացադրութիւնս || կացադրութիւնս, A կացադրութիւն
[470] B և ի || ի
[471] B վերաբերութեան

բարի[474], ժամանակ, կատարելութիւն[475], սկիզբն և կատարած[476], բնութիւն[477] սահմանական և արարչական[478], էականութիւն[479], նիւթ[480] և շարժումն[481], ունայն, անբաւ: Զի[482] և սահմանաւ բաժանեալ առանձնական[483]:

Քանզի[484] սահմանք[485] գործնականին[486] են՝ կամք, յաժարութիւն, ընտրողութիւն[487], բարկութիւն, ցանկութիւն[488]: Եւ բանականին՝ անուն և բայ[489], բան և բացերևական բան[490], ստորասութիւն և բացասութիւն[491]: Իսկ տեսականին՝ զգայութիւն[492], երևակայութիւն[493], կարծիք, տրամախորհութիւն[494], միտք: Եւ իմացականին՝ որոշմունք մտաց[495], իմաստք[496] և խորհուրդք, գիտութիւն և յառաջտեսութիւն[497]:

---

[472] D եղանակ
[473] B *չիք* իմացականին
[474] BD չարոյ և բարոյ
[475] BD կատարելութեան
[476] D կատարածն
[477] BD բնութեան
[478] B արրչան, D արարչական || և արարչական
[479] BD էականութեան
[480] D ի նիւթ
[481] B յոյժ իմն || շարժումն
[482] B Զի || Զի և
[483] B բաժանեալ առանձնականաւ
[484] B Զի || Քանզի
[485] AD սահման
[486] A գործականին
[487] D ընտրողութիւն, յօժարութիւն, B ընդրողութիւն
[488] BD ցանկութիւն, բարկութիւն
[489] BD բայ || և բայ
[490] B բացերևակաբան, D բացերևականն
[491] B ստորոգութեան և բացասութեան
[492] B զգայութեան
[493] A երևակացութիւն, B երևակութեան
[494] B տրամախոհութեան, AD տրամախոհութիւն
[495] D որոշմունք մտացականին որոշմունք մտացն
[496] B իմացուածք || իմաստք
[497] B յառաջատեսութիւն

Իսկ կալմունք արհեստից է բնութիւն անխնդրելի, անհաս[498] ի ժողովմանն, որ ասի մարդ, յորս[499] ամենայնքն երևելք[500] բաժանին՝ բաղկացելիք[501] և անբաղկացելիք[502] և մակացելիք[503]: Իսկ բաղկացելիքն և անբաղկացելիքն ընդ միմեամբք՝ դասիւ[504] և ստորադասիւ[505] երկմասնաբար: Եւ մակացելիքն ի բաղկացելիսն և յանբաղկացելիսն[506] տրամանկիւնիւք[507] բաղկանան. ուստի կատարեալ լինի վեցեակն: Քանզի են երկու բաղկացելիք ընդ միմեամբք, և մի տրամանկիւնի: Եւ դարձեալ բաժանի մարդն ըստ բնութեան և ըստ ախտի, ըստ հաւատոյ[508], ըստ յուսոյ[509] և ըստ սիրոյ[510]:

***

Արդ՝ յաղագս[511] պիտանացու սեռիցն[512] այսքան ասացեալ, որ ի վերայ ժամանակի արտադրեցան՝ գիրք, կարգք[513], շրջանք, չափք, զաւրութիւնք, ազգմունք: Վասն զսահմանս[514] բնութեանն ամանակի[515] հաստատուն[516]

---

[498] B յանհաս
[499] B յոր
[500] B ամենայնք երևեալ, D ամենեքեան երևեալ
[501] B *չիք* բաղկացելիք – իսկ
[502] B անբաղկացելիք է || անբաղկացելիք
[503] D մակացելիքն || Եւ մակացելիքն
[504] B դասի || դասիւ
[505] B ստորադասի
[506] D *չիք* և յանբաղկացելիսն
[507] AD տրամանգիւնի
[508] A ըստ հաւատո
[509] D *չիք* ըստ յուսոյ
[510] A ըստ սիրո
[511] B ըստ || յաղագս
[512] D պիտացու սեռից
[513] BD կարգ
[514] D վասն զի սահմանս, B վասն սահմանս
[515] BD բնութեան ի ժամանակի
[516] D հաստատ

ունել գշարժմունս[517] շրջադայ[518] մոլորակացն[519], որ են գոյացուցիչք ժամանակի:

Իսկ անմոլարքն՝ նշանակք տեղեաց[520], ընթացից և որոշմանց[521] ժամուց[522], և ի պատահմունս առ ի շեղ շրջադայիցն[523] ընդ նմին շաւիղ տալ զագգումն[524] գիտութեան իմաստասիրին: Այսք են սահմանք բանի առաջնոյ[525] երրեկին[526], որ է Աստուծոյ բանաւորութիւն, զոր և մասնական[527] գոլ ասացին:

II. ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՆԱԿԱՆԻՆ[528]

Իր է՛ տնաւրինական, բարոյական, քաղաքական[529]:

[Յաղագս տնաւրինականին]

Արդ, բաժանի տնաւրինականն[530] ի համեստական[531], ի պատշաճական[532], ի տնտեսական: Զի համեստականն է[533] արգելուլ

517 A ի շարժմունս
518 D շրջակայի
519 B մոլորութեանց || մոլորակացն
520 B նշանակ տեղացն, D տեղեացն
521 A որոշման
522 B ժամուց
523 A շրջագաից, D շրջագայից
524 B զասդումն, D զագտումն
525 A առաջնո
526 B յերրեկին
527 BD զոր իմաստնականն || զոր և մասնական
528 A Յաղագս գործականին, զոր ի վերա կատարելութեան բանի առադրեցին, B Յաղագս գործնականին, զոր ի վերայ կատարեալ բանի առադրեցին, D Իսկ գործնականին, զոր ի վերայ կատարելութեան բանի առադրեցին
529 A բարոական ի հաղաՀական, B բարուական ի հաղական
530 B տնօրինական
531 D ի համեստականն
532 D պատշաճական
533 BD չիք է

ըստ[534] վեհագունին, պատշաճականն է չափաւորելն[535] ըստ ճոխութեան[536], իսկ տնտեսականն[537] է[538] պաճարելն ըստ յաջողութեան: Եւ ասի տնաւրինականն[539] հոգացողութիւն[540] Կազմեանց[541]:

Յաղագս բարոյականին[542]

Բարոյականն[543] է շարադրութեամբ օրինակեալ առ ի վարս առաքինութեան կամ չարութեան:

Եւ առադրի սողնոցն[544] ըստ բնութեան, և գազանացն և անասնոցն[545] ըստ սննդեան[546], և թռչնոցն[547] և լողակացն[548] ըստ սովորութեան[549]:

Եւ ասի բարոյականն[550] խաւսք բարուց զգայուն[551] կենդանեաց[552]: Իսկ բարառնականն[553] է, որ ըստ ժամանակի շարադրի, զի ի բուսոց կամ ի տնկոց առադրեալ աւրինակի:

534 BD չիք ըստ
535 BD չափաւորել
536 A ըստ ճոխութեանն
537 A և տնտեսականն || իսկ տնտեսականն
538 D չիք է
539 B տնօրին || տնօրինականն
540 BD հոգւոց (B հոգոց) ողղութիւն
541 չիք կազքեանց
542 B բարուականին
543 A բարոյական, B բարուականն
544 B սողնոց
545 B գազանաց, անասնոց
546 AD ըստ սնընդեանն
547 B թռչնոց
548 B լօղակացն, D լօղականաց
549 A սովորութեանն
550 A բարոականն, B բարուականն
551 A զգաուն, Զ սգայուն
552 A կենդանեացն, B կենդեաց
553 AB բարառնական

Յաղագս քաղաքականին[554]

Քաղաքականացն նախադրի[555] քերականութիւն[556]: Եւ է քերականութեանն[557] երեք տեսակք[558] հմտութիւն, քերթութիւն, քերթողութիւն[559]: Եւ սա հմտութիւն[560] մասնական իրաց: Եւ մասունք են վեց[561] վերծանութիւն ներկուռ[562] ըստ առոգանութեան[563], զրուցատրութիւն[564] ներգոյս[565] ըստ քերթողական յեղանակս, լեզուաց[566] և հնագէտ պատմութեանց առձեռն բացատրութիւն[567], ստուգաբանութեան[568] գիւտ, համեմատութեանց[569] տեղեկութիւն, դատումն[570] քերթածացն[571]:

Եւ քերթութիւն[572] սա առասպելավարժութիւն[573] ըստ ընտրութեան[574] տառից, ըստ վանկից և ըստ փաղառութեանց, ըստ բառից և ըստ շարադրութեանց[575], ըստ պարզութեան ոտիցն[576] վարման:

[554] B քաղաքականի, D քաղաքականնին
[555] A նախ առադրի || նախադրի (*Հայկ. բառգիրք՝ նախադրի*)
[556] B քերականութք (*պատմով*)
[557] BD քերականութեան
[558] BD տեսակ
[559] B նմաութեան, քերթութեան, քերթողութեան, A քերդութին, քերդողութին
[560] B նմաութին
[561] B վեց՝ ա. (առաջին)
[562] D ըստ ներկոտ
[563] D ոտոգանութին || առոգանութեան
[564] B Բ. (երկրորդ)՝ զրուցատրութեան
[565] BD ըստ ներգոյս
[566] B Գ. (երրորդ) լեզուաց
[567] B բացատրութեանց
[568] B Դ. (չորրորդ) ստուգաբանութեան, D ստուգաբանութեանցն
[569] A համեմատութեան. B Ե. (հինգերորդ) համեմատութեանց, D համեմատութեանցն
[570] B Զ. (վեցերորդ) դատումն, D և դատումն
[571] A քերդածացն
[572] B քերթութեան
[573] B առասպելավարժութեան
[574] BD *չիք* ըստ ընտրութեան
[575] AD շարադրութեան || ըստ շարադրութեանց
[576] B տառից || ոտիցն վարման. D ոտից նման

Եւ քերթողութիւն[577] է ըստ մասանց բանի:

Եւ են մասունք բանի[578] ութ[579] անուն, բայ[580], ընդունելութիւն[581], յաւդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ[582], շաղկապ: Իսկ անուն և բայ կատարեալք են հոլովմամբ և շարադրութեամբ և ըստ յառաջադասութեան[583]: Իսկ այլքն են, որ ընդունելութիւն են[584], և որ յաւդ են[585] ըստ բայի[586] և են, որ նախդիր են[587], և որ փոխանակ են[588] ըստ անուանն[589], և են, որ մակացգ[590] և որ[591] կապ են: Եւ նաւավարի բանն[592] հանդերձ իւրաւք ի[593] ձեռն ձայնի ի վերայ աւդոյ[594]:

Իսկ քաղաքավարականն[595] շարադրի ըստ նախներգութեան, ըստ կազմութեան և ըստ յորդորման:

Եւ բաժանին գլուխք[596] մասանցն ի բաղխոհականն[597], ի յատենականն[598], ի կացըրդականն[599]: Զի բաղխոհականն[600] պատմու-

[577] B քերթողութեան
[578] B *չիք* և են մասունք բանի
[579] D *չիք* ութ
[580] A և բայ
[581] B ընդունելութեան, նախադրութեան
[582] A մակբա
[583] B առաջադրութեան
[584] B ներընդունելութեան || որ ընդունելութին են, D ընդունելութեանն է
[585] BD են որ յօդ են
[586] B ըստ ամենայն բայի
[587] A նախադրեն, BD նախդրեն, *ուղղում ենք՝* նախդիր են,
[588] BD և են որ փոխանակ են, B փոխակ
[589] B ամենայն անուան, D անուան
[590] A մակացդ են, B մակացք են, D մակացդ են
[591] B և են որ
[592] A բան
[593] B իւրովքն, D իւրով
[594] A ուղա, D օդոյն
[595] A քաղաքավարական
[596] A բաժանեն, B բաժանի գլուխն
[597] A բախոհականն, B ի բան || ի բաղխոհականն
[598] A յատենական, D յադենականն
[599] A ի կացրդական, B ի կազրդականն
[600] A բախոհական, B բաղհուականն

թիւն[601] է ըստ ժամանակի և ատենականն[602] է տեղի ըստ տեսլարանի[603], իսկ կացրդականն[604] է գոյել[605] կամ պարսավել[*]:

---

[601] B պատմութեան

[602] D ատենական

[603] B տեղի ըստ ամենայն տեսականի, D տեղի ըստ տեսարանի

[604] A կացրդական, D կացրրդականն, B կազդուր || կացրդականն

[605] B գովեալ և պատուեալ

[*] A Ձեռագրում այս գլխին հաջորդում է նարտասանական մի հատված «Յաղագս միմոսութեան» վերնագրով. «Միմոսութիւն է, կերպարանումն պիտակարար առ ի խաբէութիւն. և լինի ըստ այսոցիկ՝ ի խամութենէ և ի տկարութենէ միով և գիտութիւնք այլոցն ընծեալ չափին, և ի խոովութենէ և ի զուարթութենէ՝ կարծիք այլոցն երկբայացեալ լինի: Եւ ըստ գովին և ըստ դիւրացուցանելոյն խախտումն և շրջումն իմաստիցն լինի. և է ըստ հաղաքական վարուց» (A, էջ 241ա):

BD ձեռագրերում «Յաղագս միմոսութեան» գլխի փոխարեն բերված է «Բովանդակութեան արհեստի, յայլ գրոց» (B) կամ «Յաղագս բովանդակութեան» (D) վերնագրով հետևյալ գլուխը՝ «Զբովանդակութիւն[1] յորժամ լսեցես զհամար աշխարհի տե՛ս զիարդ խառնեալ են[2] երկինքն[3] և երկիր զուգակցութեամբ յերկնից առեալ[4] հրաման զօդս ընդ հող խառնեալ: Արդ՝ հիմնացխս[5] զօրութեամբ, որ է ի մէջ[6] երկնի և երկրի զօրութիւն[7] ջրոյ և յայտնութիւն[8] Հողմոց է, տե՛ս զիարդ ժողովեաց մածոյց զհողին և արգել իւր կանգնեաց[9]: Արդ՝ երբ ինչս պարտ է ասել ջուր: Եւ որ ինչ են[10] աստացոք շանմարան, զօրութիւն, բուռումն: Արդ՝ յայտնապէս աստացոք շանմարան է ի ջուրս[11] յորմէ օդք[12] կլանեն ի դուռս՝ Հրաստին և Բարսաին, սարսափն և հազատն: Եւ եկք[13] սոցա ի ծովէ են, և զնացք ընդ երկինս[14] զշանմարանս նոցա և զնացս նոցա անցեալ[15] յայտ արարից: Ջուր է[16] յայլանիստ շանմարանափակ օդք անհանգիստք[17] եկք նոցա արտաքին ծովէ է և զնացք[18] նոցա յարտաքին ջուրն: Քանզի ծով, որ ծածուկ ոչ ունի՝ արտաքին է, իսկ յորոյ վերայ երկինք է՝ ներքին է[19] և ընդ մէջ ջրոց[20] և երկրի օդք են և բազում անգամ վնասք[21] և շարժմունք[22] առնեն և բազում օգուտ[23] յաղբերս և յերակս ջրոց[24]. Եւ երկինք[25] հաստեալ են[26] ի վերայ երկրի[27]: Այսոքիկ բովանդակութիւնք[28], զոր ասեմ քեզ բովանդակութիւնք ամենեցուն, և տէր բանն աստուծոյ է»:

1 D բովանդակութիւն, 2 B *չիք* են, 3 B երկինք, 4 B առեալ || առեալ, 5 B հիմ. գիս || հիմնացխս, 6 D որ ի մէջ, 7 B զօրութեամբ, 8 B յայտնութեան, 9 D կարգեաց || կանգնեաց, 10 B իցեն || ինչ են, 11 D ի ջուրցս, 12 D օդ, 13 B եք || եւ եկք, 14 D զնացք սոցա յերկինս, 15 B անցել, 16 B ջրախն *ավելված է*՝ ջուր է, 17 D անհանգիստ, 18 D զնաց, 19 B արտաքին է || ներքին է, 20 B ջուրց, 21 B վնաս, 22 B շարժմունս, 23 B անգամ || օգուտ , 24 D երակս ջուրց, 25 B երկինք || և երկինք, 26 B հաստ (*պատված*) || հաստեալ, 27 B երկր. 28 D բովանդակութիւն նոցա || բովանդակութիւնք:

Այս երկու գլուխներն էլ հետսամուտ են և, անշուշտ, կապ չունեն Զենոնի աշխատության հետ:

[ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱԿԱՆԻՆ][606]

Յաղագս սահմանաց և բաժանմանց[607]

Արդ, քանզի պարտ է նախ բաժանման գոլ ապա սահմանին: Զի է բաժանումն նախ՝ ստորական և վերական: Եւ ի տեսակս չորս բաժանի՝ տեսական և մասնական, ի նման և յաննման և գիմագրական...[608] կրկին միաւորութիւն, որ է առանձնական: Իսկ սահմանական բաժանի ի տեսակս չորս տրամաբանութեամբ, այսպէս, թէ՝ զի՞նչ է, և ուստի՞ է, և որպիսի՞ են, և վասն է՞ր է:

Իսկ համառօտ ասրինակի զանազանութեամբ մասանցն, ըստ սոցա բա[ժանի՞] այսպէս: Առաջին[609], զինչ է սահման բաժանեալ յանկին ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց, ի՞ւ զանազանի ստորադրականն, որ ի պատահիցն պարագաի. երկրորդ[610], ուստի՞ յայտ է սահման՝ յագարակայնոցն ցուցմանէ, յորմէ՞ առնու՝ յենթակայէ և կատարմանէ, ո՞ր է կատարեալ սահման և ո՞ր անկատար, կատարեալ է, որ զբնականն ընդունի, ըստ հոլովմանցն անուանցն և բայից, նաւավարիլ առ ի յուսթիւն ինչ իրաց գոլ: Եւ անկատարն է, որ ի պարագաիցն պարագաի, որ նշանակ է անուան կամ բայի:

Քանզի են սահմանք իմաստասիրութեան՝ գիտութիւն էակացս, գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց, խոկումն մահու, նմանութիւն

---

[606] Այս գլուխն իր ենթագլուխներով պահպանվել է միայն ընդարձակ խմբագրության (A ձեռագիր) մեջ:

[607] Ենթագլխի ամբողջական վերնագիրն է «Յաղագս սահմանաց և բաժանմանց, զոր ի վերա բնութեան առաղրեցին»:

[608] Երեք տառի չափ տեղ եղծված է

[609] *բնագրում* Ա. || առաջին

[610] *բնագրում* Բ. || երկրորդ

Աստուծոյ, արհ[եստ] արհեստից և մակացութիւն մակացութեանց, իմաստասիրութիւն՝ սիրելութիւն իմաստութեան, որք են վեց[611]: Եւ դարձեալ, ըստ քառակին բաժանի՝ հուպ ենթակայ՝ անունք և հուպ կատարումն՝ յաւթին, հեռի ենթակայ՝ միտք և հեռի կատարումն՝ ճշմարտութիւն: Եւ ըստ առաւելութեան՝ բան և կեանք, և ըստ ստուգաբանութեանն՝ մարդ և ժողովումն, զոր պիթագորեանքն պատուեն. քանզի էակն ի չորից բաղկանայ, չորս[612] շարժմամբ:

Վասն է՞ր սահմանք իմաստասիրութեան վեց[613]: Առաջին՝ է վասն էակացն, քանզի է, որ ասի և ոչ է, և է, որ ոչ ասի և է. և երկրորդ՝ վասն թ[ո]ւականութեանն, քանզի վեց[614] կատարեալ է երկմաս[ամ]բ և երրեկով և կիսով երկոտասանեկին[615]: Եւ քառակն է զար, յորմէ զլուխք կոճատադարուցն բաղկանան, ըստ արհեստիս:

Եւ են տասնեակք՝ Դ. Ժ. Ճ. Ռ. Ա. Դ. Գ. Բ. Ա.[616]: Եւ ասի մասնական ի տեսակս իմացականին: Իսկ եռակն է կոճատ և նշանակ զարկոճատացն գոլ, և ըստ արհեստիս կատարեալ է ի տեսակացն և ի ճառելոցն:

Եւ դարձեալ սահմանի թիւ եռակի ըստ արհեստիս, զար է լսելն զԱստուծոյ և կոճատ է խաւսելն ընդ Աստուծոյ, իսկ յերկոցունց[617] է քննելն զԱստուած: Ո՞ր է առաջին և ո՞ր վերջին: Առաջին է գիտութիւն էակաց, որք շուրջ են զգայութեամբք, և գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոցն դրութեանց, քանզի ոչ ամենայն Աստուած պաշտաւն և ամենայն մարդ պաշտաւնեայ:

Երկրորդ է խզումն մարդկան ախտի կենաց և ըմբռնել ի պարզն և յանախտականն[618], և նմանութիւն Աստուծոյ կարիւն և գիտականաւն և բարեաւն. զնման ըստ մարդկաին բնութեանս է, և ոչ ճշմարիտ Աստուած

[611] Զ. || վեց:
[612] *բնագրում* Գ. || չորս
[613] Զ. || վեց
[614] Զ. || վեց
[615] ԲԺ. անեկին || երկոտասանեկին
[616] Այս թվաշարքը թվում է աղավաղված, թերևս եղած լինի Ա. Ժ. Ճ. Ռ. Դ. Գ. Բ. Ա և կամ Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ.:
[617] յերկուցունց
[618] յանախտական

գոլ, քանզի Աստուծոյ կարելն և գիտելն և բարեբարելն յանբաւս է, իսկ մարդկաինն՝ ընդ բաւականաւ, զի միայն կամելն և յաւժարելն և ընտրելն առ ի նմանութիւն Աստուծոյ բաղկանալ է:

Երրորդ է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց: Արդ, արհեստիցն է գործ[ն]ականն, իսկ արհեստ՝ բանականն, և մակացութեանցն է տեսականն, իսկ մակացութիւն՝ իմացականն, և այսպէս՝ իբրու թագաւոր թագաւորաց և Աստուած աստուծոց: Եւ իմաստ[ասիր]ութիւն՝ սիրել զիմաստութիւն, ստուգաբանութեամբ: Քանզի ամենայն իմաստասիրութիւն եռակի բաժանի՝ ի լսել իբրև զԱստուծոյ, և խաւսել իբր ընդ Աստուծոյ, և քննել իբրև զԱստուած:

Իսկ գիտ սահմանացն է ըստ բանական արհեստիցն և պատճառ է հնարական միտք աշխարհիս, որ է Աստուած:

Յաղագս ապացուցի և տրամաբանութեան

Ապացուցականն ի շարաբանութենէ բաղկանայ, իսկ շարաբանութիւն ի նախադասութենէ և ի ստորադասութենէ, իսկ նախադասութիւն և ստորադասութիւն՝ յենթակաէ և ի ստորոգելոյ, և ենթակայն՝ ի ներքոկացեաց[619] դիմաց, իսկ ստորոգեալս է զայլմեցն, որ ի վերոյն անցեալ լինի շարասութիւն:

Իսկ տրամաբանականն տարբերի հարցմամբ և պատասխանեաւ՝ հակադարձաբար: Եւ զանազանի հարցականն ձայնիւ և կարճաբանութեամբ, և ասի քննական, տեղական, ուսումնական: Իսկ պատասխանականն զանազանի ներածութեամբ և շարաբառութեամբ, և ասի՝ ցուցական և հաստուցական և հաւանական, և դարձեալ՝ [ըստ] ստորասութեան և ըստ բացասութեան, և ասի հասարականն՝ հակադրութեամբ ճառեցելովք:

Յաղագս իմաստակութեան և վերլուծութեան

Իմաստակութիւն է ըստ համանուն և ըստ փաղանուն, ըստ այլ և ըստ

[619] *բնագրում* և ի ներքոկացեաց

այլ թ[ո]ւոյ, ըստ այլում և ըստ այլում ժամանակի և զաւրութեան, ըստ այլապէս և ըստ այլապէս շարժման և տեղոյ:

Իսկ վերլուծական է քակտումն և որոշումն հիւթից և մասանց և ձայնից:

Այսք են բանական արհեստին տեսակք, որք ի բնութեան կարգեցան[620]*:*

[ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԱՆԻՆ][621]
Յաղագս խնդրականի և դիտաւորականի[622]

Խնդրականին չորք[623] *են տեսակք: Զի է, որ ձայն մի և իրն զանազանեալ, և է որ իրն մի և ձայնն, և է, դարձեալ, որ հասարակ՝ ի ձայնն և իրն, և է որ յարակցեալ վանգիւ մի մի կամ փաղառութեամբ: Եւ ասի սեռ և տեսակ, զի սեռ է ըստ ենթիւ զանազանութեան իրին և ձայնին, և տեսակ է ըստ հասարակ ձայնին և իրին. իսկ թիւ՝ ըստ յարակցութեան վանգին կամ փաղառութեան:*

Իսկ դիտաւորականն բաղկանա յիրէ և յիմացուածէ և ի ձայնէ և ի գրեցելոյ: Քանզի իրն է անիրին նշանակ, և իմացուածն իրին, իսկ ձայնն իմացուածին, և գրեցեալքն ձայնից են նշանակք: Եւ ասի պարզ և շարադրեալ, զի է, որ իմացուածն և ձայնն, և է, որ ձայնն շարադրեալ և իմացուածն:

---

620 *բնագրում* կարգեցաւ

621 Գլուխն ամբողջությամբ պահպանվել է միայն բնդարձակ խմբագրության մեջ: B և D ձեռագրերն ունեն միայն երկրորդ ենթագլուխը՝ «Յաղագս անմեկնելի որոշման և ստորոգութեան էակացս»

622 բնագրում ենթագլխի վերնագիրն է՝ «Յաղագս ի ձեռն խնդրականի, զոր ի տեսականէն առադրեցին»

623 Դ. || չորք

Յաղագս անմեկնելի[624] որոշման [և] ստորոգութեան էակացս[625]

Անմեկնելի[626] *որոշման երկու են տեսակք՝ գոյացութիւն և պատահումն*[627]*. քանզի ուր գոյացութիւն՝ և պատահումն*[628]*, և ուր պատահումն՝ և գոյացութիւն*[629]*:*

Այլ ըստ նախկնի[630] *և ըստ բարձմանն*[631] *որոշի*[632] *գոյացութիւն ի պատահմանէ. և դարձեալ, է որ*[633] *ըստ քառակին*[634] *զանազանի, զի է, որ զենթակայէ ասի*[635] *և է, որ յենթակայում է*[636]*. և է, որ ոչ յենթակայում է և ոչ զենթակայէ*[637] *ասի, ըստ առաջին գոյացութեանն*[638]*:*

Իսկ ստորոգութիւն էակացս առաջինն[639] *ի չորս բաժանի՝ ի սեռ և ի*[640] *տեսակ, ի տարբերութիւն և ի յատուկ:*

Եւ սեռ եղակի ասի՝ ըստ սերման[641] *գոյացութեան*[642] *և ըստ յոլովման*[643]

---

624 D անմեկնելի է

625 B *չիք* ստորոգութեան էակացս, D ի ստորոգութիւնն || ստորոգութեան էակացս

626 D անմեկնել

627 A *ստա և ամենուրեք՝* գոյացութիւն, B պատահմունք

628 B գոյացութիւն է, և որ պատահումն է

629 D և ուր պատահումն է և գոյութիւն || քանզի - գոյացութիւն

630 B ըստ նախ տեսակն է || ըստ նախկնի

631 B ըստ բաժանմանն, D ըստ բաղձմանն || ըստ բարձմանն

632 B որոշ է

633 D *չիք* որ

634 D ըստ քանակին || ըստ քառակին

635 BD ասէ

636 B *չիք* և է, որ յենթակայում է

637 D որով յենթակայում է և ոչ զենթակայէ ասի || որ յենթակայում ասի, B ենթակայում, B ասէ

638 D յառաջին գոյացութեան

639 B առաջին

640 ՁՁ, Դ. || չորս, D ի [չորս] || և ի

641 B ըստ ամենայն սերման

642 A գոյութեանն || գոյացութեան

643 D ըստ ղովման

ազգի, յորմէ[644] ցուցանի աճումն, և ըստ ինքեան[645], բաժանի ի տեսակս հինգ՝ եռակարար, որք[646] ասին տեսակացոյնք[647] և սեռականացոյնք[648], որք է գոյացութիւն[649], մարմին և անմարմին, կենդանի և անկենդանի[650], զգայուն և անզգայուն[651], բանական և անբան, տեսակ և անհատ[652]:

Եւ տեսակն բաժանի քառակարար. զի է, որ ի ներքոյ[653] սեռի դասի[654], և է, որ սահմանաւ[655] ունի զսեռն և սեռն զնմանէ իբրև զենթակայէ ասի: Եւ դարձեալ, սահմանի[656] տեսակն և սեռն[657] ի զինչէումն և ըստ զոյգ յոլովմանն, և է, որ ի վերնագոյնն[658] տեսականայ և ի ներքինսն սեռանայ:

Իսկ տարբերութիւն[659] եռակի բաժանի՝ ի գոյացութիւն[660] և ի[661] պատահումն, անջատական[662] և անանջատական[663]. է, որ անեղծանելի[664] և է, որ դժուարաշարժելի. և համարակարար[665] ասին վասն ընդդիմակացն[666]:

---

[644] A որ ի միոյ, D որ միոյ || յորմէ
[645] A ըստ ինքեանց
[646] D որ || որք
[647] A տեսագոյնք || տեսակագոյնք
[648] A եռականագոյնք, D *չիք* և սեռականագոյնք
[649] B գոյացութիւնք
[650] D անկենդան
[651] A անզգաուն, B զգայուն և անզգայուն
[652] A անհատ, B է անհատ || և անհատ
[653] AB ներքոյ || ի ներքոյ
[654] B դասէ
[655] A սահմանինի, B սահման անուանի || սահմանաւ ունի, D ի սահմանաւ, B զսեռն || սեռն
[656] A սահմանէ
[657] D սեռ
[658] B ի վերնագոյնումն, D ի վերնագոյն || ի վերնագոյնսն
[659] B տարբերութեան
[660] A գոյութիւն || գոյացութիւն
[661] D ի || և ի
[662] D անջատականն
[663] AD անանջատականն
[664] B անեղծանելի է
[665] D համարակարարին || համարակարար ասին
[666] B դիմակացն || ընդդիմակացն

Իսկ յատուկն քառակարար ասի, զի է որ միայնում, և է որ ամենին[667] և դարձեալ[668], է որ միայնում և ամենին[669], և է որ հակադարձին, ըստ կատարելութեան յատկի[670]:

Իսկ[671] երկրորդ ստորոգութեանցն ի տասն բաժանի՝ ի սեռս[672], որ է գոյացութիւն[673], որակ, քանակ, առինչ, ուր, երբ, կալ, ունել[674], առնել, կրել:

Եւ են մասնականք, որ ըստ շարամանութեան կատարին, զի լինի ստորասութիւն կամ բացասութիւն[675] և արդար կամ սուտ[676], և ասին համարակարար և յատկայէս:

Արդ, երրորդն[677] իսկացոյն և տիրացոյն[678], նախկին և կատարեալ ըստ ամենայնի[679], իսկ այլքն ամենայն պատահք[680] ասին: Եւ բաժանի յերկուս՝ առաջինն[681] է անհատ և առաջին թուեալ[682], և երկրորդն չորս է՝ տեսակն[683] և սեռն, ըստ զոյգ յոլովութեան[684], և յատուկ է ըստ միայնումն: Եւ քանակին[685] է, որ տարորոշ է[686], և է, որ շարունակ[687], և այնք[688], որ դիր

---

[667] BD ամենայնի || ամենին
[668] B *չիք* և դարձեալ - ամենին
[669] D ամենայնին || ամենին
[670] BD յատկին
[671] B իսկ է
[672] B սեռ, D ի սեռ || ի սեռս
[673] A գոացութիւն, B գոյութիւն
[674] B ունի || ունել
[675] D բացութիւն || բացասութիւն
[676] B արդ պատկանաւոր || արդար կամ սուտ և
[677] BD Գ. [երեք] են || երրորդն
[678] D տիրացոյն
[679] A ամէն || ամենայն
[680] B պատահմունք
[681] B անաչիմն || առաջինն, *թերևս ուղղելի՝* անահ իմն
[682] B թուել
[683] A երկրորդ Գ. է տեսակս, B երկրորդ, չորրորդ է տեսակ, D երկրորդն է տեսակն
[684] AB յոլովութեանն
[685] AB հառակին, D հառակի || հանակին (*ուղղում ենք ըստ Արիստոտելի «ստորոգութեանց» հայերեն բնագրի*)
[686] D տարոշ է
[687] BD շարունակէ || շարունակ
[688] B այն

ունին. և տարորոշ է բան և թիւ. շարունակ է գիծ[689], մակերևութիւն[690], մակարդակ[691], տեղի, իսկ ժամանակ՝ բան և թիւ[692] յաւէտ դաս ինչ ունել, և յատուկ է ըստ ամենայնին[693]:

Եւ առընչին[694] չորք են[695] տեսակք[696] ունակութիւն, զգայութիւն[697], մակացութիւն[698], դրութիւն[699]:

Իսկ նիստ և ընդկողմանումն[700] և ընդկայութիւն՝ յարանունաբար[701] ի դրոցն[702] ասին և ի յատկէ ըստ հակադարձին[703]:

Եւ որակն քառակի ասի՝ ըստ ունակութեան և ըստ տրամադրութեան[704], ըստ զաւրութեան[705] և ըստ ախտի, ըստ դառնութեան և ըստ քաղցրութեան, ըստ ձևոյ[706] և ըստ կերպի[707]: Եւ յատուկ է ըստ միայնումն[708] և ըստ ամենայնին[709]:

---

689 D գիծն
690 BD մակերևոյթ || մակերևութիւն
691 B և մակարդակ, *«տեղի» բառից հետո 22 ունին՝* «և ժամանակ և է որ դիրն (B դիր) ունին, գիծ, մակարդակ, տեղի (A տեղ), մակերևութիւն», *նախորդ տողերի աղավաղված կրկնությունն է*
692 AD թիւն
693 D ամենայնի
694 A առաջինն, B առին, D յառաջին *ուղղում ենք՝* առընչին
695 B չորեք D Գ. [չորք] || չորք են
696 B տեսակ ունակութեան
697 A զգաութիւն
698 B մակացութեան
699 B դրութեան
700 BD ընկողմանումն
701 BD յարանուն և բարի || յարանունաբար
702 AD ի գրոցն || ի դրոցն
703 B *չիք* ըստ հակադարձին – ունակութեան
704 B ըստ տրամատութեան || տրամադրութեան
705 B ըստ զօրութեան ըստ զօրութեան
706 A ձևո
707 D կրպի
708 A միայնումն || ըստ միայնումն, B ըստ միայնոում, D ըստ միայնում
709 B ըստ ամենայնում, D ըստ ամենայնումն || ըստ ամենայնին

Իսկ ուրն և երբն[710] ըստ քանակին[711] ասին, իսկ կալն և ունելն[712] ըստ առինչունակին[713], և առնելն և կրելն՝ ըստ որակին:

Յաղագս ընդդիմակայիցն[714]

Ընդդիմակայքն քառակաբար ասին: Զի է որ առինչունակապէս, և է որ ներհակաբար, և է որ ունակաւրէն և պակասաբար, և է որ ստորասութեամբ և բացասութեամբ. և մին առանց նախկնի ընդդէմ միմեանց: Իսկ պատճառ մակադրութեան նախերգութեամբ դասի: Զի է ըստ ժամանակի, որ հնագոյն և վաղագոյն ասի քան զնորն, և միտք նախկին քան զիմացմունս, և տեսութիւնք քան զտեսուածս, և տաղք քան զփաղաղութիւնս, և մին քան զերկուսն, և ասի առանց հակադրութեան: Իսկ մասնական վերաբերութիւն[715] առանց հակադրութեան և առանց հոլովման ժամանակի, այլ ըստ միում մասին ժամանակի լինելութիւնքն վերաբերին, ըստ հոլովման անուան տեսակի ածանցիցն, ըստ յեղանակ վարդապետութեան:

Ըստ շարժման բաժանի ի տեսակս վեց, որ է՝ լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, այլայլութիւն, ըստ տեղո փոփոխութիւն: Եւ ասի ըստ դիմակաութեան և ըստ մակադրութեան և ըստ մասնական վերաբերութեան: Արդ, են զանազանիչք սոքա առաջին և երկրորդ ստորոգութեանցն՝ սեռի և տեսակի, տարբերութեան և յատկի, գոյացութեան և քանակի, առինչունակի և որակութեան[716]:

---

710 B երբն || և երբն
711 D ըստ քանակի
712 A ունել
713 B առինչունակին ասին
714 *ընագրում* Յաղագս զանազանութեան, *ուղղեցինք՝* Յաղագս ընդդիմակայիցն
715 բերաբերութիւն || վերաբերութիւն
716 «Որակութեան» բառից հետո ձեռագիրն ունի հետևյալը՝ «Այսք են տեսական արհեստին տեսակք, որ յէականութեանն կարգեցաւ: Կատարեցաւ Բ. որդ մասն արհեստիս, որ ասի աստուածախաւսութիւն»: Կարծում ենք, հավելված է թարգմանչի կողմից:

ՅԱՂԱԳՍ ԻՄԱՑԱԿԱՆԻՆ[717]
[Յաղագս չարի և բարւոյ][718]

... Եւ դարձեալ զանազանի նախդասութեամբ ըստ սկզբանն բարին և ըստ կատարածին չարն: Իսկ որ ընդ մէջ ի բաղկանաց [՞] ըստ չորս[719] իմն տեսակս տարրերի՝ ըստ ներածութեանց և ըստ ձայնից և ըստ ներգործութեանց, որ առի մեղք կամ արդարութիւն:

Չորրորդ[720], վասն զի է, որ բնութեամբ է բարի և չար և է, որ պիտակարար: Բնութեամբ է, որ զբնակ[ան]ութիւնն անեղծանելի և զժուարափոփ[ոխ], զի թէև զփոփոխումն առնու, անդրէն ի նոյն՝ ի բնական սահմանն հաստատի: Իսկ պիտակարար է, որ ոչ բաղկանա բնականութիւն սահմանի, և դարձեալ զիրաշարժ ի պատահմունս ենթակային:

Արդ՝ բնաւորեցաւ բարին բնութեամբ, իսկ չարն առանց բնութեան և սահմանի: Զի բարին, թէ ի չարն յեղաւ, ոչ միայն չար կա[յ], այլ ի նոյն դարձեալ փոփոխի բնութեամբ: Իսկ չարին զփոփոխումն առնուլ բարի՝ միանգամայն բաղկացաւ բնութեամբ:

Հինգերորդ, զի ըստ տեսակին բաժանման՝ բարին ի գոացութենէ և չարն ի պատահմանէ ստորոգեցաւ: Եւ դարձեալ ի չորս տրամատեալ լինի. զի է, որ բարի, և է, որ չար, և է, որ չար և բարի, և է, որ ոչ չար և ոչ բարի:

Արդ, զի են ի սոցանէ, որ կրին ի ներքուստ և վարին արտաքուստ: Քանզի բարոյն և չարին իմանալի է ի շարժմանէ և ի նիւթո առնուլ զբաղկացութիւն:

Եւ որոշեալ զանազանի նախկնութեամբ շարժումն ի նիւթոյ, որ բարոյն է գոյացուցիչ, իսկ նիւթ յետոյ քան զշարժումն՝ չարին է բաղկացուցիչ:

Իսկ գոյացութիւն ըստ չորից իմն է խառնից՝ ի հրամանէ և ի վարմանէ

[717] Սույն գլխից համառոտ խմբագրության մեջ պահպանվել են միայն վերջին՝ «Յաղագս ունայնի» և «Յաղագս անբաւի» ենթագլուխները, վերնագրել ենք մենք:

[718] վերնագրի փոխարեն ձեռագիրը ունի՝ «այլ բան»

[719] «չորս»-ի փոխարեն թերևս պետք է լիներ «երիս»

[720] բնագրում Դ. կարդում ենք «Չորրորդ»

և ի սաստէ և յերևմանէ: Այսորիկ սահմանեալ երկակի որոշմամբ. հրաման է պատճառ վարման՝ յորմէ բարի առի, իսկ սաստերն պատճառ երևման՝ յորմէ չար առի: Եւ դարձեալ հրամանն հաստուկ և անխառն ի միջի նոցայ և յանսահման մնալով, իսկ վարմանն տեղիանալ ի սաստերէն, և երևմանն ի սաստերէն զորոշումն առնուլ, ի նոյն սահման էակին զբաղկացութիւնն առնլով սեռիւք և տեսակաւք և ելիւք և ծնընդիւք և ձևաւք և գունովք:

Արդ, յայտնեցաւ չարն եղծանելի և որոշիչ բարոյն, իսկ բարին համայն անապական և ընդունակ յեղման չարին:

Յաղագս կատարեալ գիտութեան բանի

Կատարեալ բան է ի մասանց և յանհատից և ի տեսակաց և ի սեռից և ի թուոց: Քանզի իւրաքանչիւր ոք սոցա զկատարելութիւն առնուն, իսկ համանգամայն սոքա կատարելագոյն առին:

իսկ որ ի միմեանց բաղկանան, անկատարք գոն և ոչ կատարեալ բանք:

Առաջին[721], իսկ ըստ այլոցն խնդրոց, ի ժամանակի[722] ըստ շրջադարձութեան մասանցն՝ Ա. Բ. Գ. Ե. Գ. ԺԲ. ԻԴ. Ե. Է. ԺԱ. ՂԱ. ՅԿԵ. Ծ[Բ][723]. ԺԲ. Գ. ԺԵ. ԺԹ. ԻԸ. Ժ.[*] առնուն[724] զկատարումն իւրաքանչիւր սահմանքս: Իսկ համանգամայն սոքա, ի վերագոյն հատածն կատարելագոյնք առ[ի]ն

[721] Բնագրում Ա. || առաջին

[722] զի ժամանակի || ի ժամանակի

[723] Ծ[Բ]-ի միավոր թվանշանը հազիվ է նկատվում

[*] Այս աղճատված թվաշարի ընդհանուր իմաստը պարզ է: Այստեղ նշված են տոմարական այլևայլ միավորներ: Այսպես, առաջին թվանշանները (որ հավանորեն պետք է սրբագրվեն՝ Ա. Բ. Գ. [Դ]. Ե. Զ. [Է]. ձևով) շաբաթվա օրերն են, ԺԲ. – օրվա «մասերը», ԻԴ. օրվա ժամերը, Ե. - «նոնոս» (տես՝ Ա.Ն. Շիրակացի, Տիեզերագ. և տոմար, էջ 70), Է. – շաբաթվա օրերի քանակը կամ «Եօթներեակ», ԺԱ. - արևգակնային և լուսնային տարիների տարբերության օրերով, ՅԿԵ. – տարվա օրերի քանակը, ԾԲ. – տարվա շաբաթների քանակը, ԺԲ. - ամիսների քանակը, Գ. (գուցե՞ Դ.) - եղանակները, ԺԵ. - «ընդիքտիոն», ԺԹ. – իննետասաներեակ», ԻԸ. – «քառնութեակ»:

[724] Առնուն || առնուն

և][725] զանգրէն զատութիւնն առնուն, որ ՇԼԲ. Գ.... ակ[726], որ ի միմեանցն գոյանան, ըստ հոլովման բանիցն և անուան հատիցն անկատարք ստորոգին:

Երկրորդ[727], զանազանի և ըստ սկզբան և կատարածի կատարելական բանն: Քանզի ըստ կատարածին կատարեալք ասին ամենայն[728] լինելոցքս և եղեալքս: Եւ ոչ ըստ հոլովմանցն կատարիլք, այլ յիւրաքանչիւր սահմանս, որ ինչ եղելոցն էր՝ կատարեցաւ, և որ ինչ լինել հարկի՝ զկատարումն առնու: Այլ է ընդ մէջ և ամանակ ըստ ներկայումն: Արդ, ըստ վերատեսութեան երկակի սոքա զկատարելագոյն բաղկացուցանեն բան: Իսկ ըստ սկզբանն ոչ է կատարեալ, զի որ ներածեն, կամ ասեն, կամ ներգործեն ի մէջս բաղկանայ և կամ ոչ է իսկ մարտուցեալ:

Երրորդ[729]. արդ, ըստ բնութեան սահմանական ի յենթակայէ և ի կատարմանէ, ըստ հույ և ըստ զանազանութեան քառակին իւրաքանչիւրովքն կատարեալք ասին, իսկ ընթանուր հասածքն՝ իննակի սահմանացն գերակատարելով: Եւ ըստ արարչականին է, որ միայն զտեսակն գոյացուցանէ անկատար գոլով և ոչ կատարեալ բան: Քանզի[730] ըստ էակին է ի նախադ[աս]ու[թին]ան յէականացն բաժանումն ի ստորոգութիւն, իսկ յիւրաքանչիւրսն կատարեալ և յամենայնէն կատարելագոյնն:

Չորրորդ[731]. իսկ ըստ բաժանման պատահմանցն վասն ստույգ պատահին և յենթակայումն գոլ, անկատար եղով և ոչ կատարեալ:

Հինգերորդ[732]. իսկ ըստ վեհագոյն և ըստ ներարհեստիս է քառակն, յորմէ ամենայնքն[733] զբաղկացութիւն առեալ սահմանեցան, յիւրաքանչիւրսն սոքա կատարեալք ասին: Իսկ ըստ անբաւին անխառնութիւն գերազանցեալ ասի: Եւ դարձեալ յերիցն ևս, որք ի քակտումն և յեղծումն դիմեալ միշտ

[725] «ա[ին և]» ջնջված է

[726] «Գ.... ակ»՝ ջնջված է

[727] Բ. || Երկրորդ

[728] ա|| ամենայն

[729] Գ. || Երրորդ

[730] Գ. Քն.գի (Երրորդ Քանզի || Քանզի

[731] Դ. || Չորրորդ

[732] Ե. || Հինգերորդ

[733] ամն || ամենայնքն

անկատար և ոչ կատարեալ բան:

Արդ, երևեցաւ կատարելութիւն բանի եաակի տեսութեամբ ըստ մասանց, որ յիւրաքանչիւրսն սահմանին. իսկ համանգամայնքն կատարելագոյնք, և որք ի միմեանց իմանին գոյացութիւնք, անկատար գոլ և ոչ կատարեալ բան: Քանզի գերազանցեալն ի կատարմանն բաղկանա և ոչ յանկատարէն, զի անկատարքն կատարելականին են մասունք, որ շարադրին:

Այսքան է կատարեալ գիտութեան բան:

Յաղագս ժամանակի[734]

Ժամանակ է ոլորումն[735] ըստ ամենայն մասանց, եաակի և առընդդէմ խաղացումն տրամադրութեամբ, չափք բերմանց իւրաքանչիւրոցն և ըստ յեղման շրջագաիցն, յորս թիւքն բաղկացեալ յանգին, որ է ԵԸ. ԺԲ. ԻԳ. ԷԷ. ԺԲ. ՂԱ. ՅԾԴ. ԺԱ. ԺԲ. Գ. Ե. Ը. ԺԵ. ԺԹ. ԻԸ. Ժ. ՃՂ. ՆԾՋ. ՇԼԲ. ԺԳ. ՁԴ. այսչափ են թիւք շրջագաիցն, որ կարգաւք ցուցեալ լինին՝ մասունք, ժամք, աւուրք, շաբաթք, ամիսք, յեղանակք, ամք, շրջանք, դարք, կատարմունք ժամանակաց: Իսկ ըստ նոցա և թիւք պատշաճին, քանզի են, որք ի միմեանց բաղկանան, և են, որք սկսանին, և այլք զկատարումն առնուն: Եւ դարձեալ որք կատարինն այլոցն մէջ բաղկանան կամ ոլորաք: Իսկ իննեատասներեակն քանութիւք կատարեալ[736] համանգամայն տեսակաւքն, որք են շրջանակք. ԺԳ. և ՁԴ. ամք եկամուտ, որ ոչ դասի ի զգալիս կենցաղական վարուց աշխարհիս: Այլ ըստ կատարման երեքտասանիցն[737] լրումն և քակտումն բաղկանա հասանուտ և զանազան տեսակի բոլորիս, և յանհասանուտ և յանզանազան տեսակն չլինել հարկի, որ է անժամանակ:

Առաջին[738]. իսկ ըստ այլոցն բաժանի ժամանակ ի տեսակս հինգ, որ է սկիզբն բոլորին և կատարած բնութեանց և զ[արո]վթինք յեղմանց և

[734] վերնագրված է՝ «Յաղագս ժամանակի, առանձին»

[735] «ոլորումն» բառի «Ն»-ն շատ աղոտ է նկատվում

[736] ԻԸ. իմ կատարեալ

[737] ԺԳ. իցն || երեքտասանիցն

[738] Ա. || Առաջին

չափք միջոցացն և ... մանցն[739] *հատածք: Արդ, որք հետևին այսմ անժամանակ ասի:*

Երկրորդ[740]. *իսկ բնութեան ըստ արարչին չորիւք*[741] *զանազանի տեսակաւք, որ են ածանցականք յիւրաքանչիւրոցն ենթակայիցն, որք ասին համանգամայնք: Եւ ոչ նախկին կամ վերջին ժամանակ ինչ բաղկանա: Այլ իւրաքանչիւր սահմանքն զգայութեանցն*[742] *ժամանակաւ յայտնին ըստ զաւրութեանց խառնից կամ կրից: Զի լուծումն զգայութեանցն յերկոսին բաղկանա: Զի և որ ըստ այսոցիկ ոչ Է անժամանակ ասի:*

Երրորդ[743]. *իսկ ըստ Էականին ի բաժանմունս պատահից բնաւորեցաւ գոլ, ըստ շարունակութեան առկա գրից և դասաւորութեան: Զի շարունակ է ըստ ինքեան, ի վերա պատահիցն և գոյացութեանցն: Իսկ վերագոյնքն քան զսոսա անժամանակ ասին:*

Չորրորդ[744]. *իսկ բաղկացութիւն ժամանակի ըստ քառակին Է՝ ի նիւթից և [ի] շարժմանէ ի սահմանս ունայնին վարիլ կառուցմամբ, ի հրամանէ անեղին բնութեան:*

Արդ, երևեցաւ ժամանակ եաւկի տեսութեամբ ըստ բոլորին, զի է որ ըստ յերկարման առեալ վասն ծնընդից անհատիցն բազմութեանց և զատութեանց վարման պատահիցն: Իսկ յառաջ քան զբոլորն և զկնի՝ անժամանակք ասին և ոչ այսք բաղկանան:

Յաղագս սկզբան և կատարածի[745]

Քանզի է սկիզբն և կատարած՝ նիւթական, տեսական, հիմնական, գործնական: Եւ բաժանի ըստ արարչութեանն և ժամանակի: Քանզի սկիզբն, ըստ արարչութեանն և կատարած ըստ ժամանակի: Զի է սկիզբն,

[739] «... մանցն» բառի սկզբի 4 տառերը ջնջված են
[740] Բ. || Երկրորդ
[741] Դ.-իւ || չորիւ
[742] «զգայութեանցն» բառից հետո գրված և ջնջված է «յերկոսին բաղկանա»
[743] Գ. || Երրորդ
[744] Դ. || Չորրորդ
[745] Ձեռագրում վերնագրված է «Յաղագս ածխաւութե [աստուածախաւսութեան] սկզբան և կատարածի, առանձին

որ կատարած է, և է կատարած, որ սկիզբն, և է սկիզբն, որ [ոչ] կատարած է, և Է որ ոչ կատարած և ոչ սկիզբն: Իսկ ըստ այլոցն է խնդրոց. զի ի բնութեան ըստ քառակին զանազանի, զի է, որ հուպ սկիզբն և հուպ կատարումն, և է, որ հեռի սկիզբն և հեռի կատարած: Եւ բաժանի սկիզբն ըստ առաւելութեան և կատարած ըստ ստուգաբանութեան:

Առաջին[746]. *իսկ յէականութեանն զանազանի սկիզբն ըստ գոյացութեան և կատարածն ըստ պատահման:*

[Երկրորդ]. և դարձեալ ընթանուր և մասնական գոլով, զի է, որ սկիզբն է և է, որ կատարած յենթակաումն, և է, որ սկիզբն և ի նմին կատարած, և է, որ ոչ սկիզբն և ոչ կատարած:

Երրորդ[747]. *զանազանի և ըստ շարժման և ըստ նիւթո: Քանզի սկիզբն ըստ շարժման նախ էին գոլով, իսկ կատարած ըստ նիւթի վերջին գոլ:*

Քանզի զսանս բոլորն ըստ քառակին երկզիմի բաժանմամբ՝ ի նիւթոյ և ի շարժմանէ և յունայնէ, որ է սկիզբն և կատարած, և ընդ մէջսն՝ յեղումն ըստ շարժման և ըստ նիւթի: Եւ ամանակ եաւկի տեսութեամբ՝ յարաձգական, գերակատար, անորիշ, որ է ըստ ունայնի հոլովման չափուցն: Իսկ ըստ անբաւին Էակ անսկիզբն, անկատարած, անյեղլի, անամանակ, աններկա, անանցեալ, անապառնի. և է դարձեալ գոյացուցիչ սկզբան և կատարածի և որ ընդ մէջն են բաղկացութիւնք:

Արդ, երևեցաւ սկիզբն և կատարած եաւկի իմացութեամբ՝ զի է, որ անսկիզբն Է և է, որ անկատարած: Իսկ սկիզբն և կատարած ընդ մէջսն բաղկաց[ան] յոքնակի հատուածիւք:

Յաղագս բնութեան[748]

Բնութիւն է սահմանական և արարչական: Սահմանական է բնական[749] *և հաստատուն, իսկ արարչականն է անբնական և անհաստատ: Քանզի բնականն ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց, և անբնականն է*

[746] Ա. || Առաջին
[747] Գ. || Երրորդ
[748] վերնագրված է «Յաղագս բնութե. առանձին»
[749] բանական || բնական

շարժումն տեսակացն և յեղումն նմանից և աննմանից: Եւ թիւք հանգէտ ի պարզաբար անհատսն բաղկանա: Իսկ դարձեալ, է բնական, որ սահմանի ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց և է, որ սահմանագրի անուամբ և է, որ առաւելու ըստ նուազութեան բառիցն և պակասի ըստ յաւելման:

Իսկ[750] *ըստ էակին զանազանի սահմանականն ըստ գոյացութեան և արարչականն ըստ պատահման: Եւ դարձեալ, է, որ սահմանական է, և է, որ արարչական, որ յենթակայում, և է, որ սահմանական և ի նմին արարչական, և է դարձեալ, որ ոչ սահմանական և ոչ արարչական:*

Իսկ բաղկացութիւն բնութեան[751] *է ըստ քառակին: Քանզի անբաւն է պարզ և անշարադրելի, և նիւթ և շարժումն՝ խառն և խուռն շարադրութեամբ, իսկ ունայնն՝ ընդ մէջսն, պատճառ որոշման գոլով:*

Արդ, է բնութիւն եռակի բաժանմամբ, զի է, որ պարզ է ըստ սահմանականին, և է, որ շարադրելի ըստ արարչականին, դարձեալ, է, որ ընդ մէջսն կցորդին: Զի շարադրելին ի պարզէն բաղկանա, իսկ պարզն ի շարադրականէն զերևումն առնու:

Յաղագս էականութեան[752]

Էականութեան երկու [են] տեսակք՝ զգալի և իմանալի: Զի ի զգալոյն[753] *անզգալին և յիմանալոյն անիմանալին: Քանզի գոյացութիւն յանզգալոյն առի, իսկ պատահումն յանիմանալոյն գոլ: Եւ է գոյացութիւն ընթանուր և պատահումն մասնական: Եւ դարձեալ, պատահումն է ընթանուրն իսկ գոյացութիւն մասնական:*

Առաջին[754]*. և զանազանի ըստ քառակին:*

Քանզի անբաւ ընթանուր առի ըստ գոյացութեան, և ունայն՝ մասնական ըստ պատահման, իսկ նիւթ՝ մասնական ըստ գոյացութեան, և շարժումն ընթանուր առի ըստ պատահման:

[750] Ա. [առաջին] Իսկ || Իսկ
[751] բնութիւն || բնութեան
[752] Վերնագրված է «Յաղագս էականութե, առանձին»
[753] զգալոյն
[754] Ա. || Առաջին

Երկրորդ[755]*. իսկ գոյացութիւն էականութեան ըստ քառակի բաժանի: Քանզի անբաւն է առի, առանց սկզբան և դադարման, և շարժումն և նիւթ էակ, ի ձեռն սկզբան և կատարման: Իսկ ունայն ոչ է առի ոչ էակ, այլ հոլովի ըստ պիտանացուին անուամբ և բախ:*

Արդ, երևեցաւ էականութիւն եռակաբար:

Զի է, որ հասողական է ըստ զգալոյ և անիմանալոյ և, դարձեալ, որ յերկոցունց[756] *ըստ գոյացութեան և ըստ պատահման:*

Յաղագս շարժման և նիւթի[757]

Արդ, ամենայն[758] *ինչ շարժումն, ի շարժմունս նիւթ և, դարձեալ, ամենայն ինչ նիւթ և ի նիւթոն շարժմունք: Այսորիկ իրք և իմացեալք, տրամաբանեալք և ներգործեալք: Զի որ շարժումն է՝ և նիւթ, և որ նիւթ է՝ և շարժումն: Քանզի գոյացուցիչք են միմեանց: Զի նիւթին կիզումն և ցրտումն և խոնաւումն և ցամաքումն ի շարժմանէ բաղկանա, իսկ*[759] *շարժմանն լինելն և ապականելն, աճելն և նուազելն, այլայլելն և փոփոխելն ի նիւթո բաղկանա:*

Առաջին[760]*. և զանազանի ի շարժումն յենթականայն ըստ նօսրութեանն յունայնի: Իսկ նիւթին յենթականայն՝ ըստ թանձրութեանն շարժման, և յունայնէն զերևումն առնու:*

Երկրորդ[761]*. իսկ ըստ անբաւին է անշարժ և աննիւթ, զի անխառն առի: Քանզի շարժումն և նիւթ յանշարժէն և յաննիւթէն բաղկանա, իսկ դադարումն և ի նիւթէ և ի շարժմանէ, որ է առակաբար առացութեամբ:*

[755] Բ. || Երկրորդ
[756] յերկուցունց
[757] Վերնագրված է «Յաղագս գոյացուցիչ և մշտաբուխ Համակին, որ է ածաբանական [աստուածաբանական] շարժման և նիւթի, առանձին»
[758] ա || ամենայն
[759] Դ. [չորրորդ] իսկ || Իսկ
[760] Ա. || Առաջին
[761] Բ. || Երկրորդ

Յաղագս ունայնի[762]

Ունայն ասի անիր անիմացուածն[763] անբան և աններգործեալ[764], և է որոշումն ժամանական և հանրական մասց: Զի է ի խառնս ընդ նիւթի և ընդ շարժման: Իսկ արտաքոյ՝ անբաւ ասի ի բաւականէ բոլորին[765], իսկ[766] ըստ անբաւին[767] բաւականեալ, այսպէս եռակաբար ասի: Իսկ[768] բաղկացութիւն ունայնի[769] է ըստ այսոցիկ՝ զի ի գոյէ և յիրէ անգոյ և անիր ասի. Եւ ի մշտակացութենէ[770] և ի յաւիտենականէ[771] անցական[772] և անբնական[773]: Այլ ոչ որպէս ոմանք կարծեցին թէ իցէ ինչ[774], այլ է ոչինչ[775], քանզի և կարծելն իսկ ընդունայն[776] և անվայր[777] ասի:

Յաղագս անբաւի[778]

Անբաւ է[779], որ ամենայնիւ է անբաւ, որ ասի[780] բոլոր, անման և

[762] A Յաղագս ունայնի, առանձին, BD ունայնին, D Յունայն
[763] BD անիմացուած
[764] B աններգործելի, D աններգործել
[765] B բոլումն իսկ ըստ անբաւականելով || բոլորին - բաւականեալ
[766] D *չիք* իսկ
[767] A բաւին || անբաւին
[768] BD առաջինն, A Ա. (առաջին) իսկ || իսկ
[769] D ունայնին
[770] B մշտակցութենէ
[771] D յաւիտենականութենէ
[772] D առանցական || անցական
[773] A անբնակ, B անբանական
[774] B իցեն ինչ այլ և է
[775] D *չիք* այլ է ոչինչ
[776] D ունայն || ընդունայն
[777] B ընդվայր || անվայր
[778] B *չիք* անբաւի
[779] D Անբաւին || Անբաւ է
[780] B ասէ

անտեսակ: Եւ է միտք և խորհուրդք, իմաստք[781] և գիտութիւնք և տեսութիւնք ընդհանուր[782] և անչափ[783]:

Իսկ ըստ այլոցն[784] է[785] ըստ վեցեկին[786] և ըստ չորրեկին[787]: Քանզի անբաւ է ոչ բարի և ոչ չար, ոչ սկիզբն և ոչ կատարած, ոչ շարժումն և ոչ նիւթ: Ըստ այսոցիկ անել[788] ասի, զի ոչ յայլմէ և ոչ յինքենէ[789] ունել[790] զգոյութիւնս[791]: Եւ[792] դարձեալ, ըստ երկրորդին[793] է անբաւ՝ գերազանցագոյն, գերազանցագունիցն[794], անժամանակագոյն անժամանակագունիցն, բնականագոյն բնականագունիցն, էագոյն էագունից[795], ունայնագոյն ունայնագունից[796], անբաւագոյն անբաւագունից[797]:

Ըստ այսոցիկ անհասագոյն ասի յէակացս, զի սահման քննութեանցս յանհունսն զանցեալ գտանի: Զի ըստ այսոցիկ ոչ գոյ հասումն բնութեան երկրորդ անբաւին:

[781] B իմաստ
[782] B ընբհանուր
[783] BD անչափք
[784] B այլոցն || ըստ այլոցն
[785] BD *չիք* է
[786] BD վեցեկի
[787] B չորեկի, D չորսեկի || ըստ չորրեկին
[788] D աղեղ || անել
[789] D ինքենէ
[790] B ունի
[791] B զչգոյութիւնս, «զգոյութիւնս դարձեալ» *բառով ավարտվում է D ձեռագրի բնագիրը*
[792] B *չիք* Եւ
[793] A ըստ Բ.-ին || ըստ երկրորդին
[794] B գերազանցագունին
[795] B էականագոյն || էագոյն էագունից
[796] A անունայնագունից, *ուղղում ենք*՝ ունայնագունից, B անունայնագունին || ունայնագոյն ունայնագունից
[797] «անբաւագոյն - անբաւին» հատվածի դիմաց B-ն ունի «անբաւագոյն անհաս ի յէակացս, զի ոչ քննի», որով և ավարտվում է B ձեռագրի բնագիրը:

***

Իսկ ըստ չորրեկին միայն ծանաւթութիւն արարածոցն զարարիչն, ի բանաւորութենէ Աստուծոյ առ ազգս հրշտակաց և մարդկան: Եւ աստուածաբանէյն երիս աստուածս իւրաքանչիւր առանձնաւորութեամբ, զի է, որ ծնող ասի, և է, որ ծնունդ, և է, որ ելող: Այլ այս ըստ մարկաին բնութեան երևի, յաղագս գթութեան հաւր և մարդասիրութեան որդո և ողորմածութեան հոգոյն: Քանզի երեք են՝ մի են բնութեամբ, կամաւք և արարչութեամբ: Նոյնպէս և ըստ հրշտակաց փառաւորեալ երիս անձինս՝ զարարիչ և զհաստիչ և զկազմիչ, որում աւեն սուրբ, սուրբ, սուրբ միանգամայն տէր զաւրութեանց: Փառք և պատիւ և գոհութիւն անեղին և անհասին և մշտնջենաւորին այժմ և յաւիտենից յա[ւիտեանս]:

Կատարեցան վեցեակքն, որ ի միմեանց սահմանին, և չորրեակքն որով ճառիցն մանականք ասին, և զլրումն էառ երկոտասանեակն մասամբքն, և գերազանցեալ գոա յանհատիցն, ըստ իւրաքանչիւր մասանցն տեսակաց և սեռից: Քանզի է խորհուրդ ամենայն եռակի և իմացմունք ընթանուր արհեստ փիլիսոփական և սահմանք ուսմանց, և թողլով որ ըստ աշխարհիս են տումիչք արհեստ անյաղթ փիլիսոփաից:

Աստուած, Աստուած, Աստուած, փառք քեզ այժմ [և] յա[ւիտեան]:

ՀԱՅ ԵՒ ԱՐԱԲ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ*

Հայ-արաբական մշակութային կապերն ունեն դարաւոր պատմութիւն: Որպէս Մերձաւոր Արեւելքի հին եւ բարձր մշակոյթի տէր ժողովուրդներ՝ հայերն ու արաբները, մէկ հազարամեակից աւելի, քաղաքական եւ տնտեսական սերտ ու անմիջական յարաբերութիւններ են մշակել միմեանց հետ՝ փոխադարձաբար հարստացնելով իրենց գիտութիւնն ու գրականութիւնը մեծարժէք գրաւոր յուշարձաններով: Դարաւոր այդ կապերի ուսումնասիրութիւնը գիտական մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում լինելով հայ եւ արաբ ժողովուրդների այսօրուայ բարեկամութեան եւ համագործակցութեան նախապատմութիւնը: Մեր երկու ժողովուրդների պատմաբանների պատուաւոր խնդիրն է հին ձեռագրերից վեր հանել այդ կապերն արտացոլող յուշարձանները եւ ըստ արժանւոյն լուսաբանել հայ-արաբական բարեկամութեան փառաւոր էջերը: Մենք ընթերցողների ուշադրութիւնը կը հրաւիրենք մշակութային դարաւոր այդ կապերն արտացոլող մի քանի փաստերի վրայ:

Հայ միջնադարեան պոէզիայի զարգացմանը մեծապէս խթանել է արաբական հարուստ չափածոյ գրականութիւնը: ԺԱ. դարի անուանի հայ բանաստեղծ-մատենագիր՝ Պահլաւունեաց իշխան Գրիգոր Մագիստրոսը յայտնում է, որ բանաստեղծական արուեստի չափ ու կշռոյթի գաղտնիքներին ինքը հաղորդակից է եղել արաբ բանաստեղծների ստեղծագործութիւնների խորազնին ուսումնասիրութեամբ. «Եւ թէ ուստի այսմ արհեստիս (այսինքն՝ բանաստեղծութեանը) եղեաք տեղեակ» հարցին նա

* «Էջեր գրականութեան եւ արուեստի», Պէյրութ, նոյեմ. 1966: Ակնարկը թարգմանվել է նաև արաբերեն և լույս տեսել տեղի «Ալ Ախպար» շաբաթաթերթում:

անվարան պատասխանում է. «չիմայէլականացն գտեալ զսա բաղում ջանիւ կրթեցաք նախ զրոյն եւ լեզուին եւ ապա արհեստին»: Մագիստրոսը նշում է, որ արաբական գրականութեան զարգացմանը մեծապէս նպաստել է այն հանգամանքը, որ տաղերի ստեղծագործութեամբ զբաղուել ու զբաղւում է ողջ ժողովուրդը, նոյնիսկ պատանիները, որոնց ամուսնութեան հրաման է տրուել այն ժամանակ միայն, երբ նրանք սովորել են ինքնուրոյն բանաստեղծութիւն յօրինելու արհեստը. («Եւ թէ ոչ մանկունք նոցա ստեղծանին նորագոյն ինչ եւ կատարեալս պատկանաւոր շարամանութեամբ զչափ եւ զկշիռ, ոչ նոցա հրամայեն տալ ամուսին»):

Արաբական գրականութեան մասին այսպիսի բարձր կարծիք մշակուած միջավայրում, բնականաբար, կատարուելու էին նաեւ թարգմանութիւններ: Մեզ յայտնի առաջին գեղարուեստական ստեղծագործութիւնը, որ թարգմանուեց հայերէն՝ համաշխարհային գրականութեան սքանչելիքների՝ «Հազար ու Մէկ Գիշերներ» հէքիաթաշարի գրուածներից մեկն էր «Պղնձէ Քաղաքի Պատմութիւնը»: Այդ հետաքրքրաշարժ ու խորիմաստ հէքիաթն առաջին անգամ թարգմանուեց հայ նշանաւոր քաղաքական գործիչ Դաւիթ Կիւրապաղատի (մեռած՝ 1000 թ.) պատուէրով, իսկ երկրորդ անգամ 1222 թուականին, Առաքել արեղայ Անեցու կողմից: Նոյն այս ժամանակաշրջանում թարգմանուեցին նաեւ «Հազար ու Մէկ Գիշերներ»-ի այլ գրուածներ՝ «Պատմութիւն Մանկանն եւ Աղջկան», «Պատմութիւն Փահլուլ Թագաւորի», որոնք դարձան միջնադարեան հայ ընթերցողների ամենասիրած հէքիաթները: Մի շարք հայ անուանի բանաստեղծներ այդ հէքիաթների համար գրեցին չափածոյ կաֆաներ՝ իմաստասիրական ընդհանրացումների հակամիտող քառեակներ, որոնք իրենց հերթին մեծապէս նպաստեցին այդ ստեղծագործութիւնների տարածմանը:*

Այսպիսով, հայերն առաջին ժողովուրդն էին, որ սիրեցին ու թարգմանեցին արաբական գեղարուեստական արձակի գլուխ գործոց հէքիաթաշարի մի քանի արժէքաւոր գրուածներ: Եւրոպայում այդ հէքիաթների առաջին թարգմանական փորձերը կատարուեցին միայն ԺԸ. դարի սկզբներին:

Գեղարուեստական հայ միջավայրում մեծ ընդունելութիւն գտան նաեւ

* [Հանդէս Ամսօրեայ, 1958, թիւ 1-4, էջ 21-48, նաեւ՝ Բանբեր Մատենադարանի, թիւ 6 (1962), էջ 249-251] – Խմբ.:

Ջուհիի (Խոջա Նասրէտտինի նախատիպարի) անուան շուրջ հիւսուած զուարճարան մանրավէպերը, որոնց գոյութեան մասին վկայութիւններ են պահել Ժ. դարից: Տաղանդաւոր հայ առակագիր Վարդան Այգեկցուն վերագրուող առակագրքերում տեղ են գտել նաեւ Ջուհիի մասին պատմուող մանրավէպերից մի քանիսը:

Հայ-արաբական գեղարուեստական գրականութեան առնչութիւններն ուսումնասիրող բանասէրը անհրաժեշտաբար մանրակրկիտ քննութեան նիւթ պէտք է դարձնի նաեւ ձեռագիր տաղարանների մէջ առկայ եւ առայսօր անհետ մնացած հայատառ արաբերէնի մի քանի տասնեակ տաղերն ու բանաստեղծութիւնները: Այդպիսի ուշագրաւ տաղերի ժողովածուներ կան Զմմառի վանքի մատենադարանում, Պր. Վ. Սեթեանի անձնական գրադարանում եւ ձեռագրական այլ հաւաքածուների մէջ:

Հայ-արաբական մշակութային կապերի միւս արգասաւոր բնագաւառը բնագիտութիւնն է եղել՝ միջնադարեան իր առումով, որ ընդգրկել է իր մէջ բժշկագիտութիւնը, դեղագիտութիւնը, ալքիմիան, տիեզերագիտութիւնը եւ այլ յարակից գիտութիւններ:

Հայ նշանաւոր բժշկապետներ Մխիթար Հերացին, Ամիրդովլաթ Ամասիացին, Գրիգորիսը եւ բազմաթիւ այլ բժիշկներ իրենց մեծարժէք աշխատութիւնների մէջ ընդարձակ քաղուածքներ են կատարել արաբական աշխարհահռչակ գիտնականներ Աբու-Ալի Իբն-Սինայի (Ավիցենա), Իբն-Ռուշդի, Ալ-Ռազիի եւ այլոց գործերից: Միջնադարեան հայ դեղագիտարանների ուսումնասիրութիւնը առանց արաբական ախրապատինների գրեթէ անհնար է:

Հայ հեղինակները ոչ միայն օգտւում էին արաբական գիտական մտքի յուշարձաններից, այլ եւ կատարում էին ամբողջական երկերի կամ նրանց կարեւոր մասերի թարգմանութիւններ: Իբն-Սինայի «Կանոն»-ի շատ մասեր թարգմանուել են հայերէն ԺԲ.-ԺԳ. դարերում: ԺԳ. դարի վերջերին թարգմանուել են նաեւ անասնաբուժական, ձիաբուժական, ալքիմիական ու տիեզերագիտական կարեւոր բնագրեր: Քիչ չեն եղել նաեւ այն բնագէտ-գիտնականները՝ արաբ եւ ասորի, որոնք բնակուելով Կիլիկեան հայկական պետութեան սահմաններում սովորել են հայերէնը եւ իրենց աշխատութիւնները շարադրել միջին հայերէնով (Կիլիկեան Հայաստանի խօսակցական լեզուով): Այդպիսի նշանաւոր մի գիտնական էր Աբուսայիդը, որ ԺԲ.

դարի վերջերին, Գրիգոր Տղա Կաթողիկոսի պատուէրով շարադրեց բժշկագիտական արժէքաւոր մի աշխատութիւն, որ մեզ է հասել բազմաթիւ ընդօրինակութիւններով՝ ընդարձակ ու համառօտ խմբագրութեամբ*:

Հայ մշակոյթը նոր գրաւոր յուշարձաններով հարստացնելու գործում մեծ վաստակ ունի նաեւ Իշաղ ասորի քահանան, որ ստեղծագործել է ԺԳ. դարի առաջին կիսամեակում: Նա հեղինակ է շատ ուշագրաւ մարդակազմութեան մի ձեռնարկի, ասորերէնից հայերէնի է թարգմանել Միքայէլ Ասորու նշանաւոր «Պատմութիւնը», ինչպէս եւ աստուածաբանական երկեր: Իշաղ քահանայի հայագիտութիւնը կատարեալ չէր: Հայերէնով շարադրած նրա աշխատութիւններն ու թարգմանութիւնները ոճական խմբագրման էին ենթարկւում Վարդան վարդապետ Արեւելցու եւ այլ հայերի կողմից:

Հարեւան ու այլակրօն ժողովուրդների հետ բարի-դրացիական յարաբերութիւններ ստեղծելու եւ մշակութային կապերն ամրապնդելու ջերմ ջատագովներից էր տաղանդաւոր բանաստեղծ ու գիտնական Յովհաննէս Պլուզ Երզնկացին: Իր խրատներից մէկում նա պատուիրում է իր հայրենակից երիտասարդներին՝ լինել խաղաղասէր, սիրով ունկնդրել իմաստուն մարդկանց՝ առանց ազգի ու դաւանանքի խտրութեան. «Որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին եւ յիմաստութենէ շահեսցին՝ առանց հակառակութեան» - պատուիրում է նա: Յովհաննէս Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» խորագրով աշխատութեան մէջ, որ հայ իմաստասիրական գրականութեան ուշագրաւ յուշարձաններից է, շարադրուած են խիզախ մտքեր: Ըստ Երզնկացու եւ նրա ձեռքի տակ եղած արաբ իմաստասէրների աշխատութեանց, նիւթը յաւերժական է, ըստ բնական պայմանների փոխում է իր գոյավիճակը, սակայն երբեք չի ոչնչանում:

Սրանով, անտարակոյս, չեն սպառւում հայ-արաբական գրական առնչութիւնները փաստող յուշարձանները: Բազմաթիւ այլ թարգմանական յուշարձաններից, յիշատակենք նաեւ մահմետականութեան սուրբ գրքի՝ «Կորան»-ի հայերէն թարգմանութիւնը, որի գոյութեան հետքերը նշմարւում են ԺԴ.-ԺԵ. դարերի հայ դաւանաբանական գրականութեան մէջ. ամբողջական ու լրիւ պահպանուած թարգմանութիւնը կատարուած է ԺԷ.

* [Այժմ այն հրատարակված է պրոֆ. Ստ. Վարդանյանի աշխատասիրությամբ] – խմբ.:

դարի կէսերին, հայ գիտնական Ստեփանոս Լեհացու կողմից*:

Մեր շօշափած նիւթի առնչութեամբ անհրաժեշտ է խօսք ասել նաեւ այն բացառիկ նշանակութեան մասին, որ ունեն արաբ պատմագիրների ու աշխարհագիրների երկերը՝ հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական կեանքի խորազնին ուսումնասիրութեան համար, ինչպէս եւ հայ պատմիչների՝ Սեբէոսի, Ղեւոնդ Երէցի, Յովհաննէս Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու եւ բազմաթիւ այլ հայ պատմագիրների երկերը՝ արաբական խալիֆաթի պատմութեան համար:

Հայ-արաբական մշակութային կապերը, անշուշտ, միակողմանի չեն եղել: Արաբական գրականութիւնն իր հերթին հարստացել է հայերէնից կատարուած թարգմանութիւններով, որոնցից մեծ արժէք են ներկայացնում Ագաթանգեղոսի «Պատմութեան» եւ Ս. Հռիփսիմեանց կոյսերի վկայաբանութեան արաբերէն թարգմանութիւնները: Շատ աւելի ուշագրաւ է, սակայն, հայ միջնադարեան «Աղուէսագիրք» կոչուող առակագրքի թարգմանութիւնը, որ իրագործուել է ԺԷ. դարում: Այս թարգմանութեան խորագիրն է՝ كتاب امثال الثعالب

Այս թռուցիկ ակնարկն իսկ բաւական է փաստելու համար, որ հայ ու արաբական եղբայրական ժողովուրդները դարեր շարունակ համագործակցել են միմեանց մշակոյթի տարբեր մարզերում, փոխադարձաբար հարստացնելով միմեանց գրական գանձանակները նոր եւ արժէքաւոր ստեղծագործութիւններով:

Բեղմնաւոր մշակութային այդ կապերի մանրազնին ուսումնասիրութեան շնորհակալ աշխատանքն առաջ է մղուելու արաբ ու հայ գիտնականների համատեղ ջանքերով:

Պէյրութ, 28 մարտ 1966

* [Հարցի ուսումնասիրությամբ զբաղվել են Բաբգէն Կյուլեսերյանն ու Արմանույշ Կոզմոյանը] – խմբ.:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ[*]

Սիրիայի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Դամասկոսի ճարտարապետական հրաշալիքներից է Յովհաննէս Մկրտչի անուամբ այն հին եկեղեցին, որ Ուալիտ Ա խալիֆի (705-715 թթ.) օրօք վեր է ածուել մզկիթի ու յայտնի դարձել Օմայանների մզկիթ *անունով: Սրա բակում կանգուն են երեք գմբեթարդ կառոյցներ, որոնցից ուշագրաւը շրջանաձեւ ու սիւնաշար այն շինութիւնն է, որ յայտնի է եղել* قبة الخزانه *(գանձատուն) անունով:*

ԺԹ դարի վերջերին արեւելեան երկրներում հետազօտական նպատակներով շրջագայութիւններ կատարող գերմանացի գիտնական Դ. Հ. Ֆոն Զոդենի ուշադրութիւնն է գրաւում Դամասկոսում շրջան առած այն աւանդութիւնը, ըստ որի վերոյիշեալ գմբեթայարկ շինութեան մէջ վաղնջական ժամանակներից պահւում են քրիստոնէական ձեռագրեր, որոնք կարող են այնտեղից դուրս բերուել միայն սուլթանական յատուկ հրամանագրով: Գերմանիայի արտաքին գործոց նախարարութեան միջամտութեամբ հնարաւոր է լինում ստանալ պահանջուող հրամանագիրը՝ գանձատունը բացելու եւ այնտեղ պահուող ձեռագրերը ցուցակագրելու մասին[1]:

Աշխարհացունց գիտական յայտնագործութիւններ ակնկալող գիտնականները մի պահ յուսախաբ են լինում. «Գանձատանը» յայտնաբերւում են բազմաթիւ հնամաշ պարկեր, որոնցից դուրս են բերւում մզկիթի տնտեսական գործարքներին վերաբերող մեծաքանակ փաստաթղթեր՝ անկանոն

---

[*] «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. Գ, Պէյրութ, 1972, էջ 9-54:

[1] Դամասկոսի թանգարանի աշխատակիցներից մէկի հաղորդած տեղեկութեամբ այդ գործին աջակցել է նաեւ Գերմանիայի Ուիլհելմ կայսրը, որ 1898 թ. եղել է Մերձաւոր Արեւելքում:

դաստուրութեամբ, հատուածներ Ղուրանից, արաբերէն եւ թուրքերէն կրօնական գրուածքներ եւ այլն: Սրանց հետ խառնիխուռն վիճակում գտնւում են նաեւ անձրեւաջրից խիստ վնասուած, ցեցակեր ու մկնակեր առանձին թերթեր՝ գրուած յունարէն, ասորերէն, լատիներէն, հին ֆրանսերէն, եբրայերէն, ղպտիերէն, վրացերէն, եւ հայերէն լեզուներով: Ինը ամիս տեւող ծանր աշխատանքից յետոյ յաջողւում է նախնական տեսակաւորում կատարել եւ առանձնացնել այն ձեռագրերն ու պատառիկները, որոնք կարող էին ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնել: Հնարաւորութիւն է ստեղծւում նաեւ ընտրուած ձեռագրերը ժամանակաւորապէս Գերմանիա փոխադրել՝ աւելի հանգամանալից ուսումնասիրութեան նպատակով, որի համար հրաւիրւում են համապատասխան մասնագէտներ: Հայերէն պատառիկների բովանդակութիւնը պարզելու աշխատանքը յանձնարարւում է դր. Լեւոն Գեանջեցեանին, որը որոշ փորձ եւ հմտութիւն ունէր հայերէն ձեռագրերի նկարագրութեան ասպարէզում[2]:

Ամփոփելով տարբեր լեզուներով ձեռագրերի ուսումնասիրութեան արդիւնքները, Գ. Հ. Ֆոն Զոդենը Բրուսական թագաւորական գիտութիւնների ակադեմիայի 1903 թ. Յուլիսի 30-ին կայացած նիստին ներկայացնում է մի գիտական հաղորդում: «Այս,- եզրակացնում է նա,- առաջնակարգ մի գանձ չէ, որով փոխհատուցուելու էին գանձատան գաղտնիքը բացայայտելու համար գործադրուած միասնական ջանքերը: Սակայն իր ամբողջութեան մէջ հին մատենագրութեան այս բեկորները ինքնատիպ եւ նոյնիսկ հմայիչ են: Հնամաշ ու պատկառանք ազդող այս պատառիկներն իրենց ծալքերում որքա՜ն շատ մշակութային շերտեր են թաքցնում»[3]:

[2] Հետագայում Լ. Գեանջեցեանը, Ն. Ֆինկի ընկերակցութեամբ կազմեց ու հրատարակեց Տիւբինգէնի համալսարանի 109 հայերէն ձեռագրերի գիտական ցուցակը (տե՛ս Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek, Von Franz Nikolaus Finck und Levon Gjandchezian, Tübingen, 1907.

[3] Bericht über die in der Kubbet in Damaskus gefundenen Handschriften Fragmenten, Von D. H. Freiher von Soden (Sitrungsber, d. Kön. Preuss. Akademie d. Wiss, XXXVIII – XL, 23, 30, Յուլիս. 1903, էջ 825-830): Այս հաղորդման մասին տես նաեւ Մեսրոպ վրդ. Տէր-Մովսիսեանի համառօտ ծանուցումը, տպագրուած «Արարատ» ամսագրի 1940 թ. Յուլիս-Օգոստոսի համարում (էջ 639):

Մեզ, բնականաբար, հետաքրքրելու են Ֆոն Զոդենի հաղորդման այն մի քանի տողերը, որոնք վերաբերում են Դամասկոսում յայտնաբերուած հայկական պատառիկներին: «Դրանք,- ասուած է նրանց մասին,- գրուած են Ժ. դարից ոչ ուշ եւ ըստ բովանդակութեան մասեր են պարունակում Աստուածաշնչից, եկեղեցական գրքերից, եկեղեցու սուրբ հայրերի երկերից, սրբոց վարքերից, գրական նմուշներից եւ մի նամակի սեւագրութիւնից: Այս վերջինը շատ արժէքաւոր է լեզուի պատմութեան ուսումնասիրութեան համար: Ամենաընդարձակը մի պատառիկ է Սաղմոսարանից, որ բովանդակում է 20 սաղմոս: Ամենաարժէքաւորը Մատթէոսի աւետարանից պահպանուած վեց թերթերն են, որոնք նման են Մոսկուայի Լազարեան ճեմարանում պահուող հայերէն հնագոյն ձեռագիր աւետարանին»[4]:

Նախնական այս ուսումնասիրութիւնից յետոյ հայերէն ձեռագրերի այս պատառիկները, Դամասկոսում յայտնաբերուած ձեռագրական միւս նիւթերի հետ միասին վերադարձուել են ըստ պատկանելույն եւ այժմ, ինչպէս ասացինք արդէն, պահւում են Դամասկոսի պատմական թանգարանում: 1966 թ. փետրուար ամսին՝ Երուսաղէմ մեկնելու ճանապարհին սոյն յօդուածն ստորագրողներից Լ. Խաչիկեանը նրանցից մի քանիսը տեսնում է ցուցադրուած թանգարանի անկիւններից մէկում (ասորերէն պատառիկների հետ միասին): Տունդարձի ճանապարհին, կրկին այցելելով թանգարան, նրան յաջողւում է վարչութեան սիրալիր թոյլտուութեամբ համառօտակի նկարագրել այդ պատառիկները եւ քաղուածքներ կատարել դրանցից: Մանրակրկիտ ուսումնասիրութիւն կատարելու համար, սակայն, անհրաժեշտ էր ձեռքի տակ ունենալ պատառիկների միքրոպատճէնները, որ Մաշտոցեան Մատենադարանի համար պատրաստել է տալիս Դամասկոսի հայկական Թարգմանչաց դպրոցի տնօրէն ու մեր բարեկամ Տիրան Ակինեանը: 1967 թ. փետրուարին ստանալով այդ պատճէնները եւ լուսանկարել տալով դրանք, Լ. Խաչիկեանն ու Ա. Մաթեւոսեանը ձեռնամուխ են լինում հայերէն պատառիկների գիտական նկարագրութեանը. վերծանման աշխատանքի ծանրութիւնն իր վրայ է վերցնում Ա. Մաթեւոսեանը:

[4] Նոյն տեղում, էջ 828:

***

Հայերէն պատառիկները Դամասկոսի թանգարանում խմբաւորուած են 7, 10 եւ 11 համարների տակ. պէտք է ենթադրել, որ այդ համարաշարքը յառկացուած է հէնց «Գանձատնից» յայտնաբերուած ձեռագրական նիւթերին: Մեր ձեռքի տակ եղած միքրոպատճէնների վրայ յստակ կարդացւում են արաբական թուանշաններով գրուած գոյքահամարներ եւ էջահամարներ. ըստ այդմ N7 միաւորի տակ խմբաւորուած են 15 մագաղաթեայ թերթ-պատառիկներ, որոնց վրայ կարդացւում են 1-4, 27-46, 70-71, 77-78, 97-98 էջահամարները, N 10 միաւորի տակ պահւում են 17 թերթ-պատառիկներ, կրելով իրենց վրայ 1-19, 23-26, 33-40, 57-58, 69-70, 147-148 եւ 151-156 էջահամարները, իսկ N 11 միաւորի տակ գտնում ենք ընդամէնը 2 հայերէն պատառիկ՝ 193-194 եւ 198 էջահամարներով[5]:

Այս էջահամարները զուրկ են գիտական արժէքից. միեւնոյն ձեռագրին պատկանող պատառիկներն այստեղ ոչ միայն չեն համախմբուած ըստ հերթականութեան, այլեւ յաճախ դրուած են տարբեր համարների տակ: Միեւնոյն ձեռագրերի մաս կազմող թերթերը խմբաւորելուց եւ ըստ բովանդակութեան դասաւորելուց յետոյ պարզեցինք, որ 34 թերթ - միաւոր պարունակող պատառիկների այս հաւաքածուն փաստօրէն բաղկացած է 13 մագաղաթեայ ձեռագրերի մասունքներից եւ մէկ նամակի բեկորից (գրուած թղթի վրայ):

Այսքա՞ն էին արդեօք «Գանձատնից» յայտնաբերուած հայերէն պատառիկները, թէ՞ նրանց մի մասը, մի պահ մատչելի դառնալով գիտական աշխարհին, անյայտացել են կրկին: Այս հարցն ինքնին ծագում է, երբ բաղդատում ենք մեր ձեռքի տակ եղած պատառիկները 1903 թ.-ին դրանց մասին արուած հպանցիկ հաղորդման սուղ տուեալների հետ: Գիտենք արդէն, որ Լ. Գեանջեցեանը ուսումնասիրած պատառիկների մէջ տեսել է 20 սաղմոսներից հատուածներ պարունակող մի ձեռագրի պատառիկ, իսկ մեր ձեռքի տակ այսօր ունենք տարբեր ձեռագրերից ընկած 3 պատառիկներ,

[5] Պէտք է ենթադրել, որ NN 7, 10 եւ 11 միաւորների միւս էջահամարները դրուած են ուրիշ լեզուներով ձեռագրական պատառիկների վրայ, չբացառելով եւ այն հնարաւորութիւնը, որ նրանց շարքում եղել են նաեւ հայերէն պատառիկներ, որոնք այժմ բացակայում են կամ անմատչելի են մեզ:

որոնք պարունակում են հատուածներ ընդամէնը 7 սաղմոսներից: 1903 թ.-ին, հայերէն պատառիկների մէջ տեսել են Մատթէոսի Աւետարանից ընկած 6 թերթ, բայց այսօր ունենք այդպիսի 5 թերթ միայն (մէկը բացակայում է): Այլ տուեալներ չունենք, սակայն սրանք էլ բաւարար են Դամասկոսի հայկական պատառիկների մեր ձեռքի տակ եղած պատճէնների ամբողջական լինելու մասին կասկածներ ունենալու համար: Թերեւս պարզուի հետագայում, որ խնդրոյ առարկայ պատառիկներից մի քանիսը անցեալ դարավերջին Գերմանիա տարուելով Դամասկոս չեն վերադարձուել կամ էլ՝ Դամասկոսի թանգարանում խառնուել են ուրիշ պատառիկների կամ տարաբնոյթ թանգարանային նիւթերի հետ:

Ե՞րբ եւ ինչպէ՞ս է ստեղծուել Օսմանեանների մզկիթի շրջափակում գտնուող «Գանձատան» ձեռագրական հաւաքածուն՝ հայերէն ձեռագրերի մեզ հետաքրքրող պատառիկների իր բաժնով: Ճի՞շտ է, արդեօք, Ֆոն Զոդենը, ենթադրելով որ դրանք գոյացել են դարերի ընթացքում, ի հետեւանք հայկական եկեղեցիների փակման եւ եկեղեցական գրականութեան բռնագրաւման:

Այս հարցին հիմնաւոր պատասխան տալու համար նախ անհրաժեշտ է որոշել ձեռագրական բեկորների գրութեան ժամանակը:

Պատառիկների նկարագրութեան բաժնում, հնագրութեան ընձեռած տուեալների հիման վրայ, փորձել ենք որոշել իւրաքանչիւր պատառիկի գրութեան մերձաւոր ժամանակը: Ամփոփելով այդ տուեալներն այստեղ կարող ենք ասել, որ պատառիկներից հնագոյնները գրուած են Ը. դարում (կրկնագիր պատառիկը կարող է նոյնիսկ Ե դարից լինել), իսկ ամենանորը ԺԳ. դարի կէսերին շարադրուած նամակի բեկորն է, գրուած կիլիկեան գաւառաբարբառով: Շատ հին են նաեւ յունարէն, ասորերէն, լատիներէն եւ միւս լեզուներով պատառիկները (լատիներէն պատառիկներից նորագոյն նմուշը ԺԲ. դարով է թուագրուած):

Այս տուեալները թելադրում են մտածել, որ «Գանձատան» ձեռագրերի հաւաքածուն ստեղծուել է ԺԳ. դարում, իսկ այդ ժամանակաշրջանում հազիւ թէ տեղի ունեցած լինէին հայկական եկեղեցիների փակման ու ծիսական գրականութեան բռնագրաւման պետական մարմինների կողմից ծրագրուած գործողութիւններ:

Մերձաւոր արեւելքի պատմութեան մէջ ԺԳ. դարը եւ, յատկապէս, այդ

դարի երկրորդ կիսամեակը յայտնի է որպէս մեմլուքեան պետութեան հզօրացման եւ խաչակիր իշխանութիւնների տկարացման ու վերացման մի ժամանակաշրջան: Սալահ-էտ-տինի գլխաւորութեամբ դեռեւս նախորդ հարիւրամեակում ծաւալուած յաղթական պատերազմները շարունակւում են նաեւ այս շրջանում. 1268 թ.-ին գրաււում է Անտիոքը, 1289 թ.-ին՝ Թրիփոլին, իսկ 1291 թ.-ին խաչակիրների վերջին հանգրուանը Մերձաւոր Արեւելքում՝ Աքրա (Պտղոմայիդ) բերդ-նաւահանգիստը: Ալ-Աշրաֆ Սալահ-էտ-տին Խալիլ սուլթանը (1290-1294 թթ.) ռազմական իր զօրութիւնն ուղղում է միայնակ մնացած Կիլիկեան հայկական թագաւորութեան դէմ եւ գրաւում մի շարք շրջաններ: 1292 թ. Յուլիսի 28-ին, ամսօրեայ պաշարումից յետոյ, Աշրաֆի զօրքերը գրաւում են շուրջ մէկուկէս դար հայ կաթողիկոսների նստավայրը հանդիսացող Հռոմկլա նշանաւոր ամրոցը՝ Եփրատի ափին: Մեմլուքները գերում են Հռոմկլայի բնակիչներին՝ Ստեփանոս կաթողիկոսի գլխաւորութեամբ, կողոպտում «զամենայն սպաս եկեղեցւոյն եւ զանկշռելի գանձն աստուածային եւ զամենայն ստացուածսն»[6]: Օրբելեան պատմիչը թւարկում է գերուած սրբութիւնները՝ Գրիգոր Լուսաւորչի աջն ու գաւազանը, Հռիփսիմէ կոյսի հողաթափը *եւ այլն, եւ յայտնում, որ Սուլթանը մեծ աւարով մեկնում է Դամասկոս եւ ի նշանաւորումն իր յաղթանակների՝ կաթողիկոսին ցուցադրում քաղաքի հրապարակներում: Այնուհետեւ Ստեփանոս կաթողիկոսը տարւում է Եգիպտոս, ուր եւ վախճանւում է մէկ տարի յետոյ[7]: Իսկ դէպքերի թարմ ազդեցութեան տակ գրուած մի յիշատակարանի տուեալներով՝ հենց Դամասկոսում էլ ապաբախտ կաթողիկոսը կնքել է իր մահկանացուն: «Յայսմ (1291) ամի,- գրուած է այնտեղ,- բանդեալ աւերեցան գեղեցկաշէն քաղաքքն Հռովմայեցւոց՝ ծովեզերայքն Տրապալւսոյ եւ Աքայիոյ, եւ եկեղեցիք քրիստոնէից եղեն հատից եւ խաչանց փարախ. եւ զկնի մի ամի (1292 թ.) առաւ աստուածարեալ զղեակն Հռոմկլա... որ էր աթոռ հայրապետացն Հայոց. եւ սպառ սրբութեանն գերի վարեցաւ հանդերձ մեր գլխովն՝ հայրապետաւն, որոյ անուն Ստեփանոս. և հասեալ ի քաղաքն Դամասկես՝ ճգնաւորական հանդիսիւ*

[6] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 443:
[7] Նոյն տեղում, էջ 444:

փոխեցաւ յաստուածս»[8]:

Նշանաւոր գիտնական Յովհաննէս Երզնկացին, որ մտադրուել էր իր անձնական մեծահարուստ գրադարանը նուիրաբերել Հռոմկլայի կաթողիկոսարանին (հաշուի առնելով նրա անմատչելի դիրքն ու անառիկ լինելու հռչակը), խոր վիշտ է ապրում լսելով Հռոմկլայի անկման եւ սրբութիւնների առեւանգման լուրը. «Եւ զամենայն անուէծ սրբութեանց եւ զարդոց եկեղեցւոյն, եւ զխաչն ոսկեղէն եւ արծաթեղէն, եւ զԱւետարանսն ոսկետուփ մանրեալ փշրեցին», - գրում է նա, իսկ քիչ յետոյ, կրկին անդրադառնալով այդ տխուր եղելութեանը, մասնաւորապէս աւաղում է կաթողիկոսարանի գրքերի կորուստը. «Գանձք հոգեւոր աստուածային գրոց գրուեցան»[9]:

Այս տողերը հնարաւորութիւն են ընձեռում մտածելու, որ Հռոմկլայի կաթողիկոսարանից Դամասկոս տարուած նիւթական արժէքների մէջ, անտարակոյս, մեծ տեղ են գրաւել ձեռագիր մատեանները, մանաւանդ որ նրանցից շատերը, ինչպէս մատնանշել է հենց Յով. Երզնկացին, զարդարուած են եղել ոսկեայ եւ արծաթեայ կազմերով: Ժամանակ է անցել, նիւթական արժէք ունեցող կազմերը պոկուել են ձեռագրերից, իսկ մագաղաթեայ հին թերթերը՝ կազմահան եղած ու քրքրուած, խառնիխուռն վիճակում խոթուել են հնամաշ պարկերի մէջ՝ պահուելու համար «Գանձատուն» կոչուող գմբէթի տակ... Եւ եթէ ճիշտ է մեր այս եզրակացութիւնը, ապա կարող ենք հաւաստալ, որ Դամասկոսի թանգարանում պահուող հայերէն պատառիկները սրբազան մասունքներն են հայկական մշակոյթի նշանաւոր կեդրոն՝ Հռոմկլայի մեծահարուստ մատենադարանի գերեվարուած ու ցրիւ տրուած ձեռագրական գանձերի:

***

Դամասկոսի թանգարանի հայերէն պատառիկները գրչագրական տուեալներով, ինչպէս ասվեց, մաս են կազմում 13 տարբեր ձեռագրերի

[8] Մաշտոցի անուան Մատենադարան, պատառիկ N 919 (հմմտ. «Ազգագրական հանդէս», XII, 1905, էջ 155-156, «Արարատ», 1911, էջ 223-224 եւ այլն):
[9] Տ. Պալեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Կարապետի վանուց նոր գրադարան ի Կեսարիա (Հանդէս Ամսօրեայ, 1960, էջ 265-267):

գրուած մագաղաթի վրայ եւ մի նամակի: Ըստ բովանդակութեան նրանք բաժանւում են հետեւեալ խմբերի.

1. Մասունք Հին կտակարանի	4 պատառիկ (4 թերթ)
2. Մասունք Նոր կտակարանի	2 պատառիկ (7 թերթ)
3. Միսական մատեաններ	3 պատառիկ (5 թերթ)
4. Վկայաբանութիւն	2 պատառիկ (5 թերթ)
5. Ճառագրութիւն	2 պատառիկ (3 թերթ)
6.Ժողովածու	1 պատառիկ (9 թերթ)
7. Նամականի	1 պատառիկ (1 բեկոր)

Այս նոյն հերթականութեամբ տալիս ենք պատառիկների նկարագրութիւնը, հրապարակելով իւրաքանչիւր միաւորից մէկ կամ երկու լուսանկար եւ տալով ծանօթագրութիւններ ամէն մի պատառիկի արժէքի ու նշանակութեան վերաբերեալ: Ցաւում ենք, որ պատառիկների չափերի մասին անհրաժեշտ տեղեկութիւններ չունենք:

1. Դամասկոսի թանգարան N 10, էջ 69-70
ՍԱՂՄՈՍ, ԼԹ, 16-18-Խ, 1-9

Պահպանուել է եզրերից քայքայուած մի թերթ. պարունակում է «կրեսցին զամօթ առ[ժամայն]... մինչ որ ննջ[իցեն]» (ԼԹ, 16-Խ, 9) հատուածը: Գրուած է ուղղագիծ երկաթագիր տառերով, իւրաքանչիւր էջի վրայ 18 տող: ԼԹ սաղմոսի 18-րդ համարը կրճատուած է այսպէս. «ես աղքատ եւ տնանկ (կարդա՝ տեառնանկ) եմ Ա[ստուա]ծ եւ փրկիչ իմ. եւ դու Ա[ստուա]ծ իմ մի յամենար»: «Թիւն» վերջածանցով բառերը գրւում են «թին» ձեւով (առանց յապաւման նշանի)՝ «փրկութին», «նանրութին», «անարէնութինս»: Հաւանաբար գրուած է Թ.-Ժ. դարերում: Տպագրում ենք համեմատաբար լաւ պահպանուած Բ. էջը (տե՛ս նկար 1):

2. ԴԹ N 10, էջ 147-148
ՍԱՂՄՈՍ, ԽԱ, 9-12, ԽԲ, 1-5 (լրիւ) ԽԳ, 1-5

Պահպանուել է մէկ թերթ. պարունակում է ԽԱ սաղմոսի 9 համարի «Ի տուէ պատուիրեաց...» բառերից սկսած, մինչեւ ԽԳ սաղմոսի 5-րդ համարի

«... դու ինքն ես թագաւոր» բառերը:

Պատառիկն ուշագրաւ է յատկապէս հնագրական առումով. առաջին էջը (16 տող) գրուած է հիմնականում բոլորագիծ երկաթագրով, ուղղագիծ երկաթագիր տառաձեւերի օգտագործմամբ: Այդպէս են գրուած նաեւ երկրորդ էջի առաջին 4 տողերը, իսկ յաջորդ 18 տողերի համար միանգամայն այլ (ուղղագիծ երկաթագրախառն բոլորգիր) տառաձեւեր են օգտագործուել:

Այսպիսով, հենց նոյն էջի վրայ կողք կողքի եւ փոխնիփոխ, գործածուած ենք գտնում տարբեր գրատեսակներ, մի հանգամանք, որ փաստում է այդ գրատեսակների համաժամանակեայ գոյութիւնը: Պատառիկը իմաստային եւ ուղղագրական զգալի տարբերութիւններ ունի տպագրի համեմատութեամբ[10], ուստի հրատարակում ենք վերծանութիւնն ու լուսանկարները (տե՛ս նկ. 2, 3): Հրապարակումների ժամանակ ձեռագիր էջերի շարուածքի ձեւը պահում ենք անփոփոխ: Բառերի վրայ դրուող յապաւման նշանի փոխարէն՝ կրճատ գրուած բառին կից դրել ենք միջակէտ:

Առաջին էջ.

«ի տուէ պատուիրեաց տէր զողորմու
թիւն իւր ի գիշերի աւրհնութիւն նոր
եւ աղաւթք իմ առ Ած. վասն կենաց
իմոց: Ասացի Այ. իմոյ ընդունելի
իմ ես դու ընդէր մոռացար զիս ընդ
էր. տրտում գնամ ես ի նեղեալ
թշնամեաց իմոց: Ի փշրեալ ոսկ
երաց իմոց նախատեցին զիս թշն
ամիք իմ յասել ընդ իս թէ ուր
է Ած. քո: Արդ ընդէր տրտում ես
անձն իմ կամ ընդէր խռով
եալ ես յուսա առ Ած. խոստով

[10] Օգտագործել ենք Աստուածաշնչի 1860 թ. Վենետիկի հրատարակութիւնը. Գիրք Աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանաց, ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց, ի Վենետիկ, 1860:

անե նմա փրկիչ երեսաց իմոց Ած. է:
Դատ արա ինձ Ած. եւ իրաւ արա
ինձ ի դատաստանի իմում:
Յազգէ որ ոչ է սուրբ ի մարդ»:

Երկրորդ էջ.
«ո մեղաւորն նե[ն] դաւորէ փրկէ զիս
դու Ած. հզուրիչ իմ ընդէր մոռ
ացար զիս ընդէր տրտում գնամ ես
ի նեղեալ թշնամեաց իմոյց:
Առաքեա ուէր զլոյս քո եւ զճշմարտութիւն
ս քո զի նոքաւք առաջնորդեցեր համդէս զ
մեզ ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:
Մտից առաջի սեղանոյ այ. առ
Ած. որ ուրախ առնէ զմանգութ
իւն իմ: խաւստովան եղեաց քեզ աւրհնութեամբ
Ած. Ած. իմ: Արդ ընդէր տրտում ես անձն իմ
կամ ընդէր խռովես զիս յուսա առ Ած. խաւ
ստովանեա նմա եւ փրկիչ երեսաց իմոց Ած. է:
Ի կատարած որդոցն Կորխա իմա[ս]տութիւն ԽԴ.
Ած. ականջաւք մերաւք լուաք զոր հարքն մեր
պատմեցին մեզ: զգործն զոր գործեցեցին
յաւուրս նոցա յաւուրսն յառաջինսն: Ձեռ
ն քո խլեաց զհեթանոս եւ զնոսա տնգեցեր չա
րչարեցեր զժողովուրդս քո եւ հանէ զնոսա:
Ոչ թե սրով իւրով ժառանգեցն զերկիր եւ
ոչ բազուկ նոցա թե փրկեցն զնոսա: Այլ ա
ջ քո են բազուկ քո եւ լոյս երեսաց քոց զի հա
ճեցար ընդ նոսա: Դու ինքն ես թագաւոր».

3. ԴԹ N 9, էջ 57-58
ՍԱՂՄՈՍ, ԽԴ, 10-ԽԵ, 3

Եզրերից քայքայուած կրկնագիր մի թերթ է. նախկին գիրը, որ կարող է Ե. դարից լինել լաւ չի ջնջուած, ուստի բնագիրը ձեռքի տակ ունենալով կարելի կը լինի վերծանել: Նոր գիրը ԺԱ.-ԺԲ. դարերի երկաթագրախառն բոլորգիր է, պարունակում է ԽԴ սաղմոսի 10-րդ համարի «... կայէ դշխոյ ընդ աջմէ քումմէ...» բառերից սկսած, մինչեւ ԽԵ սաղմոսի 3 համարի «... փոփոխել լերանց ի սիրտս ծովու» բառերը: Տպագրում ենք առաջին էջի լուսանկարը (տե՛ս նկ. 4):

4. ԴԹ N 10, էջ 23-24
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ

Երկսիւն գրութեամբ մէկ թերթանոց պատառիկ է, վերին մասից պատռուած ու մաշուած. գրուած է բոլորագիծ երկաթագրի տարրեր ունեցող ուղղագիծ երկաթագրի տառաձեւերով: Առաջին էջի ձախ սիւնակում պահպանուել է 5 տող, աջ սիւնակում 11 տող: Դրանց չափակցումից յանգում ենք այն համոզման, որ էջն անվթար վիճակում ունեցել է ընդամենը 16 տող. ըստ այդմ այս պատառիկը որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում որպէս ներկայացուցիչ մի ձեռագրի, որ տարբերուելով մեզ յայտնի հայերէն բոլոր հին ձեռագրերից, ձախից աջ աւելի երկար է եղել, քան վերից վար, այլ խօսքով ունեցել է բլոկնոտի *ձեւ (տե՛ս նկ. 5):*

Պարունակում է Դանիէլի մարգարէութեան Գ գլխի 49-50, 5, 51, 5-56, (առաջին էջ) եւ 61-67, 72-76 (երկրորդ էջ) տները: Տպագրի համեմատութեամբ ունի մի-երկու ուշագրաւ տարբերութիւն (Գ, 66-ի «տապ» բառի դիմաց ունի «ջեր», Գ, 67-ի «սառն» բառի դիմաց ունի «սառութ» եւ այլն): Հաւանաբար ընդօրինակուած է Ժ.-ԺԱ. դարերում:

5. ԴԹ N 10, էջ 1-10
ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Պահպանուել են մագաղաթեայ 5 թերթ, որոնց ձախակողմեան սիւ-

նակի միջամասերը՝ վերից վար, պատռուել, քայքայուել ու սեւացել են: Գրուած է բոլորագիծ երկաթագիր տառերով, երկսիւն գրութեամբ, իւրաքանչիւր էջ պարունակում է 18 տող բնագիր, իսկ ստորին լուսանցքի վրայ 2-4 տողերով նշանակուած են համաբարբառի մանրատառ գլխահամարները:

Պարունակում է Մատթէոսի Աւետարանից ընդարձակ մի հատուած՝ Զ, 7 համարի «... թէ ի բազում խօսից իւրեանց» բառից սկսած, մինչեւ Ը, 20 համարի «Աղուեսուց որջք գոն]» բառերը: Տպագրից գրեթէ չի տարբերւում: Հնագրական տուեալներով գրուած պէտք է լինի Թ.-Ժ. դարերում (որոշ տառաձեւեր նման են 909 թ. ընդօրինակուած N 6202 ձեռագրի համապատասխան տառաձեւերին):

Տպագրում ենք համեմատաբար լաւ պահպանուած 5բ էջի լուսանկարը (տե՛ս նկ. 6):

6. ԴԹ N 10, էջ 151-152
ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Պահպանուել են երկու խիստ քայքայուած թերթերի բեկորներ, բոլորագիծ երկաթագիր գրչութեամբ: Անվթար վիճակում ձեռագրի թերթերը պարունակելիս են եղել 21-ական տողերից բաղկացած երկու սիւնակներ. մեզ հասած բեկորների վրայ, սակայն, պահպանուել են միայն մէկ սիւնակի դժուարընթեռնելի տողերի հետքերը: Առաջին թերթի մէկ երեսը պարունակում է Պօղոս առաքեալի «Առ Կորնթացիս» առաջին թղթի Ը եւ Թ գլուխներից մի քանի տող («զայրացուցեալ ի Քրիստոսէ... այդ դէպ ձեզ եմ»), միւս երեսից շատ քիչ բառեր են կարդացւում:

Երկրորդ թերթը, որ փոքր ինչ աւելի լաւ վիճակով է պահպանուել, պարունակում է «Առ Եբրայեցիս» թղթի ԺԱ, 16-24 համարները: Պատառիկները շատ հին են, հաւանաբար գրուած Թ. դարից էլ առաջ: Այդ մասին են վկայում ինչպէս նշանագրերի հնաբոյր ձեւերը, այնպէս էլ գլխագրերը, որոնք զգալի չափով դուրս են գալիս գրադաշտից, տեղադրուելով աջակողմեան լուսանցքի վրայ:

Ներկայացնում ենք այս պատառիկների առաջին էջերի լուսանկարները (տե՛ս նկ. 7, 8):

7. ԴԹ N 7, էջ 1-4
ՃԱՇՈՑ

Պահպանուել է մի երկծալ թերթ, գրուած չորս էջով: Առաջին ծալքթերթի աջ լուսանցքի ստորին մասը պատռուած է: Գրուածքը միասիւն է, գրչութիւնը՝ հնագոյն բոլորգիր տառաձեւերով:

Պատառիկը բովանդակում է Եսայեայ մարգարէութեան ԿԵ գլխի 22-25 համարները, Պօղոս առաքեալի «Առ Փիլիպեցիս» թղթի Գ գլուխն ամբողջութեամբ եւ Դ գլխի 1-9 համարները («Պօղոսի առաք. ի Փի[լի]պեցոց թղթոյն է ընթ[երցուած]» խորագրով), եւ աւարտւում է «Աւետարան ըստ Ղուկասու» ընթերցուածի խորագրով: Տպագրի նկատմամբ ունի ոչ էական տարբերութիւններ: Մի շարք բառերի մէջ «հ» տառի փոխարէն «խ» է գրուած (օրինակ՝ խնացեն, վստախութիւն, խնազանդեցուցանել, նախատակեցան, չախ), մի բան, որ ընդօրինակող գրչի վասպուրականցի լինելու նշան է: Հաւանաբար Ժ.-ԺԱ. դարի ձեռագիր է:

Տպագրում ենք առաջին եւ վերջին էջերի լուսանկարները (տե՛ս նկ. 9, 10):

8. ԴԹ N 7, էջ 77-78
ՃԱՇՈՑ

Մի թերթ, առաջին երեսը մաշուած՝ գրեթէ անընթեռնելի դառնալու չափ: Գրուած է ուղղագիծ երկաթագիր տառաձեւերով, միասիւն գրչութեամբ (էջի վրայ 12 տող): Տողամիջեան տարածութիւնները գրի զբաղեցրած տարածութիւնից լայն են աւելի քան երկու անգամ. այդպէս է արուած երաժշտական խազերի գրութեան համար տեղ ապահովելու նպատակով (խազերը, գրուած լինելով կարմիր թանաքով, շատ աղօտ են նկատւում): Երաժշտական խազեր ունեցող հնագոյն պատառիկներից մէկն է, գրուած հաւանաբար ԺԱ. դարում:

Պարունակում է Եսայեայ Մարգարէութեան Կ գլխի 1-4 համարները. իւրաքանչիւր համարից յետոյ գրուած է «լուսաւորել աղա[չեմք]», որից յետոյ, որպէս վերջակէտ գրուած են չորական կէտեր՝ խաչաձեւ դասաւորութեամբ:

Տպագրում ենք Բ երեսի լուսանկարը (տե՛ս նկ. 11):

9. ԴԹ. N 10, էջ 153-154 եւ N 11, էջ 193-194
ՃԱՇՈՑ

Բոլորագիծ երկաթագիր տառաձեւեր եւ երկսիւն գրութիւն ունեցող ձեռագրական այս պատառիկները, որ Դամասկոսի թանգարանում գրանցուած են տարբեր համարների տակ, անտարակոյս միեւնոյն ձեռագրից ընկած բեկորներ են (այդ հնարաւոր եղաւ պարզել տառաձեւերի մանրակրկիտ բաղդատութեամբ):

Ձեռագիրը, որին պատկանել են սրանք, հաւանաբար ճաշոց է եղել: Առաջին թերթը մեզ հասած թերի վիճակում պարունակում է մի հատուած Սողոմոնի առակների Գ գլխից («... տէր յամե[նայն սրտէ] քոց... [մի լինի ի]մաստուն»,Գ, 5-7), ապա Երեմիայի մարգարէութեան Ա գլխի 11-19 համարները: Երկրորդ թերթի նիւթը հնարաւոր չեղաւ որոշել:

Առաջին էջի բովանդակութիւնը վերծանւում է այսպէս.

«[Ամե]նայն չարեաց խ[րեանց]
զի թողին զիս եւ զ[ոհեցին]
Աստուծոյ աւտա[րաց եւ
եր]կիրպագին գոր[ծոց
ձեռ]աց իւրեանց: Եւ [դու պն
դեա] զմէջ քո: Արի եւ [ասա ն
ոցա] զամենայն զո[ր մի ան]
կամ պատուիր[եմ քեզ
մ]ի երկիցես յե[րեսաց
նոցա՞] մ[ի] զանգի[տիցես] ----»:

Յաջորդ էջի վրայ կարդացւում են միայն առանձին բառեր (օրինակ՝ կենդանութիւն կենաց, ողորմութիւն, [զաւր]ութիւն սրտի եւ այլն), որոնցով կապակցուած միտք չի ստացւում: Պատառիկի մէջ հանդիպում ենք «Կ» տառի հնաոճ գրութիւն եւ ՊԱ տառերի կցագրութիւն, որ խիստ հազուադէպ իրողութիւն է մեր ձեռագրերի մէջ: Գրուած է հաւանաբար Ժ. դարում:

Տպագրում ենք երկու բեկորների առաջին էջերի լուսանկարները (տե՛ս նկ. 12, 13):

10. ԴԹ N 7, էջ 45-46 եւ N 10, էջ 33-40
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՄԻՆԱՍԱՅ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ ՆՈՐԱ

Մինասի վկայութիւնը մուտք է գործել հայկական Յայսմաւուրքների, ճառընտիրների եւ Տօնականների մէջ խմբագրական տարբեր փոփոխութիւններով: Մեր պատառիկը, բաղկացած 5 մաշուած թերթերից, մեծ չափով տարբերուելով տպագիրներից[11], նոյնանում է Տօնական կոչուող ժողովածուի մէջ տեղ գտած խմբագրութեանը (հմմտ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. N 3777, էջ 224բ-232ա) եւ պարունակում է ամբողջ վարքի շուրջ մէկ հինգերորդ մասի ոչ յաջորդական շարադրութիւնը:

Պատառիկի գրչութիւնը հին բոլորգիր է, շղագրի տարրերով: Նման գրչութեամբ մի քանի ձեռագրեր կան ԺԲ.-ԺԳ. դարերից. այդ նոյն ժամանակաշրջանում են ընդօրինակուած նաեւ խնդրոյ առարկայ թերթերը:

Որպէս նմուշ հրապարակում ենք լաւ պահպանուած թերթերից մէկի (ԴԹ N 10, էջ 39) լուսանկարը (տե՛ս նկ. 14):

11. ԴԹ N 7, էջ 70-71
ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ԶՍԳԱՒՈՐՍՆ

Ընդամէնը մէկ թերթ գրաւող խրատական այս գրուածքն ըստ երեւոյթին առանձնակի ընդօրինակութիւնն է Յովհ. Ոսկեբերանի ճառերից մէկի մի պարբերութեան: Ձեռագիրը, որից ընկել է պատառիկը, հաւանաբար խրատական տարբեր նիւթերի մի ժողովածու է եղել, կազմուած ԺԳ. դարի կէսերին: Գրուած է շղագրի տարրեր ունեցող հին բոլորգրով:

Տպագրում ենք զոյգ էջերի դիւրընթեռնելի լուսանկարները (տե՛ս նկ. 15, 16):

---

[11] Տե՛ս Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 234-238: Մ. Աւգերեան, Լիակատար Վարք Սրբոց եւ Վկայաբանութիւն Սրբոց, հատոր Թ, Վենետիկ, 1813, էջ 341-367:

12. ԴԹ N 7, էջ 97-98 եւ N 10, էջ 23-24
ԿԻՒՐՂԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՒՈՅ ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ

Երկթերթ այս պատառիկի թերթերից մէկը (ԴԹ N 10, էջ 23-24) խիստ մաշուած ու քայքայուած լինելով մնում է անընթեռնելի: Միւսը համեմատաբար լաւ է պահպանուած. պարունակում է Կիւրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» յայտնի աշխատութեան 13-րդ գլխից քաղուածոյ մէջբերումներ[12]: Պատառիկի եւ տպագրի միջեւ կան նաեւ իմաստային զգալի տարբերութիւններ. այսպէս, օրինակ, տպագրի «զի լուծցէ զմեղս որ ի կանանց մտին» (էջ 254) նախադասութեան դիմաց պատառիկն ունի «որով լուծաւ մեղքն որ մտին յաշխարհ», «եւ զի լուծցին մեռեալք» - ի դիմաց (էջ 266) «եւ զի լուծցին մեղքն» եւ այլն:

Պատառիկն ունի երկսիւն գրութիւն. իւրաքանչիւր սիւնակ պարունակում է 29 տող: Գրուած է ուղղագիծ երկաթագիր տառաձեւերով, որոնց իւրայատկութիւնը սովորականից աւելի թեքուածութիւնն է դէպի աջ: Հաւանաբար ընդօրինակուած է ԺԱ.-ԺԲ. դարերում:

Տպագրում ենք ե՛ւ լաւ ե՛ւ վատ պահպանուած թերթերի առաջին էջերի լուսանկարները (տե՛ս նկ. 17, 18):

13. ԴԹ N 7, էջ 27-44
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ամենամեծ թուով պատառիկները՝ 9 թերթ կամ 18 էջ, մաս են կազմել արժէքաւոր ձեռագիր մի ժողովածուի, որ ուշագրաւ նիւթեր է պարունակել: Ձեռագրագիտական առումով զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում պահպանուած թերթերից առաջին երկուսը, որոնք հենց ձեռագրի գրութեան ժամանակ պատրաստուել են մագաղաթեայ երկու կիսաթերթերի միմեանց կցելու եւ կաշուէ թելիկներով կարելու ճանապարհով: Երկձալ այդ թերթը, տարբերուելով ձեռագրի ամբողջական մագաղաթից պատրաստուած թերթերից (որոնք ունեն 20-ական տող), պարունակում է ընդամէնը 17-ական տող բնագիր (կցման հատուածը գրչութեան համար անպիտան է ճանաչուել): Պատառիկի գրութիւնը միասիւն է, տառաձեւերը ուղղագիծ երկաթագիր, գրուած հաւանաբար Ժ.-ԺԱ. դարերում:

[12] Երանելոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1831: **Պատառիկն ընտրովի հատուածներ է պարունակում տպագրի 253-268 էջերից:**

Պահպանուած թերթերի վրայ ընդօրինակուած են երեք տարբեր նիւթեր:

ա. Առաջին թերթի առաջին երեսի վրայ գտնում ենք վերջին տողերը մեկնողական մի գրուածքի, որի ինչ լինելը պարզելու համար լրացուցիչ որոնումներ պէտք է կատարել: Դիւրացնելու համար այդ աշխատանքը ստորեւ տալիս ենք այդ էջի բովանդակութեան վերծանութիւնը եւ լուսանկարը (տե՛ս նկ. 19):

«Կասեցուցեր. զծով մեղաց ցամաք
եցուցեր. եւ զգետ անաւրէնութենն
կասեցուցեր. եւ զանձրեւ սաստիկ
մարդասիրութեան տեղեցեր ի մարդիկ.
Առաքեցեր. այսինքն առաքեաց մի
ածին որդին Աչ. զսուրբ զառաքեալսն
ընդ ամենայն աշխարհ առեալով. եր
թայք աշակերտեցեք զամենայն հեթ
անոսս եւ եղեալ նոցա երիվար սուրբ
հոգին ընթացան ընդ ծագս տիեզերաց
եւ դարձուցին զազգս մարդկան յերկ
րպագութենէ կռոցն յաստուածպաշտու
թիւն. զոր տեսեալ զայս անդնդային
բանակն դիւաց. եւ տագնապել ---»

բ. Պատառիկի երկրորդ նիւթ-միաւորը շատ աւելի կարեւոր է. գրաւում է վերոյիշեալ թերթի միւս էջը եւ յաջորդ թերթն՝ ամբողջութեամբ, որոնք մէկ միւսի շարունակութիւնը լինելով, պարունակում են մի հատուած Յովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Եսայեայ մարգարէի» աշխատութիւնից:

Ինչպէս յայտնի է, Ոսկեբերանի այդ աշխատութեան ամբողջական բնագիրը (մասնակի թերութիւններով) պահպանուել է միայն հայերէն ոսկեդարեան թարգմանութեամբ: Յունարէն բնագրից պահպանուել է միայն սկզբի մասը՝ Ա գլխից սկսած մինչեւ Ը գլխի 10-րդ համարի մեկնութիւնը:

Հայերէն թարգմանութեան առ այսօր յայտնի միակ ձեռագիր, որ պահւում է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանում եւ որի հիման վրայ իրականացուած է տպագրութիւնը[13]*, թերի է սկզբից, վերջից եւ միջին մասերից: Սկսում է Եսայեայ մարգարէութեան Բ գլխի 2-րդ համարի մեկնութիւնից, աւարտւում է ԿԳ գլխի 8-րդ համարի մեկնութիւնով եւ չունի ԽԱ, 2 - Լ, 6 գլուխների մեկնութիւնը (պակասում է ամբողջական բնագրի մէկ-վեցերորդի չափով):*

Մեր պատառիկը՝ «Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն Եսայէ» խորագրով, պարունակում է ԻԶ գլխի 9-րդ համարի «ի գիշերաց կանխե-լով» բառերի[14] *մեկնութիւնը, ուստի համդիսանում է թարգմանական այն յուշարձաններից մէկը, որով վերականգնւում են յունական մատենագրու-թեան աւաղելի կորուստներից որոշ դրուագներ:*

Ստորեւ տալիս ենք դժուարընթեռնելի այդ թերթերի վերծանութիւնը եւ լուսանկարները (տե՛ս նկ. 20, 21, 22):

---

[13] Երանելւոյն Յովհաննու Ոսկերերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880:

[14] Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան գիտական համարուող հրատարա-կութեան մէջ (Վենետիկ, 1860) այս հատուածը «գիշերաց կանխէ» ձեւն ունի: Տեղին է, այստեղ նշել, որ Յովհ. Ոսկերերանի ՟ննարկուող աշխատութիւնը քաղուածաբար պարունակում է Եսայեայ մարգարէութեան ողջ բնագիրը, որը տեղ-տեղ էական տարբերութիւններ ունի տպագրի համեմատութեամբ: Այդ տարբերութիւնների բնոյթն այնպիսին է, որ մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ **այս մեկնութեան մէջ պահպանուել է Եսայեայ մարգարէութեան հայկական նախնական թարգմանութիւնը, կատարուած ասորերէնից, Ս. Գրքի միւս այն գրքերի հետ, որոնց թարգմանութիւնը Կորիւնի խօսքերով կատարուել էր «յառաջագոյն, յանկարծագիւտ, փութանակի», եւ որոնք հետագայում սրբագրուեցին Աստուածաշնչի Կ. Պոլսից բերուած յունարէն բնագրի հիման վրայ:** «Դարձեալ թարգմանեցին զնի անգամ թարգմանեալն փութանակի»- ասում է այդ մասին Մ. Խորենացին: Ըստ այդմ, Եսայեայ մարգարէութեան այս հատուածները արժանի են յատուկ քննութեան. նրանք Մնացորդաց Ա եւ Բ գրքերի եւ Աստուածա-շնչի նախնական թարգմանութեան հետքեր ունեցող միւս հատուածների հետ միասին մեծապէս նպաստելու են հայ մատենագրութեան արշալոյսին տեղի ունեցած լեզուագրական աշխատանքների բնոյթն ու տարողութիւնը որոշելու գործին:

Ա. պատառիկ, էջ 2

«Յովհաննու Ոսկերերանի մեկ
նութիւն Եսայէ
ի գիշերաց կանխելով. զայս
մեզ հօգեկիր մարգարէ[ն Ե]սայիա
յայտնապէս ցուցանէ. վասն զ
ի գիշերոյն փառաբանութիւնն
ատուել եւս բոլորով սրտիւ մատ
ուցանեմք ի յսեղիս արարչին
վասն զի խաղաղութե[ամբ]
լինին միտք եւ սգայարանք մ
արմնոյ. յամենայն յաշխար
հական ծփանաց. եւ հաւաքել խ
որհուրդքն միաբանութեան կ
անխել յաւրհնութիւն Այ.
վասն զի գիտող է Ած. բնութեն
ս մերոյ. եթե հոգն՟ կամ եւ ցրու
ական են միտք մեր [վ]ասն այ[նորիկ]»

Բ. պատառիկ, էջ 1

«[այ]նորիկ յաւիտարանին ասէ ատե
[ն]ատերն. եթե թշնամիք առն ը
նտանիք իւր. արդ թշնամիք զգ
այարանս կոչէ որ են մերձաւ
որք մարմնոյն. աչք տեսանեն
ցանկութեամբ. լսելիքն հեշ
տանան խաղամամբն յաւտար
ականի ձայնիցն. վասն զի առ
աքելն սգուշացուցանէ զմեզ
ասելովն. եթե յատարական
ի ձայնից մի դանդաչեք. իսկ
լեզուն զիւրն ախտանս որ է հուր
եւ զարդ անիրաւութեն. արդ վա

ն այնորիկ աւէ մարգարէն.
եթէ ի գիշերաց կանխել հոգի իմ,
զի աւելի հաճոյ է Ա[յ]. փառաբան
ութիւնն գիշերոյն քան զտուրն[ջ] ենն»

Բ. պատառիկ, էջ 2

«Որպէս եւ վերագոյն ասացաք
նաեւ հոգեկիր մարգարեիցն բազ
ում անգամ ի գիշերի լինելին յ
այտնութիւնքն որպէս եւ Դ
անիեղ աւէ. եթէ տեսանէի ի տեսլեան գիշերոյ, նոյնպէս եւ
մա--- աւիթ --- անգամ եւ ա
յլոց մարգարեից.
վասն զի լոյս էր հզ[ար] --- իք քո խակ
լոյս զգայուստն Քի. կոչի
---ութիւն աւետարանաւ
կարգեաւ ամբարիշտն եւ այդ
բարձցի ամբ. Այս զխափան
ումն կռապաշտութենն եւ սա
տանայի աւէ. ի խաչելութեն
ն Քի. եւ յարութենն զոր եւ Դ
աւիթ աւէ. թշնամոյն զայն պ
ակասեց
Տէր բարձր եւ բազում քո հզօ[ր]»:

Գ. Քննարկուող ժողովածուից մեզ հասած յաջորդ պատառիկները՝ բաղկացած 7 թերթից (14 էջ), պարունակում են Եպիփան Կիպրացու «Կարգաւորութիւն Թարգմանչաց Սուրբ գրոց» աշխատութեան մի ընդարձակ մասը, որի մէջ հետաքրքրական տեղեկութիւններ են գրանցուած Ակիւղասի, Սիմաքոս Սամարացու, Թէոդոն Պոնտացու, ինչպէս նաեւ Երիքովում եւ Եմաուսում գտնուած ս. Գրոց թարգմանութիւնների ու այդ բոլորի խմբաւորմամբ Որոգինէսի ստեղծած վեցիջեան Աստուածաշնչի մասին: Գրուածքի մէջ տրուած է Բ.-Գ. դարերի հռոմէական կայսրերի գրեթէ ամբողջական ցանկը՝ Ադրիանոսից (117-138 թթ.) սկսած մինչեւ Դեկիոս (249-250 թթ.),

նրանց թագաւորութեան տարիներին քրիստոնէական եկեղեցու պատմութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող անցուդարձերի համառօտակի թուարկումով:

Եպիփանի այս երկասիրութեան ամբողջական բնագիրը՝ եօթանասուն թարգմանիչների գործունէութեանը նուիրուած բաժնով (որ սկզբի մասն է), պահպանուել է Մաշտոցեան Մատենադարանի թղթեայ հնագոյն (981 թ.) ձեռագրում: Մեր պատառիկները եւ այդ ամբողջական ընդօրինակութիւնը հնարաւորութիւն են ընձեռում հրատարակութեան պատրաստելու ուշագրաւ թարգմանական այս աշխատութեան ամբողջական բնագիրը[15]: Հարկ է նշել, որ Կիպրացու այս աշխատութիւնը՝ համառօտուած ու խմբագրուած՝ տեղ է գտել Վարդան Արեւելցու «Սաղմոսաց մեկնութեան» եւ «Տօնապատճառ» կոչուող ժողովածուի մէջ: Որպէս նմոյշ հրատարակում ենք պահպանուած պատառիկներից մի բացուածք (տե՛ս նկ. 23):

14. ԴԹ N 11, էջ 198
ՆԱՄԱԿ

Դամասկոսեան հայկական պատառիկներից միակն է՛ գրուած թղթի վրայ: Բեկոր է մի նամակի, որի վերին մասը, ինչպէս եւ ձախակողմեան եզրը (2-3 տառաչափ տարածութեամբ)՝ կորել է անդարձ: Մեզ հասած հատուածը պարունակում է 9 տող, գրուած Կիլիկեան Հայաստանում պաշտօնական գրութիւնների համար ձեւաւորուած շղագիր տառաձեւերով եւ գաւառաբարբառով:

Նամակագիրը մի հայ աւատատէր է, որ իր հրամանի ներքոյ ունի պառիկոսներ (կախեալ գիւղացիներ): Գրութիւնն ըստ երեւոյթին ուղղուած է բարձրաստիճան մի հոգեւորականի. շօշափում է ոռոգելի ջրի օգտագործման հետ կապուած ինչ-որ վէճ, որ առաջացել է նամակագրի եւ հասցէատիրոջ կալուածքները մշակող պառիկոսների միջեւ: Նամակագիրը, հաւաստելով իր յարգանքն ու սէրը հասցէատիրոջ նկատմամբ եւ շեշտելով իրենց տնտեսական շահերի սերտ շաղկապուած լինելը, յոյս է յայտնում, որ վէճը

[15] [Թղթեայ ձեռագիրն այժմ հրատարակուած է (Մատեան գիտութեան և հաւատոյ Դաւթի Բաճանալի, Երեւան, 1997) Կիպրացու աշխատութիւնը տե՛ս էջ 302] - Խմբ.:

հարթուելու է, ու, թերեւս նախկինից աւելի բարենպաստ պայմանով:

Տալիս ենք նամակի պահպանուած հատուածի վերծանութիւնն ու լուսանկարը (տե՛ս նկ. 24):

«--- տեղոյս գերա՛ գերդ ի մեր տան այս
--- ել որ տանք. եւ մեք վանց ձեր սիրոյ յանձն առ
[աք] տուաք որ զոր ի մեր պառիկոսերոյն յաւելնա
--- ի ձեր տեղոյս կարիքն, հայնց որ մերոցն պակաս
--- էն ակն ձեր է եւ ձերն մեր. այս տարիս թողի ձ
--- ի գերդ գրեցաք այս կարոզս ջուրն զի մեք
--- ք խնչվի հասկնանք զաստմն. յայն ժամն գին
--- այլ ավելի լինի թէ կամի Ա[ստուա]ծ, զուք զձեր բան
[ան]պակաս պահեցէք եւ Ա[ստուա]ծ պահապան ձեզ»:

***

Դամասկոսի թանգարանի հայկական պատառիկները, ինչպէս ասել ենք արդէն, 14 հնաբոյր ձեռագրերի աննշան բեկորներից են բաղկացած: Եւ, այնուամենայնիւ, նրանք շօշափելի նպաստ են բերում հայ հնագրութեանը, օգտակար նիւթ մատակարարում ս. Գրքի որոշ մասերի գիտական բնագիրը կազմելու աշխատանքներին, լրացնում մեր գիտելիքները հայ թարգմանական գրականութեան ոսկեդարեան յուշարձանների մասին: Նրանց հմայքը, սակայն, բազմապատկւում է այն հաւանականութեամբ, որ ի դէմս այդ պատառիկների մեզ են հասել միջնադարեան հայ մշակոյթի նշանաւոր կեդրոն Հռոմկլա ամրոցի մեծահարուստ մատենադարանի բզկտուած ու ցրիւ տրուած ձեռագրական գանձերի խնկելի մասունքները:

THE FRAGMENTS OF ARMENIAN MANUSCRIPTS IN THE DAMASCUS MUSEUM

Toward the end of the 19th century, when German scholars opened, by the special permission of the Sultan, the "treasury" in the Omayyad Mosque of Damascus, they found, among a considerable

number of documents, manuscripts and fragments written in Greek, Latin, Syriac, Old French, Armenian, and other languages. Further examinations showed that the fragments of the Armenian manuscripts dated back to the 10th through 13th centuries. These fragments are now found in the National Museum in Damascus. They are parts of 13 vellum manuscripts and of an epistle written on paper. Textually they are closely associated with the Old and New Testaments, ceremonial and hagiographical books, discourse documents, and epistolary literature. A critical research on these fragments will prove to be an invaluable contribution to the study of ancient Armenian literature and the history of the Armenian language. Historical investigation bears out the fact that these fragments originally come from one of the most renowned cultural centers, namely, the Hromgla library which had been ransacked by the Mamelukes in the days of Sultan Ashraf Salah ed Din (1290-1294) and had been brought to Damascus.

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

Հայ արվեստի պատմությունը, ունենալով մեկդարյա իր նախապատմությունը, գիտական հիմքերի վրա դրվեց երկրորդ աշխարհամարտի հաղթական ավարտից հետո: Այդ տարիներին Սովետական Հայաստանում՝ նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական ինստիտուտներում, Մաշտոցի անվան Մատենադարանում, Երևանի պետական համալսարանում և գիտական-ուսումնական այլ հաստատություններում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայագիտության բոլոր մասնաճյուղերի հետ մեկտեղ, նաև հայ արվեստի պատմության համակողմանի ուսումնասիրության համար: Երջանկահիշատակ գիտնականներ Հ. Ա. Օրբելին, Լ. Ա. Դուռնովոն, Ն. Մ. Տոկարսկին, Ք. Քուշնարյանը և ուրիշներ՝ անձամբ հսկայական գործ կատարելով, դաստիարակեցին բազմաթիվ երիտասարդ մասնագետներ: Եվ ավագ ու կրտսեր գիտնականների համատեղ ջանքերով հայ միջնադարյան երաժշտության, ճարտարապետության, մանրանկարչության ու կերպարվեստի մյուս բնագավառների կարևորագույն հուշարձանները դարձան մասնագիտական ուսումնասիրության առարկա. գրվեցին մի շարք մենագրություններ և արվեստի առանձին ճյուղերի պատմական ուղին բացահայտող ամփոփիչ բնույթի աշխատություններ: Զգալի աշխատանք կատարվեց նաև արտասահմանյան երկրներում՝ Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում. հատուկ հիշատակության է արժանի հատկապես ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսեսյանի գիտական

---

* «Հայ Արվեստին նվիրված Միջազգային երկրորդ Սիմպոզիում», Երևան, 1978, հ. IV, էջ 39-50:

լայնահուն գործունեությունը: Եվ այսօր գոհունակությամբ կարելի է նշել, որ չորս տասնամյակից պակաս ժամանակամիջոցում հայ արվեստի մեծարժեք հուշարձաններից շատերը դուրս բերվեցին ազգային նեղ շրջանակներից, ճանաչելի դարձան գիտական աշխարհին:

Հաջողությունների մասին համառոտակի այս խոսքից հետո պահանջ է զգացվում անմիջապես նշելու, որ առ այսօր միջազգային չափանիշներով դեռևս չեն որոշված հայ հին ու միջնադարյան արվեստի հուշարձանների տեղն ու նշանակությունը համաշխարհային արվեստի գանձարանում, դեռևս բավարար խորությամբ չեն լուսաբանված արվեստի տարբեր ճյուղերի պատմական զարգացման հազարամյա ընթացքի յուրահատկությունները, չեն բացահայտված հայ և հարևան ժողովուրդների արվեստի համապատասխան երևույթների ազգակցության և առնչությունների հետ կապված շատ հարցեր: Տասնյակ ու հարյուրավոր բարձրարժեք կոթողներ՝ ճարտարապետական հուշարձաններ, մանրանկարներով շքեղ զարդարված ձեռագրեր, փայտափորագրության ու բրուտագործության գեղեցիկ նմուշներ և այլն, առ այսօր դեռևս գիտականորեն չեն չափագրվել, չեն նկարագրվել և արժեքավորվել, ուստի չեն գրավել իրենց պատկան տեղը միջնադարյան արվեստի պատմության էջերում:

Հպարտանալով կատարված մեծ աշխատանքի արդյունքով, պարտավոր ենք հստակ պատկերացնել, թե որո՞նք են մեր առջև ծառացած հիմնական խնդիրները, խոպան ի՞նչ բնագավառներ են մնացել, ինչպե՞ս ենք այսուհետև համատեղելու մեր ջանքերը հայ արվեստի ուսումնասիրության մակարդակը նոր բարձունքների հասցնելու համար:

Մտնելով հարցերի այս ոլորտի մեջ, կարծում ենք, որ առաջիկա տարիներին հատուկ ուշադրության առարկա է դառնալու հայ արվեստի պատմության աղբյուրագիտական հիմքն ընդլայնելու, նոր սկզբնաղբյուրներ ու նոր նյութեր գիտական շրջանառության մեջ դնելու հարցը: Ըստ այդմ, հայ ճարտարապետության ուսումնասիրողները մեծ նվիրումով ու ջանասիրությամբ շարունակելու են Հայաստանում ու նրա սահմաններից դուրս գտնվող ճարտարապետական հուշարձանների հաշվառման, գիտական ցուցակագրման, չափագրման ու լուսանկարման աշխատանքները, այն հաշվով, որ մոտ ապագայում, հատոր առ հատոր, լույս ընծայվեն այդ նյութերը՝ որպես հետագա ուսումնասիրությունների համար հուսալի հիմք և տեղեկատու ճշգրիտ աղբյուր: Կերպարվեստի պատմության մասնագետները խնամքով հրատարակության են պատրաստելու բազմազան գունավոր ալբոմներ՝ մեր միջնադարյան մանրանկարչության տարբեր ուղղությունների պատկանող ստեղծագործությունների գեթ ընտրանին լայն շրջանառության մեջ դնելու նպատակով. պետք է հրապարակել նաև հայ մանրանկարիչների ամբողջական ցանկը՝ յուրաքանչյուր նկարչի պատկանող ձեռագրական բոլոր միավորների մանրակրկիտ հաշվառումով*: Խնամքով ցուցակագրություն պետք ունենք նաև Հայաստանի և հայկական գաղթավայրերի եկեղեցական-վանական հաստատություններում պահվող բոլոր յուղաներկ սրբապատկերները, որոնց մեջ ևս կան հայ կերպարվեստի պատմության համար կարևոր ստեղծագործություններ: Երաժշտության մասնագետներն այսուհետև ավելի սևեռուն ուշադրություն պետք է նվիրեն, օր ավուր անհետացող ժողովրդական երաժշտության գանձերի հավաքման, ձայնագրման և հրապարակման հետ կապված աշխատանքներին, որոնք, ցավոք սրտի, շատ դանդաղ ընթացքով են առաջ տարվում: Միջնադարյան հայ երաժշտության համակողմանի գիտական ուսումնասիրության հաջողությունը վերջին հաշվով պայմանավորված է խազային սիստեմի վերծանման գծով տարվող աշխատանքների հաջողության հետ: Ուստի համապատասխան կադրեր պետք է պատրաստվեն այդ բարդ ու դժվարին բնագավառի աշխատանքներին պատշաճ ծավալ ու թափ հաղորդելու համար: Եվ այսպես, կարելի է թվարկել հայ արվեստի բոլոր բնագավառները՝ հենց անմիջապես նշելու համար, որ դրանցից յուրաքանչյուրի գիտական ուսումնասիրության հետագա հաջողությունը մեծ չափով պայմանավորված է աղբյուրագիտական հիմքի ընդլայնման, առկա նյութերի հավաքման, ցուցակագրման, գիտական մշակման և առանձին մատենաշարով հրապարակման աշխատանքների ծավալման հետ:

Մեր զեկուցումը նվիրված է հայ արվեստի աղբյուրագիտության այն մասնաճյուղին, որն իր խոշոր նպաստն է բերելու միջնադարյան արվեստի բոլոր բնագավառների ուսումնասիրությանը: Խոսքը գրավոր և

* Լ. Խաչիկյանի հանձնարարությամբ այդ աշխատանքը այժմ կատարված է Աստղիկ Գևորգյանի «Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, IX-XIX դդ., Գահիրէ, 1998, (շարունակությունը ի տպի է) - Խմբ.:

գերազանցապես ձեռագրական սկզբնաղբյուրների մասին է: Միջնադարյան հայ մատենագրության բոլոր տեսակների մեջ արվեստի տարբեր հարցերի մասին կան ուշագրավ տվյալներ: Հատկապես առատ են ճարտարապետական նշանավոր կառույցների շինարարության և վերանորոգման մասին վկայությունները, որոնց մեծագույն մասը վաղուց ի վեր գրավել է մասնագետների ուշադրությունը և դրվել գիտական շրջանառության մեջ: Առաջին հերթին օգտագործվել են հայ պատմագիրների երկերը, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ինչ-որ չափով նաև ծիսական որոշ մատյաններ (Մաշտոցները, Պատարագամատույցները և այլն): Սակայն միջնադարյան մատենագրության մի շարք ճյուղեր՝ հատկապես Աստվածաշնչի տարբեր գրքերի մեծաքանակ մեկնությունները, իմաստասիրական- դավանաբանական գրվածքները և ավելի մեծ չափով ճառերը, քարոզներն ու խրատները՝ պատշաճ ուշադրության չեն գրավել: Մինչդեռ նրանցից շատերում, աստվածաբանական-վերացական դրույթների պարզաբանման նպատակով, մեր մեկնիչներն ու քարոզիչները անդրադարձել են իրական կյանքի երևույթներին, մեջբերելով ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի բազմաթիվ փաստեր և օրինակներ:

Միջնադարյան հայ մի շարք մատենագիրների, հատկապես Հովհան Մայրավանեցու, Զաքարիա Ձագեցու, Սարկավագ Վարդապետի, Սարգիս և Ներսես Շնորհալիների, Իգնատիոսի, Վարդան Այգեկցու, Վանականի, Վարդան Արևելցու, Եսայի Նչեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, որանց մերձավոր աշակերտների ու բազմաթիվ այլ հեղինակների երկերում հսկայական նյութ կա ամբարված ինչպես արվեստի տարբեր բնագավառների, այնպես էլ սոցիալ-տնտեսական կյանքի ուշագրավ երևույթների, օտար տիրապետողների և սեփական տերերի դեմ աշխատավոր զանգվածների մղած պայքարի, առաջադիմական գաղափարների և հարակից հարցերի մասին:

Մեր բուն նպատակն է մի քանի բնորոշ օրինակով ցույց տալ արվեստի պատմության մասին առկա վկայությունների բնույթն ու տարողությունը, չեշտելու համար դրանց հավաքման-մեկնաբանման և գիտական շրջանառության մեջ դնելու կարևորությունը:

Նախ ծանոթանանք կերպարվեստին վերաբերող որոշ նյութերի:

Պատմական մեր աղբյուրներից գրեթե իսպառ բացակայում են

գիմանկարչության, բնանկարչության և կերպարվեստի այլ մասնաճյուղերի մասին տվյալները: Տարածվա՞ծ են եղել, արդյոք, դրանք միջնադարյան Հայաստանում, ի՞նչ տեղ են գրավել հասարակության կյանքի ու կենցաղի մեջ: Այդ հարցերի մասին առատ տեղեկություններ կան վերոհիշյալ սկզբնաղբյուրներում:

Նշանավոր բանաստեղծ ու մատենագիր Ներսես Շնորհալին (մահ. 1173 թ.), օրինակ, մի առիթով ասում է. «Պատկեր թագաւորի նախ կապարով ծրագրէ արուեստաւորն ի տախտակի, և ապա ծիրանափառ զարդու շքեղացուցանէ»[1]: Ըստ այդմ, հայկական միջնադարում լայնորեն տարածված է եղել տախտակի վրա տարբեր ներկերով նկարել նշանավոր անձանց դիմապատկերները: Ներսեսի ժամանակակից Սարգիս Շնորհալին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում այդ մասին: Նա գրում է. «Ի տախտակի կամելով ոք գրել պատկեր արքայական, նախ՝ առաջին ի խոշորութենէն յղկէ զտախտակն, և ապա յօրինէ ի նմին զպատկերն: Եւ կամ դարձեալ՝ որպէս զպատկեր թագաւորական նկարեալ յոսկւոյ ապականեալ ի ժանգոյ՝ վերստին ոք նորոգէ ի ձեռն արուեստին իւրոյ և յառաջինն յօրինէ պայծառութիւն»[2]:

Հովհաննես Երզնկացին (մահ. 1293 թ.) տեղեկություն է հաղորդում այն մասին, որ թագավորող գինաստիայի անդամները (նկատի ունի Կիլիկյան հայ պետության տիրակալներին), ուստի մեծ հավանականությամբ նաև ֆեոդալական վերնախավին պատկանող բոլոր անձինք, սովորություն են ունեցել իրենց կյանքի տարբեր շրջաններում մի քանի անգամ նկարել տալ իրենց դիմապատկերները: Նա գրում է. «Եւ զոր աւրինակ նկարի պատկեր թագաւորի ի մանկութեանն՝ զնոյն պահէ զնմանութիւն զգայականն կերպ, նոյնպէս կատարեալ հասակին, և ծերութեանն, և յորժամ թագ առնու, իւրաքանչիւրն զնոյն նմանութիւն պահեն»[3]:

---

[1] Ներսես Շնորհալի, Մեկնութիւն սուրբ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, Կ. Պոլիս, 1825, էջ 105:

[2] Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից, արարեալ սրբոյ վարդապետին Սարգսի հայոց իմաստասիրի, Կ. Պոլիս, 1743, էջ 22-23:

[3] Յովհան Երզնկացի, Ասացուածք ի բանն տեառն, որ ասէ. «Ես եմ հովիւ քաջ...», Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ.

Նույն հեղինակի մի այլ համեմատությունից պարզ է դառնում, որ միջնադարյան նկարիչները չեն սահմանափակվել անվանի մարդկանց դիմապատկերներ ստեղծելով, այլ աշխատել են նաև գեղանկարչության ուրիշ բնագավառներում: Այլ կերպ չի կարելի հասկանալ Երզնկացու մի այլ քարոզի ստորև մեջ բերվող հատվածը. «Զոր աւրինակ. թէ ախորժէ ոք գծագրութեամբ ղեղոց պատկեր նկարել՝ զպէս պէս երանգս ղեղոց ի կիր ածէ, և այնպէս եղեալ զուշ դիտաւորութեանն, զի ի ձև և ի հասակ կենդանոյ յաւրինեսցէ, զի որպէս զկենդանի հանոյ թուեսցի»[4]:

Մատթեոս Ջուղայեցու (14-15-րդ դդ.) մի ուշագրավ վկայությունից տեղեկություն ենք ստանում եկեղեցիների և ապարանքների որմերը տարբեր պատկերներով ու զարդանախշերով զարդարված լինելու մասին: Իր կողմից առաջադրված՝ «Ինչի՞ց է մարդ մխիթարվում» հարցին Մ. Ջուղայեցին պատասխանում է մի շարք կետերով. դրանցից հինգերորդը շարադրված է այսպես. «Ազգի-ազգի նաղաշ և պատկերք և գեղեցկութիւն եկեղեցեաց և ապարանից, մխիթարութիւն է նոցին տեսութիւնն»[5]: *Նա խոսում է նաև պատկերագրության մասնագիտական հնարանքների մասին.* «Որպէս ոք զտախտակս ղեղագործէ. և թէպէտ գեղեցիկս յօրինէ՝ անկատար է առանց ջրեղի, զի ջուրն հանէ և ձեռք փչրեն: Իսկ ջրեղն երկուս գործս առնէ. մին՝ զի ամրացուցանէ զդեղն ի վերայ փայտին, և ապա փայլուն առնէ ի տեսս»[6]:

Ուշագրավ են նաև գեղանկարչության գնահատման չափանիշների մասին առկա տեղեկությունները: Բազմավաստակ մատենագիր, իմաստասեր և մանրանկարիչ Գրիգոր Տաթևացու (1346-1410) կարծիքով՝ արվեստագետի հիմնական մտահոգությունը պետք է լինի ըստ ամենայնի նմանվել բնօրինակին: «Պատկերագործն ամենայնիւ պարտ է նմանիլ նախա-

2173, էջ 347: Հմմտ. Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին արվեստի և ազգագրության մասին, «Լրաբեր», 1971, N 9, էջ 76:

[4] Մատենադարան, ձեռ. 2173, էջ 316ա:

[5] Մատթէոս Ջուղայեցի, Քննութիւն գործոց առաքելոց, Մատենադարան, ձեռ. 1402, էջ 233ա: Այս հեղինակի գրվածքների պատմա-ճանաչողական նշանակության մասին տե՛ս մեր «Մատթէոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը» հոդվածը («Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 57-84:

[6] Մատթէոս Ջուղայեցի, նույն տեղում, էջ 32ա:

տիպին»,- *գրել է նա*[7]: *Նկարչական որևէ ստեղծագործության կատարելությունը, նույն հեղինակի կարծիքով, պայմանավորված է երեք հիմնական գործոններով. ձևի վայելչությամբ, մասերի համաչափությամբ, պատշաճ լույս ու ստվերով:* «Գիտելի է,- *գրում է նա*,- զի յերից պատկերին գեղեցկութիւն, որով նմանի ի նախատիպն. նախ՝ չափաւոր ձևն, երկրորդ՝ հաւասար մասունքն, երրորդ՝ յարմար շուքն»[8]:

Որ Տաթևացին կարևոր նշանակություն է վերագրել լույս ու ստվերին, երևում է նաև սև ներկի ըստ հարկի օգտագործման կարևոր նշանակության մասին նրա հայտնած կարծիքից: «Որակ սևութեանն ըստ ինքեան անզարդ է, բայց ի պատկերագրության արհեստն՝ ի պատշաճավոր տեղի կարգեալ՝ ազնիւ երևի»[9],- *գրել է նա, անշուշտ, անձնական հարուստ փորձի հիման վրա:*

Միջնադարյան հայ մատենագիրների գեղագիտական հայացքների ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող մյուս տեղեկությունները մի կողմ թողնելով, հպանցիկ անդրադառնանք նաև ներկերի բաղադրության և տարբեր ներկերի զուգորդումների մասին առկա տվյալներից երկուսին:[*] «Արուեստաւորք ի ծաղկանց առնուն զներկ,- *գրել է Գրիգոր Տաթևացու աշակերտ Առաքել Սյունեցին*[10], *իսկ Մատթեոս Ջուղայեցին, որ բացառիկ սեր ունի կյանքի տարբեր բնագավառներից քաղված համեմատություններով ճոխացնելու իր քարոզներն ու մեկնողական գրվածքները, անդրադառնում է տարբեր գույնի ներկերի խառնուրդից նոր գույներ ու երանգներ ստանալու հարցին: Նա գրում է.* «Ամենայն բոյսք բնական որակ ունեն կանաչ: Եւ այսմ գունոյ պատճառ ուսանիմք ի ներկողէ անտի. քանզի զտորունն և զլեղակն յիրար խառնեն, այսինքն՝

[7] Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, ձմռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 563:

[8] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 271:

[9] Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 67:

[*] Հարկ է նշել, որ Մաշտոցի անվան Մատենադարանը ձեռնակել է միջնադարյան ձեռագրերում առկա ներկերի ու թանաքների բաղադրության մասին բոլոր կարգի ձեռագրական նյութերի ամբողջական մի ժողովածու կազմելու աշխատանքներին, որոնք իրենց ավարտին կհասնեն առաջիկա 2-3 տարիների ընթացքում:

[10] Առաքել Սիւնեցի, Քարոզ ծննդեան տեառն ի կուսէն, Մատենադարան, ձեռ. 969, էջ 33ա:

զսեաւն և զկարմիրն՝ ծնանի լուրջ, իսկ յորժամ յալաժահրն ձգեն, որ է դեղին՝ կանաչի»[11]:

Մեր աղբյուրներում ուշադրության արժանի են մեկ կողմից՝ «իմաստուն», «հմուտ», «գեղեցիկ», և մյուս կողմից՝ «ոչ ուսեալ», «անհմուտ», «աղտեղի» պատկերագործների հակադրության մասին տվյալները: Ըստ որում պարզվում է, որ, ինչպես միջնադարյան արհեստագործության մյուս ճյուղերում, այնպես էլ նկարչության մեջ կիրառվել են աշակերտների ուսուցման միևնույն սկզբունքները. վարպետն իր գիտելիքները հաղորդել է աշակերտին, անշուշտ, երկար տարիներ շահագործելով նրա անվարձահատույց աշխատանքը: «Զոր օրինակ հմուտ պատկերագործն ասիցէ առ որ հանդերձեալ է ուսուցանել՝ զանհմուտ ոք. եթէ այն է գեղեցիկ պատկեր, որ յայս չափ և յայնպիսի ձև լինի նկարագրեալ»,- *գրել է Ներսես Շնորհալին*[12]: «Նկարիչ իմաստուն ձևացուցանէ պատկեր և ապա ոչ ուսեալն՝ զնոյն օրինակէ»,- *կարդում ենք Գրիգոր Տաթևացու մոտ*[13] *և այլն:*

Քննության առարկա միջնադարյան աղբյուրներում առատ տեղեկություններ կան նաև հայ երաժշտության տեսական հարցերի, հոգևոր և աշխարհիկ երաժշտության փոխադարձ առնչությունների, Հայաստանում տարածված երաժշտական գործիքների, դրանց անունների և հարակից խնդիրների մասին: Գիտելիքների այս հարուստ գանձարանից որոշ տվյալներ քաղել է տակավին մեծ Կոմիտասը, ավելի լայն ծավալով այդ աշխատանքը կատարում են արդի մեր երաժշտագետները (հատկապես Ն. Թահմիզյանը), բայց այստեղ ևս շատ անելիքներ կան:

Միջնադարյան բազմաթիվ աղբյուրներ, լրացնելով մեկը մյուսին, հուշում են, որ 13-14-րդ դարերում եկեղեցական գաղափարախոսության դեմ ծառացել է գյուղի և քաղաքի աշխատավորությունը: Հատկապես երիտասարդությունը՝ գուսանական արվեստի սիրահար, խորթացել է եկեղեցուց: Անունն անհայտ մի հեղինակ, ավաղելով իր ժամանակի (14-րդ դարի կեսերի) բարքերի անկումը, հայտնում է, որ ինքը լուր ունի 15-ամյա մի

[11] Մատթէոս Ջուղայեցի, Հաւաքումն բանից, որ հայի ի Զ. աւուր գործս աստուածոյ, Մատենադարան, ձեռ. 774, էջ 324ա:

[12] Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն... Մատթէոսի, էջ 88:

[13] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 45:

երիտասարդի մասին, որ իր կյանքում դեռևս պատարագ չի լսել և մեկ ուրիշի մասին, որ «Ժ (10) ամ աւելի ևս էր, որ մարմնոյ և արեան տեառն չէր հաղորդել»[14]:

Անշուշտ, հենց այս միջավայրում էին ստեղծվում և լայն տարածում գտնում հիասքանչ այն հայրենները, որոնց երիտասարդ հերոսը ի լուր ամենի հայտարարում էր.

Քանի մարդն գիս բերեր,
Քահանի չեմ խոստովաներ,
Ուրտեղ քահանայ տեսեր՝
Նայ ծռեր ճամփուս ու ելեր...[15]

Հայ եկեղեցու գաղափարախոսներն այս վտանգավոր խմորումները չեզոքացնելու և եկեղեցու հեղինակությունը վերականգնելու միջոցներ էին որոնում: Նրանք քաջ գիտակցում էին, որ, ինչպես նշել էր դեռևս Ներսես Լամբրոնացին. «չիք ինչ, որ զկամս մեր հեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն՝ որպէս երգոցն ձայն»[16], *և առաջնորդվելով այդ սկզբունքով մեծ չափով ճոխացնում էին եկեղեցական պաշտամունքային երաժշտությունը, լայնորեն օգտագործելով ժողովրդին հարազատ աշխարհիկ երաժշտության հոգեզմայլ երգ-եղանակները: Այս մասին կան անսքող վկայություններ: Ոմն Հովհաննես վարդապետ (հավանաբար* Հերմոնեցի *կոչվածը, որ գործել է 15-րդ դարի առաջին հիսնամյակում), իր «Վասն աղօթից» քարոզի մեջ, ուղղակի գրել է.* «Իսկ ձայնք և եղանակք յեկեղեցի վասն զմիտս ժողովրդեանն զերելոյ առ երկինս աստուածոյ սահմանեցաւ և ոչ վասն լրման աղօթից: Զի ձայնիւ զլսելիս պատրեմք և առ մեզ քարշեմք ի դիւական երգոց: Եւ զանազան զարդուքն՝ զտեսանելիքն (պատրեմք) և անուշահոտով խնկոցն՝ զհոտոտելիքն: Եւ այսպէս, կարթեալ քարշեմք զնոսա արտաքս ի մեղաց ծովէն՝ ի հոգւոր տապանն՝ յեկեղեցիս»[17]:

[14] Մատենադարան, ձեռ. 581, էջ 256բ:

[15] Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 145:

[16] Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, Երուսաղէմ, 1842, էջ 157:

[17] Մատենադարան, ձեռ. 2229, էջ 174ա:

Գրեթե նույնն է ասում Մաթեոս Ջուղայեցին. «Փող ունի ի ձեռն հովիւն, որով քաղցրացուցանէ զհաւտն ի բերել զորոջն, որպէս և հոգևոր առաջնորդն պարտի եղանակաւոր ձայնս և երգս երգել միշտ յեկեղեցի, և մի ծուլութեամբ բառնալ զայն յեկեղեցոյ»[18]:

Եվ եթե եկեղեցական երաժշտությունը հաճո է Աստծուն, նրան հակոտնյա է սատանայի հովանու տակ բարգավաճող գուսանական երգերաժշտությունը. այսպես է քարոզում Գրիգոր Տաթևացին: «Եկեղեցւոյ մանկունք,- *գրում է նա,*- եղանակեն արուեստիւ կետի, որ գրած է...: Ընդդէմ *(եկեղեցւոյ)* երգեցողացն *(սատանայ ունի)* զգուսանս և զաղտեղի երգս»[19]:

Քննարկվող սկզբնաղբյուրներում տասա տեղեկություններ կան նաև երաժշտական գործիքների, դրանց տարատեսակների և անունների մասին: Իր քարոզներից մեկում Առաքել Սյունեցին, օրինակ, գրում է. «Լարն յարուեստաւորէն է կազմեալ... ոլորելով լինի... լարիւն զանազան երգարան կազմի, այսինքն՝ երկաղի, և չորեքաղի, և եւթնաղի, և տասնաղի: Յուրախարար ձայն լարիցն բազում ժողովին ի լսել...: Որք յուրախարար ձայն լարին ժողովին՝ ոչ միայն լարիցն լսեն, այլ և զանազան բանս երգեցողին, զի ի ձայնեն ունկն և սիրտն զուարճանայ, և ի բանիցըն՝ միտքն և հոգին իմաստնանայ»[20]: *Մի այլ առիթով նույն հեղինակն ասում է.* «Երգարանն՝ փայտ է և լար ի վերայ, կամ՝ փայտ է և մորթ ի վերայ և պղնձի փողեր. իսկ յորժամ հարկանեն՝ զուարճանան լսօղքն»[21]: *Իսկ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեանն» աշխատության իր մեկնության մեջ Սյունեցին հայտնում է, որ* «Երաժշտականն... ձեռօք և փչմամբ լինի: Արդ ձեռօք՝ որպէս դուփոլ, և նաղարա, և դար, և ծնծղայք, և շաշբայ, և ղաւառն, և չանկ, և չաղանայ: Իսկ փչմամբ և ձեռօք՝ որպէս սուռնա, և նաֆիր, և շուի, և տկզարկ, որ զտիկն փչէ և զանազան ձայն

[18] Մատթէոս Ջուղայեցի, Քարոզ ի բանն «Ես եմ հովիւ քաջ...», Մատենադարան, ձեռ. 2229, էջ 207բ:

[19] Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 232:

[20] Առաքել Սիւնեցի, Քարոզ ի բանն Սողոմոնի «Գեղեցիկ ես մերձաւոր իմ...», Մատենադարան, ձեռ. 2229, էջ 47բ-48ա:

[21] Մատենադարան, ձեռ. 969, էջ 46ա:

հանէ. այսպէս և երգեհոնն»[22]:

Այսպիսով, այս հատվածում թվարկվում են երաժշտական բազմաթիվ «երգարաններ» (այդպես են կոչված երաժշտական գործիքները), որոնք բաժանված են երեք տեսակների՝ լարային («փայտ է և լար ի վերայ»), *բախական* («փայտ է, և մորթ ի վերայ, և պղնձի փողեր») *և փողային* («փչմամբ»):

Նման բնույթի տվյալներ կարելի է քաղել միջնադարյան հայ բազմաթիվ մատենագիրների տարբեր բնույթի աշխատություններից: Գրիգոր Տաթևացին, օրինակ, իր քարոզներից մեկում ասում է. «Եղեգնեայ փողն ունի հինգ ծակ, յոր խաղացուցանեն զմատունս»[23]: *Հովհան Երզնկացին խոսում է պրոֆեսիոնալ երաժիշտ դառնալու համար գործադրվող քրտնաջան աշխատանքի մասին:* «Փողք և քնարք և կաքաւիչք և այլ ամենայն արուեստք ժամանակաւ և աշխատութեամբ ուսեալ լինին»[24],- *գրում է նա, և այլն:*

Մեր կողմից քննարկվող սկզբնաղբյուրներում հետաքրքրական տեղեկություններ կան նաև թատերական ու կրկեսային ներկայացումների, լարախաղացության, ձիարշավության և տարբեր բնույթի մրցույթների մասին: Հայ միջնադարյան թատրոնի հանգամանալից ու ճշգրիտ պատմությունը հնարավոր չէ ստեղծել առանց այդ նյութերի համբերատար հավաքման ու համադրման: Ծանոթանանք նաև դրանցից մի քանիսին. «Ինչ բանի համար են մեծ թվով մարդիկ հավաքվում մի տեղ». այս հարցին Մատթեոս Ջուղայեցին իր «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատության մեջ պատասխանում է տասը առանձին կետերով: Մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում դրանցից երկրորդն ու իններորդը, որոնցում ասված է. «(Ժողովին վասն) պարծանաց որք ձիընթացս առնեն, կամ սուսերս խաղացուցանեն, կամ ի չուանս խաղան, կամ ի շիշս: Եւ այս վասն պարծանաց, թէ՝ այս մեծ գործ յինէն կատարեցաւ»: «Ժողովին վասն, անտես կենդանեաց, որպէս փիղ կամ զուռնաքա, թէ բերեն՝ ժողովին»[25]: *Նույն աշխատության*

[22] Մատենադարան, ձեռ. 1764, էջ 293բ:

[23] Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, ձմռան հատոր, էջ 289:

[24] Մատենադարան, ձեռ. 2173, էջ 99բ:

[25] Մատենադարան, ձեռ. 1402, էջ 232ա:

մի այլ հատվածում նա խոսում է ըմբիշների մասին. «Ըմբշամարտք յորժամ ի թէատրոնն ընթանան՝ մեծամեծք և փոքունք յարուցեալ մի զմիմեամբք անցանեն, զի տեսանիցեն զքաջութիւնս նոցա»[26]:

Եկեղեցական մատենագիրները, առանց բացառության, պախարակում են թատերական ներկայացումները, կոչելով դրանք «լկտի խաղ»[27], «դիւամոլ տեսարան» *և այլն, որին հանդիսատես են լինում* «աներկիւղ», «պակասամիտ» *և* «անամօթացեալ» *մարդիկ. դիտելով ներկայացումը նրանք սատանայի կողմից արձակված աներևույթ նետով վիրավորվում են.* «թէպէտ ոչ մարմնով, սակայն, զոգիս պղծեալ ապականեն»[28]:

Այս և նման բազմաթիվ վկայություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ ներկայացումների ժամանակ ոչ միայն ցուցադրվում էին զվարճալի ու անպարկեշտ տեսարաններ, այլև քննադատական սուր սլաքներ էին ուղղվում անարդարացի սոցիալական կարգերի, բիրտ, դաժան և անբարոյական հոգևոր ու աշխարհիկ տերերի դեմ:

Միջնադարյան արվեստի պատմաբանները մեկնողական ու քարոզչական գրվածքներից ուշագրավ տվյալներ կարող են քաղել նաև շինարարության ու ճարտարապետության հետ առնչվող այլազան հարցերի մասին, որոնցից են օրինակ՝ շինարարական գործի կազմակերպչական ձևերը, ժամատուն-գավիթների ֆունկցիոնալ նշանակությունը, *Փոքր Հայքում, Կիլիկիայում և շրջակա երկրամասերում հայկական եկեղեցիների ու վանական հաստատությունների* կառուցման ժամանակագրական հարցերը, *ճարտարապետական մի շարք* տերմինների ճշգրիտ բովանդակությունը *և այլն:*

Կիրառական արվեստի տարբեր ճյուղերի՝ ոսկերչության, արծաթագործության, գեղարվեստական արժեք ներկայացնող մեծագին գործվածքեղենի արտադրության, բրուտագործության, ասեղնագործության մասին ևս հիշյալ աղբյուրներում կան ուշագրության արժանի վկայություններ: Մատթեոս Ջուղայեցու «Վասն կանանց» քարոզի մեջ, օրինակ, թվարկված

[26] Մատենադարան, ձեռ. 1402, էջ 173ա:

[27] Գիրք քարոզութեան, ամառան հատոր, էջ 242:

[28] Քարոզ ցասման (հեղինակը կամ Մատթէոս Ջուղայեցին է կամ Կյ Տիրատուր վարդապետը), Մատենադարան, ձեռ. 2229, էջ 251բ:

ու բացատրված են կանացի արդուզարդի տասնյակ անվանումներ՝ ծամկալ *(«զանազան ակամբք և մարգարտով և յոսկւով յօրինեալ»),* պոկալ կամ ճոպինդ *(«պսակ ոսկւոյ սրբոյ, ակամբ զարդարեալ խաչք՝ ի գլուխն դնեն»),* մահիկ *(«վզնոց»),* մեհևանդ *(«օղ ի վիզն»),* անգոյր և ծարոյր *(աչերի և աչկունքի ներկեր),* ճեղեճակ *(«գոտոյն փոկերն, որ ի կախ կայ»),* կշտապանակ *(«կռծականին է... որ ի կուշտս և ի սիրտս»),* սարաշուն կամ ֆլութակ *(«ծածկոյթ հերաց գլխոյն») և այլն և այլն*[29]:

Տեղին է այստեղ նշել, որ վերոհիշյալ բառերից շատերը տեղ չեն գտել հայոց լեզվի բառարաններում, ուստի որոշակի նշանակություն ունեն նաև լեզվի պատմության և բառարանագրության համար:

Մեր կողմից վկայակոչված օրինակները, որ դյուրությամբ կարելի էր եապատկել, կարծում ենք, միանգամայն բավարար են հետևյալ եզրակացության համար. միջնադարյան հայկական քարոզգրքերն ու մեկնողական բնույթի աշխատությունները հայ արվեստի պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից են: Առաջիկայում ծրագրված աշխատանք պետք է ծավալել հայ մատենագրության բոլոր տեսակներին պատկանող երկերից պատմաճանաչողական ու արվեստագիտական որոշակի արժեք ներկայացնող վկայությունների ընտրության, հավաքման, մեկնաբանման և առանձին պրակներով հրապարակելու համար: *Այդ աղբյուրների տվյալներով հայ արվեստի պատմության մասնագետները հնարավորություն կունենան մեծապես ընդարձակելու իրենց հետազոտությունների աղբյուրագիտական հիմքը, ծանոթանալու միջնադարյան արվեստի պատմության այլուստ անհայտ իրողությունների հետ, բացահայտելու լուսաբանության կարոտ բազմաթիվ փաստեր ու երևույթներ*[*]:

[29] Մատենադարան, ձեռ. 6607, էջ 297բ-299բ:

[*] Լևոն Խաչիկյանի ծրագրերից մի քանիսը գտան իրենց կատարողներին: Վերջին տասնամյակներին լույս տեսան Ն. Թահմիզյանի, Է. Կորխմազյանի, Հ. Հակոբյանի, Ա. Գևորգյանի, Լ. Զուգասզյանի, Ի. Դրամփյանի, Լ. Զաքարյանի, Վ. Ղազարյանի և այլոց մենագրություններն ու պրակ-հրապարակումները: - Խմբ.:

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ ՁԵՌԱԳՐԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆԸ*

11-րդ դարի 60-ական թվականներին, մահ ու սարսափ տարածելով ամենուրեք, սելջուկ-թուրքերը բռնագրավեցին պատմական Հայաստանի մեծագույն մասը. 1064 թ., երկարատև ու համառ դիմադրությունից հետո, ընկավ նաև Հայաստանի մայրաքաղաք անառիկ Անին: Քաղաքական և տնտեսական զարհուրելի պայմաններ ստեղծվեցին աշխատավոր մարդկանց համար, որի հետևանքով ավելի մեծ չափերի հասավ զանգվածային արտագաղթը հայրենի երկրից դեպի Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններն ու դեպի Կիլիկիա, երկրամասեր, ուր նախորդ տասնամյակներից արդեն բնակություն էին հաստատել տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ: Հերոսական պայքար մղելով բյուզանդական կայսրության, Իկոնիայի սուլթանության, արաբական ամիրությունների, իսկ հետագայում նաև Եվրոպայից արևելք ներթափանցող խաչակիրների դեմ (որոնցից յուրաքանչյուրը փորձում էր իր տիրապետության տակ առնել հիմնականում հայերով բնակեցված այդ շրջանները), հայ զորաբանակներին հաջողվեց ի վերջո Կիլիկիայում ստեղծել մի նոր հայկական իշխանություն, որը գոյատևեց շուրջ երեք հարյուրամյակ՝ մինչև 14-րդ դարի վերջերը, հանդիսանալով հայ ժողովրդի քաղաքական կյանքի ու մշակույթի զարգացման կարևորագույն օջախներից մեկը:

Նկատված իրողություն է, որ միջին դարերում հայ եկեղեցու վեհապետներն իրենց աթոռը հաստատում էին այն վայրերում, ուր գոյություն ուներ անկախ հայկական իշխանություն: Անիի անկումից հետո հայոց կաթողիկոսական գահը սկսեց ճանապարհորդել՝ ժամանակավոր կայանք գտնելով նախ Սեբաստիայում, ապա Ծամնդավում, Քեսունի Կարմիր վան-

* «Գարուն», N 4, 1976, էջ 56-62:

քում, Ծովքում և այլ վայրերում, մինչև 1149 թվականը, երբ Գրիգոր Մագիստրոսի գերդաստանից սերված Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը ձեռք բերեց Եփրատի ափին գտնվող ու լավ պաշտպանված Հռոմկլա կոչվող բնակավայր-ամրոցը, որը մինչև 1292 թվականը, շուրջ մեկուկես հարյուրամյակ, եղավ հայոց կաթողիկոսների աթոռանիստն ու կիլիկյան Հայաստանի մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Այստեղ ապրեցին և ստեղծագործեցին հայ գրականության ու գիտության նշանավոր երախտավորներ Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, հավանաբար նաև Մխիթար Հերացի մեծ բժշկապետը և տասնյակ այլ անվանի գիտնական-մատենագիրներ: Հռոմկլան եղավ նաև հայ գրչության ու մանրանկարչության արդյունաշատ կենտրոններից մեկը, ուր նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ձեռագիր գրքերի ձևավորման հնամենի ավանդույթների հիման վրա՝ հայ մանրանկարչության աննախընթաց ծաղկման ու զարգացման համար: Հռոմկլայի մանրանկարչական դպրոցի բուռն վերելքը սկսվեց 13-րդ դարի 20-ական թվականներից, կապված լինելով Կոստանդին Բարձրբերդցու (1221-1267) անվան հետ: Գրասեր այդ կաթողիկոսը, որ կանոնական իր հրահանգներում պատվիրում էր գրքերի ընդօրինակության աշխատանքները հանձնարարել իրենց գործին հմուտ վարպետների, իր շուրջը համախմբեց գեղագիր գրիչների և անգերազանց մանրանկարիչների մի բույլ, որին հատուկ փայլ տվեց մեծատաղանդ Թորոս Ռոսլինը:

Նշանավոր այս արվեստագետի մասին կենսագրական տվյալներ գրեթե չեն պահպանվել: Իր հիշատակարաններից տեղեկանում ենք, որ սերում է «ըստ նախնեաց» Ռոսլին (գրվում է նաև Ռուսլին և Ռուսլի) կոչվող մի գերդաստանից, եղել է աշխարհական անձ, ունեցել է զավակներ: Մանրանկարչությունից զատ, քաջ տիրապետել է նաև գրչության արվեստին. ընդօրինակել է ձեռագրեր, համահավասար չափով օգտագործելով գրչության տարբեր տեսակներ՝ երկաթագիր, բոլորգիր և այլն:

Թ. Ռոսլինի գեղարվեստական ժառանգության գիտական ուսումնասիրությունը, որ սկսվել է տակավին մեր դարի սկզբներին, նոր է դուրս գալիս խանձարուրային իր վիճակից: Ռոսլինի ինքնագիր հիշատակարաններով օժտված, ուստի և անտարակույս նրա կողմից նկարազարդված ձեռագրերի մեծագույն մասը պահվում է Երուսաղեմում, ուստի դժվարամատչելի է եղել հայ մանրանկարչությամբ զբաղվող մասնագետներից շատերին: Որոշ բանասերներ աղոտ պատկերացում կազմած լինելով այդ մեծ մանրանկարչի ստեղծագործական անհատականության մասին, բավարար չափով հաշվի չառնելով և այն հանգամանքը, որ 13-րդ դարի 2-րդ հիսնամյակում կիլիկյան հողում միաժամանակ ապրել ու ստեղծագործել են մեկից ավելի տաղանդավոր մանրանկարիչ վարպետներ, Թ. Ռոսլինին վերագրեցին նաև Մաշտոցի անվան Մատենադարանում և հայ ձեռագրերի այլ հավաքածուների մեջ պահվող կիլիկյան մի շարք ձեռագրեր, որոնք, անտարակույս արվեստի մեծ կոթողներ են՝ արժանի բարձր գնահատականի և խորազնին ուսումնասիրության, սակայն կատարված են ուրիշ վարպետների կողմից:

1952 թ. տպագրական բարձր արվեստով հրատարակվեց հայ մանրանկարչության առաջին շքեղ ալբոմը, որի մեջ տեղ գտան նաև Թորոս Ռոսլինին վերագրված տասը մեծարժեք մանրանկարների շատ հաջող վերատպություններ, քաղված Մաշտոցյան Մատենադարանի NN 979 (Ճաշոց), 197 (Ավետարան) և 9422 (Ավետարան) ձեռագրերից: Ռոսլինի անունը այս, ինչպես նաև հետագայում շրջանառության մեջ դրված ալբոմների միջոցով ճանաչելի դարձավ արվեստասեր հասարակայնության լայն շրջաններին, բայց դժբախտաբար, ինչպես պարզվեց հետագայում, նրան վերագրված մանրանկարներից և ոչ մեկը իրապես Թորոս Ռոսլինին չէր պատկանում: Այսպիսով, ընդամենը երկու տասնամյակ առաջ հայ արվեստի պատմության կարևոր մի խնդիր իր ճիշտ լուծումը չստացավ և այդ առաջին հերթին այն պատճառով, որ Ռոսլինի ստորագրությունը կրող ձեռագրերը պահվում էին Հայաստանի սահմաններից դուրս՝ անմատչելի լինելով մեր արվեստի պատմությամբ զբաղված մասնագետներին: Վերջին տարիների ընթացքում դրական որոշ տեղաշարժեր կատարվեցին այդ բնագավառում: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, անվանի արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի ջանքերով հրատարակվեցին Թորոս Ռոսլինի մանրանկարներից շատերի բարձր որակով իրականացված վերատպությունները՝ պատշաճ գիտական մեկնաբանություններով: Գնահատելի աշխատանք կատարեց նաև հայ միջնադարյան արվեստի մեր լավագույն մասնագետներից Լևոն Ազարյանը, որը Թ. Ռոսլինի ստեղծագործության ուսումնասիրությունը նվիրեց ընդարձակ մի

գլուխ 1964 թ. հրատարակված «Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դդ.» մենագրության մեջ:

Այժմ պարզված է արդեն, որ նշանավոր մանրանկարչի կողմից նկարազարդված ընդամենը վեց ձեռագրեր են հասել մեզ, որոնք պարունակում են նրա կատարած աշխատանքի մասին ստույգ տվյալներ: Ըստ ժամանակագրական հերթաշարի՝ սրանք են այդ ձեռագրերը.

ա. 1256 թ. Զեյթունի Ավետարանը.

բ. 1260 թ. Կոստանդին կաթողիկոսի Ավետարանը (Երուսաղեմ, N 251).

գ. 1262 թ. Լևոն թագաժառանգի (հետագայում Լևոն Գ թագավոր) Ավետարանը (Երուսաղեմ, N 2660).

դ. 1262 թ. Կոստանդին կաթողիկոսի եղբորորդի Թորոս քահանայի Ավետարանը (ԱՄՆ, Բալթիմոր, Ուոլտերի ժողովածու).

ե. 1265 թ. Ավետարանը (Երուսաղեմ, N 1956).

զ. 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանը (Երուսաղեմ, N 3627):

Վերահիշյալ թվականներն ինքնին ուշագրավ են. մեզ հասած հնագույն ձեռագիրը 1256 թվականն է կրում. դրա մանրանկարները սակայն, կատարված են երկարամյա ստեղծագործական աշխատանքի փորձով վարպետացած մի արվեստագետի կողմից, ուստի դույզն-ինչ կասկած չի կարող ծագել այն մասին, որ Թ. Ռոսլինը ստեղծագործական իր գործունեությունն սկսել է այդ թվականից տարիներ առաջ: Որևէ հիմք չունենք նաև նրա աշխատանքը 1268 թվականով ավարտված համարելու: Այդ թվականին նկարազարդված ավետարանի մանրանկարիչ-վարպետը դրսևորել է իրեն որպես միջնադարյան արվեստի բոլոր գաղտնիքները բացահայտած մի խոշոր անհատականություն, սակայն ծերության կամ հոգնածության նշաններ բնավ չեն նշմարվում, ուստի այդ թվականից հետո ևս, և դեռ երկար տարիներ, կարող էր ստեղծագործած լինել արվեստագետը:

Մեջ բերված ցանկի ուշադիր քննողը, անշուշտ, նկատելու է, որ 1262 թվականին Ռոսլինը ընդօրինակել ու նկարազարդել է 2 ձեռագիր, որոնցից հատկապես մեկը (Բալթիմորի ավետարանը) պարունակում է մի քանի տասնյակ փառահեղ մանրանկարներ, կատարված անգերազանցելի հմտությամբ: Մեկ տարում երկու ձեռագիր ստեղծելու կարողություններով օժտված արվեստագետը, եթե նրա աշխատանքային կյանքը սահմանա-

փակված լիներ նույնիսկ 1256-1268 թթ. միջոցին, դարձյալ պետք է ստեղծեր շուրջ 24 և ոչ 6 ձեռագիր. իսկ եթե վերահիշյալ հանգամանքները հաշվի առնելով նրան վերագրենք ստեղծագործական ավելի ընդարձակ տարիների գործունեություն, կարող ենք մեծ հավանականությամբ ենթադրել, որ նրա նկարազարդած կոթողները 3-4 տասնյակից պակաս չեն եղել:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որ իրավամբ համարվում են պատմական մեծահարուստ սկզբնաղբյուրներ, պարունակում են բազմաթիվ տեղեկություններ օտար վայրենաբարո նվաճողների կողմից տասնյակ հազարավոր ձեռագրերի գերեվարման, ոչնչացման ու բզկտման մասին: Գրասեր ժողովուրդը կանգ չի առել նյութական զոհողությունների առջև. իր նախնիների կողմից ստեղծված ձեռագիր գրքերը, մանավորապես՝ մանրանկարներով զարդարված մատյանները փրկագնելու, գերությունից ազատելու, նորոգել տալով կրկին անգամ ընթերցող հասարակության սեփականությունը դարձնելու համար: Սակայն միջին դարերում ստեղծված հայերեն ձեռագրերի մեծագույն մասը (ըստ ստույգ հաշիվների շուրջ 80 տոկոսը) ոչնչացվել ու կորել է անդարձ: Բնականաբար նույն ճակատագիրն է ունեցել նաև Թորոս Ռոսլինի նկարազարդած ձեռագրերի մեծ մասը:

Չի կարելի բացառված համարել և այն հնարավորությունը, որ հայ ձեռագրերի մեծ ու փոքր հավաքածուների մեջ դեռևս կան հիշատակարան չունեցող նկարազարդ որոշ ձեռագրեր, որոնք նույնպես ստեղծվել են Թ. Ռոսլինի կողմից կամ նրա անմիջական մասնակցությամբ: Այդպիսի ձեռագրերի որոնման աշխատանքները գիտական հիմքերի վրա կարող են իրագործել այն մասնագետները, որոնք իրենց ձեռքի տակ ունեն Թ. Ռոսլինի ստորագրությունը կրող որոշ ձեռագրեր, ինչպես նաև մյուս ձեռագրերից կատարված գունավոր ճշգրիտ նմանահանություններ: Միջնադարյան հայ արվեստի սովետահայ մասնագետները մինչև վերջերս զուրկ էին այդ հնարավորությունից: Այսօր սակայն, մեծ ուրախությամբ կարող ենք նշել, որ Մաշտոցի անվան մեր Մատենադարանը, ձեռագրական իր հավաքածուի մեջ հավերժ պահելու խորհուրդով, հյուրընկալել է ռոսլինյան լավագույն ստեղծագործություններից մեկը՝ 1267-1268 թթ. նկարազարդված Մալաթիայի Ավետարանը:

Հայ արվեստի պատմության համար բացառիկ արժեք ներկայացնող այդ ձեռագրի ստացման համար երախտագիտության խոսք պետք է ուղ-

գենք Ամենայն հայոց հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսին, որն արդեն 20 տարուց ավելի է, ինչ մեծ աշխատանք է կատարում ի նպաստ աշխարհով մեկ սփռված հայ մշակութային արժեքների, և մասնավորապես հայերեն հին ձեռագրերի փրկության ու հայրենադարձման: Նրա ձեռներեցությամբ Մատենադարանը հարստացել է մի քանի տասնյակ մեծարժեք ձեռագրերով, որոնց շարքում հատուկ տեղ է գրավում 7-րդ դարում ընդօրինակված Տիրամոր Ավետարանը և Թորոս Ռոսլինի նկարազարդած վերոհիշյալ ձեռագիրը:

Մալաթիայի Ավետարան կոչվող մագաղաթյա այդ մատյանը ամենաճոխ նկարազարդված հայերեն ձեռագրերից մեկն է. սկսվում է Եվսեբիոսի առ Կարպիանոս թուղթը զարդարող երկու գեղեցիկ խորաններով (էջ 3բ-4ա), որին հաջորդում են համաբարբառ ութ խորաններ (էջ 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա, 11բ-12ա), որոնցից և ոչ մի զույգ իր զարդաձևերով չի նմանվում մյուս զույգին: Պատկերագրական առումով խորաններն ուշագրավ մի նորություն են բերում միջնադարյան հայ մանրանկարչության մեջ լայն տարածում գտած համաբարբառային խորանների նկարազարդման բնագավառում, դրանցից յուրաքանչյուրի կենտրոնական մասում, կիսաշրջանակի մեջ, պատկերված է բիբլիական մարգարեներից մեկը՝ Դավիթ և Եսայի, Միքիաս և Երեմիա, Զաքարիա և Մովսէս, Հովնան և Հովհաննես: Եվ ուշագրավն այն է, որ դրանցից ամեն մեկին տրված է ուրույն դեմք-դիմագիծ, ինքնատիպ կեցվածք ու շարժուձև: 13բ-14ա էջերի խորանազարդը շրջափակում է ռոսլինյան ձեռագրերի համար պարտադիր նկատվող չափածո ընծայականը, որի մեջ, երկաթագիր գեղեցիկ տառերով, գրոշմված են ամենակարևոր տեղեկություններ ձեռագրի պատվիրատուի և ստացողի մասին:

Այդ ընծայականը, մանրանկարչական գլուխգործոց լինելուց բացի, վկայություն է տալիս Թորոս Ռոսլինի բանաստեղծական շնորհքի մասին, հավաստելով, որ մեծագույն մեր արվեստագետը միաժամանակ չափածո երգեր հորինելու փորձ ու հմտություն է ունեցել:

Ահա այդ տողերը.

Տէր իմ Քրիստոս, լոյս գերարփի,
Որ շրջեցար մարմնով յերկրի,
Եւ զայս մատեան աւետայի

Մեզ հնչեցեր ձայն ցնծալի,
Դու զտէր Կոստանդին հովիւ բարի՝
Կաթողիկոս Հայոց սեռի,
Զոր փոխեցար ի յայսմ ամի՝
Յաթոռ նստո ընդ Պետրոսի, ամէն.
Եւ զժառանգող այս մատենի
Զպարոն Հեթում համբաւ-բարի,
Որ է որդի նա Լեւոնի,
Որդւոյ Հեթմոյ մեծ արքայի,
Պահեա կենաւք երկարելի,
Իւր ծնողաւքն եւ այլ զարմի,
Եւ ի քո փառդ հայրենի
Հաղորդս ընկեալ քեզ կրկնակի, ամէն:

Բուն Ավետարանը սկսվում է 15-րդ թերթով և պարունակում է Մատթեոս (էջ 15բ), Մարկոս (էջ 102բ), Ղուկաս (էջ 158բ), Հովհաննես (էջ 254բ) ավետարանիչների նկարները: Բոլոր նկարազարդ ավետարանների պես, այստեղ ևս հանդիպակաց էջերով սկսվում են համապատասխան ավետարանները՝ մեծ ճաշակով նկարազարդված կիսախորաններով, խորհրդանշաններով, գլխագրերով և այլ անհրաժեշտ պարագաներով:

Տերունական նկարները տեղադրված են բնագրի համապատասխան հատվածներում, պատմվող դեպքերին առընթեր:

Պահպանվել են հետևյալ 13 մանրանկարները. Ծնունդն ու մոգերի երկրպագությունը (էջ 19ա), Մկրտությունը (22բ), Քրիստոսի երկրորդ գալուստը (85բ), Տիրոջ թաղումը (98ա), Քրիստոսի հարությունը (100ա), Այլակերպությունը (128բ), Երուսաղեմ ժամանելը (137ա), Տյառնընդառաջը (167ա), Ծնունդը (177ա), Ղազարոսի հարությունը (294բ), Հոգեգալուստը (305ա), Խաչելությունը (321ա) և Աշակերտներին հայտնվելը (326ա):

Այս հոդվածի նպատակից դուրս է վերոհիշյալ մանրանկարիչների պատկերագրական առանձնահատկությունների և գեղարվեստական արժեքների բացահայտումը: Մասնագիտական գրականության մեջ նկատված է արդեն, որ այս ձեռագիրը որոշակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու եվրոպական ու հայկական, բյուզանդական ու արևելյան մշակութային առնչությունները Կիլիկյան Հայաստանում, մի երկիր, ուր

կողք-կողքի ապրում, աշխատում ու ստեղծագործում էին տարբեր երկրներից ժամանած մտավորականներ, գիտնականներ և արվեստագետներ:

Հարկ է նշել այստեղ, որ ինչպես Ռոսլինյան մյուս ձեռագրերը, այնպես էլ Մալաթիայի Ավետարանը, խորաններից, կիսախորաններից, ավետարանիչների պատկերներից ու տերունական նկարներից զատ, զարդարված է մեծաքանակ շքեղ ու բազմապիսի լուսանցազարդերով, որոնք ուրույն փայլ ու հմայք են պարգևում ձեռագրի գրեթե բոլոր թերթերին:

Բացառիկ գեղարվեստական արժեք ներկայացնող այս ձեռագրի ստեղծման աշխատանքները, — ինչպես ասացինք վերը, — սկսվել են Կոստանդին կաթողիկոսի հանձնարարությամբ, սակայն ձեռագիրն ամբողջական վիճակով պատրաստ է եղել և օծվել ընդարձակ հիշատակարանով նրա մահից մեկ տարի հետո. «յամի ՉԺ և Է.-երորդի Թուաբերութեանս հայկազեան տումարի», այսինքն 1268 թվականին: Աշխատանքները կատարվել են կաթողիկոսանիստ Հռոմկլա ամրոցում. «յաստուածապահ ղղեակս Հռոմկլա. ընդ հովանեաւ սուրբ տաճարապետիս սուրբ Փրկչին և սուրբ Աստուածածնին և սուրբ Լուսաւորչին մերոյ, հրամանաւ և ծախիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստանդեայ»:

Հիշատակարանի մեջ այնուհետև ասվում է, որ ձեռագիրը պատրաստվել է ի վայելումն Հեթում Ա թագավորի թոռ Հեթում մանկան, որն այդ ժամանակ հազիվ բոլորել էր իր կյանքի 3 տարին, բայց հետագայում (1288 թ.) բազմելու էր Կիլիկյան թագավորության գահին, որոշ ընդմիջումներով իշխանության ղեկն իր ձեռքին պահելով մինչև 1307 թվականը, երբ մանկահասակ իր որդու հետ միասին սպանվեց մոնղոլների կողմից:

Գլխավոր հիշատակարանի պատմական ընդարձակ բաժինը զգալի նպաստ է բերում Կիլիկյան հայկական պետության քաղաքական կյանքի պատմության ուսումնասիրությանը, միաժամանակ վկայելով, որ հիշատակարանի հեղինակ Թ. Ռոսլինը զուրկ չի եղել նաև պատմագրելու ձիրքից, և հաջողությամբ մագաղաթի վրա դրոշմել է հայրենի երկրի կրած տառապանքների տարեգրությունը և իր հրճվանքն արտահայտել, երբ աշխարհավեր պատերազմներին ու բռնություններին հաջորդել են համեմատաբար խաղաղ ու հաջողակ տարիներ: 1266 թ. Եգիպտոսի ու Սիրիայի Ռուքն-ադդին Բեյբարս ալ-Բունդուկտարի (Ֆնդուխտար) սուլթանը Մերձավոր Արևելքի քրիստոնյա իշխանությունների դեմ պատերազմ սանձազերծեց: Անտիո-

քի շրջակայքն ավերելուց ու գերեվարելուց հետո, մամլուկյան սուլթանի զորքերը մտան Կիլիկիա:

Հեթում թագավորի Թորոս և Լևոն որդիների հրամանատարությամբ Կիլիկյան Հայաստանի զորաբանակները դուրս եկան թշնամու դեմ, սակայն պարտություն կրեցին. Թորոսն ընկավ ճակատամարտում, իսկ Լևոնը գերի տարվեց Եգիպտոս, ուր մնաց շուրջ երկու տարի՝ մինչև 1268 թվականը, ապա մեծ փրկագնով ազատ արձակվեց ու վերադարձավ հայրենիք:

Թորոս Ռոսլինը, որ այս ամիսներին ավարտում էր ձեռագրի նկարազարդման աշխատանքները, բնականաբար, իր հիշատակարանի մեջ պետք է անդրադառնար Կիլիկյան հայկական թագավորության պատմության համար կարևոր նշանակություն ունեցող այս անցուդարձերին, իր վերաբերմունքը դրսևորելով դրանց նկատմամբ: Եվ իրոք, հիշատակարանի կարևոր մի մասը նվիրված է հենց Ֆնդուխտար սուլթանի արշավանքին և հարակից քաղաքական դեպքերին: «Յայսմ երկիւղէ և չարալլուկ համբաւոյ, — գրում է Թ. Ռոսլինը, — զարհուրեցան բազում գաւառք և աւանք աշխարհս Կիլիկեցւոց: Եւ մինչ յայսմ մեծի տագնապի և ի դողման էաք, բացաւ առաւօտ խաղաղութեան մարգարիտին Աստուծոյ, և մեծն Լևոն՝ թագաժառանգն հայոց գերծեալ եղև խնամօքն աստուծոյ յերկաթի հալոցացն՝ ի ծառայութենէ և ի ձեռաց նոյն արքային Եգիպտացւոց: Եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաշխարհ և իր հայրենի աթոռ իւր, և եղև խաղաղութիւն երկրիս և խնդութիւն քրիստոնէից»: «Ի սոյն աւուրս եղև գրաւ գրչութեան սորա դանազան նիւթօք և երանգ-երանգ գունօք», — գրում է Ռոսլինը, հայտարարելով, որ աշխատանքը կատարել է Կոստանդին կաթողիկոսի հրամանով, որն իրեն է փոխանցվել վերջինիս եղբորորդի Թորոս քահանայի միջոցով. «որ և ի կեանս իւր (կաթողիկոսն Կոստանդին) ի ձեռն քաջակրօն քահանային Թորոսի՝ եղբօրորդւոյ իւրոյ՝ ետ գրել զսա իմոյ անարժանութեանս՝ Թորոսի մականուն Ռոսլին կոչեցելոյ»: Իր մասին որոշ տեղեկություններ հաղորդում է նաև հիշատակարանի վերջում. «Բազմամեղ գրիչս աղաչեմ յիշել զանարժանութիւն իմ, և զծնօղս և զորդիս իմ, և զուսուցիչս և զամենայն երախտաւորս իմ»: Այստեղից էլ պարզ է դառնում, որ նա եղել է աշխարհական անձ, ունեցել որդիներ և այլն:

Թորոս Ռոսլինի հիշատակարանի շարունակությամբ, ձեռագրի 331բ էջի երկրորդ սյունակի վրա մանր բոլորգիր տառերով հիշատակագրություն

է թողել Առաքել Հնազանդենց նշանավոր կազմարար վարպետը, որին հանձնարարվել է կազմել ձեռագիրը, գրչության և նկարազարդման աշխատանքների ավարտից անմիջապես հետո՝ նույն 1268 թվականին:

«Ի վայելումն» թագավորական տան անդամների պատրաստված շքեղ այս ձեռագիրը, մեծ հավանականությամբ, պահվել է հենց կիլիկյան արքունիքում, մինչև հայոց թագավորության անկումը 14-րդ դարի վերջերին: Այս շրջանից ձեռագրի մեջ որևէ հիշատակագրություն չի գրանցված:

Ժամանակագրական առումով հաջորդ տեղեկությունը ձեռագրի մասին շարադրված է 1453 թ. Մալաթիայի արքեպիսկոպոս տեր Սիմեոնի կողմից, որը հայտնում է, թե կրկին կազմել է տվել Ավետարանը: Իր գրությունից ընդամենը 2 դար հետո, այն էլ Առաքել Հնազանդենցի պես նշանավոր վարպետի կազմած ձեռագիրը վերստին կազմվելու կարիք չէր ունենա, եթե միտումնավոր կերպով վնասված չլիներ: Եվ իրոք, Սիմեոն արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ Ավետարանի մի մասը նույնիսկ այրված է եղել. «Սուրբ Աւետարանս այրած Է՝ Յոհան գլուխն, և մեք խիստ աշխատեցանք և վերստին նորոգեցաք»: Այդ վերանորոգությունը, սակայն, հիմնական չի եղել և դեռևս շատ թերթեր, մանավանդ գրքի վերջին մասերից, մնացել են անմխիթարական վիճակում: Այդպես ենք կարծում, նկատի առնելով ձեռագրի մեջ գրանցված մյուս հիշատակարանների տվյալները:

Հայոց ՌԾ (այսինքն 1601) թվականին ոմն Հայրապետ աբեղա, երրորդ անգամ լինելով, նորից է նորոգել ձեռագիրը, իսկ հիմնավոր մի վերանորոգություն էլ կատարվել է 1744 թվականին, Մալաթիայի Աբրահամ եպիսկոպոսի նախաձեռնությամբ, որի մասին շարադրվել է ընդարձակ հիշատակարան:

«Տեսի զսուրբ Աւետարանս, — գրել է հին գրքերի սիրահար այդ եպիսկոպոսը, — որ Ղուկաս և Յոհան գլուխքն (այսինքն ձեռագրի երկրորդ մասը) եղծեալ էր գրերն, որ գրոց նշմարանք ոչ կայր գրեալ, նորոգեցի վերստին. ով սրբասէր վարդապետք և քահանայք». այնուհետև նա աղերսում է անհիշատակ չթողնել իրեն և իր ծնողներին: Զգլանալով ի բարին հիշել գրասեր այս անձնավորությանը, պետք չէ թաքցնել, որ վերանորոգչական իր աշխատանքը կատարելու ընթացքում ձեռագրի վերջին թերթերի վերին լուսանցքներից (որոնք հավանաբար խիստ այրված են եղել). նա

հեռացրել է 4-5 սմ լայնություն ունեցող մի շերտ, որի հետևանքով շատ թերթեր զրկվել են իրենց վերին լուսանցքներից ու տգեղ տեսք ստացել: Նորոգողը խնամքով ջնջել է ձեռագրի վերին եզրին խիստ մոտեցած առաջին երկու տողերի գիրը, դրանք իր ձեռքով լրացնելով նախորդ սյունակների ստորին լուսանցքի վրա: Այսպիսով, իրոք ստեղծվել են նոր լուսանցքներ, բայց նորոգողի դանակին զոհ են գնացել ոչ միայն այրված լուսանցքների վերին եզրերը, այլև մի շարք մանրանկարների ծայրամասերը, մասնավորապես խորանների վրա ծվարած թռչուններից շատերի գլուխները, ծառ ու ծաղկի կատարները և այլն:

Ձեռագիրը Մալաթիայում պահվել է մինչև 1878թ., ուր տեսել ու հիշատակարաններն ընդօրինակել է երջանկահիշատակ Գարեգին Սրվանձտյանը՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վիպերգության առաջին գրանցողը (նրա ժամանակ ձեռագրում կային 3 կարևոր հիշատակարաններ, որ այժմ բացակայում են): Հետո, անհայտ ճանապարհներով, ձեռագիրն ընկել է մի թուրքի ձեռք (գողացել է կամ բռնագրավել), որն այն տարել է Ադանա վաճառելու: Մալաթիացի հայերը փրկագնել են իրենց քաղաքին պատկանող ռոսլինյան ձեռագիրը, վճարելով 45 մեջիդիե (արծաթ դրամ):

Արևմտահայերի ցեղասպանության մղձավանջային տարիներին գտնվել են մշակութային արժեքների փրկության սուրբ գործին նվիրված անձնազոհ հայրենասերներ, որոնք կանգ չառնելով դժվարությունների առջև, փրկել են ձեռագիրն խուժան բնաջնջումից ու հասցրել այն Երուսաղեմ, ի պահ դնելով հայոց Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարանում:

Ձեռագրի նոր ոդիսականը տեղի ունեցավ մեր աչքի առջև՝ 1967 թվականին, երբ Երուսաղեմում պահվող 23 ձեռագրերի հետ միասին, ռոսլինյան այս գլուխգործոցն անհայտ չարագործների կողմից տարվեց Լոնդոն՝ հանձնվեց Սոզբի ընկերությանը՝ աճուրդով վաճառելու համար: Բոլորիս հիշողության մեջ թարմ է այն ալեկոծումը, որ ապրեց հայ ժողովուրդը հայրենի երկրում և սփյուռքում, մեր նախնիների կողմից ստեղծված մշակութային արժեքների ավազակաբարո հափշտակման այդ տխուր օրերին: Անհրաժեշտ քայլեր կատարվեցին աճուրդը կանխելու և գողացված ձեռագրերը կրկին Երուսաղեմ վերադարձնելու համար:

Եվ ահա ռոսլինյան փառահեղ այդ ձեռագիրը Ամենայն Հայոց կաթո-

գիկոս Վազգեն Առաջինի փափագով և Երուսաղեմի հայոց բանաստեղծ պատրիարք Եղիշե Տերտերյանի ու սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամների հաճությամբ նվիրաբերվեց Մաշտոցյան Մատենադարանին:

Դժվար է կանխագուշակել, թե հայ մանրանկարչության պատմության ուսումնասիրության գործին ինչպիսի հսկայական նպաստ է բերելու այս ձեռագիրը: Անտարակույս, դրա մանրանկարներից շատերը պատվավոր տեղ են գրավելու առաջիկայում հրատարակվելիք հայ մանրանկարչության ալբոմների մեջ: Դրա մասին մասնագիտական խոսք է ասվելու Թորոս Ռոսլինի ստեղծագործությանը և կիլիկյան հայ մանրանկարչության արվեստին նվիրվելիք մենագրությունների ու հոդվածների մեջ, տպագրվելու են նաև գունազարդ բացիկներ ձեռագրի խորաններից, տերունական նկարներից, ինչպես նաև դրանց առանձին հատվածներից, և այլն[*]:*

Այս ձեռագիրը հայ մանրանկարչության պատմաբաններին հնարավորություն է ընձեռելու Թորոս Ռոսլինի ժառանգության ուսումնասիրության գործը մի նոր մակարդակի բարձրացնել, մերժել մի շարք ձեռագրերի անհիմն վերագրումն այս վարպետին, և, ընդհակառակը, հավաստել, որ հայերեն ձեռագրական հավաքածուների մեջ կան մանրանկարներով շքեղ զարդարված մի շարք ձեռագրեր, որոնք նույնպես պատկանում են այս մեծ վարպետի ստեղծագործությունների թվին: Այդպիսիներից են, մասնավորապես, Մատենադարանի N5458 ձեռագրի մագաղաթյա թերթերը և N8321 ձեռագրի մանրանկարները, որոնց մասին բանասիրության մեջ արդեն խոսք եղել է (այդ ձեռագրերին անդրադարձել են Ս. Տեր-Ներսեսյանը և Ա. Գևորգյանը):

Դրանցից առաջինը ձեռագրական շատ ուշագրավ հուշարձան է: Թերի պահպանված հիշատակարանից հայտնի է դառնում, որ ստեղծվել է «յամի եւթն հարիւր և հնգետասաներորդի թուաբերութեանս հայկազեան տոմարի (այսինքն՝ 1266 թ.), յաստուածապահ դղեակս և յաշխարհամուտ ամրոս Հռոմկլայ, ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Կոս-

[*] Ռոսլինի ժառանգության ուսումնասիրությանն է նվիրված Ի. Դրամբյանի «Торос Рослин», Ереван, 2000, 288էջ+32 նկարազարդ էջ մենագրությունը: Ռոսլինին վերաբերող ուսումնասիրություն է հրապարակել Լ. Բ. Ջուգասզյանը – **խմբ.**:

տանդեայ կաթողիկոսի ... հրամանաւ և ծախիւք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին...»: շարունակությունն ընկել է, բայց պարզ է, որ հիշատակված է եղել Հեթում Ա թագավորի (1226-1270) անունը:

Ձեռագիրը 14-րդ դարում հափշտակվել է թագավորական տնից, ընկել բարբարոս հրոսակների ձեռքը և բառիս ուղղակի իմաստով հոշոտվել սրով, մաս-մաս պատառոտվել. պահպանվել է ընդամենը 39 մագաղաթյա թերթ, տերունական նկարներն ու խորանները իսպառ ոչնչացվել են. մնացել են միայն մի շարք լուսանցազարդեր և նկարազարդ գլխագրեր: 14-րդ դարի վերջերին ոմն Հովհաննես քահանայի նախաձեռնությամբ «թագավորական այդ հիշատակը», որ ընկնելով թշնամիների ձեռքն այնպես էր փեռեկված, ինչպես «գառն ի գայլոց ձեռն մատնեալ» (սրանք հիշատակարանից հանված խոսքեր են), հիմնովին վերանորոգության է ենթարկվել. պակասող մագաղաթյա երկաթագիր թերթերի փոխարեն գրվել են թղթյա բոլորգիր թերթեր, որոնցից շատերի լուսանցքներին փակցվել են հին ձեռագրից մնացած լուսանցազարդեր, գլխագրեր և այլն: Պահպանվել են նաև երկու փոքրիկ տերունական նկարներ: Եվ պահպանված այս նյութերի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ այս ձեռագրի հին մասերը նույնպես պատկանել են Թորոս Ռոսլինի գրչին ու վրձնին:

Ուշագրավ մի ձեռագիր է նաև վերոհիշյալ N 8321 Ավետարանը, որի մեջ եղած Լևոն թագաժառանգի (հետագայում Լևոն Գ թագավոր) նկարը, երկար ժամանակ հանված է եղել ձեռագրից, ուսումնասիրողների կողմից ընկած է համարվել կիլիկյան տարբեր ձեռագրերից և միայն վերջերս, բանասիրական մանրակրկիտ աշխատանքից հետո, պարզվել է նկարի պատկանելությունը բուն ձեռագրին, ինչպես նաև Թորոս Ռոսլինի դերն այդ ձեռագրի նկարազարդման գործում:

Այսպիսով, Մալաթիայի Ավետարանը՝ կիլիկյան հայ մանրանկարչության նշանավոր այդ հուշարձանը, ոչ միայն հիացմունք է պատճառելու արվեստասեր հասարակայնությանն իր հիասքանչ մանրանկարներով, այլև իր խոշոր նպաստն է բերելու հազարամյա հայ արվեստի համակողմանի ուսումնասիրության շնորհակալ գործին:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐԸ XIV ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Ձեռագրերի գրիչներն ու պատվիրատուները, կազմողներն ու նորոգողները, ընթերցողների հիշատակության արժանանալու ակնկալությամբ, ձեռագրերի վերջում և առանձին հատվածների ավարտից հետո, թողել են սեղմ ու համառոտ հիշատակարաններ: Այդ հիշատակարաններում նրանք հայտնել են իրենց մասին որոշ կենսագրական տեղեկություններ, նկարագրել են ձեռագրերի գրչության, նորոգման կամ գնման հանգամանքները, հիշելով ժամանակի աշխարհիկ ու հոգևոր տերերին՝ ժամանակագրական տվյալներ են թողել նրանց մասին, և, շատ հաճախ, նկարագրել են իրենց ժամանակի պատմությունը՝ երկրի վիճակը, քաղաքական անցուդարձերը և այլն:

Դրանք անգնահատելի փաստալից սկզբնաղբյուրներ են ժամանակի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրման համար: Որպես այդպիսիք, համեմատած այլ կարգի պատմական սկզբնաղբյուրների հետ, նրանք ունեն ուշագրավ առանձնահատկություններ.

ա) Գրված լինելով պատմվող դեպքերին ականատես ու ականջալուր մարդկանց կողմից, նրանց հաղորդած տեղեկությունները վստահելի են. ժամանակագրական ու պատմական անճշտություններ ու սխալներ գրեթե իսպառ բացակայում են հիշատակարաններից:

բ) Դրանց հեղինակները, բառ մեծի մասի, լինելով հասարակության աշխատավոր խավերից դուրս եկած գրագետներ և կամ ստորադաս

---

* ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ XVII-XXXIII

եկեղեցական պաշտոնյաներ, մոտ են կանգնած եղել ժողովրդին: Նրանք աշխատավորների կրած զրկանքների, աշխարհավեր արշավանքների, ծանր հարկերի ու բռնապատության զանգվածային ու կոնկրետ փաստերի թարմ ազդեցության ներքո գրանցել են այնպիսի կարևոր պատմական տվյալներ, ինչպես և կենցաղային մանրուքներ, որ անտեսվել կամ վրիպել են միջնադարյան պատմագիրներից շատերի տեսադաշտից:

գ) Ըստ այդմ էլ, ի տարբերություն միջնադարյան պատմիչների, հիշատակագիրները երևույթներն ու պատմական անցուդարձերը դիտել են այլ դիտակետից ու տեսանկյունով: Նրանք իրենք կրել են ժամանակի արհավիրքների դառնությունը, վշտացել են ժողովրդի վշտով, ուստի և, համեմատաբար օբյեկտիվ կերպով են նկարագրել ու գնահատել պատմական եղելությունները:

Այս ուշագրավ ու կարևոր արժանիքների հետ մեկտեղ, հիշատակարանները, որպես պատմական սկզբնաղբյուրներ, ունեն մի շարք թերություններ ու բացասական կողմեր:

ա) Հիշատակարանները մեծ մասամբ գրվել են գոյություն ունեցող օրինակելի համարված կաղապարով: Ըստ այդ կաղապարի՝ հիշատակագիրը մի ընդարձակ, երբեմն մի քանի էջ բռնող, «փառք» է ձոնում Սուրբ Երրորդությանը, որի բարյացակամությամբ ու խնամքով կարողացել է ավարտել ձեռագրի ընդօրինակությունը, նա գրվատում է ընդօրինակված ձեռագրի բովանդակությունը աստվածաբանական դատողություններով: Այնուհետև, գովեստի ու մեծարանքի տողերի է արժանանում ձեռագրի պատվիրատուն կամ գնորդը: Ամենուրեք նա հանդես է գալիս որպես աղքատասեր, հեզահոգի, ընդարձակորեն գրվատվում են նրա բարեմասնությունները, հիշատակության են արժանանում, և հաճախ մի քանի անգամ, նրա մերձավոր և հեռավոր ազգականները և այլն: Դրանից հետո միայն գրիչը խոսում է իր մասին, հայտնում իր ով լինելը, վատաբանում է իրեն որպես «ագետ», «անիմաստ», ու «մեղապարտ», կոչում է իրեն «փծուն» ու «անարհեստ», նույնիսկ այն դեպքում, երբ մեծ շնորհքի ու արվեստի տեր, գեղեցկագիր գրիչ է, և այլն:

Հիշատակարանի պատմական ու ամենաարժեքավոր մասը արվում է միայն վերջում, այստեղ է, որ հիշատակագիրը համեմատաբար ազատ է զգում իրեն ճնշող կաղապարից և ընդունված նորմերից, իր ընդունակության ու կարողության չափով դիտում է շրջապատը և մի քանի տողերով նկարագրում է այն դառը ժամանակը, որի ընթացքում, ծանր զրկանքների գնով, հաջողվել է իրեն ի կատար ածել տվյալ ձեռագրի ընդօրինակությունը կամ նկարազարդումը:

բ) Հիշատակարանների մյուս բացասական կողմը գրիչների սահմանափակվածությունն է: Նրանց տեսադաշտի հորիզոնը շատ նեղ է, սակավ դեպքերում է միայն դուրս գալիս իրենց բնակավայրի կամ վանքի նեղ շրջանակից: Քաղաքական խոշոր անցուդարձերը, պատերազմական գործողությունները, սակավ բացառությամբ, նրանց հետաքրքրում ու հուզում են այն ժամանակ միայն, երբ դեպքերի շրջապտույտն իր մեջ է առնում նաև տնտեսական կապերով արտաքին աշխարհից կտրված նրանց բնաշխարհը: Նրանք պատմական իրադարձությունների շղթայի միայն մի օղակն են նկատում, ուստի և, շատ ավելի մեծ չափով քան միջնադարյան պատմիչները, զուրկ են դեպքերը կապակցելու, օրինաչափություններ որոնելու հնարավորությունից:

Մոնղոլ բանակները ծանրացնում են հարկային լուծը, կեղեքում ու մաշկում են ժողովրդին, սովն ու համաճարակները հազարավոր զոհեր են կլանում, մորեխն ամայացնում է դառը քրտինքով աճեցրած դաշտերը, հիշատակագիրներն այդ բոլորը, տիրող կղերական մտայնության ազդեցությամբ, բացատրում են իրենց գործած ծանր մեղքերով: «Վասն ծովացեալ մեղաց մերոց», ահա պատրաստի այն բանաձևը, որով պատճառաբանում են հիշատակագիրներն իրենց ժամանակի բոլոր արհավիրքներն ու աղետաբեր իրադարձությունները:

Նշված բացասական կողմերով հանդերձ, հիշատակարանները, կրկնում ենք, միջնադարյան կյանքի բազմապիսի երևույթների, երկրի քաղաքական ու մշակութային կյանքի պատմության լուսաբանմանը նպաստող առաջնակարգ սկզբնաղբյուրներ են:

***

Հիշատակարանների արժեքն ավելի է մեծանում և դրանք ավելի խոշոր դեր են ստանձնում կատարելու այնպիսի ժամանակաշրջանների ուսումնասիրման համար, որոնց մասին պատմական գրվածքներ մեզ չեն

հասել, կամ հասել են աննշան քանակությամբ: Այդպիսի դարերից է ԺԴ դարը:

ԺԴ դարում Հայաստանի տնտեսական ու սոցիալական կյանքում տեղի ունեցան խոշոր տեղաշարժեր: Առևտրի ու արհեստների ծաղկուն կենտրոններ հանդիսացող բազմաթիվ մարդաշատ քաղաքները՝ Անին, Կարսը, Խլաթը, Մանազկերտը, Արճեշը, Վանը, մոնղոլական էլխանության հարկային գիշատիչ քաղաքականության և քոչվորական հորդաների երկրի արոտավայրերում հաստատվելու հետևանքով, վերջնականապես զրկվեցին իրենց երբեմնի առևտրական սերտ կապերից արևելյան և արևմտյան երկրների հետ, և տնտեսական քայքայման ուղին բռնելով վերածվեցին արտաքին աշխարհից կտրված, ինքնամփոփ բնակատեղերի: Սկսվեց քաղաքային բնակչության՝ առևտրականների ու արհեստավորների, ինչպես նաև գյուղացիական շերտերի զանգվածային գաղթ աշխարհից-աշխարհ, երկրից-երկիր, հատկապես դեպի Ղրիմ, Սուլթանիա, Սարայ և այլ վայրեր:

Այդ նույն ժամանակաշրջանում մոնղոլներն իրագործեցին նաև հայ ավատական տների կալվածքների գրավման ու իրավունքների սահմանափակման քաղաքականությունը: ԺԴ դարի կեսերին արդեն, հայ ավատական խոշոր ընտանիքները՝ Օրբելյանները, Պռոշյանները, Դոփյանները, Վաչուտյանները և ուրիշները, ապրում էին իրենց հոգեվարքը և երկրի քաղաքական կյանքում ակտիվ դեր չէին խաղում: Հայ եկեղեցին միայն կարողացավ հիմնականում զերծ պահել իր տիրույթները բռնագրավումից, և, որոշ առումով, շարունակել իր գոյությունը որպես խոշոր ավատական հաստատություն:

Երկրի մշակութային կենտրոնները, որ դարի սկզբին, վայելելով Օրբելյանների և Պռոշյանների հովանավորությունն ու տնտեսական աջակցությունը, մշակութային խոշոր դեր էին կատարում, աստիճանաբար տկարացան ու մասնատվեցին: Գլաձորյան համբավավոր համալսարանը ԺԴ դարի կեսերին արդեն գոյություն չուներ: Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին իրենց դասախոսությունները շարունակեցին շատ ավելի անբարենպաստ պայմաններում, հաճախ ստիպված լինելով վայրից վայր տեղափոխվել: Այնուամենայնիվ, չնայած անբարենպաստ տնտեսական ու քաղաքական կացության, ԺԴ դարի մշակութային հաստատությունները կարողացան ուժեղ գոտեմարտերով սանձել երկրի սրտում բույն դրած

կաթոլիկ միսիոներների ու նրանց հայ հետնորդների ձգտումները:

Դրությունը մխիթարական չէր նաև Կիլիկիայում, որտեղ հայ պետականությունն ապրում էր իր հոգեվարքը, պայքար մղելով հյուսիսից՝ սելջուկյան էմիրությունների, հարավից՝ եգիպտական մամլուկների դեմ: Այդ անհավասար մարտերում, 1375 թվին, վերջնական հարվածով ընկավ Կիլիկյան Հայաստանի անկախությունը:

Տնտեսական որոշ բարենպաստ պայմանների մեջ էր գտնվում Ղրիմի հայ գաղութը, որն իր մշակութային կապերը պահպանելով մայր երկրի ու Կիլիկիայի հետ, գնալով զգալի դեր էր խաղում մշակութային տրադիցիաների շարունակման ու զարգացման գործում: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի մի զգալի մասն ընդօրինակված է Ղրիմում:

Քաղաքական, տնտեսական ու մշակութային այս երևույթները ԺԴ դարի հիշատակարանների նյութերով դառնում են շատ ավելի պարզ և միս ու արյուն են ստանում:

Հայտնի է, օրինակ, որ մոնղոլները, Ղազան խանի (1295-1304) ժամանակ, ընդունելով իսլամը, ծանրացնում են հարկային լուծն ու կրոնական հալածանքները Հայաստանում, սակայն հիշատակարաններն են միայն, որ հարուստ տվյալներով պարզում են աշխատավոր ժողովրդի կրած տառապանքների ծանրությունն այդ ժամանակ:

Դանիէլ Աղթամարցի գրչի խոսքերով՝ այդ ժամանակ «զաւրացաւ ազգն Իսմայէլի այնչափ, մինչև դարձուցին յիւրեանց անօտի յոյսն զամենայն ազգն նետողաց ...: Եւ նեղէն զամենայն քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն իւրեանց, զոմն նեղէն, զոմն տանջէն, զոմն սպանանէն, զոմանց զինչսն յափշտակէն. և ոչ այնու շատացեալք, այլ և եդին ի վերա ամենայն քրիստոնէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց թիկանցն կտաւս սեաւս, զի որք տեսցեն զնոսա, ճանաչեսցեն եթէ քրիստոնեայք են և հայհոյեսցեն» (էջ 47)*:

Դրված հարկի քանակը հայտնում է մի այլ հիշատակագիր:

«Առաքեաց [ղանն Ղարբանդա], — գրում է նա, — ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ

* Հիշատակարաններից մեջ բերվող հատվածների համար ամենուրեք ցույց ենք տալիս սույն ԺԴ դարի հիշատակարանների ժողովածուի էջահամարները:

տանել բստ մարդաթուի խ. (40) արծաթն մինչ ի Ժ. (10) բստ կարի» (էջ 46):

Հարկերն այնքան ծանր էին, որ ժամանակակիցների համար այլևս չկար «յոյս ապրելոյ և ոչ տեղի ապաստանի», ուստի շատերը, ստիպված, ի դիմաց հարկի «վաճառեցին զորդիս իւրեանց, և ինքեանք փախուցեալ յայլևայլ տեղիս» (էջ 102): Հարկի դիմաց երեխաների վաճառքի մասին կարևոր է նաև Սարկավագ գրչի 1310 թվին գրած հիշատակարանի տվյալը, նա հայտնում է, որ «ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ լինին ուստերք ու դստերք աշխարհիս մեր, և բազում գեղք և վանորայք աւեր և անհանգիստ» (էջ 66)*:

Այդ լծի տակ կեղեքվող, ծայր աստիճան թշվառության հասած ժողովրդից հարկերի գանձումը, անշուշտ, հեշտ չէր, և փախուստի դիմողների ու իրենց որդիներին վաճառքի հանողների կողքին կային նաև այնպիսիք, որոնք կազմակերպում էին դիմադրություն և հրաժարվում հարկատվությունից: Այդ իսկ պատճառով հարկահանությունը վեր է ածվում փոքր մասշտաբի պատերազմական գործողության, որին մասնակցում էին հազարից ավելի սպառազեն զինվորներ: Այդ մասին է վկայում 1318 թվին մի հիշատակագիր, նա գրում է՝ «Գարունն առին զհարկն և զաշունն ղանն [Ղարբանդա] մեռաւ: Եւ այլ եկին, ամն անուն Ազլազու, Սինթամուր և Հասանթամուր ՌԳՃ. (1300) մարդով և կրկին հարկ առին՝ յոյժ անչափ, և ոչ ոք ընդդիմացաւ նոցա» (էջ 138):

Հարկերից բացի, մոնղոլ բանակայները նշանակում էին ամենափոքր հանցանքների համար մեծ տուգանքներ և գրպարտություններ բարդելով սեփականում էին ունևոր մարդկանց գույքն ու ունեցվածքը:

1349 թվին Սարգիս հիշատակագիրը ողբում է «դառնացեալ ու վշտացեալ» իր ժամանակը և հայտնում, որ մոնղոլները «զոմանց ինչս

* Կ. Մարքսը, խոսելով մոնղոլական տիրապետության մասին Ռուսաստանում, նշում է, որ այն «մի լուծ էր, որը ոչ միայն ճնշում, այլև վիրավորում ու մաշում էր նրա զոհը դարձած ժողովրդի հոգին: Մոնղոլ թաթարները հաստատեցին սիստեմատիկ ահաբեկման մի ռեժիմ, որի գործիքն էին կողոպուտն ու մասսայական կոտորածները»: Ինչպես ցույց են տալիս հիշատակարաններում ցրված տվյալները, Մարքսի այս բնորոշումը, առանց վերապահության, վերաբերում է նաև մոնղոլական լծի տակ ընկած Հայաստանին:

յափշտակեն, և զոմանս տուգանեն, և զոմանց տանս բախտանաւք և հերձաւք ի զուր բանիւք աւերել ջանան» (էջ 379):

Աբու-Սայիդ ղանի մահվանից հետո (մհ. 1335 թ.) մոնղոլական էլխանությունն ապրում է իր քայքայման պրոցեսը, սկսվում է միջավատատիրական անընդհատ պատերազմների ու բախումների մի ժամանակաշրջան: Մեկը մյուսին հաջորդում են կարճակյաց բանակայներ, որոնք անզոր էին խաղաղություն հաստատելու: Այդ ժամանակ երկիրն ամենուրեք ամայանում է, տիրում է սով, գերեվարություն, կոտորած ու ավեր:

Պատերազմների և աշխարհակործան արշավանքների ոչ լրիվ տարեգրությունն ըստ հիշատակարանների, պատկերվում է հետևյալ կերպ:

1336թ. – Իկոնիայի թուրքմենները հարձակվում են Բասենի վրա և մեծ ավերածություն գործում:

– Նույն թվին Հալեպի նայիբ Ալթուն-Բուղան արշավում է Կիլիկիա, արշավանքը կրկնում է նաև հաջորդ՝ 1337 թվին: Նրա բանակները, ինչպես հաղորդում է Ներսես Կրակցի գրիչը՝ «աւերեցին զերկիրս՝ զլեառն ու զդաշտս, ու արին բազում սպանումն, ու առին անթիւ ծառայս» (էջ 295):

1338թ. – Իկոնիայի թուրքմենները, Թամուրթաշի գլխավորությամբ, 4 ամիս պաշարում են Երզնկան և կոտորում ու գերում շրջակայքի խաղաղ բնակչությանը: Այդ առթիվ Մելքիսեդեկ գրիչը հայտնում է.

«Զի եւ ամն անուն Դամուրտաշ
Եւ արար զազգս մեր ի մաշ ...» (էջ 306):

1343թ. – Ներսես գրչի խոսքերով «Սուլայման ղանն գնաց ի Յարաթնին վերայ՝ ի Սեբաստիա» (էջ 334):

1346թ. – «Մեծ մայրաքաղաքն Թէոդուպաւլիս անապատ եղեւ ի մարդոյ եւ յանասնոյ ի յազգէն հագարու եւ խոմայեկացոցն» (էջ 346):

1355թ. – «Անբարեւէր մարդիկ բռնացեալ ունէին զաշխարհս ամենայն, և ամրանային ի զ[ղ]եակս, ի քաղաքս՝ մի զմիմեամբք եղանելով» (էջ 411):

1357թ. – Տեղի է ունենում Ոսկե Հորդայի ղան Ջանիբեկի և Ատրպատականի բանակալ Մելիք-Աշրաֆի (1344-57) միջև ավերիչ պատերազմ:

1360թ. – Հալեպի ամիրա Պայտամուրը, «Սուրալ զօրօք», արշավում է Կիլիկիա և գրավում Ատանան ու Տարսոնը (էջ 451):

1361թ. — «Անարէն դատաւորն՝ տաճիկ Պաքիյն», գրում է մի հիշատակագիր, գերում է «զերկիրն Շիրարոյ և Խարզբերդոյ» և գերիներին վաճառում «նման ոչխարի» (էջ 451):

1367թ. — Տարոնի ամիրա Մինչաքն արշավում է Կիլիկիա «բազում հիծման հիծելով և այլ շատ հետիվարաք, որ էին իբրև ԺԲՌ. (12000) մարդ, և այլ աւելի» (էջ 477):

1371թ. — Հիշատակագիր Սիմեոնը հայտնում է, որ «ազգն Պարսից եկեալ զԲերկրի գերեցուցին և զԲանդումահի թալանեցին» (էջ 499):

1375թ. — Եգիպտական Սուլթանի զորքերը պաշարում և գրավում են Սիսը, «էառ Յաշէխ Թամուրն զԹագաւորական քաղաքն զՍիս և եղև սուգ մեծ» գրում է մի հիշատակագիր (էջ 516): Այսպիսով վերջ է տրվում Կիլիկիայի անկախությանը:

1387թ. — Սկսվում են Թամուր-Լանկի աշխարհավեր արշավանքները, որոնց մասին շատ արժեքավոր տվյալներ ու աղեկտուր մանրամասնություններ են հաղորդում դեպքերին ականատես բազմաթիվ հիշատակագիրներ (տե՛ս էջ՝ 567, 569, 573, 575, 578, 589, 599, 627-629 և այլն):

1392թ. — Ամիր-Եզդինը գրավում է Ոստանը: «Շատ պակասութիւն էած քրիստոնէից» հայտնում է ստացող Սիմեոնը:

Պատերազմների ու արշավանքների հարատև այս փոթորիկների մեջ աշխատավոր ժողովուրդը զանգվածաբար բնաջնջվում էր կամ ծայր աստիճանի թշվառության հասնում: Պատերազմներն իրենց հետ բերում էին կոտորած, մահ, փախուստ, նյութական ու հոգևոր արժեքների ոչնչացում և այլ արհավիրքներ:

Հիշատակարանում հարուստ ու հետաքրքրական նյութեր կան, որոնք լույս են սփռում ժողովրդի դառն կացության ու տնտեսության քայքայված վիճակի վրա:

Սարգիս գրիչը, օրինակ, արձանագրում է, որ 1340 թվին «մարդակեր գազանների» 30.000-անոց մի բանակ խուժում է իր հայրենիքի սահմանները: «Բազում գաւառս, — հայտնում է նա, — գ[ե]րեցին և աւերելով կործանեցին, և զինչս արգիւնաց զամենայն յափշտակեցին, և զամենեւեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ և բոկ, և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան՝ ոչխարաց և զեզանց, գոմշուց և զըլուց, գիշուց և գերիվարաց, և

զհանդերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց ... այնպէս արարին, որ շունք ի սովոյ սատակէին, քանզի զխորս ամբարաց հացից հանէին ...» (էջ 324):

Սովը և համաճարակային հիվանդությունները, պատերազմների անբաժան այդ ուղեկիցները, առատ հունձ ունեին այդ դառն ժամանակներում: 1349 թվին մի հիշատակագիր հայտնում է հետևյալ սրտաճմլիկ վկայությունը. «Անկաւ սով սաստիկ, կոտորեցան յերից մասանց Հայոց աշխարհս (իմա՝ բնակչության 1/3-ը), եւ յետ սովուս մխիթարութեան եհաս աստուածասաստ բարկութիւն ի վերայ մեր եւ անկաւ մահ տարաժամ յամենայն աշխարհս, եւ տարաւ զկէսայման աշխարհիս, եւ այս վասն ծովացեալ մեղաց մերոց եղեւ» (էջ 375):

Ինչքան էլ չափազանցություն համարենք հիշատակարանի տվյալները, այնուամենայնիվ աներկբայելի է, որ մարդկային զոհերը տասնյակ հազարների են հասել:

Անտանելի այս վիճակից փրկվելու բոլոր ուղիները գոց էին, մնում էր միայն մի ծայրահեղ միջոց՝ թողնել հայրենի երկիրը և օտար հորիզոններում որոնել աշխատանքի ու կյանքի համեմատաբար տանելի պայմաններ: Ուստի և աշխատավոր ժողովրդի մի զգալի մասը, հատկապես առևտրական ու արհեստավորական շերտերը, բռնում էին գաղթի ճանապարհ, հեռանում օտար երկրներ:

Հիշատակարանները ուշագրավ նյութեր են հաղորդում նաև գաղթի ուղիները, նոր գաղթավայրերը և գաղթողների մի մասի բնաշխարհը պարզելու համար: Սուլթանիայում, օրինակ, ԺԴ դարում գտնում ենք մի փարթամ հայ գաղութ, կազմված հիմնականում անեցիներից, նրանք ունեն նաև իրենց եպիսկոպոսը (եպիսկոպոս Օրտուի կամ Օրտուբազարի), անեցիներ հանդիպում ենք նաև Երզնկայում և այլուր:

Ոսկե Հորդայի հռչակավոր մայրաքաղաք Սարայ-Բերքեում, 1319 թվին, հանդիպում ենք Խաչատուր գրչին, որը հիշատակում է իր նոր բնակավայրում հաստատված մի շարք հայրենակիցների: «Պատուական» քաղաք Երևանից գաղթած Տէրտէր գրչին հանդիպում ենք նախ Ազախում (Ազով), ապա Ղրիմում: Սուրխաթում և Ղրիմի այլ քաղաքներում ԺԴ դարի կեսերից արդեն մեծաթիվ հայ գաղթականություն ենք գտնում: Հայ գրիչների ու այլ հայազգիների հանդիպում ենք նաև իտալական մի շարք շրջաններում ու

քաղաքներում (Լոմբարդիա, Պոլոնիա, Պիզա, Միլանո, Վենետիկ, Փերուժ), Կիպրոս կղզում, Ալեքսանդրիայում, Կոստանդնուպոլսում և հայրենի երկրից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող այլ երկրներում ու աշխարհներում:

Հաստատվելով նոր գաղթավայրերում, առևտրականներն ու արհեստավորները զբաղվում են իրենց տիրապետած արհեստներով ու կենդանի պահում հայրենի երկրի տրադիցիաներն ու սովորությունները: Ուստի, չնայած բուն Հայաստանում ԺԴ դարում գրված հիշատակարաններն արհեստների մասին շատ քիչ տվյալներ են հաղորդում, բայց այդ թերին ուշադրության արժանի վկայություններով լրացնում են հայ գաղթավայրերում գրված հիշատակարանները: Դրանց մեջ, այլևայլ առիթներով, հիշատակված ենք գտնում մոտ 30 տարբեր մասնագիտության արհեստավորների ու առևտրականների անուններ: Դրանք են՝ ապրեփեց, ասպրգործ, բազազ, գինեծախ, դալալ, դանկրար, դարբին, դերձակ, էզեպան, թավկիր (ճաշարանի մատուցող), խառատ, կաշկար, կտավգործ, հյուսն, ղասապ, ճոն, մազման, մսագործ, ներկարար, ոսկերիչ, ջուհակ, սանդրգործ, տապաղ, Րարգործ, Բաճագործ և այլն:

Արհեստավորների դրությունը հայրենի երկրից դուրս մխիթարական չի եղել, այս բանն ակնհայտ է թեկուզ այն փաստից, որ նրանցից համարյա ոչ մեկը չի հիշատակված որպես ամբողջական մի ձեռագրի գնորդ կամ պատվիրատու. արհեստավորները մեծ մասամբ, մուտք են գործել հիշատակարանների մեջ որպես փոքր գրամագլխով ձեռագրի գրությանն օժանդակողներ, մի հատվածի կամ մասի ստացողներ: Որպես այդպիսիք նրանք իրավունք են ստացել հիշվելու միայն ձեռագրի այս կամ այն հատվածի ավարտից հետո, մեկ-երկու տող բռնող փոքրիկ հիշատակագրության մեջ:

ԺԴ դարի ձեռագրերի ստացողները հիմնականում առևտրականներ, ցածրաստիճան հոգևորականներ և ունևոր գյուղացիներ են, նրանց զոհաբերությունների ու զրկանքների գնով է միայն հաջողվել ձեռք բերել որևէ ձեռագիր, որովհետև ձեռագրի նյութի ու ընդօրինակության, նկարազարդման ու կազմելու համար պահանջվել են մեծ ծախսեր*:

* Ձեռագրերի արժեքի մասին հիշատակարաններում կան մի շարք տվյալներ: Ըստ մեծության ու արտաքին ձևավորման, տարբեր գներով են վաճառվել ձեռագրերը:

Հիշատակարաններում որպես ստացողներ, ինչպես և այլ առիթներով, հիշատակված են նաև հայ ավատական տների մի շարք ներկայացուցիչներ, իրենց մերձավորների հետ միասին: Դրանց տվյալներով հնարավոր է լինում ճշգրտորեն հետևել Օրբելյանների, Պռոշյանների, Դոփյանների, Վաչուտյանների և մյուս տների ժամանակագրությանը և աստիճանական տկարացման ու մանրացման պրոցեսին:

Դարի վերջում չեն հիշվում երբեմնի հզոր Պռոշյան իշխանական տան սերունդները: Օրբելյանները, հայրենազուրկ եղած, ապաստան են որոնում օտար երկնքի տակ: Դոփյան իշխանական տան շառավիղներին հանդիպում ենք հայրենիքից դուրս՝ Ջղանա անապատի (Վրաստան) շրջակայքում, ընդ որում, այդ տոհմից «մեծազարմ իշխան» Վեգենը խարազանազգեստ կրոնավոր էր դարձել՝ Վրթանես անունով: Եկեղեցականի սքեմն այդ և հաջորդ դարերում այն ապաստանն էր, որով հայ ավատատերերն ստիպված էին պատվարել իրենց ժառանգական տիրույթները բռնակալների ինքնասեփականման ախորժակներից:

ԺԴ դարում կրոնավորական սքեմով են հանդես գալիս նաև այլ տների ներկայացուցիչներ: Փ. Սյունիքի իշխան Գրիգորի միակ որդի Սարգիսը, մանուկ հասակից նվիրվելով եկեղեցուն, 1312 թվին արդեն Խաչենի եպիսկոպոսն էր: Սյունյաց մետրոպոլիտական աթոռը երկար ժամանակ Օրբելյանների ձեռքին էր գտնվում: Պատմագիր Ստեփանոս Օրբելյանին այդ աթոռի վրա հաջորդեց նրա ազգական Հովհան Օրբելը, իսկ այնուհետև՝ եղբորորդի Տարսաիճ-Ստեփանոսը:

Որոտանի ու Տաթևի տեր Իվանեի որդին էր նշանավոր Հովհան Որոտնեցին, որը լինելով Արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ եկեղեցական գործիչը, միաժամանակ տեր էր իր «հայրենեացն ժառանգութեան»: Հայրենատերեր էին նաև Աղթամարի կաթողիկոսները և շատ այլ բարձրաստիճան հոգևորականներ:

Հիշատակարանները հնարավորություն են ընձեռում ոչ միայն տեսնելու այդ ուշագրավ երևույթի կոնկրետ փաստերը ԺԴ դարում, այլև մի

նշված տվյալների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ միջին արժեքի ձեռագիրը վաճառվել է 500-1000 սպիտակով (արծաթ դրամ), չնայած եղել են այնպիսիները, որոնց գրության համար ծախսվել է 2300 և ավելի սպիտակ:

շարք տվյալներ են հաղորդում, որոնք նպաստում են դրա լուսաբանմանը:

Ընդունելով խոլամը, մոնղոլները, ինչպես ասացինք, ծանրացնում են հարկերն ու բռնությունները Հայաստանում: Որոշ ժամանակ նրանք հարկադրում են նաև քրիստոնեական եկեղեցուն ու կղերականությանը, բայց, ինչպես վկայում է Հակոբ գրիչ Վարագեցին՝ «առանց ղանի հրամանին» (էջ 138), այսինքն՝ առանց մոնղոլական էլխանության այդ մասին արած հատուկ կարգադրության:

Աղթամարի կաթողիկոս Զաքարիան, 1318 թվից քիչ առաջ, գնում է Մուհամեդ-Օլջայթու (Խարբանդա) ղանի մոտ և ստանում նրանից աղեխ *(ЯРЛЫК), ըստ որի, կրոնավորները հարկերից ազատ են հայտարարվում: Դեպքերին ժամանակակից հիշատակագիրը հայտնում է, որ «Երիցս երանեալ երջանիկ հայրապետն Զաքարիայ հետ ղանին գնացեալ մինչև ի Բաբելոն ամ մի ողջոյն, և աղեխ առեալ ի նմանէ՝ զկրաւնաւորքս և զքահանայսն ազատեաց ի հարկապահանջութենէ» (էջ 138):*

Չնայած եկեղեցու ստացած այս արտոնությունը երբեմն ոտնատակ էր արվում մոնղոլական զորավարների ու հարկահանների կողմից, և եկեղեցիներն ու վանքերը երբեմն նույնպես ավարի ու ավերածության էին մատնվում, այնուամենայնիվ, եկեղեցական կալվածքներն անձեռնմխելի էին, իսկ եկեղեցականները՝ ազատ հարկատվությունից:

Ահա այս բանի պատճառով Փ. Սյունիքի մեր կողմից արդեն հիշված իշխան Գրիգորը, իր որդի Սարգսին դարձնելով Խաչենի եպիսկոպոս, նվիրում է եկեղեցուն «ընծայս յոլով՝ գիւղորայս, այգիս, անդաստանս» և այլ արդյունքներ (էջ 84):

Նման բազմաթիվ տեղեկություններով հարուստ են վիմական արձանագրությունները և ձեռագրերում հաճախ հանդիպող կալվածագրերը[*]*:*

Վանքերը, որպես ավատական կազմակերպություններ, վարում էին իրենց ինքնուրույն տնտեսությունը, շահագործելով վանքապատկան կալվածքներում կախյալ գյուղացիների աշխատանքը, պահում էին խոշոր ու

[*] Մեր աշխատանքների ընթացքում ձեռագրերից հավաքել ենք մի շարք կարևոր կալվածագրեր. նպատակ ունենք հետագայում, ավելացնելով դրանց վրա ԺԵ և հետագա դարերից մնացած նման փաստաթղթեր, հրատարակել դրանք հատուկ ժողովածուով:

մանր եղջերավոր անասունների հոտեր, մշակում էին այգիներ և այլն:

Հիշատակարանների նյութերով ի հայտ է գալիս վանական պաշտոնյաների ու «գործաւորների» մի ընդարձակ ցանկ, որը լույս է սփռում վանական միաբանությունների ներքին կազմակերպության և վանական տնտեսությունների վրա: Հիշված պաշտոնյաներից են՝ վանահայր, փակակալ, լուսարար, մառնպան, հյուրատես, եկեղեցպան, տնտես, տաճարասպաս, հացկտուր, հացպան, փոմպան, հովիվ, մանկալ, ածպան (այծարած) *և այլն:*

Կան նաև տվյալներ մի քանի վանքերի թեմերի սահմանների ու նրանց ենթակա գյուղերի մասին: Այսպես օրինակ, 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Օրբելու հատուկ կարգադրությամբ, Վերի-Նորավանքը ստանում է «ի սեպհական ժողովուրդ և թեմ» Անկեղի, Եղիան, Եղիկանց Զոր և Վաղցան գյուղերը (էջ 7-8):

Քաղաքական ու տնտեսական պայմանները ԺԴ. դարում շատ աննպաստ էին շինարարական լայն գործունեություն ծավալելու համար: Բնորոշ է այն, որ այդ ժամանակաշրջանում մի շարք եկեղեցիներ ամրացվել, պատսպարվել և վեր են ածվել ինքնապաշտպանական փոքր ամրությունների: Շինարարական մեծ ձեռնարկումների միայն եզակի փաստեր են հայտնի հիշատակարաններից, բայց եղածն արժեքավոր է և ուշագրավ: Հայտնի է օրինակ, որ 1306 թվին Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը «ավերածին ի հիմանէ» կառուցել է տալիս Լիմ կղզու սուրբ Գևորգի վանքը «բազում ծախիւք և աշխատութեամբ բերեալ զնիւթ քարանց սորա ի վերա մկանանց անդնդահոս ծովուն, ի յերկրէն Քաջբերունեաց, ի մեծ լեռնէն, որ կոչի Քաջաց Կայանք» (էջ 40):

Մեծ դժվարությունների ու ծախքերի հետ է կապված եղել նաև Եղվարդի ջրանցքի կառուցումը, որն իրագործեց 1318 թվին Եղվարդի տեր Աղիրպեկը, իր կնոջ՝ Վախախի հետ միասին: Ներսես գրիչն այդ առթիվ գրում է. «Եւ շրջապատեալ զլեառն Արարատեան (իմա՝ Արայեան), հատուցին զջուրն յորդառատ վտակաւք փոյթընթաց յԵղիվարդ: Եւ զդժվարութիւն սահմանացն և զյոլով աշխատութիւնս, և զսուրս արվեստավորացն, և զամենայն ծախսն ո՞վ կարէ ընդ գրով արկանել» (էջ 141):

Հիշատակարաններն առատ տեղեկություններ են պարունակում գրչության կենտրոնների, միջնադարյան համալսարանների ու դպրոցների

վիճակի, դրանցում սովորող ուսանողների տնտեսական ու կենցաղային դրության, ուսուցման մեթոդների և հարակից հարցերի մասին:

ԺԴ դարի ամենանշանավոր ու ծավալուն ուսումնական հաստատությունը Գլաձորյան համալսարանն էր, որը ժամանակակիցները կոչում էին «երկրորդ Աթէնք», «մայրաքաղաք ամենայն իմաստից», «մեծ դպրատուն», «իմաստից տուն» և այլն:

Հայաստանի ու Կիլիկիայի հեռավոր վայրերից այնտեղ էին դիմում տասնյակ ուսանողներ Եսայի Նչեցու գլխավորած «Հայոց դպրոցում» ուսանելու և վարդապետական գավազան ստանալու համար: Սակայն ուսուցման պայմաններն այնտեղ ևս մխիթարական չէին: 1314 թ. Գլաձորում սովորող Մխիթար Երզնկացին, իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարաններից մեկում, դիմում է ապագա ընթերցողներին հետևյալ խոսքերով.

«Որք ընթերցմամբ հայիք ի սա
Եւ հանդիպիք գանձու սորա,
Տես թէ քանի՜ աշխատեցայ
Ես՝ Մխիթար՝ գրիչ սորա.
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքըս ցուրտ ու պարզկա,
Զարտախս բարձր ու կրակ չկայ,
Դոներս (= չոր հաց) չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ,
Ես յոյժ նեղած ու ճար չկայ,
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ ... » (էջ 103-104):

Շատ ավելի ծանր էին ուսման պայմանները ԺԴ դարի երկրորդ կեսին: Շարունակական ու հարատև պատերազմներն արգելակում էին ուսումնական հաստատությունների նորմալ պարապմունքները: Ուսուցիչներն իրենց աշակերտներով ստիպված էին հաճախ գավառից գավառ տեղափոխվել, փախչել հալածիչներից, բացօթյա շարունակել իրենց պարապմունքները:

Մեծանուն Հովհան Որոտնեցու համալսարանի մասին 1386 թվից պահպանվել է Հակոբ գրչի մեծարժեք հիշատակարանը: «Այլ մեք, — հայտնում է նա, — ընդ սուրբ և տիեզ[եր]ահամբաւ և երանաշնորհ րաբու-

նապետիս Հայաստանեայց և վերադիտողի տեառն Յովհաննու Որոտնեցոյ կայաք կարդալ և ի գրել ի համալսարանի սորին»: Բայց երկար չի տևում Հակոբ գրիչի և նրա դասընկերների ուսանողության խաղաղ շրջանը: «Եւ մինչդեռ, — շարունակում է նա, — անճառ ցնծութեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայաք, րաբունին Կ. (60) աշակերտօքն, ի բնիկ գաւառն իւր՝ յերկիրն Որ[ո]տան, կարդալով և գրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծովացեալ եհան զպունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի: Որ եկին և առին զբերդն Որոտան, հայրենազուրկ արարին զպարոն Սմբատն՝ որդի Նանիկին: Եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ րաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան: Եւ սա կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ. և Բ. (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր, աշակերտօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով: Եւ ես ծանրաբեռն մարմնով, զթուղթ և զօրինակ, զգրիչ և զթանաք ի յուս իմ բարձեալ ի հետ գնայի, կարդայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանս գրէի, բազում նեղութեամբ և չարչարանօք, զի ուր սկսա անդ ոչ էառ զկատարումն» (էջ 560):

Ուսումնական հաստատությունների մասին հիշատակարաններում կան բազմաթիվ համարժեք փաստալից տեղեկություններ, որոնք, անշուշտ, նպաստելու են այդ բնագավառի մասին մեր գիտելիքների հարստացման և դպրության կենտրոնների պատմության մութ կողմերի պարզաբանման գործին:

Հիշատակարաններում անսպառ տվյալներ են ցրված ժամանակի նշանավոր մշակութային ու քաղաքական գործիչների ու համեստ գրիչների, մանրանկարիչների և կազմողների մասին: Սույն ժողովածուն կենսագրական նյութերի հարուստ մի շտեմարան է, որի օգտագործմամբ պարզվելու են բազմաթիվ վիճելի հարցեր. Ճշտվելու են կարևոր դեր կատարած դեմքերի կյանքի ու գործունեության շատ մութ դրվագներ ու տարեթվեր:

Այլևայլ առիթներով հիշատակարանների մեջ մուտք են գործել ԺԴ դարի հազարավոր, մինչ այժմ անհայտ, նշանավոր ու աննշան մարդիկ: Նրանց մասին եղած տեղեկությունները նույնպես թարմ նորույթ են հայագիտության համար:

Մեծ արժեք են ներկայացնում նաև բնակավայրերի ու տեղանունների մասին եղած հիշատակությունները, որոնց մի զգալի մասը հայտնի է

դառնում բանասիրությանը միայն այս ժողովածուի հրատարակությամբ:

Պատմագիտական այս կարևոր նյութերը մեզ հաղորդել են գերազանցապես ժողովրդական խավերից դուրս եկած չարքաշ գրիչներն ու մանրանկարիչները: Ծանր են եղել նրանց կյանքի ու աշխատանքի պայմանները: Հաճախ են նրանք գանգատվում իրենց առօրյայից, հաղորդում սեղմ, բայց պատկերավոր տվյալներ գրչության ծանր պայմանների ու կենցաղային անհարմարությունների մասին:

Նորմալ աշխատանքի հիմնական արգելակիչ հանգամանքը երկրի անկայուն դրությունն է եղել՝ հարատև պատերազմներն ու արշավանքները, և դրանցից բխող սովը, փախուստը, հալածանքներն ու գերությունը:

Թադեոս գրիչը, օրինակ, աշխատել է «ի դառն և ի դժնդակ ժամանակի, ձմեռան յեղանակի. բազում տառապանաւք և նեղութեամբ», գրչության աշխատանքին խանգարել են ցուրտն ու ձմեռային եղանակը («երբեմն ի ցրտոյ և ի ձմեռնային խստութենէս տառապէի»), մոնղոլ պաշտոնյաների երթևեկությունն ու խժդժությունները և երկրի ամայացումը («երբեմն ի թաթարի գալոյ և գնալոյ ու ի տեղացս աւերութենէն մեք փախստական լինէաք»), և նա ի վիճակի չի եղել ձեռագրի ընդօրինակությունն իր ցանկության ու կարողության համեմատ կատարելու: «Ես հայնց կամէի, — գրում է նա, — որ ամէն գիր ոսկի էր լե[ա]լ» (էջ 15), սակայն նրա ցանկությունն անկատար է մնացել:

Նույնպիսի ծանր պայմաններից են գանգատվում նաև ուրիշ գրիչներ: «ժամանակս անչափ դառն էր ի յանաւրինաց, որ մի ժամ չի կարելի գրել, զամէն փախած ու թաքած կու կայաք» հայտնում է Թովմա Արճիշեցին (էջ 282). Հովհաննես գրիչը 1338 թվին հայտնում է, որ «ոչ կարէի գրել զգիրս», որովհետև դառն է ժամանակը, Թամուրթաշը պաշարելով Երզնկան «զերկիրն ի սուր ս[ուսերի] մաշեց, և զոմանց զինչս և զստացուածս յափշտակեց, և ոմանք փախեան՝ և ի ձիւն և ի սառն մեռան, զի ձմերային էր ժամանակն: Զի որ ի տան բնակէր՝ ի ձեռս նոցա մատնէր, և որ փախչէր՝ ի ցրտոյ տոչորէր. և ի յետին շունչն հասաւ երկիրս: Եւ իմ լսէի և տեսանէի զայս և ի բազում տրտմութենէն ոչ կարէի գրել զգիրս» (էջ 305):

Մի այլ գրիչ հայտնում է, որ չորս տարի շարունակ բռան վրա է ընդօրինակել գիրքը, որովհետև «զամէն փախստական կացինք ի կատարս լերանց՝ քաղցած ու պանդուխտ, և ամենեքեան մեռեալ էինք կենդանութին ի

յահէ Թամուրին» (էջ 387)*:

Քիչ չեն խանգարել գրիչներին նաև կենցաղային անհարմարությունները, հիվանդությունները, ծերությունը և այլն: «Յարկն յորում կայաք, — հայտնում է Մկրտիչ գրիչը 1302 թվին, — բացակայ գոլով մածնոյր հանապազ մելանն ի յաւգոյն, ընդ որ յոյժ վշտանայի, ևս և աղմուկ զրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի» (էջ 7):

Ոսկյա Հորդայի հեռավոր մայրաքաղաք Սարայ-Բերքեյում հաստատված Խաչատուր գրիչը նույնպես տրտնջում է իր աշխատանքի պայմաններից՝ «բնական կայանք չունէի ապա ի տեղւոջէ ի տեղի կու դեգերէ[ի]. եւ այլ՝ զի սիրտս վշտացեալ էր: Եւ այս աշխարհիս ձմեռն խիստ է, հաւայն չէ գրագրու լայէխ», գրում է նա (էջ 156):

Գրչության արվեստով պարապողները, տարիներ շարունակ զբաղվելով ձեռագրերի ընդօրինակությամբ, ձեթի ճրագի տակ՝ կիսախավարում, մարգարտաշար իրենց տառերը նկարելով, տառապում էին վատատեսությամբ (ակնոց դեռևս չկար) և այլ մասնագիտական հիվանդություններով:

Ստեփան գրիչը հայտնում է, օրինակ, որ «յոյժ պակասեալ էր ճաճանչ լուսոյ յաչացս» (էջ 169), Հովհաննես գրիչն աշխատում է «ի ժամ հասեալ ծերութեան, քանզի պատուհանք լուսարանաց պակասեալ և ձեռքս խռպանացեալ դողդոջէր» (էջ 235), Ներսես Կրակցի գրչին, բացի վատատեսությունից, այլ վշտեր էլ են մորմոքում: «Ի վշտալից ժամս գրեցի, — հայտնում է նա, — որ է աչքս պակասել ի լուսի, և ստամոքսս յամէն ժամի, և չունէի մխիթարաւղ ոչ եղբայրէ և ոչ յընկերոջի ... եւ էր տեղիքս յորում գրէի խիստ եկ և դարձ մարդի» (էջ 274): 1363 թ. Խիզանում աշխատող Հովհաննես գրիչը հայտնում է, որ «յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից և ի ճանճից և յայլոց, որ սոցին նման է» (էջ 459):

Այս և սրանց նման մյուս բազմաթիվ վկայությունները, որոնք ցրված են սույն ժողովածուի էջերում, ուշագրավ են ոչ միայն գրիչների կյանքն ու կենցաղը ուսումնասիրելու համար: Հայ աշխատավոր գյուղացիության

* Ձեռագրերի գրչության ծանր պայմանների մասին արժեքավոր տեղեկություններ կան նաև մի շարք այլ հիշատակարաններում: Առարկայական ցանկի «գրչության ծանր և անբարենպաստ պայմաններ» հարցի դիմաց ցույց են տրված այդ տեղեկությունների էջերը:

զանգվածները, գրիչների ու ծաղկողների հետ ապրելով նույն միջավայրում, կրել են ժամանակի նույն դառնությունները՝ ավելի ուժգնակի, ապրել են նույն և շատ ավելի դժվար ու ծանր պայմաններում, ուստի և այս տվյալները հնարավորություն են տալիս ծանոթանալու ոչ միայն հիշատակագիրների, այլ ընդհանրապես՝ հայ աշխատավոր ժողովրդի վիճակի ու կենցաղի հետ:

«Դառն ու վշտաբեր» և «բազմաթշվառ» պայմաններում մշակութային արժեքներ կերտած հիշատակագիրները դեպքերի չոր ու ցամաք գրանցողներ չեն: Նրանցից շատերը ձգտել են իրենց հիշատակարանները շարադրել պատկերավոր ու ճոխ լեզվով, իսկ ոմանք, ունենալով կարողություն և փորձառություն, բանաստեղծական գողտրիկ տողերով են հաղորդել իրենց ասելիքը: Այս հատկություններով որոշ հիշատակարաններ թևակոխում են նաև գեղարվեստական գրականության բնագավառը:

Մխիթար գրիչ Անեցին, որին պատմական իրադարձությունները հայրենի քաղաքից հանել ու քշել էին Էլխանների մայրաքաղաք Սուլթանիա, 1338 թվին, հաճախ մտաբերում ու մորմոքվում է իր հայրենիքի ու հանգուցյալ ծնողների կարոտով.

«Յիշեմ զգաւառն իմ հայրենին
Զմայրաքաղաք ամուրն Անին,
Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին
Տէր Յակոբա և Սեղային» (էջ 310)

գրում է նա: Այնուհետև նկարագրում է իր ժամանակը, ուշագրավ տեղեկություններ հաղորդելով Սուլթանիայի հայ գաղութի մասին, ի վերջո, հատուկ բանաստեղծությամբ, աշխույժ ու կատակախառն տողեր է նվիրում ձեռագրի գրչության պայմաններին.

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիստ յաղթեց ցաւն մարմնոյս
Եւ ի ձեռացս ի դողալուս,
Այլ չեմ կարել տալ շար գրոյս,
Եւս առաւել ի յայլ շողուս
Ու ի թանաքի թանձրանալոյս,
Եւ մանաւանդ ի յայս քնուս,

Զաւր հատարակ մրափելուս,
Եւ յանիծեալ այս ճանճերուս
Ի անավատակ ա[յ]ն կենդանուս,
Որ միշտ նստին ի վերա գրչուս,
Ծրծեն զթանաքն գրերուս ...
Եղբա՛յր, մեզ մի դնէ ցգերուս,
Այս տառապեալ՛ և ողորմելուս.
Ինչ հնացաւ տարիք մարմնոյս
Պէս-պէս ցաւեր յայտնի ծերուս:
Ո՛խ թէ, լինէր ճար այս նաւուս,
Որ հասանէր յեզր ի ծովուս ... » (էջ 311-312):

Թամուր-Լանկի աշխարհավեր արշավանքների թարմ ազդեցությամբ էպիքական շնչով է նկարագրում իր ժամանակաշրջանը Թումա գրիչը:

Ահա նրա չափածո հիշատակարանից մի հատված.

« ... Եուն մի եկեալ խորասանցի, Թամուր անուն միակողմի,
Բարկութեամբ լցեալ լինի նման իժի և քարբ ուձի ...
Սուգ մեծ եկեալ Հայոց ազգի, զի նա յազգէն մուխանաթի
Զայատ եհան նա Ղզուինցի, կաշառ երետ բազում ոսկի,
Թէ ով որ զՔրիստոս Աստուած ասի՝ բազում չարեաւք չարչարեսցի ....:
Նորա [ա]ռին սուր երկաթի, շրջին քան զշուն կատաղած յերկրի ...
Կոտորեցին անխնայելի զազգս Հայոց և զՎրացի ....:
Զչարութիւնն Թամուրի ո՞ր հողածին պատմել կարի» (էջ 589):

Գեղարվեստական արձակի ուշագրավ բազմաթիվ նմուշներ կան հիշատակարաններում: Ծանոթանանք դրանցից մեկի հետ. 1314 թվին Հայաստանում տարածվում է մորեխը, որն ահռելի վնասներ է պատճառում: Սարգիս Թեոդուպոլսեցի գրիչն այդ առթիվ գրում է. «Արդ, յայսմ տարւոջս

եկն մորեխ սաստիկ ի վերայ երկրի, քանզի ոչ ոք ի մերում ժամանակիս եստես այնպէս և ոչ ի հնումն պատմեցին մեզ այսպէս խստագոյնս ...: Քանզի իբրև զհնձեալքս բազում, որ երթայ զայրն և իջեանին ի գիշերն ամենայն, այնպէս գայր յերկինն. և ի վաղին, յորժամ շողանա[յ]ր արեւն՝ յառնէր. և յորժամ յառնէր այնպես էր նմանութիւն նորա, որպէս սաստիկ ձիւնոյ կամ զանձրևոյ, երթայր և բարձրանա[յ]ր, որ ոչ ոք կարէր տեսանել բարձրութիւն նորա, և ի թանձրութենէ նորա փոխէր գոյնն արեգականն: Գոչէր իբրև զգետ, անցանէր իբրև զքամի, և էր աշխարհ ամենայն ի տարակուսանս, լային զառնապէս, ողբային, կոծէին, զմոխիրն ընդ գլխովն արկանէին, ծեծէին զերեսս իւրեանց, և ոչ ուստէք եղև փրկութիւն ...» (էջ 102):

Հիշատակարաններն անգնահատելի աղբյուր են նաև ԺԳ դարի լեզուն ուսումնասիրելու համար: Հիշատակագիրները փորձում են, անշուշտ, գրել գրաբար, սակայն շատ քչերին է այդ հաջողվում: Ըստ մեծ մասի, նրանք օգտագործում են խոսակցական լեզվի բազմաթիվ տարրեր, գավառական այս կամ այն խոսվածքին բնորոշ դարձվածքներ ու տերմիններ, որով և միջնադարյան խոսակցական լեզվի ուսումնասիրության համար մատակարարում են արժեքավոր տվյալներ:

Հիշատակագիրներից շատերը, գիտելով իրենց հետագա ընթերցողներին, աղերսել են մաքրերել և հիշել իրենց՝ զօր ու գիշեր աքնությամբ ու տառապանքով մեր մատենագրության արժեքավոր գանձերն ընդօրինակողներին:

Այժմ մենք՝ ժառանգներս, երախտագիտությամբ հիշում ենք նրանց, և գնահատում ըստ արժանվույն այն հարուստ ժառանգությունը, որ հասել է մեզ շնորհիվ այդ համեստ գործիչների դառն ու դժվարին աշխատանքի: Մեր ժողովրդի պատմության այդ մռայլ ու մղձավանջային ժամանակաշրջանում ձեռագրերի ընդօրինակության միջոցով մատենագրական արժեքների բազմացումն ու պահպանումը այն մեծ ու դժվարին գործն էր, որ ի վիճակի էին կատարելու և կատարեցին ժամանակի մշակութային գործիչները և այնրա՜ն սիրով ու արվեստով:

Նրանց թողած բազմաբովանդակ հիշատակարանները լայն չափով օգնելու են մեր ժողովրդի անցյալի պատմությունը շարադրելու գործին:

***

Հիշատակարանների մեջ առկա հարուստ նյութերի օգտագործումը պատմական ու բանասիրական աշխատություններում դարավոր պատմություն ունի: Դեռևս ԺԷ դարում, Առաքել Դավրիժեցին իր պատմական արժեքավոր գրվածքում[*] օգտագործել է հիշատակարաններ, հատկապես Հայոց կաթողիկոսների առաջին գիտական ցանկը կազմելու և այլ ժամանակագրական հարցեր պարզելու նպատակով[**]: Բայց նա այդ բնագավառում ունեցել է նաև իր նախորդները և բազմաթիվ հետնորդները, որոնցից հատկապես արժանի են հիշատակության Մ. Չամչյանը և Ղ. Ալիշանը:

Մ. Չամչյանը, իր «Պատմութեան» շատ մասերում, հմտորեն օգտագործել է իր ձեռքի տակ եղած հարյուրավոր հիշատակարանները, գծրախտաբար, չնշելով իր օգտագործած հիշատակարանների հեղինակների, ժամանակի և հիշատակագիրների մասին անհրաժեշտ տեղեկություններ: Ղ. Ալիշանը, իր պատմաաշխարհագրական «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», ինչպես և մյուս աշխատություններում ոչ միայն բազմաթիվ տեղեկություններ է քաղել հիշատակարաններից, այլև հաճախ, մեջ է բերել պատմական կարևոր բովանդակություն ունեցող հիշատակարաններից ընդարձակ հատվածներ, և նույնիսկ հրատարակել է մի շարք հիշատակարանների լուսատիպ կամ վիմագիր նմանահանությունները:

Սակայն ինչպես վերոհիշյալ, այնպես էլ մյուս բանասերները, որոնք օգտագործել են իրենց աշխատություններում հիշատակարանների նյութերը, ձեռքի տակ ունեցել են մեզ հասած հայերեն շուրջ 23 հազար ձեռագրերի միայն մի փոքր մասի հիշատակարանները:

Առաջին լուրջ փորձը համեմատաբար մեծ թիվ կազմող ձեռագրերի հիշատակարանների ժողովածու կազմելու ուղղությամբ, կատարել է բազմարդյուն բանասեր Ղևոնդ Փիրղալեմյանը: Տասնյակ տարիներ, եկե-

* Պատմութիւն Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884: Գիտական հրատ. տե՛ս Առաքել Դաւրիժեցի, «Գիրք Պատմութեանց», աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990 - **Խմբ.**:

** Դավրիժեցին գրում է «զէջմիածնի կաթողիկոսաց անուանս զամենեցուն ի **յիշատակարանաց գրոց** հաւաքեցաք ...», անդ, էջ 334:

ղեցական գործերով շրջելով Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայաբնակ վայրերում, նա անդուլ կերպով ուսումնասիրել է զանազան վանքերում ու մասնավոր անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերը և քաղել է նրանցից հիշատակարաններ ու պատմական արժեք ունեցող այլ վկայություններ: 1878 թվին, իր հավաքած հիշատակարաններին ավելացնելով նաև տպագիր աղբյուրներից իրեն հայտնի հատ ու կենտ նյութեր, Փիրղալեմյանը կազմել է հիշատակարանների մի հարուստ ու մեծարժեք ժողովածու, որն սկսվում է 887 թ. ընդօրինակված Նախկին Լազարյան Ճեմարանի Ավետարանի հիշատակարանով, և ավարտվում է 1596 թ. մի հիշատակարանով: Այդ ժողովածուն այժմ 6273 համարի տակ պահվում է մեր Ձեռագրատանը (Մատենադարանում):

Ժողովածուի տիտղոսաթերթի վրա գրված է «Յիշատակարանք կամ Նշխարք Պատմութեան Հայոց, հաւաքեալ ի մի յոգնաջան աշխատութեամբ նուաստ Ղեւոնդ Ծ. վարդապետի Տոսպեցւոյ՝ Վարագայ վանուց միաբանի …: Յամի տեառն 1878 և ի մերս ՌՅԻԷ. թուականի, յամսեանն 10/22 փետրվարի, յաւուրն ուրբաթու … սկիզբն արարի գրութեան (իմա՝ մաքրագրութեան) սորին, ի Մանչեստեր վաճառաշահ քաղաքն Բրիտանիոյ …»:

Մեր Մատենադարանում պահվում է նաև Փիրղալեմյանի այդ ժողովածուի նախնական օրինակը (Ձեռագիր N 6332), որը, սակայն, չի պարունակում այն բոլոր նյութերը, որոնք կան նախորդի մեջ:

Ղ. Փիրղալեմյանի օգտագործած ձեռագրերի մի զգալի մասը զոհ է գնացել թուրքական վայրագ բանակայինների հրին ու սրին՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Եվ եթե չլիներ նրա կազմած այս ժողովածուն, մենք այժմ տեղեկություն չէինք ունենա այն ձեռագրերի մասին, որոնք մեզնից ընդամենը մի քանի տասնամյակ առաջ պահվում էին Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում: Փիրղալեմյանին հաջողվել է տպագրությամբ լույս ընծայել իր ժողովածուի միայն մի մասը՝ 1393-1467 թթ. հիշատակարաններով «Նոտարք Հայոց» խորագրի տակ (Կ. Պոլիս, 1883՝ թ.): Հրատարակության Կանխաբանում հեղինակը հայտնում է, որ «թէպէտ գոն ի ձեռս իմ յիշատակարանք և այլ օրինակութիւնք յառաջ քան զայդ թուական, որպէս և յամէ անդի և այսր, զորս թողաք սկամայ՝ վասն ինչ-ինչ պատճառաց, նոյնպէս և վասն ծախուց տպագրութեան»:

Մենք ԺԴ դարի հիշատակարանների ժողովածուն կամելիս, օգտագործել ենք Փիրղալեմյանի և՛ ձեռագիր և՛ տպագիր ժողովածուները, քաղելով նրանցից ԺԴ դարում գրված 55 հիշատակարան:

Փիրղալեմյանի օգտագործած ձեռագրերից շատերը, վտարանդի ու պանդուխտ հարյուր հազարավոր հայերի նման, հայրենադարձ են եղել և այժմ պահվում են մեր Պետ. Մատենադարանում: Ուստի, մենք հնարավորություն ունենք համեմատելու նրա ժողովածուի մեջ մտած հիշատակարաններից շատերն իրենց բնագրերի հետ: Այդ համեմատությունը, ցավոք, ցույց է տալիս, որ բազմարդյուն բանասերը, ամբողջական հիշատակարանների փոխարեն, հաճախ, իր ժողովածուում տվել է միայն դրանց բովանդակության կարևոր մասերի համառոտ շարադրանքը:

Ցույց տալու համար Փիրղալեմյանի կատարած խմբագրությունների բնույթը, թույլ ենք տալիս մեզ զուգահեռ սյունակներով մեջ բերելու 1372 թվին Ստեփանոս գրչի կողմից ընդօրինակված Ավետարանի հիշատակարանի սույն ժողովածուում հրատարակված բնագիրը և Փիրղալեմյանի ժողովածուում գտնվող նրա համառոտությունը:

Հիշատակարան, N 622, կց 505-506	**Փիրղ. ժողովածու, Ձեռ. N 6273, կց 166**
…Արդ, ես՝ նուաստ հոգս Ստեփանոս… շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցի բզսուրբ և զկենսունակ Աւետարանս ի յիշատակ մեր և նախնեաց, և ծնողաց, և ամենայն երախտաւորաց մերոց, և ի պայծառութիւն սրբոյն եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց նորին: Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԻԱ. (1372), ի Դարանաղեաց գաւառիս Կամխայ, հանդէպ սրբոյ գերեզմանի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրի-	Փառք անսկզբնականին հօր և որդւոյ նորա միածնի և ամենասուրբ հոգւոյն՝ եղողի նորին էութենէ. և գրեցաւ [Աւետարանս ձեռամբ Ստեփանոս կրօնաւորի, ի խնդրոյ հարազատ եղբօրն իւրոյ Ներսէսի]* ի թուականութեանս Հայոց ՊԻԱ. ի սուրբ և գերահռչակ անապատս, որ կոչի Աւագ [վանք], ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնի և Կարապետին Յովհաննու և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և սրբոց առաքելոցս, և բազմահաւաք սուրբ նշխարացս, և կենսակիր սուրբ նշանացս,

* Փակագծերի մեջ առնված հատվածը Փիրղալեմյանը գրել է կարմիր թանաքով: Այդպես է վարվում նա իր կողմից մոգված նախադասությունները և բառերը բնագրից անջատելու համար:

գորի, ի սուրբ և գերահռչակ անապատս, որ կոչի Աւագ, և Կարապետին Յովհաննու, և բազմահաւաք սուրբ նշխարացս, որ աստ [կան]:

Արդ ... աղաչեմ յիշեցէք սրտի մտաւք ի մաւրափայլ աղաւթս ձեր զփցուն և զխոշոր գրչակս զՍտեփ[անոս]...:

Յիշեսջիք և զծնաւղսն մեր՝ զՍտեփաննոս Քահանայն և զամենայն ազգատոհմ, որք յուսով առ Քրիստոս են փոխեալ: Յիշեսջիք զՆերսէս հարազատ եղբայր մեր: Յիշեսջիք զճգնազ[գ]եաց, զառաքինասէր հայր Կիրակոս՝ զառաջնորդ սուրբ ուխտիս, որ բազում բարութեանց առիթ եղև մեզ և բազմաց, որոյ տէր Աստուած վարձահատոյց լիցի ի գալստեան իւրում: Յիշեսջիք և զմիաբանութիւն եղբայրութեանս, որ կան աստ առաջինի և սուրբ վարուք ...:

ի Դարանաղեաց գաւառիս Կամխայ, հանդէպ սրբոյ գերեզմանի լուսաւորչին Գրիգորի, յառաջնորդութեան սրբոյ ուխտիս տեառն Կիրակոսի*:

Ինչպես ակնհայտ է, Փիրղալեմյանը կաշկանդված չի զգացել իրեն հիշատակարանի շարադրանքը փոխելու և այն համառոտելու գործում, այնուամենայնիվ, նա հիշատակարանի հիմնական բովանդակությունը ճիշտ է ներկայացրել, ուստի և նրա ժողովածուի հիշատակարանները, որոշ վերապահումով, ի վիճակի են բավարար չափով փոխարինելու իրենց կորած բնագրերին:

Փիրղալեմյանը չի պահպանել նաև իր հավաքած հիշատակարանների

* Հմմտ. նաև N 666 հիշատակարանի հետ, նույնի հետևյալ համառոտությունը՝ «Փառք միայնում ... բայց գրեցաւ սա ի դուռն սուրբ դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և Սաղեմա սուրբ նշանին և սուրբ Աստուածածնին, և սուրբ Կարապետին, ի թվիս Հայկազեան սեռի ՊԼ (1381), գծողիս Տանէրի» (Փիրղ. ժողովածու, ձեռագիր N 6273, էջ 169):

ուղղագրությունը. այդ նոր ժողովածուի (և ընդհանրապես, ԺԹ դարում հրատարակված համարյա բոլոր սկզբնաղբյուրների) մյուս թերությունն է: Նա, օրինակ, միշտ գրում է «յօրինեալ», «համառօտ», «սօմար» և այլն, երբ բնագրում համապատասխան բառերը գրված են «յաւրինեալ», «համառաւտ», «սաւմար» կամ «սումար» ձևերով: Փիրղալեմյանն ավելորդ է համարել նաև նշել, թե բերվող հիշատակարանը ձեռագրի ո՛ր էջերի վրա է գրված և այլն:

Հիշատակարանների հավաքման ու հրատարակման գործում մեծ վաստակ ունի նաև անվանի բանահավաք Գ. Սրվանձտյանը: Նա նույնպես իր շրջագայությունների ընթացքում այցելել է Թյուրքիայի հայաբնակ շրջանները (Բաղեշ, Վան, Մանազկերտ, Երզնկա, Կամախ, Ակն, Խարբերդ, Չմշկածագ, Բալու, Տիգրանակերտ և այլն), եղել է հեռավոր վանքերում ու գյուղերում և ընդօրինակել է իրեն հանդիպած ձեռագրերի հիշատակարանները, նկարագրել է պատմական ուշագրավ հուշարձանները, գրի է առել ժողովրդական երգն ու հեքիաթը:

Իր տարիների աշխատանքի արդյունքը ձեռագրերի ուսումնասիրության գծով նա հրատարակել է «Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ» աշխատության մեջ, որի Ա հատորը հրատարակվել է 1879 թ., Բ հատորը՝ 1885 թ., Կ. Պոլսում: Մեզ համար հատկապես արժեքավոր են Բ հատորում «Ձեռագիրք և յիշատակարանք» գլխի տակ, բերված ավելի քան 350 ձեռագրերի նկարագրությունները և հիշատակարանները:

Ցավոք, Սրվանձտյանը նույնպես հիշատակարանները հրատարակել է ոչ թե անաղարտ բնագրերով, այլ տեղ-տեղ համառոտել է, տարբեր հատվածներ կցկցել է միմյանց և խմբագրել է ոճն ու շարադրանքը:

Հայերեն ձեռագրերի նկարագրության և հիշատակարանների հրատարակության գործը պատշաճ գիտական հիմքերի վրա դրեց հայագետ Հ. Տաշյանը, 1891 թվին հրատարակելով Վիեննայի նախկին Կայսերական մատենադարանի, իսկ 1895 թ. Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հայերեն ձեռագրերի օրինակելի ցուցակները:

Նրան հետևեցին ուրիշները, և մի երկու տասնամյակի ընթացքում հրատարակվեցին հայերեն ձեռագրեր ունեցող մի շարք հաստատությունների ու մատենադարանների ժողովածուների ցուցակները (Հռոմի, Մյունխենի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Գողթն գավառի, Թավրիզի, Թեհրանի,

Նոր Բայազետի, Օքսֆորդի, Բրիտանական թանգարանի, Վասպուրականի և այլ վայրերի): Որպես կանոն, այդ ցուցակների մեծ մասում ամբողջությամբ մեջ են բերված նաև նկարագրվող ձեռագրերում եղած բոլոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները:

Հայոց պատմության ու բանասիրության հարցերով զբաղված մասնագետները, ձեռքի տակ ունենալով վերոհիշյալ ցուցակները և աշխատելով անձամբ ձեռագրական ժողովածուների վրա, սկսեցին իրենց աշխատություններում ավելի մեծ չափով օգտագործել հիշատակարանների հաղորդած պատմական տվյալները: Բայց հիշատակարանները ցրված էին տարբեր ժողովածուների ու ամսագրերի մեջ, և ժամանակագրական հերթականությամբ չէին դասավորված: Այս հանգամանքն արգելակում էր, և շարունակում է արգելակել, հիշատակարանների լայն օգտագործմանն այն բոլոր հարցերի լուսաբանման համար, որոնց մասին նրանցում կան արժեքավոր նյութեր:

Բացի այդ, քանի որ մեր Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակը մինչև այժմ չի հրատարակված, այդ հարստագույն ժողովածուի հիշատակարանների մեծ մասն անմատչելի է գիտական աշխատանքով զբաղված մասնագետների լայն շրջաններին:

Վերոհիշյալ նկատառումներով Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը, 1948 թվին, հանձնարարեց ինձ ի մի հավաքել և պատրաստել հրատարակության մեր Մատենադարանում պահվող ԺԴ և հետագա դարերի բոլոր հայերեն ձեռագրերի հիշատակարանները:

Առաջնահերթ համարվեց ԺԴ և ԺԵ դարերի հիշատակարանների հավաքումն ու հրատարակությունը, որովհետև, ինչպես հայտնի է, դրանք մեր պատմության ամենաամուլ դարերն են: ԺԵ դարից մեզ հասել է միայն Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Թամուր-Լանկի» (հրտ. Փարիզ, 1860) աշխատությունը, որը, չնայած իր կարևորության, ընդգրկում է միայն ԺԴ դարի վերջի և ԺԵ դարի սկզբի քաղաքական անցուդարձերի պատմությունը, այն էլ աշխարհագրական ու պատմական նեղ շրջանակով վերցրած:

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ (1378-1446)

ԴԱՐԱՇՐՋԱՆԸ, ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ, «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

1. ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԸՍՏ ԹՈՎՄԱՅԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

14-15-րդ դարերը հայոց պատմագրքի ամենամռայլ ու ծանր ընթեռնելի էջերից են: 1335 թվականից, Աբու-Սայիդ իլխանի մահից հետո, մոնղոլական տիրապետության մեջ ծայր էին առել գահակալական պատերազմներ, որոնք շուտով ներքաշեցին իլխանության ձգտող թե՛ հին (Չոբանյաններ), թե՛ նոր (Ջելաիրյաններ) գրեթե բոլոր ուժերը: Այդ կռիվները կործանարար եղան մոնղոլական մեծածավալ պետական իլխանության և նրա սահմաններում ապրող նստակյաց ժողովուրդների համար: Ըստ էության, դրանցից շահեցին միայն քոչվոր ցեղապետերը. սրանց անսանձ ինքնիշխանության հետևանքով էր նաև, որ Հայաստանը հասավ անտեսական ծայրահեղ քայքայման և զրկվեց հայ ավատական երբեմնի հզոր գերդաստանների վերջին տկար և ուժասպառ պայազատներից, որոնք ցիր ու ցան եղան հայ գյուղական ու քաղաքային բնակչության արտագաղթի ուղիներում:

Օգտվելով մինչև դարավերջ հասած այս միջդինաստիական խառնակություններից, դրա հետևանքով Ջելաիրյանների կրած պարտություններից, մոնղոլ ու թուրքմեն ցեղապետերի կենտրոնախույս կամայականություններից՝ 1384 թ. վերջերին Դարբանդի ու Շիրվանի վրայով Ատրպատական է ներխուժում Ոսկե Հորդայի խան Թողթամիշը՝ 50-հազարանոց բանակով: Թողթամիշի զորքերը գրավում են Թավրիզն ու ավերում, նույն բախտին են

արժանանում Մարաղան ու շրջակա գավառները: Այնուհետև ընչաքաղց այդ հրոսակները բաժանվում են երկու խմբի, որոնցից մեկն անցնում է Մարանդի, Նախիջևանի և Սյունիքի շրջաններով: «Երկիրն Սիւնեաց՝ երկոտասան գաւառս աւերեցին, գրաւեալս սպանին եւ գերեցին», — հայտնում է դրանց մասին Թովմա Մեծոփեցին[1]:

Սյունիքից անցնելիս Թոխթամիշի զորքերը գրավում են Որոտան ամրոցը և հայրենազուրկ անում Սմբատ Օրբելյան իշխանին՝ Իվանեի որդուն: Մեծ ավերածություններ են գործում նաև Վայոց ձորում, ուր իշխում էր Իվանեի մյուս որդին՝ Գորգունը: Սա զրկվելով կալվածքներից, վշտամահ է լինում: Տուժում է նաև Հովհան Որոտնեցին՝ Սյունյաց հին իշխանական տան պայազատներից մեկը, որին փորձում են ձերբակալել՝ «վասն հայրենեացն ժառանգութեան»: Որոտնեցին այդ ժամանակ գլխավորում էր Արևելյան Հայաստանի ամենախոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Սյունյաց համալսարանը: Խույս տալով թշնամիներից, մեծ գիտնականն իր 60 աշակերտների հետ միասին շրջում էր վայրից վայր՝ շարունակելով իր իմաստասիրական խորիմաստ դասախոսությունները: «Եւ սա, — գրում է նրան ուղեկցող աշակերտներից մեկը, — կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ. Բ (2) ամ բոլոր յայլ եւ յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ՝ կարդալով եւ ուսուցանելով»[2]:

Թոխթամիշի երկու մասի բաժանված զորքերը միավորվում են Ղարաբաղում, ապա Շիրվանի վրայով վերադառնում Դաշտ ի Ղիփչաղ, իրենց հետ տանելով 200 հազար գերի, որոնց մեջ կային և տասնյակ հազարավոր հայեր՝ Պարսկահայքից, Սյունիքից ու Արցախից[3]:

Դա վերջին մոնղոլական արշավանքն էր, որով ավարտվում է հայ

[1] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 12, 98: Այսուհետև՝ Թ. Մեծոփեցի:

[2] Ակադեմիկոս Հ. Մանանդյանն այս դեպքերի ժամանակագրությունը հատուկ քննության նյութ չդարձնելով, սխալմամբ Լանկ-Թամուրին է վերագրում Սյունիքի ավերածությունը, Որոտանի գրավումը և հարակից անցուդարձերը, կարծելով, որ դրանք կատարվել են 1386 թվականի ընթացքում (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, 1952, էջ 344-346):

[3] Ս. Անեցու ժամանակագրության շարունակողի տեղեկությունը տե՛ս Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 158-159:

ժողովրդի պատմության, այսպես կոչված, մոնղոլական «փորձության» շրջանը, որին շուտով հաջորդել են նոր փորձություններ՝ մոնղոլ-թուրքմենական (Լանկ-Թամուր), թուրքմենական (Կարա և Ակ-կոյունլուներ) և այլն: Ահա այս անցման փուլից էլ սկսվում է 15-րդ դ. հայ մատենագիր Թովմա Մեծոփեցու «Պատմությունը»:

Եվ իրոք, Թոխթամիշը հազիվ էր հեռացել Անդրկովկասից, աշխատավոր ժողովուրդը դեռ չէր բուժել պատերազմական ծանր վերքերը, երբ Հայաստանն ու հարևան երկրները թատերաբեմ դարձան նոր արհավիրքների՝ սկսվեցին Լանկ-Թամուրի գլխավորությամբ կազմակերպված արշավանքները:

ա) ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ջաղաթայան երբեմնի հզոր պետությունը[1], որ միավորել էր միջինասիական երկրամասերը, 14-րդ դարի կեսերին պառակտվել էր երկու հակամարտ մասերի՝ Մողոլիստանի, ուր իշխում էր դեռևս քոչվորական կյանքով ապրող մոնղոլական ցեղերի ավագանին, և Մավերաննահրի, ուր տեղի էր ունեցել մերձեցում արդեն կիսով չափ նստակյաց դարձած մոնղոլաթուրքական ցեղերի ավագանու և տեղաբնիկ պարսկական ֆեոդալների միջև:

Մոնղոլական Բարլաս ցեղից սերված Թարաղայի որդի Թամուրը (1335-1405), Լանկ (կաղ) մականունով, երկարատև քաղաքական պայքարից հետո՝ 1370 թ. հռչակվեց Մավերաննահրի տեղակալ՝ Սամարղանդը դարձնելով իր աթոռանիստ քաղաքը:

Մավերաննահրի ավատական դասակարգի, մասնավորապես մոնղոլաթուրքական ռազմաքոչվորական վերնախավերի շահերից ելնելով Լանկ-Թամուրը, զուգակցելով խիզախ զորահրամանատարի ու խորամանկ քաղաքագետի իր ձիրքերը, մինչև իր կյանքի վերջը կազմակերպեց աշխարհավեր նվաճողական արշավանքներ՝ դեպի Ոսկե Հորդա ու Ռուսաստան, Հնդկաս-

[1] Կոչվում էր Չինգիզ խանի Ջաղաթա որդու անունով, որին ժառանգություն էր տրվել Միջին Ասիան:

տան ու Իրան, Անդրկովկաս ու Փոքր Ասիա: Ամենուրեք, ուր ոտք կոխեցին Լանկ-Թամուրի զորաբանակները, տարածեցին մահ ու կոտորած, գերեվարեցին տասնյակ հազարավոր անպաշտպան մարդկանց (հատկապես արհեստավորների), ոչնչացրին նյութական և հոգևոր մեծ արժեքներ:

Պետականությունից զրկված հայ ժողովրդի պատմության մի մեծ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները նույնանում կամ սերտորեն առնչվում են Լանկ-Թամուրի ու նրա անմիջական հաջորդների դեպի Անդրկովկաս և Փոքր Ասիա ձեռնարկած արշավանքների ու զորաշարժերի հետ:

Լանկ Թամուրն առաջին անգամ բախվեց Ջելաիրյան պետության ուժերին՝ 1385 թ., երբ Հարավային Իրանից ներխուժեց Ատրպատական ու գրավեց Սուլթանիե քաղաքը: Կազմակերպված արշավանքը, սակայն, սկսվում է մեկ տարի ուշացումով: 1386 թ. գարնանը նա գրավում է Թավրիզը, այնուհետև անցնելով Արաքսը, մտնում է Սյունիք, գրավում Նախիջևանը և պաշարում Երնջակ (արևելյան աղբյուրներում՝ Ալանջիկ կամ Ալինջա) անառիկ բերդը, ուր, ըստ որոշ տվյալների, պահվում էին Ջելաիրյանների գանձերը: Բերդի պաշտպանությունը ղեկավարում էր Սուլթան Ահմեդի որդի Թահիրը: Թամուրյաններին չհաջողվեց գրավել այդ ամրությունը, որը հերոսաբար դիմադրեց մինչև 1401 թ.[5] : Ուստի, Լանկ-Թամուրը, բերդի պաշարումը շարունակելու համար անհրաժեշտ զորամաս թողնելով, իր բանակը մասերի բաժանեց և ուղղեց Հայաստանի տարբեր շրջաններ: Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը հայտնում է, որ նրա զորախմբերը տարբեր ուղղություններով արշավելով և կոտրելով կազմակերպված դիմադրությունը, մեկ օրվա ընթացքում հասնում են մինչև Կարբի, Բջնի, Գառնի, Սուրմալի և Կողբ:

Կողբ գյուղի բնակիչները «յոյժ զօրեղ զօրական» տանուտեր Մարտիրոսի գլխավորությամբ պատսպարվում են Բարդող (Թակալթու) լեռան վրա և գյուղի «յոյժ արի եւ քաջ» երիտասարդների ուժերով դիմադրում թշնա-

[5] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 628 (այսուհետև «ԺԴ դարի հիշատակարաններ», իսկ հաջորդ հատորը՝ «ԺԵ դարի հիշատակարաններ», համառոտությամբ նշելով նաև վերջինիս Ա, Բ, Գ հատորները):

մուն՝ «մեծաւ պատերազմաւ եւ արտաքինդ զօրութեամբ»: Լանկ-Թամուրի ձեռնարկած բազմաթիվ գրոհներն ապարդյուն են անցնում: «Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնել զլեառն զայն», — ասում է պատմիչը[6] :

Երկարատև է եղել նաև Պռոշյանների իշխանանիստ Շահապոնք բերդի դիմադրությունը, որի մասին տեղեկություն է հաղորդում այդ ժամանակ պատահմամբ այնտեղ գտնվող Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ի հիշատակարանում:

Համառ դիմադրություն է ցույց տվել նաև Սուրմարի բերդաքաղաքը, որի պարիսպները թշնամին հիմնահատակ տապալում է և գերում քաղաքի ու շրջակա գյուղերի բնակչությանը:

Թովմա Մեծոփեցին հայտնում է, որ Բջնի բերդը նույնպես գրավվում է պաշարվելուց հետո: Իսկ Գրիգոր Խլաթեցին, այս դեպքերի թվականը մեկ տարի առաջ բերելով, հայտնում է.

Ջամուր տեղիսն յաւար առին
Եւ շատ ոճիրըս գործեցին,
Յորոց եւ մի էր եւ Բջնին,
Որ էր աթոռ երկուց պետին,
Զօր առին ու քանդեցին,
Զեպիսկոպոսն սպանեցին:

Սպանվողը Այրարատյան թեմի առաջնորդ Վանական եպիսկոպոսն էր, որը որպես հոգևոր պետ և աշխարհիկ տիրատեր, կազմակերպել էր դիմադրությունը:

Այնուհետև Լանկ-Թամուրի զորքերը ներխուժում են Փոքր Սյունիք, գրավում Դոփյան տիրատերերից սերած Հասան Ծարեցի իշխանի ամրոցները: Հասանը իր երեք որդիների՝ Սարգսի, Աղբուղայի և Շիրվանշահի հետ սրախողխող է լինում: Նրանք գրավում են նաև Այրարատի Արշարունյաց գավառում Կապուտից ամրոցը, սրի են քաշում 400 հոգու, և Երևան գյուղաքաղաքը, ուր կոտորում են 500 տղամարդ:

Հայտնի է, որ Լանկ-Թամուրը մահվան էր դատապարտում այն վայրե-

[6] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 18:

րի բնակչությանը և, մանավորապես, կռվի ընդունակ տղամարդկանց, որոնք կամովին չէին հայտնում իրենց հնազանդությունն արշավող իր զորաբանակներին: Ուստի կարելի է չտարակուսել, որ բոլոր այդ վայրերում Լանկ-Թամուրը հանդիպել է ուժեղ դիմադրության[7]:

Այս նվաճումներից հետո Թամուրի զորքերը մտնում են Վրաստան և 1386 թ. նոյեմբերի 21-ին գրավում ու կողոպտում Տփղիսը:

Ժամանակակից աղբյուրները սրտաճմլիկ նկարագրություններ են պահպանել Հայաստանում և հարևան երկրներում Լանկ-Թամուրի գործած ավերածությունների, բնակչության սրածության, գերեվարության, նյութական ու հոգևոր արժեքների կողոպուտի ու ոչնչացման մասին:

Ուշագրավ է, որ նրանք խտրություն չէին դնում ազգության ու դավանանքի միջև:

Այս ոչ միայն քրիստոնէին,
Այլ եւ տաճիկ ազգաց բնաւին,
Զի հասարակ էր նեղութիւն
Պարսից ազգին, հայ եւ թուրքին[8]:

Տփղիսի գրավումից հետո Թամուրն իր զորքերով գնաց ձմեռելու Մուղանում, իսկ 1387 թ. գարնանը վերսկսեց իր արշավանքները, այս անգամ Հայաստանի հարավում և արևմուտքում:

Կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի առաջնորդ Կարա Մահմադն իր որդի Կարա-Յուսուֆի հետ իշխում էր Վաղարշակերտի (Ալաշկերտ) ու Քաջբերունիքի շրջաններում: Լանկ-Թամուրի զորքերը, գաղտնաբար անցնելով Արաքսը, մտան Քաջբերունիք: Կարա-Մահմադը խույս տվեց ճակատամարտից ու նահանջելով դեպի արևմուտք՝ հասավ մինչև Ճապաղջուր, ապա ետ դարձավ, պատերազմեց ու պարտության մատնեց իրեն կրնկակոխ

[7] Այս առումով հետաքրքրական է Վասպուրականի դպրոցի մանրանկարիչ Ծերուն Ծաղկողի մի դիտողությունը, որ արել է իր նկարազարդած ձեռագրերից մեկի հիշատակարանում. «Եւ ով որ հնազանդէր նմա (Լանկ-Թամուրին) բազում պարգեւս պարգեւէր նմա, եւ ով որ ոչ հնազանդէր՝ զնա առ ոտն հարկանէր եւ զաշխարհ նորա աւար հարկանէր» (Էրմիտաժ, VP. 1010, էջ 251ա):

[8] Գր. Ծերենց Խլաթեցի, Յիշատակարան աղէտից (տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 277):

հետապնդող ջաղաթայական զորախմբին: «Զգլխաւորն զօրաց նորա Լօղմաղան անուն սպանին եւ այլ բազում զօրս ընդ նմա», — հայտնում է Թովմա Մեծոփեցին[9]:

Ջաղաթայական մի այլ զորախումբ գլխովին ջախջախվեց Մուշի Առաքելոց վանքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Նրանց հետ բախվեց Փիր-Հասան ցեղապետի հրամանի ներքո գտնվող թուրքմենական զորագունդը: Տուրուբերանի տարբեր շրջանների հայ բնակչությունը, որ թամուրյաններից խուսափելով բարձրացել էր Սասունի անմատչելի լեռները, Փիր-Հասանի այս հաղթանակով ազատվեց սրածումից ու գերեվարությունից:

Լանկ-Թամուրի բանակի այլ միավորումներ հասան մինչև Կարին, բայց ավելի առաջ գնալ նրանց չհաջողվեց[10]:

Հետդարձի ճանապարհին, 1387 թ. սեպտեմբեր ամսին, Լանկ-Թամուրը պաշարեց քուրդ ամիր Եզդինի իշխանության տակ գտնվող Վանի բերդը: 26 օր շարունակ բերդի պաշտպանները խիզախ դիմադրություն կազմակերպեցին, սակայն, ի վերջո՝ սեպտեմբեր ամսին, Թամուրին հաջողվեց գրավել բերդը և, առանց ազգի ու տարիքի խտրության, դաժան հաշվեհարդար տեսնել բնակչության նկատմամբ: Թամուրի հրամանով կանանց ու մանկահասակներին գերեվարեցին, իսկ մնացած բնակչությանը, խումբ-խումբ կապելով իրար, ցած գլորեցին բերդի պարիսպներից: Գահավիժվածների թիվն այնքան մեծ էր, որ վերջին նետվածներն այլևս չէին մեռնում, ընկնելով կիտված դիակների վրա:

Գրիգոր Խլաթեցին իր մի ոտանավոր հիշատակարանի մեջ այս դեպքերի մասին գրում է.

Ապա դարձեալ՝ ի Վան եկեալ,
Զամուր դղեակըն պաշարեալ,
Վեց ու քսան աւր հրաարեալ,
Եւ ապա ի ձեռս նոցա մատնեալ,
Բազմաց օրհասըն ժամանեալ
Դուռըն մահուամբ քարավիժեալ,

[9] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 21:

[10] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 570:

Ոչ մին հազար, ւ՛ երկու եղեալ,
Այլ քան զերեքն առաւելեալ,
Մինչ մըսադեզըն բարձրացեալ
Եւ որք անկեալ՝ այլ ոչ մեռեալ:
Իսկ եւ գերեացն ըզթիւ անցեալ
Եւ համարոյ գերազանցեալ ...[11]

Սամուել Անեցու շարունակողը բերգից գահավիժվածների թիվը 7000 է հաշվում:

Վանի ավեր Լանկ-Թամուրի՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի վերջին ողբերգական արարն էր: Նույն՝ 1387 թ. աշնանը, երկու տարի Հայաստանն ասպատակելուց և հայ ժողովրդին անասելի աղետներ պատճառելուց հետո, անրավ հարստություններով ու անթիվ գերիներով Լանկ-Թամուրը վերադարձավ Սամարղանդ:

Պատերազմական գործողությունների ու զորաշարժերի պատճառով շատ վայրեր անմշակ էին մնացել, որի հետևանքով 1388 թ. Հայաստանում եղավ անբերրիություն և սաստիկ սով: «Ճաշք ի սովու մեռան, և այլք շուն ու կատու կերան», — հայտնում է ժամանակակից մի հիշատակարան: Իսկ Թովմա Մեծոփեցին խոսում է նաև սարսափազդու այլ դեպքերի մասին[12]*:*

1388-1393 թթ. Լանկ-Թամուրը Հարավային Ռուսաստանի տափաստաններում պատերազմում էր Ոսկե Հորդայի խան Թողթամիշի դեմ, իսկ այնուհետև Մուզաֆարյան Շահ-Մանսուրի դեմ Պարսկական Իրաքում ու Պարսկաստանում: Այդ տարիներին հայ ժողովուրդը փոքր-ինչ շունչ քաշեց և մասամբ, նույնիսկ, բուժեց նախորդ շրջանում ստացած իր ծանր վերքերը:

Բայց շուտով (1394) Հայաստանում լուր տարածվեց, որ Լանկ-Թամուրը նոր արշավանք է ձեռնարկել: «Վայ աւուրս եւ ժամուս, թէ որպէս չար համբաւ առաք, — գրել է այդ մասին մի հիշատակագիր, — ձեռս թուլացաւ, միտս կուրացաւ, եւ ամենայն անդամօքս դողամ, զի անօրէն Լանկ-Թամուրն

[11] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 286-287, հմմտ. նաև նույն տեղում, էջ 277-278, «ԺԴ դարի հիշատակարաններ» , էջ 573, 590 և այլն: Թ. Մեծոփեցի, էջ 30:

[12] Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 32:

գայ, ասէն, սպանողն եւ արիւնարբու գազանն»[13]*:*

Այս երկրորդ մեծ արշավանքի ուղղությունն այլ էր. ջաղաթայական զորքերը նախ մտան Իրաք, գրավեցին Բաղդադը (այստեղ տասնյակ հազարավոր մարդկանց գլուխներից 6 խոշոր բուրգեր կիտեցին), այնուհետև գրավելով և ավերածություններ գործելով Մոսուլ, Եդեսիա (Ուռհա), Մերդին ու Ամիդ քաղաքներում, Հյուսիսային Միջագետքից անցան Արևմտյան Հայաստան: Առանց մարտերի գրավեցին Երզնկան, արշավեցին դեպի Բասեն, ընկավ նաև Ավնիկ նշանավոր ամրոցը. դիմադրության կազմակերպիչ իշխան Միսրին և 100 զորականների բերդից ցած նետեցին: Կարս, Սուրմալու, Կողբ, Բագարան քաղաքներն ավերվեցին: Թամուրն ասպատակեց նաև Կարա-կոյունլու թուրքմենական ցեղի տիրապետած շրջանները՝ Արճեշ կենտրոնով: Կարա-Յուսուֆը խույս տվեց ու միացավ Ջելաիրյան Ահմատին, նրա հետ բաժանելով տարագրության դառնությունները:

Այրարատի գավառներն այս անգամ ևս ասպատակվեցին, բայց Թամուրն ստիպված էր շտապ հեռանալ դեպի Աղվանք՝ հակահարված տալու Թողթամիշին, որը կրկին ներխուժել էր Շիրվան[14]*:*

Թամուրի և Թողթամիշի միջև այստեղ բախում տեղի չունեցավ: Վերջինս նահանջեց, իսկ ջաղաթայները ձմռան մի մասն անցկացնելով Մուղանում՝ 1395 թ. փետրվարի 28-ին մեծ ուժերով Դերբենդի վրայով սկսեցին շարժվել դեպի Ոսկե Հորդա[15]*: Ապրիլ ամսին Թերեք գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Թողթամիշի զորքերը ծանր պարտություն կրեցին: Թամուրը գրավեց Ոսկե Հորդայի նշանավոր քաղաքներ Աստրախանն ու Սարայը, որոնք թալանվեցին ու կործանվեցին:*

Այս դեպքերին ժամանակակից Գրիգոր Խլաթեցի հիշատակագիրը հայտնում է, որ Թամուրը Ոսկե Հորդայում հաղթանակներ է տարել և «շատ աւեր ու գերութիւն» արել, բայց ինքն էլ կորուստներ է ունեցել և թուլացել. «Բայց եւ ինքն տկարացաւ զօրօքն ի սովոյ եւ անթիւ պակասեցան ի զօրաց

[13] Մատենադարան, ձեռ. N 3717, էջ 12բ:

[14] Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 40-46. Սամուէլ Անեցի (շարունակող), նշվ. աշխ., էջ 171, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 618, 627-628:

[15] Տե՛ս Али-Заде, Социально-экономическая и политическая история Азербайджана, XIII-XIX вв., Баку, 1956, էջ 388:

գաւառին այնմիկ»:

Թամուրը 1396 թ. գարնանը «ընդ դուռն Ալանաց» վերադառնալով Անդրկովկաս, իր որդի Միրանշահին կարգեց կուսակալ՝ Իրանի, Իրաքի, Հայաստանի ու Անդրկովկասյան մյուս բռնագրավված երկրամասերի, կամ, ինչպես ասվում է արևելյան աղբյուրներում «Հուլավուի թախտի» վրա:

Միրանշահը Երնջակի բերդի տարիներ տևող պաշարումը հաղթական վախճանի հասցնելու առաջադրանք է ստանում: Այս նպատակով Խորասանից թարմ զորախմբեր են ժամանում, բայց բերդը գրավելու նոր փորձերը ևս ապարդյուն են անցնում: Միրանշահի կուսակալության տարիներին երկրի տարբեր մասերում շարունակվում են ավատատիրական երկպառակությունները և թամուրյանների լուծը թոթափելու փորձերը:

Բաղդադն այդ ժամանակ վերագրավվել էր Ջելաիրյան սուլթան Ահմեդի կողմից, իսկ սրա դաշնակից Կարա-կոյունլու Յուսուֆն իր ցեղակիցներով, հարձակողական գործողություններ էր ծավալել Միջագետքում[16]: Միրանշահն անզոր էր իր ուժերով զսպելու այս շարժումները: Խնդիրը, սակայն, փոխվում էր, երբ խոսք էր լինում տեղական ավատատերերի դժգոհությունների մասին, այստեղ նա վճռական էր ու դաժան[17]: 1396 թ. հարձակվեց Բաղեշի վրա, բռնեց ու սպանեց քուրդ ամիր Իբրահիմին, որը չարամիտ դիրք էր բռնել հայերի նկատմամբ և «բազում աւերս արար ամենայն քաղքին և գաւառին»[18]:

Հաջորդ թվականին, Պետրոս հիշատակագրի տվյալներով, թամուրյանները բռնել ու Աղթամարի կղզում բանտարկել էին Հաքքարիի (Ջուլամերիկի) քուրդ ցեղապետին ու կողոպտել Վասպուրականի հարավային շրջանները: «Զոմանց գլուխ այրեցին, զոմանց զվաստակ կերան եւ զպահուստ զամէն գտան», — գրում է նա: Հենց նույն ժամանակ գրավում են նաև «անառիկ ամրոց Անին», որ չնայած վաղուց ի վեր կորցրել էր իր նշանակությունը որպես արհեստագործության ու առևտրի կենտրոն, բայց

[16] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 362-363:

[17] Տե՛ս Али-Заде, նշվ. աշխ., էջ 390:

[18] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 69:

դեռևս համարվում էր Հայաստանի ամուր բերդերից մեկը[19]:

Անդրկովկասի ժողովուրդների դժգոհությունը թամուրյանների տիրապետության դեմ 1399 թ. արտահայտվեց զինված ելույթով: Վրաց Գեորգի VII թագավորի և Շաքիի տիրակալ Սիդի Ալիի միացյալ ուժերը հարձակվեցին Երնջակը պաշարած ջաղաթայական զորքերի վրա, նրանց պարտության մատնեցին, 13-ամյա պաշարումից ազատեցին Ջելաիրյան արքայազն Թահիրին և առավել ամրացրեցին բերդի պաշտպանությունը: Այս դեպքի մասին արժանահավատ գրանցումներ ենք գտնում հայկական մի շարք հիշատակագրիների, ինչպես նաև պարսկական պատմագիրների մոտ[20]: Պետք չէ տարակուսել, որ հայերը նույնպես մասնակցել են թամուրյանների դեմ մղած այս մարտերին, ավելին, կան տվյալներ այն մասին, որ հայերը հերոսաբար են կռվել նաև որպես պաշարված բերդերի խիզախ պաշտպաններ. գուցե հենց Երնջակի բերդում է գրանցված այս հիշատակագրությունը. «Այսօր ի դուրս ելան մեր հայերս եւ բերդի թուրքերն եւ ժ (10) ջաղաթս սպանեին, եւ է (7) մարդ բռնեցին, եւ բազում աւար առին»[21]:

Նկատի ունենալով իր տերության արևմտյան երկրամասերում ստեղծված ոչ կայուն ու խառնակ վիճակը, Լանկ-Թամուրը, Երնջակի գրավման լուրն առնելով, 1399 թ. սեպտեմբերին ուժեղ սպառազինված բանակով դուրս եկավ Սամարղանդից ու սկսեց իր երրորդ արշավանքը դեպի Անդրկովկաս, Միջագետք, Ասորիք ու Փոքր Ասիա: Մտնելով Իրանի հյուսիսային նահանգները՝ նա անցավ Արաքսը, մտավ Մուղան և 7 ամիս շարունակ, մինչև 1400 թվականի ամառը, ավերեց, գերեց ու կողոպտեց Վրաստանի և Հյուսիսարևելյան Հայաստանի շրջանները: Գրիգոր Խլաթեցին մեզ արդեն ծանոթ հիշատակարանում այս արշավանքի մասին գրում է. «Սրբմրաեալ գազանութեամբ կատաղին այն Լանկ-Թամուրն և դարձեալ եկ

[19] Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ» , էջ 621:

[20] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 17, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 628, «ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 278-279, 287 ևն, Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ, Եր., 1936, էջ 107-108, V. Minorsky, Transcaucasica, Paris, 1930, էջ 94-96:

[21] «ԺԴ դարի հիշատակարաններ» , էջ 610:

երրորդ անգամ անթիւ զօրօք բազմութեամբ, առաւել քան զառաջին եւ զերկրորդն: Եւ եկն եկաց ի վերայ աշխարհին Վրաց յաշնանային յեղանակէն մինչեւ յամառայինն, ամիսս է (7), աւելի եւ ոչ պակաս: Եւ առեալ բազում ամրոցս, եւ սպան զբազումս ի նոցանէ, մինչեւ գրեթէ զամենայն արս կոտորեաց, զորոց զկանայս եւ զաղայս գերի խաղացոյց անթիւ եւ անհամարս»[22]:

Գեորգի VII թագավորը և նրա եղբայրները, ինչպես Թ. Մեծոփեցին է վկայում. «զամենայն ազգն Վրաց եւ Հայոց յամրոցս արկեալ պահէին»: Բայց գտնվում են գավաճաններ վրաց ազնվականներից, որոնք մատնում են թշնամուն բերդերի գաղտնի կածանները: Թամուրյան զորքերն այստեղ ևս մեծ ավերածություններ են գործում և «աւելի քան զվաթսուն հազար» գերի տանում[23]*: Արևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի շատ բնակավայրեր վերածվեցին ավերակների, շատ շրջաններ անբնակ դարձան:*

Սրանից հետո Լանկ-Թամուրն իր բանակն ուղղեց դեպի Փոքր Ասիա և ծանր հարված հասցրեց օսմանյան թուրքերին:

Օղուզ կոչվող վաչկատուն ցեղերը, որ թուրքերի նախնիներն են համարվում, Միջին Ասիայից սկսել էին ներթափանցել Անատոլիա սելջուկների նվաճողական արշավանքների շրջանում: Սակայն, հիմնական զանգվածով նրանք Խորասանից արևմուտք շարժվեցին՝ տեղի տալով մոնղոլական ցեղերի հաղթական գրոհներին և տասնամյակների դեգերումներից հետո Փոքր Ասիա մտան 13-րդ դարի կեսերին: Օղուզների ցեղապետ Էրթողրուլը, ծառայության մտնելով Իկոնիայի սուլթանի մոտ, իր հորդայի համար բնակության երկրամաս է ստանում Անկարայից արևմուտք և Բուրսայից արևելք ընկած տարածություններում: Էրթողրուլին հաջորդում է իր Օսման որդին, որը բեկի կոչում է ստանում և ճանաչվում որպես Բյուզանդական կայսրության սահմանամերձ շրջանների կառավարիչ: Օգտվելով մոնղոլների կողմից սուլթան կարգված թուլամորթ Գիյաս-ադ-դին Մասուդ

[22] Նույն տեղում, էջ 628:

[23] Թ. Մեծոփեցի, էջ 66: Սարգիս գրիչը Տաթևում շարադրած իր հիշատակարանում հայտնում է, որ «զամենեսեան ի սուր եւ ի գերութիւն վարեաց, թուով ՃՌ (100.000)-ու գրեցաւ զկոտորածն» («ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 5):

II-ի դեմ բարձրացված ապստամբությունից՝ 1299 թ. Օսմանն սկսում է կառավարել ինքնուրույն[24]*: 14-րդ դարի սկզբներին սելջուկյան սուլթանության փլատակների վրա ստեղծված 10 կիսանկախ իշխանություններից օղուզ-թուրքերի իշխանությունն ուժեղագույններից էր: Իրենց նշանավոր ցեղապետի անունով օսմանցի (օսմանլի) կոչվող այս թուրքերը 14-րդ դարում հաղթական պատերազմներ մղեցին թուրքական մյուս իշխանությունների դեմ և օրըստօրե ընդարձակելով իրենց տիրույթները՝ դարավերջին միահեծան տերը դարձան ողջ Փոքր Ասիայի:*

1358 թ. սուլթան Օրխանն անցնում է Հելեսպոնտոս ու գրավում Գալիպոլին, այնուհետև սկսվում են օսմանցիների նվաճումները եվրոպական մայրցամաքում: 1393 թ. Յըլդըրում (կայծակնահար) սուլթան Բայազիդը գրավում է Բուլղարիան, իսկ երեք տարի հետո՝ 1396 թ. Նիկոպոլի մոտ ջախջախիչ պարտության մատնում թուրքերի դեմ խաչակրաց արշավանքի ելած համաեվրոպական ուժերին, որոնք նախահարձակ էին եղել Հունգարիայի թագավորի գլխավորությամբ:

Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական հաղթանակների այս շրջանում էր, որ Լանկ-Թամուրը հարձակվեց նրա արևմտյան նահանգների վրա[25]*: Կարճ ժամանակում օսմանցիներից գրավեց Սեբաստիա և Մելիտինե քաղաքները՝ Փոքր Հայքում, որոնց բնակչության զգալի մասը հայեր էին: Սեբաստիայի բերդի պաշտպանները համաձայնեցին զենքը վայր դնել՝ պայմանով, որ իրենց արյունը չթափվի: Նենգ ու անգութ Թամուրը, ըստ աղբյուրների մի խմբի վկայության, կարգադրեց մի փոս փորել ու կենդանի թաղել նրա մեջ 3-4 հազարի չափ մարտիկների: Այսպիսով «կատարեց» իր ուխտը և չհեղեց նրանց արյունը*[26]*: «Ի սոյն ամի, — գրում է այդ մասին մի հայ հիշատակագիր, — Թամուր բէկն էառ զՍեւաստ քաղաք եւ քանդեաց եւ աւերեաց, եւ սրախողխող արար զամենեսեան, եւ զբազումս գերեաց՝ ի կանանց եւ ի տղայոց. եւ ԳՌ (3000) մարդ երկիր բացեալ եւ կենդանոյն*

[24] Այս թվականը հենց համարվում է Օսմանյան պետության անկախ գոյության սկիզբը:

[25] Տե՛ս А. Крымский, История Турции и ее литературы, М., 1916.

[26] Տե՛ս Արապշահ, էջ 109-110; Թ. Մեծոփեցի, էջ 65: «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 288:

թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա ...»[27]:

Այնուհետև նա մտավ Եգիպտոսի մամլուկների տիրապետության սահմանները, ավերեց Հալեպն ու Դամասկոսը, իսկ քիչ անց, 1401 թ. կեսերին, Մերդինն ու Բաղդադը՝ Միջագետքում: Այս վայրերում ևս թամուրյանները անասելի անգթություններ գործեցին. հարյուր հազարավոր անմեղ մարդկանց գլուխներից բուրգեր կազմեցին, մանկահասակներին սմբակակոխ ոչնչացրին:

1401-1402 թթ. ձմեռն անցկացնելով Դամասկոսում, գարնանը Թամուրը ձեռնարկեց նոր արշավանք օսմանյան թուրքերի դեմ, որոնք վերագրավել էին Սեբաստիան ու Երզնկան: Անկարայի մոտ, 1402 թ. հուլիս ամսին, տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Լանկ-Թամուրի և սուլթան Բայազիդ I-ի միջև: Վերջինս պարտություն կրեց ու գերվեց Թամուրի կողմից: Այս դեպքերից հետո թվում էր, թե իսպառ վերացավ Օսմանյան կայսրությունը. նրա փոքրասիական երկրամասերի վրա գլուխ բարձրացրեցին սելջուկյան ընկճված ավատատեր-իշխաններ, որոնք թամուրյանների թողտվությամբ վերականգնեցին կիսանկախ իրենց իշխանությունները:

1403 թ. Լանկ-Թամուրը կրկին արշավեց Վրաստան ու Աբխազիա: Իբրահիմ Շիրվանշահի միջնորդությամբ, որը նրա դաշնակիցն էր, հաշտվեց վրաց Գեորգի VII թագավորի հետ. վերջինս ընդունեց թամուրյանների իշխանությունն ու մուծեց մեծ փրկավճար:

Այսպիսով, 1399-1403 թթ. պատերազմական գործողությունների ավարտից հետո Լանկ-Թամուրը դարձավ ողջ Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Միջագետքի ու Սիրիայի տիրակալ: Նրա գերագույն իշխանությունը ճանաչեց նաև Եգիպտոսի սուլթանը:

1403-1404 թթ. Թամուրն իր բանակով ձմեռեց Ղարաբաղի դաշտային մասում, իսկ գարնանը մեծ ավարով ու գերիներով վերադարձավ Սամարղանդ: Մեռավ 1405 թ. փետրվարին, 70-ամյա հասակում, դեպի Չինաստան ձեռնարկած մեծ արշավանքի ճանապարհին:

Նրա մահվան լուրը ցնծությամբ ընդունվեց նվաճված ժողովուրդների կողմից: «Յայսմ ամի, - գրում է այդ մասին մի հիշատակագիր, — մեռաւ Թամուր ղան, որ Ի. մի (21) ամ իբրեւ զբաժակ բարկութեան առեալ էր զնա

[27] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 3-4:

Աստուած ի ձեռն եւ ում կամէր արբուցանէր, զի յարեւելից մինչեւ ի մուտս արեւու զամենեսին հասարակ գերեց զհաւատացեալսն եւ զանհաւատս, զամենեսեան սրախողխող արար»[28]:

բ) ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԱ-ԿՈՅՈՆԼՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Թամուրի մահվանից հետո կենտրոնական Հայաստանը դարձավ Թամուրի ժառանգորդների՝ Ջելաիրյան սուլթան Ահմադի և Կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆի զորաբանակների արյունալի բախումների թատերաբեմ:

Հայ ավատատերերի մի մասը՝ Սյունյաց Օրբելյանների գլխավորությամբ, մեծապես տուժած լինելով Թամուրի կազմակերպած աշխարհավեր արշավանքներից, պայքարի խառնակ այս շրջանում օժանդակում էին Ջելաիրյաններին: Ի տրիտուր այդ աջակցության, սուլթան Ահմադը կարճատև իր հաղթանակի ամիսներին Օրբելյաններին է վերադարձնում նրանցից խլված և յուրքունիս գրավված մի շարք կալվածքներ (մասնավորապես Անգեղակոթ նշանավոր գյուղը): Պայմաններ է ստեղծում բռնությամբ մահմեդական դարձած մի շարք հայ իշխանների համար՝ կրկին իրենց հայրենի կրոնը դավանելու[29]: Ջելաիրյաններն իշխանության ղեկն իրենց ձեռքին են պահում ոչ երկար ժամանակ:

Հինգ տարուց ավելի տևած ռազմական ու դիվանագիտական պայքարից հետո, հմտորեն փոխելով իր դաշնակիցներին ու հաղթական մարտեր մղելով, Կարա-Յուսուֆին հաջողվում է 1411 թ. պարտության մատնել գահի բոլոր հավակնորդներին և Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի տիրապետությունը տարածել Ատրպատականի, Հայաստանի և Իրաքի վրա:

Դառնալով հսկայածավալ մի պետության տիրակալ, Կարա-Յուսուֆը շարունակեց քոչվորական իր կենցաղավարությունը. լինելով Կարա-կոյունլու ցեղախմբի ամենաազդեցիկ բահարլու ցեղի առաջնորդը, նա բնակու-

[28] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 53:

[29] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 67-68:

թյուն էր հաստատել Այրարատյան նահանգի Բագրևանդ գավառում (Ալաշկերտում), որի տարածքի մեծ մասին տեր էին դարձել քոչվոր թուրքմենները՝ բուն հայ բնակչությանը վտարելով: Նրա տիրապետության մեկ տասնամյակը ժամանակակիցների կողմից համարվում է ծանր ու դաժան հարկապահանջության ժամանակաշրջան, սակայն նշվում է միաժամանակ, որ նրան հաջողվել է խաղաղություն հաստատել, որոշ շրջաններում վերականգնվել են տասնամյակներ տևած պատերազմների ընթացքում ավերված գյուղերը, կատարվել են շինարարական աշխատանքներ[30]: Այս վիճակը, սակայն, երկար չի տևում:

Թամուրյան ժառանգության համար մղվող պայքարից հաղթանակով դուրս գալուց հետո, Շահռուխը փորձում է իր տիրապետությունը տարածել աշխարհակալ իր հոր կողմից նվաճված բոլոր երկրամասերի վրա: Աղ-կոյունլու թուրքմենական ցեղախմբի առաջնորդները Թամուրյանների բնական դաշնակիցներն էին Օսմանյան թուրքերի և Կարա-կոյունլուների դեմ: Նրանք կայուն տիրապետություն էին հաստատել հարավարևմտյան Հայաստանի, հյուսիսային Միջագետքի ու Քրդստանի վրա և շարունակ փորձեր էին կատարում ընդարձակելու իրենց սահմանները Կարա-կոյունլուների հաշվին:

14-րդ դարի 20-30-ական թվականներին Շահռուխի բանակները, դաշնակցելով Աղ-կոյունլուների հետ, երեք անգամ հաջորդաբար արշավեցին Ատրպատական և Հայաստան: Առաջին արշավանքը տեղի ունեցավ 1420-21թթ.: Կարա-Յուսուֆն ընդառաջ գնաց թշնամուն, բայց մահացավ ռազմերթի ճանապարհին: «Յետ մահուան Ղարա-Յուսուֆին, — ասում է մի հայ հիշատակագիր, — եղեւ խռովութիւն եւ յոյժ սասանումն ընդ ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազօրքն ամենայն շփոթեալ՝ զմիմեանս հարկանէին եւ կողոպտէին»[31]:

Կարա-Յուսուֆի որդիներից Իսքանդարը, փորձում է համախմբել ցրված ուժերը և հակահարված տալ Ալաշկերտին (Վաղարշակերտ) մոտեցող Թամուրյաններին, սակայն կատարյալ պարտություն է կրում:

Շահռուխը Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ է կարգում իրեն

[30] Թ. Մեծոփեցի, էջ 73. «Ժե դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 134, 289:

[31] «Ժե դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 254:

հնազանդություն հայտնած Սպանդիարին, և մեծ ավարով ու հազարավոր գերիներով վերադառնում է Հերաթ[32]:

Դրանից հետո միայն Իսքանդարին հաջողվում է պարտության մատնել Թամուրյանների դրածոյին, վերահաստատել Կարա-կոյունլուների պետությունը՝ իր նախկին սահմաններով:

1422 թվականից սկսած, նա համառ պայքար է մղում հարավային Հայաստանի մի շարք շրջաններում հաստատված քրդական կիսանկախ ամիրությունների դեմ, որոնք Շահռուխի արշավանքի ընթացքում լքեցին Կարա-կոյունլուներին և օժանդակեցին Թամուրյաններին:

Հիմնական հարվածն ուղղվում է Բիթլիսի (Բաղեշի) և Ոստանի ամիրությունների վրա:

Բիթլիսի քուրդ ամիրները (Ռոժակ ցեղից) իշխում էին Հայաստանի Տուրուբերան և Աղձնիք նահանգների մի շարք գավառների վրա. նրանց տիրապետության տակ էին գտնվում Բաղեշը, Մուշը, Սասունը, Խույթը և Խլաթը: 1387 թ. Թամուրը ճանաչել էր Ամիր-Շարաֆին որպես այդ գավառների տիրակալ: Սրան հաջորդեց Իբրահիմ եղբայրը, ապա Շամս-ադ-դին որդին, որը գործակցեց Կարա-Յուսուֆին ու դարձավ նրա փեսան, սակայն իր աներոջ մահվանից հետո դավաճանեց Կարա-կոյունլուներին և օգնեց Շահռուխին: 1424 թ. Իսքանդարն սպանեց Շամս-ադ-դինին և պարտադրեց Բիթլիսի քրդերին ենթարկվելու կենտրոնական իշխանությանը: Սրանց ախոյաններն էին Վասպուրականի և Պարսկահայքի մի շարք գավառների տերերը դարձած քուրդ ամիրները՝ Շամբոյան գերդաստանից, որոնք մայրական գծով իրենց ազգակից էին համարում Արծրունիներին՝ Վասպուրականի հայ իշխողներին[33], իրավական ուժ տալու համար իրենց իշխանությանը՝ պատմական Հայաստանի մի ընդաձակ մասի վրա, որի մեջ մտնում էին Բերկրիից մինչև Ջուլամերիկ և Խիզանից մինչև Աղբակ ընկած տարածքները:

Իսքանդարը վճռական պայքար է կազմակերպում սրանց դեմ: 1423 թ. բանտարկում և ապա թունավորում է ամիր Մելիք-Մուհամեդին. երկու տարի հետո Շամբոյաններից գրավում է Վանը, տնտեսական ու ռազմական

[32] Նույն տեղում, էջ 282:

[33] Թ. Մեծոփեցի, մշվ. աշխ., էջ 30:

կարևոր նշանակություն ունեցող այդ շրջանը դառնում է Կարա-կոյունլուների պետության կարևոր ռազմակայաններից մեկը:

Կենտրոնախույս ամիրայությունների դեմ ծավալված պայքարի թեժ այս շրջանում, տապալվում է նաև կենտրոնական Հայաստանի ամենանշանավոր հայկական իշխանությունը, որը տարածվում էր նախկին Վասպուրական նահանգի Արտազ գավառի վրա, կենտրոն ունենալով Մակու քաղաքը, անառիկ համարվող իր նշանավոր բերդով: Այս բերդի դիրքն ու պաշտպանական կառույցները զարմացրել են օտարերկրյա շատ այցելուների: Մանրամասն նկարագրությունը տվել է Իսպանիայի Հենրիխ III թագավորի դեսպան Ռուի Գոնզալես դե Կլավիխոն, որը 15-րդ դարի սկզբներին հյուրընկալվել է ամրոցի տիրոջ՝ Նուր-ադ-դին իշխանի կողմից[34]:

Իրանից դեպի Փոքր Ասիա տանող կարավանային բանուկ ճանապարհի վրա գտնվող Արտազի շրջանի հայ իշխանները 14-րդ դարի սկզբներին ընդունել էին կաթոլիկություն: Ավատական այս գերդաստանի հոգևոր կոչում ընդունած անդամները՝ ոչ միայն կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու քաղաքականության ջերմ ջատագովներն էին, այլև ունիթոռական լայն քարոզ էին մղում Հայաստանում, մեծապես օժանդակելով եվրոպայից Արևելք առաքվող քարոզիչներին: Սրանց իշխանության տակ գտնվող Մորձորի վանքում 14-րդ դարի առաջին հիսնամյակում հաստատվեցին հռոմեական եկեղեցու հետ միավորվելու քաղաքականության պաշտպան հայ հոգևորականներ և Ֆրանցիսկյան քարոզիչներ, որոնք հիմք դրեցին կաթոլիցիզմի նշանավոր գաղափարախոսների՝ Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու, Նիկողայոս Լյուրացու, Բոնավենտուրի և այլոց աշխատությունների լատիներենից հայերեն թարգմանելու գործին:

1318 թ. Հովհան XXII պապի հատուկ հրամանագրով Հայաստանում և Ատրպատականում կաթոլիցիզմի քարոզչության գործը հանձնվում է Դոմինիկյաններին: Նրանց հաջողվում է ասպարեզից դուրս մղել Ֆրանցիսկյաններին և կայուն հենակետեր ստեղծել Թավրիզում, Մարաղայում և մանավանդ Երնջակ նշանավոր բերդաքաղաքի շուրջ գտնվող հայկական մի շարք գյուղերում, որոնք գտնվելով միջազգային տարանցիկ առևտրի բա-

[34] Տես Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия к двору Тимура в Самарканд в 1403-1406 гг. пер. И. И. Средневского. СПБ, 1881, էջ 158-162:

նուկ երթուղիներին առընթեր, կարևոր դեր էին կատարում որպես ապրանքափոխանակության կետեր և պահեստներ: Նշանավոր եղավ հատկապես Քռնա մեծ գյուղը, որի հայ մելիք Գորգը՝ հետևելով նշանավոր հայ ունիթոռ Հակոբ Քռնեցուն, որն իր քեռորդին էր, ընդունեց կաթոլիկություն և նյութական միջոցներ տրամադրեց իր գյուղում բարձրագույն դպրոց հիմնելու, ունիթոռական շարժումը և լատինական գրականության թարգմանության գործը ծավալելու համար:

Այսպիսով, Արտազի և Երնջակի շրջանները դարձան հայ ունիթոռական շարժման հիմնական կենտրոններ, իսկ դրանց աշխարհիկ և հոգևոր տերերը, հրաժարվելով հայ եկեղեցու ենթակայությունից և համագործակցելով արևելյան երկրներում տնտեսական, քաղաքական հենակետեր ստեղծելու լայն ծրագրեր ունեցող եվրոպական առևտրական կապիտալի ներկայացուցիչներին, սին հույսեր էին փայփայում օտար տիրակալների լուծը թոթափելու՝ եվրոպական կաթոլիկ երկրներից խոստացվող ռազմական ու տնտեսական օգնությամբ:

Արտազի հայ իշխանները ողջ 14-րդ դարի ընթացքում հաջողությամբ կարողացել էին պաշտպանել իրենց տիրույթները իրար հաջորդող պատերազմների թոհ ու բոհի մեջ: Թամուրի առաջին արշավանքի ժամանակ նրանք դիմադրություն կազմակերպեցին, ապավինելով Մակու բերդի ամրություններին: Դարավերջին, սակայն, նրանք հնազանդվեցին Թամուրյաններին, պարտավորվելով ըստ պահանջի, 20 հեծյալ զորախմբով մասնակցել նրանց արշավանքներին: Մակվի հայ իշխանազուն Սորղաթմիշը դարձավ Թամուրի թոռ Միրզա-Օմարի մերձավորներից մեկը:

Իսքանդարը 1426 թ. վերջ դրեց նաև հայկական այս իշխանությանը և տեր դարձավ ստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող Մակու բերդին, դարձնելով այն Կարա-կոյունլուների ռազմական նշանավոր հենակետերից մեկը:

Սակայն, կենտրոնաձիգ ուժեղ պետություն ստեղծելու իր ծրագրերն իրականացնելիս, Իսքանդար Կարա-կոյունլուն փորձում էր շահել հայ իշխող վերնախավի համակրանքն ու օժանդակությունը: Նա իրեն կոչում էր շահ-ի Արման (Թագավոր Հայոց), պետական բարձր պաշտոններ էր շնորհում հայ ավատական որոշ գերդաստանների ներկայացուցիչներին, իր զորքի մեջ հավաքագրում էր նաև հայ ռազմիկների և այլն: Նրա արքունիքում

կարևոր դիրք էր գրավել հատկապես, Սյունիքի տեր Բեշքեն Օրբելյանի որդին, նշանավոր ռազմական ու քաղաքական գործիչ Ռուստամը:

Շահռուհի երկրորդ արշավանքը Կարա-կոյունլուների դեմ սկսվեց 1429 թ. և տևեց երկու տարի: Թամուրյանները մեծ ավերածություններ գործեցին հատկապես Վանա լճի հյուսիսարևելյան շրջաններում: Ժամանակակից մի հիշատակագիր հայտնում է, որ «նա աւերեալ քանդեաց բազում տեղիս եւ գրաւումս գերեաց, նաեւ յերկիրն Վասպուրականի եւ Քաջբերունոյ կին եւ տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ տարաւ ի Սամրղընդ»[35]:

1431 թ. Իսքանդարը կրկին դառնում է դրության տերը և վճռական դիմադրություն կազմակերպում Թամուրյանների ու նրանց դաշնակիցների դեմ: Ի պատասխան դրա, 1435 թ. սկսվում է Շահռուհի վերջին և ամենածավալուն արշավանքը. ծանր վիճակ է ստեղծվում Հայաստանում: Թամուրյաններն ավերում և հրդեհում են հայկական գյուղերը, գերում և հավատափոխ անում բնակչությանը: Տասնյակ հազարավոր մարդիկ թողնում են իրենց հայրենի բնակավայրերը և արտագաղթում Աղկոյունլուների տիրապետության տակ գտնվող հայկական շրջաններ, Վրաստան, արաբական երկրներ, Ղրիմ և այլ հեռավոր երկրներ:

Հատկապես տուժում է Հայաստանի Սյունյաց նահանգը: Բեշքեն Օրբելյանը, վեց հազար տուն (շուրջ 50 հազար անձ) հայ բնակչության գլուխ անցած, դիմադրելով Թամուրյաններին, գաղթում է դեպի հյուսիսային Հայաստան: Վրաց Ալեքսանդր թագավորը Լոռվա շրջանը հանձնում է իր աներոջը՝ Բեշքենին, որի շուրջ սկսում են համախմբվել նաև Հայաստանի այլ շրջաններից տարագրված գաղթականներ:

Շահռուհը Կարա-կոյունլուների պետության առաջնորդ է կարգում Ջհանշահին: Սրա օրոք Հայաստանի կենտրոնում՝ Այրարատյան նահանգի Վաղարշապատ քաղաքում վերահաստատվեց Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը:

Քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով դարերի ընթացքում բազմիցս փոխելով իր կայանը, 1292 թ. Հայոց կաթողիկոսությունը խարիսխ էր նետել Կիլիկյան հայկական թագավորության մայրա-

[35] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 419:

քաղաք Սսում: 1421 թ. այլևս անկարող լինելով դիմադրություն կազմակերպել Եգիպտոսի և Սիրիայի մամլուքների շարունակ աճող ճնշմանը, Սսի վերջին հայ իշխան Կոստանդինը լքեց մայրաքաղաքն ու հազարավոր արտագաղթողների գլուխ անցած՝ Կիլիկիայից անցավ Կիպրոս: Սսում հաստատված կաթողիկոսությունն անմխիթար վիճակի մեջ էր գտնվում: Հանգամանքների բերումով կաթողիկոս էին դառնում անարժան ու կիսագրագետ մարդիկ, որոնք անձնական շահի ետևից ընկած, նսեմացնում էին համահայկական միակ հաստատություն դարձած կաթողիկոսական աթոռի փառքն ու հեղինակությունը:

Աթոռի՝ Էջմիածին փոխադրելու մասին ծրագրեր էին մշակվում սկսած 14-րդ դարի սկզբներից, քայլեր էին կատարվում Էջմիածնի վանքը վերաշինելու և տնտեսապես ինքնաբավ դարձնելու ուղղությամբ: 1431 թ. Ռուստամ Օրբելյանը, օգտագործելով իր բարձր դիրքը Իսքանդարի արքունիքում, ընդարձակում է վանքի տնտեսական հիմքը և բարձրագույն դատական ատյանների կողմից հաստատված կալվածագիր կազմել տալով՝ վաճառքի անվան տակ վանքի վակֆային սեփականություն դարձնում խոշոր գյուղեր (Վաղարշապատ, Օշական, Նորագավիթ և այլն): Այսպիսով, Ամենայն հայոց կաթողիկոսական կենտրոնի փոխադրությունն Էջմիածին նախապատրաստված էր արդեն Իսքանդարի իշխանության տարիներին[36]:

1441 թ. պետական իշխանությունների լայն օժանդակությամբ, Էջմիածնում գումարվեց համազգային ժողով, որին Հայաստանի և հայկական գաղթաշխարհի գրեթե բոլոր թեմերից ժամանած բազմաթիվ եպիսկոպոսների, վարդապետների և կրոնավորների հետ միասին մասնակցում էին նաև աշխարհական ներկայացուցիչներ՝ կալվածատեր-իշխաններ, մելիքներ, տանուտերեր: Ժողովականները որոշեցին Էջմիածինը դարձնել Ամենայն հայոց կաթողիկոսության աթոռանիստ կենտրոն և ընտրեցին նոր կաթողիկոս՝ Կիրակոս Վիրապեցուն:

Ինքնուրույն պետականությունից զրկված և բռնապետական տարբեր իշխանությունների տնտեսական ու ազգային ճնշման տակ գտնվող հայ ժողովրդի համար այդ որոշումը ուներ կարևոր նշանակություն: Համազ-

[36] Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, «Տեղեկագիր», 1955, N 8, էջ 83-100:

գային կենտրոն դարձած Էջմիածինը մեծ դեր կատարեց բազմադարյան հայ մշակույթի պահպանման ու զարգացման, ազատագրական գաղափարների արծարծման բնագավառներում:

Իր թագավորության առաջին տարիներին Ջհանշահը սահմանափակվում էր տեղական նշանակություն ունեցող արշավանքներով: 1440-1441 թթ. նա արշավեց Վրաստան, գրավեց Թբիլիսին ու մեծ ավերածություններ գործեց այնտեղ: Կոտորվեց 8 հազար մարդ, գերի տարվեցին 9 հազար հայ և վրացի[37]: Այնուհետև Ջհանշահը պաշարում է Սամշվիլդե քաղաքը, որի բնակչության մեծ մասը հայեր էին: Քաղաքացիները շուրջ երկու ամիս դիմադրում են Կարա-կոյունլուներին: Խաբեությամբ գրավելով քաղաքը՝ նրանք դաժան հաշվեհարդար են կատարում. 3 հազար մարդ սպանվում է, 1664 գանգերից 3 բուրգ է կիտվում, 9 հազար հոգի գերի է տարվում: Հայաստանի արևմտյան շրջանները (Կամախ, Երզնկա, Սասուն, Կեղի, Դերջան, Բաբերդ) տուժում են Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների միջև 1450-1453 թթ. տեղի ունեցած պատերազմից[38]:

Հաջորդ տարիներին, երբ Ջհանշահը խոշոր արշավանքներ է կազմակերպում Թամուրյանների դեմ, Հայաստանի սահմաններում պատերազմական խոշոր գործողություններ տեղի չեն ունենում: Սակայն ժամանակակից հիշատակագիրները միաբերան վկայում են, որ անասելի ծանրացել է հարկային լուծը. մանավորապես ծանր վիճակ էր ստեղծվել քրիստոնյաների համար, որոնցից գանձվող գլխահարկը (ջիզյա) մեծ չափեր էր ընդունել[39]: Դրան զուգընթաց Ջհանշահը փորձում էր օգտագործել հայ աշխարհիկ և հոգևոր ավատատերերի ուժն ու հեղինակությունը՝ պետության կազմի մեջ մտնող կիսանկախ ամիրությունների և Կարա-կոյունլու անհնազանդ ցեղապետերի կենտրոնախույս ձգտումները սանձելու համար: Նրա հայ գործակիցների շարքում կարևոր դեր էր կատարում հատկապես Աղթամարի հայ կաթողիկոս Զաքարիա III-ը: Հայ եկեղեցու այս թևի արքեպիս-

[37] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 120: «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 504, 514, 532, 546, 644:

[38] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 646, հ. Բ, էջ 3, 31:

[39] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 424: «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 563, 567 և այլն:

կոպոսները 1173 թ. սկսած, խզել էին իրենց կապերն Ամենայն հայոց կաթողիկոսությունից և իրենց հոգևոր իշխանությունը տարածել Վասպուրականի, Մոկաց և Կորճայք նահանգների մեծ մասի վրա: Կաթողիկոսի պաշտոնն այստեղ ժառանգաբար գրավում էին Արծրունիներից սերված Սեֆեդինյան գերդաստանի հոգևորական դարձած անդամները: 14-15-րդ դարերում նրանց պատկանող Սեֆեդինյան կալվածքների մեջ կենտրոնական տեղ էին գրավում Աղթամար կղզու վրա գտնվող 600 տուն զուտ հայ բնակչություն ունեցող Արմենիկ կոչվող քաղաքը և Վանա լճի հանդիպակաց ափին գտնվող բարեբեր դաշտը՝ մի շարք հայկական գյուղերով[40]:

Ջհանշահին մատուցած ծառայությունների համար Զաքարիա կաթողիկոսին հաջողվում է որոշ ժամանակ իր հոգևոր իշխանությունը տարածել բովանդակ Հայաստանի վրա, ամրապնդել Սեֆեդինյան հայ ավատատերերի քաղաքական ու տնտեսական դիրքերը, իսկ նրան հաջորդող Ստեփանոս IV կաթողիկոսը 1465 թ. իր զարմիկին՝ ամիր Գուրջիբեկի որդի Սմբատին, թագադրում է Վասպուրականի հայոց թագավոր: Այս խամաճիկ թագավորն իշխեց ընդամենը երկու տարի և որևէ դեր չկատարեց Հայաստանի քաղաքական կյանքում, սակայն նրա թագավորության փաստն ինքնին վկայում է օտար նվաճողներից հայրենի երկիրն ազատագրելու գաղափարի կենսունակության մասին:

1467 թ. Ջհանշահը վճռական պատերազմ է սկսում Աղ-կոյունլուների դեմ: Թուրքմենական ազգակից այդ ցեղախմբերի՝ Կարա-կոյունլուների ու Աղ-կոյունլուների հակամարտությունները սուր կերպարանք էին ընդունել 15-րդ դարի սկզբներին: Միմյանցից երկրամասեր գրավելու և բովանդակ Հայաստանի վրա տիրապետություն հաստատելու համար նրանք բախվել էին բազմիցս՝ 1410, 1419-21, 1425, 1427, 1435, 1450-53 թվականներին:

Տարոնում Հաշտյանք գավառի Ճապաղջուր բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում անհաջողություն կրելով՝ Ջհանշահը նահանջում է՝ ծրագրելով գարնանը նոր արշավանք ծավալել Աղ-կոյունլուների դեմ, Երզնկայի ուղղությամբ: Սակայն Ուզուն-Հասանի զորքերը հետապնդում են Ջհանշահին, գտնում նրան փոքրաթիվ զորախմբով առանձ-

[40] Travels of Venetians in Persia, 1873: «Հայ ժողովրդի պատմություն», հ. Դ, Երևան, 1972, էջ 44-45:

նացած իր բուն բանակից և անսպասելի հարձակումով բնաջնջում բոլորին:

Ջհանշահի Հասան-Ալի որդին եռանդուն գործունեություն է ծավալում Աղ-կոյունլուների առաջխաղացման առաջն առնելու համար, սակայն հաջողություն չի ունենում, կատարյալ պարտություն է կրում նաև Կարա-կոյունլուների կոչով օգնության եկած Թամուրյան սուլթան Աբու-Սայիդը: Այսպիսով, մեկ տարի և մի քանի ամիս տևած հաղթական պատերազմներից հետո Ուզուն-Հասանը Աղ-կոյունլու թուրքմենական ցեղախմբի տիրապետությունը տարածում է մի երկրամասի վրա, որի մասն էր կազմում նաև բովանդակ Հայաստանը:

գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14-15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու թուրքմենական դինաստիաներով կառավարվող պետությունների քաղաքական կյանքի էպիկենտրոնը Ատրպատականն էր՝ հռչակավոր իր Թավրիզ մայրաքաղաքով: Սակայն Հայաստանը նույնպես կենտրոնական դիրք էր գրավում այդ պետությունների և՛ քաղաքական, և՛ տնտեսական ոլորտներում: Կարա-կոյունլուների պետության հիմնադիր Կարա-Յուսուֆի տևական բնակավայրը Վաղարշակերտն էր: Վանը, սկսած 1425 թ., արքունի տան երկրորդ խոշոր դեմքի կամ ամենախոշոր պետական գործչի նստավայրն էր, իսկ Ալինջաց հին ու անառիկ բերդերից «տուն գանձու եւ հարկաց աշխարհի» կոչվող Երնջակը[41], Թուրքմենական տիրակալների պատսպարանն էր վտանգի պահին. այստեղ էին գտնվում նրանց գանձատունը, կենտրոնական բանտը և այլն: Նշանակալից դեր էր կատարում նաև Նախիջևանը՝ որպես հեծելազորի ձմեռային կայան:

Հայաստանի նահանգները (վիլայեթները) և շրջանները (թուման կամ նահիա), որոնք իրենց մեծագույն մասով պետական (դիվանի) հողերի մեջ էին դասվում, փադիշահների կողմից որպես սոյուրղալ տրվում էին քոչվոր ազդեցիկ ցեղերի պետերին, բարձրաստիճան զինվորականներին և կառա-

[41] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 13:

վարող դինաստիայի ամիրզադաներին: Սոյուրղալ ստացած այդ ամիրները կամ կողմնապետերը (այսպես են կոչվում նրանք հայկական աղբյուրներում) ձգտում էին իրենց տիրույթները դարձնել ժառանգական, բայց այդ նրանց չէր հաջողվում: Պետության առաջ հանցապարտ լինելու դեպքում նրանք զրկվում էին իշխանությունից, հաճախ պաշտոնազուրկ էին արվում նաև փադիշահի ու կառավարող դինաստիայի փոփոխության հետևանքով:

Իրենց զավթած երկրամասերում շատ ավելի կայուն էին Հարավային Հայաստանի քուրդ տիրակալները: Նրանց տիրապետության տակ էին գտնվում Վանա լճի շրջակա երկրամասերը (բացի Վանից), Տուրուբերանը և պատմական Հայաստանի այլ շրջաններ:

Հայաստանի քրդական ամիրություններն ու կողմնապետություններն իրենց ներքին կյանքում անկախ էին: Ամիրներն օժտված էին ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական ինքնավարության իրավունքներով. նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արքունիքը, որը կենտրոնական արքունիքի մանրանկար պատճենն էր: Կենտրոնական կառավարչության պաշտոնյաները մուտք չունեին ինքնավար այս շրջաններում: Ամիրներն ինքնուրույն կերպով դատում էին հանցագործներին, նույնիսկ մահվան վճիռ արձակում և կամ դատը հանձնում շար՚ի դատաստանին, որին մասնակցում էին տվյալ վայրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականները՝ ղադու գլխավորությամբ:

Ամիրությունների կյանքում մեծ դեր էին կատարում նրանց երկրամասերում տեղակայված քոչվորական ցեղերի պետերը և շրջանների կառավարիչները:

Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների պետություններում փադիշահից հետո առաջին դեմք էր համարվում ըստ հարկի նշանակվող գլխավոր զորահրամանատարը՝ ամիր-ալ-ումարան (ամիրների ամիրը), որ լինում էր թագավորող ընտանիքի անդամներից կամ ամենաազդեցիկ քոչվոր ցեղերի առաջնորդներից մեկը: Երկրորդ տեղը գրավում էր մեծ սադրը՝ մահմեդական հոգևորականության պետը, այնուհետև մեծ վեզիրը, որ գլխավորում էր վարչական պաշտոնեությունը և վարում արտաքին հարաբերությունները, սահիբ-դիվանը՝ պետական հասույթների ու ֆինանսների

գործակալության պետ, մուհրդար՝ փակիչահի կնքապահ[42]: Գրեթե նույն սկզբունքով էր կազմակերպված նաև կիսանկախ ամիրությունների կառավարչությունը:

Ֆինանսական ու հարկային տեղական ատյանների պաշտոնները, ըստ մեծի մասի, գրավում էին հայերը: Նրանք հայկական աղբյուրներում կոչվում են «ձեռնավոր», «խոջա», «թամղաչի» և այլ անուններով: Մեծ չէր նրանց դերը կառավարչության մեջ, բայց տնտեսության տարբեր մարզերում նրանք գործունեության լայն ասպարեզ ունեին, և աշխատավոր ժողովրդից քամվող հարկերը հոսում էին ոչ միայն դեպի երկրի նոր տերերի գանձատները, այլև զգալի չափով դեպի հայ խոջաների ու թամղաչիների դրամարկղները:

Հայ իշխող դասակարգը 14-15-րդ դարերում զիջեց քաղաքական ու տնտեսական իր դիրքերը Հայաստանի տերը դարձած քոչվոր ցեղերի հարատև ճնշման ներքո: Հայ ավատական տների հողազրկման, մասնատման ու անէացման պրոցեսը, որ ծայր էր առել Հայաստանում մոնղոլական իշխանության քայքայման շրջանում, մոտեցավ իր ավարտին հենց թուրքմենական ցեղապետերի տիրապետության այս տասնամյակներին: Օրինակ Սյունյաց տիրակալ Օրբելյանների շառավից Սմբատը, 1410 թ. ոչ միայն զրկվում է նոր ստացած իր պարգևից (Անգեղակոթ), այլև Կարա-Յուսուֆը բռնագրավում է նրանից Որոտան բերդը: Հայրենազուրկ եղած Սմբատն իր Բեշքեն, Իվանե (Ստեփանոս) և Շահ որդիների հետ, ինչպես արդեն ասվեց, պատսպարվում է Վրաստանում[43]: 1412 թ. Գորիից ոչ հեռու գտնվող Ուփլիսցիխե գյուղաքաղաքում շարադրված մի հիշատակարանում Սմբատն ու իր Բեշքեն որդին հիշվում են որպես այդ շրջանի իշխաններ. «Իշխանութեան տեղույս պարոն Սմբատի եւ որդւոյ նորին պարոն Բէշքէնի, որ յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց»[44]: Սմբատը վախճանվում է, հավանաբար, օտարության մեջ 1417 թ. քիչ առաջ: Իսկ նրա որդիներ Բեշքենն ու Իվանեն վերադառնում են Սյունիք: «Եկին ի հայրենիս իւրեանց,

[42] Տե՛ս И. П. Петрушевский, Государство Азербайджана в XV в., Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, էջ 198:

[43] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա., էջ 194:

[44] Նույն տեղում, էջ 138

եւ ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց», ասում է ժամանակակից մի գրիչ[45]:

Սմբատի եղբոր՝ Գորգունի որդի Տարսայիճը նույնպես, վերադառնալով սամարղանդյան գերությունից, ի վերջո կարողանում է իշխել իր հոր կալվածքում Եղեգիսում: Բայց 1419 թ., ժամանակակից մի գրչի վկայությամբ, նա «յայժ ի նեղութիւն, ի տառապանս եւ յաղքատութիւն անկաւ, զի նա որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել, զի խլեալ եւ յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գիւղ եւ զքաղաք, զվանք, և զանապատ ... Եւ նա փախեալ եւ թագուցեալ էր ի ծերպս վիմաց եւ ի մայրիս»[46]:

1421 թ. հետո, երբ Իսկանդարը դառնում է Կարա-կոյունլուների պետության գահակալ, Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամն առաջ է քաշվում պետական բարձրաստիճան պաշտոնների: Սրա ջանքերով Օրբելյանները կրկին տեր են դառնում իրենց երկրին: Երկար չի տևում, սակայն, այս վիճակը: Շահռուխն իր երրորդ արշավանքի ընթացքում հարձակվում է նաև Իսկանդարի կողմից հովանավորվող Օրբելյանների տիրույթի վրա: Եվ Բեշքենը Սյունիքի ու շրջակա գավառների 6 հազար հայ գերդաստանների գլուխ անցած, պայքարելով թամուրյանների դեմ՝ արտագաղթում է երկրից ու ապաստան գտնում Վրաստանում[47]:

Հայաստանում տեղաբաշխված քոչվոր ավագանու հարատև ճնշման տակ իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերն օրավուր կորցնում էին նաև հայ ավատական մյուս գերդաստանները՝ Խաչենի Հասան-Ջալալյանները, Ծարի Դոփյանները[48], Վայոց ձորի ու Կոտայքի Պռոշյանները[49] և

[45] Նույն տեղում:

[46] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա., էջ 656:

[47] Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 117: Վրաց Ալեքսանդր թագավորը, որ Բեշքենի փեսան էր, Լոռին հանձնում է իր աներոջը: Հայաստանի այլ շրջաններից Լոռի են հասնում նոր փախստականներ և սիրով ընդունվում Բեշքենի կողմից: Սակայն, շուտով, երկյուղ կրելով Բեշքենի հզորացումից՝ Վրաց թագավորը թունավորել է տալիս նրան:

[48] Տե՛ս Կարապետ Տեր-Մկրտչյան, Նյութեր հայ մելիքության մասին, Ա և Բ պրակներ, Էջմիածին, 1913-1914:

[49] Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928:

ուրիշներ:

Խաչենի Ջալալ իշխանի մահվանից հետո՝ 15-րդ դարի սկզբներին, Հասան-Ջալալյան իշխանները զրկվել էին երբեմնի տիրույթներից ու քարշ էին տալիս իրենց գոյությունը որպես սակավազոր գյուղատերեր՝ «ի ներքո ձեռին անօրինաց»[50]:

Դոփյան ավատական ընտանիքը ծանր հարված կրեց 1386 թ.: Լանկ-Թամուրի հրոսակների դեմ կռվի մեջ սպանվեց Փոքր Սյունիքի (Ծարի) իշխան Հասան-Դոփյանը՝ իր երեք որդիների հետ միասին: 1430-ական թվականներին Հասանի թոռնորդի Այտինի իշխանության տարիներին Դոփյան իշխանների կալվածքները բռնագրավվում են պետության կողմից: Դատական ատյաններում երեք տարի քարշ գալով և նյութական մեծ միջոցներ մսխելով, ի վերջո, Այտին իշխանին հաջողվում է վերստանալ «Ի ձեռաց այլազգեաց» Դոփյան իշխանների կալվածքների մի մասը:

15-րդ դարի երկրորդ հիսնամյակում Դոփյանները բաժանվում են երեք ընտանիքների՝ Ուլուբեկենց, Այտենցոց և Ջհանշեցոց, որով և ավելի է մասնատվում երբեմնի հզոր Ծարի իշխանների տնտեսական կարողությունը:

Վասպուրականի Արտազ գավառում, մինչև 1426 թ. իշխում էր կաթոլիկ դավանանքի հայ ավատատերերի մի ընտանիք, որի պատմությունը հնարավոր է լինում հետևել սկսած 13-րդ դարի կեսերից: Մակու ամրոցն էր այս իշխանների նստավայրը՝ անառիկ իր միջնաբերդով, որ չկարողացավ գրավել նույնիսկ Լանկ-Թամուրը: Թամուրի առաջարկով Նուր-ադ-դին իշխանը համաձայնել էր ընդունել նրա գերիշխանությունը, ըստ պահանջի 20 հեծյալից բաղկացած մի ջոկատ տրամադրելու պարտավորությամբ: Սրա որդի Սոյուրղաթմիշը, առերես մահմեդականություն ընդունելով՝ դարձել էր Թամուրի թոռ Օմար-Միրզայի մերձավոր զինակիցներից մեկը, մյուս որդին 1403 թ. Մակվում հյուրընկալած իսպանացի դեսպան Ռուի Գոնզալես դե Կլավիխոյի վկայությամբ՝ «զենքի մարդ չլինելով, ավելի հայ լեզվի քերականության ուսանող և վարդապետ» էր[51]: Մակվի հայ իշխանությանը վերջ տվեց Իսքանդար Կարա-կոյունլուն 1426 թ.: Նշանավոր գրիչ Թովմա

[50] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 194:

[51] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 114-116:

Մինասենցն իր մի հիշատակարանում այդ առթիվ գրել է. «Անմխիթար կսկիծ եհաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերդն միայն էր մնացեալ ի ձեռն քրիստոնէից, եւ այն ևս առաւ ի մէնջ»[52]:

Մինչև 15-րդ դարի 80-ական թվականները հայկական ավատատիրական մի իշխանություն էլ գոյություն ուներ Համշենի գավառում: Նույն Կլավիխոն, Սամարղանդից Իսպանիա իր դարձի ճանապարհին, 1406 թ. անցել է Համշենով և ուշագրավ տեղեկություններ գրանցել այդ իշխանության, նրա դժվարանցանելի կածանների ու ժողովրդի բարքերի մասին:

15-րդ դարի ընթացքում Հայաստանի տարբեր մասերում հիշատակվում են նաև բազմաթիվ այլ կալվածատերեր ու գյուղատերեր: Օրինակ 1442 թ. շարադրված մի հիշատակարան տեղեկություններ է պարունակում Արագածոտն գավառի Սերկևլի գյուղի հայ տերերի՝ պարոններ Ալիբեկի, Ճալվեի, Վաչուտի, Քրդի և Սարգսի մասին, որոնք, անուններից դատելով, Վաչուտյան իշխանների ուժասպառ շառավիղներից են:

Տիրույթների ու կալվածքների գեթ մի մասը բռնագրավումից զերծ պահելու նպատակով, հայ ավատական տները 14-15-րդ դարերում պատվարում էին իրենց վանական կալվածատիրության ցուցակներով: Հայ ավատատեր տների վերացմանն ու նրանց տիրույթների բռնագրավմանը զուգընթաց, եկեղեցին, աստիճանաբար, իր վրա էր վերցրել նաև հայ ժողովրդի ներքին գործերի տնօրինման պարտականությունը, մի հանգամանք, որ հաշվի էին առնում նաև օտար տիրակալները:

Ուշագրավ է, որ այս կամ այն դինաստիայի, ինչպես և առանձին տիրակալի համար ստեղծված քաղաքական ծանր կացության ժամանակ, պետության մահմեդական վարիչները սիրաշահում էին հայ հոգևորականության ազդեցիկ շրջաններին՝ եկեղեցու արտոնություններն ընդարձակելու, նվերներ բաշխելու, երբեմն նույնիսկ եկեղեցիներ կառուցելու կամ նորոգելու արտոնություններ շնորհելով: Հայ եկեղեցու պաշտոնյաներն ու նրանց կալվածքները ազատված են եղել մի շարք ծանր հարկերից ու տուրքերից:

Հայ եկեղեցական կալվածատիրության համար ստեղծված համեմատաբար նպաստավոր այս պայմաններն ի նկատի ունեին հայ ավա-

[52] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 376:

տաների սակավաթիվ ներկայացուցիչները, երբ 14-15-րդ դարերում ենթակա վանական հաստատությունների իրավասության տակ էին դնում իրենց ընտանիքին պատկանող կալվածքները՝ վանական այդ հաստատությունների գլուխ կարգելով մերձավոր ազգականներին: Եվ այսպես, կյանքի է կոչվում սոցիալական մի նոր տերմին՝ «պարոն-տեր», *որը տրվում էր բոլոր այն կալվածատեր-ավատատերերին, որոնք շարունակում էին տիրել իրենց հայրենական կալվածքների մի մասին՝ լինելով միաժամանակ և «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և «տեր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ):*

Պարոն-տեր էին Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսները, Սյունյաց մետրոպոլիտները, Վայոց ձորի առաջնորդները, Հաղբատ, Սանահին, Կեչառիս և տասնյակ ու տասնյակ այլ վանքերի հայրեր ու թեմերի առաջնորդներ:

Հայկական վանական հաստատությունները 15-րդ դարում ընդարձակում էին իրենց կալվածքները նվերներ ստանալով, երբեմն նաև գնումներ կատարելով: Նրանք վարում էին իրենց տնտեսությունը ըստ մեծի մասի՝ «վանից գործավոր» կոչվող վարձկան մշակների ուժերով, իսկ որոշ վայրերում վանքապատկան գյուղերի բնակիչների կոռային աշխատանքով:

Հայ պարոն-տերերն ունեին զինված ջոկատներ, որոնցով անհրաժեշտության դեպքում պաշտպանում էին իրենց գույքն ու պատիվը օտարերկրյա ընչաքաղց զավթիչներից: Աղթամարի կաթողիկոսները զինական իրենց ուժերով զսպում էին Ռստանի քրդերի ախորժակը, որոնք փափագում էին գրավել և թալանել Աղթամարը: Ամիդի առաջնորդ Մկրտիչ Նաղաշի զորեղ ծառաները երբեմն հարձակվում էին նաև թշնամի բանակների փոքր զորախմբերի վրա ու ազատում քրիստոնյա գերիներին, իսկ Տաթևի մետրոպոլիտը, որ ուներ «բազում ճորտս այլազգիս», նրանց միջոցով իր կամքն էր թելադրում հպատակներին»[53]:

Հայ աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի տիրույթներն ու կալվածքները, օտար տիրապետողների կողմից բռնագրավված հայկական երկրամասերի բաղդատությամբ, ընդարձակ չէին: Բնականաբար փոքր էր

[53] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 626, Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 313:

նաև հայ իշխանների և պարոն-տերերի քաղաքական ու տնտեսական կշիռը հայրենի երկրում, սակայն մեծ էր նրանց դերը ժողովրդի ինքնուրույն գոյության ու դարերի ընթացքում ստեղծված մշակութային արժեքների պահպանության գործում:

Անկախ ենթակայությունից՝ հայկական բոլոր շրջաններում կենսունակ էր դեռևս գյուղական համայնքը՝ իր ավանդական կազմակերպություններով: Համայնքի մեջ ընդգրկված հարուստ ու աղքատ ընտանիքների միջև տնտեսական ու սոցիալական հողի վրա խոր հակասություններ էին ստեղծվել ու խուլ և անդադրում պայքար էր տեղի ունենում: Սակայն, օտար նվաճողների բռնություններին դիմագրավելու հրամայական պահանջով, գյուղական համայնքը շարունակում էր իր գոյությունը՝ ղեկավարվելով իր անդամների պարտավորությունների ու իրավունքների դարերի սովորույթով սրբագործված նորմերով: Համայնքը, միաժամանակ, օգտագործվում էր երկրի նվաճողների կողմից՝ համապարտ երաշխավորության սկզբունքի կիրառմամբ՝ հարկահանության գործը կարգավորելու նպատակով:

Թուրքմենների տիրապետության ժամանակաշրջանում անկում ապրեցին Հայաստանի ծաղկուն քաղաքները, որոնք անբուժելի հարված էին ստացել դեռևս մոնղոլների ավերիչ պատերազմների ու երկարատև, ժողովրդի կենսական հյութերը քամող տիրապետության ընթացքում: Մոնղոլական ու միջինասիական խաշնարած ցեղերը բնակություն հաստատելով Անդրկովկասում ու Փոքր Ասիայում, իրենց համար ամառային ու ձմեռային արոտավայրեր դարձրեցին նախկինում տեխնիկական կուլտուրաների մշակման հարուստ ավանդներ ու զարգացած գյուղատնտեսություն ունեցող մի շարք երկրամասեր: Դաշտային Ղարաբաղի և Նախիջևանի բնիկ ազգաբնակչությունը, օրինակ, բռնությամբ տեղահանվեց իր հայրենի օջախից Միրանշահի իշխանության տարիներին: Այդ բարեբեր երկրամասերում բնակվեցին տասնյակ հազարավոր թյուրքալեզու քոչվորներ, որոնք թամուրյանների ռազմական հենարանն էին[54]*: Իշխողների տնտեսական այդ քաղաքականության հետևանքով նախորդ դարերում միջազգային առևտրի կարևոր հանգրվաններ ու արհեստագործության ծաղկուն կենտրոններ*

[54] История Азербайджана, изд. АН Азербайджанской ССР, Баку, 1958, с. 200-201.

հանդիսացող քաղաքներից շատերը, զրկվելով տնտեսական հիմքից, արագորեն գահավիժեցին դեպի անկում: Քաղաքների մի մասն էլ քայքայվեց ու կազմալուծվեց քարավանային ճանապարհների փոփոխության, անընդհատ պատերազմների ու ավատատիրական խժդժությունների հետևանքով:

Որ հայկական քաղաքների մի մասը, այնուամենայնիվ, հանդիսանալով շրջակա բնակավայրերի տնտեսական ու վարչական կենտրոնը, դեռևս պահպանում էր իր նշանակությունը, ապացուցվում է նաև դրամագիտական նյութերով: 14-15-րդ դդ. հատած դրամների մեջ զգալի են նաև Բաբերդում, Անիում, Երևանում, Գանձիում, Նախիջևանում, Սալմաստում, Վանում, Ոստանում և Հայաստանի այլ քաղաքատիպ վայրերում կտրված դրամները:

Հայ արհեստավորների արտադրանքի մեծագույն մասը, անշուշտ, սպառվում էր երկրի ներքին շուկաներում՝ քաղաքամերձ շրջաններում և քոչվոր ցեղերի ամառանոցներում ու ձմեռանոցներում: Չնայած տնտեսության նատուրալ բնույթին՝ այս կամ այն չափով ապրանքափոխանակություն էր կատարվում նաև հայ երկրագործների ու Հայաստանում հաստատված քոչվոր ցեղերի միջև: Գրիգոր Տաթևացին իր մեկնություններից մեկում գրում է. «Ոչխարարածք սովոր են վաճառել զմիս եւ զճրագու եւ առնուլ զհաց ոչ վասն աղքատութեան, այլ զի ոչ պարապին գործել զհաց՝ ի զարմանս խաշանց գոլով»[55]:

Թուրքմենների իշխանության ժամանակաշրջանում խիստ ծանր էր հարկային լուծը: Հպատակներից գանձվում էին հիմնականում այն հարկերն ու տուրքերը, որոնք գոյություն ունեին մոնղոլական տիրապետության շրջանից սկսած: Հողային ռենտան, ըստ հողի պատկանելության, մուծվում էր կամ ամբողջապես պետական գանձարան (դիվանի հողերից), կամ ամբողջապես հողատիրոջը (սոյուրղալական հողերից), կամ էր որոշակի համամասնությամբ բաժանվում էր պետական գանձարանի ու կալվածատիրոջ միջև (սեփականատիրական մուլք կոչվող հարկերից)[56]:

Հարկերը շատ ծանր էին Հայաստանում մինչև Կարա-կոյունլուների տիրապետության հաստատումը: Կարա-Յուսուֆի, մասամբ նաև Իսքանդա-

[55] Մատենադարան, ձեռագիր N 1264, էջ 44:

[56] Տե՛ս И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 190:

րի գահակալության տարիներին հարկային լուծը նույնպես ծանր էր, բայց հանդուրժելի: Դրությունը փոխվեց Ջհանշահի ժամանակ, մանավանդ 15-րդ դարի 50-ական թվականներին, երբ նա ձեռնարկեց Թամուրյանների դեմ իր արշավանքները: Այդ տարիներին մի հիշատակագիր հայտնում է, որ «յոյժ նեղիւ հարկապահանջութեամբ տառապի ազգս հայոց ի ձեռն չար բռնակալացն Թուրքաց», իսկ մեկ ուրիշը ավելացնում է. «նեղիմք յանօրինաց բռնութենէ, եւս առաւել ի կրկնակի հարկապահանջութենէ»[57]:

«Կրկնակի հարկապահանջության» այս քաղաքականությունը միաժամանակ դադարեց Աք-կոյունլուների դինաստիայի հաղթանակից հետո: Ուզուն-Հասանը, իշխանության գլուխ անցնելով, հարկահանության գործը կարգավորելու և պետական պաշտոնյաների ու կալվածատերերի անլուր չարաշահումների առաջն առնելու նպատակով հրատարակեց օրինական հարկերի տեսակների, դրանց չափերի ու հարկահավաքման ձևերի մասին «Կանուն-նամե» կոչվող օրենքների այն գիրքը, որ երկար ժամանակ գործածության մեջ էր Իրանում և Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում:

Հպատակ ժողովուրդների վիճակն ավելի ծանրացավ դարավերջին, երբ Աք-կոյունլուների պետությունն սկսեց հոգեվարք ապրել:

Բնակչությունից գանձվող հարկերը հաճախ ի դիմաց պետական կամ զինվորական ծառայության, տրվում էին առանձին պաշտոնյաների՝ զինվորականության կամ բարձրաստիճան հոգևորականների:

15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, նույն շրջանի գահակալների պարսկերեն հրովարտակները՝ տրված հայկական վանական հաստատություններին[58], ինչպես նաև պարսկական սկզբնաղբյուրներում առկա նյութերը,[59] հնարավորություն են ընձեռում արձանագրելու հայ հպատակներից գանձվող հետևյալ հիմնական հարկատեսակները[60]. պետական ռենտա, կալվածատիրական ռենտա, գլխահարկ, մավաշի և

[57] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 42, 231:

[58] Տե՛ս Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ա, էջ 103-123:

[59] Տե՛ս И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 190-192:

[60] Մանրամասն տե՛ս ՀԺՊ, հ. IV, էջ 73-75:

մարափ, թամղա, բաժ, չերիք, իխրաջաթ, շիզար ու բիզար, ռասմ կամ ռուսումաթ, չիլթաղաթ:

Հարկ է, սակայն, կրկին մատնանշել, որ հայ հպատակների վիճակն առավել ծանր է եղել քուրդ ամիրների տիրույթներում: Բիթլիսի (Բաղեշի) վիլայեթում, օրինակ, մինչև 16-րդ դարի վերջերը հարկերը գանձվել են «քրդերի սովորության համաձայն»: Նույնիսկ Օսմանյան պետական պաշտոնյաները ստիպված խոսել են հարկային այդ համակարգի ապօրինի ու թալանչիական բնույթի մասին և փորձել են ինչ-որ չափով մեղմացնել քրիստոնյա հպատակների դրությունը՝ նրանց վրա տարածելով Դիարբեքիրի վիլայեթի հարկային օրենքը[61]:

Հայ աշխատավոր ժողովուրդը, բացի պետական ու կալվածատիրական հարկերից, վճարում էր նաև եկեղեցական տուրքեր՝ պտղի, սրբաղրամ, տյառնական մատաղ, կողոպուտ, խոստովանադրամ, հաղորդադրամ, զանազան տուգանքներ (չհաս ամուսնության և այլ առիթներով) և այլն: Եկեղեցականները հասույթի աղբյուր էին դարձրել նաև բանադրանքը: «Այժմու քահանայապետքս, — գրել է այս մասին Գր. Տաթևացին, — պատճառանօք անեն ընդ բանադրանօք եւ յետոյ մերկացուցանեն զժողովուրդն իւրեանց»:

Իրենց հասանելիք տուրքերը հոգևոր հոտից հավաքելու համար նույն հեղինակի պատկերավոր արտահայտությամբ, հոգևոր հայրերը «միանգամ ի տարւոջն շրջեն ի վիճակն եւ լնուն զքսակն արծաթով, եւ պատառեն իբրև գայլն, եւ դարձեալ փախչին ի յորջս իւրանց եւ ոչ ինչ հոգան վասն ոչխարացն»[62]:

Հայ աշխատավոր ժողովուրդը, ինչպես նաև Առաջավոր Ասիայի մյուս նստակյաց ժողովուրդներն անդադար պայքար էին մղում հայրենի երկիրը գրաված քոչվոր ցեղապետերի ու նրանց կողմից կիրառվող վարչական ու հարկային գիշատիչ քաղաքականության դեմ:

Մոնղոլական ու թուրքական քոչվոր ցեղերը, գրավելով Հայկական

[61] Տե՛ս «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», թարգմանություն, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964, էջ 45-47:

[62] Գր. Տաթևացի, Գիրք Քարոզութեան, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 298:

լեռնաշխարհը, անբուժելի հարված հասցրին զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող գյուղատնտեսությանը և տնտեսության մյուս ճյուղերին: Ժողովուրդը կողոպտվում էր ոչ միայն պետական պաշտոնյաների ու քոչվոր ավագանու չարաշահություններից, այլև, ընդհանրապես, խաշնարած ցեղերի տեղաշարժերից, որոնք ամռան ամիսներին մեկնում էին երկրի բարձրադիր ու խոտառատ մարգագետինները, իսկ ձմռան ամիսներին իջնում հարթավայրերը: Ամեն տարի պարբերաբար կրկնվող այդ տեղափոխությունների ընթացքում ոտնատակ էին արվում հայ երկրագործների քրտինքով մշակված ցանքատարածությունները, քոչվորների ճանապարհին ընկած գյուղերն ու գյուղաքաղաքները հաճախ կողոպտվում էին այդ ցեղերի սպառազեն ջոկատների կողմից:

Հայ քաղաքացիներն ու գյուղացիները, այսպիսով, ստիպված էին հարատև մաքառել քոչվոր տիրապետողների դեմ՛ իրենց գույքն ու պատիվը պաշտպանելու համար:

Պայքարի մի ձև էր նաև իրենց գիրքը չարաշահող պաշտոնյաների մասին պետական վերադաս մարմիններին գանգատներ ու բողոքագրեր ուղարկելը: Դրանք, ըստ մեծի մասի, որևէ արդյունք չէին բերում, սակայն ժողովրդական որոշ խավեր շարունակում էին հավատալ, թե փադիշահի բարյացակամ կարգադրությամբ կարող են, թերևս, ազատվել այս կամ այն անօրեն ու դաժան տիրակալից[63]:

Պասիվ պայքարի ձևերից էր նաև արտագաղթը երկրից, որ մեծ չափերի էր հասել 14-15-րդ դարերում: Գաղթում էին ինչպես անվերջանալի պատերազմների ու գահակալական կռիվների սարսափներից, այնպես էլ իրավական ու տնտեսական ծանր ու անտանելի վիճակից:

Զանգվածային գաղթերի մասին ուշագրավ շատ տեղեկություններ կան մեր աղբյուրներում: Դրանցից է, օրինակ, 15-րդ դարի վերջին Ապարանի Սուրբ Նշան վանքում շարադրված կոնդակը, ուր ասված է. «անօրէնքն կու նեղացուցեն զքրիստոնեայքս սաստ պատճառաւ, (եւ նոքա) կու թողուն զտունն, զարտն ու զայգին եւ զայլ աշխարհն ու փախչին»[64]:

Փախչում էին և հարևան երկրներ (Վրաստան ու Շիրվան) և հեռավոր

[63] Թ. Մեծոփեցի, էջ 99:

[64] Մատենադարան, ձեռագիր N 7757, էջ 1ա:

աշխարհներ (Սիրիա, Ղրիմ, Լեհաստան և այլն)։ Զգալի թիվ էին կազմում հայերը, մասնավորապես, հարևան երկրների մի շարք քաղաքներում. Բարբարոյի վկայությամբ, օրինակ, հնուց անտի հայաբնակ Շամախի քաղաքի «բնակիչների մեծ մասը հայ են»։ Իտալացի դիվանագետի տվյալը հաստատում է անգլիացի Ջենկինսոնը, որը մեկ դար հետո (16-րդ դարի սկզբներին) այցելելով Շամախի, նույնպես արձանագրում է, թե քաղաքը «բնակեցված է գլխավորապես հայերով»[65]։

Աշխատավոր ժողովրդի իրավական ու տնտեսական ծանր վիճակն ու մղձավանջային առօրյան պարարտ հող էին եկեղեցու նկատմամբ անտարբերության, աղանդավորական գաղափարների և հակաեկեղեցական տրամադրությունների տարածման համար։

Հայ եկեղեցու նշանավոր գաղափարախոս Գր. Տաթևացին աստվածաբանական դատողություններ կատարելով ու հենվելով եկեղեցու հայրերի հեղինակության վրա, փորձում է բացահայտել այդ գաղափարների վտանգավորությունը և նրանց դեմ պայքար ծավալելու անհրաժեշտությունը, որովհետև հայ եկեղեցու դեմ ընդդիմադիր դիրք էին բռնում ոչ միայն տարացեղ աղանդավորները, այլև Հռոմից ու քրիստոնյա Եվրոպայից հոգու և մարմնի փրկություն ակնկալող մի խումբ հոգևոր և աշխարհիկ գործիչներ։

Սակայն ավերիչ ասպատակությունների, «կրկնակի» հարկահանությունների, մահտարաժամի, բռնի կրոնափոխության, ձուլման, գաղթի, բարքերի այլասերման ու բազմազան կրոնական աղանդների այս մռայլ ժամանակաշրջանում հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունն ու անցյալից ստացած մշակութային ժառանգությունը, այլ շարունակեց խորացնել իր էթնիկ-կրոնական ինքնագիտակցությունը նոր հոգևոր ստեղծագործություններով ու մարդկային կյանքի իմաստավորման նոր ու վերին մի հայացքով, որի կրողն է Թովմա վարդապետ Մեծոփեցին՝ իր ապրած կյանքով, արած գործերով, գրած «Պատմությամբ»։

---

[65] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 199, 372։

2. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Գարեգին Հովսեփյանը կես դար առաջ հրապարակած իր մի ուսումնասիրության մեջ, հանգամանալից քննության է ենթարկել 15-րդ դարի նշանավոր մատենագիր և եկեղեցական գործիչ Թովմա Մեծոփեցու (1378-1446) կյանքի և գործունեության դրվագները՝ գիտական շրջանառության մեջ դնելով ձեռագրական նոր նյութեր։ Անվանի բանասերը սակայն, բազմարդյուն այդ գործչի կյանքի լիակատար պատկերը կերտելու համար, անհրաժեշտ է համարել շարունակել որոնումները. նա համոզված է եղել, որ «ժամանակը, բանասիրական աշխատանքը հետզհետե երևան կհանէ յուր ժամանակի այս մեծ մարդու արդյունավոր գործունէության դեռևս ուրիշ անհայտ գործեր»[66]։

Եվ իրոք, անցած տասնամյակներում կատարված բանասիրական աշխատանքը, մանավանդ 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրապարակումն ու ձեռագրագիտական նոր խնդիրներն այսօր հնարավորություն են ընձեռում մեծապես ընդարձակելու մեր գիտելիքները Թովմա Մեծոփեցու կյանքի, և մասնավորապես, նրա մատենագրական գործունեության մասին։

Թե ինչ է հայտնի առ այսօր մատենագիր Թովմա Մեծոփեցուց՝ ի մի է բերված Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում», այսպես՝

1. Պատմութիւն Լանկթամուրի (տպ. Փարիզ, 1860)
2. Յիշատակարան կամ Պատմութիւն վերահաստատման աթոռոյն էջմիածնի (տպ. Թիֆլիզ, 1892)
3. Կարգ օծման հիւանդաց
4. Մեկնութիւն Դանիէլ մարգարէի («Հայապատում», էջ 125)
5. Խրատ յաղագս պաշտաման եկեղեցւոյ[67]։

«Սրանցից դուրս, - հայտնում է Հ. Աճառյանը, - կազմել է ժամագրքի նոր խմբագրություն, մաքրելով տգետ գրիչների սխալներից և ջնջելով

---

[66] Գարեգին վարդ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նոր նյութերով), Վաղարշապատ, 1914, էջ ԺԸ։

[67] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, Երևան, 1944, էջ 330-331։

ավելորդ ու եկամուտ տարրերը ...»[68]: Նշենք նաև, որ Գ. Փիրղալեմյանն ու Ղ. Ալիշանը Թովմային հեղինակ են համարել վարքաբանական գրվածքների, որոնք, սակայն, ինչպես ապացուցվել է հետագայում, պատկանում են այլ հեղինակների (այս մասին՝ ստորև):

Մեր նպատակն է կազմել Թովմա Մեծոփեցու աշխատությունների լիակատար ցանկը՝ նրա մեջ ընդգրկելով երկու տասնյակից ավելի հայտնի ու անհայտ բնագրեր՝ անհրաժեշտ բացատրություններ տալով նրանց մասին:

***

Մինչև բուն նյութին անցնելը, հարկադրված ենք պարզել մի թյուրիմացություն, կապված Մատենադարանի N 7117 ձեռագրի գրության հանգամանքների հետ: Այդ ձեռագիրը, որ մեզ է հասցրել աղվանից այբուբենը, ինչպես կհամոզվենք ստորև, սերտորեն առնչվում է Թովմա Մեծոփեցու անվան հետ և պարունակում նրա մի շարք գրական վաստակները:

Ձեռագիրը վերջում ունի Թ. Մեծոփեցու հիշատակարանը, ուր ասված է. «Արդ, յերես անկեալ աղաչեմ զՔրիստոսակիր եղբարքդ եւ զբաղձալի ուսումնասէր մանկունքդ եկեղեցւոյ որք հանդիպիք նորընծայ աստուածային պարգեւաց գրոյս, յիշեսջիք ի բարին Քրիստոս ճգնաւորն՝ զԿիրակոսն կենդանաթաղ գերեզմանին Գրիգորի Լուսաւորչին՝ Վիրապայ, որ եբեր զգիրս զայս ի Հայս ի Կաֆա քաղաքէն: Եւ ես մեղապարտս ի մանկանս եկեղեցւոյ սուտանուն վարդապետս Թովմա՝ առաջնորդ սուրբ ուխտիս Մեծոփայ, վերստին օրինակեցի զսա, եւ ետու գրել զսա հոգեւոր որդւոյ իմոյ՝ Յովանէս սարկաւագի Արճիշեցւոյ ...»[69]:

Պրոֆ. Ա. Շանիձեն, որ աղվանից այբուբենի կապակցությամբ քննության նյութ է դարձրել Թովմայի այս հիշատակարանը, եկել է այն եզրակացության, որ «Приписка относится не только ко второй части учебника (նա «учебник» է համարում ողջ ձեռագիրը), но и к первой

[68] Նույն տեղում, էջ 331:

[69] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 346բ: Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», մասն Ա, էջ 597:

части, где имеются интересующие нас алфавиты»[70]:

Ա. Շանիձեի այս կարծիքն ընդունել է նաև մեծանուն Հր. Աճառյանը իր «Աղվանից գիրը» հոդվածում: «Ձեռագրի բուն օրինակը, - գրել է նա, - բերված է եղել Կաֆայից (Թեոդոսիա) Կիրակոս Վիրապեցու ձեռքով. Թովմա Մեծոփեցու աշակերտ Հովհան Արճիշեցին նույնից արտագրել է նոր օրինակը՝ արտագրությամբ իր ուսուցիչ և Մեծոփի առաջնորդ Թովմայի»[71]:

Այսպես ուրեմն՝ բանասիրության մեջ տարածված է այն տեսակետը, որ իբր Մատենադարանի N 7117 ձեռագիրը՝ իր ամբողջությամբ Կաֆայից բերված մի ձեռագրի ընդօրինակությունն է, և որ Թ. Մեծոփեցու դերը սահմանափակվում է սոսկ այդ ձեռագրի արտագրությամբ:

Այս տեսակետը սխալ է և անընդունելի[72]:

Վերը վկայակոչված հիշատակարանի շարունակության մեջ, որի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել, Թ. Մեծոփեցին գրում է. «Բայց դուք ընկալարուք զսա իբրեւ զտախտակն Մովսէսի եւ զԱւետարանն Քրիստոսի եւ մի ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատանս կրէաք յազգաց քրիստոնէից եւ այսօր ետ զսա Աստուած ի ձեռս մեր, եւ որ ոչ ընդունի զսա՝ պատասխանի տացէ Քրիստոսի Աստուծո մերոյ»[73]:

Ինչի՞ մասին է խոսքը, ինչո՞ւ էին այլազգի քրիստոնյաները նախատում հայերին. մի՞թե այն բանի համար, որ հայերը չունեին քերականագիտական աշխատություններ կամ տարբեր ազգությունների այբուբենների մասին տեղեկություններ: Այդ բնույթի գիտական նյութեր պարունակող ձեռագիրը Թ. Մեծոփեցին կարո՞ղ էր արդյոք համեմատել Մովսես մարգարեի աստվածատուր տախտակների և Քրիստոսի Ավետարանի հետ, իհարկե ոչ:

Ուստի, կրկին անգամ նույն հարցն է ծառանում. ինչի՞ մասին է

[70] А. Шанидзе, Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, с. 14.

[71] «Տեղեկագիր», ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, 1941, 3-4, էջ 5:

[72] Սխալը կրկնված է նաև Զ. Ալեքսիձեի վերջերս հրատարակած «Կովկասյան Աղվանքի գրչությունը. լեզուն և դպրությունը» աղվանագիտության համար հիմնարար գրքում (Թբ., 2003, էջ 40-41, վրաց.) - **խմբ.**:

[73] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 346բ, հմմտ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 597:

խոսվում Թ. Մեծոփեցու հիշատակարանում: Հարցը ստանում է իր գյուրին պատասխանը, երբ ուշադիր քննում ենք N 7117 ձեռագիրը: Պարզվում է, որ այն մի ամբողջություն չի կազմում, այլ բաղկացած է 3 մասերից, որոնք, չնայած գրված են նույն գրչի (Հովհ. Արճիշեցու) կողմից[74], միևնույն չափի թղթերի վրա, սակայն միմյանց նկատմամբ ունեն նաև տարբերություններ:

Առաջին մասը *գրավում է ձեռագրի 1-150 թերթերը: Տետրակների (ըստ մեծ մասի բաղկացած են 12-ական թերթերից) առաջին և վերջին թերթերի լուսանցքներին կան գրչի ձեռքով ու ձեռագրի թանաքով նշանակված պրականիշ թվեր՝ ա-ից մինչև ժգ (13 տետրակ): Ձեռագրի այս մասում օգտագործված է միայն երկու գույնի թանաք. կարմիր՝ խորագրերի ու պարբերությունների սկզբնատառերի համար, և սև՝ բնագրի համար: Այս մասում չկա որևէ լուսանցազարդ:*

Ձեռագրի հենց այս բաժնում են գտնվում մի շարք բնագրեր, որոնք սերտորեն առնչվում են Թովմա Մեծոփեցու կամ էլ հայ նշանավոր այլ վարդապետների անվանց հետ (Դավիթ փիլիսոփա, Վարդան Արևելցի, Գրիգոր Տաթևացի, Թովմա Մեծոփեցի և այլն), ուստի պարզ է, որ Թ. Մեծոփեցու խոսքը Կիրակոս Վիրապեցու կողմից Կաֆայից բերված գրքի մասին՝ չի կարող վերաբերել ձեռագրի այս բաժնին: Նշենք նաև, որ ձեռագրի այս մասում են գտնվում տարբեր ժողովուրդների (որոնց թվում նաև աղվանից) այբուբենները:

Երկրորդ մասը *գրավում է ձեռագրի 151-324 թերթերը և բաղկացած է 15 տետրակներից. տետրակների պրականիշ թվերը նույնպես նշանակված են գրչի կողմից (ա^{1}, թ^{1}, ժբ^{1}, ժգ^{2}, ժե^{1}-ժե^{2} պրականիշ թերթը չեն պահպանվել): Ձեռագրի այս բաժնում գործ է ածված 3 գույնի՝ կարմիր, կապույտ և սև թանաք (կարմիրն ու կապույտը՝ գլխատառերի համար): Լուսանցքներում կան գեղեցիկ լուսանցազարդեր (գլխանիշ զարդեր, թռչուններ, սիրեններ). 154ա էջում մեծ գլխազարդ-կիսախորան: Այս բաժնում ընդօրինակված են միջնադարյան Հայաստանում շատ տարածված և*

[74] Հովհաննես Արճիշեցու հիշատակագրությունները պահպանվել են ձեռագրի 112բ և 305ա էջերում: 112բ էջի հիշատակագրության մեջ Արճիշեցին իրեն անվանում է «առաջին սրբագրող», որ նշանակում է հեղինակային օրինակի առաջին ընդօրինակող:

բազմաթիվ ընդօրինակություններով մեզ հասած քերականագիտական-բառարանագիտական նյութեր (Գևորգ Սկևռացու գրչության արվեստին վերաբերող աշխատություններ, Բառք եբրայեցւոց, Բառք քերթողականք, Հանդէս բանաստեղծաց, Թարգմանութիւն պարսիկ բառի ի Վարդան գրոց և այլն): Պարզ է, որ այս բնագրերը Կաֆայից Հայաստան բերելու, առավել ևս՝ դրանք Մովսեսի տախտակների ու Քրիստոսի Ավետարանի հետ համեմատելու մասին խոսք անգամ չի կարող լինել:

Երրորդ մասը, *որ գրավում է ձեռագրի 325-346 թերթերը, բաղկացած է երկու՝ ոչ լրիվ տետրակներից, որոնց սկզբի ու վերջի էջերին կան նորագույն ձեռագրով նշանակված պրականիշ թվեր (ժզ^{1}-ժզ^{2}-ժէ^{1}) լրիվ տետրակներից:*

Այս մասում օգտագործված է միայն կարմիր ու սև թանաք. լուսանցքներում կան մի քանի լուսանցազարդեր, որոնք, սակայն, կատարված են այլ ոճով և նման չեն 2-րդ մասի լուսանցազարդերին: Այս մասում ընդօրինակված են քերականագիտական-բառարանագիտական ձեռագրի հետ ոչ մի առնչություն չունեցող հետևյալ ծիսական նյութերը.

- Կարգ աւրհնութեան սուրբ իւղոյն հիւանդաց (էջ 325ա-342ա)

- Կարգ աւծութեան հիւանդաց (էջ 342ա-346ա)

Ձեռագրի վերջում գտնվող և բանասիրության մեջ ողջ ձեռագրին վերագրվող Թ. Մեծոփեցու հիշատակարանը վերաբերում է միայն ու միայն ծիսական այս բնագրին: Այդ անտարակուսելի է, որովհետև.

1. Այս հիշատակարանը՝ բառացի նույնությամբ՝ ընդօրինակված է նաև Վիեննայի N 263 ձեռագրում. «Օծումն հիւանդաց կարգին ծայրը» - ինչպես հայտնում է Հ. Տաշյանը[75]:

2. Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսին Երևանի ամիր Յաղուբ-բեկի մոտ զրպարտող կղերականները նրան համարում են նաև հերձվածող. «զի զօծումն հիւանդաց բերեալ է ի Կ. Պօլսէ»[76]: Ճիշտ է, այստեղ Կաֆա քաղաքի փոխարեն նշված է Կոստանդնուպոլիսը, բայց պարզ է, որ խոսքը վերաբերում է նույն՝ «Օծումն հիւանդաց» ծիսական բնագրին:

[75] Յ. Տաշեան, Ցուցակ հայ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 677:

[76] Վասն աքսորման տէր Կիրակոս կաթողիկոսի:

3. N 7117 ձեռագրի վերջում եղած հիշատակարանի իմաստը հասկանալի է դառնում միայն այն դեպքում, երբ այն հատկացնում ենք նախորդ էջերում ընդօրինակված ծիսական բնագրին: Հիվանդների կամ վերջին օծման ծեսն ընդունված չէր հայ եկեղեցու կողմից[77]*: Դավանաբանական վեճերի ժամանակ հայերին մեղադրում էին նաև այդ կապակցությամբ («նախատանս կրէաք յաղագս քրիստոնէից»):*

Այսպես, օրինակ, Հովհան Քռնեցին Շրջաբերական մի թղթով դիմել է ունիթոռ հայերին, որի մեջ հայ եկեղեցուն մեղադրում է 19 մոլորությունների մեջ: «Մոլորություններից» 9-րդը համարում է յոթն խորհուրդներից դրոշմը և վերջին օծումը չունենալը[78]*:*

Այդ իսկ պատճառով Թ. Մեծոփեցին Կաֆայից կամ Կ. Պոլսից ստանալով և արտագրելով ծիսական այդ բնագիրը, «նորընծայ աստուածային պարգեւ» է համարում այն ու համեմատում Մովսեսի աստվածատուր օրենքների ու Ավետարանի հետ:

Այս հարցի լուսաբանությունը, ինչպես կտեսնենք ստորև, կարևոր նշանակություն ունի Թովմա Մեծոփեցու աշխատությունների ամբողջական ցանկը կազմելու համար, որովհետև մեր հեղինակի մի շարք աշխատություններ պահպանվել են հենց N 7117 ձեռագրի մեջ, նրա առաջին բաժնում:

Հարկադրական այս շեղումից հետո անցնենք մեր առաջադրած խնդրին ու կազմենք Թ. Մեծոփեցու աշխատությունների ցանկը, ըստ միջնադարյան մատենագրության կարևոր բնագավառների՝ Պատմագրություն, Նամականի, Խրատք կանոնականք, Վկայաբանություն, Քերականություն և

[77] Բենեդիկտոս ԺԲ պապը 1342 թ. հայ եկեղեցուն է ուղարկում մի «Մոլորութեանց ցուցակ»: Արդ, 117 կետից բաղկացած այդ ցուցակի 65-րդ կետի առարկությունը Մ. Օրմանյանի ձևակերպմամբ (տե՛ս «Ազգապատում», Բ հատոր, Ա գիրք, Պեյրութ, 1960, էջ 1886) այսպիսին է. «թէ հայերը մկրտության ատեն մարմինը ինչ անդերուն վրա եղած օծումները, ամեն օծումներու տեղ կը նկատեն, և դրոշմի և վերջին օծումի, և քահանայության և եպիսկոպոսության օծումներ չունին: Այս առարկության հայերը պատասխանում են, որ «վերջին օծում Հայոց մեջ սովորություն եղած չէ» (նույն տեղում, էջ 1887):

[78] Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հ., Ա գիրք, Պեյրութ, 1960, էջ 1851, հմմտ. նաև էջ 1887:

ազգակից նյութեր, Բանաստեղծություն, Մեկնություն և լուծմունք, ծիսական բնագրեր, Խմբագրություն-արտագրություն:

Ա. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԱՅ ԵՒ ՅԱՋՈՐԴԱՑ ԻՒՐՈՑ

Պատմագրական կարևոր այս երկը, հայերեն բնագրի հրատարակությամբ, ֆրանսերեն և ռուսերեն թարգմանություններով, վաղուց ի վեր դարձել է արևելագիտական լայն շրջանների սեփականություն, ուստի հարկ չկա մանրամասներեն կանգ առնելու նրա վրա:

Տանք մի քանի պարզաբանումներ.

Խորագիրը հեղինակինը չէ. տարբեր ձեռագրեր տարբեր վերնագրեր են տալիս «Պատմությանը», այսպես.

— «Պատմութիւն համառօտ անաւրէն Թամուրին, որ եկեալ ի յաշխարհէն Խորասանու եւ գնաց մինչեւ ի ծովն Ովկիանոս, արարեալ Թովմայ վարդապետի» (Մատենադարան, ձեռ. N 2748):

— «Պատմութիւն համառօտաբար վասն արեւելեան թագաւորացն՝ պղծոյն եւ չար գազանին Լանկ-Թամուրայ եւ այլոցն, զոր արարեալ է քաջ վարժապետին Թովմայ վարդապետի» (ձեռ. NN 3519, 1865):

— «Պատմութիւն ազգին Նետողաց, որ անուն մեծաւորին Թամուր կոչի, արարեալ Թումա վարդապետի» (Ձեռ. N 1443) և այլն:

«Պատմութեան» 1860 թ. Փարիզում Կ. Շահնազարյանի հրատարակած բնագիրը սխալաշատ է: Մատենադարանում պահվող ձեռագրերի բաղդատությունը տպագրի հետ (բաղդատված են 21 ձեռագրեր) հնարավորություն է ընձեռում սրբագրել բազմաթիվ աղճատված նախադասություններ, թվականներ, անուններ և այլն:

Մի քանի օրինակով ցույց տանք տպագրության աղավաղումների խնդիրը.

Տպագրված է	Պետք է լինի
«Թագաւորն հիւսիսոյ Թօղթամիշ անուն՝ տէրն ռուսաց եւ Ազախի»	*« … տէրն ուրուսաց եւ Ազախի»*
«Վասն զի Թարքմանն Փիռ Հասան կամէր ելանել ի ժողովարան *եւ գնալ ի լեառն Մարաթաւ»*	*« … ելանել ի Ծովասարն եւ գնալ ի բարձրագոյն լեառն Մարաթու»*
«Պատերազմեալ ընդ սուլղանին ղանին՝ ըմբռնեալ սպանին զնա խեղդամահ արարեալ, զի տեարք էին տեղեացն, եւ ան աւէին եւ որդի ղանի»	*«Պատերազմեալ ընդ ղանին Սուլթան* Ահմատ *եւ ըմբռնեալ սպանին զնա խեղդամահ առնելով, զի տեարք էին տեղեացն եւ ղան աւէին եւ որդի Օխզանի»*
Եւ յամենայն գլխոյ պահանջէին 540 թանկայ՝ *ի կաշէ եւ եւ ի կուրէ»*	… Լ *եւ* Խ թանկայ՝ *(որոշ ձեռագրերում Շ և Խ, ապա նաև Շխ (540))*
«Վասն զի առեալ (Պեշգէնը) զամենայն կողմն Սիւնեաց եւ զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Սիւնիս աւելի քան 460.000 քրիստոնեայ տունս ազատեալ ի Շահռուհէն վրաց»	… *աւելի քան* զՁՌ *(զ6000) քրիստոնեայ տունս ազատեալ ի Շահռուհէն* հասոյց ի կողմն Վրաց»
«Եւ տեսեալ անօրինացն զյօժարութիւն նոցին՝ զամէն գերին հանեցին ի 10.000 եւ ի 20.000, մինչ զի քահանայի միոջ յԱրճէշ եւ յԱրծկէ երկերիւր երեսուն հազար դահեկան գնէին»	*« … յԼՌ (30.000) դեկան գնէին»*
«Եւ չարքն չարչարեալ հրով եւ սրով եւ անասելի չարչարանօք: Իսկ …»	*«չարչարանօք* զերկիրն բռնանդակ *զիւղ եւ աւանս ամենեւին շէնս ոչ թողին, այլ հրձիկք արարին զաշխարհն: Իսկ …»*
«զՇամշուլտէ քաղաքն կործանեցին և կարմիր նշան եդին» և այլն և այլն»:	*«զՇամշուլտե քաղաքն կոր*ծանեցին եւ զգուշումն եւ զհնչումն զանկակաց խափանեցին *եւ կարմիր նշան եդին»*

2. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ (ՏՊ. ԹԻՖԼԻԶ, 1892)

Այս խորագրի տակ Կ. Կոստանյանցի ջանքերով հրատարակվել են Թովմա Մեծոփեցու երեք մանր պատմական գրվածքները, որոնք կարևոր սկզբնաղբյուր են 15-րդ դարի 40-ական թվականների Հայ եկեղեցու և քաղաքական հոսանքների պատմության:

Այդ գրվածքներն են.

2. «Վասն միաբանութեան Հայոց եւ կաթուղիկոս ձեռնադրութեանն»:

3. «Յաղագս էջմիածնին օրհնութեան եւ կաթողիկոս ձեռնադրութեանն ի նմա»:

4. «Վասն ախտորման տէր Կիրակոս կաթողիկոսին»:

Կ. Կոստանյանի հրատարակությունը, ընդհանուր առմամբ հաջող է, բայց այստեղ ևս կան սրբագրության կարոտ առանձին հատվածներ:

5. Ձեռագրաց հիշատակարաններ: *Մեկ համարի տակ ներկայացնում ենք Թովմա Մեծոփեցու ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանները, որոնցից մի քանիսը, պարունակելով պատմական անցուդարձերի ընդարձակ նկարագրություններ, իրավամբ տեղ են գրավելու Թովմայի պատմագրական երկերի շարքում: Այս առումով հատկապես ուշագրավ են.*

ա. 1407-1408 թթ. Տաթևում և Մեծոփում ընդօրինակած «Գիրք հարցմանցի» հիշատակարանը, որի մեջ կարևոր տվյալներ է հաղորդում երկրաշարժի և մահտարաժամի մասին[79] *:*

բ. 1410 թ. Մեծոփա վանքում ընդօրինակած Գր. Տաթևացու Քարոզգրքի հիշատակարանը՝ Գր. Տաթևացու կյանքի վերջին տարիների

[79] Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մասն Ա, էջ 78-81:

մասին արժեքավոր տեղեկություններով[80]:

գ. 1435 թ. խմբագրած «խմբագիր մեկնութիւն ԺԴ թղթոցն Պօղոսի» գործի հիշատակարանը, ուր արժեքավոր տվյալներ են գրանցված Շահռուխի 3-րդ արշավանքի մասին»[81]:

դ. Մեծոփեցին 1404-1446 թթ. բազմիցս այլևայլ առիթներով (մեծ մասամբ որպես տարբեր ձեռագրերի ընդօրինակող կամ զանազան բնագրերի սրբագրող-խմբագրող) շարադրել է նաև այլ հիշատակարաններ, հիշատակագրություններ: Դրանց մեջ ևս կան կենսագրական արժեքավոր տվյալներ և ժամանակակից կյանքի, մասնավորապես Մեծոփի դպրոցի պատմության տարբեր կողմերի լուսաբանմանը նպաստող տեղեկություններ: Այսպես, օրինակ, 1444 թ. Մեծոփեցին կազմել է ավել 1383 թ. օրինակված իմաստասիրական նյութերի մի ժողովածու. այդ կապակցությամբ գրած հիշատակագրություններից մեկում հայտնում է, որ «Ես ԿԶ (66) տարոյ եմ», ուստի ծնվել է 1378 թվականին:

Այսպիսով, ճշգրտորեն որոշվում է Մեծոփեցու ծննդյան ստույգ տարին, մինչդեռ Գ. Հովսեփյանը, անուղղակի տվյալների համադրության ճանապարհով միայն, հանգել էր այն եզրակացության, որ նա ծնված պետք է լինի շուրջ 1376-1379 թթ.[82]:

6. «Զիարդ գտեալ եղեւ գիրս Հայոց»

Անխորագիր փոքր բնագիր է, որ սկսվում է այսպես. «Եւ զայս գիտել պարտ է մանկանց եկեղեցոյ, թէ զիարդ գտեալ եղեւ գիրս Հայոց ի շնորհաց հոգւոյն»: Գտնվում է N 7117 ձեռագրի առաջին մասում (էջ 110բ-112բ): Թովմա Մեծոփեցու այլ գործերի շարքում «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման, արարեալ Թովմա վարժապետի ի խնդրոյ աշակերտաց իւրոց» աշխատության շարունակությամբ: Վերջում պահպանվել է հեղինակի հիշատակագրությունը, ուր ասված է. «Զոր եւ մեք պարտիմք գերախտիս հոգեւոր հարցն մերոց եւ զծածուկ գիտութիւնն որ ի սմա ամբարեալ կայ ոչ մոռանալ, այլ սակաւ ինչ ի վարդապետացն մերոց իմաստից առեալ ի յուրախութիւն գիտութեան մանկանց եկեղեցւոյ յիշատակ

80 «ԺԵ դարի հիշատակարաններ», մասն Ա, էջ 100-105:

81 Նույն տեղում, էջ 452-453:

82 Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 7:

թողցուք, բայց աղաչեմ զեղբայրութիւնդ զի զմեզ եւ զսակաւ աշխատանս մեր անպարսաւ թողցուք» (ձեռ. N 7117, էջ 112ա-112բ):

Սրան հաջորդում է ձեռագիր գրիչ Հովհաննես Արճիշեցու հիշատակարանը, որտեղ նա իրեն կոչում է «առաջին սրբագրող այսմ տառի», որ նշանակում է, թե անմիջապես հեղինակ Թովմա Մեծոփեցու ինքնագրից է կատարված այս ընդօրինակությունը, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ մաքրագրությունը:

Հայ գրերի գյուտի մասին այս փոքր գրվածքը շարադրելիս Թովմա Մեծոփեցին հետևում է միջնադարյան հայ պատմագրության այն ավանդներին, ըստ որոնց Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է միայն Դանիել Ասորու այբուբենից բացակայող 7 ձայնավոր գրերը՝ ա, ե, է, ը, ի, ո, ւ. «Զի որպէս մարմին անհոգի շարժումն ոչ բերէ, այսպէս եւ առանց սոցա մակոյկ բանի եւ հեղ բառի ոչ ուղղէր»:

Իրեն հատուկ ճարտասանական ձևերով, Մեծոփեցին նկարագրում է այն մեծ ցնծությունը, որով Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում դիմավորում են հայ գրերի գյուտը:

«Աստ է տեսանել, - գրում է նա, - զուրախութիւն քրիստոնէից հայկազեանս սեռի եւ զպլրումն լալոյ եւ գոչման աղաղակի, համբերձ միաբանական աւրհնութեամբ. աւրհնէին զամենասուրբ զԵրրորդութիւնն, որ յուսու աղօթից սրբոյն Մեսրոպայ եւ զհայցուածս մեր կատարեաց: Եւ վաղվաղակի ի հոգւոյն շնորհաց թարգմանեաց սուրբն Սահակ զբան Աւետարանին՝ որ ասէ. Դարձաւ Յիսուս զօրութեամբ հոգւոյն ի Գալիլիա. մինչեւ ցայն տեղի որ ասէ. Խփեալ զգիրն ետ ցպաշտաւնեայն եւ նստաւ: Եւ սա եղեն յաւզս ի բարբառ հայերէն գրան քարոզութեան Աւետարանի բանին:

Եւ ապա աւրհնութեամբ եւ գոհութեամբ բաժանեալք ի միմեանց յիւրաքանչիւր գաւառս ընթանային: Եւ սուրբն Սահակ եւ Մեսրոպ զանձինս իւրեանց ետուն աշխատութեան եւ սկսան ի թարգմանել զամենայն Գիրս աստուածաշունչս ի փառս ամենասուրբ Երրորդութեան» (ձեռ. N 7117, էջ 112ա):

Հարկ է նշել, որ նույն N 7117 ձեռագրի 122ա-125բ էջերում ընդօրինակված է «Ի գրոց մեծ վարժապետին Վարդանայ» խորագրով մի հատված, որ Վարդան Արևելցու աշխատություններից (հատկապես նրա «Ժղլանքից»)

թողել է մեր հեղինակը: Այս գրվածքի հիշատակարանում Մեծոփեցին գրում է. «Եւ ես նուաստ վարդապետս Թովմա ի Վարդանայ գտայ եւ գրեցի ի գիրս յայս վասն ուսումնականաց օգտի. վասն որոյ յիշել աղաչեմ եւ թողութիւն մեղաց հայցել եւ Աստուած զձեզ շահէ» (ձեռ. N 7117, էջ 124բ):

Ահա այս բանաքաղության մեջ, այն հարցին, թե «եւ ո՞ր են գրէրն, զոր պարգեւեաց Աստուած» տրված է այսպիսի պատասխան. «Այս են Զ (6) գիր ձայնաւոր եւ ԺԳ (13)՝ անձայն: Եւ ձայնաւորք են՝ ա, ե, ո, ի, ը, ւ: Եւ անձայնք են այս՝ բ, գ, ժ, ծ, ձ, չ, ջ, վ, ց, շ, ճ, յ, փ, ընդամենն ԺԹ (19): Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ» (ձեռ. N 7117, էջ 123ա):

7. «Թիւ առուրց կաթողիկոսաց»

Հայ կաթողիկոսների ամբողջական ցանկ է՝ Գրիգոր Լուսավորչից մինչև Գրիգոր Մուսաբեկյան («ի սորա աւուրքն աջն դարձաւ ի գաւառ իւր»):

Մեզ ծանոթ միակ ընդօրինակությունը գտնվում է նույն N 7117 ձեռագրի առաջին մասում (էջ 93ա-93բ): Որ ցանկն իրոք պատկանում է Թովմա Մեծոփեցուն, պարզվում է այն ընդհանուր տարիներից, մանավանդ գրեթե բառացի համընկնումներից, որ կան այս փոքրիկ բնագրի և Թովմայի «Պատմության» ու Յիշատակարանի միջև: Ահա մի քանի օրինակներ:

Թիւ առուրց կաթողիկոսաց	«Պատմութիւն» կամ «Յիշատակարան»
— Կոստանդին Պռնկործն՝ հերձուածող Գ (3). Սա եղեւ առաջին ի Սիս աղթարմա: *— Գրիգոր Անաւարզեցի ԺԳ (13). Սա եղեւ երկարեակ եւ արար մեծամեծ վնաս (ձեռ. N 7117, էջ 93ա)*	*Առաջին պատճառ, զի ապականեցաւ կարգ եւ կանոնք սուրբ հարցն մերոց ի Կիլիկեցւոց առաջնորդացն, որ յամենայ եղեւ կաթողիկոսութիւնն նոցա ձեռն ամ սահմանեալ ի յառաջին թագաւորաց Կիլիկեցւոց. մանաւանդ զի միացեալ էր խմոր աղթարմութեանն Կոստանդեայ եւ Գրիգորի Անաւարզեցւոյ. քաղկեդոնական գոլով ... (Յիշատակարան, էջ 55):*
Թէոդորոս (տեղ է թողնված՝ աթոռակալության տարիների քանակը նշելու համար). զսա սպանին ԺԶ տանուտրով ի մեր ժամանակս (ձեռ. N 7117, էջ 93բ)	*Եւ յանցեալ ամին (1292 թ.) զտէր Թէոդորոսն՝ զՍսոյ կաթողիկոսն ԺԶ տանուտէրօք սպան ի նենգութենէ քրիստոնէիցն Սսոյ պիղծ Մելիք Օմարն («Պատմութիւն», էջ 71):*
— Կարապետն կեղեցի (տեղ է թողնված). Յակոբ ...՝ զեղ մահու արբուցին ամս (բերված է 2,5 տող). Գրիգոր Խանձողատն, որ եւ արտաքսեցին եւ հօգով սպանին. ապա Պօղոս յԱյրարատեան գաւառէ զեղ մահու արբուցին, Կոստանդին Թ (9), նոյնպէս եւ ամս դեղ ետուն եւ սպանին (ձեռ. N 7117, էջ 93բ)	*Որ եւ ի ՊԽԱ (= 1392) թուականէն մինչեւ ի մեզ վեց կաթուղիկոս եղին. եւ վեցին դեղ մահու արբուցին եւ ի կենաց ասար հանին («Յիշատակարան», էջ 55)*

Զուգահեռ այս հատվածները (մանավանդ սրանցից վերջինը) վստահելի հիմք են տալիս եզրակացնելու, որ ժամանակագրական այս ցանկը, իրոք, Թովմա Մեծոփեցու գրչի արգասիքներից է:

Բ. ՆԱՄԱԿԱՆԻ

Թովմա Մեծոփեցու աշակերտ ու կենսագիր Կիրակոս վարդապետը, իր «Պատմութիւն մեծի րաբունապետին Թումայի» վարքագրության մեջ հայտնում է, որ Մեծոփեցին «Աշխատէր հանապազ ի թուղթ գրելն վասն աղքատաց եւ գերեաց, որ մին տարին Գ (3) դաստա թուղթ վճարել էր ի նամակ գրելն»[83]: Ցավոք այդ կարգի նրա նամակներից չունենք գեթ մեկ օրինակ: Սակայն, բարեբախտաբար, պահպանվել են ժամանակակից անվանի եկեղեցական գործիչների ու մատենագիրների, ինչպես նաև Թովմա Մեծոփեցու շուրջ 3 տասնյակ թղթերը, որոնք ի մի են հավաքվել ու լույս ընծայվել Մեծոփեցու իսկ կողմից, որպես օրինակելի նամականներ՝

---

[83] Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 6:

ստորև բերվող խորագրի տակ:

8. «Թուղթ նամակի վարդապետաց եկեղեցւոյ, զոր ի կեանս իմ գտի ես՝ պիտակ անուն վարդապետս Թովմա՝ աստ ճաւաճնցի վանս գրոց աշակերտի. աղաչեմ յիշել ի տէր»

Միակ ձեռագիրը, որ իր էջերում պահպանել է հույժ կարևոր այս նամականին՝ Վենետիկի Մխիթարյանց Մատենադարանի N 245 (1091) ձեռագիրն է, մանրամասնորեն նկարագրված Բ. Սարգիսյանի «Մայր ցուցակի» Բ հատորում (Զ. Ոսկեփորիկ)[84]: Այդ նամակներից որոշ քաղվածքներ հրատարակել են Մ. Չամչյանն[85] ու Ս. Էփրիկյանը[86]:

Ըստ Բ. Սարգիսյանի նկարագրության՝ նամակների հեղինակներն են Գրիգոր Տաթևացին, Հակոբ Գ. կաթողիկոսը, Գևորգ Երզնկացին, Յովհան Կոլոտիկ Հերմոնեցին, Գրիգոր Ծերենց Խլաթեցին, Հակոբ Սաղմոսավանեցին, Հովհաննես Բաղիշեցին, Հովհաննես Մեծոփեցին, Ղազար, Սիմեոն, Առոմ վարդապետները, ինքը՝ Թովմա Մեծոփեցին և այլք: Կան բազմաթիվ նամակներ ու օրհնության գրեր, որոնց հեղինակները չեն նշված[87]:

Թղթերից մի քանիսը վերաբերում են հայոց կաթողիկոսների բանադրանքի տակ գտնվող Աղթամարի կաթողիկոսությանը դարավոր այդ բանադրանքից ազատելու ուղղությամբ Գրիգոր Տաթևացու ձեռնարկած քայլերին: Ուշագրավ է հատկապես Տաթևացու շրջաբերական մի թուղթը՝ ուղղված Արճեշի, Բերկրիի և Արծկեի հայերին, որով հայտնում է, թե վարդապետական գավազան է շնորհում սիրելի և ձեռնասուն աշակերտ Թովմա Մեծոփեցուն և լիազորում է նրան շարունակել իր սկսած գործը՝ Աղթամարի ապստամբ կաթողիկոսներին հնազանդեցնելու և Վասպուրականի թեմը բանադրանքից ազատելու ուղղությամբ:

Նա գրում է. «Վասն ապստամբութեան առաջնորդաց սուտանուն կաթողիկոսաց, որ ի ծովն Աղթամարայ՝ յոյժ տրտում կարի եւ խնդրէի ես

84 Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, 1924, էջ 669-670:

85 Մ. Չամչեան, «Պատմութիւն հայոց», Գ հ., էջ 456-457:

86 «Բազմավէպ», 1898, մարտ, էջ 128-135:

87 Նամակների ժողովածուն գրավում է Վենետիկի N 245 ձեռագրի 198ա-239ա, նաև 253բ, 256ա-258բ են էջերը:

գտանել իրացն, զի մի բազմութիւն անմեղ քրիստոնէիցդ ի ներքոյ բանադրանացն մնասցեն: Եւ ինչ էի յայս աղէտ տարակուսի, հրաման ընկալայ ի տեսլեան, եթէ զոր ինչ խորհեալ ես արա՛ փութապէս: Եւ իմ ձեռն արկեալ գրով արձանացուցի, բայց բարիատեացն սատանայ՝ յարեալ խռովմունս յընտանեաց մերոց եւ յաշակերտաց, նաեւ ի բան իսկ բնաւորաց: Եւ իմ յոյժ տրտում գոլով, զի ոչ եղեւ զրա մերումս բանի, որպէս եւ ձեզ է յայտնի, այլ ձեռնտուութեամբ հոգւոյն՝ զսիրելի եւ զձեռնասուն աշակերտդ մեր՝ զվարդապետդ Թովմա, թղթով եւ բանիւ առ ձեզ կոչեցի, եւ յոյժ հանդիսիւ եւ բազում եպիսկոպոսաւք եւ բազում վարդապետաւք եւ քահանայիւք, տուաք դմա զաւազան իշխանութեան վարդապետական ...

Կարգեալ կացուցի զդա մեզ երեսփոխան ի վերայ վարդապետաց, եպիսկոպոսաց, քահանայից եւ ամենայն ժողովրդոց, ըստ այնմ եթէ փոխանակ հարց որդիք եղիցին. եւ ետու դմա հրաման եւ իշխանութիւն՝ դաս տալ, աշակերտ կարգել եւ զպատէնս Աստուծոյ անդր ուսուցանել, եւ զթերակատար գործն մեր ի գլուխ եւ յաւարտ հասուցանել, ոչ հնազանդիլ Աղթամարայ եւ ոչ տալ թոյլ այլոց ի հնազանդութիւն նոցին ...»[88]:

Թովմա Մեծոփեցու ջանքերով ստեղծված նամակների այս ժողովածուն, անտարակույս, արժանի է տպագրության, որպես 15-րդ դարասկզբի մեծարժեք և ուշագրավ սկզբնաղբյուր:

Գ. ԿԱՆՈՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Հայ պատմագրության մեջ վաղուց ի վեր պարզված իրողություն է, որ ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը Էջմիածին փոխադրելու և Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելու գործի հիմնական կազմակերպիչն ու իրագործողը Թովմա Մեծոփեցին է եղել: Նրա ղեկավար դերի մասին անսպառ վկայություններ են պահպանվել ինչպես նրա «Յիշատակարանի» մեջ, այնպես էլ ժամանակակիցների մի շարք գրություններում:

88 «Բազմավէպ», 1898, էջ 130-131, հմմ. նաև Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, էջ 1401-1402:

Այսպես, օրինակ, 1442 թվականին Կարապետ գրիչը, Վանում օրինակած Յայսմաւուրքի հիշատակարանում, գրել է. «Ի յայսմ ամի եղեւ ժողով եպիսկոպոսաց եւ վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց էր գլուխ մեծ րաբունապետն Թովմայ եւ Յովհաննէս վարդապետն. եւ եդին զտէր Կիրակոսն յէջմիածին կաթողիկոս ամենայն հայոց»[89]:

Մի տարի անց՝ 1443 թ. Բաղեշում օրինակած Յայսմաւուրքի հիշատակարանում նույն դեպքերին անդրադարձել է նաև Յովհաննես գրիչը: «Հաստատեցին, — գրում է նա, — զաթոռ Լուսաւորչին յէջմիածինն և եդին կաթողիկոս տէր Կիրակոսն՝ Խլոնց կոչեցեալ, այր ցանկալի, նման մեծ հայրապետացն, ձեռամբ մեծ րաբունապետին Թումա հոնտորի եւ Յովանիսի մեծ րաբունապետսի»[90] և այլն:

Կիրակոս Վիրապեցին դառնալով հայոց կաթողիկոս՝ անմիջապես բանադրանքից ազատում է Աղթամարի կաթողիկոսությանը, ուստի և ողջ Վասպուրականի քրիստոնյա բնակչությանը: Քիչ առաջ տեսանք, որ տասնամյակներ շարունակ ակնկալվող այս գործի իրականացումը Գր. Տաթևացին իր կյանքի վերջին օրերին դրել էր Թովմա Մեծոփեցու վրա, և, անտարակույս, Թովմայի խորհրդով ու թելադրությամբ էր շարժվում ու գործում վասպուրականցիների խմբակցության դրածո նորընտիր կաթողիկոսը:

Թովմայի կենսագիրը չի թաքցնում այդ իրողությունը, նա ուղղակի գրում է. «Եւ տէր Կիրակոս կաթողիկոս զամենայն անէծքս եհարձ ի բանադրողաց եւ ի բանադրելոցն ...: Եւ յայս որ պատճառ եւ միջնորդ եւ աւգնական ազատութեան և ուրհնութեան լուսաւոր հոգին եղեւ՝ մեծ վարդապետն Թովմա, որ իբրեւ զարեգակն լուսաւորէր զազգս Հայոց»[91]:

Պարզ է, ասված, այդ բոլորի «պատճառը, միջնորդն և օգնականը» Թովմա Մեծոփեցին է եղել:

Իսկ ինչպե՞ս է կատարել Մեծոփեցին «պատճառի, միջնորդի և օգնականի» իր դերը. կարծում ենք, որ այդ հարցի պատասխանը կարելի է գտնել Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի շրջաբերական կոնդակի և

[89] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 536:
[90] Նույն տեղում, էջ 546:
[91] Պատմութիւն մեծ րաբունապետին Թումայի (տե՛ս Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 9):

կանոնական խրատների ուշադիր քննությամբ: Ուշագրավ այդ նյութերը պահպանվել են Մաշտոցի անվան Մատենադարանի N 4669 ձեռագրում սխալաշատ ու թերի ընդօրինակությամբ: Կան նաև Երուսաղեմում և Վենետիկում պահվող ընդօրինակություններ[92]:

Կիրակոս կաթողիկոսի կոնդակի պատճենին Մատենադարանի N 4669 ձեռագրում նախորդում է մի ծանոթագրություն, ուր ասված է. «Դարձեալ, գիծի բանադրանացն զոր յիշեաց եւ մեղադրեաց երից երանեալ եւ Երկրորդ լուսաւորիչն. այլ եւ նորոգիչ հայոց ազգիս սուրբն Գրիգոր Տաթեւացին. յորոյ (ձեռագրում՝ յոր եւ՞) խրատ, զղջացեալք յետոյ ամենք աղթամարցիք եւ հնազանդեալ սուրբ աթոռոյն էջմիածնայ ընկալան ուրհնութիւն ի Կիրակոսէ կաթողիկոսէն հայոց, որ է այս»: Այնուհետև ընդօրինակված է կոնդակը:

Կոնդակով աղթամարցիներն ազատվում են հայ կաթողիկոսների դարավոր բանադրանքից ու նզովքից և օրհնության արժանանում նորընտիր կաթողիկոսից: Այստեղ բացատրվում է նաև թե «Զի՞նչ է պատճառ որ [ի] էջմիածին կաթողիկոս[93] հաստատեցաւ»: Ուշագրավ է այդ հարցի ընդարձակ պատասխանի ստորև բերվող հատվածը: «Եւ Հայոց ազգին առաջնորդք փոխանակեցին զսէրն Աստուծոյ ընդ ոսկւոյ եւ ընդ արծաթոյ, եւ սկսան արժանաւորաց վաճառով տալ զիշխանութիւն, զօրհնութիւն եւ զշնորհս Աստուծոյ եւ անարժանիցն կաշառօք ոսկւոյ եւ արծաթոյ եւ այնու կցորդ լինին մեղաց եւ օտարաց բաժ առաքելոյ, վասն այսորիկ նոր կաթողիկոս եղաւ ի սուրբ աթոռս էջմիածնի, որ այս սիմոնական աղանդս եւ չար սովորութիւնս խափանեսցի եւ նորոգեսցի պատուիրանն Աստուծոյ, զոր առաքեալքն կարգեցին մեզ եւ եդին հաստատութեամբ»[94]:

Նորընտիր կաթողիկոսը պահանջում է հրաժարվել սիմոնականությունից և հետևել աստվածադիր օրենքներին, որ պատվիրում են՝ «Զրի առէք եւ

[92] Երուսաղեմի N 182 ձեռագրից (էջ 152-157) քաղելով այդ նյութերը՝ հրատարակել է Բաբգէն Կիւլէսէրեանը իր «Պատմ. կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատության մեջ, 1939, Անթիլիաս (էջ 1403-1418): Այստեղ ևս կան մի շարք աղավաղումներ: Կիրակոսի կոնդակից մի փոքր հատված հրատարակել է նաև Մ. Չամչեանն իր «Պատմութեան» Գ հատորում (էջ 488):
[93] Երուսաղեմի ձեռագրում «կաթողիկոսի» փոխարեն՝ «սուրբ» (*):
[94] Բաբգէն աթոռակից կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 1404:

ձրի տուք»: «Ընդ նորոգել սուրբ էջմիածինս, - գրված է կոնդակում, - աղաչեմ զամենեսեանդ, նորոգեցէք զաստուածադիր օրէնս, որ կա գրեալ ի սրբոց Առաքելոց կանոնս, եւ մի՛ լինիք կցորդ հակառակացն Աստուծոյ վասն ագահութեանն»[95]:

Այս տողերը կարդալիս դժվար չէ վերհիշել Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը», մանավանդ նրա այն մասը, որ պատասխան է տրվում նույն հարցին. «Եւ թէ վասն զի՞նչ պատճառի եղեալ եղեւ կաթողիկոս ի Վաղարշապատ քաղաքի ի սուրբն էջմիածին ...»[96]:

Ուշագրավ է հատկապես պատասխանի 6-րդ կետը. «Վեցերորդ, զի սիմոնական արարին զամենայն ազգս Հայոց եւ նախարարքն ամենայն ազգաց, զի արծաթով տային զշնորհս Հոգւոյն սրբոյ, եւ զայս օրէնք գիտէին: Յորմէ ուսոյց Տէրն առաքելոյն. Զրի առէք եւ ձրի՛ տուք ...» և այլն[97]:

Կիրակոս կաթողիկոսի կոնդակի և «Խրատ կանոնականի» ու Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանի» և այլ գրվածքների միջև կան շատ ուշագրավ ընդհանրություններ: Ծանոթանանք դրանցից ևս մեկին՝ փոխադարձաբար առնչվող հատվածների զուգահեռ համադրությամբ:

Յիշատակարան

Զի կատարեցաւ մարգարէութիւն եւ տեսիլ առն Աստուծոյ սրբոյն Սահակայ Պարթեւի, որ ետես ի Վաղարշապատ քաղաքի, զի բեմ չորեքկուսի կայր հաստատեալ ամպանման. եւ բարձրութիւն նորա հասանէր մինչեւ յերկինս. եւ ոսկի սկուտեղ մի ի վերայ բեմին եւ մագաղաթ թղաչափ կայր ի մէջ սկտեղին .... եւ ես էի ի

Կոնդակ

Եւ հայրապետն մեր սուրբն եւ Սահակ աւաղ հինգշաբթին տեսիլ ետես ի յէջմիածինս զքահանայութիւնս մեր գրեալ ի մագաղաթի եւ եղեալ ի վերայ արծաթի սկուտեղք եւ զառաջնոց սրբոցն, որք զպատուիրանն Աստուծոյ պահեցին անապական. ոսկեղէն ետես գրեալ զարմանալի տեսլեամբ, որ ցուցանէ զանապական պսակն կենացն յափ-

զարմացման եւ կայի հիացեալ վասն տեսլեանն, եւ առաքեցաւ այր մի յերկնից լուսապայծառ, եւ զօրացոյց զիս եւ ասէ: Մի երկնչիր, եւ ասէ ցիս՝ Արիացիր եւ ի միտ առ, զոր ասեմ քեզ ... եւ տեսրն թղաչափ եօթն տող ոսկին լուսաւորիչն Գրիգորէ, մինչեւ ի սուրբն Սահակ եւ եղծեալ եւ ջնջեալ գիրն, որ ոչ երեւէր հետն, կաթուղիկոսունքն էին, որ նստան յաթոռ սուրբ Լուսաւորչին յետ Սահակայ. եղծեալք են եւ ջնջեալք ի դպրութենէ կենաց, զի անիծիւք եւ կապանօք զաշխարհս լցրին ... եւ զի ազգս Հայոց բոլորովին ի ջնջեալ եւ ի յեղծեալ գիրն մտաւ յայն օրէն ի յետ, որ կաթողիկոսութիւնն ի յէջմիածնէն ելաւ, այժմ ողորմեցաւ արարիչն Աստուած եւ վերստին հաստատեաց զաթոռ Պարթեւին Գրիգորի եւ սքանչելի հրաշիւք յայտնեաց զխաչակիրսն եւ զխարազնազգեաց ճգնաւորն տէր Կիրակոս կաթողիկոսն Վիրապեցի. եւ այս էր տող եւ կէս ոսկին. որ հետի էր յեղծեալ եւ ի ջնջեալ գրէն. եւ գրեալ տող մի ոսկի եւ կէսն կարմիր. զի

տենից, եւ յետոյ հետի յոսկի գրէն այլ գիր մրով գրեալ՝ տող ու կէս ոսկի եւ տող ու կէս կարմիր՝ գեղեցկազարդ: Եւ սուրբն Սահակ խնդրեաց յԱստուծոյ գիտել զխորհուրդն տեսլեան, որ յայտնեցաւ ի հոգւոյն սրբոյ. եւ ահա հրեշտակ տեսան եկաց առ նա եւ ասէ. Ահա ցուցար քեզ յԱստուծոյ, որ ինչ լինելոց է վասն քահանայութեան ի կատարած աշխարհի: Եւ ասէ. Գիրն ոսկետեսակ զոր տեսէր՝ զսքանչելատեսիլ քահանայապետքն են, որք նստին յաթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, եւ զի երեւեցաւ ի միջոյ կողման մագաղաթի, հետի յոսկեգիր կարգացն կարէր ինչ խանգարեալ եւ ջնջեալ՝ գիտեա, զի նստելոց են քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, որք ... լինին ձեռնադրեալք յերկրաւոր պատիւն եւ ըստ փառաց աշխարհի ձգտին յանդգնութեամբ, որք են արծաթասէրք առաւել քան թէ աստուածասէրք. եւ վասն զի խոտան է նոցա քահանայութիւնն, ըստ հաճոյիցն Աստուծոյ ջնջեալք են նոքա ի դպրութենէ երկնից բարութեանց,

[95] Նույն տեղում, էջ 1405 հմմ. նաև ձեռ. N 4669, էջ 206բ:
[96] Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892, էջ 54-55:
[97] Նույն տեղում, էջ 56:

[98] Նույն տեղում, էջ 61:
[99] Բարգէն արքեպիսկոպոս կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 1405-1406: Մատենադարան, ձեռ. N 4669, էջ 206բ, 203ա (կոնդակի պատճենի այս երկու ընդօրինակությունները բաղդատել ենք և մեկի օգնությամբ շտկել մյուսի աղճատումները):

յէջմիածին կաթողիկոս նստաւ ...[98]	տալով նոցա դատաստան գեհենին այրմամբ գանձանց եւ ժողովրդոցն կորստեան սակի[99]:

Այս ընդհանրություններն ու փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Կիրակոս կաթողիկոս Վիրապեցու շրջաբերական կոնդակն ու դրան առընթեր գտնվող կանոնական խրատները շարադրել է կամացուրկ կաթողիկոսի գրավոր խրատատու Թովմա Մեծոփեցին: Ըստ այդմ, Մեծոփեցու մատենագիտության ցանկում, 9 և 10 համարների տակ տեղ ենք տալիս այդ գործերին:

9. Կոնդակ կամ Գիր օրհնութեան Կիրակոսի կաթողիկոսի Վիրապեցւոյ (սկ. «Անուամբ անեղին Աստուծոյ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ եւ՝ Կիրակոս ծառայ ծառայիցն Աստուծոյ ...) ...

10. Խրատ կանոնական ընդհանուր ամենայն հաւատացելոց ի Քրիստոս ասացեալ Կիրակոսի սուրբ էջմիածնայ կաթողիկոսի

Կանոնական այս խրատը բաղկացած է 22 կետերից և արժեքավոր տվյալներ է պարունակում Հայ եկեղեցու բարոյական վիճակի, ժամանակի կենցաղի ու բարքերի մասին:

Ծանոթանանք «Խրատ կանոնականի» մի քանի կետերին.

- «Մի՛ որ իշխեսցէ յայտնեալ աստուածավաճառութիւն առնել, այսինքն զժեռոնն կամ զքահանայութիւն վաճառել, զի չկայ հրաման յԱստուծոյ:

Մի՛ որ իշխեսցէ զկաթողիկոսութիւն ի զապաւլ համնել, քանզի զուրացութիւն չա՛ր է եւ մեծ մեղք:

Մի՛ որ իշխեսցէ արծաթով ձեռնադրութիւն առնել, կամ եպիսկոպոս կամ երէց օրհնել ...

Մի՛ որ իշխեսցէ զկանոն օրինացն Աստուծոյ թիւրել կամ զդատաստան վասն կաշառոյ ... կաթողիկոս, եպիսկոպոս կամ վարդապետ, կրօնաւոր կամ քահանայ, կամ աշխարհական եւ միակեց ոչ ունին հրաման Աստուծոյ եւ ի մէնջ, որ մատակ ձի կամ ջորի կամ էշ պահեսցին բնական բստ հրամանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. եւ մի՛ պճնեալ հանդերձիւ բստ հրամանի սրբոց կանոնացն, մի՛ ագանել քէմխայ, կամ խոկեսատաթ, կամ մուրապաղ, կամ թոթայ, կամ զօֆ, կամ կտաւիս ջուբայ շապիք, կամ շապ/ր/նկեր, կամ եւ մի [եւս] չուխայ կամ մուշտակ ածել ի վերայ թեւի, զի

սրբա (իմա՝ Գր. Խլաթեցու) Տէր մեզ ողորմեսցի խնդրողացս բանիցս այս երկու Կարապետի ի Թումայ հռետորէ, որ եւ զայս գիծս շարագրեաց, որ և նորին յիշատակն օրհնութեամբ եղիցի»[102]:

Ավելացնենք մեր կողմից, որ Մաշտոցի անվան Մատենադարանի N 5313 ձեռագրի մեջ ևս, այդ նույն վարքի վերջում ասվում է. «Զայս ճառս մեծ վարժապետն եւ քաջ հռետորն է արարեր՝ Թումա վարդապետն»[103]: Սակայն ինչպես արձանագրել է Հ. Անասյանը[104] և հանգամանորեն պարզել Մատենադարանի գիտ. աշխատող Ա. Մաթևոսյանը[105], այս Թումա վարդապետը Մեծոփեցին չէ, այլ Բաղիշեցին՝ միաբան Բաղեշի Գամաց ս. Աստուածածնին վանքի:

Ղ. Ալիշանը ևս Թովմա Մեծոփեցուն վարքագիր է համարում. «Գրած է և իր ատեն հանդիպած քանի մի նահատակած պատմութիւնք, ինչպես Ստեփաննոս վարդապետի և Պետրոս քահանայի՝ ուրացողաց և զղջացելոց (1424)՝ յետինս երկար ճառի ոճով հառաջաբանութեամբ»[106]:

Ստեփաննոս վարդապետ և Պետրոս քահանայի այս վկայաբանությունը սակայն, որ տպագրված է «Հայոց նոր վկաները» արժեքավոր ժողովածուի մեջ, անտարակույս պատկանում է Առաքել Բաղիշեցու և ոչ Թովմայի գրչին: Վկայաբանության վերջում շատ ձեռագրեր ունեն այսպիսի հիշատակագրություն. «Արդ՝ որք կարդայք յիշեցէք յաղօթս ձեր զԱռաքել վարդապետն՝ զյարմարող ճառիս եւ զծնօղսն իմ»[107]:

Այսպիսով, չեն հաստատվում այս հասկացումները, բայց դրանից բնավ չի հետևում, թե Թովմա Մեծոփեցին վարքաբանական գրվածքների հեղինակ չէ:

Մատենադարանի վերը վկայակոչված N 5313 ձեռագիր Հայսմավուրքի Վարդան գրիչը տվյալ ունի այն մասին, որ «Նահատակու-

[102] Նույն տեղում:

[103] Մատենադարան, ձեռ. N 5313 (ժամանակ՝ 1465 թ.), էջ 337ա:

[104] Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 325-327 (Թովմա N 110):

[105] Ա. Մաթևոսյանը պատրաստում է ընդարձակ ուսումնասիրություն Գր. Խլաթեցու մասին: [Աշխատությունն այլևս հրատարակված է 2000 թ.] - Խմբ.:

[106] Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 125:

[107] Հայոց նոր վկաները, աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 245-260:

թիւն նոր վկային Յոհանու, որ մականուն Խոյլու ասի» խորագրով ուշագրավ վկայաբանության հեղինակն է ոմն Թովմա վարդապետ («եւ արարողի այս սակաւ բանի Թովմայ հեզահոգի աստուածաբան վարդապետին, ամէն»[108]):

Այս վկայաբանությունը հրատարակված է «Հայոց նոր վկաները» ժողովածուի մեջ[109], բայց N 5313 ձեռագրի բնագիրը, տարբերվում է տպագրից լեզվական ու ոճական հատկանիշներով (ձեռագրերում կան ժողովրդական բառ ու բանի անսպառ հետքեր, մինչդեռ տպագիրը զերծ է դրանցից):

Արդ, մենք կարծում ենք, որ այս վկայաբանության հեղինակ Թովմա «հեզահոգի աստուածաբան վարդապետը» հենց Թովմա Մեծոփեցին է:

Ի հիմնավորումն մեր կարծիքի մեջ բերենք լեզվական որոշ ընդհանրություններ Թովմա Մեծոփեցու այլ աշխատություններից և այս վկայաբանությունից: Այսպես, վկայաբանության հեղինակը գրում է. «Իսկ բանսարկուն սատանայ, որ ի սկզբանէ մարդասպանն է եւ ուսուցիչ չարեաց, արկեալ նախանձ եւ ատելութիւն ի սիրտ աւձարարոյ եւ նենգամիտ ազգին Մարաց»[110]:

Թ. Մեծոփեցին ևս իր «Պատմության» մեջ, քրդերի մասին խոսելիս, նրանց «ազգ Մարաց»[111] է անվանում ու կոչում «նենգամիտ». օրինակ - «նենգաւոր ազգն Մարաց», «եւ ի սոյն աւուրս եկին նենգամիտ եւ անօրէն Քուրդն Բաղիշոյ»[112] և այլն: Վկայաբանության հեղինակը գրում է.«Յաւուր միում կոչեցեալ զնա առ ինքն ի Կայն (որդին ամիրայ) եւ բազայս անուղայս կամեցաւ զնել ի վերայ ծառային Քրիստոսի»[113]: «Բազայս անուղայս»-ը (այն էլ մեկ «ղ»-ով) Թովմա Մեծոփեցու սիրած և նրա կողմից բազմիցս կիրառված բառակապակցությունն է. նա իր «Յիշատակարանում», օրինակ, գրում է. «եւ բազայս անուղայս (տպված է

[108] Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 583բ:

[109] «Հայոց նոր վկաները», էջ 291:

[110] Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 581բ:

[111] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ, էջ 43-44, «Հայոց նոր վկաները», էջ 281:

[112] Նույն տեղում, էջ 85:

[113] Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 581բ:

անուգղայս) կամէին դնել սուրբ ճգնաւորին» կամ «բաղայս անուգայս դնելով ի վերայ նորին»[114] և այլն:

Այս ընդհանրությունները ուշագրավ են, բայց ոչ ամենազոր, այնուամենայնիվ կարծում ենք, թե առայժմ կարելի է Թովմա Մեծոփեցուն վերագրել խնդրո առարկա վկայաբանությունը, մինչև որ հրապարակ կբերվեն նոր փաստեր ի նպաստ կամ հակառակ մեր այս հավանական ենթադրության: Այսպիսով, Թ. Մեծոփեցու մատենագրական ցանկում տեղ ենք տալիս նաև վկայաբանական արժեքավոր մի գրվածքի:

11. Նահատակութիւն նոր վկային Յոհանու որ մականուն Խոյլու ասի (*«Պատուական եւ պանծալի վկայս այս Յոհանէս էր ի Բզնունեաց գաւառէն ...)*[115]:

Այս վկայաբանությունը հյուսված է 1437 թվականին Խլաթ քաղաքում տեղի ունեցած իրական դեպքերի ճշմարտացի նկարագրությամբ: Հերոսը 20-ամյա մի պատանի է, որ լինելով «անեալ եւ վարժեալ ի յարուեստ երաժշտական գուսանական երգոց» մեծ ժողովրդականություն էր վայելում, մանավանդ՝ «սիրեցեալ եղեւ յաչս ամիրապետի քաղաքին Սեւդին կոչեցեալ»: Այդ քաղաքում կար նաև մահմեդական «կին մի՝ դաւալ եւ երգիչ»: Սրանք Սևդին ամիրապետի պալատում հանդես էին գալիս միասին «առ ի յերգել զարուեստն ունայն»: Ոմանք չարախոսում են Յովհաննեսին Ամիրապետի որդու առաջ, մեղադրում նրան իր արվեստակից երգչուհու հետ մերձավոր կապեր ունենալու մեջ: Նրան պարտադրում են կա՛մ ընդունել մահմեդականություն, կա՛մ մեռնել: Հովհաննեսը սկզբից տեղի է տալիս և համաձայնում ընդունել մահմեդականություն. հաջորդ օրը նրան նստեցնում են ձիու վրա՝ «շուրջ ածին ի քաղաքին եւ տաւն ուրախութեան մեծ կատարէին»: Բայց հենց նույն օրը նա զղջում է իր կատարածի համար. «զղջացեալ փոշիմանեցաւ, կամէր մեռանել վասն անուանն Քրիստոսի»:

Վկայաբանության շարունակությունը նվիրված է Հովհաննեսի հոգեկան տվայտանքներին, նրա հաստատ որոշմանը՝ զոհվել իր հավատի համար, նրա կրած չարչարանքների ու մահվան սրտաճմլիկ նկարագրությանը. «քարիւ եւ փայտիւ հարեալ ջարդեցին զամենայն մարմին նորա, եւ

[114] Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, էջ 8, 77:

[115] Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 581բ-583բ, «Հայոց նոր վկաները», էջ 284-291:

նա քաղցրութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած»[116]:

Ե. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

Մատենադարանի N 7117 ձեռագիրը Թովմա Մեծոփեցու քերականագիտական-լեզվաբանական աշխատությունների մի շտեմարան է: Ստորև թվարկում ենք այդ ձեռագրում ընդօրինակած աշխատությունները՝ հարևանցիորեն բացահայտելով նրանց բովանդակությունը:

12. Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման. արարեալ Թովմա վարժապետի ի խնդրոյ աշակերտաց իւրոց

(Պարտ է գիտել ուսումնասիրաց եւ բանասիրաց անձանց, զի գիրն անմարմին է ...)[117]:

Այս մի դասագիրք է: Հեղինակն սկզբից հայտնում է, որ գիրը աստվածային պարգև է՝ «գիր ի վերոյ գոլով քան զամենայն պարգեւս երկրաւորս», այնուհետև համառոտակի խոսում է Ենովսի ու Ենովքի (որոնք «զգործ և զպատահումն ժամանակին գրեցին ի սիւնն պղնձի եւ խեցի»), ապա և Մովսեսին Աստծո կողմից պարգևած տախտակների մասին («եւ ի գրոյն յայնմանէ վարժեցաւ հինն Իսրայէլ»): Շատ ավելի ոգևորությամբ է արտահայտվում Հայոց գրի մասին. «եւ յետոյ ի վերջին ժամանակի, շնորհօք սուրբ հոգոյն եւ ողորմութեամբ նորին, տուաւ գիր սուրբ հօրն մերոյ եւ վարժապետի Մեսրովպայ ճգնաւորի ... ի լուսաւորութիւն եւ ի վարժումն յաբեթականս տոհմիս»:

Այսպիսի նախաբանից հետո բերում է Հայոց այբուբենը, սկզբից տառերի սովորական հերթաշարով՝ ԱԲԳԴ ..., ապա 9 տարբեր դասակարգումներով.

2. բա, դգ, զե ..., 3. Աբ, Բփ, Գւ ..., 4. Քփ, ւց, բտ ..., 5. Ախչ, բծպ ..., 6. Աէխ, ճշտ ..., 7. Աժ, բի, գլ ..., 8. Առ, բս, գվ ..., 9. Ժճ, ճռ, խմ ..., 10. Աժ, ճռ, բի ...[118]:

[116] Մատենադարան, ձեռ. N 5313, էջ 583ա:

[117] Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 106ա-110բ:

[118] Հայերենի այբուբենի տառատեսակ այս շարերի բովանդակության ու նշանակության մասին տե՛ս Մամիկոն Գասպարյան, Նյութեր հայ այբբենարանի պատ-

Սրանց հաջորդում է հայկական գրերի անունների ցանկը՝ Այբ, Բեն, Գիմ ..., իսկ ապա հայկական գրերի թվական նշանակությունների ցանկը՝ Այբն՝ մին, Բենն՝ երկու ...: «Վասն թուոյ տասին, որ ծածկեալ կայ ի սմա» խորագրի տակ՝ տառերին տրվում են ինչ-որ ծածուկ թվական արժեքներ: Այբի դիմաց տրված է ՔՋԻԹ (9729) թիվը, Բենի դիմաց՝ ՔԸ (9008) և այլն: Մ. Գասպարյանը[119] և Հ. Անասյանը[120] այս գաղտագիրքն ավարտված են համարում ձեռագրի 109ա էջով, որ ճիշտ չէ: Հայկական այբուբենի վերը թվարկված տարատեսակ շարքերը պարունակող հատվածներին կից, ձեռագրի ընդերկայնական լուսանցքների վրա գրված են համարական թվեր՝ ա-ից ժգ. հերթական ԺԴ, ԺԵ և ԺԶ թվերը հատկացված են ձեռագրի 109բ-110բ էջերին ընդօրինակված եբրայական, հունական և արաբական այբուբեններին վերաբերող հատվածներին, ուստի 109բ-110բ էջերի նյութը նույնպես ներառված է գաղտագրքի մեջ՝ որպես նրա անմիջական շարունակություն: Ահա այստեղ՝ «Լուծումն գրոյն եբրայեցոց գրեալ մատամբն Աստուծոյ, որ տուաւ Մովսէսի» ենթախորագրի տակ, տրվում են եբրայական տառերի անունները և նրանց իմաստները («Ալիֆ-ուսումն նշանագրաց, Բէթ-բնակեա ի դմա ...»), ապա՝ եբրայեցոց տառերի միայն անունները, սրանց հաջորդում են հունական և արաբական գրերի անունները՝ «Անուանք գրոյն յուն[աց]» («Ալֆայ, Վիտայ, Ղամայ ...») և «Անուանք գրոյն Իսմայելացոց» («Ալիֆ, Բէ, Թէ, Սէ ...»): Վերջում գրված են արաբական այբուբենի նշանագրերը:

մույթյան. Ա. 15-րդ դարի մատենագիր և ուսուցիչ Թովմա Մեծոփեցու վերջերս հայտնաբերված այբբենարանը» («Խորհրդային մանկավարժ», N 1, էջ 145-150):

[119] Մ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 147-150:

[120] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 694: Այստեղ հեղինակը հայտնում է իր կարծիքն այն մասին, որ «Թ. Մեծոփեցու այս աշխատությունը շարադրված է, ոչ թե որպես այբբենարան, այլ տառերի տարբեր տեղադրումներով կազմված և միաժամանակ նաև թվաբանական հաշիվների վրա հիմնված գաղափարական մի սիստեմի, որպես բանալի, ինչպես ցույց է տալիս նույն ձեռագրի մինչև էջ 122ա գտնվող նյութերի համեմատությունը» (էջ 694): Արդ, պետք է ասել, որ ինչպես այս աշխատությունը, այնպես էլ N 7117 ձեռագրի մինչև 122ա էջում գտնվող բազմաբովանդակ մյուս նյութերը՝ գաղափարական որևէ սիստեմի հետ բնավ չեն առնչվում:

Այսպանով ավարտվում է Թովմա Մեծոփեցու «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ...» աշխատությունը: Բայց նա ունի նաև իր հավելվածը՝ նույն ձեռագրի 141ա-145ա էջերում: Այստեղ է, որ բերվում են հունական, ասորական, լատինական, վրացական, աղվանական, կոպտական, արաբական (տաճիկ) այբուբեններն իրենց տառանուններով, ինչպես նաև «Գիր հնդկաց» վերտառությամբ՝ արաբական թվերը: Սրանց հաջորդում են հայատառ հունարեն, ասորերեն, պարսկերեն, արաբերեն, քրդերեն, գփչագերեն («արքատան[121] քրիստոնէից») լեզուներով փոքրիկ աղոթքներ:

Ձեռագրի այս բաժինը գիտական մեծ նշանակություն ունի, քանի որ պարունակում է այլ այբուբենների շարքում նաև մեսրոպատառ աղվանից այբուբենը: Խիստ արժեքավոր են նաև հայատառ այլալեզու փոքր բնագրերը, հատկապես քրդերեն «Սուրբ Աստուածը», որ համարվում է այդ լեզվի առաջին գրավոր խոսքը:

Արդ, ինչպես ասացինք՝ մենք կարծում ենք, որ ձեռագրի այդ բաժինը պետք է դիտել որպես Թովմա Մեծոփեցու «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց» աշխատության հավելված:

Անենք հետևյալ նկատառումները:

Իր այդ աշխատության մեջ Մեծոփեցին, իրոք, նպատակ է ունեցել ծանոթություններ տալ տարբեր ազգերի այբուբենների մասին. այդ բանը սկսել է կատարել՝ տալով եբրայական, հունական ու արաբական գրերի անվանակոչումները, ինչպես նաև արաբական այբուբենը: Որ այդ բաժինը շարունակելու մտադրություն է եղել, այդ երևում է այն փաստով, որ 110բ էջի առաջին սյունակը կիսով չափ անգրել է թողնված: Ըստ երևույթին, որոշ ժամանակ սպասել են այլ ազգությունների այբուբենների մասին համապատասխան նյութեր ձեռք բերելու և գրանցելու մտահղությամբ. բայց ձեռք չեն բերել և Թովմա Մեծոփեցին ընդօրինակելու է հանձնել քերականագիտական և լեզվաբանական մանր-մունր նոր բնագրեր, որոնք բոլորն էլ առնչվում են հայկական այբուբենի հետ և, անտարակույս, Թովմա Մեծոփեցու գրչին են պատկանում կամ նրա կողմից են ի մի հավաքված ու խմբագրված: Ստորև տալիս ենք այդ մանր բնագրերի ցանկը խորագրի բացակայության դեպքում խորագիր դարձնելով դրանց սկզբնատողերը:

[121] Հավանաբար պիտի կարդալ «արճայուն» — խմբ.:

Պատշաճ ենք գտնում Թովմայի սույն թվարկվող գործերին տալ մեկ խմբական համար:

13. «Եւ զայս գիտել պարտ է մանկանց եկեղեցոյ ...», *(էջ 110բ-112բ. այս բնագրին անդրադարձել ենք «Պատմագրության» բաժնում)*

– «Պարտ է գիտել, զի այբն առաջին գիր է մերս հայկազնի ...» *(էջ 112բ-117բ)*

– «Վասն որմանութեան գրոյս. *Դարձեալ եւ այս գիտելի է զի ԼԶ գիր է տառս հայկազնի ...» (էջ 117բ-119ա)*

– «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի. *Այբն գծէն ծնանի ...» (էջ 119ա-120ա)*

– «Վասն զովութեան Այբիս. *Այբն թագաւոր է, Բենն առաքեալ է ...» (էջ 120ա-121ա)*

– «Վասն նմանութեան տառեց. *Դարձեալ եւ այս գիտելի է, զի Թ. գիր ... զհրոյ ունի զրնութիւն ...» (էջ 121ա)*

– «Վասն նմանութեան արուականաց. *Դարձեալ բաժանեցաւք զգրեանս՝ արուականաց եւ իգականաց, թաւականաց եւ լերկից ...» (էջ 121ա-122ա)*

– «Ի գրոց մեծ վարժապետին Վարդանայ. *Պարտ է գիտել, զի եժ. ազգ են, որ գպրութիւն գիտեն ...» (էջ 122ա-124ա)*[122]

– «Եւ այս են գլուխք վերծանութեան. *նախերգան, պարզ, շարագրեալ, ժամանակեան ...» (էջ 124ա-128ա)*

– «Վարդապետացն մերոց. *Այլ եւ զայս պարտ է գիտել, զի Աստուածաշունչ գրոց բանք Բժ-ան շաւղաւք ընթանան ...» (էջ 128բ-132ա)*

– «Հոգեւոր հօր մեր մեծին Գրիգոր վարդապետի Մեկնութիւն» *Ամենայն գիր ԼԶ է ... (էջ 132ա-139բ):*

Քերականագիտական-լեզվաբանական մանր այս բնագրերին հաջորդում է եռալեզու (լատիներեն, արաբերեն, հայերեն) փիլիսոփայական մի փոքր բառարան. այն սկսում է 140ա էջից, այսպես. «Սու(պ)ստանցիայ. գոյացութիւն. կալիտաս: քեֆիաթ: որակ ...»: 140բ էջի վրա

[122] Այս հատվածի վերջում է Թ. Մեծոփեցին թողել մեզ արդեն ծանոթ իր հիշատակագրությունը. «Եւ ես նուաստ վարդապետս Թովմա ի Վարդանայ գտայ եւ գրեցի ի գիրս յայս վասն ուսումնականաց օգտի ...» (էջ 124ա):

ևս բնօրինակված է այդ բառարանը, բայց չի ավարտված՝ կիսատ է թողնված: Լուսանցքում նշում է արվում շարունակության մասին. «Ե (5) թուղթ շրջէ և գիտ զայլն»: Եվ իրոք, շրջում ենք 5 թերթ ու ձեռագրի 145բ էջում գտնում բառարանի շարունակությունը («կատադորիաս: ստորասութիւն ...»):

Արդ. ինչո՞ւ է գրիչն այդպես վարվել (անենք ի միջի այլոց, որ այս մասի գրիչը մեր կարծիքով Հովհան Արճիշեցին չէ, այլ ինքը՝ Թովմա Մեծոփեցին): Այս հարցին մենք ունենք մեկ պատասխան: Ձեռագրի այդ հատվածն բնօրինակելիս Թ. Մեծոփեցին ձեռք է բերել որևէ հին ձեռագիր տարբեր ժողովուրդների այբուբեններով, կամ էլ՝ որ քիչ հավանական է, հանդիպել է մարդկանց, որոնք տեղյալ են եղել այդ այբուբեններին: Հին այդ ձեռագրից կամ լեզվագետ մարդկանցից նա լրացրել է թերի թողած «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց» իր աշխատությունը: Այս համոզիչ մեկնաբանությամբ Թովմա Մեծոփեցու դասագրքի հավելվածն է դառնում N 7117 ձեռագրի այն բացառիկ հատվածը, որը պարունակում է աղվանից այբուբենը *և այլ օգտաշատ նյութեր*[123]:

14. Դաւթի հայոց փիլիսոփայի, եւ Փիլիկեայ Հոռոմոց վարդապետի, եւ Հոմրեայ արուեստաւորի, եւ Մովսէսի Քերթաւղի խնդիր փափագման իմաստասիրականիս, իմաստութիւն Ներքողական տառից ըստ այբուբենից ... *(ձեռ. N 7117, էջ 3ա-46ա)*

Խորագրում նշված (Դավիթ, Փիլիկ և այլն) անուններից դատելով այս երկասիրությունը շարահարված պետք է լինի հայ և օտարազգի հեղինակների տարբեր գործերից: Սակայն, երբ խորամուխ ենք լինում երկասիրության բովանդակության մեջ, գալիս ենք այն համոզման, որ այն մի հեղինակի ստեղծագործություն է՝ շարադրված որոշակի ծրագրով:

Սկզբից մեկնվում են Հայոց այբուբենի առաջին 8 նշանագրերը Այբից

[123] Հարկ է, սակայն նշել, որ անտարակույս, տարբեր աղբյուրներ է ձեռքի տակ ունեցել Թ. Մեծոփեցին իր «Յաղագս իմաստութեան» աշխատության բուն մասը եվ հավելվածային այս բաժինը շարադրելիս: Հունական այբուբենի նշանագրերի անունները զգալի չափով տարբեր են 110ա-141ա էջերում. այսպես՝ Ալֆայ, Վիտայ, Ղամայ. Զիտայ, Իտայ, Ֆիտայ, Կապայ. Լաւտայ, Մի, Քսի, Պի, Րօ, Օ, Սիմայ, Տայ, Ի, Փշի, (էջ 110ա) եւ Ալֆայ, Բետա, Գամա, Եղտա, Ի, Գիտա, Հերա, Թետա, Յոտա, Կապա, Ղադ, Միւ, Նիւ, Քսի, Ու, Պի, Ռո, Սիմա, Տաւ, Հի, Փի, Բի, Փու (էջ 141ա):

(«Այբս այս սկիզբն է Առաջին լուսոյ արարչութեանն ...») մինչև ԼԸ («ըթն զը (8) սինս խորանին ...», այնուհետև, 4 ընդարձակ գլուխներով, տրվում են քերթողական բառերի շարքեր. առաջին գլխում, որի հեղինակ է նշված Դավիթ փիլիսոփան, Ա-Թ տառերով, երկրորդ (Փիլիկեայ) գլխում Ժ-Ղ տառերով, երրորդ (Հոմերեայ) գլխում Ճ-Ջ, և վերջին (Մովսէսի Քերթողի) գլխում Ռ-Ք տառերով:

Սրանք եզրափակվում են այսպիսի մի բացատրությամբ. «Այս են քերականութիւնք ԼԶ (36) գրիս ըստ այբուբենիցն տառից. սոքա հասանին ամենայն իմաստութեան եւ քերթողական արհեստից» (ձեռ. N 7117, էջ 35ա):

Սրանց հաջորդում են տարբեր խորագրերով 8 աքրոստիք (Ա-Ք) ազատ չափով բանաստեղծություններ. դրանցից առաջինը սկսվում է այսպես.

Առաւել առաւելութեան խորհուրդ,
Բանիւ հանճարոյ իմաստից
Գրաւեալ ի մեզ շնորհս երկնայինս
Դաւանեցոյս ի լոյս գիտութեան:
Երամ երամոց երգս առեալ պարեն
Զամենախնամ սիրոյն պարփակեալ
Երգեսցուք եւ մեք զերգս հոգեւորս
Ընդ զաւրս վերնոցն անմահից
Թագաւորին անմահի եւ երկնաւորի ...[124]

Կրոնական այս բանաստեղծություններին հաջորդում են Աստվածաշնչում հաճախ գործածվող մի շարք բառ-տերմինների կրոնական մեկնություններ: Վերջում կա վերջաբան — հիշատակարան, այսպիսի բովանդակությամբ. «Կատարեցաւ իմաստութիւնք մեծ եւ փառաւոր վարդապետացն Հայոց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի եւ Մովսէսի Քերթողի եւ Հոմերեայ իմաստասիրի եւ Փիլիկեայ երաժշտապետի, որ ունին յինքեանս զամենայն զանձս աստուածայինս ամբարեալ առ ի պէտս ուսումնասիրաց

[124] Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 35ա-35բ:

անձանցս»[125]:

Այս աշխատությունը (խորագիրը համառոտենք ու կոչենք «Իմաստութիւն քերթողական տառից ըստ այբուբենից») պահպանվել է նաև Մատենադարանի N 529 ձեռագրում (էջ 1ա-41բ), որը Թ. Մեծոփեցու ինքնագիրն է:

Սրա շարունակությամբ ձեռագրում ընդօրինակված են մի քանի մանր բնագրեր («Յաղագս ձայնից, թէ ուստի գտան», «Քերական կոչի եւթնագրեանք», «Յաղագս մղոնաց», «Իմաստութիւն շինեաց իւր տուն ...», «Յաղագս ցոլման աստեղաց»), իսկ ապա՝ գրված է Մեծոփեցու մի հիշատակարանը 1413 թվականից, ուր ասված է «... բազում աշխատութեամբ հաւաքեցի զայս գիրքս, որ ցրուեալ եւ ցնդեալ էր ի վաղուց հետէ եւ ոչ ոք գիտէր, թէ զինչ էր սա ...»[126]: Այսպիսով, Թովմա Մեծոփեցին է, որ «բազում աշխատութեամբ» ինչպես ինքն է ասում, «հավաքել (իմա՝ տարբեր նյութերի համադրությամբ ստեղծել) է «Իմաստութիւն քերթողական տառից ըստ այբուբենից» աշխատությունը:

Գործնական ի՞նչ նպատակներ է հետապնդել Մեծոփեցին իր այս աշխատությունը շարադրելիս. այս հարցին պատասխանում է ինքը՝ հեղինակը. «Եւ արդ՝ այսպէս իմաստասիրական գիրս բազմահաւաք աւրինակաւ կարգեալ է ի խօսս եւ յիմաստական բանս. սոքա ժողովին քերթողական արհեստք ի շինուածս պիտոյից գովչաց տաղից յերգս գովասականս, ժիր է սա ի բերել զամենայն բանս ի միտս վարժաւղաց յարհեստս քերթողականս»[127]:

Եվ իրոք, տաղասացության ու գանձասացության կանոնները սերտող աշակերտները Թ. Մեծոփեցու այս աշխատությունից հեշտությամբ կքաղեին Հայոց այբուբենի բոլոր տառերով սկսվող տասնյակ ու տասնյակ «քերթողական» բառեր ու բառակապակցություններ՝ փառաբանական մաղթանքներ ու գովասանական տաղեր (մանավանդ աքրոստիք) հորինելու նպատակով:

Մեծոփեցու «Իմաստութիւն քերթողական տառից» աշխատությունը

[125] Նույն տեղում, էջ 46ա:

[126] Մատենադարան, ձեռ. N 599, էջ 61ա:

[127] Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 16բ:

եկեղեցական բանակերտության ինքնատիպ մի ձեռնարկ է: Սա նույն իմաստն ու բովանդակությունը ունեն Թ. Մեծոփեցու ստորև թվարկվող փոքրիկ հոդվածները, որոնք ընդօրինակված են N 7117 ձեռագրում, անմիջապես «Իմաստութիւն քերթողական տաւիղ»-ի շարունակությամբ:

15. Բառք գովասանական վասն տղայոց ուսման («Արփոյն հաւակ, տպատանի տանու ամրութեան պարիսպ ...)[128]:

16. Բանք գովասական ոգեայ («Անեղանելի, անարատապէս, անյեղլի գոյով, անվրդովելի ...)[129]:

Այս հոդվածներին ձեռագրում հաջորդում է մի բառարան, որ, կարելի է չտարակուսել, դարձյալ պատկանում է Թովմա Մեծոփեցուն և կրում է այսպիսի խորագիր.

17. Բառք վարդապետացն սրբոց՝ հաւաքեալ ի միասին[130]:

Այստեղ կան տարօրինակ ու սխալ շատ բացատրություններ, բայց կան նաև մեծ քանակությամբ ուշագրավ բառեր, իրենց ուշագրավ մեկնություններով, որոնք կամ չկան Առձեռն բառարանում, կամ էլ կան, բայց ոչ այս բացատրություններով. դրանցից են՝ Արգոր - կատաղի վուշ, արճողատ - գծուծ կամ անանկ, այլհողմակ - դեւ, աստարտիոն - մեհեան դից, ազգանազինք - խազիրք, զրաւք - քաղք կապայի, որ ի մէջն է, Դալմատ -ֆռանգ, դարապետք - հարիւրապետք, դաշնակել - երգել, դաստապակք - ձեռակերտ շինուած, դահիճ - դուքան, եղեւնափայտ - նոճի կամ տաւսախ կամ կրւենի, զխուրանս - զփրկանս չարչարանաց, խայժ - թաւ, խնկաղաց - հաւանկ, խոռապետ - կողմնապետ կամ գաւառապետ, ծիւ — ցան, ծիծանակ - խայտառակ, կամփակ - շիշ կամ ապակե բդուղ փոքր, կոճկենք - ասխանագործ, հայկք - հսկա, մանի - խօսող, մակու - սան, մենեւանդ - անթինոյ, մեղմեղ - ժանգ, պատանի - որ ի ճորտոյ կարգի է, պառակամօր - որ ի նախրի կով, սուրհանդակ - առաջահաս կամ շբրիկ, վիշապակ - կատու, ճեղիս - որ յառագաստին գլուխն է ձողն:

---

128 Մատենադարան, ձեռ.N 7117, էջ 50ա-53ա:

129 Նույն տեղում, էջ 53ա-60ա:

130 Նույն տեղում, էջ 60ա-79բ:

Չ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Թովմա Մեծոփեցու «Իմաստութիւն քերթողական տաւից ըստ այբուբենից» աշխատության մասին խոսելիս ասացինք արդեն, որ նրա մեջ կան արբատիք ազատ չափով քերթվածներ: Սրանք, սակայն, վկայում են ավելի այն մասին, որ մեր մատենագիրը հոգևոր գանձեր ու տաղեր հորինելու փորձ է ունեցել, բայց ունեցե՞լ է, արդյոք, նաև ձիրք: 1410 թվականին, Թովմա Մեծոփեցին, որ եկել էր Երևան Գր. Տաթևացուց վարդապետական գավազան ստանալու համար, ավարտում է իր եռամեծար ուսուցչի Քարոզգրքի ընդօրինակությունը և նրա հիշատակագրություններից մեկը շարադրում հայրենի չափով, այսպիսի տողեր.

Աւրհնեալ ես Քրիստոս Աստուած
եւ գովեալ յամէն բերանոյ,
Որ զամենեցուն կարիս
կատարես առանց հոգալոյ,
Այսաւր զանպիտան գրչիս
լցուցեր զիղձս տենչալոյ,
Զի չիս չունէի կասկած
զայսպիսի գործ վճարելոյ ...[131]

Այստեղ կա և՛ ներշնչում, և՛ շնորհք:

Հայրենի չափով այս բանաստեղծություն — հիշատակարանի շարադրումից 3 տարի առաջ, 1407 թվականին, Թովման գտնվում էր Տաթևում և Քաջբերունիքից եկած համշիրակ իր ընկերների հետ ունկնդրում Գրիգոր Տաթևացու դասախոսությունները: Եվ ահա, համաճարակային ինչ-որ հիվանդություն է տարածվում Սյունիքում, որ հնձում է հազարավոր մանուկ կյանքեր: Այս օրերին Թովման ընդօրինակում էր իր ուսուցչի «Գիրք հարցմանց» մեծածավալ աշխատությունը, որի հիշատակարաններից մեկում նա սրտակտուր տեղեկություններ է հաղորդում այդ մահտարաժամի մասին: «Եւ ով կարէ պատմել զձայն կանացեաց՝ կականալիր եւ աղիողորմ, զի ամենեքեան որդեկորոյս եղեն՝ որք եւ այրի, զի նախախնամութիւնն Աստու-

---

131 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 106-107:

ծոյ ծաղկաքաղ առնէ զընտիրս ի մանկանց հաճելոյ», – գրում է Թովման և ժողովրդական լայլաց երգերի օրինակով ոգբով ավարտում իր հիշատակարանը.

Եւ վասն այն զբօսու մերկանան,
Պատուեն զծածկոյթս զարդի,
Փետուեն զհերսն եւ խզեն զվարսն անխնայելի,
Նստին ի սուգ ի տան մթի՝
Որպէս օրէն է սգաւորի,
Եւ փոխանակ յորդան զգեստի
Սեաւ զգենուն՝ գոյն տխրալի,
Քարամբք ծեծեն զկուրծս սրտի,
Բախեն զերեսս ի յապտակի,
Յեղուն արտասր անչափելի
Յորդ եւ առատ նման գետի ...[132]

Այս ողբը ևս վկայում է այն մասին, որ Մեծոփեցին բանաստեղծական շնորհք է ունեցել և, թերևս, իր երիտասարդական տարիներին հորինել է նաև աշխարհիկ երգեր ու տաղեր:

Թ. Մեծոփեցու երկասիրությունների ցանկում բանաստեղծությանը ևս տեղ տալու համար, հերթական 18-րդ համարը հատկացնենք նրա այդ կարգի ստեղծագործությունների մեջ հասած փշրանքներին:

Է. ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ – ԼՈՒԾՄՈՒՆՔ

Թովմա Մեծոփեցու աշակերտներից շատերը տարբեր առիթներով գրած իրենց հիշատակարաններում գրվատական խոսքեր են շռայլում իրենց մեծանուն վարդապետի հասցեին: «Յայսմ վերջին ժամանակիս սա (Թ. Մեծոփեցին) միայն յայտնեցաւ ճշմարիտ քարոզող ազգիս Հայոց եւ պարծանք ամենայն վարդապետաց եւ կրօնաւորաց: Վասն զի առնէր եւ ուսուցանէր ամենեցուն զորբութիւն եւ զառաքինութիւն. քանզի արեգակն

132 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 80-81:

էր բերան սորա եւ լոյս փայլէր ի պրակաց բանիցն, որ շուրջ էին զնովաւ», – գրում է 1437 թ. Կարապետ գրիչը[133] և շատ ուրիշ հիշատակագիրներ:

Այս առույթների մեջ կա մի ճշմարտություն. Թովմա Մեծոփեցին, իսկապես, բանավոր խոսքի մեծ վարպետ է եղել. Մեծոփի բարձրագույն դպրոցում կարդացած նրա դասախոսությունները, որոնք մեծ չափով նվիրված են եղել աստվածաբանական բնագրերի մեկնությանը՝ լսվել են մեծ հետաքրքրությամբ և բարձր գնահատվել ժամանակակիցների կողմից:

Ասպիսնակ գյուղի եկեղեցում գտնելով Իգնատիոսի «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի» մի թերի ընդօրինակություն՝ Թովման լրացնում ու խմբագրում է այն 1427 թվականին և ապա «դաս ասում», այսինքն՝ մեկնում իր միաբանակիցների ու աշակերտների համար: Այս կապակցությամբ նա գրում է. «Հարկեցին զմեզ եղբարքն զմեկնիչն տէր Իգնատիոսի դաս ասել: Եվ մեք սկսաք բստ տկարիմաց մտաց մերոց բան - բան լուծանել»[134]:

1427 թվականին Մկրտիչ վարդապետ Նահապետյանը Երուսաղեմից իր հետ Մեծոփա վանք է բերում Հովհան ավետարանչի տեսիլքի մեկնությունը. կատարելով աշակերտների խնդիրքը, ինչպես գրում է Թովման՝ «դասիւ զգիրքս ի դուրս եհ», կամ ինչպես հայտնում է Թովմայի աշակերտ Ղազարը՝ «զտեսիլ Յովհաննու ավետարանչին յայտնեաց մեզ դասիւ»[135]: Կենսագիր Կիրակոս վարդապետն ասում է, որ նա «եկեալ ի վանքն Մեծոփայ և Կ (60) ամ անդ կացեալ ... ԼԵ (35) ամ դաս ասելով»[136]: Ենթադրվում է, որ Մեծոփեցին «դասիւ մեկնել» կամ դասախոսություններով մեկնաբանել է նաև այլ աստվածաբանական բնագրեր: Այս բնույթի աշխատություններից է Դանիել մարգարեի Տեսիլքի մեկնությունը, որը հասել է մեզ սխալաշատ օրինակով:

19. «Պատմութիւն Տեսլեան Դանիէլի մարգարէի, մեկնութիւն կարճ ի կարճոյ ի Թովմայ վարդապետէ» («Եւ էր այր մի բնակեալ ...)[137]:

133 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 474:

134 Նույն տեղում, էջ 359-360:

135 Նույն տեղում, էջ 361-362:

136 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 6:

137 Մատենադարան, ձեռ. N 1134, էջ 81ա-125ա. խորագիրը տալիս ենք սրբագրելով. ձեռագրում աղավաղված է այսպես. «Պատմութիւն ի տեսլեան» ... Դանիէլի մարգարէէ մեկնութիւն եւ կարճ ի կարճոյ ...»:

Իր այս «կարճ ի կարճոյ» մեկնությունը շարադրելիս Մեծոփեցին օգտագործել է հիմնականում Վարդան Արևելցու խմբագիր մեկնությունը. մի կապակցությամբ Թովման գրում է. «Եւ զայլն տես ի մեկնութիւն սուրբ վարդապետին Վարդանայ զայս սակաւ նիւսխայեցի վասն գրոց աշակերտի»[138]:

Հիշատակում է նաև Յակոբ Մծբնա հայրապետին վերագրվող «Զգօն գիրքը», ինչպես նաև Եղիշեի «Մեկնութիւն արարածոցը» (հավանաբար ծանոթ է եղել այս «Մեկնությանը» Վարդանի խմբագիր մեկնության միջնորդությամբ):

Մեկնությունը բաժանված է պարբերությունների. դրանցից մեկը կրում է այսպիսի խորագիր. «Դարձեալ աստ շարադրէ մեծն Դանիէլ զառումն Թագաւորութեան Բաղդասարայ, որ էառ Մարն Դարեհ»: Ահա այստեղ Մեծոփեցին շաղկապում է հին պատմության անցուդարձերն իր ժամանակ տեղի ունեցած աղետալի դեպքերին. նա գրում է. «Քանզի կատարմամբ եւ ապահութեամբ կորուսին զամենայն ազգս թագաւորքն Պարսից. եւ մինչեւ, զԴարեհ միապետեալ, զոր սպան Աղէքսանդր: Եւ ի մերում ժամանակիս ի նոյն Պարսից թագաւորութենէն պիղծ կաղն Թամուր ի ՊԼԶ (1387) թվականիս մեր եկն ի աշխարհս մեր եւ կոտորեաց զՎան քաղաք և արկ զմարդիկ և բերդէն ի վայր, մինչև զի այլ մարդիկ ոչ մեռանէին:

Եւ դարձեալ ՊԽԳ (1494) թվականին եկն եւ երկիր պատառեաց ի Սեբաստիայ եւ մարդիկ ի հողն թաղէր: Եւ ի բազում տեղիս զգլուխն բերթ կանգնէր: Եւ մին սայ էր ի գազանացն»[139]:

20. «Խմբագիր մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի»[140]:

Այս աշխատության խմբագրության մասին Թ. Մեծոփեցին գրել է ընդարձակ հիշատակարան: Ըստ այդմ, նա գտնելով Պողոս առաքյալի թղթերի՝ Հովհ. Ոսկեբերանի ու Եփրեմ Ասորու մեկնությունները՝ «յաւելեալ եդի ի սմա մեկնողաւրէն զցանկ մեծի Եւթաղի եւ զամենայն որոշմունս բաժանմանց նորա՝ զընթերցուած, զգլուխ, զվկայութիւն, զտուն, զնախագրութիւն,

[138] Մատենադարան, ձեռ. N 1134, էջ 119:
[139] Նույն տեղում, էջ 103բ, 104ա:
[140] Մատենադարան, ձեռ. N 1380, հմմ. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա., էջ 450-456:

զվասն էրն, եւ ետու ի ձեռս մանկանց եկեղեցեաց Հայաստանեայց՝ ճշմարտախոհ վարդապետաց եւ քաջամիտ աշակերտաց»[141]:

21. Մանր բնագրեր

Այս համարի տակ նկատի ենք առնում Թ. Մեծոփեցու արդեն հայտնի և դեռևս ի հայտ չբերված մանր-մունր՝ մեծ մասամբ մեկնողական բնույթի լրացումներն ու հավելումները, որ նա արել է իր կողմից ընդօրինակված բնագրերին կամ գրի անցկացրել այլ առիթներով: Այսպես, օրինակ, Վիեննայի Մխիթարյանց Մատենադարանի N 367 ձեռագրի 2ա էջի վրա պահպանվել է Թ. Մեծոփեցու մի հիշատակագրությունը, որ կատարված է Գր. Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառին մի կտոր ավելացնելու առիթով. «Զնուաստ վարդապետս Թովմա յիշել աղաչեմ, որ յետոյ գտայ եւ գրեցի ի գիրս՝ ՊՁԳ (1434) թվականիս, ի սուրբ ուխտս Աստուածածնի, որ Մեծոփայ վերաձայնի»[142]:

Մատենադարանի N 2152 ձեռագրի 228ա էջի վրա Թովմա Մեծոփեցին ընդօրինակել է մի քանի տող. «Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն մարմին եղեւ. մարմին եղեւ՝ այսինքն՝ մարդ եղեւ, եղեւն առեալ զանբաժանելի միութիւնն Աստուծոյ ...» և այլն:

Եվ ահա այս աստվածաբանական բեկորի կապակցությամբ նա գրել է. «Ո՜վ հոգեւոր որդեակ իմ՝ գրոց աշակերտ, ընկալ զճշմարիտ աստուածաբանութիւնս, զի կարի օգտակար է: Եւ զԹովմա պիտակ անուն վարդապետս յիշեա ի տէր, աղաչեմ»[143]:

Ը. ԾԻՍԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ

Թովմա Մեծոփեցու կենսագիրը հայտնում է, որ նա «հանապազ չարչարէր զինքն ի յուսուցանել զմանկունս եկեղեցւոյ ի սաղմոսն, ի յաղօթքն, ի շարական ... ի ժամակարգութիւն, զի գրեաց ընտիր եւ անսղալ Աղաւթամատոյց ի մեկնիչք եւ Տաւնացոյց ի լաւ օրինակաց»[144]:

[141] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա., էջ 450:
[142] Յ. Տաշեան, Ցուցակ, էջ 755:
[143] Մատենադարան, ձեռ. N 2152, էջ 228ա:
[144] Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 5:

Այսպիսով, Մեծոփեցին իր գլխավորած դպրոցում հատուկ ուշադրություն է դարձրել Սաղմոսների, Շարականների և ծիսական նման նյութերի ուսուցման, ինչպես և բարդ ժողովածուների («Աղոթամատույց», «Տոնացույց» և այլն) անխախտ ու ստույգ օրինակներ ստեղծելու գործին: Ստորև թվարկենք ծիսական բնագրեր կազմելու, խմբագրելու և հրապարակելու ուղղությամբ Թ. Մեծոփեցու ունեցած արդյունքները:

22. «Արարեալ եւ սահմանեալ սուրբ վարդապետին Թումայի Մեծոփեցոյ ի պայծառութիւն մանկանց եկեղեցոյ խրատու Յաղագս պաշտման եկեղեցեաց Հայաստանեայց» («Զի այսպէս լիցի, կարգ պաշտման ի գիշերային ժամն զկնի Տէր եթէ շրթանցն ասի երգ առաւոտ ներբողի ...»)[145]:

23. «Աղօթամատոյց» կամ «Ժամագիրք»:

«Աղօթամատոյցի» խմբագրության գծով Թ. Մեծոփեցու կատարած աշխատանքի մասին խոսում է և՛ ինքը, և՛ նրա մերձավորներից Մկրտիչ Նահապետենցը: Մեծոփեցին գրում է. «Սրբագրեցի զԱղօթամատոյցս յընտիր աւրինակաց յաստուածաբան վարդապետացն եւ հոգիընկալ մերոյ ազգիս թարգմանչացն, հրամանաւ սուրբ եւ երջանիկ վարժապետացն մերոց եւ համշիրակ հարազատ հոգեւոր եղբարց եւ բաժանեցի յիններորդ ստորճան զաղօթս հասարակաց՝ դիւրահաս եւ դիւրագիւտ ամենայն իմաստուն մտաց»[146]: Ավելի պարզ է արտահայտվում Մկրտիչ վարդապետը. «որ եւ սա (Թ. Մեծոփեցին) նորոգեաց զաղօթնիս, որ էր ծեքեալ եւ եղծեալ ի ադալագիր գրչաց եւ անմիտ արանց: Զոր հոգ յանձին տարեալ ... կատարեաց՝ զողալն ուղղելով, զաւելորդն բառնալով, եւ զպակասն լնլով»[147]:

24. «Կարգ աւրհնութեան սուրբ իւղոյն հիւանդաց» («Յորում աւուր հանգերձի հոգոյն ...»):

25. «Կարգ աւծութեան հիւանդաց» («Յորժամ կամենան աւծանել զհիւանդն ...»)[148]:

[145] Մատենադարան, ձեռ. N 720, էջ 349բ-351բ: Նաև Յ. Տաշեան, Ցուցակ, էջ 689:
[146] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 598:
[147] Նույն տեղում, էջ 599:
[148] Մատենադարան, ձեռ. N 7117, էջ 325ա-346ա:

Այս երկու փոքր բնագրերի մասին խոսել ենք N 7117 ձեռագրի գրության հանգամանքները պարզելիս: Ծիսական այս «կարգ»-երը Կաֆայից կամ Կ. Պոլսից Հայաստան է բերել Կիրակոս Վիրապեցին մինչև իր կաթողիկոսանալը, ուստի 1441-ից առաջ: Թովմա Մեծոփեցին «վերստին սրբագրել» է այդ բնագրերը և տվել ընդօրինակելու իր հոգևոր որդի Հովհաննես Արճիշեցուն: Երկարնակ միջավայրից ստացված ծիսական այս կանոնները չեն մտել հայոց ծիսարանների (մաշտոցների) մեջ:

Թ. ՄԵԾՈՓԵՑԻՆ ԻԲՐԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՎ ՄԵԿԵՆԱՍ

Միջին դարերում որևէ երկի ստեղծման գործին հեղինակից բացի մասնակցություն էր ունենում պատվիրատուն կամ խնդրողը: Սովորաբար այդ դերում հանդես էին գալիս անվանի վարդապետներ կամ բարձրաստիճան հոգևորականներ. նրանք հորդորում էին գիտնական վարդապետներին՝ շարադրել որևէ աշխատություն, դասախոսություններով հանդես գալ իրենց իրավասության տակ գտնվող ուսումնական հաստատություններում և այլն և այլն: Նրանք հաճախ ստանձնում էին նաև արդեն պատրաստի աշխատության խմբագրությունը: Թովմա Մեծոփեցու հորդորներով են շարադրվել մի շարք կարևոր աշխատություններ:

1416 թվականին Թովմա Մեծոփեցու խնդրանքով Հակոբ Ղրիմեցին Մեծոփա դպրոցում դասախոսություններ է կարդացել տոմարագիտության հարցերի շուրջ և շարադրել միջնադարյան հայ տոմարագիտության ամենաարժեքավոր երկերից մեկը՝ «Մեկնութիւն տումարի» աշխատությունը: Վերջում Ղրիմեցին մի ուղերձ է թողել ուղղված պատվիրատու Թովմա Մեծոփեցուն: «Ահա զայս եւս խնդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ, - գրել է նա, - եւ աղցեա զսա եւ ընդ ուշիմ մտաց քոց նրբահայեաց որոնեսցես, եւ զպակասն լցուսցանիցես»[149]: Սրանից երևում է, որ, նախ, Թովմայի խնդրանոք Հակոբ Ղրիմեցին մինչ այդ շարադրել է նաև այլ երկեր, և ապա, որ Մեծոփեցին իրավասու էր «Զպակասն լցուցանել և զաւելորդն կշռել» և այլն: «Ի խնդրոյ Թովմայ վարդապետի» է շարադրել Հակոբ Ղրիմեցին

[149] «ԺԵ դարի հայերեն հիշատակարաններ», հ. Ա, էջ 182:

«Յաղագս ազգականութեան բաժանման», ինչպես նաև «Յաղագս անյայտ նշի» փոքրիկ աշխատությունները, իսկ 1415 թվականին խմբագրել է Գր. Տաթևացու Քարոզգիրքը, 350 քարոզից թողնելով 173-ը, դարձյալ «ի խնդրոյ բարունոյս Թումայի»[150]:

1436 թվականին նշանավոր բանաստեղծ, Միջագետքի եպիսկոպոս Մկրտիչ Նաղաշը գրում է իր նշանավոր «Պատասխանի լատինացոց թղթոյն» դավանաբանական աշխատությունը՝ «հրամանաւ տեառն ... Կոստընդին պատրիարգի եւ քաջ ախոյանին եւ անյաղթ փ[ի]լիսոփային Թումա բաբունապետի՝ Արևելյան հռետորի»[151]:

Նշենք նաև, որ Թովմա Մեծոփեցու հրամանով, խնդրանքով ու ձեռնտվությամբ, նրա աշակերտներից ու միաբանակիցներից շատ-շատերը ընդօրինակել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր, կարևոր հիշատակարաններ թողնելով իրենց մեծանուն ուսուցչի և ժամանակի քաղաքական անցուդարձերի մասին[152]: Այսպես, օրինակ, Գորգ անունով մի գրիչ ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը և հայտնել հիշատակարանում, որ աշխատանքը կատարել է «վասն սիրոյ եւ հրամանաց գերապայծառ երանաշնորհ եւ պանծալի բաբունապետիս մերոյ Թումայի քաջ հռետորի, զի բազում անգամ թղթով եւ պատգամաւ առաքէր. եւ մեք հարկեցաք՝ ըստ ազէտ եւ ըստ փանաքի անզօրութեան մերում աւարտեցաք»[153]:

***

Մենք ավարտեցինք մեր խոսքը Թովմա Մեծոփեցու մատենագրական գործունեության մասին: Ձեռագրական նոր նյութերի հիման վրա հնարավոր եղավ մեծապես ընդարձակել 15-րդ դարի նշանավոր մատենագրի գրական վաստակների մասին բանասիրությանը հայտնի տեղեկությունները և կազմել նրա աշխատությունների մի նոր ցանկ: Կարելի է

[150] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 183, 653-654:
[151] Նույն տեղում, էջ 464:
[152] Հմմ. նույն տեղում, էջ 126-127, 187, 213, 305, 380, 423-424, 474, 508, 509-600:
[153] Նույն տեղում, էջ 559-560, հմմ. նաև էջ 126-127, 187, 213, 305, 380, 423-424, 474, 508:

հուսալ, որ հետագա պրպտումներով հնարավոր կլինի լրացնել այդ ցանկը մի քանի նոր անուններով:

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓԱՌԱՀԵՂ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

Հունվարի 8-ին Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի ունեցավ սովետահայ գրողների հանդիպումը Մատենադարանի գիտաշխատողների հետ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մատենադարանի դիրեկտոր Լևոն Խաչիկյանը իր հանգամանալից զեկուցման մեջ ներկաներին ծանոթացրեց այն աշխատանքներին, որ կատարվում են հայ հին ձեռագրերի հավաքման, պահպանման և գիտական ուսումնասիրության ուղղությամբ:

Այնուհետև ելույթներ ունեցան Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ քարտուղար Լևոն Մկրտչյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Մատենադարանի գիտաշխատողներ Բաբկեն Չուգասզյանը, Վարդան Գրիգորյանը, Արտաշես Մաթևոսյանը և ճարտարապետ Լիպարիտ Սադոյանը, որոնք նշելով նման հանդիպումների կարևորությունը, բարձրացրին մի շարք հարցեր՝ Մատենադարանի աշխատողների և գրողների գործունյա կապերն էլ ավելի ամրապնդելու, ինչպես նաև հայ հին գրականության մեծարժեք հուշարձանները ժողովրդի ավելի լայն խավերին ծանոթացնելու ուղղությամբ:

Մատենադարանի դիրեկցիան Հայաստանի գրողների

---

* «Գրական թերթի» 1976 թ. հունվարի 16-ի համարում տպագրվել է ակադ. Լ. Խաչիկյանի զեկուցման սույն շարադրանքը:

միության գրադարանին նվիրեց իր հրատարակած արժեքավոր հատորների հավաքածուն: Վերջում ցուցադրվեցին Թորոս Ռոսլինի 1267 թվականին նկարազարդած ձեռագրի լուսապատկերները:

Մաշտոցի անվան Մատենադարանը, որ հարյուրամյակների պատմություն ունի (1441 թվականը կարելի է վստահորեն համարել Մատենադարանի հիմնադրման տարին), որպես գիտահետազոտական հաստատություն ընդամենը 16 տարեկան է: 1959 թ. ավարտվեց Մատենադարանի հոյակապ շենքի կառուցումը, և այն դարձավ գիտահետազոտական ինստիտուտ, որն իրագործում է ձեռագրական հուշարձանների գիտական պահպանությունը, գիտական սպասարկումը և ուսումնասիրությունը:

Պահպանությունը, անշուշտ, ամենապատասխանատու և ամենակարևոր բնագավառն է մեզ համար: Այդ բանի տակ մենք հասկանում ենք հայերեն և օտար լեզուներով հին ձեռագրերի ու դիվանական հնամենի փաստաթղթերի ոչ միայն պահպանությունը ուղղակի իմաստով, այլև աշխարհի տարբեր ծայրերից դրանց հավաքման, հաշվառման, վերանորոգման, գիտապատճենահանման հետ կապված բարդ ու բազմապիսի բոլոր աշխատանքները:

Ինստիտուտ դառնալու նախօրյակին Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն բաղկացած էր 10.600 ամբողջական կամ թերի միավորներից (ձեռագիր ու պատառիկ): Այժմ տարբեր երկրամասերից գնումների, նվիրաբերությունների և այլ ճանապարհով Մատենադարանը ձեռք է բերել 2.600 հայերեն ձեռագրական միավոր: Օտար լեզուներով ձեռագրերի ֆոնդը 260 միավորից հասել է 2.260-ի: Ըստ այդմ, 30 տոկոսով աճել է մեր ձեռագրական հավաքածուն:

Հարկ է նշել, որ նոր ստացված ձեռագրերի մեջ կան մեր պատմության, գրականության, մանրանկարչության և գիտության ու արվեստի այլ բնագավառների ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունեցող միավորներ (Թովմա Արծրունի, Ստեփանոս Օրբելյան, Հակոբ Սանահնեցի, Թորոս Ռոսլին և այլն):

Ձեռագիր հուշարձանների այս հայրենադարձությունն ինքնահոսի կարգով չի կատարվել: Հաճախ որևէ ձեռագրի ձեռք բերման համար բազմաթիվ նամակներ են գրվել, խնդրագրեր առաքվել: Անշուշտ այստեղ վճռական նշանակություն է ունեցել ձեռագրերի պահպանության արդի վիճակը մեզ մոտ, ինչպես նաև մեր ցուցասրահի աշխատանքը, որի միջոցով այցելուները համոզվում են, թե ինչպիսի նախանձելի պայմաններ են ստեղծված Մատենադարանում հայ մշակույթի հուշարձանների պահպանության և ուսումնասիրության համար:

Տեղին է նշել, որ եղել են նաև ձեռագրական «կորուստներ» (այս բառը պայմանականորեն ենք գործածում): Վերջին մի քանի տարիների ընթացքում Լոնդոնում, Փարիզում և այլուր աճուրդով վաճառվել են մի երկու տասնյակ հայերեն հին ձեռագրեր, որոնցից մի քանիսը մանրանկարչական նշանավոր կոթողներ են: Եվ մենք, չնայած մեծ ջանքեր ենք գործադրել, խնդրագրերով դիմել ենք սփյուռքահայ մեծահարուստների՝ դրանց փրկագնման հարցով, սակայն նրանց մեծամասնությունը (ի բացառյալ Ջրբաշյանի, Հյուսիսյանի ու Պաքրճյանի) անտարբեր է գտնվել, որի հետևանքով ամենաարժեքավոր ձեռագրերն անցել են օտարազգի հարուստ անձանց ձեռքը:

Վերջին տարիներին մեծապես հարստացել են Մատենադարանի արխիվային բաժնում պահվող հին փաստաթղթերի և հին հայերեն տպագիր գրքերի հավաքածուները, ինչպես նաև Մատենադարանի հայագիտական գրականությունը: Արտասահմանյան երկրներից ստացվել է շուրջ 8 հազար միավոր արևելագիտական խիստ արժեքավոր գրականություն: Եվ եթե մեկ-երկու տասնամյակ առաջ հին ու միջնադարյան Հայաստանի պատմության ու մշակույթի հարցերով զբաղվող մասնագետների մեծագույն մասը ստիպված էր հաճախ Մոսկվա կամ Լենինգրադ մեկնել այս կամ այն գրքի միակ օրինակը տեսնելու համար, ապա այսօր արդեն ուրիշ քաղաքներից են գալիս մեզ մոտ՝ նույն այդ նպատակով:

Առանց ուրիշ վայրերում պահվող հայերեն ձեռագրերի պատճենահանման և ցուցակագրության հնարավոր չէ ծրագրված գիտական գործ կատարել, քանի որ մեր հին ձեռագրերի կեսից ավելին գտնվում է Հայաստանից դուրս, մեծ մասամբ արտասահմանյան երկրներում (Իսրայել, Իտալիա, Ավստրիա, Իրան և այլն): Այս տարիներին մենք պարզել ենք, թե ինչ բովանդակություն ունեն ուրիշ վայրերում պահվող հայերեն ձեռագրերը: Դրանց զուգընթաց մեծ աշխատանք է կատարվել արտասահմանյան ձեռա-

գրատների հետ կապեր հաստատելու, այնտեղ պահվող արժեքավոր ձեռագրերի պատճենները ստանալու համար: Եվ այսօր մենք ձեռք ենք բերել Հայաստանից դուրս պահվող ինը հարյուր հայերեն ձեռագրերի մանրաժապավեններն ու լուսանկարները, որով և ընդարձակվել է խորհրդահայ աղբյուրագետների ուսումնասիրության բազան:

Այս աշխատանքը, սակայն, պետք է առաջիկայում շարունակվի ավելի լայն ծավալով, դրա համար անհրաժեշտ են լինելու երկարաժամկետ արտասահմանյան գործուղումներ:

Տեղին է նշել, որ մեր հավաքածուի բոլոր արժեքավոր ձեռագրերն այսօր արդեն պատճենահանված են և սկսված է մանրանկարչական ձեռագրերի գունապատկերների պատրաստման դժվարին գործը: Սրանք անհրաժեշտ ձեռնարկումներ են՝ հին ձեռագրերի օգտագործման ու ուսումնասիրության գործը արդիական հիմքերի վրա դնելու, ձեռագրերի կյանքը հավերժական դարձնելու իմաստով:

Ձեռագրերի վերանորոգման գործը նույնպես եղել է Մատենադարանի աշխատակիցների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Ունենք ձեռագրերի պահպանման, բուժման, վերանորոգման ու կազմերի վերականգնման՝ անհրաժեշտ սարքերով ապահովված արհեստանոցներ, որոնցում աշխատող մասնագետների ջանքերով նոր կյանք են ձեռք բերում կորստյան եզրին հասած տասնյակ ու հարյուրավոր այն ձեռագրերը, որոնք դարեր շարունակ պահվել են անմխիթար պայմաններում, անցել են հրի ու ջրի միջով: Ուրախալի է նշել, որ հին կաշվե կազմերի ու մագաղաթների վերականգնման գծով մեր հմուտ մասնագետ Ա. Խաչատրյանն այնպիսի հաջողությունների է հասել, որ ՍՍՀՄ այլ կենտրոններից մեզ մոտ են գործուղվում մասնագետներ՝ նրա մշակած մեթոդներին ծանոթանալու համար:

Սակայն հենց անմիջապես տեղին է նշել, որ այսօր արդեն վերը թվարկված միջոցառումները բավարար չեն կարող համարվել: Եվ մենք դեռևս շատ անելիքներ ունենք մեր ժողովրդի ազգային արժեքների պահպանության գործը իդեալական հիմքերի վրա դնելու համար:

Մատենադարանում այցելուների սպասարկումը ապահովվում է երկու մեծ ընթերցասրահների միջոցով, որոնցից մեկը նախատեսված է ձեռագիր նյութերի, իսկ մյուսը՝ տպագիր գրականության ու պարբերական

մամուլի ուսումնասիրության համար: Վերջերս դրանց ավելացավ նաև միկրոպատճենների ընթերցման սրահը, որ հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով:

Մատենադարանի գիտական աշխատողներն ու մեր ամենօրյա այցելուները, վերոհիշյալ սրահներից օգտվելու իրավունք ձեռք բերելով, ոչ միայն պահոցներից ստանում են իրենց թեմային առնչվող ձեռագիր ու տպագիր նյութեր, այլև իրենց տրամադրության տակ են ունենում առաջին անհրաժեշտության գրականություն (հայ մատենագիրների կարևոր հրատարակություններ, հայագիտական դասական գրականություն, բառարաններ, հանրագիտարաններ և այլն), որից օգտվում են առանց սպասարկող անձնակազմին դիմելու: Այս հանգամանքը մեծապես արագացնում է անհրաժեշտ նյութերի ընտրությունն ու հավաքումը:

Ձեռագրերից և տպագիր գրականության առանձին հազվագյուտ միավորներից ընդօրինակություններ ունենալու համար, գիտաշխատողները հնարավորություն ունեն դիմելու նաև մեր լուսանկարչական բաժնի օժանդակությանը, որն օրավուր հագեցվում է նորագույն մեքենաներով և առաջիկայում պետք է ավելի լայն չափերով իր ծառայությունները մատուցի մեր հայագետներին:

Շատ օգտակար գործ է կատարում մեր ցուցասրահը. ամեն տարի Սովետական Միության տարբեր հանրապետություններից ու արտասահմանյան երկրներից շուրջ 50-60 հազար զբոսաշրջիկներ են այցելում Մատենադարան, որտեղ նրանք հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով բացատրություններ ստանալով, հնարավորություն են ունենում ծանոթանալու հայ ձեռագրական մշակույթի մի շարք հուշարձանների, ինչ-որ չափով հաղորդակից լինելու մեր դարավոր պատմության դրվագներին:

Մաշտոցի անվան Մատենադարանն այսօր ունի 41 գիտաշխատող: Մասնագիտական տարբեր կրթություն ստացած մարդիկ են նրանք՝ պատմաբաններ, գրականագետներ, լեզվաբաններ, արվեստաբաններ, փիլիսոփաներ, երաժշտագետներ, իրավաբաններ, բժիշկներ, աստղաբաշխներ և այլն: Նրանք բոլորն էլ կոչված են հայ միջնադարյան ձեռագրերի ուսումնասիրությամբ գիտական շրջանառության մեջ դնելու մեր նախնիների կողմից ստեղծված գրական ու գիտական այն ստեղծագործությունները,

որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում և յուրովի նպաստում հայագիտության տվյալ բնագավառի հետագա մշակմանը:

Գիտական անձնակազմի ջանքերով վերջին 16 տարիների ընթացքում լույս են տեսել շուրջ 50 արժեքավոր սկզբնաղբյուրներ, ուսումնասիրություններ, ձեռագրական ցուցակներ, գիտական հոդվածների «Բանբեր Մատենադարանի» կոչվող ժողովածուների հատորները, մանրանկարչական ալբոմներ և այլն:

Առանց տարբեր բնույթի ձեռագրական ցուցակների առկայության, աղբյուրագիտական ծրագրված աշխատանք անհնարին է կատարել: Նկատի ունենալով այդ հանգամանքը, մեր մի խումբ աշխատակիցների ջանքերով ստեղծվեցին ու 1965 և 1970թթ. հրատարակվեցին Մատենադարանի ձեռագրերի համառոտ նկարագրությունները պարունակող երկու ստվարածավալ հատորները, որոնցով հայերեն բոլոր ձեռագրերը, առաջին անգամ ներկայացվեցին գիտական հասարակայնությանը՝ իրենց ամենահիմնական տվյալներով:

Նույն այդ ձեռագրագետ-մատենագետներն այժմ լծված են ընդարձակ «Մայր ցուցակի» կազմման աշխատանքներին, որը բաղկացած է լինելու շուրջ 12 ստվար հատորներից և, պարունակելով ամենամանրամասն տեղեկություններ մեր ձեռագրերի մասին, հանդիսանալու է հայ բանասերների սեղանի գիրքը: Ընդարձակ ցուցակի առաջին հատորն արդեն պատրաստ է հրատարակության:

Սրան զուգընթաց կատարվում են մատենագիտական այլ աշխատանքներ. շուտով կավարտվի հայ մանրանկարիչների և նրանց գործերի ամբողջական ցանկը, իսկ առաջիկա 5 տարիների ընթացքում կլրացվի աշխարհի տարբեր ծայրերում պահվող և մեզ հայտնի բոլոր հայերեն ձեռագրերի ամբողջական քարտարանը 3 ինքնուրույն բաժիններով ըստ ժամանակագրության, գրչության վայրերի և բովանդակության:

Սկսվել է նաև օտար լեզուներով ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի գիտական ցուցակագրման աշխատանքը:

Մատենադարանը լուրջ հաջողությունների է հասել հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչների աշխատությունների գիտական բնագրերը հրատարակելու ուղղությամբ: Արդեն տպագրվել են Եղիշեի, Արիստակես Լաստիվերցու, Անանուն զրուցագրի, Կիրակոս Գանձակեցու, Հովհաննես Կամենացու, Աբրահամ Կրետացու, Հովհաննես Սեբաստացու պատմագրական աշխատությունների գիտական բնագրերը: Շուտով հրատարակության են հանձնվելու Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Սամվել Անեցու, Վարդան Արևելցու, Թովմա Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու և այլ պատմագիրների աշխատությունները: Գրաբար բնագրերի հրատարակությանը զուգահեռ, մեծ աշխատանք է կատարված պատմագրական վերոհիշյալ երկերի ռուսերեն թարգմանությունների իրագործման գծով:

Լուրջ ուշադրություն է դարձվում նաև միջնադարյան հայ իրավունքի պատմության հուշարձաններին: Արդեն հրատարակվել են «Աստրախանի հայոց դատաստանագիրքը», Մխիթար Գոշի «Գիրք դատաստանաց» կոթողային աշխատության առաջին և համառոտ խմբագրությունները, որոնք բացառիկ նշանակություն ունեն Հայաստանի միջնադարյան իրավունքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար:

Մինչև վերջին տարիներս տիրում էր այն սխալ տեսակետը, որ հայ ժողովուրդը միջնադարում չի ունեցել իմաստասիրական հարուստ գրականություն և այս կարևոր բնագավառում, իբր, շատ ետ է մնացել հույներից, հռոմեացիներից, արաբներից և եվրոպական ժողովուրդներից: Այդ թյուրիմացությունն արդեն լուծված է հայ փիլիսոփայական գրականության մի շարք հուշարձանների՝ Դավիթ Անհաղթի, 6-րդ դարի անանուն մեկնիչի, Վահրամ Րաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և այլ հեղինակների աշխատությունների ու մասնավորապես նրանց մեծ մասի ռուսերեն թարգմանությունների հրատարակության ճանապարհով: Այսօր արդեն համաշխարհային փիլիսոփայական, քերականագիտական և գեղագիտական մտքի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ հայ ժողովրդի ժառանգությունն սկսում է գրավել իր պատվավոր տեղը:

Մատենադարանը հատկապես իր տեսադաշտում է պահել միջնադարյան հայ գեղարվեստական գրականության հուշարձանների ուսումնասիրության և հայ նշանավոր տաղերգուների ստեղծագործությունների գիտական հրատարակության գործը: Մատենադարանի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակիցների համատեղ ջանքերով վերջին երկու տասնամյակների ընթացքում լույս են տեսել միջնադարյան հայ բանաստեղծներից շատերի (Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիներ, Գ. Աղթամարցի, Հովհ. Թլկուրանցի, Հովասափ

Սերաստացի, Բաղդասար Դպիր, Պետրոս Ղափանցի և բազմաթիվ ուրիշներ) ստեղծագործությունների բնագրերին: Նույնով հրատարակության են տրվելու Ներսես Շնորհալու հանելուկների և միջնադարյան հայ պոեզիայի պսակը կազմող հայրենների լիակատար ժողովածուները:

Ռուսերեն թարգմանությունների գործը մեզ մոտ ծրագրված առաջ է տարվում: Արդեն ունենք հմուտ մասնագետներ արձակ գործերի թարգմանության համար, բայց կարծում ենք, որ հայ պոեզիան ևս մեծապես կշահի, եթե թարգմանվի ոչ թե տողացի թարգմանության հիման վրա, այլ հենց բնագրից:

Մենք հեռու ենք այն մտքից, որ աղբյուրագիտական մեր հրատարակությունները անթերի են: Ընդհակառակը, գիտենք, որ դրանցից շատերում իրոք կան սխալներ ու թերություններ: Գաղտնիք չէ նաև, որ հայ միջնադարյան գրականության հուշարձանների մեծագույն մասը ստեղծվել է սերտ կապերի մեջ լինելով ուրիշ ժողովուրդների մշակութային կյանքի համանման երևույթների հետ: Եվ մեր ուսումնասիրողները միշտ չէ, որ կարողանում են այս կամ այն հուշարձանի տեղը որոշել միջազգային մշակույթի գանձարանում: Մեր բանասերները պարտավոր են այսուհետև ավելի մեծ ջանքեր գործադրել՝ խորամուխ լինելու հարևան ու հեռավոր այն երկրների միջնադարյան կյանքին ու մշակույթին, որոնց հետ մեր տաղանդավոր նախնիները շփվել են քաղաքական, տնտեսական ու մշակութային ասպարեզում:

ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝ ԺՈՂՈՎՐԴԻՆ*

1920 թ. նոյեմբերի 29-ից հազիվ էր անցել կես ամիս, երբ հրապարակվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմի հրամանագիրը՝ կուլտուր-կրթական բոլոր հիմնարկությունների հետ միասին, նաև Էջմիածնի մատենադարանի պետականացման մասին: Այդ հրամանագրով մի նոր դարաշրջան սկսվեց հազարամյա նախապատմություն ունեցող Մատենադարանի համար: Նախորդ բոլոր դարերում մեր Մատենադարանի հիմքը հանդիսացող Էջմիածնի գրատունը, միջնադարյան Հայաստանի բոլոր գրատների պես, գոյատևման տևական պայքար է մղել օտար բարբարոս նվաճողների դեմ: Եղել են բարենպաստ տարիներ, և այնտեղ համախմբվել են գրասեր մտավորականներ ու շնորհալի գրիչներ, ստեղծվել են նոր ձեռագրեր, ուրիշ վայրերից հավաքվել արժեքավոր մատյաններ (այդպես էր, օրինակ, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գահակալության տարիներին՝ 1655-1680 թթ.), սակայն դրանց հաջորդել են ասպատակությունների-ավարառությունների դժնդակ տասնամյակներ ու մի հարվածով ի չիք են դարձել սերունդների քրտնաջան աշխատանքի արդյունքները: 1810-ական թվականներին գրած իր մի նամակում նշանավոր եկեղեցական-քաղաքական գործիչ Ներսես Աշտարակեցին հայտնում է, որ «մեր օրերում ավարի մատնվեց Արարատյան աթոռ կաթողիկե Էջմիածնի բազմահարուստ գրատունը», իսկ մեկ ուրիշը լրացնում նրան այսպիսի տողերով. «Անդադրում նվաճումների և սրածությունների հետևանքով հայ ազգն ու նրա գրականությունը այն չափով սպառված ու ոչնչացված են եղել, որ հազարավոր գրքերից հազիվ մի

* «Լենինյան ուղիով», N 11, 1980, էջ 58-65:

հազար հատ ժառանգություն է մնացել մեզ մեր նախնիներից»:

Ձեռագրական գանձերի հավաքման և ցուցակագրման աշխատանքները սկսում են կազմակերպված բնույթ կրել 1828 թ. հետո, երբ Արևելյան Հայաստանն ազատագրվում է պարսկական լծից և իր բախտը կապում Ռուսաստանի հետ: Էջմիածնի մատենադարանը գրավում է հայ և օտարազգի մասնագետների ուշադրությունը. ջանքեր են գործադրվում տարբեր վայրերից արժեքավոր նոր մատյաններ հավաքելու, դրանք ցուցակագրելու նպատակով և այլն: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ձեռագրերի թիվը Մատենադարանում հասնում է 4660 միավորի. ձեռագրական հավաքածուներ են ստեղծվում նաև Այսրկովկասի ու Ռուսաստանի հայաբնակ այլ վայրերում:

1915 թ. հայ ժողովրդի գլխին պայթում է մեծ աղետը. իմպերիալիստական պետությունների թողտվությամբ, իրենց «երիտասարդ թուրքեր» կոչող արյունարբու բանդան տնավեր ու բնավեր է անում Արևմտյան Հայաստանի հայությանը, մարդկային պատմության մեջ չգրանցված վայրագությամբ բնաջնջում միլիոնավոր մարդկանց: Հողին են հավասարեցվում հայ մշակույթի հարյուրավոր կենտրոններ՝ գրադարաններ, դպրոցներ, վանական հաստատություններ. կրակի ճարակ են դառնում համաշխարհային արժեք ներկայացնող մի քանի հազար փառահեղ ձեռագրեր և թանգարանային անգնահատելի արժեքներ: Մեծ զոհողությունների գնով հաջողվում է փրկել պատմական Հայաստանի սակավաթիվ մշակութային կենտրոնների (Կարին, Վան, Աղթամար, Վարագ, Լիմ, Կտուց և այլն) ձեռագրերի մի մասը: Էջմիածնի ձեռագրերի բուն հավաքածուն ժամանակավորապես փոխադրվում է Մոսկվա, պատերազմական գործողություններից հեռու՝ ապահով պահվելու համար: Դժնդակ այս պայմաններում էր գտնվում, ահա, հայ ձեռագրական հուշարձանների ամենախոշոր գանձատունը՝ Էջմիածնի մատենադարանը, երբ ավերված ու բզկտված Հայաստան երկրի վրա ծածանվեց ազատարար դրոշը:

Ժողովրդի սեփականությունը դարձած մատենադարանի առջև դրվեցին հսկայական գիտական ու գործնական նշանակություն ունեցող խնդիրներ, և առաջին հերթին, անշուշտ, հրաշքով փրկված ու ցիրուցան եղած ձեռագիր մատյանների որոնման, փրկագնման, հայրենի Մատենադարան փոխադրելու և ապահով ու խնամքով պահելու մեծ խնդիրը:

Հոբելյանական այս օրերին կարելի է անվարան հայտարարել, որ Մատենադարանի անձնակազմը անցած 60 տարիների ընթացքում պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: 1922 թ. Մոսկվայից անկորուստ (նույնիսկ հավելումով) Հայաստան է փոխադրվում Էջմիածնի ձեռագրական հավաքածուն, այնուհետև հայրենադարձվում են Մոսկվայի Լազարյան ճեմարանին, Նոր Նախիջևանի հայկական համայնքին, Թիֆլիզի հայկական ազգագրական ընկերությանն ու Ներսիսյան դպրոցին, Աստրախանի առաջնորդարանին և հայաբնակ այլ վայրերի ուրիշ բազմաթիվ հաստատությունների պատկանող ձեռագրական մեծ ու փոքր հավաքածուները: Հավաքչական աշխատանքը շարունակվում է նաև այսօր. վերջին երկու տասնամյակների ընթացքում ձեռագրերի հոսք է սկսվել նաև արտասահմանյան հայկական գաղթօջախներից. հայրենասիրական այդ գործի շուրջը համախմբվել են հայ մշակութային հուշարձանների արժեքը գիտակցող և դրանց հավաքման համար նյութական միջոցներ չխնայող մի շարք նվիրյալներ:

Այսօր Մատենադարանում պահվում է 16 հազարից ավելի ձեռագրական միավոր, որից 10830-ը՝ հայերեն ամբողջական ձեռագրեր, 2500-ը՝ օտարալեզու ձեռագրեր, իսկ մյուս մասը՝ պատառիկներ, հմայիլներ և այլն: Ըստ այդմ, Մատենադարանի միայն ձեռագրերի հավաքածուն խորհրդային իշխանության տարիներին եռապատկվել է: Եվ այդ հավելումը ոչ միայն քանակային ցուցանիշ է. նոր ձեռք բերված ձեռագրերի շարքում կան արվեստի հրաշալիքներ. Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի ստեղծագործությունները, պատմագրական, փիլիսոփայական, գեղարվեստական, բժշկագիտական, տիեզերագիտական բացառիկ գիտական արժեք ունեցող հարյուրավոր ընտիր ձեռագրեր: Համապատասխանաբար հարստացել են նաև Մատենադարանի մյուս հավաքածուները՝ արխիվային փաստաթղթերը, հնատիպ գրքերի բաժինը և հայագիտական գրադարանը: Այսպիսով, Մատենադարանը դարձել է հազարամյա հայ մշակույթի ոսկե ֆոնդի խոշորագույն պահեստարանը:

Ձեռագրեր ընդօրինակող գրիչներն ու ծաղկող մանրանկարիչներն իրենց հիշատակարանների մեջ բազմիցս աղերսագին դիմումներ են հղել մեծ զոհողությունների գնով ստեղծվող արժեքների ապագա տերերին՝ խնդրելով գուրգուրանքով խնամել ձեռագրերը, հեռու պահել ջրից ու

կրակից, մաքուր լաթով բանել, թուղթ չկարել և այլն: Իսկ ամենից ավելի ազդում են՝ փակ չպահել և կուռ չդարձնել գիրը, քանի որ այն ստեղծվում է ընթերցանության համար, ուստի սիրով և պատրաստակամությամբ պետք է տալ բոլոր նրանց, ովքեր կարդալու կամ ընդօրինակելու ցանկություն ունեն: Այս դիմումները ցանկալի արդյունք քիչ են տվել: Միջնադարյան վանքերին կից գրատներում ու պահեստներում, ինչպես և մասնավոր անձանց բնակարաններում, վատ խնամքի ու պահպանության անբարենպաստ պայմանների հետևանքով փչացվում և ոչնչացվում էին հազարավոր ձեռագրեր: Այդ մասին կան բազմաթիվ ստուգապատում վկայություններ: Այսպես, հայտնի է, որ 16-րդ դարի կեսերին Մշո Սուրբ Կարապետ վանքի վանականները բազմաթիվ ձեռագրեր պահել են վանքի խոնավ գարանում: Երբ տարիներ անց բացում են այն և տեսնում, որ փթել են բոլոր գրքերն ու դարձել անօգտագործելի, թաղում են դրանք հողի մեջ («ամփոփեցին ի հողն»): Բարեբախտաբար, հայտնվում է գրասեր մի անձնավորություն, պեղում է դրանք, հանձնում մի փորձված նորոգողի և, ի թիվս այլ ձեռագրերի, փրկում նաև մանրանկարչական փառահեղ մի ձեռագիր, որն այսօր իր արժանի տեղն է գրավել հայ մանրանկարչության պատմության մեջ: Տգետ մարդկանց կողմից մեծաքանակ ձեռագրերի ոչնչացման բազմաթիվ փաստերից հիշատակենք նաև Հաղբատի վանքի գրատան պատմության հետ առնչվող տխուր փաստը: Վանքի մեծահարուստ գրադարանի գրքերի մեծ մասը, հնագույն ժամանակներից սկսած, պահվելիս է եղել դժվարամատչ քարանձավներում: 1777 թ. մոտակայք մի առաջնորդի հրամանով հանվել են Ջրաղացի ձորի մեծ քարայրում պահվող անհամար ձեռագրերը. ամբողջական մնացածները հափշտակվել են տարբեր մարդկանց կողմից, իսկ հնագույն՝ մաշված ու թերի մատյանները՝ կիտել են իրար վրա ու դարձրել հրո ճարակ: «Ժողովեալ առ հասարակ հանդէպ դանդատան դրան իբրեւ տասն կամ երկոտասան ոտնաչափ թանձրութեամբ, հուր էարկ եւ այրեաց զամենայն իբրեւ զանպիտան», - գրում է ժամանակակից պատմիչը: Նման դեպքեր տեղի են ունեցել նաև Սևանի վանքում, Տաթևում և այլուր:

Էջմիածնի Մատենադարանի ձեռագիր արժեքների պահպանության վիճակը բարվոքելու մասին անցյալում շատ է խոսվել. «Մի քանի հարյուրյակ բավական է բոլորովին չար Ահրիմանի ձեռքից փրկելու այն

թանգարանը, որի իսկական արժեքը գնահատել միայն ապագային է թողյալ», գրել է ականավոր հայագետ Ն. Մառը 1893 թ., սակայն այդ «չար Ահրիմանն» իր չար գործը կատարել է անդադրում, նույնիսկ 1910 թ. հետո, երբ Էջմիածնում կառուցվեց Մատենադարանի համար հատուկ շենք՝ ձեռագրերի պահպանության պայմաններին անհամապատասխան իր գրապահոցով:

Գիտական պահպանության մեծ կարևորություն ունեցող խնդիրը նույնպես լուծվեց խորհրդային իշխանության տարիներին: 1939 թ. Մատենադարանը փոխադրվեց Երևան. ձեռագրերը ժամանակավորապես ապահով կայան գտան Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի օդասուն ու գեղեցիկ կենտրոնական սրահում: Դարերի ընթացքում ձեռք բերած «հիվանդությունների» բուժման, ախտահանման, վերանորոգման ու վերականգնման նպատակով ստեղծվեց հատուկ բաժին, որը համալրվեց կարող մասնագետներով (քիմիկոս, միկրոբիոլոգ, հմուտ վերականգնողներ և ուրիշներ): Այդ, սակայն, մեծ գործի սկիզբն էր միայն: Դեռ չէր ավարտվել խորհրդային ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը, դեռ տուն չէին վերադարձել պատերազմ մեկնած մատենադարանցիները, երբ Հայաստանի կառավարության հատուկ որոշմամբ, սկսվեցին Մատենադարանի նոր, հոյակապ շենքի կառուցման աշխատանքները: Այդ շենքը կանգուն է արդեն երկու տասնամյակից ավելի ու դարձել է Հայաստանի ծաղկուն մայրաքաղաքի ճարտարապետական հրաշալիքներից մեկը: Եվ այստեղ ստեղծվել են այնպիսի կատարյալ պայմաններ ձեռագիր հուշարձանների պահպանության համար, որ ընդօրինակվում են նույնիսկ շատ ավելի բախտավոր անցյալ ունեցող ժողովուրդների կողմից:

Փոխադրվելով նոր շենք, Մատենադարանը թևակոխեց իր պատմության նոր՝ ամենաարգասավոր շրջանը. գրապահոց-մատենադարանի հիմքի վրա ստեղծվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարանը, որը հետագայում (Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի օրերին) ստացավ հայկական այբուբենի ստեղծող և գրականության հիմնադիր մեծն Մաշտոցի անունը: Գիտահետազոտական որոշ աշխատանքներ Մատենադարանում կատարվել էին նաև դրանից առաջ, սակայն հին ձեռագրերի ինստիտուտ դառնալուց, ինչպես նաև համապատասխան կադրերով համալրվելուց և

նոր երիտասարդ մասնագետներ պատրաստելու հնարավորություններ ձեռք բերելուց հետո միայն, աննախընթաց ծավալ ստացան Մատենադարանի ձեռագրերում ամփոփված նյութերի ուսումնասիրության և գիտական հրատարակության ասպարեզում տարվող աշխատանքները: Մատենադարանը դարձավ Խորհրդային Միության աղբյուրագիտական ճանաչված կենտրոններից մեկը:

Մեկ հոդվածով անհնար է նույնիսկ ընդհանուր գաղափար տալ այն մասին, թե ինչ է արվել Մատենադարանում ձեռագրական սկզբնաղբյուրների ուսումնասիրության ու հրապարակման բնագավառում: Տպագրվել են հարյուրից ավելի գրքեր, շուրջ երկու հազար մեծ ու փոքր հոդվածներ, որոնք վերաբերում են միջնադարյան հայ գրականության բոլոր մարզերին: Մաշտոցի անվան Մատենադարանի անձնակազմը կոչված էր ոչ միայն շարունակելու հայ բանասերների նախորդ սերնդի սկսած գործը հայ պատմագիրների, բանաստեղծների և մատենագրության այլ բնագավառներում ստեղծագործած միջնադարյան գիտնականների ժառանգության ուսումնասիրության ուղղությամբ, այլև վերագնահատելու այդ ժառանգությունը, ընդարձակելու հայ աղբյուրագիտության ավանդական սահմանները, գիտահետազոտական աշխատանքների ոլորտի մեջ անելով մինչև հեղափոխությունն անտեսված, բայց ժողովրդի հոգևոր ու նյութական կյանքի պայմանների ուսումնասիրության առումով առաջնային նշանակություն ունեցող ձեռագիր սկզբնաղբյուրները: Այդ աշխատանքները ծավալելու նախապայմանը մեծ չափով կապված էր ձեռագրական ողջ հավաքածուի գիտական նկարագրության հետ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Մատենադարանի մի խումբ աշխատակիցների ջանքերով կազմվեցին նախ ուղեցույց ցանկեր. պատմագրության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, տիեզերագիտության, բժշկության և գիտության այլ բնագավառների մասին ձեռագրերում առկա նյութերի, այնուհետև երկու ընդարձակ հատորներով հրապարակվեցին հայերեն բոլոր ձեռագրերի համառոտ նկարագրությունները, և դրանից հետո սկսվեց մանրակրկիտ Մայր ցուցակի ստեղծման դժվարին աշխատանքը:

Հոբելյանական այս օրերին ուրախությամբ կարող ենք ծանուցել մեր ընթերցողներին, որ պատրաստ են արդեն Մատենադարանի հայերեն

ձեռագրերի մայր ցուցակի 3 հատորները*, և որ դրանք իրենց բովանդակությամբ ու սկզբունքներով գերազանցում են մինչև օրս հրապարակված բոլոր նմանատիպ ցուցակները: Այս ցուցակի միջոցով գիտական շրջանառության մեջ են դրվելու մինչև օրս անհայտ մնացած հազարավոր նյութ-միավորներ, որոնք մեծապես կհարստացնեն մեր գիտելիքները միջնադարյան հայ մատենագրության տարողության ու գիտական նշանակության մասին: Ցավով պետք է նշել, որ ստեղծվել են որոշ դժվարություններ արդեն պատրաստի այդ հատորները պոլիգրաֆիական բարձր մակարդակով տպագրելու ճանապարհին, սակայն պետք չէ տարակուսել, որ դրանք առաջիկայում կհաղթահարվեն:

Ողջ միջնադարի ընթացքում Հայաստանի տարբեր նահանգներում և հայկական գաղթավայրերում ապրել ու ստեղծագործել են հարյուրից ավելի պատմագիրներ ու ժամանակագիրներ, որոնց գրվածքներում առաջնակարգ նյութեր կան ոչ միայն Հայաստանի ու Այսրկովկասի, այլև բոլոր այն երկրների մասին, որոնց հետ քաղաքական, տնտեսական ու մշակութային կապեր են ունեցել մեր նախնիները: Պատմագրական այդ հուշարձանների մեծ մասը հրատարակված է եղել անցյալում, դրանց զգալի մասը թարգմանվել է նաև օտար լեզուներով: Օրինակելի ավանդույթներ ունեցող այս գործը, աղբյուրագիտական արդի պահանջներին համապատասխան, շարունակվել է մեր օրերում, Մատենադարանի աշխատակիցների ջանքերով: Ամեն մի պատմագրական երկի բոլոր մեզ հասած ձեռագիր ընդօրինակությունների բաղդատությամբ և հանգամանալից ներածական ուսումնասիրություններով հրապարակվել են արդեն Եղիշեի, Սեբեոսի, Արիստակես Լաստիվերցու, Անանուն զրուցագրի, Կիրակոս Գանձակեցու, Աբրահամ Կրետացու և այլ հեղինակների պատմագիտական երկերը: Մասամբ պատրաստ են, մասամբ էլ ընթացքի մեջ են նաև այլ պատմագիրների՝ Փավստոս Բուզանդի, Մովսես Կաղանկատվացու, Սամվել Անեցու, Վարդան Արևելցու, Գրիգոր Ակնեցու, Մխիթար Այրիվանեցու, Թովմա Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու և ուրիշների երկերի գիտական բնագրերը:

Դրան զուգընթաց մեծ աշխատանք է կատարված հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակության ուղղությամբ: Հիշատա-

* Այժմ, 2005 թ., հրատարակված են Ա և Բ հատորները (Երևան, 1984, 2004) - Խմբ.:

կարանները, գրված լինելով պատմական անցուդարձերի ժամանակակից ու ականատես շարքաշ մշակների՝ գրիչների և ծաղկողների կողմից, պարունակում են բացառիկ արժեքավոր ու արժանահավատ տեղեկություններ աշխատավոր ժողովրդի կյանքի ու կենցաղի, օտար բռնակալների կազմակերպած հարատև աշխարհակործան արշավանքների, իր ազգային դիմագիծն ու մշակութային ավանդույթները պահպանելու համար ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին: Հրատարակվել են արդեն 14 և 15-րդ դարերի հիշատակարաններն ամբողջապես, 17-րդ դարի հիշատակարանների մի մասը, հրատարակության ընթացքի մեջ են 5-13-րդ դարերի հիշատակարանները, պատրաստված են հրատարակության մյուս դարերի համապատասխան նյութերը: Պատմական կարևորագույն սկզբնաղբյուրներ են նաև միջնադարյան Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ գործիչների շարադրած պաշտոնական գրությունները՝ կոնդակներ, շրջաբերականներ, նամակներ, ինչպես նաև վանական հաստատությունների ու ֆեոդալական գերդաստանների կալվածքների, եկամտաբեր այլ հաստատությունների մասին հայերեն և օտար լեզուներով պահպանված հրովարտակներ, կալվածագրերը և նմանատիպ այլ փաստաթղթեր: Ծավալուն աշխատանք է կատարված նաև այդ նյութերի գիտական ուսումնասիրության և հրապարակման մարզում: Հրապարակվել են մասնավորապես Մատենադարանի պարսկերեն հրովարտակները և Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը խորագրով մեծարժեք հատորները, շուտով հրատարակության են հանձնվելու Դիվան հայ պատմության վերականգնվող մատենաշարի հերթական հատորները:

Մատենադարանի գիտական անձնակազմի ուշադրության կենտրոնում են գտնվել նաև միջնադարյան Հայաստանի իրավունքի պատմության սկզբնաղբյուրները: Պատշաճ գիտական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հրատարակվել են Մխիթար Գոշի Գիրք դատաստանի նշանավոր երկի նախնական ու համառոտ խմբագրությունները, Կանոնագիրք Հայոց կոչվող եկեղեցական կանոնների երկհատոր ժողովածուն (Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից) և Հարավային Ռուսաստանի հայկական գաղթօջախների ինքնավար համայնքների համար ստեղծված դատաստանագիրքը, որ հայտնի է գիտությանը Աստրախանի հայոց դատաստանագիրք անունով:

Ողջ միջնադարի ընթացքում, իսկ շատ ավելի մեծ ծավալով 17-18-րդ դարերում, Հայաստանի քաղաքներն ու հարևան երկրների վաճառաշահ կենտրոնները մեծ դեր են կատարել եվրոպական և ասիական մայրցամաքների միջև կատարվող ապրանքափոխանակության բնագավառում: Հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչները առևտրական կապեր են ստեղծել արևելյան և արևմտյան բազմաթիվ երկրների հետ (Իտալիա, Հոլանդիա, Ռուսաստան, Իրաք, Թուրքիա, Հնդկաստան և այլն)՝ հիմնական դեր ստանձնելով հատկապես եվրոպական երկրներ հում մետաքս, թանկագին քարեր և արևելյան համեմունքներ արտահանելու բնագավառում: Հայ վաճառականները, որպես կանոն, գրել են ամենօրյա առևտրական իրենց գործարքների մասին հաշվապահական մատյաններ, որոնց մեջ ամրարված են բացառիկ արժեքավոր տվյալներ տարբեր երկրներում արտադրվող ու արտահանվող ապրանքների, դրանց շուկայական գների, առևտրական երթուղիների, մաքսատներում գանձվող տուրքերի, վաճառվող ապրանքներից ստացվող շահի, դրամի փոխադրման եղանակների, բանկային և վաշխառուական գործարքների և հարակից հարցերի մասին: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Մատենադարանը ձեռնարկել է այդ կարգի սկզբնաղբյուրների ուսումնասիրության և հրապարակման աշխատանքներ: Արդեն տպագրության է հանձնվել Տնտեսական պատմության վավերագրեր մատենաշարի առաջին գիրքը՝ Հովհաննես Տեր-Դավթյանի Հաշվեմատյանը: Ջուղայեցի այս վաճառականը 1683-1694 թթ. առևտուր է արել Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում: Այս մատենաշարով լույս են ընծայվելու նաև այլ սկզբնաղբյուրներ և հայկական խոշոր վանական տնտեսությունների առօրյա տնտեսական գործունեության մասին առկա կարևորագույն մատյանները*:

Միջնադարյան հայ գեղարվեստական գրականության հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության աշխատանքները նույնպես եղել են ուշադրության կենտրոնում: Մատենադարանի և ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղ-

* Շուշանիկ Խաչիկյանի աշխատասիրությամբ հրատարակվել են «Շահվելու որդի Մարհասի Հաշվեմատյանը» (Երևան, 1994 թ.) և «Ղազարեան առևտրական ընկերութեան Հաշուեմատեանը (1741–1759 թթ.)» (Երևան-Իսպահան, 2006 թ.) – Խմբ.

յանի անվան գրականության ինստիտուտի մասնագետները, միավորելով իրենց ուժերը, մեծ մասամբ առաջին անգամ, հրատարակել են միջնադարյան հայ բանաստեղծներից շատերի՝ Գրիգոր Տղայի, Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Ալթամարցու, Հովասափ Սեբաստացու, Սիմեոն Ապարանցու, Մարտիրոս Ղրիմեցու, Հովնաթան Նաղաշի, Պաղտասար Դպիրի, Պետրոս Ղափանցու և այլոց ստեղծագործությունների ամբողջական կամ հատընտիր երկերը՝ ներածական հմուտ ուսումնասիրությունների հետ միասին: Լույս են տեսել նաև թեմատիկ մի շարք ժողովածուներ: Հրատարակության ընթացքի մեջ են գտնվում Գրիգոր Նարեկացու գանձերի ու տաղերի համահավաքը (որտեղ կան մի շարք նորահայտ ստեղծագործություններ), Ներսես Շնորհալու և միջնադարյան այլ հեղինակների հանելուկների ամբողջական ժողովածուն և այլ մեծարժեք աղբյուրագիտական երկեր: Զուգահեռ առաջ են տարվում միջնադարյան առակների, զրույցների, տեսիլքների, վարքագրական ու վկայաբանական բնագրերի և միջնադարյան արձակի մյուս տարատեսակների ի մի բերման, մասնագիտական վերլուծության և հրատարակության աշխատանքներ: Այս գործի հաջողությունը պայմանավորված է ծիսական նշանակություն ունեցող միջնադարյան մի շարք ժողովածուների (Հայսմավուրք, Ճառընտիր, Գանձարան, Մաշտոց) մասնագիտական վերլուծությամբ և աղբյուրագիտական ուսումնասիրությամբ: Դրանք, անշուշտ, ստեղծված են եկեղեցու կարիքների համար, սակայն ամբարել են իրենց էջերում նաև գեղարվեստական ու ճանաչողական մեծ նշանակություն ունեցող գրական ստեղծագործություններ: Այս մարզում ևս կատարված է օգտակար աշխատանք, որն առավել կծավալվի առաջիկայում:

Արգասավոր են եղել նաև հայ փիլիսոփայության անցած հազարամյա ուղին լուսաբանելու համար անհրաժեշտ սկզբնաղբյուրների հրատարակության և ուսումնասիրության աշխատանքները: Լույս են տեսել Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավագի, Վահրամ Ռաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և այլ իմաստասերների մի շարք արժեքավոր աշխատություններ, մեծ մասամբ, դրանց ռուսերեն թարգմանություններին զուգահեռ: Վերջերս Մատենադարանի աշխատակիցների ջանքերով հսկայական աշխատանք տարվեց մասնավորապես Դավիթ Անհաղթի ժառանգության ուսումնասիրության, թարգմանության ու

հրապարակման ուղղությամբ, որով և անհրաժեշտ նախապայմաններ ստեղծվեցին այդ մեծ մտածողի ծննդյան 1500-ամյա հոբելյանն այս տարվա մայիս ամսին շուքով նշելու համար:

Որոշ աշխատանք կատարված է նաև բնագիտական, բժշկական, աստղաբաշխական, մաթեմատիկական և ալքիմիական ձեռագրերի ուսումնասիրության ասպարեզում: Պետք է խոստովանել, սակայն, որ այս բնագավառների շատ խրթին ու բարդ բովանդակություն ունեցող նյութերի ուսումնասիրության ընթացքում եղել են նաև տխուր վրիպումներ: Այս կամ այն հեղինակին, առանց բավարար հիմքի, վերագրել են ուրիշների աշխատություններ և նրանցից շատ դարեր առաջ արտահայտված մտքեր ու տեսակետներ: Եվ այս տեղի է ունեցել առաջին հերթին այն պատճառով, որ միջնադարյան գիտությունների պատմության հարցերով հետաքրքրվողների շարքում եղել են մարդիկ, որոնք կա՛մ մասնագիտական համապատասխան գիտելիքներ չեն ունեցել, կա՛մ լավ չեն տիրապետել գրաբարին ու միջին հայերենին: Նկատի ունենալով, ահա, այդ հանգամանքը, Մատենադարանում ծրագրված աշխատանք է կատարվել համապատասխան մասնագետներ պատրաստելու նպատակով. նրանց և փորձված մի շարք բանասերների համատեղ ջանքերն սկսել են արգասավորվել. արդեն հրատարակվել են զգալի քանակությամբ միջնադարյան բնագիտական ու բժշկական բնագրեր. Մխիթար Հերացու Ջերմանց մխիթարութիւն աշխատության ռուսերեն նոր ու լրացված թարգմանությունը, Գրիգորիս բժշկապետի Քննութիւն բնութեան մարդոյ ուշագրավ աշխատությունը, միջնադարյան հայկական մեծարժեք Ձիաբուժարանի բնագիրը, Աբուսայիդ և Իշոխ ասորի բնագետների Կիլիկյան Հայաստանում հայոց լեզվով շարադրված բնագիտական երկերը, բազմաթիվ հոդվածներ միջնադարյան հայ դեղագիտարաններում ամբարված օգտակար գիտելիքների և դրանց օգտագործման հեռանկարների մասին և այլն:

Հրատարակության են պատրաստվել նաև 15-րդ դարի նշանավոր աստղագետ Հակոբ Ղրիմեցու, 16-րդ դարի սեբաստացի բժիշկներ Ասարի և Բունիաթի հետաքրքրական աշխատությունները, Ամիրդովլաթ Ամասիացու բազմահարուստ դեղագիտարանի (Անգիտաց անպէտ) ռուսերեն թարգմանությունը. ներկերի ու թանաքների պատրաստման եղանակների մասին միջնադարյան խրատների հարուստ ժողովածուն և այլ բնագրեր:

Հայերեն ձեռագրերի մեջ զգալի տեղ են գրավում նաև երաժշտական նյութերը. կան մի շարք ժողովածուներ (Տաղարաններ, Մանրուսմունքներ, Գանձարաններ և այլն), որոնցում խազերի (միջնադարյան երաժշտական ձայնանիշների) միջնորդությամբ գրանցված են մեր նշանավոր երաժիշտների ստեղծած հոգևոր և աշխարհիկ հարյուրավոր երգեր, որոնց մի մասը միայն բերանացի հաղորդումով հասել է մեզ, դարերի ընթացքում, անշուշտ, կրելով զգալի փոփոխություններ:

Զգալի աշխատանք է կատարվել երաժշտական նյութերի ուսումնասիրության առումով. գրվել են նշանավոր երգահանների մասին ուսումնասիրություններ, Երաժշտության տեսությունը հին Հայաստանում մենագրությունը և այլն: Սակայն կատարվածը մեծ գործի սկիզբն է միայն: Անհրաժեշտ գիտելիքների տեր երաժիշտ-միջնադարագետների երիտասարդ կադրերի պատրաստումից հետո հնարավոր կլինի նոր թափ հաղորդել հայ հին երգարվեստի մասին առկա ձեռագրական նյութերի ուսումնասիրությանը:

Ավելի բարվոք է վիճակը մանրանկարչական նյութերի ուսումնասիրության բնագավառում: Միջնադարյան հայ մանրանկարիչներն ստեղծել են արվեստի սքանչելի հուշարձաններ, որոնք, սակայն, մինչև վերջին տարիներս անհայտ են եղել արվեստասեր աշխարհին: Վերջին քանամյակի ընթացքում Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Մատենադարանի գիտական աշխատողների համագործակցությամբ հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ Կիլիկիայի, Ղրիմի, Վասպուրականի, Գլաձորի, Տաթևի և այլ հայկական շրջանների հայ մանրանկարչական դպրոցների մասին, ուսումնասիրվել է Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու և այլ մանրանկարիչների ժառանգությունը. կազմվել է հայերեն նկարազարդ ձեռագրերի և հայ մանրանկարիչների մատենագիտական արժեքավոր ցանկ-ուղեցույց և այլն: Հայկական մանրանկարչություն, Արհեստ ու կենցաղը հայկական մանրանկարներում, Վասպուրականի հայկական մանրանկարչություն, Հայ ձեռագիր զարդանկարչություն փառահեղ ալբոմների հրատարակությամբ, որոնք օժտված են հայերեն, ռուսերեն և անգլերեն կամ ֆրանսերեն ներածական ուսումնասիրություններով ու ծանոթագրություններով, հայ մանրանկարչությունը դուրս է բերվել ազգային նեղ շրջանակներից, դրավել համընդհանուր

ուշադրություն Խորհրդային Միության և արտասահմանյան արվեստաբանների շրջաններում: Մատենադարանը շարունակում է այդ կարևոր աշխատանքը. հանձնված են արդեն տպագրության Դիմապատկերը միջնադարյան Հայաստանում, Հովհաննես Սանդղկավանեցի ալբոմները, պատրաստության ընթացքի մեջ են Տաթևի դպրոցի երկու հուշարձան ալբոմը և նմանատիպ այլ գործեր:

Գրերի գյուտից անմիջապես հետո Մեսրոպ Մաշտոցն ու նրա մերձավոր գործակիցները ծավալեցին թարգմանչական լայն գործունեություն. հունարենից և ասորերենից թարգմանվեցին հին և նոր կտակարանները, իմաստասիրական, պատմական, մեկնողական, վկայաբանական ու ծիսական բազմաթիվ գրվածքներ: Թարգմանչական աշխատանքն անընդմեջ շարունակվեց նաև հետագա դարերում: Հունաբան կոչվող դպրոցի ներկայացուցիչները հայերեն թարգմանեցին Արիստոտելի, Պլատոնի, Փիլոն Աղեքսանդրացու, Դիոնիսիոս Թրակացու և անտիկ ու հելլենիստական շրջանի այլ նշանավոր հեղինակների շատ աշխատություններ. դրանց շարքում հատուկ արժեք են ստանում պատկառելի քանակ կազմող այն երկերի թարգմանությունները, որոնց հունարեն կամ ասորերեն բնագրերը կորստի են մատնվել: Հայ թարգմանական գրականությունը նշանակալից արդյունքներ է տվել նաև հետագա դարերում: 10-րդ դարից սկսած թարգմանություններ են կատարվել նաև արաբերենից, ապա՝ լատիներենից, իսկ 16-17-րդ դարերում երևան են եկել նաև գիտական ու գեղարվեստական ուշագրավ աշխատությունների թարգմանություններ՝ կատարված իտալերենից, ֆրանսերենից, լեհերենից, ռուսերենից, իսպաներենից և եվրոպական այլ լեզուներից:

Թարգմանական գրականության հուշարձանների մի փոքր մասն է միայն գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված ու հրատարակված: Այս բնագավառում հսկայական անելիքներ կան, անսպառ աշխատանք, որ կատարելու են հաջորդ սերնդի ներկայացուցիչները: Սակայն մեծ գործի սկիզբը դրված է արդեն. լույս են տեսել Արիստոտելի Ստորոգությանց 6-րդ դարի Անհայտ մեկնիչի աշխատության հայերեն թարգմանությունը, Զենոն Իմաստասերին և Հերմես Եռամեծին վերագրված երկերը և այլն. շուտով տպագրության կհանձնվեն հայ դասական թարգմանություններից Ծննդոց և Մակաբայեցոց գրքերի գիտական բնագրերը,

Բարսեղ Կեսարացու Վեցօրեայքի *բնագիրը և թարգմանական այլ հուշարձաններ։*

Աշխատանքի բնագավառների համառոտ այս թվարկումն իսկ բավական է՝ ուրվագծելու Մատենադարանում տարվող աղբյուրագիտական-հետազոտական աշխատանքների սահմանները բացահայտելու դրանց գիտական նշանակությունը հայ միջնադարյան մատենագրության համակողմանի ուսումնասիրության համար։ Պատկերը, սակայն, թերի կլինի, եթե մի քանի խոսք չասենք ձեռագրական նշանավոր հուշարձանների ռուսերեն թարգմանությունների մասին, այսինքն՝ կարևոր այն աշխատանքի, որի շնորհիվ միայն հայ մատենագրության գանձերը դուրս են բերվում գիտական նեղ շրջանակներից, մատուցվում հայ և օտարազգի ընթերցող հասարակայնությանը։

Գրաբարագետ-ռուսագետ բանասերների Մատենադարանում աշխատող խումբը, որ տարիների համառ աշխատանքով հմտացել է իր մասնագիտության մեջ, զգալի գործ է կատարել հայ փիլիսոփայական հուշարձանների, պատմական- վարքաբանական բնագրերի, բնագիտական ու բժշկական աշխատությունների բարձրորակ թարգմանություններ կատարելու ուղղությամբ։ Ռուսերեն թարգմանվել և լույս են տեսել Դավիթ Անհաղթի, Վահրամ Րաբունու, Հովհան Որոտնեցու և այլ իմաստասերների մի շարք աշխատություններ, Անանիա Շիրակացու տիեզերագիտական գրվածքների համընտիր ժողովածուն, հայ պատմագիրներից Կորյունի, Եղիշեի, Անանուն գրուցագրի, Արիստակես Լաստիվերցու, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավագի, Սիմեոն Լեհացու, Աբրահամ Կրետացու պատմական գրվածքները, հայ վարքաբանական գրականության լավագույն նմուշների մի հատոր, մի ամբողջական շարք բնագիտական-բժշկական երկեր և այլն։ Այդ աշխատանքը շարունակվում է ծավալվել. շուտով ավարտվելու և տպագրության են հանձնվելու Ղազար Փարպեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Հովհան Մամիկոնյանի, Գրիգոր Դարանաղցու պատմագրական երկերի, Ամիրդովլաթ Ամասիացու Անգիտաց անպէտի *և միջնադարյան այլ նշանավոր գիտական ու գրական հուշարձանների թարգմանությունները։ Ուշադրության կենտրոնում է Գրիգոր Նարեկացու* Մատեան ողբերգութեան *հանճարեղ ստեղծագործության առաջի ռուսերեն թարգմանության աշխատանքը, իր ավարտին է մոտենում և*

Մովսես Խորենացու Հայոց պատմության *ռուսերեն նոր թարգմանությունը։*

Շեշտում ենք հայ հին գրականության այս երկու հսկաների գլուխգործոցների թարգմանության նպատակով տարվող աշխատանքների հույժ կարևորությունը։ 1962 թ. Կորյունի Վարք Մաշտոցի *երկի թարգմանությամբ և Մեսրոպ Մաշտոցի մասին մի շարք հոդվածների հրատարակությամբ համապատասխան պայմաններ ստեղծվեցին շուքով ու խանդավառությամբ տոնելու մեծ երախտավորի ծննդյան 1600-ամյա հոբելյանը, որը վիթխարի նշանակություն ունեցավ հայ մշակույթի առաջավոր ավանդույթների պրոպագանդման համար։ Անտարակույս, առաջիկայում, երբ պատրաստ կլինեն վերոհիշյալ ստեղծագործությունների գիտական բնագրերը, ռուսերեն թարգմանությունները և մի շարք ուսումնասիրություններ դրանց մասին, հնարավորություններ կստեղծվեն նշելու նաև Մովսես Խորենացու* Պատմության 1500 *և* Ողբերգության մատյանի *1000-ամյակը։ Այդ հուշարձանները մեծապես կնպաստեն հայ պատմահոր և մեծ բանաստեղծ Նարեկացու անմահ ստեղծագործությունների ըստ արժանվույն գնահատման և համայն մարդկության սեփականությունը դարձնելու վեհ գործին։*

Միջնադարյան մեր նշանավոր մատենագիրների հոբելյանները գիտականորեն նախապատրաստելու խնդիրը միշտ էլ Մատենադարանի անձնակազմը համարել է իր կարևորագույն գործը, *ձեռք բերված գիտական արդյունքների ծանուցման և տարածման արգասավոր ուղիներից մեկը։ Ահա թե ինչու, Մատենադարանում, վերջին մի քանի տարիների ընթացքում հոբելյանական գիտական նստաշրջաններ են գումարվել՝ նվիրված Ներսես Շնորհալուն, Մխիթար Գոշին, Մխիթար Հերացուն, Հովնաթան Նաղաշին և հայ մշակույթի այլ երախտավորների, ինչպես նաև հիշարժան պատմաքաղաքական կարևոր անցուդարձերին։ Առաջիկայում այդպիսի նստաշրջաններ են գումարվելու նաև՝ նվիրված հայ ձեռագրական մշակույթի ամենաարժեքավոր նմուշներին։ 1981 թ., օրինակ, լրանում է հազարամյակը հայերեն հնագույն թղթյա ձեռագրի, որը հայտնի է գիտական աշխարհին նաև իր ճոխ բովանդակությամբ։ Անհրաժեշտ աշխատանքներ են կատարվում հրատարակելու այդ բացառիկ բնագրի լուսատիպ նմանահանությունը և պատշաճ ուսումնասիրություն դրա*

աղբյուրագիտական և հնագրական նշանակության մասին*:

Սրանք են աղբյուրագիտական և ձեռագրագիտական աշխատանքների հիմնական ուղղությունները, որոնց շուրջ համախմբվել է Մատենադարանի գիտական անձնակազմը: Սակայն կատարված աշխատանքի պատկերն անկատար կլինի, եթե հաշվի չառնենք ուշագրավ մի հանգամանք ևս: Տարիներ շարունակ զբաղված լինելով ձեռագիր բնագրերի ուսումնասիրությամբ, ձեռագրերի գիտական նկարագրությամբ և հարակից աշխատանքներով, Մատենադարանի աշխատակիցներից շատերը, աղբյուրագիտական ուսումնասիրություններից զատ, գրել են նաև արժեքավոր մենագրություններ, մշակել հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի դեռևս չլուսաբանված շատ պրոբլեմներ: Փիլիսոփայական գիտության ձևավորումը հին Հայաստանում, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, Աղվանից աշխարհի գրականությունը, Հողային հարաբերությունները միջնադարյան Հայաստանում, Զաքարյան Հայաստանի իրավաքաղաքական ստատուսը, 18-րդ դարի հայ գեղարվեստական գրականության առանձնահատկությունները. ահա այդ ուսումնասիրությունների ոչ լրիվ ցանկը: Եվ դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ Մատենադարանի աշխատակիցներից շատերն ամենագործուն մասնակցություն են ունեցել ՍՍՀՄ գիտական կենտրոնների և Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչական ինստիտուտների նախաձեռնությամբ ստեղծվող կապիտալ աշխատությունների շարադրման գործում. գրել են Հայ ժողովրդի պատմություն, Հայ նոր գրականության պատմություն բազմահատորյակների և կոլեկտիվ այլ աշխատությունների կարևոր մի շարք բաժիններ, Հայկական սովետական հանրագիտարանի բազմաթիվ հոդվածներ և այլն: ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի մակնիշով հրատարակվող Памятники письменности Востока մատենաշարի մի շարք հատորներ հրատարակության են պատրաստել Մատենադարանի գիտական

* Ձեռագրի նմանահանությունը, վերծանությունը և ուսումնասիրությունը տե՛ս «Մատեան գիտութեան և հաստոյ Դաւթի Խաճանայի», Երևան, 1995 (նմանահանություն), 1997 (վերծանություն, ուսումնասիրություն ու ծանոթագրություններ, ցանկեր): Աշխատասիրությամբ Արտաշես Մաթևոսյանի – խմբ.:

աշխատողները և այլն:

Մատենադարանը համընդհանուր ճանաչում է գտել Հայաստանում և նրա սահմաններից դուրս նաև իր ցուցասրահով, որի այցելուները հնարավորություն են ստանում միջնադարյան ձեռագրական հուշարձանների ընտիր նմուշների միջոցով գաղափար կազմելու հայերեն ձեռագրերի բովանդակության, ձևավորման ու նկարազարդման սկզբունքների և գիտական նշանակության մասին: Նոր շենքի կառուցումից անցել է ընդամենը 23 տարի, այդ ընթացքում Մատենադարան են այցելել մոտ մեկ միլիոն հետաքրքրասեր մարդիկ՝ աշխարհի տարբեր մայրցամաքներից: Նրանցից շատերը հիացական խոսքեր են ասել այն բացառիկ հոգածության մասին, որով շրջապատված են 60 տարի առաջ իսպառ ոչնչացման վտանգի տակ եղող անգնահատելի ձեռագրական հուշարձանները, որ այսօր բացառիկ խնամքով պահվում են Մատենադարանում:

ՀԱՅ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ*

Ծանր վիճակ էր ապրում հայ ժողովուրդը մոնղոլական իշխանության անկման ժամանակաշրջանում: Քոչվոր նվաճողների ձեռնարկած հարատև ռազմաշարժերի հետևանքով քայքայվում էր ժողովրդական տնտեսությունը, օրավուր խստացող հարկային լուծը ծայրահեղ թշվառություն էր բերում աշխատավոր ժողովրդին, տիրապետող վերնախավի կողմից ծրագրված քաղաքականությամբ վերացվում էին հայ ավատատիրական դասի առանձնաշնորհումները, բռնագրավվում նրանց տիրապետության տակ գտնվող սակավաթիվ տիրույթները և այլն:

Համատարած ճնշումների այս քաղաքականությունը հարվածում էր նաև համազգային հաստատություն դարձած հայոց եկեղեցու շահերին, չնայած այդ հանգամանքին, Հայաստանի տարբեր նահանգներում դեռևս շարունակում էին իրենց գոյությունը պահպանել տնտեսապես ապահով վիճակ ունեցող մի շարք վանական հաստատություններ, որոնց կից գործում էին միջնակարգ դպրոցներ և համալսարաններ: Ուսումնական այդ կենտրոնների շուրջ համախմբված գիտնական վարդապետները, գերագույն ջանքեր գործադրելով, ձգտում էին ոչ միայն յուրացնել նախորդ սերունդների ստեղծած տեսական ու գործնական գիտելիքները, այլև հարստացնել դրանք նոր փաստերով ու դրույթներով: Այս ամենը, սակայն, կատարվում էր եկեղեցու ընձեռած անձուկ սահմաններում. ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում գիտությունը ստանձնել էր աստվածաբանության հլու կամակատարի դերը:

Եկեղեցու նշանավոր գաղափարախոսները, ընդունելով գիտական

---

* ՊԲՀ, 1971, N2, էջ 23-44: Այս հոդվածը «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի IV հատորի մշակույթի բաժնի մի ենթագլուխն է:

ուսումնասիրության կարևորությունը, իրենք իսկ զբաղվում էին գիտական աշխատանքով. միակ ճշգրիտ գիտությունը, սակայն, նրանց կողմից աստվածաբանությունն էր համարվում: «Գիտելի է,- գրում է նրանցից մեկը,- զի զանազանութիւն է ի մէջ աստուածաբանութեանն և այլ գիտութեանց: Զի թէպէտ և այլ գիտութիւնք երբեմն ճշմարտութիւն ունեն, սակայն բազում ստութիւնք և խաբէութիւնք խառնեալք են: Եւ այս է պատճառն, զի այլ գիտութիւնք լինին ի բանականն և ի մոլորեալ բանականութիւն մարդկան, բայց մեր աստուածաբանութիւնս և աստուածային գիրք՝ միշտ ճշմարիտ են»: Գիտական հետազոտությունների նկատմամբ եկեղեցու դիրքորոշումը Գր. Տաթևացին ձևակերպել է հակիրճ ու դիպուկ հետևյալ բանաձևով. «Բնական Քննութեանն հետևի հերձուած, իսկ հաւատոյն՝ ուղղափառութիւն»:

Տաթևի բարձրագույն դպրոցի և նրանից սերված մյուս ուսումնական հաստատությունների նշանավոր վարդապետները՝ Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին ու նրանց բազմաթիվ աշակերտները հավատարիմ մնացին այս սկզբունքին: Նրանք, ըստ մեծի մասի, վերաշարադրեցին նախորդ դարերում հայերեն լեզվով ստեղծված ինքնուրույն և թարգմանական գիտական գրականության մեջ ամբարված բնագիտական ուշագրավ տեղեկությունները, սակայն անկարող եղան տեսական նոր դրույթներ առաջ քաշել կամ ընդարձակել բնական երևույթների ուսումնասիրության ավանդական սահմանները:

Իր դասախոսությունների մեջ Հովհան Որոտնեցին, աստվածաբանական և փիլիսոփայական պրոբլեմներից բացի, քննարկել է նաև բնագիտական բազմաթիվ հարցեր: Մասնավորապես ուշագրավ են «Ի սկզբանէ, տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» բնաբանով նրա դասախոսությունները, որոնց մեջ ի մի են բերված հայ մատենագրությանը հայտնի գիտելիքները չորս սկզբնական տարրերի (էլեմենտների) մասին: Որոտնեցին քննադատում է անտիկ բնափիլիսոփայության բոլոր այն ներկայացուցիչներին, որոնք բնությունը դիտում են որպես մեն մի տարրի (հող, ջուր և այլն) փոխակերպման արդյունք. նա մերժում է նաև այն մատերիալիստ մտածողներին, որոնք ամենայն ինչի սկիզբ «զհիւլէ ասացին՝ այսինքն՝ զնիւթ»:

Հենվելով Արիստոտելի վրա, Որոտնեցին տարրերի առաջացումը

պատկերացնում է այսպես. ի սկզբանե ստեղծվել է անորակ գոյացությունը և աննյութական չորս որակություններ՝ ջերմություն, ցրտություն, գիճություն և չորություն: Եվ ահա, այս որակությունները, համակցվելով գոյացության հետ, ծնունդ են տալիս տարրերին՝ հրին, ջրին, օդին և հողին. «Իսկ որ ի ջերմն հպեալ նիւթ՝ հուր եղև, իսկ որ ցուրտ՝ ջուր եղև, իսկ որ գէջ՝ օդ եղև, և որ ի չոր՝ երկիր (այսինքն՝ հող). այսպէս չորս տարերք կազմեցան ի նիւթոյ և ի տեսակէ»:

Տարրերը, գոյացական հատկություններից բացի, ունեն նաև պատահական հատկություններ, ըստ որում մեկի պատահականը՝ մյուսի գոյացական հատկությունը լինելով՝ բոլոր տարրերն էլ շղթայաձև շաղկապվում են միմյանց: «Ունին տարերք,- գրում է նա այդ մասին,- տեսակ գոյացական և տեսակ պատահական. գոյացական ունի երկիր զչոր, իսկ պատահական զցուրտ. գոյացական ունի ջուր զցուրտ և պատահական՝ զգէջ, գոյացական ունի օդ զգէջ և պատահական՝ զջերմն, գոյացական ունի հուր զջերմն և պատահական զչոր»:

Բնության մեջ գոյություն ունեցող առարկաներն արդյունք են տարրերի տարբեր համամասնությամբ միացությունների, ըստ որում, համապատասխան պայմանների ազդեցությամբ մի տարրից առաջանում է մյուսը, սակայն տարրափոխությունն անմիջաբար տեղի է ունենում միայն ընդհանուր հատկություններ ունեցող տարրերի միջև:

Յուրաքանչյուր տարր բնության մեջ ունի իր որոշակի տեղը կամ դիրքը, որ պայմանավորված է նրա կշռով. հողը ծանրագույն տարրն է՝ «ամենայն տարերաց մայրը»:

Հովհան Որոտնեցին, չորս տարրերի ուսմունքից բացի, իր դասախոսությունների մեջ շոշափում է նաև բնագիտական և տիեզերագիտական բազմապիսի այլ հարցեր, փորձում յուրովի դասակարգել կենդանական աշխարհը: Նրա կարծիքով բոլոր կենդանիները՝ ըստ իրենց ծննդյան կերպի, բաժանվում են երեք խոշոր խմբերի. առաջինի մեջ մտնում են նեխման հետևանքով ծնունդ առածները (Որոտնեցին կարծում է, թե այդ ճանապարհով են ստեղծվում մժեղները, ճանճերը, որդերը և այլք), ձվից ծնվողները կազմում են երկրորդ մեծ խումբը, իսկ մոր արգանդից ծնվող կենդանիները՝ դասվում են երրորդ խմբի մեջ:

Կենդանիների մի մասը բուսակեր է, մյուս մասը՝ միայն մսակեր, իսկ

երրորդը՝ խառնակեր՝ «զի ուտեն ունդս և ուտեն միս»:

Սրանից հետո Որոտնեցին ծանոթացնում է իր ունկնդիրներին նաև Ոլիմպիոդորոս փիլիսոփայի դասակարգությանը, որի համաձայն կենդանիները բաժանվում են ցամաքային և ջրային խոշոր խմբերի, իսկ ցամաքայինները, իրենց հերթին, արյունավոր (մարդ, ձի, ոչխար) և անարյուն (մորեխ, մրջյուն, մեղու) ենթախմբերի և այլն[1]:

Իր բազմաթիվ աշխատությունների, մասնավորապես հանրագիտարանի բնույթ ունեցող «Հարցմանց գրքի» մեջ՝ տիեզերագիտական, կազմախոսական, կենդանաբանական ու բնագիտական հարցեր է քննարկել նաև Գրիգոր Տաթևացին: Կանգնած լինելով ժամանակի գիտության ամենաբարձր մակարդակի վրա, նա փորձում է գոհացում տալ իր հարցասեր ունկնդիրներին. ինչպես է երկիրը հաստատ մնում տիեզերքի կենտրոնում, ինչ կառուցվածք ունի երկինքը և ինչպես է շարժվում, ինչ հատկություններով են օժտված արեգակը, լուսինը, մոլորակները, ինչպես են առաջանում ծիածանը, կայծակն ու որոտումը, որտեղից են առեղծվում ամպերը, անձրևը, ձյունն ու կարկուտը, ծովի ջրերն ինչու են աղի և հարյուրավոր համանման հարցեր են քննարկվում Տաթևացու կողմից: Եվ այս բոլորի պատասխանը տրվում է Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Անանիա Շիրակացու, Հովհաննես Երզնկացու և օտարազգի ու հայ նշանավոր այլ գիտնական-վարդապետների տեսակետների խելամիտ համադրումով:

«Հարցմանց գրքի» երկու ընդարձակ հատորներ նվիրված են բույսերի, կենդանիների և մարդու կազմության ու բնության հարցերին: Բնախոսական, ֆիզիոլոգիական և սաղմնաբանական խնդիրները Գր. Տաթևացու կողմից նույնպես ներկայացվում են ժամանակակից գիտության ընձեռած փաստերի լույսի տակ. այստեղ, սակայն, ավելի, քան աշխատության մյուս մասերում, գիտական շարադրանքն ընդմիջարկվում է կրոնաբարոյախոսական անպտուղ բացատրություններով: Գր. Տաթևացու և նրան ժամանակակից մյուս գիտնականների աշխատությունների մեջ

[1] «Յովհաննու Որոտնեցւոյ Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» («Բանբեր Մատենադարանի», N 3, էջ 353-386): Տ. Ղազանչյան, Էլեմենտների ուսմունքը հայ բնափիլիսոփայության մեջ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, N2-3, էջ 27-55):

առատորեն ագուցված բարոյախոսական ընդարձակ շեղումները, սխոլաստիկ մեկնաբանություններն ու դատողությունները, անտարակույս, բացասաբար են ազդում նրանց գիտական արժեքի վրա և իջեցնում նրանց ճանաչողական նշանակությունը:

Բնագիտական հարցերը Գր. Տաթևացին քննարկել է միջնադարյան Հայաստանում համընդհանուր տարածում գտած անտիկ բնափիլիսոփայության դրույթների լույսի տակ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեր գիտնականի կարծիքով, տարրերն օժտված են ոչ թե երկու, այլ մի քանի տասնյակ հատկություններով, նա առանձին-առանձին անդրադառնում է տարրերից յուրաքանչյուրին, բացահայտում դրանց նշանակությունը բնության երևույթների մեջ և մարդկային կյանքում: Ուշադրության արժանի է նաև Տաթևացու փորձը ինքնուրույն ստորաբաժանումներով տեսակավորելու բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին. բույսերը ստորաբաժանված են ըստ իրենց պտուղների պիտանիության, թռչունները՝ ըստ իրենց թևերի ձևի, իսկ ձկները՝ ըստ «թևերի» և թեփերի[2]:

Գրիգոր Տաթևացին միջնադարյան հայ գիտության ամենախոշոր ներկայացուցիչներից էր, որ իր աշխատություններով, որոնցից շատերը դեռևս չեն հրապարակված և ուսումնասիրված, ընդհանուր հայտարարի բերեց զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի հայ գիտական մտքի ստեղծած արժեքները: Մեծ գիտնականի մահվանից հետո (1409 թ.) հրապարակ են իջնում Տաթևի համալսարանի գիտական ավանդույթներով դաստիարակված մի շարք վարդապետներ, որոնք հաղթահարելով մեծ դժվարություններ, փորձում են ուսումնական նոր հաստատություններ ստեղծելով պահպանել գիտական մտքի մակարդակը և նոր հետազոտություններ ծավալել: Այդ փորձերը, ըստ մեծի մասի, չեն պսակվում հաջողությամբ. Լանկ-Թամուրի արշավանքների հետևանքով ամայացած երկրում այլևս չկային նյութական պայմաններ և բարոյական ազդակներ գիտական գործունեության համար:

Աննպաստ այս պայմաններում հրապարակ իջած գործիչներից արժանի են հիշատակության երկուսը՝ Մատթեոս Ջուղայեցին և Հակոբ

[2] Ավ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, հնագույն ժամանակներից մինչև XVIII դար, Երևան, 1960, էջ 394-397:

Ղրիմեցին, որոնք հարստացրին հայ մատենագրությունը գիտական նշանակություն ունեցող աշխատություններով:

Մաթևոս Ջուղայեցին իր մեկնողական երկերի և քարոզների մեջ շոշափում է բնագիտական հարցեր և երբեմն ինքնուրույն դատողություններով ու նոր լուսաբանություններով փորձում ընդարձակել բնական երևույթների մասին առկա պատկերացումները: Նա բնության մեջ գոյություն ունեցող նյութերի հատկություններն ուսումնասիրելու ճանապարհով հանգում է այն եզրակացության, որ բնության մեջ ի սկզբանե ստեղծված պետք է լինեն հետևյալ տասը անխառն նյութերը՝ ոսկին, արծաթը, պղինձը, անագը, կապարը, երկաթը, լաժվարդը (*իմա՛ գոճազմ-լազուր*), սնդիկը, ծծումբը և զանազան թանկագին քարեր: *Պղնձի հատկությունները նա ներկայացնում է այսպես. «Իսկ պղինձն ունի բազում հատկութիւն. նախ՝ զի ժանգ ունի բնական և դառն է, և առանց կապարի ոչ հալի: Երկրորդ՝ զի մաշէ զգործօնեայս իւր: Երրորդ՝ զի վնասակար հոտ ունի... Չորրորդ՝ զի որակ կարմիր ունի: Հինգերորդ՝ զի ապականիչ է ոսկոյ և արծաթոյ: Վեցերորդ՝ զի միայնակ ինքն ոչ ունի գեղեցկութիւն և ոչ յանօթ պիտոյանայ: Եւթներորդ՝ զի ջեռուցանէ զջուրն: Ութերորդ՝ զի ազգումն տայ ի կերակուրն փութով: Իններորդ՝ զի ջերմութիւն հրոյն թափանցէ ի նա իսկոյն՝ յորժամ հասանէ ի նա: Տասներորդ՝ զի նա է միաւորիչ երկաթի»: Այս նույն եղանակով որոշված են նաև մյուս նյութերի հատկությունները:*

Վերը բերված հատվածի մեջ երևան է գալիս սխոլաստիկ վարդապետը՝ նյութի հատկություններն անպատճառ տասը կետով ամփոփելու իր ձգտումով, սակայն ներկայանում է նաև ճշմախույզ բնագետը, *որ կարողանում է զատորոշել այս կամ այն նյութի հատկությունները. ուշադրություն է դարձնում մետաղի գույնի վրա, նկատում նրա ջերմահաղորդիչ լինելու, շուտ օքսիդանալու, այլ մետաղների հետ համաձուլվելու և այլ հատկությունները:*

Արժանի են սևեռուն ուշադրության նաև Մ. Ջուղայեցու բնագիտական հայացքները: Իր քարոզներից մեկում, զարգացնելով մարդու ուղղագնացության մասին իր ուսուցիչ Գր. Տաթևացու արտահայտած միտքը, Մ. Ջուղայեցին հանգում է այն գաղափարին, որ մարդիկ ևս՝ մյուս կենդանիների նման, սկզբից եղել են չորքոտանի, հետո միայն, անհրաժեշտությունից դրդված, կանգնել են ետևի ոտքերի վրա, իսկ առաջին երկուսն

ուզելով՝ դարձրել իրենց համար աշխատանքային գործիք: Անասունների և մարդկանց տարբերությունը, Ջուղայեցու կարծիքով, կայանում է հենց նրանում, որ առաջինները, զուրկ լինելով մտածելու ունակությունից, մնացել են չորքոտանի: *Բնաշրջական (էվոլյուցիոն) ուսմունքի ձևավորումից շատ առաջ արտահայտած այս միտքը պատիվ է բերում ամենածանր պայմաններում ստեղծագործած մեր գիտնականին*[3]:

Գիտական ավելի մեծ վաստակ ունի Հակոբ Ղրիմեցին՝ Գևորգ Երզնկացի անվանի վարդապետի սանը, որ XV դարի 10-ական թթ. տոմարագիտական և բնագիտական հարցերի մասին դասախոսություններ է կարդացել Մեծոփի դպրոցում: Նրա «Մեկնութիւն տոմարի» և «Յաղագս բնութեան» (սկսվում է «Ի չորից գոյացեալ զմարդն» բառերով) ընդարձակ աշխատությունները, ինչպես նաև մանր գիտական հոդվածները, նոր միայն գրավում են բանասերների ուշադրությունը[4]:

«Մեկնութիւն տոմարի» աշխատությունը 1416 թ. Մեծոփի դպրոցում Հ. Ղրիմեցու կարդացած դասախոսությունների գրառումն է, որ երկար ժամանակ ուսումնական ձեռնարկի դեր է կատարել, և առավել, քան որևէ այլ գրվածք, գաղափար է տալիս միջնադարյան Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում քառյակ (quadrivium) գիտությունների. թվաբանության, երկրաչափության, երաժշտության և աստղաբաշխության գծով դասավանդվող գիտելիքների ծավալի և բովանդակության մասին[*] *Աշխատության սկզբի մասերը գիտական նորույթներ քիչ են պարունակում. ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ մեր հեղինակն այստեղ ևս դրսևորում է իրեն որպես հմուտ մանկագետ, որ ոչ միայն լավատեղյակ է իր նյութին, այլև կարողանում է գիտական կուռ բանաձևումներ առաջարկել (օրինակ՝ «ուղղական գիծն կարճ է քան*

---

[3] Լ. Խաչիկյան, Մաթևոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 82-83:

[4] Հ. Ղրիմեցու աշխատություններից մի քանիսը, մասնավորապես վերոհիշյալ «Ի չորից գոյացեալ զմարդն» սկսվածքով բնագիտական ուշագրավ գրվածքը, ձեռագրերում պահպանվել է առանց հեղինակի անվան: Տողերիս գրողին հաջողվել է պարզել, որ հեղինակը Հ. Ղրիմեցին է:

Աշխատությունն այժմ հրատարակված է Ջ. Էյնարյանի աշխատասիրությամբ (Երևան, 1987) - Խմբ.:

գխոտորնակ գիծն», «որքան է ի միջին կիտէն ի բոլորակ ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն» և այլն): Դասավանդվող նյութը դյուրըմբռնելի մատուցելու մտահոգությամբ, Հ. Ղրիմեցին ցուցադրում է աղյուսակներ և գծագրեր և, որպես հմուտ մանկավարժ, կյանքից վերցված օրինակներով համեմում դժվարամարս նյութը: «Իմա, որդի,- գրում է նա մի առիթով,- զի սաստիկ դժուարին է անվարժ մտաց ուսումարական մակացութիւնս վասն յաւելեալ թուոյն բանիւ հասկացուցանել, այլ զգալի օրինակի կարօտանայ, զի տեսցէ աչօք և մտօքն իմանալ կարասցէ. բայց նախ բանիւ ասասցուք և ապա դրոշմեալ ի քարտի՝ զօրինակն տացուք տեսանել զգալի աչաց»[5]:

Աշխատության ամենաընդարձակ բաժինը, ուր քննվում են աստղաբաշխական և տոմարագիտական կարևոր խնդրներ, հանրագումարն է հանդիսանում այդ նյութի մասին միջնադարյան Հայաստանում կուտակված գիտելիքների: Տիեզերքի կառուցվածքի մասին Հ. Ղրիմեցու պատկերացումները, անտարակույս, խարսխված պետք է լինեին Պտղոմեոսի կողմից ձևավորված և համընդհանուր ճանաչում գտած երկրակենտրոն սիստեմի վրա: Ըստ այդմ՝ երկիրն անշարժ բևեռված է ճիշտ կենտրոնում տիեզերքի, որը շրջափակված է երկնակամարի անմոլար գնդով. աստղերը հաստատված են այդ գնդի վրա «որպէս բևեռս առ տախտակի», և երկնակամարը, աստղերի հետ միասին արևելքից արևմուտք շարժվելով, 24 ժամվա ընթացքում ամբողջական մի պտույտ է կատարում տիեզերքի առանցքի շուրջ: Երկնակամարի ու երկրի միջև, միմյանցից տարբեր հեռավորությամբ գտնվող բյուրեղյա թափանցիկ գոտիների վրա ամրացված են մոլորակները՝ Լուսինը, Փայլածուն (Մերկուրի), Արուսյակը (Վեներա), Արեգակը, Հրատը (Մարս), Լուսնթագը (Յուպիտեր) և Երևակը (Սատուրն): Սրանք նույնպես շարժվում են երկրի շուրջ, բայց «երկակի». իրենց վրա բևեռված մոլորակների հետ միասին թափանցիկ գոտիները պտտվում են երկրի շուրջ՝ արևելքից արևմուտք շրջագծով, միաժամանակ պտույտ գործելով յուրաքանչյուրն իր առանցքի շուրջ՝ արևմուտքից արևելք: Պտղոմեոսյան այս տեսությունը հնարավորություն էր ընձեռում միջնադարյան աստղաբաշխներին որոշելու մոլորակների դիրքը երկնակամարին «ամրացված» աստղատների՝ կենդանաշրջանի համաստեղությունների նկատմամբ:

[5] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 2014, էջ 80բ:

Անտրոպոցենտրիկ (մարդերկրակենտրոն) այս աշխարհայացքը, որ սրբագործվում էր հնում քրմական դասի, իսկ միջնադարում եկեղեցու սպասավորների կողմից, հանգեցնում էր այն մտքին, որ ուսումնասիրելով տարբեր մոլորակների և կենդանակերպերի փոխադարձ դիրքավորումը, հնարավոր է կանխագուշակել առանձին մարդկանց և, նույնիսկ, ազգերի ու պետությունների ճակատագիրը: Միջին դարերում հակագիտական այս նախադրյալի հիման վրա ամենուրեք տարածվեցին աստղագուշակությունը և սրա հետ սերտ աղերս ունեցող հմայական բժշկությունը, ալքիմիան և գիտության քողի տակ պատսպարվող անպտուղ զբաղմունքի այլ տեսակներ: Աստղահմայությամբ զբաղվում էին ոչ միայն բախտախնդիր ու խաբեբա մարդիկ, այլև նշանավոր գիտնականներ (Մելանխտոն, Տիխո-Բրահե, Կեպլեր):

Հայաստանում ևս վխտում էին բախտագուշակ աստղահմայներ, որոնք անաշխատ կյանք էին վարում՝ չարաշահելով ժողովրդի հավատը գիտության նկատմամբ: Սրանց կողմից էին գրի առնվում միջնադարյան հայկական ձեռագրերի մեջ պահպանված մեծաքանակ գուշակողական, աստղահմայական բնագրերը (ախտարքներ, ռամգրքեր և այլն):

Հակոբ Ղրիմեցին ոչ միայն իր գիտելիքները չի չարաշահել՝ գուշակություններ կատարելով, այլև խիզախ դիրք է բռնել ընդդեմ խավարամտության և բախտագուշակության: Նա ընդունելի է համարել միայն կենդանակերպերի ազդեցությունը բնական այն երևույթների վրա, որոնք առնչվում են տարվա եղանակների փոփոխության հետ: Ըստ Ղրիմեցու, օրինակ, երբ Արեգակը մուտք է գործում խոյ համակարգության սահմանները՝ «Երկիր ծնանի զբոյսս, և ծառք և տունկք՝ զտերևս և զծաղիկս, կենդանիք ծնանին զնմանս իւրեանց...» և այլն:

Գիտնական Ղրիմեցու կերպարը բացահայտվում է նաև աշխարհի վախճանը գուշակող տգետ աստղաբաշխ-տոմարագետների դեմ նրա մղած գիտական բանավեճով: XIII դարի սկզբներից սկսած որոշ հայ «տոմարագետներ», ոչ լրջմիտ հաշվումներ կատարելով, հանգել էին այն տեսակետին, որ Հայոց ՊԿԵ, այսինքն՝ մ. թ. 1416 թ. Լուսինը կատարյալ ձև ստանալով, այլևս չի նվազելու. երկու լուսատուներից մեկը երկնակամարի վերին կիսագնդում գտնվելով, մյուսը ներքին՝ միաժամանակ ու երկուստեք լուսավորելու են աշխարհը, և տեղի է ունենալու «վախճան ժամանակի»՝

Քրիստոսի երկրորդ գալուստը: Վախճանաբանական այս բանդագուշանքների առաջն առնելու համար 1416 թ. մի քանի տարի առաջ Հ. Ղրիմեցին ինչ-որ աշխատություն է գրել և տասը կետով ապացուցել այս կարծիքի հիմնազուրկ լինելը: Մեծ գոհունակությամբ Ղրիմեցին արձանագրում է այդ իրողությունը, երբ լրանում է նշված թվականը և բոլորը համոզվում են, որ ճշմարտությունն իր կողմն է: «Եւ գոհացաք զաստուածոյ,- գրում է նա,- զի զոր ինչ մեկնեցաք, նա ճշմարիտ եղև»[6]:

Իր աշխատությունների մեջ Հակոբ Ղրիմեցին շոշափել է նաև բազմաթիվ բնագիտական հարցեր՝ լայնորեն օգտագործելով նախորդ շրջանի գրականության մեջ ամբարված օգտակար նյութերը, ինքնուրույն սրամիտ դիտողություններով հարստացնելով դրանք: Բնությունը նա քննարկում է որպես մի ամբողջություն, որի մեջ տարանջատված են գոյի չորս վիճակներ՝ անշունչ առարկաները, որ գոյություն ունեն միայն, «տունկերը» (բուսական աշխարհի ներկայացուցիչներ), որ և՛ գոյություն ունեն, և՛ ապրում են, կենդանիները, որ գոյություն ունեն, ապրում են ու զգում և, վերջապես, մարդիկ, որ ի լրումն այդ ամենի՝ նաև մտածում են: Դրանք, լինելով վերընթաց զարգացող բնական շղթայի օղակներ, շաղկապված են միմյանց. նրա կարծիքով բնության մեջ նույնիսկ պահպանվել են փոխանցման վիճակի գոյաձևեր, օրինակ՝ մագնիս քարը, որ անշունչ առարկա է, բայց քարշողական զորությամբ հաղորդակցվում է բույսերի հետ, կամ խեցեմորթը, որ ծովի հատակին քարի վրա աճած ծառ լինելով, միաժամանակ կենդանի էակ է և այլն[7]:

Հ. Ղրիմեցին անդրադարձել է նաև այն հարցին, թե ինչպես չորս տարրերը, որ ընկած են բոլոր գոյերի հիմքում, մշտնջենավոր են՝ «ոչ աճելուն երբեք և ոչ նուազին»: Այս հարցին տված պատասխանով բացահայտվում է մեր բնագետի դիալեկտիկական մտածելակերպը. հավանաբար ծանոթ լինելով Ա. Շիրակացու հայտնի բանաձևին, նա գրում է. «Զի նորայն լինելութիւն ապականութիւն գործէ հնոյն. և ապականութիւն հնոյն՝ լինե-

[6] Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. N 1244, էջ 210-211:

[7] Անտիկ բնագիտության այս տվյալները մատչելի էին հայ գիտնականներին Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությամբ, որ թարգմանվել էր հայերեն VIII դարի սկզբներին:

լութիւն գործէ նորոյն. և ըստ ամենայնի մնան մշտնջենաւորապէս, ոչ աճելեալ և ոչ նուազեալ»:

Բուսական և կենդանական աշխարհի զարգացման հարցերը՝ սաղմնային վիճակից սկսած մինչև կատարյալ հասունացումն ու մահը, Ղրիմեցին քննարկել է, հաշվի առնելով ժառանգական հատկությունները և արտաքին միջավայրի ազդեցությունը[8]:

Հայ գիտական մտքի պատմության մեջ իր տեղն ունի գրավելու Հ. Ղրիմեցու կրտսեր ժամանակակից, «քաջ տումարագէտ և աստեղաբաշխ» կոչված Եսայի Ղրիմեցին, որն ապրել է իր ծննդավայրում և, լինելով միաբան հայաշատ Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի մերձակայքում գտնվող Ս. Անտոնի վանքի, 1441 թ. կազմել է տոմարական բարդ աղյուսակներ պարունակող մի ուսումնասիրություն, իսկ 3 տարի հետ՝ «Տումար արեգական և լուսնի» աշխատությունը[9]: Ցավոք, այս գիտնականի երկերն առ այսօր չեն գրավել մասնագետների ուշադրությունը: Եսայի Ղրիմեցին, հաղորդակից լինելով Ղրիմում բնակություն հաստատած ճենովացի գիտնականների հետ, հնարավորություն ուներ ընդարձակելու միջնադարյան հայ տոմարագիտության սահմանները[*]:

Միջնադարյան հայ բնագիտական մտքի կարկառուն ներկայացուցիչներից է բժիշկ ու կենսաբան Ամիրդովլաթ Ամասիացին (մահացել է 1496 թ., ապրելով մինչև զառամյալ ծերություն). բուժող բժշկի մեծ համբավ վաստակած, բազմաթիվ լեզուների տիրապետած, թուրքական սուլթանի անձնական բժշկի պաշտոնը գրաված այս գիտնականը հեղի-

[8] Հ. Ղրիմեցու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը հարուստ ու բազմազան նյութեր է պարունակում կազմախոսության, բազմացման ֆիզիոլոգիայի, մարդու զգայարանների բնախոսական գործունեության և հարակից հարցերի մասին: Ա. Ս. Կծոյանը իր «Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում» (Երևան, 1968) արժեքավոր ուսումնասիրության մեջ, բացահայտել է ձեռագիր այս աշխատության պատմագիտական նշանակությունը, տեղյակ չլինելով, որ նրա հեղինակը Հակոբ Ղրիմեցին է:

[9] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 696:

[*] Եսայի Ղրիմեցի, Տոմար արեգական և լուսնի, աշխատասիրությամբ Ջ. Ա. Էյնաթյանի, Երևան, 1990 – խմբ.:

նակել է շուրջ մեկ տասնյակ աշխատություններ, որոնցից «Ուսումն բժշկութեանը» և «Անգիտաց անպէտը» բացառիկ գիտական նշանակություն ունեն: Իր մշտազբաղ ու անհանգիստ կյանքի արդյունքն այսպես է ամփոփում մեծ գիտնականը 1469 թ. մի հիշատակարանում. «Ես շատ դժվարութիւն և պատահմունք եմ քաշել ի յանօրինաց, ի յայլազգացն, ի դատաւորաց, ի թագաւորաց և իշխանաց. եւ շատ գրեանք էի ժողովել ի յարապոց, և ի պարսից, և ի թուրքաց եւ շատ զարիպութիւն էի քաշել, և զժամանակին զչարն և զբարին և զպատահմունքն էի կրել. զհարստութիւն և զաղքատութիւն էի քաշել, և ի յերկրէ ի յերկիր շատ բժշկութեան զարուեստն էի գործել. եւ փորձել էի ես իմ միտքն շատ դեղեր և թարքանի (բաղադրութիւն) և շատ ծառայել էի հիւանդաց... և շատ չար և բարի էի տեսել: Եւ հանց եղայ ես հիմայ, որ ոչ հարստութեան կու խնդամ, և ոչ աղքատութեան կու տրտմիմ, և զամէն չարն և զբարին մէկ կու տեսնամ, և անհոգել եմ այս ամէն ցանկութենէն կենցաղոյս...»[10]:

Այս ինքնակենսագրական բնութագրի մեջ չկա որևէ չափազանցություն. Ամիրդովլաթն, իրոք, գիտական իր ուսումնասիրություններն ստեղծել է տարբեր լեզուներով գոյություն ունեցող բժշկական ձեռագրերի մեջ ցրված նյութերի համադրության ճանապարհով, այդ բոլորն ստուգելով ու ճշգրտելով բուժող բժշկի հարուստ իր կենսափորձով:

Ամիրդովլաթ Ամասիացին, հին և միջնադարյան բոլոր բժիշկների նման, գիտական իր հետազոտությունները կատարել է առաջնորդվելով համընդհանուր ճանաչում գտած հեղահյութային ախտաբանության (հումորալ պաթոլոգիա) Հիպոկրատյան ուսմունքով, ըստ որի, բոլոր հիվանդությունները անխտիր, հետևանք են մարմնի մեջ եղող չորս հիմնական հեղուկների՝ արյան խարտյաշ մաղձի, լորձի և սև մաղձի՝ բնությունից սահմանված համամասնության խախտման: Ըստ այդմ էլ կազմակերպվում էր հիվանդությունների բուժումը՝ «հակառակը հակառակով» (contraria contraris) սկզբունքով. մարմնի մեջ արյան հավելում նկատելով՝ առաջարկում էին արյունը պակասեցնող դեղամիջոցներ, մաղձային հիվանդությունների ժամանակ՝ գրգռումը կանխող սնունդ և լուծողականներ, լորձի առատության դեպքում՝ սուր և չոր նյութեր, իսկ սև մաղձի հավելման արդյունք համարվող հիվանդությունների դեպքում՝ աշխատում էին մարմնի մեջ ավելացնել հեղուկ նյութերի քանակը:

[10] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1958, էջ 286:

Ամիրդովլաթի կողմից առավել բծախնդրությամբ մշակված գիտական մասնաճյուղը դեղագիտությունն է: Նրա բնագիտական գիտելիքների բազմազանության և խորության մասին անսպառ տվյալներ են ամփոփված «Անգիտաց անպէտ» ստվարածավալ աշխատության մեջ: Այստեղ ուշագրավ տվյալներ են գրանցված 1700-ից ավելի բույսերի, կենդանիների և հանքանյութերի և դրանց բուժիչ հատկությունների մասին (իրականում տրված են 3754 դեղանյութերի անուններ, սակայն դրանց կեսից ավելին հոմանիշներ լինելով, թվաքանակից դուրս են ընկնում): Ամիրդովլաթի աշխատությունը, այսպիսով, ավելի հարուստ բովանդակություն ունի, քան ամենակատարյալը համարվող XIII դարի արաբ բժիշկ Բեյթարի «Դեղագիտարանը»: «Անգիտաց անպէտի» մեջ, այբբենական դասակարգումով, նկարագրվում են բոլոր դեղանյութերի (մասնավորապես բույսերի) հատկությունները, տեղեկություններ են հաղորդվում դրանց տեսակների մասին, նշվում շատերի աճման վայրերը, տրվում դրանց արմատների, տերևների և ծաղիկների կազմաբանությունն ու առանձնահատկությունները: Հաճախ հեղինակը հայտնում է նաև, թե որտեղ է տեսել այս կամ այն բույսը, հաստատում դրանցից պատրաստված դեղերի ազդեցության ճշմարտությունը և կամ, ընդհակառակը, ժխտում «չէ օգուտ» խոսքով:

Այս բոլորն այնպիսի հիմնական արժանիքներ են, որ մեր բնագետ-բժշկին բարձրացնում են իրեն ժամանակակից եվրոպական գիտնականների մակարդակից:

Հայ մշակույթի պատմության մեջ արժանավոր տեղ է գրավել Ամիրդովլաթ Ամասիացին նաև իր ժողովրդասիրությամբ, գիտության նվաճումներն անշահախնդիր տարածելու և բժշկի բարոյական կերպարը բարձրացնելու անկեղծ ձգտումով: Նա պահանջում է բժշկության արհեստով զբաղվողներից՝ լինել անկաշառ, արհամարհել նյութական շահը, հավասարապես բուժել հարուստ և աղքատ մարդկանց, գրքերի ընթերցումով հանապազ խորացնել իրենց գիտելիքները և այլն: Իր աշխատությունները նա շարադրել է ժամանակի խոսակցական լեզվով, քաջ գիտակցելով, որ «ամենայն մարդ չկարէ քերական կարդալ և կամ արտաքին գրեանք, որ

գայս խրթին բաներն յիմանա. այնոր համար եղաւ աշխարհարառ»: Խախտելով արաբական բժշկագիտության դարավոր ավանդույթը, մեր բժշկապետը, հաղթահարելով մեծ դժվարություններ, դեղագիտական իր գլուխգործոցի մեջ նշում է նաև այս կամ այն դեղի պատրաստման համար օգտագործվելիք նյութերի ճշգրիտ չափերը՝ չափ ու կշռի ընդունված միավորներով, այն դեպքում, երբ «ամենայն բժշկապետքն գայս ծածկել էին և չէին գրել ի բժշկարաննին»:

Ամիրդովլաթ Ամասիացին իրավամբ համարվում է մեծագույն բնագետ ու բուժող բժիշկ, հայ գիտական գրականության ամենախոշոր երախտավորներից մեկը[11]:

Ամիրդովլաթից հետո՝ XVI-XVII դարերում, Հայաստանի տարբեր շրջաններում և հայկական գաղթավայրերում աշխատող բժիշկներից շատերը, լայնորեն օգտագործելով ամասիացի բժշկապետի և նախորդ դարաշրջանում ծաղկած մյուս հայ նշանավոր բժիշկների դասական աշխատությունները, շարադրեցին բժշկագիտական նոր երկեր, հատկապես տարբեր ծավալի ու տարողության դեղագիտարաններ: Դրանց մեջ, անտարակույս, կարող են գտնվել ժողովրդական բժշկության հազարամյա փորձով ստուգված և ուսանելի դեղատոմսեր, առանձին հիվանդությունների ախտորոշման և բուժման մասին նոր դիտողություններ և այլն. ընդհանուր առմամբ, սակայն, ձեռագիր այդ աշխատություններով հայ միջնադարյան բժշկագիտությունն առաջընթաց քայլ չկատարեց:

Այս ժամանակաշրջանի հայ բժիշկներից արժանի են հիշատակության պատմական Փոքր Հայքի Սեբաստիա մայրաքաղաքում ծնված ու ստեղծագործած Հովասափ, Բունիաթ և Ասար Սեբաստացիները, որոնք օգտակար գործունեություն ծավալեցին հայ բժշկագիտության

[11] Ամիրդովլաթի կյանքի ու գիտական գործունեության մասին հանգամանալից տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ աշխատությունների մեջ. Л. А. Оганесян, История медицины в Армении, часть третья, Ереван, 1946, էջ 1-86: Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 398-433: [Նաև Амирдовлат Амасиаци, Ненужное для неучей, перевод с армянского языка и комментарии С. А. Варданян, Москва, 1990]- խմբ.:

լավագույն ավանդների պահպանության և տարածման ուղղությամբ:*

Հովասափ Սեբաստացին, որ ծանոթ դեմք է որպես բանաստեղծ ու նկարիչ, ապրել է XVI դարի 10-60-ական թթ.: Նրա գրչին է պատկանում բժշկագիտական փոքրածավալ մի ուսումնասիրություն, որի մեջ համառոտակի քննարկվում են տեսական, դեղագիտական, սաղմնաբանական, կազմախոսական ու բնախոսական կարևոր խնդիրներ: Հայտնի են այդ աշխատության երկու ձեռագիր ընդօրինակություն, ուր նշված է հեղինակի անունը[12] և լեզվական խմբագրության ենթարկված մի փոփոխակ, որ Բունիաթ Սեբաստացին ագուցել է Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատության իր կատարած խմբագրության սկզբի մասում՝ որպես նրա տեսական-կազմախոսական բաժին: Հայ բժշկության պատմության մասնագետները բարձր են գնահատել Ամիրդովլաթի աշխատությունից իրենց հայտնի այդ երկը, անտեղյակ լինելով, որ դրա հեղինակը Հովասափ Սեբաստացին է: Սաղմնաբանության, մարդակազմության և հարակից հարցերի շուրջ Հովասափի շարադրանքի մեջ նրանք գտել են ուշագրավ փաստեր, որոնք վկայում են գիտության այդ բնագավառներում տեղի ունեցած առաջընթաց շարժման մասին[13]:

Բունիաթ Սեբաստացին, բացի խմբագրական աշխատանքներ կատարելուց, 1630 թ. Սամսոն քաղաքում գրել է մի բժշկարան: Արդյունավետ է եղել նաև Ասար Սեբաստացու գործունեությունը. 1614 թ., օգտվելով

* Նրանցից երկուսի աշխատությունների հրատարակությունը տե՛ս Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան (ԺԷ դար), աշխատասիրությամբ Դ. Մ. Կարապետյանի, Երևան, 1987, Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, աշխատասիր. Դ. Մ. Կարապետյանի, Երևան, 1993 - խմբ.:

[12] Դրանցից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի N 7049 ձեռագիրն է, մյուսը՝ Զմմառի վանքի մատենադարանի Անտոնյան հավաքածուի N 212 ձեռագիրը: Աշխատության առաջաբանում Հ. Սեբաստացին գրել է. «Բայց մեք անպիտան ծառայս ձեր մեղապարտ Յովասափ անուն սարկաւագ Սեբաստացի, կամեցայ զընտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստասիրական և բժշկական զամենայն ցեղ ցաւոյ բստածումն, զեփելն զտրորելն զամենայն դեղոց և խնամ ածել ցաւածին...» և այլն:

[13] Л. А. Оганесян, նշվ. աշխ., էջ 21-28: Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 401-414:

Մխիթար Հերացու, Ամիրդովլաթի, Ահարոնի, Ստեփանոսի և ուրիշ հայ բժիշկների գործերից, նա կազմել է «Գիրք բժշկական արհեստի» աշխատությունը, խմբագրել և նաև Աբուսայիդի «Մարդակազմությունը»՝ դրա մեջ ներմուծելով այլ աշխատություններից քաղված նյութեր, որոնցից բացառիկ նշանակություն ունի Մխիթար Հերացու ակնաբուժական պատառիկը:

Այս ժամանակաշրջանի գիտական մտքի պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նաև ալքիմիայի մասին: Արաբական ալքիմիական գրականության ազդեցությամբ, XIII-XIV դարերում Հայաստանում ևս սկսում են տարածվել թարգմանական և ինքնուրույն ալքիմիական ձեռնարկներ: Դրանք բոլորն էլ խարսխված էին տեսական այն դրույթի վրա, որի համաձայն՝ բոլոր մետաղներն անխտիր, թեպետև զանազանվում են միմյանցից, բայց ընդհանուր հատկություններ ունեն, քանի որ «ի մին նիւթէ բնծային և գոյանան»: Մետաղներից ոսկին է միայն բնության ավարտուն հորինվածքը. մյուսները նույնպես, բարենպաստ պայմաններում, ոսկի էին դառնալու: «Ամենայն պղնձեղէն մարմին (այսինքն՝ մետաղ) բնութիւնն կամի ոսկի առնել,- գրված է մի ձեռագրում,- և ըստ բնութեան այնպէս լինելոց էր, այլ վասն պակասութեան նիւթին կամ կերպին և կամ եռուցմանցն ի ներքոյ երկրի՝ ըստ պակասութեան և ըստ աւելորդութեան՝ անկատար մնան ի յուսկոյ բնութենէ»: Ալքիմիկոսները համոզված էին, որ լրացնելով բնության անկատար թողածը սնդիկի, ծծմբի և այլ նյութերի ներգործությամբ, հնարավոր է վերափոխել հասարակ մետաղները, դրանցից արծաթ և ոսկի ստանալ[14]:

Նվիրյալ ալքիմիկոսները, առաջնորդվելով ոչ գիտական այս դրույթով, հուսախաբվում էին ի վերջո, անկարող լինելով ազնիվ մետաղներ ստեղծել, բայց նրանցից շատերին հաջողվում էր գործնական աշխատանքների ընթացքում նոր հայտնագործումներ կատարել, բացահայտել տարբեր նյութերի անծանոթ հատկությունները, խթանել մետաղամշակության ու արհեստագործության այլ ճյուղերի զարգացմանը: Հայ ալքիմիկոսների գերակշիռ մասը զբաղված էր հենց արհեստների զարգացմանը նպաստող հետազոտություններով: Ստեփանոս Իմաստասերի, Դանիել

---

[14] Տ. Ղազանչյան, Քիմիան և նրա զարգացման ուղիները Հայաստանում (դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ), Երևան, 1949, էջ 17-19:

Արեղայի, Օհան Թոխաթեցու, Ղազար եպիսկոպոսի, Հարություն Երզրումցու և այլ ալքիմիկոս-վարպետների ջանքերով, միջնադարյան Հայաստանում մեծ հաջողություններ արձանագրվեցին դիմացկուն և բարձրորակ ներկեր ու թանաքներ պատրաստելու գործի մեջ, զարգացան արծաթագործությունն ու պղնձագործությունը, գործնական աշխատանքների ընթացքում կուտակված փորձը օգնեց հայ վարպետներին ստանալու նաև զանազան դիմացկուն շինանյութեր, խեցեղեն ու տարբեր ջնարակներ, օճառ, բուրավետ օծանելիք, բուժիչ դեղանյութեր, լավորակ մագաղաթ ու կաշիներ և այլն: Անշուշտ, կային նաև ալքիմիկոսի անունով, թափառող բախտախնդիր մարդիկ, որոնք անազնիվ մետաղներից ոսկի ստանալու սին խոստումներով խաբում էին դյուրահավատ և ընչաքաղց մարդկանց, դրամաշորթությամբ զբաղվում: Այսպիսի մի հայ ալքիմիկոսի մասին ստույգ տեղեկություններ են պահպանվել. XV դարի սկզբներին Պարսկահայքի Մարաղա քաղաքում հայտնվում է մի սուտ ճգնավոր, ներկայանում որպես արհեստավոր, որ կարող է «առնել զարծաթն ոսկի», «ի բազում անձանց մեծ և անվանի» հավաքում է մեծ քանակությամբ արծաթ, և երկար ժամանակ սուտ հույսեր տալով, ի վերջո ազատում է իր գլուխը՝ մի գիշեր փախչելով «ի հեռագոյն երկիր»[15]:

Այսպիսին էր գիտության վիճակը Հայաստանում. մտավոր գործունեության այդ բնագավառին գինվորագրված մարդիկ, քաղաքական և տնտեսական ամենաանբարենպաստ պայմաններում, գերագույն ճիգերով ձգտում էին պահպանել զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի գիտական մտքի ձեռքբերումները, նոր սերունդներ դաստիարակել այդ ավանդույթներով:

Այլ էր վիճակը Եվրոպական մայրցամաքում. այստեղ, նույն այս ժամանակաշրջանում, սաղմնավորվում էին կապիտալիստական արտադրական հարաբերությունները, ստեղծվում էին մանուֆակտուրային արդյունաբերական ձեռնարկություններ, կատարելագործվում գործիքներն ու մեքենաները. աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով աննախընթաց զարգանում էր ապրում առևտուրը: Եվրոպացի մարդը, շփվելով

---

[15] Մխիթար Ապարանեցի, Գիրք ուղղափառաց... (Marcus Antonius, v. d. Oudenrijn, Linguae haicane scriptores, Bernae, 1960, էջ 220):

Ասիայի, Աֆրիկայի և նորահայտ Ամերիկայի մինչ այդ անծանոթ ժողովուրդների հետ, ընդարձակում էր տեսական ու գործնական իր գիտելիքները: Այս պայմաններում գիտությունը նոր հատկանիշներ է ձեռք բերում, մտնում զարգացման նոր փուլի մեջ: 1543թ. հրապարակվում է Կոպեռնիկոսի «Երկնային շրջանների պտույտի մասին» հռչակավոր ուսումնասիրությունը, որով աստղաբաշխությունն ազատագրվում է երկրակենտրոն սխեմի դարավոր կաշկանդումներից ու զարգացման մայրուղի մտնում: 1609թ. Գալիլեյը հեռադիտակն ուղղում է երկինք, անժխտելի փաստերով ապացուցելով Կոպեռնիկոսի տեսության ճշմարտացիությունը: Հեռադիտակի հետ միասին գիտական հետազոտություններին ի սպաս է դրվում նաև մանրադիտակը, որի օգնությամբ կարևոր գյուտեր են արվում բժշկության և հարակից գիտությունների բնագավառում: Ա. Վեզալիուսը 1543թ. հրապարակում է «Մարդու մարմնի կառուցվածքի մասին» ուսումնասիրությունը, որով մերժվում է Գալենի հնացած անատոմիան և հիմք դրվում ժամանակակից կազմախոսությանը: Առաջին անգամ լինելով, տրվում է մարդու կազմության գիտական պատկերը՝ հերձումների ճանապարհով կուտակված ճշգրիտ տվյալների հիման վրա: Վ. Գարվեյը (1578-1657) հայտնագործում է արյան շրջանառության դերը կենդանի օրգանիզմում, որով հիմք է դրվում գիտական կենսաբանությանը. նա է համարվում նաև սաղմնաբանության հիմնադիրը: Եվ այսպես, գիտությունը դուրս է գալիս խանձարուրային իր վիճակից, բոլոր մարզերում հեղաբեկիչ նշանակություն ունեցող տեսական հայտնագործություններ և գյուտեր են կատարվում:

Արևելյան ժողովուրդներից հայերն առաջինն էին, որ հաղորդակից դարձան եվրոպական գիտության նվաճումներին և, ինչպես թարգմանություններ կատարելով, այնպես էլ ինքնուրույն երկեր շարադրելով հարստացրին հազարամյա հայ մատենագրությունը նոր արժեքներով: *Ինչ-որ չափով խախտվեց նաև եկեղեցու մենաշնորհը գիտության նկատմամբ. գիտության ասպարեզ իջան նաև աշխարհական մարդիկ, որոնք հակադրվելով* «բանական քննութեանն հետևի հերձուած» *իր դարն ապրած դիրքորոշմանը, մշակեցին մի նոր մոտեցում գիտության նկատմամբ, որ Ավետիք Տիգրանակերտցին (սրա մասին՝ քիչ հետո) ձևակերպեց՝* «Լաւ է շատգէտ մեղաւոր, քան թէ անառակ *(իմա՝ անբան, տգէտ)* արդար»

խորիմաստ բանաձևով: Եկեղեցու գաղափարախոսներ պատվիրում էին աստծու դեմ չմեղանչելու համար խուսափել բնական երևույթների քննությունից, հավատ ընծայել Աստվածաշնչին և եկեղեցական հայրերին, իսկ աշխարհիկ գիտության ներկայացուցիչը գերադասում էր լինել բնախույզ և բանիմաց՝ թեկուզև մեղքի մեջ ընկնելով, քան թե արդար, բայց անբան ու տգետ:

Հայերեն լեզվով թարգմանական և ինքնուրույն գիտական երկեր ստեղծվեցին առաջին հերթին աստղաբաշխության և մաթեմատիկայի բնագավառում:

1621թ. Հովհաննես Անկյուրացին թարգմանեց գերմանացի աստղաբաշխ, աշխարհագրագետ, քարտեզագիր Պետրոս Ապիանի (1495-1552) «Կոսմոգրաֆիա» նշանավոր աշխատությունը, որով առաջարկվում էին աշխարհագրական երկայնության որոշման նոր եղանակներ՝ երկնային մարմինների, մանավանդ լուսնի գիտական դիտարկումների ճանապարհով: Այդ աշխատության հայերեն թարգմանության ձեռագրում[16] նկարված է մի հայ աստղաբաշխ՝ Կարապետ վարդապետը՝ աստղաբաշխական քանոնի օգնությամբ դիտումներ կատարելիս: 1671 թ. «ի Ֆրանկաց» թարգմանված մի աշխատության մեջ տրվում է 1671-1700 թթ. տեղի ունենալիք Արեգակի և Լուսնի բոլոր խավարումների ցանկը՝ րոպեի ճշտությամբ: Նույն այս տարիներին, եվրոպական գիտության ընձեռած տվյալների հիման վրա, Իսահակ Ջուղայեցին շարադրում է «Վասն ժամուց տուընջեան և գիշերոյ, որք առաւելուն և նուազին» աշխատությունը: Հեղինակն ընդունում է Երկրի գնդաձևությունը, նրա պտույտն իր առանցքի շուրջը. ցերեկվա և գիշերվա ժամերի տևողությունը որոշում է, հաշվի առնելով իր գտնված վայրի (Սպահան) աշխարհագրական լայնությունը:

1695 թ. Ամստերդամում տպագրվում է «Համատարած աշխարհացոյց» անունով մեծ քարտեզը՝ Ղուկաս, Թովմա, Մատթեոս Վանանդեցիների և օտարազգի հմուտ փորագրիչների համատեղ ջանքերով: Հաջորդ թվականին լույս է տեսնում «Աշխարհացոյցի» շատ կարևոր «Բանալին»: Այս գործերի գիտական ղեկավարը Ղուկաս Նուրիջանյան Վանանդեցին էր. նա էր հայ հին մատենագրության ծալքերից պեղում կամ նոր

---

[16] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 1780:

հորինում աշխարհագրական անվանումները, նա էր հայացնում աստղաբաշխական տերմինները, համաստեղությունների անունները և այլն[17]:

Հայ գիտնականները, եվրոպական լավագույն օրինակների հետևողությամբ, ստեղծում էին կատարելագործված աստղաբաշխական գործիքներ՝ աստրոլաբ, ամիլյար սֆերա, ռուպի տայրէ և այլն, նոր հայտնագործված կամ կատարելագործված գործիքներով ու փորձանոթներով հարստանում էր նաև հայ վարպետ-ալքիմիկոսի աշխատանոցը: Ղուկաս Վանանդեցու գործընկեր Մատթեոսի պատրաստած հայերեն բացատրություններ ունեցող աստրոլաբը՝ աստղաբաշխական գեղեցիկ մի գործիք, հասել է մեզ: Այդ գործիքի օգնությամբ հնարավոր է որոշել լուսատուների բարձրությունը, կենդանաշրջանի համաստեղությունների դիրքը գիշերվա տարբեր ժամերին, տարիների հեռավորությունն ու բարձրությունը, լուսատուների հասարակածային կոորդինատները, տվյալ վայրի աշխարհագրական լայնությունը, գիշերվա և ցերեկվա տևողությունը, աշխարհի կողմերը և այլն[18]:

Աստղաբաշխության ուղիով զարգանում է նաև մաթեմատիկան: XVI դարում արևմտահայ մի անհայտ անձնավորություն կազմում է առաջին հայերեն թվաբանության դասագիրքը՝ տասնորդական «պոզիցիոն» սիստեմով և արաբական թվանշաններով: Նրա նպատակն է եղել ցույց տալ տասնորդական սիստեմի առավելությունները հայկական այբբենական թվահաշվի նկատմամբ, սովորեցնել իր հայրենակիցներին թվաբանական չորս գործողությունները դյուրին կատարելու այն ժամանակ եվրոպական երկրներում կիրառվող եղանակները: Դասագրքի երկրորդ բաժնում, նկատի ունենալով հայ վաճառականների ամենօրյա գործունեությունը, հեղինակը կազմել է թվաբանական խնդիրներ, յուրաքանչյուր խնդրին

[17] Ղուկաս Վանանդեցու ստեղծած տերմիններից շատերն ավելի հաջող են, քան այժմ գործածության մեջ մտածները: Այսպես, օրինակ, նա ունի **Ծնկնի**, փոխանակ՝ Հերկուլես, **Մարդաձի** փխ. Կենտավր, **Ջրոձ**՝ Հիդրա, **Ծնիկ**՝ Փոքր շուն, **Մարտիկ**՝ Օրիոն և այլն:

[18] Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը, Երևան, 1964, էջ 157-163: Այստեղից են քաղված նաև աստղաբաշխական երկերի եվրոպական լեզուներից կատարված թարգմանությունների մասին տվյալները:

տարբերակ տալով լուծման բանալին: Առաջին խնդիրը, օրինակ, այս է. «Երկու հոգի օրթախ եղան (այսինքն՝ ընկեր դարձան). մէկն ունի սարմիայ (դրամագլուխ) 167 և մէկն ունի 243, վաստակեր են 134 ստակ. ամեն մարդու ի՞նչ պիտի ընկնի... » (այնուհետև տրվում է լուծման եղանակը):

Շատ չի ուշանում նաև թվաբանության տպագիր դասագիրքը. այդ լինում է գերմանացի մաթեմատիկոս Քրիստափոր Կլավիուսի (1537-1612) «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» աշխատության հայ առևտրականների համար պատրաստված թարգմանությունը, որը լույս աշխարհ է գալիս 1675 թ. Մարսելում, «Արհեստ համարողութեան՝ ամբողջ և կատարեալ» խորագրով: Գրքի բովանդակության և օգտակարության մասին թարգմանիչը հայտնում է հետևյալը. «Տեսնելով զհարկաւորութիւն մերազնեայց վաճառականաց վասն կատարելապէս ոչ գիտելոյ զարհեստն համարողութեան, վայելուչ վարկայ զգիրքս զայս թարգմանել ի մերս բարբառ, որպէս զի սովաւ վարժեցեալք կարիցեն դիւրապէս պարապիլ ի գործս իւրեանց թարց դեգերման մտաց». գրաբար լեզվով գրված են միայն գրքի առաջաբանն ու վերջաբանը, իսկ բուն դասագիրքը շարադրված է պարզ աշխարհաբարով[19]: XVI-XVII դարերում շրջանառության մեջ են դրվում գործնական թվաբանության տպագիր ու ձեռագիր այլ ձեռնարկներ ևս, իսկ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ս. Աղամալյանցը 1781 թ. հրատարակած իր «Թուաբանութեան» երկրորդ մասն ամբողջապես նվիրում է այնպիսի հարցերի, որոնք, գործնականից ավելի տեսական նշանակություն ունենալով, «ոչ միայն ախորժելի են մտքի և կենցաղային այլևայլ պետքերի համար, այլև ճանապարհ են հարթում դեպի մյուս չափաբանական գիտությունները»: Աղամալյանցը սովորեցնում է ամբողջ և կոտորակային թվերից քառակուսի և խորանարդ արմատ հանել, համեմատությունների տեսություն, թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ, բազմանկյուն թվեր, զուգադրություններ, փոխադրություններ, լոգարիթմներ և այլն: Գրքի վերջում տրված է 1-1000 թվերի լոգարիթմական աղյուսակը:

Մաթեմատիկական մտքի զարգացմանը մեծապես կարող էր խթանել

[19] Գ. Բ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959 (նաև «Սովետական Հայաստան», 1969 թ., հուլիսի 24-ի համարը):

Էվկլիդեսի «Երկրաչափության» ամբողջական հայերեն թարգմանությունը, որ անուղղակի որոշ տվյալների համաձայն, իրագործվեց XVII դարի սկզբներին, Գրիգոր Կեսարացու ջանքերով: Իր գործին հմուտ թարգմանիչը ստեղծել է երկրաչափական մի քանի տասնյակ տերմինների հայկական հաջող համարժեքները և, մատուցվող նյութն ավելի դյուրըմբռնելի դարձնելու մտահոգությամբ, տեղ-տեղ ուշագրավ փոփոխություններ ու լրացումներ է կատարել: Մի առիթով նա գրում է. «Մեք փոխեցաք զապացոյցն Եւգլիտին վասն տալոյ պլաւագոյն ապացոյց մի, որ առաւել լուսաւորէ զմիտս ընթերցողին», մի այլ առիթով նշում է, որ «Եւգլիտն այսպէս սահմանեալ է, իսկ մեք ասեմք առաւել առհասարակ (այսինքն՝ պարզ, դյուրին)» և այլն[20]: Այս թարգմանությունը, ցավոք, մնաց ձեռագիր վիճակում, ուստի՝ անծանոթ ընթերցող լայն շրջաններին:

Հայաստանում երկրաչափական գիտելիքների տարածմանը մեծ չափով նպաստեց Մխիթարյան վարդապետ Սահակ Պռոնյանի «Երկրաչափությունը», բաղկացած երեք ընդարձակ բաժիններից, որ լույս տեսավ 1794թ.: Առաջին բաժինը նվիրված է սահմանումներին և աքսիոմներին, ապա առանձին պրակներով խոսվում է գծի և նրա տեսակների, անկյունների, եռանկյունների, շրջանագծի և այլ հարցերի մասին: Երկրորդ բաժինը նվիրված է քառանկյուններին, բազմանկյուններին, մակերևույթների համեմատությանը և հատմանը: Վերջին բաժնում սահմանվում են երկրաչափական մարմինները (գլան, կոն, բուրգ, գունդ), ապա քննարկվում մարմինների նմանության և հավասարության, մակերևույթների և ծավալների չափման ու համեմատության հարցերը և այլն: Բոլոր բաժինների վերջում տրված են խնդիրներ ու դրանց լուծման եղանակները:

Ս. Պռոնյանն իր առջև խնդիր էր դրել եվրոպական լեզուներով գոյություն ունեցող լավագույն աշխատությունների հիման վրա, «ընտրելագոյն ոճով և հեշտընկալ բացատրութեամբ», հայ երիտասարդության համար պատրաստել երկրաչափական գիտելիքների ամբողջական մի ձեռնարկ, մշակելով հայերեն գիտական տերմինաբանություն: Այս խնդիրն

[20] «Երկրաչափութիւն եւգլիտին», տեքստը հրատարակության պատրաստեցին Գ. Բ. Պետրոսյան և Ա. Գ. Աբրահամյան Երևան, 1962:

իրագործված է հաջողությամբ[21]:

Թվարանական և երկրաչափական վերոհիշյալ աշխատություններով տասնորդական կամ «պոզիցիոն» կոչվող սիստեմը և արաբական թվանշանները ճանաչելի դարձան Հայաստանում և հայ գաղթաշխարհում, սակայն հին հայկական այբբենական թվանշաններն ու հաշվային սիստեմը երկար ժամանակ չէին զիջում իրենց դիրքերը. որոշ բնագավառներում գործածության մեջ մնալով նույնիսկ XIX դարի ընթացքում: Այնքան մեծ էր հազարամյա ավանդույթով սրբագործված հայկական այբբենական համարողության ուժը, որ XVII դարի կեսերին Նոր Ջուղայի միջավայրում, տասնորդական և հայկական սիստեմների զուգորդությամբ, կյանքի կոչվեց թվարկության ինքնատիպ մի նոր սիստեմ: Պարսկահայ վաճառականների մեծամասնությունը, քաջ տեղյակ լինելով արաբական թվերին և «պոզիցիոն» թվարկությանը, առևտրական գործարքների հաշվապահությունը կատարում էր նորահնար և ինքնատիպ այս եղանակով: Հայ այբուբենի առաջին երկու իննյակները նույնությամբ կիրառվում էին այդ սիստեմի մեջ, որպես միավոր և տասնավոր թվեր.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90

Հարյուր, ինչպես և հազար թվերը, նույնպես գրվում էին նախկին

[21] 1810 թ. Վենետիկում լույս ընծայվեց նաև նույն հեղինակի «Եռանկիւնաչափութիւն» աշխատությունը, որով հայ ընթերցողը հնարավորություն ստացավ մայրենի լեզվով ծանոթանալու ուղղագիծ և սֆերիկ եռանկյունաչափության առարկային, բնական թվերի լոգարիթմներին, ուղղանկյուն և շեղանկյուն եռանկյունների առանձնահատկություններին և այլն:

ձևով Ճ-100, Ռ-1000: Փոխված էր, սակայն, հարյուրավոր և հազարավոր մյուս թվերի գրության եղանակը. հայկական այբուբենի մյուս տառերը իրենց թվական նախկին արժեքներով (դիցուք, Ն-400, կամ Տ-4000 և այլն) այլևս չէին օգտագործվում: Հարյուր (Ճ) կամ հազար (Ռ) թվից առաջ գրվում էր պահանջվող միավոր կամ տասնավոր թիվը. 400-ը, օրինակ, գրվում էր ԴՃ (4. 100), 4000-ը՝ ԴՌ (4. 1000) ձևով: Մեկ նմուշ ևս. հայկական հին թվարկության սիստեմով հնգանիշ 56789 թիվը, օրինակ, գրվելու էր ԵՅՉՁԹ ձևով, իսկ նոր սիստեմով ԾԶՌ. էՃ. ՁԹ (այսինքն՝ 56. 1000+7. 100+89=56789): Այս նոր գրությամբ մեծապես դյուրանում էր թվաբանական պարզ գործողություններ կատարելը:

Մշակվել էր նաև կոտորակների գրության նոր եղանակ. ամբողջական թվերից հետո, ըստ անհրաժեշտության, գրվում էին ուղղահայաց, հորիզոնական և դարձյալ ուղղահայաց մեկ, երկու կամ երեքական գծիկներ, այսպես.≡|||≡ կամ ⊣|=, կամ =|− և այլն (գծախմբերից որևէ մեկի բացակայության դեպքում դրա փոխարեն դրվում էր թանձր մի կետ): Առաջին խմբի յուրաքանչյուր գծիկն ամբողջական թվի 1/4-ի նշանակությունն ուներ, երկրորդ (հորիզոնական) խմբի գծիկներից յուրաքանչյուրը՝ 1/16 էր նշանակում, իսկ երրորդ խմբի մեկ գծիկը՝ 1/64: Ըստ այդմ, վերոհիշյալ կոտորակներից առաջինը (որի բոլոր խմբերում երեքական գծիկ է նշանակված) ընկալվում էր այսպես.

3/4 + 3/16 + 3/64, այսինքն՝ 63/64. երկրորդ կոտորակը նշանակում էր 1/4+ 2/16+ 2/64, այսինքն՝ 26/64 կամ 13/32 և այլն:

Պահպանվել են հայ վաճառականների կողմից գրանցված մի քանի հաշվետումարներ, որոնց մեջ լայնորեն կիրառված է տասնորդական սիստեմի ազդեցությամբ բարեկարգված հայկական այբբենական թվարկության այս նոր փոփոխակը[22]:

Հայ ընթերցող շրջանները XVII դարի սկզբներից հաղորդակից են դառնում նաև բժշկության և բնագիտության մարզերում եվրոպական գիտության ձեռք բերած նվաճումներին: Եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած մի շարք հայ բժիշկ-

[22] Լ. Խաչիկյան, Հովհաննես Ջուղայեցու հաշվետումարը (Armeniaca, Mélanges d'études Arméniennes, Venise, 1969, էջ 245):

ներ ինքնուրույն և թարգմանական արժեքավոր երկերով հարստացնում են հայ մատենագրությունը: Ասպարեզ են իջնում նաև խավարի մեջ խարխափող իրենց հայրենակիցների մտավոր հորիզոնը լուսավորելու ազնիվ գաղափարով տոգորված, գիտության ծարավի ինքնուս գործիչներ, որոնք անասելի խոչընդոտներ հաղթահարելով, նոր արժեքներ են ստեղծում իրենց նախասիրած բնագավառներում:

Այդպիսի ինքնուս գործիչներից է Աբրահամ Պոլսեցին՝ հայ միջնադարի միակ կենդանաբանը, որ 1611թ. Կոստանդնուպոլսում շարադրել է ինքնատիպ և հետաքրքրական մի ուսումնասիրություն՝ «Պատմութիւն անասնոց և գազանաց, չորքոտանեաց, սողնոց և թիւնաւորաց, թռչնոց և մարդկան, ծովային ձկանց և անասնոց և գազանաց, և այլ ժժմակաց ծովու և ցամաքի...» ընդարձակ խորագրով:

Ընթերցող լայն շրջանների համար շարադրված այս գրվածքի նյութը «բազում բանիւ և աշխատութեամբ» հեղինակն ամբողջացրել է հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն լեզուներով ձեռք բերած գրավոր ու բանավոր աղբյուրներից, հարստացնելով այդ ամենն իր անձնական փորձի և դիտողականության միջոցով կուտակած նյութերով:

Առաջնորդվելով, հավանաբար, եվրոպական վերածննդի ժամանակաշրջանի նշանավոր կենդանաբանների դասակարգության սկզբունքներով, մեր հեղինակը կենդանական աշխարհի ներկայացուցիչներին բաժանել է հինգ խոշոր խմբերի. 1. Չորքոտանիներ (նկարագրում է 50 տեսակ), 2. Թռչուններ (44 տեսակ), 3. Ջրային կենդանիներ ու զեռուններ (12 տեսակ), 4. Ծովային պատենավոր («կէճէպ» ունեցող) ժժմակներ և 5. Ձկներ ու խեցեմորթներ (48 տեսակ): Խոսում է նաև կենդանակերպ ու մարդակերպ հրեշների մասին, ինքն էլ իմանալով, որ դրանք «առասպելք» են: Կենդանիների նկարագրությունները, նրանց բնութագրումները ձևաբանական են և գերազանցապես ճիշտ: Մեծ ուշադրություն է նվիրված կենդանիների վարք ու բարքին, սնմանը, ընտանեցմանը, խնամելու կերպին և այլն, հանգամանքներ, որ հաճելի և հետաքրքրական դարձնելով կենդանաբանական չոր նկարագրությունները, նաև գրավիչ նյութ են հանդիսանում ժողովրդական ընթերցանության համար և ապացույց տալիս հեղինակի կենսաբանական ըմբռնումների խորության մասին: Հատուկ արժեք է ներկայացնում աշխա-

տության Կոստանդնուպոլսի շրջակա ծովերի ձկներին նվիրված ընդարձակ բաժինը, որն առավել չափով կազմված է անձնական դիտողությունների և ուսումնասիրության միջոցով ձեռք բերված տվյալների հիման վրա: Իր գրքի մեջ մեր կենդանաբանը հաղորդում է նաև աշխարհագրական, պատմաշակութային նշանակություն ունեցող հետաքրքրական տեղեկություններ:

Ուշագրավ այս աշխատությունը շատ բարձր է գնահատվել հայ մշակույթի պատմաբանների կողմից.: «Այսպես թե այնպես,- գրել է նրանցից մեկը,- խորին երախտագիտության է արժանի Աբրահամ Պոլսեցին, որ որպես առաջինը մեր անցյալի ամբողջ գրականության մեջ, մեզ կենդանաբանական մի գիրք է թողել գիտական գրեթե այն բարձրության, որ ժամանակի եվրոպական կենդանաբանությունն է ունեցել՝ իր առավել և թերի կողմերով[23]:

Եվրոպական բժշկագիտության տեսական և գործնական նվաճումների մասին հայ ընթերցողը տեղեկություններ է ստանում թարգմանական և ինքնուրույն այն երկերից, որ հատ ու կենտ սկսում են երևան գալ տակավին XVII դարի ընթացքում, իսկ հաջորդ դարի կեսերին բազմապատկվում են: Հայկական խոշոր գաղթավայրում սկսում են աշխատել եվրոպական համալսարաններում սովորած բժիշկներ, որոնցից մի քանիսը, բուժող բժշկի մեծ համբավ ձեռք բերելով, զբաղվում են նաև գիտական աշխատանքով, շարադրում ու տպագրում են բժշկական արժեքավոր գրքեր:

Ծանոթանանք նախ Պետրոս Քալանթարյանի գործունեությանը, որ ծնվել է Նոր Ջուղայում, սովորել Եվրոպայում, ապա բնակություն հաստատել Մոսկվայում: 1793 թ. Նոր Նախիջևանում հրատարակվում է նրա հեղինակած բժշկարանը, բաղկացած երկու ինքնուրույն մասերից:

[23] Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 460: Աբրահամ Պոլսեցու «Կենդանաբանության» միակ ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում: «Բազմավեպ» ամսագրի 1898 թ. համարներում (էջ 1-6, 66-74, 120-128) տպագրված անստորագիր մի հոդվածի մեջ (հեղինակը հավանաբար Գ. Ալիշանն է) տեղեկություններ են տրված այդ ձեռագիր աշխատության մասին և բերված են ընդարձակ հատվածներ:

Առաջին մասում շարադրված են ախտաբանության և բուժման կարևորագույն խնդիրները, ըստ որում, հիվանդությունների ախտանիշները թվարկված են համառոտակի, իսկ բուժման միջոցները՝ հանգամանորեն: Երկրորդ մասը լատին-հայկական բժշկական բառարան է, ուր տրված են 363 տերմինների բացատրություններ (այստեղ մեջ են բերված նաև մի քանի ռուսերեն տերմիններ): Եվրոպական բժշկությունից բացի, Քալանթարյանը հայկական միջնադարյան աղբյուրների միջնորդությամբ ծանոթ է նաև արաբական բժշկագիտությանը և ըստ հարկի օգտագործում է նաև միջնադարյան բժշկության բանական տվյալները:

Նույն ժամանակ է ասպարեզ իջել նաև Հովակիմ Օղուլլուխյանը. ծնվել է, հավանաբար, Տրապիզոնում, սովորել Վիեննայի համալսարանում, այնուհետև հաստատվել է Կոստանդնուպոլսում և որպես բուժող բժիշկ մեծ անուն վաստակել: Գրել է երեք աշխատություն. 1783 թ.՝ լատիներեն լեզվով «Ախտաբանություն» (Pathologia), մի այլ գործ, որ շարադրված է հոլանդացի նշանավոր բժիշկ Պոերգավի երկերի հիման վրա և, վերջապես, 1785 թ. «Դեղագիտություն» (Materia medica) աշխատությունը, որ լույս է տեսել 1806 թ. Վենետիկում: Դեղանյութերն այստեղ դասակարգված են ըստ իրենց տարբեր ներգործության՝ մի շարք խմբերի տակ (սրտային, գրգռիչ և այլն): Նախ տրվում է տվյալ խմբի մեջ ընդգրկված դեղանյութերի ընդհանուր բնութագիրը, ապա ամեն մի նյութի անվանումը՝ լատիներեն, հայերեն և թուրքերեն լեզուներով, իսկ այնուհետև՝ դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները և բուժական ազդեցությունը:

Առավել նշանավոր է եղել Ստեփանոս Շեհրիմանյանը՝ տաղանդավոր բժիշկ և բնագետ, որ ծնվել է Թիֆլիսում, սովորել Իտալիայում, աշխատել Կոստանդնուպոլսում, ապա վերադարձել իր ծննդավայրը, ուր և կնքել է իր մահկանացուն 1818 թ. հետո (ճիշտ տարեթիվը հայտնի չէ):

1791-1796 թթ. Կոստանդնուպոլսում ժանտախտի համաճարակ էր բռնկվել. Շեհրիմանյանն այդ տարիներին անձնվեր աշխատանք է կատարել որպես բուժող բժիշկ և իր կուտակած հարուստ փորձի հիման վրա, օգտագործելով նաև գիտական գրականության մեջ առկա տվյալները, շարադրել է «Անդեղեայ ժանտախտի» կարևոր ուսումնասիրությունը, առաջնահերթ նպատակ ունենալով սովորեցնել ժողովրդին վարակից զերծ մնալու միջոցառումները: Ժանտախտի մասին այս գրվածքը, մասնագետների

գնահատությամբ, հայ բժշկական գրականության առավել ծանրակշիռ ու արժեքավոր ստեղծագործություններից է:

Հայ բնագիտական մտքի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում Շենրիմանյանի «Տնկաբանութիւն կամ փղորայ Հայաստանի» *աշխատությունը, որ այսօր իսկ, իր գրությունից ավելի քան 150 տարի հետո (շարադրվել է 1794-1818 թթ.), պահպանում է ճանաչողական ու գիտական իր նշանակությունը: Աշխատությունը կոչվում է «Փղորայ (այսինքն՝ ֆլորա՝ բուսականություն) Հայաստանի», բայց նրա մեջ տեղ են գտել նաև բազմաթիվ բույսեր, որոնք չեն աճում մեր երկրում: Այստեղ, այբբենական շարահարությամբ, թվարկված են 800 (հոմանիշները չհաշված) բույսերի անուններ և գրանցված նրանց մասին բուսաբանական ու դեղագիտական ընդարձակ տեղեկություններ: Սկզբից տրվում է բույսի անունը՝ հայերեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն (երբեմն նաև հունարեն և եբրայերեն), ապա դրա ձևաբանական նկարագրությունը՝ աճման վայրերի նշումով: Դրան հաջորդում են բույսերի բուժական հատկությունների մասին տվյալները. հիշատակվում են այն հիվանդությունները, որոնց բուժման համար օգտագործվում են նրանք, տրվում են տեղեկություններ նրանց տեսակների, օգտագործման եղանակների, երբեմն նաև չափի ու քանակի մասին:*

Մեծ բարեխղճությամբ հեղինակը նշումներ է կատարում այս կամ այն բույսի վերաբերյալ գրանցված տեղեկության աղբյուրի մասին. ըստ այդմ, նա լայնորեն օգտագործել է անտիկ հեղինակների (Դիոսկորիդես, Պլինիուս, Հիպոկրատ, Գալեն), եվրոպական բնագետների (Լիննեյ, Ֆորսկալ), ինչպես և հայ ու միջնադարյան Արևելքի այլ բժիշկների (Ամիրդովլաթ, Միրզա Մյումին) աշխատությունները[24]:

Ս. Շենրիմանյանի «Տնկաբանությունը» գիտական ամենալուրջ սկզբունքներով կազմված մի ծանրակշիռ ուսումնասիրություն է, որ չունի իր նմանակը ոչ միայն հայ, այլև հարևան ժողովուրդների ժամանակակից

[24] Տե՛ս Л. А. Оганесян, նշվ. աշխ., “Армяне врачи, воспитанники европейских университетов” գլուխը (էջ 193-245):

գիտական գրականության մեջ[*]:

XVII-XVIII դարերի ընթացքում հրապարակ իջած և գիտության տարբեր բնագավառներում արժեքներ ստեղծած վերոհիշյալ հայ գործիչները, գրեթե առանց բացառության, իրենց կյանքն անց են կացրել եվրոպական գիտական կենտրոններում (Ամստերդամ, Մարսել, Վենետիկ, Մոսկվա), կամ էլ Հայաստանից հեռու գտնվող այնպիսի գաղթավայրերում (Կ. Պոլիս, Սպահան), որոնք տնտեսական ու մշակութային սերտ կապերի մեջ էին եվրոպական երկրների հետ: Այս հանգամանքը, անշուշտ, նպաստավոր է եղել հայ մտավորականների համար:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի տաժանելի տիրապետության տակ կեղեքվող հայկական նահանգներում, ուր շարունակում էր ապրել ու մաքառել աշխատավոր հայ ժողովուրդը, մշակութային գործունեության ծավալման և, մանավորապես, գիտության զարգացման համար չկային նույնիսկ ամենանվազագույն նախադրյալներ: Անբարենպաստ այս պայմանները, սակայն, չէին կարող արգելակել հեռավոր գաղթավայրերում ստեղծված հոգևոր արժեքների ներթափանցմանը հայրենի երկիր. տարբեր ուղիներով ստացվող տպագիր գրքերը, ձեռագիր աշխատությունները և այլ արժեքներ՝ ձեռքից ձեռք էին անցնում, կլանվում գրաճանաչ մարդկանց կողմից, ընդարձակում նրանց մտահորիզոնը և խթանում գիտության նկատմամբ հետաքրքրության խորացմանը: Մայր երկրում ևս, վանականի խուցը դադարում էր գիտական զբաղմունքների միակ աշխատանոցը լինելուց. գրիչ էր վերցնում աշխարհական մարդը՝ վաճառական և արհեստավոր, նոր մոտեցում դրսևորելով բնության ու հասարակական կյանքի երևույթների նկատմամբ:

Այս նոր միջավայրի ծնունդ էր գիտությանն անհունորեն սիրահարված մտավորական Ավետիք Բաղդասարյան Տիգրանակերտցին, որ 1684-1719 թթ. ընթացքում, հաղթահարելով մեծ դժվարություններ, թափառելով երկրից երկիր, ստեղծել է թվաբանության, տոմարագիտության, աստղաբաշխության, երաժշտության և գիտության այլ ճյուղերի

[*] Շենրիմանյանի գիտական ժառանգության ուսումնասիրությանն է նվիրված վաղամեռիկ Կարինե Մարջանյանի ատենախոսական մենագրությունը, որը մեր կողմից խմբագրված և պատրաստված է հրատարակության- Խմբ.:

մասին հետաքրքրական նյութեր պարունակող մի ընդարձակ ժողովածու՝ «Տէֆտէր գիրք» խորագրով: «Մանուցումն առ ուսումնասէր ընթերցողս» ներածական խոսքի մեջ Տիգրանակերտցին իր աշխատանքի պայմանների, օգտագործած աղբյուրների և ժողովածուի բովանդակության մասին գրում է. «Այս գիրքս ամենայն տումարական արվեստից և աստղաբաշխական ճէտվէլից և մեկնութեանց տէֆտէր է, զոր ես նուաստ Աւետիք ընթերցող՝ ծնունդ Տիգրանակերտեան, որ և մնեալ եղէ ի բազում քաղաքս, այսինքն նախ ի Էրզրում քաղաք. կացի այդ ամս ԺԴ (14), և յետոյ ի Տիգրանակերտ քաղաքն փոխեցայ, ի Բաղէշ, ի Վան, ի Պարսից երկիրն, ի Քրդաստան, ի Արապիստան, ի Անատօլի, ի Սեբաստիա, ի Թոխաթ: Պատճառ ի շրջիլն այսքան աշխարհ՝ վասն գրասիրութեանս և մէրէֆեթի (այսինքն՝ արվեստի, գիտության) աղագաւ. ոչ թէ ի Հայոց գրաց միայն, այլ ամենայն ազգաց գրոց, այսինքն՝ Արապաց, Ֆարսից, Ջհտաց, Ղպտից, Ասորոց, Ֆրանկաց, ի Յունաց գրոց և վարպետաց. հարցեալ և ժողովեալ անհամար մեկնութիւն և ճէտվէլ աղիւսակք, մեծաւ տաժանմամբ, ամառ և ձմեռ դեգերելով...»: Իր ժողովրդին լուսավորելու համար գիտական նյութեր հավաքելու ճանապարհին մեր ինքնաուս գիտնականը հաղթահարել է անհերևակայելի դժվարություններ: «Շատ նախատինք լսեցի որովայնամոլ և արբշիռ ուսումնատեաց եկեղեցականաց», «համբերէի վշտաց և նեղութեանց», «դեգերեալ մաշէի ի դրունս ուսուցիչ իմաստասիրաց» ,- համեստորեն արձանագրում է նա: Էրզրում քաղաքում մի քանի օրով կանգ առած ֆրանսիացի մի գիտնականի մոտ (որ մեկնելու էր Չինաստան) Տիգրանակերտցին գտնում է հայերեն թարգմանվելու արժանի աստղաբաշխական արժեքավոր նյութեր: Ֆրանսիացի ճանապարհորդը, չանսալով մեր գիտնականի թախանձանքներին, անսպասելիորեն մեկնում է Էրզրումից. Երկու ամսից լուր է ստացվում, որ նա կանգ է առել Թավրիզում: Ավետիքը, ինչպես ինքն է գրում, «անյապաղ ելեալ Արզրումայ՝ ի ձմեռային ցրտասառույց և ի բքաբեր օդոց զանց առնելով», գավառից գավառ հետիոտն անցնելով, հասնում է Թավրիզ, ներկայանում եվրոպացի գիտնական-ճանապարհորդին, զարմացնում նրան իր նպատակասլաց հարցասիրությամբ և իրականացնում իր ծրագիրը՝ հայերեն թարգմանելով անծանոթ աստղաբաշխական բնագիրը:

Ավետիք Տիգրանակերտցու ձեռագիր աշխատությունների մասին տեղեկություններ պարունակող անստորագիր հոդվածաշարի հեղինակը (ամենայն հավանականությամբ՝ Ղ. Ալիշանը) հայտնում է, որ նրա գործերի մեջ ստույգի *հետ* սուտն *էլ կա,* իմաստության *հետ* հիմարություն *ևս, բայց շատ բարձր է գնահատում նրա գիտական վաստակը, «սուր ու զորավոր միտքն ու կարողությունը»*[25]*:*

Հայ գիտական մտքի ուշ միջնադարյան շրջանի ամբողջական պատկերը գծելու համար դեռևս շատ դժվարություններ են հաղթահարվելու: Ձեռագիր և հնատիպ գրքերի մեջ կան դեռևս չբացահայտված ու չարժեքավորված բազմաթիվ բնագրեր՝ միջնադարյան գիտության տարբեր բնագավառների մասին արժեքավոր նյութերով. կան տաղանդավոր ու նվիրյալ մի շարք գործիչներ, որոնք առ այսօր չեն գրավել գիտության պատմաբանների ուշադրությունը, արդեն հայտնի նյութերն էլ՝ սպասում են ավելի հանգամանալից ու մանրագիտական քննության:

АРМЯНСКАЯ ЕСТЕСТВЕННОНАУЧНАЯ МЫСЛЬ В XIV-XVIII вв.

(Резюме)

Вводя в научный оборот новые материалы, автор сводит воедино и дает оценку достижениям армянских ученых в области естественных наук в период упадка феодализма.

Время, охваченное исследованием, делится на два больших периода: XIV-XVI и XVII-XVIII вв.

Армянские ученые первого периода, почти без исключения были духовными лицами. Свои труды они в большинстве случаев создавали для удовлетворения нужд учебных заведений высшего типа, действовавших в то время при монастырях. Авторы

---

[25] Ավետիք Տիգրանակերտցու ձեռագիր աշխատությունները պահվում են Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում. նրանց մասին «Բազմավեպի» մեջ (1897 թ., էջ 317-321), 375-380, 423-425, 459-463) տպագրված է ընդարձակ հոդվածաշար: Արժեքավոր է նաև Տիգրանակերտցու մասին Լեոյի գեղեցիկ շարադրությունը (Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 421-424):

руководствовались принципом: "За исследованием натуры следует ересь, а за верой – ортодоксальность". Ряду авторов удалось создать выдающиеся труды, обобщить научные достижения предшествующих веков, обогатить их собственными наблюдениями, но никто из них не сумел выйти за пределы учения об элементах Аристотеля, птолемеевской антропогеоцентрической системы и гиппократовской гуморальной патологии.

Второй период характеризуется благотворным воздействием великих открытий европейской науки на армянскую мысль. Это воздействие оказывается через переводы научных трудов с европейских языков, а также путем распространения творений ряда армянских ученых, получивших образование в Европе или самоучкой причастившихся к высотам научной мысли. Появляются ценные труды по зоологии, ботанике, медицине, космологии, геометрии, вместо армянской алфавитной системы счисления начинает применяться десятичная позиционная система и т. д.

Армянский народ, изнывавший под игом Османской Турции и сефевидского Ирана, напрягая интеллектуальные силы, сумел усвоить достижения европейской науки и внести свою лепту в благородное дело расширения научных исследований, их распространения и популяризации.

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ*

(Բացման խոսք)

1661 թվականին, պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Երնջակ գավառի Շոռոթ գյուղաքաղաքում ծնվեց մի մանուկ, որին վիճակված էր խոր հետք թողնել հայ գրականության և արվեստի պատմության մեջ. դա Նաղաշ Հովնաթանն էր: Այդ օրից անցել են երեք հարյուր երկար ու ձիգ տարիներ: Հայ ժողովրդի պատմական ու մշակութային կյանքում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, ժողովրդի հիշողությունից դուրս են եկել բազմաթիվ գործիչների մասին եղած հիշատակները, բայց Հովնաթան բանաստեղծի և Հովնաթան նկարչի (Նաղաշի) անունը երկու տարբեր ճանապարհներով՝ աշուղների բանավոր խոսքով և մեսրոպատառ տառերով, հասել է մեզ և հուզում է մեր սերնդին: Իր ժամանակի ու իր միջավայրի հարազատ շունչն է, որ կենդանություն և հարատևություն է պարգևել Նաղաշ Հովնաթանի երգերին:

Մեր բանաստեղծի բնաշխարհը՝ նրա ստեղծագործական կյանքի տասնամյակներին, մեկն էր Անդրկովկասի ամենաբարգավաճ շրջաններից: Գտնվելով Արաքսի նշանավոր կամուրջի մատույցներում՝ Շոռոթ գյուղաքաղաքը, մերձարաքսյան մի շարք այլ հայկական բնակավայրերի՝ Ագուլիսի, Դաշտի, Ցղնայի, Օրդուբադի, Աստապատի, Ջահուկի հետ միասին, տնտեսական նշանակալից դեր էր կատարում, որպես միջազգային տարանցիկ առևտրի բարգավաճ հանգրվաններից մեկը:

Հին Ջուղայի շահաբբասյան բռնագաղթից հետո, ջուղայեցիների դե-

* Անտիպ:

րը, որպես միջնորդ առևտրականներ, ժառանգեցին 17-րդ դարի երկրորդ հիսնամյակում պատմական ասպարեզ իջած շոռոթեցի, ագուլեցի, դաշտեցի, ցղնացի խոջաները:

Վերոհիշյալ բնակավայրերի մեծագույն մասը, միջնադարյան պայմաններում, բնականից զուրկ էր գյուղատնտեսական արտադրության զարգացման հեռանկարներից: Արևակեզ ավազային լեռնաձերպերի, քարքարոտ ժայռերի ու խոր ձորերի այդ աշխարհում մեռյալ ու անկենդան էր բնությունն ամենուրեք, ուր ջուր չկար, իսկ ջուր բերելու, ջրանցքներ և առուներ անցկացնելու համար պահանջվում էին մեծ ջանքեր ու հսկայական միջոցներ: Այդպիսի ջանքերի գնով, համատարած այդ անապատում, ժողովուրդն ստեղծել էր դրախտավայր օազիսներ:

Այդպիսի օազիսներից մեկն էր Նաղաշ Հովնաթանի ծննդավայր Շոռոթ գյուղաքաղաքը:

Հնագույն պատմական հիշատակներ Շոռոթի մասին չեն պահպանվել: Նրա պատմությանը հնարավոր է լինում հետևել միայն 17-րդ դարի 20-ական թվականներից:

Մովսես Խոտանանցին մինչև իր կաթողիկոսանալը (1629-32) Շոռոթում հիմնադրել էր դպրատուն՝ «զի ի շրջակայ գիւղօրէիցն անդր ժողովեսցին մանկունք առ ի յուսումն»[1]: 1630 թվականին Հռոմում հիշատակվում է ոմն տեր Զաքարիա «խոստովանահայր հայոց», որն իր իսկ խոսքերով էր «գողտնացի ի գեղջէն Շօռօթեցի»[2]:

Շոռոթի և շոռոթեցիների մասին մեր տվյալները բազմապատկվում են նույն դարի 60-70-ական թվականներից:

1670 թվականի մի տապանաքար՝ Հալեպի հայկական գերեզմանատնից՝ վկայում է միջազգային առևտրի նշանավոր այդ հանգրվանում շոռոթեցի (ինչպես և ագուլեցի, ցղնացի, աստապատցի, ղափանցի) խոջաների մշտական ելևմուտքի մասին[3]:

---

[1] Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 351:

[2] Նույն տեղում:

[3] Ա. Սիւրմէեան, Պատմութիւն Հալէպի ազգային գերեզմանատանը և արձանագիր հայերէն տապանաքարերու, Հալէպ, 1935:

1677 թվականին Ամստերդամում էր գտնվում շոռոթեցի խոջա Ղաբիրջանի որդի Մարգարը[4]:

Առավել շատ են տվյալները (Ղ. Ալիշանի ջանքերով հավաքված) Վենետիկում առևտրական գործարքներ կատարող, նույնիսկ մշտական բնակություն հաստատած և տուն ու տեղ ստեղծած շոռոթեցիների մասին: Այսպես օրինակ, 1682-1712 թվականներին Վենետիկում հիշատակվում է խոջա Սիմեոնի որդի Կարապետը, 1670-1680 թվականներին՝ ոմն Աթիկ, 1718-1758-ին՝ Առաքել Քարաձգենցը (ամուսնացած է եղել իտալուհու հետ, ունեցել է որդիներ), 1735-ին վախճանված վաճառական Պողոսի որդի Աւլանը (պահպանվել է սրա ուշագրավ կտակը) և այլն, և այլն[5]:

17-րդ դարի կեսերին շոռոթեցի վաճառականների ենք հանդիպում նաև Անկյուրիայում և, մանավանդ, Թուրքիայի վրայով Եվրոպա գնացող ճանապարհների նշանավոր նավահանգիստ-հանգուցակետ Զմյուռնիայում: Խիստ նշանակալից պետք է եղած լինի շոռոթեցի խոջաների կապն այս քաղաքի հետ, հայտնի է, որ Շոռոթից ոչ հեռու գտնվող Գաղ նշանավոր գյուղավանի բնակիչները, որոնց մեջ ևս կային անվանի խոջաներ, Նադիր-Շահի և նրա հետևորդների հարստահարությունից խույս տվեցին ու բնակություն հաստատեցին հենց Զմյուռնիայում:

Այս տվյալները միաբերան վկայում են այն մասին, որ Շոռոթի խոջաները, իրենց հարևան ու բախտակից մյուս հայկական գյուղաքաղաքների (Ագուլիսի, Ցղնայի, Աստապատի ևն) խոջաների նման, մասնակցում էին Իրանի և եվրոպական երկրների միջև տեղի ունեցող միջազգային աշխույժ առևտրին, և Սիրիայի (Հալեպ) ու Զմյուռնիայի վրայով իրենց գործարքները կատարելով եվրոպական մայրցամաքի հյուսիսային (Ամստերդամ), ու հարավային (Վենետիկ) վաճառաշահ կենտրոններում:

Չպետք է տարակուսել այն բանում, որ Նաղաշ Հովնաթանի հայրենակիցները լինում էին նաև Ռուսաստանում: Կասպից ծովի, Աստրախանի և Վոլգայի վրայով կատարվող առևտուրը, մանավանդ 1667 թվականի առևտրական պայմանագրից հետո, չէր կարող չգրավել նաև Շոռոթի խոջաների ուշադրությանը:

---

[4] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 357:

[5] Նույն տեղում, էջ 357-358:

Հովնաթանն իր բանաստեղծություններից մեկում ունի այսպիսի տողեր՝

Քո ծոցն՝ բեռն-բարխանայ,
Նոր է եկած Հաշտարխանայ, զալում եար, էյ ...[6]

Այս ուշագրավ տողերը իմաստավոր կլինեին այն դեպքում, եթե Աստրախանից եկող «բեռ-բարխանները» սովորական լինեին բանաստեղծի ծննդավայր Շոռոթի առօրյայում:

Շոռոթը, իր հարևան գյուղաքաղաքների հետ, բացի տարանցիկ առևտրի հանգրվան լինելուց, միաժամանակ արհեստավորական արտադրանքի կենտրոն էր:

Հովնաթանի տաղերի, ինչպես և այլ պատմական աղբյուրների տվյալներով, մերձարաքսյան հայկական գյուղաքաղաքների բնակչության մի զգալի մասը զբաղված էր շերամապահությամբ, բամբակի ու բրդի մշակումով, մետաքսագործությամբ, կտավագործությամբ և այլ արհեստներով:

Փեշաքյար-արհեստավորները, իրենց քարխանաներով Շոռոթի և նրանից ոչ հեռու գտնվող գյուղաքաղաքների բնակչության զգալի մասն էին կազմում. զրգար, խառատ, զարգյար, ջուլհակ, ջավահիրչի, նաղաշ՝ այս արհեստները բանեցնող մարդիկ, այս կամ այլ առիթով, բազմիցս հիշատակվում են մեր բանաստեղծի տաղերում:

Ճանաչողական մեծ արժեք ունեցող այդ տաղերը հնարավորություն են ընձեռում լույս սփռելու տնայնագործական արտադրության այն ուշագրավ ձևերի վրա, որ կյանքի էին կոչել Նաղաշ Հովնաթանի հայրենիքում, առևտրավաշխառուական կապիտալի զարգացման այդ էտապում:

Կանանց ծանր առօրյայի մասին Նաղաշ Հովնաթանի գրած կենցաղագրական խիստ ուշագրավ երգիծական բանաստեղծության մեջ՝ հանդիպում ենք այսպիսի տողերի.

Քաղցր քնելու ժամանակին
Կու քաշեն վանքի զանգակն,
Դեռ մէկ է կանչած քոռ որձակն,
Կասեն. «վեր կաց, բնարէ բամբակն ...

[6] Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 65:

Ջահրա, թող կորի ցաւի կուռն,
Պարտականներն բռնած դուռն,
Ապայ իլիկին թէք և ծուռն...
Բամբակն զապուն՝ թանգ են առած ...
Կասէ. «Շեթանայ, ընկնի քարն
Էն քոռ քոբակ գզարարն,
Կորվի անեղին լարն ...
Էլ չեմ մանիլ, բամբակն վատ է,
Մէջն մրջիկ բամբահատ է,
Աղջիկ, վեր ջահրան պատառէ.
Թևերն ծուռ է, շատ է գոռն,
Թունբաթուն ընկնի խռատի գոռն»[7]:

Ինչքան բան է ասված այս մի քանի տողի մեջ:

Գյուղական չքավոր ընտանիքներում, որոնք ընկել էին իրենց հայրենակից խոջաների վաշխառուական ցանցի մեջ («պարտականներն բռնած դուռն»), կանայք ու աղջիկներն առավոտյան դեռ լույսը չբացված («դեռ մէկ է կանչած քոռ որձակն») ստիպված էին արթնանալ և ողջ օրը տառապալից աշխատանք կատարել, բնարել բամբակը, որը «թանգ էր առած», վատ էր զզած ու մաքրած, մանել իլիկով ու ջահրայով պատրաստի կիսաֆաբրիկատը հայրենակից խոջաներին հանձնելու և փոքր-ինչ շահ ստանալու խորը մտահոգությամբ:

Մեր բանաստեղծն իր ստեղծագործություններով մասամբ լույս է սփռում իր միջավայրի սոցիալտնտեսական հարաբերությունների վրա, բացահայտելով մի կողմից Ֆռանգստանի ճամփաներին սովոր՝ «բեռ ու բարխանայով», «ապրանք ու մալով» ուռճացած խոջաների, մյուս կողմից՝ չարքաշ աշխատանքով ապրող համեստ փեշաքյարների ու տնայնագործների կյանքը:

Նաղաշ Հովնաթանն ինքը չարքաշ «փեշաքյար» է՝ տնտեսական իր շահերով ու գաղափարական իր մտորումներով:

Ուշագրավ են խոջայական դասին պատկանող Շահվերանց տեր

[7] Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, էջ 107-109:

Աբրահամի և մեր բանաստեղծի անձնական հարաբերությունների մասին վկայող նյութերը: Այդ Աբրահամը, որը եղել է Եվրոպայում, մեծ փողեր վաստակել, բայց անորդի տուն վերադառնալով հոգևորականի սքեմ հագել («խոջա, տէրտէր դառար անբան»), ինչ-որ առիթով ծաղրել է բանաստեղծին, ասելով. «Յովնաթան, կյլուրդ հանց է քաշած թան», այսինքն վաստակդ (գյալուր) քամած թանի նման չնչին է:

Խոջաների ու փեշաքյարների շահերը հաճախ բախվել են միմյանց և խոջաների խոտելի վարքագծի, ծաղրելի նիստ ու կացի նկարագրությունը զգալի տեղ է գրավել փեշաքյար Հովնաթանի ստեղծագործություններում:

Ո՞ւր է հանց խոճայ, որ զայրաթ քաշի,
Ընկած փէշաքրին դարդերն տաշի ...

կամ

Եա առուել ի մէջ իւր գեղի,
Որ միշտ տան ըմպել դառնագոյն լեղի ...[8]

գրել է խոջաների մասին մեր բանաստեղծը:

Նաղաշ Հովնաթանի հայրենի գավառը, ուր նա ծնվել, ուսում է առել և ստեղծագործել իր տաղերի մեծագույն մասը, պարգևել է մեր պատմության այլ գործիչներ ևս՝ անվանի տպագրիչներ ու տպագրության գործի սատարողներ, հայ ազատագրական շարժման ու հայ մշակույթի մշակներ:

Շոռոթեցի ոմն Մարգար 1677 թվականին, Ամստերդամում դրամական օգնություն ցույց տվեց նշանավոր տպագրիչ Ոսկան Երևանցուն: Իսկ մի այլ շոռոթեցի՝ խոջա Կարապետը, տպագրել տվեց մի Սաղմոս՝ Վենետիկում: Հայ տպագրության տարածման, նոր տպարաններ հիմնելու և տպագրված գրքերը տարածելու գործում շատ ավելի մեծ է եղել Նաղաշ Հովնաթանի կյանքի հետ կապված մի այլ բնակավայրի՝ Ագուլիսի տպագրիչների և մեկենասների մասնակցությունը: Հիշենք, օրինակ, Մատթեոս, Թովմաս, նաև Ղուկաս ու Միքայել Վանանդեցիներին (Վանանդը Ագուլիսի մոտ գտնվող մի գյուղ է), որոնք հայ տպագրության ամենաարգասավոր ու ջանասեր գործիչները դարձան և Ամստերդամում հաստատած տպարանից լույս ընծայեցին բազմաթիվ գրքեր, որոնց շարքում նաև Մով-

[8] Նաղաշ Հովնաթան. Բանաստեղծություններ, էջ 80:

սես Խորենացու «Հայոց պատմությունը»: Չմոռանանք նաև ագուլեցի խոջա Նահապետի որդի Գյուլնազարին, որը 1687 թվականին Վենետիկում տպագրել տվեց «Դաշանց թուղթը», «Պարզաբանութիւն սաղմոսացը» և այլն:

Հայ ազատագրական շարժումների պատմության էջերում գտնում ենք նաև Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մերձավորներից «Բոբիկ» մականվանյալ Առաքել Շոռոթեցու անունը, որի ծավալած գործունեության ոչ բոլոր դրվագներն են առայժմ հայտնի: Գիտենք, որ Հակոբ Ջուղայեցու կողմից ուղարկվելով Հռոմ, պապի հետ բանակցելու հանձնարարությամբ, շոռոթեցի այս վարդապետը 1662 թվականի հունիսի 10-ին Վենետիկի դոժին ուղղված իր գրության մեջ, հայտնում է, որ ինքը մերձավոր կապեր ունի պարսից արքունիքի հետ և առաջարկում է իր ծառայությունները՝ Թուրքիայի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով շահի հետ բանակցություններ սկսելու համար: Նա վստահ է այդ ձեռնարկության հաջող ելքի մասին, քանի որ գիտե պարսից շահի բարեհաճ վերաբերմունքը դեպի այդ դաշինքը: Վենետիկի սենատի անունից շահի հասցեով Բոբիկին տրվում են հանձնարարականներ, ինչպես և թանկարժեք նվերներ: «Նրա (= Բոբիկի) բերնից, - ասված է այդ հանձնարարականի մեջ, - Դուք (= Շահը) կիմանաք այն, ինչ ամենից պարզորեն կարող էին լսել մեր սրտերից ...»: Ազգային-քաղաքական հանձնարարությամբ Առաքել Բոբիկը երկրորդ անգամ ուղարկվեց Հռոմ 1679 թվականին, ուր և վախճանվեց ու թաղվեց հաջորդ թվին[9]*:*

Շոռոթը եղել է հայ գրչության բազմարդյուն կենտրոններից մեկը. Շոռոթի մոտ գտնվող Կուսանաց անապատում աշխատել և ձեռագրեր են ընդօրինակել շոռոթեցի մի շարք գրչուհիներ: Նշանավոր է եղել իր գիտությամբ շոռոթեցի Հովհաննես վարդապետը (ըստ ոմանց՝ մեր բանաստեղծի հայրը), Ստեփանոս Շոռոթեցի բանաստեղծը և այլ գրագետ-բանասերներ: Նշենք նաև, որ շոռոթեցի է եղել Վենետիկի մխիթարյաններից Հ. Սուքիասը, որ 1781 թվականին լույս ընծայեց թվաբանության արժեքավոր մի դասագիրք:

Այսպիսով, Հովնաթանի ծննդավայրը պատկերվում է մեր առաջ, որ-

[9] Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 173, 218-219:

պես 17-18-րդ դարերի Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում զգալի դեր կատարած բարգավաճ մի գյուղաքաղաք:

Չնայած այս բոլորին, Շոռոթի անունը մեր սերնդի մտապատկերում կապակցվում է առաջին հերթին Նաղաշ Հովնաթանի անվան հետ, նշանակություն ստանում որպես նրա և նրանից սերվող Հովնաթանյան տաղանդավոր ընտանիքի ծննդյան ու գործունեության վայր:

Եվ այդ՝ շնորհիվ Հովնաթան բանաստեղծի կենսահաստատ, լավատես և գողտրիկ սիրո երգերի, որոնց մի մասն այսօր էլ չի կորցրել իր ժողովրդականությունն ու հմայքը, շնորհիվ այն բանի, որ մեր բանաստեղծը հորինեց «ամենից նուրբ և ազնիվ ու ճաշակավոր» երգերը, «որոնց մեջ կյանքի հրճվանքն արտահայտված է ամենազորեղ, միաժամանակ և ազնիվ շեշտերով»[10] և շնորհիվ նրա երգերի ճանաչողական մեծ նշանակության: Վերջապես, շնորհիվ այն բանի, որ նա, լինելով մեր գրականության առաջին խոշոր աշուղը, իր ստեղծագործություններով հող նախապատրաստեց մեծատաղանդ Սայաթ-Նովայի համար, նախորդելով նրան նաև հայ-վրացական եղբայրական ժողովուրդներին հավասարապես ծառայելու և հոգեկան հրճվանք պատճառելու իր ցանկությամբ ու կարողությամբ:

Նաղաշ Հովնաթանն ինքն իրեն, նաև իր ժամանակակիցներն ու մերձավորները, նրան ներկայացնում են առաջին հերթին որպես նաղաշ (նկարիչ): Հակոբ Նաղաշի (բանաստեղծի որդու) գրած դամբանական բանաստեղծությունից տեղեկանում ենք, որ նա (Հովնաթանը) նկարազարդել է բազմաթիվ եկեղեցիներ (անտարակույս նաև ապարանքներ), ունեցել է իր քարխանան՝ արհեստանոցը և արտադրել գեղեցիկ պատկերներ («Իմ քաշած պատկերն, որ լաւ ըանիկ է, Բանն բարակ է, դեղն՝ ֆանիկ է ...»), զբաղվել է նաև դիմանկարչությամբ, ձեռագրերի ծաղկումով և ընդօրինակությամբ:

Ցավոք, առայժմ նկարիչ Հովնաթանի ստեղծագործությունները, չնչին բացառությամբ, անծանոթ են մեզ, սակայն եթե նրա գործերը չեն պահպանվել կամ դեռ չեն հայտնաբերվել, հայտնի են նրա որդիների՝ Հակոբի, Հարությունի, թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի, ծոռան՝ Մկրտումի, ապա

[10] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 431:

Հակոբ և Աղաֆոն Հովնաթանյանների գործերը, որոնք ուշադրավ տեղ են գրավում հայ արվեստի պատմության մեջ և այս կամ այն չափով վկայում նաև նկարիչների այդ մեծ գերդաստանի նահապետ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության մասին:

Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների տպագրության պատմությունն սկսվում է 1856 թվականից: Այդ թվականին Պետերբուրգում հրատարակված Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուի մեջ տեղ է գտել նրա «Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ» բանաստեղծությունը: 1910 թ. Փարիզում լույս տեսավ Ա. Չոպանյանի «Նաղաշ-Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» աշխատությունը, ուր ամփոփված էին բանաստեղծի 46 տաղերը:

Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունների հայտնաբերման, հրատարակման և ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքները նոր թափ առացան սովետական իշխանության տարիներին:

1951 թվականին Մատենադարանի աշխատակիցներ Ա. Մնացականյանն ու Շ. Նազարյանը հրատարակեցին մեր հեղինակի ստեղծագործությունները, ուսումնասիրությամբ և անհրաժեշտ բանասիրական ծանոթագրություններով: Այդ ժողովածուն ընդգրկում էր արդեն նրա 81 երգերը՝ սիրո, գարնան, ուրախության, խոհախրատական և երգիծական:

1957 թվականին Հայկ. ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի «Գիտա-մասսայական գրադարան» սերիայով լույս տեսավ Մ. Մկրտչյանի «Նաղաշ Հովնաթան» ուսումնասիրությունը: Գրվեցին նաև մի շարք այլ հոդվածներ:

Սակայն, այսուհանդերձ, ինչպես ցույց կտա մեր հոբելյանական սույն նստաշրջանը՝ իր արժեքավոր ու հետաքրքրական զեկուցումներով, մենք դեռևս շատ աշխատանք ունենք կատարելու մեծ շոռոթեցու և նրա հռչակավոր տոհմի գնահատման գործում: Հենց այդ զեկուցումներն ինքնին նոր քայլեր են այդ ուղղությամբ՝ արժանի ոչ միայն մեր ունկնդիրների, այլև ընթերցող լայն մասսաների ու մասնագետների ուշադրությանը: Դրանք, պատկերավոր ասած, մի-մի պսակ են անվանի հեղինակի անհայտ շիրիմին և բանասիրական համեստ նվեր՝ այս մեծ հոբելյանին: Ուստի թույլ տվեք բացված համարել մեր նստաշրջանը և խոսք տալ զեկուցողներին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՒԵՏՈՒՄԱՐԸ*

Աշխարհագրական իր դիրքի բերումով, պատմական Հայաստանը հնագոյն ժամանակներից սկսած կարեւոր դեր է կատարել միջազգային տարանցիկ առեւտրի մէջ: Հայ վաճառականները, մարդաշատ գաղթօջախներ ստեղծելով միջազգային առեւտրի հանգուցակէտերում, մեծապէս նպաստել են եւրոպական եւ արեւելեան երկրների միջեւ կատարւող ապրանքափոխանակութեանը, մանաւանդ ԺԵ-ԺԸ դարերում:

Իրանի գահակալ Շահ-Աբբաս Ա-ի (1557-1628) հրամանով Արեւելեան Հայաստանի բնակչութեան մեծ մասը 1604 թւականին բռնի տեղահանւեց ու քշւեց Իրանի կենտրոնական շրջանները: Երեւանի, Հին Ջուղայի, Ագուլիսի, Դաշտի եւ վաճառաշահ այլ կենտրոնների բնակչութեանը տեղաւորեցին Սպահանում եւ նրա արւարձաններում: Շուտով կառուցւեց նաեւ զուտ հայաբնակ Նոր Ջուղա թաղամասը: Շատ չանցած, նորջուղայեցի հայ վաճառականներն ընդարձակեցին առեւտրի իրենց ոլորտները եւ իրենց ձեռքը կենտրոնացրին Իրանից Եւրոպա արտահանւող մետաքսի առեւտուրը: Նրանք մտան նաեւ Հնդկաստան, այնուհետեւ Ինդոնեզիա, Տիբեթ, Չինաստան եւ Հեռաւոր Արեւելքի այլ երկրներ: Մինչեւ եւրոպական կապիտալի ներթափանցումն այդ աշխարհամասերը, աւելի որոշակի՝ մինչեւ ԺԷ դարի վերջերը, հայերն առաջաւոր գծի վրայ էին գտնւում համեմունքի, օծանելիքի, թանկագին քարերի, հում մետաքսի, ինդիգոյի եւ արեւելեան այլ ապրանքների՝ դէպի Եւրոպա արտածման եւ եւրոպական ապրանքների ներմուծման գործում:

Նոր Ջուղայում, Ագուլիսում եւ այլ վայրերում ստեղծւած առեւտ-

---

* "Armeniaca" Mélanges d'études arméniennes. Վենետիկ – Ս. Ղազար, 1969, էջ 244-252:

րական ձեռնարկների, ուղեցոյցների եւ այլ բնոյթի սկզբնաղբիւրների մէջ ամբարուած նիւթերը հնարաւորութիւն են ընձեռում որոշելու հայ առեւտրական կապիտալի գործունէութեան ոլորտները՝ Հոլանդիայից մինչեւ Չինաստան, Ռուսաստանից մինչեւ Աֆրիկայի կենտրոնական մասերը: Չնայած այդ հանգամանքին, համաշխարհային առեւտրի պատմութեան ուսումնասիրութեանը մեծ նպաստ բերող հայկական այդ սկզբնաղբիւրները ոչ միայն բաւարար չափով չեն ուսումնասիրուել, այլեւ իրենց մեծագոյն մասով նոյնիսկ չեն հրապարակուել[1]:

[1] Հրապարակված նիւթերից առաւել ուշագրաւներն սրանք են.
«Անուանք քաղաքացն Հնդկացն եւ Պարսիցն» (բնագիրը՝ ռուսերէն թարգմանութեամբ): («Բանբեր Մատենադարանի» թ. 4, 1958, էջ 317-328):
«Մարտիրոս Երզնկացու (ԺԵ դ.) ճանապարհորդական նօթերը», հրտ. Վ. Յակոբեան («Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի «Տեղեկագիր», 1957, թ. 6, էջ 97-110):
"Relation d'un voyage fail en Europe et dans l'Océan Atlantique à la fin du quinzième siècle ... par Martyr évêque d'Arzendjan, dans la Grande Arménie, écrite par lui-même en arménien, et traduite en français, par M. Saint-Martin ("Journal Asiatique", Paris, 1826 (décembre, pp. 321-371).
«Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապեշիստան ժէ դարուն», գրեց Արշակ Ալպօյաճեան, Կահիրէ, 1946:
«Путешествие архиепископа Хованэса в Абиссинию» («Христианский Восток», т. III, 1915, вып. I. стр. 6-16).
«Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցւոյ ուղեգրութիւնը». («Բազմավէպ», 1897, թիւ 10): Ճանապարհորդել է 1682-1704 թթ., եղել է Հաբեշստանում, Նուբիայում, Սուդանում, Չադ հանրապետութեան ներկայիս տերիտորիայում, ապա Սահարայի վրայով անցել է Աֆրիկայի հիւսիսային շրջանները, հասել մինչեւ Ջիբրալտար: Г. Халатьянц, «Армянский памятник XVII века с данными о географии Абиссинии и Северной Африки вообще (Itinirarium Аветика Багдасариана, чтеца из Тигранакерта)» , Москва (отдельный оттиск).
«Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն եւ յիշատակարանք», ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, 1936:
Симеон Лехаци, «Путевые заметки, перевод с армянского М. О. Дарбинян (Памятники письменности и востока, IX)» , Москва, 1965.
«Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն (1647-1681 թթ.)», Երեւան, 1938:
Дневник Закария Акулисского, Ереван, 1938.

Ոչինչ չի արուած մանաւորապէս առեւտրական ձեռնարկների, վաճառականների կողմից ստեղծուած հաշւետումարների (հաշւապահական մատեանների) ուսումնասիրութեան ուղղութեամբ: Մինչդեռ հենց այդ բնոյթի սկզբնաղբիւրներում են ամբարուած առաւել ուշագրաւ եւ ստոյգ նիւթերը հայ վաճառականների տարբեր երկրներում գնած եւ վաճառած ապրանքների եւ նրանց գների, արտահանուող ու ներմուծուող ապրանքներից գանձւող մաքսերի, առեւտրական ճանապարհների, հաղորդակցութեան միջոցների եւ յարակից հարցերի մասին:

Առ այսօր հնարաւոր չէ նոյնիսկ քիչ թէ շատ ամբողջական մատենագիտական մի ցանկ ներկայացնել աշխարհիս տարբեր գրադարաններում եւ դիւաններում պահուող այդ բնոյթի ձեռագրական նիւթերի, որոնց քանակը, ամենահամեստ հաշւումներով, պակաս չպէտք է լինի երեք տասնեակից[2]: Դրանց շարքում, նիւթի ընդգրկումով եւ ուշագրաւ բովանդակութեամբ ուրոյն տեղ է գրաւում Սպահանցի հայ վաճառական Տէր Դաւթի որդի Յովհաննէսի Հաշւետումարը, որ պահւում է Լիսաբոնի ազգային գրադարանի բաժնում F. G. 7970 համարի տակ (բաղկացած է 54x18 սմ մեծութեան 44 թերթերից):

Այդ ձեռագիր Հաշւետումարի մանրաժապաւէնը մեծ շնորհակալու-

[2] Առեւտրական հաշւետումարների արժէքաւոր մի հաւաքածու (շուրջ 25 մատեան) պահւում է Զմմառի հայ կաթողիկէ վանքի մատենադարանում: Այդ հաշւետումարները մասամբ կազմւել են ԺԸ դարի վերջին տասնամեակներին՝ Բաղդադում: Երեւանի Մաշտոցի անւան Մատենադարանում պահւում են 2 մատեաններ սպահանցի հայ վաճառականների Ռուսաստանի հետ կատարած առեւտրի մասին: [Դրանցից երկուսի գիտական հրատարակությունը տե՛ս «Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը», աշխատասիրությամբ Շ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1994: «Լազարեան առեւտրական ընկերութեան Հաշուեմատեանը (1741–1759 թթ.)», աշխատասիրութեամբ Շ. Լ. Խաչիկեանի, Երեւան, 2006] - **Խմբ.**: Ըստ որում դրանցից մէկը վերաբերում է յետագայում Ռուսաստանում հաստատուած Լազարեան ազնւական ընտանիքի նախահայր ջուղայեցի հայ մեծահարուստ վաճառական Աղազարի ու նրա եղբայրների առեւտրական ընկերութեան գործունէութեանը: Մատեանի գրանցումները կատարւած են 1741-1760 թւականներին, Սպահանում, Ռեշտում, Աստրախանում, Մոսկւայում եւ Պետերբուրգում: Այդպիսի նիւթեր, անշուշտ, կան նաեւ Սպահանում, ինչպէս անհատ մարդկանց մօտ, այնպէս էլ Ամենափրկիչ վանքի մատենադարանում:

թեամբ առացել ենք Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան պատասխանատու աշխատակից Ռոբեր Կիւլպենկեանից, որին յայտնում ենք մեր սրտաբուխ շնորհակալութիւնը*:

Հաշուետումարի առաջին գրանցումը կատարուած է 1682 թուականի դեկտեմբերի 19-ին: Այդ օրը Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արուարձան Նոր-Ջուղայում կնքւում է մի համաձայնագիր Տէր Դաւթի որդի Յովհաննէսի եւ մեծահարուստ վաճառական Գերաքի որդիներ՝ խոջա Զաքարի եւ Էմպրումի միջեւ: Յովհաննէսը, որպէս վերոյիշեալների գործակատար, պարտաւորւում է Սպահանից Հնդկաստան տանել վաճառելու 217 թումանի արժողութեամբ 726 գազ (շուրջ 738 մետր) անգլիական մահուդ՝ շահի մէկ քառորդը ստանալու պայմանով: 1682 թուականի վերջին օրերին նա դուրս է գալիս Սպահանից, իջնում Բենդեր-Աբբաս, եւ ծովով մեկնում Հնդկաստան (Սուրաթ):

Վաճառելով բերած մահուդը մասամբ Սուրաթում, մասամբ այլ քաղաքներում, մեր վաճառականը ժամանակաւորապէս հաստատւում է Հնդկաստանում եւ ծաւալում առեւտրական աշխոյժ գործունէութիւն: Լինում եւ Ագրայում, Խուրջայում (այստեղ գնում է 2 տոննայից աւելի ինդիգոյ), Խայրաբադ եւ Լահուփուռ քաղաքներում (այստեղ գնում է մեծ քանակութեամբ թանկարժէք գործուածքներ) եւ այլ վայրերում:

1686 թուականի փետրուարի 10-ին նա ընկերանում է Պօղոսի որդի Յովհաննէսի հետ (որի անունից հանդէս է գալիս Ագրայում հաստատուած հայ վաճառական Շիրազցի Աւետիքը), եւ ձեռնարկում է իր առեւտրական ճամբորդութիւններից ամենատեւականը՝ դէպի Տիբեթ (ինքն ամէնուրեք գրում է Բութան):

Ըստ համաձայնագրի, կողմերից իւրաքանչիւրը առեւտրական այդ ձեռնարկութեանը մասնակցում է 4685-ական ռուփի գումարով: Ստացուած 9370 ռուփի դրամագլխով մեր վաճառականը Ագրայում (փոքր չափով նաեւ Փաթնա եւ Քաթմանդու քաղաքներում) գնում է հետեւեալ ապրանքները՝

* Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի աշխատասիրությամբ «Հաշվետումարը» լույս տեսավ 1984թ. առանձին գրքով: - Խմբ.:

սաթ (236 կգ)[3], մարջան (13,3կգ), մարգրիտ (273 շար), սադաֆի համրիչներ (96 հատ), զանազան թանկարժէք գործուածքներ եւ այլն:

Ագրայից Տիբեթ է ուղեւորւում Շիքոհաբադ, Մաքւանփուռ, Բենարէս, Փաթնա, Հաջիփուռ ճանապարհով: 1686 թուականի ապրիլի 11-ին հասնում է Քաթմանդու: Այստեղ մնում է 3 ամիս, կատարում է լրացուցիչ գնումներ, լինում է նաեւ Բհադգաոնում եւ Փաթանում: Ուղեւորւում է Տիբեթ Քութիի լեռնանցքով, որը Քաշմիրից դէպի Տիբեթ մուտքն արգելելուց յետոյ ամենաբանուկն էր Հնդկաստանից դէպի Տիբեթ տանող լեռնանցքներից: Յովհաննէսը 10 օր ստիպուած է լինում սպասել սահմանամերձ Քութիում, մինչեւ բացակայող դեւի (իշխանի) վերադարձը, որը կնքում է ապրանքների բեռները եւ իրաւունք տալիս անցնելու Նեպալից Տիբեթ: Երկուսուկէս ամիս տեւող ճանապարհորդութեամբ, նոյն 1686 թուականի սեպտեմբերի 30-ին, Յովհաննէսը մտնում է Լհասա:

Տիբեթն Արեւելքի այն անկիւններից է, որ երկար դարեր (մինչեւ 1904թ.) փակ է եղել արտաքին աշխարհի համար, ուստի այդ երկրի, մանաւանդ նրա միջնադարեան շրջանի տնտեսական կեանքի պատմութեան մասին շատ քիչ նիւթեր են պահպանել:

Յովհաննէս Ջուղայեցին Տիբեթ այցելած սակաւաթիւ անձնաւորութիւններից է, որ գրաւոր փաստաթուղթ է թողել այդ երկրի մասին: Առաջինը համարւում է Ֆրանկիսկեան միաբան Օդորիկոյ Պորդենոնցին, որ 1325-1326 թուականներին եղել է Լհասայում եւ թռուցիկ մի քանի տեղեկներ գրանցել յատկապէս տիբեթցիների հաւատալիքների ու կենցաղի մասին[4]:

ԺԷ դարի սկզբներին հիշատակւում են Տիբեթ այցելած երկու պորտուգալացիներ՝ Դիեգոյ դի Ալմեյդա (1603թ.) եւ ճիզվիտ Անտոնիոյ դէ Անդրադէ, սա 1625-ին Տիբեթում ստեղծել է կարճատեւ կեանք ունեցող միսիոներական մի կենտրոն եւ կառուցել մի եկեղեցի: Սրանց հաղորդած տեղեկութիւնները շատ աղքատիկ են:

[3] Սաթը մերձբալթիկական երկրներից (յատկապես Դանցիգից) Իրան ու Հնդկաստան էին ներմուծում հայ վաճառականները: Այդ մասին պահպանվել են արխիվային փաստաթղթեր:

[4] "Les voyages en Asie au XIVe siècle du bienheureux frère Odoric de Pordenone, religieux de St. François", éd. H. Cordier, Paris, 1891, pp. 449-454.

Շատ աւելի նշանաւոր եղաւ աւստրիացի Յոհան Գրիւբերը, որ 1661 թւականին բելգիացի Ալբերտ դ'Օրվիլի հետ միասին Պեկինից (Սինինի եւ Նագ-չուի վրայով) անցաւ Լհասա, մնաց այնտեղ 2 ամիս, այնուհետեւ Նեպալով անցաւ Հնդկաստան ու հասաւ Ագրա: Գրիւբերը եւ նրա հետ ուղեկցած անձինք իրենց մի քանի նամակներում ուշագրաւ տեղեկութիւններ են հաղորդել Տիբեթի աշխարհագրութեան, վարչական կարգի, Լհասա մայրաքաղաքի, տիբեթցիների կենցաղի եւ հաւատալիքների մասին[5]*:*

Յովհաննէս Ջուղայեցու եւրոպացի նախորդները շատ կարճատեւ եղան Տիբեթում, իսկ մեր վաճառականն ապրեց Լհասայում գրեթէ 5 տարի (1686-1692 թթ.), գործ ունեցաւ տասնեակ պետական պաշտօնեաների եւ այլ անձանց հետ, սովորեց տիբեթերէն, ծանօթացաւ ժողովրդի կենցաղի հետ, վաճառեց ու գնեց բազմաթիւ ապրանքներ, վճարեց հարկեր եւ տուրքեր, դատեց ու դատւեց, այդ ամէնի մասին իր Հաշւետումարում գրանցելով արժանահաւատ եւ ստոյգ տւեալներ: Այս առումով Յովհաննէս Ջուղայեցին չունի իր նախորդը, ինչպէս եւ իրեն ժամանակամերձ յաջորդը:

1686 թւականի սեպտեմբերի 30-ին Յովհաննէսը, երկու հայ ծառաների ընկերակցութեամբ, հասաւ Լհասա: Ինչպէս ինքն է ասում, այդ պահին նա «ոչ տեղին լեզուն, ոչ խամպարն, ոչ տեղին քաշն խաբար չի»: Բայց նա մեծ դժուարութիւններ չի կրում իրեն համար անծանօթ ու նոր այդ միջավայրում. Լհասայում գտնւող մի շարք հայ վաճառականներ, մանաւանդ Սպահանում նստող Յովհաննէսի պարոնների գործակատարներ՝ Ղուկասի որդի Ծատուրը, Պետրոսի որդի Մելիքջանը, Մելիքջանենց Մաթոսը, Մարտիրոսի որդի Նիկողոսը մեծապէս օգնում են նրան[6]*:*

Լհասա հասնելուց 3 օր յետոյ պետական պաշտօնեաները բացում են Յովհաննէսի բերած ապրանքների հակերը, գնահատում, եւ մաքսի դիմաց գանձում են 182 լանկ (6,8 կգ) արծաթի արժողութեամբ թանկագին քարեր:

Յովհաննէսն սկսում է վաճառել իր բերած ապրանքները նախ իր հայրենակից վաճառականներին, որոնք թանկագին քարերի (յատկապէս

[5] M. Thevenot, "Relations de divers voyages curieux", Paris, 1666, Chine illustrée, Amsterdam, 1667, p. 222-224..

[6] Այլեւայլ առիթներով Հաշւետումարում յիշատակւում են 1686-1692 թւականներին Լհասայում գտնւող, կամ եկած-գնացած, 14 հայ վաճառականների անուններ:

սաթի) մեծաքանակ գնումներ են կատարում Չինաստանի Սինին քաղաքում վերավաճառելու համար: Հայ վաճառականների միջեւ առեւտուրն ըստ մեծ մասի այստեղ կատարւում է ապառիկով. Սինին մեկնողները պարտաւորւում են մէկ տարի յետոյ այնտեղից ուղարկել կամ վերադառնալով անձամբ վճարել գնած ապրանքների արժէքը՝ ձոյլ ոսկով:

Գնորդների մեծագոյն մասը, անշուշտ, Տիբեթի հոգեւոր ու աշխարհական վերնախաւի ներկայացուցիչներ են, բազմիցս յիշատակւում են տարբեր լամաներ, Նիւար կոչւող տոհմին պատկանող անձինք, ինչպէս եւ մի երկու տասնեակ այլ տեղացիներ (արծաթագործ, դարբին, դերձակ, վարսավիր) ու քաշմիրցի վաճառականներ:

Առեւտուրը Տիբեթում կատարւում է գերազանցապէս ապրանքափոխանակութեամբ. իր վաճառած ապրանքի դիմաց Յովհաննէսն ստանում է հիմնականում մուշկ, թէյ եւ այլ տեղական ապրանքներ: Տիբեթի տնտեսական զարգացման ցածր մակարդակի ցուցանիշ է նաեւ դրամի բացակայութիւնը այդ երկրում եւ առեւտրի մէջ արծաթի ու ոսկու ձոյլերի օգտագործումը: Հաշւետումարի եւ հայկական այլ սկզբնաղբիւրների մէջ առկայ բազմաթիւ իրար լրացնող ու խաչաձեւող վկայութիւնների համադրութեամբ՝ հնարաւոր է լինում անսխալ որոշել Տիբեթում գործածւող արծաթի ու ոսկու կշռաչափերի մետրական համարժէքները[7]*:*

Քանի որ առուծախը հիմնականում կատարւում էր ձոյլ արծաթով ու ոսկով, մեծ նշանակութիւն էր ստանում կշռաչափերի ստուգումը եւ մետաղի յարգը որոշելը: Պետական պաշտօնեաները յաճախ կեղծում էին կշռաչափերը եւ ցածր յարգի արծաթ մտցնում շրջանառութեան մէջ: Մեր վաճառականը յայտնում է, օրինակ, որ Լհասայի առեւտրական գործերի պաշտօնատան մէջ «Բ (2) քաշ կայ, չինք առման՝ մեծն այ, եւ տալման՝ պզտիկն այ»:

Յովհաննէս Ջուղայեցին Լհասայում եղած 5 տարիների ընթացքում գնում է գրեթէ կէս տոննա մուշկ, որ միջազգային առեւտրի ամենայարգի ու շահութաբեր ապրանքներից էր: Գնած ապրանքներից յիշատակելի են նաեւ

[7] Արծաթի առուծախը կատարւում է **լանկ** (37,79 գ), **զաքուրի մսխալ** (3,78 գ) եւ **ֆուն** (0,37 գ) կշռաչափերով, իսկ ոսկու առուծախը՝ **սուկամ** (5,0 գր), **սեւս** (0,25 գ), **բոլա** (12,15 գ), **զուրմու** (6, 07 գ), **մասա** (1,01 գ), **ռաքի** (0, 16 գ) կշռաչափերով:

թէյը, չինական յախճապակուց եւ դեղձնապղնձից պատրաստուած գեղարուեստական ամաններ, դրօշակների ծայրը զարդարելու համար օգտագործուող ինչ-որ կենդանու պոչ, նաեւ ձոյլ ոսկի (Տիբեթից դուրս է բերել 5,13 կգ ձոյլ ոսկի)[8]*:*

Բացի հիմնական այս ապրանքներից, հաշւետումարի մէջ կան հարիւրաւոր գրանցումներ տարբեր տեսակի գործւածքների, սննդամթերքի եւ այլ ապրանքների առուծախի մասին: Լհասայում, օրինակ, Յովհաննէսը եւ այլ հայ վաճառականներ ձիեր են գնել, վճարելով մեկին՝ 204, միւսին՝ 258 եւ երրորդին՝ 374 գ արծաթ. գնել է ոչխարներ, մէկին վճարելով 14,2 գ արծաթ. մէկ շուն է գնել (իր շղթայով) վճարելով 45,3 արծաթ եւ այլն: Հետաքրքրական է հաշւետումարի այն գրանցումը, որ վերաբերում է Լհասայում անցկացրած 57 ամիսների ընթացքում իր սննդի վրայ ծախսած գումարին, որ կազմել է ընդամէնը 171 լանկ 5,5 մախալ, այսինքն 6, 482 կգ արծաթ: Ըստ այդմ, մէկ օրում ծախսել է 3,79 գ արծաթ, այն դէպքում, երբ Հնդկաստանում օրական ծախսում էր կրկնակի չափով:

Լհասայից Յովհաննէսը դուրս է գալիս 1692 թւականի յունիսի 21-ին, իր բեռները բարձելով 12 հակերի վրայ: Քութի է հասնում յուլիսի 30-ին: Ապրանքը Քաթմանդու տեղափոխելու համար վարձում է 18 բեռնակիր ու 4 պատգարակակիր: Մեր վաճառականը բնաւ չի ցանկացել իր հաշւետումարը ուղեգրական նոթերի մատեան դարձնել, սակայն ճանապարհի այդ հատուածն անցնելիս այնպիսի տանջանքներ է կրել, որ արձանագրել է սրտաբուխ տողեր. «Ողջ ճանապխէքն ջուրն տարել այ, դժոխկին ճանապախն այ, որ մաղէ կարմունճըն պիտի յանց կայ»:

Քաթմանդու քաղաքում, պատերազմական դրութեան պատճառով,

[8] Երբ Յովհաննէսը արծաթ է տալիս Չինաստանի Սինին քաղաք մեկնող իր հայրենակիցներին, մէկ տարի յետոյ ոսկի ստանալու պայմանով, այդ գործարքը կատարւում է ոսկու եւ արծաթի 1:76 համեմատութեամբ, իսկ երբ անմիջապէս փոխանակութիւն է կատարում Լհասայում, նայած դէպքին ու ոսկու յարգին, առեւտուրը կատարւում է ոսկու եւ արծաթի 1:7, 1, 1:8,9, 1:9,6, նոյնիսկ 1:10 համամասնութեամբ: Դարձի ճանապարհին, Նեպալում, Յովհաննէսը ոսկի է վաճառում արծաթով՝ 1:16, Հնդկաստանում՝ 1:11 համամասնութեամբ, իսկ նոյն այդ տարիներին եւրոպական շուկաներում ոսկու եւ արծաթի համամասնութիւնը պաշտօնապէս ճանաչւել է 1-ին՝ 15,22:

Յովհաննէսն ստիպւած կանգ է առել 3 ամիս: Այստեղ վաճառել է որոշ ապրանքներ ու գնել է մոմ, հիլ, թուղթ, ձկնորսական ցանց ու զանազան գործւածքներ: Նեպալից դուրս է եկել 1693 թւականի մարտի 13-ին՝ քաշմիրցի հրեայ վաճառականների ընկերակցութեամբ, վերադարձել է Հնդկաստան 5 տարի առաջ անցած ճանապարհով:

Հաշւետումարում գրանցւած են հետաքրքրական տւեալներ մեր վաճառականի Փաթնայում, Ռաջմահալում եւ Հուգլիում կատարած առեւտրի մասին: 1693 թւականի դեկտեմբերի 4-ին վարձելով մի նաւակ, նա մեկնում է Կալկաթա, որոշ ապրանքներ է վաճառում անգլիացիներին, 2 օր յետոյ վերադառնում է Հուգլի, եւ ահա այստեղ էլ աւարտւում են նրա Հաշւետումարի գրանցումները:

Հաշւետումարի մէջ վկայութիւններ չկան, թէ Տիբեթում գնւած ապրանքները (յատկապէս մուշկը) որտեղ եւ ինչ պայմաններով է վաճառել մեր վաճառականը, ուստի ինչ շահ ստացաւ Տիբեթում կատարած հնգամեայ առեւտրից:

Նեպալից Փաթնա հասնելուց անմիջապէս յետոյ պետական մաքսատան պաշտօնեաները բացում են Յովհաննէսի բեռները, գնահատում նրա բերած ապրանքները եւ գանձում սահմանւած մաքսատուրքերը:

Մուշկի դիմաց, 100-ին 3,5 % հաշւով, գանձում են 745, 26 ռուփի մաքս, ըստ այդմ 482 կգ մուշկը Փաթնայում գնահատում են 21.300 ռուփի: Մուշկից բացի Յովհաննէսը բերել էր նաեւ այլ ապրանքներ՝ 2.400 ռուփի արժողութեամբ, 5 կիլոգրամից աւելի ոսկի, որ արծաթի հետ փոխելով աւելի քան 5.000 ռուփի կը ստացւէր: Ըստ այդմ, 9.370 ռուփի դրամագլխով 1686 թւականին Տիբեթ մեկնած Յովհաննէս Ջուղայեցին 1693 թւականին վերադարձել էր 28.700 ռուփի արժողութեամբ ապրանքով: Այս տւեալները, անշուշտ, ուշագրաւ են, սակայն հնարաւորութիւն չեն տալիս որոշելու տիբեթեան հնգամեայ առեւտրից Յովհաննէս Ջուղայեցու ստացած շահի չափը, քանի որ մուշկը, թէյը եւ միւս ապրանքները ոչ թէ վաճառւելու էին Հնդկաստանում, այլ ուղարկւելու Իրան, այնուհետեւ՝ Եւրոպա: Կան հիմքեր կարծելու, որ ակնկալւող շահի մեծ մասը ստացւելու էր Տիբեթից բերած ապրանքները բուն սպառողին հասցնելուց յետոյ:

Շատ աւելի որոշակի տւեալներ կան Հաշւետումարում Հնդկաստանից ու Նեպալից Տիբեթ ներմուծւած մի շարք ապրանքների վաճառքից ստացւած

շահի մասին, որը տատանւում էր 100-130%-ի միջեւ:

Տիբեթի պետական ու հասարակական կեանքի շատ կողմեր են լուսաբանւում Հաշւետումարի գրանցումներով: Զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում Լհասայի դատարանի մասին առկայ տւեալները: Մի քանի անգամ Յովհաննէսի եւ այլ վաճառականների միջեւ վէճեր են ծագում միմեանց նկատմամբ ունեցած դրամական պարտաւորութիւնների շուրջ: Յովհաննէսի եւ Ծատուրի միջեւ ծագած վէճերը հարթելու համար դիմում են Լհասայի աշխարհական իշխանութեանը եւ դեւա-ժունի (իմա՛ Deva Jong) կարգադրութեամբ ճշմարտութիւնը պարզելու համար, մեր վաճառականները պարտաւորւում են դատարանում՝ զառ նետել: Յաջողակ զառ նետողը ճանաչւելու էր որպէս արդար կողմ: Բախտը ժպտում է Յովհաննէսի հետ վէճի բռնւած Ծատուրին: Այդ մասին Յովհաննէսը գրում է. «Էս բեխարը (այսինքն Ծատուրը), հոգին ծախեց սատանի, բոլթիայ եղաւ, բոլթն (իմա՛ կուռքը) գրեց ծուցումն, արեկ, ջաղւով պե-լամուին (ինչ-որ լամայի կախարդանքո՞վ) չիմդայ արար, տեղն զառ գըձեց, Բ (2) զառն էլ տարաւ»: Ըստ այդմ Յովհաննէսը ոչ միայն ճանաչւում է պարտւած կողմ, այլեւ ստիպւած է լինում վճարել դատական տուգանքները:

Յովհաննէս Ջուղայեցու Հաշւետումարը մեծարժէք սկզբնաղբիւր է Իրան, Հնդկաստան, Նեպալ եւ Տիբեթ ներմուծւող ու արտածւող ապրանքներից գանձւող մաքսերի չափերը պարզելու, ապրանքի ու դրամի մի վայրից մէկ ուրիշը փոխադրելու եղանակները, դրամական փոխանակութիւնների ու վարկերի պայմանները որոշելու եւ յարակից այլ հարցեր լուսաբանելու առումով:

Համառօտ այս հաղորդման մէջ հնարաւոր չէ անդրադառնալ հետաքրքրական բոլոր այդ հարցերին, բայց երկու խօսք ասել անհրաժեշտ է:

Իրանից Հնդկաստան Յովհաննէսն արտահանում էր 738 մետր անգլիական մահուդ, որը Բենդեր-Աբբաս նաւահանգստի մաքսատան պաշտօնեաները գնահատեցին 148 թուման 500 դինով. ըստ այդմ էլ գանձեցին հետեւեալ մաքսատուրքերը. ուշուր (տասանորդ) 10,775% չափով, խուրուճ (երկրից արտածելու իրաւունքի համար գանձւող հարկ) 3,6% չափով, ինչպէս նաեւ ռսում, դավգ, դառուղակի, ճվխանգի եւ այլ անուններով տուրքեր. ընդամէնը գանձեց 24 թուման 240 դիան մաքս, այսինքն ապրանքի արժէքի 16%-ը:

Տիբեթ մեկնելու նախօրեակին Ագրայում Յովհաննէսը գնեց 232 կգ սաթ 1760 ռուփի արժողութեամբ: Այդ ապրանքը երկրից արտահանելու իրաւունք ստանալու համար գոհարեղէնի մաքսատանը վճարեց 333 ռուփի զաքաթ 4,8%-ի հաշւով:

Քաթմանդուի ռաջայի կողմից գանձւած մաքսի գումարը կազմում է 167,3 ռուփի, որից 100 ռուփին են արծաթ դրամով, 25 ռուփու դիմաց վերցրել են մի անգլիական հեռադիտակ, ինչպէս եւ այլ ապրանքներ՝ մնացած գումարի դիմաց: Յովհաննէսը Նեպալի վրայով Տիբեթ էր տանում 9370 ռուփի արժողութեամբ ապրանք, ուստի գանձւած մաքսատուրքը 1,8% է կազմում: Լհասայի մաքսատանը Յովհաննէսից գանձեցին 182 լանկ (6,8 կգ) արծաթի արժողութեամբ թանկային քարեր. ըստ այդմ գանձւած մաքսը ապրանքի արժէքի 6%-ից փոքր ինչ աւելի է:

Տիբեթից Հնդկաստան ներմուծւած մուշկի դիմաց, ինչպէս արդէն ասացինք, Փաթնայի մաքսատանը գանձեցին 3,5%-ի չափով մաքս եւ այլ մանր-մունր տուրքեր՝ 0,5%-ի չափով:

Բացի պետական մաքսատներից, Իրանի, Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի անծայրածիր ճանապարհների վրայ կային տասնեակ ռախտարխանաներ, ուր տուրքեր էին գանձում ճանապարհը պահողների օգտին: Վաճառականները փեշքաշ անւան տակ պարտաւոր էին տուրք վճարել նաեւ այն աւատատէրերին, որոնց տիրոյթներով անցնելու էին իրենց նպատակակէտին հասնելու համար: Հաշւետումարում ուշագրաւ տւեալներ կան գրանցւած ինչպէս այդ կարգի վճարումների, այնպէս էլ Իրանում եւ Հնդկաստանում քրիստոնեաներից գանձւող գլխահարկի չափի մասին:

Հնդկաստանում տեղացի եւ հայ վաճառականները դեգերումների ժամանակ շատ քիչ դրամ էին վերցնում իրենց հետ. հիմնական դրամագլուխը միշտ շրջանառութեան մէջ էր դրւում, իսկ վայրից վայր որոշ գումար փոխադրելու անհրաժեշտութեան դէպքում օգտւում էին փոխադրական մուրհակի Հնդկաստանում կիրառւող տարբեր ձեւերից:

Դրամական փոխադրումներ կատարողները (մեծ մասամբ՝ լումայափոխներ) իրենց ներկայացուցիչներն ունէին տարբեր քաղաքներում եւ յաճախ բանկային շատ բարդ գործարքներ էին կատարում: Հաշւետումարի մէջ մի քանի տասնեակ գրանցումներ կան բանկային տարբեր տիպի գործարքների եւ պարզ մուրհակով դրամագլուխ փոխ տալու մասին

(ընդունուած էր ամիսը ստանալ շահ՝ փոխ տուած գումարի 0,75%-ի չափով)։

Թւարկածով, անշուշտ, չի սպառւում Յովհաննէս Ջուղայեցու Հաշւետումարի նշանակութիւնը։ Իրենց հայրենիքից դուրս՝ հեռաւոր երկրներում առեւտուր անող հայ վաճառականները, ընդհանուր շահի գիտակցութեամբ, համագործակցութեան ուշագրաւ օրինակներ են ցոյց տալիս Հնդկաստանի շատ քաղաքներում՝ Սուրաթում, Ագրայում, Փաթնայում, Հուկլիում, Բիհարում, Կալկաթայում եւ այլ վայրերում, ժէ դարի վերջին տասնամեակներին կային հայկական գաղթօջախներ՝ մշտական հայ բնակչութեամբ։ Հաշւետումարում կան բազմաթիւ տեղեկութիւններ հայկական այդ համայնքների տնտեսական կեանքը լուսաբանող։ Յատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում մեծաքանակ այն փաստերը, որ վերաբերում են հայ եւ հնդիկ (մասնաւորապէս քաշմիրցի) վաճառականների սերտ համագործակցութեանը։

Հաշւետումարը գիտական հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ միջնադարեան հայ առեւտրականների կիրառած հաշւապահական սկզբունքները, թւերի գործածութեան ուրոյն սիստեմը եւ յարակից այլ հարցեր ուսումնասիրելու տեսակէտից։

Յովհաննէսի Հաշւետումարի վերծանութիւնը կատարել է մեծ դժւարութիւններ յաղթահարելով. նրա ձեռագիրը դժւարընթեռնելի է, լեզուն՝ Նոր-Ջուղայի հայոց գաւառաբարբառը, լի է պարսկերէնից փոխ առնւած հարիւրաւոր բառերով։

Իրանագէտ Հ. Փափազեանի օգնութեամբ մեզ յաջողւել է գրեթէ ծայրից ծայր վերծանել Հաշւետումարը։ Յուսով ենք, որ մէկ-երկու տարի յետոյ հնարաւոր կը լինի, ներածական ուսումնասիրութեամբ, ծանօթագրութիւններով ու բառարանով, հրատարակութեան յանձնել Տիբեթի, Նեպալի եւ Հնդկաստանի պատմութեան համար մեծ հետաքրքրութիւն ներկայացնող արժէքաւոր այդ բնագիրը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐԸ*

Այս երգս քեզ եմ ձոնում, ո՛վ ճանապարհորդ,
Ո՜վ անհայտ հորիզոնների գնինչ,-
Ընթացի՛ր, գնա քո ուղին, և լինի թող այն
քարքարոտ,
Անվհատ թող լինի ոգիդ և կարոտդ թող
լինի աննինջ,-
Հազար կարավանի բեռներից ավելի
Հարուստ կլինի ոգիդ վերադառնալիս...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1682 թ. դեկտեմբերի 17-ին[1] Նոր Ջուղայում կնքվում է առևտրական մի համաձայնագիր, մի կողմից խոջա Գերաքի որդիներ Զաքարիա և Ըմպրում-աղա վաճառականների, մյուս կողմից Տեր Դավթի որդի

---

* Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվետումարը, աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Երևան, 1984։ Թեմայի շուրջ տե՛ս նաև հեղինակի հոդվածները. Lévon Khachikian, Le Régistre d'un Marchand Arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693), "Annales", 1967, N 2, pp. 231-278. Levon Khachikian, The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi, "Journal of the Asiatic Society", vol. VIII, N 3, 1966, pp. 153-186.

[1] Այստեղ և ամենուրեք ամսաթվերը տրված են ըստ նոր տոմարի։ XVII դարի եղելությունների ամսաթվերը հին տոմարով նշելու համար պետք է տրված թվից 10 օր հետ գնալ։ Դեկտեմբերի 17-ը, օրինակ, ըստ հին տոմարի կհամապատասխանի դեկտեմբերի 7-ին։

Հովհաննեսի միջև: Ըստ այդ համաձայնագրի՝ Հովհաննեսը Հնդկաստանում վաճառելու համար վերոհիշյալ եղբայրներից ստանում է շուրջ 217 թումանի արժողությամբ անգլիական մահուդ և մի քանի թուման կանխիկ դրամ: Համաձայնագիրը կնքվում է վաղնջական ժամանակներից հայ խոջայական միջավայրում ձևավորված այն սովորույթների հիման վրա, որոնք 1765 թ. որպես «հաստատ և ստուգագոյն կանոն իրաւանց» գրանցվեցին Աստրախանի հայոց «Դատաստանագրքի» մեջ և, հաստատվելով ռուսական պետական մարմինների կողմից, ստացան օրենքի ուժ, մի քանի տասնամյակների ընթացքում կիրառվելով Հարավային Ռուսաստանի հայկական գաղթօջախներում[2]:

Այդ Դատաստանագրքի «Վասն վաճառականական կարգաց» խորագրով ԺԴ գլուխն ամբողջապես նվիրված է խոջաների ու նրանց գործակատարների փոխհարաբերություններին և կողմերից յուրաքանչյուրի՝ մեկը մյուսի նկատմամբ ունեցած պարտավորություններին (խոջան կոչվում է աղա, *իսկ նրա կողմից վարձավորվող վաճառականը՝* ընկեր*): Վերոհիշյալ գլխի 11-րդ հոդվածում ասված է. «Ամենայն ընկեր պարտաւորի վասն իւրաքանչիւր առևտրոյ գրել մի ըստ միոջէ օրինաւոր գիրք հաշուի... ճշմարտութեամբ, առանց զանցառութեան ժամանակի». «Իսկ եթէ ընկեր ոմն ոչ ցուցանիցէ զգիրք հաշւոյ տեառն իւրում՝ ըմբռնեսցի ի բանտի, լոկ հացիւ և սոսկ ջրով կերակրիցի, երբեմն-երբեմն ձաղկեսցի՝ մինչև ի մի տարի»*[3]*: Ընկեր կոչվող գործակատարը աղայի առաջին իսկ պահանջով պարտավոր է եղել վերադառնալ իր գտնված վայրից և «տալ զհաշիւ ընկերութեան», հակառակ պարագայում «զոր ինչ արդիւնք բերասցի ընկերն՝ տիրեսցէ տէրն, և զոր ինչ վնաս պատահեսցէ ընկերին՝ վնասն հարկաւորի միայն ընկերն կրել և ոչ տէրն նորին»*[4]:

Ինչպես տեսնում ենք, իրավական այս կանոնները ձևակերպվել են խոջաների տնտեսական ու դասային շահերի թելադրանքով.

[2] «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967, էջ 130 և հտն. հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7383, էջ 57բ և հտն.:

[3] Նույն տեղում, էջ 132-133, հմմտ. ձեռ. N 7383, էջ 59ա:

[4] Նույն տեղում, էջ 59բ:

գործակատար-վաճառականները եղել են նրանց կամակատարները: Այդպիսի բազմաթիվ վաճառականներից մեկն է եղել նաև վերոհիշյալ համաձայնագիրը ստորագրող Տեր Դավթի որդի Հովհաննեսը, որն սկսած 1682 թ. դեկտեմբերի 17-ից մինչև 1693 թ. դեկտեմբերի 4-ը, այսինքն 11 երկար ու ձիգ տարիների ընթացքում կազմել է առևտրական իր գործունեության օրահաշիվ մատյանը՝ կոչված «Ռուզլամայ», և առանձին ապրանքների առուծախին վերաբերող բազմաթիվ զուգահեռ հաշիվներ՝ «քաթաներ»:

Արժեքավոր այս հաշվետումարն այժմ պահվում է Լիսաբոնում՝ Պորտուգալիայի ազգային մատենադարանի ձեռագրական բաժնում F. G. 7970 *համարի տակ. բաղկացած է 18 սմ լայնություն և 54 սմ երկարություն ունեցող 44 առանձին, իրար վրա դարսված թերթիկներից*[5]*, որոնցից յուրաքանչյուրի երկու երեսի վրա գրանցված են մանրատառ հաշիվներ*[6]:

Այս մատյանի գոյության մասին 1961 թ. հունիսին գրած իր մի նամակով մեզ տեղեկացրեց Պորտուգալիայի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, բանասեր Ռոբերտ Կյուլպենկյանը, որի ջանքերով էլ Մաշտոցի անվան Մատենադարանի տրամադրության տակ դրվեց Հաշվետումարի ոչ շատ հաջող մանրաժապավենը: Անհրաժեշտ եղավ պատրաստել բոլոր էջերի լուսանկարները, որից հետո սկսվեցին խիստ դժվարընթեռնելի ու խրթին այդ բնագրի վերծանության դանդաղորեն առաջ ընթացող և բազմիցս ընդմիջվող դժվարին աշխատանքները, որոնք իրենց ավարտին հասան միայն 1978 թվականին: Վերծանությանը զուգընթաց նյութեր հավաքվեցին բառարանի և ներածական այս ուսումնասիրության համար, որի նպատակն է. պարզել Հաշվետումարի ստեղծման հանգամանքները,

[5] Մեր ձեռքի տակ եղող միկրոպատճենի միջոցով խիստ դժվար է ճշգրիտ որոշել հաշվետումարի թերթերի իրական քանակը, հավանաբար բաղկացած է 44 թերթից, բայց կարող է լինել նաև 42 կամ 43:

[6] Տիբեթցիների կենցաղի լավագույն ուսումնասիրողներից Ն. Կյուները հայտնում է, որ նրանց գրերը սովորաբար մեկը մյուսի վրա դարսված առանձին թերթիկներ են, որոնցից յուրաքանչյուրը 2 ֆուտ (շուրջ 66 սմ) երկարություն և 3-4 դյույմ (7-10 սմ) լայնություն ունի (տե՛ս Н. В. Кюнер, Описание Тибета, Часть вторая, Этнографическая, вып. 1-й, Состав и быт населения, Владивосток, 1908, стр. 117). Հովհաննես Ջուղայեցին գրանցում ունի Նեպալում թուղթ գնելու մասին. ըստ երևույթին, այդ թղթերի վրա էլ նա գրանցել է իր Հաշվետումարը:

ճշգրտել Տեր Դավթի որդի Հովհաննեսի գեգերումների ուղեգիծը, համառոտ տեղեկություններ հաղորդել նրա այցելած երկրների, մասնավորապես Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի մասին, ուշադրություն հրավիրել ջուղահայ կապիտալի ներկայացուցիչների առևտրական ու դրամավարկային գործարքների վրա, անհրաժեշտ բացատրություններ տալ կիրառված չափ ու կշռի միավորների, հաշվապահական գիտելիքների, թվերի ու կոտորակների գրանցման եղանակների մասին և, վերջապես, գնահատել այս մատյանը որպես մի շարք երկրների տնտեսական կյանքի պատմության ուշագրավ սկզբնաղբյուր: Որոշ դեպքերում, փոքր-ինչ շեղվելով այս ծրագրից, փորձել ենք լուսաբանել նաև արևելյան հեռավոր երկրների հետ հայերի ունեցած պատմատնտեսական կապերին և առնչություններին աղերսվող որոշ հարցեր՝ շրջանառության մեջ դնելով նոր նյութեր:

2

Հաշվետումարն սկսվում է այսպես. «Կամաւն ամենակալին Յիսուսի Քրիստոսի և առաջնորդութեամբ հոգուն սրբոյ, ես տէր Դաւիթի որդի Յովանէսըս՝ Ըսպահան Ջուղայ, թիվն ՌՃԼԱ, և Փոքր թիվն Ազարի ԿԷ (=1682) համիրայ ամսին ԻԲ-ումն ընկերացայ, սարմաեայ լինք առի Գերաքէ որդիքս խոջայ Զաքարիցն և պարոն Ըմպրում-աղիցն, ջամն երկու խերհուր և յիսուն թուման. Աստուծով տանեմ Յրնդուստան, թուջարաթ առեմ, ինչ որ Աստուած շախ տայ, սարմաէն բաղայ, շախին երեք չրասաթն պարոնացն լինի, չօթային իմ Յովանէսիս լինի: Տէր Յիսուսն շարմ պախէ, ամէն»:

Այստեղ որպես վարկատու կողմ հանդես են գալիս Ըմպրումի որդի Գերաք Միրմանենցի որդիներ խոջա Զաքարն ու նրա եղբայր պարոն Ըմպրում-աղան: Ի՞նչ է հայտնի Ջուղայեցի այս վաճառականների մասին: Զաքար Գերաքենցի մասին մեզ հայտնի հնագույն տեղեկությունը վերաբերում է 1666 թ., երբ նա, ջուղայեցի այլ նշանավոր վաճառականների հետ միասին, հանդես է եկել որպես վկա: Սպահանի Շար՛ի գրասենյակում կազմված և Նոր Ջուղայում գտնվող անշարժ մի կալվածքի օտարմանը վերաբերող պարսկերեն մի կալվածագրի վկաների շարքում գրված է. زکریا بن خواجة گرک ارمنی جلفایی («Ջուղայեցի հայ խոջա Գերաքի որդի Զաքարիա»)[7]: Հաջորդ տեղեկությունը 1671 թվականից է. Նոր Ջուղայի ամենաազդեցիկ գերդաստանների 23 ներկայացուցիչներ՝ Աստվածատուր Միրեթենց քալանթարի գլխավորությամբ, այդ թվականին համապատասխան մի գրություն են հղել ռուսաց թագավորին, իրենց բանագնաց Գրիգոր Լուսիկենցի լիազորությունները հաստատելու կապակցությամբ: Այստեղ ևս, որպես ստորագրողներից վեցերորդը, հանդես է գալիս Զաքար Գիրաքենցը. նրանից առաջ գտնում ենք միայն քալանթարի և Շահիխասենց (Սարֆրասենց), Շախաթունենց, Շահրիմանենց ու Թոփչենց նշանավոր գերդաստանների ներկայացուցիչների ստորագրությունները[8]: Գերաքենց գերդաստանի մասին ուշագրավ տվյալներ կան 1643 թ. ընդօրինակված մի Ճաշոցի և հաջորդ՝ 1644 թ. ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարաններում: Դրանցից առաջինում գրված է. «Դարձեալ յիշեցէք պարոն խօճայ Գրիգորն, եւ եղբարքն իւր պարոն Զաքարէն, Ըմպրում-աղէն: Տէր աստուած իւրեանց կեանս յերկարեաց շնորհեսցէ, և զհանգուցեալ առ Քրիստոս Աստուած Ըուստամն, Մարգարէն»[9]: Ավետարանի հիշատակարանը, որ գրվել է վերոհիշյալ վաճառականների մոր՝ Ծաղիկի, պատվերով, շատ ավելի ընդարձակ է. այնտեղ, մասնավորապես, կարդում ենք. «Աղաչեմ յիշել առ տէր զհեզահոգի քրիստոնեա և քրիստոսապաշտ Գէրաքն (տրված է նաև նրա ծնողների՝ Ըմպրումի և Շուշանի անունները) և իւր պարոն և աշխատասէր որդիքն՝ Գրիգորն, Ըստամն, Ըմպրումն, Զաքարէն,

[7] Հիշյալ կալվածագիրը, այլ վավերագրերի հետ միասին, տարիներ առաջ Կալիֆորնիայի համալսարանի գրադարանին է վաճառել նորջուղայեցի դոկտոր Կ. Մինասյանը: Մեր ձեռքի տակ են հիշյալ վավերագրերից մի քանիսի լուսանկարները: Դրանցից մեկ ուրիշ կալվածագրի լուսանցքում հիջրեթի 1092 (1681) թ. կա հայերեն հետևյալ մակագրությունը. «Ես Գէրաքի որդի Ըմբրում-աղես վկա»: Երկու եղբայրների մակագրությունները էլ հաստատված են նրանց անընթեռնելի կնիքներով:

[8] "Армяно-русские отношения в XVII веке", Сборник документов, Ереван, 1953, стр. 91.

[9] Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա, Վիեննա, 1970, էջ 264-265:

Մարգարէն, և Գրիգորին դեռաբուսիկ որդին՝ Փիր-Ալիամն»[10]:

Այս տվյալներից պարզ է դառնում, որ XVII դարի 40-ական թվականներին խոջա Գերաքի որդիներից կենդանի էին երեքը՝ Գրիգորը, Զաքարեն և Էմպրումը: Անդրանիկը, անշուշտ, եղել է Գրիգորը: Ֆլորենցիա քաղաքի Bargello թանգարանի Մեդիչիների հավաքածուի մեջ պահվում են երկու վենեցիկ մեդալներ, որոնց շիտակ երեսին քանդակված է մի հայ վաճառականի պատկեր, առաջինի վրա՝ ամբողջ հասակով, իսկ երկրորդի՝ մինչև գոտկատեղը (սրա խոշորացված լուսանկարը տե՛ս հաջորդ էջում): Մեդալների հաջորդ երեսին պատկերված է «Գառն Աստծոյ». ձախ կողմում՝ մի առյուծ, որի մեջքից բարձրանում է արեգակը, իսկ ցածում՝ մեղվի մի փեթակ, դեպի որը շեշտակի ճեպում է մի մեղվապարս[11]: Մեդալների երկու երեսներին էլ շրջանաձև գրված է արձանագրություն, որը մեծ ճիգով հնարավոր է լինում վերծանել այսպես.

Ա. - «Գրիգոր դի Միրմանենց Գերաքի
Եւ/// Ք[րիստոս]ի անճառ առենից///
Բ. - «Տ[է]ր Յ[իսուս] գառն Ա[ստուծո]յ, որ շնորհեց մեզ
մանանայ երկրի. Թվ. ՌՃԻԲ (1673)»:

Այսպիսով, այս մեդալների վրա քանդակված է Գերաքի որդի Գրիգորի դիմապատկերը՝ ջուղայեցի հայ վաճառականի հագուստ-կապուստով[12]: Պետք է ենթադրել, որ այս Գրիգորը, Զաքարեի և Էմպրումի ավագ եղբայրը, դարի 60-ական թվականներին արդեն արտագաղթել է Նոր Ջուղայից և մշտական բնակություն հաստատել Վենետիկում: Ղ. Ալիշանի տվյալներով այդ ժամանակաշրջանում Վենետիկ քաղաքում իրոք կար Գերաք-Միրման

[10] Մաշտոցի անուան մատենադարան, ձեռ. N 6665, էջ 281բ-282բ (հմմտ. Մ. Սմբատեան, Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի, Տփխիս, 1896, էջ 240-241, որտեղ բերված է հիշատակարանից մի հատված):

[11] Հիմքեր կան ենթադրելու, որ դրոշմված պատկերը Նոր Ջուղայի հայաքաղաքի ինքնավար մարմինների խորհրդանշանն է:

[12] Arménag Sakisian, Pages d'Art Arménien, Paris, 1940, պատկեր XLIII (մեդալների անբավարար քննությունն ու սխալաշատ վերծանությունը տե՛ս նույն տեղում, էջ 115-116):

ազգանունով հայ վաճառականների մի ընտանիք[13]:

Համադրելով 1682 թ. համաձայնագրի մեջ վարկատու վաճառականի հանգամանքով հանդես եկող Զաքարիա և Էմպրում-աղա եղբայրների մասին առկա այս տվյալները, կարող ենք արձանագրել, որ նրանք հին Ջուղայից Սպահան գաղթեցված նշանավոր ընտանիքներից մեկն են եղել: Նրանց տոհմի նահապետը, որ հավանաբար Միրման անունն է ունեցել, ապրել է հին Ջուղայում XVI դարի կեսերին. սրա որդին եղել է խոջա Էմպրումը, որի անվամբ («Էմպրում» աղճատ ձևով) 1573 թվականը կրող մի խաչքար է պահպանվել հին Ջուղայի Ամենափրկիչ մատուռի մուտքի աջակողմում, կիսեղծ մի արձանագրությամբ[14]: Էմպրումի որդի Գերաքն է եղել այն անձնավորությունը, որը բռնագաղթվել է համաքաղաքացիների հետ միասին հայրենի իր քաղաքից և հաստատվել Նոր Ջուղայում: Այստեղ 1623 թ., այսինքն գաղթից ընդամենը 20 տարի անց, հիմնադրված Ս. Կատարինեի անվան կուսանաց անապատի նվիրատուների շարքում հիշված են նաև «խօջայ Գերաքն և կողակիցն Տալիթան»[15]: Գերաքենց գերդաստանը Նոր Ջուղայում բնակվում էր սուրբ Աստվածածնի եկեղեցու թաղամասում (այդ եկեղեցուն է նվիրված 1644 թ. ընդօրինակված վերոհիշյալ Ավետարանը): Անդրադառնալով այս թաղամասի պատմությանը, Նոր Ջուղայի անցյալ կյանքի լավատեղյակ հետախույզ Հ. Տեր-Հովհանյանցը ուշադրություն է դարձրել ոմն խոջա Գերաքի վրա, որի «տուրևառութեանն բազուկ ձգեալ կայր յԵւրոպայ և ի կողմ Աստրախանայ և Գիլանայ»[16]: Այս Գերաքը, սակայն, տարբեր է մեր խոջա պարոնների հայր Գերաքից, բայց, հավանաբար, նույն տոհմից է սերում, և ավագ Գերաքի եղբորորդին կամ մերձավոր այլ ազգականներից մեկն է եղել:

Խոջա Զաքարի և Էմպրումի «տուրևառութեան բազուկը» նույնպես

[13] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, կամ առնչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ-Դ և ի ԺԵ-Զ դարս, Վենետիկ, 1896, էջ 501:

[14] Տե՛ս «Արարատ», 1872, էջ 391:

[15] Կուսանաց անապատին կատարված նվիրատվությունների ընդարձակ արձանագրության բնագիրը ևս գտնվում է Կ. Մինասյանի կողմից Կալիֆորնիայի համալսարանի գրադարանին վաճառված վավերագրերի ժողովածուում:

[16] Հ. Տէր-Յովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Ի Նոր Ջուղա, 1880, էջ 139:

ձգված էր աշխարհով մեկ. նրանց դրամայլխով առևտրի ասպարեզ մտած վաճառականները Եվրոպայում ունեին Լևանտյան առևտրի կարևոր հանգրվանները՝ մինչև հեռավոր Տիբեթի Լհասա մայրաքաղաքն ու Չինաստանի Սինին վաճառաշահ կենտրոնը:

Ասացինք արդեն, որ Գերաքի որդի Գրիգորի պատկերով դրվագված մեդալների վրա քանդակված է նաև մեղվի մի փեթակ, դեպի որը շեշտակի թռիչք են կատարում բազմաթիվ մեղուներ: Ա. Սաքիսյանի կարծիքով, այդ «մի այլաբանություն է աշխատանքի և ծավալուն գործունեության»[17]: Կարծում ենք, սակայն, որ ճշմարտությանն ավելի մոտեցած կլինենք, եթե քանդակված մեղվի փեթակի տակ տեսնենք խոջա Գերաքի մեծահարուստ որդիների գանձարանը, իսկ ի դեմս մեղուների պարսի՝ նրանց տասնյակ գործակատարներին, որոնք ոսկու քսակներով այդ գանձարանը լցնելու համար թափառում էին երկրից երկիր, անցնում «մազե կամուրջներով ու դժոխքի ճամփաներով»:

Ավելի աննշան են մեր տվյալները հաշվետումարի հեղինակ Տեր Դավթի որդի Հովհաննեսի մասին: Հաշվետումարի բազմաթիվ գրանցումներից պարզ է դառնում, որ նա քաջատեղյակ է տարբեր երկրներում գործածվող չափի ու կշռի համակարգերին, դյուրությամբ տարբերակում է այլևայլ երկրներում կիրառվող դրամական միավորները, որոշում դրանց պարունակած ոսկու կամ արծաթի չափերը, անսխալ վճռում թվաբանական դժվարին խնդիրներ՝ կապված տարբեր ապրանքների վաճառքի, վարկային խճողված ու բարդ գործարքների հետ և այլն: Այս բոլորը վկայում է այն մասին, որ մեր վաճառականը սովորել է մասնագիտական ինչ-որ հաստատության մեջ, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել առևտրի ասպարեզ մտնելու համար: Հովհաննեսի գործունեության տարիներին Նոր Ջուղայում իրոք կար այդպիսի հաստատություն՝ Կոստանդ Ջուղայեցու գլխավորած առևտրական դպրոցը, որն իր գոյության ընթացքում տվել է շուրջ 250 շրջանավարտ, սովորեցնելով նրանց «թվաբանութիւն, հասարակ ընթերցողութիւն, գրագրութիւն և ըստ մեծի մասին խրատ յաղագս վաճառականութեան»[18]:

---

[17] A. Sakisian, նշվ. աշխ., էջ 115:

[18] Հ. Տեր-Հովհանեանց, նշված աշխ., հ. Բ, էջ 253: Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» ամբողջական և լավագույն օրինակը պահվում է Մաշտոցի

Երբ համեմատում ենք 1685 թ. իր աշակերտների համար Կոստանդ Ջուղայեցու կազմած «Աշխարհաժողով» կոչվող դասագիրքը Հովհաննեսի Հաշվետումարի հետ՝ փարատվում է ամեն կասկած, և մենք համոզվում ենք, որ նա իրոք Կոստանդին վարժապետի ուսումնարանի բազմաթիվ սաներից մեկն է եղել, կամ էլ դաստիարակվել է այդ դպրոցի ավանդույթներով:

Հաշվետումարի մի գրանցումից պարզվում է, որ մինչև Հնդկաստան մեկնելը Հովհաննեսը եղել է Լևանտյան առևտրի խոշոր կենտրոններ Իզմիրում և Բուրսայում. «Մեր Իզմիրն գնալէ ջահտան Ղարագօզի որդի Մուրատխանին փող ենք փոխ տվէլ. էստուր խսեցն Բուրսայ էր կորվէլ»:

Ասել ենք արդեն, որ Հաշվետումարն ավարտվում է 1693 թ. դեկտեմբեր ամսվա գործունեության մասին գրանցումներով. այդ ժամանակ Հովհաննեսը Տիբեթից Հնդկաստան վերադառնալով, գտնվում էր Կալկաթայում, ինչպես նաև մերձակա Հուգլի քաղաքում: Նրա հետագա թափառումների մասին առայժմ տվյալներ չունենք:

Հ. Տեր-Հովհանյանցը, ձեռքի տակ ունենալով Ամենափրկիչ վանքի դիվանի փաստաթղթերը, թվարկում է 1702 թ. Նոր Ջուղայի Մեյդանի թաղում բնակվող 75 վաճառականների անուններ, որոնցից հինգը՝ խոջա, չորսը աղա տիտղոսներով, իսկ մյուսները՝ առանց որևէ մակդիրի: Այս վերջինների շարքում 19 և 20-րդ համարների տակ, հիշատակված են «Յովհաննէս և Ալամ Տէր Դաւթեան» եղբայրները: Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում ազգանունների ճնշող մեծամասնությունը կազմվում էր տվյալ անձնավորության հոր անունից՝ «եան» վերջավորությամբ. ըստ այդմ, այստեղ հիշատակված են Հաշվետումարի հեղինակ Տեր Դավթի որդի Հովհաննեսը՝ իր Ալամ եղբոր հետ միասին: Հովհաննեսն, ըստ երևույթին, ունեցել է մի այլ եղբայր ևս, որն ընթանալով հոր հետքերով, դարձել է քահանա: Բրիտանական թանգարանում պահվող և ջուղահայ վաճառականների առևտրավաշխառուական գործունեությանը վերաբերող մի փաստաթղթի մեջ հիշատակված է Տեր Դավթի որդի Տեր Կարապետը, որը 1746 թ. Սպահանում 1200 ռուփի պարտք է վերցրել Ղևոնդի որդի պարոն Մուրադ-

---

անվան Մատենադարանում և գրանցված է 10704 համարի տակ. ամբողջական և ուշագրավ ձեռագիր է նաև N 5995-ը:

խանից[19]:

Պորտուգալիայի ազգային մատենադարանում տվյալներ չկան, թե ինչ ճանապարհով է Հաշվետումարն ընկել այնտեղ: Գուցե հետագայում Հովհաննեսն առևտուր է արել Հնդկաստանում հաստատված պորտուգալացիների հետ, կամ էլ անձամբ ուղևորվել հարավարևմտյան Եվրոպայի այդ ծայրաշխարհն ու փակել իր աչքերը հայրենի երկրից հեռու, օտար երկնակամարների տակ, այնտեղ թողնելով նաև իր տնտեսական գործարքներին վերաբերող թղթերի կապոցները. որոշակի ոչինչ չգիտենք այդ մասին[20]:

3

1682 թ. դեկտեմբերի 17-ին Տեր Դավթի որդի Հովհաննեսը դուրս է եկել Սպահանի արվարձան Նոր Ջուղայից և ուղևորվել Բանդար-Աբաս՝ ծովով Հնդկաստան մեկնելու նպատակով: Հետևենք նրա երթուղուն, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով նրա կատարած տնտեսական գործարքների մասին:

Գիտենք արդեն, որ Հովհաննեսը Հնդկաստան էր մեկնում իր հետ տանելով խոջա Գերաքի որդիներից ստացած շուրջ 738 մետր կարմիր ու կանաչ անգլիական մահուդ. «ԻԸ (28) ճոթ նեղայքնար լոնտրինայ՝ ալ և կանանչ, ջամէն ՉԻԶ (726) գազ և Զ (6) գրէ», 217 թուման 9150 դիան

[19] British Museum, O. P. B. Lansdowne 1047, p. 40.

[20] Պր. Ռ. Կյուլպենկյանը, Հաշվետումարի ձեռագրի Լիսաբոնի գրադարան մուծվելու հանգամանքների մասին մեր հարցումին, 1964 ապրիլի 10 թվակիր իր նամակով, հետևյալ պատասխանն է տվել. «Լիզպոնի Փորթուգալյան ազգային մատենադարանի ձեռագրաց բաժնին մէջ այս ձեռագիրը կը կրէ F. G. 7970 թիվը: Զետեղված է մի քանի արևելյան լեզուներով շարադրված փոքրածիվ ձեռագիրներու հետ միասին. սակայն հնարավորություն չկա ստուգելու, թե ձեռագիրներու այս փոքր հավաքածուն միաժամանա՞կ ստացված է, թե յուրաքանչյուրը առանձին բերված է տարբեր ժամանակ: Ձեռագիրներեն ոմանք կը կրեն կնքամով կնիք, որուն կը հաջորդէ ստորագրությունը Գամբոսելիս դուքսին: Փարիզ, հոկտեմբեր, 1881, ինչպես նաև արձանագրություն մը, թե Մատենադարանին նվիրված են այդ անձին կողմանե. սակայն ուրիշներ այդպիսի հիշատակություն չեն կրեր, և այս է պարագան F. G. 7970 հայերեն ձեռագրին»:

արժողությամբ:

Բացի մահուդից, Հովհաննեսին տրվում է մի մուրհակ, որով նա Շիրազում մահդասի Պետրոսի որդի պարոն Ավետիքից, ստանալու էր 29 թուման դրամ: Մեկ թուման էլ տրվում է մահուդի հակերը փաթաթելու նպատակով անհրաժեշտ կտորեղեն (յափնջի ու վարփուշ) գնելու համար: Առձեռն նա ստանում է ընդամենը 2 թուման 8500 դիան: Այսպիսով, ամբողջանում է Հովհաննեսին ապրանքով ու դրամով տրված 250 թուման դրամագլուխը:

Ծովափ հասնելու համար Հովհաննեսն ընտրում է Սպահան-Մահեար-Եզդըխաս-Շիրազ-Լառ-Բանդար-Աբաս ուղեգիծը: 1683 թ. փետրվարի 4-ին նա արդեն Բանդար-Աբասումն է, և մի քանի օրից «Նավ-ի Սլէմանի» նավով ուղևորվում է Հնդկաստան: «Թիվն ՌՃԼԲ և փոքր թիվն Ազարի ԿԷ, նիրհան ամսին ԻԴ-ումն. (1683 թ. մարտի 19), օրն ուրբաթ Նավ-ի Սլէմանին Բանդարի Սուրաթին լանկարգահումն լանկար գըձեց. նիրհան ԻԶ-ումն (մարտի 21), օրն կիրակի դուս եկինք Բանդարի Սուրաթն. տէր աստուած բարին առաջնորդեսցէ, ամէն»,- գրում է Հովհաննեսը Սուրաթ հասնելու կապակցությամբ:

Գրեթե ողջ XVII դարի ընթացքում, մասամբ նաև XVIII դարում, Սուրաթը բացառիկ դեր էր կատարում Հնդկաստանի արտաքին առևտրում՝ հանդիսանալով դեպի եվրոպական երկրներ և Իրան ու Թուրքիա ձգվող ծովային ճանապարհների խոշորագույն հանգուցակետ. Սուրաթն էր անգլիական ու հոլանդական առևտրի և ապրանքափոխանակության կենտրոնը. այստեղից էին ներմուծվում Մեծ Մողոլի կայսրության տարբեր երկրամասերի համար բերվող եվրոպական ապրանքները, ինչպես և այստեղից էր Եվրոպա արտածվում հնդկական քաղաքների արտադրանքը՝ մետաքսյա գործվածքներ, լեղակ, բուրավետ նյութեր, համեմունքներ, շաքար և այլն[21]:

Մարտի 28-ին Սուրաթի նավահանգստի պահեստից դուրս է բերվում Հովհաննեսի բերած ապրանքը, բայց ոչ մեր վաճառականի («չուն որ ես լեզու չի գիտէլ»), այլ նրա աղաների մի այլ գործակատարի՝ Նազարեթի անունով:

[21] «История Индии в средние века", М., 1968, стр. 454; А. Б. Каплан, Путешествие в историю (Французы в Индии), М., 1973, стр. 160.

Հաշվետումարի գրանցումներում ուշագրավ տվյալներ կան Սուրաթի հայկական գաղութի մասին: Այստեղ Հովհաննեսը զատիկ է անում, նվերներ տալիս Հայոց եկեղեցուն, և տարբեր առիթներով հանդիպում ու գործ է ունենում բազմաթիվ հայրենակիցների հետ, որոնց անունները թվարկում ենք այստեղ. Նազարեթ, Սիմեոն, խաչիկի որդի ու Մուսեսի եղբայր Հովան, Թոփչենց Պողոսի որդի Մարկոս, Ղարագոզի որդի Մուրատխան, ագուլեցի Ոսկան, վանեցի Առոմի որդի Թումաջան, շամբեցի Գասպար, Էլդրումի որդի Մարտիրոս, խանումաղենց Հովանեսի որդի Մկրտում, Մուշեղենց Փանոսի որդի Գալուց, Մանվել[22]: Բացի վերոհիշյալ հայերից, Հովհաննեսը գործ է ունեցել տեղացի դալալներ Թրիքամի, Մադանի և այլոց հետ:

Սուրաթի հայկական գաղթօջախի մասին կան ձեռագրական ու արխիվային բազմաթիվ տվյալներ: Հաշվետումարի մեջ առկա գրառումները լրացնում են դրանք և հնարավորություն տալիս ճշգրտելու հայերի գրաված տեղը այդ նշանավոր քաղաքի տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում[23]:

Ավելի քան 4 ամիս Սուրաթում մնալուց հետո, Հովհաննեսն ուղևորվում է Ագրա 1683 թ. մայիսի 13-ին, և նույն ամսի 27-ին հասնում Օվրանկապատ (Ավրանգաբադ)[24]. այստեղից դուրս է գալիս հուլիսի 13-ին և վեց օրից հասնում Բերամփուռ (Բուրհամփուր), ուր հանդիպում է Շիրազի եկեղեցու համար դրամ ժողովող ոմն Շոռենց Թաթոսի: Երևանցի (Նոր Ջուղայի Երևան թաղամասի բնակիչ) Բաղումի ընկերակցությամբ ճանապարհ է

[22] Այստեղ թվարկված են նաև այն անունները, որոնց հիշատակել է Հովհաննեսը երկրորդ անգամ Սուրաթում եղած ժամանակ (1684 թ. գարնանը):

[23] Սուրաթի մեծահարուստ հայ վաճառականների հակաեկեղեցական տրամադրությունների և աշխարհական հաճույքների մասին Հ. Տեր-Հովհանյանցին հայտնի են եղել հետաքրքրական տեղեկություններ, որոնք վերաբերում են, հավանաբար, XVIII դ. վերջերին: Դրանց համաձայն, Սուրաթի մեծատունները հաճախ իրենց բնակարաններում խնջույքներ են կազմակերպել՝ զուռնաների ու կանչվող կանանց մասնակցությամբ: Բացի կերուխումից, գինարբումից և աշխարհական երգերից, նրանք անպատկառ ծաղրանքով կատարել են նաև եկեղեցական-ծիսական երգեր («Պատմութիւն Նոր Ջուղայու», Ա, էջ 188):

[24] Տեղանունները տալիս ենք Հովհաննեսի տառադարձությամբ, նշելով նաև ճիշտ ձևերը:

ընկնում և օգոստոսի 9-ին հասնում Սրինճ (Սիրոնջ) քաղաքը, ուր մնում է երկուսուկես ամիս (մեկնել է նոյեմբերի 22-ին): Այստեղ հիշատակում է Աղապարին և մի հայ սարկավագի (անունը չի տալիս):

Սրինճից, Կաշկարի վրայով, մեկնում ու նոյեմբերի 30-ին հասնում է Ագրա (գրում է Էկրայ), որ 1527-1658 թվականներին Մեծ Մողոլի կայսրության մայրաքաղաքն էր և Հնդկաստանի ամենավաճառաշահ ու փարթամ քաղաքը: Մի անգլիացի ճանապարհորդի վկայությամբ՝ «Ագրան հանգուցակետն էր կայսրության ճանապարհների, որից դուրս էին գալիս բոլոր ուղղություններով ինչպես անվաճաղերը սռնիից»[25]:

Վաղուց ի վեր Ագրայում գոյություն ուներ հայկական կայուն գաղթօջախ: 1652 թ. այստեղ կառուցվել էր եկեղեցի, ըստ ոմանց՝ Հնդկաստանի հնագույն հայկական եկեղեցին[26]:

Գաղութի սկզբնավորումը վերագրվում է Ջելալ-էդ-դին Աքբար շահի (1542-1605) ժամանակներին: Այդ մասին է վկայում նաև առ այսօր բարեկարգ վիճակում գտնվող հայոց գերեզմանատունը, որտեղ պահպանված հարյուրից ավելի հայերեն, պարսկերեն և անգլերեն տապանագրերից հնագույնը վերաբերում է 1611 թվականին[27]:

Հայ գաղթօջախի կյանքում կարևոր նշանակություն ուներ հայկական կարավանատունը, որը, ըստ եվրոպացի ուղեգիրների, հավաքատեղին էր հայերի. այստեղ էին նրանք քննարկում համայնքին առնչվող հարցերը, կնքում առևտրական ու վարկային զանազան պայմանագրեր և այլն: Կարավանատան հռչակը հասել է նույնիսկ Եվրոպա: Ագրա ժամանող բազմաթիվ օտարականներ այստեղ հանդիպումներ էին ունենում հայերի հետ և օգտակար խորհուրդներ ստանում փորձված ու բանիմաց հայ վաճառականներից[28]:

Հովհաննեսի գրառումներից կարելի է հետևցնել, որ XVII դ. 80-

[25] К. А. Антонова, Очерки общественных отношений и политического строя могольской Индии времен Акбара (1556-1605), М., 1962, стр. 121.

[26] Տե՛ս «Արարատ», 1880, էջ 229:

[27] Տե՛ս Դ. Փոլադյան, Ագրայի հայերը, Բեյրութ, 1963, էջ 41:

[28] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 448:

ական թթ. Ագրայի հայկական գաղթօջախում կենտրոնական դիրք էր գրավում մահդասի Պետրոսի որդի, շիրազցի պարոն Ավետիքը, որի հետ մեր վաճառականը գանազան գործարքների մեջ է մտնում[29]:

Ագրայից, Փանոսի որդի Բաբայի ընկերակցությամբ, 1684 թ. հունվարի 4-ին, Հովհաննեսը մեկնում է Խուրջա՝ լեղակ գնելու. մարտի 11-ին վերադառնում է Ագրա, բերելով 92 չարմ (2 տոննայից ավելի) լեղակ: Այս կապակցությամբ նա գրում է. «Նիրհան ամսին ԺԶ (16)-ումն եկի էկրայ, ընկերովի ՂԲ (92) չարմ լեղակ ինք առել... Սարհանջամն պարոն Ավետիկն էր. ՂԲ չարմ լեղակէն յինք վեռէց Յովանին ջահտան ԼԴ (34) չարմ, Բաբէն վեռէց ԽԲ (42) չարմ. եւ՝ Յովանէսս վեռի ԺԶ (16) չարմ, որ գնանք Սուրաթումն ղըմամթ գրձենք, կխենք»:

Սուրաթ է մեկնում Հովհաննեսը մարտի 19-ին: Նույն ամսի 27-ին հասնում է Սրինճ (այստեղ հանդիպում է Դիլաքի որդի Ստեփանին), 2 օր հետո ճանապարհվում է և ապրիլի 10-ին ժամանում Սուրաթ:

Իր ապրանքը՝ 16 չարմ (368 կգ) լեղակը, 7 հակ սրնճի ու 4 հակ ղերդադի կոչվող գործվածքեղենը բարձում է դեպի Բասրա ուղևորվող նավերի վրա, լիազորելով իր «աղալուղ ընկեր» (այսինքն՝ նույն աղաների գործակատար) Շիրազի Հովանին՝ այդ ապրանքների մի մասը հասցնել Սպահան, իսկ մյուս մասը՝ վաճառել Բասրայում:

1684 թ. մայիսի 27-ին Հովհաննեսը Սուրաթից դուրս է գալիս և, անցնելով նույն Օվրանգաբադ-Բերամփուռ-Սրինճ-Լաշկար ճանապարհով, նույն թվականի դեկտեմբերի 11-ին մտնում է Ագրա: Ընդամենը 10 օր հետո նա մեկնում է Խերապատ (Խայրաբադ) և Լահուրփուռ քաղաքները՝ բաֆթար կամ խերապատի կոչվող գործվածք գնելու նպատակով: Այս կապակցությամբ Հաշվետումարի մեջ նոր բաժին է սկսվում, որի բացատրական նախաբանում ասված է. «Տէր աստուած խէրն ու բարին առաջնորդէ, ամէն: Փոքր

[29] Մեզ արդեն ծանոթ Ավետարանի հիշատակագրություններից մեկում թվարկված են խոջա Գեւաքի կնոջ՝ Ծաղիկի ազգականները. «Դարձեալ յիշեցէ՛ք զԾաղիկն և զՄայրն ... Սիպրիկն և զորդին՝ Ավետիկն» (Մատենադարան, ձեռ. N 6665, էջ 97բ): Եթե այստեղ հիշատակվածը մահդասի Պետրոսի որդի Ավետիքն է, ուրեմն Ագրայում հաստատված այդ խոջան՝ Հովհաննեսի սահիպ պարոնների՝ Զաքարի և Էմպրումի հարազատ մորաքրոջ որդին է եղել:

թվին ԿԹ (69) համիրայ ամսի ԻԶ (26)-ումն, էկրայ, պարոն Ավետիկին խետ ղարար արարի, որ գնամ Խէրապատ, Լահուրփուռ, մինչև ԺԲՌ (12000) թան բաֆթար առում: Էկրայ քարսագին պարոն Ավետիքն առէ, ես խրխան թայար առեմ, մեռամ գնամ Էկրայ. կէսն Պօղոսի որդի Յովանին ջանըպէ լինի և կէսն իմ՝ Յովանխսին ջանըպէ լինի... Համիրայ ամսին ԻԶ (26)-ումն Էկրայ դուս եկայ գնացի Խէրապատ և Լահուրփուռ»:

Հովհաննեսը հաջողությամբ կատարում է իր ստանձնած պարտավորությունը. Լահուրփուռում գնում է 102 հակ կամ 10 հազարից ավելի գլեստացու խերապատի (իմա՝ այդ քաղաքում գործված կտորեղեն): 1685 թ. հոկտեմբերի 31-ին ապրանքը բերում է Ագրա. 162 հակից 50-ը վերցնում է ինքը, մյուս մասը՝ պարոն Ավետիքը Շիրազի Հովհանի համար:

Իր բաժին 50 հակ խերապատին 1686 հունվարի 19-ին Հովհաննեսն ուղարկում է Սուրաթ, որ «խասանէ Պօղոսի որդի Շիրազի Յովանն. ըխտիար ունի յոր տեղ որ ձեռ տայ՝ ծախէ, գրայ մեր ընկերութիւնն Յովանին խէտ այ»,- գրում է նա:

Հաշվետումարի ամենաբովանդակալից ու հետաքրքրական մասն սկսվում է վերոհիշյալ գործարքին վերաբերող գրանցումներից հետո:

1686 թ. փետրվարի 8-ին Հովհաննեսը, համաձայնագիր կնքելով Պօղոսի որդի Շիրազի Հովհանի հետ (Հովհանն Ագրայում չէր գտնվում, նրա անունից հանդես է գալիս պարոն Ավետիքը), ձեռնարկում է ամենահեռավոր ճամփորդությանը՝ ուղևորվում է դեպի Տիբեթ[30]:

Առևտրական այս գործարքի մեջ ընդգրկված վաճառականների միմյանց նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին ուշագրավ տվյալներ են գրանցված Հաշվետումարի այդ բաժնի ներածականում, որ մեջ ենք բերում ամբողջությամբ.

«Տէր աստուած խէրն և բարին առաջնորդեսցէ, ամէն: Թվին ՌՃԼԵ (1686) և փոքր թվին Ապարի Հ (70), ովզան ամսին ԺԵ (15)-ումն (փետրվարի 8-ին) Յնդուստան էկրայ. ես տէր Դաւթի որդի Յովանէսըս ընկերացայ մահդասի Պետրոսի որդի պարոն Ավետիկին խետ, որ գընամ Բութանտ (իմա՝ Տիբեթ): Մեր խրխան փիշագին թարեգս այ եղել. մեք թիքն էս թարեգումս

[30] Տիբեթի փոխարեն ամենուրեք գրում է Բութանտ. այդպես է կոչվում այդ երկիրը հայ ու եվրոպական մի շարք աղբյուրներում:

գրինք. չուն որ ավգան ժէ (17)-ումն (փետրվարի 10-ին) էկրայ դուս եկայ դարի Փաթանայ: Մասկուրիս ջահդան պարոն Ավետիքն սարմաեայ մէջ իրեր Պողոսի որդի Յովանին ջանպէ, ջամէն ԴՌՈՁԵ (4685 ռուփի). Ես Յովանէսըս սարմաեայ մէջ բերի, ջամէն ԴՌՈՁԵ-ի (4685 ռուփի), որ եկաւ Բ (2) ջամէն ԹՌՅՀ. (9370 ռուփի): Էս ջամէն ես՝ Յովանէսըս խրխտ արարի, վեսի գրնացի. ինչ որ շախ տայ՝ իմ Յովանիսիս և Յովանին միջօվի լինի:

Դարձեալ, ես՝ Յովանէսըս պարոն Ավետկին խետ զարար ունիմ, ինչպէս որ մեր մին զմինու տված գրումն գրած այ, որ իմ ջանպէ Ծ. (50) խակ խէրապատի և մին բանդրի ամ բաւվանայ արարէլ Սուրաթն, խասանի Յովանին ձեռն. բխտիար ունի Սուրաթումն ծախե, կամ թէ տանի Հսպահան ծախե. ինչ որ պարտկ լինի՝ վերայ տայ, մայբաղին ուր ջամումն պախէ և այլ իմ Յովանիսիս ջանպէ: Փիշաղին Յընդուստանայ ադարկած ապրանքի թահթիմայ ունիմ պարոնաց մօտ, ինչ և իցէ, էն էլ ջամայ բիրե իմ ջահտան: Բ (2) զայամն, ուր սարմաէն բաղայ, ինչ որ ուր ջանպէգնէ՝ միայպէս թարայգի առե. մինչև հոգին սուրբն կամակից լինի, ես Բութանտայ չետ գամ Յընդուստան կամ թէ Հսպահան, յորտեղ որ Յովանն տեսնում մեր խըռէպն մին զմինու խետ տեսնունք, յամէն մարթ ուր հախին տէր այ ուր խըռէպօվն (էջ 78):

Համաձայնագիրը պարզ է իր հիմնական բովանդակությամբ. Տեր Դավթի որդի Հովհաննեսն ու Պողոսի որդի Հովհանը ընկերություն են կազմում, շրջանառության մեջ դնելով հավասարաչափ դրամագլուխ: Յուրաքանչյուրը մասնակցում է առևտրական այդ ձեռնարկին 4685 շահիջահանի կամ ռուփի գումարով. ընկերության ընդհանուր գումարն է, այսպիսով, 9370 ռուփի (106 կգ 227 գ արծաթ):

Սակայն, ինչպես պարզվում է Հաշվետումարի բազմաթիվ գրառումներից, Հովհաննեսը (հավանաբար նաև նրա ընկեր Պողոսի որդի Հովհանը) այս գործն սկսելուց հետո էլ չի դադարում կախման մեջ լինել Նոր Ջուղայի իր սահիպ պարոններից:

Անշուշտ, նա այլևս խոջա Գերաքի որդիների անդրամագլուխ գործակատարը չէ, որ 4 տարի առաջ Հնդկաստան էր գալիս ստացված շահի մեկ քառորդը ստանալու պայմանով, իր պարոններին պատկանող 18 ճոթ մահուդը վաճառելու համար: Այժմ նա սեփական դրամագլխի տեր է, բայց անխզելի կապերով շղթայված վերահիշյալ իր պարոններին՝ որպես Գերաքենց առևտրական տան գործակատարներից մեկը: Նույնիսկ հեռավոր Տիբեթի

մայրաքաղաք Լհասայում նա վայրկյան անգամ չի մոռանում այն իրողությունը, որ ինչպես ինքը, այնպես էլ իր աղալուղ ընկերները՝ «ողջ ուրն (այսինքն իրենց սահիպ պարոնին) ենք ծառայ, գոր օր կուզէ կու խըռէպէ»: Բազմիցս նա աղերսում է աստծուն ամոթով չթողնել իրեն իր աղաների առաջ, խղճալ ու ազատել փորձություններից[31]:

Տիբեթում, ինչպես և իր երթուղու վրա գտնվող խոշոր քաղաքներում վաճառելու համար Հովհաննեսը գնում է բազմապիսի ապրանքներ, հատկապես թանկագին քարեր. 365 սեր (323 կգ 760 գր) քահրբար (սաթ), 1127,5 տանկ, այնուհետև ևս 823 տանկ (միասին հաշված՝ 32 կգ) մարջան, 273 դանա (հատ) մարգարիտ, 96 աղեղի (սարդիոնի) համրիչ, 24 թան (զգեստացու) փալանկիփուշ, 72 թան տարբեր տեսակի չիթ, 16 թան կտավ և բազմաթիվ այլ ապրանքներ, ընդամենը 8216,5 ռուփի արժողությամբ:

Ինչպես երևում է այս թվարկումից, Տիբեթ տարվող հիմնական ապրանքը սաթն է՝ քահրբարը: Կոստանդ Ջուղայեցին նշում է, որ այս քարը լավ վաճառվում է աշխարհի բոլոր կողմերում: «Քարպարն,- գրում է,- ֆռանկստան՝ Տանծկու (Դանցիգի) ծովումն բհամ կգոյ. քուլուչայ է, որ կտաշեն, կուլուլակ թապեհ էլ կշինեն. թախտայ էլ կայ, որ կերպ կերպ իրմին կշինեն... Աշխարհումս ամենայն տեղ խարջ այ, Հնդստան էվել այ խարջ»[32]: Արխիվային փաստաթղթերում նշված է, որ Իրանից Լվով ժամանող հայ վաճառականները իրենց հետ արևելյան երկրներ էին տանում մեծ քանակությամբ սաթ, իսկ իրանք էլ այդ նպատակով անձամբ գնում էին Մերձբալթյան երկրներ, հատկապես՝ Դանցիգ[33]:

---

[31] Ստորև բերում ենք այդ կարգի մի քանի գրանցումներ. «Տէր Յիսուս մեր շարմն պախես, մին ազատում տաս, խեղչ անք», «Տէր Յիսուս մեր ախիրն խէր առես, խեղչ ամ», «Տէր Յիսուս, մեր շարմն պախես, զմեզ մեր աղինացէն շարմանդայ ոչ առես»:

[32] Մատենադարան, ձեռ. N 5994, էջ 10ա:

[33] Տե՛ս Н. К. Кривонос, Армянская колония во Львове в первой половине XVII в., Львов, 1965, стр. 147 (դիսերտացիոն աշխատանք. օգտվել ենք մեքենագիր օրինակից): Այստեղ հիշատակված է Զաքար Գրիգորովիչ (այսինքն Գրիգորի որդի) անունով իրանահայ մի վաճառական, որ Լվովից մեկնել է Մերձբալթյան երկրներ սաթ գնելու նպատակով (նրա աղբյուրն է ЛЦГИА, ф. 52, оп. 3, Акты войт. суда, т. 398, стр. 1083).

Տիբեթ տանելու համար մեծաքանակ սաթ գնող մեր վաճառականը անշուշտ լավատեղյակ էր, որ այդ երկրի բնակիչների (ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց) տարազի բաղկացուցիչ մասն էին կազմում տրան-վա կոչվող համրիչները (Թագրեհ), որ կրում էին որպես վզի կամ դաստակի զարդ, և որոնցից յուրաքանչյուրը պետք է պարունակեր 108 հատիկ[34]:

Իր հետ Տիբեթ տանելու համար Հովհաննեսն Ագրայում վարձում է 2 հայ ծառաներ՝ Տեր Պետրոսի որդի Պողոսին՝ տարին 50 ռուփի աշխատավարձով ու «խորակ-փուշակ»-ով (այսինքն՝ ուտելիք-հագնելիքով) և Ղալմազ Պետրոսին՝ նույն պայմաններով, բայց 40 ռուփի աշխատավարձով: Ինչպես ինքը, այնպես էլ իր ծառաները զինված էին. Հաշվետումարի մեջ 2 անգամ գրանցում կա «բարութ ու գլուլայ» (վառոդ ու գնդակ) գնելու մասին:

Ագրայից մեր վաճառականը, ինչպես ասացինք, դուրս է գալիս 1686 թ. փետրվարի 10-ին: Շքուրապատ (Շիքոհաբադ) քաղաքում նա միանում է դեպի Փաթնա մեկնող կարավանին և, անցնելով Մաքվանփուռ (Մաքանփուռ), Ջանապատ (Ջահանապատ), Բանարիս (Բենարես) ու Շահզադփուռ քաղաքներով, նույն թվականի մարտի 9-ին հասնում է Փաթնա (ամենուրեք գրում է Փաթանայ):

Փաթնայում ևս գոյություն ունի հայ գաղութ. Հովհաննեսն այստեղ, այլևայլ առիթներով, գործ է ունենում հայ և օտարազգի մի շարք անձանց հետ. հիշատակում է վարպետ Պետրոսին, ուստա Գրիգորի որդի Խաչիկին, Զաքուճ Հակոբջանին, Մուրատին, Քաչալ Ծատուրի թոռ Պետրոսին, Ստեփանի որդի Վարդանեսին, Մուսի Դարվան ֆրանկցին (այսինքն՝ ֆրանսիացուն), սրա որդի Փանոսին և նոքար Մանվելին, Ընուփ գալալին և վալանդզենց (այսինքն՝ հոլանդացիների) առևտրական տունը[35]:

Փաթնայում Հովհաննեսը հյուրընկալվում է հայ քահանայի տանը և Տիբեթ տանելու համար լրացուցիչ գնումներ կատարում: Գնում է 680 ռու-

[34] Տե՛ս Н. В. Кюнер, նշվ. աշխ., էջ 73-74:

[35] Այս ցանկի մեջ ներմուծել ենք նաև այն անձանց անունները, որոնց Հովհաննեսը հիշատակել է Փաթնա կատարած երկրորդ այցելության ժամանակ՝ 1692 թվականին:

փի արժողությամբ ապրանքներ, գերազանցապես տարբեր գործվածքներ՝ չափլա, ալաչա, բիաքի խասա, ճերմակ չիթ, հաստ ու բարակ չիթ, սոլագալի և այլն:

Փաթնայից դուրս է գալիս մարտի 29-ին. անցնում է Հաջիփուռ, Մինափուռ, Բիրջան, Պատրինկա քաղաքներով: Բիրջանից սկսվում է ճանապարհի վերելքը՝ դեպի Հիմալայների փեշերին ծվարած Նեպալ: Հետաքրքրական են այստեղ փոխադրական միջոցների մասին գրանցած տեղեկությունները: Հովհաննեսը մի քանի անգամ նշում է կովեր վարձելու մասին. ըստ երևույթին կով է անվանում եղնուղտի (յակի) և կովի խառնուրդով ձո կոչվող կենդանուն, որը շատ դիմացկուն էր ցրտի նկատմամբ և կարող էր տանել շուրջ 5 փութ բեռ: Սպասավորների համար ևս երկու կով է վարձել, վճարելով 5 ռուփի. «Բ կով տղէքոնց վեր ելնելէ խմար բռնեցի»: Բազմապիսի տեղեկություններ կան տեղաբնիկ վարձու բեռնակիրների («համալ», «բարխայ», «աղվայ», «բօլավայ») ու նրանց աշխատավարձի մասին: Նեպալում և Տիբեթում եղնուղտներից ու ձիերից բացի ապրանքափոխադրումների համար օգտագործում էին նաև ոչխարներ ու այծեր, որոնց բարձում էին շուրջ 10 կգ բեռ[36]:

Հաշվեմատյանում գրաստների հիշատակությունից բացի, որպես ապրանքների փոխադրամիջոց, հաճախ նշված է «տավար» կամ հոգնակի «տավարանի»: Դրանց հսկող գրաստապանները տարբեր տեղերում տարբեր անվանումներ ունեն՝ «չարվադար», «մուքիայ» և այլն: Ցամաքային ուղիներում բեռների փոխադրության համար տեղանքին ու ճանապարհներին համապատասխան փոխադրամիջոցներ են օգտագործվել: Սպահանից մինչև Բանդար-Աբաս, ինչպես նաև Սուրաթից մինչև Ագրա օգտագործվել են ջորիներ («գաթըր»), ձիեր, որոնց սովորաբար թաթու է անվանում: Երբեմն թե՛ բեռների և թե՛ իր ծառաների («տղաներ») փոխադրության համար վարձել է տարբեր տեսակի սայլեր («բալ», «դանտի», «գադի») և սայլապաններ («բալդի», «դանտիվալե», «գադիվան») և վարձատրել կանխիկ դրամով կամ որևէ ապրանքով:

[36] Տե՛ս Н. М. Пржевальский, Из Зайсана через Хами в Тибет, М., 1948, стр. 211. “Непал. История, этнография, экономика”, М., 1974, стр. 17.

4

1686 թ. ապրիլի 19-ին Հովհաննեսը հասնում է Նեպալ, կամ Նէքպալ՝ ինչպես գրում է ինքը. այստեղ մնում է 3 ամիս:

Նեպալի հովիտը, հնագույն ժամանակներից ի վեր, խոշոր նշանակություն է ունեցել որպես Տիբեթից Հնդկաստան և հակառակ ուղղությամբ կատարվող մեծածավալ առևտրի անցուղի: Նեպալն այդ առևտրին մասնակցում էր ոստայնանկության ու բարձրորակ իր արտադրանքով, պղնձյա ու դեղնապղնձյա իրերով, թանկագին մետաղներից պատրաստված զարդերով և այլն: Անհամեմատ ավելի մեծ նշանակություն ուներ Նեպալի համար տրանզիտ առևտուրը: Հնդկաստանից այդ հովտով դեպի Տիբեթ էին արտածվում մետաքսյա գործվածքներ, թանկագին քարեր և այլն, իսկ Տիբեթից Հնդկաստան, այնուհետև այլ երկրներ՝ արծաթ, ոսկի, մուշկ, բորակ, եղնուղտի պոչ և Չինաստանից բերվող ապրանքներ:

XV դարի վերջերից Նեպալը մասնատվել էր 3 իշխանությունների՝ Բհատգաոն, Քաթմանդու և Փաթան, որոնք կառավարվում էին Մալլա հարստությունից սերված պալատականներով: Քաթմանդուի իշխան Պրատապ Մալլան (1624-1674), Տիբեթի դեմ կազմակերպած հաղթական արշավանքի շնորհիվ իր հսկողության տակ էր առել Քութիի և Կիրոնգի դժվարանց լեռնանցքներով դեպի Տիբեթ ձգվող առևտրական կածանները և մի շարք առանձնաշնորհումներ ստացել: Քաթմանդուի վաճառականները, Նիվար ազգից, իրավունք էին ստացել Լհասայում 32 առևտրական տնից բաղկացած կայուն գաղթօջախ ունենալու. Տիբեթը պարտավորվել էր իր առևտուրը Հնդկաստանի հետ ամբողջապես իրականացնել Քաթմանդուի հովտով և չօգտվել Սիկիմի կամ Բութանի ճանապարհներից: Միջազգային նշանակություն ունեցող այս առևտուրը, սակայն, հիմնականում կատարվում էր ոչ թե նեպալցիների (Նիվարների), այլ քաշմիրցի մահմեդական վաճառականների (գոսայինների) միջոցով[37]:

[37] Տե՛ս И. Б. Редько, Социально-экономические отношения в Непале в первой половине XVIII в. и воздействие на них горкхских завоевателей («Непал, история, этнография, экономика», стр. 17-19, 46-49); Его же, Непал, Ташкент, 1958, стр. 10-15.

Հովհաննեսը լինում է Նեպալի վերոհիշյալ երեք իշխանություններում: Քաթմանդուի ռաջային և պետական պաշտոնյաներին վճարում է մաքսատուրք՝ 167 ռուփի, ինչպես և զանազան նվերներ (տարբեր տեսակի գործվածքներ, միրգ ու քաղցրավենի): Գրառումներից պարզվում է, որ ռաջան մաքսատուրքերի հաշվին Հովհաննեսից վերցնում է նրա անգլիական հեռադիտակը: («Իմ մին ինկլիզի դուրբին առի, բաշչէն վեւեց»): Այդ հեռադիտակը գնահատվել է 50 մանորմելի կամ 25 ռուփի և համապատասխան չափով կրճատվել է Հովհաննեսից գանձվելիք տուրքը: Թերևս այդ երկրորդ հեռադիտակն է, որ հասել է հեռավոր այդ երկիրը և դարձել տեղական իշխանավորի սեփականություն: Առաջին հեռադիտակը Փաթանի իշխանին նվիրել էր 25 տարի առաջ Նեպալ այցելած Իոհան Գրյուբերը: Երբ իշխանը հեռադիտակը ուղղել էր թշնամու բանակի կողմը և շատ մոտ տեսել նրանց հրամանատարին, իսկույն հրամայել էր հարձակման անցնել, սակայն նրան հասկացրել էին, որ այդ հեռադիտակի առաջացրած խաբկանքն է: «Դժվար է նկարագրել իշխանի ուրախությունը նվերն ստանալիս»,- պատմում է Ի. Գրյուբերը: Հաշվետումարի չորացամաք գրառումները կենցաղային մանրամասնություններ չեն պարունակում, բայց պետք չէ տարակուսել, որ Քաթմանդուի ռաջան մեր վաճառականի հեռադիտակով ոչ պակաս հրճվանք է ապրել:

Քաթմանդու քաղաքում ևս մանր-մունր գնումներ կատարելով, Հովհաննեսը հուլիսի 19-ին մեկնել է Տիբեթ, անցնելով Բադգամ (Բահադգաոն)–Սանքո–Լխասի–Քասա–Քութի–Ջիգիչա[38]–Լհասա (գրում է միշտ Լասա) ուղեգծով: Այս ճամփորդությունը տևել է շուրջ երկուսուկես ամիս՝ 1686 թ. հուլիսի 17-ից մինչև սեպտեմբերի 28-ը:

[38] «Ջիգիչայ» ձևով տառադարձված բնակավայրը, հավանաբար, Տիբեթի վարչական ու կրոնական երկրորդ կենտրոն Շիգացզե քաղաքն է, Պանչենլամայի աթոռանիստը (գրվում է նաև Շիխացզե, Սիկացզե, Ջիգարչի, Բժիկ՝ա-ռցէ և այլ ձևերով): Այս մասին տե՛ս И. Я. Бичурин (Накинф), Собрание сведений по исторической географии восточной и средней Азии, Чебоксары, 1960, стр. 537. И. М. Пржевальский, նշվ. աշխ., էջ 218: И. В. Кюнер, նշվ. աշխ., էջ 1-2:

5

Տեր Դավթի որդի Հովհաննեսի Հաշվետումարի տիբեթյան գրառումներն իրենց հնությամբ և, մանավանդ, հարուստ բովանդակությամբ հատուկ տեղ են գրավում աշխարհի տանիքը համարվող այդ երկրի մասին օտարազգի այցելուների ուղեգրությունների շարքում:

Տիբեթ այցելած առաջին եվրոպացին համարվում է ֆրանցիսկյան քարոզիչ Օդորիկոս Ֆրիուլացին կամ Պորդենոնցին (Odorico de Pordenone)*: Հայտնի է, որ նա եղել է Հայաստանում և սովորել է հայերեն: 1321 թ. կամ հաջորդ տարում Հ. Օդորիկոսը նավարկել է Հնդկաստանի հարավային ծովափերով և հետագայում վկայել, որ նավապետն ազգությամբ հայ է եղել և որ նավում նա առիթներ է ունեցել հայերեն զրուցելու[39]: Մի քանի տարի անց՝ 1325-1326 թթ., եռանդուն այս քարոզիչը Չինաստանից մտել է Տիբեթ ու ապրել Լհասայում՝ շատ համառոտ և մասամբ կասկածելի տեղեկություններ գրանցելով տիբեթցիների կենցաղի ու հավատալիքների մասին[40]:*

Երկրորդը եղել է պորտուգալացի Անտոնիո Անդրադեն (Antonio de Andrade)*: Սա 1600 թ. մեկնել է Գոա՝ Հնդկաստանի պորտուգալական հենակետը, այնտեղ ավարտել ուսումը և դարձել հիսուսյան միաբանության կրոնավոր, ապա պաշտոնավարել է Ագրայում, իսկ 1624 թ. մեկնել է Տիբեթ, հիմնադրել այնտեղ միսիոներական կենտրոն: Պահպանվել են սրա երկու նամակները, որոնք տեղեկություններ են պարունակում Տիբեթ կատարած նրա ճամփորդության մասին[41]: Հայտնի է, որ ընթանալով Անտոնիո Անդրադեու հետքերով, Տիբեթում քրիստոնեություն տարածելու փորձեր են կատարել նաև այլ քարոզիչներ, սակայն 1652 թ. սրանք բոլորն էլ տեղական իշխանությունների պահանջով արտաքսվել են երկրից[42]:*

Հաջորդը եղել է ավստրիացի ճիզվիտ Իոհան Գրյուբերը: 1661 թ., ֆրանսիացի Ալբերտ դ՚Օրվիլի ընկերակցությամբ, նա Չինաստանից, Սինինի ու Նաղ-չուի վրայով, անցել է Լհասա, մնացել այնտեղ 2 ամիս, որից հետո, Նեպալի ճանապարհով, մտել Հնդկաստան ու հասել Ագրա: Գրյուբերն արևելյան երկրներում կատարած իր ուղևորությունների ընթացքում 1658-1665 թթ. գրել է հինգ նամակ, որոնց մեջ կան հետաքրքիր տեղեկություններ Տիբեթի աշխարհագրության և տիբեթցիների կյանքի ու կենցաղի մասին[43]:

Ըստ այդմ Հովհաննես Ջուղայեցին Տիբեթ այցելած չորրորդ անձնավորությունն է, որ գրավոր հիշատակ է թողել այդ մասին: Իր եվրոպացի նախորդներից մեր վաճառականը տարբերվում է նախ նրանով, որ լինելով աշխարհական անձնավորություն (ինչպես ասել ենք, նախորդ այցելուներն անխտիր եղել են կաթոլիկ քարոզիչներ), ունեցել է այլ հետաքրքրություններ և գրանցումներ է կատարել նախորդներին քիչ հետաքրքրող

[39] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 372: Ա. Ալպօյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 453:

[40] "Les voyages en Asie au XIVe siècle du bienheureux frère Odoric de Pordenone, religieux de st. François", ed. H. Cordier, Paris, 1891, p. 449-454; Рихард Хенниг, Неведомые земли, т. III, М., 1962, стр. 188-189.

[41] Անտոնիո Անդրադեու այդ նամակները վերահրատարակված են պորտուգալացի գիտնական F. M. Esteves Pereira-ի կողմից "Novo Pescobrimento do Grao-Cataio ou Reinos de Tibete, pelo padre Antonio de Andrade de Compantia de Jesus Português no ano de 1624" աշխատության մեջ: (Այս գրքի մասին մեզ տեղեկություններ է հաղորդել պր. Ռ. Կյուլպենկյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը):

[42] Տե՛ս В. П. Леонтьев, Иностранная экспансия в Тибете в 1888-1919 гг., М., 1956, стр. 13.

[43] Տե՛ս M. Thevenot, Relations de divers voyages curieux, t. 4, Paris, 1966: Այս հազվագյուտ գրքի մանրաժապավենը, հանված Վիեննայի ազգային մատենադարանի օրինակից, շնորհակալությամբ ստացել ենք դր. Մեսրոբ ծ. վ. Գրիգորյանից: Տե՛ս նաև И. В. Кюнер, Описание Тибета, ч. I, Географическая, вып. 1-й, Владивосток, 1907, стр. 32-34; Сарат Чандра Дас, Путешествие в Тибет, пер. с английского, под ред. Вл. Котвича, СПб, 1904, стр. XVII-XVIII; В. Бартольд, История изучения Востока в Европе и в России, СПб., 1911, стр. 97.

Հովհ. Ջուղայեցուց շուրջ մեկ տասնամյակ հետո Տիբեթ այցելած եվրոպացիների մեջ առանձնանում է ճիզվիտ քարոզիչ Իպոլիտ Դեզիդերին, որի թողած ուղեգրությունները Տիբեթի աշխարհագրության, ներքին կյանքի և տնտեսական հարաբերությունների մասին ուշագրավ տվյալներ են պարունակում (տե՛ս L. Desideri, An accaunt of Tibet, London, 1932):

երևույթների մասին: Եվ ապա, զարմայալ տարբերվելով իր նախորդներից, որոնք շատ կարճ ժամանակ են ապրել այդ երկրում, նա մնացել է այնտեղ անընդմեջ հինգ տարի, գործ է ունեցել տանդյակ պետական պաշտոնյաների, բուդդայական հոգևորականների և վաճառականների հետ, սովորել տիբեթերեն, վաճառել ու գնել բազմապիսի ապրանքներ, վճարել հարկեր ու տուրքեր, դատել-դատվել, և այս ամենի մասին իր Հաշվետումարում գրանցել ստույգ ու արժանահավատ տեղեկություններ:

Հովհաննեսը միակ հայ վաճառականն է, որի տիբեթյան հաշվետումարը պահպանվել ու հասել է մեզ. սակայն, անտարակույս, նա ունեցել է բազմաթիվ նախորդներ: Նոր Ջուղայի վաճառականական դպրոցի համար պատրաստած իր դասագրքում Կոստանդ Ջուղայեցին ստույգ տեղեկություններ է հաղորդել Տիբեթում (Բութանդ) կիրառվող չափ ու կշռի միավորների մասին, անշուշտ հարց ու փորձ անելով ջուղայեցի այն վաճառականներին, որոնք Հովհաննեսից շատ առաջ լինելով այդ երկրում, քաջատեղյակ էին տեղական կենցաղին ու բարքերին[44]:

1686 թ. սեպտեմբերի 28-ին Հովհաննեսը հասնում է Լհասա:

Իր իսկ վկայությամբ, նա ոչ տեղի լեզուն գիտեր, ոչ սովորությունները. «Ես որ Լասայ գնացի նոր չախտա, ոչ տեղին լեզուն, ոչ խամպարքն, ոչ տեղին քաշն խաբար չի»: Բայց նա մեծ դժվարություններ չի կրում այստեղ. Լհասայում գտնվող հայերը, հատկապես Հովհաննեսի ազգերի այստեղ գտնվող գործակատարները, օգնում են նրան այդ նոր միջավայրին ընտելանալու:

Լհասայում գտնված տարիներին Հովհաննեսը առևտրական գործարքների մեջ է մտնում ինչպես իր ազգակիցների, այնպես էլ բազմաթիվ տիբեթցի, նեպալցի (նիվար) և քաշմիրցի վաճառականների ու գնորդների

[44] Կ. Ջուղայեցու «Աշխարհաժողովի» մեջ կան այսպիսի արժեքավոր տեղեկություններ. «Դարձեալ Բութանդ, որ Թոփի երկրներովն՝ Բաշին անումն յանկ այ, որ մին յանկն Ժ մսխալ այ, որ կաւեն մին զաքուրի, որ մին մսխալն Ե ֆուն այ, որ մին ֆունն՝ ԺԹ գրան այ, որ Բութանդայ Ժ մսխալն Հաջամատան Ը մսխալ դուս կգոյ. որ Բութանդայ Ա մսխալն Հաջամատան ՀԷ գրան այ» (Մատենադարան, ձեռ. N10704, էջ 36ա, ձեռ. N 5994, էջ 15ա):

հետ[45]: Հաշվետումարում հիշատակված են նրանցից շատ-շատերի անունները. Ղուկասի որդի Ծատուր, Պողոսի որդի Մելիքջան, Գալկցի Կարապետի որդի Աբրահամ, Մելիքջանենց Մաթոս, Մարտիրոսի որդի Նեկղոս (Նիկողոս), Հակոբ, Խումցի Աղան, Դավութ, Մուրատ, Սարգսի որդի Հովան, Ակնցի Ասլան, Պետրոս, նիվար (Նեպալցի) Կանաչնքու, նիվար Ջեկալիան, նիվար Մաղո, նիվար Գաոու, քաշմիրցի Հաֆիզ Ընահատ, քաշմիրցի Մադեղ, քաշմիրցի խոջա Ըմահեյ, քոթվալ Շամուգոնէ, նեմո Անճոլե, ցոմցո Լովզան, լամալ Կիսին, Աղիզ լամու, Գամպայ լամու, լամու Բուինե, Հակու լամու, գեվ Նասու, գեվայ Ճայինկ Պումուլե, Հաճի Մահմուդ, Մոլայ Հաշութ, ոսկերիչ Դեվմուն, գարբին Ասիթ, դերձակ Ջանսի և այլն: Հիշատակված հայ վաճառականներից մի քանիսը Լհասայում ապրել են իրենց ընտանիքներով: Հաշվետումարում գրանցում կա Դավութի որդու մահվան և այդ առիթով որոշ գումար տալու, ինչպես և զատկին Նիկողոսի կնոջը (խիզանին) «չորի խարճ» նվիրելու մասին: Հովհաննեսը որոշ ժամանակ ապրել է Նիկողոսի ընտանիքում և նրանք միասին են կատարել իրենց «խորակի խարճն», այսինքն՝ սննդի ծախսերը:

Լհասան եղել է Հովհաննեսի ամենահեռավոր հանգրվանը, որտեղ նա մնացել է շուրջ 5 տարի և նոր ճամփորդություններ չի ձեռնարկել: Սակայն հայ վաճառականներից մի քանիսը, հատկապես Ծատուրը, Մելիքջանը, Նիկողոսն ու Դավութը՝ հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, կտրելով լեռնային դժվարանց ճանապարհներ ու անմարդաբնակ տարածություններ, Տիբեթից ուղևորվել են Չինաստանի Սինին վաճառաշահ քաղաքը[46] և

[45] Քաշմիրցի այս վաճառականները, որոնց անվանում էին նաև Խաչիսներ, Տիբեթի մայրաքաղաք Լհասայի տնտեսական կյանքում մեծ դեր են կատարել ինչպես Հովհաննեսի ճամփորդության տարիներին, այնպես էլ հետագա դարերում: Ըստ եվրոպացի ուղեգիրների, նրանք Լհասայի բնակչության ամենահարուստ խավն են եղել, ունեցել են իրենց մզկիթը և համայնքի գործերը ղեկավարող պաշտոնյա (տե՛ս "Путешествие через Монголию в Тибет, к столице Тале-ламы, сочинение Гюк и Габэ", пер. с французского, М., 1866, стр. 239-240).

[46] Լհասայից Սինին ձգվում էր երկու ճանապարհ, մեկը՝ 1860, մյուսը 1700 կմ երկարությամբ (ըստ երևույթին այս վերջին ճանապարհն է, որ գործում է նաև այսօր): Իրենց մեծագույն մասով սրանք անցնում էին միանգամայն անմարդաբնակ,

այնտեղից Լհասա առաքել կամ անձամբ բերել մեծ քանակությամբ ձույլ ոսկի, մուշկ, թել, «Սինկի շալ» և այլ ապրանքներ: Որոշ գրանցումներ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մի քանի հայ վաճառականներ (հատկապես կարելի է ասել Պողոսի որդի Մելիքջանի մասին) անգամ բնակություն են հաստատել Սինին քաղաքում:

Չին ժողովրդի հետ հայերի ունեցած պատմական շփումների և առնչությունների հարցն առ այսօր քննության հատուկ առարկա չի դարձել: Այդ իսկ պատճառով, փոքր-ինչ շեղվելով մեր ծրագրից, փորձել ենք համառոտ մի ակնարկ նետել այդ հարցի վրա:

6

Հայտնի է, որ նեստորական ասորիները, Մերձավոր Արևելքի քրիստոնյա այլ ժողովուրդների (մասնավորապես հայերի) հետ միասին, նշանակալից քայլեր են կատարել Չինաստանի և արևմտյան երկրների միջև տնտեսական կապեր հաստատելու բնագավառում: Թան դինաստիայի տիրապետության դարաշրջանում, այսինքն 618-907 թթ., Չինաստանի մի շարք վայրերում, առաջին հերթին Չանյան (Կումդան) և Լոյան (Սարագ) մայրաքաղաքներում, հիմնադրվել էին քրիստոնեական եկեղեցիներ ու վանական հաստատություններ. վանքեր էին ստեղծվել նաև Չինաստանի հարավարևմտյան տարացեղ բնակչություն ունեցող շրջաններում: Դրանք, ինարկե, կյանքի էին կոչվում ոչ թե ազգությամբ չին քրիստոնյաների հոգևոր կարիքների բավարարման համար (նրանց քանակն աննշան է եղել), այլ այն վաճառականների և այլ զբաղմունքի տեր մարդկանց, ովքեր Մերձավոր Արևելքից և Իրանից մեկնում էին Չինաստան ու հաճախ մշտապես մնում այդ երկրում[47]:

անապատային վայրերով: Առաջին ճանապարհը, բարձված եղնուղտերով, կտրում էին 108 օրվա ընթացքում: (Տե՛ս Сарат Чанбра Дас, նշվ. աշխ., էջ XV):

[47] Տե՛ս Е. И. Кычанов, Сирийское несторианство в Китае и Центральной Азии («Палестинский сборник», вып. 26 (89), филология и история, Л., 1978, стр. 77-85).

Դեպի Կենտրոնական Ասիա և Չինաստան հայերի ձեռնարկած ուղևորությունների, նրանց գաղթավայրերի և հայ-չինական առնչությունների վերաբերյալ փաստական

Այդ շրջանում հայերի ներկայությունը Չինաստանում հաստատվում է վերջերս գիտական շրջանառության մեջ դրված հետևյալ փաստով. Թան դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանից պահպանվել են բազմաթիվ հախճապակե գունազարդ արձանիկներ, որոնք պատկերել են Չինաստանում հայտնի տարբեր ազգությունների ներկայացուցիչների՝ ույգուրների, ալթայցիների, թոխարցիների, կաշգարցիների, քաշմիրցիների, խորեզմցիների, պարսիկների, սեմական ժողովուրդների (հավանաբար հրեայի) իրենց բնորոշ ազգային դիմագծերով, տարազով, երբեմն էլ զբաղմունքը հատկանշող որևէ մանրամասնով: Այդ արձանիկների շարքում հատուկ տեղ են գրավում հայի ազգային հատկանիշներով՝ արծվաքիթ, սև բեղ-մորուքով տղամարդկանց 3 արձանիկներ, պատկերված ծալապատիկ նստած դիրքով, յուրաքանչյուրի գոգին գինով լի մեկական տիկ[48]: Այս արձանիկները ոչ միայն հաստատում են հայերի ներկայությունը Չինաստանում վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում, այլև հնարավորություն են տալիս ենթադրելու, որ նրանք, ինչպես ուրիշ շատ երկրներում (Աֆղանստանում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Կիևի մերձակայքում և այլն), այնպես էլ այստեղ՝ Չինաստանում, ունեցել են իրենց գաղթօջախները և զբաղվել նաև խաղողի մշակությամբ ու գինեգործությամբ:

Արևելք-արևմուտք տնտեսական ու մշակութային առնչություններն ավելի մեծ ծավալ ստացան զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, մանավանդ խաչակրաց արշավանքներից հետո: Հայաստանն այդ ժամանակ ևս տարանցիկ առևտրի կարևորագույն անցուղիներից մեկն էր հանդիսանում, իսկ Միջերկրականի ափին ստեղծված ու բարգավաճող Կիլիկյան հայկական թագավորությունը դարձել էր միջազգային առևտրի նշանավոր հանգուցակետերից մեկը:

Ֆրանցիսկյան միաբանության անդամ Անդրեաս Պերուջացի

նյութերը հմտորեն ի մի են բերված Ժ. Դովիեի "Les Arméniens en Chine et en Asie Centrale au moyen Age" (Mélanges de sinologie offerts à M. Paul Damieville, II, Paris, 1974, էջ 1-17) հոդվածում, որի բովանդակությանը ծանոթացանք, երբ ներկա ներածականը մեծ մասամբ արդեն շարված էր:

[48] «The werterners among the figurines of the t'ang dynasty of China», by Jane Gaston Mahler, Roma, 1959, գունավոր ներդիրը՝ 94-95-րդ էջերի արանքում և սև-սպիտակ լուսանկարները պատկերների բաժնում, IIIa, b, c, d:

քարոզիչը 1326 թ. Չինաստանից գրած իր մի նամակում հայտնում է, որ Ցյուանչոու (պարսիկների կողմից Զեյթուն կոչված) նավահանգստային քաղաքում, որ գտնվում է Թայվանի նեղուցի Ցյուանչոու ծովածոցում, «մեծահարուստ մի հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի, որը արքեպիսկոպոսի (այսինքն՝ Ջովաննի Մոնտեկորվինոյի) հրահանգով դարձվել է կաթողիկե տաճար»[49]: Այդ վկայում է, որ XIV դարի սկզբներին հարավարևելյան Չինաստանի ծովափնյա վաճառաշահ քաղաքներում այնքան հաճախակի է եղել հայերի երթևեկը, որ եկեղեցի ունենալու անհրաժեշտություն է առաջացել:

Հետաքրքրական տեղեկություն է պահպանվել նույն այդ ժամանակաշրջանում Չինաստան այցելած նշանավոր մի հայ գործչի մասին. Անտոն Հայ է կոչվել նա և որպես նավապետ ծառայել է Վենետիկի հանրապետությանը. պահպանվել է նրա կտակը՝ շարադրված ծերունազարդ ու վաստակած նավապետի կողմից XIV դարի վերջալույսին: Նիկողայոս Սպաթարիոս-Միլեսկու վկայությամբ, որ 1675-1678 թթ. գլխավորել է Չինաստան առաքվող ռուսական դեսպանությունը, մետաքսի արտադրությունը, թղթանոթ ձուլելու գաղտնիքը, կողմնացույցի օգտագործումը նավագնացության մեջ և այլ նորույթներ չինացիներից սովորելով տարածել են Եվրոպայում հայր Օդորիկոսը (Պորդինոնցին), Անտոն Հայը և Մարկո-Պոլոն[50]:

Ցյուանչոու քաղաքում եկեղեցի կառուցած հայ տիկինը, Անտոն Հայ նավապետը և տասնյակ ու հարյուրավոր այլ հայեր Չինաստան էին հասել ծովային երթուղիներով: Սակայն Չինաստանի հետ տնտեսական կապեր էին հաստատված նաև կարավանային այն ճանապարհներով, որոնք անցնում էին Միջին Ասիայով և Կաշգարից մտնում Չինաստան: Գիտության մեջ վաղուց արդեն հայտնի է Բալխաշ լճի ավազանում, Սեմիրեչյե (Յոթնագետք) կոչվող երկրամասի Փիշպեկ գյուղի քրիստոնեական գերեզմանատա-

[49] Рихард Хенниг, նշվ. աշխ., էջ 145:

[50] Տե՛ս Н. Спафарий, Описание первыя части вселенныя, именуемой Азии, в ней же сосотоит китайское государство с прочими его городы и провинции, Казань, 1910, стр. 24-25; Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 71-173:

նը հայտնաբերված այն տապանաքարը, որի վրա հայերեն և ասորերեն փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Տէր Յովան Հայոց եպիսկոպոս. ի թվ. Հայոց էճԻԲ (1323) գրեցաւ յիշատակարանս»: Հայոց եպիսկոպոսի գերեզմանի առկայությունն այս հեռավոր երկրամասում և նույն կողմերում Սուրբ Մատթեոսի անունով հայկական ինչ-որ վանքի երբեմնի գոյությունը (վկայված եվրոպական միջնադարյան քարտեզներով) խոսուն փաստեր են Չինաստանի և մերձակա երկրների հետ կարավանային այս ճանապարհով հայ վաճառականների ունեցած տնտեսական կապերի մասին[51]:

Հաջորդ տեղեկությունը մեզ հաղորդում է XVI դարի երկրորդ հիսնամյակի մեծանուն հայ բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին՝ իր «Տաղ Աստուածատուր խաթայեցուն» ստեղծագործության մեջ[52]: Նա պատմում է, որ բաղիշեցի մի հայ վաճառական՝ Մխիթար անունով, Ատրպատական—Ղում-Իրաղ—Խորասան ուղեգծով մեկնել է Բուխարա և Սամարղանդ, այնտեղից էլ՝ «Հնդուստան», «հուչկաւոր քաղաքն Խթայ», «մերձ սահմանացն Չինումաչինայ»: Չի կարելի ասել, թե մեր բանաստեղծը ճշգրիտ պատկերացում ունի աշխարհագրական այս հեռավոր վայրերի մասին, սակայն նրան հասած լուրերը ոչ միայն հավաստի են, այլև ուշագրավ ղալմուխների (կալմիկ) ու չինացիների քաղաքական հակամարտությունների մասին տեղեկություններով: Մխիթարի այս կողմերում եղած ժամանակ «Խըթայու զօրքըն» մեծ արշավանք է կազմակերպել ղալմուխների դեմ ծնկի բերել ու գերել նրանց. «ազգ մի բովանդակ ամէն գերեցին»,- գրում է Գր. Աղթամարցին: Բաղիշեցի վաճառականն այդ գերիներից մի պատանի ծառա է գնել, բերել իր հետ Հայաստան ու դարձրել քրիստոնյա: Հետագայում այդ պատանին խոշտանգվել է մահմեդականների կողմից, իսկ նրա վկայաբանական պատմությունը՝ նյութ դարձել գրական ստեղծագործության: Մխիթարը, ղալմուխ այդ ծառայի հետ միասին, անշուշտ արևելյան

[51] Տե՛ս Н. Я. Марр, Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью 1323 г. ЗВОАО, том VIII, стр. 344-349; В. В. Бартольд, Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, стр. 45; Լ. Խաչիկյան, Հայ պատմագրության անհայտ էջերից («Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 4, էջ 243-244):

[52] Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, քննական բնագիրը և ծանոթագրությունները Մայիս Ավդալբեգյանի, Երևան, 1963, էջ 121-123:

ապրանքներով բեռնավորված, տունդարձի այլ ճանապարհ է ընտրել, անցնելով Կասպից ծովի հյուսիսով, Ալանաց դռնով մտել է Անդրկովկաս, ապա ծանոթ ճանապարհներով հասել իր հայրենի քաղաքը:

Այժմ երկու խոսք պորտուգալացի ճիզվիտ Բենեդիկտ Գոեսի և նրա հայազգի ուղեկից Իսահակի մասին, որոնց ջանքերով պարզաբանվեց աշխարհագրական մի հին թյուրիմացություն: Մինչև XVII դ. սկզբները, եվրոպացիները չգիտեին, որ Խաթայը (Կիտայ), Խանբալիկ մայրաքաղաքով, նույն Չինա երկիրն է Պեկին մայրաքաղաքով: Գոեսը, որ մի քանի տարի ապրել էր Հնդկաստանում, 1602 թ. դուրս գալով Լահոր քաղաքից՝ ուղևորվեց դեպի Չինաստան: Այդ դժվարին ու եվրոպացու համար անսովոր ճանապարհորդությունը հաջողությամբ ի կատար ածելու համար, անշուշտ հետևելով գիտակ մարդկանց խորհրդին, նա զգեստավորվեց հայկական տարազով: Ուշադրության արժանի և կարևոր վկայություն է այս, հավաստիչ այն իրողության, որ հայերի երթևեկը կարավանային այս ուղեգծով այնքան սովորական է եղել տեղացի ժողովուրդների համար և նրանք այնպիսի բարի անուն են ունեցել այդ երկրամասերում, որ հայի տարազով ծպտվելը համարվել է հաջողակ երթևեկության երաշխիք[53]:

[53] Ուշագրավ է, որ XVI-XVII դդ. Եթովպիա այցելող կաթոլիկ կղերականները նույնպես հայի տարազ էին հագնում, անշուշտ տեղյակ լինելով, որ այդ երկրում հայերն ազատ ելք ու մուտք ունեն և բարյացակամ վերաբերմունքի են արժանանում: Այս մասին տե՛ս Б. А. Тураев, Памятники эфиопской писйменности. Из армяно-абисинских отношений СПб., 1912, նաև «Արարատ», 1912, էջ 542:
Տեղին է այստեղ մեջ բերել նաև Էմանուել Կանտի խոսքերը հայ վաճառականների աշխարհատարած կապերի և միջազգային ապրանքափոխանակության բնագավառում կատարած կարևոր դերի մասին: Նա գրում է. «Մյուս քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ, տիրապետում է առանձնահատուկ գործարար ինչ-որ ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափերին գտնվող Կորսո հրվանդանը: Այդ հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ ու աշխատասեր այդ ժողովրդի, որը շարժվելով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կտրում-անցնում է հին աշխարհի ողջ տարածքով և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ» (Э. Кант, Антропология с прагматической точки зрения. Сочинения в шести томах, т. 6, М., 1966, стр. 527-573):

1604 թ. դուրս գալով Յարքենդից, Գոեսն ուղևորվեց Կաշգար, ապա անցնելով Աքսու, Քուչա, Կարաշահր (Չալիշ), Թուրֆան և Համի քաղաքներով, հասավ Սու-չժոու: Կարաշահրում նա հանդիպեց Խանբալիկից ժամանող մի կարավանի և տեղեկացավ, որ այնտեղ (Խանբալիկում) է գտնվում հայր Մատթեոս Ռիչչին, իսկ նա ստույգ գիտեր, որ այդ քարոզիչը հաստատված է Չինայի մայրաքաղաք Պեկինում: Եվ այսպես՝ պարզվեց, որ Խանբալիկն ու Պեկինը նույն քաղաքներն են, ուստի Խաթայն ու Չինան էլ՝ նույն երկրները: Գոեսն իր մահկանացուն կնքեց 1607 թ. Սու-չժոու քաղաքում: Գոեսի ուղեկից հայազգի Իսահակը խնամքով պահեց նրա օրագրությունները, հասցրեց Պեկին, և իրենց ճամփորդության հանգամանքների մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով՝ նյութ մատակարարեց հայր Նիկողայոս Տրիգոտիուսին: Այս կղերականն ամփոփեց արժեքավոր այդ տվյալները և 1618 թ. Քյոլնում հրապարակեց գիտական մեծ նորույթներ պարունակող «De christiana expeditione apud Sinas suscepta ab Sociatate Iesu» խորագրով մի աշխատություն[54]:

Վերոհիշյալ Իսահակից ավելի վաստակ է ունեցել թերևս հենց նույն ժամանակներում ապրած մեկ ուրիշ՝ անունն անհայտ հայ գործիչ, որը գրել է «Չինաց պատմություն» խորագրով մի աշխատություն: Կենսագրական բառարանի հեղինակ Մորիերին տեղեկություն է ունեցել, որ Ս. Կրայթենակ անունով մեկը հայերենից թարգմանել է «Historiola de Sinis» գործը, որի ո՛չ բնագիրն է պահպանվել, ո՛չ էլ թարգմանությունը[55]:

Սակավաթիվ այս փաստերը, լրացնելով մեկը մյուսին, հնարավորություն են տալիս հանգելու այն եզրակացության, որ Չինաստանը վաղնջական ժամանակներից ծանոթ է եղել հայ վաճառականներին և այլ զբաղմունքի տեր մարդկանց՝ ինչպես հյուսիսից՝ կարավանային ճանապարհներով,

[54] В. Бартольд, История изучения Востока в Европе и России, изд. второе, Л., 1925, стр. 89-92; Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 467: Հ. Քյուրտյան, Ասիո խորհերը հայ մը 1602-ին («Սիոն», 1931, էջ 181-184):
[55] Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 23, ծան. 2:

այնպես էլ հարավից՝ ծովային ճանապարհներով[56]:

Հովհաննես Ջուղայեցու Հաշվետումարից տեղեկանում ենք, որ բացի վերոհիշյալ երթուղիներից, Չինաստանի հետ առևտրական կապեր հաստատելու համար հայերն օգտվել են նաև Հնդկաստանից՝ Նեպալի ու Տիբեթի վրայով դեպի Չինաստան ձգվող դժվարանց ճանապարհներից, որոնք նրանց հասցրել են Սինին քաղաքը: Այդ մասին կան և ուրիշ տեղեկություններ, մանավանդ XVIII դ. սկզբներից, երբ այդ քաղաքն է այցելել կաթոլիկ քարոզիչ Հոփգիսը ու զրույց ունեցել այդտեղ հաստատված հայերից մեկի հետ[57]: Նշանավոր արևելագետ Պոնիեի տվյալներով, որ անձամբ շրջագայել է Կենտրոնական Ասիայի երկրամասերում, նեստորական քարոզիչների հետ միասին Չինաստանի սահմանամերձ Սինինում և Տուպա-Չինգ պարսպապատ քաղաքում եղել են նաև հայեր: Նա, հենվելով ամերիկացի մի ուղևորի տվյալների վրա, հայտնում է նաև, որ այդտեղ հաստատված հայերը բնաջնջվել են տեղացիների կողմից[58]:

Հայ-չինական միջնադարյան առնչությունների մասին համառոտ այս ակնարկն ավարտելով, կրկին դառնանք Տիբեթի Լհասա մայրաքաղաքը և հետևենք մեր վաճառականի գործունեությանը:

7

Հաստատվելով Լհասայում, Հովհաննեսն սկսում է վաճառել իր հետ բերած ապրանքները՝ նախ իր հայրենակիցներին՝ Ծատուրին, Մելիքջանին, Աբրահամին և այլոց, հաճախ արժեքը մեկ տարի հետո ստանալու պայմանով: Այսպես, օրինակ, գրանցումներից մեկում ասված է. «Ծախեցի Ծատուրին է (7) քարբարի լխօռ, որ էր վաղնն ժԶ (16) թանկայքաշ, մին տարի վաղայ, որ գնայ Ս[ն]նկէն գոյ՝ տայ», կամ «Պօղոսի որդի Մելիքջանին

56 Ըստ որոշ տվյալների, XVIII դ. սկզբներին Կանտոնում եղել են մեկ անգլիացի և մեկ դանիացի վաճառականներ, իսկ հայեր՝ «երեսունի մոտ» (Դերենիկ եպս. (Փոլադյան), Չինաստանի հայ վաճառականները և Հովհաննես Ղազարյան («Սիոն», 1959, էջ 276-277):

57 Տե՛ս Հ. Եփրեմ Զագրեյան, Պատմություն Հայոց, Վիեննա, 1872, էջ 413:

58 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Գ. Առաջին մաս, Գահիրե, 1961, էջ 284-285:

ծախեցի էս, որ գրած այ... (թվարկում է նախօրոք համարակալված քանդրքարները՝ 64 թանկայի քաշով), մին տարի վաղայ, որ Սնկէն աղարկէ տեղս» և այլն: Բացի թանկագին քարերից, Հովհաննեսն իր հայրենակիցներին արծաթ է տալիս, 7-ին 1 հարաբերությամբ ոսկի ստանալու պայմանով: Նույն Մելիքջանը, օրինակ, ստանում է 504 (19 կգ) արծաթ «մին տարի վաղայ, ոսկու վերայ... է (7) թանկ արծաթին մին թանկաքաշ խամէր ոսկի, որ գնայ Սնկէն աղարկէ, կամ թէ գոյ՝ տայ»:

Սակայն, բնականաբար, գնորդների մեծամասնությունը տեղացի վաճառականներ ու ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներ են. Հովհաննեսը հատկապես սերտ կապերի մեջ էր Մունը դեվ, Կանաչնքու և Ջեկալիան նիվարների (նեպալցի վաճառականների) հետ, որոնց քանիցս վաճառում է սաթ և այլ թանկագին քարեր, արժեքի դիմաց մուշկ ստանալու պայմանով:

Լհասայում Հովհաննեսը հիմնականում գնում է մուշկ[59], թեյ և ոսկի: Վերադարձի նախօրյակին, տարիների ընթացքում գնած մուշկը նա լցնում է 18 պարկերի մեջ և հատուկ «քաթայով» ի մի բերում մուշկի գնումների մասին Հաշվետումարում կատարած կարևոր բոլոր գրառումները: Լհասայից իր հետ դուրս է բերում 757,5 սեր (483 կգ) մուշկ: Նրա գնած ոսկու կշիռն է 5 կգ 130 գ: Իր հետ Լհասայից դուրս է բերում նաև բազմաթիվ այլ ապրանքներ՝ գեղնապղնձե ամաններ, չինական հախճապակի, թանկարժեք գործվածքներ, համեմունք, թամբաքու և այլն:

1688 թվականի փետրվարի 8-ին Լհասայում մեռնում է Մելիքջանենց Մաթոսը, Հովհաննեսին «վաքիլ» (լիազոր) է կարգում տնօրինելու իր գույքն ու ապրանքը: Այս կապակցությամբ Հաշվետումարում բացվում է նոր բաժին, ուր մանրամասնորեն գրանցումներ են կատարվում բոլոր այն գործարքների մասին, որոնք վերաբերում են հանգուցյալ Մաթոսի թողած դրամին ու գույքին:

Մեր վաճառականը հրաժեշտ է տալիս Տիբեթի մայրաքաղաքին 1691

59 Մուշկը (muscus) խիստ հոտավետ այն նյութն է, որ արտադրում են որոշ կաթնասուն վայրի կենդանիների, հատկապես մշկայծյամի արուները: Միջին դարերում օծանելիքի և բժշկության մեջ խոշոր չափերով օգտագործվող այս նյութը շատ բարձր էր գնահատվում միջազգային շուկաներում:

թ. հունիսի 19-ին և եկած ճանապարհով ուղևորվում Հնդկաստան: Հուլիսի 1-ին հասնում է Ջիկիշայ, հուլիսի 28-ին՝ Քուլթի, օգոստոսի 1-ին՝ Քասալ: Այս երկու վայրերի միջև ընկած դժվարանցանելի ճանապարհը կտրելիս մեր լռակյաց վաճառականը գրանցում է այսպիսի տողեր. «Այդ ճանապախըն ջուրն տարէլ այ. դժոխկին ճանապախն այ, որ մազէ կարմունճըն պիտի յանց կալ»: Այնուհետև, անցնելով Կիստի ու Սանքո բնակավայրերով, օգոստոսի 18-ին հասնում է Քաթմանդու, այստեղ վաճառում է որոշ ապրանքներ և գնում մոմ, հիլ, թուղթ, «դեղնապղնձե ճրագ», ձկնորսական ցանց, զանազան գործվածքներ և այլն:

1691 թ. նոյեմբերի 26-ին Քաթմանդուից պետք է կարավան դուրս գար, որի հետ մեկնելու էր նաև Հովհաննեսը: Սակայն քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով նա ստիպված մի քանի ամիս ևս մնում է Նեպալում: Այս առթիվ կատարել է հետևյալ գրանցումը. «Համիրայ Ա(1)-ումն, որ Նէքպալէն կարաւանն դուս կէլնուն ալհալ Մաքվանփուռ նիվար Սպանդիար խանն առէլ այ բաշխիցն, կռիւ ունեն, ճանպախն բանդ այ: Տեսնունք հոգին սուրբն ինչ կառաջնորդէ: Տէր Յիսուս մեր շարժն պախեւ, մին ազատում տաս, խեղջ անք»:

Հովհաննեսը մարդ է ուղարկում Դարբանգահ, որ «Նաւապէն դատակ խանէ ճանապխի խմար»: Քիչ հետո նա կրկին անդրադառնում է այս խնդրին ու գրում. «Բալգիէն, որ գնացել էր Դարբանկայ, նավապն յառաջմէ դատակ չէր տվէլ, թէ թամամ երկիրն պաւառն բռնէլ այ, մին խաթար այ նրնէ ջուղայն ո՞վ կը տայ: Յեռնէ, որ Փաթանու բշմրցիքն էլ եկել են Դարբանկայ, դատակ էր տվէլ»:

Դարբանգահի նավապից ճանապարհվելու արտոնություն ստանալով, 1692 թ. մարտի 11-ին, Հովհաննեսը Քաթմանդուից դուրս է գալիս, մեկ օրից հասնում է Բագգամ (Բհագգաոն), այնուհետև անցնելով Քամպու, Սանքու, Գոլխիբաս բնակավայրերով, մարտի 19-ին հասնում է Պառրինկայ՝ Հնդկաստանի սահմանագլխի առաջին քաղաքը: Նրա անցած հաջորդ կայաններն են՝ Կոդրայհայ, Ըռաջվարայ, Դամամի, Բաթնայայ, Նարաինգաթ, Գագրիգաթ, Ջանտեր: Այս ճանապարհի մի հատվածը (Ըռաջվարայից Բաթնայա) անապահով է եղել. Հովհաննեսն ու նրա ուղեկից քաշմիրցի վաճառականները ճանապարհն անվտանգ անցնելու համար 12 հեծյալ պահապաններ են վարձել:

Մարտի 31-ին Հովհաննեսը հասնում է Մուզաֆարփուռ, այնուհետև Հաջիփուր, իսկ ապրիլի 3-ին՝ Փաթնա: Այստեղ մնում է (մի քանի օրով կրկին Հաջիփուռ այցելելով ու դառնալով) 7 ամիս:

Փաթնայում Հովհաննեսը բնակություն է հաստատում այն տանը, որ Նիկող-դարձող ջուղահայ վաճառականների համար վարձել էր ոմն վարպետ Պետրոս («Վարպետ Պետրոսն մին օդայ էր քրէ բռնէլ, որ ջումիաթ գալող գնացող վեր ին գալման») և սկսում է առևտուրը: Ընուփ գալայի միջնորդությամբ վաճառում է իր և հանգուցյալ Մաթոսի ոսկին, Նեպալից բերած մոմը և այլն ապրանքներ: Գնում է 50,5 լիտր սուպոն, 68 լիտր ատրաք, 22,5 սեր հալիլա (հնդկանուշ), 14 ղայլան, թանկագին քարեր (զմրուխտ, լալ), թանկարժեք գործվածքներ և այլն: Հունիսի 30-ին մի քանի օրով գնում է Բիհար, ուր ևս գոյություն է ունեցել հայկական գաղութ իր եկեղեցիով (այստեղ «ժամուց» է տվել):

1692 թ. հոկտեմբերի 24-ին Լհասայից բերած իր բեռների մի մասը բարձելով նավի վրա, Գանգեսով նոյեմբերի 2-ին հասնում է Ըռաճմել (Ռաջմահալ). 7 օր այստեղ մնալուց հետո շարունակում է գետային ճամփորդությունը և նոյեմբերի 16-ին հասնում է Հուկլի: «Աստուծոյ ողորմութեամբն,- գրում է նա,- Դամայ ԻԱ (21)-ումն ապրանքով սալամաթ Հուկլի բանդարին դախիլ եղանք»: Հայ վաճառականներից այստեղ հիշատակվում են Ջուղայեցի Լուսիկենց նշանավոր գերդաստանի անդամներից Մարութն ու Խոջին, Ջանումի որդի Հովհաննեսը, Հովհաննեսի որդի Փանոսը, ոմն Վարդանես ու Գրիգոր: Հիշատակություն կա նաև Հուկլիի հայկական եկեղեցու մասին, որի քահանային պատարագի համար Հովհաննեսը դրամ է տվել:

Հովհաննեսի Տիբեթ մեկնելու տարում (1688 թ.) Արևելյան Հնդկաստանի անգլիական ընկերությունը պայմանագիր է կնքել խոջա Փանոս Քալանթարի հետ, որով վերջինս, հնդկահայ վաճառականների անունից, պարտավորվել էր հրաժարվել ցամաքային ճանապարհներից, և Հնդկաստանից արտահանվող ապրանքները փոխադրել Եվրոպա անգլիական ընկերության նավերով՝ օվկիանոսային ճանապարհով[60]: Հավանաբար հենց այս

[60] Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 450:

պայմանագրի թելադրանքով, Հովհաննեսը, նոյեմբերի 31-ին, ինչպես ինքն է գրում՝ «սուպոնըս բաղցի տանեմ Կալկաթայ՝ տամ ինկլիզին»: Երկու օրից նավով հասնում է Կալկաթա և անգլիացիներին 213 ռուփիով վաճառում 42 լիտր 25 սեր (241 կգ) սուպոն:

1692 թ. դեկտեմբերի 4-ին Հովհաննեսը Կալկաթայից վերադառնում է Հուգլի, և այստեղ էլ ավարտվում է նրա մեծարժեք օրագիրը:

8

Հետևելով Հովհաննես Ջուղայեցու 1682-1692 թթ. թափառումներին, մենք միաժամանակ փորձեցինք ցույց տալ, թե նա և նրա հետ առնչվող մյուս հայ վաճառականները հիմնականում ի՞նչ էին ներմուծում Հնդկաստան, Նեպալ ու Տիբեթ և ի՞նչ արտածում այդ երկրներից: Այդ հարցը, սակայն, արժանի է հատուկ ուշադրության, որովհետև, բացի այս կամ այն առիթով մեր կողմից հիշատակված առուծախի հիմնական ապրանքներից, Հաշվետումարի էջերում բազմաթիվ տվյալներ կան հարյուրավոր այլ ապրանքների, դրանց ձեռքբերման վայրերի ու շահավետ վաճառքի շուկաների մասին:

Հարցերի այս խմբի ուսումնասիրությունը, սակայն, կապված է մեծ դժվարությունների հետ, քանի որ Հովհաննեսը, ըստ մեծի մասի, թվարկում է առուծախի առարկա ապրանքները իր ժամանակ ջուղայեցի առևտրականների միջավայրում օգտագործվող ու հասկանալի, բայց մեզ համար այսօր անծանոթ անուններով: Այսպես, օրինակ, նա գրում է «խերապատի» կամ «Լաքայուռի», այսինքն Խեյրաբադ և Լաքայուռ քաղաքներում արտադրված ապրանք. Հաշվետումարից պարզվում է նաև, որ դրանք, անտարակույս, գործվածքներ են, բայց ի՞նչ նյութից (մետաքս, բուրդ, վուշ և այլն) և ի՞նչ ձևով ու որակով պատրաստված, այս հարցերը մեծ մասամբ առայժմ մնում են անպատասխան:

Հովհաննեսի գնած ու վաճառած ապրանքների մասին Հաշվետումարի շահեկան տվյալները, անտարակույս, գրավելու են Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի արհեստագործության և առևտրի պատմության հարցերն ուսումնասիրող մասնագետների ուշադրությունը: Նրանց գործն է լինելու համապատասխան ուսումնասիրություններ կատարելով պարզել հիշատակ-

ված հարյուրավոր ապրանքներից յուրաքանչյուրի տեսականին: Մեր նպատակից դուրս է եղել այդ դժվարին բնագավառի մեջ խորամուխ լինելը, սակայն հատորիս վերջում տրված բառարանում փորձել ենք ըստ հնարավորի բացահայտել ապրանքների անվանց ծագումը (նշելով, թե ինչ լեզվից է փոխառված այս կամ այն անվանումը), միաժամանակ պարզելով դրանց հիմնական հատկանիշները: Քննախույզ ընթերցողն ուշագրավ շատ տվյալներ կարող է քաղել բառարանից: Նկատի ունենալով այդ հանգամանքը և կրկնությունից խուսափելու մտահոգությամբ, ավելորդ ենք համարում համառոտ այս ներածության մեջ թվարկել Հաշվետումարի բոլոր ապրանքների անունները՝ համապատասխան բացատրություններով: Սակայն կարծում ենք, որ օգտակար կլինի այստեղ ևս, առանձին-առանձին խմբերով, ներկայացնել տարբեր ապրանքատեսակների՝ գործվածքեղենի, հագուստակապուստի, հոտավետ նյութերի ու համեմունքի, թանկագին քարերի, տնային գործածության իրերի, սննդամթերքի տարբեր տեսակների անունների ընտրանին:

Տարբեր տեսակի գործվածքեղենից, օրինակ, հիշատակված են հետևյալները. ալաջայ, ալիգադնի, ատլաս, գաղայ, բարակ գաղայ, բարգար, բաֆտայ, բիհարի խասայ, բուրէ, գազի, գաթէ, գուլբանդի, գունի դերգազի, դարիայ, եափնճի, դուֆ, ըմըրթի, ըռումալ դաստայ, թալիս, թասար, թիրմայ, թիրպու, լաքայուռի, լոնգրինայ, լոնգրայ, խէրապատի, կուճին, կտաւ, ճովիայ, մախմու զառով, մամուրխանի, մարհամայ, մարմար, մումջամ, շիլայ, շանթի, շափլայ, չիթ (բազմաթիվ տեսակներով), չօթար, չօլայ, ջաջիմ ջուլ, ջվալ, սամսայ, սուզանի, սուսի, սրնճի, սօլադագի, վառփուշ, փաթկայ (նաև՝ զառով), փաթու, փալանկփուշ, փէրի, քանաւի, քէչայ, քուռայ, կտաւ, ֆութայ:

Դրանց մեջ կան մետաքսից, բրդից, բամբակից, վուշից և այլ նյութերից ամենատարբեր եղանակներով պատրաստված գործվածքներ, այնպիսիք, որոնք խիստ թանկարժեք լինելով արտադրվում էին միայն ֆեոդալական վերնախավի պահանջները բավարարելու համար (դարիայ, լաքայուռի, կուճին, մամուրխանի, մարմար, շափլայ, զառով փաթկայ, քանթի, ֆութայ և այլն), և ընդհակառակը՝ էժանագին ու կոպիտ կտորեղեն (չիթ, ջուլ, ջվալ, վառփուշ, փալանկփուշ և այլն), որոնց սպառողները հասարակության ստորին խավերին պատկանող անձինք էին:

Նույն պատկերն է ստացվում նաև հագուստ-կապուստի, տնային գործածության համար արտագրվող գործվածքեղենի ու կոշկեղենի տեսականու մասին պահպանված նյութերի քննությունից: Ստորև տալիս ենք նաև այդ կարգի ապրանքների ցանկը. ատրաք, արխալուխ, դամայ, դաստախան, թաղիք, յախն, յահաֆ, կապայ, հակաբայ, մանդիլ, միզար, մուզայ, մուշտակ, յուղի, շալ, չաքմայ չիրայ ջըդմայ, սարփայ, սաղրի, սամպուր, աֆրայ, փադարի, փապուճ, փարդակ, քաղաք, քէշ:

Համեմունքը, բուրումնավետ նյութերն ու դեղաբույսերը միշտ էլ կարևոր տեղ են գրավել հայ վաճառականների կողմից արևելյան երկրներից արտահանվող ապրանքների մեջ. այդ բացահայտվում է նաև Հաշվետումարի գրանցումներով: Բազմաթիվ գրանցումներում հիշատակված են մասնավորապես հետևյալները. աթարի, աթըր, բանկ, բէհդանայ, բիստ մուշկ, բուղդունճ, թամբաքու, լաչիդանայ, հալիլայ, մուշկ, չիլ, թեյ, ռէվանտ, սրփառի, սմաք, կոչվողները, որոնցից մուշկն ու թեյը Տիբեթից արտահանված հիմնական ապրանքներից են եղել:

Հովհաննես Տեր-Դավթյանի առևտրական գործունեության մեջ թանկագին քարերի ու զարդեղենի առուծախը նույնպես ուշագրավ տեղ է գրավում. ագեղ, բլոր, բուրղու, գոզլու, գ, օռ զմրութ, թանձու, թասպի, թավիզ, թօլօղ, մարգարիտ, քարբար, քարատալ, քաֆ, սրանք են, ահա, նրա հիշատակած այդ տեսակի ապրանքները, ըստ որում քարբարը (սաթ), ինչպես ասել ենք արդեն, նրա կողմից Տիբեթ տարած հիմնական ապրանքն է եղել:

Հաշվետումարի մեջ հետաքրքրական տեղեկություններ կան նաև տարբեր տեսակի ներկերի (լեղակ, լաջվարթ, բանովշայ և այլն), զենքերի ու զինամթերքի (խանչալ, բիլմանի, բարութ, գլուլայ, թամբ, լղամ և այլն), տնային գործածության իրերի և սպասքեղենի (գավաթ, դանակ, թարաղ, թաս չայխօրի, թըֆըլդան, լագան, խավան-դաստայ, կշեռք, ղալիան, ճրագ, նալբաքի, ութու, սուրայի, քասայ և բազմաթիվ այլ իրեր) մասին:

9

Հաշվետումարի գիտական արժեքն ավելի է բարձրանում այն ստույգ տվյալներով, որ գրանցված են բոլոր ապրանքների չափի ու կշռի և գնի մասին՝ անխտիր: Բազմաթիվ են տվյալները նաև վաճառված ապրանքների

գների վերաբերյալ. բացառություն են կազմում միայն այն ապրանքները, որոնք առաքվել են Սպահան, Բասրա կամ մի այլ վայր, կամ էլ վաճառվել են 1692 թվականից հետո:

Տնտեսագետ-պատմաբանների խնդիրն է Հովհաննեսի հաղորդած այդ տվյալների արժեքավորումն ու մանրակրկիտ վերլուծությունը: Այդ ևս մեր նպատակից դուրս համարելով, փորձում ենք ուշադրություն հրավիրել մի քանի գրառումների վրա, որոնք վերաբերելով հիմնականում սննդամթերքի շուկայական մանրածախ գներին, նպաստելու են Հնդկաստանի և հարևան երկրների բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության գործին:

1692 թ. սեպտեմբերի 6-ին Հովհաննեսը Փաթնայում գնել է «ԺԳ (13) լիտր ԺԱ (11) սէր բրինձ», վճարելով 17 ռուփի: Հնդկաստանում գործածության մեջ եղած աքբարի լիտր կոչվող չափը կշռում է 25 կգ 509 գրամի. սերը, լինելով մեկ լիտրի քառասուներորդ մասը, կշռում է 637 գրամի: Ուստի մեր վաճառականը գնել է շուրջ 400 կգ բրինձ 17 ռուփիով, որ 194,4 գ. արծաթի կշիռ պետք է ունենար: Այսպիսով, մեկ կիլոգրամ բրինձը գնել է 0,48 գրամ արծաթով: Բրնձի գնման մասին կա մի այլ տվյալ ևս, ըստ որի մեկ կիլոգրամին վճարել է 0,58 գ արծաթ: Նույն թվականին, նույն քաղաքում գնել է «ԺԴ (14) սէր ալյուր», վճարելով 0,55 ռուփի, այսինքն 6,23 գ արծաթ: 14 սերը գրեթե հավասար է 9 կիլոգրամի, ուստի մեկ կիլոգրամ ալյուրը գնել է 0,69 գ արծաթով: Տիբեթից Հնդկաստան դառնալու ճանապարհին գնել է 3 ոչխար, վճարելով 2,5 ռուփի, հետևաբար մեկ ոչխարին՝ 9,65 գ արծաթ:

Հետաքրքիր է մոտավոր հաշվով որոշել, թե ինչքան գրամ կամ արծաթ էր օրական ծախսում իր սննդի վրա մեր վաճառականը: Այս մասին ևս կան ուշագրավ գրառումներ: Հնդկաստան ժամանելուց գրեթե երկուսուկես տարի հետո նա հայտնում է, որ «ԻԸ (28) ամսէն խօրակի գրինք, ամսէն Զ լանկ (այսինքն՝ 6,5 լանկ), կառէ ջամէն ՃՁԲ (182) լանկ»: Այսպիսով, նա օրական ծախսել է 8,18 գ արծաթ, կամ 0,72 ռուփի:

Խիստ արժեքավոր է Հաշվետումարի այն գրառումը, որ վերաբերում է Տիբեթի մայրաքաղաքում անցկացրած 5 տարիների ընթացքում սննդի վրա ծախսած գումարին. «Թիվն ՃԽ, շբաթ ամսին ԻԱ-ումն (1691 թ. հունիսի 19), օրն երեքշաբաթ Լասուց դուս ելայ. ԾԷ (57) ամսէն խօրակին

պիտի գրեմ արծաթի ջամէն, չուրի խարճըն ԱՃՀԱ (171) լանկ և II (5,5) մախալ բաղի ունեմ. թէ խօրակ այ՝ էս այ, թէ մասրաֆ այ՝ էս այ, թէ բաղի կայ՝ էս այ, որ մին գալամ գրեցի՝ գնայ ջամայ խարճըն դրստվէ»: Ըստ այդմ 57 ամիսների ընթացքում նա ծախսել է ընդամենը 171 լանկ 5,5 մախալ, այսինքն՝ 6 կգ 482 գ արծաթ, ուստի մեկ օրում միջին հաշվով 3,79 գ արծաթ: Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հնդկաստանի համեմատությամբ Տիբեթում կենսամակարդակն ավելի քան երկու անգամ բարձր է եղել:

Բազմաթիվ ու արժեքավոր են Հաշվետումարի մեջ ամբարված տեղեկությունները տարբեր ապրանքների վաճառքից գոյացած շահի մասին: Գիտենք արդեն, որ մեր վաճառականը 1684 թվականին Խուջա քաղաքում գնած իր 16 չարմ (շուրջ 368 կգ) լեղակն ուղարկել էր իր ընկեր Շիրազի Հովհանին՝ Բասրայում վաճառելու համար: Ըստ մի գրանցման՝ «ԺԶ (16) չարմ լեղակի գինն եկաւ մինչև նավին գլուխն խալիս ԳՌԸՃԽ. Է=Լ (այսինքն՝ 3842,33 ռուփի)», կամ 139 թուման 3200 դիան[61]: Շիրազի Հովհանը կատարել է այդ հանձնարարությունը, և իր մի նամակով (որից քաղվածքներ են կատարված Հաշվետումարի մեջ) հայտնում է, թե «ԺԶ (16) չարմ լեղակն Պասրայ ծախէլ ամ, ձեռն այ եկէլ, որ է ջամէն ԲՃԸ (208) թուման ԷՌԳՃՁԵ (7385) դիան»:

Ըստ այդմ, լեղակի վաճառքից Հովհաննեսը 69 թուման 4185 դիան զուտ շահ է ունեցել, որը գրեթե կազմում է իր վճարածի 50%-ը:

1686 թ. հունվարի 13-ին Ագրայում նա գնում է 23 թան փալանկփուշ, վճարելով 29,78 ռուփի: Նույն ապրանքը վաճառում է Քաթմանդու քաղաքում 50,5 ռուփիով: Զուտ շահն է 20,72 ռուփի, կամ շուրջ 71%:

Նույն Ագրայում գնած 60 թան Ուխուզարի չթին վճարում է 56,275 ռուփի: Այդ չթից 7 թանը տալիս է տարբեր անձանց նվեր, 53 թանը վաճառում է Նեպալում 92,28 ռուփիով (մեկ թանը՝ 1,73 ռուփի): Եթե նույն գումարով վաճառեր նաև նվեր տվածը, ապա լրացուցիչ կվաստակեր ևս 13,12 ռուփի: Այսպիսով, զուտ շահն է 49,2 ռուփի, կամ մոտ 88%:

Նույն թվականի փետրվարի 23-ին Շահգադփուռ քաղաքում գնում է

[61] Հովհաննեսը ինքը նախիցս հայտնում է, որ 1 թումանը համարժեք է 27 շահիջահանի ռուփիի:

20 թան փալանկփուշ և 2 թան սուզանի, վճարելով 14,55 ռուփի: Այս ապրանքները Լհասայում վաճառում է 29,27 ռուփիով: Զուտ շահն է 14,72 ռուփի, կամ ավելի քան 100%:

Փաթնայում գնում է մանր-մունր ապրանքներ 7,3 ռուփիով, որոնք Լհասայում վաճառում է 17 ռուփիով: Զուտ շահն է 9,7 ռուփի, կամ 132%: Նույն քաղաքում գնում է կես լիտր չինի շաքար 8,75 ռուփիով: Դրա կեսը, ինչպես ինքն է ասում, «խարճ ան գնացէլ» (այսինքն գործածել է ինքը), մյուս կեսը վաճառել է Նեպալում 8 ռուփիով: Ամբողջը, ուրեմն, կարող էր վաճառել 16 ռուփիով, որով և շահած կլիներ 9,25 ռուփի, կամ 137%:

Նման և ավելի հետաքրքրական տվյալներ կարելի է մեջ բերել տասնյակներով: Բայց ցավալի է, որ Հաշվետումարից բացակայում են հենց այն տվյալները, որոնցով կարելի էր պարզել Հովհաննեսի առուծախի հիմնական ապրանքներից՝ թանկագին քարերից, մուշկից, թեյից և համեմունքից ստացած շահույթի չափը: Իր հետ Տիբեթ տարած թանկագին քարերը (սաթ, մարգարիտ, սարդիոն և այլն) նա հիմնականում փոխանակել է մուշկի ու թեյի հետ, իսկ Տիբեթից բերած այս ապրանքների վաճառքի մասին տվյալները, ըստ երևույթին, գրանցվել են հետագայում, Հաշվետումարի չպահպանված շարունակության մեջ:

Չնայած այդ հանգամանքին, եղած տվյալներն էլ բավական են եզրակացնելու, որ հայ վաճառականները, թափանցելով Հնդկաստանի հեռավոր անկյունները, մանավանդ մուտք գործելով Նեպալ, Տիբեթ ու Չինաստան, իրենց առևտրական գործարքներից մեծ շահ էին ստանում:

10

Տեր Դավթի որդի Հովհաննեսի Հաշվետումարն անգնահատելի սկզբնաղբյուր է Իրանում, Հնդկաստանում, Նեպալում ու Տիբեթում առևտրի ապրանքներից գանձվող մաքսերի և այլ հարկերի տեսակներն ու չափերը որոշելու, ապրանքը և դրամը մի վայրից մեկ ուրիշը փոխադրելու եղանակները, դրամական փոխառությունների ու վարկերի պայմանները պարզելու և հարակից այլ երևույթներ լուսաբանելու համար:

Համառոտակի անդրադառնանք նաև հարցերի այս խմբին:

Նոր Ջուղայից դուրս գալով, Հովհաննեսն իր հետ Հնդկաստան էր

տանում միայն 18 ճոթ (թոփ) մահուդ: Իրանի հողում, մինչև Բանդար-Աբաս հասնելը, նա 4 տեղ «րահտարանա», այսինքն՝ ճանապարհը պահողների օգտին գանձվող տուրք է վճարել. Մահեարում՝ 250 դիան, Եզդխաստում 50 դիան. Շիրազում բեռները «զափան անելու (կշռելու) համար՝ 1 թուման 2100 դիան, «զաղաթ» 1000 դիան, «րահտարանա»՝ 1 թուման 2480 դիան (ընդամենը 2 թուման 5580 դիան), Լառում «րահտարանա»՝ 180 դիան:

Իրանից ապրանք դուրս բերելիս Բանդար-Աբասում պետական պաշտոնյաների կողմից գանձվող մաքսատուրքերի չափի մասին մանրամասն տվյալներ է հաղորդել Կոստանդ Ջուղայեցին. «Բանդար Աբասումն կամ Բանդարի քունկումն, որ նաւէն դուս գոյս, ապրանքն դուս բերես, ինչ ապրանք որ լինի, շահբանդարին գալայն գին կառի, ֆի թումանին ԱՌ (1000) դիան ուշուրն այ, ԳԾԾ. (350) դիան խուրուճն այ, ԱՃԻԲ (122) դիան բռուսումն այ, Ծ. (50) դիան նվխանդի այ, որ քուլի խալջն ֆի թումանին ԱՌԵՃԻԲ (1522) դիան այ»[62]:

Մեր վաճառականի հաղորդած տվյալները որոշ կետերում չեն համընկնում «Աշխարհաժողովի» տվյալներին, վկայելով այն մասին, որ հարկային պաշտոնյաները հօգուտ իրենց, հաճախ խախտում էին սահմանված հարկային սակագները: Հաշվետումարի տվյալներով Բանդար-Աբասում գալալը չափել ու գնահատել է 18 ճոթ մահուդը. ամեն մի ճոթի մեջ հաշվելով 36 գազ ու ամեն մի գազը գնահատելով 2500 դիան, գալալը Հովհաննեսի ապրանքի արժեքը գնահատել է 148 թուման 5000 դիանով. ըստ այդմ էլ գանձել են հետևյալ մաքսատուրքերը.

1. Ուշուր (տասանորդ). գանձել են 1 թումանից 1077,5 դիան, կամ ամբողջի 10,775%-ի չափով (ըստ «Աշխարհաժողովի» գանձելու էին 10%): Հովհաննեսը վճարել է 16 թուման ուշուր:

2. Խուրուճ («ելք», երկրից արտածելու իրավունք ստանալու համար գանձվող տուրք). գանձել են 1 թումանից 360 դիան, այսինքն՝ 3,6%-ը (ըստ «Աշխարհաժողովի» գանձվելու էր 3,5%): Վճարել է 8 թուման 3420 դիան խուրուճ:

3. Ըռսում («տուրքեր») գանձել են ուշուրի և խուրուճի միացյալ

62 Մատենադարան, ձեռ. N 10704, էջ 17բ:

գումարի յուրաքանչյուր թումանի դիմաց՝ 1220 դիան: Ըռսում է վճարել 2 թուման 5620 դիան:

4. Ղավզ դառուղակի (դառուղայից ստացական ստանալու համար վճարվելիք տուրք). գանձել են ապրանքի ամեն մի հակի դիմաց 100 դիան, ընդամենը՝ 600 դիան (այս տուրքն «Աշխարհաժողովի» մեջ չի նշված):

5. Հովհաննեսը 600 դիան էլ տվել է շահբանդարին (նավահանգստի պետին) և նվխանդին, այսինքն՝ գրագրին (ըստ «Աշխարհաժողովի» միայն նվխանդին պետք է տրվեր 50 դիան):

Այսպիսով, 148,5 թուման գնահատված ապրանքի դիմաց, ըստ Կոստանդ Ջուղայեցու, Բանդար-Աբասում գանձելու էին զանազան մաքսատուրքեր՝ 22 թուման 6017 դիան ընդհանուր գումարով, մինչդեռ իրականում գանձել են 24 թուման 240 դիան, այսինքն՝ արտահանվող ապրանքի արժեքի 16%-ը:

Հնդկաստանում գնած ապրանքների մասին տեղեկությունները գրանցելիս Հովհաննեսը, շատ հաճախ, արժեքի վրա բարդում է նաև վճարած տուրքերի գումարը, որով և դժվարացնում է այդ երկրում առևտրական գործարքներից գանձվող տուրքերի ու դրանց չափերի որոշման աշխատանքը: Այս առումով, սակայն, կան և բացառություններ, որոնք հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմելու նաև վաճառվող ապրանքներից Հնդկաստանում գանձվող տուրքերի տեսակների ու չափերի մասին:

«Աշխարհաժողովում» թանկագին քարերից Սուրաթում գանձվող ուշուրի մասին ասված է. «Եւ մաջամին, քարքարին, մարգարթին, և գոզլվին, և այլ ինչ որ նման է սոցանց, որ ջուայիրի գախիլ լինի՝ գին կառնեն, Ռ (1000)–ին ԼԸ Ա (38,5) ուշուր յինք կառուն»[63]:

Հաշվետումարը ճշգրտում է մացնում նաև այս հարցում:

Հովհաննեսը, 1686 թ. նոյեմբերի 26-ին, երբ նախապատրաստվում էր Տիրեթ մեկնելու, գնում է մեծ քանակությամբ սաթ: Այդ առիթով նա գրում է. «Համիրայ Ա (1)-ումն, էկրայ, առի պարոն Ավետիքէն, ջումիաթի յուզուրումն սարքարի ամանաթ քարբարն... եկաւ փողին ջամէն ՌՉԿ (1760) [ռուփի]. էստուր Ճ (100)-ին Դ (4,8) էկրայ ջուահրի չափութրումն

63 Մատենադարան, ձեռ. N 10704, էջ 31ա-31բ, ձեռ. N 5994, էջ 14ա:

գաղաթ (իմա՝ ուշուր) այ գնացել, որ է ջամէն ԳՃԼԳ (333)»:

Ինչպես տեսնում ենք, քահրբարի ընդհանուր արժեքի ոչ թե 3,85 (1000-ից 38,5-ը, ինչպես հաղորդում էր Կ. Ջուղայեցին), այլ 4,8%-ի չափով են ուշուր (գաղաթ) գանձել:

Հովհաննեսը Ագրայից Փաթնա տանող կարավանային ճանապարհի վրա եղած ռախտարխանաները չի թվարկում, հայտնում է միայն իր ապրանքների դիմաց գանձված մաքսատուրքերի ընդհանուր գումարը: «էկրոյ, մինչև Փաթնայ,- գրում է նա,- քշմրցոց խետ միջովի, թէ մանսապդարին (պետական պաշտոնյա) խարճ և թէ Բնարիսէն մինչև Փաթնայ գաղաթ ամ տվել ջամէն ԽԲ (42) [ռուփի]»: Սակայն, Փաթնայից սկսած, նա թվարկում է մաքսատներում իրենից գանձած տուրքերը, այսպես. «Քարբարին, մռջամին և աղեղին բաավանէն մին էր, ջամէն ԸՌ (8000) [ռուփի]: Փաթնայ՝ ջուահրի չափութրումն (գոհարեղենի մաքսատանը) Ճ (100)-ին Ի= (0,3) խարճ տվի [ջամէն] Լ (30) [ռուփի]»: Բացի սրանից, գառուղային տվել է 1 ռուփի և «մութայսադէքոնց (իմա՝ վերակացուներին) խարճ»՝ 3 ռուփի:

Դանտիի մաքսատանը Հովհաննեսը, ըստ երևույթին, իր գոհարեղենը թաքցրել է (այդպես է արել նաև Հաջիփուռում, խոստովանելով, որ «քարբարին բաավանէն նշանց չեմ տվէլ»). Նրանցից գանձել են մաքսատուրքեր մյուս ապրանքների դիմաց: «Դանտու չափութրումն,- գրում է նա,- լեղակին, չթին և փաթանու առած քըսուրին ջանպէ հասիլ, մութասադու, փիադկան գնաց է (7) [ռուփի]»: Գնկինփուռ կոչվող բնակավայրում «հասիլ, նվիսանդի և նաֆարանայ» և գաղաթ է տվել ընդամենը 4,05 ռուփի և այլն:

Սրանք, անտարակույս, մանր ռահդարխանաներ են եղել: Հաջիփուռ քաղաքում, ըստ երևույթին, գտնվում էր Հնդկաստանի և Նեպալի սահմանագլխի գլխավոր մաքսատունը: Այստեղ Հովհաննեսը տարվող ապրանքների դիմաց (չհաշված թանկագին քարերը) վճարել է 16,25 ռուփի մաքսատուրք, Հաշվետումարում արձանագրելով. «Հաջիփուռու չափութրումն ԺԲ (12) բարու լեղակին, էկրայ առած չթին և Փաթանու քըսուրին դասդակին ջանպէ խարճ գնաց, որ քարբարին բաավանէն նրանց չեմ տվէլ, որ է ջամէն ԺԶ (16,25) [ռուփի]»:

Ավելի ամբողջական տվյալներ՝ Հնդկաստանում գանձվող մաքսատուրքերի տեսակների ու չափերի վերաբերյալ գրանցված են Տիբեթից

վերադառնալու և Փաթնա հասնելու կապակցությամբ: Փաթնայում, «սուլթանդանճի չափութրում» (այսինքն՝ սուլթանական կամ կենտրոնական մաքսատանը) Հովհաննեսի Լհասայից բերած ապրանքը գնահատում են 22198 ռուփի (ավելի քան 250 կգ արծաթ) ու գանձում բոլոր մաքսատուրքերը, որ Հաշվետումարի մեջ մեկ առ մեկ թվարկված են այսպես.

1. Հասիլ. ա) բերած «խոտի» դիմաց՝ 100-ին 3,5 հաշվով, ընդամենը 745,3 ռուփի.

բ) «սաղտրբարի» դիմաց՝ 100-ին 1,25 հաշվով, ընդամենը 31,5 ռուփի.

2. Մութասադու խարճ - 12 ռուփի

3. Թաֆիլդարի – 3,35 ռուփի

4. Մուշրուֆի – 15,5 ռուփի

5. Էմինանայ – 15,5 ռուփի

6. Դառուղի – 11 ռուփի

7. Դախիլ խազանայ (մուտքի տո՞ւրք) – 100-ին 0,55 հաշվով, ընդամենը 4,56 ռուփի

8. Նվիսանդի – 6,75 ռուփի

9. Դալալի – 44 ռուփի:

Այսպիսով, Հովհաննեսի կողմից Հնդկաստան ներմուծած 22198 ռուփի (250 կգ արծաթ) արժողության ապրանքի դիմաց նրանից գանձել են ընդամենը 889,46 ռուփի (10 կգ արծաթ) զանազան մաքսատուրքեր, այսինքն՝ ապրանքի արժեքի 4%-ը:

Հետաքրքրական են նաև Նեպալում և Տիբեթում գանձված մաքսատուրքերի մասին Հաշվետումարում գրանցված տեղեկությունները:

Քաթմանդուի ռաջայի կողմից գանձված տուրքերը ընդամենը 167,3 ռուփի գումար են կազմում. դրանց մեջ մտնում է հիմնական տուրքը՝ բէնթի բռօք կոչված, որ վճարել է կանխիկ դրամով՝ 200 մանտրմելի, այսինքն՝ 100 ռուփի:

Բացի տուրքերից, Քաթմանդուի ռաջային, երեք բանսարիներին և բռանիին, Բադգամի ռաջային, փարդանին և երկու բանսարիներին իր ապրանքներից տվել է «փիշքաշներ»՝ տարբեր տեսակի (մեծ մասամբ էժանագին) կտորեղեն, քաղցրավենիք և այլն: Մեկ թան չիթ է նվիրել ռաջդվարի «չափայ առօղին», ինչպես և որոշ գումար՝ բեռները ռաջդվար

տանելու և կնքելու համար: Մինչև Լհասա հասնելը ընդամենը 2 ռուփու արժողությամբ նվեր է տվել Կիստիի փարգանին և 2 ռուփի դրամ Քութիի գեվին:

Լհասա հասնելու երրորդ օրը (1686 թ. հոկտեմբերի 1-ին) Հովհաննեսի բեռները պետական պաշտոնյաների կողմից բացվում են լովրան կոչվող հաստատության մեջ և հաշվի առնվում: Ըստ երևույթին շատ ուրիշ երկրների նման՝ այստեղ ևս առաջին հերթին գնումներ կատարելու իրավունքը պատկանելիս է եղել տեղի իշխողին: Ապրանքներից դալայ-լաման կամ նրա լիազոր-պաշտոնյան (այդ մասին պարզ տվյալ չի գրանցվել) ընտրել է 930 լանկ (34 կգ 144 գ) արծաթի արժողությամբ թանկագին քարեր և այլ ապրանքներ, հայտնելով, որ այդ գումարի մի մասը՝ 182 լանկ (6 կգ 877 գ) արծաթը չի վճարվելու, այսինքն գանձվելու է որպես մաքսատուրք, իսկ մյուս մասը՝ 748 լանկը, վճարվելու է առաջիկայում (վճարումը երաշխավորվում է Հովհաննեսին տրված պարտավորագրով): Նույն թվականի դեկտեմբերի 17-ին Հովհաննեսն իրոք ստանում է այդ 748 լանկ (27 կգ 266 գ) արծաթը: Պարզվում է, սակայն, որ իրեն տվել են շատ ցածրորակ մետաղ. հալելուց ու զտելուց հետո պակասում է 121 լանկ, ուստի նա նույնքան կորուստ է ունենում: Այսպիսով, մեր վաճառականի ապրանքի դիմաց Լհասայի պետական պաշտոնեությունը, փաստորեն, գանձում է 303 (182-121) լանկ, կամ որ նույնն է՝ 11 կգ 450 գ արծաթ:

Լհասայում գանձվող հարկերի վերաբերյալ մեր ասելիքն ամբողջացնելու համար մեջ բերենք նաև սոխունի կոչվող տուրքի մասին առկա տվյալը: Տարբեր առիթներով Հովհաննեսը հայտնում է, որ ամեն մի լիտր մուշկի առուծախի գործարքը կատարելիս, գնորդը պարտավոր է եղել 1 լանկ 37,79 գ արծաթ վճարել պետական գանձատուն, որը և կոչվել է սոխունի:

Բացի ներմուծվող ու արտածվող ապրանքների դիմաց վաճառականներից գանձվող մաքսատուրքերից, Հաշվետումարում, այլևայլ առիթներով, հիշատակված են բազմապիսի այլ հարկեր ու տուրքեր:

Հնդկաստանի տիրակալ Ավրանգզեբը (1659-1707), որի թագավորության տարիներին էր մեր վաճառականը կատարում իր շրջագայությունները Հնդկաստանում, 1679 թ. վերականգնել էր ոչ մահմեդական ժողովուրդներից գանձվող գլխահարկը՝ ջիզիան: Ջիզիայի վճարման երկու

դրույքների համաձայն, այդ հարկի չափը 3,5 ռուփի է եղել, սակայն 1688 թ. Փաթնայում Հովհաննեսը նոքար Պողոսի և իր համար վճարել է գլխահարկ արդեն 9 ռուփի՝ յուրաքանչյուրին 4,5 ռուփի:

Հնարավոր չէ մեկ առ մեկ անդրադառնալ Հաշվետումարում հիշատակված բոլոր հարկային տերմիններին: Ստորև բերում ենք հարկերի ու տուրքերի այբբենական ցանկը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանցից մի մասի ճշգրիտ նշանակությունը դեռևս պարզված չէ:

Բաքայ - դրամի փոխանակման կամ փոխադրության համար տրվող գումար

Բարայի - ապրանք բարձելու վարձ

Բարբանտի կամ բարբաստի - բեռները բարձելու վարձ

Բէնքի - ծառայադրամ

Դալալի - միջնորդին տրվող աշխատավարձ

Դախիլի խարճ - որևէ երկիր ժամանելիս գանձվող մուտքի տուրք

Դառուղակի - դառուղայի օգտին գանձվող տուրք

Դար – որևէ ապրանքի մենաշնորհի համար գանձվող տուրք

Դարվանի - դռնապանի վարձ

Զաղաք - մաքս

Էմինանայ - կշեռքի վարձ

Ըռախտարանայ - ճանապարհները նորոգող ու հսկող պաշտոնյաներին տրվող տուրք

Ըռահդարի - նույնն է նախորդի հետ

Ըրսում - ըստ սովորույթի գանձվող տուրքեր

Թանծիլէ - գեղջի համար տրված գումար

Թաֆիլդարի - պահեստապետին տրվող տուրք

Ինամ - նվեր, պարգև

Խուրուճ - ապրանքի արտահանման համար գանձվող հարկ

Հասըլ - ապրանքներից գանձվող հարկ կամ եկամտահարկ

Հարանանայ - անուրջի համար վճարվող տոկոս

Ղուլումանայ - ծառայադրամ

Մանսապդարին խարճ - բարձրաստիճան պաշտոնյային տրվող տուրք

Մութասադու խարճ կամ մութասադանայ - հարկային վերահս-

ցուին տրվող տուրք

Մուղրմի - միջնորդչեք

Մօրհանայ - ապրանքի բեռները կնքելու վարձ

Նամայումի - չնախատեսված ծախսեր

Նվիսանդի - գրագրին տրվող վարձ, տուրք

Նօվլ - ապրանքը նավով փոխադրելու վարձ

Շահբանդարի - նավահանգստի պետին և քաղաքի առևտրական գործերի հսկիչին տրվող տուրք

Ուշուր - տասանորդ, մի ուրիշ երկիր տարվող ապրանքից գանձվող հիմնական մաքսատուրքը

Չափուրթի խարճ - նավահանգստի պահեստի համար գանձվող տուրք

Չոհիդարի - մաքսատան պետին տրվող տուրք

Ջզիայ - մուսուլմանական երկրներում այլակրոններից գանձվող գլխահարկ

Սարհանայ - նավով ճամփորդելու համար յուրաքանչյուրից գանձվող վարձ

Սարֆարէ - Նեպալում գանձվող տուրքի տեսակ

Սլամաթի - նվեր, ողորմություն

Սմբուքի - նավակի վարձ

Սօխունի - բեռները կապելու կամ ապրանքը գնելու համար տրվող տուրք

Տալի - դալալին տրվող միջնորդչեք

Փարվանըկի - արտոնագիր ստանալու համար տրվող տուրք:

II

Պետական ենթակայության որևէ խոշոր վարչական կենտրոնից կամ ֆեոդալական որևէ տիրույթից ապրանք փոխադրելու կամ վաճառքի նպատակով բերված ապրանքների բեռները բացելու համար անհրաժեշտ է եղել պետական իշխանության կողմից լիազորված պաշտոնյայի կամ տեղի ֆեոդալի թույլտվությունը, որ տրվում էր համապատասխան տուրքերի գանձումից հետո, և օրինական ձև ստանում՝ ներմուծված բեռների վրա

հատուկ կնիք դրոշմելով:

Տիբեթ մեկնելու ճանապարհին Հովհաննեսն ստիպված է եղել 10 օր սպասել Քութիի լեռնանցքում, որպեսզի տեղի իշխողը վերադառնա իր նստավայրն ու կնքի ապրանքների հարկերը: Այս կապակցությամբ նա գրում է. «Քութի ժ (10) օր նըստանք էս ջահտան, որ դէվէն տան չէր թէ բեռներն մըհին. յետոյ արեկ, որ բեռներն մըհեց»:

Տիբեթից վերադառնալուց հետո, Փաթնա քաղաքում «բեռներս դրին օղումն,- գրում է Հովհաննեսը,- դուռն մըհեցին, գրայ դառուղէն գնացել էր Մասի. չուր գայ ոչ՝ հրաման չէ բանալն»:

Որոշ ապրանքների վաճառքի մենաշնորհը պետական մարմինների կողմից կապալով տրվել է անհատ վաճառականների: Փաթնայում, օրինակ, մոմի վաճառքի մենաշնորհը գտնվել է մի «դուքանդարի» ձեռքում, որն իր ցանկացած գինն է պարտադրել այդ ապրանքը ներմուծող առևտրականներին: Հաշվետումարում գրված է. «Տեղս մոմն իջարայ այ, մին դուքանդար այ, դոր կուզէ՝ էնպէս կառոյ»:

Բազմամյա իր առևտրական գործունեության ընթացքում Ջուղայեցին գործ է ունեցել տարբեր երկրների ֆեոդալական վերնախավի իշխողների և բազմաթիվ բարձրաստիճան ու ստորին գիրքի պետական պաշտոնյաների հետ: Շատ դեպքերում նա չի շեշտում այդ անձանց անունները, այլ հիշատակում է նրանց՝ իրենց գրաված պաշտոնի, զբաղմունքի անունով կամ տիտղոսով: Այդ կարգի գրանցումները հնարավորություն են ընձեռել կազմելու ստորև բերվող ցանկը, որի մեջ տեղ գտած տերմինների ավելի հանգամանալից բացատրությունը տրված է վերջում՝ բառարանի մեջ:

Բանսարի – կարավաններին ուղեկցող պատասխանատու անձ

Գումաշտայ – գործավար, գործակատար

Դալալ – միջնորդ

Դանտի կամ դանտիվալե – բեռնակիր

Դառուղայ – ոստիկանապետ

Դէվ, դէվայ – իշխան

Զաղաթվալ – զաղաթ կոչվող մաքսատուրք գանձող պաշտոնյա

Ըռաջայ (ռաջայ) – հնդիկ խոշոր ֆեոդալ, իշխան

Ըռնի – իշխանուհի

Թաֆիլդար – պահեստապետ

Ժուն — *նեպալյան պաշտոնյա (դատավոր)*

Լամայ — *բուդդայական բարձրաստիճան հոգևորական*

Լիֆան — *դատական ատյանի անդամ*

Խան — *զինվորական նահանգապետ*

Ծօտր — *օրենսգետ, իրավագետ*

Մանսապդար — *հնդիկ պաշտոնյա, աստիճանավոր*

Մութասադի — *հարկային վերակացու*

Մուշրուֆ — *ֆինանսական վերստուգիչ պաշտոնյա*

Նազըր — *վերստուգող պաշտոնյա, հսկիչ*

Նավապ — *հնդիկ իշխան, զինվորական նահանգապետ*

Նիվար և նսեփ — *հնդիկ կամ այլազգի առևտրականները Լհասայում*

Նվիսանդա — *քարտուղար, գրագիր*

Շաքանդար — *նավահանգստի առևտրական կառավարիչ, ավագ վաճառական*

Ջօհիդար — *մաքսատան պետ*

Սարդար — *պետ, արհեստավորների գլխավոր*

Սարհադար — *իշխանատեր*

Փարդան — *գործերի կառավարիչ*

Քօթվալ — *քաղաքային վարչության պետ*

12

Հնդկաստանի պատմության մասնագետները նշում են, որ այդ երկրի միջնադարյան պատմության, մանավանդ Աքբարի (1556-1605) տիրակալության ժամանակաշրջանի համար բնորոշ է մուրհակների սիստեմի և առևտրական վարկի լայն տարածումը: Մուրհակների միջոցով դրամական խոշոր գումարների փոխանցումը մեկ վայրից մի ուրիշը և այլ բնույթի վաշխառուական ու փոխանակային գործարքները կատարվում էին այնպիսի հմտությամբ, որ զարմանք էին պատճառում Հնդկաստան այցելող եվրոպացիներին[64]*:*

[64] Տե՛ս К. А. Антонова. Очерки общественных отношений и политического строя могольской Индии, времен Акбара (1556-1605), М., 1962, стр. 121; И. К. Синха, А. Ч. Бенерджи, История Индии, М., 1954, стр. 250.

Տակավին XIII դարում Հնդկաստանում ստեղծվել էին ֆեոդալական համարակարգին հատուկ «բանկային» տներ, որ կոչվում էին քութհի[65]* կամ քոթ (ըստ մեր հաշվետումարի): Ջուղայեցի հայ վաճառականները լայնորեն օգտվում էին միջնադարյան Հնդկաստանի այդ «բանկերից»: Հովհաննես Ջուղայեցին բազմաթիվ գրառումներ է կատարել դրամական փոխադրումների, առևտրական վարկերի, տոկոսով դրամ տալու և այլ գործարքների մասին, որը հնարավորություն է տալիս շատ ավելի հստակ պատկերացում կազմել այդ գործարքների տարատեսակների ու պայմանների մասին:*

Հաշվետումարի մեջ առկա այդ կարգի բազմաթիվ գրանցումներից մի քանիսի հետ արժե ծանոթանալ.

1. «Նադար ամսին Ը-ումն (1684 թ. սեպտեմբերի 8), որ էկրայ պարոն Ավետիքն իմ ՌՌ (1000 ռուփին) յընդվի [էր] արարել (այսինքն՝ փոխադրել էր) Խէրապատ, ուր ջանալ տվէլ այ Ճ-ին Ա (100-ին 1) յընդիավան, ջամէն Ժ (10)»:

2. Տիբեթ մեկնելու նախօրյակին Ագրայից Փաթնա, ամն լումայափոխի անվամբ 1000 ռուփի է փոխանցվել. այդ առթիվ գրված է. «ՌՌ-ի (1000) ռուփի յընդվի արարինք Փաթանայ, որ էս պարոն Ավետկին խըսէլպումն էլ այ գրած, յընդիավան տվի Ճ-ին Ա I – (100-ին 1,275), որ է ջամէն ԺԳ II (13,5)»[66]*:*

3. «Ղամար ԺԴ-ումն (1685 թ. օգոստոսի 11) (Շիրազի Հովհանը Սուքաթից) իմ կոնթէ յընդվի [այ] արարէլ էկրայ, որ խասէլ այ պարոն Ավետիկն՝ ՌՌ (1000 ռուփի), ԽԱ (41) օր վաղայ. իմ թալապն այ պարոն

[65] Տե՛ս А. И. Чичеров, Экономическое развитие Индии перед английским завоеванием, М., 1965, стр. 149; К. З. Ашрафян, Феодализм в Индии, М., 1977, стр. 128.

[66] Դրամական այդ փոխանցման հետ են առնչվում նաև ստորև մեջ բերվող երկու գրանցումները. «Փարանու առաջին վերայ, որ ՌՌ (1000)-ու յընդվի ունի, էս ջամէս Բնարխումն էլ սանցան Fopէն Ծ.-ի (50 ռուփի) ամ յինf առէլ. փօշտբամասով արարի, որ զամ Փարանայ մունշրայ տայ, էս ջանալէ Բնարխէն մինչև Փարանայ յընդիավան ամ տվէլ Ճ-ին Ա (100—ին 1)»: «Փարանայ մեր յընդվի փողէն, որ էր ջամէն ՌՌ (1000 ռուփի), ԵՃ (500 ռուփի) նարմ շախջան յինf առի...»:

Ավետկէն նագար Իէ-ումն (սեպտեմբերի 23), որ է ջամէն ԱՌ (1000): Էստուր յընդիւավան այ տվէլ ճ-ին Դ II (100-ին 4,5), որ տվի ջամէն ԽԵ (45)»:

4. «Այրամ Դ-ումն (1683 թ. դեկտեմբերի 29-ին), էկրայ բիրջու դալալին ձեռնօվն Ա (1) յընդվի գրեցի Սուրաթն՝ Նագարէթին վերայ՝ Վալապդասին քօթումն, ջամէն էր ԳՌԲՃԾ (3250). Էստուր ճ-ին Ը (100-ին 8) յընդիւավան տվի, որ եղաւ յընդիւավանին ջամէն ԲՃԿ. (260)»:

Մեջ բերված և ուրիշ գրառումներից պարզվում է, որ դրամական փոխադրումներ կատարողները իրենց ներկայացուցիչներն ունեին տարբեր քաղաքներում. այսպես, օրինակ, Փաթնա փոխադրած դրամի հաշվից, այդ գործարքը իրականացնողների Բենարեսում գտնվող գրասենյակից, Հովհաննեսն ըստ պահանջի ստացել է 50 ռուփի: Փոխադրումների համար «յընդիւավանի», այսինքն փոխադրավարձի չափը որոշվում էր, հաշվի առնելով հիմնականում փոխադրման վերջնական վայրի հեռավորությունը, գուցեև ճանապարհի ապահովությունը, փոխանցվող գումարի չափն ու այլ հանգամանքներ: Վերը մեջբերված գրառումներից առաջինում փոխադրավարձ է գանձվել փոխանցվող գումարի 1%-ի չափով, գրառումներից երկրորդում 1,275%, երրորդում 4,5%, իսկ չորրորդում նույնիսկ 8%:

Փոխադրական մուրհակով դրամական գործարքներին սովորաբար մասնակցում են երեք անձ՝ մուրհակատուն (տրասսանտ), մուրհակ ստացողը (ռեմիտենտ) և վճարողը (տրասսատ): Հաշվետումարի մեջ առկա մեծաքանակ տվյալներով՝ Հնդկաստանում կատարվում էին դրամական փոխադրության շատ ավելի բարդ գործարքներ, որոնց մասնակցում էին ավելի թվով մարդիկ: Այդպիսի մի փոխադրություն է, օրինակ, վերը մեջբերված 4-րդ գրառումը՝ Հովհաննեսի Ագրայից Սուրաթ փոխանցած 3250 ռուփի գումարը նախ տրվում է Բիրջու դալալին. սա մի «յընդվի» է գրում Սուրաթ Նագարեթի անվամբ, որով վերջինս իրավասու է դառնում Սուրաթում գտնվող «Վալապդասի քօթից» այդ գումարն ստանալու:

Առավել հետաքրքրական է մի այլ գրանցում, որ բերում ենք ստորև.

«Փիշագին թարեգս (իմա՝ 1683 թ. օգոստոսի 30-ից առաջ) ես գրեցի էկրայ պարոն Ավետկին, թէ իմ ջանպէ ԱՌ (1000 ռուփի) յընդվի առեա խէրապատ, որ ինձ խմար գերգազի առուն... գրեա, որ ես տեղս (իմա՝ Սրինճում) տամ: Էս մասկուրիս ջանպէ գրել էր, թէ ԱՌ (1000 ռուփի) աղարկեցի խէրապատ, դու տեղդ տաս Աղազարին, որ իմ ջանպէ խրիտ առես»:

Ըստ այսմ՝ Հովհաննեսը Սրինճում գտնվող Աղազարին տալիս է 1000 ռուփի. Ագրայում գտնվող պր. Ավետիքը, Հովհաննեսի անունից, նույնքան գումար ուղարկում է Խէրաբադ (պարզ չէ՝ ո՞ւմ միջոցով), որպեսզի այնտեղ մեկ ուրիշը ստանա և Հովհաննեսի համար գնի գերգազի կոչվող գործվածքը: Այսպիսով, դրամական փոխադրության այս գործարքին մասնակցում են առնվազն 5 անձ՝ Հովհաննեսը, Աղազարը, պր. Ավետիքը, դրամը Ագրայից Խայրաբադ փոխադրողը և Խայրաբադում այդ դրամն ստացողը:

Բազմաթիվ են նաև պարզ մուրհակի կիրառության մասին տվյալները: Հենց միայն Հնդկաստանում գտնված տարիներին (1683-1686 թթ.) Հովհաննեսը տարբեր անձնավորություններից 12 անգամ շահով դրամ է վերցրել 3 անգամ ինքն է դրամ փոխ տվել: Այդ առթիվ կատարված գրառումների ուսումնասիրությունից պարզվում է, որ պարզ մուրհակով դրամագլուխ տրվում էր տարեկան 9%, կամ ամսական 0,75% շահ ստանալու պայմանով. «Ճ-ին ամսէն III-օյն լինի» մուղաթի (այսինքն շահի) մասին գրում է մեր վաճառականը:

Տեղին է նշել, որ ջուղայեցի հայ վաճառականները միմյանց ու տեղացի վաճառականների, դալալների և սառաֆների նկատմամբ մեծ վստահություն են ունեցել և, ըստ կարելվույն, օժանդակել մեկը մյուսին: Այս առումով հատկանշական է հետևյալ փաստը. 1684 թ. հոկտեմբերի 11-ին, Ամդանագար քաղաքում մեր վաճառականը տվել է Փանոսի որդի Բաբային 1800 ռուփի գումար՝ ամիսը 0,75% շահով, 41 օրից հետո Ագրայում ստանալու պայմանով: Այս գործարքը կատարելիս Բաբան մուրհակ չի տվել Հովհաննեսին: «Դու գնայ,- ասել է նա,- ես թամասուկն կուղարկեմ Օվրանկապատ»: Եվ իրոք, ինչպես գրում է Հովհաննեսը. «Եկի Օվրանկապատ, թամասուկն աղարկել էր»: Ուշագրավ է նաև հետևյալը. 1692 թ. նոյեմբերի 25-ին Հովհաննեսը անտրտունջ վճարել է Մանվելից վերցրած 20 ռուփի պարտքը, չնայած վերջինս կորցրել էր մուրհակը: Հաշվի պետք է առնել, սակայն, և այն հանգամանքը, որ այդ գործարքները գրեթե միշտ կատարվում էին ուրիշ վաճառականների ներկայությամբ, ուստի իրողությունն ի վերջո բացահայտվելու էր:

Դրամի փոխատվության պայմանները մեծապես փոխվում էին և շահի տոկոսը խիստ բարձրանում էր, երբ դրամ էր տրվում այնպիսի մեկին, որը դուրս էր գալու տվյալ երկրի սահմաններից և կարող էր լինել «պատա-

հական կորստի վտանգ» կոչվող կացություն: Դրամագլխի այդ կարգի փոխառությունները Հաշվետումարում և ժամանակակից այլ աղբյուրներում կոչվում են «ավար» կամ «դմեի ավար», «դմեի բիշուքամ ավար» և այլն:

1684 թ. ապրիլի 23-ին Սուրաթ քաղաքում Հովհաննեսը դալալ Թրիքամից 50 ռուփի պարտք էր վերցրել՝ ամիսը 0,75% շահ տալու սովորական պայմանով: Պարզվում է, սակայն, որ այդ փոխառությունը Հովհաննեսը կատարել է ոչ իր անձնական պետքերի համար, այլ Սուրաթից Սպահան մեկնող Ճամբեցի Գասպարին, 100-ին 27% շահով, «ավար» տալու նպատակով: Այս մասին Հաշվետումարում գրված է. «Ճամս ամսի ԻԴ-ումն ավի Ճամբեցի Գասպարին Ծ (50 ռուփի), Ճ (100)-ին ԻԷ (27)-ովն, որ եկաւ աւաքին ջամէն ԺԳ II (13,5 ռուփի). ասլին և շախին ջամէն ԿԳ II (63,5 ռուփի): ԻԷ (27 ռուփի)-էն Ա (1) թումանին վերայ՝ եկաւ ջամէն Բ (2) թուման ԳՌԵՃ (3500) դիան: Թամասուկն գրի իմ գրած պարոնաց բարօվայգրումն, ադարկեցի Ըսպահան, որ աղենին յինք առուն. գիրն ավէլ ամ թօփչէնց Մարկոսն այ տարէլ»: Այս դեպքում դրամ ավողը Հովհաննեսն է, իսկ ստացողները՝ նրա Սպահանում գտնվող աղաները: Բայց ուշագրավն այն է, որ ինքը Հովհաննեսն էլ ստիպված է եղել Սուրաթում բարձր տոկոսով «ավար» վերցնել՝ հենց նույն Թոփչենց Մարկոսից, որը մեկնում էր Սպահան և վանեցի Առոմի որդի Թումաջանից, որը մեկնում էր Բասրա: Արժե մեջ բերել այդ մասին կատարված գրառումներից գեթ մեկը. «Փոքր թիվն ԿԹ, շամս ամսին ԻԱ-ումն (1684 թ. ապրիլի 20) Բանդար-ի Սուրաթումն ավաք վեռի թօփչէնց Պողոսի որդի Մարկոսէն մին Ռ (1000 ռուփի). Ըսպահան, Ճ-ին ԻԶ-ովն (100-ին 26%-ով), որ եկաւ ավաքին ջամէն ԲՃԿ (260 ռուփի), ասլին և շախին ջամէն ԱՌԲՃԿ (1260 ռուփի): ԻԷ (27 ռուփի)-ին Ա (1) թուման գիր ավի, որ ջուքամն նավ-ի Սլէմանուն վերայ գնայ, Բանդարումն յանկար ձգէ, ջուքամն վեր կայ, էն թարեղէն ԱՃԵ (105) օր վադայ, որ Ըսպահան իմ սահիպ պարոնացէն յինք առու: Եկաւ ջամէն ԽԶ (46) թուման ԶՌԶՃԿ (6660 դիան)»:

Այս անգամ դրամ ստացողն է Հովհաննեսը, իսկ վճարողները՝ Սպահանում գտնվող նրա պարոնները:

Մեջ բերենք այս կարգի բազմաթիվ գրառումներից ևս մեկը, որն ունի իր առանձնահատկությունները. «Փոքր թիվն ԿԹ, շամս ամսին ԻԵ-ումն Սուրաթումն ավաք վեռի վանեցի Առումի որդի Թումաջանէն մին Ռ. (1000 ռուփի), Պասրայ, Ճ (100)-ին Ի (20)-ովն, որ եկաւ ավաքին ջամէն ԲՃ..., ասլին և շախին ջամէն ԱՌԲՃ – [ռուփի], ԲՃԾԸ III (258,75 ռուփի) մին Ճ (100) մառչիլ կէսն լարրի և կէսն ֆըլօրի. ջուքամն նավ-ի Ըստամբօլ մարջանտին վերայ. եկաւ մառչլին ջամէն ԵՃԽԸ II (548,5 մառչիլ): Թամասուկն Պողոսի որդի Շիրազի Յովանին վերայ գրեցի, որ Պասրայ տայ»: Բովանդակությունը վերապատմենք պարզաբանումներով. Հովհաննեսը 1684 թ. ապրիլի 13-ին Սուրաթից Բասրա մեկնող վանեցի Թումաջանից 1000 ռուփի դրամ է վերցնում, 100-ին 20% շահ տալու, այսինքն՝ 1200 ռուփի տալու պայմանով: Թումաջանն Ըստամբոլ անունով առևտրական նավով մեկնում է Բասրա, ուր գտնվում էր Հովհաննեսի ընկերակից Շիրազցի Հովհանը. այս վերջինս պարտավորվում է Հովհաննեսի վերցրած գումարի և փոխադրավարձի դիմաց Բասրայում Թումաջանին վճարել 548,5 մառչիլ (1200 ռուփիի փոխարժեքը՝ մառչիլի հաշվով):

Այս կարգի բազմաթիվ գրառումները առատ նյութ են մատակարարում փոխատվական ու բանկային գործարքների տեսակների որոշման և պայմանների բացահայտման համար:

13

Նոր Ջուղայի հայ վաճառականների տարաձայնություններն ու վեճերը քննարկվում ու լուծվում էին Ջուղայի քալանթարի և «վաճառականաց ժողով» կոչվող ատյանի կողմից: «Առարկայն վիճի,- գրում է այդ մասին Հ. Տեր-Հովհանյանը,- ըստ ամենայն պատշաճաւոր հանգամանացն գրաւոր յայտարարութեամբ մատուցեալ լինէր ի քննութիւն վաճառականաց ժողովոյ, ուրանօր յետ հարկաւոր քննութեանց և վերահասութեանց գրէին զվճիռ ի վերայ նոյն յայտարարական թղթոյ, ըստ այսմ ձևոյ «Սօվդագարի դատաւորն այս է...», և թէ «մեք ավսն այսր գործոյ՝ այսպէս գիտեմք»[67]:

Ջուղայեցի հայ վաճառականները, սակայն, իրենց կյանքի մեծ մասն

---

[67] «Պատմութիւն Նոր Ջուղայի որ յԱսպահան», հ. 1, էջ 183: Հեղինակը հայտնում է նաև, որ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դիվանում պահվում են վաճառականների բազմաթիվ աղերսագրեր՝ վաճառականաց ժողովի անունից գրված վճռագրերով:

անց էին կացնում հայրենի օջախից հեռու, շահի հետևից թափառելով Եվրոպայի ու Ասիայի ամենահեռավոր անկյուններում:

«Յարեն, յարեմտա և քոյն ծէրվըծէր այ

Բանի այ չորս կողմն սովդգարն Ջուղու»,- գրել է այդ մասին ջուղայեցիների կողմից սիրված աշուղ Բաղեր-Օղլին[68]:

Արդ, ինչպե՞ս էին լուծվում ջուղայեցի վաճառականների միջև առաջացած վեճերը, կամ ինչպե՞ս էին կարգավորվում նրանց հարաբերությունները օտար երկնակամարների տակ: Այս հարցերի մասին ևս մեր վաճառականի Հաշվետումարի մեջ կան որոշ նյութեր, որոնց համադրումով հանգում ենք հետևյալ եզրակացության. հայ վաճառականները, բոլոր դեպքերում, գերադասում էին պարզել իրենց հարաբերությունները կամ հարթել վեճերը տվյալ վայրի հայ համայնքի՝ «ջումիաթի» միջոցով: Երբ այս կամ այն վայրում հայ վաճառականների թիվը մեծ չէր լինում, նրանք մասնակից էին դարձնում քննարկվող հարցին նաև այլազգի վաճառականների (Լհասայում, օրինակ, քաշմիրցիներին): Բացառիկ դեպքերում միայն, երբ սպառվում էին վերոհիշյալ ճանապարհներով վեճը հարթելու հնարավորությունները, դիմում էին տեղական դատական ատյաններին:

Ծանոթանանք Հաշվետումարի այն գրանցումներին, որոնք լույս են սփռում հարցերի այս խմբի վրա:

Տիբեթ մեկնելու նախօրեին Հովհաննեսը մեծ քանակությամբ՝ 7760 ռուփի ընդհանուր արժողությամբ սաթ է գնում. այդ գործողությունները կատարվում է «ջումիաթի յուզուրում», այսինքն Ագրայի հայ վաճառականների ներկայությամբ ու վկայությամբ:

Հովհաննեսն Ագրայից իր հետ Տիբեթ տանելու համար վարձել էր երկու նոքար. սրանցից մեկը՝ Ղալմաղ Պետրոսը, 8 ամիս իր պարտականությունները կատարելուց հետո, Լհասայում դուրս է գալիս մեր վաճառականի մոտ ծառայելուց: Ըստ պայմանի, այդ նոքարը տարին ստանալու էր 40 ռուփի (շահիջահանի) աշխատավարձ, ուստի 8 ամսվա աշխատանքի դիմաց՝ 25,5 ռուփի: Այդ գումարը վճարելուց մի քանի օր հետո Հովհաննեսը Հաշվետումարի մեջ կատարում է այսպիսի գրանցում. «Ղալմաղ

[68] Տե՛ս նույն տեղում, էջ 160, նաև Հ. Սահակյան, Հայ աշուղներ, Երևան, 1961, էջ 117:

Պետրոսն, որ դուս եկաւ՝ տօնլուղն թամամ տվէլ ամ. ջումիաթ և քշմրցիք էսպէս բաստէ (հարմար) տեսին, որ Քութու մինչև Ջիգիչայ մին ձիան քրէն յետ յինք առում. յինք առի, որ է ժ (10) շահի»:

Պետք չէ տարակուսել, որ Պետրոսի աշխատավարձի հարցը Հովհաննեսի նախաձեռնությամբ է քննության նյութ դարձել «ջումիաթի և քշմրցոց» ժողովում, որոշումն էլ կայացվել է ի վնաս նոքարի, և նա ստիպված է եղել վերադարձնել 8-ամսյա տառապանքներով վաստակած իր աշխատավարձի 40%-ը, 25 ռուփուց՝ 10-ը[69]:

1690 թ. ապրիլի վերջերին Լհասայում բուռն վեճեր են բորբոքվում մահդասի Ղուկասի որդի Ծատուրի և Հովհաննես Ջուղայեցու միջև՝ երկու տարբեր հարցերի կապակցությամբ: Այդ վեճերի մասին կատարված գրառումներում կան որոշ մութ կետեր, բայց շարադրանքի բուն բովանդակությունը պարզ է:

Բախման առիթներից մեկը հետևյալն է. 1690 թ. ապրիլի 21-ին 3 «կատայ (վճռագիր) է տրվում պետական ինչ-որ հաստատության կողմից՝ մեկը Ծատուրի, երկրորդը Նիկողոսի, երրորդը Հովհաննեսի անունով, որոնցում, ըստ երևույթին, վավերացված էին այս երեք վաճառականների գնած ապրանքների և դրանց գների մասին տվյալները: Նիկողոսի «կատայի» մեջ նրան պատկանող թեյի գինը 128 լանկ 8 մախալի փոխարեն գրված է լինում 228 լանկ 8 մախալ, այսինքն՝ 100 լանկով ավելի: Ծատուրը բողոք է բարձրացնում, այդ սխալի մեջ մեղադրելով Հովհաննեսին:

Բախման մյուս առիթն ավելի պարզ է. դեռևս 1686 թ. դեկտեմբերի 20-ին Հովհաննեսը արժաթ էր տվել Մելիքջանին, որպեսզի վերջինս մեկ

[69] Հաշվետումարի հեղինակը արդար չի վարվել նաև իր մյուս նոքարի՝ Պողոսի նկատմամբ: 21 ամիս հետո սա ևս հրաժարվել է Հովհաննեսի մոտ ծառայել ու ստացել է իրեն հասանելիք վարձը: Բայց Պողոսը Հովհաննեսին պահ էր տվել նաև իր ունեցած դրամը՝ 12 ռուփի, որով Փաթնայում Հովհաննեսը նրա անունով ապրանք էր գնել: Արդ, Հովհաննեսն իր նախկին նոքարին ոչ թե վերադարձնում է նրա դրամով գնած ապրանքը, որ Լհասայում կարելի էր վաճառել ոչ պակաս քան 100% շահով, այլ միայն այն գումարը (12 ռուփի), որ ստացել էր նրանից Ագրայում: Հաշվետումարում այդ կապակցությամբ գրված է. «Ունէր (նոքար Պողոսը) իմ մօտ ժԲ (12) շահի, որ Յընդուստան էր տվէլ. Փաթանու առած շիշին կէսն ուր անման ամ գրել. տվի ոչ, ուր թալապ ժԲ (12) [ռուփ]ին տվի»:

տարվա ընթացքում Չինաստանի Սլինկ (Սինին) քաղաքից մի քանի նվազով դրանց համարժեք ոսկի ուղարկի: 1688 թ. ապրիլի 15-ին Մելիքջանից ստացված 11 լանկ (415,69 գր) ոսկու կապակցությամբ վեճ է ծագում Ծատուրի և Հովհաննեսի միջև. Ծատուրը հայտարարում է, որ այդ 11 լանկ ոսկուց 9-ը իրեն է պատկանում: Վիճող կողմերը դիմում են ժունին[70], որը կարգադրում է զառ նետելու միջոցով պարզել ճշմարտությունը, «ժունէն յուքմ եղաւ, թէ զառ գձեն»: Ծատուրի բախտը բերում է և, հաջողակ զառ նետելով, նա իր օգտին է լուծում վեճը:

14

Հրապարակվող Հաշվետումարն զգալի չափով կարժեզրկվեր, եթե դրա մեջ հիշատակված դրամական միավորների և չափ ու կշռի վերաբերող տերմինների արդիական համարժեքները մնային անորոշ:

Բարեբախտաբար, հաշվետումարում, ինչպես և Կոստանդ Ջուղայեցու

[70] Լհասայում մեկ անգամ ևս Հովհաննեսը վեճի է բռնվել՝ այս անգամ Պողոսի որդի Մելիքջանի հետ: Մեր վաճառականը համաձայն է եղել Մելիքջանին տված պարտքի մի մասի դիմաց ապրանք ստանալ, մյուս մասի դիմաց՝ կանխիկ դրամ: Մելիքջանը, սակայն, ցանկանալով միայն ապրանք տալ, դիմել է դատարան: Այս անգամ դատարան դիմելու փաստը արձանագրված է այսպես. «Յինէն (Մելիքջանը) ըռազի չէկաց, գնաց դէվին արզ առէ» և այնուհետև. «Դէվին յուքմն էսպէս եղաւ, թէ կէսն նաղդ և կէսն ջինս տայ»: Այսպիսով, Ծատուրի հետ վեճի ժամանակ դատավորի դերում հանդես է գալիս **ժուն** կոչվող ինչ-որ մեկը, իսկ այս դեպքում **դեվը**: Կարելի է ենթադրել, որ այս երկու անունների տակ էլ հանդես է գալիս ոչ այլ ոք, քան Տիբեթի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները մարմնավորող Դալայ-Լաման: Պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, որ Ի. Գրյուբերի տվյալներով, Տիբեթի թագավորը կոչվել է Դևայ, իսկ մեծ քուրմը, որ միաժամանակ գլխավոր դատավորն էր՝ Lamascongiu: Տիբեթի ժողովրդական խոսվածքում **Deva Jong** էր կոչվում մեծ լամայի գերագույն իշխանությունը և հավանաբար այդ կոչման բաղկացուցիչ Deva և Jong մասերն են հենց, որ տեղ են գտել Հաշվետումարի մեջ **դեվ** և **ժուն** տառադարձությամբ: Deva Jong-ի և Տիբեթի հոգևոր և աշխարհիկ պաշտոնեության մասին տե՛ս B. A. Graham Sandberg, Hand-book of coloquial Tibetan. A practical guide to the language of central Tibet, Calcutta, 1894, p. 188-192.

«Աշխարհաժողովի» ու նույն այդ ձեռնարկի հիման վրա Ղուկաս Վանանդեցու կազմած «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից» կոչվող աշխատության մեջ (Ամստերդամ, 1699) կան արժանահավատ տվյալներ, որոնց օգնությամբ պարզվում են հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների այցելած երկրամասերում XVII գ. վերջերին կիրառվող դրամական ու չափական մի քանի տասնյակ միավորների մետրական համարժեքները: Այդպիսով, մեր սկզբնաղբյուրը հարուստ մի շտեմարան է նաև դրամագիտական ու չափագիտական ստուգապատում նյութերի:

Հովհաննեսի գործունեության ժամանակաշրջանում Իրանի դրամական համակարգի միավորը աբասին էր, որ Շահ Աբաս Ա-ի ժամանակ բաց էր թողնվում շուրջ 8,5 գ քաշով: XVII գ. վերջերին, Ղ. Վանանդեցու վերը հիշատակված աշխատության վկայությամբ, աբասին արժեզրկվել էր ու պարունակում էր ընդամենը 9,5 դանկ, այսինքն՝ 7,48 գ արծաթ: Ըստ այդմ սեֆյան Իրանի դրամական սիստեմի ամենափոքր միավորը՝ դիանը, լինելով աբասու 1/200-րդ մասը՝ կշռորդ էր 0,037 գ արծաթի, իսկ թումանը (1 թուման= 50 աբասի= 10000 դիան)՝ 373,9 գ արծաթի[71]: Իրանի դրամի արժեքինը, սակայն, շարունակ նվազում էր և շրջանառության մեջ էին դրվում մեծ քանակությամբ ոչ լիարժեք մետաղի պարունակությամբ կտրված դրամներ: Բազմավաստակ դրամագետ Ե. Պախոմովի տվյալներով, այդ ժամանակ աբասու կշիռը տատանվում էր 7,30-7,40 գրամի միջև[72], բայց, հավանաբար, կային ավելի ցածր կշիռ ունեցող աբասիներ, մահմուդիներ ու այլ դրամներ: Այս մասին ուշադրության արժանի տվյալ է հաղորդում մեր վաճառականը. նա հայտնում է, որ Հնդկաստան մեկնելու ճանապարհին, Բանդար Աբասի նավահանգստի պետը չէր կամենում իրենից ընդունել 5 թուման 5000 դիան ընդհանուր գումարով դրամը, որ գոյացած էր

[71] Հովհաննես Ջուղայեցին հայտնում է, որ «Մին լանկն ըսպահանայ Ռ (1000) դիանին քաշ ունի». ըստ այդմ մեկ թումանը կշռորդ է 377,9 գ արծաթի:

[72] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана (Труды общества обследования и изучения Азербайджана, вып. 3), Баку, 1926, стр. 32, 34. Եղել են նաև ավելի ծանր կշռով աբասիներ: Զաքարիա Ագուլեցու վկայությամբ 1662 թ. Շահ Աբաս Բ-ն հրահանգում է կտրել 5 շահիանոց աբասիներ, 2 մսխալ (9,448 գր) կշռով (տե՛ս Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 59-60):

արասիներից ու մահմուդիներից (2 մահմուդի = 1 արասի)։ «Իմ Շիրազայ բերած փողէն,- գրում է նա, Ե (5) թուման ԵՌ (5000) դիան թօֆեղի արասի և մահմուդի ունի, շաբանդարն վե առման չէր, սաղացուցի. թումանին ՋՃ (600) դիան նրա ունեցած արասիները 7 գրամից ավելի կշիռ չեն ունեցել։

Իրանական դրամի արժեքի անկման մասին են վկայում նաև շահիջահանի-ռուփիի (պարունակել է 11,33 գ արծաթ) և թումանի կամ դիանի փոխհարաբերության մասին Հաշվետումարում առկա տվյալները։ Ըստ այդմ 27 շահիջահանը համարժեք է 1 թումանի, կամ 1 շահիջահանը՝ 370 դիանի։

Հնդկաստանի սահմաններում կատարած տուրևառի գործարքների մասին գրառումների մեջ իր գնած ու վաճառած ապրանքների գները Հովհաննեսը նշանակում է շահիջահանի կոչվող դրամական միավորով, որ, անշուշտ, Շահ-Ջահանի (1627-1658) կտրած ռուփին է (մի քանի անգամ շահիջահանիի փոխարեն գրված է ուղղակի ռուփի)։ Թե ի՞նչ կշիռ է ունեցել ռուփին, այդ մասին տվյալ կա «Աշխարհաժողովում»։ Կոստանդ Ջուղայեցին գրում է. «Ա (1) ռուփին Բ (2) մսխալ կիսէն II մասայ պակաս արծաթ այ. որ կէս մասէն Բ II (2,5) դիրեմ այ, որ է Ժ (10) գրան»[73]։

Մսխալը կշռում է 4,724 գրամ, իսկ դիրեմը՝ 0,196 գրամ. ըստ այդմ մեկ ռուփին = (2,5x4,724) – (2,5x0,196)= 11,81–0,49= 11,32 գրամ արծաթի։

Հաշվետումարում կան մի քանի տասնյակ դանազան հաշիվներ, որոնք հաստատում են մեկ ռուփի պարունակած արծաթի կշռի մասին «Աշխարհաժողովի» այս տվյալը՝ աննշան (0,01 գ) հավելումով։ Այսպիսով, տարակույս չի կարող լինել, որ Հովհաննեսի գործունեության տարիներին Հնդկաստանի դրամական միավորը՝ ռուփի-շահիջահանին, կշռում էր 11,33 գ արծաթի։

Բացի շահիջահանի կոչվող ռուփիից, շրջանառության մեջ կային նաև այլ ռուփիներ՝ բազարի շահի, օվրանկշահի, շալնի և իլայի։ Հաշվետումարի տվյալներով հնարավոր է որոշել նաև տարբեր այդ ռուփիների պարունակած արածթի կշիռը։

Նեպալում շրջանառության մեջ գտնվող հիմնական դրամական

[73] Մատենադարան, ձեռ. N 5994, էջ 12բ, ձեռ. N 10784, էջ 28ա։

միավորը կոչվում էր մանտրմելի (mandermali). Հովհաննեսը գրում է. «Տեղիս (իմա՛ Քաթմանդուի) բաջին սքէն այ մանտրմէլի, որ II (0,5 ռուփի) կառէ»։ Հաշվետումարում կան բազմաթիվ վկայություններ, որոնք հաստատում են մանտրմելու և ռուփու այս (2:1) հարաբերությունը։

Նեպալում շրջանառության մեջ է եղել նաև պղնձե մանր դրամ՝ դամ. «ՃԺԹ (119) դամն՝ Ա (1) մանտրմէլի այ»։ Միջին դարերում (ներառյալ նաև Հովհաննեսի գործունեության տարիները) Տիբեթը չի ունեցել սեփական դրամ. առևտուրը կատարվել է կա՛մ ապրանքափոխանակությամբ, կա՛մ էլ՝ ձույլ արծաթով ու ոսկով[74]։

Ապրանքափոխանակության մասին տվյալները, որ զգալի տեղ են գրավում Հաշվետումարի մեջ, բնորոշ են զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող Տիբեթի տնտեսական կյանքի համար։ Հովհաննեսի կողմից փոխանակության առաջարկված ապրանքները գերազանցապես թանկագին քարեր էին (սաթ, մարջան և այլն), որոնց դիմաց նա հիմնականում ստանում էր մուշկ։

Արծաթի և այլ ապրանքների քաշի հիմնական միավորն այստեղ լանկն էր, որի կշիռը մետրական սիստեմով, դարձյալ հնարավոր է լինում ճշգրիտ որոշել վերոհիշյալ սկզբնաղբյուրների մեջ առկա, իրար կրկնող ու լրացնող տվյալների համադրությամբ։ Ըստ այդմ, լանկը կամ թանկը 37,79 գրամի կշռաչափ է[75]։

Քանի որ առուծախը Տիբեթում կատարվում էր հիմնականում ձույլ արծաթով, մեծ նշանակություն էր ստանում մետաղի հարգը («այար», проба) և հաճախ շրջանառության մեջ էր մուծվում ոչ լիարժեք հարգի արծաթ։ Վաճառականի մտահոգությունները այստեղ բազմապատկվում էին. չտուժելու համար նա պետք է կարողանար ճանաչել ձույլ արծաթի հարգը և խուսափեր ցածրորակ արծաթ վերցնելուց։ Միշտ չէր այդ բանը

[74] Նեպալի իշխաններից մեկը՝ Բհատգաոնի ռաջա Բհուպատինդրան (1696-1722) ու նրա հաջորդները սկսում են Տիբեթի համար հատել հատուկ դրամ (անշուշտ մեծ օգուտ ստանալով այդ գործարքից). իսկ զուտ տիբեթյան դրամներ երևան են գալիս միայն XVIII դ. 30-ական թվականներին («Непал», նշվ. աշխ., էջ 18, 47)։

[75] Հմմտ. Մատենադարան, ձեռ. N 5994, էջ 15ա։ Ղ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից, Ամստերդամ, 1699, էջ 17։

հաջողվում. մեր փորձված վաճառականը մնացել էր հատկապես այն դեպքում, երբ գործ էր ունենում պետական մարմինների հետ: Այլ առիթով հիշատակել ենք արդեն, որ Լհասայի մաքսատնից Հովհաննեսին տրված 430 լանկ ցածրորակ արծաթը հալելուց ու զտելուց հետո պակասել էր (քամբուտ էր ունեցել) 62 լանկ: Պետական մարմինները պարտադրում էին ստանալ ցածրորակ արծաթ, բայց երբ իրենք էին ստանալիք ունենում, պահանջում էին ամենաբարձր հարգի մետաղ: Հովհաննեսի ընկեր Նիկողոսը, որպես 4 ձիու վարձ, պետք է վճարեր «սարքար» կոչվող պետական վարչությանը 7 լանկ 2 մախալ արծաթ: Այդ պարտքը մարում է Հովհաննեսը. «Լէվ արծաթ տարայ. Գ (3) խետ դաղեցին, Բ (2) խետ խալեցին, քամպուտ գնաց (իմա՛ պակասեց) Զ (6) մախալ»: Նա ստիպված է լինում վճարել նաև այդ «քամպուտ» գնացածը: Ուշագրավ է նաև Հովհաննեսի մի այլ գրանցումը, ըստ որի՝ Լհասայի նույն հաստատության պաշտոնյաները «արծաթ կը տան պակաս, չինք կառնի ավելի»: Այդ մասին առավել որոշակի նա արտահայտվում է Հաշվետումարի մի այլ հատվածում. «Ջրայ սարքարումն Բ (2) քաշ կայ, չինք առման մեծն այ և տալման պզտիկն այ»[76]:

Ցածրորակ արծաթի պատճառով վնաս չկրելու մտահոգությամբ, վաճառականները հաճախ դրան բարձր հարգի արծաթ էին խառնում, կամ էլ հալելու ու զտելու միջոցով բարձրացնում հարգը: Մի առիթով Հովհաննեսը գրում է. «Խամնու արծաթն [Նեկղոսն] խալում էր, լէվ արծաթ ալի՝ խառնեց». մի այլ կապակցությամբ հայտնում է, որ իր ունեցած 20 լանկ արծաթը «չեռնէ սէվացաւ, խալեցի՝ Ա (1) լանկ պակասեցաւ, մնաց ԺԹ (19) լանկ»:

Ոսկու առուծախը Տիբեթում և հարևան երկրներում կատարվում էր սուկամ ու սէվայ, թօլայ ու մասայ, ինչպես և գուրմու կոչվող կշռաչափերով: Հաշվետումարի խիստ ուշագրավ տվյալների և հայկական այլ սկզբնաղբյուրների մեջ ամփոփված համապատասխան նյութերի համադրությամբ պարզվում են նաև վերոհիշյալ չափերի մետրական

[76] Նույնպիսի կեղծիք կատարում էին նաև Արևելյան Հնդկական ընկերության Կալկաթայում հաստատված անգլիացի պաշտոնյաները: Իր վերջին գրանցումներից մեկում Հովհաննեսը հայտնում է, որ «Քոփայ սուպոնս ծախեցի ինկլիզի ֆօթումն՝ բազարի հարօվ, որ սամունն ԽԲ (42) սէր այ, յամայ ավելի գրնէ»:

համարժեքները[77]:

Ոսկու ձույլերը Լհասա էին բերում հիմնականում Չինաստանի Սինին քաղաքից. հարգի առումով ձույլերը երեք տեսակի էին լինում՝ պանայ կամ վարաղ, խամսեր և ջունսեր: Գրանցումներում միշտ ցույց է տրված ոսկու հարգը:

«Մաթոսին քուլիայ ոսկին, որ ինձ այ խասէլ՝ պանայ, խամսէր, ջունսէր՝ ողջ մին-մին ղալամ գրած այ, ջամէն ՊՀԴ (874) սուկամ II (0,5) սէվայ,

Պանին ջամէն ՃԿԷ (167) սուկամ ԺԴ (14) սէվայ,

խամսէրին ջամէն այ ՇԻ (520) սուկամ ԺԶ II (16,5) սէվայ,

Ջունսէրին ջամէն ՃՁԵ (185) սուկամ Ժ (10) [սէվայ]»:

Ամենաբարձր հարգի ոսկին այստեղ պանայ կոչվածն է, ամենացածրը՝ ջունսերը. խամսերը, որ միջին տեղն է գրավում, շրջանառության մեջ եղել է ավելի շատ:

Ոսկու այդ ձույլերի մեջ զուտ ոսկու պարունակության տոկոսը որոշել անկարող ենք, բայց կան տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում մոտավոր հաշվով պարզելու դրանց գների փոխհարաբերությունը: Այս առումով հետաքրքրական մի շարք գրառումների մեջ իր պարզությամբ ուրույն տեղ է գրավում հատկապես մեկը, որի մեջ հանգուցյալ Մաթոսից մնացած տարբեր տեսակի ոսկու ձույլերի կշռին առընթեր տրված է նաև դրանցից յուրաքանչյուրի մեկ միավորի (տվյալ դեպքում թոլայի) արժեքը՝ ռուփիի հաշվով. պանայ ոսկու մեկ թոլան արժեր 12,75 ռուփի, խամսէր ոսկու մեկ թոլան՝ 12,05 ռուփի, ջունսէր ոսկու մեկ թոլան՝ 11,55 ռուփի:

Արդ, եթե բարձր հարգի՝ պանայ ոսկու մեկ միավորի արժեքը պայմանականորեն համարենք 100, ապա վերոհիշյալ տվյալներով խամսերի արժեքը կհարաբերի նրան 94,5, իսկ ջունսերինը՝ 90,5-ով:

Հաշվեմատյանի մեջ տարբեր ապրանքների առուծախի մասին եղած տասնյակ ու հարյուրավոր գրառումները պատմատնտեսագիտական հետազոտությունների համար օգտագործելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է պարզել Հովհաննեսի կողմից կիրառված չափական մյուս միավորների մետրական համարժեքները ևս:

[77] Տե՛ս ստորև բերվող դրամական միավորների և կշռաչափերի ցանկը:

Այս գործին մեծ նպաստ է բերում դարձյալ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը», ուր ասված է. «Խուռջայ և Հնդվան և կամ այլ ինչ տեղ, որ լեղակ առուս՝ ողջ աքպարի ղիտր կու խոսեն, որ մին ղիտրն Խ (40) սէր այ, որ մին սէրն Լ (30) փէսաբար այ, որ մին փէսէն Դ մսխալ կէս այ (4,5), որ մին աքպարի ղիտրն ԵՌՆ (5400) մսխալ այ»[78]:

Ուշադրավ այս տվյալների հիման վրա դյուրությամբ որոշվում են Հաշվետումարում գործածված ևս մի քանի չափերի մետրական համարժեքները, այսպես.

Մսխալ (աջամստանայ) – 4,724 գ (ռումթանայ) – 3, 779 գ

Փէսաբար – 21,258 գ

Սէր – 637,74 գ

Աքպարի ղիտր – 25 կգ 509 գ

Շատ տարածված կշռաչափ է եղել նաև Սեֆյան Իրանի (Աջամստանայ կամ շահի կոչված) լիտրը, որ 5 կգ 888 գրամի կշիռ է ունեցել (կոչվել է նաև ման)[79]: Թանկագին քարերի համար կիրառվել են կշռի այլ միավորներ ևս (դարնի, դօնայ, ըռաթի, թան, մանճա, տանկ և այլն), որոնց մեծ մասի քաշը նույնպես հնարավոր է լինում պարզել մեր Հաշվետումարի և այլ աղբյուրների համադրական ուսումնասիրությամբ:

Մանրամասնությունների մեջ չմտնելով, ստորև տալիս ենք Հաշվետումարի մեջ գործածված դրամական միավորների ու կշռաչափերի այբբենական ցանկը, յուրաքանչյուր անվան դիմաց նշանակելով բազմաթիվ խաչաձևվող տվյալներով ստուգված նրա մետրական համարժեքը.

Աբասի – թումանի 1/50-րդ մասը, 7,30-7,40 գ արծաթ

Ասլանլու – թուրքական ոսկեդրամ. 16 ասլանլուն համարժեք է մեկ թումանի

Բազարի շահի – ոչ լիարժեք ռուփի, 10,54 գ արծաթ

Գուրմու – 6,07 գ

Դամ – հնդկական մանր պղնձե դրամ (119 դամը՝ 1 մաղմուդի)

---

[78] Մատենադարան, ձեռ. N 10704, էջ 30ա, ձեռ. N 5994, էջ 13ա. Համմտ. «Գանձ չափոյ...», էջ 16:

[79] Տե՛ս Ф. И. Гутер, Сравнительные таблицы, Рига-Лейпциг, 1911, стр. 82.

Դարնի – չաքուի 1/24-րդ մասը, կշիռն անորոշ

Դիան – իրանական դրամական սիստեմի փոքր միավորը. մեկ թումանի 10.000-րդ մասը

Ըռաթի – թօլայի 1/96-րդ, մասայի 1/8-րդ մասը, 0,10 գրամի կշռաչափ

Ըռաթի – Փաթնայում 0,15 գրամի կշռաչափ

Թանկ – 37,38 գրամի կշռաչափ, կոչվել է նաև լանկ

Թուման – իրանական դրամական սիստեմի մեծ միավորը, պարունակում է 50 աբասի. 10.000 դիան

Թօլայ – 12,15 գրամի կշռաչափ

Թօլայ Նեպալի – 14,56 գրամի կշռաչափ

Իլաի – ոչ լիարժեք ռուփի, 10,902-10,85 գ արծաթ

Լիտր – տե՛ս ղիտր

Կանուայ - փաքասէրի 1/16-րդ մասը, 53,14 գրամի կշռաչափ

Ղիտր աջամստանայ – 5 կգ 888 գրամի կշռաչափ

Ղիտր աքպարի – 25 կգ 509 գրամի կշռաչափ (ըստ «Աշխարհաժողովի» 5400 մսխալ, այսինքն՝ 25 կգ 488 գ)

Ղիտր շահի կամ Թավրիզի – 3000 գ

Մահմուդի – կես աբասի, 100 դիան

Մանտրմեղի – Նեպալի արծաթ դրամը, հնդկական ռուփիի կես արժեքով (5,66 գ արծաթ)

Մառշիլ յաճոի - եվրոպական ոսկեդրամ (կշռորդ է համարվել 24,93 գ արծաթի)

Մառշիլ ֆլօրի - եվրոպական ոսկեդրամ (կշռորդ է համարվել 24,60 գ արծաթի)

Մասայ – թօլայի 1/12 մասը, 1,01 գրամի կշռաչափ

Մասայ Նեպալի – 1,21 գրամի կշռաչափ

Մսխալ աջամստանայ – 4,72 գրամի կշռաչափ

Մսխալ զաքուրի – 3,78 գրամի կշռաչափ

Նեղայ – կշռաչափ, որ տատանվել է 2,5-4 գ միջև

Շահիջահանի – նույնն է ռուփի (տե՛ս)

Ջալնի – ոչ լիարժեք ռուփի, 10-16 գ արծաթ

Ջաճու – կշիռն անորոշ

Ռուփի – Հնդկաստանի արծաթ դրամը, 11,33 գ արծաթ (Նեպալում 10,1 գ արծաթ)

Սէր – գիտրի 1/40-րդ մասը

Սէվայ – սուկամի 1/20-րդ մասը, 0,25 գրամի կշռաչափ

Սուկամ – 5,06 գրամի կշռաչափ

Տանկ – 16,21 գրամի կշռաչափ

Փեսաբար – 21,26 գրամի կշռաչափ

Քակամ – 1,26 գրամի կշռաչափ

Քիսայ – քսակ, արծաթ դրամի չափ

Օվրանկշահի – ոչ լիարժեք ռուփի, 11 գ արծաթ

Ֆուն - գաթուրի մախալի 1/10-րդ մասը, 0,37 գրամի կշռաչափ

Այժմ անդրադառնանք երկարության չափերին.

Հովհաննես Ջուղայեցու հենց առաջին գրանցումը հասկանալու և ըստ արժանվույն գնահատելու համար անհրաժեշտ է որոշել գազ կոչվող չափի մետրական համարժեքը: Այդ գրանցման մեջ մեր վաճառականն ասում է, որ իր խոջա պարոններից «չինք ամ առէլ ԺԸ (18) ճոթ նեղայքնար լօնարինայ՝ ալ և կանանչ, ջամէն ԷՃԻԶ (726) գազ և Զ (6) գրէ»:

Ու այսօր Իրանի տարբեր շրջաններում գործածության մեջ են գտնվում գազ կոչվող տարբեր երկարության (63,5-ից մինչև 112 սանտիմետր)[80] չափեր: Պետք չէ տարակուսել, որ շատ ավելի մեծ թվով ու իրարից տարբեր գազեր կային միջնադարյան Իրանում: Բարեբախտաբար, Հաշվետումարի մի այլ գրանցումից տեղեկանում ենք, որ Հովհաննեսի կողմից Հնդկաստան տարվելիք մահուդը չափված է եղել շահի գազ կոչվող չափով: Այդ գազը, որ կիրառվում էր Իրանում նաև մի կես դար առաջ՝ որպես բրդյա կտորեղենի չափման միավոր, 101,6 սմ երկարության չափ էր[81]: Նորագույն աղբյուրներից քաղված այս տվյալը ստուգվում է Կոստանդ Ջուղայեցու և Ղուկաս Վանանդեցու կարևոր վկայություններով. առաջինը հայտնում է, որ «Ճ (100) գազ շահին ՃԾ (150) հալապի է», իսկ երկրորդը նույն տեղեկությունը գրանցում է մի փոքր այլ ձևով. «Շահի գազն 1 հալապի կէս է»:

[80] Տե՛ս «Справочник мер», Научно-исследовательский институт министерства торговли Союза ССР, М., 1956.

[81] Տե՛ս Ф. И. Гутер, նշվ. աշխ., էջ 27:

Հալեպի գազի երկարությունն ըստ Ֆ. Գուտերի 37,733 սանտիմետր է[82], ուստիև մեկուկես հալեպի գազը, ճիշտ ու ճիշտ լինում է 101,6սմ (1,5x67,733= 101,6 սմ):

Սպահանից Հնդկաստան տարած անգլիական մահուդը Հովհաննեսը վաճառել է շահիջահանի կամ լաշկարի կոչվող գազով, որը տարբերվում էր շահի կամ աջամստանի գազից: Երկարության այդ չափերի փոխհարաբերությունը, ուստիև շահիջահանի գազի երկարությունը պարզվում է Հաշվետումարի արժեքավոր մի գրառումից, որ բերում ենք ստորև. «Եղաւ (Սպահանից բերած մահուդի) ջամէն ՃԷԻԶ (726) գազ Զ (6) գրէ: Բ (2) դալամ ծախսին (մահուդը Հնդկաստանում վաճառել է երկու նվագով, խոսքն այդ մասին է) գազին ջամէն այ... ԷՃՀԴ (774,25) գազ: Ջամիցն ավէլի այ եկէլ լաշկարի գազումն, որ է շայիջահանի՝ ԽԷ (47) գազ և ԺԴ (14) գրէ, որ եղաւ Ճ-ին Զ (100-ին 6)»:

Արդ, եթե 100 շահի գազը հավասար է 106 շահիջահանի կամ լաշկարի գազի, ապա 1 շահիջահանի գազը 95,85 սմ երկարություն է ունեցել: Այսպիսով, շահի գազի երկարությունն է 101,6 սմ, Շահիջահանի կամ լաշկարի գազի երկարությունը՝ 95,85 սմ, Հալապի գազի երկարությունը՝ 67,73 սմ: Ամեն մի գազ պարունակում էր 16 գրեհ, ամեն մի գրեհ՝ 2 փայ:

Միջնադարում չափ ու կշռի ստույգ միավորներից բացի, առևտրի ու տնտեսության այլ բնագավառներում, կիրառվում էին նաև երկարության ու տարողության այնպիսի չափեր, որոնք որոշակի կայուն մեծություն չէին արտահայտում: Գործածության մեջ էին նաև մի շարք տերմիններ, որոնք այս կամ այն ապրանքի զույգով կամ մի այլ թվաքանակով վաճառվելն էին մատնացույց անում: Այդ կարգի բազմաթիվ տերմիններ է գործածել նաև Հովհաննես Ջուղայեցին:

Կտորեղենի առուծախին վերաբերող գործարքների գրառումներում ամենից շատ հիշատակված է թան բառը: Հաշվետումարի մի շարք ակնարկներից պարզվում է, որ թանը երկարության չափ չէ, այլ նշանակում է սոսկ մեկ զգեստացու (отрез) կտոր: Այդպես է, օրինակ, ստորև բերվող հատվածներում. «Ա (1) թան ճարմակ շալն գրէլ էր, թէ կապայ շինես, ես եմ վեռէլ փուշակի (իմա՝ հագուստի) խարճէլ», կամ «Ա (1) թան ջուղի

[82] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

[ջամուր շալն]՝ Յովհաննիսին կապայի տվէց»: Բայց գործվածքեղենի մոտավորապես ի՞նչ երկարության կտորն էր համարվում մեկ զգեստացու: Մի քանի իրար հաջորդող ուշագրավ գրանցումների մեջ Հովհաննեսը տվյալներ է հաղորդել իր կողմից գնված մեկական թան կուճին և մախմուր կոչվող գործվածքների մասին. ըստ որում մի դեպքում մեկ թանը 15 քաղամ (երկարության չափ) է եղել, իսկ մյուս դեպքում՝ 17, 18, 19 և, նույնիսկ, 20,5 քաղամ: Պարզ է, ուրեմն, որ թանի երկարությունը կապված է եղել կտորի գործածության նպատակի, գուցեև լայնքի ու տեսակի հետ: Կարծում ենք, այնուամենայնիվ, որ միջին հաշվով թան է կոչվել շուրջ 4,5-5 մետր երկարություն ունեցող կտորը. այդ ենթադրության համար հիմք է ծառայում հետևյալ գրանցումը. «Փոքր թիվն Հ (70), դամայ ԺԸ (18)-էն մինչև Ի (20)-ըն առի լվացած ճարմակ գազի, ջամէն ՉՃ (600) գազ: Էս ջամէս Դ (4) կազ ԺԴ (14) գրէն՝ Ա (1) թան՝ լախն շինել տվի»:

Այս գործարքը կատարված է Հնդկաստանում, ուստի հիշատակված գազը շահիջահանի կոչված գազն է (95,85 սմ). ըստ այդմ լախն կոչվող հագուստի ինչ-որ տեսակի համար գործ է ածվել 4,6 մետրից քիչ ավելի կտոր: Կա տվյալ նաև 5 մետրանոց թանի մասին:

Հովհաննեսի առևտրական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում լեղակի, մուշկի ու թեյի վաճառքը:

Լեղակի առուծախը կատարվել է չարմ կոչվող չափով: Արդ, ի՞նչ տարողություն ուներ այդ չափը: Մեր վաճառականն ինքը հայտնում է, որ «մեր լեղականին, որ խուրջայ՝ Դ (4) լիտր ենք բռնել Ա (1) չարմն». եթե այստեղ հիշատակված լիտրն աքպարի լիտրը համարենք, ապա Հովհաննեսի գնած 92 չարմ լեղակը պետք է կազմեր շուրջ 10 տոննա, որ անհավատալի է: Ուստի համոզված ենք, որ այս դեպքում ևս, նա աջամատանա կոչվող լիտրով է իր հաշիվը կատարել, որ, ինչպես գիտենք, կշռորդ է 5,888 կիլոգրամի: Ըստ այդմ՝ նա գնել է ընդամենը 2166 կգ (5,888x4x92) լեղակ, որից իրեն է պատկանել 376 կիլոգրամը (16 չարմ):

Թեյի, նաև թամբաքուի առուծախի հաշիվները Հաշվետումարի մեջ գրանցված են բաղչայ (կապ, փոքրիկ կապոց) չափական միավորով: Բաղչայի մոտավոր կշիռը պարզվում է հետևյալ գրանցումից. «Յինք ամ առէլ ԻԲ (22) բաղչայ պուճայ [չայ], ֆի (այսինքն՝ յուրաքանչյուրը) ԺԲ II (12,5) մըսխալօվն. Ժ (10) բաղչայ տաժան [չայ] ես ԺԲ (12) մըսխալօվն եմ ծախէլ»: Ուրեմն, մեկ բաղչան կարող էր պարունակել 12-12,5 մսխալ, այսինքն՝ 45-47 գրամ թեյ: Թեյի առուծախին վերաբերող ուրիշ տվյալներ գալիս են հաստատելու այս եզրակացությունը:

Հատայից, ինչպես գիտենք, Հովհաննեսը դուրս է բերել 42,155 կգ մուշկ: Մուշկի գնումները կատարվում էին նաֆայով (նաֆայ էր կոչվում մշկայծյամի բուրավետ պորտը). Հաշվետումարի բազմաթիվ վկայություններից պարզվում է, որ մեկ նաֆայ մուշկը կշռել է շուրջ 50-60 գ:

Գործածության մեջ են եղել նաև այլ տարողությամբ պարկեր և, հատով վաճառվող ապրանքների համար քանակը ցույց տվող միավորներ: Անկարող լինելով դրանց բոլորին մեկ առ մեկ անդրադառնալ՝ ստորև տալիս ենք Հաշվետումարում օգտագործված երկարության չափերի և այս կարգի չափ ու կշռի միավորների այբբենական ցանկը.

Բաղչայ - *փոքրիկ կապոց՝ 25-50 գ թեյի տարողությամբ*

Գազ շահի – *101,5 սմ*

Գազ շահիջահանի կամ լաշկարի – *95,85 սմ*

Գազ հալապի – *67,73 սմ*

Դոլճայ – *շա՞ր*

Թան – *մեկ զգեստացու կտոր, շուրջ 4,5-5 մետր երկարությամբ*

Թօփ - *գործվածքեղենի փաթեթ, մոտավոր հաշիվներով՝ շուրջ 40 գազ*

Խակ – *հակ (մեկ հակի մեջ տեղադրում էին 124-162 թան կտորեղեն)*

Խամ – *պարկ, շուրջ 27,5 կգ ապրանք տարողությամբ*

Կանայ - *երկարության չափ, 88-93 սմ*

Ձեռն - *երկարության չափ*

Նաֆայ – *մշկայծյամի պորտը, օգտագործված որպես 50-60 գ մուշկի կշռաչափ*

Չարմ – *պարկ, շուրջ 23 կգ լեղակի տարողությամբ*

Ջօռ - *զույգ կամ փունջ*

Սանդուղ - *արկղիկ, սնդուկ*

Քալ – *պարկ, 20-24 քալը՝ մեկ բեռ*

Քաղամ - *երկարության չափ*

Քիսակ – *քսակ*

Քուռի – *քսան հատ իր:*

15

Հաշվետումարն արժեքավոր աղբյուր է նաև հաշվապահության և տնտեսագիտության պատմության համար:

Մեր նպատակից դուրս և կարողությունից վեր ենք համարում Հովհաննես Ջուղայեցու կիրառած հաշվապահական սիստեմի գիտական բնութագրումը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա կիրառած հաշվապահության ձևը, արմատավորված լինելով ջուղահայ վաճառականների միջավայրում, լայն տարածում է գտել հայկական բազմաթիվ գաղթավայրերում, կարծում ենք, որ մեր տնտեսագետներն առաջիկայում մասնագիտական ուսումնասիրության կենթարկեն և կտան այդ սիստեմի գիտական համապարփակ բնութագիրը: Ստորև կփորձենք միայն ընդհանուր գծերով ծանոթանալ Հաշվետումարում եղած փաստական նյութին և մեր ուժերի սահմաններում տալ Հովհաննես Տեր-Դավթյանի հաշվապահական սկզբունքների համառոտ նկարագիրը:

Առավել դյուրին կլիներ պարզել Հովհաննես Ջուղայեցու և առհասարակ XVII-XIX դդ. հայ վաճառականության կիրառած հաշվապահական սիստեմի էությունը, եթե մեր ձեռքի տակ լինեին նույն ժամանակներին վերաբերող պարսիկ, արաբ, հնդիկ և արևելյան այլ ազգությունների վաճառականների նման հաշվապահական մատյաններ: Ցավոք, սակայն, ցարդ այդ կարգի մատյաններ կամ դեռևս չեն հայտնաբերված և կամ գիտական հետաքրքրության առարկա չեն հանդիսացել. հրապարակի վրա չկան բնագրերի հրատարակություններ կամ դրանց վերաբերյալ թեկուզև համառոտ ուսումնասիրություններ: Գիտական շրջանակներին որոշ չափով ծանոթ են միայն պետական հարկային-ֆինանսական գրասենյակներում գրառված, պետական բյուջեի, բնակչությունից գանձվող հարկերի և դրանց գումարների առանձին հարկատու համայնքների միջև բաշխման կամ զինվորականության ու պետական պաշտոնեությանը տրվող ռոճիկների նշանակմանն ու վճարմանը վերաբերող հաշվապահական մատյաններ և դրանցից կատարված ընդարձակ կամ համառոտ քաղվածքներ[83]*, որոնք իրենց բնույթով արմատապես տարբերվում են առևտրական հաշվապահությունից: Նկատվում է միայն պարսկերեն և արաբերեն տերմինների նմանությունը:*

Առևտրահաշվապահական տերմինոլոգիան Հովհաննես Ջուղայեցու մոտ ընդհանրապես արաբապարսկական է, սակայն հաշվապահական սիստեմի հիմքում հիմնական և օժանդակ, զուգահեռ մատյաններում գրանցվող և «իտալական» կոչվող «կրկնակի» (double) *հաշվապահության սկզբունքներն են: Ներկա Հաշվետումարը նա անվանում է Ռուզլամայ (պրսկ.* ruznāma*), որ համապատասխանում է կրկնակի հաշվապահության «օրհաշվի մատյանին»* (journal)*, և որտեղ օրվա ընթացքում կատարված առևտրական բոլոր գործառնությունները գրանցված են զուգահեռ մուտքի և ելքի (պրսկ. ամառ, բաաֆտ) սյունակներում, որպես պարտք և պահանջ* (debet, credit)*:*

«Ռուզլամայում» Հովհաննես Ջուղայեցին հաճախ վկայակոչում է նաև իր «մայր հաշվի» մատյանը, որը նա անվանում է «կարմիր շիլաւոր» (կարմիր կտորով կազմած) «դըֆտար» կամ «քաթա»: «Քաթա» (արբ. Katt*-հաշվետումար) են անվանված նաև առանձին անհատների կամ ապրանքների հաշիվներն ընդգրկող մեծ ու փոքր մատյաններն ու հաշվեթերթիկները: Օրհաշվում Հովհաննես Ջուղայեցին հաճախ հաշվապահական առանձին հոդվածների (դաֆա, բաթ, ղալամ) վերջում կամ մեկնաբանության մեջ նշում է. «հաղեղաթն (իրողությունը) կարմիր շիլաւոր դըֆտարում գրած այ» կամ «իմ կարմիր շիլաւոր քաթումն այ»: Խոսքն այստեղ անշուշտ վերաբերում է «մայր հաշվին», մյուս օժանդակ մատյանները նա անվանում է իր հետ առևտրական գործարքի մեջ գտնվող անձնավորությունների, իսկ ապրանքներինը՝ նույն ապրանքի անունով: Այսպես, օրինակ, Մելիքջանի հաշիվը գրանցելիս նշում է. «Ամատբաաֆան ուր քաթումն կգրեմ» և անմիջապես ավելացնում է, որ այն արձանագրում է նաև «կարմիր շիլաւոր դըֆտարում»:*

Առանձին ապրանքների «քաթաններն» արդեն մեր ձեռքի տակ են և

[83] Walter Hinz, Die Resalä-ye Falakiyya des Abdallah ibn-Mohammad ibn-Kiy al-Mäzandaräni, Wiesbaden, 1952; «Tadhkirat al-Mulūk», A manuel of Safarid administration, by V. Minorsky, London, 1943; А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, 1972, стр. 215-225.

լիովին համընկնում են Ռուզնամայում կատարված գրանցումներին: Դրանք մեծ մասամբ անվանվում են «քաթա» կամ պարզապես «խըսէպ» (հաշիվ), իսկ եթե տեղից տեղ ուղարկված ապրանքների հաշիվներ են, կոչվում են նաև «բարնամայ» (պրսկ. bārnāma - բեռնագիր):

Այս զուգահեռ կամ օժանդակ հաշիվները մեծ մասամբ համանման վերնագրեր ունեն: Այսպես, լեղակի հաշիվը վերնագրված է. «Տէր Աստուած խէրն և բարին առաջնորդեսցէ, ամէն: Ներքոյ գրեալս իմ ԺԶ (16) չարմ լեղակին քաթէն այ» կամ «Ներքոյ գրեալս Բանդարիսին առած Զ (6) թան չիթին խըսէպն այ» և կամ «Ներքոյ գրեալս մին բանդրուն բարնամէն այ, որ Ծ (50) խակ խէրապատուն խեռ բռավանայ արարի (ուղարկեցի) Սուրաթն» և այլն:

Վերոհիշյալ մատյաններից բացի, Հովհաննեսն իր մոտ միշտ ունեցել է նաև նշումների տետր կամ հուշատետր, որը նա անվանում է «եադդաշտ» (պրսկ. yāddāst – հուշատետր), որտեղ օրվա ընթացքում կատարված նշումներն օրվա վերջում հաշվապահական հաշվումներով ձևակերպում և գրանցում էր օրհաշվի ելք ու մուտքի սյունակներում և համապատասխանաբար նաև մայր հաշվում ու օժանդակ հաշիվներում կամ մատյաններում:

Մեր ձեռքի տակ եղած մատյաններն ու հաշվարկները թույլ են տալիս ասելու, որ Հովհաննես Ջուղայեցին հնարավորություն է ունեցել ցանկացած ժամանակ հաշվեկշիռ հանել և որոշել իր գործի, դրամագլխի (սարմիա) և շահի կամ վնասի պատկերը, որն էլ հենց առևտրաարդյունաբերական հաստատություններում տարվող հաշվապահության հիմնական խնդիրն է եղել: Ելք ու մուտքի սյունակների հաշվեկշիռները (թարայըզգի) կատարված են կատարյալ ճշգրտությամբ, մնացորդը (բաղի – saldo) կամ ավելի ճիշտ շահը (բարաքաթ) հաշվեկշռից բերելով և վերստին գումարելով, կամ «ջամա բռնելով» մուտքի սյունակում: Հաշվեկշիռը ընդհանրապես նա անվանում է «թարայզգի» (պրսկ. tarāzū – կշիռ, կշեռք), մեկ տեղ միայն գործ է ածված «բալնես» (ֆր. balanse) տերմինը:

Առանձին ուշադրության են արժանի բնագրում հանդիպող բազմաթիվ ֆինանսահաշվապահական տերմինները, ինչպես «տալիք և թալապ» (պարտք և պահանջ), «իֆտըրդայ և թիր» կամ «սարանջամ» (սկիզբ և ավարտ կամ սկզբնահաշիվ ու վերջնահաշիվ), «զարար և թյաֆի» (վնաս և հատուցում), «նաղտ և նըսիայ» (կանխիկ և ապառիկ), «քասր և

ֆազիլ» (պակասորդ և ավելցուկ), «թանձիլ ու թահթիմա» (զեղչ և հավելում), «ղալատ և սէհի» (սխալ և ճիշտ), «ասլ և մուզաֆ» (մայր գումար և տոկոս) և այլն, որոնց ուսումնասիրությունը մեծ չափով կարող է նպաստել հաշվապահական սիստեմի հիմնական հարցերի լուսաբանմանը:

Ամենօրյա գրառումները և դրանց հիման վրա հետագայում ստեղծվող ռուզնամաներն ու քաթաներն ի վերջո կարգի բերվելով և մաքրագրվելով, ներկայացվում էին այն խոջաների դատին, որոնց դրամագլխով առևտրի ասպարեզ էր մտել տվյալ վաճառականը: Դրանցից մեկն էր, օրինակ, Ստեփանոս Հայրապետյանը, որ Սպահանում 1719 թ. Նաֆրազ, Էմնիազ և Գրիգոր աղաներից ստացել էր 600 թուման և 10 տարի թափառելով երկրից երկիր (Կարին, Լիվոռնո, Իզմիր, Բաղդադ և այլն), վերադարձել էր Սուրաթ և հանձնել իր աղաներին շահված ողջ գումարը՝ 36804 թուման, ու, փակելով իր հաշիվը, ստացել էր իրեն հասանելիք շահի բաժինը՝ նախապես պայմանավորված 21%-ի չափով[84]: Ասում ենք փակել էր իր հաշիվը, նկատի ունենալով, որ նա, անտարակույս, ներկայացրել էր իր աղաներին Հովհաննեսի հաշվեմատյանների սկզբունքով կազմված մատյանները, որոնց մեջ արտացոլված են եղել տասնամյա իր դեգերումների ընթացքում կատարած առևտրական ու վարկային բոլոր գործարքները:

Պետք չէ տարակուսել, որ խոջաներն իրենց գործակատարների ներկայացրած հաշվետումարները բծախնդիր քննությամբ ուսումնասիրել են, մութ հարցերի շուրջ պարզաբանումներ են պահանջել, և կամ ընդունել ու հաստատել են դրանք, կամ էլ մերժել ու պատասխանատվության ենթարկել զանցառու գործակատարին: Ցավոք, Հովհաննես Ջուղայեցու և մեզ հասած այլ հաշվետումարների մեջ այդ կարգի գրանցումներ չեն պահպանվել (հավանաբար, այն կատարվել է մայր հաշվում կամ «կարմիր շիլաոր դֆտարում»), բայց այդ իրողությունը հաստատվում է Էջմիածնի վանական տնտեսության ելքի ու մուտքի մատյաններում առկա բազմաթիվ տվյալներով: Կաթողիկոսական դիվանում պահվող հնագույն դավթարներից մեկում, օրինակ, գրանցված են Մայր Աթոռի գործապետ կոչվող պաշտոնյաների 1739-1757 թթ. «մասրաֆի ու խարճի» (այսինքն՝ ծախսաբարական) հաշվետումարները: Բազմաթիվ տարիների հաշվետվություն-

[84] Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, նշված աշխ., Ա, էջ 161:

ների վերջում կան կաթողիկոսների կամ բարձրաստիճան այլ հոգևոր պաշտոնյաների մակագրությունները ու կնիքները՝ տվյալ տարվա (տարիների) հաշվետումարի հետ ծանոթանալու և այն ընդունելու մասին: Մակագրությունները տարբեր կերպով են ձևակերպված. Ղազար կաթողիկոսը 1739 թ. գրել է միայն. «Ինձ հաճելի է և ընդունելի», իսկ 1750 թ.՝ «Հէսապն տեսանք մայիս ամսոյ մուտն. ինձ հաճոյ եղև»[85]: 1753 թ. վերջում գտնում ենք այսպիսի արձանագրություն. «Այս վերոյգրեալ բոտակի հէսաբըն Հուէդէոս վարդապետին հետ տեսինք, ես՝ լուսարար Յեղիազար վարդապետս, ես ժամօրհ[ն]օղ Յակոբ վարդապետս, ես Թադէոս վարդապետս. մեզ հաճելի և ընդունելի է»: 1755 թ. կաթողիկոսական տեղապահ Հակոբ Շամախեցին Ալեքսանդր կաթողիկոսին է ներկայացրել իր կատարած ծախսերի մատյանը. վերջում կաթողիկոսի ձեռքով գրված է. «Գիտասջիք, զի այս տէֆտերից, որ է մասրաֆի Սրբոյ Աթոռոյս, որ տեղապահ կարգեալ զինքն ի Պոլսոյ թվին ՌՄԲ (1753) նամսեանն օգոստոսի, մինչև ՌՄԴ (1755) նամսեանն մայիսի մուտն, առաջի իմ հեսապ տեսին լուսարար Եղիազար և ժամօրհնօղ Յակոբ վարդապետքն և այլք ևս. Շամախեցի Յակոբ վարդապետէն ոչ առնելիք մնաց Սուրբ Աթոռոյս և իմ վերայ, և ոչ նորա Սուրբ Աթոռոյս և մեզ տալիք. և իմ վերայհասու եղեալ, վասն որոյ ձեռամբ իմով գրեցի և հաճեալ կնքեցի, և այս վասն այն՝ դիպող ժամու ընդունելի եղիցի տեսողաց. ոչ առնելիք մնաց, ոչ տալիք»[86]:

Պետք է ենթադրել, որ ճիշտ այսպիսի համառոտ կամ ընդարձակ ձևակերպումներով («հաճոյ է ինձ», «ինձ հաճելի և ընդունելի է», «... ոչ առնելիք մնաց, ոչ տալիք...» և այլն), կատարված վարկառու խոջաների կողմից, փակվում էին նաև ընկեր կոչվող գործակատար-վաճառականների ներկայացրած հաշվեմատյանները և, այդպիսով, լուծարքի էին ենթարկվում աղաների և գործակատարների միջև կնքված պայմանագրերը, հաճախ դրանց փոխարեն կնքվելով նոր պայմանագրեր:

16

Հաշվետումարի բնագիրը դյուրըմբռնելի դարձնելու համար անհրա-

[85] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. I, վավ. 3, էջ 36բ, 116բ:

[86] Նույն տեղում, էջ 171ա, 340բ:

ժեշտ է հպանցիկ անդրադառնալ նաև Հովհաննեսի կիրառած թվանշանների ոչ սովորական, բայց լավ մշակված սիստեմին:

Մեր վաճառականը քաջ ծանոթ է արաբական թվանշաններին և անխափան կիրառում է դրանք որոշ (սակավաթիվ) դեպքերում. այսպես, նա գրում է. «մանրամէլուն խարճին ջամէն այ 311I≡». այս տողի ձախակողմյան լուսանցքում գրված է նույն թիվը հայկական տառաթվային սիստեմով «գճժա I≡ (գծիկներով ցույց է տրվում կոտորակը):

Արաբական թվանշաններն օգտագործված են Հաշվետումարի հատկապես այն էջերում, ուր գրանցված են թանկի ու մխալի հաշվով Լհասայում կատարված առուծախի տեղեկությունները: Այդ գրանցումների ձախակողմյան լուսանցքում թանկի հաշիվը տրված է հայկական թվանշաններով, իսկ դրա տասնորդական մասը կազմող մխալի հաշիվը՝ արաբականով, այսպես. «Մին գօլնայ քարբար ծախեցի, քաշն մին թանկ Ը մխալ, ջամէն (լուսանցքում)՝ ա 8», կամ «Ծախեցի մին գօլնայ քարբար, որ էր քաշն մին թանկ II, ջամէն այ (լուսանցքում)՝ ա 5», կամ էլ՝ «Դարայ արարին, թէ թանկ անք առէ՝ գնաց II, որ է ջամէն (լուսանցքում)՝ . 5» և այլն:

Արաբական թվանշանները, սակայն, այնքան սակավ են գործածված Հաշվետումարում, որ մնում են գրեթե աննկատ: Հովհաննեսն իր հաշիվները հիմնականում կատարել է հայկական տառաթվային սիստեմի մի տարբերակով, որ ամենայն հավանականությամբ մշակվել է ջուղայեցիների միջավայրում, ընդունվել է Կոստանդ Ջուղայեցու կողմից ու ավանդվել նշանավոր այդ վարժապետի բազմաքանակ աշակերտներին, որոնք այն տարածել են հայ խոջայական կապիտալի գործունեության ոլորտի մեջ մտնող գաղթօջախներում:

Հայ հին ու միջնադարյան մատենագրության մեջ գործածված թվանշանների սովորական սիստեմն արտահայտվում է ստորև բերվող պարզ աղյուսակով.

Միավորներ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
	1	2	3	4	5	6	7	8	9

Տասնավորներ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
	10	20	30	40	50	60	70	80	90
Հարյուրավորներ	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
	100	200	300	400	500	600	700	800	900
Հազարավորներ	Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք
	1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Ջուղայեցու Հաշվետումարում միավոր ու տասնավոր թվերի վերաբերյալ շարքերն օգտագործված են անփոփոխ, սակայն տարբեր ձևով են ներկայացված հարյուրավորներն ու հազարավորները: Հովհաննեսը երբեք չի գրում, ասենք, Շ (500), Ջ (900), Ս (2000) կամ Ք (9000), այլ նույն այդ թվերն արտահայտում է ամենուրեք այսպես՝ ԵՃ (5x100), ԹՃ (9x100), ԲՌ (2x1000), ԹՌ (9x1000): Ըստ այդմ, դիցուք, 3476 թիվը, որ կարելի էր գրել (և հնում միշտ գրվում էր) ՎՆՀԶ ձևով, նա գրում է միայն՝ առանց բացառության՝ գռդճհզ ձևով: Հազարավոր ցույց տվող թվերի վերին մասում միշտ գրվում է երկու կետ, հարյուրավորների, տասնավորների ու միավորների վրա՝ մեկ հորիզոնական գիծ:

Երբ որևէ քառանիշ, եռանիշ կամ երկնիշ թվի մեջ արաբական սիստեմով գրելու դեպքում պետք է զրո գրվեր, Հաշվեմատյանի մեջ գրվում է մի կետ, ինչպես ընդունված էր Արևելքում, այսպես.

առ իբ —1022

առբճ բ – 1202

առբճի —1220

Խիստ ուշագրավ է կոտորակների գրանցման ձևը:

Այս ներածականի ընթերցողն արդեն ուշադրություն դարձրած կլինի այն ուղղահայաց ու հորիզոնական գծիկների վրա, որոնք գրված են

Հաշվետումարից արված քաղվածքների մեջ առկա թվերի աջ կողմում, օրինակ ժԱII, ԻԲII=, ԼԳII–III և այլն: Սրանք հենց կոտորակներն են, որոնց նշանակությունը բացահայտվում է ստորև բերվող աղյուսակով[87].

Կոտորակի նշանները	Նշանի արժեքը հասարակ կոտորակով
I	1/4
II	2/4
III	3/4
. –	1/16
. =	2/16
. ≡	3/16
. . I	1/64
. . II	2/64
. . III	3/64

Այսպիսով՝ I–I կոտորակը, օրինակ, նշանակում է 1/4+ 1/16+ 1/64 այսինքն՝ 21/64. =I= կոտորակը նշանակում է 2/4+ 2/16+ 2/64, այսինքն՝ 42/64 կամ 21/32 և այլն:

Տարեթվերն ու ամսաթվերը Հաշվետումարում, գրեթե առանց բացառության, նշված են միայն Ազարիա Ջուղայեցու տոմարով, որին Հովհաննեսը «Փոքր թիվ Ազարի», կամ ուղղակի՝ «Փոքր թիվ» է անվանում:

Հին Ջուղայում ստեղծված ու ավելի քան երկու դար Իրանում, Հնդկաստանում կամ այլուր ջուղայեցիներից կազմված գաղթօջախներում լայնորեն կիրառված այդ տոմարի առաջին տարին՝ հին տոմարով սկսվում է 1615 թվականի մարտի 21-ին (նոր տոմարով՝ մարտի 31-ին) և ավարտվում 1616 թվականի մարտի 20-ով (նոր տոմարով՝ մարտի 30-ով): Տարին,

---

87 Գծիկներից ձախ, զրոյին փոխարինող կետեր են դրված այն դեպքում, երբ բացակայում է կոտորակի տասնորդականը կամ հարյուրերորդականը, կամ էլ և՛ մեկը, և՛ մյուսը:

հին հայկական տոմարի նմանողությամբ, բաժանված է 13 ամիսների, որոնցից 12-ը հավասարապես ունեն 30 օր, իսկ վերջին՝ Ավելյաց ամիսը՝ 5 օր: Նահանջ տարիներին նախավերջին (Նիրհան) ամսին ավելացնում էին մեկ լրացուցիչ օր:

Ամիսներն են՝ Շամա, Ագամ, Շրաթ, Նախայ, Ղամար, Նադար, Թիրայ, Դամայ, Համիրայ, Արամ, Ովդան, Նիրհան, Աւելեաց:

Ագարիայի տոմարով նշված որևէ թվական այժմ կիրառության մեջ գտնվող թվականով ներկայացնելու համար պետք է դրան գումարել 1615 (եթե օրն ընկնում է մարտի 21-ից դեկտեմբերի 31-ի միջև) կամ էլ 1616 (եթե օրն ընկնում է հունվարի 1-ից մարտի 21-ի միջև)[88]:

17

Հաշվետումարում առկա ամբողջ հաշվապահական նյութը, ինչպես նախապես նշել ենք, երկու հիմնական մասերից է բաղկացած՝ օրհաշիվ և օժանդակ կամ զուգահեռ հաշիվներ (քաթա, խըսէպ, բառլամա և այլն): Որքանով որ Հաշվետումարը պահպանվել և մեզ է հասել առանձին թերթերի վրա գրված հատվածներով կամ ֆարդերով, բնագիրը առավել մատչելի դարձնելու նպատակով, ամբողջ օրհաշվային գրառումները՝ ժամանակագրական կարգով «Ռուզնամա» վերնագրի տակ, տրված են սկզբից, իսկ հաջորդ «Քաթաներ» բաժնում՝ բոլոր զուգահեռ հաշիվները:

Նյութերի նման հաջորդականությունը պատճառ է դարձել, որպեսզի Հովհաննեսի հաշվապահական թերթիկների դասավորությունը փոքր-ինչ փոփոխության ենթարկվի: Բնագրում, նախ մեկը մյուսի վրա դասավորված են մեր վաճառականի 1682-1693 թթ. ընթացքում կատարած օրհաշվային գրառումների թերթիկները, ապա այդ նույն տարիներին գնած ու վաճառած առանձին ապրանքների (լոնդրա, խերապատի, բարդար, լեղակ, մուշկ և այլն) վերաբերյալ քաթաները, բառլամաներն ու հաշիվները: Դրանից

[88] Տե՛ս «Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց զոմայեցւոց, Ագարիայի, Հայոց, Հռէից եւ Տաճկաց... յօրինեցեալ յապիրատ Նուրիջանեան Ղուկասէ Վանանդեցւոյ», Յամստէրդամ, 1698: Բ. Ե. Թումանյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965, էջ 38-40:

հետո միայն գալիս են Նեկղոսի ու Մելիքջանի ապրանքների վաճառքի մասին գրանցված հաշիվները, որոնք ճիշտ ու ճիշտ համապատասխանելով ռուզնամայի մյուս գրանցումներին, լրացնում են Ջուղայեցու Տիբեթյան տարիների գործունեության դրվագները և ուշագրավ շատ նյութեր պարունակում այդ երկրի տնտեսական կյանքի պատմության մասին: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Նեկղոսի և Մելիքջանի ապրանքների վերահիշյալ օրհաշվային գրանցումները ներկայացրել ենք ոչ թե քաթաներից հետո (ինչպես դրանք պահպանվել են լիսաբոնյան ձեռագրի մեջ), այլ տեղադրել ենք բուն ռուզնամայի վերջում: Ըստ այդմ, ռուզնամայի բաժինը բաղկացած է 13 միավորից, որից 11-ը՝ Հովհաննեսի օրհաշվային գրանցումներն ու քարբարի չափ ու կշռի հաշվարկներ են, իսկ վերջին երկու հատվածները՝ Նեկղոսի և Մելիքջանի ապրանքների վաճառքի տվյալները:

Քաթաների բաժինը բաղկացած է 69 միավորից (քաթա, խըսէպ, բառլամա), որոնցից յուրաքանչյուրի ելք ու մուտքի սյունակներում ամփոփված են առևտրական հիմնական ապրանքների (լոնդրա, լեղակ, դերգազի, խերապատի, բանդարի, չիթ, քարբար և այլն) վերաբերյալ ամփոփիչ տեղեկություններ, քաղված ռուզնամայի համապատասխան հատվածներից:

Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Հաշվետումարի գրանցումները կատարված են 54X18 սմ նեղ ու երկար թերթիկների վրա: Յուրաքանչյուր էջի ավարտին մեր վաճառականը հաշվեկշիռ է կատարել և հանրագումարի բերել նույն թերթիկի ելքն ու մուտքը, նշելով, թե տվյալ էջում կամ, ինչպես ինքն է անվանում, ֆարդում՝ քանի հաշվապահական հոդված (դալամ) է գրանցված և դրանց ընդհանուր գումարը նորից գրանցված է նոր սկսվող ելքի ու մուտքի սյունակների սկզբում, շարունակ նույն ձևով կրկնելով «էն ֆարդին ջամէն բերի գրի էս յիրեսումս»:

Տպագրության մեջ, բնականաբար, հնարավոր չէր պահպանել էջերի այս կառուցվածքը, քանի որ այլ չափեր ունեն մեր հրատարակության էջերը և՛ իրենց լայնքով, և՛ երկարությամբ: Սակայն, բնագրի ձևը հարազատորեն ներկայացնելու մտահոգությամբ, բոլոր այն տեղերում, երբ ավարտվում է տվյալ էջն ու սկսվում հաջորդը՝ երկու տողի չափով միջոց ենք թողել շեշտելու համար այդ իրողությունը և նույնությամբ ներկայացրել ենք սյունակների հաշվեկշռային գումարներն ամփոփող տվյալները:

Հաշվետումարի բնագիրը ներկայացնում ենք ընթերցողներին՝ պահ-

պահելով Հովհաննես Տեր-Դավթյանի կիրառած ուղղագրությունն անփոփոխ, չնայած մի շարք տարօրինակ և անսովոր ձևերի առկայության: Այսպես՝ ե-է-ի, հ-յ-ի ուղղագրության կայուն սկզբունքներ հաշվեմատյանում չեն կիրառված: Վաղակատար դերբայի վերջավորությունն, օրինակ, Ջուղայեցին, համարյա առանց բացառության, գրում է «էլ»-ով, «գեղարանքն անք գնացէլ», «Աղազարն աղարկէլ էր Սուրաթն» և այլն: Իսկ բղձական եղանակի ապառնին գրում է «ե»-ով. «խանե, բռավանայ առե, գնայ Ըսպահան, մայրաղին ուր խետ տանե Պասրայ ծախե»: Եթե «Յընդուստան», «յամալ» (բեռնակիր) կամ «յամամ» (բաղնիք) բառերը գրում է «յ»-ով, ապա «հընդեղ» (հնդիկ), «համալանայ» (բեռնակրի վարձ) կամ «հաքիմ» «հավայա», «հասիլ» բառերը գրում է «հ»ով: Բառամիջում հանդիպում է և՛ «օ», և՛ «ո». «խօղի», «խօրակ», «Թօրբայ», «բօղչայ», «դօշակ», «խօջայ», բայց և՝ «կոնթ», «ճոթ», «շոր» և այլն: Գործիական հոլովն առանց բացառության գրում է «օ»-ով (խարճօվ, զառօվ, արծաթօվ և այլն): Ռ-ով սկսվող բոլոր օտար բառերը, ենթարկվելով ջուղահայ բարբառի հնչյունային օրենքներին, սկզբից անպայման «ը» են ընդունել (ռաջայ-ըռաջայ, ռանկ-ըռանկ, ռուփի-ըռուփի, ռասխտ-ըռասխտ, ռահդար-ըռահդար և այլն): Մեծ մասամբ գրվում են նաև բառամիջում արտասանվող «ը»-երը (ֆըռանկ, Մուրատ-խանըն, կըտաւ, մըռջամ, նըվխանդայ, բըռնեցի): Երբեմն նույն բառերը գրված են առանց «ը»-ի (մռջամ, նվխանդայ, բռնեցի): Բնորոշ են նաև «ա»-ին հաջորդող «յ»-երը, որոնք բառավերջում համարյա անխուսափելի են, իսկ բառամիջում գրվում են և՛ բարդության դեպքում (բարօվայգիր, գեղնայպղինձ), և՛ առանձին պարզ բառերում (լաֆայֆայ, մայրաղի և այլն):

Բնագրում շատ բառեր գրված են այնպես, ինչպես արտասանվել են, առանց հաշվի առնելու ուղղագրական կանոնները (ջարթված, ավելնարթ, մարգարիթ, պարթկ և այլն): Երբեմն հանդիպում ենք նույն բառի և՛ գրական, և՛ բարբառային ձևերի (գըգրեմ, կուզրեմ): Բոլոր դեպքերում էլ, ինչպես ասվեց, պահպանված է բնագրի ուղղագրությունը, դրանց հետագա մանրագիտական ուսումնասիրությունը թողնելով հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվող լեզվաբաններին:

Պարսկական հատուկ անուններն ու տերմինները, եթե հատկացուցչի և հատկացյալի բաղադրությամբ՝ իզաֆեթով են տրված, այդ դեպքում,

ինչպես ընդունված է արևելագիտական գրականության մեջ, իզաֆեթի «ի»-ն գծիկով անջատել ենք հատկացյալից (Նավ-ի Հըրմըզ, նավ-ի Սլէման, բադ-ի սամբուր և այլն):

Հաշվետումարի բնագրում բոլոր թվերը ելքի և մուտքի սյունակներում և զուգահեռ լուսանցքներում, հատուկ նշաններով առանձնացված են: Ասված է արդեն, որ միավորների, տասնավորների և հարյուրավորների վերևում պատիվ է դրված, իսկ հազարավորի վրա՝ երկու կետ և ապա ամբողջ գումարը եզրափակված է հատուկ անջատիչ նշանով աօր ճծեIII (1255,75), բող ճ.եII (240,5): Վերջի եզրափակիչ նշանը կիրառվում է բոլոր դեպքերում, և՛ մեծ, և՛ փոքր, և՛ կոտորակային գումարները գրանցելիս: Տպագրության ընթացքում տեխնիկական դժվարություններից խուսափելու նպատակով, սույն հրատարակության մեջ բոլոր թվերն ընդգծել ենք և շարել սև տառերով, որով և վերացրել ենք անջատիչ տարբերանշանները. այսպես՝ «գազին ջամէն եկաւ ղճիբլ գազ, ֆի գազն զ, որ եկաւ փողին ջամէն բռնծ.» կամ «խ. թափ մանճայ՝ ժը թանկ, խ. թան սաղրի՝ ժզ թանկ, ժբ սէր մուշկ՝ ժդ թանկ, ղճ.. սամուռ՝ աճծա թանկ առզճլբ թամբաքու լզ թանկ, զ մախալ» և այլն: «Օ»-ի համարժեք հանդիսացող կետերը ճշգրտորեն պահպանված են միայն դրամական և ապրանքային չափ ու կշռի հաշիվներում, իսկ տարեթվերում, ամսաթվերում կամ որոշակի չափանիշ կամ տոկոս ցույց տվող թվերում զեղչված են («փոքր թիվն կ, նադար ամսի ի-ում», «փոքր թիվն ճ դամայ ժ-ում», «Ազամ ծ-էն մինչև լ մուզաթ կուզէ ճ-ին՝ III»):

Բացառություն է կազմում միայն 4-րդ գլուխը, որտեղ տրված մարջանի (մռջամ) հաշիվները շարված են գլխատառերով:

Բնագրում հանդիպող ոչ մեծ թվով անվերծանելի հատվածների մասին տողատակում տրված են բացատրություններ, վնասված և անընթեռնելի հատվածների հավանական ընթերցումները անկյունավոր փակագծերի մեջ են առնված, իսկ չընթերցվող տեղերը նշված են բազմակետերով, այդ մասին տողատակում տրվող համապատասխան բացատրությամբ:

Գիտական շրջանակների ուշադրությանը ներկայացնելով միջազգային առևտրի վաճառաշահ կենտրոններում իրենց բուռն գործունեությամբ համընդհանուր ճանաչման արժանացած հայ վաճառականության, ժամանակի ամենակատարելագործված հաշվապահության սկզբունքներով կազ-

մած և առևտրափոխատվական գործարքների ու բանկային գործառնությունների ճշգրիտ պատկերն արտացոլող հաշվեմատյանների գիտական հրապարակման այս անդրանիկ փորձը, հեռու ենք այն մաքից, թե սրանով սպառված պետք է համարել այս կարևոր հուշարձանի ուսումնասիրությունը: Համոզված ենք, որ և՛ բնագրագետները, և՛, մանավանդ, տնտեսական պատմության մասնագետները արժեքավոր ճշտումներ կկատարեն և ավելի հանգամանորեն կուսումնասիրեն այն:

Սակայն, որքանով որ անհամեմատ ստվարածավալ այս բնագրի հրապարակումով հիմնականում հաղթահարված է հաշվեմատյանների, առևտրական գրագրությունների և հարակից այլ տնտեսական վավերագրերի լեզուն և մեծ չափով յուրացված՝ առևտրական գործարքների, ապրանքափոխանակության, դրամական փոխադրությունների ու բանկային գործառնությունների տնտեսահաշվարկային տերմինոլոգիան, ապա կարելի է հուսալ, որ ուղի է հարթված տնտեսական պատմության, ցարդ լիովին անուշադրության մատնված այս կարևոր սկզբնաղբյուրների, ինչպես բնագրագիտական, այնպես նաև պատմատնտեսագիտական հետագա առավել համակողմանի ուսումնասիրության համար:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՉՊԵՍ ՉՊԵՏՔ Է ՀՐԱՏԱՐԱԿՎԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

(Պրոֆ. Աշ. Աբրահամյանի կողմից Ստեփաննոս Օրբելյանի անվամբ հրատարակված «Ժամանակագրության» առնչությամբ)

Հայկական միջնադարյան բազմահազար ձեռագրերը, որոնց զգալի մասը դեռևս հրատարակված չէ, ունեն համաշխարհային նշանակություն:

Այդ ձեռագրերի ուսումնասիրության հիման վրա պետք է լուծվեն միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-տնտեսական կյանքի դեռևս չլուսաբանված բազմաթիվ պրոբլեմներ: Նրանք պետք է հարստացնեն սոցիալական շարժումների ուսումնասիրման առկա բազան՝ նորանոր նյութերով, նրանց հարուստ տվյալների մանրազնին ուսումնասիրության միջոցով պետք է որոշվեն այն ճանապարհները, որոնցով զարգացել է գիտական միտքը հին և միջնադարյան Հայաստանում, և ստեղծվել են տիեզերագիտության, մաթեմատիկայի, բժշկագիտության, ալքիմիայի և այլ գիտությունների վերաբերյալ բազմաթիվ բնագրեր:

Հայաստանի գիտական հաստատությունների և առաջին հերթին Գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտների առաջ դրված է շատ կարևոր մի խնդիր՝ մշակել արդի գիտության պահանջները բավարարող սկզբունքներ՝ մեր ձեռագրերի հրատարակության համար:

Վերջին տարիներս Հայաստանի գիտական հաստատությունների կողմից հրատարակվել են մի շարք պատմական մեծ արժեք ունեցող բնագ-

---

* Գրախոսությունը հրատարակվել է Վազգեն Հակոբյանի հեղինակակցությամբ («Տեղեկագիր», 1949, N 2, էջ 77-87):

րեր, որոնք չեն կարող բավարարել օրավուր գարգացող պատմագրության պահանջները: Մի օրինակի հիման վրա փորձենք հիմնավորել մեր ասածը:

Քննության ենթակա բնագիրը 13-րդ դարի պատմության համար հետաքրքրական տեղեկություններ պարունակող մի ժամանակագրություն է, որ լույս է տեսել 1942 թ. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարանի) հրատարակությամբ, պատմ. գիտ. թեկնածու (այժմ դոկտոր-պրոֆեսոր) Աշ. Աբրահամյանի համառոտ առաջաբանով և աշխատությամբ[1]:

Այդ համառոտ առաջաբանում (էջ 3-7) հրատարակիչն աշխատել է պարզել ժամանակագրության հեղինակի հարցը և որոշ տեղեկություններ հաղորդել միակ ձեռագրի (N 8481) և իր կողմից կատարած հրատարակության մասին:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանի հաղորդմամբ, ժամանակագրության հեղինակը 13-րդ դարի նշանավոր մատենագիր, «Պատմութիւն նահանգին Սիսական» մեծածավալ և արժեքավոր աշխատության հեղինակ, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփաննոս Օրբելյանն է:

Իր այս եզրակացությունը (որն ըստ նրա՝ կասկածի ենթակա չէ), նա հիմնավորել է ժամանակագրության մեջ գտնված մի վկայությամբ, ուր ասված է. «...Ես նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ»: Բնագրի այս հատվածին կցած ծանոթագրության մեջ (էջ 22, ծանոթ. 2-րդ) հրատարակիչը գրում է. «Ստեփաննոս Օրբելյանի անվան միակ հիշատակությունն է սա, որը գլխավոր կռվաններից մեկն է հանդիսանում ներկա «Ժամանակագրութիւն»-ը նրան վերագրելու հարցում»: Ուշադիր կերպով քննում ենք առաջաբանը մյուս «գլխավոր կռվանների» հետ ծանոթանալու նպատակով, սակայն բացի սույն ժամանակագրության ու Ստ. Օրբելյանի հանրահայտ «Պատմութեան» երեք փոքրիկ համադրությունից, այլ կռվաններ չենք գտնում: Անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ այդ համադրություններին. Ստ. Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ գրում է՝ «եկն և

[1] Սույն ժամանակագրությունը, մինչև հրատարակվելը, հայտնի է եղել միայն սակավաթիվ մասնագետների, որոնք իրենց որոշ աշխատություններում համառոտ վկայություններ են բերել նրանից:

օձ թանձրագին որ եռայր յամանս և յանկողինս ի տուէ և ի գիշերի: Եկեր և մարախն մեծ մինչ ի ծովն Ովկիանոս և էած սով առ հասարակ ... տապաստ անկեալ լինէին լերանց և դաշտից և ձորոց, սակս որոյ և անկաւ գայլ մարդակեր, և գմնացեալսն ի սրոյն, յօձէն, ի սովոյն և ի մահուանէն նոքա գիշատեալ սատակէին»[2]:

Սույն հատվածի դիմաց, առաջաբանում, գրված ենք գտնում հրատարակվող բնագրից մի հատված, որը հրատարակչի կարծիքով պետք է հիմնավորեր Պատմության և ժամանակագրության հեղինակների նույնության մասին իր հայտնած ենթադրությունը: Այդ հատվածը հետևյալն է. «...և զկնի այսորիկ ամենայն ցասումն և պատուհաս բազմացաւ յաշխարհիս մեր չարաշշուկք. զի ի չուրս և յամանս և յանկողինս եռային ի տուէ և ի գիշերի, և եկն մարախ սաստիկ և եկեր մինչ ի ծովն Ովկիանոս և ապա սով սաստիկ, որ չև էր եղեալ յաշխարհի և ապա գայլ մարդախանձ. այսպէս տեսիլ եղաք ամենայն մեղեաց»[3]:

Տարբեր բնագրերից վերցված վերոհիշյալ երկու հատվածների համադրության մեջ շոշափվող եզրեր անշուշտ կան, սակայն անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ այդ դեպքը կատարված է Ստ. Օրբելյանի ծննդից տարիներ առաջ՝ 1225 թվականին: Այդ նկարագրության համար, ինչպես Ստ. Օրբելյանը, այնպես էլ քննարկվող ժամանակագրության հեղինակը, միմյանցից անկախ, կարող էին օգտագործել դեպքերին ժամանակակից ու ականատես մեկի կողմից գրված որևէ աղբյուր: Ուստի այս համադրությունը «կարևոր կռվանի» դեր չի կարող կատարել:

Երկրորդ համադրությունը վերաբերում է Փնդուխտար սուլթանի կողմից 1268 թ. Անտիոքի գրավման վկայությանը: Ստ. Օրբելյանի Պատմության մեջ «Անտիոք» և «Փնդուխտար» ձևերի փոխարեն մեր ժամանակագրությունն ունի «Անտար»[4] և «Փունախդար» ձևերը, բացի այդ, Օրբել-

[2] Սույն հատվածը մեջ է բերված Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության Ղուկասյան հրատարակությունից (Թիֆլիս, 1910, էջ 400):

[3] Մատենադարան, N 8481, էջ 206ա և բ: Բնագրում «յաշխարհիս» փխ. «յաշխարհս» և «մինչ ի» փխ. «մինչև ի»:

[4] Հրատարակության մեջ դր Աշ. Աբրահամյանը այս տարբերությունը սրբագրել է՝ «Անտարի» փոխարեն դնելով «Անտիոք»:

յանը հաղորդում է, որ Փնտուխտարը «Մովացոց գմէջ պարսպին», իսկ ժամանակագրության հեղինակը՝ «յատակեցին և ծովացուցին գքաղաքն»:

Ակնհայտ է, որ 3-4 տողանոց դեմդիմաց գրված այդ հատվածները որքան նմանություն՝ այնքան էլ տարբերություններ ունեն միմյանց հանդեպ, ուստի քննարկվող ժամանակագրության հեղինակի որոշման գործում նույնպես անզոր են:

Ավելի մեծ սպասելիքներով մոտենում ենք վերջին «կարևոր կովանին»: Երրորդ համադրությամբ դեմ դիմաց գրված են հետևյալ հատվածները:

Ժամանակագրություն էջ 26	Ստ. Օրբէլեան «Պատմութիւն...» էջ 419
«Մեծ բարեպաշտ քրիստոնէից յոյսն Առանդուզ[5] խաթունն մեռաւ ընդ Հուլաուին և ասին՝ դեղակուր լեալ. բուքն յանիծեալ Սահիպէն»[6]:	«Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից, Հուլաւու ղանն մեռանի ի յ 713 թուին. ընդ նմին և ամենօրհնեալն Տօնղուզ խաթունն՝ կին նորա, որք դեղակուր եղեն ի բազմահնար խոջայէն Սահիպէն»:

Ինչպես տեսնում ենք այս հատվածներից ժամանակագրության հեղինակը Հուլաուի կնոջը կոչում է Առանդուզ, իսկ Ստ. Օրբելյանը՝ Տօնղուզ. ժամանակագրության հեղինակը Հուլաուի կնոջը համարում է «մեծ բարեպաշտ, քրիստոնէից յոյս ...», իսկ Ստ. Օրբելյանը Հուլաու ղանին է համարում «... մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից ...», ժամանակագրության հեղինակը նրանց թունավորողին կոչում է «անիծեալ Սահիպ», իսկ Ստ. Օրբելյանը՝ «բազմահնար խոջայ Սահիպ», միմյանցից տարբեր են նաև այդ հատվածների շարահյուսությունն

[5] Ձեռագրում կարդում ենք «Առանդուզ» փխ. «Առանդուզ»:

[6] Առաջաբանում ամենուրեք հրատարակված բնագրի էջերը ցույց տալու փոխարեն, ցույց են տրված ձեռագրի էջերը: «Բուքն» ընդգծված բառի առթիվ հրատարակիչը գրում է՝ «կրկնակի իմաստով է գործածված» (էջ 26, ծանոթ. 7), հավանաբար ցանկանում է ասել, որ «բուքն» բառը «երկուքն» բառի հապավված ձևն է:

ու կառուցվածքը: Միակ ընդհանրությունը, որ կա վերոհիշյալ երկու հատվածների միջև, այդ պատմվող նյութի նույնությունն է, բայց չէ՞ որ պատմական միևնույն իրադրությանը կարող էին անդրադառնալ միմյանցից անկախ մի շարք ժամանակակից պատմիչներ: Ուստի, վերոհիշյալ երրորդ համադրությունը նույնպես ժամանակագրության հեղինակի որոշման գործում չի կարող կատարել «գլխավոր կովանի» դեր:

Այսպիսով, չնայած հրատարակիչն իր առաջաբանում և մեզ արդեն հայտնի ծանոթագրության մեջ ակնարկում է մի քանի «գլխավոր կովանների» մասին, սակայն հեղինակի որոշման գործում նրա միակ կովանը «ժամանակագրության» այն հատվածն է, ուր հեղինակը հայտնում է իր անունը («Ես նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու») և որին հրատարակիչը կցել է իր ծանոթագրությունն այն մասին, որ այդ «Ստեփաննոս Օրբելյանի անվան միակ հիշատակությունն է»:

Ինչպես տեսանք, ժամանակագրության հեղինակը հայտնում է միայն իր անունը Ստեփաննոս և ակնարկ անգամ չի անում այն մասին, որ ինքը Ստեփաննոս Օրբելյան հանրահայտ մատենագիրն է:

Այսպիսով, Մատենադարանի կողմից հրատարակված կարևոր այս ժամանակագրության հեղինակի հարցը չի լուծված հրատարակչի կողմից: Հասկանալի է, որ նախքան հեղինակի մասին վճռական որևէ խոսք ասելը, անհրաժեշտ էր ավելի մանրամասն կերպով համեմատել պատմական այդ երկու սկզբնաղբյուրները միմյանց, քան արել է հրատարակիչը:

Այս առումով կարևոր նշանակություն են ստանում քննարկվող ժամանակագրության և Ստ. Օրբելյանի Պատմության մեջ միևնույն պատմական իրադարձության մասին եղած, մի շարք այլ հատվածների համեմատությունից ստացված արդյունքները: Համադրությամբ մեջ ենք բերում այդպիսի բնորոշ հատվածներից մի քանիսը, յուրաքանչյուրի մասին անելով մեր դիտողությունները:

Ժամանակագրություն էջ 24	Ստ. Օրբէլեան Պատմութիւն նահանգին Սիսական
«Եւ յետ ԲԺ. ամի նորաամին ոչ շատացաք այնու, այլ եկն ազգն նետողաց թաթարն, անընդել և ահագնատեսիլ և անյագ գազանն և	«Իսկ յետ մետասան ամի զարթոյց Տէր յարևելից զազգն ..., որ մուղալք կոչէին, ... անաստուածք և անօրէնք, բայց բնու-

ծածկեցին զերեսս աշխարհի, զո-րոց զանհնարին գործսն և անցս աղէտիցն ոչ բաւէ լեզու բանիւ բա-ցայայտել, այլ միայն լալ ...»:

թեամբ օրինացն զարդարեալք, ա-տեցողք աղտեղի գիջութեանց և ամենայն վնասակար գործոց, ար-դարամիտք առ միմեանս, միամիտք և հնազանդ առաջնորդի իւրեանց, իրաւարարք և իրաւադատք, իսկ բարուք աղքատք և ընչաքաղցք, նեղիչք և կեղեքիչք մարդկան. պատկերով յոյժ գեղեցիկք և լերկք ըստ կանացի դիմաց, և ծանօթք քրիստոնեան հաւատոյ, և յոյժ սիրողք քրիստոնէից ...»[7]:

Եթե նույնիսկ ուշադրություն չդարձնենք տարեթվերի տարբերության վրա («յետ երկոտասան ամի», փխ. «յետ մետասան ամի»), գարձյալ ակնհայտ կերպով տարբեր բաներ են հաղորդում մոնղոլների մասին մեր երկու հեղինակները: Ժամանակագրության հեղինակ Ստեփանոսի համար մոնղոլներն «անընդել և անհավատարիմ» են, այսինքն՝ ագեղ ու սարսափ ազդող դեմքով, իսկ Ստ. Օրբելյանի աչքին (չպետք է մոռանալ, որ նրա մայրը մոնղոլուհի էր) նրանք երևում են «պատկերով յոյժ գեղեցիկք», Ժամանակագրության հեղինակը նրանց նկարագրում է որպես անհագ ու արյունռուշտ գազան, իսկ Ստ. Օրբելյանը՝ որպես «իրաւարարք և իրաւադատք» և այլն: Ժամանակագրության հեղինակը հայտնում է, որ մոնղոլների գործած ավերումներն ու խժդժությունները այն աստիճանի ողբալիք են եղել, որ «ոչ բաւէ լեզու բանիւ բացայայտել», մինչդեռ Օրբելյանը լռում է այդ մասին, և լռում միտումնավոր կերպով, որովհետև իր հայրենի կալվածքը մոնղոլների իշխանության օրոք էր «իբր զտապանն Նոյեան ի մէջ աշխարհակործան ալեացն ...»[8]:

Ժամանակագրության 25 էջում կարդում ենք՝ «Յայսմ (ՈՁԵ = 1236) ամի էառ Չարմանն և Չաղաթայն զբոլոր երկիրս մեր՝ զԱնի, զԿարս, զԼաւռէ, զՍուրբ Մարի»:

[7] Ստ. Օրբէլեան, Պատմութիւն ..., էջ 400-401:
[8] Նոյն տեղում, էջ 431-432:

Ժամանակագրության սույն էջերում, ինչպես տեսնում ենք, մեր հեղինակն անհրաժեշտ է համարել նշել Հայաստանի նշանավոր այն քաղաքները, որոնք նվաճվեցին մոնղոլների կողմից 1236 թվականին: Բնական է ենթադրել, որ նույն հեղինակը գրելով ընդարձակ պատմություն, պետք է որ կանգ առներ Հայաստանի պատմության համար կարևոր այդ իրադարձությունների վրա և մանրամասն տեղեկություններ հաղորդեր Անիի, Կարսի և մյուս քաղաքների անկման մասին: Մինչդեռ Ստ. Օրբելյանն իր ընդարձակածավալ պատմության մեջ ավելորդ է համարել նույնիսկ հիշատակել մոնղոլների կողմից այդ քաղաքների գրավման փաստն ու տարեթիվը և բավարարվել է գրելով միայն. «Իսկ միւս կողմն եկին (մոնղոլները – Լ. Խ. և Վ. Հ.) ընդ մէջ աշխարհիս ... Եւ պտուտկեալ, փոթորկեալ հասին յաշխարհս մեր. և առ հասարակ տիրեալ հնազանդեցին զամենայն տիեզերս ... Առին և զԱտրպատական, զԱռան և զՀայաստան, զՎիրս և զՀոռոմս ...»[9]:

Ժամանակագրության հեղինակը ՈԿԱ (1212) թվականի տակ պատմում է Զաքարե և Իվանե եղբայրների մասին, որոնք ցանկանալով «միաբանել զՀայս և զՎիրս», Գետկա վանքում ժողով են գումարում «բազում հարանց և վարդապետաց, ընդ որս էին ... Գոշ Մխիթարն, Մոնոնիկն և Տուրքիկն», նրանց չի հաջողվում գլուխ բերել միաբանության գործը, ապա Զաքարեն արշավում է Արտավիլ և վերադարձին («ի գալ ամն» այսինքն 1213 թվականին) մահանում է ճանապարհին ու թաղվում «ի Սանահինն ուխտ» (էջ 23): Հակառակ սպասածին, Ստ. Օրբելյանն իր ծավալուն Պատմության մեջ վերոհիշյալ դեպքերին չի անդրադառնում, հայտնելով միայն, որ Զաքարեն «...մեռանի ի 661 (1212) թուին» (էջ 398), այսինքն մի տարի առաջ Ժամանակագրության տվյալից:

Կոստանդին կաթողիկոսին կարգալույծ անելուց հետո կիլիկեցիք Սսում ժողով են գումարում, նոր կաթողիկոս ընտրելու համար: Ժողովին հրավիրվում են մասնակցելու Արևելյան Հայաստանից բազմաթիվ եպիսկոպոսներ և իշխաններ, բայց հրավիրվածներից շատերը, որոնց թվում նաև մեր Ժամանակագրության հեղինակն ու Ստ. Օրբելյանը, հրաժարվում են Կիլիկիա մեկնելուց. լսենք նրանց.

[9] Ստ. Օրբէլեան, էջ 401-402:

Ժամանակագրություն էջ 31	Ստ. Օրբէլեան, Պատմ., էջ 440
«...հրաւիրեցին զմեզ և զայլ եպիսկոպոսունս և զայլ իշխանս Արևելից երթալ ի թագաւորութիւնն մեր ի Սիս՝ յընտրութիւն նորոց Հայրապետին, որում անպարապ գտեալ ոչ ժամանեցաք...»:	*«Եւ յետ այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօք գնալ ի ժողովն նորոց ընտրութեան հայրապետի, որում պատասխանեալ ասացաք, մեք ոչ եմք[10] հաւու կամ խորհրդակից եղծման գի և նորոգմանն հաղորդեսցուք ոք որ ինքնահաճ կամօք եղծումն արար, նոյն և զնորոց ընտրութիւնն հոգասցէ...»:*

Ստ. Օրբելյանը հրաժարվում է կաթողիկոսական ընտրություններին մասնակցելուց, որովհետև քաջ գիտե Կոստանդին կաթողիկոսի գահակալման իրական՝ քաղաքական դրդապատճառները, և Կոստանդինի թշնամիներին համարում է իր կուսակցության թշնամիներ, իսկ Ժամանակագրության *հեղինակը Կիլիկիա մեկնելու հրավերը չի ընդունում սոսկ զբաղված լինելու պատճառով («անպարապ գտեալ ոչ ժամանեցաք»):*

Ժամանակագրության մեջ ՉԼ (=1281) թվականի դիմաց կարդում ենք.

«Մեռաւ Մանկու Դէմուրն, եղբայր Ապաղանին ի Ջաղաթոյն և Շիպաուչին՝ ի Բաղդատ. և նստաւ յաթոռն բռնութեամբ Թագուդարն Ահմատ անուանեալ՝ Մահմետի աւրինաւքն» (էջ 28):

Ստ. Օրբելյանի պատմության տվյալներով Թագուդար–Ահմատը նստում է գահի վրա ոչ թե Մանկու Դեմուրի, այլ Ապաղայի մահվանից հետո («յետ Ապաղային») և ոչ թե 1281, այլ 1282 թվականին[11]:

Ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ փաստերը, քննարկվող ժամանակագրության ու «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության հեղինակները տարբեր անձնավորություններ են, ունեն հետաքրքրության ուրույն բնագավառներ, հաճախ միևնույն պատմական դեպքի մասին հաղորդում են տարբեր, նույնիսկ հակասական տեղեկություններ: Ուստի, Ժա-

[10] Բնագրում «եմբ» ձևով:

[11] Ստ. Օրբէլեան, էջ 425:

մանակագրության *հրատարակիչ պրոֆ. Աշ. Աբրահամյանը կատարել է աղբյուրագիտական սխալ՝ քննարկվող ժամանակագրությունը վերագրելով Ստեփաննոս Օրբելյանին:*

Մեզ արդեն ծանոթ գլխավոր կռվաններով լուծված համարելով ժամանակագրության հեղինակի հարցը, հրատարակիչը փորձել է նաև շոշափել սույն Ժամանակագրության *և Ստ. Օրբելյանի* Պատմության *փոխհարաբերության հարցը և, առանց որևէ փաստարկման, հանգել է այն եզրակացության, որ ժամանակագրությունը Օրբելյանի կողմից գրվել է որպես սեղմ ծրագիր իր մեծածավալ* Պատմության *համար:*

«Այսպիսով, — գրում է նա, — պարզվում է , որ Օրբելյանն իր Պատմությունից առաջ գրել է ներկա «Ժամանակագրությունը», *որից և օգտվել է հետո «Պատմութեան» գրելու ժամանակ: Այս փաստը հայկական մատենագրության մեջ կարևոր փաստ է, որովհետև նա կենդանի նյութ է տալիս մեզ պատկերացնելու՝ թե ինչպես է կազմվել, ձևավորվել մեզ հասած այս կամ այն մատենագրի խոշոր երկը» (էջ 6):*

Ընդունենք, որ սույն ժամանակագրությունը *կազմելուց հետո Ստ. Օրբելյանը ձեռնամուխ է եղել* Պատմության *շարադրմանը, օգտագործելով այն որպես կոնսպեկտ իր մեծածավալ աշխատության համար: Այդ դեպքում բնական է ենթադրել, որ համառոտ ժամանակագրության մեջ ներմուծված բոլոր կարևոր պատմական տեղեկություններն ու տվյալները, այս կամ այն չափով խմբագրվելուց և մանրամասնվելուց հետո, պետք է որ տեղ գտնեին նաև ընդարձակ* Պատմության *մեջ: Սակայն իրականության մեջ այլ բան ենք տեսնում:* Ժամանակագրության *մեջ կան մի շարք կարևոր դեպքերի և իրադարձությունների մասին նշումներ, որոնք տեղ չեն գտել Պատմության էջերում: Ծանոթանանք այդպիսի նշումներից մի քանիսի հետ.*

1. «ՈՁԴ (=1235) Շահնշահ որդի Զաքարէին էառ զՄուրբ Սարի և Հոռմեցին էառ զՈւռհայ՝ զխառըս և աւերակն» («Ժամանակ», *էջ 25):*

2. «ՅՂ (=1251) թւին կատարեցաւ սուրբն Աստուծոյ Վանական վարդապետն ...» (էջ 26):

3. «ՉԺԹ (=1270) կատարեցաւ սուրբ վարդապետն Վարդան: Եւ յետ

Ծ ամաւր՝ Կիրակոս Վարդապետն ի Կիլիկիայ» (էջ 27)[12]:

4. «ՉԻԵ (=1276). Յայսմ ամի սպանաւ ի Տաճկաց մեծ արքեպիսկոպոսն Էգնկային[13]*. Տէր Սարգիս և որդին իւր և այլ քահանայք, որոց*[14] *գլխաւորքն Տուխթարն և Ջալալին: Եւ Ապագայն ի Հռոմք գնաց և վրէժխնդիր եղև արեան նորա և բազում ամիրայք էսպան և գնիկիտա*[15] *խարբերդոյ երկիրն աւերեաց» (էջ 27-28):*

5. «ՉԻԶ (=1277) Թաւղան նուինն ժէՌ - աւ յԱպլասթայն կոտորեցաւ ի Փունդուխտա(ր) սուլտանէն Մսրայ. և զՓարուանայն յԱպատագրն կոտորեցին և այլս բազումս սպանին»[16] *(էջ 28):*

6. «ՉԼԶ (=1287) Զմեռն խիստ եղև. մեռան մեծ իշխանք ի խաչէն՝ Աթաբակ որդի Ջալալին և Հասան թոռն Դա(ւ)թին. և ապա մեռաւ Ճարն ի Տփխիս» (էջ 30):

Նման տեղեկությունների թիվը կարելի է բազմապատկել, բայց ընդարձակվելու կարիք չկա: Վերոհիշյալ օրինակներից և նախորդ փաստերից կարելի է հանգել մի եզրակացության, այն է՝ քննարկվող ժամանակագրության հեղինակ Ստեփանոսը և հանրահայտ մատենագիր Ստեփանոս Օրբելյանը տարբեր անձնավորություններ են: *ժամանակագրության մեջ, ինչպես գիտենք արդեն այլ առիթներով, հեղինակն իր մասին տեղեկություններ է տալիս երկու անգամ՝ նախ ժամանակագրության վերնա-*

[12] Կետադրության կանոններ հրատարակչի համար կարծես գոյություն չունեն: Հրատարակված բնագրում առանց վերջակետի երբեմն շարված են լինում մեկը մյուսի ետևից տասից ավելի նախադասություններ: Այս օրինակից զատ (դրված վերջակետը խանգարում է հասկանալ թե Կիրակոսը Ծ (= 50) օրից հետո ինչ եղավ), կարելի է բերել մի շարք այլ օրինակներ:

[13] Տպված է «Յասմ» փխ. «Յայսմ», «եզնկայի», ձեռագրում կարդում ենք «էգնկային»:

[14] Տպված է «որոնց»:

[15] Տպված է «զկնի Կիտա»:

[16] Տպված է «թաւաղն», փխ. «թաւղան». ժէՌ-աւ համառոտումը չի բացված. «յԱպլութայն» փխ. «յԱպլասթայն»: Ամբողջ հատվածը տպագրում տեղավորված է ՉԻԶ (=1277) թվականից շատ վերև, այնպես, որ առանց ձեռագրին դիմելու, անհնարին է պարզել այս հատվածի տարեթիվը:

գրում[17]*, որտեղ ասված է.* «Ես նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու...» *(էջ 22), և երկրորդ՝ նախավերջին պարբերության մեջ, որտեղ կարդում ենք. «ՉԼԸ (=1289)... ի ձեռն թղթոց մեծապատիւ արամ(բ)քք հրաւիրեցին զմեզ և զայլ եպիսկոպոսունս և զայլ իշխանս Արևելից երթալ ի թագաւորութիւնն մեռ ի Սիս՝ յինդրութիւն նորոց Հայրապետին ...» (էջ 31):*

Այս երկու վկայություններից պարզ է դառնում ժամանակագրության հեղինակի անունը՝ Ստեփանոս, և այն, որ նա եպիսկոպոս է («այցելու») և գործել է Արևելյան Հայաստանում: Հրատարակիչն իր առաջաբանում հայտնում է, որ Արևելյան Հայաստանում, այդ ժամանակ, որպես մատենագիր մեզ հայտնի է միայն մի Ստեփաննոս եպիսկոպոս՝ Ստեփաննոս Օրբելյանը *(էջ 6): Ճիշտ է, նախորդ էջում նա հիշատակում է մի քանի Ստեփանոսների անուններ (Արճիշեցի, Սկևռացի և Կիլիկեցի), որոնց կողմից ընդօրինակված ձեռագրեր են հասել մեզ, սակայն մերժում է նրանց հեղինակությունը, որովհետև «այս Ստեփանոսները. բոլորն էլ, Հարավային Հայաստանից են» (էջ 6): Այս պնդումն արված է հապճեպորեն, առանց քննելու մեզ հասած ձեռագրական բոլոր վկայությունները: Միայն մեր Մատենադարանում պահվող հայկական ձեռագրերի գրիչների շարքում կան մի քանի այլ Ստեփանոսներ, որոնք հրատարակչի տեսադաշտից վրիպել են, և որոնք, ամենայն հավանականությամբ, գործել են Արևելյան Հայաստանում, դրանք են՝ Ստեփանոս Կարնեցի (գրիչ, N 2817 ձեռագրի), Ստեփանոս Հայրապետ (գրիչ, N 4811 ճաշոցի), Ստեփանոս քահանայ (N 7663), ոմն Ստեփանոս (N 3816) և Տարսայիճ - Ստեփանոս: Վերջինիս մասին տեղեկություններ ստանում ենք Մատենադարանի N 9150 ձեռագրից, որը մեզ չհասած մի ավետարանի հիշատակարան է*[18]*, գրված 1314 թվին Պողոս Կիլիկեցի գրչի կողմից:*

Այս Ստեփանոսը ուսած լինելով Գլաձորյան համալսարանի նշանավոր րաբունապետ Եսայի Նչեցու և Սարգիս վարդապետի մոտ՝ «Եաև յիմաս-

[17] Հրատարակության մեջ վերնագիրը սխալմամբ ձուլված է բնագրին:

[18] Այս հիշատակարանը պահվում է Մատենադարանի պատառիկների ֆոնդում, 1515 համարի տակ: 1944 թվին մուծվել է Ձեռագրաց ֆոնդ: Հնում պատկանել է Խաչիկ վրդ. Դադյանին և նկարագրված է նրա սեփականությունը կազմող ձեռագրերի ցուցակի Բ հատորում:

տասիրական արհեստս յոլով ժամանակս» գեգերելով, ի վիճակի էր գրել նման մի ժամանակագրություն, սակայն 1314 թվականին նա շատ երիտասարդ էր և դեռ նոր միայն պատրաստվում էր «կատիճան վարդապետութեան և եպիսկոպոսութեան տանն Սիւնեաց»[19], ուստի 1289 թվականին դժվար թե այլ եպիսկոպոսների հետ մեկտեղ կանչված լիներ Կիլիկիա՝ կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու: Այնուամենայնիվ սույն ժամանակագրության հեղինակի որոշման ուղղությամբ ձեռնարկվելիք հետագա աշխատանքների ընթացքում ուշադրություն պետք է դարձնել նաև այս Ստեփանոսի վրա, որն ըստ ձեռագրի հիշատակարանի, Ստ. Օրբելյանի եղբայր Ջալալի որդին է:

Այժմ համառոտակի ծանոթանանք բնագրի հրատարակության հետ:

Ստեփանոսը, որպես ժամանակագիր, Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկն է: Իր ժամանակագրության ներածականում նա որոշակիորեն հայտնում է, որ «Զայս գաւազանք և չափ ժամանակաց գտաք ճշգիւ սահմանեալ և եդեալ Սամուէլի ճշ(մար)տաբան քահանայի գկարգս թագաւորաց և կայսերաց ընդ (որում և) կաթողիկոսացն Հայոց, սկսեալ յառաջին ամէ (մարմնա)նալոյ տեառն մինչ ի ՌՃՂԵ ամն և ի ՌԽԲ թւին (Հայոց)[20]*:*

Ինչպես պարզվում է այս ներածականից՝ Ստեփանոսն իր ձեռքին ունեցել ու ընդօրինակել է Սամվել Անեցու ժամանակագրության մի այնպիսի խմբագրություն, որն ավարտվել է 1193 թվականին: Եվ հենց այդտեղից էլ նա սկսել է իր ժամանակագրությունը, պարզ ու որոշ հայտնելով այդ մասին ներածականին հաջորդ հատվածում. «...Ես նուաստ Ստեփանոս անուամբ այցելու կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ» (էջ 22):

[19] Այս հատվածը գտնվում է հիշատակարանի սկզբի մասում:

[20] Սամուել Անեցին հետևել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործածվող թվականից 2 տարի առաջ, **ուստի Սամուելի, ինչպես և Ստեփանոսի ժամանակագրության մեջ, ամենուրեք, Քրիստոնեական և հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է:** Ժամանակագրության մեջ շարադրված դեպքերի իրական տարեթիվը ստանալու համար պետք է առաջնորդվել հայկական թվականով՝ գումարելով դրան 551 տարի և կամ Քրիստոնեական թվականից հանելով 2 տարի: Այս շատ կարևոր խնդիրը հրատարակչի ուշադրությունից վրիպել է և տեղիք է տվել մի շարք ժամանակագրական սխալների:

Հրատարակիչը, հակառակ այս պարզ ցուցումի, հայտնում է այն սխալ կարծիքը, որ «Օրբելյանը նպատակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն, այլ ցանկացել է լրացնել ու շարունակել Անեցու «ժամանակագրությունն»-ը. թերթ 197ա-ից սկսած, նա սկսել է կատարել մասնակի լրացումներ մինչև 202բ, իսկ այնուհետև շարունակել է ինքը՝ առանց սահմանազծելու իր գրած «ժամանակագրութիւն»-ը Սամուել Անեցու «Ժամանակագրութիւնից» (էջ 4):

Եվ որպեսզի ակնհայտ լինեն Սամուել Անեցու ժամանակագրության մեջ Ստեփանոսի կողմից կատարված լրացումները, պրոֆ. Աբրահամյանը, ինչպես հայտարարում է ինքը, համեմատել է հրատարակվող բնագիրը Ս. Անեցու ժամանակագրության տպագրի և հնագույն ձեռագրի (N 5619) հետ, և «այնտեղ, ուր Օրբելյանն արտագրել է Անեցուն, մենք (պրոֆ. Աբրահամյանը, Բ գլուխ) առնում ենք փակագծի մեջ» (էջ 7): Սրանից հետևում է, որ քննարկվող ժամանակագրության սկզբի մասի (էջ 11-19) այն տվյալները, որոնք փակագծի մեջ առնված չեն, պատկանում են Ստեփանոսին: Մենք ևս համեմատեցինք վերոհիշյալ բնագրերը միմյանց հետ և համոզվեցինք այն բանում, որ հրատարակիչը չափազանց անուշադիր է կատարել վերոհիշյալ բնագրերի համեմատությունը: Այդ բանում համոզվելու համար բազմաթիվ փաստերից նշենք մի քանիսը: Քննարկվող բնագրի 12-13 էջի վրա գտնվող և փակագծերի մեջ չառնված, Վեստ Սարգսին վերաբերող հատվածը նույնությամբ գտնվում է Սամուել Անեցու ժամանակագրության հրատարակված բնագրի 106 էջում[21]*:*

15-րդ էջում խոսվում է Կիպարիտի դավանափոխ լինելու, Բարսեղի կաթողիկոս օծվելու, Բուզայի կողմից Գանձակի գրավման և այլ հարցերի մասին, այդ տվյալները գտնվում են Սամուել Անեցու ժամանակագրության 118-րդ էջում[22]*:*

Էջ 16-երորդում Բարսեղ կաթողիկոսի մահվան, Դամասկոսի արքա Դրդուշի սպանության, Բեքիարուխի մահվան և այլ պատմական անցուդար-

[21] Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատ. Ա. Միրէլեան, Վաղարշապատ, 1893: Տե՛ս նաև ձեռագիր N 1869, էջ 246ա, N 1897, էջ 66ա, N 5619, էջ 94բ և այլն:

[22] Ձեռ. N 1897, էջ 70ա, N 1869, էջ 249բ և այլն:

ձերի մասին եղած տվյալները, որոնք նույնպես բերված են առանց փակագծերի՝ գտնվում են Ս. Անեցու ժամանակագրության 120-124-րդ էջերում[23]*:*

Եվ այսպես՝ փակագծի մեծ չառնված բոլոր հատվածները, *բացառությամբ Ստեփանոսի ժամանակագրության 20-րդ էջում գտնվող հատվածից*[24]*: Այսպիսով, հրատարակչի այն հայտարարությունը, որ Ստեփանոսը «ցանկացել է լրացնել» Ս. Անեցու ժամանակագրությունը, որ Ստեփանոսը շարունակելով Ս. Անեցու գործը և գրելով իր* ժամանակագրությունը, *չի սահմանազծել այն Ս. Անեցու* ժամանակագրությունից, *վերանայելի են:*

Մենք արդեն վերևում մեջ բերեցինք Ստեփանոսի ներածականը, ուր հեղինակը շատ որոշակի հայտնում է ընթերցողին, որ Ս. Անեցին իր ժամանակագրությունը *հասցրել է մինչև 1193 թվականը*[25] *(հայոց ՈԽԲ) և ինքը նպատակ է դրել շարունակել այդ թվականից հետո կատարված պատմական կարևոր դեպքերի շարադրությունը: Եվ այդպես էլ արել է, գրելով մի* ժամանակագրություն, *որն ընդգրկում է շուրջ մեկ դարու անցուդարձ՝ սկսած 1194 թվականից մինչև 1290 թվականը: Վերոհիշյալ փաստերից պարզ է դառնում, որ Ստեփանոս Օրբելյանի անունով հրատարակված ժամանակագրության ճիշտ կես մասը (էջ 11-21, տող 27) պատկանում է Ս. Անեցուն շարունակողին և Ստեփանոսի ժամանակագրության հետ առնչվում է միայն այնքանով, որքանով վերջինիս նպատակն է եղել շարունակել Ս. Անեցու ժամանակագրությունը: Ուստի հրատարակիչը սխալ է գործել Ստեփանոսի անվամբ հրատարակելով Մատենադարանի N 8481 ձեռագրի 197ա-203բ էջերի բազմաթիվ հատվածները: Ստեփանոսի ժամանակագրությունը սկսվում է ձեռագրի 204 էջից և հենց այդտեղից էլ պետք է կատարվեր դրա հրատարակությունը:*

Ստեփանոսն իր ժամանակագրությունը կազմել է Ս. Անեցու ժամա-

[23] Ձեռ. N 1897, էջ 71ա-72բ, N 1869, էջ 249բ-251ա, N 5619, էջ 100բ և այլն:

[24] Համոզված ենք, որ Ս. Անեցու ժամանակագրության առկա խմբագրությունից որևէ մեկում կարելի է գտնել նաև այս հատվածը:

[25] Համաձայն մեր Մատենադարանի N 5619 ձեռագրի, Ս. Անեցու ժամանակագրությունը վերջանում է 1176 թվականով, նշանակում է՝ մեր ժամանակագրության հեղինակ Ստեփանոսը չի իմացել, որ Ս. Անեցու ժամանակագրությունը, մինչև իր ձեռքը հասնելը, շարունակվել է ուրիշի կողմից (1176-1193 թվականների շրջանում), այդ պատճառով էլ այս հատվածը Ստեփանոսը նույնպես վերագրել է Ս.Անեցուն:

նակագրության օրինակով՝ չորս սյունակներով: Առաջին սյունակում վերից վար, հաջորդաբար շարված են քրիստոնեական տարեթվերը, սկսած ՌՃՂԶ (1196) թվականից մինչև ՌՄՂԲ (1292)[26]*: Երկրորդ սյունակում տրված են Կիլիկիայի հայ թագավորների գահակալության տարեթվերը, սկսած Լևոն Ա-ից մինչև Հեթում Բ: Երրորդ սյունակը վերաբերում է հայոց կաթողիկոսներին, սկսվում է Գրիգոր Ե Տղայից և հասնում մինչև Ստեփանոս Դ. Հռոմկլայեցու գահակալության առաջին տարին: Չորրորդ սյունակում, առաջին սյունակին համապատասխան, շարված են հայկական մեծ տոմարի տարեթվերը սկսած ՈԽԲ (1193)-ից մինչև ՉԼԹ (1290):*

Ահա այս չորս սյունակների աջ և ձախ կողմերում տրված են համառոտակի տեղեկություններ նշված ժամանակամիջոցում կատարված պատմական կարևոր անցուդարձերի մասին: Ժամանակագրության սյունաշարային այս ձևը որքան էլ ուշագրավ ու հետաքրքիր է, նույնքան էլ ընդօրինակությունների ընթացքում տեղիք է տալիս բազմապիսի աղավաղումների: Բավական է մի որևէ տեղեկություն արտագրել փոքր-ինչ վերև կամ ներքև իր որոշակի տեղից, որպեսզի այդ դեպքը մի քանի տարով առաջ կամ ետ ընկնի իր իրական տարեթվից: Չնայած այս առանձնահատկության վրա հատուկ ուշադրություն է դարձրել քննարկվող ժամանակագրության *մեզ հասած միակ ձեռագրի գրիչը: Վերջինս տարեթվերի շփոթությունից խուսափելու համար դիմել է շատ խելոք մի միջոցի: Երբ տեղի սղության պատճառով նա ստիպված է եղել այս կամ այն վկայությունն իր տարեթվից մի փոքր վերև կամ ներքև տեղավորել, նա համապատասխան տարեթվերի ու վկայությունների վրա միանման նշաններ է դրել, որով և կարողացել է ակնբախ դարձնել տվյալ հատվածի ճշտիվ տարեթիվը: Այսպես, օրինակ, բնագրի 208ա էջում ՉԺ (1261) թվականի դիմաց կարդում ենք. «Թաթարն զՀալպ առերեաց և Մանկու ղանն գնաց յԱստուած»: Այս դեպքերը, սակայն, տեղի են ունեցել ոչ թե ՉԺ, այլ ՉԹ (1260) թվականին, ձեռագրի գրիչն այս վկայության գրանցման վրա և ՉԹ տարեթվի դիմաց դրել է աստղաձև մի նշան՝ *: Այսպես է վարվել գրիչը նաև ՉԸ (1259) թվականին կատարված մի դեպքի («Հուլաւոյն պաշարեաց ամ մի զՄուփարղինն» էջ 268ա) գրանցման ժամանակ, երբ տեղ չլինելու պատճառով ստիպված է եղել այն*

[26] Այժմ գործածվող թվականով՝ 1194-1290 թվականներ:

տեղավորել ՉԹ (1260) թվականի դիմաց: Նման փաստեր կարելի է տեսնել նաև ձեռագրի 205ա, 205բ, 206ա, 206բ, 207բ, 208բ, 211բ էջերում:

Հրատարակիչն ուշադրություն չդարձնելով կարևոր այս նախազգուշացման վրա, շատ հատվածներ տեղավորել է ոչ թե իրենց տարեթվերի դիմաց, այլ ճիշտ այն տեղում, ուր տեղի սղության պատճառով ստիպված է եղել տեղավորել ձեռագրի գրիչը:

Բերենք մի օրինակ: Ձեռագրի 205ա էջում, ՈԾԴ (=1205) թվականի դիմաց կարդում ենք. «... ի սոյն ամի Ռուքնադին սուլտանն էառ զԿարնոյ քաղաք և կոտորեցաւ ի Ջաքարիայէ»: Հատուկ նշանով («C») գրիչը ցույց է տվել, որ սույն դեպքը կատարվել է «ՈԾԱ» թվականին, մինչդեռ պրոֆ. Աշ. Աբրահամյանի հրատարակության մեջ (էջ 22) տեղավորվել է ՈԾԷ (1208) թվականից ցած և այն էլ ոչ թե սյունակների աջ կողմում (ինչպես ձեռագրումն է), այլ՝ ձախ: Նման օրինակներ կարելի է բերել նաև բնագրի 205բ (հրատ. էջ 23), 206ա (հրատ. էջ 23), 211բ (հրատ. էջ 30) և այլ էջերից:

Հրատարակված բնագրում կան նաև այնպիսի տարեթվերի բազմաթիվ ազավաղումներ, որոնք արդյունք են միայն հրատարակչի անփութության:

Բերենք մի քանի օրինակ: Ժամանակագրության շատ ճիշտ տվյալի համաձայն՝ մոնղոլներն Անին, Կարսը, Սուրբ Մարին (Սուրմալու) և այլ քաղաքներ, գրավել են ՈՁԵ (=1236) թվականին, հրատարակության մեջ այդ կարևոր դեպքերի մասին եղած հատվածը տպված է ՈՁԲ-ՈՁԳ (=1233-34) թվականների արանքում (էջ 25), ուստի, սույն դեպքը վերագրված է 1233 թվականին:

Բնագրում հայկական ՈՁԱ (1232) թվականի դիմաց գրված է «Եւ այսու ժամանակաւ փայլէր ծերացեալ աւուրբք մեծ վարդապետն Վանական, աշակերտ Գոշին...» (էջ 207ա): Այս տվյալը հրատարակիչը տեղավորել է 25-րդ էջի կենտրոնում, ուստև հնարավոր չէ պարզել, թե այն որ տարեթվին է վերաբերում:

Բնագրում կարդում ենք «ՈԾ (=1201). Ջաքարէ էառ զԱնի» (էջ 205ա), հրատարակության մեջ այս դեպքը գրված է ՈԽԹ (1200) թվականի դիմաց (էջ 22) և այլն, և այլն:

Հավանական է, որ բնագրի այսպիսի հրատարակությունը չի կարող

պատմական վստահելի աղբյուրի դեր կատարել:

Պրոֆ. Աբրահամյանը բնագրի 207բ էջի «Յովհաննէս» անվանը կցում է ծանոթագրություն այն մասին, որ «Յովհաննէսը՝ բնագրում գրված է մեկ «ն»-ով (էջ 26, ծանոթ. 1): Այս և նման ծանոթություններից ընթերցողը առաջին հայացքից ստանում է այն ոչ ճիշտ տպավորությունը, որ հրատարակությունը կատարված է օրինակելի բարեխղճությամբ, բնագիրը ներկայացված է ամենայն մանրամասնություններով ու լուսանկարչական ճշտությամբ: Տարաբախտաբար այդպես չէ: Տարեթվերի ազավաղման մի շարք օրինակների հետ մենք արդեն առիթ ունեցանք ծանոթանալու: Ցավոք, հրատարակված բնագրում տեղ են գտել նաև բազմաթիվ ընդօրինակությունների սխալներ, որոնք հետևանք են անփութության և կամ բնագրի սխալ վերծանման: Այդ կարգի մեծաքանակ սխալների մասին մոտավոր գաղափար տալու նպատակով ստիպված ենք դեմ առ դեմ մեջ բերել մի երկու հատված Ստեփանոսի ժամանակագրության բնագրից և պրոֆ. Աշ. Աբրահամյանի հրատարակությունից:

Ձեռագիր N 8481	Հրատարակված բնագիրը
1. էջ 205բ. «... և գնաց (Ջաքարէ) յԱրտաւէլ և կոտորեաց. և ի գալ ամն մեռավ ի ճանապարհին և եդաւ ի Սանահինն ուխտ»:	1. էջ 23. «և գնաց (Ջաքարէ) յԱրտաւել և կոտորեաց. և ի գալումն մեռաւ ի ճանապարհին. և եդաւ ի Սանահինն ուխտ»:
2. էջ 209ա. «Մանգու Դեմուրն գնաց բազում զաւրօք ի Հալբ և պարտեցաւ ի դաշտն Համսա ի Մըսըրցոյն և փախեաւ. և Արաղէն ի Ռահբէն գնաց և դարձաւ ի Բաղդատ:	2. էջ 28. «Մանգու Դէմուրն գնաց բազում զաւրաւք ի Հալբ և պարտեցաւ ի դաշտըն. Համասի Մսրցոյն և փախեաւ. և Աբաղէնի Ռահիոն գնաց. և դարձաւ Բաղդատ»:
3. էջ 209ա: «Պակասեաց բարի և խաղաղ աշխարհաշէն դանն մեր Ապաղայն ի Համիան, ի սահմի ի Բ. (2)»:	3. էջ 28. «Պակասեաց բարի և խաղաղ աշխարհաշէն ղանն մեր Ապաղայն յամիսն ի սահմի ի Բ»:

Բնագրում ՉԻԵ (=1276) թվականի տակ բերված է մի պարբերություն, որի վերջին մասում ասված է. «Եւ Ապաղայն Հոռմք գնաց և վրէժ-

խնդիր եղև արեան նորա և բաղում ամիրայք էսպան...» (էջ 208բ-209ա): Այդ պարբերության սկզբի մասը (մինչև «Հռոմք գնաց» բառերը) արտագրված է ձեռագրի 208բ էջում, իսկ շարունակությունը (սկսած «և վրէժխնդիր եղև» բառերից) հաջորդ՝ 209ա էջում: Հրատարակիչը չնկատելով այս մասնատված հատվածների կապը, «եւ Ապաղայն Հռոմք գնաց» բառերից հետո դրել է վերջակետ, «և» շաղկապը դուրս է նետել որպես ավելորդություն, այնուհետև հատվածի շարունակությունը, որպես նախորդի հետ չառնչվող մի բան, տեղավորել է մյուս էջի (էջ 28) ճակատին՝ «վրէժխնդիր եղև արեան նորա...» և այլն: Առանց ձեռագրի քննության, հնարավոր չի լինում պարզել այս մասնատված հատվածների կապն ու իմաստը: Հրատարակված բնագրի էջ 23-ի սկզբում կարդում ենք՝ «...զաւրն վրաց ի յետ գնաց և ի Կոռմանա կատրեաց և դարձոյց»: «Կոռմանա» տեղանվան առթիվ հրատարակիչը գրել է ծանոթագրություն, ուր ասում է. «Թողնում ենք բնագրի ձևով» (էջ 23, ծանոթ. 2): Տարօրինակ է, բայց բնագրում կարդում ենք ոչ թե «Կոռմանա», այլ «Կոտմանա» (էջ 205ա): Այսպիսի օրինակների թիվը հեշտությամբ կարելի է բազմապատկել:

Հրատարակված բնագրի բոլոր էջերի ներքևում պրոֆ. Աբրահամյանը տվել է տեքստաբանական և երբեմն էլ աղբյուրագիտական ծանոթագրություններ, որոնցից շատերը սխալ կամ անիմաստ են:

Ծանոթանանք դրանցից մի քանիսին:

էջ 28-ում կարդում ենք. «... և ոչ կարաց (Արղունն) առնուլ զտախտ արքայութեան» (ձեռագրում գրված է «արքայութեանն»): Այս հատվածի «զտախտ» բառի մասին գրած ծանոթագրության մեջ հրատարակիչը գրում է. «Հավանական է - «զգրախտ»: Եթե ընդունենք հրատարակչի կողմից առաջարկված այս «սրբագրությունը», ապա ստիպված պետք է լինենք հավատալու, որ Արղունն ու Թագուդարը միմյանց դեմ կռվել են ոչ թե թագավորական գահին (տախտ=թախտ արքայութեանն) տիրելու, այլ երկնային դրախտը հափշտակելու համար: Ժամանակագրության մեջ (էջ 211բ) ՌՄՂԲ (=1292) և հայոց ՉԼԹ թվականների առընթեր կարդում ենք «ՏէրՍտեփաննոս կաթողիկոս Հայոց»: Այս տեղեկության առթիվ հրատարակիչը տալիս է իր ամենաընդարձակ ծանոթագրություններից մեկը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Օրմանյանը հիմնվելով Սմբատի «Ժամանակագրութեան» շարունակողի տեղեկության (SIC) վրա, Ստեփաննոսի

բնտրության տարին է նշանակում 1290 թ. («Ազգապատ.», էջ 1723): Ճիշտը, կարծում ենք, Օրբելյանի հաղորդած ներկա տեղեկությունն է» (էջ 30, ծանոթ. 3-րդ): Թե ինչու է Օրբելյանի «Ներկա տեղեկությունը» ճիշտ, ոչինչ չի ասված: Եթե սխալ կա, ապա այդ ոչ Օրմանյանինն է, ոչ Սմբատինը և ոչ էլ մեր Ստեփանոսինը: Թյուրիմացության մեջ է միայն վերոհիշյալ ծանոթագրության հեղինակը: Ժամանակագրության հեղինակ Ստեփանոսը, Սմբատի «Տարեգրքի» շարունակողի նման, Ստեփանոս Հռոմկլայեցու գահակալության թվականը դնում է Հայոց ՉԼԹ (1290) թվականին, որն ամենապարզ թվաբանական հաշիվներով տալիս է նույն 1290 թվականը (739+551=1290)[27], և այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսը գահակալել է երեք տարի (1290թ. - 1292թ.): 1292 թվին Հռոմկլայի գրավման ժամանակ նրան գերեվարում են և 1293թ. նա մահանում է եգիպտական գերության մեջ: Հրատարակության 28-րդ էջում, ՉԼԲ (1283) թվականին առընթեր կարդում ենք՝ «... և Պալիալօղն (բնագրում Պալիալօղն) Հռոմ կայ[ս]րն մեռաւ և որդի (բնագրում որդին) յաթոռն նստաւ»: Սույն հատվածին տրված ծանոթագրության մեջ հրատարակիչը գրում է. «Դուցե նախագաղափար օրինակում եղել է Պալիալօղն՝ Հռոմայ կայսրը: Այս ծանոթագրությունն անտարակույս սխալ է այն պարզ պատճառով, որ «Պալիալօղն» Հռոմի կայսր չի եղել (հրատարակիչը մոռանում է, որ հռոմեական կայսրությունը պատմական թատերաբեմից վերացել էր 13-րդ դարից հարյուրամյակներ առաջ), այլ եղել է «Հռոմ» (այսինքն՝ հույն, բյուզանդացի) կայսր: Առաջարկված «սրբագրությունը» սխալ է նաև այն պատճառով, որ գրաբարում, ինչպես և միջին հայերենում, «ը» որոշյալ հոդ գոյություն չունի, ուստի ճիշտ է ձեռագրի գրիչը, երբ գրում է «կայսրն»: էջ 17-ում ՇԿԹ (1120) թվականին առընթեր կարդում ենք՝ «կալաւ Ժանն ամս Զ», այս նախադասությանը հրատարակիչը կցում է ծանոթագրություն: «Կալաւ Աւժանն (?) (հարցականը հրատարակչինն է, էջ 17, ծանոթ. 1): Թե ով է «Աւժանը», հրատարակիչը գժբախտաբար թաքցրել է ընթերցողներց, սակայն կարծում ենք, որ այս

[27] Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Սմբատի, ինչպես և Ս. Անեցու ժամանակագրություններից օգտվելիս հիմք պետք է ընդունել ոչ թե Քրիստոնեական, այլ հայկական թվականները:

դեպքում ևս, ճշմարտությունը ձեռագրի գրչի կողմն է և ոչ նրա սրբագրողի, որովհետև 1118 թվականին բյուզանդական գահն է բարձրանում Հովհան (Ժան) երկրորդը, ուստի և «կալաւ Ժանն ...» նշանակում է գահին տիրացավ Հովհանը:

Էջ 14-ում ՇԶ (= 1057), թվականի ձախ կողմում, կարդում ենք, «Ղուկինն՝ ամս Ժ (10) «Ղուկինն» անունով բյուզանդական կայսր չկա, այս հանգամանքը թելադրել է պրոֆ. Աբրահամյանին գրել մի ծանոթագրություն, ըստ որի՝ «խոսքը Դուկծինի մասին է, որ հավանական է աղավաղվել և այս ձևն է առել» (էջ 14, ծանոթ. 4): Մեր բոլոր որոնումները «Դուկծին» անունով որևէ նշանավոր քաղաքական գործիչ գտնելու ուղղությամբ միացին անհետևանք, ուստի և անհրաժեշտ ենք համարում հրատարակչի սույն ծանոթագրության առթիվ տալ մեր ծանոթագրությունը: Ձեռագրի գրչի «Ղուկին» և հրատարակչի «Դուկծին» անունները աղավաղված ձևեր են բյուզանդական կայսր Կոստանդին 10-րդ Դուկայի (Ducas) անվան, որը թագավորել է ժամանակագրության *մեջ նշված թվականից 2 տարի հետո (1059-1067 թթ.)*[28]*, և որին, ինչպես ճիշտ նշված է* ժամանակագրության *մեջ (էջ 15), հաջորդել է Միխայիլ 6-րդ կայսրը:*

Էջ 21-ում Ս. Անեցին պատմում է Սալահադդինի կողմից Երուսաղեմի գրավումը և հայտնում, որ նա այնտեղ սրի է մատնում «... Զմիաբանեալ նահատակս Քրիստոսի, զոր ֆրերքն անուանէին...»: Հրատարակիչն ընդգծված բառի մասին գրում է. «Մեզ համար անհասկանալի բառ է...» (էջ 21, ծանոթ. 2): Մինչև դժվար էր նայել ֆրանսերեն լեզվի ցանկացած բառարան և գտնել այնտեղ, որ ֆրեր frère, լատ. frater՝ նշանակում է «եղբայր»: Համանման մի բացատրություն էլ գտնվում է 31-րդ էջի 3-րդ ծանոթագրության մեջ. այնտեղ հրատարակիչը ցանկանում է սրբագրել բնագրի «Ռապան Սումա» անձնանունը, որը սրբագրման պահանջ բոլորովին չի զգում: Ըստ հրատարակչի, այդ անձնանվան ճիշտ ձևը պետք է լինի «Ռահան Սուման, պարսկերեն Ռահապ»: Թողնում ենք մի կողմ սույն սրբագրության գիտական արժեքավորումը, տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է «Ռահապ» բառին առընթեր, փակագծերի մեջ բերված պարսկերեն այն

[28] Ժամանակագրական նման անճշտություններ շատ կան Ս. Անեցու ժամանակագրության մեջ:

տառախումբը, որ պրոֆ. Աբրահամյանը հրամցնում է ընթերցողներին որպես այդ բառի պարսկերեն տրանսկրիպցիա. տառերի խառնաշփոթ այդ խմբից մեծ ճիգ ու ջանքով կարելի է դուրս բերել ոչինչ չնշանակող «մրադրան» հնչյունակոմպլեքսը, բայց ոչ երբեք «Ռահապ» բառը:

Կան նաև բազմաթիվ ծանոթագրություններ, որոնք չէին լինի, եթե հրատարակիչը լավ ծանոթ լիներ հրատարակվող բնագրի լեզվին: Բերենք մի քանի փաստեր:

Էջ 23-ում, ՈԾԹ (1210) թվականի դիմաց, կարդում ենք այն մասին, որ Իվանեն ազատվում է Խլաթի ամիրայի գերությունից, երբ «...զդուստ[ր]ն Թամթի բազում աղախնաւք և ծառաիւք և յոլով գանձիւք ետ ի գինս իւր յամիրայն...». նշված էջի 3-րդ ծանոթագրությամբ հրատարակիչն առաջարկում է սրբագրել այդ հատվածը և «ետ»-ի փոխարեն դնել «ետուն»: Բայց չէ որ իր գինը վճարողն ինքը՝ Իվանեն է և ոչ ուրիշները, հակառակ դեպքում կունենայինք ոչ թե «ետ ի գինս իւր», այլ «ետուն ի գինս նորա»:

Էջ 20-ում կարդում ենք «...սպանին և զմեծ եպիսկոպոսն զտէր Ստեփաննոս, զկոչեցեալն *Երեմիայի որդի» ընդգծված բառի առթիվ հրատարակիչը գրում է. (ծանոթ. 1). «տալիս ենք ինչպես բնագրում է», այսինքն՝ ցանկանում է ասել, որ չնայած բնագիրը սխալ է, բայց ինքը չի շեղվել նրանից: Սակայն «զկոչեցեալն» բառը (ինչպես և ամբողջ նախադասությունը) շատ կանոնավոր ու սովորական բառ է: Թվում է, թե հրատարակիչը մոռանում է, որ գրաբարում հաճախ հայցական հոլովի «զ» նախդիրը, նախադասությունն ավելի որոշակի ու շեշտված դարձնելու նպատակով, դրվում է ոչ միայն ուղիղ խնդրի գլխավոր անդամի, այլև դրա որոշիչների վրա:*

Բերենք ևս մի բնորոշ օրինակ. էջ 20-ում կարդում ենք՝ «...իշխանն Սալահադին կոչեցեալ... զամենայն գաւառսն և քաղաքսն զոր ունէր ֆռանգն առ»: Միջնադարյան մեր ձեռագրերին ծանոթ ամեն ոք հանդիպած կլինի բազմաթիվ դեպքերի, երբ «առնեմ» բայն անցյալ կատարյալ ժամանակում գրված է լինում ոչ թե «էառ», այլ «առ» ձևով[29]*:*

[29] Հենց նույն բնագրում հանդիպում ենք «առ»-ի նման գործածության մի ուրիշ օրինակի. «և իբրև առ զամրոցն» (էջ 20):

Հակառակ այս բանի, հրատարակիչը նշված բառի առթիվ գրում է՝ «Նախադասությունն աղավաղված է: Ըստ երևույթին «առ»-ից առջև ինչ-որ տառեր են բաց թողնվել (sic)» (էջ 20, ծանոթ. 4):

Ծանոթագրությունների շարքում տեղ են գտել նաև այնպիսիները, որոնք բոլորովին ավելորդ և անիմաստ են: Ընթերցողներին ձանձրույթ չպատճառելու համար կսահմանափակվենք սակավաթիվ օրինակների նշումով:

ՉԵ (=1256) թվականի դիմաց կարդում ենք՝ «Աստ մեռաւ Բաղու ղանն», հրատարակիչը ծանոթագրում է «խոսքը Բաթու ղանի մասին է» (էջ 26, ծանոթ. 4-րդ):

ՈՀ (1221) թվականի դիմաց կարդում ենք՝ «Մէլիք խաղինն ի խլաթ երէկ ...» (էջ 23), համապատասխան ծանոթագրության մեջ հրատարակիչը գրում է. «Մէլիք խաղինն (?)» (էջ 23, ծանոթ. 7), այսինքն՝ ծանոթագրության մեջ բնագրին ավելացրել է միայն մի չպատճառաբանված հարցական նշան:

ՈՂԱ (1242) թվականի դիմաց կարդում ենք՝ «Թաթարըն (բնագրում՝ Թաթարն) զԿարնոյ քաղաք էառ և բազում գրեանս և սպաս եկեղեցոյ գերեցին...» (էջ 25). համապատասխան ծանոթագրության մեջ, ընդգծված բառի առթիվ հրատարակիչը տեղեկացնում է. «մի բառի տեղ մնացել է չգրված» (էջ 25, ծանոթ. 1): Իրականում բնագրում ոչ մի բառի տեղ բաց չի թողնված:

Հին բնագրերի հետ գործ ունեցող ամեն ոք գիտե, որ եթե հրատարակվող բնագրի որևէ բառի մեջ լրացվում է գրչի կողմից անուշադրությամբ բաց թողնված որևէ տառ, ապա բավական է այդ տառը բերել փակագծի մեջ, որպեսզի պարզ լինի տվյալ բառի գրության թերությունը ձեռագրում:

Իսկ հրատարկիչը հաճախ փակագծով լրացնում է որևէ պակասող տառ և չբավարարվելով դրանով, գրում է նաև հատուկ ծանոթագրություն այն մասին, որ փակագծի մեջ բերված տառը ավելացրել է ինքը (հակառակ դեպքում էլ ինչ անհրաժեշտություն կար փակագծի): Բավարարվենք երկու օրինակով:

էջ 11-ում գրված է «Անի[ւ]ոյ» և հատուկ ծանոթագրությամբ ծանուցված է, որ «բնագրում «Անոյ» «ւ»-ն մենք ենք ավելացրել» (ծանոթ. 4):

էջ 15-ում կարդում ենք՝ «աշխարհ(ն)» և հատուկ ծանոթագրություն այն մասին, որ «Աշխարհ բառի վերջում «ն»-ն մենք ենք ավելացրել» (ծանոթ. 2) և այլն:

Ի՞նչ պետք է եզրակացնել վերոհիշյալ դիտողություններից:

Առաջին. հրատարակված ժամանակագրության հեղինակ Ստեփանոսը և «Պատմութիւն նահանգին Սիսական» հանրահայտ աշխատության հեղինակ Ստ. Օրբելյանը տարբեր անձնավորություններ են:

Երկրորդ. Ստեփանոսի ժամանակագրության հրատարակված բնագրի սկզբի մասը (ամբողջի ճիշտ կեսը) պատկանում է Ս. Անեցուն և առնչվում է Ստեփանոսի ժամանակագրության հետ միայն այնքանով, որքանով վերջինս իր ժամանակագրությունը գրել է Ս. Անեցու ժամանակագրության սկզբունքներով, և որպես շարունակություն նրա ժամանակագրության:

Երրորդ. Ստեփանոսի ժամանակագրության հրատարակված բնագրում հրատարակչի անփութության և անբարեխղճության հետևանքով տեղ են գտել բազմաթիվ աղավաղումներ ու ժամանակագրական սխալներ:

Չորրորդ. հրատարակչի կողմից գրված ծանոթագրությունների մեծագույն մասը ոչ միայն չի նպաստում բնագրի պարզաբանմանը, այլև հաճախ սխալ ու ոչինչ չասող տեղեկություններով թյուրիմացության մեջ է գցում ընթերցողին*:

* Գրախոսների առաջարկած սկզբունքների գործադրմամբ, բնագրական սրբագրումներով ու հանգամանալի ծանոթագրություններով, ժամանակագրությունը «Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը (XIII դ.)» խորագրով վերահրատարակվել է Վ. Ա. Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրություններ. XIII – XVIII դդ.» գրքում, հատ. I, Երևան, 1951, էջ 32-64: Գրախոսները հետագայում, ինչպես երևում է, վերանայել են հեղինակային պատկանելության վերաբերող իրենց դրույթները: Համենայնդեպս՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը Լ. Խաչիկյանի հանձնարարությամբ է տպագրել Էդ. Բաղդասարյանի «XIII դարի մի ժամանակագրության հեղինակի մասին» հոդվածը (ՊԲՀ, 1971, N 2, էջ 210-216), որտեղ վերստին հաստատվում է Ստեփաննոս եպիսկոպոսի և Ստեփաննոս Օրբելյան պատմագրի նույնանձնությունը - **խմբ.**:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության դիվանում վերջերս գտնվեց անտիպ մի գրություն, որի հեղինակն է հմուտ բանասեր, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, հանգուցյալ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը: Դա մի նամակ է՝ գրված 1977 թվականին և ուղղված Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Կարապետ եպիսկոպոս Ամատունուն, վերջինիս «Ոսկան վարդապետ Երևանցի և իր ժամանակը» գրքի հրատարակության առիթով: Սույն նամակն իր ժամանակին հեղինակի կողմից ուղարկված է եղել Կարապետ եպիսկոպոս Ամատունուն՝ «Բազմավէպ» հանդեսում հրատարակելու խնդրանքով, սակայն խնդրանքը չի հարգվել: Նամակը թեև մի քանի տարվա վաղեմություն ունի, սակայն այդ ըստ էության այժմեական է հնչում, ուստի հարմար ենք համարում այն հրատարակել* :

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆՈՒՆ

Հռոմ

Գերապայծա՛ռ հայր Ամատունի, մի քանի օր առաջ ստացանք «Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը» խորագրով Ձեր մենագրության 3 օրինակները, որ նվիրաբերել եք Մաշտոցյան Մատենադարանին: Այդ առթիվ հայտնում ենք շնորհակալություն՝ պարտավորվելով առաքել Ձեզ մեր նոր հրատարակությունները:

Ստանալուն պես սկսեցի կարդալ Ձեր աշխատությունը և ավարտեցի մի շնչով: Կրկին ակնառու դարձավ ինձ համար, որ Վատիկանի արխիվներում ամբարված են հսկայական նյութեր հայոց պատմության ամենաբազմազան հարցերի մասին և որ Դուք ու Ձեր միաբանակիցները երջանիկ

* «Էջմիածին», Բ, 1984, էջ 47-50:

հնարավորությունն ուներ օգտվելու այդ կուսական աղբյուրից՝ ի շահ հայոց պատմության ու հայ մշակույթի մութ ծալքերի լուսաբանության:

Ձեր հրապարակած նյութերը, անտարակույս, ընդարձակում են մեր գիտելիքները հայ տպագրության ռահվիրա Ոսկան Երևանցու գործունեության առանձին դրվագների մասին՝ մեկ անգամ ևս բացահայտելով, թե ինչպիսի ազնիվ նվիրում են ունեցել Ոսկանի պես հայրենասեր անձինք՝ հաղթահարելու իրենց առաքելության առջև ծառացած հազար ու բյուր արգելքները:

ԺԷ դարի առաջին կեսին ասպարեզ իջած մեր գործիչները քաջ գիտակցում էին, որ օտար բռնակալական լուծը թոթափել երազող հայրենասերը գործելու է՝ ի մտի ունենալով երկու կարևորագույն խնդիրներ.

1) Պետք է վերարծարծվի ազգային գիտակցությունը ժողովրդական լայն զանգվածների սրտերում՝ հայ մշակույթի հնամենի գանձերը խոնավ նկուղներից հանելու ու շրջանառության մեջ դնելու և եվրոպական գիտության ձեռքբերումներին հաղորդակից դարձնելու ճանապարհով:

2) Պետք է քաղաքական պայքարի ուղիներ որոնի՝ դաշնակիցներ փնտրելով ամենուրեք:

Այս երկու խնդիրների լուծման ուղիներն էլ այդ ժամանակներում խաչաձևվում էին, հիմնականում, եվրոպական մայրցամաքի վրա, քանի որ եվրոպացիներն էին, որ մեծ թափով սկսել էին ներթափանցել արևելյան երկրներ՝ ցույց տալով այդ աշխարհամասի ժողովուրդներին (ի թիվս որոց՝ նաև հայերին, մասնավորապես հայ առևտրական դասի ու հոգևորականության ներկայացուցիչներին) ռազմական արվեստի, տնտեսության ու մշակույթի մարզերում ձեռք բերած իրենց աննախադեպ նվաճումները:

Պատմությունը, սակայն, անմոռանալի դասեր էր տվել հայերին. և գաղտնիք չէր այլևս, որ օգնություն խոստացողները՝ սուղ գին էին պահանջելու: Կաթոլիկ Եվրոպան ամեն մի օգնություն, նույնիսկ օգնության հեռավոր խոստում, պայմանավորում էր Հռոմեական եկեղեցու գերագահության ճանաչումով, Քաղկեդոնի ժողովի սահմանումների անվերապահ ընդունումով, ազգային ավանդությունների մեծագույն մասից (եթե ոչ անմիջապես, ապա քայլ առ քայլ) հրաժարումով և, ի վերջո, ազգային կերպարանք ստացած Հայ եկեղեցու ինքնագլուխ գոյության երաշխիքների սակարկումով:

Ձեր ուսումնասիրության մեջ կարական այդ պահանջներին ընդառաջելը շատ մեղմ բանաձևում է ստացել. - «Կաթոլիկ եկեղեցու հետ հաղորդակցվել»: Իցի՜վ թե հարցը «հաղորդակցվելով» փակվեր: Ջահկեցիների անփառունակ վիճակը, լեհահայ թեմի բռնի դավանափոխության ողբերգությունը, ինչպես և շատ ուրիշ համանման փաստեր (ոչ հեռավոր անցյալից) տխուր մտորումների առիթ են հանդիսանում:

ԺԷ դարի մեր գործիչները, այո՛, իրենց առջև ծառացած բարդ խնդիրների լուծման ճանապարհին հաճախ ստիպված էին լինում «հաղորդակցության» մեջ մտնել Հռոմեական եկեղեցու հետ, ստորագրել տարբեր ձևի ու բնույթի «հավատո հանգանակներ» և այլն: Սակայն այդ ամենը կատարվում էր իրենց ուսերին դրված ծանր բեռը նպատակադրված հանգրվան հասցնելու ազնիվ նկատառումներով:

Անդրադառնանք Ոսկան Երևանցուն:

Ուսումնատենչ մի երիտասարդ, եվրոպական գիտական նվաճումներին հաղորդակից լինելու իր բուռն ցանկությունն իրականացնելու հույսով հետևել է Արևելք առաքված միսիոնար Պ. Պիրոմալլիին, որն, անտարակույս, շատ ավելի խորը գիտելիքներ ուներ, քան նույն այդ տարիներին Հայաստանի կրթական կենտրոններում դասախոսող վարդապետները: Պիրոմալլին, ըստ երևույթին, ոսկե լեռներ էր խոստացել երիտասարդ Ոսկանին, որը նրա հետքով մեկնեց Եվրոպա, սակայն մի քանի տարի ապարդյուն դեգերումներից հետո, մեծ զրկանքներ կրելով ու ոչինչ ձեռք չբերելով, անսաց իր նախկին դասընկերների խորհրդին ու վերադարձավ հայրենիք: Այստեղ նա առաջ քաշվեց բարձր եկեղեցական պաշտոնների. դարձավ Ուշիի Ս. Սարգիս վանքի վանահայր, գուցե նաև Էջմիածնի լուսարար և այլն, ճանաչվեց ու գնահատվեց Հայ եկեղեցու վարիչների կողմից որպես լուսամիտ ու հայրենանվեր մի գործիչ, որին կարելի է վստահել հայ տպագրությունը խանձարուրային վիճակից դուրս բերելու և ժամանակի պահանջների մակարդակին բարձրացնելու ծանր, հսկայական ջանքեր և մեծ զոհողություններ պահանջող գործի կազմակերպումն ու ղեկավարությունը:

Վաղուց ի վեր հայտնի, և ավելի մեծ չափով Ձեր կողմից շրջանառության մեջ դրված նյութերից, պարզ է դառնում, որ Ոսկանը սրբությամբ կատարեց իր առաքելությունը՝ հաղթահարելով բյուր խոչընդոտներ:

Ժամանակակից եվրոպացի ու ծագումով հայ, բայց Հռոմեական եկեղեցուն ծառայագրված մի շարք գործիչներ, Ձեր իսկ բերած նյութերի հա-

մաձայն, Ոսկան Երևանցուն հերձվածող ու հերետիկոս են համարել: «Ոսկան եպիսկոպոսը, - գրել է նրանցից մեկը, - Ամստերդամի մեջ հերետիկոս պատրիարքի (իմա՛ հայոց կաթողիկոսի) հրամանով հայաբարբառ Աստվածաշունչ կտպագրե, ամենևին լի սխալներով»: Նրան արգելում են Լիվոռնոյում պատարագ մատուցել, Հոլանդիայի կաթոլիկ եպիսկոպոսին հրահանգ է տրվում քայլ առ քայլ հետևել նրա գործունեությանը և «ի հարկին խափանել ևս այդօրինակ գիրքերու ելքը Հոլանտայեն», բանագրավում են նրա հրատարակած Աստվածաշնչի օրինակները և այլն և այլն:

Եվ այս մղձավանջային միջավայրում բուռն գործունեություն ծավալած հայրենանվեր գործիչը կարո՞ղ էր, արդյոք, «Կաթողիկե եկեղեցվո հետ հաղորդակցության» մեջ չմտնել: Եվ մի՞թե գործի շահերից բխող այդպիսի «հաղորդակցության» իրական կամ շինծու փաստերը վկայում են նրա Հռոմեական եկեղեցու դավանանքն ընդունած լինելու մասին: Ոչ ամենևին:

Եվ եթե, այնուամենայնիվ, ժամանակակից գրագրությունների մեջ կան մի քանի ակնարկներ Ոսկանի հռոմեադավանության մասին, դրանք դյուրությամբ ստանում են իրենց տրամաբանական լուծումը, եթե մտաբերում ենք Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Ժան Շարդենի հաղորդած ուշագրավ տեղեկությունները Եվրոպայում տիրողաբար կաթոլիկ դավանանք «ընդունած» հայերի մասին, որոնք, վերադառնալով հայրենիք, հնարավորություն են ստանում անկաշկանդ արտահայտելու իրենց համոզմունքը: «Ես, - գրում է Շարդենը, - խոսքեր չունեմ նկարագրելու այն խորամանկություններն ու այն ծախսերը, որոնց այդ (իմա՛ հայերի հավատափոխության) նպատակով դիմում էր Հռոմի Աթոռը, սակայն ոչ մի բան ցանկացած հետևանքներին չհասցրեց, որովհետև հենց որ այն հայերը, որոնք Եվրոպայում հեռացել էին իրենց կրոնից՝ վերադառնում են իրենց տները, իսկույն ավելի հայ են դառնում, քան տեղում ապրողները և նորից սկսում են անիծել Լևոն պապին, ինչպես մեկին այն գլխավոր պատճառներից, որոնք խանգարեցին արևելյան և արևմտյան եկեղեցիների միությանը՝ անիծելով միաժամանակ և նրա հաջորդներին և ատելությամբ վերաբերվելով Հռոմեական եկեղեցու վարդապետությանը, ինչպես իրենց եկեղեցուն միանգամայն հակասող վարդապետություն»:

Այս հանգամանքն անտեսել հնարավոր չէ:

Գերապայծառ հայր, Հռոմի Աթոռի ղեկավար օղակների մասին իմ

ունեցած գիտելիքներն ընդարձակվեցին Ձեր ուսումնասիրության մեջ առկա տվյալներով: Ավելի մեծ չափով պարզ դարձավ, որ Ոսկանի գործունեության տասնամյակներում կարևոր հարցերը, կաթոլիկ աշխարհում լուծվում էին Հավատաքննության (ինկվիզիցիայի) ժողովի անդամների հրահանգներով, իսկ Հավատասփյուռի (պրոպագանդա ֆիդեի) գործիչները գրեթե զուրկ էին իրական իշխանությունից: «ՀՍ-ի ժողովին պատասխանատու մարդիկ, - գրում եք Դուք, - սեղմորեն կաշկանդված կզգային իրենք զիրենք հավատաքննության տիրող օրենքներուն առջև» (էջ 196):

Նկատի առնելով այդ հանգամանքը՝ հազիվ թե հնարավոր լինի Հավատասփյուռի բնագավառում աշխատող որևէ անհատ անձնավորության կարծիքը որևէ գործչի կամ երևույթի մասին համարել Հռոմեական եկեղեցու պաշտոնական կեցվածքի ճշգրիտ արտահայտություն, քանի որ այդ կեցվածքն իրականում մշակվում էր եկեղեցու ղեկավարության այն օղակներում, որոնց հրամանի ներքո էին գտնվում հավատաքննության ատյանները և բոցավառվում խարույկները:

Ի վերջո՝ երկու խոսք նաև Հավատասփյուռի մարզում աշխատող անհատների նամակների կամ պաշտոնական գրությունների մասին, որոնց մեջ զգալի տեղ էին գրավում իրական փաստերը սքողելու կամ ինքնամեծարման նպատակով շարադրված օրինակները:

Պ. Պիրոմալլիի՝ Հայաստանից առաքված նամակներն ու ինքնակենսագրական գրությունները ճանաչողական զգալի արժեք են ներկայացնում: Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքի կացության, հայ ժողովրդի տնտեսական ու իրավական ծանր վիճակի, ավազակաբարո պաշտոնեության ու նրանց չարաշահումների, Էջմիածնի վանքի գործունեության, ուսումնական գործի դրվածքի, հայ հոգևորականության բարոյական կերպարի և բազմաթիվ այլ հետաքրքրական հարցերի մասին Պիրոմալլին հաղորդում է արժեքավոր տեղեկություններ: Թերևս պետք է այդ ամբողջ նյութը՝ հայերեն թարգմանությամբ հրապարակել, որպես բովանդակալից պատմական սկզբնաղբյուր:

Սակայն հենց Ձեր մեջ բերած տվյալներից դժվար չէ եզրակացնել, որ Պիրոմալլին այն անձնավորությունը չէ, որի բոլոր ասածներին կարելի լինի հավատ ընծայել: Հիշենք, թեկուզ, ջահկեցիների ասածը նրա մասին. «Եւ այն բանք զոր և գրեալ այ ի սուրբ ատեանդ, ամենայն սուտ է»: Եվ արդյոք

սուտ չէ՞ նրա հավաստիացումը, որ Կ. Պոլսի հայերը ոչ միայն իրեն հրավիրում են եկեղեցի, այլև «զիս այլ կհիշատակեն իրենց պատրիարքին հետ» (էջ 76): Եթե այդքան դյուրին բան էր Պիրոմալլիի նման շարքային քարոզչի անվան հիշատակությունը եկեղեցում, ապա ինչո՞վ բացատրել այն փաստը, որ Լիվոռնոյի հայերը տարիներ շարունակ ապարդյուն դիմումներ էին ուղղում Կաթոլիկ եկեղեցու պետերին ամենայն հայոց կաթողիկոսի անունը հիշատակելու թույլտվություն ստանալու համար:

Միտք բանից այն է, որ Պիրոմալլիի հավաստիացումներն իրեն հետևած մեկ-երկու աշակերտների (որոնց թվում և պատանի Ոսկանի) Հռոմի Աթոռին հարած լինելու մասին, ըստ էության, ոչինչ չի նշանակում: Նախ, Պիրոմալլին շատ էլ ճշմարտախոս չէ: Եվ ապա՝ Ոսկանի պես ուսման ծարավ երիտասարդը դյուրությամբ կարող էր հետևել Եվրոպայից ժամանած գիտուն-քարոզչին, նույնիսկ նրա միջոցով «հաղորդակցության» մեջ մտնել Կաթոլիկե եկեղեցու հետ, եթե նրան համոզում էին, որ էական տարբերություն չկա Հռոմեական ու Հայաստանյայց եկեղեցիների դավանանքների միջև, կամ երբ նա ինքը համոզվում էր, որ մեծ ու ազգօգուտ գործեր կատարելու և իր ժողովրդի լուսավորության գործին սատարելու համար, քրիստոնեական անպտուղ վեճերից խուսափելով, պետք է համակերպվեր եվրոպական իրականությանը՝ օգտվել կարողանալու համար տեխնիկական այն նորագույն միջոցներից, որոնցով էր պայմանավորված հայ տպագրությունը փակուղուց արքունի ճանապարհ հանելու մեծ գործի հաջողությունը:

Այսպիսով, Ոսկան Երևանցին էր ով շարունակում էր մնալ հարազատ դավանին իր ժողովրդի, որ երբեք չի դավաճանել իր սկզբունքներին, այլ միշտ ու ամենուրեք, ուր էլ որ նետել են նրան հայ տպագրության գործի շահերը, մնացել է իր առաքելության բարձր դիրքերում, որպես Ազգային եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյա ու հայ մշակույթի լիազոր ներկայացուցիչ:

Գերապայծառ հայր, Ձեր հետաքրքրական գրքի ընթերցումից հետո այսպիսի մտորումներ ունեցա և կարծեցի, որ դրանք թղթին հանձնելով կատարած կլինեմ իմ պարտքը հեղինակի հանդեպ, որպես ուշադիր ընթերցող ու միջնադարյան պատմության հարցերով զբաղվող բանասեր:

Հարգանքներով՝ Լ. Խաչիկյան
24 հունվար, 1977 թ.

Г. Х. САРКСЯН. Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, Москва, Институт востоковедения Академии наук СССР, Издательство восточной литературы, 1960.

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Տիգրանակերտ. Հին հայկական քաղաքային համայնքների պատմությունից, Մոսկվա, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ, 1960, 160 էջ*[*]:

Հին Հայաստանի քաղաքների առաջացման ու անկման, նրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակի, ինքնավար մարմինների ու դասակարգային էության հարցերին է նվիրված Գ. Սարգսյանի «Տիգրանակերտ» ուշագրավ մենագրությունը, որը լույս տեսավ վերջերս՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելյան գրականության հրատարակչությամբ:

Այն կրում է «Տիգրանակերտ» խորագիրը, որովհետև սկզբնաղբյուրներում համեմատաբար ավելի տվյալներ են պահպանվել այդ քաղաքի պատմության մասին, սակայն հեղինակը, ըստ հնարավորի, անդրադարձել է նաև հին Հայաստանի մյուս քաղաքներին, նրանց մասին պահպանված ցաքուցրիվ նյութերը հմտորեն օգտագործելով իր առջև դրված հարցերի պարզաբանման համար:

Հայ պատմիչները (Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի և այլք) Հայաստանի քաղաքների մասին գրում էին այն ժամանակ, երբ նրանք, գրեթե առանց բացառության, դադարել էին գոյություն ունենալուց: Հաղթանակած ավատատիրության սոցիալ-տնտեսական հարաբերությունների միջա-

[*] ՊԲՀ, N 4, 1960, էջ 221-224:

վայրում աչք բացած հայ հեղինակների համար անհասկանալի էին հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ շատ երևույթներ, ուստի նրանց հաղորդած տվյալներից գիտական եզրակացությունների հանգելու համար հեղինակը ստիպված է եղել աղբյուրագիտական խոր վերլուծություն կատարել: Անկախ իր անմիջական նպատակից, այսպիսով, Գ. Սարգսյանը մի առաջընթաց քայլ է կատարել հատկապես Մ. Խորենացու պատմության ուսումնասիրման գծով, նշելով այն եղանակները, որոնցով հնարավոր է գտնել նրա պատմության մեջ առկա ստույգ և ուշագրավ տվյալները անիրական ու առասպելական շերտերից:

Հին Հայաստանի քաղաքների մասին հիմնական աղբյուրները հայկական չեն. Տիգրանակերտի, Արմավիրի, Գառնիի հունարեն արձանագրությունները, հին հունական և լատինական պատմիչների հաղորդած տվյալներն ու ակնարկները առաջնակարգ այն աղբյուրներն են, որոնց վրա հենվելով հեղինակն առաջ է տարել իր ուսումնասիրությունը, ինքնուրույն և արդյունավետ աշխատանք կատարելով դրանց վերծանման ու մեկնաբանման գծով:

Չնայած տարալեզու և բազմապիսի աղբյուրների օգտագործման, հեղինակն անկարող կլիներ հաջողությամբ լուծելու իր առջև դրված բարդ ու պրոբլեմատիկ խնդիրները, եթե դրանք չքննարկվեին պատմական ու սոցիալական լայն ֆոնի վրա, հարևան երկրների քաղաքների մասին առկա նյութերի համեմատական օգտագործմամբ: Քաջ գիտակցելով այդ, հեղինակը տարիներ շարունակ ուսումնասիրել է հելլենիստական ժամանակաշրջանի Բաբելոնի և այլ երկրների քաղաքներից հայտնաբերված սեպագիր աղյուսակները, հունական վիմագիր նյութերը: Դրանց օգնությամբ նրան հաջողվել է պարզել, թե քաղաքների ինչպիսի տիպեր են եղել հելլենիստական ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայում, ինչ ընդհանուր գծեր են ունեցել նրանք և ինչով տարբերվել միմյանցից:

Այսպիսի պատմական լայն ֆոնը մեծ չափով նպաստել է հեղինակին հին Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը պարզելու, նրանց ուրույն գծերը վեր հանելու գործում: Եվ, վերջապես, ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռել հեղինակին անդրադառնալու Հայոց պատմության հնագույն շրջանի պարբերացման հարցերին, ուրվագծելու առավել պարզությամբ ու համոզչականությամբ՝ ստրկա-

տիրական հասարակության առանձնահատկությունները, նրա զարգացման ընթացքն ու անկման պատմությունը Հայաստանում:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից և 5 գլուխներից: Առաջին գլխում (*«Города Армении эллинистического периода»*) Մերձավոր Արևելքի պատմության լայն ֆոնի վրա ցույց է տրվում Հայաստանի տնտեսական ու քաղաքական բուռն զարգացումը III-I դարերում (ն. մ. թ.): Այս գլխի նորույթներից ամենաուշագրավը՝ Արմավիրի հունարեն արձանագրությունների նոր լուսաբանությունն է, որը հնարավորություն է ընձեռել հեղինակին ապացուցելու թագավորական դինաստիային պատկանող անձանց պաշտամունքի առկայությունը հին Հայաստանում: Խիստ արժեքավոր է նաև Արմավիրի համեմատությունը հին արևելյան ու փոքրասիական քաղաքային-տաճարային համայնքների հետ, որոնք ստրկատիրական սոցիալ-քաղաքական կազմակերպություններ էին:

Երկրորդ գլխում (*«Основание Тигранакерта и переселение чужестранцев в армянские города»*) տրվում է Տիգրանակերտ քաղաքի պատմությունը և պարզաբանվում Տիգրան II-ի և Արտավազդ II-ի թագավորության տարիներին այլ երկրներից (Կիլիկիա, Կապադովկիա և այլն) Հայաստան ներգաղթեցված և քաղաքներում վերաբնակեցված օտարազգի շուրջ կես միլիոն բնակչության սոցիալական վիճակը:

Առ այսօր մի շարք ուսումնասիրողներ այն տեսակետն են պաշտպանում, որ, իբր, այդ վերաբնակեցվածները Հայաստանում ստրկացվում էին: Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս այս տեսակետի անհիմն լինելը և ապացուցում, որ նրանք Հայաստանի քաղաքներում շարունակում էին իրենց սովորական զբաղմունքները, պահպանելով իրենց դասային ու դասակարգային ինստիտուտները, իրենց մշակութային և նույնիսկ վարչական որոշ հիմնարկները:

Վերաբնակեցվածների մշակույթը ներթափանցում էր հայ հասարակության մեջ, որը ստեղծագործաբար յուրացնում էր այն՝ տալով նրան տեղական երանգ: Հայաստանում ստեղծվում էին քաղաքական այն հիմնարկությունները, որոնք բնորոշ էին հելլենիստական ստրկատիրական քաղաքներին և որոնց պահանջն զգում էր բուռն թափով զարգացող հայ հասարակությունը: Տիգրան II-ը ստիպում էր նորաստեղծ քաղաքներում բնակություն հաստատել հայ վերնախավի ներկայացուցիչներին, գիտակցելով, որ

ստրկատեր-հողատերերի դասակարգի միավորումն առավել հաջողությամբ կարող է իրագործվել քաղաքներում:

Երրորդ գլխում (*«Тигранакертская Πολιτεία»*) *Տիգրանակերտի հունարեն արձանագրության վերլուծությամբ և օժանդակ այլ աղբյուրների տվյալներով հեղինակն ապացուցում է, որ քաղաքային համայնքը Հայաստանում երկար ժամանակ պահպանում էր հելլենիստական քաղաքներին բնորոշ բոլոր հատկանիշները: Հայկական քաղաքները (Տիգրանակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Վան) կիսանկախ էին, անմիջականորեն ենթարկվում էին թագավորին, կառավարվում էին ինքնավարության մարմիններով, քաղաքներում չկային թագավորական կայազորներ, ինքնապաշտպանության համար նրանք ունեին սեփական զինական ուժեր, քաղաքները հավանաբար ազատված էին որոշ հարկերից ու տուրքերից և այլն:*

Հին Հայաստանի քաղաքների վերաբերյալ եզրակացությունների լույսի տակ, մենագրության մեջ նոր և ուշագրավ բացատրություն է ստացել նաև Արշակավանի խնդիրը, որի շուրջ հայագիտության մեջ արտահայտվել են թյուր ու հակասական մի շարք տեսակետներ:

Հայաստանում ստրկատիրական հասարակարգի հարցին է նվիրված մենագրության չորրորդ գլուխը («Социально-экономический характер древнеармянской городской общины и проблема рабовладельческого строя в Армении»): Այստեղ քննարկվում են տեսական հարցեր՝ կապված ստրկատիրական կացութաձևի Հայաստանին բնորոշ գծերի և հայ ժողովրդի պատմության հին շրջանի պարբերացման հետ: Նախ տրվում է հարցի ուսումնասիրման համառոտ պատմությունը, քննադատական դիտողություններով մեջ են բերվում այն հայագետների (Ն. Ադոնց, Հ. Մանանդյան) տեսակետները, որոնք անդրադարձել են ավատատիրական գենեզիսի, հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կացութաձևի հարցերին և հանգել այն եզրակացության, որ Հայաստանում ստրկատիրական ֆորմացիա գոյություն չի ունեցել:

Հենվելով իր, ինչպես և Ս. Երեմյանի և այլ հայրենի գիտնականների ուսումնասիրությունների արդյունքների վրա, հեղինակը հանգում է հիմնական այն եզրակացության, որ Հայաստանն այդ ժամանակ հանդիսանում էր ստրկատիրական աշխարհի ծայրամասային երկրներից մեկը, որ «Հայաստանի զարգացման առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ հազիվ ոտք դնելով ստրկատիրության ճանապարհին, նա այն երկրների ազդեցությամբ, որոնք մոտեցել էին նրա (ստրկատիրության) վախճանին, միանգամից անցավ ավատական հասարակարգին նախորդող աստիճանը, չհասցնելով ապրել ստրկատիրական հասարակարգի ծաղկման փուլը»: Այդ իսկ պատճառով Հայաստանում լիակատար ձևավորում չստացան այդ էտապին բնորոշ սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնարկությունները:

Վերջին՝ հինգերորդ գլխում («Падение древних армянских городов») ուսումնասիրության արդյունքների լույսի տակ հեղինակը վեր է հանում հին Հայաստանի քաղաքների անկման պատճառները:

Քաղաքները, որպես ստրկատիրական կազմակերպություններ, IV դարում հանդիսանում էին իր բնույթով ստրկատիրական Արշակունյաց պետության վերջին հենարանը: Հայ հասարակության մեջ ավատատիրությունն արդեն խոր արմատներ էր ձգել: Կենտրոնական իշխանության դեմ պայքարող հայ նախարարությունները հարվածում էին նաև ստրկատիրական հարաբերությունների վերջին պատվար քաղաքներին:

IV դարի ընթացքում հայ նախարարների ու Արշակունյաց պետության բախումները, որոնք տեղի էին ունենում քաղաքական բարդ պայմաններում, օտար նվաճողների դեմ համառ պայքարի հետ զուգորդված, ի վերջո ավարտվեցին նախարարների հաղթանակով: Արշակունյաց պետությունն ընկավ, դադարեցին գոյություն ունենալուց նաև հին Հայաստանի քաղաքները, որոնք ավատատիրական սոցիալ-տնտեսական հարաբերությունների պայմաններում գոյության հիմքեր այլևս չունեին:

Սրանք են Գ. Սարգսյանի մենագրության մեջ քննարկվող հիմնական հարցերը և ստացված արդյունքները, որոնք կապված լինելով հայ ժողովրդի պատմության հին շրջանի ամենակարևոր խնդիրների հետ՝ գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Քննարկվող աշխատության մեջ կան նաև մի քանի վիճելի ու վերանայման կարոտ ձևակերպումներ:

Այսպես, օրինակ, հեղինակի կարծիքով Հայաստանում քաղաքաշինարարությունը սկսվել է Առաջավոր Ասիայի մի շարք երկրների համեմատությամբ, շատ ավելի ուշ ժամանակներում, «գրեթե դատարկ տեղում»

(«почти на пустом месте»):

Ինչպես հայտնի է, Վանը (Տուշպա) և Արմավիրը (Արգիշտիխինիլի) գոյություն ունեին նաև ուրարտական ժամանակաշրջանում: Բացառված չէ այն, որ հին հայկական ուրիշ քաղաքներ ևս ստեղծվել ու զարգացել են ուրարտական շրջանում արդեն գոյություն ունեցող քաղաքատիպ բնակավայրերի հիմքի վրա: Ուստի, մեր կարծիքով, քանի դեռ չեն պեղված հին Հայաստանի քաղաքները, վաղաժամ պետք է համարել հեղինակի եզրակացությունն այն մասին, որ «Հայկական լեռնաշխարհում քաղաքների զարգացումը սկսվում էր այնպիսի էտապից, որին այլ երկրներում նախորդել էր երկարատև պրոցես» (էջ 98, տե՛ս նաև էջ 49, 129):

Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի որոշման հարցը հեղինակի կողմից պարզաբանված է բավարար փաստական հիմքով: Արձանագրությունը, հնագրական տվյալներից դատելով, փորագրված պետք է լինի IV դարի սկզբներին, ոմն հեթանոս հայ թագավորի կողմից: Հեղինակը, իրավամբ, կարծում է, որ այդ հայ թագավորը Տրդատ III-ն է, ուստի և արձանագրությունը գրվել է 303 թ., այսինքն քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հայտարարվելուց առաջ:

Սակայն, ըստ նորագույն ուսումնասիրությունների, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն է հայտարարվել ոչ թե 303, այլ 314 թ.: Այդ իսկ պատճառով արձանագրության գրության վերին հնարավոր եզրը պետք է համարել 314 թվականը:

Նշված մանր դիտողությունները, պարզ է, բնավ չեն կարող ստվեր ձգել քննարկվող մենագրության վրա, որը, անտարակույս, հայ ժողովրդի հին պատմության ամենալուրջ ուսումնասիրությունների թվին է պատկանում:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ*

Գրախոսվող գրքույկի[1] նպատակն է եղել առանձին դրվագներով ուրվագծել Հայաստանի արխիվների 40-ամյա զարգացման ուղին, հաշվետու լինել հասարակայնության առաջ Հայաստանի արխիվիստների ջանասեր ու անձնվեր աշխատանքի արդյունքների մասին և համառոտակի անդրադառնալ արխիվային շինարարության հեռանկարներին:

Գրքույկը բաղկացած է հակիրճ մի ներածությունից և 5 գլուխներից:

Առաջին գլուխը կրում է «Արխիվային գործը նախասովետական Հայաստանում» խորագիրը (էջ 9-26):

Միջնադարյան Հայաստանում արխիվային փաստաթղթերը պահվել են միայն խոշոր վանքերի և ավատատերերի պահոցներում: Կան ուշագրավ վկայություններ այն մասին, թե ինչպես են այդ թանկարժեք նյութերը ոչնչացվել օտարերկրյա նվաճողների և տգետ վանականների կողմից:

Հայտնի է, օրինակ, այսպիսի տխուր մի իրողություն: 1821 թվականին էջմիածնից Հաղբատ են տարվում երեք բեռ արխիվային հին ու արժեքավոր փաստաթղթեր: Երեք թերուս սարկավագների հանձնարարվում է «կարգավորել» այդ արխիվը, այսինքն՝ այրել բոլոր այն փաստաթղթերը, որոնցից վանքը տնտեսական որևէ օգուտ չէր կարող ակնկալել: Այսպիսի «կարգավորման» արդյունքը լինում է այն, որ հրո ճարակ են դառնում հազարավոր արժեքավոր փաստաթղթեր:

---

* «Բանբեր Հայաստանի Արխիվների», N 1, 1960, էջ 235-238:

[1] Վ. Քալաշյան, Գ. Հարությունյան, Հ. Գրիգորյան, «Արխիվային շինարարությունը Հայաստանում» խմբագրությամբ՝ Ռ. Մուրադյանի և Վ. Կզարթմյանի, Հայկական ՍՍՌ ՆԳՄ Արխիվային վարչության հրատարակություն, Երևան, 1960, 162 էջ:

Այս և նման կարգի փաստերի մեջբերումը գրքույկում, օգտակար կլիներ ցույց տալու համար, թե ինչ պայմաններում են պահպանվել միջնադարյան վանական հաստատություններում պատմական մեծարժեք փաստաթղթերը: Ցավոք սրտի, գրքույկի հեղինակները հապճեպորեն են անցել նման փաստերի կողքից:

Արխիվային փաստաթղթերի պահպանման վիճակը Հայաստանում և ողջ Անդրկովկասում, մեծապես փոխվում է 19-րդ դարի սկզբներից, երբ եղբայրական մյուս ժողովուրդների հետ մեկտեղ, հայ ժողովրդի մի հատվածը թոթափելով պարսկական բռնապետական լուծը, մտնում է ռուսական կայսրության հովանու տակ:

Արևելյան Հայաստանում գործող հիմնարկներին կից ստեղծվում են տեղական նշանակություն ունեցող մի քանի արխիվներ (Երևանի նահանգային վարչության, Երևանի պետական պալատի, օկրուգային դատարանի, նահանգային ժանդարմական վարչության և այլն): Ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակույթի պատմության այլևայլ բնագավառների լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեցող հազարավոր միավորներից բաղկացած արխիվային ֆոնդեր են ստեղծվում նաև Կովկասի փոխարքայության տարբեր գործող հիմնարկներում:

19-րդ դարի 60-ական թվականներից սկսած, Անդրկովկասում զգալի աշխատանք տարվեց նաև արխիվային փաստաթղթերի հրատարակման գծով: 1864 թ. Թբիլիսիում ստեղծվեց Կովկասյան հնագրագիտական հանձնաժողովը, որի ջանքերով, 1865-1885 թթ. ընթացքում 13 մեծածավալ հատորներով լույս ընծայվեցին «Акты, собранные Кавказской Археографической комиссией» խորագրով փաստաթղթերի արժեքավոր ժողովածուները:

Արխիվային փաստաթղթերի հրատարակման գործին լծվեցին նաև հայ ու վրացի գիտնականներ:

Համառոտակի խոսելով կարևոր այս փաստերի մասին, գրքույկի հեղինակներն իրավացիորեն նշում են, որ ինչպես Ռուսաստանի բոլոր նահանգներում, այնպես էլ Անդրկովկասում գոյություն չուներ արխիվային ղեկավար օրգան և լիովին բացակայում էր արխիվների նկատմամբ վերահսկողությունը: Արխիվները գործում էին միմյանցից անջատ, առաջնորդվելով նյութերի մշակման, կոմպլեկտավորման ու հաշվառման տարբեր

մեթոդներով:

Արխիվային ֆոնդերն ապահով չէին նաև ոչնչացման վտանգից: Այսպես, 1866 թվականին Թիֆլիսի փոխարքայության արխիվից ոչնչացվեց 35.000 արխիվային միավոր՝ անդրկովկասյան ժողովուրդների պատմության համար բավականաչափ արժեքավոր նյութերով:

1915 թվականին Երևանի նահանգի արխիվներից խոշոր թվով արխիվային միավորներ էվակուացվեցին Հյուսիսային Կովկաս (Եկատերինոդար, Ստավրոպոլ, Արմավիր). այդ բոլոր նյութերն անհետ կորան:

Գրքույկում մեջ է բերված 1919 թվականին գրված պաշտոնական մի գրություն, որի մեջ բառացիորեն գրված է՝ «Ամենաստույգ տեղեկությունների համաձայն՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ տեղերում զանազան մարդկանց ձեռքով զանազան արխիվներ են վաճառվում խանութներին՝ իբրև անպետք թուղթ և այդպիսով կորստյան են մատնվում խիստ արժեքավոր փաստաթղթեր ու վավերագրեր»:

Քննարկվող աշխատության երկրորդ գլուխը կրում է «Արխիվային օրգանների ստեղծումը Սովետական Հայաստանում և նրանց կառուցվածքային փոփոխությունները» խորագիրը (էջ 26-49): Այս գլխում մանրամասնորեն վեր են հանվում արխիվային հիմնարկների ստեղծման, արխիվային գործի գրվածքի բարվոքման ուղղությամբ Սովետական Միության ու Սովետական Հայաստանի կառավարության կարևոր բոլոր դեկրետները, հրահանգները և միջոցառումները:

Սովետական Հայաստանի կառավարության առաջին քայլը արխիվային ֆոնդերի կենտրոնացման ու կարգավորման գծով՝ 1922 թվականի հունվարին հրապարակված կառավարական շրջաբերականն էր, որով արգելվում էր արխիվային նյութերի ապօրինի ոչնչացումը և հանձնարարվում էր արխիվային փաստաթղթերը կենտրոնացնել Լուսժողկոմատի համակարգում: Նույն թվականի հոկտեմբեր ամսին Հայաստանի պետական թանգարանին կից հիմնվում է արխիվային բաժին: 1924 թ. հոկտեմբերի 1-ին պաշտոնապես բացվում է Հայկ. ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվը՝ Հայաստանի առաջին արխիվային ինքնուրույն հաստատությունը: 1931 թ. հոկտեմբերի 31-ին հիմնվում է Հայաստանի Կենտրոնական արխիվային վարչությունը: 1938 թ. Սովետական Միության արխիվային վարչությունները, նրանց ենթակա բոլոր հիմնարկություններով՝ մտնում են հանրապետական

ներքին գործերի ժողկոմիսարիատների իրավասության տակ:

Արխիվային գործի հետագա զարգացման համար վճռական նշանակություն ունեցավ ՍՄԿԿ XX համագումարը: Համագումարն արխիվների առաջ դրեց նոր խնդիրներ, նշելով, որ արխիվային նյութերը լայնորեն պետք է օգտագործվեն պատմաբանների, տնտեսագետների և գիտական այլ բնագավառների աշխատողների կողմից և նպաստեն գիտական ու տնտեսական պրակտիկ հարցերի լուծման գործին:

1956 թ. փետրվարի 7-ին հրապարակվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը արխիվային գործի հետագա բարելավման անհրաժեշտության մասին, որը բխում էր XX համագումարի պահանջներից:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի 1958 թ. հունվարի 29-ի որոշմամբ Պետական Կենտրոնական արխիվը բաժանվեց երկու ինքնուրույն արխիվների՝ Պետական կենտրոնական պատմական արխիվ և Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության Պետական կենտրոնական արխիվ: Պետք է ասել, որ 1943 թվականից գործում էր նաև ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի արխիվը, որպես առանձին հաստատություն:

Գրքույկի հեղինակները քայլ առ քայլ իրազեկ են դարձնում իրենց ընթերցողներին Հայաստանի արխիվների կյանքի կարևոր անցուդարձերին, շաղկապելով տեղի ունեցող փոփոխությունները Սովետական Միության արխիվների զարգացման համապատասխան փաստերի հետ:

Գրքույկի 3-րդ գլուխը նվիրված է արխիվային նյութերի կենտրոնացման և նրանց պահպանման հարցերին (էջ 49-106):

Հայկ. ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվն իր գործունեությունն սկսեց ունենալով ընդամենը մի քանի արխիվային ֆոնդ: Եռանդուն աշխատանք ծավալվեց Թբիլիսիից, Աստրախանից, Մոսկվայից և Սովետական Միության այլ վայրերից հայ ժողովրդի պատմությանը վերաբերող արխիվային ֆոնդերի հավաքման գծով: 1925-1926 թթ. Թբիլիսիից ստացվեց 500 արխիվային գործ, Աստրախանից՝ Հայոց կոնսիստորիայի արխիվը և այլ բազմաթիվ արխիվային միավորներ:

1929 թվականին արդեն Պետական կենտրոնական արխիվի ֆոնդերի քանակը հասավ 135-ի, իսկ 1957 թվականին (մինչև Պատմական և Հոկտեմբերյան հեղափոխության արխիվների անջատումը միմյանցից) 768 ֆոնդերի, 269.840 միավորով:

Գրքույկում թվարկված են Պատմական կենտրոնական արխիվի ամենաարժեքավոր ֆոնդերը, անհրաժեշտ տեղեկություններով յուրաքանչյուրի ծայրային թվականների, փաստաթղթերի հիմնական բովանդակության և հարակից հարցերի մասին: Հատկապես ուշագրավ են հետևյալ ֆոնդերը. «Պարսկա-թուրքական ֆերմաններ», «Ամենայն Հայոց կաթողիկոսի», «Էջմիածնի Սինոդի», «Հայկական մարզի վարչության», «Երևանի նահանգային վարչության», «Երևանի նահանգի և Կարսի մարզի հողագործության և պետական գործերի վարչության», «Երևանի նահանգի շինականների գործերի ատյանի», «Ներսիսյան հայոց ազգային հոգևոր դպրոցի» և բազմաթիվ այլ ֆոնդեր:

Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվը, որը տարեց տարի աճում է արխիվային նոր նյութերով, ունի իր պահոցներում 393 ֆոնդ, 167.645 արխիվային միավորով: Այստեղ են պահվում Սովետական Հայաստանի պատմության ամենաթանկարժեք դոկումենտալ նյութերը՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի, ժողտնտխորհի, Գավառական գործադիր կոմիտեների, Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի, Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի, Պետպլանի և բազմաթիվ այլ գերատեսչությունների, գործարանների և հիմնարկների արխիվային ֆոնդերը:

Հաջորդ՝ չորրորդ գլուխը նվիրված է դոկումենտալ նյութերի գիտատեխնիկական մշակման, փորձաքննության և հաշվառման հարցերին (էջ 106-126):

Գրքույկի հեղինակներն առանց թաքցնելու նշում են, որ անցյալում այդ աշխատանքների մի մասը կատարել են ոչ մասնագետ մարդիկ: Այդ իսկ պատճառով նյութերի մշակման, հաշվառման ու փորձաքննության բնագավառում եղել են խոշոր սխալներ ու թերություններ: «Արխիվային միավորների վերնագրերի զգալի մասը չի համապատասխանում դոկումենտալ նյութերի նկարագրության վերաբերյալ սահմանված հիմնական կանոններին. շատ դեպքերում արխիվային միավորների վերնագրերը չեն արտահայտում դոկումենտալ նյութերի բովանդակությունը (էջ 112), դոկումենտալ նյութերի փորձաքննության անվան տակ ոչնչացվել են մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր (էջ 120) և այլն: Անցյալի այդ թերություններն այժմ ուղղվում են:

Արխիվի հարուստ ֆոնդերի օգտագործումը դյուրացնելու նպատակով 1958 թ. լույս ընծայվեց Պետական կենտրոնական պատմական արխիվի ուղեցույցը, 177 ամենակարևոր ֆոնդերի նկարագրությամբ:

Վերջին տարիների ընթացքում արխիվային նյութերն ավելի ու ավելի են ի սպաս դրվում ժողովրդական տնտեսության պահանջներին, հրատարակվում առանձին ժողովածուներով, օգտագործվում գիտահետազոտական աշխատություններում: Արխիվային աշխատանքի այս կարևոր բնագավառի հարցերին է նվիրված աշխատության վերջին գլուխը («Դոկումենտալ նյութերի օգտագործումը գիտա-քաղաքական և ժողովրդական տնտեսության զարգացման համար», էջ 126-161):

Արխիվային նյութերի հիման վրա հրատարակվել են մի շարք փաստաթղթերի արժեքավոր ժողովածուներ: Այս կարևոր աշխատանքը տարվել է մեր արխիվների և հանրապետության այլ գիտական հաստատությունների՝ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության, Էկոնոմիկայի և Գրականության ինստիտուտների, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի գիտական աշխատողների աշխատանքային համագործակցությամբ:

Համատեղ ստեղծագործական աշխատանքի արդյունք է հանդիսանում 1945-1955 թթ. ընթացքում լույս տեսած «Գյուղացիական շարժումները Հայաստանում 19-րդ դարում» (1948), «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում 20-րդ դարի սկզբներում» (1951), «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907 թթ.» (1955), «Միքայել Նալբանդյան» (1956), «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (1957), «Ժողովրդական տնտեսության վերականգնումը Հայկական ՍՍՌ-ում» (1958) և այլ փաստաթղթերի ժողովածուները, որոնք կարևոր ներդրում են սովետահայ հնագրագիտության մեջ:

Արխիվային ֆոնդերն ի սպաս են դրվում ժողովրդական տնտեսության զարգացմանը, նաև օգտակար հանածոների հանքավայրերի, դեղատու բույսերի աճման վայրերի և նման կարգի այլ տեղեկատու ցանկերի ստեղծման ճանապարհով:

Սկսած 1942 թվականից, Պետական կենտրոնական արխիվի աշխատակիցները Հայկական ՍՍՌ Երկրաբանական վարչությանը ներկայացրել

են մեծ քանակությամբ հայտեր՝ բնական հանածոների մասին, որոնցից 96-ն արժանացել են ուշադրության և օգնել մեր երկրաբաններին նշված վայրերում հետախուզումներ կատարելու և հանածոների առկայությունը ուսումնասիրելու գործում:

Բարձր գնահատականի է արժանի մեր արխիվիստների աշխատանքը գիտաինֆորմացիոն հաղորդագրություններ կազմելու ուղղությամբ: Ինֆորմացիոն նամակներ և դոկումենտալ նյութերի պատճեններ են ուղարկվել Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհրդին, Շինանյութերի արդյունաբերության վարչությանը, Հայկական ՍՍՌ Արտաքին գործերի, Լուսավորության, Գյուղատնտեսության, Առողջապահության մինիստրություններին, Ալավերդու պղնձաձուլական, Երևանի կոնսերվի գործարաններին և բազմաթիվ այլ ձեռնարկությունների գիտական հաստատություններին և կազմակերպություններին:

Արխիվային ֆոնդերը լայնորեն օգտագործվել են նաև սովետական քաղաքացիներին կենսագրական բնույթի արխիվային տեղեկանքներ, քաղվածքներ ու պատճեններ տալու նպատակով: Առկա նյութերի հիման վրա կազմված տեղեկանքները հաստատել են աշխատավորների աշխատանքային ստաժը, նրանց մասնակցությունը քաղաքացիական պատերազմներին և այլն:

Եթե Հայկական ՍՍՌ Պետական արխիվն իր գոյության սկզբից մինչև 1942 թվականը քաղաքացիներին տվել էր ընդամենը 2634 տեղեկանք, ապա միայն 1957 թվականին տրվել է այդպիսի 6573 տեղեկանք:

Ահա իր ծավալով փոքր այս գրքույկը փաստական ուշագրավ նյութերով ծանոթացնում է իր ընթերցողներին արխիվային շինարարության կարևոր փաստերի հետ, պատմում այն ջանասեր ու օգտակար աշխատանքի մասին, որ կատարում են սովետահայ արխիվիստները:

Գրքույկի հեղինակները ձեռնարկելով իրենց գործին, չեն ունեցել նախօրինակ որևէ աշխատություն: Նրանք հաղթահարել են մեծ դժվարություններ, փաստերի ու ստուգված տվյալների հիման վրա Հայաստանի արխիվների պատմությունն ուրվագծելիս ու այդ նրանց հիմնականում հաջողվել է:

Անշուշտ, հետագայում հարկ կլինի շարադրել արխիվային շինարարության պատմությունը Հայաստանում ավելի հանգամանորեն և ավելի

հարուստ փաստերի մեջբերումով: Այդ իսկ պատճառով ավելորդ չենք համարում կանգ առնել նաև գրքույկի թերությունների վրա:

Երկրորդ գլուխը («Արխիվային օրգանների ստեղծումը Սովետական Հայաստանում և նրանց կառուցվածքային փոփոխությունները») կառավարական որոշումների և հրահանգների համառոտակի թվարկում է սոսկ: Թե այդ որոշումներն ու հրահանգներն ի՛նչ արդյունք են տվել ու ի՛նչ չափով նպաստել արխիվային գործի զարգացմանը Հայաստանում, այդ մասին խոսվում է հաջորդ գլխի առաջին ենթաբաժնում (էջ 49-71): Կարծում ենք, որ աշխատությունը մեծապես կշահեր, եթե երկրորդ գլխի ողջ նյութը շարադրվեր երրորդ գլխի առաջին ենթաբաժնի մեջ բերված նյութերի շարահարմամբ:

Երրորդ գլուխը նպատակահարմար կլիներ սկսել 71-րդ էջի աստղանիշերով սկսվող հատվածից, տալով նրան նոր խորագիր՝ «Հայկական ՍՍՌ Պետական արխիվների ֆոնդերի նկարագիրը»:

Ֆոտո-ֆոնո-կինո դոկումենտների պետական արխիվը, չնայած գոյություն ունի 1943 թվականից, դեռևս գտնվում է իր կազմավորման շրջանում և շատ անելիքներ ունի ինչպես իր ֆոնդերի կարգավորման, այնպես էլ նոր նյութերով իր ոչ հարուստ ֆոնդերը լրացնելու գծով: Օգտակար կլիներ այդ արխիվի աշխատանքները բարվոքելու մտահոգությամբ՝ գրքույկում խոսել նրա առջև ծառացած խնդիրների մասին (կինո և ֆոնո նյութերի հավաքում, հին կենցաղի օրավուր անհետացող երևույթների, կահկարասու, աշխատանքային գործիքների ու պրոցեսների, բնակարանների, գյուղերի նկարահանում, անվանի գիտնականների, արվեստագետների, քաղաքական գործիչների ձայնի գրանցում և այլն, և այլն):

Գրքույկում կան ձգձգված հատվածներ, օրինակ «Դերբենդ-Նամեի» ձեռագրի մասին հարկ չկար այդքան մանրամասն տեղեկություններ հաղորդելու (էջ 140-147): Կան նաև փաստական կարգի վրիպումներ. օրինակ սելջուկների կողմից 12-րդ դարում գրավված ամրոցը կոչվում է ոչ թե Քաջարերդ, այլ Բաղաբերդ (էջ 10), Սարաջևը ոչ թե կոմպոզիտոր է, այլ դիրիժոր (էջ 105) և այլն:

Գրքույկի լեզուն ծանր է ու անհարթ: Կան ոճական կարգի զգալի թերություններ և այլն:

Անշուշտ, նշված թերությունները մասնակի հարցերի են վերաբերում

և չեն նվազեցնում քննարկվող աշխատության արժանիքները:

«Արխիվային շինարարությունը Հայաստանում» գրքույկի հրատարակությունն, ըստ ամենայնի, ողջունելի է:

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ*

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարանի) կողմից, 1956 թ. լույս ընծայվեց Աս. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» արժեքավոր ժողովածուն:

Այն բաղկացած է մեկը մյուսի հետ սերտորեն կապակցված, միևնույն ժամանակ ուրույն նշանակություն ու բովանդակություն ունեցող երեք բաժիններից՝

1. «Ներածություն» (էջ 7-10):

2. «Բնագրեր» (էջ 113-460):

3. «Բանասիրական դիտողություններ, օժանդակ նյութեր և ծանոթագրություններ» (էջ 463-669):

Համառոտակի ծանոթանանք այդ բաժիններին:

«Ներածության» սկզբում տրվում է ժողովրդական երգերի միջնադարյան գրառումների պատմությունը, ըստ որում, հատուկ շեշտվում է այն դերը, որ այդ գործում կատարել է XVII դարի համեստ մի գրիչ՝ Խաչգուղ Ղրիմեցին:

Այդ երգերի հրատարակման աշխատանքը նույնպես դարավոր պատմություն ունի: XVIII դարի առաջին կեսին Պաղտասար Դպիրը, առաջին անգամ լինելով, իր սեփական երգերի ժողովածուներում զետեղել է նաև մի քանի միջնադարյան ծագում ունեցող ժողովրդական երգեր: Ժողովրդական երգերի հրատարակման ու մասսայականացման գործը լայն ծավալ է ըն-

---

* ՊԲՀ, 1959, N 2-3, էջ 363-368:

գտնել XIX դարի կեսերից և կապված է Ղ. Ալիշանի, Մ. Միանսարյանի, Արիստակես վրդ. Տեկանցի, Կ. Կոստանյանի, Գ. Հովսեփյանի և այլ բանասերների անունների հետ:

Ըստ արժանվույն գնահատելով իր նախորդների կատարած գրական աշխատանքը, հեղինակը իրավացիորեն նշում է, որ նրանք իրենց հրատարակած ժողովրդական երգերը, չնչին բացառությամբ, վերագրել են միջնադարյան անվանի որևէ բանաստեղծի (Գ. Աղթամարցի, Քուչակ և այլն) կամ էլ դիտել են դրանք որպես անհայտ հեղինակների գործեր:

Մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը (որի հիշատակին էլ ձոնված է քննարկվող աշխատությունը) առաջինն էր, որ փաստական անհերքելի նյութերով և իրեն հատուկ երկաթյա տրամաբանությամբ ապացուցեց, որ միջնադարյան հայ քնարերգության մեջ, անհատականից բացի, եղել են ու կան նաև պատկառելի քանակություն կազմող ժողովրդական-գուսանական երգեր: Աբեղյանին, սակայն, հուզում էր թյուրիմացաբար Քուչակի անվան հետ կապված հայրենների խնդիրը, ուստի հիմնական գծերով լուծելով այն, նա իր առջև հարց չդրեց միջնադարյան գրավոր հարուստ ժառանգությունից ժողովրդական երգերն առանձնացնելու, նրանց ստեղծման ժամանակը պարզելու, սոցիալական միջավայրը բնորոշելու, գեղարվեստական արժանիքները վեր հանելու խնդիրները: Ահա հենց այս հարցերն են քննարկված գրախոսվող աշխատության «Ներածականում»:

Հեղինակը մեծ դժվարություններ է հաղթահարել նախ և առաջ ժողովրդական երգերը միջնադարյան մյուս երգերից զատելու գործում: Դժվարությունը կայանում է նրանում, որ ձեռագրերը, որոնցում գրանցված են դրանք, հաճախ այս կամ այն հեղինակի անունով են ներկայացրել այս կամ այն երգը, և բացի այդ՝ XIX և XX դարերի բանասերները ևս, հրատարակելով այդ երգերի մի մասը, իրենց կողմից վերագրել են դրանք միջնադարյան տարբեր երգիչների: Բնականաբար, բանասիրական ծանր աշխատանք էր պահանջվելու անհատ հեղինակին վերագրված և որպես անհատական ստեղծագործություն մեր գրականության պատմության մեջ տեղ գրաված որևէ ժողովրդական երգ այդ հեղինակի երգացանկից հանելու և իր իսկական ստեղծողին՝ ժողովրդին վերագրելու համար:

Միջնադարյան եկեղեցական բանաստեղծներից ոմանք ոչ միայն օգտվել են ժողովրդական երգերի ձևերից, պատկերներից, բառապաշարից,

համեմատություններից, այլև հաճախ աննշան «շտկումներով», մի քանի բառերի փոփոխմամբ՝ հոգևոր երգի բնույթ են տվել հնագույն ժողովրդական մի շարք երգերի («Ծաղկեցաւ ծառն կենաց», «Պետրոս երազ էր տեսել», «Ջիմ գաւազանն» և այլն):

Իրավամբ, ժողովածուի հավելվածային բաժնում զետեղվել են որոշ նմուշներ նաև այդ երգերից, որոնց տողերի զգալի մասի ժողովրդական ծագման վերաբերյալ հեղինակի մեջ բերած փաստարկումներից հետո, հազիվ թե կասկածներ առաջանան:

Հեղինակի կատարած բանասիրական բարդ ու դժվարին աշխատանքի մասին առավել ցայտուն պատկերացում ենք ստանում «Բանասիրական դիտողություններ» բաժնից, ուր ժողովածուի մեջ զետեղված յուրաքանչյուր երգ ունի իր ընդարձակ, երբեմն առանձին ուսումնասիրության բնույթ ստացած ծանոթագրությունը: Մենք շեշտում ենք այս հանգամանքը, ցույց տալու համար այն մեծ տարբերությունը, որ գոյություն ունի քննարկվող ժողովածուի և միջնադարյան կամ նոր շրջանի անհատ բանաստեղծների ստեղծագործությունները ամփոփող ժողովածուների միջև: Երգերի մեծ մասը ժողովածուի մեջ տեղ գտնելու իրավունք ստանալու համար անցել են բանասիրական տքնաջան քննարկումների բովով:

Բազմազան են ժողովածուի երգերն ըստ իրենց բովանդակության ու գեղարվեստական առանձնահատկությունների: Հայ աշխատավոր ժողովրդի հազարամյա կյանքի, ակնկալությունների, ընդվզումների արտացոլքն ենք գտնում նրանցից շատերի մեջ: Մերթ տխուր ու ցավոտ, մերթ մեղմ ու լիրիկական շնչով, նրանք պատմում են օտար բռնակալների լծի տակ կեղեքվող, բայց իր ստեղծագործ ու շինարար աշխատանքով միշտ կերտող ու մաքառող ժողովրդի առօրյա կյանքի ու կենցաղի, ծեսերի, տոնական հանդեսների, աշխատանքային պրոցեսների մասին: Մեծ է նրանց ճանաչողական նշանակությունը, առավել մեծ՝ գեղարվեստական ներգործության ուժը:

«Ներածության» հաջորդ էջերը նվիրված են ժողովրդական երգերի գաղափարական բովանդակության և գեղարվեստական արժանիքների վերլուծությանը: «Կաքաւն ի Բարին նստէր» երգում նկարագրվում է, թե ինչպես կաքավը սգում է իր որդու կորուստը, որին հափշտակել են հայրենի բնից և որպես գերի՝ վաճառքի հանել Անի քաղաքի սբ. Նշան եկեղեցու

բակում, որն, ըստ երևույթին, եղել է ստրկավաճառքի շուկա:

Այստեղ, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, կաքավը բազմահազար որդեկորույս մայրերի վշտի թարգման հանդիսանալով, սգում է իր զավակների կորուստը և բողոքի ձայն բարձրացնում ոչ միայն օտար բռնակալների, այլև երկնային «ծուռ դատավորի» դեմ:

Միջնադարյան հայ գյուղի տնտեսական անասելի ծանր պայմանների և օտար տիրակալների բռնակալական լծի արդյունք էր հայ ժողովրդի պատմության ամենաարտաճմլիկ երևույթներից մեկը՝ պանդխտությունը: Հազարավոր ընտանիքների աշխատավոր անդամները, թողնելով իրենց կանանց ու երեխաներին, գնում էին օտար երկրների վաճառաշահ քաղաքները, ահավոր տառապանքների գնով իրենց տնտեսությունը անխուսափելի անկումից փրկելու ակնկալությամբ: Պանդուխտների կամ ղարիբների լայն տարածում գտած երգերն իրենց գեղարվեստական կատարելությամբ ու պանդուխտների ծանր առօրյայի ռեալիստական պատկերմամբ, ուրույն տեղ են բռնում քննարկվող ժողովածուի էջերում:

Միջնադարյան հայ, ինչպես և օտարազգի պատմիչներն արտահայտելով տիրող մտայնությունը, գրեթե ոչինչ չեն հաղորդել աղանդավորների գաղափարական այն սկզբունքների մասին, որոնք սոցիալական պայքարի դրոշ էին միջնադարում:

Հրապարակված ժողովրդական երգերը ճանաչողական մեծ արժեք ունեն նաև այն առումով, որ մի փունջ երգեր (երկնքի ու երկրի, հոգու և մարմնի վիճաբանությունները, իրենց բազմաթիվ փոփոխակներով) ստեղծվել են հենց սոցիալական այնպիսի միջավայրում, ուր խմորվում էին եկեղեցու մարմնամերժ գաղափարախոսության ընդդիմադիր գաղափարներ:

Ժողովրդական երգի մեջ երկար վեճերից հետո երկինքը ստիպված է լինում ընդունել երկրի գերազանցությունն իր նկատմամբ ու ծունկի գալ նրա առջև:

Ապա ցածացաւ երկինքն
Ու գլուխ եդիր ի գետնի ...
Դուք այլ ցնծացէք, մանկտիք,
Ու գլուխ դրէք ի գետնի.
Քան զերկինքն ինչ բարձր կայ
Որ գլուխ եդիր ի գետնի:

Միաժամանակ չպետք է մոռանալ, որ հայագիտության մեջ Ներսես Մոկացուն վերագրված այս երգը, ինչպես նաև Գրիգոր Աղթամարցուն վերագրված «Յամէն առաւօտ և լոյս» սկզբնատողով հայտնի ու պակաս արժեքավոր երգը, առաջին անգամ այս աշխատության մեջ են տրվում իրենց իսկական ստեղծողին՝ ժողովրդին:

Այսպիսով, հեղինակը գրվատանքի է արժանի ոչ միայն բանասիրական մի շարք թյուրիմացություններ պարզելու, սոցիալական խորը բովանդակությամբ մի փունջ ժողովրդական երգեր հրապարակ հանելու և արժեքավորելու համար, այլև միջնադարյան մի քանի հեղինակների ստեղծագործությունները զտելու և հանիրավի գրաված բարձունքից նրանց իրենց արժանի տեղն իջեցնելու կապակցությամբ:

«Ներածականի» հաջորդ էջերում քննարկվում են ժողովրդական այն երգերը, որոնցում արտացոլվել են հայ գեղջուկի աշխատանքային առօրյային, նրա կենցաղին ու սովորություններին վերաբերող նյութերը:

Ժողովածուի էջերում առանձնահատուկ տեղ են գրավում սիրո գողտրիկ երգերը, մանավանդ խաչգողի գրանցած հնագույն շարքի մեջ մտնող անգերազանցելի նմուշները, որոնք արժանի գնահատական են ստացել «Ներածականում»:

«Ներածականի» վերջին ենթագլուխը նվիրված է ժողովածուի մեջ ամփոփված երգերի արվեստին (տաղաչափություն, հանգավորում, տների կառուցման եղանակ, համեմատություններ և այլն), ինչպես նաև լեզվին, ոճին և այլ առանձնահատկություններին:

Ավարտելով «Ներածականի» բովանդակության համառոտ շարադրանքը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն, առանձին վերցրած, գիտահետազոտական լուրջ մենագրության բնույթ է կրում:

Այժմ մի քանի խոսք ժողովածուի բնագրային բաժնի մասին:

Բնագրերի բաժնում զետեղված են (հեղինակի համարակալությամբ) 140 երգ: Այս համարակալումը, սակայն, բացատրության կարիք է զգում: Բանն այն է, որ բազմաթիվ երգեր տեղ են գտել ժողովածուի մեջ՝ իրենց մի շարք (երբեմն 10-ի հասնող) փոփոխակների հետ միասին: Այդ փոփոխակները, անշուշտ, արժեքավոր են և, մեկը մյուսին լրացնելով, հնարավորություն են ընձեռում ավելի ամբողջական պատկեր ստանալու՝ դարերի բովով անցած երգերի հնագույն կառուցվածքի ու բովանդակության մա-

սին: Բայց կան նաև բազմաթիվ այնպիսի փոփոխակներ, որոնք տարբերվում են տվյալ երգի լավագույն օրինակից միայն գրչագրական աննշան շեղումներով, ուստի առանձին երգ կոչվելու և ինքնուրույն համարի տակ ներկայացվելու պատվին չպետք է արժանանային: Եթե երգերի հաշվառքը կատարենք միմյանցից փոքր տարբերություն ունեցող փոփոխակները դուրս թողնելով, ապա ժողովածուի երգերի քանակը զգալի չափով կպակասի:

Ինչևիցե. ժողովածուի մեջ ընդգրկվում են մեծ բարեխղճությամբ կազմված, ձեռագրական բոլոր տարընթերցվածքների նմուշով տասնյակ ժողովրդական երգերի բնագրեր:

Հրատարակված երգերից մի քանիսը մենք համեմատել ենք նրանց ձեռագիր բնագրերի հետ և գոհունակությամբ ընդգծում ենք, որ որևէ շեղում բնագրից մեզ չի հաջողվել հայտնաբերել:

Այսպիսով, բնագրերի բաժինը աղբյուրագիտական առումով կազմված է մեծ հմտությամբ:

Աշխատության «Բանասիրական դիտողություններ, օժանդակ նյութեր և ծանոթագրություններ» բաժնին փոքր-ինչ անդրադարձանք արդեն: Ինչպես ասացինք, ամեն մի երգ այս բաժնում ունի իր, եթե կարելի է այսպես ասել, ծանոթագրություն-ուսումնասիրությունը: Հարկ եղած դեպքում այդ ծանոթագրություններն ընդարձակվում են, բռնելով հաճախ 6 (N 99), 7(N N 32, 47, 91), 8 (N 121) և նույնիսկ 11 (N N 56, 120) ընդարձակ էջ:

Այս ծանոթագրություններում քննարկվում են բանասիրական այնպիսի հարցեր, որոնք կարող էին տեղ գտնել նաև «Ներածականում», սակայն ուսումնասիրության նյութը չընդհատելու մտահոգությամբ միայն, հեղինակը դրանք տարել է ծանոթագրության բաժինը:

Այստեղ զետեղված են նաև բուն երգերի հետ հեռավոր կապ ունեցող ժողովրդական այն երգերը կամ երգերի փշրանքները, որոնք գրի են առնված բանասերների կողմից XIX-XX դարերում:

Հսկայական աշխատանք է կատարված տարբեր պարբերականներում ու հնատիպ գրքերի մեջ գրված այդ երգերի հավաքման ուղղությամբ: Դրանք մեծ մասամբ նպաստում են ծանոթագրվող երգի՝ դարերի ընթացքում կրած փոփոխությունները որոշելու և հարակից այլ հարցեր լուծելու գործին, սակայն ոչ բոլոր դեպքերում: Երբեմն որպես այդ կարգի

երգեր ներկայացված են այնպիսիները, որոնք ծանոթագրվող երգերի հետ գրեթե ոչ մի կապ չունեն: Այդպիսիներից է, օրինակ, N 26 երգի ծանոթագրության մեջ հրատարակված, շուրջ 2 էջ գրավող «Լաճ ու աղջիկ» ժողովրդական երգը, որն առնչվում է վերոհիշյալ երգին այն բանով, որ Առիստակես վարդապետ Սարգսենցի «Պանդուխտ վանեցի» աշխատության մեջ տպագրված է որպես նրա մասը: Կարծում ենք, որ ծանոթագրությունը շահած կլիներ, եթե ամբողջական երգի մեջբերման փոխարեն, համառոտ նշում կատարվեր այդ մասին:

Այնուամենայնիվ այդ կարգի նյութերը ծանոթագրությունների մեջ որակ չեն կազմում և բնավ չեն նվազեցնում «Բանասիրական դիտողություններ» բաժնի գիտական մեծ արժեքը:

Այդ բաժինը ժողովածուի օրգանական մասն է կազմում և իր հարուստ բովանդակությամբ մեծապես նպաստում է հրապարակված երգերի «կենսագրության» պարզաբանման գործին:

Բնականաբար, ծավալուն և այսքան բազմաբովանդակ մի աշխատություն չէր կարող զերծ լինել թերություններից, վիճելի հարցադրումներից և այլ կարգի բացերից: Այդպիսիք իրոք կան, ուստի անդրադառնանք դրանց:

«Ներածության» 32 և հետագա մի քանի էջերը նվիրված են ժողովրդական երգերի առանձնահատկությունների վերհանման և միջնադարյան երգերի հարուստ գանձարանից նրանց անջատման սկզբունքների շարադրմանը: Այդ սկզբունքները տեսականորեն վիճարկելի չեն, սակայն դրանք կիրառելիս, այսինքն որևէ միջնադարյան երգ ժողովրդական համարելով՝ ժողովածու մուծելիս, հեղինակն ամեն դեպքում չէ, որ բավարար չափով կռվաններ է բերում, իսկ երբեմն էլ ժողովրդական է համարում այնպիսի երգեր, որոնց ժողովրդական լինելը առնվազն խիստ վիճելի է:

1) Ժողովածուի մեջ ընդգրկված երգերի բովանդակությանն ու բնույթին ամենից անհարիրները «Իր պահոցի» խաղերգերն են, որոնք գրավում են քննարկվող աշխատության 335-359 էջերը:

Միջնադարում տարածված մտավոր խաղերից են դրանք: Խաղի մասնակիցներն իրենց ձեռքում պահում էին որևէ իր-առարկա (ընտրությունը կարող էր կատարվել 31 տարբեր իր-առարկաներից՝ կաշի, երկաթ, փայտ, միրգ և այլն): Խաղի ղեկավարը՝ «գուշակողը» ձեռքի տակ

ունենում էր վերոհիշյալ 31 իր-առարկաների թվարկումով կազմված և ըստ խմբերի դասակարգված ցանկ, որի յուրաքանչյուր խումբը ուներ իր թվական արժեքը:

Գուշակելու համար նա կարդում էր այդ ցանկը, իսկ առարկա պահողը պարտավոր էր ասել, թե իր պահածը ցանկի որ խմբի մեջ է հիշատակված: Գումարելով պահած առարկայի անունը պարունակող խմբերի թվական արժեքները, գուշակողը կարդում էր այն քառյակը, որը համարակալված էր ստացված գումարը արտահայտող թվանշանով: Օրինակ, եթե պահված իր-առարկայի անունը լինում էր միայն ցանկի առաջին խմբում, ուրեմն «գուշակողը» կարդալու էր խաղերգի առաջին քառյակը:

Զայդ հոգդ, որ ի յափդ ունիս,
Ու գաղտուկ կուզես, որ պահես,
Ասեմ, որ ի դուրս հանես
Ու ամէն մարդոց ցուցանես:

Ժողովրդական երգի գլխավոր հատկանիշներից մեկն այն է, որ նա ստեղծվում ու տարածվում է ոչ թե գրավոր ճանապարհով, այլ բերնեբերան պատմվելով, անգիր դպրությամբ:

Այս բարդ խաղերգերը ոչ կարող էին ստեղծվել բերանացի, ոչ էլ խաղացվել հիշողությամբ:

Բավական է մի փոքր ուշադիր հետևել խաղերգերի քառյակներին՝ համոզվելու համար, որ դրանք ժողովրդական ստեղծագործություններ չեն:

Հեղինակն իր «Ներածականում» գրում է. «Մեծ ուշադրություն պետք է դարձնել առհասարակ ժողովրդական բանահյուսության հետ կոնկրետ կերպով ծանոթանալուն, նրա հոտն ու բույրը, ոճն ու հմայքը զգալուն, ճանաչելուն» (էջ 32): Տվյալ դեպքում այդ «մեծ ուշադրությունը» չի դարձված:

«Իր պահոցների» ամենատարածված տարբերակը պահվել է 10 ձեռագրերում և դրանցից 4-ը որպես հեղինակ պահել են Ներսես Շնորհալու անունը («Տեառն Ներսէսի Կլայեցոյ ասացեալ հանելուկս վասն ուրախութեան մարդկան»): Ա. Մնացականյանը կարծում է, որ ձեռագրերի ընդօրինակողները դրանք «շփոթելով հանելուկների հետ, նույնացրել են Շնորհալու հանելուկների հետ» (էջ 77): Իսկ մենք բավարարված չենք այս

հայտարարությամբ և կարծում ենք, որ լուրջ հիմքեր չկան (կամ չեն բերված) այդ երգերը Շնորհալուն չվերագրելու համար: Եվ եթե նույնիսկ ապացուցվի, որ N 106 խաղերգը Շնորհալունը չէ, դրանով նա բնավ չի դառնա ժողովրդական:

2) N N 32-37 երգերը («Առաւօտուն քամին ելէր՝ մաղէ գիս» սկզբնատողով) իրենց բանաստեղծական հատկանիշներով (խոսքը կրկնակի մասին չէ) չեն առնչվում ժողովրդական երգերի հետ: Ավելին, նրանց տաղաչափությունը, հանգավորման բարդ համակարգը (Մաշէ գիս, դաղէ գիս, թաղէ գիս. լեռներոյն, թոռնելոյն, մեռնելոյն. թացուցայ, լցուցայ, բացուցայ, լեռներուն, քովերուն, ծովերուն) և այլն, թելադրում են անպատճառ որոնելու նրանց հեղինակին:

Տարբեր ձեռագրերում տարբեր բանաստեղծների են վերագրված այդ երգի տարբերակները: Մեկ դեպքում որպես հեղինակ հանդես է գալիս ոմն «Խէվ Յովաննէս», մյուս փոփոխակներում՝ «Օքսուզ Տէրտէր», «Օգսուզ Յօհան» կամ «Օքսուզ Թորոս»:

Այս փաստը հեղինակը նշում է հենց հիմնավորելու համար իր կարծիքն այդ երգերի ժողովրդական լինելու մասին, ենթադրելով, որ հիշված անձինք ժողովրդական այդ երգի տարածող գուսաններն են եղել:

Համոզելու համար ընթերցողին, հեղինակը պետք է բացատրեր, թե ինչպե՞ս է պատահել, որ վերոհիշյալ երգի գրեթե բոլոր տարածող գուսանները կրել են միևնույն «Օքսուզ» մականունը:

Եվ մի՞թե այդ մականունը ինքնին չի վկայում այն մասին, որ այդ երգի հեղինակն իրոք «Օքսուզ» մականունով մի բանաստեղծ է եղել (Տէրտէր, Թորոս կամ Հոհան), իսկ տարածող գուսաններն իրենց անունը դնելով երգի համապատասխան տողում, տաղաչափությունը չխախտելու մտահոգությամբ ստիպված են եղել անփոփոխ թողնել նաև երգի իսկական հեղինակի մականունը: Մեր խնդիրը չէ պարզել տվյալ երգի և նրա փոփոխակների հեղինակի հարցը: Բայց կարծում ենք, որ այն նույնպես ժողովրդական չէ, ուստի չպետք է մուծվեր ժողովածուի մեջ:

3) N N 22-28 երգ կոչվածները Խաչգողցի «Թէն թուխ մ՚ էր առեր» ուշադրավ երգի XIX դարում կատարված գրանցումներ են, որոնք նպատակահարմար կլիներ օգտագործել «Բանասիրական դիտողություններ» բաժնում: Նույնը կարելի է ասել նաև 44 և 45 համարների տակ բերված 3-4

տողանոց փշրանքների մասին, որոնք քաղված են XVIII դարի ձեռագրերից և միջնադարյան երգերի հետ չեն առնչվում:

Բավարար համարենք վկայակոչված փաստերը գրախոսվող ժողովածուի մեջ ոչ ժողովրդական կամ խիստ վիճելի ժողովրդական երգերի առկայության մասին: Դրանց քանակը չի անցնում մեկ, առավելն երկու տասնյակից, այնուամենայնիվ, ժողովածուն շահած կլիներ, եթե հեղինակը երգերի ընտրությունը կատարելիս ավելի խիստ մոտեցում ցուցաբերեր, առանց ափսոսանքի դուրս թողներ ժողովածուն օտար տարրերից:

Ժողովածուի մեջ տեղ չպետք է գտներ նաև N 46 երգը («Եալալի, հայ, Նանիման, Նանիման»): Այն ժողովրդական փոփոխակներ չունի և քաղված է XIX դարի մի ձեռագրից, որն իր հերթին ընդօրինակված է 1830թ. Կալկաթայում տպագրված մի Տաղարանից: Այսպիսով, ժողովրդական լինելով հանդերձ, այն միջնադարյան չէ:

Հրատարակված երգերի մի մասը կապված լինելով հայ ժողովրդական հնամենի հավատալիքների, առասպելների, կրոնական ու հարսանեկան ծեսերի հետ՝ պատմական երկար ուղի է անցել միջնադարում, կրելով համապատասխան փոփոխություններ, հղկվել է ու հարմարեցվել սոցիալական նոր միջավայրի պահանջներին:

Երգերի մի այլ մասը, իր մի շարք տարրերով սերտ աղերսի մեջ լինելով բուն ժողովրդական երգերի, ինչպես և առակների հետ, հասել է մեզ ոչ նախնական կերպարանքով, այլ անցել պրոֆեսիոնալ մշակման բովով, հղկվել, կատարյալ ձև է ընդունել մեզ անհայտ հանճարեղ գուսանների շրթներին և նույնիսկ՝ գրչի տակ:

Այսպես, օրինակ, միանգամայն համամիտ լինելով հեղինակի հետ այն բանում, որ երկնքի և երկրի, հոգու և մարմնի վիճաբանությունները գաղափարական սուր պայքարի վավերագրեր են, կարծում ենք այնուամենայնիվ, որ նրանք խիստ տարբերվելով զուտ ժողովրդական (կենցաղային, հարսանեկան, ծիսական, աշխատանքային և այլն) երգերից, անհատական չլինելով հանդերձ, միջնադարյան հայ բանաստեղծության ուրույն ուղղության կամ բնագավառի փրկված հուշարձաններ են (Մ. Աբեղյանն այդ կարգի երգերին իրավամբ գուսանական անունն է տվել):

Այդ քաջ գիտակցել է նաև Աս. Մնացականյանը՝ այդ մասին ակնարկներ անելով «Ներածականում» և «Բանասիրական գիտողություններում»:

Սակայն, ցավոք, նա իր առաջ խնդիր չի դրել խմբավորելու զուտ ժողովրդական երգերը և գուսանական մշակման բովով անցած երգերն ըստ առանձին բաժինների: Անբավարար փորձ է կատարված նաև դրանց տարբերությունների ուսումնասիրելու ուղղությամբ, որի հետևանքով ժողովրդական ստեղծագործության այդ երկու ուրույն բնագավառների հուշարձանները (զուտ ժողովրդական երգերն ու միջնադարյան գուսանական մի շարք երգեր) ժողովածուի մեջ զետեղվել են ընդհանուր շարքերի տակ, չտարբերակվելով միմյանցից:

Բացի վերոհիշյալ «Վիճաբանութիւն երկնի և երկրի» (N N 117-119), «Վիճաբանութիւն հոգոյ ընդ մարմնոյ» (N 120), «Յամէն առաւօտ և լոյս» (N N 121-130) երգերից, կարծում ենք, որ գուսանական մշակման դրոշմակնիք են կրում նաև «Տաղ ուրախութեան ի վերայ աղուեսին» (N 116), «Գայլն ու արջն ու աղուեսուկն» (N N 111-113) և մի քանի այլ երգեր:

«Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուի միջոցով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտած բարձրարվեստ ստեղծագործություններով զգալի չափով հարստանում է միջնադարյան հայ գրականության հուշարձանների քանակը:

Սակայն խիստ խեղճացրած կլինեինք հրատարակված երգերի գիտական արժեքը, եթե սահմանափակվեինք նրանց գեղարվեստական արժանիքների գովասանքով և ուրախանայինք սոսկ այն բանով, որ միջնադարյան գրականության նոր հուշարձաններ են ի հայտ բերվել:

Այս երգերի գիտական ամենամեծ հետաքրքրությունը պատմաբանի համար կայանում է նրանում, որ նրանց միջոցով հնարավորություն է ստեղծվում ուսումնասիրելու միջնադարյան հայ գրականության պատմությունը, որպես տիրապետող դասակարգերի և աշխատավոր մասսաների, այլ խոսքով եկեղեցական-պաշտոնական ու ժողովրդական գրականությունների պայքարի պատմություն:

Ժողովրդի լավագույն երգերից է «Ասխ-մասխ լեռնէն ի վար» սկզբնատողով երգը, իր տարբերակով (Խաչգողի շարքից):

Այս երգի ծանոթագրության մեջ հեղինակը գրում է. «Հավանաբար նման երգերի օգտագործմամբ է, որ Գրիգոր Նարեկացին X դարում ստեղծել է իր մի աքանչելի տաղը՝ նվիրված Քրիստոսի հարության գաղափարին» (էջ 465):

«Ներածության» մեջ (ուրիշ փաստեր ևս ունենալով ձեռքի տակ) հեղինակը մի նախադասությամբ նշում է, որ ժողովածուի նյութերը հնարավորություն են տալու ծանոթանալու ժողովրդական պոեզիայի՝ գրավոր բանաստեղծության վրա ունեցած ազդեցության հարցերին (էջ 106):

Ա. Մանացականյանը «Ներածականի» սույն սահմաններում չի կարողացել օգտվել իր իսկ ստեղծած այդ հնարավորությունից: Եվ այդ կապակցությամբ նրան մեղադրելն անարդարացի կլիներ:

Սակայն խիստ ցանկալի կլիներ «Ներածականի» մեջ, թերևս ամենասեղմ գծերով շարադրված գտնել այն կարևոր միտքը, որ միջնադարյան հայ գրականության կղերական ներկայացուցիչներից շատերը դիմում էին ժողովրդական պոեզիայի գանձարանին, օգտագործում ժողովրդական երգերի արտահայտչական ձևերն ու հնարանքները, լեզուն ու բառապաշարը (նույնիսկ առանձին տողեր ու քառյակներ) ժողովրդական երգի բուն բովանդակությունը խաթարելու, այն «անվնաս» դարձնելու մտահոգությամբ:

Մեր կողմից արված վերոհիշյալ մի քանի դիտողություններն ու ցանկությունները, ըստ մեծի մասի, էական նշանակություն չունեն և բնավ չեն նվազեցնում գրախոսվող աշխատության արժեքը:

«Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» *աշխատությունը իր պարունակած ժողովրդական ու գուսանական հիասքանչ երգերով և Ա. Մնացականյանի բովանդակալից ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով, արժանի է բարձր գնահատության: Այն, անտարակույս, իր պատվավոր տեղը պետք է գրավի Մ. Աբեղյանի «Գուսանական-ժողովրդական տաղեր» և «Ժողովրդական խաղիկներ» ստվար ժողովածուների կողքին, որպես հայ բազմադարյան գրականության անգնահատելի սկզբնաղբյուր:*

PERSONALIA

ՄԵԾ ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ՀԱՅԱԳԵՏԸ*

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Հարյուր տարի առաջ, 1873 թ. նոյեմբերի 22-ին, Ախալցխա քաղաքում, անտառապահ Համազասպ Մանանդյանի ընտանիքում ծնվեց ապագա մեծ հայագետը՝ Հակոբ Մանանդյանը:

1893թ. ավարտելով Թբիլիսիի արական I գիմնազիան, ուսումնատենչ երիտասարդը մեկնեց Գերմանիա՝ բարձրագույն կրթություն ստանալու: Չորս տարի հետո նա փայլուն քննություններ հանձնելով, ավարտեց Իենայի համալսարանը, և ներկայացնելով մի հետազոտություն Մ. Կաղանկատվացու «Աղվանից պատմության» մասին՝ ստացավ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Մի տարի անց, էքստեռն կարգով քննություններ հանձնելով, նա ստացավ նաև Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ավարտական վկայականը (հետագայում ավարտեց նաև Դորպատի համալսարանի իրավագիտական ֆակուլտետը) և բազմակողմանի գիտական պատրաստություններ ձեռք բերելով՝ վերադարձավ հայրենիք: Աշխատեց էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա Թբիլիսիի ուսումնական հաստատություններից մեկում, իսկ 1909-1919 թթ. Բաքվում՝ որպես ուսուցիչ և իրավաբան:

Հայագիտական աշխատանքներով սկսեց զբաղվել էջմիածնում եղած տարիներին. ուսումնասիրելով Մատենադարանի իմաստասիրական ձեռագրերը, գրեց ուշագրավ մի մենագրություն Դավիթ Անհաղթի մասին, բացահայտելով իրավամբ նրան պատկանող աշխատանքները և

---

* «Սովետական Հայաստան», 1973 թ., 23 նոյեմբերի, 3-րդ էջ:

ուրվագծելով այդ խոշոր գործի դերը հայ փիլիսոփայական գրականության կազմավորման պատմության մեջ: Հրատարակեց նաև հունարենից հայերեն թարգմանված իմաստասիրական մի քանի բնագրեր և համագործակցելով Հր. Աճառյանի հետ՝ կազմեց «Հայոց նոր վկաները» խորագրով միջնադարյան կենսագրությունների ժողովածուն, որի մեջ շատ հետաքրքրական նյութեր կան ժողովրդի կենցաղի, նիստ ու կացի, օտարազգի նվաճողների դեմ մղած պայքարի և այլ հարցերի մասին:

Հ. Մանանդյանի գիտական գործունեությունը նոր թափ ստացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Նա դարձավ Երևանի նորաստեղծ համալսարանի առաջին ռեկտորը, ապա աշխատեց որպես պատմագրական ֆակուլտետի դեկան և հայ ժողովրդի պատմության պրոֆեսոր: Մանանդյանը սկսեց նորովի ուսումնասիրել հայ հին պատմագրության հուշարձանները, քաղելով նրանցից բոլոր այն տեղեկությունները, որոնք լույս են սփռում ավատական Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա, բացահայտում հիմնական արտադրողների (շինականների) տնտեսական և իրավական վիճակը, հայկական ավատատիրության առանձնահատկությունները և հարակից այլ հարցեր: Մեծ գիտնականի այս բնույթի ուսումնասիրություններն ամփոփվեցին «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» մեծարժեք մենագրության մեջ:

Այս կարևոր աշխատանքներին զուգընթաց Մանանդյանը փորձեց ճշգրտել հին Հայաստանում գործածվող կշիռների ու չափերի մետրական համարժեքները, քաջ գիտակցելով այդ բնույթի աշխատանքների մեծ նպաստը՝ տնտեսական կյանքի տարբեր երևույթների ուսումնասիրության համար:

Ակադեմիկոս Մանանդյանը որևէ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերի խորազնին ուսումնասիրությունը հաջողությամբ ի կատար ածելու համար, պատմական դեպքերի ժամանակագրությունը պարզելու հետ մեկտեղ, մեծ նշանակություն էր տալիս նաև պատմաաշխարհագրական միջավայրի հարցերին: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նրա գիտական հարուստ ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում հին Հայաստանի ճանապարհների ուղղությանը, առանձին կարևոր անցուդարձերի (ճակատամարտեր, արշավանքներ և այլն) վայրերը որոշելու խնդրին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները: Դրանք, իհարկե, ինքնա-

նպատակ չէին կատարվում. հին Հայաստանի տեղավայրերի ճշգրտման միջոցով Մանանդյանը նոր լույս էր սփռում Ուրարտուի և հայ ժողովրդի կազմավորման հարցերի վրա, իսկ միջնադարյան Հայաստանի ճանապարհների ուղեգծերը պարզելով, նա հնարավորություն էր ստանում ավելի հանգամանալից ուսումնասիրել միջնադարյան Հայաստանի քաղաքների, առևտրի ու արհեստագործության զարգացման հարցերը: Այս բնույթի ուսումնասիրությունների պսակը հանդիսացավ «Հայաստանի քաղաքներն ու առևտուրը» ռուսերեն խոշոր մենագրությունը, որը լույս տեսավ 1930 թվականին:

Մանանդյանի գիտահետազոտական աշխատանքների լայն ընդգրկման պատկերն ամբողջացնելու նպատակով հենց այստեղ նշենք, որ մեծ գիտնականը նույն այս տարիներին խորազնին ուսումնասիրության առարկա դարձրեց նաև հունաբան կոչվող թարգմանական բնագրերը (կատարված 5-8 դարերում) և մանրախույզ բանասիրական քննություններ կատարելով փորձեց որոշել հունաբան կոչվող գրականության հիմնական հուշարձանների ստեղծման ժամանակագրությունը և դրանց կարևոր նշանակությունը հայ իմաստասիրական գրականության զարգացման և գիտական տերմինոլոգիայի ստեղծման համար:

Գիտահետազոտական աշխատանքների բազմազան այս բնագավառներում մեծ արժեքներ ստեղծելով, ակադեմիկոս Մանանդյանը 40-ական թվականների սկզբներից իր առջև հերոսական մի խնդիր դրեց՝ ստեղծել հայ ժողովրդի քննական պատմությունը, սկսած Ուրարտուի անկումից մինչև 15-րդ դարի վերջը, երբ պատմական Հայաստանի տարածքի վրա տևական իշխանություն հաստատեցին Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Իրանը: Ինչպես վերը ցույց տվեցինք, այդ մեծ ծրագրի իրականացման համար ակադեմիկոս Մանանդյանը լուրջ նախապատրաստական աշխատանքներ էր կատարել: Խորապես ուսումնասիրած լինելով հունարեն, լատիներեն և գրաբար առկա սկզբնաղբյուրները և եվրոպական լեզուներով Հայաստանի ու հարևան երկրների պատմության մասին գրված կարևոր ուսումնասիրությունները, մեծ գիտնականը խիզախեց նորովի լուսաբանել հայ ժողովրդի երկհազարամյա պատմական ուղու կարևոր դրվագները՝ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» երեք ստվար հատորների մեջ:

1945 թ. հրատարակվեց այդ աշխատության առաջին հատորը

(սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում), 1952 թ. 3-րդ հատորը (11-15-րդ դդ. պատմությունը), 2-րդ անավարտ մնացած հատորից հետմահու հրատարակվեցին առանձին թերի բաժիններ ու մասեր:

Լրագրային մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ նույնիսկ հարևանցիորեն թվարկել հայ ժողովրդի պատմության հանգուցային այն հարցերը, որ Մանանդյանի ջանքերով դրվեցին ու լուծվեցին «Քննական տեսության» մեջ: Դրանք բազմազան են և բազմաբնույթ: Կանգ առնենք մեկ կարևոր հարցի վրա միայն:

Տիգրան Բ թագավորը Հայաստանի նշանավոր քաղաքական այն գործիչն էր, որին հաջողվեց մեր թվարկությունից առաջ I դարի առաջին հիսնամյակի ընթացքում միավորել պատմական Հայաստանի հողերը, Հայաստանը դարձնել առաջավոր Ասիայի ամենախոշոր պետությունը, հիմնադրել նոր քաղաքներ, զարկ տալ տնտեսական կյանքին ու արհեստագործությանը: Պետական այս մեծ գործչի պատմական դերը սխալ է գնահատվել եվրոպական գիտնականների կողմից: Տիգրանը պայքարել է ստրկատիրական Հռոմի դեպի Արևելք ծավալվելու քաղաքականության դեմ: Մի շարք պատմաբաններ (Մոմզեն, Ռեյնակ և այլն) Հռոմի պատմության շահերից ելնելով միանգամայն սխալ են ներկայացրել Տիգրանի դերը միջազգային հարաբերությունների մեջ: Ելնելով եվրոպոցենտրիզմի արատավոր դիրքերից, նրանք Հայաստանը համարում էին հետամնաց մի երկիր, հաշվի չառնելով, որ մ. թ. ա. 2-րդ դարից սկսած Հայաստանն իր հարևան երկրների հետ մտել էր հելլենիստական քաղաքակրթության ոլորտի մեջ և արձանագրել նշանակալից հաջողություններ տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում: Հռոմի նվաճողական քաղաքականության դեմ Տիգրանի գլխավորած պայքարն առաջադիմական նշանակություն ուներ. նա պայքարում էր ստրկատիրության՝ հռոմեական պետությանը հատուկ ամարդի ձևերի դեմ, պաշտպանելով հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու զարգացած մշակույթը:

Ինչպես «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության առաջին հատորում, այնպես էլ «Տիգրան Բ և Հռոմը» մենագրության մեջ նոր լուսաբանություն ստացան Հին Հայաստանի պատմության հանգուցային շատ խնդիրներ:

Մեծ է ակադեմիկոս Հ. Մանանդյանի դերը նաև հայագիտական կադրեր պատրաստելու բնագավառում: Երկար տարիներ Երևանի համալսարանում նա կարդացել է Հայոց պատմության դասընթաց, առաջ քաշելով նոր հարցեր, հիմնական ուշադրություն դարձնելով ժողովրդական զանգվածների տնտեսական ու սոցիալական կյանքի մինչ այդ չուսումնասիրված երևույթների վրա: Նրա հոգատար ղեկավարությամբ աճել են նաև մի շարք երիտասարդ պատմաբաններ, որոնք այսօր կարևոր աշխատանք են կատարում հայագիտության բնագավառում:

Հ. Մանանդյանի գիտական բեղմնավոր գործունեությունն ու մանկավարժական աշխատանքը բարձր է գնահատվել գիտական հասարակայնության կողմից: 1939 թ. նա ընտրվել է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1943 թ., երբ ստեղծվեց Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Մանանդյանը դարձավ նրա հիմնադիրներից մեկը:

Ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանը մահացավ 1952 թ. փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում: Հայրենասեր գիտնականի վաստակը հավիտենական կոթող է նրա հիշատակին:

ԽՈՍՔ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

«Սովետական Հայաստան» թերթի երեկվա համարում ծանուցում էր հրապարակված այսօր՝ այս դահլիճում գումարվելիք երկու գիտական ինստիտուտների համատեղ նստաշրջանի մասին՝ նվիրված ականավոր գիտնական ու քաղաքական գործիչ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյակին:

Ազնվորեն պետք է խոստովանել, սակայն, որ մենք այսօր (առաջին հերթին ես իմ մասին եմ խոսում) դեռևս լիովին պատրաստ չենք գիտական *խոսք ասելու իրոք մեծ ու ականավոր մարքսիստ պատմաբանի մասին, մի գիտնականի, որի հետաքրքրության շրջանակների մեջ էին մտնում հայոց պատմության հնագույն շրջաններից սկսած մինչև արդիական խնդիրները, Ներսես Պարթևի տեսիլքից սկսած մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատման հետ կապված հարցերը:*

Իրոք, գիտական խոսք ասելու համար մի խումբ պատմաբաններ մի քանի տարի շարունակ պետք է ուսումնասիրեն նրա ստվարածավալ մենագրությունները՝ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը»[1]*, ինչպես նաև մի քանի տասնյակ այլ աշխատություններն ու հոդվածները, որոնք տպագրված են առանձին գրքույկներով կամ գիտական պարբերականներում՝ հայերեն, ռուսերեն ու գերմաներեն լեզուներով, մեր դարի 10-ական թվականներից սկսած մինչև մեր օրերը:*

---

* «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1977, N 7, էջ 42-48:

1 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, հ. 2, Երևան, 1959, նույնի՝ Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955. հ. 2, Երևան, 1956:

Աշոտ Հովհաննիսյանի գիտական ժառանգության ապագա ուսումնասիրողները, անտարակույս, պետք է հաշվի առնեն նաև այն հանգամանքը, որ նշանավոր այդ գիտնականի պատմագիտական հայացքների ձևավորումը բարդ ու երկարատև զարգացման ընթացք է ունեցել. գիտական ասպարեզ իջնելու առաջին տարիներին նրա ուշադրության կենտրոնում էին գտնվում, հիմնականում, աղբյուրագիտական հարցեր: Կարելի է ասել, որ նա առաջին հայագետ-պատմաբանն էր, որ հատուկ քննության նյութ դարձնելով միջնադարյան եվրոպական (հիմնականում լատիներեն գրված) աղբյուրները, կարողացավ նրանց ծալքերից Հայաստանի տնտեսական կյանքի ու քաղաքական պատմության համար նոր նյութեր հայտնաբերել՝ քաջ գիտակցելով, որ հայ ազատագրական շարժումների ու դրանց գաղափարախոսության հարցերի գիտական հետազոտությունն առանց այդ սկզբնաղբյուրների անհնարին է իրագործել:

Եվ եթե նրա «Դրվագների» բոլոր հատվածներում ընթերցողը գտնում է առաջնակարգ նշանակություն ունեցող նյութեր՝ քաղված Ռաֆայել Դյու Մանի, Պետրոս Դելլա Վալլեի, Անտոն Գուվեայի, Հովհ. Հանվեյի, Տավերնիեի, Տուրնեֆորի, Վիլոտի, Կրուշինսկու, Պետիկի և այլ ճանապարհորդների, քարոզիչների ու վանականների նոթերից կամ հիշողություններից, ապա դրանք, իրենց մեծագույն մասով, հավաքված են հենց նրա գիտական գործունեության առաջին շրջանում, երբ նա սովորում էր Գերմանիայում և մասնագիտանում հայ ազատագրական շարժումների, հայ-եվրոպական ու հայ-ռուսական քաղաքական կապերի ուսումնասիրության մեջ:

Այս շրջանի վերջում էր, որ ապագա մեծ պատմաբանը աշխատանքի անցնելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, հնարավորություն ունեցավ ընդհուպ հաղորդակցվելու հայերեն միջնադարյան ձեռագրերի, արխիվային ֆոնդերի ու պարբերական մամուլի հարուստ հավաքածուների հետ՝ նրանցից ևս քաղելով նոր նյութեր հետագա իր գիտական հետազոտությունների բավարարման համար:

Ձեռագրերից և արխիվային ֆոնդերից նրան հաջողվեց հայտնաբերել ժամանակագրական ուշագրավ նյութեր (Հակոբ Ջուղայեցու ուղերձը ռուսական ցարին և այլ կոնդակներ), որոնք հրատարակվեցին ժամանակի գիտական մամուլում, երիտասարդ գիտնականի ներածական հոդվածով ու ծանոթագրություններով. ճիշտ է, դրանք շատ համառոտ գրություններ էին,

սակայն գրված էին այնպիսի հմտությամբ, որ կասկած չէին թողնում հեղինակի խորը գիտելիքների ու աղբյուրագիտական հետամուտ նպատակադրության մասին:

Աշ. Հովհաննիսյանի գիտական գործունեության երկրորդ փուլն ընդգրկում է 20-30-ական թվականները, երբ նա՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման ակտիվ գործիչներից մեկը, ղեկավար աշխատանք էր կատարում, որպես լուսավորության ժողկոմ, Հայաստանի կոմունիստական կուսակցության քարտուղար, ապա այլ պատասխանատու աշխատանքներ՝ Հայաստանից դուրս:

Որպես ակտիվ գործիչ ու հայրենական նոր պատմագրության հիմնադիրներից մեկը, Աշոտ Հովհաննիսյանն այդ տարիներին փորձում էր վերագնահատել անցյալի արժեքները՝ մարքսիստական գաղափարախոսության դիրքերից, վերլուծել հայ ժողովրդի ինչպես հեռավոր անցյալի պատմության, այնպես էլ XIX դ. և ժամանակակից կյանքի կարևորագույն երևույթները: Եվ մենք մեղանչած կլինենք պատմական ճշմարտության առջև, եթե չխոստովանենք, որ մեծ գիտնականի այս շրջանի որոշ աշխատություններ, գրված լինելով առօրյա վեճերի մղումով, տուրք են տալիս գռեհիկ-սոցիոլոգիզմին:

Աշոտ Հովհաննիսյանի գիտական գործունեության արգասավոր շրջանն սկսվեց Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ նա հնարավորություն ստացավ կրկին հաստատվելու Երևանում և ամբողջովին ու անմնացորդ նվիրվելու հայագիտությանը:

Մի քանի դժվարին տարիներ գիտական աշխատանքի պայմաններից զուրկ մնալով, Աշոտ Հովհաննիսյանը հնարավորություն էր ունեցել վերագնահատելու իր գիտական դիրքորոշման առանձին կողմերը և ծրագրելու ստեղծագործական աշխատանքի այն հիմնական ուղղությունները, որոնցով առաջ էր տանելու գիտահետազոտական իր ուսումնասիրություններն առաջիկայում:

Հաղթահարելով որոշ դժվարություններ, Աշոտ Հովհաննիսյանը հնարավորություն ստացավ ձեռնամուխ լինելու իր ծրագրերի իրականացմանը՝ զարմանալի ու հիանալի ինքնանվիրումով, խոր հերոսական ջանասիրությամբ, զոր ու գիշեր տքնելով, անդադար ստեղծագործելով:

Ինձ վիճակվել է Մատենադարանում (ուր նա անց էր կացնում աշխա-

տանքային օրվա մեծ մասը) ականատես լինելու նրա առօրյա գործունեությանը, որ զարմանք էր պատճառում բոլորին:

Բացառիկ կարողություն ուներ՝ կտրվելու շրջապատից, մոռանալու մարմնական կարիքները, զարմանալի խորասուզումով մխրճվելու ուսումնասիրվող գրքի, փաստաթղթի, մենագրության մեջ: Շատ հաճախ, դիտելով նրա ստեղծագործական աշխատանքի այդ լարված պահերը, մենք (Մատենադարանում նրա հետ մեկտեղ աշխատողներս) գիտակցում էինք, որ նա ամբողջովին կտրված է իր շրջապատի իրականությունից, և խորաթափանց իր մտքով դեգերում է հայոց պատմության հազարամյակներում՝ բացահայտելով ուրիշների կողմից չնկատված փաստեր, վերականգնելով իր մտքի մեջ անցյալ դարերի հասարակական հարաբերությունների, սոցիալ-տնտեսական կյանքի բարդ երևույթների բուն էությունը:

Շուրջ մեկ տասնամյակի տիտանական աշխատանքի արդյունքով ստեղծվեցին Աշոտ Հովհաննիսյանի փառահեղ մենագրությունները. 4 ստվար հատորներ՝ հայ ազատագրական ու սոցիալ-քաղաքական մտքի պատմությանը նվիրված («Դրվագները» և «Նալբանդյանը», նույն մտահղացման արդյունք լինելով, կազմում են մեկը մյուսի օրգանական շարունակությունը): Դրանց սկիզբը ծայր է առնում V դ., երբ հայ ժողովուրդը կորցրեց քաղաքական իր ազատությունը, և ավարտվում 1920 թվականով, երբ հայ ժողովուրդը, սերտորեն դաշնակցած ռուս ժողովրդի հետ, հազարամյա պայքարից հետո՝ կարողացավ վերագտնել իր պետականությունը՝ սովետական դրոշի ներքո:

Ինձ համար շատ դժվար է գնահատանքի խոսք ասել Աշոտ Հովհաննիսյանի վիթխարի նշանակություն ունեցող այդ աշխատությունների, մասնավորապես «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության մասին, որը, անտարակույս, նրա գիտական մտքառումների գլուխգործոցն է և դեռևս շատ տասնամյակներ չի կորցնելու իր նշանակությունը որպես միջնադարյան հայոց պատմության հանգուցային հարցերին նվիրված հանրագիտարանային բնույթի ուսումնասիրություն: Այստեղ բացահայտված է ժողովրդական զանգվածների դերը որպես ազատագրական պայքարի գլխավոր հենարան և առաջմղիչ ուժ: Տրված է հայ իշխող դասակարգերի՝ ավատատերերի, եկեղեցականների, առևտրական դասի դերն օտար նվաճողների լծից հայրենի երկրի ազատագրման համար

մղվող պայքարի տարբեր էտապներում. նորահայտ նյութերի հիման վրա բացահայտված է բոլոր այն ծրագրերի ու բանակցությունների սնանկությունը, որոնց հիմքում դրված էր եվրոպական երկրներից ակնկալվող օգնությունը, քայլ առ քայլ քննված են սոցիալ-պատմական այն հանգամանքները, որոնք նախապատրաստեցին հայ ժողովրդի քաղաքական դիմորոշումը դեպի Ռուսաստան, և ժողովրդական այն շարժումը, որն ի վերջո պսակվեց հաջողությամբ՝ Արևելյան Հայաստանի ազատագրումով ու Ռուսաստանի հետ միավորումով:

Մեր ժողովրդի պատմության հանգուցային այս հարցերը մարքսիստ-պատմաբանն ուսումնասիրել և պարզաբանել է ոչ թե նախապես ստեղծված, պատմականությունից զուրկ սխեմաների կիրառմամբ, այլ փաստական վիթխարի նյութի մանրակրկիտ վերլուծման ճանապարհով:

Խորաթափանց պատմաբանի հայացքի տակ ճանաչողական մեծ նշանակություն են ստացել ոչ միայն պատմագրական հայտնի սկզբնաղբյուրները, այլև բազմաթիվ «երկրորդական» համարվող աղբյուրներ՝ միջնադարյան տեսիլքները, գուշակությունները, քարոզները, խրատները և այլ ձեռագրական միավորներ, որոնք առաջին անգամ լինելով, դրվել են գիտական շրջանառության մեջ, գնահատվել ըստ արժանվույն՝ բազմագիտակ աղբյուրագետ-պատմաբանի կողմից:

Իր առջև դրված հիմնական հարցերին զուգընթաց, և հենց այդ հարցերի գիտական պատասխանը տալու մտահոգությամբ, վերոհիշյալ իր աշխատության մեջ Աշոտ Հովհաննիսյանը ստիպված է եղել (երբեմն շեղվելով բուն նյութից) դիմապատկերը գծել միջնադարյան հայոց պատմության ու մշակույթի գրեթե բոլոր նշանավոր գործիչների (Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Ֆրիկ, Գրիգոր Տաթևացի, Թովմա Մեծոփեցի և ուրիշներ):

Այսօր, իհարկե, կարելի է վիճել և նույնիսկ մերժել նրա գնահատականների մի մասը, սակայն միաժամանակ մեր սրբազան պարտքն է վստահորեն հայտարարել, որ այդ դիմապատկերներն արված են տաղանդի մեծ ուժով և ամրակուռ հիմքն են հանդիսանալու անցյալի մեր շատ գործիչների մասին առաջիկայում գրվելիք մենագրությունների համար:

Կարելի՞ է, օրինակ, հակաճառել Ֆրիկին ու ըստ արժանվույն գնահատել նրա բանաստեղծական ժառանգությունը՝ առանց Ֆրիկի մասին

«Դրվագներում» գրված էջերի կամ նույն բանաստեղծի մասին Աշ. Հովհաննիսյանի փոքրածավալ մենագրության: Իհարկե, ոչ: Այստեղ գտնվողների մեծագույն մասը ծանոթ է, որ Ֆրիկի ժառանգության ուսումնասիրության իր կյանքն էր նվիրել Տիրայր եպիսկոպոսը, որը տասնամյակներ շարունակ տքնել էր նրա ստեղծագործությունները հավաքելու, մեկնաբանելու և գնահատելու աշխատանքով: Եվ երբ բաղդատում ենք Աշոտ Հովհաննիսյանի Ֆրիկի մասին՝ գրված փոքր ուսումնասիրությունը Տիրայրի մեծ գրքի հետ, պարզ է դառնում ուժերի հակադարձ փոխհարաբերությունը:

«Դրվագները» շատ բարդ կառուցվածք ունեն: Այն տարիներին, երբ շարադրում էր իր աշխատությունն Աշոտ Հովհաննիսյանը (և ըստ մեծ մասի նաև մեր օրերում), հայ միջնադարյան պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող շատ խնդիրներ դեռևս չէին լուծված, պարզ չէր այն ժամանակ, օրինակ, թե սոցիալ-տնտեսական զարգացման իր մակարդակով Հայաստանն ի՞նչ բարձունքների էր հասել XI-XIII դդ., քայքայվո՞ւմ էր արդյոք ավատատիրությունը, և կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորո՞ւմ էր տեղի ունենում, թե՞ հայկական ավատատիրությունը նոր միայն ոտք էր դնում իր զարգացման հաջորդ փուլը՝ հասուն ավատատիրության ժամանակաշրջանը: Այս հարցի ճիշտ լուծման հետ սերտորեն աղերսվում են հայկական վերածննդի մասին անցյալում հրապարակ հանված և այժմ էլ ոմանց կողմից կրկնվող «տեսությունները»: Մեր կարծիքով Աշոտ Հովհաննիսյանն առաջինն էր, որ գիտական խոսք ասաց այս հարցի մասին և ճիշտ կողմնորոշում տվեց հայ պատմագրությանը:

Խուսափելով ուրիշ նմանօրինակ փաստեր մեջբերելուց, չենք կարող, սակայն, չնշել, որ հիմնական ու կարևոր այս կարգի բազմաթիվ հարցերի ուսումնասիրությանը զուգընթաց, հաճախ տողատակային մի ծանոթագրության կամ էլ միջանկյալ մի նախադասության մեջ Աշոտ Հովհաննիսյանը կատարում էր պատմաբանասիրական կարևոր ճշգրտումներ:

Մեզանում եղել են ու կան գիտնականներ, որոնք իրենց ողջ կյանքում զբաղվել են միայն այդ կարգի մանր ճշգրտումներով: Եվ եթե Աշոտ Գարեգինովիչի այդ կարգի ճշգրտումների ցանկը կազմվի՝ ապա «Դրվագների» միջից կարելի է առանձնացնել մի քանի հարյուր նյութ-միավոր, որոնցից ամեն մեկն ուրիշ բանասերի գրչի տակ դառնալու էր առանձին

(ձգձգված ու ծամծմված) հոդված:

Չի կարելի մի երկու խոսք չասել նաև Աշոտ Հովհաննիսյան-պատմաբանի գրելաձևի, ոճի և հարուստ բառապաշարի մասին: Նա վճռականորեն ծառանալով անկիրք-անարյուն-հետևակ գրելաոճի դեմ, մշակեց պատմագրական երկերի շարադրման իր ուրույն եղանակը, լայնորեն օգտագործելով գեղարվեստական գրականության ժանրերին հատուկ հնարանքներ:

Արտակարգ շնորհք ուներ Աշոտ Գարեգինովիչը նոր տերմիններ ստեղծելու կամ արդեն գոյություն ունեցող բառերին իմաստային նոր երանգ հաղորդելու: «Դրվագների» ներածականի ընդամենը մի քանի էջերում գտնում ենք, օրինակ, տարբերակում, շրջադարձ, բանավարություն, ղեգերում, դիմաշրջում, հեղաբեկում, բարձրակետ, դարակազմիկ շրջադարձ, հեռագնաց նախանշում, իդեական հանգույցներ, իրափորձություն, հետնախորք, շահաստացություն և այլն, բառեր, որոնք օգնում են շարադրանքին՝ ոչ միայն հստակ հաղորդելու հեղինակի միտքը, այլև շոյելու ընթերցողի ականջը:

Աշոտ Հովհաննիսյանի պատմաբառաստեղծումն իր կենսական գործը կատարում է նաև այսօր. մեր պատմաբաններից շատերը փորձում են օգտվել նրա տերմինաբանությունից, նոր հաջողություններ արձանագրելով պատմագրական երկերի լեզվաշինության ու ոճաբանության բնագավառում:

Ես զգում եմ, որ վերջակետ դնելու ժամանակը վաղուց հասել է, բայց դեռ կարող եմ շատ երկարել այս շարադրանքը՝ մտքիս առջև ունենալով Աշոտ Հովհաննիսյանի վեհ կերպարը:

Ի վերջո, ինչո՞ւմն էր Աշոտ Հովհաննիսյան գիտնականի, քաղաքական գործչի և մարդու արժեքի, նշանակության ու հմայքի բուն գաղտնիքը:

Նախ բնածին տաղանդի մեջ. նա կարողանում էր պատմական երևույթներն ընդգրկել վերասլաց արծվային հայացքով, որ հնարավորություն էր տալիս դիտելու բուն օբյեկտը՝ իր լայնարձակ շրջապատի մեջ: Եվ միևնույն ժամանակ, նա բացառիկ կարողություն ուներ ուշադրություն դարձնելու առաջին հայացքից երկրորդական թվացող «մանրուքներին»: Եվ ահա վերից ու վարից դիտելու այս զույգ տաղանդներով օժտված գիտնականի հայացքի տակ պարզվում էին պատմական երևույթների այնպիսի ծալքեր, որոնք անտեսանելի էին միայն մեկ դիտակետ ունեցող գիտ-

նականների համար:

Տաղանդը, սակայն, ըստ ինքյան կարող էր մարել ու հանգչել, եթե Աշոտ Հովհաննիսյանը, իր երիտասարդության տարիներից սկսած՝ չգիտակցեր հրապարակ կոմունիստական կուսակցությանը և չզինվեր մարքսիզմ-լենինիզմի պատմափիլիսոփայությամբ, աշխարհայացքով: Այդ աշխարհայացքն էր, որ նախանշեց նրա ուսումնասիրությունների բուն ուղին և եզրահանգումների էությունը. հայ պատմագրության մեջ պատվավոր իր տեղը գրավեց Աշոտ Հովհաննիսյանը որպես մարքսիստական հայ պատմագրության ռահվիրաներից մեկը:

Այսօր, նրա աշխատանքային կրտսեր ընկերներն ու աշակերտները հավաքվել են այստեղ ոչ միայն հարգանքի ու մեծարանքի խոսք ասելու մեծատաղանդ գիտնականի հիշատակին, այլ նաև հիշելու և արձանագրելու, որ մենք բոլորս թերացել ենք նրա հիշատակը հավերժացնելու, նրա ձեռնարկած գործերը շարունակելու, նրա սիրած թեմատիկան ուշադրության կենտրոնում պահելու առումով:

Ուզում եմ հավատալ, որ մեր այս հավաքույթը՝ մեծարանքի տուրք լինելով Աշոտ Գարեգինովիչի հիշատակին, մեկ անգամ ևս հիշեցնելու է, որ մենք պարտք ունենք մատուցելու՝ հրատարակելով նրա անտիպ աշխատությունները և մեկ հատորի մեջ ամփոփելով տարբեր պարբերականներում ցրված նրա լավագույն հոդվածները: Ես չեմ խոսում այն մասին, որ արդեն հասունացել է նաև նրա երկերի ամբողջական ժողովածու հրատարակելու ժամանակը:

Մ. Ն. ՏԻԽՈՄԻՐՈՎ*

Սովետական պատմական գիտությունը ծանր կորուստ կրեց: Վախճանվեց խոշորագույն գիտնական ու հասարակական գործիչ, ակադեմիկոս Միխայիլ Նիկոլաևիչ Տիխոմիրովը (1893-1965), որն իր ստեղծագործական ուժերը, արտասովոր ընդունակությունններն ու ողջ կյանքը նվիրաբերել էր ժողովրդին ու հայրենի գիտությանը:

1917 թ. ավարտելով Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, Տիխոմիրովն սկսում է իր բազմաբեղուն մանկավարժական ու գիտական գործունեությունը: Գիտնականի խոր ու բազմակողմանի պատրաստությունը, հետազոտական աշխատանքի բարձր կուլտուրան, հին ու նոր լեզուների լավագույն իմացությունը, արտասովոր ընդունակություններն ու աշխատասիրությունը ակադեմիկոս Տիխոմիրովին հնարավորություն ընձեռեցին ստեղծել ինքնատիպ ու բարձրարժեք երկեր՝ պատմական գիտության գրեթե բոլոր բնագավառներում: Մեծ գիտնականի կատարած հսկայական աշխատանքի և հետաքրքրությունների գրեթե անընդգրկելի ոլորտի մասին մեզ պատկերացում կարող է տալ հարևանցի ծանոթությունը նրա 300-ից ավելի ուսումնասիրություններից թեկուզ մի քանիսին: Ռուսաստանի սոցիալ-տնտեսական վիճակի ու դասակարգային պայքարի պատմությանն են նվիրված նրա այնպիսի երկերը, ինչպիսիք են «Հին Ռուսիայի վաճառականական ու արհեստավորական միավորումների մասին», «Գյուղացիական և քաղաքային ապստամբությունները Հին Ռուսիայում XI-XIII դարերում», «1650 թվականի Պսկովի ապստամբությունը», «Ռուսաստանը XVII դարում»: Ուշագրավ են նաև ակադեմիկոսի

* ՊԲՀ, N 4, 1965, էջ 290-292, հեղինակակից՝ Վ. Ոսկանյան:

երկերը քաղաքների պատմության մասին («Հին ռուսական քաղաքները», «Միջնադարյան Մոսկվան XIV-XV դդ.», «Հին Մոսկվան», «Նովգորոդ», «Ցուցակ ռուսական քաղաքների» և այլն):

Բարձրարժեք են ակադեմիկոսի հետազոտությունները ռուսական պետության և իրավունքի պատմության բնագավառում: Բավական է հիշել նրա «Ուսումնասիրություն «Ռուսական պրավդայի», «Ձեռնարկ «Ռուսական Պրավդայի» ուսումնասիրության համար», «1649 թ. «Սոբորային օրենսգիրքը» աշխատությունները:

Մեծ է գիտնականի վաստակը X-XVIII դարերի սկզբնաղբյուրների հավաքման, ուսումնասիրության ու հրատարակման բնագավառում, ընդ որում, լավագույն աղբյուրագետն այդ աշխատանքները կատարում էր մեծ բարեխղճությամբ՝ ժամանակակից գիտության բարձր պահանջներին համապատասխան: Նույնքան մեծ ու նշանակալից են նրա ծառայությունները աղբյուրագիտության տեսական հարցերի մշակման ասպարեզում: Նրան ենք պարտական այնպիսի արժեքավոր սկզբնաղբյուրների գիտական հրատարակությունների համար, ինչպիսիք են «Համառոտ ակնարկներ Մոսկվայի տարեգրական երկերի մասին», «Ռուսական տարեգրությունների լիակատար ժողովածու» (հատոր 26), «Վոլոգդա-Պերմյան տարեգրության մասին», «Նովգորոդյան գրամատաներ բերյոստայի (կեչու կեղևի վերնաշերտ) վրա» և այլն և այլն: Նշանակալից է Մ. Ն. Տիխոմիրովի դերը բնագրագիտության (археография) բնագավառում ոչ միայն որպես հավաքողի և ուսումնասիրողի, այլև կազմակերպչի (նա ԳԱ Բնագրագիտական հանձնաժողովի նախագահ և տարեգրքի խմբագիրն էր): Դեռևս 1940 թ. Մ. Ն. Տիխոմիրովը հրատարակեց աղբյուրագիտության բուհական ձեռնարկը, որ առ այսօր միակն է պատմագրության մեջ (երկրորդ հրատարակությունը՝ 1956 թ.):

Ակադեմիկոս Տիխոմիրովին զբաղեցրել է նաև հարավ-սլավոնական ժողովուրդների պատմությունը:

Նրա նախաձեռնությամբ, գլխավորությամբ ու խմբագրությամբ հրատարակվել են մի շարք կոլեկտիվ աշխատանքներ («Ռուսաստանի և սլավոնական երկրների սոցիալ-տնտեսական պատմության պրոբլեմները», «Բյուզանդագիտական ակնարկներ» և այլն):

Մ. Ն. Տիխոմիրովի ղեկավարությամբ և ակտիվ մասնակցությամբ մեր

երկրում ստեղծվեց ՍՍՌՄ ժողովուրդների պատմական գիտության պատմության ակադեմիական հրատարակությունը, որի առաջին հատորն ընդգրկում է V դարից մինչև XIX դարի կեսերը:

Նա անմիջականորեն մասնակցել է ու ղեկավարել բազմահատոր գործերի, ժողովածուների ու քրեստոմատիաների կազմելու աշխատանքները, խմբագրել մի շարք պատմագիտական հանդեսներ ու խոշոր պատմաբանների երկեր, այդ թվում Մ. Ն. Պոկրովսկու երկերի չորսհատորյակը, «Մոսկվայի պատմությունը» և այլն:

Անգնահատելի էր Տիխոմիրովը որպես գիտության կրքոտ պրոպագանդիստ, դասախոս ու դաստիարակ: Նրան աշակերտել են բազմահազար ուսանողներ, ասպիրանտներ և դոկտորանտներ:

Մ. Տիխոմիրովը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում հայոց պատմության, հայ աղբյուրների ու գրականության նկատմամբ: Իր գրավոր ու բանավոր ելույթներում, նամակներում ու գրություններում շեշտում էր հայկական աղբյուրների նշանակությունը ՍՍՀՄ և այլ ժողովուրդների պատմության մշակման համար: Տողերիս հեղինակին ուղարկած իր նամակներում նա նշում էր հայկական ժամանակագրությունների ու հիշատակարանների հրատարակության կարևորությունը և անհրաժեշտ էր գտնում շարադրել հայկական գաղութների պատմությունը: Այսպես, իր նամակներից մեկում նա գրում էր. «Ուկրաինայի պատմության վերաբերող նյութերի ժողովածու հրատարակելիս գլխավոր ուշադրությունը դարձրել են ռուսական, ուկրաինական և լեհական աղբյուրների վրա, ընդ որում գրեթե մոռացել են այն մասին, որ Ուկրաինայում (հատկապես Լվովում) եղել են մեծ հայկական գաղութներ: Ուստի չափազանց հետաքրքիր են նաև հայկական աղբյուրները: Ժամանակագրությունների ու հիշատակարանների հրատարակությունը շատ կարևոր է և ուրախալի: Ընդհանրապես գիտությունը շատ նոր սպասելիքներ ունի հատկապես հայ աղբյուրներից: Քիչ ժողովուրդներ են ունեցել այնպիսի միջազգային կապեր, ինչպես հայերը ...»:

Երկարատև ու ծանր հիվանդությունը և լարված աշխատանքը մինչև կյանքի վերջին օրերը չընկճեցին գիտնականի և քաղաքացու կամքն ու ոգին, նա մինչև վերջ մնաց ստեղծագործող ու պրպտող պատմաբան:

Յոթանասունին մոտ, տարեց գիտնականը մի քանի անգամ այցելել է Հայաստան, հանդես եկել զեկուցումներով, ղեկավարել աղբյուրագիտական

խորհրդակցություններ, ապա և շրջագայել Հայաստանում, եղել տեսարժան վայրերում, ուսումնասիրել նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները՝ գիտնականներին հաղորդելով իր տպավորությունները: Նա խոր ակնածանքով էր վերաբերվում բազմադարյան մեր պատմությանը, բառ ու բանին, հին ու նոր գործիչներին: Այցելելով Մեսրոպ Մաշտոցի դամբարանն Օշականում, խորապես զգալով մեծ երախտավորի բախտորոշ դերը հայ ժողովրդի պատմության մեջ, ակադեմիկոս Տիխոմիրովն իրեն պարուրող մտքերն ու հույզերը շարադրում է սրտաբուխ մի ոտանավորով, որը բերում ենք ստորև (ոտանավորը գրված է 1953 թ. Երևանում):

У могилы Маштоца

Этот склеп и печален и тесен,
В нем живет непроглядная мгла,
И зеленая древняя плесень
Кое-где по углам залегла.

Но узнай! Вместе с бедной могилой
Ты народом своим не забыт.
Многомощною вечною силой
Твое имя на свете звучит.

Оглянись! После долгих столетий
Оживает родная страна.
В каждой школе армянские дети
Повторяют твои письмена.

Прежде был твой народ обездолен,
Даже к радости не было сил,
А теперь и счастлив и волен,
Но и в счастье тебя не забыл.

Մաշտոցի գերեզմանի առաջ

(Թարգմանություն)

Քո դամբարանը նեղլիկ է, տխուր,
Մռայլն է շնչում այդտեղ ամենուր.

Բորբոսը կանաչ ու հնամենի
Ծածկել է տեղ-տեղ քարը տապանի:

Բայց գիտցիր, որ քեզ, չիրիմդ համեստ
Քո ժողովուրդը հիշել է հավետ,
Եվ հավերժական ու հզոր ուժով
Անունդ հնչում է ամբողջ աշխարհով:

Ետ նայիր ու տես, շատ դարեր հետո
Կենդանացել է հայրենիքը քո ...
Հայ մանուկները իրենց դպրոցում
Քո կողմից ստեղծված գրերն են սերտում:

Քո ժողովուրդը ճնշված, գրկված էր,
Ուրախանալու անգամ ուժ չուներ,
Այժմ երջանիկ, ազատ է դարձել,
Բայց բախտի մեջ էլ քեզ չի մոռացել:

Համընդհանուր ճանաչում է գտել Մ. Ն. Տիխոմիրովը համաշխարհային պատմագիտական շրջաններում: Դեռևս 20 տարի առաջ՝ 1946 թ. նա ընտրվել էր ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1953 թ.՝ ակադեմիկոս: Իր մեծ ծառայությունների համար նա ընտրվել էր մի քանի օտարերկրյա ակադեմիաների անդամ, ճանաչվել՝ որպես հին և միջնադարյան Ռուսիայի պատմության խոշորագույն մասնագետ: Եվ իսկապես, պատմաբանի լայն մտահորիզոնը, արտասովոր ընդունակությունները, անսայթաք ու կուռ տրամաբանությունը, վերլուծական միտքը և տեսական խոր ընդհանրացումների կարողությունը նրան դարձրել էին հայրենի պատմագիտության առաջին մեծության աստղերից մեկը: Դեռ շատ երկար տարիներ գիտնականները կգիմեն այն մեծ գրական ժառանգությանը, որ իր հետնորդներին թողեց Մ. Ն. Տիխոմիրովը՝ մեծ գիտնականն ու քաղաքացին:

Е. В. ЧИСТЯКОВА

М. Н. ТИХОМИРОВ И АРМЕНИЯ*

(по материалам переписки с Л. С. Хачикяном)

Ակադեմիկոսներ Լ. Խաչիկյանի և Մ. Տիխոմիրովի անձնական ու գիտական բարեկամության թղթագրանքով և նրանց համակարգության օգտագործմամբ է գրված այս փոքրիկ ակնարկը - խմբ.:

Академик М. Н. Тихомиров внес большой вклад в изучение письменных памятников не только русских, но и других народов СССР. Он посетил почти все национальные республики, работал в архивах и библиотеках, выступал с докладами, организовывал научные сессии, рецензировал монографии, консультировал соискателей ученых степеней, руководил работой республиканских академических институтов по вопросам источниковедения, историографии, археографии и т. д. В своей исследовательской деятельности М. Н. Тихомиров уделял внимание многосторонним связям русского народа с другими народами и процессу их вхождения в состав России. Его деятельность способствовала развитию исторической науки в республиках, подготовке национальных кадров.

Особое место в этом занимала Армения, в которой Михаил Николаевич неоднократно бывал, работал в величайшем хранилище армянских рукописей Матенадаране и состоял в постоянной переписке с директором Левоном Степановичем Хачикяном (1918-1982), академиком АН Армянской ССР. До сих пор эпистолярные материалы все еще недостаточно привлекаются в качестве историографических источников. А между тем именно они дают возможность судить о ходе разработки определенных проблем, об организации науки как в центре, так и на местах, о научных контактах и

* "Археографический Ежегодник" за 1983 год, М., 1985, с. 212-213.

дружеских связях ученых.

В архиве АН СССР сохранилось 27 листов писем Л. С. Хачикяна к М. Н. Тихомирову (ф. 693, оп. 4, ед. хр. 645). Семь писем от М. Н. Тихомирова отложилось в семейном архиве Л. С. Хачикяна в Ереване[1]. Значение их неравнозначно: здесь были и длинные письма в 1-4 листа, и записки, посланные во время заседания, и поздравительные открытки. Тем не менее они являются историографическим фактом и с этой точки зрения представляют значительный интерес.

В центре внимания обоих историков было издание источников по истории Армении, необходимых не только для изучения ее истории, но и для истории России, других народов и стран. В одном из писем (В. К. Восканяну от 5 марта 1954 г.) Михаил Николаевич писал: "Вообще наука может ждать много нового именно от армянских источников. Редкий народ имел такие обширные международные связи, как армяне".

Исходя из этого, он привлек Л. С. Хачикяна к публикации документов в Хрестоматии по истории СССР (М., 1960). Он радовался, что "армянские источники будут представлены в Хрестоматии довольно солидно" (письмо М. Н. Тихомирова Л. С. Хачикяну от 15-30 апреля 1958 г.). Михаил Николаевич направил в адрес Ученого совета Ереванского государственного университета отзыв на двухтомный труд Л. С. Хачикяна "Памятники армянской письменности" с его комментариями и большой вступительной статьей (письмо М. Н. Тихомирова Л. С. Хачикяну от 4 июня 1959 г.).

В письмах Михаил Николаевич делился с Левоном Степановичем планами об издании Сводного каталога славянских и греческих рукописей, сообщал о своей международной деятельности (поездках в Грецию, Швецию, выступлениях на встречах с английскими

1 За любезное предоставление в распоряжение автора писем М. Н. Тихомирова Л. С. Хачикяну и других материалов приношу глубокую благодарность **Шушаник Левоповне Хачикян.**

историками, учеными других стран).

В свою очередь Л. С. Хачикян знакомил М. Н. Тихомирова с делами и планами Матенадарана: о составлении "Генерального каталога армянских рукописей", подготовке к печати персидских указов и "Памятных записок армянских рукописей", о выходе в свет номеров "Вестника Матенадарана", информировал его о переезде в "новое роскошное здание, где имеются все необходимые условия для ведения научной работы", и о последовавшем преобразовании архива в научно-исследовательский Институт древних рукописей. Конечно, писал Левон Степанович, "объем археографических работ ... значительно увеличится и ценные армянские источники будут опубликованы в академических изданиях на армянском и русском языках"[2]. Левон Степанович сообщал Михаилу Николаевичу о заседаниях, проходивших в Ереване, на одном из которых "был прочитан ряд интересных докладов по истории древних армянских поселений на Украине"[3]. Деловой диалог состоялся между учеными в связи с датировкой основания украинского города-музея Каменца-Подольского и т. д.

В переписке освещались не только деловые вопросы, но нашли отражение и теплые дружеские связи между учеными. Особым теплом веет от письма Михаила Николаевича, отправленного в Ереван 21 июня 1963 г. в ответ на поздравление с 70-летием: "Сердечно благодарю Вас и коллектив Матенадарана за поздравление и добрые пожелания, которые мне особенно дороги как пожелания дружеского коллектива, занимающегося хранением и собиранием рукописей".

Переписка двух ученых имеет непреходящее историографическое значение.

2 ААН, ф. 693, оп. 4, д. 645, л. 1-3 об., 8.

3 Там же, л. 12.

ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ի. ՋԱՎԱԽԻՇՎԻԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*

Լրացավ Վրաստանի գիտական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ ակադեմիկոս Իվանե Ալեքսանդրի Ջավախիշվիլու ծննդյան 100-ամյակը:

Մեծ է Ի. Ջավախիշվիլու գիտական ժառանգությունը. դժվար է գտնել Վրաստանի հին ու միջնադարյան քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի որևէ բնագավառ, որի հետազոտության մեջ իր վաստակը չունենա գիտնականը:

Դեռևս 1904 թվականին Ի. Ջավախիշվիլին գրել է. «Մի՞թե չենք կարող և մենք հուսալ, որ կունենանք կուլտուրական փայլուն ապագա, եթե ձեռնարկենք բոլոր միջոցները մեր հասարակական կյանքը բարեփոխելու համար»: Ու երբ իր ժողովրդի հասարակական կյանքը ոչ միայն բարեփոխվեց, այլև արմատապես նորոգվեց, երախտապարտ զավակը անձնուրացաբար նվիրվեց նրա այն փայլուն ապագայի ստեղծմանը, որի մասին երազում էր հեղափոխությունից առաջ:

Ի. Ջավախիշվիլին ուսանել ու գիտական իր մկրտությունն էր ստացել Պետերբուրգի համալսարանում: Հենց այստեղ էլ ձևավորվել են նրա գիտական նախասիրությունները ընդհանրապես, և առանձին հակումը դեպի սոցիալ-տնտեսական ու պետաիրավական թեմաները՝ մասնավորապես: Այս վերջինը բնավ պատահական չէ: Անձնական նախասիրության հետ միասին դա պայմանավորված էր նաև ժամանակի պատմագիտության առաջին...

* «Սովետական Հայաստան», 1976, 5 նոյեմբերի: Հեղինակակից՝ Խ. Թորոսյան:

Ռուսական առաջավոր մտավորականության միջավայրում, հասարակական-քաղաքական հուզող իրադարձությունների մթնոլորտում է ուսանել Ի. Ջավախիշվիլին, ձևավորվելով որպես գիտնական: Քննադատելով արևմտաեվրոպական պատմագիտության մեջ Արևելքի մասին գոյություն ունեցող ու տարածված թյուր տեսակետը, ըստ որի՝ «Արևելքի ողջ կուլտուրայի ընդհանուր հատկանիշ է համարվում ավել կամ պակաս լճացածությունը, ներփակվածությունը, դասերի ու դասակարգերի բացակայությունը, դասային ու դասակարգային պայքարի չգոյությունը, մի խոսքով հոգևոր ու սոցիալական անշարժությունը», ակադեմիկոս Ի. Ջավախիշվիլին Հայաստանի ու Վրաստանի պատմությունից բերված փաստերով հերքում է այդ: Նա գրում է նաև հատուկ ուսումնասիրություններ՝ «Մի էջ գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստանում», «Հին Վրաստանի ու Հայաստանի պետական կառուցվածքը», և ցույց տալիս, որ Արևելքում ևս եղել են դասեր, դասակարգեր ու պայքար նրանց միջև:

1918 թ. Ի. Ջավախիշվիլին եռանդուն գործունեությամբ ձեռնամուխ է լինում կադրերի դարբնոցի՝ Թբիլիսիի պետական համալսարանի ստեղծմանը, անձամբ մշակում ու կյանքի ուղեգիր է տալիս վրացագիտության մի շարք գիտակարգերի: Հատկանշական է, որ համալսարանում ստեղծված առաջին ամբիոնների շարքում Ի. Ջավախիշվիլին պատվավոր տեղ հատկացրեց հայագիտական ամբիոնին, որը շարունակում է իր արդյունավետ գործունեությունը մինչև այսօր:

20-30-ական թվականներին նոր թափ ու ընդգրկում է ստանում Ի. Ջավախիշվիլու գիտական գործունեությունը: Նա գրում և վերամշակում է նախկինում հրատարակված մի շարք գործեր «Վրաց ժողովրդի պատմություն» (4 գիրք), «Վրաց իրավունքի պատմություն» (3 գիրք), «Վրաստանի տնտեսական պատմություն» (2 գիրք), «Պատմության խնդիրները, աղբյուրները և մեթոդները հնում և այժմ» (4 գիրք) և այլ ուսումնասիրություններ, որոնցով դնում է սովետական վրացագիտության անկյունաքարը:

Ի. Ջավախիշվիլին վրացագետ էր նույնքան, որքան և հայագետ: Իր գրեթե բոլոր աշխատությունների մեջ նա լայնորեն օգտագործել է հայկական սկզբնաղբյուրները, որի շնորհիվ վրաց պատմության նրա լուսաբանումը դարձել է ավելի համակողմանի ու ամբողջական: Ի. Ջավախիշվիլին գրում է. «Վրաստանի պատմության համար հայերեն պատմագրական

մատենագրության բացառիկ նշանակության պատճառով, համալսարանում մնալու ժամանակներից սկսած, վրաց և հայ պատմության ուսումնասիրությունը զուգահեռաբար էի տանում»: Սակայն հայագիտությունը ակադեմիկոս Ի. Ջավախիշվիլու համար չի եղել սոսկ օժանդակ միջոց՝ պարզելու զուտ վրացագիտական հարցեր: Հայագիտությունը նրա համար ունեցել է նաև ինքնուրույն նշանակություն, ու նա զգալի ավանդ է ներդրել այդ բնագավառում: Նա հեղինակ է Հայաստանի սոցիալ-տնտեսական, պետաիրավական կյանքի պատմությանն ու հայ պատմագրական մատենագրությանը նվիրված մի շարք հետաքրքրական աշխատությունների:

Հաճելի է նշել նաև, որ անվանի գիտնականը, ինչպես Պետերբուրգի, այնպես և Թբիլիսիի համալսարաններում կարդացել է հայագիտական մի շարք մասնագիտական դասընթացներ՝ «Հայաստանի հասարակարգը 5-րդ դարում», «Հայ-վրացական իրավաբանական հուշարձանները» և այլն: Այդ դասախոսությունների մեջ բարձրացված են Հայաստանի սոցիալական կյանքի և մշակույթի պատմության գիտական լուսաբանման համար կարևոր բազմաթիվ հարցեր:

Ակադեմիկոս Ի. Ջավախիշվիլու կյանքի թելը կտրվեց 1940 թվականին:

Վրացագիտությունն ու հայագիտությունը վերջին տասնամյակներում արձանագրել են մեծ նվաճումներ: Առանձին պրոբլեմների ու հարցերի ուսումնասիրության գծով ստացվել են ուշագրավ այնպիսի արդյունքներ, որոնց լույսի տակ անհրաժեշտություն է զգացվում վերանայելու Ի. Ջավախիշվիլու գիտական դրույթների ու եզրահանգումների մի մասը (այլ կերպ չէր էլ կարող լինել): Սակայն հենց այստեղ պետք է նշել, որ անզուգական են մնում ինտերնացիոնալիստ Ի. Ջավախիշվիլու՝ գիտական պրոբլեմներն անկողմնակալ քննարկելու, հարևան ժողովուրդների պատմության ու մշակույթի նկատմամբ պատկառանքով արտահայտվելու բարձր սկզբունքները, որոնցով առաջնորդվում էր ինքը և որոնցով դաստիարակում էր իր աշակերտներին:

Հայրենասեր գիտնականը աշխատություններից մեկում, դիմելով իր հայրենակիցներին, ասել է. «Ամեն մի կրթված վրացի պետք է իմանա իր հարևան հայ ժողովրդի ... շատ հետաքրքրական ճակատագիրը: Դրա համար առաջին հերթին, անհրաժեշտ է գիտենալ այն սկզբնաղբյուրները,

որոնց հիման վրա հնարավոր է վերականգնել Հայաստանի պատմությունը: Այդ աղբյուրների տեսությունն ընթերցողի առջև կբացի Հայաստանի և Մերձավոր Արևելքի հասարակական մտքի և սոցիալ-քաղաքական ուղղության հետաքրքրական բազմաթիվ էջեր»:

Տեղին է նշել, որ այս կարգի աշխատանքներին նոր թափ հաղորդելու լայն հնարավորություններ են անթեղված հայ և վրաց հարուստ մատենագրությունների ծալքերում և նրանց վերհանման գործով առաջիկայում ավելի մեծ չափով են զբաղվելու մեր պատմաբաններն ու բանասերները:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԸ*

Լրացավ առաջին հայրենադարձների սերնդի վաստակավոր ներկայացուցիչ, նշանավոր իրանագետ ու հայագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Դավթի Փափազյանի ծննդյան վաթսունբորդ տարեդարձը, որով և պատշաճ առիթ է ներկայանում անդրադառնալու նրա գիտական վաստակին, բացահայտելու նրա բազմաթիվ աշխատությունների արժեքն ու արժանիքները:

Հայ ժողովրդի պատմության ընդարձակ մի ժամանակաշրջանի ուսումնասիրության համար առաջնահերթ նշանակություն ունեն պարսկալեզու սկզբնաղբյուրներն մոնղոլական իշխանության քայքայման շրջանից սկսած՝ մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակներն ստեղծված դիվանական փաստաթղթերը, շահական ու սուլթանական հրովարտակները, դատական ատյանների որոշումները, բազմատեսական կալվածագրերը և պաշտոնական այլ փաստաթղթեր, որոնք, ըստ մեծի մասի, գրված չեն եղել գիտական շրջանառության մեջ, ուստի և գրեթե բոլորովին չեն օգտագործվել ի նպաստ հայ և հարևան ժողովուրդների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի բազմազան երևույթների ուսումնասիրության: Այդ կարգի սկզբնաղբյուրների հարուստ մի շտեմարան է Մաշտոցի անվան Մատենադարանը, որի արխիվային բաժնում պահվում են երկու հազարից ավելի վերծանման ենթակա պարսկերեն, արաբերեն և թուրքերեն վավերագրեր:

* «Սովետական Հայաստան», Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գրական-գեղարվեստական, հայկական պատկերազարդ հանդես, 1980 թ., N3, էջ 10-13:

Արևելյան մի շարք լեզուների հմուտ մասնագետ պրոֆ. Հ. Փափազյանն իր գիտական գործունեությունն սկսեց հենց բացառիկ գիտական ինֆորմացիա պարունակող այդ վավերագրերի վերծանության, թարգմանության և հրապարակման աշխատանքներով: 1956 թ. տպագրվեց «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» նորաստեղծ մատենաշարի «Հրովարտակներ» շարքի առաջին պրակը՝ 15-17-րդ դդ. 23 հրովարտակներով: 1959 թ. նույն շարքի երկրորդ պրակը՝ 17-րդ դարի առաջին կեսի 43 հրովարտակներով, իսկ 1968 թ. «Կալվածագրեր» շարքի առաջին պրակը՝ 14-16-րդ դդ. 27 մեծարժեք կալվածագրերով: Սրանք իրենց գերազանց մասով վերաբերում էին միջնադարյան Հայաստանի նշանավոր վանական հաստատությունների՝ Էջմիածնի, Գանձասարի, Տաթևի, Թադեոս առաքյալի վանքի և այլ կենտրոնների կալվածքներին ու իրավատնտեսական վիճակին, սակայն բովանդակում էին բազմազան նյութեր ողջ Անդրկովկասի և Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման համար: Պրակներից յուրաքանչյուրի մեջ, իրենց ծավալով ու բովանդակությամբ կարևոր տեղ գրավող ներածական ուսումնասիրություններում և ծանոթագրություններում, Հ. Փափազյանը պարզաբանել է իր ջանքերով գիտական շրջանառության մեջ դրված այդ փաստաթղթերի գրության հանգամանքները, բացահայտել հարկային ու վարչական հարյուրավոր տերմինների բովանդակությունը, լույս սփռել օտար բռնակալների կողմից կեղեքվող Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքի բազմազան երևույթների վրա:

Այս հատորների հրատարակությամբ պրոֆ. Հ. Փափազյանը համընդհանուր ճանաչում գտավ որպես հմուտ մասնագետ. նրա աշխատանքը բարձր գնահատանքի արժանացավ նշանավոր մի շարք արևելագետների՝ Վ. Մինորսկու, Ռ. Ռոմերի, Հ. Բուսեի, Ժ. Օբենի, Զայոնչկովսկու և ուրիշների կողմից:

Վերոհիշյալ պրակների հրապարակմանը զուգընթաց, գիտական տարբեր պարբերականներում Հ. Փափազյանի աշխատասիրությամբ տպագրվեցին նմանատիպ վավերագրական և վիմագրական այլ նյութեր՝ իլխան Աբու-Սայիդի 1330 թ. զույգ յառլիղները, Արգավանդ գյուղում գտնվող Թուրքմեն ամիրների դամբարանի 15-րդ դ. արաբերեն արձանագրությունը, Շահ Սաֆիի 1638 թ. ջրատիրության մասին ուշագրավ տվյալներ պարունակող հրովարտակը, Շահ Սուլթան-Հուսեյնի հողագործ ռայաթների իրա-

վական վիճակին վերաբերող 1710-11 թթ. հրովարտակը, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, վաճառահանվող ապրանքներից գանձվող հարկերի մասին, 1729 թ. Թավրիզում կնքված թուրքական պայմանագիրը, Ակոռու Ս. Հակոբա վանքի նորահայտ «քյոթուկը» և այլն:

Այսպիսով, ոչ միայն գիտական շրջանառության մեջ դրվեցին առաջնակարգ արժեքի պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և հայերեն նոր սկզբնաղբյուրներ, այլև առաջին անգամ բացահայտվեցին նրանց բովանդակած տեղեկությունները սոցիալ-տնտեսական կյանքի ամենաբազմազան երևույթների մասին: Եվ հետագա ուսումնասիրությունների համար այսպիսի ամրակուռ պատվանդան ստեղծելուց հետո, հմուտ աղբյուրագետի համբավ ձեռք բերած Հ. Փափազյանը խորամուխ եղավ Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության ամենաբարդ և խրթին հետևյալ հարցերի մեջ.

1. Հայ աշխարհիկ հողատիրության վերացման պրոցեսը Արևելյան Հայաստանում:

2. Արարատյան երկրի պատմության շրջափուլերը 15-18-րդ դդ. և Էջմիածնի կաթողիկոսության դերը որպես համահայկական կենտրոն:

3. Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը և ազատագրական ձգտումները 15-18-րդ դարերում:

Համառոտակի անդրադառնանք այս հարցերի մասին Հ. Փափազյանի գրած ուսումնասիրությունների հիմնական արդյունքներին:

Հայտնի իրողություն է, որ 14-15-րդ դդ. ընթացքում, երկարատև ու համառ դիմադրությունից հետո, հայ խոշոր կալվածատեր-ֆեոդալները զիջեցին իրենց դիրքերն օտար նվաճողների առջև: Նախկինում հայ ֆեոդալներին պատկանող կալվածքների մի փոքր մասը միայն՝ նվիրաբերվելով վանական հաստատություններին՝ փրկվեց բռնագրավումից: Պրոֆ. Հ. Փափազյանն անդրադարձավ հայ ժողովրդի միջնադարյան պատմության համար կարևոր նշանակություն ունեցող այս հարցին ուշագրավ մի շարք հոդվածներով («Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը», «Բեյթ-ուլ-մալի ինստիտուտը և հայ ֆեոդալական հողերի բռնագրավումները 15-րդ դարում», «Վանական կալվածքների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ» և այլն): Նա

ցույց տվեց, թե ինչպես, հենվելով Իմամ-Ջաֆարի օրենքի վրա, բռնակալ տիրողները պառակտում էին հայ կալվածատերերի շարքերը: Ըստ այդ օրենքի՝ «եթե կա մուսուլման ժառանգ, անհավատները զրկվում են ժառանգությունից». հայ և քրիստոնյա այլ ազգությունների պատկանող հողատերերից շատերը, իրենց ազգականների ունեցվածքին տեր դառնալու համար բռնում էին հավատուրացության և ազգադավության ճանապարհը: Հսկայական ավերածություններ էր գործում նաև «Բեյթ-ուլ-մալի» ինստիտուտը, որը պատմական զարգացում ապրելով, 15-րդ և հետագա դարերում տնօրինում էր պետական սեփականություն հայտարարված բոլոր այն կալվածքները, որոնց տերերը հողային ֆոնդերի հաշվառման ժամանակ բացակայում էին իրենց բնակության վայրերից (հաճախ՝ հետապնդվելով հենց պետական պաշտոնեության կողմից), կամ էլ ի վիճակի չէին լինում ներկայացնել իրենց սեփականությունն ապացուցող փաստաթղթեր: Հ. Փափազյանը հիմնավորապես ցույց է տալիս, որ այս ճանապարհով բռնագրավվում էին հայ ֆեոդալներին պատկանած կալվածքները, որոնք այնուհետև, շարիաթական պաշտոնական վաճառքի միջոցով, դառնում էին մուսուլման բարձրաստիճան պաշտոնեության և քոչվոր ավագանու կողմից գանձագին արված մուլքեր:

1441 թ. հայ հեռատես եկեղեցական-քաղաքական գործիչների ջանքերով ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը վերահաստատվեց Էջմիածնում, և պատմական Հայաստանի սրտում ստեղծվեց աշխարհասփյուռ հայ զանգվածներին հազարամյա մշակութային ավանդությունների ուժով միավորող ազգային այն հաստատությունը, որը դրական մեծ դեր կատարեց՝ գլխավորելով օտար նվաճողների դեմ ժողովրդի մղած հերոսական պայքարը: Մեր պատմագրությունն այս հարցին անդրադարձել է բազմիցս: Սակայն Հ. Փափազյանին էր վիճակված նոր լույս սփռել Էջմիածնի ժողովի և կաթողիկոսական աթոռի վերահաստատության հետ կապված պատմական անցուդարձերի վրա, վավերագրական զորավոր նոր փաստերով ապացուցելով, որ օր ավուր իրենց տնտեսական և քաղաքական դիրքերից զրկվող հայ ֆեոդալական տների հեռատես ներկայացուցիչները, Սյունյաց Օրբելյանների (մասնավորապես Բեշքենի որդի Ռուստամ Օրբելյանի) գլխավորությամբ, 1441 թ. դեռևս տարիներ առաջ 7 խոշոր գյուղեր Էջմիածնի վանքին նվիրաբերելու միջոցով, տնտեսական հիմքեր էին ստեղ-

ծել քաղաքական մեծ նշանակություն ունեցող այդ ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար:

«Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից» («Տեղեկագիր», 1955 թ., N 8) հոդվածով պրոֆ. Հ. Փափազյանը ձեռնարկեց պատմական Հայաստանի կենտրոնական նահանգի՝ Արարատյան երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության գծով տարվող աշխատանքներին, որոնք շարունակվեցին հետագայում, նյութ դառնալով «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում» ընդհանուր խորագիրը կրող եռամասնյա հոդվածաշարի (տպագրված «Լրաբերի» էջերում՝ 1960-1977 թթ.): Օգտագործելով բազմաթիվ այլալեզու աղբյուրներ, Հ. Փափազյանին հաջողվեց շարադրել Արարատյան երկրի և մեր ծաղկուն մայրաքաղաք Երևանի վշտաշատ ու փորձություններով լի պատմության ուրվագիծը 14-րդ դարի վերջերից՝ մինչև 1724 թ.: Ինչ տիրապետողներ են հաջորդել միմյանց այս երկրամասում, ինչ քաղաքականություն վարել աշխատավոր ժողովրդի նկատմամբ, ինչպիսի արյունահեղ պատերազմներ են մղվել այստեղ, բնաշխարհի ժողովուրդը ինչպիսի բռնագաղթերի է ենթարկվել, հետագայում Հայաստանի որ վայրերից են հայահոծ զանգվածներ ներգաղթել ու բնակություն հաստատել այստեղ. այս և հարակից բազմաթիվ հարցեր, սեղմ շարադրանքով, քննարկվել ու լուծվել են վերոհիշյալ հոդվածների մեջ: Անտարակույս, հետագայում կգրվեն ավելի հանգամանալից ուսումնասիրություններ Արարատյան երկրի պատմության մասին, բայց Հ. Փափազյանի կատարածը միշտ էլ կպահպանի իր նշանակությունը որպես նոր ուսումնասիրությունների ժամանակագրական կայուն և անխախտ հիմք:

Պատմագիտական խորազնին ուսումնասիրությունների արդյունք են նաև Հ. Փափազյանի շուրջ մեկ տասնյակի հասնող այն հոդվածները, որոնց մեջ շոշափված են Սեֆյան Իրանի լծի տակ կեղեքվող Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերություններին առնչվող բազմազան հարցեր: «Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում 15-17-րդ դարերում», «Պետական և արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում 16-17-րդ դարերում», «Սալոջահաթ հարկային տերմինի տեխնիկական նշանակության հարցի շուրջ». – ահա այդ հոդվածներից մի քանիսի խորագրերը: Հարկ է նշել, որ դրանք բոլորն

էլ գրված են նորահայտ նյութերի հիման վրա, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվել հոդվածագրի կողմից՝ աղբյուրագիտական - բանասիրական մանրակրկիտ վերլուծությամբ:

1968 թ. Հ. Փափազյանը՝ ներկայացնելով «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 15-17-րդ դդ.» մենագրությունը՝ հաջողությամբ պաշտպանեց դոկտորական դիսերտացիա: 1977 թ. այն լույս տեսավ ռուսերեն լեզվով և ըստ արժանվույն գնահատվեց մասնագետների կողմից: Հողի սեփականատիրության և ագրարային հարաբերությունների հարցը, որ կազմում է Հ. Փափազյանի մենագրության առանցքը, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հենց դրանով են ճշտորոշվում ժամանակաշրջանի արտադրական հարաբերությունների ամբողջական պատկերը, երկրի տնտեսական զարգացման իրական աստիճանը, սրանց հետ սերտորեն առնչված շահագործման ձևերը և այլն: Այդ կարևոր հարցերի ուսումնասիրության ընթացքում Հ. Փափազյանը անհրաժեշտ չափով հաշվի է առնում նաև ժամանակի իրավական նորմերը, որոնք խարսխված լինելով մուսուլմանական իրավունքի՝ շարիաթի վրա, 16-17-րդ դդ. Սեֆյան Իրանի ենթակայության տակ գտնվող երկրամասերում հատուկ երանգավորում էին ստացել: Հենվելով վերը հիշատակված իր հոդվածների արդյունքների վրա և հրապարակ բերելով ուշագրավ նոր նյութեր, աշխատության հեղինակը հանգամանորեն քննարկել է հայկական աշխարհիկ հողատիրության քայքայման ընթացքը և ցույց տվել, թե ինչ ճանապարհներով նախկինում հայ ֆեոդալներին պատկանող կալվածքները պետության սեփականությունն էին դառնում կամ որպես թիուլ՝ տրվում պետական ու զինվորական բարձրաստիճան պաշտոնեությանը: Մենագրության մեջ հանգամանորեն քննարկված են այս հարցերը, բացահայտված են ֆեոդալական հողատիրության տարատեսակների (թիուլ, իկտա, դիվանի, մուլք, վակֆ և այլն) բնույթն ու առանձնահատկությունները: Մասնավոր ուշադրության առարկա են դարձված հատկապես հայկական վանքերին պատկանող կալվածքներին շնորհված արտոնություններին ու մուլքադարական հողատիրությանն առնչվող հարցերը: Մուլքային հողատիրությունն իրավամբ դիտված է որպես հողային սեփականության ամենից ավելի լիակատար ձևը միջնադարյան Արևելքում: Չափազանց հետաքրքրական են և բովանդակալից ուսումնասիրության այն հատվածները, որոնք նվիրված

են հարկահանության ձևերին և ընդհանրապես, պետության և կալվածատերերի հանդեպ գյուղացիների ունեցած պարտավորություններին: Հ. Փափազյանի ջանքերով արևելագիտության մեջ արդեն հայտնի հարկային տերմիններին ավելացվել են տասնյակ նոր տերմիններ, ճշգրտվել են նրանցից շատերի իրական բովանդակությունն ու չափի որոշման ձևերը: Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի ուսումնասիրության արդյունքները հայկական գյուղական համայնքի առանձնահատկությունների մասին. բացահայտված է համայնքի դերը ինչպես հողային ֆոնդը մասնատող, համայնքի անդամների միջև ծագած վեճերը հարթող կազմակերպություն, այնպես էլ որպես հարկահանության գործին նպաստող ստորին օղակ: Հետաքրքրական են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Հայաստանի տարբեր շրջաններում պահպանված սակավաթիվ ազատ գյուղական համայնքներին, ցույց է տրված, թե ինչպես են նրանք պայքարել պետական պաշտոնեության ու հայ եկեղեցական հաստատությունների դեմ, որոնք միջոցների խտրություն չէին գնում այդ համայնքները ևս իրենց ենթարկելու համար:

Բնականաբար, հնարավոր չէ այստեղ հանգամանորեն ներկայացնել պրոֆ. Հ. Փափազյանի մենագրության բոլոր բաժինները, թվարկել հետաքրքրական բոլոր այն խնդիրները, որոնք դրվել են հեղինակի կողմից ու լուծվել հաջողությամբ, ուստի հարմար ենք գտնում մեջ բերել անվանի գիտնական Ա. Պ. Նովոսելցևի գրախոսականի վերջին պարբերությունը այս մենագրության խոշոր գիտական նշանակության մասին: «Հ. Փափազյանի աշխատությունը, — իրավամբ գրել է նա, — անտարակույս դառնալու է սեղանի գիրք Անդրկովկասի, նաև Իրանի, Թուրքիայի և այլ արևելյան երկրների պատմության մասնագետների համար: Թվում է, թե այն շատ օգտակար է լինելու նաև եվրոպական երկրների պատմության մասնագետ-միջնադարագետներին» («История СССР», 1974, N 4):

Պրոֆ. Հ. Փափազյանի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղություններին համառոտակի անդրադառնալուց հետո, անհրաժեշտություն է զգացվում մի քանի խոսք ասել շնորհակալ այն աշխատանքի մասին, որ կատարել ու շարունակում է կատարել մեր հոբելյարը Մաշտոցի անվան Մատենադարանի արաբատառ ձեռագրերի և վավերագրերի գիտական նկարագրության, արժեքավոր բնագրերի հայտնաբերման բնագա-

վառում:

1960 թ. Մոսկվայում գումարված Արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսին Հ. Փափազյանը մասնակցեց «Մատենադարանի պարսկերեն, արաբերեն և թուրքերեն 14-19-րդ դդ. փաստաթղթերը և նրանց նշանակությունը Մերձավոր Արևելքի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար» խորագիրը կրող հետաքրքրական զեկուցումով, որով կաթողիկոսական դիվանի բովանդակալից փաստաթղթերի ժողովածուն պատշաճ գիտական մակարդակով ներկայացվեց արևելագետների կաճառին: Հ. Փափազյանը տարբեր առիթներով հոդվածներ է գրել Մատենադարանի պարսկերեն ձեռագիր մատյանների պատմագիտական արժեքի մասին, ըստ արժանվույն գնահատել թուրքերեն վավերագրերի հավաքածուն, արաբագետների ուշադրությունն է հրավիրել Աբու-Ալի իբն-Սինայի (Ավիցենայի) «Գիրք փրկության» կոչվող քիչ հայտնի աշխատության վրա, որի ամբողջական ձեռագիրը պահպանվում է Մատենադարանում, հանգամանորեն նկարագրել է Ռուստամ-խան Դումբուլի երկու ձեռագիր աշխատությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են քուրդ ժողովրդի պատմության համար և այլն:

Պրոֆ. Հ. Փափազյանը հաջողությամբ զուգակցում է գիտահետազոտական աշխատանքը մանկավարժական և գիտակազմակերպչական աշխատանքների հետ: Սկսած 1959 թ., երբ Մաշտոցի անվան Մատենադարանը դարձավ գիտահետազոտական ինստիտուտ, նա անընդմեջ ղեկավարում է Մատենադարանի Միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժինը, որի կազմում ընդգրկված բանասերներն այս տարիների ընթացքում հրապարակել են մի քանի տասնյակ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ: Մեր հոբելյարը 1956 թվականից կապված է Երևանի պետական համալսարանի հետ, որի Արևելագիտության ֆակուլտետում կարդում է հին և միջնադարյան Իրանի պատմության դասընթացը, ինչպես նաև արաբապարսկական հնագրության ու վավերագրության մասին հատուկ դասընթաց: Նա ունեցել է մի շարք ասպիրանտներ, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ և արդյունավետ աշխատանք են կատարում գիտական տարբեր հաստատություններում:

Պրոֆ. Հ. Փափազյանը ընդառաջ է գնում իր կյանքի վաթսուներորդ

տարեդարձին ստեղծագործական թարմ ուժերով, բազմաթիվ կիսավարտ գիտական աշխատություններ ունենալով իր գրադարակում և գիտական ծրագրեր ու մտահղացումներ մշտապես իր մտքի մեջ: Շուտով հրատարակության է հանձնվելու «Մատենադարանի պարսկերեն վավերագրեր» մատենաշարի նոր պրակը՝ 17-րդ դ. երկրորդ հիսնամյակի արժեքավոր հրովարտակներով, ավարտված է նաև տողերիս գրողի հետ միասին ուսումնասիրված ու հրատարակության պատրաստված ուշագրավ մի բնագիր՝ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու «Հաշվետումարը», որը պարունակում է հարուստ տեղեկություններ 17-րդ դ. վերջին տասնամյակների Իրանի, Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի տնտեսական կյանքի տարբեր երևույթների մասին և այլն:

Մաղթենք, ուրեմն, քաջառողջություն և արևշատություն վաստակաշատ արևելագետ պրոֆ. Հ. Փափազյանին՝ գիտնականի ու քաղաքացու իր ճանապարհով դեպի նոր բարձունքների հասնելու, սովետահայ արևելագիտությունը նոր արժեքներով հարստացնելու համար:

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐ

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ*

Հայ աղբյուրագիտությունն ու հնագրագիտությունը զարգացման դարավոր ուղի է անցել: Սաղմնային վիճակում այն գոյություն ուներ նաև միջին դարերում: Հնագրագիտական որոշակի արժեք է ներկայացնում, օրինակ, 8-րդ դարում կազմված «Գիրք թղթոց» կոչվող արժեքավոր ժողովածուն, որի մեջ՝ ըստ ժամանակագրության և իմաստի, շարադասված են պատմադավանաբանական բովանդակության պաշտոնական հարյուրավոր գրություններ: Ժողովածուի խմբագրողը (հավանաբար Հովհան Օձնեցին) ամեն մի թղթի տվել է հակիրճ վերնագիր, բացահայտելով նրա բովանդակությունն ու գրության նպատակը.

«Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի. թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունս», «Թուղթ զոր տէր Յովհաննէս Հայոց կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք առ Աղուանից եպիսկոպոսունս արարին» և այլն:

Առավել ճոխ բովանդակություն ունի Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի «Նամականին», խմբագրված 11-րդ դարի կեսերին: Այս ժողովածուն կազմված է ավելի խնամքով. յուրաքանչյուր նամակ սկզբից ունի ընդարձակ ծանոթագրություն, որն օգնում է ոչ միայն գտնելու նամակի հասցեատիրոջը, այլև, շատ հաճախ պարզաբանում նամակի գրության շարժառիթները, լրացուցիչ տվյալներ պարունակելով նամակում շոշափված հարցերի մասին: Նամակների մեծագույն մասն անձնական բնույթ ունի՝ վերաբերում

---

* Զեկուցումը կարդացվել է 1960 թ. Մատենադարանի կազմակերպած գիտական նստաշրջանում – **Խմբ.**:

է գիտական հարցերի, սակայն սակավ թիվ են կազմում նաև թոնդրակյան սոցիալական շարժման ընթացքին ու գաղափարներին վերաբերող նամակները:

Աղբյուրագիտական շատ ավելի մեծ արժեք է ներկայացնում 13-րդ դարի նշանավոր մատենագիր ու եկեղեցական գործիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկը, որը հեղինակի իսկ վկայությամբ, շարադրվել է Հայոց թագավորների և Սյունյաց իշխանների, ինչպես նաև Հայոց կաթողիկոսների ու Սյունյաց եպիսկոպոսների հին ժամանակներից պահպանված և ամուր քարանձավի ու Տաթևի հայրապետանոցի մեջ պահվող «հին նամակների» (իմա՛ պաշտոնական գրություններ, կալվածագրեր, նվիրաբերական արձանագրություններ և այլ փաստաթղթեր), լայնորեն օգտագործմամբ:

Օրբելյանի «Պատմության» 39-57-րդ գլուխները[1], որոնք նվիրված են Տաթևի և Սյունյաց այլ վանքերի կառուցման, կալվածքների ձեռք բերման պատմությանը, գյուղացիական ընդվզումներին և հարակից հարցերի, գրեթե անխտիր շարադրված են վերոհիշյալ կարգի փաստաթղթերի հիման վրա:

«Պատմության» տարբեր մասերում բառացի մեջ են բերված տասնյակ արժեքավոր փաստաթղթեր, որոնք վերծանված են Օրբելյանի կողմից հին ու դժվարընթեռնելի դարձած բնագրերից՝ մեծ հմտությամբ:

Արխիվային բազմաթիվ վավերագրերի օգտագործումով են շարադրվել նաև Ուխտանեսի «Պատմութիւնը» (10-րդ գ.), Զաքարիա Քանաքեռցու «Պատմութեան» 3-րդ գլուխը՝ Հովհաննավանքի կալվածքների մասին (17-րդ դարի վերջ) և այլ պատմական հուշարձաններ:

Միջնադարյան Հայաստանում որոշ աշխատանք է տարվել նաև պատմական, օրենսդրական, վարքաբանական ու ծիսական բնագրերի ճշգրտման, աղավաղված ու աղճատված հատվածների սրբագրման գծով: Պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ բազմաթիվ գրիչներ, որևէ ձեռագիր ընդօրինակելիս, անհրաժեշտ են համարել օգտագործել մի շարք ձեռագրեր և դրանց բաղդատումով սրբագրել հետագայում խմբագրված կամ անհմուտ գրիչների կողմից աղավաղված հատվածները:

[1] Թիֆլիսի հրտ. 1910 թ., էջ 201-311:

Այդպիսիներից է, օրինակ, Թադեոս Ավրամենց գրիչը, որը 1430 թվականին ընդօրինակել է «Հարանց վարք» կոչվող ժողովածուն: Իր կատարած բանասիրական ծանր աշխատանքի մասին ձեռագրի հիշատակարանում նշանավոր ու հմուտ գրիչը հայտնում է հետևյալը. «... Եւ արդ, սկսայ զսա ջերմեռանդն սիրով և յուսով ... յոյժ տառապանօք և աշխատութեամբ՝ զօրհանապազ զլաւագոյնն ընտրելով և զճշմարտագոյնսն խուզելով և համառօտն թողեալ՝ զկատարեալ պատմութեան հետևելով ժողովեցի, բրդեցի օրինակք ոչ սակաւ՝ որչափ ձեռնահաս եղէ գտանել: Եւ թէ ի մինն սխալ գտանիւր ի գրչաց կամ օրինակաց և համառօտեալ զնա իմանայի, նա իւրաքանչիւր օրինակքն աւրնթեր բերելով գտանէի զնոյն բանն ոչ վկայելով միմեանց, այլ ի նոցանէ խնդրելով զընտրելագոյնսն և զհաճելին զնոցունց առեալ գրէի հարմարեալ և կատարեալ բան՝ զճշմարտագոյնսն շարագրելով: ...Հարկ եղև և ի յունաց բերել օրինակ ի ձեռն բարեկամաց և ոչ շատանալ միով, այլ մինչ վկայեցին և նոքա միմեանց:

Եւ այսպէս սիրով աշխատեալ գտի զայն, որ միմեանց վկայեցին, և գրեցի զճշմարտագոյնն՝ զլաւն և զանսխալն»[2]:

Բնականաբար աղբյուրագիտական աշխատանքներն ավելի լայն ծավալ ստացան տպագրության գյուտից հետո: 1512 թվականին առաջին հայ տպագրիչ Հակոբ Ջուղայեցին Վենետիկում լույս ընծայեց հայ տպագրության երախայրիք «Պարզատումարը», դրան հետևեցին մի շարք այլ գրքեր (1513 թ.), որոնցից է նաև «Տաղարանը» հայ միջնադարյան բանաստեղծներ Ներսես Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու և այլոց ստեղծագործություններով:

16-17-րդ դարերում հայկական տպարաններ հիմնադրվեցին նաև Լեհաստանում (Լվով), Ֆրանսիայում (Մարսել, Փարիզ), Հոլանդիայում (Ամստերդամ), Թուրքիայում (Կ. Պոլիս, Զմյուռնիա), Իրանում (Սպահան, Նոր Ջուղա):

Վերոհիշյալ տպարաններից լույս էին ընծայվում, գերազանցապես, եկեղեցական–ծիսական գրքեր՝ Ավետարաններ, Շարակնոցներ, Սաղմոսարաններ և այլն: Առաջին պատմագրական երկը, որին բախտ վիճակվեց հրապարակվել տպագրությամբ՝ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնն» էր.

[2] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, էջ 400:

այն լույս տեսավ Ամստերդամում, 1669 թվականին, նշանավոր տպագրիչ Ոսկան Երևանցու ջանքերով, որը «... ոչ միայն տպագրեաց, այլ և սրբագրեալ ուղղեաց ըստ քերականական արհեստի գաղափարեալն ի գրչաց անհմտաց»[3]:

1695 թվականին, Ամստերդամի հայկական նույն տպարանից լույս ընծայվեց նաև հայ հին պատմագրության գլուխգործոցը՝ պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Հայ պատմագրության հուշարձանների հրատարակության սկսված գործն ավելի լայն ծավալ ընդունեց հաջորդ՝ 18-րդ դարում: Կոստանդնուպոլսում 1708 թ. տպագրվեց Ագաթանգեղոսի, 1719 թ.՝ Զենոբի և Հովհան Մամիկոնյանի, 1730 թ.՝ Փավստոս Բուզանդի, 1764 թ.՝ Եղիշեի պատմագրական երկերը. 1788 թ. Պետերբուրգում՝ Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», 1793 թ. Վենետիկում՝ Ղազար Փարպեցու «Պատմությունը» և մի շարք այլ սկզբնաղբյուրներ:

Այդ հրատարակությունները հսկայական նշանակություն ունեցան: Հայ պատմագրության կարևոր այդ հուշարձանները, որոնց հատուկենտ ձեռագիր օրինակները ցրված էին պատմական Հայաստանի և գաղթավայրերի վանական ու եկեղեցական հաստատությունների խոնավ նկուղներում, ինչպես և անհատ մարդկանց մոտ՝ անծանոթ էին գիտությանը:

Հայ պատմիչներից մի քանիսի երկերի հրատարակություններով հրապարակ էին բերվում անհրաժեշտ աղբյուրներ հայոց պատմության գիտական ուսումնասիրության համար:

Բնագրագիտության տեսակետից, սակայն, այդ հրատարակությունները խիստ անկատար էին. գրեթե առանց բացառության հրատարակության համար հիմք էին ծառայում մեկական ձեռագրեր, հաճախ լի աղավաղումներով ու սխալաշատ, ուստի, բնականաբար, հրատարակիչները ձեռքի տակ չունենալով նույն հուշարձանի տարբեր ընդօրինակությունները՝ անկարող էին ճշտելու գրչագրական վրիպակները, քննական մոտեցում ցուցաբերել հրատարակվող բնագրի նկատմամբ:

Բնագրագիտական հետազոտությունների գծով արդյունավետ աշ-

[3] «Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրէժացւոյ...», Ամստերդամ, 1669, էջ 637-638:

խատանք էր տարվում միայն Կ. Պոլսում՝ բազմաթիվ լեզուների գիտակ և հայ գրականության հուշարձանների էնտուզիաստ հնախույզ Գևորգ դպիր Պալատցու կողմից. սակայն նրա եռանդուն աշխատանքի արդյունքները, իրենց մեծագույն մասով, մնացին անտիպ. կամ էլ հրատարակվեցին հետագայում, այլ բանասերների կողմից:

Հայ հնագրագիտության զարգացման գործում նշանակալից դեր էր վիճակված Վենետիկի Մխիթարյաններին:

1717 թվականին Վենետիկի մոտ գտնվող սուրբ Ղազար կղզում իր կայանը հաստատեց Մխիթար Սեբաստացու ջանքերով ստեղծված և նրա անունով Մխիթարյան կոչվող հայ կաթոլիկների միաբանությունը:

19-րդ դարի ընթացքում Մխիթարյան բանասերներից մի քանիսը (Մ. Ավգերյան, Ղ. Ալիշան, Բ. Սարգսյան և այլք) խիստ օգտակար գործ կատարեցին՝ հրատարակելով «Ճարք ընտիր մատենագրաց նախնեաց» (48 հատոր), «Թանգարան հին և նոր հայկական դպրութեանց» (7 հատոր), «Սոփերք հայկականք» (24 հատորիկ) շարքերով հայ հին մատենագրության արժեքավոր հուշարձաններից շատերը և բազմաթիվ հնագրագիտական, պատմաաշխարհագրական, բանասիրական հետազոտություններ: Նրանց հետքով ընթացան նաև Վիեննայի մխիթարյանների բանասերներից մի քանիսը:

Հայ պատմագիրների վենետիկյան հրատարակությունները, իրենց մեծագույն մասով, կատարված են մի շարք ձեռագրերի բաղդատությամբ. էջերի ստորին լուսանցքներում նշված են ձեռագրական կարևոր տարբերակները: Այսպես, օրինակ, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վենետիկյան հրատարակությունը պատրաստվել է վեց ամբողջական ձեռագրերի և մի շարք ճառընտիրների մեջ եղող հատվածների ուշադիր բաղդատությամբ: Ագաթանգեղոսի «Պատմությունը»՝ 7 ձեռագրերի բաղդատությամբ: Կորյունի գործը՝ «Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ»՝ 2 ձեռագրերի բաղդատությամբ: Փավստոս Բուզանդի «Պատմությունը»՝ 5 ձեռագրերի բաղդատությամբ և այլն և այլն:

Վենետիկյան Մխիթարյանները մշակեցին նաև հայ բնագրերի հրատարակության մի շարք սկզբունքներ. բնագրերի ուղղագրության ունիֆիկացիա, արխայիկ ուղղագրական ձևերի անտեսում, կետադրության փոփոխություն և այլն:

Սակայն նրանց աշխատանքներում կային նաև վերապահելի մոտեցումներ.

1. Ձեռագրերի տարընթերցվածները նշելիս, վենետիկյան բանասերները բավարարվում էին հայտնելով, որ 1, 2, 3 կամ 4 ձեռագրերում այս կամ այն բառը կամ նախադասությունը ունի այսպիսի տարընթերցվածք, սակայն որո՞նք են այդ ձեռագրերը, որպես կանոն չեն նշվում հրատարակիչների կողմից:

2. Վենետիկյան հրատարակիչները վերապահել են իրենց, որոշ դեպքերում սրբագրելու աղճատ բնագրերը, առանց հիմնավորելու և նշում կատարելու այդ մասին:

3. Սկզբնաղբյուրներին կցված նրանց համառոտ առաջաբաններում, սակավ բացառությամբ, արվում էին հրատարակվող բնագրերի և դրա հեղինակի մասին ավանդական, հաճախ անստույգ տեղեկություններ: Գիտական խոսք չէր առվում հեղինակի գաղափարախոսության, նրա աշխատության շարադրման շարժառիթների ու նպատակադրության, օգտագործած աղբյուրների, հաղորդած փաստերի արժանահավատության աստիճանի և հարակից հարցերի մասին:

Հայ բանասիրության և նրա կարևոր ճյուղերից մեկի՝ աղբյուրագիտության և հնագրագիտության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Ռուսաստանում:

1814 թվականին Մոսկվայում հիմնադրվեց Լազարյան ճեմարանը: Արևելյան լեզուների այդ ինստիտուտը, մանավանդ Մ. Էմինի (1815-1890) տեսչության և ուսուցչության տարիներին, դարձավ հայագիտության մի դարբնոց:

Ռուսական գիտությունների ակադեմիան նույնպես պայմաններ ստեղծեց հայագիտության ու վրացագիտության զարգացման համար: Իր հայրենիքում հետին թշվառության դատապարտված Փ. Մ. Բրոսեն (1802-1880), որն արդեն ծանոթ էր գիտական աշխարհին օգտակար աշխատություններով, 1836 թվականին ընտրվեց Ռուսական գիտությունների ակադեմիայի անդամ, հրավիրվեց Պետերբուրգ և ծավալեց արդյունավետ գործունեություն:

1872 թվականից հայագիտությունը որպես առանձին դիսցիպլին՝ իր անվանի ներկայացուցիչն ունեցավ նաև Պետերբուրգի համալսարանում,

հանձինս պրոֆ. Ք. Պատկանյանի (1833-1889):

Վերոհիշյալ գիտնականների, ինչպես նաև Կ. Եզյանի և այլոց ջանքերով Մոսկվայում և Պետերբուրգում հրապարակվեցին հայ պատմագրության արժեքավոր շատ հուշարձաններ:

1853 թվականին Մոսկվայում Մ. Էմինի հրատարակությամբ առաջին անգամ լույս տեսան Ղազար Փարպեցու առ Վահան Մամիկոնյան գրած նշանավոր թուղթը և Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը»:

1860 թ. Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը» և Մխիթար Այրիվանեցու «Հայոց պատմությունը», 1861 թ.՝ Վարդան Արևելցու «Ժամանակագրությունը» և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական»–ը:

Վերոհիշյալ սկզբնաղբյուրների հրատարակությամբ հրապարակ բերվեցին ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեցող փաստալից ու հավաստի սկզբնաղբյուրներ:

Գիտական ու մշակութային խոշոր նշանակություն ունեցավ նաև Մովսես Խորենացու «Պատմության» Էմինի ռուսերեն թարգմանությունը՝ արժեքավոր ծանոթագրություններով ու հավելվածներով (առաջին տպագրությունը՝ 1857 թ., երկրորդ վերամշակված տպագրությունը՝ 1893), ինչպես նաև Վարդանի (1861) ու Ասողիկի (1864) թարգմանությունները:

Ք. Պատկանյանը հետ չէր մնում Էմինից, հատկապես հայկական աղբյուրների ռուսերեն հաջող թարգմանություններով: 1861 թվականին Պետերբուրգում լույս տեսավ Մ. Կաղանկատվացու նրա թարգմանությունը, 1862 թ.՝ Սեբեոսը և Ղևոնդը, 1877 թ. 7-րդ դարի Աշխարհացույցը, 1871 թ.՝ Մաղաքիա աբեղայի (Գրիգոր Ակներցի) «Պատմութիւն ազգին նետողաց»–ը, 1873-74 թթ. "История монголов по армянским источникам" խորագրով խիստ շահեկան 2 պրակները և այլն: Բարձր որակով էին կատարված նաև հայկական սկզբնաղբյուրների Ք. Պատկանյանի հրատարակությունները, որոնցից են՝ Գրիգոր Ակներցին, Մխիթար Այրիվանեցին, Մխիթար Անեցին, Փավստոսը, Թովմա Արծրունին, Անանիա Շիրակացու «Մնացորդք բանից»–ը:

Նույն այս տարիներին Բրոսեն զբաղված էր հայկական աղբյուրների

ֆրանսերեն թարգմանություններով և բանասիրական բեղմնավոր գործունեությամբ: Հատկապես կարևոր նշանակություն ունեցան հայ պատմագրության հուշարձանները միջազգային ասպարեզ հանելու առումով նրա ծրագրած հայ պատմիչների շարքի առաջին երկու հատորների հրատարակությունները՝ 1874 և 1876 թթ. Պետերբուրգում:

Ձեռագրական բնագրերի ուսումնասիրության և հրատարակման գծով բուն Հայաստանում, մինչև Արևելյան Հայաստանի ազատագրությունը պարսկական լծից, պայմաններ բնավ չկային:

Էջմիածնի Մատենադարանը, որ 17-րդ դարում կարգավորյալ հաստատություն էր և հազարավոր ձեռագրեր էր պարունակում իր ֆոնդերում, 19-րդ դարի սկզբներին չնչին քանակությամբ ձեռագրեր ուներ:

1828 թվականից հետո միայն սկսվում են աշխատանքներ տարվել Էջմիածնում գտնվող և զանազան անկյուններում պահվող ձեռագրերի հավաքման, գրատան կարգավորման և ձեռագրերի ցուցակագրման գծով:

Ձեռագրերի առաջին ցանկը, որ հրատարակվեց Բրոսեի կողմից 1840 թ. Պետերբուրգում (տես Каталог книгам Эчмиадзинской библиотеки) պարունակում էր ընդամենը 312 ձեռագրերի խիստ համառոտ թվարկում:

Հայաստանի տարբեր վայրերից ձեռագրերի սիստեմատիկ հավաքման աշխատանքով զբաղվեցին Էջմիածնի գիտնական միաբաններից Հովհաննես Շահխաթունյանը, Դանիել Շահնազարյանցը, իսկ հետագայում Սահակ Ամատունին, Մեսրոպ Տեր–Մովսիսյանը, Գարեգին Հովսեփյանը և ուրիշներ:

1863 թվականին տպագրվեց հրատարակչի անունով Կարինյան կոչվող «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի» ցուցակը 2340 ձեռագրերի համառոտ նկարագրությամբ:

Ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի հավաքման ու ցուցակագրման հետ զուգընթաց որոշ աշխատանք էր տարվում Էջմիածնում նաև ձեռագրերի ուսումնասիրության և հրատարակության գծով: Լույս են տեսնում Սիմեոն Երևանցու «Ջամբռ» կոչվող ժողովածուն՝ Էջմիածնի վանական տնտեսության պատմության մասին կարևոր փաստաթղթերով, 10-րդ դարի պատմիչ Ուխտանեսի «Պատմությունը», 12-րդ դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը», Սամուել Անեցու «Ժամա-

նակագրությունը», հայ օրենսդրության ամենանշանավոր հուշարձան՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոց»–ը, և մի շարք այլ կարևոր, մեծ ու փոքր, բնագրեր:

Աղբյուրագիտական աշխատանքների վիճակն ընդհանուր առմամբ այսպիսի պատկեր էր ներկայացնում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, երբ հայագիտության բնագավառ մտան երիտասարդ ու եռանդով լի կարող ուժեր՝ Ստեփանոս Մալխասյանցը, Մանուկ Աբեղյանը, Գալուստ Տեր–Մկրտչյանը և նրանց մի քանի գործակիցները:

Ուսանելով Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի գիտական կենտրոններում և համապատասխան գիտական պատրաստություններ ստանալով հայագետների այդ նոր սերունդը շատ լավ գիտակցում էր հայ աղբյուրագիտության թերությունները և նրա զարգացման համար անհրաժեշտ նախապայմանները:

Անդրադառնալով հայ պատմագիրների անցյալ հրատարակություններին, Ստեփանոս Մալխասյանցը (որ եղավ մեր Գիտությունների Ակադեմիայի հիմնադիր ու պատվավոր անդամներից մեկը) այսպես էր գնահատում դրանց գիտական նշանակությունը. «Այս հրատարակությունները եղել են զանազան տեղերում ու ժամանակներում տարբեր պատրաստությամբ և նպատակներով: Այս պատճառով շատ զանազանվում են նրանք միմյանցից ներքինով և արտաքինով: Ոմանք ունեն ձեռագիրների տարբեր ընթերցվածքներ (որոնց մեջ մի քանիսը լիակատար, մյուսները սահմանափակ թվով), մյուսները՝ ոչ: Մի քանիսը տպագրված են մի քանի ձեռագիրների բաղդատությամբ, մյուսները՝ առաջին պատահած, զուցե սխալաշատ ձեռագրից: Վերջապես հրատարակություններից ոմանք ենթարկված են կամավոր կամ ակամա աղավաղումների: Կան և այնպիսի հեղինակներ, որոնք կիսատ են տպագրված՝ միակ ծանոթ թերի ձեռագրից, այնինչ հետո գտնվել են անթերի ձեռագիրներ, որոնցից դեռ հրատարակություն չէ եղած»[1]:

Քաջ գիտակցելով պատմագրության զարգացման համար ստուգված գիտական բնագրերի անհրաժեշտությունը, Ստ. Մալխասյանցը ծրագրում է մի վիթխարի աշխատանք՝ հրատարակել հին և նոր պատմագիրների ժողո-

[1] «Մշակ», 1902 թ., № 242, Ստ. Մալխասյանի «Հին դարերից» հոդվածը:

վածուն «Պատմագիրք հայոց» մատենաշարով, որը բովանդակելու էր 50 հայ պատմագիրների աշխատությունները, ժամանակագրական կարգով:

«Ամեն ջանք պետք է գործ դրվի,– գրում է Ստ. Մալխասյանցը,– որ այս հրատարակությունը հնար եղածին չափ կատարյալ լինի արտաքին և ներքին հատկություններով»:

Մասնավոր ձեռներեցությամբ, առանց պետական աջակցության, այսպիսի ծավալուն աշխատանք անհնար էր կատարել:

1904 թվականին լույս տեսավ «Պատմագիրք հայոց» շարքի անդրանիկ հատորը՝ «Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. աշխատութեամբ Գ. Տէր–Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան» (Տփղիս, 1904):

Երկրորդ գիրքը՝ Ագաթանգեղոսն էր, որ լույս տեսավ 5 տարի հետո միայն՝ 1909 թ. (Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր–Մկրտչեան եւ Ստ. Կանանեանց, Տփղիս, 1909): Երրորդ՝ և դժբախտաբար, վերջին հատորը եղավ Մովսես Խորենացու «Պատմության» ակադեմիական հրատարակությունը, որ լույս տեսավ 1913 թ. («Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, 1913):

«Պատմագիրք հայոց» շարքի նախաձեռնողներին, այսպիսով, չհաջողվեց ի կատար ածել հայ պատմագրական բոլոր հուշարձանների կատարյալ հրատարակությունը, սակայն նրանք, անտարակույս, կարողացան մշակել գիտական լուրջ սկզբունքներ, որոնցով ապահովվում էր հին բնագրերի հրատարակության գործի առաջընթացը:

19-րդ դարի վերջերին հայ և վրաց բանասիրության ու պատմագրական հուշարձանների ուսումնասիրության զարգացմանը նպաստող պրոգրեսիվ գործունեություն ծավալեց Պետերբուրգի համալսարանում Ն. Յա. Մառը, որին, իր նշանավոր աշակերտների՝ Ն. Ադոնցի, Ի. Ջավախիշվիլու, Հ. Օրբելու հետ միասին, վիճակված էր խոշոր դեր կատարելու հայ հնագիտության, հնագրագիտության, լեզվի պատմության և, ընդհանրապես, հայ ժողովրդի անցյալ մշակույթի տարբեր մարզերի ուսումնասիրությունը գիտական պատշաճ մակարդակի բարձրացնելու գործում:

Ինչպես տեսնում ենք, հայ բանասիրությունը և նրա անկապտելի մասը կազմող հնագրագիտությունը, մինչև խորհրդային կարգերի հաստատու-

մը Հայաստանում, անցել էր զարգացման դարավոր ուղի:

Հրատարակված էին արդեն գրեթե բոլոր հայ հին և միջնադարյան պատմագիրների երկերը, դրանցից մի քանիսը լույս էին տեսել նույնիսկ բազմաթիվ ձեռագրերի բաղդատությամբ, գրվել էին հայ և օտարազգի հայագետների կողմից ուշագրավ ուսումնասիրություններ՝ նվիրված հայ պատմագրության առանձին հուշարձանների (հատկապես՝ Մ. Խորենացու, Փավստոսի, Եղիշեի, Անանունի և այլոց) մասին: Էլ չենք խոսում այն մասին, որ Վենետիկում, Վիեննայում, Էջմիածնում և Երուսաղեմում, ուր կենտրոնացված էին հայ ձեռագրերի ամենախոշոր հավաքածուները՝ հրատարակվել էին նաև բազմաթիվ աստվածաբանական–դավանաբանական բնագրեր, մասամբ նաև գեղարվեստական գրականության հուշարձաններ:

Այսպիսով, հայ բանասիրությունը շոշափելի ժառանգություն էր ստացել անցյալից:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Չնայած երկրի ծանր վիճակին, նոր իշխանության հաստատումից ընդամենը 18 օր հետո՝ 1920 թվականի դեկտեմբերի 17-ին, Հայաստանի կառավարության հատուկ որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի համալսարանը: Քիչ անց (1921 թ. փետրվարի 5-ին) Էջմիածնի Մատենադարանի բազայի վրա ստեղծվեց Հայաստանի առաջին գիտահետազոտական հաստատությունը՝ Էջմիածնի գիտական ինստիտուտը:

Հայագիտության հին ու անվանի մասնագետները՝ Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Հ. Մանանդյան և ուրիշներ, որոնք կարող էին արդյունավետ աշխատանք ծավալել բնագրերի հրատարակության գծով, որպես Հայկական առաջին համալսարանի պրոֆեսորներ՝ զբաղված էին շատ ավելի հրատապ հարցերով, դասախոսելով հայագետների նոր սերունդ, մշակելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության, գրականության և լեզվի պատմության գիտական դասընթացներ, գրելով արժեքավոր մենագրություններ ամենաակտուալ պրոբլեմների մասին:

Այդ իսկ պատճառով 20-30-ական թվականներին աղբյուրագիտական ու հնագրագիտական աշխատանքները լայն ծավալ չստացան Հայաստանում:

Մատենադարանն այդ տարիներին զբաղված էր, հիմնականում, Հայաստանի շրջաններից և Սովետական Միության ու արտասահմանի հայաբնակ վայրերից հին հայերեն ձեռագրեր հավաքելու, դրանք նախնական ցուցակագրման ենթարկելու աշխատանքներով:

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, էջմիածնի Մատենադարանն ուներ ընդամենը 4660 ձեռագիր (չհաշված 1915 թ. Վասպուրականից բերված 1730 ձեռագրերը), իսկ հիմա Մատենադարանն ունի շուրջ 10.000 ամբողջական հայերեն ձեռագիր, չհաշված պատառիկներն ու օտար լեզուներով ձեռագրերը: Ուստի, սովետական իշխանության տարիներին ձեռագրերի քանակն Մատենադարանում ավելի քան կրկնապատկվել է:

Այժմ փորձենք ներկայացնել հայ ժողովրդի հազարամյա կյանքի պատմության հարցերի մշակման ընթացքում նախասովետական հայ աղբյուրագիտության մեջ նկատված թերություններն ու բացերը.

1. Հայ ժողովրդի պատմության մի շարք դարաշրջաններին վերաբերող սկզբնաղբյուրները բոլորովին կամ գրեթե բոլորովին չէին գրավել անցյալի աղբյուրագետների և հնագրագետների ուշադրությունը:

14-16-րդ դարերում, օրինակ, հայ ժողովուրդը, հեծում էր իլխանության փլատակների վրա բարձրացած մոնղոլական ու թուրքմենական քոչվոր ավագանիների տիրապետության տակ, զրկված լինելով անկախությունից և իր դարավոր մշակույթը զարգացնելու նվազագույն հնարավորություններից: Եվ հենց այդ, մասամբ նաև հաջորդ՝ 17-18-րդ դարերի պատմության ուսումնասիրության համար չէին հրատարակված կարևոր սկզբնաղբյուրներ:

Անհրաժեշտ էր լրացնել այդ խոշոր բացը:

2. Նախորդ շրջանի պատմագրությունը գրեթե ոչինչ չէր արել սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ֆեոդալական հողատիրության ու շահագործման ձևերի, ժողովրդի վիճակի և սոցիալական պայքարի ձևերի ու գաղափարախոսության ուսումնասիրության գծով: Անհրաժեշտ էր որոնել ու հրապարակել նյութեր, որոնք լույս սփռեին ժողովրդի պատմության կարևոր այդ բնագավառների վրա:

3. Ինչպես իրավացիորեն նկատել էր Ն. Յա. Մառը՝ «Հայոց պատմությունը և նրա գրականության պատմությունը մինչ այժմ (այս տողերը

Մառը գրել է 1891 թ. – Լ. Խ.) չեն մշակված, որովհետև արևմտաեվրոպական գիտնականները անդրադառնում էին հայկական աղբյուրներին Իրանի, Բյուզանդիայի, արաբների, խաչակիրների, սելջուկների, մոնղոլների և այլոց պատմության համար լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով միայն, անտեսելով այդ աղբյուրների նշանակությունը հենց Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: Հայ գիտնականները սովորաբար իդեալականացնում էին իրենց անցյալը, մի բան, որ բացառում էր նրա գիտական ուսումնասիրության հնարավորությունը»[5]:

Ուստի, ինչպես գիտակցում էր Մառը, անհրաժեշտ էր ստեղծել «ինքնուրույն հայկական բանասիրություն, ստուգված քննական բնագրերով և ամուր մշակված հայացքներով»[6]:

«Ինքնուրույն հայ բանասիրության» ստեղծման գործում դեռևս շատ աշխատանք ունեին կատարելու խորհրդահայ բանասերները:

4. Հայ հին ու միջնադարյան փիլիսոփայության, քերականագիտության, մանկավարժության, բժշկության, ալքիմիայի, մեծ չափով նաև գեղարվեստական գրականության բարձրարժեք հուշարձանները, իրենց գերակշիռ մասով չէին հրատարակվել. ուստի և չէր ստեղծված համապատասխան աղբյուրագիտական բազա հայ մշակույթի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար: Անհրաժեշտ էր զարկ տալ պատմագրական սկզբնաղբյուրներից բացի, նաև այլ կարգի ձեռագրական բնագրերի գիտական մշակման ու հրատարակման գործին:

5. Ինչպես վերն առիթ ունեցանք նշելու, հայ պատմագրական հուշարձանների գիտական հրատարակության գործը, որին ձեռնարկել էին 20-րդ դարի սկզբին անվանի հայագետներ Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը, Գ. Տեր–Մկրտչյանը՝ կանգ էր առել միայն 3 հեղինակների (Փարպեցի, Ագաթանգեղոս, Խորենացի) հրատարակությամբ: Անհրաժեշտ էր շարունակել սկսված գործը և որոշ հաջորդականությամբ լույս ընծայել մյուս հայ պատմիչների երկերի բոլոր ձեռագրերի բաղդատության միջոցով կազմված գիտական բնագրերը:

6. Անցյալում զգալի աշխատանք էր տարված հայ պատմագրական

---

[5] В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, стр. 44.

[6] " О начальной истории Армении Анонима", ВВ, т. I, стр. 306.

հուշարձանների ռուսերեն և եվրոպական լեզուներով թարգմանության ուղղությամբ. սակայն մի շարք կարևորագույն բնագրեր, որոնց նշանակությունը դուրս էր գալիս հայագիտության շրջանակներից, դեռևս թարգմանված չլինելով՝ անծանոթ էին մնացել պատմագիտական լայն շրջաններին:

Սկզբնաղբյուրների թարգմանության գծով աշխատանքները պետք է շարունակվեին ավելի լայն ծավալ ընդունելով. պետք է բարձրացվեր նաև դրանց գիտական որակը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանատու և խոշոր խնդիրներ էին ծառացած աղբյուրագետների և հնագրագետների առջև:

Այդ գծով աշխատանքները, մինչև 1959 թ., երբ Մատենադարանի բազայի վրա ստեղծվեց Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, կատարվում էին հանրապետության տարբեր գիտահետազոտական հաստատությունների համատեղ ջանքերով. բնագրերի հրատարակություններով հանդես էին գալիս Հայկ ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության, Գրականության ինստիտուտները, Փիլիսոփայության սեկտորը, Երևանի պետական համալսարանը և այլ հիմնարկներ, որոնց թվում նաև Մատենադարանը:

1959 թվականից հետո, սակայն, աշխատանքների հիմնական ծանրությունն իր վրա վերցրեց Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական երիտասարդ կոլեկտիվը:

Համառոտակի ծանոթանանք կատարված աշխատանքի արդյունքներին, ըստ բնագավառների վերոհիշյալ հերթականության:

Ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, հայ պատմագրության ամենից աղոտ ժամանակները 14-18-րդ դարերն էին: Այդ շրջանի պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ էր երևան բերել, մշակել ու հրապարակել նոր սկզբնաղբյուրներ:

Եվ ահա 1938-39 թթ. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հրատարակչությամբ լույս ընծայվեցին Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը» (17-րդ դարի վերջի խիստ ուշագրավ աղբյուր, հատկապես առևտրի և արհեստագործության պատմության համար)[7], Աբրահամ

[7] Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, Երեւան, 1938:

Երևանցու «Պատմութիւն պատերազմաց»-ը (18-րդ դարի 20-ական թթ. թուրք-պարսկական պատերազմների և Երևանի հերոսական պաշտպանության պատմությունը[8], Աբրահամ Կրետացու «Ծոցի տետրակը»[9] և այլ բնագրեր:

Շատ ավելի կարևոր էին Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 1950 թվականից սկսած լույս ընծայվող «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» և «Մանր ժամանակագրություններ» հատորների հրատարակումը:

1960 թվականին լույս տեսավ 14-րդ դարի հիշատակարանների ժողովածուն՝ 845 հիշատակարանով[10]:

1955 թվականին - 15-րդ դարի հիշատակարանների ժողովածուի 1-ին հատորը՝ 1401-1450 թթ. 744 հիշատակարաններով[11], 1958 թ.՝ ժողովածուի 2-րդ հատորը՝ 1451-1480 թթ. 575 հիշատակարաններով[12] և 1967 թ.՝ 3-րդ հատորը՝ 1481-1500 թթ. հիշատակարաններով[13]:

Հիշատակարաններն իրենց գերակշիռ մասով գրված են ձեռագրեր ընդօրինակող գրիչների, ծաղկազարդող մանրանկարիչների և պատվիրատուների կողմից: Լինելով գրանցվող դեպքերի ժամանակակից ու ականատես մարդկանց գրանցումներ, դրանցում պատմական անցուդարձերը շարադրված են ճշմարտացի ու ստույգ:

Հիշատակագիրները լինելով մեծ մասամբ աշխատավոր խավերից

[8] Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմաց. 1721-1736 թթ., Երեւան, 1938:

[9] Ս. Տէր–Ավետիսյան, Աբրահամ Կրետացու Հիշատակարանը (Ծոցի տետրակը), Երևանի համալսարանի գիտական աշխատություններ, հատ. XIII, Երևան, 1940, էջ 285-343:

[10] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:

[11] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955:

[12] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարններ, հ. Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958:

[13] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարններ, հ. Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967:

դուրս եկած գրագիր-արհեստավորներ, իրենց սոցիալական դրությամբ մոտ են կանգնած ժողովրդին: Այդ իսկ պատճառով նրանք պատմական դեպքերն ընկալել ու գնահատել են նրանց տեսանկյունից և հաճախ գրանցել պատմական այնպիսի դեպքերի մասին տվյալներ, որոնք սովորաբար անտեսվել են պաշտոնական պատմագիրների կողմից:

Խիստ արժեքավոր սկզբնաղբյուրներ են նաև իրենց մեծագույն մասով առաջին անգամ հրատարակված «Մանր ժամանակագրությունները»:

1951 թվականին լույս տեսավ 13-18-րդ դդ. «Մանր ժամանակագրություններ» ժողովածուի 1-ին հատորը 27 մանր ու մեծ բնագրերով[14]: 1956 թվականին՝ նույն ժողովածուի 2-րդ հատորը՝ 25 բնագրերով[15]: Երկար չի անցել դրանց հրատարակումից, բայց արդեն իսկ դրանց նյութերի օգտագործումը լայն ծավալ է ընդունել և հազիվ թե հնարավոր լինի շրջանցել 13-18-րդ դարերի հայ ժողովրդի պատմության որևէ պրոբլեմ, որի մասին այդ ժամանակագրություններում չգտնվեն ուշագրավ և վստահելի տվյալներ[16]:

Ասացինք արդեն, որ նախասովետական հայ պատմագրությունը, եթե անտեսենք մի–երկու փորձեր, գրեթե չի զբաղվել սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ֆեոդալական հողատիրության ձևերի, եկեղեցական կալվածատիրության, գյուղացիության շահագործման ու ճորտացման ձևերի, հարկերի տեսակների և դրանց գանձման մեթոդների, սոցիալական շարժումների պրոբլեմներով:

Այդ խնդիրների ուսումնասիրությամբ զբաղված սովետահայ պատմաբաններն ու աղբյուրագետները կարողացան հայ պատմագրության արդեն հայտնի հուշարձաններից քաղել տվյալներ՝ նոր լույսի տակ մեկնաբանելով դրանք, ինչպես նաև հրապարակ հանեցին առաջնակարգ նշանակություն ունեցող նոր սկզբնաղբյուրներ:

14 Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951:

15 Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հատոր II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956:

16 Հիշատակենք հրատարակության պատրաստվող հետևյալ իրավաբանական հուշարձանները. Վազգեն Հակոբյանի «Կանոնագիրք Հայոց»-ը, «Դատաստանագիրք Աստրախանի հայոց»-ը, Վ. Գրիգորյանի «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները»:

1941 թվականին Մատենադարանի կողմից հրատարակվեց տնտեսական զանազան գործարքների վերաբերյալ հայերեն արխիվային վավերագրերի արժեքավոր մի ժողովածու[17]:

1956 թվականին պարսկերեն բնագրով և հայերեն ու ռուսերեն թարգմանություններով լույս տեսավ «Մատենադարանի պարսկերեն հրովարտակների» առաջին պրակը 15-16-րդ դարերի խիստ արժեքավոր հրովարտակներով: 1959 թվականին՝ նույն ժողովածուի երկրորդ պրակը՝ 17-րդ դարի առաջին կեսի հրովարտակներով (կազմող՝ Հ. Փափազյան):

Աշխատանք է կատարվում նաև նույն դարերի պարսկերեն կալվածագրերի, ինչպես նաև թուրքերեն փաստաթղթերի հրատարակության պատրաստման գծով:

Այդ հրատարակությունները բարձր գնահատանքի արժանացան մասնագետների կողմից և արժեքավոր են ոչ միայն Հայաստանի, այլ նաև հարևան երկրների սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության լուսաբանման համար:

Սովետահայ աղբյուրագիտության, հնագրագիտության ամենաակնառու նվաճումներից է անշուշտ այն, որ հնարավոր եղավ խիստ ընդարձակել ավանդական հայագիտության սահմանները և համապատասխան սկզբնաղբյուրների հրատարակությամբ՝ բազա ստեղծել հայ փիլիսոփայության, տիեզերագիտության, մաթեմատիկայի, չափագիտության, քիմիայի, մանկավարժության, բժշկության և այլ գիտությունների ուսումնասիրության համար:

Այս բնագավառում մեծ աշխատանք կատարեց հանգուցյալ ակադեմիկոս Հ. Մանանդյանը: Նրան ենք պարտական Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» (1938 թ.), Հերմես Եռամեծի «Առ Ասկղեպիոս, Սահմանք» և այլ փիլիսոփայական բնագրերի օրինակելի հրատարակությունների համար:

Հ. Մանանդյանի սկսած գործն ավելի ծավալվեց վերջին տարիների

17 Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, կազմեց Հ. Աբրահամյան, պրակ Ա, Երևան, 1941:

ընթացքում: «Մատենադարանի բանբերի» 2-րդ համարում լույս տեսավ [կարծեցյալ] Զենոն Իմաստասերի «Յաղագս բնության» աշխատության հայերեն հին թարգմանությունը, որի հունարեն բնագիրը չի պահպանվել: Նույն թվականի 3-րդ համարում լույս տեսավ դրա ռուսերեն թարգմանությունը:

1956 թվականին, որպես "Памятники армянской философской мысли" մատենաշարի 1-ին համարը՝ լույս տեսավ "Анализ "Категорий" Аристотеля Иоанна Воротнеци (1386), հայերեն բնագրով և ռուսերեն թարգմանությամբ: Մի քանի օր առաջ հրատարակվեց նույն մատենաշարի 2-րդ գիրքը՝ Դավիթ Անհաղթի (6-րդ դար) «Սահմանք իմաստասիրության» աշխատության գիտական բնագիրը ռուսերեն թարգմանությամբ:

Գիտական ժողովածուներում հրատարակվեցին նաև այլ, ավելի մանր փիլիսոփայական բնագրեր, ինչպես նաև գիտահետազոտական մենագրություններ հայ փիլիսոփայության պատմության ականավոր գործիչների (Եզնիկ, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի) ու պրոբլեմների մասին: Այսպիսով ստեղծվեց հայագիտության մի նոր ճյուղ՝ հայ փիլիսոփայության պատմություն:

Արդյունավետ եղավ նաև աղբյուրագետների և գիտությունների պատմության մասնագետների աշխատանքը մաթեմատիկայի, տիեզերագիտության և տոմարագիտության պատմության հարցերի մշակման և բնագրերի հրատարակության գծով:

Երկու ստվար հատորներով հրատարակվեցին 7-րդ դարի նշանավոր գիտնական Անանիա Շիրակացու (1945 թ.) և 12-րդ դարի գիտնական Հովհաննես Սարկավագի Մատենագրությունները (1956 թ.):

Այդ բնագրերի ուսումնասիրությամբ գրվեցին գիտահետազոտական մենագրություններ, առաջին անգամ լինելով ստեղծվեց հայ մաթեմատիկայի պատմության ամբողջական շարադրանք՝ պրոֆ. Գ. Պետրոսյանի ջանքերով, որն իր կողմից գիտական շրջանառության մեջ դրեց նոր բնագրեր:

Ոչ պակաս արդյունավետ եղավ հայ բժշկության պատմության ուսումնասիրությունը:

1940 թվականին լույս տեսավ 15-րդ դարի նշանավոր բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկական հանրագիտարանի բնույթ կրող ծավալուն աշխատությունը: Պատրաստվում է հրատարա-

կության 13-րդ դարի բժիշկ Գրիգորիսի «Յաղագս բնութեան մարդոյ» խիստ հետաքրքրական բնագիրը, որը, անտարակույս, մեծ չափով կընդարձակի մեր գիտելիքները հայ միջնադարյան բժշկության նվաճումների մասին:

Բժշկության պատմության հարցերով զբաղվող մեր մասնագետները՝ պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը, Ա. Կծոյանը, հանգուցյալ Գ. Հարությունյանը, Խ. Մելիք-Փարսադանյանը և ուրիշներ, իրենց գիտահետազոտական աշխատանքներում լայնորեն օգտագործեցին Մատենադարանի բժշկական ձեռագրեր, հրատարակելով նրանցից արժեքավոր բնագրերի հատվածներ ու գլուխներ:

Պրոֆեսորներ՝ Կ. Ղաֆադարյանի, Տ. Ղազանչյանի և Ա. Հարությունյանի ջանքերով զգալի աշխատանք տարվեց նաև քիմիայի պատմության մշակման գծով: 1941 թ. լույս տեսավ Ա. Հարությունյանի «Ներկերի և թանաքների ուսումնասիրությունը Հին Հայաստանում», իսկ 1955 թ. Ղազանչյանի "Очерки по истории химии в Армении" ուսումնասիրությունները, որոնք գրվել են ձեռագիր սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա:

Նախորդ սերնդի հայ հնագրագետները որոշ աշխատանք կատարել էին հայ հին ու միջնադարյան բանաստեղծների ստեղծագործությունների հրատարակության գծով: Սակայն նշանավոր բանաստեղծներից շատ քչերի ստեղծագործություններն էին հրատարակվել առանձին ժողովածուով և հրատարակվածներն էլ՝ պատահական ձեռագրերի հիման վրա էին և գիտական առումով խիստ թերի ու անկատար:

Հայ գրականության գիտական պատմության շարադրման նախաձեռնողն եղավ հանգուցյալ ակադեմիկոս Մ. Աբեղյանը, որը «Հայ հին գրականության պատմությունը» ստվարածավալ երկհատոր աշխատությունը ստեղծելու համար ինքն անձամբ ստիպված էր զբաղվելու տեքստաբանական-հրատարակչական աշխատանքներով:

1940 թվականին լույս տեսավ նրա «Գուսանական ժողովրդական տաղեր» բնագրագիտական մեծարժեք աշխատությունը:

Նրա սկսած գործը շարունակվեց հետագայում առավել արդյունքներով: 1956 թվականին Մատենադարանի կողմից հրատարակվեց Աս. Մնացականյանի կազմած «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր»

արժեքավոր ժողովածու, 1951 թ. 18-րդ դարի բանաստեղծ Հովնաթան Նաղաշի «Բանաստեղծությունները» ժողովածուն՝ նույն Աս. Մնացականյանի և Շ. Նազարյանի աշխատասիրությամբ:

1958 թ. առանձին գրքերով լույս են տեսել միջնադարյան բանաստեղծներ Խաչատուր Կեչառեցու (Մ. Ավգալբեգյան), Հովհաննես Երզնկացու (Ա. Սրապյան), Մարտիրոս Ղրիմեցու (Ա. Մարտիրոսյան), Պաղտասար Դպրի (Աս. Մնացականյան) ստեղծագործությունները, այդ հեղինակների մասին մենագրաֆիկ ուսումնասիրության բնույթ կրող ընդարձակ առաջաբաններով: Նրանց հետևեցին Կոստանդին և Հովհաննես Երզնկացիների, Գրիգոր Աղթամարցու, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Կարնեցու գրքերի հրատարակությունները :

Այժմ պատրաստվում է Պետրոս Ղափանցու, Երեմիա Քյոմուրճյանի հայ միջնադարյան բանաստեղծների ստեղծագործությունների հրատարակչության պատրաստման աշխատանքը և շուտով լույս կտեսնեն նույն սկզբունքներով պատրաստված այլ հեղինակների ստեղծագործությունների ժողովածուներ:

Հայ պատմագրական և իրավաբանական հուշարձանների գիտական բնագրերի հրատարակման գծով նույնպես զգալի աշխատանք տարվեց:

1921 թ. լույս տեսավ «Վկայք արևելից» ժողովածուն, Կեղծ Շապուհ Բագրատունու Պատմությունը (10-րդ դարի խիստ արժեքավոր բնագիր):

1939 թվականին Սեբեոս եպիսկոպոսի պատմության գիտական հրատարակությունը, որ պատրաստել էր ավագ սերնդի նշանավոր աղբյուրագետ Ստ. Մալխասյանցը:

1941 թ. 7-րդ դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկի Ա. Աբրահամյանի պատրաստած նոր հրատարակությունը:

1957 թ. հիմք դրվեց հայ պատմագիրների նոր շարքին, որի առաջին գիրքը եղավ Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» հռչակավոր պատմագրության գիտական բնագիրը, կազմված 19 ամբողջական ձեռագրերի, 30-ից ավելի ճառընտրերի, ինչպես նաև բնագրային արժեք ունեցող 4 տպագրությունների գիտական բաղդատությամբ, անվանի հայագետ պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի կողմից:

Այնուհետև պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից հրատարակության պատրաստված Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» գիտական

բնագիրը, ընդարձակ գիտահետազոտական բնույթի առաջաբանով ու ծանոթագրություններով:

Հրատարակվել է նաև Արիստակես Լաստիվերտցու «Պատմությունը» և Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խոտինու» և այլ պատմիչների բնագրեր (Մ. Կաղանկատվացի, Թ. Մեծոփեցի, Սամուել Անեցի և այլն):

Պատմական սկզբնաղբյուրների ռուսերեն թարգմանությունների գծով մինչ այժմ դժբախտաբար լայն ծավալի ու պլանավորված աշխատանք չի տարվել:

Այնուամենայնիվ հրատարակվել են կարևոր հետևյալ բնագրերի թարգմանությունները՝ Սեբեոս (1939), Զաքարիա Ագուլեցի, Աբրահամ Երևանցի, Փավստոս Բուզանդ (1953), Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (1954), Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» (1958), "Армянские источники по падении Византии" (1957), "История хотинской войны Иоаннеса Кеменецкого" ("Историко-филологический журнал", 1958) և մի քանի այլ, ավելի մանր բնագրեր:

Մինչ այժմ չեն մշակված նաև թարգմանչական սկզբունքներ, որի հետևանքով թարգմանիչներից ամեն մեկը յուրովի է ճանապարհ ընտրում այս կամ այն դժվարությունը հաղթահարելիս:

Կարծում եմ, որ այս կարևոր հարցը պետք է քննարկման առարկա դառնա լայն մասշտաբով, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության բաժանմունքին առընթեր ստեղծված Հնագրագիտական կոմիսիայի կողմից[18]:

Զանցառելով այն աշխատանքները, որոնք կատարվել են վերջին տարիների ընթացքում հայ մանրանկարչության, թատրոնի, երաժշտության և արվեստի այլ բնագավառների պատմության սկզբնաղբյուրների հրատարակության գծով, նշենք միայն, որ հրատարակվել են արժեքավոր նյութեր:

Անցյալ տարի, 1959 թ. մարտի 3-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի հատուկ որոշմամբ Հին ձեռագրերի պետական պահոց - «Մատե-

[18] Հիշատակելի են «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի հրատարակությունները:

նադարան»-ը վերափոխվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ «Մատենադարան»-ի:

Այդ արվեց «Մատենադարանում պահվող հին ձեռագրերի հետազոտության և նկարագրության, ձեռագրաց մայր ցուցակի պատրաստման և հայերեն ու ռուսերեն լեզուներով պատմագրության, փիլիսոփայական մտքի, բժշկական, մաթեմատիկական, տիեզերագիտական և աշխարհագրական երկերի, ինչպես նաև գեղարվեստական գրականության գիտական ուսումնասիրման ուժեղացման նպատակով»:

Առաջադրված հարցերի հաջող իրականացման համար ինստիտուտի կազմի մեջ ստեղծվեցին 3 գիտական սեկտորներ, գիտական աշխատողների համապատասխան հաստիքներով.

1. Գիտական մատենագիտության սեկտոր

2. Սկզբնաղբյուրների ուսումնասիրության և հրատարակման սեկտոր

և 3. Ձեռագրերի գիտական պահպանման սեկտոր

Մեկ տարի է, ինչ Մատենադարանն արդեն որպես գիտահետազոտական հաստատություն, տեղափոխվել է նորակառույց այս շենքը, ուր, ինչպես տեսնում եք, ստեղծված են ու ստեղծվում են բոլոր պայմանները ձեռագրերի պահպանության, ուսումնասիրության և հրատարակության համար:

Ինստիտուտի առաջին գիտահետազոտական պլանի մեջ մտել են ակտուալ նշանակություն ունեցող բազմաթիվ բնագրերի հրատարակության և ուսումնասիրության հետ կապված թեմաներ:

Այժմ աշխատանք է տարվում և առաջիկայում ավելի լայն ծավալ կընդունի՝ հայ պատմագիրների դեռևս գիտականորեն չհրատարակված սկզբնաղբյուրների՝ ձեռագրերի բաղդատությամբ հրատարակելու ուղղությամբ: Հրատարակության է պատրաստվում հայ միջնադարյան առակների բնագիրը՝ 100-ից ավելի ձեռագրերի օգտագործմամբ (առակների տասնյակ տարբերակներով ու խմբագրություններով), աշխատանք է տարվում փիլիսոփայական, քերականագիտական, բառարանագիտական-բժշկագիտական բնագրերի ուսումնասիրության ուղղությամբ:

Մշակվում են հայ մանրանկարչության պատմության առանձին պրոբլեմներ: Աշխատանք է տարվում հայ իրավաբանական մտքի ամենանշանավոր հուշարձանի՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» գիտական բնագիրը

պատրաստելու ուղղությամբ և այլն, և այլն:

Ինստիտուտի ուշադրության կենտրոնում են գտնվում Ձեռագրերի մայր ցուցակի պատրաստման աշխատանքները, որին լծվել են կարող ու հմուտ երիտասարդ մասնագետներ: Այս տարվա վերջին պատրաստ կլինի գիտական ցուցակի առաջին հատորը, որը կդրվի լայն քննարկման և կհանդիսանա ցուցակի հետագա հատորների հիմնաքարը՝ իր նոր մշակված սկզբունքներով:

Մատենադարանը հրատարակում է իր գիտական օրգանը «Բանբեր Մատենադարանի», որի 4 հատորները արդեն ծանոթ են մեր գիտական հասարակայնությանը, իսկ 5-րդ հատորն արդեն հանձնված է տպագրության:

Մատենադարանի գիտական կյանքում կարևոր դեր են կատարում գիտական նստաշրջանները, որ հրավիրվում են տարին 1, երբեմն նաև 2 անգամ: Այդ նստաշրջաններին մասնակցում են նաև մեր և հարևան հանրապետությունների այլ գիտական հաստատությունների ներկայացուցիչները, հատկապես Վրաց. ՍՍՌ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտը, հանձինս նրա դիրեկտոր, անվանի վրացագետ ու հայագետ Ի. Վ. Աբուլաձեի և ուրիշների:

Մատենադարանի պատմության համար ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Պատմության բաժանմունքին կից հնագրագիտական կոմիսիայի և այլ գիտական հաստատությունների մասնակցությամբ գումարված այս գիտական խորհրդակցությունը՝ խոշոր նշանակություն ունի:

Սրանով, հավատացած ենք, որ սկսվելու է հայ բազմադարյան ձեռագրերի ուսումնասիրության և հրատարակության գործում մի նոր փուլ, այդ գործին Սովետական Միության այլ հանրապետությունների գիտական հաստատությունների մասնակցությունը ընդարձակելու, ստեղծագործական համագործակցությամբ նոր արդյունքների հասնելու առումով:

Թույլ տվեք Մատենադարանի գիտական կոլեկտիվի անունից շնորհակալություն հայտնել մեր բոլոր հյուրերին, որոնք ծանրաբեռնված լինելով բազմապիսի աշխատանքներով՝ հնարավոր համարեցին գալ Երևան, մասնակցելու համար համատեղ այս նստաշրջանի աշխատանքներին:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ*

Հայ ժողովուրդն իր կյանքի ու մաքառման երկար ու ձիգ դարերում ստեղծել ու ժառանգություն է թողել մեզ գրավոր մեծ մշակույթ: Հայերեն հազարավոր մագաղաթյա ու հին թղթյա ձեռագրերը փայլուն վկայական են մեր ժողովրդի ստեղծագործ ջանքերի. այդ ձեռագրերի էջերում չարքաշ ու ջանասեր հազարավոր գրիչներ դրոշմել են մեր ժողովրդի պատմության, հարևան ժողովուրդների հետ նրա ունեցած քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի մասին բազմաբովանդակ փաստաթղթեր, ընդօրինակել ու ապագա սերունդներին են հանձնել փիլիսոփայության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական գրականության և գիտության ու արվեստի այլ բնագավառների մասին համաշխարհային արժեք ներկայացնող հուշարձաններ:

Ժողովրդի ստեղծած ձեռագիր գանձերից պահպանվել ու հասել են մեզ միայն փշրանքներ, և դրանք էլ անցել են հրի ու սրի միջով, ականատես լինելով այն եղեռններին, որոնք անպակաս են եղել հայ ժողովրդի պատմությունից:

Տասնյակ հազարավոր ձեռագրեր են ոչնչացվել օտարերկրյա նվաճողների կողմից. այդ մասին կան մեծ թվով վստահելի տվյալներ. այսպես՝ 1170 թվականին սելջուկ-թուրքերին հաջողվում է խաբեությամբ գրավել Սյունիքի ամենաամուր և անմատչելի համարված Բաղաբերդ ամրոցը, որտեղ «վասն անառիկ ամրութեանն» հավաքել էին Սյունիքի բոլոր վանքերի

---

* Զեկուցված է Մատենադարանի Գիտական խորհրդի ընդլայնված նիստին, 1957 թ., նոյեմբերի 29-ին: «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 7-23:

սրբությունները և հատկապես Տաթևի վանքի ավելի քան 10.000 ձեռագրերը: Եվ այդ բոլորը գրավվում ու ոչնչացվում է կիսավայրենի նվաճողների կողմից: «... զանհամար և զաննման սրբութիւնս, – գրում է պատմիչը, – և սպառ եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ, և անգին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք, որք թուով աւելի քան զ10.000, զորս ամբարեալ էին անդ: Ամենայն առ հասարակ գերի վարեցան և ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի» (Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, 1910, էջ 335-336):

Հազարավոր ձեռագրեր են ոչնչացվել նաև սելջուկ-թուրքերին հաջորդող նվաճողների՝ մոնղոլների, օսմանյան թուրքերի և մյուս բարբարոս ասպատակողների կողմից:

Ողբերգական է եղել նաև Պետական մեր Մատենադարանի հիմքը կազմող էջմիածնի Մատենադարանի պատմությունը:

Հայտնի է, որ երկարատև դադարից հետո էջմիածինը կրկին սկսում է զգալի դեր կատարել հայ ժողովրդի կյանքում 1441 թվականից հետո, երբ կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվում է այնտեղ: էջմիածնում և նրա մոտակայքում գտնվող վանքերում սկսում են ընդօրինակվել, հատկապես 17-րդ դարի ընթացքում, հարյուրավոր ձեռագրեր, որոնցից շատերը այսօր էլ պահվում են մեզ մոտ. և աստիճանաբար էջմիածնի վանական գրատունը դառնում է Հայաստանի ամենահարուստ գրատներից մեկը:

1668 թվականին շարադրված մի ընդարձակ հիշատակարանից տեղեկանում ենք, որ Փիլիպպոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1633-1655) շինարարական մեծ աշխատանքներ են կատարվում էջմիածնում. Նրա եռանդուն գործունեության շնորհիվ վանքը հարստանում է ոսկյա և արծաթյա սպասներով, կերպասեղենով, ձեռք են բերվում նաև «զգրեանց բազմութիւնս զանազան մատենից, առ ի լրումն հոգւոց և մարմնաւոր ախորժակաց հասարակաց»: Փիլիպպոսին հաջորդող Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը (1655-1680), ինչպես հաղորդում է նույն հիշատակագիրը, շարունակում է շենացնել վանքը սպասներով ու ձեռագրերով. Նա գրում է. «Սովաւ և ի ձեռն սորին յաւելան և սպասք յոլովք և անօթք բազմաթիւք մեծի տաճարիս. ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի ոչ սակաւք, և նոցին խոկացօղք և ի նոյնս պարապօղք յօգնակաճառք ...»

(Ձեռ. N 981, էջ 500բ և 502ա: Հմմտ. նաև «Արարատ» ամսագիր, 1875, էջ 373, 375 և 1888, էջ 417, 420)[1]*:*

էջմիածնի Մատենադարանը Հակոբ Ջուղայեցու ժամանակ կարգավորված հաստատություն էր և գտնվում էր հատուկ պաշտոնյայի – «գրքապանի» հսկողության ներքո: 1662 թվականին Մատենադարանի գրքապանն էր Ստեփանոս Լեհացու աշակերտներից՝ Ներսես սարկավագը: «Այլ և զիս տարրորոշեալս ի սոցունց՝ զգրքապան և զծրող մատենիս զՆերսէս յիշել մաղթեմ» – գրել է այս Ներսեսն իր ընդօրինակած ձեռագրերից մեկի հիշատակարանում (ձեռ. N 110, էջ 467բ):

էջմիածնի Մատենադարանի կարգավորյալ վիճակի մասին վկայում են նաև բազմաթիվ ձեռագրերի մեջ պահպանված հին կնիքները, որոնք ունեն «Գիրքս սբ. էջմիածնա է» մակագրությունը (տե՛ս օրինակ, ձեռ. N 686, էջ 222բ, ձեռ. N 667, էջ 388բ և այլն):

Դժբախտաբար, 18-րդ դարի ընթացքում էջմիածինը բազմիցս ենթարկվում է թալանի պարսիկ իշխողների կողմից, այնպես որ 19-րդ դարի սկզբներին էջմիածնի հարուստ Մատենադարանից մնացել էին միայն աննշան քանակությամբ ձեռագրեր:

1814 թվականին Նիկոլայ Պետրովիչ Ռումյանցևին ուղղած իր մի նամակում Ներսես Աշտարակեցին դառնացած գրում է. «Բայց ապաբախտ եմք առաւելապէս մեք ... զի յաւուրս մեր բազմահարուստ գրատուն Այրարատեան Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ էջմիածնի ... կողոպտեալ յաւար

---

[1] Այս նույն տարիներին էջմիածնում հավաքված գրասեր ու գիտնական վարդապետների մասին ուշագրության արժանի տվյալներ է հաղորդում նաև Ստեփանոս Լեհացին, Դիոնիսիոս Արիոպագացու աշխատությունների 1662 թ. կատարած իր նոր թարգմանության հիշատակարանում: Նա գրում է, որ թարգմանությունը կատարել է «ի խնդրոյ բարեմիտ եղբարցն, որք ի սուրբ աթոռս էջմիածնին ...: Քանզի զայսու ժամանակաւ բազումք էին ուսեալք վարդապետք քաջաբանք, բանաստեղծք, աստուածայինն գրոց քաջ գիտունք և հմուտք, յորոց մի էր և Առաքել վարդապետն՝ քաջ ռաբունի և փիլիսոփայ, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցկահարմար բանիւք գրոշմեաց և իւր յիշատակն անջնջելի եթող» (ձեռ. N 5171, էջ 368բ-369ա): Առ. Դավրիժեցու «Պատմության» մեջ ևս կան հետաքրքրական տվյալներ էջմիածնի Մատենադարանի և գիտուն վարդապետների մասին (տե՛ս «Պատմութիւն», 1884, էջ 233, 263 ևն):

մատենցաւ ... Այո՛ արդարև երջանիկ բախտաւորութիւն համարեալ լինէր, եթէ գրատուն Արարատեան Աթոռոյն նախկին իւր հաստատութեամբն լսէր զՁեզ այդպիսի քաղցր ձայն հրաւիրանաց ի կոչ հանդիսի Ձերումդ բարձացեալ ամենասիրելի գրատան (կնյազ Ռումյանցևը խնդրել էր իր բացած գրադարանի համար ուղարկել հայերեն ձեռագրերի ընդօրինակություններ - Լ. Խ.), բայց զի համատարած բռնութիւն աշխարհի յայսմիկ դարու տարաբախտ արար և զԱթոռ հայկազնեայց առաւել ևս ի մասինս այսմիկ (խոսքը ձեռագրերի մասին է - Լ. Խ.) աղաչեմ զերկուս զայսոսիկ գրքոյկ փոքրիկ իբրև ընծայ կամ մանաւանդ նշմարանք ջերմեռանդութեան կապտեալ գրատան աթոռոյն Արարատեան՝ ընկալնուլ մարդասիրաբար» (Վարդան, Պատմ. Մոսկվա, 1861, Յառաջաբան Մկրտիչ Էմինի):

Էջմիածնի Մատենադարանի պատմության համար նոր շրջան է սկսվում 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը, ազատագրվելով պարսկական լծից, մտնում է Ռուսական պետության հովանու տակ:

Հովհաննես կաթողիկոս Կարբեցին 1833 թվականին Դորպատի համալսարանի պրոֆ. Գ. Կրուզիուսին գրած իր կոնդակում հայտնում է, որ «անդադրում նվաճումների և սրածությունների շնորհիվ հայ ազգն ու նրա գրականությունն այն չափով սպառված և ոչնչացված են եղել, որ հազարավոր գրքերից հազիվ մի հազար հատ ժառանգություն է մնացել մեզ մեր նախնիքներից»: «Այն օրերից, — շարունակում է կաթողիկոսը, — երբ իմ հայրենիքը հանգստացել է ռուսաց կայսրերի բարեբար գայիսոնի տակ, հայերը ձեռնարկել են հավաքելու իրենց գրականության հիշատակարանները» (տե՛ս Ե. Շահազիզ, Դիվան Խաչատուր Աբովյանի, Երևան, 1940, էջ 45-46 և Каталог книгам Эчмиадзинской библиотеки, изданный Г. Броссе, СПБ, 1840, էջ 46-48):

Էջմիածնի Մատենադարանի կարգավորման գործով 1828 թ. զբաղվում է Մանուել Գյումուշխանեցին: «Ի վերայ սեղանատան, — գրում է նրա գործակիցներից Մ. Մսերյանը, — է գրատունն, յորում դնի բազմութիւն տպագիր և գրչագիր մատենից՝ նորոց և հնոց: Այս գրատուն զուրկ գոլով ի յատուկ պաշտպանողէ և միանգամայն անկեալ ի ձեռս ագիտաց՝ կայր անխնամ. մինչև բազմաց ընտիր մատենից ի կորուստ վարիլ և կիսոցն փտիլ. և այն՝ մինչև ցամն տեառն 1828, յորում ժամանակի եկեալ Մանուէլ

վարդապետ Կիւմիւշխանեցի ի Ղրիմոյ և տեսեալ զգրատունն յայնպիսի վիճակի խանգարման՝ եմոյծ զայն ի նորոգ կարգ և ի վայելչութիւն, աշխատակցութեամբ իմ և այլ երկուց վարդապետաց, ըստ հրամանի Ներսէս արքեպիսկոպոսի ...»:

Ինչքան է տևել այդ «կարգն ու վայելչությունը» որոշ չէ, բայց հայտնի է, որ 1837 թ., երբ Նիկոլայ I կայսրը այցելեց Էջմիածին, գրքերը դարձյալ խառնիխուռն, սնդուկների մեջ լցված, պահվում էին հանդերձատանը «թոզի մեջ շաղախված» (Աղ. Երիցյան, Ամ. հայ. կաթող. մասն Բ., 1895, էջ 441):

Դրանից հետո միայն, 1837 թվականին, Սինոդի հրամանով Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը զգալի աշխատանք է տանում Մատենադարանի կարգավորման գծով և կազմում է Էջմիածնում հավաքված ձեռագիր ու տպագիր գրքերի առաջին ցանկը, որը ռուսերեն ու ֆրանսերեն թարգմանություններով ու առաջաբանով լույս է տեսնում Պետերբուրգում, ակադ. Մարի Բրոսեի աշխատակցությամբ, 1840 թվականին (տե՛ս Каталог книгам Эчмиадзинской библиотеки նշված ցուցակը և Ս. Սեդրակյան, Հովհ. Եպս. Շահխաթունյանցի կենսագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 120 և հտ.): Այդ ցանկում համառոտակի թվարկված են 312 անուն ձեռագրեր:

Նույն Հովհաննես Շահխաթունյանը մեծ ջանք է գործ դնում Մատենադարանը հարստացնելու ուղղությամբ. 1838 թվականին եկեղեցական գործերով մեկնելով Շամախի, նա խնդրում է կաթողիկոսից և ստանում իր անվամբ կոնդակ այն մասին, որ հանձնարարված է իրեն վերադարձնելու պայմանով Էջմիածին բերել բոլոր այն ձեռագրերը «որ հարկաւոր դատեսցին մուծանելոյ ի տիպ, և կամ վասն հնութեանցն արժանաւորութեան առ համեմատութեան ընդ նոյնատեսակ մատենանս գրանոցի աթոռոյս»:

Նրա շնորհիվ Մատենադարանը հարստանում է բազմաթիվ նոր ձեռագրերով*:

Շահխաթունյանի կազմած և Բրոսեի հրատարակած համառոտ ցանկը, շատ պակասավոր լինելով, չէր կարող երկար ժամանակ բավա-

* Հ. Շահխաթունյանի գիտական վաստակի մասին տե՛ս նաև Պ. Հակոբյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 275-290 - **Խմբ.**:

բարել գիտության պահանջները, մանավանդ, որ ձեռագրերի քանակը Մատենադարանում տարեց տարի ավելանում էր: Ընդարձակ ու խնամքով պատրաստված ձեռագրաց ցուցակի կարևորության մասին ռուսական պաշտոնական անձինք մի քանի անգամ դիմումներ են անում կաթողիկոսներին: Այդ դիմումների մղումով 1860 թ. հոկտեմբերին Մատթեոս կաթողիկոսը հանձնարարում է գրադարանապետ Դանիել վարդապետ Շահնազարյանցին և երկու այլ վարդապետների՝ դասակարգել գրատան գրքերը և «կազմել սիստեմատիկ ցուցակներ և որոշել գրքերը ըստ լեզուների և տարիների, նշանակելով առանձնապես օրինակների հնությունն և բովանդակությունը»:

Այսպիսով կազմվում է և 1863 թվականին տպագրվում հրատարակչի անունով Կարենյան կոչված «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» ցուցակը, որի մեջ նկարագրված են 2340 ձեռագրեր:

Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի աճն ավելի մեծ ծավալ է ընդունում հետագա տասնամյակներում: Ազգային հնությունների, բանահյուսության, ժողովրդական ծեսերի ու սովորույթների նկատմամբ առաջացած ընդհանուր հետաքրքրության պայմաններում՝ ձեռագրերի պահպանման նկարագրության ու կենտրոնացման գործով սկսում են զբաղվել, մի շարք մշակութային ու եկեղեցական հաստատություններից բացի, նաև առանձին անհատներ:

Մեր ձեռագրական բաժնում պահպանված հին ցանկերի ու ցուցակների տվյալներով, 1863-1881 թթ. ընթացքում Մատենադարանը հարստանում է 331 արժեքավոր ձեռագրերով (դրանցից 88-ը պատկանում էին Տայքի ու Տփխիսի հանգուցյալ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, 89-ը՝ Կարենյան ցուցակի գլխավոր կազմող Դանիել եպիսկոպոսին, 82-ը՝ Սարգիս Ջալալյանին, 14-ը՝ Համազասպ քահանա Տեր-Ավետիքյանին, մնացածը՝ «աստի և անտի»):

1892 թվականին Մատենադարանում կար 3158 ձեռագիր:

1897 թվականին՝ 3338 ձեռագիր:

1906 թվականին՝ 3788 ձեռագիր:

Իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1913 թվականին՝ 4060 ձեռագիր:

Այս նույն տասնամյակներում ձեռագիր հավաքածուներ են ստեղծվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Կարինի Սանասարյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում, Նոր-Նախիջևանում, Պետերբուրգում և այլ վայրերում:

Էջմիածնի Մատենադարանի ճոխացման գործում մեծ ու գնահատելի աշխատանք են տանում բանասեր-հոգևորականներ Սահակ Ամատունին, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Գարեգին Հովսեփյանը և ուրիշներ: Ռուսաստանում և Եվրոպայի այլ երկրներում բարձրագույն կրթություն ստացած մի շարք բանասերներ 1880-ական թվականներից սկսած զգալի աշխատանք են կատարում նաև Էջմիածնի Մատենադարանի մեծարժեք ձեռագրերի ուսումնասիրման և հրատարակման ուղղությամբ:

Մատենադարանի պատմությունը նոր ու լուսավոր հունի մեջ է մտնում միայն Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակից՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից հետո:

ՀՍԽՀ Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով՝ բոլոր կուլտուր-կրթական հիմնարկությունների հետ մեկտեղ պետականացման է ենթարկվում նաև Էջմիածնի Մատենադարանը:

1921 թ. փետրվարի 5-ի դեկրետով հանձնարարվում է Լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանին Մատենադարանի բազայի վրա ստեղծել Կուլտուր-պատմական ինստիտուտ, որը «Նպատակ պիտի ունենա գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական մշակույթների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնությանց այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական և գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ մշակութային նոր արժեքների ստեղծագործության»:

Ինստիտուտում սկսված աշխատանքն ընդհատվեց փետրվարյան խռովության օրերին: Մատենադարանի պաշտպանության համար զենք վերցրած երիտասարդ գիտնական, Էջմիածնի մշակութային հիմնարկների կոմիսար Լ. Լիսիցյանին խռովարարները բանտարկում են, և նա սպանվում է 1921 թվականի փետրվարի 18-ին:

Մատենադարանում աշխատանքները վերսկսվում են խռովության վերացումից հետո. 1921 թվականի ընթացքում լույս են ընծայվում Կեղծ-Ճապուհ Բագրատունու Պատմությունը, Աբրահամ Խոստովանողի «Վկայք

Արևելից»–ը և այլ աշխատություններ, նյութեր են հավաքվում Էջմիածնի գիտ. ինստիտուտի «Բանբերի» համար (որի 1-2 միացյալ համարը լույս է տեսնում 1922 թ.), կազմակերպվում են մի շարք դասախոսություններ և այլն:

Սկսվում է նաև գրադարանի, արխիվային փաստաթղթերի և ձեռագրատան կարգավորումը:

Այս ժամանակ Մատենադարանում պահվում էին միայն 1915 թվականին Վասպուրականից (Վանից, Կտուցից, Աղթամարից և այլ վայրերից) բերված 1545 համար ձեռագրերը (որոնց շարքում ցուցակագրված էին նաև արաբատառ ձեռագրեր, հնատիպ գրքեր ու պատառիկներ), ինչպես նաև Թավրիզից ստացված 83 ձեռագրերը և Մատենադարանի կողմից ձեռք բերվածները՝ ընդամենը 1730 ձեռագիր:

Էջմիածնի Մատենադարանի բուն հավաքածուն, բաղկացած 4060 ձեռագրերից, այդ ժամանակ պահվում էր Մոսկվայի հայկական եկեղեցում:

Պետական Մատենադարանի վարչությունը 20-ական թվականներին զբաղված էր հիմնականում տարբեր վայրերից ձեռագրեր հավաքելու և ձեռագրական ֆոնդը, արխիվը և գրադարանը հարստացնելու կարևոր աշխատանքով:

1920-ական թվականներին Մատենադարանի վարչության, հատկապես Սենեքերիմ Տեր-Հակոբյանի եռանդուն գործունեության հետևանքով, Լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի օժանդակությամբ՝ Մոսկվայից ստացվում են պատերազմի ժամանակ այնտեղ տարված ձեռագրերը. Մատենադարանի ձեռագրական հավաքածուի մեջ են մուծվում նաև Լազարյան ճեմարանի 219 ձեռագրերը, Գևորգյան ճեմարանի 56 ձեռագրերը և մի շարք այլ, մեծ ու փոքր հավաքածուներ: Նոր թափ է ստանում Հայաստանի շրջաններից ձեռագրեր հավաքելու կարևոր աշխատանքը:

Ձեռագրեր են հավաքվում նաև ՀԽՍՀ Գրական թանգարանում (Գրական թանգարանի հավաքածուն – բաղկացած 1154 ձեռագրերից – 1938 թվականին միացվում է Մատենադարանին):

Հարյուրավոր ձեռագրերով հարստանում են նաև Մատենադարանի օտար լեզուներով ձեռագրերի, պատառիկների և հնատիպների ֆոնդերը,

այնպես որ այսօր[*]*, Մատենադարանի պետականացման 37-րդ տարում, ձեռագրական մեր հավաքածուն աճել է գրեթե երեք անգամ. մենք այժմ ունենք* 9690 հայերեն ձեռագիր, 675 օտար լեզուներով ձեռագիր, 1838 պատառիկ, շուրջ 3000 պահպանակ- պատառիկ, 155 հայերեն հմայիլ[**]:

Համապատասխանորեն աճել են նաև Մատենադարանի արխիվային, հին տպագիր գրականության, մամուլի ու գրադարանային բաժինները:

Այսպիսով, պարզ է դառնում, որ հարյուրամյակների պատմություն ունեցող մեր Մատենադարանն իսպառ քայքայման վիճակից դուրս է գալիս 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը, թոթափելով պարսից բռնապետական լուծը՝ մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ: Նա բուռն վերելքի ու զարգացման շրջան է ապրում միայն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Խորհրդային իշխանության տարիներին մեծ աշխատանք է տարվել Մատենադարանում նաև 1) ձեռագրերի պահպանման, բուժման ու վերանորոգման, 2) ձեռագրերի գիտական նկարագրության ու ցուցակագրման և 3) ձեռագիր բնագրերի հրատարակման ու ուսումնասիրության գծով:

Համառոտակի անդրադառնանք այդ բնագավառներին:

Հայկական ձեռագրերի չարքաշ ընդօրինակողները՝ միջնադարյան գրիչները, իրենց հիշատակարաններում, որոնց մեջ արժեքավոր տվյալներ էին հաղորդում ձեռագրերի արտագրման հանգամանքների ու ժողովրդի կյանքի ծանր պայմանների մասին, հաճախ դիմում են իրենց ապագա ընթերցողներին ու խնդրում լավ խնամք տանել ձեռագրերի նկատմամբ: «Ով, քահանայք, առաջինք և յետինք, լաւ խնամով պահեցէք և կարդացէք, զի գիրքն մարդոյ հոգի է և կեանք. իմ դատաստանն, թէ գրեանքս չէին նա աշխարհըս ամէն կռապաշտութին անկանէր» – գրում է Կարապետ գրիչը 1413 թվականին:

«Եւ ով ոք որ հանդիպի այսմ տառիս կարդալով, կամ տեսանելով,

[*] Խոսքը 1957 թ. նոյեմբերի 29-ին է վերաբերում – **Խմբ.**:

[**] Հավաքածուի ավելի հանգամանալի պատմությունը գրված է «Ցուցակ ձեռագրացի» (Ա հատ., 1965) ներածականում (հեղինակ Օ. Եգանյան): Տե՛ս նաև «Մայր Ցուցակի» (Հ. Ա., 1984) ներածությունը (հեղինակ՝ Աս. Մնացականյան) - **Խմբ.**:

կամ գաղափարելով, նախախնամելով պահեսցէ զգիրքս և լաթով բանեսցէ և մի իշխեսցէ զրոցէս պարապ թուղթ կարել» — խնդրում է նրան ժամանակակից Սամուել գրիչը:

«Եւ ով որ, — գրում է մի այլ գրիչ, — զպատուերքս ի տեղ պահէ, և խնամով և լաթով բանէ, և ձեթ և մոմ չկաթեցուցանէ՝ օրհնի յաստուծոյ» և այլն:

Իրենց գրքերի ապագա տերերին ուղղված այս հորդորները, դժբախտաբար, ցանկալի արդյունք քիչ էին տալիս: Միջնադարյան վանքերին կից գրատներում ու պահեստներում, խոնավության, վատ խնամքի ու անբարենպաստ պայմանների պատճառով, ոչնչանում ու ոչնչացվում էին հազարավոր ձեռագրեր:

Ծանոթանանք այս հայտարարությունը հաստատող մի-երկու փաստի հետ:

Գրիգոր Դարանաղեցին իր ժամանակագրության մեջ, խոսելով Երզնկայի մոտերքում գտնվող վանքերում պահվող ձեռագրերի մասին, գրում է. «Եւ բազում գրեանք (կան) ի յԵրկանի վանս, և ի Կալիփոսին, այլ նմանապէս և յԱւագն վանքն՝ այլ առաւելապէս: Բայց ի Լուսաւորիչն ոչ կայ այժմ. վասն ամայի անապատ լինելոյն և սաստիկ ձմերան ձեանն, որ վասն ահի թալանաւորացն ի յայրս և ի ծերպս վիմաց թաքուցանելով, յանկարծ ձիւնն ծածկելով և հողմոց հոսմանց զայրս և զծերպս լինելով և կորուսանելով զվարդապետական գրեանսն: Որպէս տեսի մէկ գիրք մեծ, որ այնչափ փտեալ էր և ապականեալ և ջնջեալ ամենայն գրոյ նշմարանքն, որ մէկ բան և գրոց չէր ընթեռնուիր, այնպէս էր կորեր և ջնջուեր նորա գրեանքն» (Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 510-511):

Վատ խնամքի հետևանքով ջնջվում էին հազարավոր արժեքավոր ձեռագրերի «գրոյ նշմարանքն» և նրանք կամ թաղվում էին հողի տակ, կամ էլ հրո ճարակ դառնում:

ԺԶ դարի կեսերին՝ «ի դառնութեան ժամանակիս, որ այլազգիքն կու նեղացնէին» Մշոյ սուրբ Կարապետի վանականները վանքի Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերը պահեցին «ի դարան սուրբ Կարապետին և անփոյթ արարին, զի զխաւար որ գոյր»: Տարիներ անցան և երբ կրկին բացին դարանը, տեսան, որ «փտեալ էր թէ գիրքեր ու թէ աստուածաշունչ ու թէ աւետարան, և կայր որ ի կարդալ չէր գալ՝ անփոփեցին ի հողն»:

Խոսելով այդ մասին, Սիմեոն սարկավագը, որ գրասեր մեկն էր, հողի տակից հանելով բերել է տալիս այդ գրքերը Համիթ և այն ինչ հնարավոր էր՝ նորոգում ու կրկին հանձնում է սուրբ Կարապետի վանքին:

Հրաշքով փրկված այդ ձեռագրերից է նաև Թորոս Ռոսլինին վերագրվող, հիասքանչ մանրանկարներ ունեցող Ավետարանը, որն այժմ պահվում է մեր Մատենադարանում N 9422-ի տակ: Նրա մանրանկարները քիչ են տուժել վանքի խոնավ դարանում և հողի մեջ պահվելուց. և եթե այսքան թանկագին ձեռագիրը վանքի վանականները հնարավոր են համարել թաղել հողի տակ, որպես արդեն «մահացած» ձեռագիր, ապա ինչպե՞ս կվարվեին նրանք սովորական, մանրանկարներ չունեցող ձեռագրերի նկատմամբ, ըստ ինքյան հասկանալի է:

Մեծաքանակ ու հնագույն ձեռագրերի անգետ վանականների կողմից ոչնչացվելու բազմաթիվ փաստերից ծանոթանանք վերջերս միայն հայտնի դարձած խիստ ողբերգական մի փաստի հետ: 1777 թ. Հաղբատի առաջնորդ է դառնում ոմն Աբրահամ Թեքիրդաղցի. սա իր «լպիրշ ու ագահ» սարկավագ Պողոսի միջոցով հանել է տալիս Ջրաղացի ձորի մեծ քարայրում պահվող անհամար ձեռագրերը: «Եւ ահա զայնչափ բազմութիւն մատենից, — գրում է դեպքերին գրեթե ժամանակակից մեկը, — չգիտեմ յի՞նչ պատճառս Աբրահամ վարդապետ ամսօրեայ ժամանակօք աշխատեալ ընդ սարկաւագի իւրում բովանդակ ի վայր իջուցանէ, և բերեալ ատ ի վանքս դնէ ի ներքնայարկն զանգատան. եւ յոչ բաւեալ տեղւոյն զբովանդակ առնել՝ լնու և յայլ զանազան տեղիս՝ ի խորանս և ի մառաննս. յորմէ օր ըստ օրէ ապականեալ, ցրուեալ և յափշտակեալ ի գողոց, և յամենեցունց, որոց մի անգամ հասին ձեռք. այժմ և ոչ տետրակ մի ի նոցունց երևի ...

Ասի յականատեսից, թէ վերոյիշատակեալ Պետրոս սարկաւագ ըզյոլովս ի մատենից անտի, որ փտեալք էին ըստ մասին, կամ ցրուեալք ի թերթս թերթս և ի տետրակս, ժողովեալ առ հասարակ հանդէպ զանգատան գրան՝ իբրեւ տասն կամ երկոտասան ոտնաչափ թանձրութեամբ, հուր էարկ եւ այրեաց զամենայն իբրեւ զանպիտան» («Բազմավէպ», 1956, էջ 109-110):

Այսպիսով, բարբարոսաբար ոչնչացվում են միջնադարյան հայկական մշակույթի ամենախոշոր օջախներից մեկի՝ Հաղբատի մեծահարուստ մատենադարանի ձեռագրական գանձերը:

Տխուր փաստ ունենք նաև Էջմիածնի մատենադարանի և արխիվի պատմական արժեք ներկայացնող բազմաթիվ փաստաթղթերի դառնացուցիչ ոչնչացման մասին: 1821 թվականին, երբ Եփրեմ կաթողիկոսը գտնվում էր Հաղբատի վանքում, Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ Էջմիածնից Հաղբատ են տարվում երեք բեռ փաստաթղթեր: Դրանց «արժեքավորումն» ու «ընտրությունը» հանձնվում է մի քանի երիտասարդ սարկավագների (որոնց թվում նաև Մ. Թաղիադյանին). նրանց հանձնարարվում է ընտրել ու պահել միայն պարտամուրհակները, կալվածագրերը և նման կարգի թղթերը, որոնք տնտեսական նշանակություն ունեին («յորս գտանէաք գիրս ու գնչին գրամոց»), իսկ ողջ մնացածը, տարիներ հետո դառնորեն ու մեծ ափսոսանքով հիշում է Մ. Թաղիադյանը, «ժողովեալ ի հուր՝ յաճախ գատէաք» («Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 333-334):

Վերն առիթ ունեցանք նշելու, որ Պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո որոշ քայլեր են արվում Էջմիածնի Մատենադարանի գանձերի պահպանման գործը բարվոքելու ուղղությամբ:

1837 թվականին ընդարձակում են գրատունը, միացնելով նրան երկու գմբեթաբաժին, որով և հնարավորություն է ստեղծվում իրար վրա սեղմված գրքերը դասակարգել ըստ բովանդակության՝ առանձին բաժիններով: Այս մասին Հովհաննես Շահխաթունյանը գրում է. «… Այլ գոլով տեղին տակաւին փոքր՝ գրեա թէ ի վերայ միմեանց կուտակեալ կային մատեանքն. վասն որոյ յանցեալ 1837 ամի զերկու գմբեթաբաժին տեղի ես ի համբարանոցէն՝ որ կից յարեւելից նորա, բաժանեալ միացուցին ընդ այս գրանոց, և եղև երկու յարկ գրանոցն և ընդարձակեցաւ տեղի մատենիցն, ուստի և մատեանքն նոր ի նորոյ կարգադրեցան ըստ նիւթոյն՝ ի մետասան բաժինս …»:

Սակայն նույնիսկ այս միջոցառումներով ձեռագրերի պահպանման գործը շատ հեռու էր դեռևս բավարար համարվելուց: Մատենադարանը հանձնված էր այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք, ինչպես հայտնում է Սահակ Ամատունին 1892 թվականին. «Կուտեցին ի գլուխ Մատենադարանին զվնաս մեծ՝ մերկացուցանելով զայն ի բազում պիտանի մատենից, որք տարապարտ ի կորուստ գնացին է զի ի ձեռս օտար և անբարեխիղճ արանց, և է զի ի ձեռս իսկ հսկողաց Մատենադարանին»:

Ձեռագրերի պահպանման համար նորմալ պայմաններ ստեղծելու

գործով անցյալում ևս մտահոգվողներ եղել են: Ձեռագրերը, մինչև 1910 թվականը Էջմիածնում պահվում էին այնպիսի մի շենքում, որը ոչնչով չէր հարմարեցված համաշխարհային նշանակություն ունեցող մշակութային արժեքների պահպանման համար: Ձեռագրերը փչանում էին և՛ խոնավությունից, և՛ թուղթ ոչնչացնող միջատներից ու միկրոբներից: Այդ մասին հետաքրքրաշարժ տեղեկություններ է հաղորդում Ն. Մառը 1893 թվականի մայիսի 8-ին Գ. Տեր-Մկրտչյանին գրած նամակում: Նա գրում է. «… Ի մասնավորի Էջմիածնա Մատենադարանի վերաբերմամբ պիտի ասեմ, որ նրա ներքին կողմ չէ համապատասխան լուսավորված. և համոզված եմ, որ չլուսավորված կողմը պահվող ձեռագիրներն ամենամեծ վնաս են կրում, մանավանդ պատի մեջ հարմարված խոնավ պահեստների մեջ: Վերջիններից հարկավոր է ձեռագիրներն տեղափոխել առանձին պատրաստված պահարանները. իսկ երբ ակնարկված պատերը պարապ կմնան (Հագարապատին կողմը) պատերին մեջ լուսամուտները պատրաստել, որ վնասակար խարամանի սերունդ ճճի, ցեցեր և այլն՝ անհետացած և ջնջված լինեն ի սպառ, զորությամբ բարի արամազդական լույս և արեգակին:

Ավա՜ղ, որ ես տկար եմ և անընդունակ գոնեա հիմա փոքր լումայով ամենասիրելի Մատենադարանին հօգնութիւն հասնել. մի քանի հարյուրակ բավական է բոլորովին չար Ա(հ)րիմանի ձեռքից փրկելու (համար) այն թանգարանը, որի իսկական արժեքը գնահատել միայն ապագային է թողյալ»: (Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. N 218, վավ. 16):

Հայկական ձեռագրերը «չար Ահրիմանի ձեռքից փրկելու» մտահոգությամբ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներում գրվում են հոդվածներ, խոսվում է նաև այն մասին, որ Մատենադարանի համար անհրաժեշտ է կառուցել հատուկ շենք: Ի վերջո, 1910 թվականին Էջմիածնում կառուցվում է այն շենքը, որը կանգուն է մինչև օրս: Այստեղ ձեռագրերը պահվում են մինչև 1939 թվականը – մինչև Մատենադարանի տեղափոխումը Երևան:

Չնայած այն բանին, որ 1910 թվականին Էջմիածնում կառուցված շենքը նախագծվել էր հատուկ Մատենադարանի համար, սակայն ձեռագրերի պահպանմանը հատկացված դահլիճը՝ իր չափերով ու դիրքով բնավ հարմար չէր այդ նպատակին: Այն գտնվում էր շենքի ամենախոնավ ու արև

չտեսնող մասում, զուրկ էր օդափոխության տարրական միջոցներից և այլն:

Ձեռագրերի պահպանման գործը պատշաճ բարձրության վրա դնելու մտահոգությամբ՝ Հայաստանի կառավարությունը 1939 թվականին Մատենադարանը Էջմիածնից տեղափոխեց Երևան, ժամանակավորապես հատկացնելով նրան Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանի նորակառույց շենքի 2-րդ հարկի մի մասը և վերին հարկը գրեթե ամբողջությամբ: Միայն այստեղ՝ Երևանում հնարավորություն ստեղծվեց ձեռագրերի պահպանությունը կազմակերպել գիտական սկզբունքներով: Ձեռագրերը տեղադրվեցին մի մեծ, օդառատ ու չոր սրահում, որտեղ օդի ջերմաստիճանը և հարաբերական խոնավությունը միայն չնչին տատանումներ են տալիս ձեռագրերի պահպանության համար գիտության կողմից մշակված օրինակելի նորմերից:

Նոր շենքում բավարար պայմաններ ստեղծվեցին նաև Մատենադարանի արխիվային բաժնի տասնյակ հազարավոր փաստաթղթերի, հնատիպ գրքերի, մամուլի և գրականության պահպանման համար. առաջին անգամ Մատենադարանի դարավոր պատմության մեջ՝ ստեղծվեց միկրոբիոլոգիական, քիմիական ու լուսանկարչական լաբորատորիա և կազմատուն՝ քայքայված ու հիվանդ ձեռագրերի բուժման ու վերանորոգման, արժեքավոր ձեռագրերի լուսանկարման և անկազմ ձեռագրերը կազմելու նպատակներով:

Այդ լաբորատորիան իր գոյության 17 տարիներում խոշոր աշխատանք է տարել ձեռագրերի ու փաստաթղթերի երկարակեցությունն ապահովելու ուղղությամբ:

Բոլոր ձեռագրերը ենթարկվել են թերթային մաքրման և ախտահանման: Հիվանդ ձեռագրերից շատերը բուժվել են գիտության կողմից մշակված սկզբունքներով, հույժ քայքայված, վարակված թղթյա ձեռագրերից մի քանիսը ամրացվել են ժելատինային լուծույթով և շուրջ 120 ձեռագրեր դուրս բերվել ցեմենտացված վիճակից ու վերանորոգվել: Միկրոբիոլոգիական լաբորատորիան փորձեր է կատարում թղթի քայքայում առաջացնող միկրոօրգանիզմների դեմ էֆեկտիվ պայքար կազմակերպելու ուղղությամբ, զբաղվում է հին կազմերի չորացած կաշիների էլաստիկությունը վերականգնելու և բազմաթիվ այլ գործնական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքներով:

Հարյուրավոր անկազմ ու կազմահան ձեռագրեր և հազարավոր տպագիր գրքեր կազմվել են Մատենադարանը Էջմիածնից Երևան տեղափոխելուց հետո և այլն:

Այսպիսով, այսօր, մենք առանց չափազանցության կարող ենք արձանագրել, որ համաշխարհային մշակույթի գանձարանում իրենց պատշաճ տեղը գրավող հայերեն ձեռագրերի կորստից փրկելու և դրանց պահպանման համար նորմալ պայմաններ ստեղծելու մեծ միջոցներ ու ջանքեր պահանջող աշխատանքները գիտական հիմքերի վրա դրվեցին միայն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Խորհրդային կառավարությունը, ըստ արժանվույն գնահատելով հայերեն ձեռագրերի գիտական նշանակությունը, պատրաստում է մեզ համար մի նվեր, որին երազել անգամ չէին կարող անցյալի մեր մշակույթի գործիչներն ու գրասեր հասարակայնությունը:

Մեր մայրաքաղաքի ամենաաչքի ընկնող տեղերից մեկում բարձրացել է արդեն բազալտե մի կոթող՝ ապագա Մատենադարանի շենքը, որտեղ ձեռագրերի պահպանման և ուսումնասիրության համար ստեղծվում են առաջնակարգ պայմաններ:

Մի քանի խոսք ձեռագրերի գիտական նկարագրության և ցուցակագրման աշխատանքների մասին:

Միջնադարյան մի գրիչ իրավացիորեն նկատել է, որ «Գիրք փակեալ կուրք են»: Զարքաշ գրիչներից շատերն են մտածել այդպես. իրենց հիշատակարաններում բազմիցս նշելով, որ «եթէ խնդրեսցեն զսա վասն կարդալոյ կամ օրինակելոյ, մի խնայեսցին, վասնզի զսա այսր աղագաւ եմ գրել, զի ամենեքեան օգտեսցին»:

Գրքերը և արխիվային փաստաթղթերը կույր չդարձնելու, մեր ձեռագրական ֆոնդերը գիտական հասարակայնության օգտագործմանը հանձնելու համար մեր ժամանակներում խիստ անհրաժեշտ են բարձրորակ ցուցակները, նկարագրություններն ու անոտացիաները:

Արդեն ասացինք, որ Էջմիածնի Մատենադարանի միակ ցուցակը, 1863 թվականին լույս ընծայված ցուցակն է եղել, որտեղ համառոտակի և բազմաթիվ սխալներով թվարկվել են այն ժամանակ Էջմիածնում գտնվող ընդամենը 2340 ձեռագրերը: Այն կոչվում է «Մայր ցուցակ», սակայն, ըստ էության, համառոտ ցանկից ավելի տվյալներ չի պարունակում:

1864 թվականին, լինելով Պետրոպավլովյան բերդի կալանավոր, հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանը զգալի աշխատանք է կատարել Կարենյան «Մայր ցուցակի» հիման վրա Էջմիածնի Մատենադարանի ձեռագիր նյութերի ուղեցույց սիստեմատիկ ցուցակ կազմելու գծով: Այդ նպատակով նա լրացրել է 371 քարտ, յուրաքանչյուրի վրա գրելով ձեռագրերում հանդիպող հեղինակների անունները (ինչպես նաև գիտության տարբեր բնագավառների վերնագրեր), և տվել է այն ձեռագրերի համարները, որոնցում ընդօրինակված են տվյալ հեղինակի աշխատանքները: Դժբախտաբար, Նալբանդյանի աշխատանքն անավարտ է մնացել. նրա կազմած քարտերը, որոնք այժմ պահվում են ՀՍՍՌ Գրականության թանգարանում (Նալբանդյանի արխիվ, թղթ. N 22), վկայում են, թե հայագիտության զարգացման համար որպիսի նշանակություն է վերագրել Նալբանդյանը հայերեն ձեռագրերի թեմատիկ ցուցակներին (Մ. Ավդալբեգյան «Բանասիրական ճշգրտումներ», «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1957, N 1, էջ 97-100):

Ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի ցուցակագրման ու նկարագրման աշխատանքները Մատենադարանում գիտական հիմքերի վրա դրվեցին Մատենադարանի պետականացումից հետո:

Տարիների համառ աշխատանքի շնորհիվ այժմ Մատենադարանն իր ֆոնդերից օգտվողների տրամադրության տակ է դրել մի շարք ցուցակներ, մատենագիտական ուղեցույցներ, անոտացիաներ ու քարտարաններ:

Համառոտակի թվարկենք դրանք:

Ձեռագրական բաժին

1) Բոլոր ձեռագրերը նկարագրված են գույքամատյաններում: Յուրաքանչյուր ձեռագրի նկարագրության մեջ տվյալներ են տրված ձեռագրի թերթերի քանակի, մեծության, նյութի, կազմի, վիճակի, գրության ժամանակի, վայրի, գրչի, ստացողի և նորոգողի մասին: Տրված է նաև ձեռագրի վերնագիրը, եթե այն պարունակում է մի բնագիր, և համառոտակի, միայն կարևոր նյութերի թվարկումը, եթե ձեռագիրը ժողովածու է այլևայլ բնագրերի:

2) Բացի վերոհիշյալից, ձեռագրերն ունեն մայր քարտեր, նույն տվյալներով:

3) Ստեղծվել են պատմագրության, փիլիսոփայության, քերականագիտության, աշխարհագրության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական չափածո գրականության, գեղարվեստական արձակի և այլ գիտությունների վերաբերող ուղեցույց ցուցակներ:

Թվարկված ցուցակներից յուրաքանչյուրում այբբենական դասավորությամբ գրված են այն հեղինակների անունները, որոնցից աշխատություններ են հասել՝ գիտության տվյալ մասնաճյուղին վերաբերող: Այնուհետև, հեղինակի մասին համառոտ տեղեկություններից հետո, թվարկվում են նրա աշխատությունները և այն ձեռագրերի համարներն ու էջերը, որոնցում ընդօրինակված են խնդրո առարկա աշխատությունները:

Մատենագիտական ուղեցույց այդ ցուցակները մեծ չափով օգնում են Մատենադարանի ձեռագրերն ուսումնասիրող մասնագետներին, և նրանք, առանց ժամանակի կորստի, հեշտությամբ կարողանում են գտնել իրենց հետաքրքրող նյութերը շուրջ 10 հազար ստվարածավալ ձեռագրերի մեջ:

Այս ցուցակներից մեկը՝ փիլիսոփայական գրականության ցուցակը՝ արդեն լույս է տեսել և ըստ արժանվույն գնահատվել կենտրոնական ու տեղական մամուլում:

4) Ստեղծվել են նաև ճառընտիրների ու Գանձարանների մեջ եղող նյութերի ցուցակներ, ինչպես նաև ցուցակ ծիսական գրքերի (Ավետարաններ, Հայսմավուրքներ, Մաշտոցներ և այլն):

5) Ուսումնասիրողները մեծ չափով օգտագործում են նաև ձեռագրերի նյութերի ընդարձակ քարտարանը, որտեղ նույնպես քարտերը դասավորված են ըստ գիտության մասնաճյուղերի, ինչպես և ձեռագրերի ժամանակագրական քարտարանը:

Արխիվային բաժին

1) Արխիվային բաժինն ունի իր ֆոնդերի ուղեցույց ցանկը և 2) բոլոր ֆոնդերի (Կաթողիկոսական, Երիցյանի, Անհատական արխիվների, Լազարյանների արխիվի, Սինոդի և այլն) փաստաթղթերի անոտացիոն ցուցակները:

Այս ցուցակներում նկարագրված են ու անոտացիայի ենթարկված արխիվային բոլոր փաստաթղթերն առանձին-առանձին: Այնպես, որ ուսում-

նասիրողը միայն այս ցուցակները ձեռքի տակ ունենալով, առանց փաստաթղթերի դիմելու, հեշտությամբ գտնում է շուրջ 200.000 արխիվային փաստաթղթերի ծովում իրեն հետաքրքրող հարցերին վերաբերող նյութերը[2]*:*

Աշխատելով Մատենադարանի արխիվում, ակադ. Ե. Տարլեն 1944 թվականին Մատենադարանի այցելուների մատյանում այս ցուցակների մասին գրել է. «Շատ արխիվներ կարող էին սովորել այստեղ զարմանալի խելացի ու լրիվ այսպիսի գույքամատյաններ կազմելու գործը»:

3) Արխիվային բաժինը ստեղծել է նաև իր նյութերի թեմատիկ քարտարանը, որը սակայն, մեծ չափով լրացման ու ճշտման կարիք է զգում:

Գրադարան և մամուլի բաժին

Գրադարանն ու մամուլի բաժինն ունեն.

1) Գույքամատյաններ:

2) Հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով բոլոր գրքերի, օրաթերթերի և ամսագրերի ցուցակներ ու քարտարաններ:

3) Հնատիպ գրքերի մանրամասն տվյալներով մայր քարտեր ու ցուցակ:

Վերջերս սկսված են աշխատանքներ, հայագիտական գրքերի ուղեցույց կազմելու գծով:

Մենք թվարկեցինք այստեղ՝ Մատենադարանում գոյություն ունեցող ցուցակներից ու քարտարաններից միայն կարևորները: Այս թռուցիկ թվարկումն իսկ ցույց է տալիս, որ Մատենադրանի ֆոնդերի նկարագրության ու ցուցակագրման գծով խորհրդային իշխանության տարիներին զգալի աշխատանք է տարվել:

Կատարված այդ աշխատանքի շնորհիվ է մասամբ, որ մեր

[2] Պետ. Մատենադարանի արխիվային բաժնի հիմնական ֆոնդերն են.
Կաթողիկոսական դիվան – պարունակում է 35.761 վավերագիր.
Անհատական արխիվներ – պարունակում է 36.743 վավերագիր.
Մշակութային հիմնարկների ֆոնդ – պարունակում է 17.120 վավերագիր.
Էջմիածնի սինոդի ֆոնդ – պարունակում է շուրջ 100.000 գործ և վավերագիր.
Արխիվային բաժնի ֆոնդերը տարեց տարի ճոխանում են նոր ձեռք բերվող վավերագրերով:

ձեռագրական գանձերը դադարել են «կույր» լինելուց և մեծ չափով նպաստել են հայագիտության զարգացմանը:

Բնագրերի հրատարակման և ուսումնասիրման գծով մինչև պետական հոգածություն ցուցաբերելը, Հայաստանում զբաղվում էին անհատ մարդիկ, իրենց ձեռներեցությամբ, հաճախ մեծ զրկանքներ ու դժվարություններ հաղթահարելով:

Ստեփանոս Մալխասյանցը նշանավոր բանասեր Նորայր Բյուզանդացուն 1903 թ. դեկտեմբերի 30-ին գրած նամակում, խոսելով «Պատմագիրք հայոց» մեծարժեք շարքի հրատարակիչ-բանասերների առջև ծառացած նյութական դժվարությունների մասին, հայտնում է, որ նրանք «մայրենի հին գրականության օգտին ու պատվին նվիրվելով և հանգանակության ու մուրացկանության միջոցով դրամ հավաքելով» մեծ զրկանքներով են միայն կարողանում աշխատել հայագիտության բնագավառում:

Արժե ծանոթանալ նաև Ն. Բյուզանդացու նամակին (տե՛ս «Մշակ», 1904, N 254, Ստ. Մալխասյանցի «Մոռացվա՞ծ թէ ոչ» հոդվածը), որտեղ ծերունի ու բազմավաստակ բանասերն ի միջի այլոց գրում էր. «Արդարև գրեթե 45 տարի է, որ պարապած եմ և կպարապիմ հայերէն մատենագրութեան և լեզուի, «ամբողջ կեանքս մաշեցուցած եմ» (ձեր իսկ խօսքերով) զմեր հին հեղինակաց աղաւաղեալ բնագիրներն հարդարելու և լուսաբանելու: Անընդհատ և անխոնջ աշխատութեանս պտուղն եղած Է ընդ ամենայն երկու հազար երկու հարիւր (2.200) ֆրանկ»[*]*:*

Այսպիսի պայմաններում, բնականորեն, Էջմիածնի Մատենադարանի ձեռագրական գանձերի հրատարակության և ուսումնասիրման գծով զբաղվում էին միայն մի քանի էնտուզիաստ բանասերներ և նրանց աշխատանքը պատահական ու միակողմանի բնույթ էր կրում:

Հայագիտության համար մեծ նշանակություն ունեցավ «Պատմագիրք հայոց»-ի գիտական բնագրերի շարքի հրատարակման ուղղությամբ անցյալի մեր նշանավոր բանասերների կողմից կատարված աշխատանքը:

[*] Անվանի հայագետը, ցավոք, ունեցած պատկառելի խնայողությունը (147 հազար ֆրանկ) չհատկացրեց իր իսկ աշխատությունների հրատարակությանը (ավելի մանրամասն տե՛ս Ա. Բախչինյանի «Հայաստան-Սկանդինավիա» գիրքը, Երևան 2003, էջ 157-168) - **Խմբ.**:

Ստ. Մալխասյանցի, Մ. Աբեղյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Ս. Կանայանցի, Ս. Հարությունյանի անձնվեր ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ հրատարակել Ղազար Փարպեցու (1904), Ագաթանգեղոսի (1909) և Մովսես Խորենացու (1913) Պատմությունների գիտական բնագրերը:

Գալուստ Տեր-Մկրտչյանի «Արարատ»-ի էջերում և առանձին բրոշյուրներով լույս ընծայեց Անանիա Շիրակացու և այլ հեղինակների մի շարք աշխատությունները, հանգուցյալ ակադեմիկոսներ Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը լույս ընծայեցին «Հայոց նոր վկաները» ստվարածավալ ու արժեքավոր ժողովածուն, Կ. Տեր-Մկրտչյանը և Ե. Տեր-Մինասյանը հայտնաբերեցին և հրատարակեցին վաղ շրջանի եկեղեցական պատմության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող աստվածաբանական մի-երկու կարևոր բնագրեր (Իրինէոս, Տիմոթէոս Կուզ, Կնիք հաւատոյ և այլն), արժեքավոր հրատարակություններ տվեցին նաև Ն. Մառը, Մ. Տեր-Մովսիսյանը, Գյուտ Աղանյանցը և ուրիշներ:

Սակայն կատարվածը չնչին մի բան էր Մատենադարանի ձեռագրերի ընձեռած հնարավորությունների հետ համեմատած:

Անչափ դժվար է մեկ հաղորդումով թեկուզ և ընդհանուր գաղափար տալ այն մասին, թե ինչ հսկայական աշխատանք է տարվել Մատենադարանի նյութերի հրատարակման և ուսումնասիրման գծով այս վերջին տարիներին:

Մատենադարանի նյութերի հիման վրա հրատարակված բնագրերի, հոդվածների և ուսումնասիրությունների քանակը, ոչ լրիվ տվյալներով, անցնում է 600-ից: Բացի տպագրված աշխատություններից, մեր նյութերի հիման վրա գրվել են տասնյակ արժեքավոր դոկտորական ու թեկնածուական դիսերտացիաներ, որոնց մի մասը, չպետք է կասկածել, նույնպես հրատարակվելու են առաջիկայում:

Հիշատակենք հայ հին ու միջնադարյան այն պատմիչներին, որոնց երկերի գիտական հրատարակությունները լույս ընծայվեցին խորհրդային իշխանության տարիներին: Դրանք են՝ Կորյուն, Եղիշե, Սեբեոս, Հովհ. Մամիկոնյան, Կեղծ-Շապուհ, Վրաց պատմություն, Զաքարիա Ագուլեցի, Աբրահամ Երևանցի և այլն: Եթե սրանց ավելացնենք 13-18-րդ դարերի 62 (35+27) ժամանակագրական մանր բնագրերը, որոնք զետեղված են «Մանր ժամանակագրություններ» խորագիրը կրող ստվարածավալ 2 հա-

տորների մեջ, ինչպես նաև 14 և 15-րդ դարերի հիշատակարանների ժողովածուները, ապա պարզ կլինի այն գնահատելի աշխատանքը, որ կատարվել է պատմագրական սկզբնաղբյուրների հրատարակության գծով հեղափոխությունից հետո:

Ամենակարևորը, սակայն, այն է, որ Մատենադարանի ձեռագրերը, որոնց ուսումնասիրությամբ անցյալում զբաղվում էին միայն հայագետ-բանասերները, խորհրդային տարիներին գրավեցին նաև մեծ թվով փիլիսոփաների, կերպարվեստագետների, երաժիշտների, բժիշկների, քիմիկոսների, մաթեմատիկոսների և գիտության այլ ճյուղերի պատմությամբ զբաղվող տասնյակ գիտնականների ուշադրությունը:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ հայկական ձեռագրերը նոր միայն սկսեցին ծառայել գիտությանը իրենց անսպառ հնարավորությունների չափով:

Հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ, որոնք նոր լույս են սփռում միջնադարյան գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների վրա, դրանցից են, օրինակ, Անանիա Շիրակացու, Սարկավագի և այլ հեղինակների տիեզերագիտական, մաթեմատիկական ու տոմարագիտական աշխատությունները (հրատարակիչներ Ա. Աբրահամյան, Գ. Պետրոսյան, Լ. Սիմյոնով և այլք), Թեոնի, Զենոնի, Հերմեսի, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական աշխատություններն ու մեկնությունները (Հ. Մանանդյան, Վ. Չալոյան, Ս. Արևշատյան և այլք), Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» մեծարժեք բնագիրը, ինչպես և բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ բժշկության պատմության տարբեր բնագավառների մասին (Ստ. Մալխասյանց, Լ. Հովհաննիսյան, Գ. Հարությունյան, Ա. Կձոյան, Խ. Մելիք-Փարսադանյան և այլք), ալքիմիայի պատմությանը վերաբերող աշխատություններ (Կ. Ղաֆադարյան, Տ. Ղազանչյան, Ա. Հարությունյան), միջնադարյան հայ մանրանկարչության պատմության մասին կարևոր ուսումնասիրություններ (Լ. Դուռնովո, Աս. Մնացականյան, Սվիրին, Ռ. Դրամբյան, Նիկոլսկայա, Տ. Իզմայլովա և այլք), երաժշտության, խաղագիտության ու թատրոնի պատմության տարբեր էտապները լուսաբանող աշխատություններ (Գ. Լևոնյան, Ռ. Աթայան, Գ. Գոյան և այլք) և բազմաթիվ այլ բնագրեր ու հետազոտություններ:

Մեծ աշխատանք կատարվեց նաև միջնադարյան նշանավոր բանաստեղծների ու արձակագիրների թողած հարուստ ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գծով: Լույս տեսան Ֆրիկի, Հովնաթան Նաղաշի, Սայաթ-Նովայի և այլ բանաստեղծների ստեղծագործությունների գիտական բնագրերը, Մխիթար Գոշի առակները, «Գուսանական ժողովրդական երգեր» և «Միջնադարյան հայկական ժողովրդական երգեր» արժեքավոր ժողովածուները (Մ. Աբեղյան, Աս. Մնացականյան, Շ. Նազարյան, Է. Պիվազյան և այլք) ու բազմաթիվ այլ բնագրեր ու հետազոտություններ:

Զգալի աշխատանք տարվեց նաև արխիվային փաստաթղթերի հրատարակության և ուսումնասիրության գծով. լույս տեսան «Կալվածագրեր» և «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» (պրակ I) ժողովածուները և բազմաթիվ վավերագրեր՝ Աշ. Հովհաննիսյանի, Արգ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի և ուրիշների գիտահետազոտական բնույթի աշխատություններում:

Ուրախալի է նշել, որ բնագրերի ու ուսումնասիրությունների հրատարակության աշխատանքով հանրապետության այլ գիտական հաստատությունների հետ մեկտեղ զբաղված է նաև Մատենադարանի փոքրաթիվ կոլեկտիվը:

Թվարկված կարևոր հրատարակությունների մի զգալի մասը կատարվել է Մատենադարանի աշխատակիցների կողմից կամ նրանց գործուն մասնակցությամբ: Մատենադարանի աշխատակիցներից շատերը աճել ու դարձել են ճանաչված բանասերներ (Աս. Մնացականյան, Շ. Նազարյան), իսկ երիտասարդ աշխատակիցների մեջ կան կարող ուժեր, որոնք զբաղվում են և առաջիկայում ավելի մեծ չափով պետք է զբաղվեն աղբյուրագիտական ու բանասիրական հետազոտություններով (Կ. Յուզբաշյան, Ս. Քոլանջյան, Մ. Մխիթարյան, Ս. Լալաֆարյան, Գ. Աբգարյան, Ռ. Աբրահամյան և այլք):

Մատենադարանի գիտական հասունության մասին վկայում են «Մատենադարանի բանբերի» հրատարակված 3 գրքերը, ինչպես նաև այս՝ 4-րդ գիրքը:

Պայմանագրային կարգով Մատենադարանի հետ սերտ կապված են մի շարք անվանի գիտնականներ: Նրանց ու Մատենադարանի աշխա-

տակիցների ջանքերով հրատարակության են պատրաստվում կարևոր բնագրեր և հետազոտություններ, որոնցից են Կիրակոս Գանձակեցու «Պատմության» գիտական բնագիրը (կազմող՝ Կ. Մելիք-Օհանջանյան), Մովսես Կաղանկատվացու «Պատմության» գիտական բնագիրը (կազմող՝ Վ. Առաքելյան), Արիստոտելի «Կատեգորիաների» 6-րդ դարի անանուն մեկնության բնագիրը (կազմողներ՝ Վ. Չալոյան, Ս. Լալաֆարյան և Ս. Արևշատյան), Մատենադարանի պարսկերեն հրովարտակների 2-րդ պրակը (կազմող՝ Հ. Փափազյան), Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկը (կազմող՝ Հ. Անասյան), Վարդան Այգեկցու առակների գիտական բնագիրը (կազմող՝ Է. Պիվազյան) և մի շարք այլ բնագրեր:

Թվարկվածով, անշուշտ, չեն սպառվում Մատենադարում հրատարակության պատրաստվող բնագրերը, սակայն նրանց մասին խոսելու փոխարեն փոքր՝ ինչ կանգ առնենք առաջիկա տարիներին Մատենադարանում կատարվելիք ամենակարևոր ու հրատապ աշխատանքների վրա:

Մեր Մատենադարանը դեռևս չունի իր ձեռագրերի տպագիր Մայր ցուցակը: Գոյություն ունեցող և մեր կողմից վերը թվարկված ցուցակներն ու մատենագիտական ուղեցույցները մեծ չափով դյուրացնում են գիտնականների աշխատանքը, սակայն նրանք բնավ չեն կարող փոխարինել Մայր ցուցակին:

Ձեռագրերի մանրամասն ցուցակ կազմելու անհրաժեշտությունը զգացվում է վաղուց ի վեր, և մենք առաջիկայում, ստանալով գիտական աշխատողների համապատասխան հաստիքներ, մեր հիմնական ուժերը պետք է կենտրոնացնենք ձեռագրերի Մայր ցուցակի ստեղծման աշխատանքների վրա[*]:

Խոշոր և տեխնիկապես հագեցված գրադարաններում վաղուց ի վեր կիրառվում է ձեռագրերի ու տպագիր գրքերի միկրո-ֆոտո պատճենահանումը: Ձեռագրերի կյանքը երկարացնելու նպատակով մենք աստիճանաբար պետք է պատճենահանենք միկրո-ֆոտոյի միջոցով նաև մեր բոլոր արժեքավոր ձեռագրերը: Այս աշխատանքը, սակայն, մեզ մոտ կատարվում

[*] Անտեղի քաշքշուկների ու բանավեճերի, ապա Լ. Խաչիկյանի վաղաժամ մահվան պատճառով (1982) Մայր ցուցակի ստեղծման աշխատանքները սպասելի ընթացք չունեցան – **խմբ.**:

է կուսակր ձևով, լուսանկարչական վատորակ ու հնացած ապարատներով, ուստի ցանկալի արդյունք չի տալիս: Առաջիկայում ամեն ջանք պետք է գործ դրվի համապատասխան սարքավորումներ ձեռք բերելու և ձեռագրերի լուսանկար-պատճենահանման գործը պատշաճ բարձրության վրա դնելու համար:

Հայտնի է, որ մեզ հասած շուրջ 25 հազար հայերեն ձեռագրերի կեսից ավելին գտնվում է մեր հանրապետության սահմաններից դուրս, մեծ մասամբ արտասահմանյան երկրներում (Երուսաղեմ, Իտալիա, Ավստրիա, Իրան և այլն):

Միջնադարյան շատ հեղինակների ու բնագրերի ուսումնասիրության համար Հայաստանից դուրս գտնվող ձեռագրերը կարևոր, երբեմն վճռական, նշանակություն ունեն: Ուստի, մենք պետք է ավելի լավ իմանանք հայերեն ձեռագրերի այլ հավաքածուների բովանդակությունը և անհրաժեշտության դեպքում կարողանանք ստանալ կարևոր բնագրերի լուսանկար-պատճենները:

Այս ուղղությամբ որոշ աշխատանք մեզ մոտ կատարված է: Այժմ մենք ունենք Վրաց թանգարանի ձեռագրական բաժնի* 240 հայերեն ձեռագրերի մանրամասն ցուցակը (կազմել է մեր աշխատակից Ս. Լալաֆարյանը), Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվի շուրջ 50 ձեռագրերի ցուցակը (մեր հանձնարարությամբ կազմել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը և տպագրվում է «Բանբերի» այս համարում), ունենք նաև տվյալներ Բաքվում, Մոսկվայում և Լենինգրադում պահվող հայերեն ձեռագրերի մասին և այլն: Սակայն շատ քիչ բան գիտենք հայկական ձեռագրերի արտասահմանյան այն հավաքածուների մասին, որոնց ցուցակները կամ բնավ չեն հրատարակվել, կամ էլ հրատարակվել են թերի**:

Անտարակույս, միջոցներ պետք է գտնել այս թերությունը ևս վերացնելու:

Մատենադարանում այժմ համապատասխան պայմաններ ստեղծված չեն գիտական աշխատանքի համար: Ձեռագրերի և արխիվային վավերա-

---

* Իմա՛ Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի – **Խմբ.**:

** Ձեռագրացուցակների ցանկեր տե՛ս Հ. Անասյանի և Բ. Կուլիի մատենագիտություններում – **Խմբ.**:

գրերի ուսումնասիրությամբ զբաղված գիտնականներն աշխատում են մի միջանցիկ դահլիճում: Ձեռագրերի մի մասը պահարաններում դարսված է երկու խիտ շարքերով և այլն:

Համապատասխան պայմաններ չկան նաև Մատենադարանի մյուս բաժիններում՝ շենքի անբավարար ծավալի պատճառով:

Սրանք, սակայն, ժամանակավոր թերություններ են: Եվս մի քանի ամիս և Մատենադարանը կտեղափոխվի իր նոր շենքը, որտեղ ստեղծվում են իդեալական պայմաններ և՛ ձեռագրերի պահպանման, և՛ ցուցադրման, և՛ գիտական աշխատողների պարապմունքների համար:

Խորհրդային Միության մեջ մեր Մատենադարանը առաջինն է, որի համար կառուցվում է հատուկ ու հարմարագույն շենք: Եվ այս պերճախոս փաստ բավական է ցույց տալու համար, թե կառավարությունն ինչպիսի հոգատար վերաբերմունք ունի անցյալի մշակութային հուշարձանների պահպանման ու հայագիտության զարգացման նկատմամբ:

Հայկական ձեռագրերը, հայ բազմաչարչար ժողովրդին բախտակից, անցնելով հազարամյա ճանապարհ, փրկվելով հարյուր ու մեկ հրերից ու սրերից, ապրում ու վերակենդանանում են այսօր Մատենադարանում:

***

1959 թվականով նոր էջ է բացվում հայ հին մշակույթի դարբնոցներից մեկի՝ հայ ձեռագրերի կենտրոնական հնագարան Մատենադարանի տարեգրության մեջ*:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի 1959 թ. մարտի 3-ի N 71 որոշմամբ Մատենադարանը վերակառուցվեց ու դարձավ գիտահետազոտական հաստատություն: Երկար դարերի դժվարին ճանապարհ անցած Մատենադարանի պատմության համար շրջադարձային նշանակություն ունեցող այդ որոշումը զուգադիպեց Մատենադարանի հոյակապ նոր շենքի կառուցման աշխատանքների ավարտի հետ:

Հայ ժողովուրդն իր բազմադարյա կյանքի ու մաքառումների ընթացքում կերտել է նյութական ու հոգևոր մեծարժեք հուշարձաններ: Համրնթաց է քայլել նա աշխարհի հնագույն ժողովուրդների հետ, մշակութային, տնտեսական ու քաղաքական բնագավառներում շփվել է նրանց հետ, ազդվել նրանցից ու փոխազդել նրանց վրա: Այդ իսկ պատճառով հայ ստեղծագործ մտքի արգասիք հուշարձաններից շատերը, պատռելով ազգային նեղ շրջանակները, իրենց պատշաճ տեղն են գրավել համաշխարհային մշակույթի գանձարանում: Այդ հուշարձանների շարքում առաջնակարգ տեղ ունեն հայերեն ձեռագիր մատյանները:

Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1922 թ. մարտի 6-ին Պ. Մակինցյանին լիազորում է Մոսկվայում պահվող ձեռագրերը Հայաստան տեղափոխել և նրան տված մանդատով խնդրում ՌՍՖՍՀ-ի բոլոր հիմնարկներին, հնարավոր միջոցներով օժանդակել այդ գործին: 1922 թ. ապրիլի 5-ին, 20-ից ավելի հայ զինվորների ուղեկցությամբ, Մոսկվայից Երևան են վերադարձվում Մատենադարանի ձեռագրերը:

Մինչև ձեռագրական բուն հավաքածուի Մոսկվայից վերադարձվելը, Մատենադարան էին մուծվել Վասպուրականի ու Տարոնի վանքերից և այլ վայրերից (Լիմ, Կտուց, Աղթամար, Վարագ, Վան, Մուշ) բերված 1730 ձեռագրերը:

* ՊԲՀ, 1959, N 2-3, էջ 375-388:

Հետագա տարիներին, մինչև 1938 թվականը, հայերեն ձեռագրերի Հայաստանի սահմաններից դուրս գտնվող մանր հավաքածուների կենտրոնացման ու գնումների ճանապարհով ձեռագրական գանձերի հավաքման աշխատանքը տարվում է պետական երկու հիմնարկների՝ Էջմիածնում Մատենադարանի, իսկ Երևանում՝ 1922 թ. ստեղծված Կուլտուր-պատմական թանգարանի կողմից (թանգարանի ձեռագրերը 1938 թ. հանձնվում են Մատենադարանին):

Մատենադարանի վարիչ Ս. Տեր-Հակոբյանի, ինչպես նաև Կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադիր-աշխատակիցներ Ե. Շահազիզի, Ե. Լալայանի և այլոց ջանքերով հաջողվում է Հայաստան բերել Նոր-Նախիջևանից, Մոսկվայի Լազարյան ճեմարանից, Թիֆլիսի ազգագրական ընկերությունից, Սանասարյան վարժարանից և բազմաթիվ այլ վայրերից, հաստատություններից ու մասնավոր մարդկանցից ավելի քան 2 հազար ձեռագրեր:

1939 թվականին Մատենադարանն Էջմիածնից տեղափոխվում է Երևան, ժամանակավորապես տեղավորվելով Ալ. Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանի համար կառուցված շենքի մի հարկաբաժնում:

Ձեռագրերի հավաքման աշխատանքը շարունակվում է նաև հետագա տարիներին, այն Մատենադարանի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում նաև այսօր: Այդ նպատակով Հայաստանի և հարևան հանրապետությունների շրջաններն են գործուղվում Մատենադարանի առանձին աշխատակիցներ և աշխատակիցներից կազմված խմբեր: Այդ մեծ գործում Մատենադարանն ամենալայն օժանդակություն է ստացել Հայաստանի աշխատավորության և սփյուռքահայության ամենալայն շրջաններից:

Ձեռագրական մեր հավաքածուի համալրումը զգալի չափով կատարվում է նվիրաբերությունների ճանապարհով: 1955 թվականին Մատենադարանը նվեր ստացավ 42 արժեքավոր ձեռագրերի մի հավաքածու ռումինահայ հայրենասերներից:

Արդեն երրորդ տարին է, ինչ հալեպաբնակ հայրենասեր ժամագործ Հովսեփ Տևեկյանը, կանգ չառնելով նյութական զոհողությունների առջև, խոր մտահոգություն ցուցաբերելով հայերեն ձեռագրերը կորստից փրկելու և Մայր հայրենիք ուղարկելու գործում, մեծ եռանդով փնտրում է

ձեռագրեր, գնում տարբեր վայրերից և նվեր ուղարկում Մատենադարան: Առ այսօր նրանից ստացել ենք 7 հայերեն և 2 արաբատառ ձեռագրեր: Մատենադարանի ձեռագիր հավաքածուների ճոխացման գործին զգալի նպաստ են բերել նաև պատմաբան Ա. Գ. Հովհաննիսյանը, պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը, արվեստագիտության դոկտոր Ս. Ս. Լիսիցյանը, կոմպոզիտոր Հարո և քանդակագործ Սուրեն Ստեփանյան եղբայրները, գյուղատնտես Սամվել Հարությունյանը և ուրիշներ՝ Սովետական Հայաստանից և Սրբուհի Անանյանը (Թեհրան), Ստեփան Ավյանը (Տուկսոն, ԱՄՆ), Հակոբ Աբրահամյանը (Կ. Պոլիս), Ալան Ենգոյանը (Սան Ֆրանցիսկո) և ուրիշներ՝ արտասահմանից:

Իր անցյալ մշակույթի մեծարժեք հուշարձանները Մատենադարանին հանձնելու միջոցով կորստից փրկելու գործի նկատմամբ հայ աշխատավորության լայն շրջանների նախանձախնդիր վերաբերմունքով պետք է բացատրել այն փաստը, որ խորհրդային իշխանության տարիներին հնարավոր եղավ գրեթե եռապատկել Մատենադարանի ձեռագրական ֆոնդերը, որն առ այսօր հետևյալ պատկերն է ներկայացնում.

Հայերեն ամբողջական ձեռագրեր	9841 մատյան
Հայերեն ձեռագիր պատառիկներ	1838 կտոր
Պահպանակի դեր կատարող պատառիկներ	3000 կտոր
Արաբատառ ձեռագրեր (մոտավոր հաշվով)	633 մատյան
Այլ լեզուներով ձեռագրեր	65 մատյան
Հայերեն հմայիլներ	156 փաթեթ
Այլ լեզուներով հմայիլներ	30 փաթեթ

Այսպիսով, Պետական Մատենադարանը Ձեռագրական իր բաժնում ունենալով շուրջ 16 հազար ձեռագրական միավոր, շատ ավելի հարուստ է, քան հայերեն ձեռագրերի մյուս խոշոր Մատենադարանները (Երուսաղեմ, Վենետիկ, Վիեննա) միասին վերցրած:

Մատենադարանը հայտնի է մեր հասարակայնությանը գերազանցապես իր ձեռագիր գանձերով. սակայն հայագիտության համար ոչ պակաս նշանակություն ունեն նաև նրա մյուս բաժինները՝ հարուստ արխիվը, հնատիպ գրքերի և հայ պարբերական մամուլի ճոխ հավաքածուները, հայագիտական գրադարանը և այլն:

Արխիվային բաժնի հիմնական ու արժեքավոր ֆոնդերն են. ա) Կաթողիկոսական դիվանը՝ 35.761 վավերագրերով, բ) «Անհատական արխիվներ» կոչվող ֆոնդը՝ 33.342 վավերագրերով և գ) Լազարյանների ֆոնդը՝ 8702 վավերագրերով:

Կաթողիկոսական դիվանի արժեքավոր վավերագրերը (կաթողիկոսական կոնդակներ, շահական ու սուլթանական հրովարտակներ, կալվածքների գնման, վաճառման ու նվիրաբերման մասին պաշտոնական փաստաթղթեր) անսպառ նյութեր են պարունակում XV-XIX դարերի Հայաստանի և հարևան երկրների պատմության այլևայլ բնագավառների մասին: Մեծ է նրանց նշանակությունը նաև XVIII-XIX դարերի հայ հասարակական հոսանքների, ազատագրական շարժումների, հայ և ռուս ժողովուրդների մշակութային ու քաղաքական կապերի, հայ նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության դրվագների ուսումնասիրման գործում:

Արխիվային բաժինը նույնպես համալրվում է նոր ձեռք բերվող ֆոնդերով, դիվանական կարևոր գործերով ու առանձին փաստաթղթերով: Լազարյանների ֆոնդը, օրինակ, Մատենադարանի սեփականությունը դարձավ 1957 թվականին. 1958 թվականին, ի թիվս այլ փաստաթղթերի, Արխիվային բաժինը ձեռք բերեց երևանցի Մելիք-Շահնազարյան ֆեոդալական ընտանիքի կալվածքների շուրջն ստեղծված դատական գործի փաստաթղթերը, որոնց մեջ կան XVI-XVII դարերի և հետագայի պարսկերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով արժեքավոր բազմաթիվ բնագրեր (Շահ Թահմազի 1538 թ., Շահ-Աբբասի 1603 թ., 1610 թ., 1613 թ., Շահ-Սեֆիի 1636 թ. հրովարտակները և այլն), ինչպես և հայ ֆեոդալների իրավունքների ու արտոնությունների մասին ուշագրավ այլ վավերագրեր:

Մատենադարանի օրըստօրե ավելացող, առ այսօր 1620 միավորից կազմված հնատիպ գրքերի հավաքածուի մեջ պահվում են հայ տպագրության երախայրիք «Պարզատումարի» (Վենետիկ, 1512 թ.), նրան հաջորդած «Ուրբաթագրքի», «Տաղարանի» և «Աղթարքի» անվթար պահված օրինակները, Աբգար Թոխաթեցու (Կ. Պոլիս), Հովհաննես Տերզնցու (Հռոմ), Ոսկան Երևանցու (Ամստերդամ) և հայ հին այլ տպագրիչների կողմից հրատարակված գրքերը՝ ամբողջությամբ, ինչպես նաև բազմաթիվ այլ հնատիպ գրքեր, որոնք ծանոթ չլինելով հայկական մատենագիտությանը նվիրված աշխատությունների հեղինակներին, չեն հիշված մատենագիտական աշխա-

տություններում և ցանկերում։ Դրանց մասնագիտական ուսումնասիրությամբ հնարավոր կլինի զգալի ճշտումներ և լրացումներ կատարել հայ տպագրության պատմության էջերում։

Պարբերական մամուլի բաժինը անմրցելի է հայերեն հազվագյուտ թերթերի ու ամսագրերի հարուստ իր հավաքածուներով։ Այստեղ են պահվում հայ անդրանիկ պարբերական «Ազդարարի» անթերի օրինակը, տպագրված Մադրասում 1794-96 թթ., «Բազմավէպի», «Հանդէս Ամսօրեայի», «Սիոնի», «Մեղվի», «Մշակի», «Արծվի Վասպուրականի» և հարյուրավոր այլ պարբերականների հավաքածուները։

Մատենադարանի հայագիտական գրադարանը, որ շարունակաբար լրացվում է անցյալում տպագրված ու նոր լույս ընծայվող հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով հայագիտության հետ առնչվող գրքերով մեծապես դյուրացնում է հայ ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի և Մատենադարանի մյուս բաժինների նյութերի ուսումնասիրությամբ զբաղված գիտնականների աշխատանքի հաջողությունը։

***

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում Մատենադարանի ձեռագրերը գիտականորեն չէին ցուցակագրված։ Կային գույքամատյաններ, կազմված Կարենյան կոչվող տպագիր ցուցակի սկզբունքներով, որոնց օգնությամբ, լավագույն դեպքում, կարելի էր միայն ստուգել ձեռագրերի առկայությունը տեղում, բայց ոչ բնավ ծավալել ծրագրված գիտահետազոտական ու աղբյուրագիտական աշխատանք։

Մատենադարանի աշխատակիցների փոքրաթիվ կոլեկտիվը, զբաղված լինելով հիմնականում Սովետական Միության մեջ ցրված ձեռագրական մանր ժողովածուների հավաքման կարևոր աշխատանքով, ի վիճակի չէր անմիջապես սկսելու այդ ծանր աշխատանքը։ Անշուշտ, նկատի պետք է առնել և այն հանգամանքը, որ Մատենադարանը գտնվում էր Էջմիածնում, ուր ձեռագրերի գիտական ցուցակ կազմելու կարող մասնագետներ չկային։ Մեծանուն հայագետներ Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, ինչպես և մեր անվանի մյուս հայագետները ծանրաբեռնված էին շատ ավելի հրատապ գիտական աշխատանքներով. նրանք, ըստ մեծի մասի, լինելով Երևանի նորաստեղծ Պետական համալսարանի դասախոսներ, մշակում էին

հայ ժողովրդի, հայ հին գրականության ու լեզվի պատմության կարևորագույն հարցերը՝ նոր լուսաբանությամբ, գիտահետազոտական լուրջ մենագրություններ էին գրում և անդադրում աշխատում իրենց մեծարժեք աշխատությունների վրա։

Այդ իսկ պատճառով, Մատենադարանի ձեռագրական գանձերի, արխիվային ֆոնդերի, ինչպես և տպագիր գրականության ցուցակագրման ու նկարագրման գործը սկսվեց փոքր-ինչ հապաղումով և ամուր հիմքերի վրա դրվեց այն պահից, երբ Երևանի Պետական համալսարանը տվեց իր առաջին հայագետ շրջանավարտները։

Մատենադարան աշխատանքի գործուղվեցին համալսարանավարտ երիտասարդ պատմաբաններ Հ. Մանվելյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Աբրահամյանը, հետագայում նաև գրականագետ Ե. Թորոսյանը և ուրիշներ։ Նրաց մասնակցությամբ ու ղեկավարությամբ կազմվեցին Մատենադարանի ձեռագրերի ընդարձակ գույքամատյանները, ձեռագրերի մայր քարտարանը և որոշ աշխատանք տարվեց մատենագիտական ուղեցույց ցանկերի կազմման գծով։ Սկսվեց նաև արխիվային խառը ֆոնդերի կարգավորման, ժամանակագրական սկզբունքով փաստաթղթերի դասավորման և ցուցակագրման աշխատանքը։

1939 թ., ինչպես ասացինք, Մատենադարանը տեղափոխվեց Երևան, ստացավ աշխատակիցների նոր հաստիքներ։ Այստեղ ավելի մեծ թափով շարունակվեցին ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի նկարագրության ու գրանցման աշխատանքները։

Ձեռագրական բաժինն ավարտեց ընդարձակ գույքամատյանների ստեղծումը՝ բոլոր առկա ձեռագրերի ընդգրկումով։ Յուրաքանչյուր ձեռագիր գույքամատյանում նկարագրված է այսպիսի մանրամասնությամբ. տրված են համառոտ տվյալներ ձեռագրերի թերթերի քանակի, մեծության, նյութի, կազմի, վիճակի, գրության ժամանակի, վայրի, գրչի, ստացողի և նորոգողի մասին։ Տրված է նաև ձեռագրի վերնագիրը, եթե այն պարունակում է մի բնագիր, և կարևոր նյութերի թվարկումը, եթե այն ժողովածու է տարբեր բնագրերի։

Նույն տվյալներով կազմվեցին նաև մայր քարտեր 1937 թվականից հետո ձեռք բերված ձեռագրերի համար ու ստուգվեցին մինչև այդ կազմված քարտերը։

Ստեղծվեցին պատմագրության, փիլիսոփայության, քերականագիտության, աշխարհագրության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական չափածո և արձակ գրականության և գիտության այլ բնագավառների մասին ձեռագրական բնագրերի ու նյութերի ուղեցույց թեմատիկ ցուցակներ:

Թվարկված ցուցակներից յուրաքանչյուրում, այբբենական դասավորությամբ, տրված են այն հեղինակների անունները, որոնցից գիտության այդ բնագավառին վերաբերող աշխատություններ են պահպանվել. այնուհետև, հեղինակի մասին համառոտ տեղեկություններից հետո, թվարկված են նրա աշխատությունները և այն ձեռագրերի համարներն ու էջերը, որոնցում ընդօրինակված են դրանք:

Մատենագիտական ուղեցույց այդ ցուցակների մեջ, անշուշտ, կան, և չէին կարող չլինել, թերություններ ու սխալներ, քանի որ նրանք կազմվել էին ոչ թե ձեռագրերի մանրակրկիտ գիտական նկարագրությունների, այլ գերազանցապես գույքամատյանի տվյալների հիման վրա:

Այնուամենայնիվ, դրանք օգնեցին և դեռ երկար ժամանակ կօգնեն Մատենադարանի ձեռագրական նյութերի վրա աշխատող մասնագետներին հազարավոր ստվարածավալ ձեռագրերի միջից դյուրությամբ գտնելու իրենց հետաքրքրող հեղինակների աշխատությունները: Այս ցուցակներից մեկը՝ փիլիսոփայական գրականության ցուցակը, արդեն հրատարակվել է և գոհունակությամբ ընդունվել մասնագետների կողմից:

Գիտական մեծ բարեխղճությամբ ու հմտությամբ կազմվել է նաև հայերեն պատառիկների հավաքածուի բոլոր (1838) պատառիկների ցուցակը: Կազմված են նաև օժանդակ այլ քարտարաններ ու ցանկեր. ձեռագրերի ժամանակագրական քարտարան, գրիչների այբբենական ցանկ, ճառընտիրների ու գանձարանների մեջ ընդգրկված նյութերի ուղեցույց ցուցակներ, Մատենադարանի ձեռագրերի նախկին և արդի համարների մանրամասն համեմատական աղյուսակներ, ինչպես նաև արաբատառ և այլ լեզուներով ձեռագրերի ցուցակներ՝ հայերեն և ձեռագրերի լեզվով:

Հսկայական աշխատանք է կատարվել նաև Արխիվային բաժնի փաստաթղթերի նկարագրության ու բովանդակության համառոտ շարադրման գծով: Այժմ Մատենադարանի արխիվային բաժնում չկա որևէ փաստաթուղթ, որի համառոտ բովանդակությունը գրանցված չլինի համապա-

տասխան ֆոնդի ու տարեթվի ցուցակի մեջ: Դեռևս 1944 թվականին, ծանոթանալով այդ ցուցակների պատրաստի մասերին, ակադեմիկոս Ե. Տարլեն Մատենադարանի հուշերի մատյանում գրել է. «Շատ արխիվներ կարող էին սովորել այստեղ զարմանալի խելացի ու ամբողջական այսպիսի ցուցակներ կազմելու գործը»:

Մեծ բարեխղճությամբ կազմված է նաև հնատիպ գրքերի մանրամասն ցուցակ ու քարտարան, որոնցում գրքերը նկարագրված են մոտավորապես այն սկզբունքով, ինչպես նկարագրվում են ձեռագիր մատյանները:

Վերոհիշյալ ցուցակների ու ցանկերի պատրաստմանը զուգընթաց և, մանավանդ, դրանց կազմման աշխատանքների ավարտից հետո, Մատենադարանի ձեռագիր և տպագիր նյութերն ի սպաս դրվեցին հայագիտության զարգացման գործին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական ինստիտուտների գիտական աշխատողներից շատերը, Երևանի Պետական համալսարանի և Մանկավարժական ինստիտուտի դասախոսները, ինչպես նաև հարևան հանրապետություններից, Մոսկվայից ու Լենինգրադից Մատենադարան գործուղված գիտնականները զգալի չափով օգտագործել են Մատենադարանի ձեռագրական նյութերը գիտահետազոտական բնույթի իրենց աշխատություններում, ինչպես և հրատարակել կարևոր մի շարք բնագրեր:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն նախախորհրդային հայագիտության, որի հետաքրքրության սահմանափակ շրջանակների մեջ մնում էին գերազանցապես հայ պատմագրության, գեղարվեստական գրականության ու աստվածաբանության բնագավառները, նորօրյա հայագիտությունը, դուրս գալով հարցերի այդ ոլորտից, մեծապես ընդարձակեց ուսումնասիրության իր տեսադաշտը: Հայագիտական հարցերի մշակմանը լծվեցին հայագետ փիլիսոփաներ, կերպարվեստագետներ, երաժշտագետներ, բժիշկներ, քիմիկոսներ, մաթեմատիկոսներ և գիտության այլ ճյուղերի պատմության հարցերով հետաքրքրվող գիտնականներ:

Տասնյակ էջեր կպահանջվեին Մատենադարանի նյութերի հիման վրա կատարված աշխատանքների միայն ցանկը բերելու համար. ուստի բավարարվենք համառոտ մի թվարկումով, կատարված աշխատանքի բնույթի

մասին ընդհանուր գաղափար տալու ցանկությամբ:

Հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ, որոնք նոր լույս են սփռում միջնադարյան գիտության և մշակույթի տարբեր բնագավառների վրա:

Զգալի աշխատանք տարվեց նաև Մատենադարանի արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության և հրատարակության գծով. լույս տեսան «Կալվածագրեր» (Հ. Աբրահամյան) և «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» (պրակ 1-ին, Հ. Փափազյան) ժողովածուները և հարյուրավոր փաստաթղթեր կամ դրանցից կատարված առանձին քաղվածքներ XVII-XIX դարերի հայոց պատմության հարցերին նվիրված մենագրություններում:

Մատենադարանի աշխատակիցները, զբաղված լինելով հիմնականում ձեռագրերի ցուցակագրման ու մատենագիտական օժանդակ այլ աշխատանքներով, զգալի օգնություն են ցույց տվել վերոհիշյալ գիտահետազոտական և աղբյուրագիտական աշխատանքների հեղինակներին ձեռագրագիտական իրենց փորձով ու հմտությամբ, իսկ նրանցից շատերը, աճելով Մատենադարանում, անձամբ հանդես են գալիս լուրջ մենագրությունների հեղինակների և սկզբնաղբյուրների հրատարակիչների դերում:

Մատենադարանի աշխատակիցների և Մատենադարանի հետ կապված գիտնականների ջանքերով վերջին տարիներիս լույս տեսան «Մատենադարանի բանբերի» 4 արժեքավոր համարներն ու կարևոր մի շարք բնագրեր (որոնք թվարկվեցին վերը՝ գիտական մյուս հաստատությունների կողմից կատարված հրատարակությունների շարքում) և պատրաստվեցին ավելի մեծ թվով բնագրեր, որոնցից մի մասն արդեն հանձնված է հրատարակության:

***

Մատենադարանի առջև դրված կարևորագույն խնդիրներից է ձեռագրական գանձերի խնամքի, գիտական պահպանման ու նորոգման խնդիրը:

Ձեռագրերի վերականգնման, հիվանդ ձեռագրերի բուժման ու ախտահանման, պատռված թերթերի նորոգման, անկազմ ձեռագրերին նոր կազմ տալու, վնասված կազմերը նորոգելու աշխատանքների հիմքը դրվեց

Մատենադարանը Էջմիածնից Երևան տեղափոխելուց հետո: Մատենադարանը ստացավ սկզբից քիմիկոսի ու կազմարարների հաստիքներ, հետագայում դրանց ավելացան միկրոբիոլոգի, կաշեգործ ինժեների (կազմերի վերանորոգման գծով), վերականգնողների, լուսանկարիչների և այլ հաստիքներ: Այսօր արդեն Մատենադարանում քայքայված ու վնասված ձեռագրերի և դիվանական փաստաթղթերի վերականգնման գործն այնպիսի բարձրության վրա է դրվել, որ մեր խորհուրդներին են դիմում հարևան հանրապետությունների ձեռագրատների համապատասխան մասնագետները:

Բիոլոգիական գիտությունների թեկնածու Զ. Խզմալյանի ղեկավարությամբ Մատենադարանի վերականգնման ու նորոգման աշխատանոցն իր գոյության 19 տարիների ընթացքում թերթային մաքրման և ախտահանման է ենթարկել բոլոր ձեռագրերը: Հիվանդ ձեռագրերից շատերը բուժվել են գիտության կողմից մշակված և մեզ մոտ փորձարկված վստահելի միջոցներով: Երկրորդ տարին է, ինչ մեծ հաջողությամբ կատարվում է հին կազմերի քայքայված կաշիների վերանորոգման և միջնադարյան կազմարարական սկզբունքներով ձեռագրերի վերակազմման աշխատանքը՝ իր գործին հմուտ մասնագետ Ա. Խաչատրյանի կողմից: Առաջիկայում ձեռագրերի վերականգնման ու նորոգման աշխատանքները կշարունակվեն ավելի մեծ ծավալով:

Ահա ձեռագրերի հնագարան Մատենադարանի պատմության տարբեր շրջանների ստվերագիծ պատկերը:

Գոյություն ունենալով երկար տարիներ որպես սոսկ գրադարանային տիպի հաստատություն, այնտեղ կատարվել է զգալի աշխատանք ձեռագրերի պահպանման, նորոգման, գրանցման ու նկարագրման և, նույնիսկ, ուսումնասիրման գծով: Սակայն կատարվածը բնավ չէր կարող բավարար համարվել, ինչպես ձեռագրական գանձերի պահպանման ու խնամքի առկա պայմանների, այնպես էլ գիտության հետագա բուռն զարգացման ի նպաստ ձեռագրերի ուսումնասիրման ու հրատարակման ծավալի ու որակի տեսակետից:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայաստանի կառավարությունը ամենահոգատար վերաբերմունքը ցուցաբերելով հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների պահպանման ու խնամքի նկատմամբ,

1939 թվականին որոշեցին Երևանում կառուցել Մատենադարանի համար հատուկ շենք, ձեռագրերի պահպանման ամենալավագույն հարմարություններով։

Շենքի նախագծումը հանձնարարվեց Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մ. Վ. Գրիգորյանին։

Պատասխանատվության մեծ զգացումով մոտեցավ հանձնարարված գործին անվանի ճարտարապետը։ Մեկնեց Լենինգրադ ձեռագրերի պահպանման գիտական պայմանների և գրադարանների ու գրապահոցների շինարարության մասին նորագույն գրականության հետ ծանոթանալու, ինչպես և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գրադարանին կից Արխիվային փաստաթղթերի վերականգնման ու կոնսերվացման լաբորատորիայի վարիչ, անվանի գիտնական պրոֆ. Ն. Պ. Տիխոնովից խորհուրդներ ստանալու նպատակով։ Անհրաժեշտ նյութերն ամբարած Երևան վերադառնալով Մ. Գրիգորյանը, 1940 թվականին՝ ձեռնարկեց նախագծման աշխատանքները, որոնք, սակայն, դադարեցին Հայրենական Մեծ պատերազմի առաջին տարիներին։ 1943 թվականին կրկին բարձրացվեցին շենքի նախագծման ու կառուցման հարցերը։ Մատենադարանի նոր շենքի նախագծում ձեռագրերի պահպանման տեխնիկայի արդի նվաճումները ստեղծագործաբար պետք է զուգակցվեին հայկական հազարամյա ճարտարապետական արվեստի դասական ձևերի օգտագործման հետ։ Պատերազմի ծանր տարիները չխանգարեցին Մ. Գրիգորյանին մեկնել շրջանները հայ ճարտարապետական նշանավոր կոթողներն ուսումնասիրելու համար. նա լինում է Հաղբատում, Սանահնում, Տաթևում և այլ վայրերում, դիտում դրանք ազգային ճարտարապետության լավագույն հատիկները հավաքողի աչքերով։

Որոշվում է Մատենադարանի նոր շենքը կառուցել Երևանի կենտրոնական մասում, Քանաքեռի սարահարթի լանջի վրա։

Շենքի կառուցումն սկսվեց 1945 թվականին, սակայն գործն ընթանում էր դանդաղ. 1947-1953 թթ. ժամանակավորապես դադարեցվեցին կառուցման աշխատանքները, ավելի հրատապ արդյունաբերական ձեռնարկությունների և բնակարանների շինարարությունն արագացնելու նպատակով։ 1953թ. շինարարությունը վերսկսվեց ու մինչև իր ավարտը՝ 1959 թվականը, շարունակվեց տարեցտարի ուժեղացող թափով։

Շենքն իր հատակագծով գրեթե քառակուսի է. պողոտայից դեպի շենքի մատույցները տանում է գրանիտով սալարկված, երկու կողմերից կանաչապատ ճանապարհը, ապա սկսվում են դեպի շենքի առաջին հարթակը տանող գրանիտե 68 աստիճանները։

Առաջին հարթակից դեպի երկրորդը, որ գտնվում է անմիջապես շենքի առջևում, պետք է բարձրանա երկու համաչափ դասավորություն ունեցող նույնանման պանդուսներով, որոնց միջին մասում դրվելու է հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցի կոմպոզիցիոն արձանը (արձանի պատրաստումը պատվիրված է քանդակագործ Ղ. Ջուբարին)։ Վերին հարթակում, անմիջապես ճակատային պատի մոտ, դրվելու են հին Հայաստանի գիտության ու արվեստի խոշորագույն գործիչներ՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Անանիա Շիրակացու, Մխիթար Գոշի, Թորոս Ռոսլինի և Ֆրիկի արձանները։

Շենքի հյուրընկալ դռներից այցելուն մտնում է գլխավոր նախասրահը, որի լուծման մեջ օգտագործված են Սանահնի վանքի առաջին գավթի ճարտարապետական ձևերը։ Նախասրահի պատերն ու սյուները երեսպատված են Բջնիի մուգ կարմիր հղկված մարմարով, իսկ գետնախարիսխն ու հատակը՝ երևանյան փայլեցված բազալտով։

Առաջին հարկում գտնվում են՝ դասախոսությունների սրահը (180 տեղով), Տպագիր գրքերի և մանրանկարների պատճենների ցուցասրահը (կառուցված Անիի Առաքելոց եկեղեցու գավթի ճարտարապետական ոճով), Ձեռագրերի գիտական պահպանման սեկտորի աշխատասենյակը, տնօրենի առանձնասենյակը, ընդունարանը և գրասենյակը։

Երկրորդ հարկում (որն առաջին հարկի երկու մեծ սրահների առկայությամբ՝ լրիվ հարկաբաժին չէ) կառուցված են գիտական աշխատողների մեկուսացված աշխատանքի համար 11 խցեր և այլ օժանդակ սենյակներ։

Երրորդ հարկի կենտրոնական ընդարձակ մասում գտնվում է հոյակապ ցուցասրահը, կառուցված ԺԱ-ԺԳ դարերի գավիթների ճարտարապետական ձևերի ներդաշնակ օգտագործմամբ. չորս սյուների և դրանցից վեր բարձրացող առագաստների վրա կանգնած է ութանիստ մի գմբեթ, որը վերևից հատվելով դարձված է լուսամուտ։ Սրահի հարավային պատի վրա գտնվում է կիսաշրջանակաձև մի այլ լուսամուտ, որից տեսարան է բացվում դեպի Արարատյան հիասքանչ դաշտը՝ իր ձյունապատ ալեհեր կատար-

ներով, և Հայաստանի մայրաքաղաքը՝ իր դյութիչ ճարտարապետական անսամբլներով ու նորակառույցներով:

Նույն այս հարկում են գտնվում հայագիտական սրահը, որը հարմարեցված է ձեռագրերի ուսումնասիրության համար, գրադարանի ընթերցասրահը, հնատիպ գրքերի պահոցը, Մատենագիտական սեկտորի աշխատասենյակները և այլ օժանդակ սենյակներ:

Չորրորդ հարկը, նման երկրորդի, գրավում է շենքի հյուսիսային կեսը միայն. այստեղ գտնվում են վերանորոգման բաժինը, կազմատունը, արխիվը և այլ սենյակներ:

Ձեռագրերի պահոցները զետեղված են գետնախարսխի մակերևույթից ցած գտնվող երեք կիսահարկերում, շենքի աջ թևում: Այլումինե ալիքավոր թերթերից պատրաստված դարակների վրա տեղադրվելու են ձեռագրերը պառկած դիրքով, առանց դիպչելու միմյանց: Պահոցներում ամառ ու ձմեռ անխախտ պահպանվելու է կայուն ջերմաստիճան ու հարաբերական խոնավություն՝ հատուկ սարքավորումների միջոցով:

Գետնախարսխային հարկաբաժնում են գտնվում նաև լուսանկարչական աշխատանոցը, տպագիր գրքերի և մամուլի պահոցները և այլ օժանդակ սենյակներ: Այս հարկի աջ և ձախ անկյուններից դեպի չորրորդ հարկ են բարձրանում հատուկ աստիճաններ և վերելակներ:

Նոր շենքը շահագործման հանձնելու նախօրյակին կատարվեց նաև Մատենադարանի վերակառուցումը. Ձեռագրատուն-Մատենադարանի հիմքի վրա ստեղծվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ — «Մատենադարանը»:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի 1959 թ. մարտի 3-ի որոշման մեջ այս մասին ասված է.

«Հին ձեռագրերի գիտական ուսումնասիրության և նկարագրության, Մայր ցուցակի կազման և Մատենադարանում պահվող պատմագրական, փիլիսոփայական, բժշկական, մաթեմատիկական, աստղաբաշխական ու աշխարհագրական, ինչպես նաև գեղարվեստական գրականության հին հուշարձանների հայերեն և ռուսերեն լեզվով հրատարակման գործը ուժեղացնելու նպատակով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշում է.

1. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հին ձեռագրերի Պետական Ձեռագրատուն «Մատենադարանը» դարձնել Հայկական ՍՍՌ

Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ — «Մատենադարան»:

2. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ — «Մատենադարանի» վրա դնել հետևյալ խնդիրները.

ա) Ձեռագրերի խնամքը, պահպանումը, վերանորոգումը և միկրոպատճենահանումը:

բ) Ձեռագրական նոր հուշարձանների հավաքումը:

գ) Ձեռագրերի գիտական նկարագրությունը, Մայր ցուցակի՝ հայերեն և ռուսերեն լեզուներով պատրաստումը:

դ) Կարևոր բնագրերի, ինչպես և հայ մանրանկարչության հուշարձանների ուսումնասիրությունն ու հրատարակումը:

ե) Համաշխարհային նշանակություն ունեցող հուշարձանների թարգմանությունը ռուսերեն և արևմտաեվրոպական լեզուներով:

զ) Հայ ժողովրդի ձեռագրական մշակույթի ամենաարժեքավոր հուշարձանների մասսայականացումը, հայերեն ձեռագրերը ներկայացնող մատչելի գիտական գրքերի ու բրոշյուրների հրատարակությամբ ...»:

Գիտահետազոտական ինստիտուտ — «Մատենադարանի» առջև դրված խնդիրների կատարումն ապահովվում են նորաստեղծ երեք գիտական սեկտորների (Մատենագիտական, Բնագրերի ուսումնասիրման ու հրատարակման և Գիտական պահպանության սեկտորներ) և գրադարանային ֆունկցիաներ ունեցող նախկին բաժինների (արխիվ, գիտական գրադարան, վերանորոգման և ազատարկման բաժիններ) համատեղ աշխատանքով:

Մատենագիտական սեկտորի հիմնական խնդիրն է առաջիկա 15 տարիների ընթացքում կազմել Մատենադարանի հայերեն բոլոր ձեռագրերի մանրամասն, իր կատարելությամբ նախատիպը չունեցող գիտական ցուցակը, պարբերաբար հրատարակելով ցուցակի պատրաստի հատորները: Պատասխանատու և դժվարին այս գործին սեկտորի վարիչ, անվանի ձեռագրագետ Ա. Մնացականյանի ղեկավարությամբ՝ լծվել են կարող ուժեր՝ պատմաբաններ ու բանասերներ Գ. Աբգարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Լալաֆարյանը, Ս. Քոլանջյանը, Ս. Ավագյանը, Հ. Հակոբյանը և ուրիշներ:

Բնագրերի ուսումնասիրման և հրատարակման սեկտորը, բնականաբար զբաղվելու է հիմնականում ձեռագրական արժեքավոր բնագրերի

ուսումնասիրման, հայերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակման կարևոր աշխատանքով: Սեկտորը ղեկավարում է իրանագետ ու հայագետ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյանը: Սեկտորի գիտական աշխատակիցները՝ պատմ. գիտությունների թեկնածուներ՝ Վ. Գրիգորյանը, Մ. Գարբինյանը, Մ. Մխիթարյանը, Լ. Խանլարյանը, ինչպես նաև Ա. Մարտիրոսյանը, Վ. Գևորգյանը, Հ. Ամալյանը, Պ. Մուրադյանը, արդեն իսկ լծվել են ստեղծագործական աշխատանքի, ձեռնարկելով մի շարք ուսումնասիրությունների և արժեքավոր սկզբնաղբյուրների հրատարակության պատրաստման գործին:

Նորաստեղծ ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների առաջին պլանի մեջ ուշադրություն են գրավում պատմագրական, փիլիսոփայական, գրական-գեղարվեստական արժեքավոր բնագրերի ուսումնասիրության և հրատարակման հետ կապված մի շարք թեմաներ:

Դրանցից են, օրինակ, Սամուել Անեցու «Ժամանակագրությունը», ԺԴ-ԺԵ դարերի հայերեն կալվածագրերի և նվիրաբերական արձանագրությունների ժողովածուն: Մատենադարանի պարսկերեն կալվածագրերի առաջին պրակը (ԺԴ-ԺԶ դդ. կալվածագրերով), «Նյութեր ԺԷ-ԺԸ դարերի հայ արհեստագործության և առևտրի մասին» ժողովածուն, Վանական հաստատություններին պատկանող ճորտերի իրավական վիճակի մասին ուսումնասիրությունը, Հովհան Որոտնեցու փիլիսոփայությանը վերաբերող մենագրությունը, «Գևորգ Սկևռացու ուղղագրական աշխատությունները» (ուսումնասիրություն և բնագիր), «Բառարանագիտությունը միջնադարյան Հայաստանում» (ուսումնասիրություն և բնագիր), «Միջնադարյան հայկական տաղեր» ստվարածավալ ժողովածուն, որը կազմվում է 150 տաղերի մանրակրկիտ ուսումնասիրության ճանապարհով, «Խրատք և իմաստութիւն Խիկարայ» լայն տարածում գտած գրույցի հայերեն հնագույն թարգմանության բնագիրը՝ բանասիրական ուսումնասիրությամբ, «Միջնադարյան պատմական պոեմները» ժողովածուն, ԺԶ դարի բանաստեղծ Հովասափ Սեբաստացու երկերի գիտական հրատարակությունը, ԺԸ դարի բանաստեղծ Հովհաննես Կարնեցու աշխարհիկ տաղերի ժողովածուն և այլն:

Ռուսերեն թարգմանվող բնագրերից հիշատակենք Ղազար Փարպեցու և Զաքարիա Քանաքեռցու «Պատմություն»-ները և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը»:

Առաջիկայում Մատենադարանի գիտական թեմատիկայի մեջ կմտնեն նաև հայ մանրանկարչության, երաժշտագիտության, բժշկության, տիեզերագիտության և այլ բնագավառների կարևոր հուշարձանների ուսումնասիրման և հրատարակման հետ կապված թեմաներ:

Ձեռագրերի գիտական պահպանության նորաստեղծ սեկտորը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Արևշատյանի ղեկավարությամբ, զբաղվելու է հիմնականում ձեռագրերի գիտական պահպանման, բոլոր ձեռագրերի միկրոպատճենահանման գործի կազմակերպման ու հսկողության, նոր ձեռագրական հուշարձաններ ձեռք բերելու նպատակով արշավախմբեր կազմելու, Մատենադարանի մշտական թանգարան ցուցասրահը գիտականորեն կոմպլեկտավորելու և Մատենադարան այցելող էքսկուրսիաների սպասարկման աշխատանքներով: Գիտական պահպանության սեկտորի աշխատակիցները (գլխավոր պահապան՝ Օ. Եգանյան, էքսկուրսավար՝ Շ. Սմբատյան, լաբորանտներ՝ Է. Կորխմազյան և Է. Հակոբյան) իրենց անմիջական պարտականություններն ունենալով, զբաղվելու են նաև առանձին գիտական հարցերի մշակմամբ: Սեկտորը հատկապես լարված աշխատանք պետք է տանի բոլոր ձեռագրերի միկրոպատճենահանման գծով տարվող աշխատանքները կանոնավոր հունի մեջ դնելու և առաջիկա 10 տարվա ընթացքում այդ կարևոր աշխատանքն ավարտելու ուղղությամբ:

Հանրահայտ է, որ հայերեն ձեռագրերի հատուկ հավաքածուներ կան, բացի մեր Մատենադարանից նաև Սովետական Միության և արտասահմանյան այլ վայրերում (Թբիլիսի, Լենինգրադ, Մոսկվա, Երուսաղեմ, Վենետիկ, Վիեննա, Սպահան, Փարիզ, Լոնդոն և այլուր):

Ձեռագրական առանձին բնագրերի ուսումնասիրությունն ու հրատարակությունը առանց Մատենադարանից դուրս գտնվող ձեռագրերի օգտագործման անհնարին է, ուստի հայագիտության զարգացման շահերը թելադրում են սերտ գիտական կապեր հաստատել արտասահմանյան հայկական Մատենադարանների հետ:

Մատենադարանից դուրս գտնվող ձեռագրերի ըստ կարելվույն հավաքման, կամ միկրոպատճենահանման ու հաշվառման աշխատանքի ծանրությունը պետք է ընկնի ձեռագրերի գիտական պահպանման սեկտորի վրա:

Մատենադարանի ձեռագրերը և արխիվային փաստաթղթերը մատչելի են նաև Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի և այլ գիտական հաստատություններում աշխատող գիտնականներին, որոնք օգտվելով այդ մեծ գանձարանից, կատարում են իրենց ուսումնասիրությունները և շարադրում նորանոր աշխատություններ:

Ահա ընդհանուր գծերով Մատենադարանի այսօրվա պատկերը: Հայ ժողովրդի հազարամյա մշակույթի համաշխարհային արժեք ունեցող հուշարձանների պահպանման և գիտականորեն մշակման ու հրատարակման գործի ծավալման համար կյանքի կոչված նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտ — «Մատենադարանի» ողջ երիտասարդ կոլեկտիվը՝ ջանք չի խնայի ստեղծագործ աշխատանքով ապահովելու նրա վրա դրված խնդիրների կատարումը:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

60-ական թվականներին հայագիտություն եկած իմ սերնդակիցները լավ են հիշում 1959 թ. մարտի 3 ի Հայաստանի կառավարության որոշմամբ գիտահետազոտական ինստիտուտ վերակազմավորված Մատենադարանի գիտխորհրդի այն նիստերը, ուր քննարկվում էին ձեռագրերի Մայր ցուցակ կազմելու գիտական սկզբունքները: Նախորդ տարիներին աշխատակիցների ջանքերով ստեղծվել էին պատմագրության, փիլիսոփայության, քերականագիտության, աշխարհագրության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական արձակ և չափածո ստեղծագործությունների, վարքերի, ճառերի և այլ բնագավառների վերաբերող աշխատանքային ներքին գործածության ցուցակներ ու քարտարաններ

Հայագիտական շրջանակներում «Ձեռագրերի մանրամասն ցուցակ (իմա՛ տպագիր Մայր ցուցակ – Պ. Մ.) կազմելու անհրաժեշտությունը զգացվում է վաղուց ի վեր, 1958 թվականին գրում էր հաստատության տնօրեն Լևոն Խաչիկյանը,- և մենք առաջիկայում, ստանալով գիտական աշխատողների համապատասխան հաստիքներ, մեր հիմնական ուժերը պետք է կենտրոնացնենք ձեռագրերի Մայր ցուցակի ստեղծման աշխատանքների վրա»: Շատ չանցած, կազմավորվեց փորձնական պրակ ստեղծող խումբ՝ ձեռագրագետ Ա. Մնացականյանի ղեկավարությամբ: Երբ այն այլևս պատրաստ էր և ներկայացվեց ծանոթացման՝ առաջ եկան առարկություններ մի քանի ոչ արմատական խնդիրների շուրջ. մասնավորապես ավելորդ էին նկատվում նկարագրական որոշ մանրամասնություններ: Բանավեճող երկու կողմերն էլ հղում էին կատարում գոյություն ունեցող Հ. Հակոբոս Տաշյանի կազմած Ցուցակը՝ ոմանք այն հարստացնելու, ոմանք՝ ժամանակների փոփոխության թելադրանքով մասամբ հապավելու ապացուցումներով: Ինչպես բոլոր բանավեճերի ժամանակ, այստեղ էլ եղան բորբոքումներ, գաղափարականացման փորձեր, անձնական նկատառումներ և այլն: Սակայն գիտական խնդիրների առումով այս քննարկումները հայագիտության պատմության հիշարժան էջերից են: Գիտական մամուլում նրանք ժամանակին

չեն արձանագրվել, ուստի տասնամյակներ շարունակ նոր սերնդին անհասկանալի է մնացել բանավեճի բուն խնդիրը, երբեմն նույնիսկ ոչ հասու մեկնաբանության առարկա դարձել:

Որ բանավեճը սկզբունքային գետնի վրա էր և այլակարծության գլխավորողները (մասնավանդ Լ. Խաչիկյանն ու Աս. Մնացականյանը) հավասարապես ազնիվ էին և նվիրյալ՝ անվերապահ իրողություն է և այդ վկայող լավագույն աղբյուրը Լ. Խաչիկյանի զեկուցման անձնական թղթերում պահպանված գրավոր տեքստն է: Ստորև այն ներկայացվում է գրեթե առանց միջամտության: Կարծում ենք հրապարակումը ճանաչողականից բացի ունի հույժ գործնական կիրառություն: Լ. Խաչիկյանի օրոք պատրաստվեց «Մայր ցուցակի» Ա հատորը (լույս տեսավ պատրաստումից տաս տարի անց՝ 1984 թ., Աս. Մնացականյանի և Օ. Եգանյանի խմբագրությամբ ու նույն Աս. Մնացականյանի առաջաբանով, 300 միավորի ընդգրկմամբ): Երկրորդ հատորը, նույնպես 300 ձեռագրի նկարագրությամբ, հրապարակ եկավ երկու տասնամյակ անց՝ 2004 թ.: Հարկավ նման ուշացումների կանխատեսումն էր, որ ակադ. Լ. Խաչիկյանին դրդեց (Աս. Մնացականյանի խմբագրակցությամբ) 1965 և 1970 թվականներին Օ. Եգանյանի, Ա. Զեյթունյանի, Փ. Անթաբյանի աշխատակցությամբ կազմել ու հրատարակել «Ցուցակ ձեռագրաց» երկհատոր նախնական տարբերակ, որը արդեն քանի տասնամյակ ծառայում է հայագիտությանը:

Խմբ.

[ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿԻ «ՀԻՆ» ՈՒ «ՆՈՐ» ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ]*

Ի՞նչ նպատակներ կարող են հետապնդել ձեռագրաց ցուցակներն ընդհանրապես, և ի՞նչ նպատակ պիտի հետապնդի մասնավորապես մեր ձեռագրերի ցուցակը:

Մինչև ա. պրակի 2 տարբերակների քննությանն անցնելը անհրաժեշտ է հստակ պատասխան տալ կարևոր այս հարցին:

Ձեռագրաց ցուցակները լինում են տարբեր ծավալի ու բնույթի: Կան ցուցակներ, որոնք թվարկում են միայն ձեռագրական որևէ հավաքածուի ձեռագրերը՝ իրենց հիմնական նյութ-միավորներով, կան այնպիսի ցուցակներ, որոնք միաժամանակ վերցնում են իրենց վրա մատենագիտական տեղեկատուի ֆունկցիա, պարտավորվելով մանրամասն տվյալներ հաղորդել թե ձեռագրական տվյալ նյութ-միավորի մասին ի՞նչ գրականություն է ստեղծված, երբ և որտեղ է այն հրատարակված և ուսումնասիրված. ի՞նչ աշխատություններում է հիշատակված նկարագրվող տվյալ ձեռագիրը և այլն և այլն:

Տարբերվում են ցուցակներն իրարից նաև իրենց թեմատիկայով: Կան ցուցակներ, որոնք ստեղծվում են թեմատիկ պլանով գիցուք, ցուցակ պատմական բովանդակության, փիլիսոփայության, բժշկության մասին որևէ հավաքածուի ձեռագրերի, կամ ներկայացնում են անխտիր բոլոր նյութերը,

---

* Կարդացվել է 1960-ական թվականների սկզբներին կայացած Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստերից մեկում:

սակայն շեշտը դնում են ավելի մանրամասնություններ հաղորդելու ճանապարհով, բուն բովանդակության կամ արտաքին պատկերի ձեռագրական հուշարձանների այս կամ այն կողմի վրա:

Հանրահայտ այս փաստերի մասին հարկ համարեցի երկու խոսք ասել, ուշադրություն դարձնելու համար այն իրողության վրա, որ չկա համատարած կիրառման մեջ եղող կամ դարավոր ավանդույթով ամրապնդված ու օրենքի ուժ ստացած ձեռագրացուցակների ինչ-որ օրինակելի սխեմա, որով առաջնորդվեն բոլոր հաստատություններն իրենց պատկանող ձեռագրական հուշարձանների ցուցակը կազմելիս:

Ամեն մի կոնկրետ դեպքում ընտրվում է հարմար որևէ ձև, հաշվի առնելով մի շարք կոնկրետ հանգամանքներ, կապված նկարագրվող ձեռագրական հավաքածուի և գիտության պահանջների հետ:

Բնավ նպատակ չունենալով սպառել այդ հանգամանքների թվարկումը, փորձենք այնուամենայնիվ, մի քանի խոսք ասել նրանցից կարևորագույնների մասին:

1. Մեծ նշանակություն ունի նկարագրվելիք ձեռագրական հավաքածուի մեջ մտնող միավորների քանակը: 100-200 ձեռագրերի նկարագրությունը, անշուշտ, այլ ձև է թելադրում, 1000 ձեռագրի նկարագրությունը՝ այլ: Բնականաբար միանգամայն այլ՝ 10.000 ձեռագրերի նկարագրությունը:

2. Շատ մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ինչ վիճակի մեջ է տվյալ ժողովրդի ձեռագրական գանձերի աշխարհում պահպանված բոլոր հավաքածուների նկարագրման վիճակը և ձեռագրական հուշարձանների հրատարակման և ուսումնասիրության աստիճանը:

Եթե արդեն գիտական շրջանառության մեջ առկա են բազմաթիվ բնագրերի հրատարակություններ, եթե կան ձեռագրական այլ հավաքածուների ցուցակներ, որոնցում հիմնականում արտացոլվել են տվյալ ժողովրդի կողմից ստեղծված գրական հուշարձանները, ապա, բնականաբար, որևէ նոր հավաքածուի ցուցակագրողին ավելի քիչ բան է մնում բացահայտելու, արժեքավորելու ու մատուցելու իր ցուցակում: Եվ ընդհակառակը: Շատ ավելի մեծ պահանջներ են ծառանում այն դեպքում, երբ գիտությանը ներկայացվում է անծանոթ կամ նորահայտ ձեռագրական հուշարձանների մի խումբ կամ հավաքածու:

3. Վճռական նշանակություն ունի ձեռագրական ցուցակի կազմողների գաղափարախոսությունը, նրանց ժամանակակից գիտության պահանջներն ու զարգացման հեռանկարները:

Ձեռագրաց ցուցակ կազմողները, երբեմն իրենք իսկ պարզ չըմբռնելով այդ, իրենց ցուցակները կազմել են միակողմանի շեշտադրությամբ, հատուկ տեղ տալով ձեռագրական այն հուշարձանների մատուցմանը, որոնց հեղինակների գաղափարախոսությունը հարազատ է եղել իրենց, ընդառաջել է իրենց ժամանակի ու դասակարգի սոցիալական պատվերին:

Սահմանափակվենք ասածով: Արդ, զարգացման ի՞նչ ճանապարհ է անցել հայերեն ձեռագրերի գիտական ցուցակագրությունը և անցյալում կատարված մեծ աշխատանքը ի՞նչ է թելադրում մեզ, որ ձեռնարկել ենք Մատենադարանի բազմահազար հայերեն ձեռագրերի գիտական ցուցակագրման պատասխանատու և կարևոր գործը:

Կատարված է հսկայական աշխատանք:

Հայ մատենագրության ինքնատեղծ ու թարգմանական երկերի և նույնիսկ սակավարժեք ծիսական ու պաշտամունքային բնույթի հուշարձանների մեծագույն մասը, ընթացս վերջին 3 դարերի, հրատարակվել են արդեն, իսկ շատ հուշարձաններ նույնիսկ հրատարակվել են բազմիցս:

Լույս են տեսել հայերեն ձեռագրերի տարբեր՝ մեծ ու փոքր հավաքածուների բազմաթիվ ցուցակներ ու ցանկեր (դրանց թիվը, ըստ Անասյանի մոտենում է 200-ին)*:

Լույս են տեսել նաև մի շարք մանր հավաքածուների ցուցակներ (Սանասարյան, Ներսեսյան, Խ. Դադյանի, Սևանի, Ն. Բայազետի, Թավրիզի ևն ևն), որոնք հետագայում մուծվել են մեր ձեռագրական հավաքածուի մեջ, ուստի Մատենադարանի ձեռագրերի մի ստվար մասի նկարագրությունները ևս հայտնի են արդեն գիտությանը:

Այսպիսով, խոպան գետին չենք հերկելու մենք՝ Մատենադարանի ձեռագրերի ցուցակը կազմելիս: Անցյալում կատարվածը մեծապես դյուրացնելու է մեր աշխատանքը, հնարավորություն է տալու շատ դեպքերում խու-

* Այդ թիվն այժմ մի քանի տասնյակով ավելացել է, հմմտ. Bernard Coulie, Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits arméniens, Prepolis, Turnthout, 1992 – խմբ.:

սափելու մանրամասնություններից, պարտադրելու է երկար կանգ չառնել այն ձեռագրական հուշարձանների վրա, որոնք տպագրված են ու հայտնի գիտությանը, կամ մանրամասնորեն նկարագրված են գիտական սկզբունքներով կազմված այլ ձեռագրաց ցուցակներում:

Հայագիտության և, մանավորապես, սովետահայ աղբյուրագիտության առջև դրված են մեր ժողովրդի դարավոր մշակույթի համակողմանի ուսումնասիրության, ձեռագրական արժեքավոր հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության հրատապ և կարևոր խնդիրները:

Ինչպես հայտնի է, մենք դեռևս չունենք մեր պատմագրության բոլոր հուշարձանների գիտական հրատարակությունները: Հին ու միջնադարյան մեր փիլիսոփաների, քերականագետների, մաթեմատիկոսների, տիեզերագետների, բժիշկների, ալքիմիկոսների և գիտության այլ բնագավառներում աշխատած մատենագիրների շատ աշխատություններ դեռևս չեն հրատարակված և ուսումնասիրված: Հսկայական աշխատանք կա կատարելու նաև միջնադարյան մեր պոեզիայի և արձակի ուսումնասիրության և բնագրերի հրատարակության գծով: Ոչ պակաս արժեք են ներկայացնում նաև հունարենից, ասորերենից և այլ լեզուներից կատարված թարգմանությունները, որոնցից շատերը ևս սպասում են իրենց ապագա հետազոտողներին ու հրատարակողներին և այլն, և այլն:

Մատենադարանի ձեռագրերի ցուցակը կազմվելու և գրվելու է համաշխարհային գիտության սպասարկման, որպեսզի մեր սերունդի և մեզ հաջորդող սերունդների հայագետ-գիտնականները (շեշտում ենք այս հանգամանքը՝ հայագետ-գիտնականները և ոչ դպրոցական աշակերտները) կարողանան հեշտությամբ գտնել տասը հազարանոց* ձեռագրական ծովում իրենց հետաքրքրող ձեռագրական նյութերը, 100-ավոր էջերի ծավալ ունեցող ընդարձակ բնագրերից սկսած, մինչև ամենափոքր (մի քանի տողից բաղկացած) բանաստեղծություններն ու բնագրերը: Այսպիսով, ոչինչ դուրս չի մնալու մեր ցուցակից: (Այս եղել է մեր սկզբունքի առաջին կետը և հետևողականորեն կիրառվել է ցուցակում):

Սակայն մեր Ցուցակը տալու է միայն անհրաժեշտ կոորդինատներ՝

* Վերջին տվյալներով Մատենադարանի հավաքածուն ամփոփում է 17158 միավոր, որից հայերեն՝ 11136 - **Խմբ.**:

ձեռագրական այս կամ այն հուշարձանը, մեծ ու փոքր այս կամ այն բնագիրը հեշտությամբ գտնելու համար:

Ցուցակը չի կարող լինել և չի լինելու հայ մատենագիտության համապարփակ դպրոցական ձեռնարկ, որի մեջ թվարկված լինեն հանրահայտ հուշարձանների մասերի, գլուխների, ենթագլուխների խորագրերը, սկզբնատողերը և նման կարգի երկրորդական հատկանիշներ, որոնցով հետաքրքրվողը դիմելու է տպագրին կամ նույն այդ նյութի մասին առկա ուսումնասիրություններին, մատենագիտական առկա ուղեցույցներին և այլն:

Մոտեցումն այլ պետք է լինի, իհարկե, այն ձեռագրական միավորների նկատմամբ, որոնք գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, բայց մինչ այժմ անհայտ են մնացել գիտությանը, չեն հրատարակվել, չեն դրավել գիտնականների ուշադրությունը: Նույնպիսի մոտեցում են պահանջելու նաև այն բնագրերը, որոնք տարբերվում են տպագրված տարբերակներից իրենց ծավալով, գլուխների դասավորությամբ և այլ էական հատկանիշներով: Դրանց մասին, անշուշտ, համապատասխան տվյալներ են հաղորդվելու ցուցակի մեջ:

Մեր Ցուցակը չի լինելու նաև «շտեմարան պիտանի և անպիտան գիտելեաց»:

Մեր գիտության զարգացման շահերն ի նկատի ունեցող գիտնական-ցուցակագրողը չի կարող միևնույն չափանիշով մոտենալ դիցուք 18-րդ դարի թարգմանական աստվածաբանական մի բնագրի և, ասենք, 13-րդ դարի որևէ հայ հեղինակի կողմից ստեղծված անհայտ մի բժշկարանի կամ թվաբանության դասագրքի նկատմամբ: Անտարակույս, արժեքավոր ու անհայտ բնագրերը, մեր գիտնականների ուշադրությունը նրանց վրա սևեռելու մտահոգությամբ, Ցուցակում կնկարագրվեն ավելի հանգամանորեն, ի տարբերություն սակավարժեք բնագրերի (օր. Անալոճիա, Աղբյուր բացյալ և նմաններ) կամ ծիսական հանրահայտ ձեռագրերի (Ավետարան, Մաշտոց, Սաղմոսարան, Ժամագիրք են):

Այս մեկնակետից են մոտեցել Ձեռագրաց ցուցակին քննության ներկայացված «Նոր» տարբերակի հեղինակները:

«Հին» տարբերակի նպատակադրությունն անորոշ ու մշուշապատ է: Այդ տարբերակի կազմողները անտեսել են կարծես այն փաստը, որ հայ ձե-

ռագրական մշակույթի ուսումնասիրությունը իրենցից չի սկսվում, այլ զարգացման երկարատև ու բեղմնավոր ճանապարհ է անցել: Նրանց նպատակն է եղել կարծես, ստեղծել ոչ թե հայ ձեռագրական հավաքածուներից ամենամեծի (բայց ոչ միակ հավաքածուի) ցուցակը՝ այլ հայ ձեռագիր մատենագրության լիակատար մատենագիտություն: Նրանց պատկերացմամբ Մատենադարանի ձեռագրաց ցուցակների բոլոր հատորներն իր ձեռքի տակ ունեցող ապագա երջանիկ հայագետն ի վիճակի է լինելու առանց որևէ այլ օգնականի աշխատության օգտագործման, հենց միայն այդ ցուցակների միջոցով՝ լիակատար պատկերացում կազմելու հայ մատենագրության բոլոր հուշարձանների մասին, և նույնիսկ՝ ուսումնասիրություններ է կատարելու այդ ցուցակների հիման վրա, առանց դիմելու բուն ձեռագրերին կամ այդ ձեռագրերի նախկին հրատարակություններին:

Ցուցակը ինչպես պետք է լինի. այս է կարծես «հին» տարբերակի հիմնական մեկնակետը: Միամիտ, եթե չասենք պարզամիտ մեկնակետ:

Այդ տարբերակի հեղինակները կարծես լիակատար հստակությամբ չեն պարզել իրենց համար, թե ո՞ւմ համար է պատրաստվում այդ ցուցակը՝ 20-րդ դարի հայագետ գիտնականի համար, որը դիմելու է ցուցակին այս կամ այն առիթով, իրեն զբաղեցնող հարցերի շուրջը ձեռագրական նոր աղբյուրներ գտնելու, կամ իր ձեռքի տակ եղող տպագիր որևէ բնագրի սխալ թվացող որևէ հատված սրբագրելու նպատակով:

Ձեռագրին դիմող ամեն ոք պարտավոր է մինչ այդ ծանոթանալ իրեն զբաղեցնող հարցի շուրջ եղող ողջ գիտական գրականության և հրատարակված սկզբնաղբյուրի հետ: Այս պարզ ու անվիճելի ճշմարտությունն է, որ կարծես, պարզ չի եղել «հին» տարբերակի հեղինակներին:

Այս նախաբանից հետո թույլ տվեք անցնել մեր ձեռագրաց ցուցակի «հին» և «նոր» տարբերակների համադրության և քննության հարցերին:

Հենց սկզբից պարտք ենք համարում ասել, որ «հին» տարբերակը անընդունելի է մեզ համար և՛ իր հեղհեղուկ սկզբունքներով, և՛ այդ սկզբունքների հետևողական կիրառությամբ ստեղծված, ձեռագրերի անհաջող նկարագրություններով:

***

Երբ կողք-կողքի ենք դնում Մատենադարանի ձեռագրերի Մայր ցու-

ցակի ա. պրակի երկու տարբերակները, հենց առաջին հայացքից ակնառու է դառնում նրանց ծավալային տարբերությունը:

«Հին» տարբերակի մեջ նո. նո. 1-50 ձեռագրերը նկարագրված են 148 մեծադիր էջերի վրա, իսկ «Նոր» տարբերակում՝ 98 էջերի: Բերված այդ թվերը սակայն, լրիվ պատկերացում չեն տալիս այդ տարբերակների իրական ծավալային փոխհարաբերության մասին: «Հին» տարբերակում «պետիտով», այսինքն գրամեքենայի մեկ ինտերվալով մեքենագրված տողերը եռակի ավելի են «Նոր» տարբերակից: Ուստի մանրակրկիտ հաշվումներ կատարելուց հետո՝ պարզ է դառնում, որ «հին» տարբերակում էջը միջին հաշվով բաղկացած է 39-40 մեքենագիր տողից, իսկ «Նոր»-ը՝ 33-34: Ուստի, ամեն մի էջում «հին» տարբերակն ունի 5 տող ավելի: 148x5 հավասար է 740 տողի, իսկ այդքան տողերը տալիս են լրացուցիչ 18 էջ:

Ուրեմն նո. նո. 1-50 ձեռագրերը «հին» տարբերակում նկարագրված են իրականում 166 մեծադիր էջերի վրա, «Նոր» տարբերակում՝ 98 էջերի: Այլ խոսքով գրեթե 70 տոկոսով «հինն» ավել է «Նորից»: Այդ նշանակում է, որ եթե «Նոր» տարբերակով մեր բոլոր ձեռագրերի նկարագրությունները ամփոփվեն դիցուք 10 հատորների մեջ. «հին» տարբերակով կպահանջվի նույն ծավալի 17 հատոր: (Հետագայում կտեսնենք, որ «Նոր»-ը ևս ենթակա է որոշ ավելորդություններից բեռնաթափման, ուստի 10/17 փոխհարաբերությունը կարող է ստանալ 10/19 գույն և 1/2 տեսքը):

Կարելի է արդյոք այս բոլորից եզրակացնել, որ «Նոր» տարբերակը համառոտ տարբերակ է, «հինը»՝ ընդարձակ: Ծավալային առումով այո, բայց ձեռագրերի բովանդակության բացահայտման, ձեռագրական նյութերը ազգինալ ձևով բանասիրական լայն շրջանների օգտագործմանը հանձնելու առումով ոչ:

«Հին» տարբերակն ուռճացած է ու ընդարձակված ոչ թե այն պատճառով, որ շատ ավելի արժեքավոր բանասիրական նյութ է պարունակում «Նորի» համեմատությամբ, այլ սոսկ այն պատճառով, որ նախամտածված ու իրագործված անընդունելի ու սխալ հետևյալ սկզբունքների հիման վրա.

1. Հղումների նորահնար սիստեմ.

2. մեխանիկական նկարագրության եղանակ.

3. ձեռագրական նյութերի թվարկման ու համարակալման խառնաշփոթ եղանակ.

4. Ձեռագրերի արտաքին նկարագրության արհեստական ուռճացում.

5. Հիշատակարանների մատուցման հնացած եղանակ:

Արդ, անհրաժեշտ ենք համարում մեկ առ մեկ անդրադառնալ այս կետերին և ցույց տալ ձեռագրաց ցուցակի համար ամենահիմնական ու սկզբունքային այդ հարցերում «Հին» և «Նոր» տարբերակների տարբերությունները:

1. Հղումների սիստեմ

Ձեռագրաց բոլոր ցուցակների հեղինակները նկարագրվող հավաքածուի մեջ միևնույն նյութը պարունակող մի քանի ձեռագիր օրինակներ նկարագրելիս այս կամ այն չափով դիմել են «հղումների» օգնությանը:

Ցուցակում արդեն նկարագրված որևէ բնագիր՝ նույն մանրամասնությամբ 2, 3 և բազմաթիվ անգամ նկարագրելու ավելորդությունը հրամայական պահանջ է դրել հղման միջոցով համառոտել ցուցակները:

Այնքան ծանոթ է այս իրողությունը, որ հարկ չկա փաստարկելու: Այնուամենայնիվ, ավելորդ չենք համարում մի երկու օրինակ բերել Հ. Տաշյանի ցուցակից.

ա) նո. 13 ձեռագիրը նկարագրելիս («Անայօծիայ») Տաշյանը հայտնում է, որ «Թարգմանչին ազգին մէջ կան մի քանի մը տեղեկութիւնք թարգմանութեան կերպին վրայ, առանց կարեւոր տեղեկութեանց: Հոս չենք դներ այդ կտորները, վասն զի դրած ենք արդէն Վիեննայի կայսերական գրատան հայ ձեռագրաց ցուցակին մէջ (Վիեննա, 1891), հմմտ. թիվ 2 (էջ 8)...», էջ 117:

բ) նո. 64 Գր. Աստվածաբանի «Առ որս» գիրքը նկարագրում է 4 սյունակներով (էջ 289-290), իսկ նո. 96 ձեռագրի նույն բնագիրը՝ ընդամենը մի քանի տող՝ գրելով «մանրամասնութիւնները տե՛ս թ. 64»:

գ) նո. 135 - «Մատեանս Ամիրդովլաթայ Ամասիացւոյ Օգուտ բժշկութեան և Աքրապատին համառօտ կամ համառօտեալ խմբագրութիւն, ճիշտ նոյն թ. 75 ձեռագրի: Մանրամասնութիւնք տես նույն տեղ և ի «Հետազօտութիւնս նախնեաց ռամկօրէնի» (էջ 313-364, 378-432 են, ուր շատ օրինակներ բերված են այս ձեռագրէն), էջ 428 և այլն և այլն:

Каталог восточных рукописей АН Таджикской ССР

N 1 Тарих-и Табари

Տրված են անհրաժեշտ ծանոթագրություններ, իսկ նո. 2 և նո. 3-ը՝ գրված То же.

Այսպիսի «հղումները», կրկնում ենք, խիստ անհրաժեշտ են և օգտակար և հազիվ թե հնարավոր լինի ցույց տալ որևէ ձեռագրացուցակ, որի մեջ այն կիրառված չլինի: Բնականաբար, այդպիսի հղումներ կատարված են նաև «Նոր» տարբերակում (տե՛ս, օրինակ, նո. 7 և 8 ձեռագրերի նկարագրությունները):

«Հին» տարբերակի հիմքում դրված հղումների սիստեմը արմատապես տարբերվում է մինչև այժմ կիրառված հղումներից. այլ նպատակներ է հետապնդում և պարտադրում կատարել հետևյալ աշխատատար և, ինչպես կհամոզվենք ստորև՝ անօգուտ աշխատանքները՝ մինչև ամեն մի կոնկրետ ձեռագրի նկարագրությանն անցնելը.

ա) Պարզել, թե ողջ հավաքածուի մեջ քանի հատ կա այդ բնագրի ընդօրինակություն (այս բանը լիակատար պարզել մեր առկա ցուցակներով ոչ ամեն դեպքում է հնարավոր):

բ) Քանակը պարզելուց հետո՝ անհրաժեշտ է բոլոր ձեռագրերը համեմատել միմյանց հետ, որոշելու համար ամենալավ ձեռագիրը (սուբյեկտիվ բան է «լավագույնը որոշել»-ը. օր. նո. 49-ը բնավ լավագույնը չէ):

գ) Լավագույնը որոշելուց հետո (անկախ այն հանգամանքից, թե այն ինչ համարի տակ է գրանցված հավաքածուի մեջ և որ հատորում է տեղ գտնելու նրա նկարագրությունը) պետք է ամենայն մանրամասնությամբ արտագրել նրա բոլոր մասերի ու գլուխների խորագրերը, իրենց սկզբնատողերի հետ միասին:

Մանրակրկիտ այդ նկարագրությունը պետք է կատարել՝ բոլորին հաշվի չառնելով, թե տվյալ բնագիրը հանրահա՞յտ է, տպագրվա՞ծ է մեկ կամ բազմաթիվ անգամ, նկարագրվա՞ծ է հայերեն ձեռագրերի նախկին ցուցակներում կամ մատենագիտական արժեքավոր աշխատություններում:

դ) Այդ նկարագրությունը պատրաստելուց հետո միայն՝ նույն այդ բնագրի բոլոր ձեռագիր օրինակները նկարագրվելու են՝ հղվելով այդ «լավագույն» ձեռագրին: Նշվելու են բոլոր արտաքին տարբերությունները, որ ունեն մյուս օրինակները լավագույն համարված ձեռագրի նկատմամբ

(ներքին և էական տարբերությունները հայտնաբերել այս եղանակով հնարավոր էլ չէ):

Այս է գիտ. խորհրդի քննությանը ներկայացված «հին» տարբերակի հղումների սխտեմի էությունը:

Արդ, այս նորմածությունը ձեռագրացուցակների կազմման բնագավառում կիրառվելով մեր «Մայր ցուցակի» առաջին պրակում գործնականորեն ի՞նչ արդյունք է տվել և հնարավո՞ր է արդյոք ընդունել այդ և առաջնորդվել նրանով:

Ոչ և հազար անգամ ոչ. և ահա ինչու.

1) Այս եղանակով նկարագրություններ կատարելիս ձեռագրերն անհարկի կերպով կախման մեջ են դրվում միմյանցից և ցուցակին դիմողը՝ ամեն մի կոնկրետ ձեռագրի նկարագրության հետ ծանոթանալիս՝ ի վիճակի չի լինում անհրաժեշտ ու ամբողջական պատկերացում կազմելու այդ ձեռագրի բովանդակության մասին:

Քննության ներկայացված Ա պրակում այդպես են նկարագրված բազմաթիվ ձեռագրեր. օրինակ նո. 1-ը - Ագաթգիրք և Առաքել Սյունեցու բանաստեղծություններ,

նո. 3 - Աղբիւր բացեալ

նո. 4 - Անալօճիա

նո. 6 - Աղբիւր բացեալ

նո. 13 - Անալօճիա

նո. 14 - «

նո. 15 - «

նո. 16 - «

նո. 17 - «

Անտառ նորագոյն մտածմանց

նո. 18 - «

նո. 19 - «

նո. 20 - Դիոնիսիոս Արիսպագացի (լեհացու թրգմ.)

նո. 27 - «

նո. 28 - «

նո. 29 - «

նո. 30 - «

նո. 31 - «

նո. 32 - «

նո. 48 - Դիոնիսիոս Արիսպագացի (Սիւնեցու թրգմ.)

նո. 50 - «

50-ից 19-ը ձեռագիր, այսպիսով, հղված են այլ ձեռագրերի իրենց ամբողջությամբ: Սակայն այդ դեռ բոլորը չէ: Այլ ձեռագրերի միջոցով են մատուցված նաև նկարագրված ժողովածուների մեջ առկա մի շարք նյութմիավորներ: նո. 5-ի 3-րդ և 4-րդ նյութը, նո. 6-ի՝ 1-ին նյութը, նո. 8-ի 1-ին նյութը, նո. 20-ի 2-րդ նյութը և այլն և այլն:

Պարզ պատկերացում կազմելու համար հղման այդ եղանակի մասին՝ բերենք մի երկու բնորոշ օրինակ.

1) նո. 1 ձեռագրում կան Առաքել Սյունեցու 13 տաղերը, որոնք թվարկված են սովորական կարգով «Նոր» տարբերակում: «Հին» տարբերակում այդ տաղերի նկարագրությունը կատարված է այսպես.

(Առաքել Սիւնեցի, բանաստեղծութիւնք).

Ծնթ. Ձեռագրի 73բ-100ա-րդ թերթերում գտնվում է Առաքել Սյունեցու բանաստեղծությունների այն շարքը, որը կա նո. 83-ում (138ա-229ա՝ հետևյալ տարբերություններով, այստեղ չկան 11-13 և 19-23-րդ բանաստեղծությունները, իսկ մնացածներն ունեն հետևյալ հաջորդականությունը՝ 73բ/16, 75ա/17, 77ա/1, 78բ/4, 80ա/5, 82բ/6, 84ա/15, 85բ/2, 87բ/3, 90ա/7, 91բ/8, 94ա/14, 95բ/1, 96բ/9, 98ա/10: Ընդ որում 82բ, 91բ, 96բ երեսներից սկսվողները՝ վերջից պակասավոր են («հին» էջ 2)

2) նո. 37 ձեռագիրը սպառիչ (ավելին ոչ ոքի պետք չէ) նկարագրված է «Նոր»-ում այսպես ... (էջ 63):

«Հին»-ում ամբողջ վերնագիրը մեջ բերելուց հետո, գրված է «Տե՛ս ձեռ. նո. 84, 2ա-67ա, աղոթք 1-14: Այստեղ անխորագիր են 1, 13, 14-րդ աղոթքները. 10-րդ աղոթքն սկսվում է «Յս Քս թագաւոր...» բառերով: 8 և 10-րդ աղոթքները համառոտ են և նման տպագրին: Սույն ձեռագիրն ընդօրինակված է երկու գրչի կողմից, առաջինն արտագրել է 1-9-րդ աղոթքները...»:

3) նո. 39 ձեռագրի 18-րդ նյութը «Նորում» նկարագրված է այսպես՝ (Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց...// Տէր եթէ զշրթունս իմ բանա... (կարգալ էջ 67):

Լռիվ և սպառիչ

«Հին» տարբերակում գրված է «Ժամագիրք» Տես ձեռագիր նո. 509, էջ 1բ-236բ: Ունի հետևյալ տարբերությունները: Ա մասից (էջ 130ա-165ա) կան միայն 1-3, 12, 11, 13, 17, 18, 21-րդ նյութերը: Բ մասից (165ա-199ա) չունի 2-րդ խորագիրը և կից բերված նյութերը՝ բացի սաղմոսներից, ինչպես նաև 3-ին կից երգերը, 10-ին կից նյութերը: 4, 9, 11-13-րդ նյութերը գտնվում են ոչ իրենց տեղերում: 5-րդ նյութի խորագրում Գր. Լուսավորչի անունը չի նշված: Գ մասի (199ա-208ա) 2-րդ նյութին կից «Քարոզ...», և այլն և այլն (էջ 100):

Պարզ է, որ այս սիստեմը ոչ թե նպաստում է պարզեցնելու ձեռագրերի նկարագրությունը, օգնելու բանասերին, այլ խճողում է նյութը, արհեստական բարդություններ ստեղծում ու խիստ դժվարացնում բանասերի աշխատանքը:

2) Հղումների այս սիստեմի մյուս էական թերությունը, որը ճակատագրական կարող է լինել մեր ցուցակի համար, կայանում է նրանում, որ ինչպես ասացինք, այս սիստեմը պահանջում է ամեն մի բնագրի լավագույն համարված օրինակը, անկախ այդ բնագրի գիտական արժեքից ու կարևորությունից, նկարագրել ցուցակում ամենայն մանրամասնությամբ, իրենց գլուխներով, ենթագլուխներով, երբեմն նաև պարագրաֆներով (անտարակույս՝ իրենց սկզբնատողերի հետ միասին):

«Հին» տարբերակի ամենախոցելի կողմը, մեր կարծիքով, կապված է հենց այս դրույթի և նրա հետևողական ու համառ կիրառման մեջ: Եթե մի վայրկյան անտեսենք ժամանակակից գիտության պահանջները և հետաքրքրությունները և մեր ձեռագրաց ցուցակը քննարկենք մեզնից մեկ դար առաջ ապրած հայագետների տեսանկյունից, դարձյալ ստիպված կլինենք հաստատելու, որ այն անընդունելի է ըստ ամենայնի: Դրա դեմ իրենց կատարած մնայուն գործերով բողոքում են հայերեն ձեռագրացուցակների նշանավոր կազմողները, անցյալի մեր մատենագետներն ու անվանի բանասերները:

Խոսենք փաստերով.

Մեր նո. 13 ձեռագիրը պարունակում է Մարտինոս Պեքանեանի «Անալօճիա» աշխատությունը, թարգմ. լատիներենից 1714 թ. Վենետիկում Պետրոս վրդ. Թիֆլիզեցու կողմից: Այդ բնագրից բազմաթիվ օրինակներ

կան գրեթե բոլոր հայերեն ձեռագրերի հավաքածուներում, ուստի և վաղուց ի վեր նկարագրվել են Ձեռագրացուցակներում:

Տաշյանն այդ բնագիրը իր ցուցակում նկարագրել է ընդամենը մեկ սյունակով, շատ ավելի քիչ տեղ են տվել նրան Ն. Պողարյանը, Ա. Սյուրմեյանը և ձեռագրաց այլ ցուցակների հեղինակները:

«Նոր» տարբերակում այն նկարագրված է այնպես, որ միանգամայն բավարարում է մատենագիտության պահանջներին (կարդալ էջ 23): Իսկ «Հին» տարբերակում այն սկզբից կազմվել է 27 մեծադիր էջով, ապա (երկար վեճերից հետո) համառոտվել և բռնել 15 սովորական (կամ 9 մեծադիր) մեքենագիր էջ:

Ծանոթանանք այդ նկարագրության հետ (կարդալ կամ ծանոթացնել).

Ես չեմ ցանկանում երկար ու ձիգ դատողություններ անել այս նկարագրության կապակցությամբ, բայց պարզ չէ՞ միթե, որ այն ոչ ոքի պետք չէ. կատարված է տաժանելի, բայց անօգտակար աշխատանք: Դրանով ավելանալու են միայն ցուցակի էջերը, երկարաձիգ տարիներով ձգձգվելու է նրա կազմման ժամկետը, բայց գիտությունը ոչինչ չի շահելու դրանից:

Այսպիսի օրինակներ, հենց միայն նո. նո. 1-50 ձեռագրի նկարագրությունը պարունակող այս պրակից կարելի է բերել տասնյակներով: Բայց նշենք միայն եւս մի երկուսը:

Պետրոս Բերումյանը, ի թիվս այլ գործերի, ունի ավետարանական առակներ «Աղբիւր բացեալ» կոչված մի մեկնություն, որից հասել են տասնյակ օրինակներ:

Տաշյանի ցուցակում այն նկարագրված է 2 անգամ. ա) նո. 136 ձեռագիրը՝ 50 փոքր տողով, բ) նո. 212 ձեռագիրը՝ 34 տողով (կարդալ էջ 429-430):

Ն. Պողարյանը նույն «Աղբիւր բացեալի» նկարագրությունը հատկացնում է 10-15 տող միայն:

«Նոր» տարբերակում առաջին անգամ նրա մասին խոսվում է փոքր ինչ ավելի քան մյուս դեպքերում այսպես (նո. 2):

«Աշխատությունը անվերնագիր է, սկիզբ... (կարդալ էջ 5):

Իսկ «Հին» տարբերակում «Աղբիւր բացեալին» հատկացված է 3 մեծադիր էջ (ծանոթացնել, էջ 4-6):

Ո՞ւմ է պետք գալու այս նկարագրությունը, գիտական ի՞նչ հարցեր են լուծվելու նրանով: Նույնպես պարզ է, որ թափված է ավելորդ աշխատանք: Թող թույլ տրվի բերել բազմաթիվներից ևս մեկ օրինակ:

Դիոնիսիոս Արիոպագացու անունով հայտնի աշխատությունները հանրահայտ են գիտությանը: Դրանց մասին գրված են ընդարձակ մենագրություններ. դրանց մասին խոսվում է աստվածաբանության և փիլիսոփայության պատմության նույնիսկ դասագրքերում: БСЭ-ն, որ շատ ժլատ է հին և միջնադարյան եկեղեցական հեղինակների մասին իր հոդվածներով, նվիրել է նրան մի քանի տող, որտեղ ասված է. «Дионисий Ареопагит — первый афинский епископ, живший в I в. Через несколько сот лет после него, приблизительно во второй половине 5 в. под этим же именем выступил неизвестный философ в качестве автора сочинений “Об именах Бога”, “О мистической теологии”, “О небесной иерархии”, “О церковной иерархии” и др...».

(Սրանք ոչ թե ինքնահնար վերնագրեր են՝ տրված «Նորի» մեջ, այլ գիտության մեջ ընդունված ու համընդհանուր ճանաչում ստացած վերնագրեր):

Այդ աշխատությունները երկու անգամ (8-17-րդ դդ.) թարգմանվել են նաև հայերեն: Դրանք վաղուց ի վեր հայտնի են բանասիրությանը:

Գ. Զարբհանալյանը «Մատենագրութ. հայկ. թարգմ. նախնեաց» աշխատության մեջ, տպ. 1889 թ. այդ թարգմանությունների մասին գրել է 14 էջ (էջ 381-394), բերել նրանց վերնագրերը, թվարկել իրեն հայտնի ձեռագրերը ևն:

Տաշյանն իր ցուցակի անվանացանկում մանրամասնորեն ավել է Դիոնիսիոսի մատենագիտությունը, նշելով թե հայկ. թարգմանություններից ինչ է տպագրված և դրանց մասին ինչ կարծիքներ են հայտնված: Չենք տարակուսում, որ ավելի մանրամասն այդ թարգմանությունների մասին կխոսի նաև Հ. Անասյանն իր «Մատենագիտության» մեջ:

Եվ այս բոլորից հետո «Հին» տարբերակի հեղինակն անհրաժեշտ է համարել երկու անգամ (ձեռ. նո. 49 և նո. 110) 4 ընդարձակ էջերի վրա թվարկել Դիոնիսիոս Արիոպագացու աշխատությունների ոչ միայն վերնագրերը, այլև բոլոր գլուխ-ենթագլուխները: Եվ այս արված է այն դեպքում, երբ նույնիսկ Զարբհանալյանը բավարարվել է նշելով, որ գիրք

«Յաղագս երկնային քահանայապետութեանց» աշխատությունը «ամփոփեալ է ի հնգետասան գլուխս», հարկ չհամարելով թվարկել այդ գլուխները (կարդալ էջ 142-145):

Այսպիսով, ավարտելով մեր տարակուսանքը հղումների սիստեմի երկրորդ էական թերության մասին, նորից շեշտում ենք՝ հանրահայտ ու սակավարժեք բնագրերի նկարագրության այդ նորահնար, իր նախադեպը չունեցող եղանակը մերժելի է ըստ ամենայնի, ոչինչ չի տալիս գիտությանը, ձգձգում է մեր ցուցակի գործը, կրկնապատկում ցուցակի ծավալը:

3) Հղումների այս սիստեմը պաշտպանության տակ է առնվում այսպիսի պատճառաբանություններով. այդ ընդարձակ նկարագրությունները արվում են այն նպատակով, որպեսզի ամբողջական պատկերը տան ձեռագրի և համապատասխանաբար համառոտվեն բոլոր այն ձեռագրերի նկարագրությունները, որոնք հղվում են ընդարձակորեն նկարագրված ձեռագրերին: Այդ պատճառաբանությունը անհիմն և սխալ է:

Այդ ձեռագրերի հղված նկարագրություններն ավելի համառոտ չեն, քան դրանք նկարագրված են «Նոր» տարբերակում:

Այսպես, օրինակ, նո. 48 ձեռագիրը «Հին» տարբերակում հղված է նո. 49-ին (որի նկարագրությունն ատացինք, որ բռնում է 4 մեծադիր էջ): Չնայած դրան, այդ հղվող՝ նո. 48 ձեռագիրը «Հին» տարբերակում նկարագրված է գրեթե կրկնակի անգամ ընդարձակ, քան «Նոր» տարբերակում: Եվ սա պատահական օրինակ չէ, այլ օրինաչափ բոլոր հղվող ձեռագրերի համար: *Այսպես. քննարկման ներկայացված ցուցակի Ա պրակում կա 6 «Անալոճիա» (նո. նո. 4, 13, 14, 15, 16, 17), ըստ որում, նրա ընդարձակ նկարագրությունը դուրս է այս հինգյակից և բոլոր նկարագրությունները համառոտ են ու հղվող: Չնայած դրան «Հին» տարբերակում «Անալոճիայի» նշված ձեռագրերը նկարագրված են 135 տողով, «Նոր» տարբերակում 105 տողով:*

Դիոնիսիոս Արիոպագացու երկերի Ստեփանոս Լեհացու թարգմանության ձեռագիրը Ա պրակում 7-ն են (նո. նո. 26-32)՝ «Հին»-ում դրանք բոլորն էլ հղվում են ընդարձակորեն նկարագրվող նո. 110-ին, ուստի նկարագրված են համառոտ: Չնայած դրան, այդ ձեռագրերի նկարագրությունը «Հին»-ում գրավել են 260 տող, իսկ «Նոր»-ում ընդամենը 163 տող: Ի՞նչ անենք, կասեն մեզ. այդ նկարագրությունները չնայած հղվում են

ավելի ընդարձակին, իրենք էլ ընդարձակ են «Նոր»-ի համեմատությամբ, բայց ավելի ճշգրիտ ու պարզ պատկերացում են տալիս ձեռագրի մասին, ուստի նախընտրելի են, քան «Նորի» նկարագրությունները:

Այս տարբերությունը ևս անհիմն կլինի և սխալ:

«Նոր» տարբերակի նկարագրությունները համառոտ լինելով հանդերձ՝ ավելի լրիվ ու ամբողջական պատկերացում են տալիս նկարագրվող ձեռագրի մասին հենց այդ նկարագրության մեջ, առանց չարչարելու բանասերին, հղելու նրան այս ձեռագրից մի այլ ձեռագիր, առաջին հատորից մի այլ հատոր և այլն: Համոզվենք այս բանում մի քանի փաստերով:

Նո. 26 ձեռագիրը, օրինակ «Նոր» տարբերակում նկարագրված է այսպես.

1. Յաղագս երկնային քահանայապետութեան (5ա-53բ)

2. Յաղագս եկեղեցական քահանայապետութեան (53բ-103ա)

3. Յաղագս աստուածային անուանց (103ա-202ա)

4. Յաղագս խորհրդական աստուածաբանութեան (202-209ա)

5. Թուղթ զանազան - Առ Գայոս (թուղթք չորս, 209ա-212բ), Առ Դորոթէոս (212բ-231ա): Առ Սոսիպատրոս (213ա): Առ Պօղիկարպոս (213ա-216բ): Առ Դիմովիլոս (216բ-223բ): Առ Տիտոս (223բ-230ա): Առ Յովհաննէս (230ա-231բ):

6. Դիոնիսիոս Արիոպագացու կենսագրությունը (231բ-233ա)

7. Թարգմանչի հիշատակարանը (233ա)

Սրա փոխարեն «Հին» տարբերակի նույն ձեռագրի նկարագրության մեջ գրված է.

«Տե՛ս ձեռ. նո. 110, 1-351 (գրքերի տեղերը՝ Ա=4ա-53բ: Բ=53բ-103ա: Գ= 103ա-202ա: Դ= 202ա-209ա: Ե= 209-234):Այստեղ չկան նո. 110-ի 347բ-ում գտնվող թուղթը (սկ. «Ծանիցէ...»), ինչպես նաև Դ գրքի Դ և Ե գլուխների խորագրերը: Գ գլքի 4-րդ գլխի ԺԳ «բնաբանը» զետեղված է ձեռագրի վերջում (234ա)», («Հին», էջ 61-62):

Փորձենք մտովի օգտվել այս նկարագրությունից. քանի՞ անգամ պետք է բացենք այն հատորը, որտեղ նկարագրված է նույն բնագրի մայր օրինակը. 5 անգամ՝ պարզելու համար, թե ինչ են նշանակում Ա, Բ, Գ, Դ, Ե գրքերը, 6-րդ անգամ՝ պարզելու համար թե այն ո՞ր թուղթն է, որ կա նո. 110ա ձեռագրի 347բ էջում, բայց բացակայում է այս ձեռագրից: 7 և 8-րդ

անգամ՝ պարզելու համար թե 4-րդ գրքի ո՞ր գլուխներն են, որոնց խորագրերը բացակայում են ձեռագրից, 9-րդ անգամ՝ թե այդ ինչ «բնաբան» է, որի տեղը խախտված է սույն ձեռագրում:

Այդ աննպատակ ու հոգնեցուցիչ աշխատանքը կատարելուց հետո էլ՝ այնպիսի հստակ պատկերացում ձեռագրի մասին չենք կարող ստանալ, ինչպիսին տրված է «Նոր» տարբերակում, ուր ամենասեղմ, բայց բանասերի համար լիակատար պարզությամբ տրված է ձեռագրի նյութերի ամբողջական ցանկը:

Վերջացնենք մեր առարկությունները «հղումների» յուրօրինակ, աննախադեպ ու ոչ պիտանի այդ սիստեմի մասին: Այն մերժելի է իր բոլոր ատրիբուտներով, որովհետև.

ա) խլում է հսկայական ժամանակ հավաքածուի մեջ առկա միևնույն բնագիրը որոնելու պահանջով.

բ) ամիսների սիզիֆյան աշխատանք է պահանջում միևնույն բնագրի օրինակներն իրենց արտաքին հատկանիշներով միմյանց հետ համեմատելու և «լավագույնը» գտնելու համար:

գ) Սխալների դուռ է բացում պատահական մի ձեռագիր՝ «լավագույն» համարելու առումով.

դ) պահանջ է ներկայացնում բոլոր բնագրերը, անկախ դրանց գիտական արժեքից կամ հայտնի-անհայտ, տպագրված-անտիպ լինելուց՝ նկարագրել գիտության համար ոչ պիտանի ինքնանպատակ մանրամասնություններով:

ե) բազմաթիվ ձեռագրեր ինքնուրույն նկարագրվելու և անմիջապես բանասերին օգտակար լինելու փոխարեն՝ հղվելով մեկ ուրիշ ձեռագրի, կախման մեջ են դրվում դրանցից և կորցնում իրենց բովանդակության հստակությունը, որով և խիստ դժվարանում է ցուցակից օգտվելու աշխատանքը:

զ) նկարագրության պրոցեսը բարդանում և երկարաձգվում է համեմատական ծանր ու անօգտակար այդ աշխատանքի հետևանքով.

է) շատ ու շատ անգամ ավելի ընդարձակ նկարագրություններ են ստացվում քան սովորական նկարագրությունների ժամանակ.

ը) ունենում ենք ժամանակի, ծավալի, եռանդի ու միջոցների հսկայական կորուստ:

Այս բոլորից հետո պարզ է ուրեմն, որ հղումների այս նորահնար սիստեմը որևէ առավելություն չունենալով, միայն խճողում է ու բարդացնում ցուցակը, ուստի մերժելի է ըստ ամենայնի: Հղումներ կատարվելու են այնպես, ինչպես դրանք կատարվել են Տաշյանի և մեր մյուս հմուտ բանասերների կողմից:

2. Մեխանիկական նկարագրություն

«Հին» տարբերակի ամենաակնառու թերություններից մեկն էլ կայանում է նկարագրողի միջանկյալ ու բացատրական խոսքի գրեթե բացակայության, գլուխների, ենթագլուխների և այլ միավորների ընդօրինակման ճանապարհով:

Այդ եղանակը համառոտ կիրառման իր պահանջով նույնպես «նորամուծություն» է. դրան չեն հետևել ո՛չ Տաշյանը և ո՛չ էլ մեր լավագույն ձեռագրացուցակների մյուս կազմողները:

Տեսական հողի վրա երկար կարելի է խոսել այս եղանակի արատավոր ու աննպատակահարմար լինելու մասին: Օգտակար ենք համարում սակայն, բացահայտել այդ քննության գրված նկարագրություններից համապատասխան փաստեր բերելու ավելի դիպուկ ու ակնառու ճանապարհով:

1) Մեր նո. 2 ձեռագիրը, ինչպես արդեն ասել ենք, պարունակում է Պետրոս Բերդումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունը: «Հին» տարբերակում այն, տեսանք, որ նկարագրված էր 3 մեծածավալ էջերի վրա, որոնցում թվարկված էին այն աշխատության բոլոր ենթագլուխները, իրենց սկզբնատողերով:

Ձեռագրաց այդ ցուցակից օգտվողը, եթե նույնիսկ համբերություն ունենա և ընթերցի այնտեղ բերված 35 սխոլաստիկական վերնագրերն իրենց սկզբնատողերով, հազիվ թե գլխի ընկնի, որ այդ աշխատությունն իրենից ներկայացնում է Ավետարանական առակների մեկնություն (այդպես էլ հենց վերնագրված է, օրինակ, Ն. Պողարյանի ցուցակում, 4-րդ հատոր, էջ 433 ևն):

«Նոր» տարբերակում, որտեղ այդ ձեռագրի բովանդակությունը բացահայտված է ընդամենը 10 տողով, պարզ գրված է, որ այն «Ավետարանական առակների ժողովածու է՝ փոքրիկ բացատրություններով ու մեկնություններով» (էջ 5):

Պարզ է, ուրեմն, որ հակիրճ մի նախադասությամբ շատ ավելի բան է ասված, քան 3 ընդարձակ էջերի 35 ենթավերնագրերի ու սկզբնատողերի միջոցով:

2) Նո. 9 ձեռագրի 3-րդ նյութը «Նոր»-ում նկարագրված է այսպիսի խորագրով՝ «Բենիկ վարդապետի Տեսիլը և Աղոթամատույցը...», *Տպ. «Սոփերք Հայկականք» ԻԱ, Վենետիկ, էջ 5-141), այնուհետև ասված է, որ ձեռագրում բնագիրն ավելի կատարյալ է... տպագրում իրար են խառնված տարբեր գլուխների պատկանող հատվածները... Ձեռագրում գլուխներն իրարից բաժանված են «Նորին ի նոյն գրոց» խորագրով... Տպագրի 8 գլուխները համապատասխանում են ձեռագրի 12 գլուխներին... ևն:*

Բանասերը՝ ավելի քան ասված է այստեղ, երազել անգամ չէր կարող:

Դրա փոխարեն «Հին»-ում նույն այդ նյութը բաժանված է 10 համաբակիր հատվածների՝ նորին Բենիկ վարդապետի, նորին ի նոյն գրոց, (4 անգամ), նորին յաղօթք յորդի, նորին ի նոյն գրոց և այլն խորագրերով: Բերված են դրանց բոլորի սկզբնատողերը, վերջում էլ ասված է, որ «Սոփերքում» տպված են 13, 14, 16, 17, 20, 18, 19, աղոթքները (պետք է հասկանալ՝ այս ձեռագրի համարակալությամբ, զի ձեռագրում կան ընդամենը 12 աղոթքներ) և այլն:

Չնայած գրեթե կրկնակի անգամ ավելի տեղ է գրավել, բայց այս նկարագրությունը մեխանիկական է, դժվարընկալելի, շփոթությունների դուռ բացող, ինչպես և մասամբ սխալ:

3) Նո. 10 ձեռագիրը («Ապաշխարութիւն» Պետր. Բերդումյանի) «Նորում» նկարագրված է բանասիրորեն, տրված են նրա կառուցվածքի, պարունակության ու գրության շարժառիթների մասին անհրաժեշտ տվյալներ՝ 1, 2 էջի սահմաններում, այնուհետև՝ թվարկված են այդ աշխատության մեջ եղող չափածո ոտանավորները (որ կարելի էր կրճատել):

«Հին»-ում հարազատ մնալով մեխանիկական նկարագրության սիստեմին, բայց հակասելով ձեռագրերի գլուխների ու ենթագլուխների թվարկման այդ տարբերակի համար պարտադիր սկզբունքին՝ թվարկված են ըստ գլուխների բոլոր չափածոները՝ անխտիր, աղոթքների և այլ վերնագրերի հետ խառն ձևով:

«Նոր»-ում ձեռագրի ամբողջ նկարագրությունը բռնել է 2,5 էջ: «Հին»-ում 4-ից ավելի էջ. այդ ավելի էջերը սակայն, սխալ սկզբունքի հե-

տեսանքով վնասում են և ոչ թե օգնում են բանասերին:

4) Շատ ուշագրավ է նաև նո. 11 ձեռագրի նկարագրությունը մեխանիկական եղանակի բացահայտման առումով. «Հին»-ում իրար հետևից ընդօրինակված է, ըստ ձեռագրի էջերի հերթականության 72+5 (77) նյութ (խորագիր, իր սկզբնատողով):

«Նոր»-ի կազմողները ձեռագրի նկարագրությանը մոտեցել են ստեղծագործաբար՝ ի մի են բերել նույն հեղինակին պատկանող աղոթքներն ու մաղթանքները՝ Օր. Մեսրոպայ վարդապետի (9-րդ միավոր), Հովհ. Գառնեցու (10-րդ միավոր), Մխ. Գոշի (18-րդ միավոր) և այլն, և 22 համարաթվերի տակ նկարագրել խիստ պարզ ու դյուրընկալելի ձեռագրի ողջ նյութը:

5) Նո. 12 ձեռագիրը մեր մանկավարժության պատմության մեջ շատ հայտնի լեհահայոց Այբբենարանն է, որից 3 ձեռագիր օրինակ կա Վիեննայի Մատենադարանում և նկարագրված է Տաշյանի ցուցակում (նո. նո. 488, 520, 530): Դրա մասին գրվել է հատուկ հոդված Մ. Գասպարյանի կողմից, ինչպես և խոսել է Ա. Մովսիսյանն իր «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» աշխատության մեջ: Նկարագրված է պատշաճ մանրամասնությամբ Հ. Անասյանի «Մատենագիտության» մեջ:

Ձեռագրերի մեխանիկական նկարագրման խոտելի եղանակը թելադրել է «Հին» տարբերակի կազմողներին այդ ձեռագրի բովանդակությունը ներկայացնել գրեթե 5 մեծածավալ էջերի վրա, թվարկելով այդ Այբբենարանի վերջում եղող բոլոր՝ շուրջ 200 աղոթքները, մաղթանքները և նման նյութեր, ակնարկ անգամ չանելով այն մասին, որ այդ «Այբբենարանը» հայ բանասիրությանը քաջ հայտնի գործ է:

Այսպես, իրար հետևից կարելի է փաստեր բերել քննարկման ներկայացված գրեթե բոլոր ձեռագրերի նկարագրություններից, որոնք առանց բացառության ցույց են տալիս մեխանիկական *կամ* ֆորմալ *նկարագրության խիստ տխուր հետևանքները մեր Մայր ցուցակի համար:*

Բարեբախտաբար «Նոր»-ում հաղթահարված է այդ ոչ գիտական համակարգը և ձեռագրերն իրենց գերակշիռ մասով նկարագրված են գիտականորեն, խիստ հակիրճ պարզաբանումներով ու բացատրություններով: (Անհրաժեշտության դեպքում, դեմ դիմաց համեմատել «Հին»-ի և «Նոր»-ի հետևյալ համարները.

նո. 20	*Հին էջ*	*41*	*«Նոր» էջ*	*27*
նո. 33	*« «*	*69*	*« «*	*50*
նո. 34	*« «*	*74*	*« «*	*55*
նո. 35	*« «*	*76*	*« «*	*55*
նո. 36	*« «*	*88-92*	*« «*	*60*
նո. 42	*« «*	*112-114*	*« «*	*77*

Այսպիսով, անառարկելի է այն իրողությունը, որ «Հին» տարբերակն անհաջող է ու մերժելի նաև ձեռագրական նյութերի մատուցման մեխանիկական, պարզունակ իր սկզբունքով, որի կիրառության հետևանքով ձեռագրերի նկարագրություններն ընդարձակվում են՝ բայց ոչ հօգուտ, այլ ի վնաս նրանց բովանդակության խելամիտ ու գիտական բացահայտման:

3. Ձեռագրական նյութերի թվարկման ու համարակալության խառնաշփոթ եղանակ

«Հին» տարբերակի օգտագործումը արհեստականորեն բարդացել է ձեռագրական նյութերի մատուցման համար կիրառված ոչ ռացիոնալ ու բարդ եղանակով, որի էությունը կայանում է հետևյալում. ձեռագիր ժողովածուների մեջ ընդօրինակված նյութ-միավորներն ըստ իրենց բովանդակության ու հերթաշարի՝ բաժանվում են մի քանի խմբերի, այդ խմբերին տրվում է ձեռագրից քաղված կամ նկարագրողի կողմից ստեղծված որևէ խորագիր, խորագրերը զատվում են միմյանցից լատինական հերթական համարակալությամբ՝ I, II, III, IV ևն. լատինական համարակալություն կրող այդ խորագրերից յուրաքանչյուրի տակ՝ նկարագրվում են նյութ-միավորները, որոնց տրվում է արաբական թվանշաններով՝ հերթական համարակալություն՝ 1-3, 1-10, 1-20 և այլն (նայած ձեռագրի բովանդակության):

Պարզ պատկերացում կազմելու համար այդ եղանակի մասին, ծանոթանանք, գիցուք նո. 5 ձեռագրի նկարագրության հետ (նույն բնույթն ունեն նաև բոլոր մյուս ձեռագրերը, որոնցում կան մեկից ավելի նյութ-միավորներ):

Նո. 5 ձեռագիրը ժողովածու է.

Ձեռագրի բովանդակությունը մատուցված է այսպես.

I. Գիրք երիցս երանեալ առաքելոյն և աւետարանչին Յոհաննու...

Այս ընդհանուր խորագրի տակ նշված են այդ միավորի 9-ը բաղկացուցիչ մասերը՝ իրենց վերնագրերով ու սկզբնատողերով:

II. [Հարցմունք և պատասխանիք, քարոզք, կանոնք եղիշէի] *(ինչպես տեսնում ենք այստեղ մի խորագրի տակ միացված են տարբեր բովանդակության ու բնույթի նյութեր). սորև նկարագրված են 9 տարբեր նյութ-միավորներ:*

III. Ի Վարդանայ վարդապետէ արարեալ մեկնութիւն երգոց երգոյն ի յոյսն Քս *- 2 միավոր*

IV. Ածատրոյ Համադանցւոյ... արարեալ ժողովածու...

7 ենթախորագիր իր սկզբնատողերով:

V. Կտակ և Մեկնութիւն տն մերոյ Յի Քի *- 2 ենթախորագիր-նյութ*

VI. Գիրք որ կոչի «Աղբիւր բացեալ» *- մեկ ընդարձակ հղում նո. 2-ին և 3 նյութ- միավոր:*

Արդ, քանի՞ նյութ-միավորից է բաղկացած այս ձեռագիրը: Այդ բանը պարզելու մեկ միջոց կա, գումարել իրար լատինական համարակալությամբ մեջ բերված խորագրերից յուրաքանչյուրի տակ թվարկված նյութ-միավորների քանակը: Ստացվում է 9+9+2+7+2+3=այսինքն՝ 32 միավոր, իրականում սակայն ձեռագիրը պարունակում է 12 ձեռագրական միավոր:

Ծանոթանանք նաև նո. 20-ի նկարագրության հետ, որն այսպիսի կառուցվածք ունի.

I. [Բնագիրք զանազանք] *- 17 նյութ*

II. Քարոզք Գր. Տաթ. *- 5+7+x (հնարավոր չէ պարզել)*

III. [Բնագիրք զանազանք] *- 31 նյութ*

IV. Քարոզք Գր. Տաթ. *- 6 նյութ*

V. [Բնագիրք զանազանք] *- 4 նյութ*

Այս դեպքում ևս անհնար է որոշել, թե քանի նյութ-միավոր է պարունակում ձեռագիրը. բացի այդ՝ տարակուսանք են առաջացնում 3 անգամ «Բնագիրք զանազանք» և 2 անգամ «Քարոզք Գր. Տաթ.» վերնագրերը: Չէ՞ որ Գր. Տաթևացու քարոզները ևս կարող էին դիտվել որպես «Բնագիրք զանազանք» և ձեռագրի բովանդակած նյութերը մատուցվել պարզ ու դյուրին և ըմբռնելի այն սկզբունքով, որն ընկած է «Նորի» հիմքում:

Օրինակների թիվը կարելի է բազմապատկել ցանկացած չափով. վերցնենք, դիցուք, նո. 41 ձեռագրի երկրորդ մասի նկարագրության

կառուցվածքը «հին» տարբերակում.

I. Աղօթամատոյց Յով. Գառնեցու

II. Աղօթք զանազանք են *- 11 նյութ-միավոր*

III. Աղօթք ի ժամ պատարագի *- 13 նյութ-միավոր*

IV. Աղօթք զանազան են *- 14 միավոր*

Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ աղոթքներ են, ուստի լատինական համարակարգը և անհարկի ստեղծված խորագրերը նրանց համար՝ միայն խճողում են նկարագրությունը և խիստ դժվարացնում նրա բովանդակության մասին հստակ պատկերացում կազմելը:

Խճողումների այս եղանակն իսկական պատուհաս է դառնում այն դեպքերում, երբ «հին» տարբերակում մի համարի տակ գրանցված ձեռագիրը բաժանվում է 2, 3, 4, 5, 7 և ավելի ձեռագիր-ալիգատների, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է որպես առանձին ձեռագրական միավոր: Հայտնի է, որ մեր ձեռագրերի մեջ կան այնպիսիները, որոնք հենց միջնադարում կազմվել են ձեռագրական տարբեր միավորներից: Այդ կարգի ձեռագրերի նկարագրությունն անշուշտ պահանջում է ընտրել ինչ-որ ձև՝ ճիշտ պատկերացում տալու համար այդ ձեռագրի մասին:

Այդ ձևն օրինակելի պարզությամբ ընտրել ու կիրառել է մեծանուն Հ. Տաշյանն իր ցուցակում: Վիեննայի նո. 78 ձեռագիրն, օրինակ, 3 տարբեր մասերից կազմված մի ժողովածու է: Տաշյանն այն վերնագրել է այսպես՝ «Հաւաքածոյ երեքմասնեայ», նկարագրության մեջ տվել է այդ մասերի բռնած էջերը և գրության առանձնահատկությունները, իսկ բովանդակությունը ներկայացրել է սովորական եղանակով, որպես միասնական ձեռագրի նկարագրություն:

Այդպես է արված նաև «Նոր» տարբերակում: Մեր նո. 34 ձեռագիրը բաղկացած է 5 տարբեր ձեռագրական միավորներից, որոնք ի մի են բերված հավանաբար ԺԸ դարում ու կազմված մի տուփի մեջ: Այդ ձեռագրի նկարագրության մեջ «Նոր» տարբերակում գրված է. «Ձեռագիրը բաղկացած է սկզբնապես իրարից անկախ գոյություն ունեցած և տարբեր վայրերում ու ժամանակներում ընդօրինակված հինգ ձեռագրերից՝ ա. էջ 1-100, ընդօր. Էջմիածնում 1764 թ., բ. էջ 101-256, 1767 թ., գ. էջ 257-276, դ. էջ 277-336, Նոր- Ջուղայ, 1707, ե. էջ 337-357» («Նոր» էջ 56): Այնուհետև բացահայտված են ձեռագրերի նյութերը սովորական կարգով, հերթական 7

համարների տակ:

«Հին» տարբերակում ձեռագրի նկարագրությունը ստացել է այսպիսի կերպարանք.

1) Տրված է նախ այդ բոլոր ձեռագրերի արտաքին նկարագիրը որպես մի ամբողջություն.

2) Ապա առաջին (նո. 34ա) ձեռագրի նկարագրությունը.

3) նո. 34ա-ի բովանդակությունը

I - 5 նյութ

II – 1 նյութ

III - 3 նյութ

4) ապա ձեռագրի հիշատակարանը

5) նո. 34բ-ի նկարագրությունը

6) բովանդակությունը (Սիմեոնի քարոզները (11 միավոր)

7) նո. 34գ ձեռագրի նկարագրությունը

8) բովանդակությունը

I - 2 նյութ

II - 5 նյութ

9) սրա հիշատակարանը

10) նո. 34դ ձեռագրի նկարագրությունը

11) բովանդակությունը

I - (բազմաթիվ ենթագլուխներով)

II - 2 նյութ

12) հիշատակարան

13) նո. 34ե-ի նկարագրությունը

14) բովանդակություն

I - 2 նյութ

II - 7 նյութ

15) հիշատակարան

Այսպիսի արտառոց խառնափնթորությամբ են նկարագրված նաև նո. 35 (7 ձեռագիր), նո. 36 և մի շարք այլ ձեռագրեր:

Ինչո՞ւ է այսպես ստացվել, ի՞նչն է ստիպել այդ տարբերակի կազմողներին գնալ իրոք օրինակելի այնպիսի եղանակ, որով ձեռագրերի նկարագրությունը ծայրահեղ խճողման է ենթարկվում ի հաշիվ նրա բովան-

դակության հստակ մատուցման:

Այդ հարցին կարելի է տալ միայն մեկ պատասխան.

Այդ նկարագրությունը բխում է մեխանիկական մոտեցումից. ձեռագիրը նկարագրողի կողմից դիտվում է ոչ որպես գիտական հետաքրքրությունների օբյեկտ, այլ որպես [մի տեսակ] պաշտամունքի առարկա:

Մեխանիկական նկարագրության այս եղանակը անխախտորեն դրված է նաև ձեռագրերի արտաքին նկարագրության հիմքում, ուստի անդրադառնանք «հին» տարբերակի նաև այդ բաժնին.

4. Ձեռագրերի արտաքին նկարագրության արհեստական ուռճացում

Ձեռագրերի արտաքինի նկարագրության նպատակն է անհրաժեշտ տվյալներ հաղորդել նրա թերթերի քանակի, գրության նյութի (թուղթ, մագաղաթ), չափերի, գրության առանձնահատկությունների (միասյուն, երկսյուն), գրչության տեսակի (երկաթագիր, բոլորագիր), կազմի, պահպանակի և հարակից արտաքին յուրահատկությունների մասին:

Տարբեր ձեռագրացուցակներում տարբեր է լինում արտաքին նկարագրության հարցակարգը: Հնում, երբ ձեռագրերը ցրված էին հարյուրավոր վանական հաստատություններում ու անհատ մարդկանց գրադարաններում, պահանջ էին զգում ավելի մանրամասն տվյալներ հաղորդել նկարագրվող ձեռագրերի մասին, նրանք ենթակա էին կորստյան, ոչնչացման, հափշտակման և այլն: Մանրամասն արտաքին նկարագիրը միակ եղանակն էր այդ ձեռագրերի ֆիքսացման:

Այժմ, դրությունը շատ է փոխվել: Ձեռագրերը ողջ աշխարհում համակենտրոնացվել են խոշոր գրադարաններում ու հատուկ հաստատություններում: Ձեռագրերի բազմացումը լուսանկարչության և, մանավանդ, միկրոֆիլմերի միջոցով՝ մտել է գիտական կենցաղի մեջ ամենուրեք, ինչպես և մեզ մոտ:

Եվ, վերջապես, ձեռագրերի բնագրերի հրատարակման գործը նոր թափ ու ծավալ է ստացել ողջ աշխարհում, բնականաբար նման պայմանները թելադրում են ձեռագրացուցակների կազմողներին ձեռագրերի արտաքին հատկանիշները նկարագրելու համար մշակել այլ հարցակարգ:

Եթե համեմատենք, դիցուք, Ն. Պողարյանի տարեց տարի հրատարակ-

վող ցուցակների հարցակարգը Հ. Տաշյանի ցուցակի հարցակարգի հետ, պարզ կնկատենք այն խոշոր տարբերությունը, որ կա նրանց միջև:

Բերենք ևս մեկ-երկու օրինակ: Ինչպես հայտնի է, մեր մերձավոր հարևանները՝ վրացիները, արդեն հրատարակել են իրենց ձեռագրերի մեծագույն մասի ցուցակները: Նրանց հարցակարգում սահմանված են միայն հետևյալ կետերը. 1) թերթերի քանակ, 2) մեծություն, 3) նյութ, 4) կազմ, 5) գրչության տեսակ (մխեդրուլի են), 6) ժամանակ, 7) վայր, 8) գրիչ, 9) ստացող:

Արտաքին նկարագիրը նույնպիսի համառոտությամբ է տրված “Каталог восточных рукописей АН Таджикской ССР” խնամքով կազմված ցուցակում (1960 թ.) և Սովետական Միության այլ մատենադարանների կողմից հրատարակված բազմաթիվ այլ ձեռագրաց ցուցակներում:

Հարցակարգի և հարցերին տրվող պատասխանների չափի ու ծավալի ընտրության գործում «հին» տարբերակում ոչ միայն նկատի չեն առնված վերոհիշյալ հանգամանքները, այլ հարցակարգն այնտեղ ուռճացված է նորանոր հարցերով, իսկ պատասխաններն ընդարձակված են ու հասցված աննախադեպ չափերի:

Հայերեն ձեռագրերի առկա ցուցակներում, օրինակ, տվյալ է հաղորդվում այն մասին, թե նկարագրվող ձեռագիրն ունի՞ արդյոք զարդագրեր, թե ոչ: «Հին» տարբերակը այդ հարցին տալիս է այսպիսի պատասխան. «Զարդագր. Թռչնագիր՝ համարյա ամեն գլխի առաջին տառը: Առյուծագիր՝ 4ա, 80բ, 144բ: Առյուծա-վիշապագիր՝ 180ա, 310բ: Հանգուցագիր՝ 11ա, 52ա, 133բ: Թռչնա-ձկնագիր՝ 67ա, 93ա, 164բ, 215բ, 221ա, 329բ, 364բ: Թռչնա-վիշապագիր՝ 79ա: Ձկնագիր՝ 133ա: Ձկնա-վիշապագիր՝ 308ա, 317ա, 339բ, (էջ 67):

Կամ Մանրանկ. 4բ – չորս ծնկաչոք վրդ. կենտրոնում կանգնած Դիոնիսիոս Արիոպագացին: Կիսախորան՝ 5ա, բլթակավոր-գմբեթաձև մուտքով, մուտքում՝ եռածաղիկ բույս: Ժապավենաձև՝ 77ա, 152ա, 290ա, 298բ, 316ա: Լուսանցազարդ՝ բուսական ոճավորված՝ 5ա (մեծ), 77ա, 152ա, 290ա, 298բ, 316ա: Բուսական առանց ոճավորման (ծաղիկներով, կոկոններով, տերևներով)՝ համարյա բոլոր գլուխների դիմաց: Զարդագր. - Թռչնագիր՝ շատ հաճախ, հանգուցագիր՝ 131բ, 169ա, 259բ, բարդ էակա-

պատկերներ՝ 42բ, 83բ, 96բ: Կարմիր թանաքով խորագրեր, սկզբնատողեր, նյութանիշ (հայերեն, հունարեն) թվատառեր: Գույներ՝ կարմիր, կապույտ, դեղին, սև, կանաչ, ոսկի» (էջ 65):

Եվ այս ասված է մանրանկարչության պատմության համար գրեթե անարժեք ԺԸ դարի մի ձեռագրի կապակցությամբ:

Այսպիսի օրինակները բազմաթիվ են (տե՛ս, օրինակ, նո. 18 (էջ 39), նո. 28 (էջ 63) և այլն):

Նախկին ցուցակների կազմողներից ոմանք անհրաժեշտ են համարել նշել նաև ձեռագրի պրակների (տետրերի) քանակը: Այդ չի գոհացրել «հին» տարբերակի հեղինակին: Նա անհրաժեշտ է գտել մեկ առ մեկ նշելու, թե քանի թերթից է բաղկացած ձեռագրի ամեն մի պրակ: Այսպես, նո. 17 ձեռագիրն ունի «Ա-ԻԳ» (այսինքն 23 պրակ) ըստ որում՝ Ա, Բ, Գ, Ե, ԻԱ-ն 12 թերթից, Է, ԺԷ-ն՝ 10, ԺԹ-ն՝ 11, Զ 9, Ը-ԺԳ-ն՝ 6, ԺԵ-ԺԶ-ն՝ 5, ԺԸ-ն՝ 4 թերթից» (էջ 38):

Նո. 20 ձեռագրի «պրակ» հարցի դիմաց կարդում ենք «Ա-ԼԹ 12 (Ա-ն՝ 9, Գ, ԺԸ-ն՝ 6, Դ-Ե, Ի, ԻԳ, ԻԶ-ն՝ 10, Զ-ն՝ 13, Զ-ԻԱ, ԻԵ, ԼԳ-ն՝ 8, ԼԷ, ԼԹ-ն՝ 11, ԼԸ-ն՝ 2, ԼԴ-ի տեղ նշված է ԼԵ):

Եվ այսպես շարունակ:

Ես գիտեմ, որ կա պատրաստի առարկություն. այդ ճանապարհով թերևս հնարավոր լինի գլխի ընկնել ձեռագրի թերթերի կորուստը կամ որևէ բնագրի պակաս լինելը, կամ ձեռագրի պրակների քանակն ուսումնասիրության օբյեկտ կարող է ծառայել ապագա որևէ բանասերի համար, որը իրեն նվիրած կլինի ձեռագրերի արտաքին հատկանիշների ուսումնասիրության գործին: Բայց մի՞թե թերթերի կորուստը գտնելու այլ, ավելի դյուրին ճանապարհ չկա՞, կամ մի՞թե չի կարելի այդ ապագա գիտնականին (եթե իրոք հայտնվելու է որևէ այդպիսի «գիտնական») տրամադրել ձեռագրերը, որպեսզի նա մի քանի ամիս ուսումնասիրություն կատարելով հավաքի իրեն անհրաժեշտ նյութերը՝ խնայելով երկար ամիսների տքնաջան ու սիզիֆյան աշխատանքը մեր գիտական աշխատողների, որոնց առջև դրված է պատասխանատու խնդիր՝ գիտական նկարագրությունը տալ 10.000 ձեռագրերից բաղկացած մի մեծահարուստ հավաքածուի:

«Հին» տարբերակը կազմողներին այնքան է ոգևորել ձեռագրերի արտաքին նկարագրության մեջ նորամուծություններ մուծելու մարմաջը, որ

նրանք անհրաժեշտ են համարել կրկնակի ու եռակի անգամ ընդարձակելու նաև հարցակարգի մի շարք այլ հարցերի պատասխանները:

Մինչ այժմ մեր բանասիրության մեջ ընդունված է կազմերը նկարագրել այսպես՝ գիցուք՝ «դրոշմազարդ կաշեպատ տախտակ», «կաշեպատ խավաքարտ» և այլն: Դրա փոխարեն «հին» տարբերակում մենք հանդիպում ենք կազմերի նկարագրության այսպիսի տողերի. «միջուկը տախտակ: Երեսը և դանակը՝ գործված դեղին կաշի, հասարակ դրոշմազարդերով: Թիկունքի վերին, ստորին մասերը և քուղերը՝ մաշված: Փականաղերծ: Աստառը դեղնավուն, զարդանկյուն մետաքս» (էջ 1): «Քուղերը՝ միանիստ, կանաչ և սպիտակ թելերից» (էջ 36): «Կազմ» - 1949 թ.: Միջուկը՝ խավաքարտ: Երեսը՝ բաց կաթնավուն լաթ. թիկունքը՝ սև կտոր: Քուղերը՝ կարմիր լաթից: Աստառը՝ չգրված թուղթ... պահպանակ 1 1: Աստառը թղթից» (էջ 38):

Զարմանք, այո, 1949 կամ 1960 թվականին մեզ մոտ վերակազմված ձեռագրերի սկզբից և վերջից գրվող ֆորզացները «հին» տարբերակում կոչվում են պահպանակներ և նշվում, ինչպես նշվում են հնագույն դարերի պատառիկ-պահպանակները: «Հին» տարբերակի 37-րդ էջում կարդում ենք, օրինակ «Պահպանակ - 1 1 (1959 թ.) թուղթ»:

«Հին» և «Նոր» տարբերակներում նշված է նաև թղթի տեսակը՝ ունի՞ լուսագրոշմ, թե ոչ: Սրանով սակայն, չեն բավարարվել «հնի» հեղինակները. նո. 30 ձեռագրի նկարագրության մեջ, օրինակ, հանդիպում ենք այսպիսի տողի՝ «Թուղթ լուսագրոշմով (173-202, 239-241, 248-250-ը՝ առանց լուսագրոշմի)» (էջ 65):

Հասկանալի՞ է, թե ինչ է արված:

Լուսագրոշմը նկատելու համար, ինչպես գիտենք, անհրաժեշտ է ձեռագրի թերթը բռնել լույսի դիմաց: Այդ ձեռագիրը բաղկացած է 332 թերթից, ունենք սակայն 1000-ից ավելի թերթանոց ձեռագրեր: Ուրեմն, ձեռագրի նկարագրողը պարտավոր է նկարագրվող ձեռագրի բոլոր թերթերը բացել լույսի դիմաց, նշում կատարել թե որ թերթի վրա կա լուսագրոշմ և որի վրա այն բացակայում է, ապա՝ ի մի բերել ստացված տվյալները և ձևակերպել այդ մեկ տողով:

Սիզիֆյան աշխատանքի կլասիկ օրինակ:

Չերկարացնենք, ձեռագրերի արտաքին նկարագիրը «հին» տարբե-

րակում լի է ավելորդաբանություններով, գիտական արժեքից զուրկ գերմանրամասնություններով: Այդ սկզբունքով մեր ձեռագրացուցակից լուրջ բան չի ստացվի:

«Նոր» տարբերակում ձեռագրերի արտաքին նկարագրությունը տրված է չափավոր, այնտեղ կան բոլոր այն հարցերի պատասխանները, որոնք դույզն-ինչ չափով կարող են հետաքրքրել գիտնական-բանասերներին:

5. Հիշատակարանների խնդիրը

Ձեռագրաց ցուցակի ա պրակի քննության գրված «հին» և «Նոր» տարբերակներն իրարից զանազանվում են նաև հիշատակարանների մեջբերման իրենց տարբեր եղանակներով:

Հայտնի է, որ հայերեն, ինչպես և այլ լեզուներով ձեռագրերի առկա ցուցակների մի մասում՝ բերված են ձեռագրական հիշատակարանները համեմատաբար լրիվ կամ քաղվածաբար, իսկ մի այլ՝ ստվար մասում՝ նշված են այդ հիշատակարանների էջերը, օգտագործված են դրանք ձեռագրի գրության ժամանակի, վայրի, գրչի ու ստացողի անունների և այլ հարցերի պարզաբանման համար, սակայն չեն հրատարակված այդ հիշատակարանները:

«Հին» տարբերակում հիշատակարանները՝ անխտիր մեջ են բերված այնպես, ինչպես Տաշյանի և այլոց ցուցակներում: «Նոր» տարբերակի կազմողները հիշատակարանների մեջբերման կարևոր հարցին մոտեցել են հետևյալ մեկնակետից:

Ա. Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, իրենց ճնշող մեծամասնությամբ, հատուկ ժանրի պատմական մանր գրվածքների բնույթ են ստացել: Բացի ձեռագրի գրչության հանգամանքները նշելուց, նրանց հեղինակները արժեքավոր տվյալներ են հաղորդել նաև իրենց ժամանակի քաղաքական անցուդարձերի և ժողովրդի վիճակի ու կյանքի մասին: Այլ խոսքով՝ նրանք ձեռագրական ինքնուրույն բնագրի արժեք ունեն:

Բ. Ձեռագրերի համարական հերթականությամբ կազմվող մեր Մայր ցուցակում՝ նրանք չեն կարող շարադասվել ժամանակագրական հերթականությամբ, ուստի և նրանց օգտագործումը պատմաբանների ու բանասերների կողմից՝ խիստ դժվարանալու է: Մեր նո. 1 ձեռագիրն ընդօրինակված է, օրինակ, 1632/3 թթ., նո. 2-ը - 1767/8-ին, նո. նո. 3-4-ը ԺԸ դարում, նո.5-

ը 1783-ին, նո. 6-ը՝ ԺԹ դարում, նո. 7-ը - 1217-ին, նո. 8-ը 1527 -ին են են:

Գ. Ձեռագրաց ցուցակի առաջնահերթ նպատակն է բացահայտել ձեռագրերի բովանդակությունը: Հիշատակարանների, ինչպես և մյուս ձեռագրական միավորների հրատարակությունը ձեռագրաց ցուցակի խնդիրը չէ:

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, և հատկապես ելնելով այն ուրախալի փաստից, որ ժամանակագրական առանձին ժողովածուներում արդեն լույս են տեսել 5-15-րդ դարերի գրեթե բոլոր հիշատակարանները, ինչպես և ծրագրված աշխատանք է տարվում հետագա դարերի հիշատակարանների հավաքման ուղղությամբ՝ «Նոր» տարբերակի կազմողները հիշատակարանների մեջբերման խնդիրը լուծել են նոր եղանակով:

1. Մանրակրկիտ նշումներ են արել հիշատակարանների գրված էջերի, նրանց ո՞ւմ կողմից և ե՞րբ շարադրված լինելու մասին:

2. Պատմական կարևոր դեպքերի շուրջ տվյալներ պարունակող հիշատակարանների մասին՝ հատուկ նշումներ են կատարել:

3. Քաղվածաբար մեջ են բերել բոլոր այն հիշատակարանները, որոնց մեջ կան տվյալներ ձեռագրերի ընդօրինակության մանրամասնությունների մասին (մի քանի ձեռագրերի համեմատությամբ է բնագիրն ընդօրինակվել, նախագաղափար օրինակը՝ դժվարընթեռնելի կամ մաշված է եղել և այլն):

4. Անխտիր մեջ են բերվել կամ վերապատմվել որևէ բնագրի գրության կամ թարգմանության մասին հիշատակարանները:

Եվ, վերջապես, 5. Ստուգելով ու քննելով հիշատակարանների տվյալները՝ վստահելի պատասխաններ են տվել ձեռագրերի արտաքին նկարագրության հարցակարգի՝ թվականը, վայրը, գրիչը, ծաղկողը, ստացողը հարցերին:

Գուցե ավելորդ չի լինի համառոտակի թվարկել, թե ինչ հիշատակարաններ են մեջ բերվել քաղվածաբար և կամ լրիվ ցուցակի «Նոր» տարբերակում (կարդալ):

Հիշատակարանների նշման և օգտագործման այս եղանակը գերադասվել է նաև այն պատճառով, որպեսզի հնարավոր լինի առնվազն 6-7 տավար հատորներում համառոտել մեր ձեռագրերի Մայր ցուցակի առանց այն էլ մեծաթիվ հատորները, որոնց կազմման ու հրատարակության հետ կապված աշխատանքները, գաղտնիք չէ, կապված պետք է լինեն և տեխնիկական կարգի և այլ բնույթի մի շարք դժվարությունների հետ:

Միևնույն հիշատակարանները, իրենց ամբողջությամբ 2 անգամ առանձին ժամանակագրական հատորներում և ցուցակներին առնթեր հրատարակելու փոխարեն, համոզված ենք, որ հայագիտության ավելի մեծ ծառայություն մատուցած կլինենք՝ հիշատակարանների կրկնակի հրատարակությունների փոխարեն, դեռևս անտիպ ձեռագրական մեր գանձերից մեկ տասնյակից ավելի ստված հատորներ հրատարակելով:

***

Մայր ցուցակի ա պրակի «Հին» և «Նոր» տարբերակների միջև, անշուշտ, կան նաև երկրորդական նշանակություն ունեցող այլ տարբերություններ, որոնց մասին գուցե կարտահայտվեն ուրիշները:

Ցավոք, պետք է նշել, որ ինչպես այս հիմնական ու սկզբունքային հարցերում, այնպես էլ ավելի երկրորդական նշանակություն ունեցող մյուս դեպքերում «Նոր» տարբերակն է ավելորդություններից զերծ, հակիրճ և բովանդակության մատուցման իր եղանակով օգտակարը: Ուստի մեր հետագա աշխատանքների հիմքում, անտարակույս, պետք է դրվի «Նոր» տարբերակն իր սկզբունքներով:

Նշանակո՞ւմ է արդյոք այդ, որ «Նոր» տարբերակն անթերի է իր բոլոր կողմերով և ենթակա չէ կատարելագործման ու հետագա բարեփոխման (խոսքս առանձին ձեռագրական միավորների նկարագրման թերությունների մասին չէ, որոնք ուղղվելու են խմբագրության ընթացքում): Ոչ, չի նշանակում:

1. «Նոր» տարբերակի մեջ ևս կան առանձին ձեռագրեր, որոնք նկարագրված են անհարկի մանրամասնություններով: Այդ տարբերակի կազմողները, մասամբ դեռևս, իներցիայի կարգով, գտնվելիս են եղել «Հին տարբերակի իրենց պարտադրված սկզբունքների ազդեցության տակ և չեն կարողացել մինչև վերջ ազատվել այդ ազդեցությունից:

Ավելորդ մանրամասնություններով է նկարագրված, օրինակ նո. 10 ձեռագիրը (Պետրոս Բերդումյանի «Ապաշխարութիւն»): Առանց երկմտանքի կարելի է այդ նկարագրությունից հապավել էջ 17-ի ընդարձակ հատվածը (28 տող): Շատ մանրամասն են ներկայացված նաև նո. 35 ձեռագրի աղթարական նյութերը (էջ 57-59): Դրանք ևս հնարավոր է կրճատել և ավելի կատարյալ ձևով ներկայացնել: Ինչ-որ չափով համառոտման

ենթակա են նաև նո. 41 և 42 ձեռագրերի մեջ եղող աղոթքների շարքերի նկարագրությունները և այլն:

2. Եթե մի քանի ձեռագրերի նկարագրություններ «Նոր» տարբերակում ևս կատարված են անօգուտ մանրամասնություններով, ապա դրանց կողքին կան նաև մեկ-երկու շատ համառոտ նկարագրություններ, որոնք լրացման կարիք ունեն: Դրանցից է օրինակ Լեհահայոց Այբբենարանի (ձեռ. նո. 12) նկարագրությունը: Մենք առիթ ունեցանք համոզվելու, թե որքան խճողված ու անմտածված է մատուցված այդ բնագիրը «Հին» տարբերակում: Սակայն պետք է խոստովանել, որ «Նոր»-ում նրա մասին շատ քիչ բան է ասված: Անհրաժեշտ կլինի մի 5-10 տողերի սահմաններում թվարկել այդ Այբբենարանի նյութերը և ցուցակից օգտվողին հղել ոչ թե Հ. Տաշյանի Ցուցակը, այլ Անասյանի «Մատենագիտությունը», ուր ավելի հանգամանորեն խոսվում է այդ ձեռագրի մասին և նշվում, թե ինչ գիտական գրականություն է ստեղծված նրա շուրջը:

Հավանաբար «Նոր»-ի մեջ կան նաև այլ, ավելի մանր թերություններ ու վրիպումներ, որոնք կշտկվեն խմբագրության ընթացքում, ինչպես և Ցուցակի առաջին հատորի մեջ մտնող հաջորդ ձեռագրերի նկարագրությունները կատարելիս:

***

Կատարել ենք նախնական որոշ հաշվարկներ, ձգտելով որոշել, թե քանի հատորից բաղկացած կլինի մեր ձեռագրական մեկ բյուրանոց հավաքածուի մայր ցուցակը՝ «Նոր» տարբերակով:

Դրա համար կպահանջվի շուրջ 1000-1100 տպագրական մամուլ:

Տաշյանի Ցուցակի հայերեն մասի նկարագրական բաժինը (առանց անվանացանկերի, առաջաբանի ևն) 115 մամուլ է, բայց պարունակում է, ինչպես հայտնի է, 500-ից մի փոքր ավելի ձեռագրերի նկարագրություններ: Ուրեմն, մեր ցուցակը իր ծավալով 2 անգամ փոքր կլինի Տաշյանի Ցուցակից: Չմոռանանք, որ Տաշյանը շատ հաճախ ընդարձակ մեջբերումներ է արել իր ժամանակ դեռևս անտիպ բնագրերից, ձգտելով բանասերների ուշադրությունը սևեռել այս կամ այն անհայտ կամ քիչ հայտնի բնագրի վրա: Գր. Մագիստրոսի թղթերը, օրինակ, նա նկարագրել է 15 երկսյուն, մանր շարված էջերով (էջ 147-162), հրատարակել է Ցուցակում Ան.

Շիրակացու ինքնակենսագրությունը և բազմաթիվ այլ մանր բնագրեր: Հասկանալի է, որ մենք հայ բնագրագիտության ու բանասիրության զարգացման ներկա էտապում, երբ Տաշյանի ժամանակ անհայտ բնագրերի մեծագույն մասը կա՛մ հրատարակվել են կա՛մ ուսումնասիրվել հայագիտության կողմից՝ պարտավորված չենք լինելու ցուցակում այդ չափի ու ծավալի քաղվածքներ կատարելու:

Այսպիսով, մեր Ցուցակի «Նոր» տարբերակը իր ծավալով կրկնակի անգամ փոքր լինելով Տաշյանի Ցուցակից, չի զիջի նրան ձեռագրական նյութերը լրիվ ներկայացնելու և մատուցելու իր եղանակով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ

1. Մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակի նպատակն է ամբողջապես ու լրիվ ներկայացնել գիտական լայն շրջաններին մեր ձեռագրական հավաքածուի բովանդակությունը՝ ի նպաստ ձեռագրերի ուսումնասիրության գծով տարվող աշխատանքների:

Ձեռագրական բոլոր նյութերը, անկախ նրանց ծավալից ու բովանդակությունից, արտահայտվելու են Ցուցակի մեջ:

2. Ձեռագրերի նկարագրությունը, թե՛ արտաքին կողմով և թե՛ ներքին բովանդակությամբ՝ պետք է լինի սեղմ ու հակիրճ, զերծ ավելորդություններից:

3. Այն ձեռագրերը, որոնք պարունակում են հայագիտության անհայտ կամ քիչ հայտնի արժեքավոր բնագրեր՝ նկարագրվելու են մանրամասնորեն և, ընդհակառակը, հանրածանոթ կամ սակավարժեք բնագրերը՝ ավելի սեղմ ու համառոտ:

4. Ձեռագրական նորահայտ կամ սակավ ծանոթ բնագրերի բովանդակությունը ներկայացնելու ընթացքում նկարագրողը պարտավոր է բնորոշել տվյալ աղբյուրը, բացահայտել նրա նշանակությունը գիտության համար, համառոտակի թվարկելով այն հարցերը, որոնց մասին ուշագրավ նյութեր կան այդ աղբյուրի մեջ, ինչպես նաև՝ մեջ բերելով առանձին արժեքավոր քաղվածքներ:

5. Հայագիտության հանրածանոթ բնագրերի (Պատմագիրք, Նարեկ, Թուղթ ընդհանրական և նմաններ), ինչպես նաև՝ ուշ շրջանի հայկական ու թարգմանչական սակավարժեք աստվածաբանական-դավանաբանական ձեռագիր երկերի նկարագրման ժամանակ տրվելու են դրանց խորագրերը

լրիվ (եթե շատ են ընդարձակ՝ կրճատումներով): Այդ կարգի բնագրերի ներքին բաժանումները (մասեր, գլուխներ, ենթագլուխներ, պարագրաֆներ և այլն) չեն ներկայացվելու, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ նկարագրվող ձեռագիր օրինակներն իրենց կառուցվածքով և այլ հատկություններով, մեծ չափով կտարբերվեն այդ բնագրերի գիտական կամ տարածված տպագրություններից:

Հայ մատենագրության նշանավոր հուշարձանների նորահայտ (գիտական շրջանառության մեջ չմտած) ձեռագրերը նկարագրելիս՝ որոշվելու է ամեն մի ձեռագրի ազգակցությունը՝ բանասիրությանը հայտնի ձեռագրերի (խմբագրությունների) այս կամ այն խմբի նկատմամբ:

6. Առանձին հեղինակների մի շարք ընդօրինակություններով մեզ հասած աշխատությունների ձեռագրերից յուրաքանչյուրը նկարագրվելու է յուրովի (առանց «հղումների համակարգի»): Նկարագրողը համեմատելու է տվյալ ձեռագրի բնագիրը այլ ընդօրինակությունների (հրատարակված լինելու դեպքում՝ տպագրի) հետ՝ ոչ թե միմյանց նկատմամբ դրանց մասնակի-երկրորդական տարբերությունները վեր հանելու և արձանագրելու նպատակով, այլ նկարագրվող ձեռագրի լրիվ կամ թերի լինելու, ինչպես նաև՝ այլ խմբագրության պատկանելու հանգամանքը պարզելու համար:

7. Հարյուրավոր օրինակներով պահպանված ծիսական ձեռագրերի (Հայսմավուրք, Շարակնոց, Մանրուսմունք և այլք) Ցուցակի մեջ նկարագրվելու են լրիվ մեկ անգամ միայն: Մյուս օրինակների նկարագրման ժամանակ նշվելու են միայն այն նոր մասերը կամ հոդվածները ու կարևոր հավելումները, որ առկա են նկարագրվող այդ ձեռագրի մեջ:

8. Հարյուրավոր օրինակներով հասած զանազան քարոզգրքերն ու նման բնագրերը նույնպես նկարագրվելու են մեկ անգամ: Մյուս դեպքերում նշվելու է միայն, որ այս կամ այն հեղինակի (Գր. Տաթևացի, Բարդուղիմեոս և այլն) քարոզգրքի նկարագրվող օրինակի մեջ կա այսքան քարոզ, փոխանակ թվարկելու բոլոր քարոզները, իրենց խորագրերով և սկզբնատողերով:

9. Աստվածաշնչերն ու Մաշտոցները, գուցեև նման այլ կանոնական ժողովածուներ նկարագրելիս թվարկվելու են տվյալ ձեռագրի մեջ առկա գլուխներն ու նյութերը գիտության մեջ ընդունված խորագրերով՝ հորիզոնական տողաշարքով (առանց էջերի նշման):

Այսպես, օրինակ, որևէ Աստվածաշունչ նկարագրելիս, բավարար կլինի նշել, որ նրա մեջ կան, դիցուք, հետևյալ գրքերը՝ Ծնունդք, Ելք, Ղևտական, Թիւք, Եզր, Գիրք Սաղմոսաց, Առակք, Երգ երգոց և այլն (տվյալ ձեռագրի նյութերի հերթականությամբ):

Եթե ձեռագրի մեջ կան հազվագյուտ հավելումներ կամ այլ, ոչ կանոնական նյութեր, այդ մասին հատուկ նշումներ են կատարվելու նկարագրողի կողմից:

10. Տաղարանների կամ չափածո ստեղծագործություններ պարունակող այլ ձեռագրերի նկարագրության ժամանակ նկատի պետք է առնել նկարագրվող ստեղծագործության հրատարակված կամ անտիպ լինելու հանգամանքը:

Գիտական սկզբունքներով հրատարակված հեղինակների (Ն. Շնորհալի, Ֆրիկ, Հովհ. Երզնկացի, Կոստանդին Երզնկացի, Խաչատուր Կեչառեցի, Հովհ. Թլկուրանցի, Մկրտիչ Նաղաշ, Գր. Աղթամարցի, Առաքել Սյունեցի, Մարտիրոս Ղրիմեցի, Հովնաթան Նաղաշ, Բաղդասար Դպիր և այլն) տաղերը նկարագրելիս բավարարվել միայն վերնագրի կամ առաջին տողի նշումով: Այն դեպքում, երբ նկարագրվող ձեռագրի մեջ ընդօրինակված որևէ տաղ կամ չափածո այլ ստեղծագործության տողերի քանակով կամ այլ հատկանիշներով տարբերվում է հրատարակված բնագրից՝ նշում կատարել այդ մասին:

Անտիպ ու բարձրարժեք բանաստեղծություններից բերել քաղվածքներ:

11. Իրար հաջորդող նույնատիպ և նույնաձև մանր բնագրական միավորները (զանազան աղոթքներ, դեղագրեր, նամակի ձևեր, թղթառաջներ և այլն): Ցուցակում ներկայացնել ոչ թե մեկ առ մեկ, իրենց խորագրերով ու սկզբնատողերով, այլ՝ խմբովին:

Նշել, օրինակ, որ այսինչ ձեռագրի, այսինչ էջերում ընդօրինակված են այսքան դեղագրեր, այս կամ այն (թվարկել) հիվանդությունների բուժման մասին:

12. Ձեռագրերի հիշատակարաններն իրենց հիմնական և արժեքավոր մասերով շատ հաճախ օրգանապես չեն առնչվում բուն ձեռագրի հետ: Հիշատակարանների ժամանակագրական հերթաշարով (և ոչ համարական կարգով) հրատարակությունը մեծապես դյուրացնում է հիշատակարանները ուսումնասիրող գիտնականների աշխատանքը: Նկատի ունենալով այդ

հանգամանքը՝ Ցուցակում հիշատակարանները լրիվ չեն հրատարակվելու:

Ձեռագրերի արտաքին նկարագրության հարցակարգի մեջ, հիշատակարաններ հարցի դիմաց տրվելու են գրչի, ծաղկողի, պատվիրողի, հետագա ստացողների և բոլոր այլ անձնավորությունների թողած հիշատակարանների էջերը, հակիրճ տեղեկություններով դրանց գրության թվականների, գրության վայրերի և գրանցողների ինքնության մասին:

Անհրաժեշտ դեպքում, մեջ են բերվելու գրիչների և այլոց հիշատակարանների այն հատվածները, որոնք պարունակում են կարևոր տվյալներ այդ ձեռագրի կամ նրա մեջ ընդօրինակված որևէ բնագրի գրության հանգամանքների մասին (օրինակ՝ գաղափար օրինակը հին է եղել, մի շարք ձեռագրերի համեմատության ճանապարհով բնագիրը սրբագրվել կամ խմբագրվել է, ընդօրինակությունը տևել է տարիներ, կատարվել է ընդմիջումներով և տարբեր վայրերում և այլն):

Ձեռագրերի նկարագրողները պարտավոր են, սակայն, ցուցակագրմանը զուգընթաց, խնամքով ընդօրինակել դեռևս անտիպ բոլոր հիշատակարանները, Ցուցակի հատորների հետ մեկտեղ հրատարակության պատրաստելու համար այն դարերի հիշատակարանների ժողովածուները, որոնք դեռևս չեն հրատարակված:

Հիշատակարանների ժողովածուների պատրաստման և դրանց գիտական մշակման գործը ստանձնելու է Մատենագիտական սեկտորը:

13. Ձեռագրերի նկարագրության հարցակարգի մեջ լինելու են հետևյալ հարցերը.

1. Ձեռագրի խորագիր
2. Վայր
3. Ժամանակ
4. Գրիչ
5. Ծաղկող
6. Պատվիրատու-ստացող
7. Հիշատակարան
8. Նյութ
9. Թերթ
10. Չափ
11. Սյունակ

12. Տող
13. Գիր
14. Վիճակ
15. Պահպանակ

Այդ հարցերին տրվելու են սեղմ ու հակիրճ պատասխաններ.

Եթե ձեռագրի գրչության վայրը նշված է անորոշ («ի վանս սուրբ Աստուածածնի» և այլն)՝ նկարագրողը պետք է ձգտի ճշգրտել հնարավոր միջոցներով:

14. Ձեռագրերի կազմերը նկարագրել ավանդական ձևով, խիստ սեղմ. նույն ձևով տվյալ հաղորդել նաև կազմի աստառի մասին:

Շատ արժեքավոր և ուշագրավ կազմերի լուսանկարները դնել Ցուցակի մեջ:

15. Մանրանկարները, խորանները, կիսախորանները ցուցակագրել: նշել այդ մանրանկարների էջերը և կոչումները («խաչելութիւն», «ծնունդ», «տեառնընդառաջ» և այլն):

Լուսանցազարդերի, գլխազարդերի և նման մանրանկարչական միավորների միայն առկայությունը նշել, առանց էջերը ցույց տալու:

Ցուցակի մեջ հրատարակել բարձրարվեստ մանրանկարների գունավոր և անգույն նմուշներ:

16. Ձեռագրերի պահպանակները նկարագրել ավանդական եղանակով: Նշել պատառիկի թերթերի, պահպանված տողերի քանակը, տառերի ձևը (երկաթագիր, բոլորգիր և այլն): Պատառիկը չհամարել ինքնուրույն ձեռագիր, ուստի առանձին հարցակարգ չսահմանել նրանց նկարագրության համար:

Նոր կազմված ձեռագրերի նորագույն թղթի պահպանակները անտեսել. դրանց մասին Ցուցակում նշում չանել:

17. Ձեռագրերի վիճակի մասին հարցին տալ սեղմ ու հակիրճ պատասխան առանց մանրամասնությունների մեջ մտնելու և նշելու որ, դիցուք, այս կամ այն էջը ցեցակեր է, խոնացած և այլն (այդպիսի տվյալ հաղորդել այն ժամանակ, երբ այն վերաբերում է ոչ թե մեկ-երկու, այլ բազմաթիվ թերթերի):

18. Բոլոր տիպի հապավումներն ու պատիվները Ցուցակում բացվելու են, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ հապավման

վերծանությունը երկրայական է:

19. Թարգմանական երկերի նկարագրության ժամանակ օգտագործվելու են բոլոր հնարավորությունները ցույց տալու համար բնագիր-աղբյուրը (բնագրի լեզվով):

20. Ցուցակի համար սահմանված տերմինների մեծագույն մասը կիրառելի են ըստ հարկի. նկարագրողները, սակայն, չեն խորշելու արտահայտչական այլ միջոցներից ու ոճերից:

21. Կրկնություններից խուսափելու համար հայերեն բնագրերի տպագրությունների մասին տվյալներ հաղորդել Ցուցակի վերջին հատորում, որը բիբլիոգրաֆիկ-ուղեցույցի դեր է կատարելու:

Յուրաքանչյուր ձեռագրի նկարագրության պատշաճ տեղում պետք է ցույց տրվեն տպագիր այն աշխատությունները, որոնց մեջ նկարագրվել է տվյալ ձեռագիրը:

22. Կրճատվելու են Ցուցակում կիրառվելիք տառաձևերի տեսակները, ավելորդ խճողումներից և հրատարակչական բարդություններից խուսափելու համար:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՈՐԴԱՆԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Անցյալից մենք ժառանգություն ենք ստացել շուրջ 25.000 հայերեն ձեռագիր մատյան: Դրանց կեսից ավելին, մեր ժողովրդի նման, ցրված է աշխարհով մեկ: Զնայած հայ բանասիրության մեջ զգալի աշխատանք է կատարված տարբեր վայրերում պահվող հայերեն ձեռագրերի նկարագրության ու ցուցակագրման գծով, և արդեն իսկ տպագրվել են մի շարք ձեռագրաց հավաքածուների ամբողջական կամ թերի ցուցակները, բայց դեռևս շատ մատենադարաններ չունեն իրենց ձեռագրերի նկարագրությունները և նույնիսկ համառոտ ցանկերը: Բնականաբար, այդ պայմաններում խիստ դժվար է, եթե չասենք անհնարին, ձեռագրագիտական աշխատանքներ կատարել՝ հաշվի առնելով Մաշտոցյան Մատենադարանից դուրս գտնվող հայերեն հազարավոր ձեռագրերը:

Իրենց ամբողջական ձեռագրերի ցուցակները չունեն հաև հայերեն ձեռագրերի ամենաճոխ հավաքածուներն ունեցող Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի ձեռագրատունն ու Զմմառի հայ Կաթողիկե վանքի մատենադարանը:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների Սովետի որոշմամբ՝ սույն [1966] թվականի հունվար-մարտ ամիսներին Երուսաղեմ գործուղվեցին Մատենադարանի երկու աշխատակիցներ՝ ես և Ա. Արևշատյանը:

---

* Կարդացվել է 1966 թ. ապրիլին կայացած գիտաժողովի նիստում:

Համառոտ այս հաղորդումով մենք հաշվետու ենք լինում գիտական խորհրդի առջև՝ ըստ հնարավորի պատմելով մեր տեսած և ուսումնասիրած ամենաարժեքավոր ձեռագրերի մասին:

*Երուսաղեմ մեկնելու համար նախօրոք մենք ընտրել էինք մի ուղեգիծ, որ անցնելու էր Փարիզի վրայով: Մտադիր էինք օգտագործել մեզ տրված հնարավորությունը՝ Փարիզի հայերեն ձեռագրերը ևս տեսնելու համար**: Մոսկվայում, սակայն, պարզվեց, որ Երուսաղեմ (կամ Մերձավոր Արևելքի արաբական որևէ երկիր) գործուղված սովետական քաղաքացիները սովետական դրամով կարող են ձեռք բերել ամենակարճ օդային ուղու տոմսեր Մոսկվա-Դամասկոս, ըստ այդմ, մենք հունվարի 20-ին սովետական օդանավով բարձրացանք օդ, և 5 ժամում հասանք Դամասկոս, վայրէջք կատարելով միայն Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի օդանավակայանում:*

Դամասկոսում մնացինք մեկ և կես օր, այցելեցինք թանգարան, ուր տեսանք հատուկ ցուցափեղկի մեջ դրված շուրջ 15 հայերեն ձեռագրական պատառիկներ: Այդ արժեքավոր պատառիկների ուսումնասիրության համար ժամանակ գտանք վերադարձին՝ Դամասկոսից մեկնելու վերջին օրը, ուստի նրանց մասին մի քանի խոսք կասենք մեր հաղորդման վերջում:

Հունվարի 22-ի կեսօրին երթուղային տաքսիով Դամասկոսից մեկնեցինք Երուսաղեմ: Սուրբ Հակոբյանց վանքի ղեկավարությունը, պատրիարք Եղիշե արքեպս. Տերտերյանը, Շահե եպիսկոպոսը և միաբանության մյուս անդամները մեզ ընդունեցին սրտաբաց, և ձեռագրերն ուսումնասիրելու, Երուսաղեմի ու Հորդանանի հնագիտական-տեսարժան վայրերն այցելելու համար ստեղծեցին անհրաժեշտ բոլոր պայմանները:

*Երուսաղեմի հայերեն 3800 ձեռագրերի մեծ մասը (այսինքն բոլոր այն ձեռագրերը, որոնք չունեն ոսկյա կամ արծաթյա թանկագին կազմ) պահվում է սուրբ Թորոս եկեղեցու մեջ, որ Քոթահիայի ճենապակե սալիկներով զարդարված մի գողարիկ եկեղեցի է: Թանկարժեք կազմով ձեռագրերը, թանգարանային արժեք ունեցող մյուս իրերի հետ միասին, պահվում են գանձատանը՝ լուսարարապետ Հայրիկ եպս. Ասլանյանի տնօրինության տակ: Մատենադարանի 3800 ձեռագրերից շուրջ 200-ը օտար լեզուներով են (արաբերեն, ասորերեն և այլն), ֆոնդի մեջ կան նաև 19-20-րդ դարերի մեկ-երկու հարյուր նորագույն ձեռագրեր (օր. զոր. Անդրանիկի մասին 10 հատորը), որոնք անհարիր են հին ձեռագրերի հետ: Ողջ ֆոնդից գիտականորեն ցուցակագրված են ընդամենը 700-ը (5 հատորների մեջ), մի մասն էլ նկարագրված է Խապայանի ցուցակում, բայց կեսից ավելին, դեռևս գույքամատյանի մեջ էլ չեն առնված (այդպիսի 1 տողանոց գույքամատյան ստեղծելու գծով աշխատանք է կատարվում հենց հիմա)**:

Մատենադարանի վարիչը և միակ աշխատակիցը (եթե չհաշվենք երիտասարդ մի աղջկա՝ Արծվիկ Գայֆեճյանին, որ օգնականի դեր է ստանձնել) բազմարդյուն բանասեր Նորայր եպիսկոպոս Պողարյանն է: Ն. Պողարյանը հայ մատենագրության և, մանավանդ, ձեռագրագիտության հմուտ մասնագետ է, սակայն, վատառողջ լինելով, շատ հանգիստ ու դանդաղ է աշխատում. իր աշխատանքի տեմպը սկզբից նա ցանկացավ պարտադրել նաև մեզ, ձեռագրատունը բացելով ամեն օր ժամը 10.30-ից մինչև 11.30-ը, և 2.30-ից մինչև 4.30-ը, այսինքն՝ ընդամենը 3 ժամ: Հասկանալի է, որ այդ ժամերը մեզ չէին կարող բավարարել, և մենք սկսեցինք, հենց երկրորդ օրվանից, մեզ հատկացված բնակարանը բերել 4-5, երբեմն ավելի թվով (մանավանդ, երբ փոքր ֆորմատի ձեռագրեր էին լինում) ձեռագրեր՝ երեկոներն ու գիշերները աշխատելու համար:

*Երուսաղեմում մենք մնացինք մեկ ու կես ամիս և կարողացանք ծանոթանալ շուրջ 300 ձեռագրերի, կատարել ուշագրավ քաղվածքներ, մանավորապես ընդօրինակել հնագույն շրջանից մինչև 16-րդ դարի վերջը շարադրված բոլոր (կամ գրեթե բոլոր) ձեռագրաց հիշատակարանները***:

Բացի ձեռագրերի ուսումնասիրությունից, մենք այցելեցինք նաև

* [Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվող հիմնական հավաքածուն այժմ նկարագրված է. Raymond H. Kévorkian, Armén Ter-Stépanian, avec le concours de Bernard Outtier et Guévorg Ter-Vardanian, Manuscrits arméniens. Catalogue. Paris, 1998] – **Խմբ.**

* [Այժմ լիակատար նկարագրությունը ավարտված է. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Ա-ԺԱ, Երուսաղեմ, 1966-1991: Նկարագրությունն ընդգրկում է 2573 հայերեն գրչագիր] – **Խմբ.**:

** [Հնագույն շրջանից մինչև ԺԵ դարը ներկայացնող այդ հիշատակարանները հրատարակված են Ա. Մաթևոսյանի և իր իսկ՝ Լ. Խաչիկյանի կազմած ժողովածուներում, մասնավորապես տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 305-448]– **Խմբ.**:

Երուսաղեմի ու շրջակայքի պատմական կարևոր հուշարձանները՝ քրիստոնեական սրբավայրերը, ինչպես նաև Պետրա ժայռափոր քաղաքն ու Ջերաշ կոչվող հռոմեական զինակայանի խիստ հետաքրքրական ավերակները (որոնց մասին կպատմի ընկ. Արևշատյանը):

Երուսաղեմում, անշուշտ, կարելի էր արդյունավետ աշխատել ամիսներ ու տարիներ, բայց 45 օր այնտեղ մնալով մենք եկանք այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ կարողանալով գաղափար կազմել ձեռագրական ողջ ժողովածուի մասին և կատարելով ամենից ուշագրավ բնագրերից քաղվածքներ ու միկրոպատճենահանումներ, խիստ ցանկալի կլինի մեկնել նաև Լիբանան՝ Զմմառի վանք ու ծանոթանալ նաև այնտեղ պահվող հայերեն ձեռագրերի հետ:

Այդ հարցով Հորդանանի սովետական դեսպանատան պատասխանատու աշխատակիցների հետ խորհրդակցելուց հետո, մենք դիմեցինք կաթողիկե հայ պատրիարք Բաբանյանին և խնդրեցինք լիբանանյան վիզա ուղարկել՝ մեր ծրագիրն իրականացնելու համար: Վիզան ստացվեց հաջորդ օրը, և մենք մարտի 7-ին օդանավով Երուսաղեմից մեկնեցինք Բեյրութ, ապա, 2 օրից՝ Զմմառի վանք:

Վանքը գտնվում էր Բեյրութից 32 կմ հեռավորությամբ կանաչապատ բարձրադիր լեռնաբլուրներից մեկի վրա, որտեղից հիասքանչ տեսարան է բացվում. հեռվից երևում են Միջերկրական ծովը, Բեյրութ քաղաքը, իսկ ավելի ցածր գտնվող լեռնադաշտերի վրա՝ գյուղեր, վանքեր (մեծ մասամբ մարոնիտների՝ կաթոլիկ արաբների):

Զմմառի վանքում մեկ տարի առաջ կառուցված էր երկհարկանի մի հարկաբաժին վանական հին շինության վրա: Վերջին հարկի զգալի մասը հատկացված է թանգարանին, դիվանին ու ձեռագրատանը: Ձեռագրերը և մյուս նյութերը պահվում են խնամքով, ունեն հարուստ արխիվ 2 ֆոնդից բաղկացած՝ Անտոնյան դիվան 266 ստվար թղթապանակ (տուփ) և Զմմառի դիվան՝ 222 տուփ: Այդ նյութերը ցուցակագրված են. Անտոնյան դիվանի ցուցակը ես ընդօրինակեցի և մեքենագրելուց հետո հանձնելու եմ մեր Պետ. Պատմական արխիվին:

10 օր մենք ապրեցինք Զմմառի վանքում և ծանոթացանք ինչպես դիվանի այդ նյութերին, այնպես էլ ձեռագրական ճոխ հավաքածուին, որը հակառակ մեր գիտածին ու ակնկալություններին՝ բաղկացած է շուրջ

1300 ձեռագիր մատյանից.

Զմմառյան հավաքածու	*422 ձեռագիր*
Անտոնյան հավաքածու	*296 ձեռագիր*
Նոր հավաքածու	*շուրջ 600*
Ընդամենը	*1300*

Բացի այս ձեռագրերից, ունեն նաև արաբերեն, ասորերեն և այլ լեզուներով ձեռագրեր՝ 210 միավոր:

Զմմառից հետո իջանք Բեյրութ, 2 օրում ծանոթացանք Անթիլիասի ձեռագրաց հավաքածուի հետ, որ ընդգրկում է շուրջ 200 միավոր: Դրանց մեծագույն մասը խիստ ցեցակեր են ու քայքայված, միաժամանակ խոնավ են անպատկերելի չափով, կարելի է ասել ուղղակի թաց են: *Անթիլիասը գտնվում է Միջերկրականի ափին, ձեռագրատունը՝ ծովից ընդամենը մի 20-30 մետր հեռավորությամբ:*

Բեյրութում ծանոթացանք նաև պր. Վ. Սեթյանի 10 ձեռագրից բաղկացած հավաքածուի հետ, տեսանք նաև այլ ձեռագրեր (Գևորգ վրդ. Կարպիսյանի և ուրիշների մոտ): Այցելեցինք մի շարք դպրոցներ, մշակութային կազմակերպություններ, հանդիպում ունեցանք Բեյրութի մտավորականների հետ, տեսանք Բաալբեկը, Բիբլոսը, Անճառ հայաբնակ գյուղի մոտ գտնվող վաղ արաբական քաղաքի ավերակները, և Բեյթ-ուդ-դին կոչվող միջնադարյան ֆեոդալական դղյակ-թանգարանը:

Մարտի 31-ին տաքսիով մեկնեցինք Դամասկոս, ապա Հալեպ. 5 օր մնացինք Հալեպում, ծանոթացանք Քառասուն Մանկանց եկեղեցու 157 ձեռագրերից, ըստ ցուցակի, մեզ հետաքրքրող մեկ տասնյակ ձեռագրերի հետ և վերադառնալով Դամասկոս, ուսումնասիրեցինք թանգարանում պահվող արդեն հիշատակված հայերեն պատառիկները: Թանգարանի բաժնի վարիչը պատմեց, որ այդ պատառիկները հայտնաբերվել են Դամասկոսի Մեծ մզկիթի մի խորշից 1911 թվականին, երբ նախապատրաստական աշխատանքներ էին կատարվում գերմանական կայսր Վիլհելմին ընդունելու:

Կայսրը, տեսնելով այս պատառիկները և նույն տեղից գտնված ասորերեն ձեռագրերը, ցանկացել է դրանք տանել իր հետ Գերմանիա: Ստացել է նվեր, բայց ինչ-ինչ պատճառներով այդ ակամա նվերը մնացել է գերմանական հյուպատոսարանում երկար տարիներ. ի վերջո բերել են

թանգարան:

Ահա, սրանք են եղել այն վայրերը, ուր մենք եղել ենք և ձեռագրական հավաքածուները, որ տեսել և ուսումնասիրել ենք: Մի հաշվետվությամբ խիստ դժվար է նույնիսկ ընդհանուր ու հապճեպ խոսք ասել բոլոր այն արժեքավոր ձեռագրերի մասին, որ տեսել ենք վերոհիշյալ վայրերում. փորձենք այնուամենայնիվ, ըստ գիտության բնագավառների, ներկայացնել մեր ուսումնասիրած ամենահետաքրքրական ձեռագիր բնագրերը, որ ընդօրինակեցինք, միկրոպատճենահանեցինք, կամ էլ խնդրեցինք համապատասխան հաստատությունների վարչություններին պատճենահանել և ուղարկել մեզ հետագայում:

Նախ՝ պատմագրական արժեք ներկայացնող բնագրերի մասին.

Երուսաղեմի մատենադարանի նո. 1397 ձեռագրում պահպանվել է Գրիգոր Տաթևացու անհայտ մի աշխատությունը՝ «Յաղագս չար ճերձուածոյն, որ երևեցաւ յերկիրն Ըռշտունեաց» խորագրով: Այդ ուշագրավ աշխատությունից հայտնի է դառնում, որ Ռշտունիքում ԺԴ դարի վերջերին «չար ծերունիք և գիւղերանք ոմանք» հերձվածողական գաղափարներ էին տարածում: «Նոր չարաբանքս այսորիկ, — գրում է Տաթևացին, — ալէւք ոմանք և անուսումն ոչ գիտեն զՍուրբ գիրս և ոչ զիմաստս փիլիսոփայից, այլ ամբարհաւաճ կամօք և ամբարտաւան մտօք, անպարծ սրտիւ հակառակաւէր գալով բնածին սովորութեամբ ընդդիմաբանին»:

Նրանց արտահայտած գաղափարների մասին շատ մշուշապատ ու խրթին է խոսում Գրիգոր Տաթևացին, պարզվում է այնուամենայնիվ, որ նոր այդ հերձվածողները «զերեքանձնեա աստուածութիւնն մի անձն» են համարում, չընդունելով որդի աստծուն և հոգի աստծուն, ուստի և ըստ Տաթևացու, ուրանալով նաև հայր աստծու հավատքին՝ և ընկնելով Սաբելի հերձվածի մեջ: Դրանից բացի Ռշտունիքի հերձվածողները հայհոյում են «զծնեալն յամենասուրբ որովայնէ անարատ սրբոյ Կուսին», այսինքն՝ Մարիամ աստվածամորը համարում են ոչ թե Աստծո, այլ մահկանացու մարդու մայր:

Պատմական կարևոր տեղեկություններ կան նաև Գրիգոր Տաթևացու «Թուղթ վասն Աղթամարայ եպիսկոպոսացն» աշխատության մեջ, որի մի ամբողջական ընդօրինակությունը պահպանվել է Երուսաղեմի նո. 1490 ձեռագրի մեջ:

Պատմական բովանդակություն ունեցող նորահայտ բնագրերից հատկապես ուշագրավ է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մի շրջաբերական կոնդակը, որի առայժմ հայտնի միակ ընդօրինակությունը պահպանվել է Երուսաղեմի նո. 2864 ձեռագրում:

Կաթողիկոսը դիմում է իր հոգևոր հոտին և շեշտում այն միտքը, որ «հոգևորական գործ և եկեղեցական կարգ և սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ», մանրամասնորեն պատմում է էջմիածնի ծանր վիճակը Դավիթ ու Մելքիսեթ կաթողիկոսների և վերջինիս եղբորորդի Սահակ եպիսկոպոսի իշխանության տարիներին. սուրբ աթոռը հետին աղքատության մեջ է եղել մինչև Մովսես ու Փիլիպոս կաթողիկոսների գահակալությունը: «Եւ մեզապարտս, — գրում է նա, — յորժամ եկի ի սուրբ աթոռն, փոքր ցեղի չափով անօթ չկայր ի սուրբ աթոռն. զայս ամենայն վասն չքաւորութեան, և աղքատ մնացեալ ի յառաջին նստող կաթողիկոսացն գրեցի, նոյնպէս և մլքի կողմանէ՝ հողի վաստակից ոչինչ կայր և ոչ դրամ մի»:

Այնուհետև թվարկում է իր նախորդի՝ Փիլիպոս կաթողիկոսի և իր գործունեության դրվագները էջմիածնի վանքի տնտեսությունը շենացնելու ուղղությամբ:

«Եւ յորժամ Շահ-Սօֆի թագաւորն եկն ի վերայ Երևանայ բերդին, յՕշականայ մլքին (ի լուս. ի մեծ նեղութիւն էին անկել), Բ. դանկ ու կէս ծախեալ էին տեառն Փիլիպպոսին և դանկ ու կէսն դրաւ եդեալ. ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղջուց վանուց մուլքն ևս էր գնեալ, Յօհանիսոյ մուլքն և Սօլաքայ Գ. դանկն, յՕշականայ դրաւն և մնացեալն այլ գնեցի: Թէ Փիլիպպոս հոգևոր տիրի գնեալն, թէ մեր գնեալն տարէն ԲՃ. դուռուշ ի նոցանէ վաստակ լինէր սուրբ աթոռին»:

Շատ կարևոր է նաև էջմիածին գյուղը կրկին վանքի մուլք դարձնելու պատմությունը, որ շարադրում է կոնդակի մեջ Հակոբ կաթողիկոսը:

«Հոգևոր որդիք, — գրում է նա, — բազում ժամանակ էր, որ սուրբ էջմիածնայ գեղի մուլքն ի սուրբ էջմիածնայ ելած էր, այլ յառաջ վախմ է եղած. ձեռաց ի ձեռն անկանելով եկեալ ի ձեռն Ամիրգունայ խանին, զկնի նորա ի ձեռն որդւոյ իւրոյ՝ Թամազղուլի խանին: Եւ երբ Թամազղուլի խանն գնաց ընդ խոնդկարին, զինչ նորա թագաւորական տիրեցին, նոյնպէս և մուլքն սուրբ էջմիածնայ գիւղին»: Գյուղից ստացվող արդյունքը որպես տոնլուխ (ռոճիկ) տրված է եղել Երևանի խանությանը հաջորդաբար կառա-

վարած 5 խաների (Քալպալի, Մահմատղուլի, Քեխուսրով, և Լալայբեկի որդի Մամադ ղուլի և Նաջաֆ ղուլի), պատմում է, թե ինչ ճանապարհներով ու գործողություններով իրեն հաջողվում է էջմիածինը կրկին դարձնել վանքապատկան մուլք (կալվածք):

Խոսում է, այնուհետև, որ վանքի համար ձեռք է ձգել բազմաթիվ այգիներ, քյահրեզով ջուր է անցկացրել, ծովակ (լիճ) կառուցել և այլն և այլն: Եվ այս բոլորը կարող է միանգամից կորստի մատնվել ու մախվել հանիբավի, և վանքը դարձյալ կարոտ ու ավեր թողնվել: «Եթե սուրբ էջմիածնայ գէլուրի (մուլքի) և դրամի հրամանն ի ձեռն սեագլխի եղնի, – գրում է նա, – փոքր ինչ ժամանակաց յետոյ սուրբ աթոռն աւէր տեսէք, իսկ եթէ ի ձեռն ղոլվաթաւոր երեսփոխանաց լինի սուրբ աթոռոյն դրամի հրամանն և գէլուրն, մինչ ի գալուստն Քրիստոսի հաստատ փտաաչիք»:

Նա դիմում է իր հոտին և աղերսում այսուհետև կաթողիկոս օրհնելիս պայման դնել, որ նա իրավունք ունի ինքնագլուխ տնօրինելու վանքի ընթացիկ եկամուտի 1/5-րդ, և կալվածքների եկամուտի 1/10-րդ մասը միայն: Իսկ մյուս՝ մեծ մասը՝ պետք է տրվի բոլորի կողմից հարգված «գործօքն պարկեշտ, ինքն համեստ ու մարդաշահ» աշխարհական մի մարդու, որի ձեռքի տակ աշխատելու է մի «դաւթար գրող» (հաշվապահ), իսկ նրա գործերին հսկելու է հոգևորականներից կարգված խոստովանահայրը: Եվ առհա աշխարհական այս պաշտոնյան պետք է շահեցնի վանքի դրամը, նոր կալվածքներ ձեռք բերի, տարին մեկ անգամ հաշվետու լինելով կաթողիկոսին և նրա խորհրդականներին և այլն և այլն*:

Այս փաստաթղթերի մեջ կան շատ այլ կարևոր երևույթների ու կապերի մասին ուշագրավ տվյալներ: Հակոբ կաթողիկոսը 2 անգամ տարբեր առիթներով հայտնում է, որ իր պատմած դեպքերի մանրամասն շարադրանքը տվել է «Կաթողիկոսաց պատմութիւն» կոչված իր աշխատության մեջ, որը ցավոք, չի հասել մեզ, կամ էլ դեռևս չի հայտնաբերված:

Ուշադրության արժանի պատմագրական երկ է նաև Մինաս Համթեցու օրագրությունը, որի ինքնագիր օրինակը պահվում է Երուսաղեմի մատենադարանում՝ 1316 համարի տակ: (Այս բնագրի մասին տեղեկություն-

* [Բնագրի հրատարակությունն ու ուսումնասիրությունը տե՛ս Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հատ. Ա, Երևան, 1995, էջ 318-331] – **Խմբ.**:

ներ է հաղորդել Նշանյանը Երեմիա Չելեպու հրապարակության առաջաբանում):

Օրագրությունն սկսվում է 1680 թվականի հոկտեմբերի 8-ի գրանցումով և ավարտվում 1703 թ. հունիսի 3-ի գրանցումով (Համթեցին մեռել է 1704-ի նոյեմբերի 21-ին): Օրագրությունը իր տեսակի մեջ բացառիկ հուշարձան է: Հեղինակը օր առ օր, առանց որևէ բացթողման, գրանցել է իր կյանքն ամենօրյա ատնին, սովորական, ինչպես և կարևոր պատմական նշանակություն ունեցող դեպքերը, տարբերություն չդնելով դրանց միջև և իր վերաբերմունքը գրեթե չարտահայտելով եղած-գնացածի մասին: Սառնասիրտ ու սակավախոս գրանցողի դեր է ստանձնել նա:

Այսպես օրինակ 1698 թ. հունվարի 4-ին գրել է.

«Յունվար Դ. օրն Գ շաբթի, ժամ ի խուցն, ճաշույն յեկեղեցի, հաց ընդ մեծն, բաւէնցի շատ ուխտաւոր եկին էջմիածին ուխտ. և օրս ամպ, ձիւն քիչ թօղեց և ջեր: Ի մուտս արեւուն Միրզա պապն եկաւ, թէ Ստեփանոս վարդապետն մեռաւ ի գնատանումն, Աստուած ողորմի իւրն:

Յունվար Ե. չորեքշաբթի, առաւօտս խանէն մարդ եկաւ էջմիածին, թէ գան մեռեալն թաղեն, և մարդ գնաց վասն թաղելոյ, և ոչ է թողեալ խանն, և ճուղեցիք գիր վեհին, թէ Ստեփանոս վարդապետն ի Վիրայն թաղեն»: (Խոսքը Ստեփանոս Ջուղայեցի կաթողիկոսի մասին է):

Յունվար Թ. օրն կիրակէ, ծառայն աստուծոյն ի Շամ, ի Հալեպ, և յԱմիթ ֆաանկվար և հայվար գրեր գրեցաք ընդ քրիստոնեա օղլու փեսային, որ գնաց յԱմիթ. և օրս սառուց կրեցին. (մի այլ տեղ՝ «Գեղականքն՝ ի սառույց կրել»)»:

«Յունվար Ի. օրն Ե շաբթի ... վեհն գնաց Երևան խանին, ի շահէն խալաթ էր եկեալ ի շնահորել. մեք մինչև ի Հախփիմէ, և դարձաք, և օրս միջակ»:

«Յունվարի ԻԴ. օրն կիրակի ... ատամիս ցաւէն գիշերս չքնացա, ժամ գնացի, և քաշեց Սարուխանն ղատամս եկեղեցոյ դուռն» և այլն և այլն:

Եվ այսպես, օր օրի, 23 տարուց ավելի, Մինաս Համթեցին գրանցել է իր կյանքի տարեգրությունը, հաղորդելով պատմական, կենցաղային, պատմաաշխարհագրական շատ ու շատ ուշագրավ տվյալներ:

Երուսաղեմի մատենադարանում մենք ծանոթացանք Փավստոս Բուզանդի և Աբրահամ Կրետացու «Պատմութեան» այդտեղ պահվող խիստ

արժեքավոր ձեռագրերի հետ, որոնց միկրոֆիլմերը ստանալու ենք առաջիկայում և օգտագործելու այդ սկզբնաղբյուրների նոր հրատարակությունները պատրաստելիս*:

Աբրահամ Կրետացու «Պատմութեան» խիստ արժեքավոր և տպագրի բաղդատությամբ մեծ առավելություններ ունեցող բնագիրը պահպանվել է Երուսաղեմի նո. 2533 ձեռագրում: Բայց այդ ձեռագիրն ավելի արժեքավոր է դառնում պարունակելով Սահակ աբեղա Գողթնացու մի ընդարձակ ինքնակենսագրական հիշատակարանով, ուր համառոտակի շարադրված է նրա կյանքի տարեգրությունը 1709-ից մինչև 1770 թ., մեջ ընդ մեջ պարունակելով նաև պատմական արժեքավոր տեղեկություններ:

Արժե ծանոթանալ, օրինակ, նրա հաղորդած ինքնակենսագրական հետևյալ տեղեկության հետ.

«Զկնի առնելոյս կարգն սարկաւագութեան հրամայեաց (Մկրտիչ վարդապետն) գնալ ինձ զսուրբ Կարապետ վանքն Երինջակու, զոր յառաջ ծնօղքս վասն իմ աղջիկ մի նշանադրեալ բաղում ծախիւք, մինչև չորս ամ պահեցին, որ դեռևս տղայ էի. մինչ էհաս ժամանակն հասանիս առնելոյ, Նեռան որդի Թահմազն խնդրեաց աղջիկ յերկրէն, հանդերձ տղայով: Ես փախեալ գերծա, գնա այլ տղի տալով տարին Խորասան: Զկնի տանելուն մայրն աղջկան տեսանելով գիս լայր և անիծանէր ասելով՝ սև զգեցցիս և ոչ կարմիր. վասն այն կրօնաւորեցայ և առի ի վերայ իմ զանէծքն զայն» և այլն:

Ուշ միջնադարի պատմագրական արժեք ներկայացնող բնագրերի շարքում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Հակոբ կաթողիկոսի, Եղիազար Անթապցու, Մարտիրոս Ղրիմեցու և մի շարք այլ եկեղեցական գործիչների նամակների ընդօրինակությունները, որ պահվել են Երուսաղեմի թիվ 186 ձեռագրում, մի շարք մանր ժամանակագրություններ, որոնց իրական արժեքը պարզելու համար զգալի աշխատանք պետք է կատարել նրանց աղբյուրները որոշելու և նրանցում գրանցված տվյալների արժանահավատությունը պարզելու նպատակով: Այդ կարգի ժամանակա-

* [Աբրահամ Կրետացու Պատմութեան երևանյան երկլեզու հրատարակության (1973) աշխատասիրող Ն. Կ. Ղորղանյանի ձեռքի տակ Երուսաղեմի գրչագրերի ընթերցումները չեն եղել] – **Խմբ.**:

գրություններից հատկապես արժեքավոր են Երուսաղեմի նո. 1428 ձեռագրի 97-99 էջերից ընդօրինակվածը՝ որի տեղեկությունները քաղված են ըստ մեծի մասի Լիմ անապատում պահվող ձեռագրերի հիշատակարաններից, և հատկապես նույն մատենադարանի նո. 2341 ձեռագրում եղած ժամանակագրությունը, որի անանուն հեղինակը ծնվել է Կիլիկիայում 1255 թվականին, 1292-ին դարձել է Ակներ վանքի վանական, և գրանցել է իր տեսած ու լսած դեպքերի մասին ստույգ տվյալներ Կիլիկիայի խոսակցական լեզվով:

Ծանոթանանք նրա գրանցումներից մեկ-երկուսի հետ.

«Թվ. ՉԿԸ (1319) յունիս Դ. գնաց մեր հեծելն ի Հալթի թուրքմանն ի ծեծ ու խանկրվեցաւ, ու շատ մարդ կորեաւ, ու զսիր Կոստանց ասպասալարն բռնեցին. ի հետ երեկ թուրքն, զատ անհոգ, ու ծեծեց զԱզախուտն, զՔարբիկն, զԹավրնոցն, տարաւ զԱկներոցն զամէն բոզակն ու Մարտիրոսն ու այլ շատ ծառայք ի հետ. ի գ. աւուրն տարան զՅոհանէսի իրիցկինն իր տղաւքն ծառա, ու զասպասալ/ար/ուն տիկինն ու այլ բազում ծառայք՝ ՒՃԾ. ու անասուն բազում և անհամար»:

Կամ «Ի թվ. ՉՀԸ (1329) հակառակ եկաց պր. Աւշին Կուռիկոսո տէրն ու պր. Կոս/տ/ընդ Լևոն թագաւորին. նա սպան ու գլխատեց ու թագուհին այլ ի հետ» և այլն:

Կիլիկյան շրջանի պաշտոնական մի գրության (թերևս նամակի) վերջին մասը (պատառիկի ձևով) պահվում է Դամասկոսի թանգարանում. ձեռագիրը խիստ դժվար վերծանելի է. հնարավոր է լինում կարդալ հետևյալը.

«/// ապա էլ որ տանք, և մեք զանց ձեր սիրոյ յանձն առնուաք, որ զոր ի մեր պատկառերոյն յաւելնան, ձերտ եշայա (՟) կարիքն, հայնց որ մեբոյն պակաս /// ակն ձեր է և ձերն մեր. այս տարիս թողինա զերդ գրեցաք այս կարոգս (՟) ջուրն, զի մեք /// ինչ զի հաւկնաք զատամն, յայնժամն զինչ այլ աւելի լինի, թէ կամի Աստուած, զոր դձեր բան պակաս պահեցէք, և Աստուած պահապան է ձեզ»*:

* [Թանգարանային այս պատառիկների նկարագրությունն ու վերծանությունը տե՛ս Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Դամասկոսի թանգարանի հայկական պատառիկները, «Հայկազեան հայագիտական հանդէս», Գ, Պէյրութ, 1972, էջ 9-54] – **Խմբ.**:

Դամասկոսյան պատառիկներից ամենահինն այս բեկորն է, որ ԺԳ դարից պետք է լինի, մյուսները շատ ավելի հին են:

Համեմատաբար լավ պահպանվածը 7 մագաղաթյա փոքրագիր թերթերից բաղկացած մի պատմական գրվածք է, հավանաբար «Կայսերաց գրքի» *մի հատված: Մեր արտագրածից մեջ ենք բերում հետևյալը.*

«Ընդունի թագաւորութիւնն յԱդրիանոսէ Անտոնին, որ կոչի բարեպաշտ. յետ սորա Կոմոդոս, ի նորա աւուրս Սիմաքոս Սամարացի /// նոցա վարդապետ անարգել /// և գայրացել ընդ ազգին իւրում անդանի առ հրայսն եւ ընդ հրէութեան»:

Պատմական բովանդակությամբ մեր տեսած բնագրերի մասին խոսքն ավարտելու համար անդրադառնանք նաև Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի «Զանուանս կաթողիկաց հայոց» *հայտնի գրության, որի մեկ օրինակը գտնվում է Երուսաղեմի նո. 2331 ձեռագրի մեջ:*

Այս օրինակը տարբերվում է տպագրվածից՝ իր վերջում ունենալով ընդարձակ շարունակություն, որ հասցված է մինչև ԺԳ դարի վերջը՝ Ստեփանոս կաթողիկոսի գերության պարագաների նկարագրությունը: ԺԳ դարի շատ կաթողիկոսների մասին ցանկի անանուն շարունակողը հայտնում է նորանոր տեղեկություններ, որոնք անտարակույս օգտակար են ու հետաքննելի:

Ժամանակագրական ու պատմագրական նյութերից ավելի մեր ուշադրության կենտրոնում են եղել ձեռագրաց հիշատակարանները: Ինչպես հայտնի է, Մատենադարանում աշխատանք է տարվում մինչև ԺԳ դարը շարադրված հայերեն ձեռագրերի հիշատակարանների առանձին ժողովածու պատրաստելու գծով, ինչպես և հրատարակության են պատրաստվում ԺԷ դարի հիշատակարանները: Ըստ այդմ և՛ Երուսաղեմում, և՛ Զմմառում, և՛ մեր եղած մյուս վայրերում մենք ընդօրինակեցինք հնագույն շրջաններից սկսած մինչև ԺԷ դարը ներառյալ շարադրված բոլոր՝ ավելի*

* [Նկատի ունենալով Ա. Մաթևոսյանի կազմած «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ. (Երևան, 1988) և «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար (Երևան, 1984) հատորները: ԺԷ դարի հիշատակարանների հրատարակության հեռանկարը պարզ չէ, քանի որ այն կազմում էր այժմ հանգուցյալ Ս. Լալաֆարյանը] – **Խմբ.**:

քան 300 հիշատակարաններ: Դրանց շարքում կան տասնյակ ու տասնյակ խիստ բովանդակալից պատմական նյութ պարունակող հիշատակարաններ, որոնցից են, օրինակ, հետևյալները.

– Երուսաղեմ նո. 1801 – 1236 թ.

– «Ի թուականիս Հայոց ՈՁԵ (1236), ի դժնդակ ժամանակի յանիծեալ յազգէն քամա կոչեցեալ անդադար *ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, և զամենեսեան ի սուր սուսերի մաշեալ, զորբութիւնն անարգեալ, և զգրեանս գերի վարեալ: Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա բերաւ յաշխարհ կիլիկեցիոց ...*

Եղմ. նո. 3392 – 1280 թ.

«Արդ գրեցաւ սա ի մայրաքաղաքն յԵզնկայն, ընդ հովանեաւ սուրբ փրկչին կաթողիկէ եկեղեցոյն, զոր շինեաց տէրն Սարգիս արհիական եպիսկոպոսն և բարեպաշտ որդի իւր Յոհաննէս: Գրեցաւ ի թուականիս Հայոց ի ՉԻԹ (1280) ... յարհիական եպիսկոպոսութեան տեառն Ներսեսի թոռին տեառն Սարգսի, և աստուածասէր եղբաւր նորին պարոնին Գրիգորիսի, և յաշխարհակալութեանն Ապղա խանին՝ որդւոյ Հուլաւուին ...

– Անթիլիաս 1307 թ.

«Յայսմ ամի հրաման էլ ի թագաւորէն Պարսից, առնելով խարան յամենայն քրիստոնէից, որոց առեալ նեղէին քրիստոնէքն վասն շատութեանն, զոր ընաւ չէր եղեալ ի վերայ երկրի, և մի այլ լիցի»

– Զմմառ նո. 107 – 1319 թ.

«Յայսմ ամի անօրէնն Խուռումչի յարեաւ ի վերա Չաւպան Բահայթուրին բազում զաւրաւք. և բազում տեղիս աւար էառ. այլ ի վերին աւգնականութենէն ընկեցեալ և մատնեալ եղև ի ձեռն Չաւպանին, զոր ազգիազգի տանջանաւք սատակեցաւ»

– Զմմառ նո. 101 – 1322 թ.

«Ով եղբարք, ի լեռնէս ի վայր քուրթն կու գայ, ի դաշտէս ի վեր՝ թաթրիս ա՛ն է. և ի տունս սովս կու նեղէ»: Եվ այլն և այլն:

Տասնյակ ու տասնյակ այս կարգի հիշատակագրություններ:

Առիթ ունեցանք տեսնելու, որ Երուսաղեմի հայկական ձեռագրերի հավաքածուի մեջ կան 19-20-րդ դարերի բազմաթիվ ձեռագրեր: Սրանց մեջ ևս կան հայոց նոր ու նորագույն պատմության համար ուշագրավ նյութեր:

Այսպես, օրինակ, նո. 2738 ձեռագիրը՝ 1862 թ. Զեյթունի ապստամ-

բության մանրամասն պատմությունն է, *շարադրված ժամանակակից ու ականատես Մովսես հայազգի քահանայի կողմից: Անդրանիկ զորավարի հայրենակից՝ Շապին-Գարահիսարցի մի վարդապետ (Փափազյան), մանրակրկիտ որոնումներ կատարելով պարբերական մամուլի էջերից խնամքով արտագրել է իր սիրելի հերոսի մասին տպագրված ամեն մի խոսք* և կազմել 10 հատորանոց նյութերի ժողովածու: *Կան նաև պատմագիտական արժեք ներկայացնող այլ ձեռագրեր, որոնց ուսումնասիրության գծով աշխատանք պիտի կատարվի հետագայում:*

Բանասիրական նյութեր

Երուսաղեմում, Զմմառում, Անթիլիասում և Հալեպում ընդհանուր հաշվով պահվում են ավելի քան 5500 ձեռագրեր, այսինքն Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց հավաքածուի կեսից ավելին: Հասկանալի է, որ հազարավոր այդ ձեռագրերի մեջ ամփոփված են անսպառ նյութեր, որոնք նպաստելու են բանասիրական հազար ու մի հարցեր պարզելու գործին: Բնականաբար մենք փնտրելու և ուշադրություն էինք դարձնելու այն նյութերի վրա, որոնք առնչվում են մեզ, որպես գիտական աշխատողների, հետաքրքրող ժամանակներին ու հեղինակներին: Ըստ այդմ ընկ. Արևշատյանն ուսումնասիրեց Դիոնիսիոս Արիսպագացու երկերը պարունակող ձեռագրերը, պարզելով իրեն հետաքրքրող բանասիրական շատ կարևոր հարցեր, ծանոթացավ Տաթևի դպրոցում ստեղծված փիլիսոփայական ուսումնասիրությունների այն ընդօրինակություններին, որոնք պահվում են վերոհիշյալ ձեռագրատներում և այլն:

Ինձ հետաքրքրում էին առավելապես ԺԳ-ԺԶ դարերի մեր մատենագիրները: Մեծանուն մանկավարժ ու մատենագիր Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» *դեռևս անտիպ աշխատությունը վաղուց է հայտնի բանասիրական նեղ շրջանակներին, այն մի քանի քաղվածքներով, որ կատարել է Ղ. Ալիշանը իր այլևայլ աշխատություններում: «Հարցմունք և պատասխանիքի» մի քանի ընդօրինակություն հայտնի էին նաև ինձ (օրինակ Մոսկվայի Լենինի անվան գրադարանում պահվող օրինակը, որից ժամանակին կատարել եմ ինձ հետաքրքրող մասերի քաղվածքներ): Բայց Երուսաղեմի նո. 1288 ձեռագիրը՝ եզակի արժեք է ներկայացնում որպես*

այդ երկի ամբողջական ու լրիվ ընդօրինակություն:

Այս գրվածքը լի է խիստ հետաքրքրական բանասիրական ու պատմական տեղեկություններով: Պարզվում է, օրինակ, որ շարականների հեղինակների հանրածանոթ ցանկը («որք գծորանս հոգւոյն սրբոյն») Վանականի գրչին է պատկանում, կամ էլ գոյություն է ունեցել նրանից առաջ: Վանականը հետաքրքիր տվյալներ է հաղորդում Դավիթ Անհաղթի, Ագաթանգեղոսի և բազմաթիվ այլ հայ մատենագիրների մասին: Սակայն ոչ պակաս գիտական նշանակություն ունեն նրա գրանցած պատմական տեղեկությունները: Այսպես օրինակ, նա հայտնում է, որ «Յաւուրս Լևոնի որդոյ Կոստանդեայ ի տաճկանց իշխան երեկ Հայոց Արել անուն, ցերէք տարո գլուաց մեռելոցն անունն առեալ գրէր, և զգլխայակն ի մատուար ազգէն խնդրէր»:

Վրաց արքունիքում աստվածաբանական և իմաստասիրական հարցերի շուրջ ծավալված վեճերի մասին խիստ ուշագրավ է Վանականի հաղորդած հետևյալ տեղեկությունը.

«Խնդիր եղև ի վիրս, զի ի տան թագաւորին ախչիկ մի աւէր, թէ հոգիս երկու Ը՝ մինն անմահ է և մինն մահկանացու, եւ ընդդէմ այսմիկ ջանային շատք, և աւելի մի ոք, որ ի ժամանակին իշխան էր՝ Ճզաւնախակ իշխան ի տան թագաւորին Վասիլայ անուն, որդի քեռ աթաբակ Իւանէի: Սա մին աւէր զհոգին և անմահ, և աղչիկն երկու, և ի յաւելն չկարաց պարզել կամ հաստատել և ոչ սայ զմինն, այս երեք ամ խնդրեցաւ անհաստատ և անհաւանելի ...»:

Այս կարգի վեճերի հնարավորությունը ենթադրել է տալիս արքունիքի շրջաններում մշակութային բարձր մակարդակ և հետաքրքրություն տեսական հարցերի շուրջ:

Տարիներ առաջ Հովհան Երզնկացի Պլուզ և համանուն Ծործորեցի մատենագիրների տարբեր անձնավորություններ լինելու մասին արտահայտվելով, ուրախությամբ կարող ենք նշել, որ երկու այդ գործիչների կյանքի ու մատենագրության հետ կապված շատ հարցեր արդեն պարզվել են: Սակայն առ այսօր եթե բավարար չափով ծանոթ ենք Հովհան Պլուզի ստեղծագործություններին, նույնը չենք կարող ասել նրա կրտսեր ժամանակակից Հովհ. Ծործորեցու վերաբերյալ: Ի՞նչ ինքնուրույն և թարգմանական գործերի հեղինակ է Ծործորեցի Հովհաննեսը, ի՞նչ արժեք են ներ-

կայացնում նրա գրվածքները: Այդ հարցերին պատասխանելուն մեծապես նպաստելու են նաև Երուսաղեմի ձեռագրերը: Նո. 1003 ձեռագրում պահպանվել է, օրինակ, Ծործորեցու հեղինակած մի Քարոզգիրք, որ բաղկացած է 5 ուշագրավ քարոզներից: Նույն Մատենադարանի նո. 1376 ձեռագրում պահպանվել է Հովհ. Ծործորեցու կողմից ի մի բերված ու խմբագրված, այլուստ ևս հայտնի 28 առակներից բաղկացած ժողովածուն «Առակք ստեղծականք պատասխանիք առնոյ ի զրուցատրութիւնս և յասացուածս», որ, հակառակ ակադեմիկոս Մառի կարծիքի, չպետք է տարակուսել, իրոք պատկանում է Ծործորեցու գրչին:

Հայ ձեռագրերի շատ հավաքածուների մեջ պահպանվել է «Զինչ օգուտ է մարդոյ, թէ անունն հաւատացելոյ լինի և գործն անհաւատի» սկզբնավորությունն ունեցող ընդարձակ մի քարոզգիրք, պատմական ու կենցաղագրական շատ ուշագրավ նյութերով (մեր Մատենադարանում, օրինակ, կան այդ Քարոզգրքի առնվազն 10 օրինակներ), որի հեղինակն առ այսօր չի որոշվել: Քարոզներում շատ ուշագրավ նյութեր կան, այսպես օրինակ, մի կապակցությամբ ասված է, որ «տգէտ հէքիմն ճարտար սպանող է», հեղինակը շատ լավ գիտի Հայաստանի տարբեր շրջաններում տարածված ավանդույթները զանազան հրաշապատում դեպքերի մասին (Քաջբերունիք, Լոռի, Վան և այլն), գիտի մեր միջնադարյան գեղարվեստական գրականությունը, ըստ հարկի մեջբերումներ է կատարում, օրինակ.

Աշխարհս ի վաճառ եկի՝
Թէ շահիմ զանձիւք հոգեղէն,
Չար աւազակաց դիպայ՝
Թալնեցին զինչ մերկ ի մորէն:

Մի խոսքով, միջնադարյան հայ գրականության մեջ քարոզների այս ժողովածուն որոշակի տեղ ունի և արժանի է բազմակողմանի ուսումնասիրության:

Արդ, Երուսաղեմի մատենադարանի նո. 1473 ձեռագրում, որի վրա մեր ուշադրությունը դարձրեց Նորայր եպս. Պողարյանը, կա որոշակի տվյալ այդ քարոզգրքի հեղինակի Ղուկաս վարդապետ Լոռեցու մասին, իսկ նո. 1428 ձեռագրի մեջ մենք կարևոր տվյալ գտանք այս վարդապետի գիտական ու մանկավարժական գործունեության մասին. «Ի ՋԿԶ (1517)

թվն. մեծ վարդապետն Հայոց Ղուկաս բազում աշխատութեամբ զսաղմոսն Դաւթի ի Պենտեկոստէի տօնին սկսեալ, և յաւուր աւագ երեքշաբթին աւարտեալ, ընդ հովանեաւ աստուածային տաճարիս սուրբ էջմիածնին...»:

Չպետք է տարակուսել, որ այստեղ հիշատակված Ղուկասը և քարոզգրքի հեղինակը նույն անձնավորությունն են, քանի որ վերջինիս քարոզներում ակնարկներ կան այն մասին, որ հեղինակը իր քարոզները շարադրել է էջմիածնում:

Մեր տեսած ձեռագրերում մեծ ու փոքր մատենագրական նորույթներ կան նաև Եսայի Նչեցու, Հակոբ Ղրիմեցի տիեզերագետի և մի շարք այլ հեղինակների մասին: Խիստ ուշագրավ է Երուսաղեմի նո. 3152 ձեռագիրը (ընդօրինակված 1384 թվականին), որ Հովհան Մանդակունուն վերագրված ճառերի վերնագրերում, առանց բացառության, ամենուրեք դրված է Հովհ. Մայրավանեցու անունը «Յովհաննու Մայրավանեցոյ ասացեալ Յաղագս խոստովանութեան», «Յովհաննու Մայրավանեցւոյ ասացեալ յաղագս ապաշխարութեան» և այլն և այլն:

Այժմ մի քանի խոսք գեղարվեստական գրականության, մասնավորապես միջնադարյան մեր տաղերգուների ձեռագրերի մասին

Երուսաղեմի ձեռագրերն այս առումով քիչ թե շատ ուսումնասիրված են. Նորայր եպս. Պողարյանը (ծովական) «Սիոնի» էջերում մի քանի տասնյակ տարի է, ինչ հրատարակում է անտիպ տաղեր և շարականներ (Տաղ գարնան, Ով մայրաքաղաքին Կաֆայի, Յովհ. Սարկաւագի մի նոր շարականը, Տաղ աւետեաց Աստուածածնի, Տաղ ի վերայ ազգաւոր և այլն և այլն): Սրանով բնավ չենք կամենում ասել, թե Երուսաղեմի Տաղարանների ու Գանձարանների ուսումնասիրության գծով այլևս բան չի մնում կատարելու: Ընդհակառակը, Նորայր եպս. Պողարյանը սովորաբար մանրակրկիտ քննության է ենթարկում այն ձեռագիրը, որի հերթը հասել է ձեռագրաց ցուցակի համար նկարագրելու: Նա առաջ անցնել չի սիրում, ուստի Երուսաղեմի հավաքածուի բարձր համարներ կրող ձեռագրերում, որոնք դեռևս չեն նկարագրված՝ ցուցակի համար, կան անշուշտ անտիպ շատ տաղեր, հայտնի բանաստեղծությունների արժեքավոր տարբերակներ և այլ նյութեր: Մենք այս բնագավառի մասնագետ չենք և ժամանակ էլ չունեինք Երուսաղեմի տաղարաններով զբաղվելու:

Զմմառի վանքում տեսանք 6 արժեքավոր թվացող տաղարաններ և օգտակար համարեցինք դրանք մանրամասնորեն ցուցակագրել՝ միջնադարյան հայ գրականության մասնագետների տրամադրության տակ դնելու համար: Եվ ահա Զմմառի այդ ձեռագրերում կան իրոք, մեր ձեռագրից բացակայող մի շարք տաղեր, կամ հայտնի տաղերի տարբերակներ և այլ նյութեր:

Այդպիսիներից է, օրինակ. «Անձինք ի Կողոնեցի Թադէոսէ վարդապետէ առ իմաստուն վարդապետ Մաղաքիայ Դերջանեցին» *են:*

Հայ բարբառագիտության համար որոշակի արժեք է ներկայացնում Ագուլիսի (զոկերի) բարբառով գրված մի տաղը.

Տաղ պլպուլի և վարդի ագուլեցերէն

Յկունէց հօվն խաէ հէշ,
խաէցի պլպուլ խաէցի,
Ի կախսխս քի ունց մեահամ
խաէցի պլպուլ խաէցի.
Վօրտն խօշ կէծ ձեռք ի նէհէծ
Պլպուլ իր տերտն ի իմահած
Քի խօշ կէծ փօշնեմմահած
խաէցի պլպուլ խաէցի ...

և այլն և այլն:

Տաղարաններից բացի, չափածո ստեղծագործությունների արժեքավոր ընդօրինակություններ հանդիպում ենք նաև այլ ձեռագրերում: Երուսաղեմի նո. 2784 ձեռագիր Ավետարանը հայ մանրանկարչության պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավելու Խաչատուր ծաղկողի բարձրարվեստ ստեղծագործություններով: *Ձեռագիրն ընդօրինակել ու մեծարժեք մանրանկարներով խաչատուրը զարդարել է 1434 թվականին Խիզան քաղաքում Կարապետ (Ֆխրո) քահանայի պատվերով: «Սայ՝ Կարապետ քահանայս և ճգնաւորս, — ասված է հիշատակարանում, — զհինգ որդին փեսայացու սնուց, և զերեք դստերքն հարսնացու, և ի յորդոցն և ի դստերացն զրկեցաւ և անմխիթար մնաց»: Եվ ահա, այս տխուր ու ողբերգական առիթով Խաչատուր ծաղկողը հիշատակարանի վերջում տեղադրել է մի արտաճմլիկ բարձրարվեստ մեռելաթաղի ողբ, շարադրված ժողովրդական*

երգերին հատուկ ընույթով ու հմայքով: Ինքն է ստեղծագործել, թե՞ գրանցել է պատրաստի մի գործ, դժվար է առայժմ որոշել.

Արքայական պարծանք անձին իմոյ
դու բարձար, ա՜յ.
Թել ոսկի դու շարժունակ պսակ գլխոյս
իմ վերացար, ա՜յ.
Գինդ ոսկի, ծաղիկ ունգանս ի յականջէս
իմ շորթեցար, ա՜յ.
Կամար այտից մարգարտաշար գոյն երեսաց
իմ քաղեցար, ա՜յ,
Մանեակ ոսկի շղշղունակ ի պարանոցէս իմ
բեկեցար, ա՜յ.

և այլն և այլն:

Բացառիկ գիտական արժեք են ներկայացնում Երուսաղեմի ու Զմմառի բժշկարանները, ալքիմիական ձեռագրերը և բառարանները:

Նախ՝ բառարանների մասին:

Երուսաղեմի նո. 1428 ձեռագրում ընդօրինակված է, հավանաբար հենց ձեռագրի նյութերը հավաքող Սիմոն վարդապետի *կողմից շարադրված (ժէ դար)* արաբերեն-հայերեն-թուրքի և քուրդի (որ է մարաց). *արժեքավոր քառալեզվյան մի բառարան: Քրդերենի սյունակում շատ քիչ բառերի համարժեքներ են գրված, ըստ երևույթին, բառարանի հեղինակը ինքը չի գիտցել այդ լեզուն և մտադրվել է լրացնել քրդերենի սյունակը հետագայում, ուրիշների օգնությամբ:*

Մի քանի բառերի օրինակով ծանոթանանք այդ բառարանի հետ.

արապի	**հայի**	**թուրքի**	**քրդի**
ըլ պըքայս	*լաց*	*ագլամաղ*	
ըլ դը	*ծաղր*	*գուլմաղ*	
ըլֆար	*ուրախություն*	*սէւինմաք*	
	ցնծություն		
ըլղամ	*տրամություն, սուգ*	*ղամ, ղասաֆաթ*	

բլրն, ադան	*ականջ*	*ղուլաղ, ղուլխլար*	
տաչ, տուջուի	*երես, երեսներ*	*իւզ, իւզլար*	
շաւրարէ	*բեղ*	*պըխ*	*որմպել*

և այլն և այլն:

Նույն այս ձեռագրում է գտնվում նաև բավականին ընդարձակ աշխարհագրական մի բառարան, *որի մեջ կան աշխարհագրական տարբեր վայրերի շատ արտառոց ու սխալ նույնացումներ, բայց քիչ չեն նաև ուշագրավ բացատրություններ, օրինակ.*

Արօրկայ, Ածպտերն է, մօտ յերընկան,
Աղուանք, որ է Շրվան, Շամախի,
Ալատաղն է Ալաշկերտ,
Արշարունիք Կաղզվան է,
Հնդուստան՝ ձեռլայի Հաքրար թագաւորն՝ ազգն չաղաթից,
Բուդում Մաջարայ մօտն է,
Զպա Շիրակուան է,

և այլն և այլն:*

Հայ-եթովպական պատմական ու մշակութային կապերը դարավոր պատմություն ունեն: Ինչպես արդեն հայտնի է հայ բանասիրությանը՝ կան ճանապարհորդական-ուղեգրական նյութեր և այլ կարևոր հայերեն աղբյուրներ՝ Հաբեշստանի և հայ-եթովպական հարաբերությունների մասին: Այսօր այդ նյութերին կարելի է ավելացնել նաև անհայտ մի հայ մարդու գրանցումները հաբեշերեն լեզվի և այբուբենի մասին: *Զմմառի վանքի դիվանում պահվող այդ մի քանի թերթիկները վկայում են, որ նրանց ԺԸ-ԺԹ դարի գրանցողը սովորել է եթովպերենը, հայերեն տառերով գրել է* «Հայր մերն հապաշաց», «Ողջոյն հապաշաց», «Հաւատամքը» *(դեմ դիմաց՝*

* [Միջնադարյան ձեռագիր բառարաններին նվիրված երկհատոր ուսումնասիրություն է հրապարակել Հ. Մ. Ամալյանը («Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ V-XV դդ.), Երևան, 1966, XVI-XVII դդ., Երևան, 1971] – **Խմբ.**:

եթովպերեն և թարգմանությունը՝ հայերեն): Կազմել է նաև մի քանի առօրյա խոսքերի փոքրիկ բառացանկ.

Ընկէթ ալլեհ – ողջոյն

Դուստեաթր մրթթահ – ուստի կու գաս

Վօտիեթ տիհէտն ալլեհ – ուր պիտի երթաս և այլն:

Այժմ համառոտակի ալբիմիական ձեռագրերի մասին, որոնց շարքում հատուկ տեղ ունեն Երուսաղեմի նո. 1455 ձեռագիրը և Զմմառի մի ձեռագիրն ընդօրինակված 1624 թվականին: Երկուսն էլ բացառիկ արժեք են ներկայացնում միջնադարյան հայ մանրանկարիչների օգտագործած ներկերի ու թանաքների պատրաստման գաղտնիքները պարզելու համար:

Առաջին ձեռագիրը, ըստ երևույթին, կոչվել է հենց Արուեստ գրագրութեան. *այստեղ արվում են սև և կարմիր թանաքներ, թուխ կարմիր, դեղին, սպիտակ և բաց նարնջի գույն ներկեր պատրաստելու ձևեր: Շատ ավելի ճոխ բովանդակություն ունի Զմմառյան ձեռագիրը, որ պարունակում է տասնյակ անգամ ավելի ներկերի պատրաստման կերպեր, ինչպես նաև արհեստագործական այլ բնագավառների մասին գործնական խրատներ ու խորհուրդներ (ոսկեջուր, արծաթաջուր պատրաստել, համաձուլվածքներ կազմել, բրդյա և բամբակյա կտորներ ներկել, ճենապակի կտրված իրեր փակցնել և այլն և այլն): Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ խրատների մեծագույն մասը փորձված են գրանցողի կողմից, որը բազմափեշակ ու հմուտ մի արհեստավոր պետք է եղած լինի: Հաճախ, այս կամ այն խրատի կապակցությամբ նա դիտողություններ է կատարել լուսանցքներում կամ պարզաբանություններ տվել անսալով այլ մասնագետների խորհուրդներին: Այսպես օրինակ, մի տեղ նա գրում է.*

«Զուգայեցի պարոն Բարսեղն ասաց, թէ կամ չողանն և կամ թէ շիպն, որ շատ լինին թխագոյն ասնեն գծաղիկն, իսկ հայր Բարսեղին՝ Սանփաննոս ադայն ասայ՝ շիպն այրած լինի՝ լաւ, և կամ թէ լիմոնի ջուր կաթեցնես ի տեղի շպին՝ այլ ևս պայծառ լինի, ասաց» և այլն:

Այս ձեռագրերի մեջ գրանցված նյութերը, մասնավորապես ներկերի պատրաստման եղանակները՝ արժանի են մասնագիտական ուսումնասիրության և լաբորատոր փորձարկման մեր քիմիկոսների կողմից:

Սխալված չենք լինի թերևս, եթե միջնադարյան հայ մատենագրության ամենաճոխ արտահայտված բնագավառը Երուսաղեմի ու Զմմառի

ձեռագրերում համարենք բժշկությունը: Բժշկական ձեռագրերը այս մատենադարաններում և՛ շատ են, և՛ բովանդակալից:

Ամենակարևորը, անշուշտ, Զմմառի վանքի նո. 250 բժշկարանն է, որը միջնադարյան հայ բժշկագիտության կարևորագույն հուշարձաններից մեկն է, անտարակույս, և գուցե Մխ. Հերացու գրչին է պատկանում: Բժշկարանն ընդգրկում է միջնադարյան բժշկության բոլոր բնագավառները: Ոչ պակաս արժեք է ներկայացնում Հեթում Սեբաստոսի բժշկարանը՝ պահպանված Երուսաղեմի նո. 370 ձեռագրով, որը հակառակ ցայց տարածված կարծիքի, ընդօրինակված պետք է լինի ոչ թե ԺԲ, այլ ԺԳ-ԺԵ դարերում (ԺԲ դարի սկզբնագրից): Այս ձեռագրերի մասին ավելի մանրամասն խոսք անելու կարիքը չի զգացվում, քանի որ դրանք մանրամասնորեն նկարագրված են Երուսաղեմի և Զմմառի Ցուցակների արդեն տպագրված մասերում:

Զմմառի վանքի մեծագին գանձերից է նաև ԺԶ դարի բանաստեղծ Հովասափ Սեբաստացու հեղինակած ինքնագիր (автограф) բժշկարանը, որով շնորհալի բանաստեղծն արժանի տեղ է գրավելու նաև միջնադարյան հայ բժշկության հարուստ պատմության մեջ:

Իր բժշկարանի ներածականում Հովասափն ասում է. «… Բայց մեք անպիտան ծառայս ձեր՝ մեղապարտ Յովասափ անուն սարկաւագ Սեբաստիացի կամեցաւ զընտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստասիրական և բժշկական զամենայն ցեղ ցաւոց բառածումն, դեղերն, զորութիւն զամենայն դեղոց և խնամ ածել ցաւածին»:

Դեղերի տեսությունն մանրամասնորեն շարադրելուց հետո, առանձին գլխով անդրադառնում է բժշկի բարոյական և իմացական հատկանիշներին: Մեջ բերենք այս գլխից մի ընդարձակ հատված, որով ոչ միայն բացահայտվում է մեր բանաստեղծ-բժշկի հմտությունը, այլև երևում, որ նա բանաստեղծ է մնում նաև այն դեպքում, երբ բժշկարան է շարադրում:

«Եւ պատեհ է, - գրում է նա, - որ ի մեծ թագաւորացն ի խէչ ապեկ վարպետ և իմաստուն և գիտուն և հաքիմ կենայ, յորժամ օր մի որ թագաւորին հիւանդութիւն գիպի, նայ չերթան ի յայլ տեղաց բերեն, այնոր համար որ մարդոյն բնութիւնն ի միր առողջ չի լինիր: Որպէս որ թագաւորաց սահմանք է, որ սեհ շինեն և գնեն ի խազնան, որ օր մի թէ չարկամ գայ, նա. հանեն զայն սեհն ի խազնայէն և բաժանեն հեծելին և զչարակամն յախթէն,

և թէ չկենայ չարկամ, նա ի խազնան գնեն և պահեն: Նոյնպէս և հաքիմն այլ պիտի, որ ի յառողջութիւն պահեն այն աւուրն համար, որ պիտոյ գայ:

Եւ բժիշկն այլ պիտի, որ իմաստուն լինի և գիտուն և յալ չլինի և պարծենկոտ և սուտ զրույց չլինի և վարդապետի աշակերտ լինի, և շատ գրեանք կարդացել լինի և շատ թանճրուպայի գիտել, և խելօք և խրատատու լինի, և տամահի չլինի, և աղքատաց տամահ ճառնէ, և պէտն բդորդ առնէ: Եւ թէ այսպէս չլինի զոր ասացի, նայ լաւն այն է, որ զինքն ի հիւանդն ի խէչ չի տանին և նորա դեղն առնեն: Այնոր համար, որ մարդոյն անձն որպէս քաղաք մի է, և բնութիւնն թագաւոր է և հիւրնդութիւնն չարակամ է այս քաղաքիս, որ կու ջանայ, որ աւիրէ զքաղաքս, և դեղերն որպէս սեհ են, որ ի կռուոյն ժամն պիտենան, և հէքիմն որպէս սեհտար է. բայց պիտի որ սեհտարն գիտուն լինի զպէտքն: Եւ որպէս տան զսեհն յորժամ որ թագաւորն սեհ ուզէ, նայ զպէտն տայ, և աշէ զչարակամն, թէ ի հեռուն Է՛ ապեղ և նետ տայ թագաւորին, թէ ի մօտ գայ՝ բուռմպ տայ, և թէ այլ ի մօտիկ գայ՝ թուր տայ: Եւ թէ այսպէս չառնէ, նա գիտացիր, որ չարկամն զթագաւորն կու յաղթէ և զքաղաքն կուաւիրէ, և քաղաքին առնուելուն պատճառն ի սեհտարին անգիտութենէն լինի: Բայց հէքիմն այլ հանց կու պիտի, որ ազվոր իմանայ զհիւանդն, որ յայնժամ, որ հիւրնդին լուծման դեղ տալու պատեհ լինի, նա փսխելո դեղ չտայ, և յորժամ շարապ պատեհ լինի, նայ զարէջուր չի տա, և որոյ զարէջուր պատեհ՝ մուզավարա չի տայ, և զինչ որ հիւանդին տալու Է՛ առենն տայ»:

Ողջ բժշկարանը իր նյութով ու շարադրանքով, ուշագրավ մատենագրական մի հուշարձան Է՛ արժանի հրատարակության: Զմմառի վանքի միաբանության ղեկավարությունը սիրով տրամադրեց մեզ այդ և մի քանի այլ ձեռագրերի միկրոպատճենները:

Մանկաբուժական տեսական շատ կարևոր աշխատություն է Երուսաղեմի մատենադարանի նո. 2214 ձեռագրում ընդօրինակված «Գիրք մարդկակազմութեան»*-ը, որ բաղկացած է 61 գլուխներից: Ձեռագիրը ԺԹ դարի է, բայց աշխատությունը, անտարակույս, հայ բժշկության դասական շրջանի (ԺԲ-ԺԴ դդ.) ստեղծագործություններից պետք է լինի:*

Մեր համեստ կարծիքով բացառիկ գիտական ու գործնական արժեք է ներկայացնում Զմմառի վանքի (Անտոնյան հավաքածո) նո. 237 ձեռագիրը՝ «Բառարան բժշկաց»*, որ շարադրել է 1774 թ. Սահակ Քալբակյանը,*

Կուտիա քաղաքում:

Այբբենական կարգով, Այբից մինչև Ֆե թվարկում է «անուանք զանազան դեղօրէից բարբառովն այլևայլ ազգաց և նոցին զօրութիւնն և աստիճանք ջերմութեան և ցրտութեան, խոնաւութեան և չորութեան ...»:

Մի օրինակով ցույց տանք, թե ինչպես է «թվարկում» մեր հեղինակը դեղերի անունները.

«Ալուսան, որ է հայերէն վառվռուկ, և ինքն խոտ մին է, որ ի լերինս բուսանի, ճիւղն վերէն մինչև ի վայր սերտ տերև ունի որպէս բակլային մեծութեամբ, բայց գոյնն ոչ է իբրև բակլային՝ նոսր է, և ի վերայ զաղապ ունի: Այլ և տերևքն երկու տակ են, և ի մէջն տափակ հունդ ունի կարմրաժեռ. և յառաջ, որ ելանէ՝ տերևն սփռի ի գետինն, և յետոյ որձայ հանէ, և հունդն ի մէջ տերևի նորին է: Իսկ թուրքերէն այս խոտիս դուտուզօրու ասեն» և այլն:

Այս բժշկական բառարանը, համոզված ենք, որ օգտակար է լինելու այն դեղագետներին, որոնք, ուզում ենք հավատալ, շուտով հրապարակ են գալու զբաղվելու համար մեր դեղագիտարանների ուսումնասիրությամբ, որպեսզի դրանց ծալքերից դուրս հանեն մեր ժողովրդի հազարամյա կենսափորձով ստուգված տասնյակ ու տասնյակ օգտակար դեղատոմսեր:

*Այս առումով մեծ նշանակություն ունի նաև Սեբաստացի ծանոթ բանասեր ու ողբերգակ Կարապետ Գաբիկեանի «Հայ բուսաշխարհ» ստվար հատորը, որի ձեռագիրը հարյուրավոր բույսերի գունավոր նկարներով հանգուցյալ բանասերի որդու՝ Կիրեղ վարդապետ Գաբիկեանի մոտ երկար տարիներ սպասում է իր հրատարակողին**:

Բացի վերը թվարկվածներից, մենք Երուսաղեմում, Զմմառում, Անթիլիասում և մեր այցելած մյուս վայրերում տեսել ենք մի քանի տասնյակ այլ ձեռագրեր ևս, որոնք նույնպես իրենց բովանդակությամբ լուսավորելու են հայ մատենագրության դեռևս մթին շատ խորշեր, բայց այդ բոլորի մասին հնարավոր չէ խոսք անել մեր հաղորդման ընթացքում:

Ուստի վերջացնենք մեր խոսքը, փառաբանելով միջնադարյան մեր մանրանկարիչներին՝ Թորոս Ռոսլինի հրամանատարությամբ, որոնց փառահեղ գործերը պահպանվում են Երուսաղեմի մատենադարանում, և որոնցից մի տասնյակի մանրանկարների գունավոր լուսանկարները Երուսաղեմի վանքի ղեկավարությունը պատրաստել տվեց՝ մեր Մատենադարանի համար:

* [Գիրքը լույս է տեսել Երուսաղեմում 1968 թ. Ն. Ծաղավարյանի առաջաբանով և Լ. Խաչիկյանի հանձնարարականով (էջ XXI-XXII)] – **Խմբ.**:

ՆԿԱՐՆԵՐ



Նկ. 1



նկ. 2



նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



նկ. 6



նկ. 7



նկ. 8



նկ. 9



նկ. 10



նկ. 11

նկ. 12

նկ. 13



նկ. 14



նկ. 15



նկ. 16



նկ. 17



նկ. 18



նկ. 19



նկ. 20



նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



նկ. 24

VI-IX դարերի չինական արձանիկ
(պատկերված է հայ գինեվաճառ)

VI-IX դարերի չինական արձանիկ
(պատկերված է հայ գինեվաճառ)

Մեդալ, Գերաքի որդի Գրիգորի պատկերով՝ ջուղայեցի հայ վաճառականի հագուստ-կապուստով. Մեդալի հակառակ երեսը:

Մեդալ, Հովհաննես Տեր-Դավթյանի պարոնների եղբոր՝ խոջա Գրիգորի պատկերով. մեդալի հակառակ երեսը:



Նոր Ջուղայի համայնապատկերը (18-րդ դար)



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԵՐԹՈՒՂԻՆ (1682-1693 թթ.)

ՅԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգար Թոխաթեցի 1023
Աբգարյան Գ. 1016, 1033
Աբդլ-Ազիզ (խոջա) 162
Աբդլմսեհ Կյուրոպաղատ 243
Աբդուրրեզակ Սամարկանդի 91
Աբեղյան Մանուկ 409, 410, 585, 715, 774, 920, 928, 930, 979-981, 983, 989, 1014, 1016, 1024
Աբովյան Խաչատուր 998
Աբրահամ (տանուտեր) 146
Աբրահամ (վանահայր) 266
Աբրահամ (Գազկցի Կարապետի որդի) 813
Աբրահամ Անկյուրացի 185
Աբրահամ եպս. 600
Աբրահամ Երևանցի 984, 991, 1014
Աբրահամ Թեմիրղազցի 1005
Աբրահամ Խոստովանող 1001
Աբրահամ Կրետացի 715, 723, 730, 985, 1088
Աբրահամ Պոլսեցի 759, 760
Աբրահամ վարդապետ 1005
Աբրահամյան Աշ. 756, 801, 855, 873-875, 881, 885, 888-890, 892, 893, 1015, 1025
Աբրահամյան Հ. 106, 987, 990, 1025, 1028
Աբրահամյան Ռ. 1016
Աբու-Ալի Իբն Սինայ (Ավիցենա) 549, 966
Աբուբաքր (Աբու-Բաքր) 32, 86, 87
Աբուլաձե Ի. Վ. 993
Աբու-Սայիդ (Աբուսայիդ) 7-9, 39, 66-68, 109, 160, 178, 179, 549, 611, 631, 654, 727, 750, 960
Ագաթանգեղոս 551, 974, 975, 980, 983, 1014, 1093
Ագատրոն (Ագաթոն) 450, 451
Ադոնց Ն. 906, 980
Ադրիանոս կայսր 572, 1090
Ազարիա գրիչ 73, 237, 313
Ազարիա Ջուղայեցի 865
Ազարյան Լ. 593
Ազիզ լամու 813
Ազիզպեկ (Եղվարդի տեր) 56, 144, 252, 617
Աթաբեկ Շահնշահ Գ. (իշխան) 11, 12
Աթայան Ռ. 1015
Աթանաս Ալեքսանդրացի 365, 369, 397
Ալամ (Հովհ. Տեր-Դավթյան Ջուղայեցու եղբայր) 797
Ալ-Աշրաֆ Սալահ-էտ-տին խալիլ սուլթան 558
Ալբերտ Մեծ 648
Ալբերտ դ'Օրվիլ 782
Ալեքսանդր թագավոր 40, 52, 112, 116, 245, 650, 657
Ալեքսիանոս (ոսկերիչ) 146
Ալեքսիանոս գրիչ 214, 217
Ալթուն-Պուղա 611
Ալիբեկ պարոն 55, 144, 659

Ալիշան Ղ. 12, 40, 72, 153, 154, 247, 342, 452, 477, 625, 668, 688, 765, 768, 769, 794, 795, 810, 816, 819, 920, 975, 1092
Ալիշամար բեկ 161
Ալի-Փադիշահ (Օյրաթ մոնղոլական ցեղի առաջնորդ) 7, 8, 67, 68
Ալպօյաճեան Ա. 156, 810, 820
Ալ-Ռազի 549
Ալվանդ փադիշահ 213, 214, 219, 222
Ալփ - Արսլան 458
Ախիջուկ (ամիր)14, 75, 76
Ակինեան Տիրան 555
Ակինյան Ն. 243, 347
Ակնցի Ասլան 813
Ակ-կոյունլուներ տե՛ս Աղ-կոյունլուներ
Ակ-կոյունլու Օսման 83, 89, 96, 97, 99, 114, 125, 154-156, 169, 170, 646
Ահմադ ու - Ղաֆֆարի ալ-Ղազվին (դադի) 166, 170
Ահարոն բժիշկ 750
Ահմատ (Ահմադ, Ահմեդ) տե՛ս Սուլթան Ահմատ
Ահրիման 720, 1007
Աղամալյանց Ս. 755
Աղանյանց Գ. 1014
Աղաֆոն Հովնաթանյան 775
Աղբուղա (Հասան Ծարեցի իշխանի որդի) 22, 140, 635
Աղիդան (պարոն) 55
Աղ-կոյունլու(ներ) 33, 35, 38, 40, 44-46, 49, 55, 65, 83, 96, 97, 99, 107, 119, 125, 154, 156, 157, 160, 161, 169, 170, 171, 176, 177, 179, 180, 184, 186-190, 196, 198, 199, 201, 206, 207, 209, 210, 217, 219, 221-225, 231-233, 239, 310, 313, 320-322, 329, 646, 650, 652-655, 663
Աղ-կոյունլու Օսման 35
Աղպաստ իշխան (Ջալալի որդի) 248, 249
Աճառյան Հրաչյա I, 139, 297, 660, 667, 669, 934, 981, 1014, 1024
Ամալյան Հ. 1034, 1098
Ամատունի Ս. 978, 1001, 1006
Ամենավազ (ռայիս) 256
Ամիր-Ադիլ 16, 78
Ամիր Ազիզ (Վարձիգուլի որդի) 257
Ամիր Ալադին 352
Ամիր Ահմադ 102
Ամիր Բաքօ (տանուտեր) 278, 279
Ամիր Բահա-ադ-դին տե՛ս Բահա-ադ-դին
Ամիրբեկ (Հովհաննեսի որդի) 306
Ամիրզունայ խան 1085
Ամիրզա (դարբին) 320
Ամիր-Դայութ 228, 229
Ամիրդովլաթ Ամասիացի 190, 549, 727, 730, 745-750, 762, 988, 1015, 1046

Ամիր Եզդին 23, 32, 37, 47, 87, 102, 109, 126, 136, 225, 229, 230, 349, 350, 352, 612, 637
Ամիրզա դարբին 320
Ամիր Ջենդին 352
Ամիր Իբրահիմ 27
Ամիր-Հասան պարոն 246, 250
Ամիր-Մելեք 229
Ամիր Մելիք-Մուհամեդ 647
Ամիր Շամս-ադ-դին տե՛ս Շամս-ադ-դին
Ամիր Շարաֆ (Իբրահիմի եղբայր) 46, 166, 226-228, 349, 351, 647
Ամիր Զոբան 8, 68
Ամիրչան (պարոն) 251
Ամիր-Սաադ (Ամիր-Սաաք) 45, 233, 234
Ամիր-Սարգիս (ուստա) 147
Ամիր-Սուլեյման 228, 229
Ամիր-Վասակ պարոն 246
Ամպար-Խաթուն 339
Այբա-Սուլթան 209-214, 216-219, 322
Այտին իշխան (Տուրունի որդի, Դոփյան իշխան) 53, 249, 658
Անանիա Շիրակացի 492, 497, 726, 730, 738, 744, 977, 988, 1014, 1015, 1031, 1034
Անանյան Սրբուհի 1022
Անանուն (զրուցագիր) 714, 723, 730, 981
Անասյան Հ. 64, 185, 688, 692, 1017, 1018, 1041, 1052, 1058
Անդրեաս Պերուջացի 815
Անթաբյան Փ. 1038
Անտոն Անապատական 369, 370
Անտոն Գոուվեա 940
Անտոն Հայ (նավապետ) 816
Անտոնիո Անդրադցի 810, 811
Անտոնիոյ դէ Անդրէադէ 781
Աշե գեղեցկուհի (Ղատիի դուստր) 461
Ապաղա (Մանկու Դէմուրի եղբայր) 880
Առավնդուզ (Տօնղուզ) 876
Առաքել (Համշենի պարոնաց-պարոն) 54, 141, 142, 273
Առաքել աբեղա 443
Առաքել Բաղիշեցի 129, 130, 185, 307, 688
Առաքել Բոբիկ 773
Առաքել Դավրիժեցի 164, 625, 715, 723, 730, 973, 974, 997
Առաքել իշխան 141, 142
Առաքել Հնազանդենց (կազմարար) 600
Առաքել Շոռոթեցի 773
Առաքել Սյունեցի 86, 129, 132, 335, 583, 586, 1049
Առաքել Քարաձգենց 769
Առաքելյան Վ. 1017
Ասադ-եդ-դին Ոսկեբազուկ 230
Ասար Սեբաստացի 727, 748, 749
Ասլան աղա (վերակացու) 325
Ասլան վաճառական (Պողոսի որդի) 769
Ասլանյան Հայրիկ (եպս.) 1081

Ասկանդար 112
Ասկղիպեոս 377
Ասողիկ 977
Աստվածատուր գրիչ 111, 130, 142, 146, 183, 350
Աստվածատուր Խաբայեցի 817
Աստվածատուր Միրեթենց 793
Աստվածատուր վարդապետ 346
Ավագ (եպիսկոպոս) 324
Ավագ (Ազիզպեկի որդի) 56, 144
Ավագ (Գիշուկ և Շամշա ամուսինների որդի) 287
Ավագ (պարոն) 246
Ավագ (Սեթիկի որդի) 140
Ավագ (քսակկար) 235
Ավագ վարդապետ 75, 324
Ավագյան Ս. 348, 1033
Ավագտեր վարդապետ 254
Ավան աղա 255
Ավգերեան Հ. 331
Ավգերյան Մ. 975, 990, 1010
Ավդալբեգյան Թադևոս III
Ավդուլ (Ամիր-Սաադի թոռ) 46, 94
Ավետիս (տանուտեր) 284
Ավետիս (ճյուան Մլխամի հայր) 305
Ավետիք (պարոն, Պետրոսի որդի) 799, 802- 804, 831, 840, 841
Ավետիք գրիչ 107, 127, 422
Ավետիք Տիգրանակերտցի 752, 763-765
Ավբման բեկ 107
Ավյան Ստեփան 1022
Ավշին Կուտիկոս 1089
Ավտոլ (Առաքելի որդի, արհեստանոցի տեր) 147
Ավրանգզեպ (Հնդկաստանի տիրակալ) 834
Ատոմ կաթողիկոս 262
Արապշահ 30, 160, 161, 324
Արթըր էդվըրդս 312
Արիոս 369
Արիստակես 131, 150
Արիստակես Լաստիվերցի 714, 723, 730, 991
Արիստակես վարդապետ Տեկանց 920
Արիստոտել 134, 285, 286, 368, 453, 462, 480, 481, 485, 487, 488, 493, 498, 729, 736, 1017
Արծրունյան(ներ) 47, 458, 647, 653
Արկադիոս կայսր 362
Արղութան պարոն (Ջումայի թոռ) 247, 250
Արղութէ (որդի Ջազայի) 141
Արղուն խան 16, 77, 155, 169
Արշակ Բ 398, 399, 401
Արշակունիներ 393, 403, 404, 451, 936
Արտավազդ II 905
Արտոյտ (Գինդ անապատականի աշակերտ) 397
Արտուխյան Սալըխ 89
Արփա խան 7, 66, 67
Արևշատյան Ս. 1015, 1017, 1035, 1079, 1092

Բաբա (Փանոսի որդի) 802, 841
Բաբաճան (պարոն) 252
Բաբաճյան (պատրիարք) 1082
Բագրատ Զ. թագավոր 191, 192
Բաթու ղան 894
Բախտիար (տանուտեր, էդգարի որդի) 281
Բախչինյան Ա. 1013
Բահադ-էդ-դին (Բահա-ադ-դին) 38, 47
Բաղդասար դպիր 716, 1075
Բաղդասարյան է. 582
Բաղեր-Օղլի 844
Բաղշայիշ (ռես) 262, 284
Բայազիտ I սուլթան (Սուլթան Ուվեյսի որդի)16, 29, 30, 78, 85, 104, 185, 643, 644
Բայանդուր բեկ 184, 196, 197, 202, 208, 219
Բայսունղուր (Յաղուբի որդի) 203, 204, 206, 208, 209, 221
Բայրամ-խոջա 16, 77
Բասոս 427
Բարբարո Յ. 57, 60, 303, 307-309, 311, 314, 318, 666
Բարխուդարեանց Մ. 250, 325
Բարսեղ Արճիշեցի 223
Բարսեղ գրիչ 201, 212, 213, 215, 216, 218, 278
Բարսեղ եպիսկոպոս 246
Բարսեղ կաթողիկոս 445, 885
Բարսեղ Կեսարացի II, 274, 360, 363, 364, 367, 368, 371-374, 376-381, 383, 389, 390, 391, 412, 415, 417-420, 427, 430, 438, 730
Բարսեղ Սեբաստացի 373, 376
Բեգում-խաթուն (Ջհանշահի կին) 240
Բեյթար (բժիշկ) 747
Բենեդիկտ Գոես 818, 819
Բեշքեն Օրբելյան 40, 42, 46, 51, 52, 60, 91, 106, 112, 113, 121, 140, 234, 245, 247, 650, 656, 657
Բերամ-բեկ (ղզլբաշ) 281
Բերդիբեկ (Ջանիբեկ խանի որդի) 14, 75
Բերդումյան Պետրոս 1051, 1056, 1057, 1069,
Բեքիարուխ 885
Բէկում-խաթուն 164
Բիվթանիոս 427
Բոնավենտո 648
Բրոսե Մ. 976- 978, 988, 999
Բուդաղ բեկ 198
Բուղա 885
Բուղլախ (պարոն) 55, 144
Բունիաթ Սեբաստացի 727, 748, 749
Բուտե Հ. 960
Բուրթել Օրբելյան 50, 245, 248

Գաբիկեան Կարապետ 1102
Գաբիկեան Կյուրեղ 1102
Գալեն 752, 762
Գալիլեյ 752
Գալուստ գրիչ 120, 124, 251
Գաման Քաթիպա 775
Գամպայ լամու 813
Գայֆենյան Արծվիկ 1081
Գառու նիվար 813
Գասպարյան Մ. 691, 692, 1058
Գարա Օսման (Գարա Սոլուկ) 156
Գարեգին Սրվանձտյան 120, 601
Գեանջեցեան Լ. 554, 556
Գեորգ գրիչ 469, 478
Գեորգ դպիր Պալատեցի 975
Գեորգի III (Թամար թագուհու հայր) 458
Գեորգի VII (Գիորգի է.) թագավոր 27, 28, 31, 32, 88, 641, 642, 644
Գերաք Միրմանենց (Ըմպրումի որդի) 792, 794-796, 798, 804
Գիյաս-ադ-դին Մասուդ II 29, 642
Գինդ անապատական 397
Գիշուկ (Շամշայի ամուսին) 287
Գյուլնազար (խոջա Նահապետի որդի) 773
Գյումուշխանեցի Մ. 998
Գնունյանց (իշխան) 447
Գոհար Մելիք 230, 235
Գոյան Գ. 1015
Գորգ (Հովհաննեսի որդի) 306
Գորգ (գրիչ) 706
Գորգ (խոջա) 103
Գորգ (մելիք) 649
Գորգ Ջաֆրան (Գնունյաց իշխան) 447
Գորգասալ (դերձակ) 147
Գորգուն Օրբելյան 18, 50, 51, 80, 81, 245, 632, 657
Գրիգոր (Հըսնիքեյֆի եպիսկոպոս) 311
Գրիգոր (Գերաքի որդի) 794, 796
Գրիգոր (Դոփյան իշխան) 140, 249
Գրիգոր Ականեցի 723, 977
Գրիգոր Աղթամարցի 715, 817, 923, 990
Գրիգոր Արծկեցի (գրիչ) 147
Գրիգոր գրիչ 95, 99, 108, 119, 124, 150, 156, 158, 174, 191, 193
Գրիգոր Դարանաղցի 730, 1004
Գրիգոր ԺԱ կաթողիկոս 344
Գրիգոր իշխան (Փ. Սյունիք) 615, 616
Գրիգոր Լուսավորիչ 123, 163, 164, 167, 168, 237, 265, 451, 558, 588, 628, 668, 678, 686, 1050
Գրիգոր Լուսիկենց 793
Գրիգոր Խլաթեցի 21, 23, 24, 26-28, 34-36, 84, 85, 94-96, 98-102, 107, 125, 129, 130, 149, 150, 173, 226, 270, 294, 635-637, 639, 641, 680, 687
Գրիգոր ծաղկող 177
Գրիգոր Ծերենց տե՛ս Գրիգոր Խլաթեցի
Գրիգոր Ծերունոնց 256
Գրիգոր Կեսարացի 756
Գրիգոր Մագիստրոս 547, 548, 592, 1070
Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյան

44, 104, 122, 164, 167, 231
Գրիգոր Մարաշցի 455, 456
Գրիգոր Մուսաբեգյան 678
Գրիգոր Նազիանզացի 274, 365
Գրիգոր Նարեկացի 294, 726, 730, 929, 943
Գրիգոր Նյուսացի 274, 383, 495, 738
Գրիգոր Չորթան Արճիշեցի 201, 232
Գրիգոր Պահլավունի 251, 592, 971
Գրիգոր Տաթևացի 21, 41, 42, 56, 58, 62, 95, 121, 128-132, 134, 135, 142, 145, 261, 272, 276, 277, 279, 281, 288-290, 313, 315, 318, 319, 337, 343, 345, 346, 461-464, 580, 582-584, 586, 587, 608, 635, 662, 664, 666, 670, 675, 680, 682, 683, 699, 706, 715, 726, 736, 738-740, 743, 943, 988, 1015, 1084
Գրիգոր Տարոնացի 273
Գրիգոր Տղա 550, 592, 715, 726, 887
Գրիգորիս (բժիշկ) 549, 727, 989
Գրիգորյան Հ. 909
Գրիգորյան Մ. 1030
Գրիգորյան Վ. 709, 986, 1034
Գուլաբ (Սուֆի-Խալիլի եղբորորդի) 204, 205
Գուլամիր (մահդասի) 331
Գուլեր (տանուտեր) 255
Գուտեր Ֆ. 855
Գուրջիբեկ 244, 653
Գևորգ գրիչ 469, 478
Գևորգ (Գեորգ) Երզնկացի 134, 680, 741
Գևորգ Ջորավար 256, 292
Գևորգ Սկևռացի 671, 1034
Գևորգ վարդապետ Կարպիսյան 1083
Գևորգյան Ա. 589, 602
Գևորգյան Վ. 1034

Դանա-խալիլ (հայր Իբրահիմ Այբա-Սուլթանի) 208
Դանիել Աբեղա 751
Դանիել Աղթամարցի գրիչ 609
Դանիել Ասորի 677
Դանիել եպիսկոպոս 1000
Դանիել վարդապետ (Գր. Տաթևացու աշակերտ) 254, 272
Դավիթ (ծիշատակագիր) 246
Դավիթ (Համշենի պարոնաց պարոն) 54, 55, 142-144, 251, 273, 342
Դավիթ (ջրաղացպան) 452
Դավիթ (Վխկայ գյուղի տանուտեր) 342
Դավիթ Անհաղթ 486-489, 491, 499, 586, 694-696, 715, 726, 730, 933, 988, 1093
Դավիթ գրիչ 39, 108, 127, 246
Դավիթ եպիսկոպոս 156, 157, 161
Դավիթ երեց 259, 264, 290
Դավիթ Թոխաթեցի 499

Դավիթ Խարբերդցի 119
Դավիթ III կաթողիկոս 62, 243
Դավիթ Կյուրոպաղատ 243, 548
Դավիթ Շինարար 458
Դավութ-բեկ 229
Դարբինյան Մ. 1034
Դեկիոս կայսր 572
Դեմոսթենես 373
Դերենիկ Արծրունի 447
Դըղուշ (Դամասկոսի արքա) 885
Դիեգոյ դի Ալմեյդա 781
Դիլանճի (Լեշի որդի)140
Դիոգենես Լաերտացի 479, 481
Դիոկղետիանոս 356
Դիոնիսիոս Արիոպագացի 272, 274, 997, 1051-1054, 1064
Դիոնիսիոս Թրակացի 428, 482, 729
Դիոսկորիդես 762
Դոմինիկյաններ 648
Դովլաթշէն (պարոն, Մաղթումի որդի) 281
Դոփյանք 22, 52, 53, 140, 248-250, 260, 324, 608, 615, 635, 657, 658
Դրամբյան Ի. 589, 602
Դրամբյան Ռ. 1015
Դուռնովո Ա. Լ. 577

Եաղուպ (փաշշահ) 45, 207, 233
Եգանյան Օ. 1003, 1035, 1038
Եզդանբախշ (ոմն) 260
Եզդանբաշխ Ախթամարցի 319, 340
Եզդանբաշխ (Խալիմ-Խաթունի որդի) 319
Եզդինշեր 48, 177, 206, 217, 230
Եզյան Կ. 977
Եզնիկ Կողբացի 406, 493
Եզտանբաշխ (տանուտեր) 282
Եղիա եպիսկոպոս (Գանձասարի առաջնորդ) 250
Եղիազար Անթափցի 1088
Եղիազար գրիչ 423
Եղիազարով Ս. 331, 332
Եղիշե (պարոն-տեր, Վայոց ձորի արքեպիսկոպոս) 52, 248
Եղիշե 405, 497, 702, 714, 723, 730, 974, 981, 990, 1014, 1031
Եղիշե արքեպիսկոպոս 248
Եղիշե արք. Տեռտերյան 602, 1080
Ենգոյան Ալան 1022
Եպիփան Կիպրացի 408, 572
Եսայի Ղրիմեցի 745
Եսայի Նչեցի 580, 883, 1095
Եսայի վարդապետ 130, 596
Եվգենիոս 427
Եվիպպիոս 376
Եվլալիոս եպիսկոպոս 367, 416
Եվղաղիոս 427
Եվնոմիոս 368, 419
Եվսեբիոս Կեսարացի 370, 416, 417, 427
Եվստաթիոս Սեբաստացի 366, 367, 369-374, 376, 381, 382, 385, 390, 412-420
Երեմիա Քյումուրճյան 990
Երեմյան Ս. 906
Երիցյան Աղ. 999, 1011

Եփրեմ Ասորի 702
Եփրեմ կաթողիկոս 1006

Զագա իշխան 53, 72, 141, 658
Զահիդ-բեկ (Եզդինշերի որդի) 48, 217, 231
Զայոնչկովսկի 960
Զավեն կաթողիկոս 394, 395
Զարբհանալյան Գ. 1052
Զաքար Կիրկորովիչ 805
Զաքարե Երկայնաբազուկ 458, 879
Զաքարիա Ագուլեցի 778, 847, 984, 991, 1014
Զաքարիա (Ազիզպեկի որդի) 56, 144, 325, 342
Զաքարիա գրիչ 148, 149, 191, 193, 252
Զաքարիա (Բջնիի իշխան) 342
Զաքարիա (Խոջա Գերաքի որդի) 780, 789, 792- 795, 802
Զաքարիա կաթողիկոս 67, 162-168, 227, 237, 244, 245, 254, 262, 282-284, 616, 617, 652, 653
Զաքարիա Զագեցի 580
Զաքարիա Սարկավագ 325, 730
Զաքարիա Քանաքեռցի 730, 768, 972, 1034
Զաքարյան Լ. 589
Զաքարյաններ 11, 72, 652
Զեյթունյան Ա. 1038
Զեյն-ադ-դին (պատմագիր) 80
Զեյնալ (Ուզուն-Հասանի որդի) 189
Զենոբ Մամիկոնյան 974
Զենոն 220, 469, 471, 472, 474-476, 480-485, 487, 489, 492, 493, 498, 500, 729, 1015
Զենոն - Էլեացի 479
- Մնազեոսի որդի 479, 481
- Սիդոնացի 479
- Տարսոնցի 479
Զուլալյան Մ. Կ. 664

Էդգար (էդկարշահ, տանուտեր) 281
Էդգար (թամղաչի) 237, 339
Էման-բեկ (պարոն) 49
Էմանուել Կանտ 818
Էմին Մ. 976, 977, 998
Էմնադ (ներկարար) 257
Էմնիազ աղա 861
Էյնաթյան Ջ. 741, 745
Էնգելս Ֆր. 380, 382, 405
Էվատշահ (ուստա) 147
Էրթողրուլ (Օղուզների ցեղապետ) 29, 642
Էփրիկյան Ս. 680

Ըմպրում (Գերաք Միրմանենցի հայր) 792, 794
Ըմպրում աղա (Գերաքի որդի) 780, 789, 792-795, 802

Թադեոս (գրիչ) 620
Թադեոս Ավրամենց 134, 973
Թադէոս եպիսկոպոս 310
Թադևոս վարդապետ 862

Թահար (տեր) 260
Թահիր (Սուլթան Ահմեդի որդի) 20, 27, 634, 641
Թահմիզյան Ն. 584, 589
Թաղիադյան Մ. 1006
Թամազղուլի խան 1085
Թամար թագուհի 458
Թամար իշխանուհի (պարոն Բաբանանի կին) 252
Թամթայ (Իվանեի դուստր) 461
Թամուրտաշ (Կեղծ Թամուրտաշ) 9, 10, 15, 69, 77, 81, 611, 620
Թամուրյաններ 20, 23, 27, 28, 30, 32, 34, 35, 39, 40, 58, 83, 88, 89, 108, 113, 119, 158, 160, 178, 179, 183, 326, 634, 642, 646, 650
Թանսուխ (Հովհ. գրչի կինը) 175
Թարաղա (Լանկ Թամուրի հայր) 20, 633
Թեոդոտ եպիսկոպոս 371, 372
Թեոդոսիոս կայսր 356, 362
Թեոն Ալեքսանդրացի 987, 1015
Թէոդոն Պոնտացի 572
Թողթամիշ 18, 19, 25, 26, 50, 80, 81, 631-633, 638, 639, 674
Թոնդրակեցիներ 406, 408, 456
Թովմա (կոչնակար) 146
Թովմա Արծրունի 551, 710, 977
Թովմա Աքվինացի 648
Թովմա Մեծոփեցի II, 18, 21, 23-25, 27, 28, 30, 33-35, 37-41, 43, 45-47, 50-52, 60, 80, 90, 94, 98, 100, 106, 110, 114-116, 118-120, 123, 127, 129, 130, 132-135, 145, 149, 163, 232, 236, 245, 270, 275, 288, 326, 327, 349, 630-633, 635, 637-640, 642, 645, 652, 657, 666-672, 675-679, 681, 682, 684, 686-691, 693, 695, 697-706, 715, 723, 943, 991
Թովմա Մինասենց 53, 101-105, 107, 109, 119, 120, 125, 126, 130, 136, 137, 150, 232, 350, 352, 659
Թովմա Պուտլիկվանեցի 687
Թովմա Սյունեցի (գրիչ) 140
Թովմա Սպատկերցի 126
Թովմա Վանանդեցի 753, 772
Թովմա րաբունապետ 123, 134
Թորոս գրիչ 151
Թորոս Ռոսլին 591-596, 598, 599, 602, 603, 710, 719, 728, 1005, 1031, 1102
Թորոս քահանա (Կոստանդին կաթողիկոսի եղբորորդի) 594
Թորոսյան Ե. 1025
Թոփճյան Հակոբ 249
Թոփչենց Մարկոս 842
Թրիքամ դալալ 842
Թուլույ (Չինգիզ-խանի որդի) 66
Թումա (Ս. Վարդանի վանքի առաջնորդ) 136
Թումա Արճիշեցի (գրիչ) 8, 67, 120, 620
Թումա եպիսկոպոս 264, 688
Թումա երեց 284
Թումա Թավրիզեցի (գրիչ) 86
Թումա Սյունեցի (գրիչ) 131, 140

Թումա քահանա 284
Թուման-բեկ (Ջումա Պողշյանի որդի) 246
Թումանյան Բ. 866
Թումաշահ (խոջա) 158, 162, 164-167
Թումաջան (Ատոմի որդի) 800, 842, 849

Ժան Շարդեն 900

Իբալ-Սուլթան 213, 215, 216
Իբն-Ռոշտ 549
Իբրահիմ (Ամիր-Շարաֆի եղբայր) 46, 227, 349, 351, 640, 647
Իբրահիմ Այբա-Սուլթան 208, 209
Իբրահիմ Շիրվանշահ 31, 32, 644
Իգնատիոս (գրիչ) 170, 580, 701
Իզմաիլովա Տ. 1015
Իլդրում (Սուլթան Բայազիտի) 85
Իմամ-Ջահֆար 962
Ինանիկ (պարոն) 246
Իշող ասորի (քահանա) 550, 727
Իոհան Գրյուբեր 809, 811
Իպոլիտ Դեզիդերի (ճիզվիտ քարոզիչ) 811
Իսահակ (Բենեդիկտ Գոեսի սպասավոր) 818
Իսահակ Ջուղայեցի 753
Իսմայիլ (Շեյխ-Հայդարի որդի) 205, 222
Իսրայել (գրիչ) 180
Իսքանդար (Սքանդար) Կարա-կոյունլու (Կարա-Յուսուֆի որդի) 35-42, 45-48, 51-53, 57, 58, 60, 75, 97, 100-110, 113-116, 143, 158, 176, 225, 226, 230, 232, 234, 349, 350, 352, 646, 647, 649, 651, 657, 658, 662
Իվանե Օրբելյան (Ստեփանոս) 18, 50, 51, 80, 245, 248, 615, 632, 656, 657, 879, 893
Իվանե Երկայնաբազուկ 458, 461
Իվանիկ պարոն 246

Լաթիֆ-բեկ 214, 215, 219
Լալայան Ե. 292, 1021
Լալայբեկ (խան) 1086
Լալա-Միրանշահ 268, 341
Լալաֆարյան Ս. 1017, 1033
Լանկ-Թամուր (Թարաղայի որդի Թամուր) 19-26, 28-32, 46, 47, 50, 51, 53, 81, 83-86, 87, 90, 108, 141, 169, 302, 326, 612, 623, 630, 633-639, 641-644, 658, 673, 687, 739
Լիննեյ (բնագետ) 762
Լիպարիտ 885
Լիսիցյան Լ. 1001
Լիսիցյան Ս. 1022
Լյուդովիկոս VII 452
Լևոն Ա. թագավոր 887
Լևոն թագաժառանգ (Լևոն Գ. թագավոր) 594, 599, 603
Լևոն պապ 900

Լևոնյան Գ. 1015
Լօղմաղան 23

Խալիլ (Միրանշահի որդի) 32, 86, 228
Խալիմ-Խաթուն (արճիշեցի) 319
Խալիֆ (ուստա) 266
Խալիֆ (Ճոեռի գյուղի բնակիչ) 299
Խաղբակ (պարոն) 246
Խանլարյան Լ. 1034
Խաչատուր (Գիշուկ և Շամշա ամուսինների որդի) 287
Խաչատուր (գրիչ) 17, 79, 159, 613, 621
Խաչատուր (ծաղկող) 1096
Խաչատուր Կեչառեցի 726, 990
Խաչատրյան Ա. 1029
Խաչգռուզ 923
Խաչիկ (ուստա Գրիգորի որդի) 806
Խաչիկ գրիչ 469
Խաչիկ վարդապետ Դադյան 249
Խաչիկյան Լևոն I-V, 8, 52, 55, 67, 83, 141, 153, 154, 157, 232, 245, 348, 350, 500, 555, 579, 589, 634, 709, 741, 745, 758, 779, 780, 789, 817, 895, 897, 902, 952, 954, 985, 1017, 1037, 1038, 1081, 1085, 1089
Խաչիկյան Շ. Լ. IV, 725, 779
Խաջե Թուղայ (Հաջի Թաղա) 8, 10, 67-69
Խաքանի (շիրվանցի բանաստեղծ) 461
Խեղենիկ Արքայուն 243
Խզմալյան Ջ. 1029
Խէվ Յովաննէս 927
Խնդուբեկ (դերձակ) 146
Խոջա Գերաք 780, 789, 792
Խոջա Գրիգոր 306
Խոջա Հովհաննես (Խալիմ-Խաթումի որդի) 319
Խոջա Հովսեփ (Սեթի որդի) 237
Խոջա Ղուպար 313
Խոջա Մաստաշահ (Թավրիզեցի) 129
Խոջա Միրաք 186
Խոջա Մովսէս (տանուտեր) 282
Խոջա Նաւրէտտին 549
Խոջա Շահրուղ 263
Խոջա Սահակ 263
Խոջա Տայուտ 303
Խոջա Ռուֆ 303
Խոնձա (Հասան Դոփյանի կինը) 140
Խոսրով 334, 339
Խտրշահ (Մխիթարի որդի) 267
Խումցի Աղան 813
Խունկանց Կարապետ (Խուտումչի) 334

Ծաղիկ (Գերաքի կին) 802
Ծատուր (Բջնիի առաջնորդ) 55, 144
Ծատուր (Ղուկասի որդի) 782, 786, 813, 845, 846
Ծերուն ծաղկող 22, 636

Կանանեանց Ս. 980, 1014
Կապուտիկյան Ս. 709
Կավուրդ 458
Կատերինո Զենո (վենետիկյան դեսպան) 186, 220
Կարապետյան Դ. 749
Կարա-Հասան 16, 78
Կարա-Մահմադ (Կարա-Յուսուֆի հայր) 23, 636
Կարա-Մուհամմեդ 16, 17, 77-79, 87
Կարա-Յոլուք Օսման (Օթման) 33, 38, 40, 89, 90, 96, 107, 114, 119, 156, 329
Կարա-կոյունլու Յուսուֆ 23, 25, 26, 32-37, 44, 46, 47, 51, 57, 87-97, 100, 102, 104, 112, 136, 137, 143, 156, 226, 636, 639, 640, 645-647, 654, 656, 662
Կարա-Կոյունլուներ 16, 17, 23, 37-40, 44-49, 51, 57, 65, 78, 83, 87, 88, 90, 93, 97, 99-101, 105, 107, 108, 109, 113, 115-118, 154-158, 160, 161, 165, 169, 170, 174, 176, 177, 180, 209, 220, 224, 225, 227, 228, 232, 233, 313, 320, 322, 326, 636, 639, 645-647, 649, 650, 652-655, 658, 662
Կարապետ (զանձապետ) 236
Կարապետ (գրիչ) 93, 100, 102, 113, 114, 118, 123, 127, 319, 320, 682, 701, 1003
Կարապետ (խալիֆ-Խաթունի որդի) 319
Կարապետ (հյուսն) 305
Կարապետ (պղնձագործ) 146
Կարապետ (վանեցի հիշատակագիր) 176, 283
Կարապետ (քահանա) 269
Կարապետ Աղեքցի (գրիչ) 98, 701
Կարապետ (տանուտեր) 284
Կարապետ (Սիմեոնի որդի) 769
Կարապետ արքեպիսկոպոս 1000
Կարապետ Բերկրեցի 221, 320
Կարապետ Դերջանցի 133
Կարապետ եպս. Ամատունի 897
Կարապետ Հիզանցի 103, 104
Կարապետ վարդապետ (սատղաբաշխ) 753
Կարապետ ռաբունապետ 275
Կարապետ քահանա (Ֆիռօ) 1096
Կեղծ-Շապուհ տե՛ս Շապուհ Բագրատունի
Կեպլեր 743
Կզարթմյան Վ. 909
Կիրակոս (գրիչ) 73, 103, 115, 679, 701
Կիրակոս (ներկարար) 310
Կիրակոս Գանձակեցի 414, 423, 430, 447, 452, 477, 714, 723, 730, 990, 1017
Կիրակոս վարդապետ 882
Կիրակոս Վիրապեցի 44, 121, 122, 130, 651, 669-671, 681-686, 705
Կլավիխո տե՛ս Ռուի Գոնզալես դե Կլավիխո
Կծոյան Ա. 989, 1015
Կյոսախուս Գ. 998
Կյուլպենկյան Գալուստ 780
Կյուլպենկյան Ռոբեր 780, 791, 798, 811
Կյումյուշխանեցի վրդ. 999
Կյուրեղ Ալեքսանդրացի 133
Կյուրեղ (Կիւրեղ) Երուսաղեմացի 568
Կոմիտաս 584
Կոստանդ Ջուղայեցի 796, 797, 805, 812, 830-832, 846, 848, 852, 854, 863, 1017
Կոստանդին (Կիլիկիայի վերջին հայ իշխանավոր) 42
Կոստանդին (Սսի իշխան) 651
Կոստանդին Բարձրբերդցի 296, 592
Կոստանդին Բ թագավոր 33, 91, 92, 207
Կոստանդին Երզնկացի 715, 726, 990, 1075
Կոստանդին 10-րդ Դուկայիկայոս 892
Կոստանդին (Կատուկեցի) կաթողիկոս 448, 451, 594, 879, 880
Կոստանյանց Կ. 34, 342, 675, 920
Կոպեռնիկոս 752
Կորխմազյան Է. 589, 1035
Կորյուն 410, 486- 488, 730, 731, 975, 1014
Կրուշինսկի 940
Կույի Բ. 1018

Հակոբ Արծկեցի 196, 197, 219-221
Հակոբ գրիչ 81, 107, 182, 618, 619
Հակոբ Խարբերդցի 180
Հակոբ կաթողիկոս 1085, 1086
Հակոբ Հովնաթանյան 775
Հակոբ Ղրիմեցի 129, 134, 470, 478, 705, 727, 740-745, 1095
Հակոբ Մծբնա 702
Հակոբ Նաղաշ 774
Հակոբ Նետրարենց 216, 307
Հակոբ Շամախեցի 862
Հակոբ Ովսանանցի 687
Հակոբ Ջուղայեցի կաթողիկոս 717, 728, 773, 940, 973, 996, 997
Հակոբ Սաղմոսավանեցի 680
Հակոբ Սանահնեցի 714
Հակոբ վանառական 313
Հակոբ Վարագեցի (գրիչ) 616
Հակոբ վարդապետ 63-64
Հակոբ Քռնեցի 649, 672
Հակոբյան Է. 1035
Հակոբյան Հ. 38, 53, 54, 57, 60, 142, 221, 243, 451, 589, 658, 666
Հակոբյան Հր. 589
Հակոբյան Պ. 999
Հակոբյան Ս. 348
Հակոբյան Վ. 9, 69, 155, 156, 396, 423, 873, 895, 986
Համդուլլահ Ղազվինի 13, 74,

77, 80
Հայկազ (պարոն) 246
Հայրապետ (աբեղա) 600
Հայրապետ (գրիչ) 183
Հայրապետ վանահայր 259
Հայրապետ (տանուտեր) 337
Հայրապետյան Ստ. 861, 883
Հաջի-Ահմադ (ամիր) 227
Հասան Ալի (Ջհանշահի որդի) 46, 160, 162-166, 170, 171, 176, 178, 179, 232, 234, 239, 654
Հասան Բուզուրգ 8, 9, 14, 67-69, 75
Հասան Դոփյան (Ծարի իշխան) 53, 140, 658
Հասան Ծարեցի (իշխան) 22, 635
Հասան-Ջալալյան(ներ) 42, 52, 53, 242, 248- 250, 260, 657, 658
Հասան շեխ 9, 69
Հասան բեկ 161, 172, 173, 176, 194, 195, 202, 209
Հասան Քուչուկ (Թամուրտաշի որդի) 9-11, 69, 70, 71
Հարություն Էրզրումցի 751
Հարությունյան Ա.. 989, 1015
Հարությունյան Գ. 909, 989, 1015
Հեթում Ա. թագավոր 598, 599, 603
Հեթում Բ թագավոր 887
Հեթում Սեբաստոս 1100
Հեղանիոս 427
Հերակղես 427
Հերմոգեն արքեպիսկոպոս 370
Հենրիխ III (Իսպանիայի թագավոր) 648
Հերմես Եռամեծ 729, 987, 1015
Հերմոգեն արքեպիսկոպոս 370
Հերմոնեցի 585
Հիպոկրատ 762
Հիսա (ռայիս) 303
Հլտրում խան 85
Հովակիմ Օղուլլուխյան 761
Հովան (Սարգսի որդի) 813
Հովան (Մուսեսի եղբայր) 800
Հովհանես (տեր) 260
Հովանես գրիչ 90, 93, 97, 99, 124, 138, 158, 159, 175, 181, 321, 329, 338, 423, 682
Հովասափ Սեբաստացի 716, 726, 748, 749, 1034, 1100
Հովհան (Փառեն կաթողիկոսի որդի) 394
Հովհան II (Ժան) կայսր 892
Հովհան XXII պապ 648
Հովհան Մամիկոնյան 730, 974, 990
Հովհան Մայրավանեցի 454, 580, 1095
Հովհան (Հովհաննես) Որոտնեցի 18, 41, 61, 62, 80, 81, 121, 128, 132, 135, 244, 276, 285, 464, 580, 608, 615, 618, 619, 632, 715, 726, 730, 736-738, 1015, 1034
Հովհան Քռնեցի 672
Հովհան Օձնեցի կաթողիկոս 421, 422, 971
Հովհան Օրբել 615, 617

Հովհաննես (Գանձասարի կաթողիկոս) 249, 250
Հովհաննես (Գիշուկ և Շամշա ամուսինների որդի) 287
Հովհաննես (Գորգի և Ամիրբեկի հայր) 306
Հովհաննես (գրիչ) 99, 116, 119, 124, 138, 158, 159, 175, 181, 202, 207, 321, 338, 620
Հովհաննես (կրոնավոր) 245
Հովհաննես (հյուսն) 146
Հովհաննես (Մեծոփավանքի վարդապետ) 269
Հովհաննես (ոսկերիչ) 146
Հովհաննես (Ջանումի որդի) 823
Հովհաննես (Ստեփանոս քահանայի որդի) 236
Հովհաննես (տանուտեր) 284
Հովհաննես Աղթամարցի 726
Հովհաննես Ապարանեցի 147
Հովհաննես Անկյուրացի 753
Հովհաննես Արծկեցի (գրիչ) 113, 115, 116, 119
Հովհաննես Արճիշեցի 669, 670, 677, 695, 705
Հովհաննես արքեպիսկոպոս 144
Հովհաննես Բաղիշեցի 680
Հովհաննես Գանձակեցի 111
Հովհաննես Դսեղցի 207
Հովհաննես Դրասխանակերտցի 551, 730, 977, 1090
Հովհաննես եպիսկոպոս 202, 228, 246
Հովհաննես երեց (Առաքելի որդի) 137, 299
Հովհաննես Երզնկացի (Պլուզ) 134, 550, 559, 581, 587, 715, 726, 738, 990, 1075, 1093
Հովհաննես Թլկուրանցի 715, 973, 1075
Հովհաննես Խիզանցի 85, 88, 124, 147, 148
Հովհաննես Ծործորեցի 337, 1093, 1094
Հովհաննես Կամենացի 715, 765, 991
Հովհաննես Կարբեցի կաթողիկոս 998
Հովհաննես Կարնեցի 990, 1034
Հովհաննես Կոլոտիկ Հերմոնեցի 43, 129, 132, 133, 315, 585, 680
Հովհաննես Համշենցի (րաբունապետ) 55, 181, 272-275, 308
Հովհաննես Հանվեյ 940
Հովհաննես Մանգասարենց 149, 150, 168, 169, 179, 182, 183, 306, 319
Հովհաննես Մեծոփեցի 680
Հովհաննես Նաղաշ 73
Հովհաննես Շահխաթունյան 978, 999, 1006
Հովհաննես Ոսկերերան 567, 569-571, 702
Հովհաննես Ոսկեփորիկ 55, 144
Հովհաննես (Պողոսի որդի) 780, 804
Հովհաննես Ջուղայեցի տե՛ս Հովհաննես Տեր-Դավթյան Ջու-

դայեցի
Հովհաննես Սանդղկավանեցի 729
Հովհաննես Սարկավագ 726, 988, 1095
Հովհաննես Սեբաստացի 715
Հովհաննես վարդապետ 123, 773
Հովհաննես (Յովհաննէս) Տեր-Դավթյան Ջուղայեցի IV, 725, 777, 779-813, 820, 821, 823, 824, 826-829, 831-834, 837, 839, 841-851, 854-859, 861, 863, 864, 866-868, 967
Հովհաննես քահանա 330
Հովհաննես Քեշիշ Օղլի 460
Հովհաննիսյան Աբգար 1016
Հովհաննիսյան Աշոտ 451, 773, 823, 939, 946, 1001, 1022
Հովհաննիսյան Գ. 1022
Հովհաննիսյան Լ. Ա. 989, 1015, 1022
Հովնաթանյան Հովնաթան 774
Հովսեփ (խոջա, Սեթի որդի) 49, 237
Հովսեփ (տանուտեր) 284
Հովսեփ Աղթամարցի 276
Հովսեփ գրիչ (Բաղիշեցի) 93, 118, 175, 193
Հովսեփյան Գարեգին 52, 345, 657, 667, 676, 679, 701, 703, 920, 978, 1001
Հուղեոս վարդապետ 862
Հռիփսիմե 167, 558
Հուլավու խան 10, 70, 876
Հուսեյն-Ալի (Սքանդարի որդի) 176
Հուսեյն (Սուլթան Ուվեյսի որդի) 15, 16, 77, 220

Ղազան խան 8, 68, 609
Ղազանչյան Տ. 738, 750, 989, 1015
Ղազար (գրիչ) 168
Ղազար (Մեծոփավանքի միաբան) 270
Ղազար Բաղիշեցի 687
Ղազար կաթողիկոս 862
Ղազար Տիվրիկեցի 119
Ղազար Փարպեցի 405, 410, 730, 974, 977, 980, 983, 1014, 1034
Ղազարյան Վ. 589
Ղալաբեկ պարոն (Ջումա Պոռշյանի որդի) 246
Ղալմազ Պետրոս 844, 845
Ղասիմ Փարվանչի (ամիր)170, 171
Ղասում (Ջհանգիրի եղբորորդի) 216
Ղատի 460
Ղարա-Յուսուֆ տե՛ս Կարա Յուսուֆ
Ղարայ-Օթման 114
Ղարիբջան (խոջա) 769
Ղաֆադարյան Կ. 340, 989, 1015
Ղևոնդ Երէց 551
Ղիճ-Ասլան 45, 160, 162, 232
Ղլտճյան Ա. 396
Ղվարղվարե (Ղորղորե) 191, 207, 218
Ղուլիջան (մելիք) 305, 306
Ղուկաս Վանանդեցի 753, 754, 772, 847, 849, 854
Ղուկաս վարդապետ Լոռեցի 1094, 1095
Ղևոնդ (պարոն Մուրադխանի հայր) 797

Ճֆլա 299

Մաղեղ (քաշմիրցի) 813
Մաթէոս վարդապետ 471
Մաթևոսյան Ա. 555, 688, 709, 732, 1081, 1089, 1090
Մալխասյանց Ստ. 94, 297, 298, 330, 331, 979, 980, 983, 990, 1013, 1014, 1015
Մախսուտ (պղնձագործ) 289
Մակինցյան Պ. 1020
Մահմադ Ա Չելեպի սուլթան 185
Մահմադ Բ. սուլթան 188, 198
Մահմադ Բ. Ֆաթիհի 185, 186
Մահմադ-Միրզա (Ջհանշահի որդի)157
Մահմադ դուլի (Լալայբեկ խանի որդի) 1086
Մահմուդ-բեկ 45, 203, 233
Մաղաքիա Բերդակեցի 273
Մաղաքիա գրիչ 423
Մաղաքիա Դերջանեցի վրդ. 347, 1096
Մաղսուդ (Սուլթան-Խալիլի եղբայր) 195
Մամախաթուն 305
Մամադ դուլի 1086
Մամիկոնյան Հովհ. 974, 1014
Մանանդյան Հակոբ I, II, 19, 26, 81, 139, 153, 154, 330, 331, 407, 472, 474, 483, 488, 489, 632, 640, 660, 906, 933-937, 981, 987, 1014, 1015, 1024
Մանանդյան Համազասպ 933
Մանդուկանց Ամիրպեկ 137
Մանկու Դեմուր (Ապաղանի եղբայր) 880, 889
Մանվել (նոքար) 806
Մանվելյան Հ. 1025
Մանուել եպիսկոպոս (պարոն Ավագի որդի, Ագիզբեկի թոռ) 252
Մառ Ն. 7, 67, 298, 332, 442, 459, 470, 497, 721, 980, 982, 983, 1014, 1094
Մատթեոս Ագուլեցի (գրիչ) 106
Մատթեոս Աղթամարցի 205, 206
Մատթեոս կաթողիկոս 137, 446
Մատթեոս Մոնոզոն 92, 93, 140
Մատթեոս Ջուղայեցի 62, 91, 129, 131, 241, 242, 250, 263, 265, 277, 279, 300, 316, 318, 320, 322, 335, 336, 338, 343, 346, 582-584, 586, 587, 739-741
Մատթեոս Ոռչչի (քարոզիչ) 819
Մատթեոս Վանանդեցի 753, 754, 772
Մատթեոս վարդապետ 87
Մարախ (Գինդ անապատականի աշակերտ) 397

Մարգար (Ղարիբջանի որդի) 769
Մարգար Ճոոոթեցի 772
Մարգարա (գրիչ) 198, 217
Մարգարյան Հ. Գ. 445
Մարիամ (Խեղենիկ Արքայունի դուստր) 243
Մարկո Պոլո 816
Մարկոս (Պողոսի որդի) 800, 842
Մարկվարտ Հ. 398
Մարջանյան Կ. 763
Մարտինոս Պեքանեան 1050
Մարտիրոս (գրիչ) 190
Մարտիրոս (եպս.) 119
Մարտիրոս (տանուտեր) 21, 634
Մարտիրոս (Էլղրումի որդի) 800
Մարտիրոս Ղրիմեցի 726, 990, 1075, 1088
Մարտիրոսյան Ա. 990, 1033, 1034
Մարտիրոսյան Ն. 38, 48
Մարուգե Ճգնավոր 253
Մարքս Կ. 359, 480, 610
Մելանխտոն 743
Մելիջան (Պողոսի որդի) 782, 813, 814, 821, 845, 846
Մելիջանենց Մաքոս 813, 821
Մելիք (Ամիր Եզդինի որդի) 81
Մելիք (տանուտեր) 284
Մելիք-Աշրաֆ 11-15, 41, 71-75, 77, 611
Մելիք Ասադ (Ահմադի որդի) 47
Մելիք Բախտիար 237
Մելիք Խազին 894
Մելիքխաթուն (Փիր-Հուսեյնի դուստր) 231
Մելիք Ղուլիջան (վաճառական) 268
Մելիք Մահմադ (ամիր Եզդինի որդի) 37, 38, 47, 102, 136, 229, 230, 349, 350
Մելիք-Շահ 458
Մելիք-Շահնազարյան 249, 1023
Մելիք Պախտիար 258
Մելիք-Փարսադանյան Խ. 989, 1015
Մելիք-Օհանջանյան Կ. 990, 1017
Մելիքսեթ (ճիշատակագիր) 69, 151, 175, 191, 193, 196, 207, 303
Մելիքսեթ աբեղա 253
Մելիքսեթ-Բեկ 27, 193, 471, 641, 1018
Մելիքսեթ կաթողիկոս 1085
Մելքիսեթ գրիչ 151, 175, 191, 193, 196, 207, 303, 611
Մելքիսեթ վանեցի 283
Մեծատուր ճոլիկ 138
Մեսիհ (Յաղուբի եղբայր) 203
Մեսրոպ (գրիչ) 470
Մեսրոպ Մաշտոց 407, 409, 410, 677, 729, 731, 732, 950
Մեսրոպ վրդ. Քեշիշեան 8, 68
Մեսրոպ Տեր Մովսիսյան 414, 978, 1001
Միանսարյան Մ. 920
Միխայիլ 6-րդ կայսր 892
Մինա-Խաթուն (Տարսայինն Օրբելյանի կին) 293, 461
Մինաս Համթեցի 1086, 1087
Մինորսկի Վ. 154, 960
Միրանշահ (Շահրուխի եղբայր) 26, 31, 32, 46, 49, 50, 86, 87, 89, 236, 351, 640, 661
Միրաք (խոջա) 187, 201, 313, 314
Միրզա-Իբրահիմ 160
Միրզա Մյումին (բժիշկ) 762
Միրզա-Օմար (Թամուրի թոռ) 31, 32, 50, 86, 87, 649
Միր-Ալադին 352
Միր-Սեյիդ Ահմադ Նասր-ադդին 227
Միր-Ոււսուֆ 97
Միքայել Ասորի 550
Միքայել Վանանդեցի 772
Մլխամ (ճյուսն) 305
Մխիթար (գրիչ) 111, 622
Մխիթար (վաճառական) 817
Մխիթար Այրիվանեցի 723, 977
Մխիթար Անեցի 445, 622, 977
Մխիթար Ապարաներցի 63, 751
Մխիթար Գոշ 269-271, 296, 298, 440, 441, 445, 446, 715, 724, 731, 879, 943, 979, 991, 992, 1016, 1031, 1058
Մխիթար Երզնկացի 618
Մխիթար Հերացի 549, 592, 727, 731, 750, 1100
Մխիթար Սեբաստացի 975
Մխիթարյան Մ. 1016, 1034
Մխիթարյաններ 471, 975
Մկրտիչ (մանակալ) 138
Մկրտիչ (ջրաղացպան) 268
Մկրտիչ (տանուտեր) 278, 284
Մկրտիչ գրիչ 621
Մկրտիչ Խիզանցի 172, 253, 621
Մկրտիչ Նահապետենց 704
Մկրտիչ Նաղաշ 129, 130, 139, 142, 146, 346, 660, 706, 726, 990, 1075
Մկրտչյան Լ. 709
Մկրտչյան Կ. Տ. 408
Մկրտչյան Մ. 775
Մկրտում Հովնաթանյան 774
Մյասնիկյան Ալ. 721, 1008, 1020, 1021
Մնացականյան Աս. 440, 775, 919, 928, 930, 989, 990, 1003, 1015, 1016, 1033, 1037, 1038
Մոհամմեդ իբն Հինդուշահ Նախիջևանցի 13, 74
Մոմզեն 936
Մովսես (քահանա) 1092
Մովսես Արծկեցի 172-174, 177-179, 183, 184, 187, 188, 204, 205, 207, 208
Մովսես Խորենացի I, 395, 398, 570, 731, 768, 773, 903, 904, 974, 975, 977, 980, 981, 983, 986, 1014, 1031
Մովսես կաթողիկոս 1085
Մովսես Կաղանկատվացի 295, 715, 723, 933, 977, 991, 1017
Մովսիսյան Ա. 1058
Մովսէս Քերթող 696
Մռավյան Ասքանազ 1002
Մսերյան Մ. 998

Միհր իշխան 25, 639
Մուզաֆար սուլթան 42
Մուհամմեդ խան (Մահմատ) 8, 9, 68, 69, 215, 219
Մուհամեդ-Օլջայթու (Ղարբանտա) 616
Մուսեխ (թամղաչի) 237, 258, 339
Մուստաֆա (Մահմադ Բ-ի որդի) 188
Մուրադ Ա. սուլթան 185
Մուրադ Բ. Ղազի սուլթան 185
Մուրադ խան (Յաղուբի որդի) 213-217, 219, 322, 333, 339
Մուրադյան Կ. Մ. 412
Մուրադյան Պարույր V, 1034
Մուրադյան Ռ. 909
Մուրատ (թամղաչի Խոսրովի հայր) 339
Մուրատ (մահտեսի) 289
Մուրատ Վանեցի 233
Մուրատյան Ս. 38, 48
Մուրատշահ (ոսկերիչ) 309
Մուրատշահ Արծկեցի 687
Մուրատխան (Ղարագոզի որդի) 800

Յաղուբ-բեկ 43, 46, 122, 195-198, 200-203, 215, 220, 234, 246, 321, 327, 671
Յար-Ալի (Իսքանդար Կարակոյունլու որդի) 45, 60, 110
Յոհան աբեղա 263
Յոհան Գրիչեր 782
Յովհաննէս Մկրտիչ 553
Յուզբաշյան Կ. 1016
Յուսուֆ տե՛ս Կարա-Յուսուֆ
Յուսուֆ Թավրիզեցի 687

Նաբուգոդոնոսոր Բ. 17, 79
Նադիր-Շահ 769, 770-772
Նալբանդյան Միքայել 914, 1010
Նազարեթ (Խաչիկի որդի) 800
Նազարեթ (Գերաքէնց գործակատար) 799
Նազարյան Շ. 775, 990, 1016
Նաղաշ Հովնաթան 726, 731, 767, 768-772, 774, 775, 1016, 1075
Նաղաշ վարդապետ 182
Նանիկ (պարոն Սմբատի որդի) 619
Նաշիրևան-ի Ադիլ (Էդիլ Շրվան) 11, 71
Նաջաֆ ղուլի (Լալայբեկ խանի որդի) 1086
Նեստոր 453
Ներշապուհ եպս. 395
Ներսեհ Կամսարական 413
Ներսես (գրիչ) 11, 72, 202, 611, 617, 621
Ներսես (կազմարար) 229
Ներսես (տանուտեր) 284
Ներսես Աշտարակեցի 717, 997, 1006
Ներսես եպս. Աղթամարցի 127, 261
Ներսես Լամբրոնացի 494, 585, 943
Ներսես Խիզանցի 202

Ներսես Կաթողիկոս 390, 393, 395, 399, 401, 403, 939, 971
Ներսես Մոկացի 923
Ներսես Շնորհալի 441, 449, 456, 457, 580, 581, 584, 592, 715, 716, 726, 731, 926, 927, 943, 973, 974, 976, 1075
Ներսես սարկավագ 997
Ներսէս աւագերեց 263
Ներսէս Կլայեցի 926
Ներսիսյան Մ. 1016
Նիզամ-ալ-Մուլք (վեզիր) 458
Նիզամի Գյանջևի 461
Նիկոլայ I կայսր 999
Նիկոլսկայա 1015
Նիկողայոս Սպաթարիոս-Միլեսկի 816
Նիկողայոս Լյուսացի 648
Նիկողայոս Տրիգոտիուս (քարոզիչ) 819
Նիկողոս (Մարտիրոսի որդի) 782, 813
Նիկողոս (վանառական) 845, 850
Նովոսելցև Ա. 965
Նորայր Բյուզանդացի 1013
Նուշիրվան-ե Ադել (Էդիլ Շրվան) տե՛ս Նաշիրևան-ի Ադիլ
Նուր-ադ-դին (իշխան) 53, 104, 648, 658

Շաբո 37
Շալվե պարոն (Շալուե) 55, 144, 659
Շախաթուն 793
Շահ-Աբաս Ա. 777, 847, 1023
Շահ-Ալի ամիր 203
Շահազիզ (տանուտեր) 282
Շահազիզ Ե. 998, 1021
Շահանշահ (Դոփյան իշխան) 250
Շահ-Թահմազ 1023
Շահ-Իսմայիլ 48, 281, 334
Շահ-Կուբադ (Իսքանդարի որդի) 115
Շահ-Մահմադ 227
Շահ-Շուջան (Մուզաֆֆարյան) 15, 77
Շահ-Ջահան 848
Շահ-Սեֆի (Շահ-Սաֆի) 960, 1023
Շահ Սուլթան-Հուսեյն 960
Շահ Օրբելյան 51, 656
Շահե եպս. 1080
Շահմելիք 258
Շահնազարյան Կ. 673
Շահնազարյանց Դանիել 978, 1000
Շահ Մանսուր (Մուզաֆֆարյան) 25, 638
Շահնշահ Գ. իշխան (Զազայի որդի) 11, 12, 72, 73
Շահվերտունց տեր Աբրահամ 771-772
Շահրիման 793
Շահրման Թիլկուրանցի (տանուտեր) 146
Շահրուխ (Շահռուհ, Միրանշահի եղբայր) 31, 32, 35, 36, 39, 40, 47, 52, 86, 89, 96-99, 108-

114, 125, 158, 226, 232, 263, 288, 646, 650
Շահում-խաթուն (Ամիր-Շարաֆի կինը) 225-226
Շաղավաք (թամղաչի) 237, 339
Շամբոյան(ներ) 45, 47, 229, 230, 647
Շամբրեցի Գասպար (վաճառական) 842
Շամըզդի 202
Շամս-ադ-դին (ամիր) 32, 37, 46, 47, 49, 87, 102, 107, 143, 226, 227, 230, 236, 647
Շանիձե Ա. 668, 669
Շապին-Գարահիսացի 1092
Շապուհ 399
Շապուհ Բագրատունի 447, 990, 1001, 1014
Շատարևենց Աղաջան 292
Շարաֆ-բեկ 165, 166, 197, 226, 228-231, 244, 351
Շաֆրազ աղա 861
Շեյխ-Ալի (Բայազիտի եղբայր)16, 78
Շեյխ-Իսմայիլ 221, 222
Շեյխ-Հայդար (շահ Իսմայիլի հայր) 199, 200, 205, 220, 222
Շեյխ-Մահմուդ 49, 227, 236
Շեյխ-Ուվեյս տե՛ս Սուլթան Ուվեյս
Շիլդբերգեր Հ. 311, 312
Շիպաուչի 880
Շիրազի Հովան (Հովհան) 802, 803, 828, 839, 843
Շիրազցի Ավետիք 780
Շիրվանշահ (Հասան Ծարեցի իշխանի որդի) 22, 99, 110, 311, 328, 635
Շիրվանշահ Իբրահիմ 32, 33, 70, 87, 89-92, 199, 200, 220, 221
Շիրվանշահ Խալիլուլլահ Ա. 39, 105, 110
Շհանշահ 43, 45, 140
Շմավոն Անգեղակոթցի (Տաթևի վանահայր) 52, 247
Շմավոն եպս. 111, 112, 136, 140, 241, 313
Շոռենց Թաթոս 800
Շրուան (Գոփյան իշխան) 140
Շուշան (Գերաքի մայր) 793

Ոլիմպիոդորոս փիլիսոփա 738
Ոհաննես Թմոքվեցի (գրիչ) 117, 123, 144
Ոսկան Երևանցի IV, 772, 897-902, 974, 1023
Ոսկյան Հ. 197
Որոգինէս 572

Չալապի (իշխանաց իշխան) 55, 144
Չալոյան Վ. 1015, 1017
Չամչյան Մ. 83, 153, 166, 625, 680, 683
Չավպան Բահայթուր 1091
Չարչի Մուրադ 232
Չաքուն Հակոբջան 806
Չետորիոս եպս. 376
Չքախ 188, 189
Չինգիզ խան 7, 14, 19, 66, 76, 633
Չոբան Ամիր 8, 9
Չոբանի Թամուրտաշ 69
Չոբանյաններ 7-10, 13, 14, 65, 66, 68, 70, 74-76, 631
Չոպանյան Ա. 775
Չուբար Գ. 1031
Չուգասզյան Բ. 709
Չուգասզյան Լ. 589, 602

Պալեան Տ. 559
Պալիալօղ կայսր 891
Պախոմով Ե. 847
Պաղտասար Դպիր 726, 920, 990
Պայընդուր (Ակ-կոյունլու) 119, 190
Պաշարաթ (էլեճսանի որդի) 140
Պապուհեր (դարբին) 146
Պատկանյան Ք. 977
Պատրոփիլոս եպս. 374
Պարսամ (ջրաղացպան) 257
Պարսամյան Վ. 1016
Պետիկ 940
Պետրոս (բրուտ) 147
Պետրոս (գրիչ) 104
Պետրոս (ճիշատակագիր) 27, 104, 640
Պետրոս (հյուսն) 146
Պետրոս (սարկավագ) 1005
Պետրոս (ֆրա) 268
Պետրոս (Քաչալ Ծատուրի թոռ) 806
Պետրոս Ապիան 753
Պետրոս Դելլա Վալլե 940
Պետրոս եպիսկոպոս (Բարսեղ Կեսարացու եղբայր) 420
Պետրոս Ղափանցի 716, 726, 990
Պետրոս Սալիթաղեցի 267
Պետրոս սարկավագ 1005
Պետրոս Քալանթարյան 760, 761
Պետրոսյան Գ. Բ. 755, 988, 1015
Պետրուշևսկի Ի. 154, 171-172, 179, 213, 214, 322, 334-336, 656, 663
Պիմեն երեց 371, 372
Պիվազյան Է. 1016, 1017
Պիրոմալլի Պ. 899, 901, 902
Պլատոն (Պղատոն) 480, 481, 493, 729
Պլինիուս 762
Պուրգավ 761
Պոկրովսկի Մ. Ն. 949
Պողարյան Ն. 327, 1050, 1051, 1056, 1063, 1081, 1094, 1095
Պողոս (գրիչ) 237
Պողոս (Հովհաննես Տեր-Դավթյանի ճոքար) 835
Պողոս (Տեր Պետրոսի որդի) 806
Պողոսյան Ֆ. 790
Պողոս Կիլիկեցի (գրիչ) 883
Պողոս վարդապետ 235
Պոնիե (արևելագետ) 820
Պորփյուր 134, 488
Պոօշ (Գոփյան իշխան) 140
Պոռշյաններ 21, 52, 202, 242,

245-248, 608, 615, 635, 657
Պտղոմեոս 742
Պրատապ Մալլա (Քարմանդուի իշխան) 808
Պրոկոպիոս Կեսարացի 357
Պրոնյան Ս. 756

Ջալալ 250, 882
Ջալալադավլէ 141
Ջաղաթա (Չինգիզ խանի որդի) 19, 633
Ջանիբեկ (տանուտեր) 284
Ջանիբեկ (Փաշայի որդի) 319
Ջանիբեկ խան 12-15, 73-75, 77, 81, 84
Ջաջուռ (պարոն) 144, 278
Ջավախիշվիլի Իվ. 955-957, 980
Ջելաիրյան Ահմատ (Ահմեդ) 25, 26, 32, 33, 39, 51, 87, 89, 634, 639, 640, 645
Ջելաիրյաններ 8-10, 14-17, 20, 32, 65, 67, 68, 70, 71, 75-78, 89, 90, 326, 631, 634, 645
Ջելալ-էդ-դին Աքբար 801
Ջենկինսըն 60, 311, 312, 666
Ջհանգիր 156, 157, 161, 166, 170, 216
Ջհանշահ (Ճիհանշան, Իսֆանդարի եղբայր) 40, 41, 43, 45, 46, 48, 58, 113, 115-119, 120, 121, 155-166, 168-174, 176, 177, 180, 220, 227, 228, 232, 233, 239, 244, 253, 254, 283, 320, 321, 329, 650, 652, 654, 658, 663
Ջոնգայ (Տահրուխի որդի) 114
Ջոն Նիուբերի (վաճառական) 308
Ջովաննի Անջիոլելլո (դեսպան, ուղեգիր) 220, 221
Ջովաննի Մոնտեկորվինո (արք-եպիսկոպոս) 816
Ջուհի 549
Ջումա Պոռշյան (պարոն) 246-248

Ռաֆայել Դյու Ման 940
Ռեյնակ 936
Ռոժիկ Քրղեր (Ըռոժկան)107, 162
Ռոմեր Ռ. 960
Ռուբրուկ (ֆրանսիացի ճանապարհորդ) 450, 451
Ռուի Գոնզալես դե Կլավիխո 38, 53, 54, 141-143, 648, 658, 659
Ռումյանցև Ն. Պ. 997, 998
Ռուստամ (Ուզուն-Հասանի թոռ) 203, 204, 208, 209, 221
Ռուստամ Թարխան-օղլի 156, 157, 161
Ռուստամ-խան Դամբուլի 966
Ռուստամ Օրբելյան (ամիր, Բեշքեն Օրբելյանի որդի) 42, 46, 52, 106, 112, 121, 140, 221, 234, 247, 651, 657, 962
Ռուքն-ադ-դին Բեյբարս ալ Բունդուկտար (Ֆնդուխտար) սուլթան 598
Ռուքնադ սուլթան 888

Սադաղա (տանուտեր) 146, 284
Սադոյան Լ. 709
Սադուն (իշխան) 140
Սաթի-Բեկ (Օլջայթուի դուստր) 70
Սալահ-էտ-տին տե՛ս Ալ-Աշրաֆ
Սալահ-էտ-տին խալիլ սուլթան
Սալահադդին 892, 893
Սահակ արեղա Գողթնացի 1088
Սահակ Պարթև 394, 396, 407, 409, 410, 677, 684
Սահակյան Հ. 844
Սահարբեկ (Հովհ. Մանգասարենցի որդի) 182, 183
Սաղդաթիար (ռես) 258
Սամուել (գրիչ) 1004
Սամուել Անեցի 8, 15, 19, 21, 24, 25, 37, 47, 67, 76, 77, 81, 457, 634, 638, 639, 715, 723, 884- 886, 891, 892, 895, 978, 991, 1004, 1034
Սայաթ-Նովա 774, 1016
Սայտուն (Աղպաստ իշխանի որդի) 248
Սավալան (Շամս-ադ-դինի եղբայր) 107
Սատաղ (տանուտեր) 282
Սատո (Դոփյան իշխան) 140
Սարաջև 916
Սարգիս (Գիշուկ և Շամշա ամուսինների որդի) 287
Սարգիս (գրիչ) 10, 28, 70, 84, 99, 114, 115, 131, 150, 612
Սարգիս (դարբին) 268
Սարգիս (եպիսկոպոս) 147
Սարգիս (Հասան Ծարեցի իշխանի որդի) 22, 610, 635
Սարգիս (հիշատակագիր) 610
Սարգիս (ներկարար) 146
Սարգիս (պարոն, Բուղլախի որդի) 55, 144, 659
Սարգիս (տանուտեր) 284
Սարգիս (Փ. Սյունիքի իշխան Գրիգորի որդի) 615, 616
Սարգիս Բյուրականցի 254
Սարգիս Թեոդուպոլսեցի (գրիչ) 623
Սարգիս կաթողիկոս 216
Սարգիս Ղրիմեցի 132, 133, 134
Սարգիս Շնորհալի 130, 255, 580, 581
Սարգիս Պիծակ 719, 728
Սարգիս Ջալալյան 1000
Սարգիս վրդ. 134, 216, 263, 883
Սարգսենց վրդ. 925
Սարգսյան Բ. 199, 248, 310, 405, 409, 680, 975
Սարգսյան Գ. 903, 904, 907
Սարխոշ (ռես) 237, 263
Սարկավագ Վարդապետ 580
Սաֆրաստյան Ա. Խ. 664
Սեբէոս 551, 715, 723, 977, 991, 1014
Սեդա (Մխիթար Անեցու մայր) 622
Սեդրակյան Ա. 999
Սեթ 49, 237
Սեթյան Վ. 549, 1083
Սեիդ-Ալի 162, 209
Սեիդ-Ղասում 162, 232

Սեյտի (Դոփյան իշխան) 249
Սեյֆ-ադ-դին Կախտ բեյ սուլթան 196
Սենոփ Սահմադին (վաճառական, Ավետիքի որդի) 442
Սեվերիոս 372
Սեֆեդին(ներ) 67, 243, 653
Սիդի Ալի (Շամիի տիրակալ) 27, 162, 641
Սիմաքոս Սամարացի 572, 1090
Սիմեոն (գրիչ) 107, 151, 612
Սիմեոն (դարբին) 146
Սիմեոն (խոջա) 769
Սիմեոն (նիշաստակագիր) 612
Սիմեոն (Մալաթիայի արքեպիսկոպոս) 600
Սիմեոն (սարկավագ) 1005
Սիմեոն (վրդ., վանահայր) 137
Սիմեոն Ապարանցի 726
Սիմեոն Երևանցի 251, 978
Սիմեոն Լեհացի 288, 730
Սիմեոն Րաբունի 133, 139
Սիմոն վարդապետ (բառարանագիր) 1097
Սիմպլիկիա 373, 390
Սմբատ (Գուրջիբեկի որդի, Ջաքարիա կաթողիկոսի զարմիկ) 244, 653
Սմբատ (՛ թագավոր՛) 245
Սմբատ իշխան (Տարսայիճ Օրբելյանի որդի) 52
Սմբատ Սպարապետ 992
Սմբատ Օրբելյան (Իվանեի որդի) 18, 50, 51, 80, 81, 90, 91, 106, 112, 140, 245, 248, 632, 656, 657
Սմբատյան Մ. 247, 313
Սմբատյան Ծ. 1035
Սյուրմեյան Ա. 304, 343, 768, 1050
Սոզոմենոս 369, 381, 389, 414, 416, 417, 420
Սողոմոն 566
Սոկրատ Սքոլաստիկոս 367, 368, 381, 389, 413, 417, 418, 420
Սորղաթմիշ (Սոյուրղաթմիշ) 38, 53, 55, 649, 658
Սոֆրոնիոս 372, 373
Սպանդիար (Իսպենդ, Կարա-Յուսուֆի որդի) 35, 36, 98, 100, 647
Սվիրին 1015
Ստեփան (Դիլաքի որդի) 802
Ստեփանյան Սուրեն 1022
Ստեփանոս (ռաբունի) 275, 315
Ստեփանոս (բժիշկ) 750
Ստեփանոս (Գիշուկ և Շամշա ամուսինների որդի) 287
Ստեփանոս (գրիչ) 174, 175, 186, 191, 197, 272, 327, 338, 350, 627
Ստեփանոս (եպս.) 245, 246
Ստեփանոս (Հերենքսի որդի) 291
Ստեփանոս (Զամինից գյուղի քահանա) 259
Ստեփանոս (ռես) 342
Ստեփանոս (քահանա, Արծկե) 236
Ստեփանոս Արճիշեցի 164, 883
Ստեփանոս Դ Հռոմկլայեցի 887, 891
Ստեփանոս Իմաստասեր 750
Ստեփանոս Լեհացի 551, 997, 1053
Ստեփանոս կաթողիկոս 243, 245, 256, 280, 558, 889, 890, 1090
Ստեփանոս Կարնեցի (գրիչ) 883
Ստեփանոս Կիլիկեցի 883
Ստեփանոս Հայրապետ (գրիչ) 883
Ստեփանոս Հռոմկլայեցի 891
Ստեփանոս Շահրիմանյան (Շեհրիմանյան) 761-763
Ստեփանոս Շոռոթեցի 773
Ստեփանոս Ջմշկածագեցի 181, 186, 191, 197, 325
Ստեփանոս Ուշտունցի (գրիչ) 124, 125, 127
Ստեփանոս Սկևռացի 883
Ստեփանոս վարդապետ (Թ. Մեծոփեցու աշակերտ) 275
Ստեփանոս Փիր. վրդ. 136, 245, 275, 280
Ստեփանոս Օրբելյան 41, 44, 121, 140, 440, 441, 448, 453, 454, 461, 558, 615, 654, 656, 710, 873-886, 891, 895, 972, 977
Ստեփանյան Հարո 1022
Սրապյան Ա. 990
Սրվանձտյանց Գ.120, 207, 247, 258, 284, 289, 601, 629
Սուլայիման Բահադուր 70
Սուլեյման (Հուլավյան) 70
Սուլեյման-Բեկ Բիժան-օղլի 45, 183, 184, 196, 197, 200, 203-206, 208, 209, 230, 233, 324
Սուլթան-Ալի 221
Սուլթան Ահմատ (Ահմեդ) 16-18, 20, 32, 38, 80, 90, 104, 211, 212, 225, 230, 350, 352, 634, 645, 674
Սուլթան Խալիլ (Ուզուն-Հասանի որդի)187, 195
Սուլթան-Համզա 161
Սուլթան Հուսեյն 16, 78
Սուլթան Վայիս 76
Սուլթան Ուվեյս (Ջելաիրյան Հասան-Բուզուրգի որդի) 12-16, 74-77
Սուքրյան Ա. 367
Սուֆի-Խալիլ 184, 196, 202-206, 230, 231

Վազգեն Առաջին (Վեհափառ) V, 596, 601-602
Վախախ (Ազիզբեկի կին) 617
Վահան Մամիկոնյան 977, 980
Վահրամ (Դոփյան իշխան) 140
Վահրամ Րաբունի 715, 726, 730
Վաղարշակ թագավոր 451
Վաղենտիանոս կայսր 362
Վաղո (Վաշօ, տանուտեր) 278
Վանական (գրիչ) 215, 247, 1093
Վանական (եպս.) 580, 635
Վանական (վրդ.) 881

Վաչակ 397
Վաչուտ (պարոն) 55, 144, 659
Վաչուտյան իշխաններ 55, 608, 615
Վարդ (պարոն) 54, 273
Վարդան (գրիչ) 119, 158, 168, 613, 688
Վարդան (նախրապան) 257
Վարդան (ռես) 259
Վարդան (վրդ.) 881
Վարդան Այգեկցի 442, 443, 445, 446, 448, 455, 465, 549, 580, 943, 993, 1017
Վարդան Անեցի 440
Վարդան Արևելցի 550, 573, 580, 670, 677, 702, 715, 723, 977
Վարդանես (Ստեփանի որդի) 806
Վարդանյան Ս. 550
Վեզալիուս Ա. 752
Վելիջան (Աղպաստ իշխանի թոռ) 248
Վելհեմ կայսր 1083
Վեհեն (Վիգեն, Համշենի իշխան) 54
Վիլոտ 940
Վիշել (պարոն) 56, 252

Տամուրտաշ 77
Տաշյան Հ. V, 387, 629, 671, 703, 1037, 1046, 1051, 1052, 1056, 1058, 1061, 1063, 1067, 1070, 1071
Տավերնիե 940
Տարյե Ե. 1012, 1027
Տարսային Օրբելյան (Գորգունի որդի) 51, 52, 245, 461, 615, 657
Տեր-Ավետիսյան Ս. 258, 278, 347, 422, 793, 985
Տեր-Ավետիքյան Հ. 1000
Տեր Դավիթ 779, 791
Տերենտիոս 364, 371
Տեր-Հակոբյան Սեներերիմ 1002, 1021
Տեր-Հովհաննյանց Հ. 795-797, 800, 843, 861
Տեր Մինասյան Երվանդ I, 375, 990, 1014
Տեր Մկրտչյան Գալուստ 484, 485, 979, 980, 983, 1007, 1014
Տեր-Մկրտչյան Կարապետ 52, 405, 408, 484, 485, 657, 1014
Տեր Մովսիսյան Մ. 251, 554, 978, 1001, 1014
Տեր-Ներսեսյան Ս. 577, 593, 602
Տեր-Պողոսյան Ավ. 739, 748, 760
Տերզնցի Հովհ. 1023
Տերտեր (գրիչ) 613
Տերտերյան Հ. 1021
Տէր-Միքելեան Արշակ 225
Տիգրան Բ. 905, 936
Տիխու-Բրագե 743
Տիխոմիրով Մ. Ն. 947- 952
Տիխոնով Ն. Պ. 1030
Տիրայր վրդ. 229, 235, 944
Տոկարսկի Ն. 577
Տրայանոս կայսր 357
Տրդատ III 67, 167, 908
Տրդատ (Գինդ անապատականի աշակերտ) 397
Տուրնեֆոր 940
Տուրսուն (Դոփյան իշխան) 140, 249, 250

Ցերկեն Դանիել (տանուտեր) 146

Ուալիտ Ա. խալիֆ 553
Ուզուն-Հասան 45, 57, 157, 161, 162, 169, 170, 171, 176, 177, 179-181, 183-191, 193, 196, 201, 202, 203, 210, 216, 227, 233, 239, 240, 313, 318, 321, 653, 654, 663
Ուիլհելմ կայսր 553
Ուլուբեկ 158, 246, 250
Ուխտանես 972, 978
Ուղուրլու-Մուհամեդ (Ուզուն-Հասանի որդի) 190, 210
Ումեկ (Ճարի որդի) 442
Ունհայեցի 978
Ուպուն (ոսկեգործ) 146
Ուրխան (սուլթան) 29, 643

Փաշ (Սորղաթմիշի որդի) 55, 144
Փաշա-Խաթուն 229-230
Փաշա (վանեցի կին, Ջանիբեկի մայր) 319
Փանոս (Հովհաննեսի որդի) 823
Փանոս Քալանթար 823
Փանուել (պարոն) 144
Փառեն կաթողիկոս 394
Փավստոս Բուզանդ 376, 393-395, 397-403, 723, 903, 974, 975, 977, 981, 999, 1087
Փատշահ 163
Փափազյան Հ. 37, 42, 52, 106, 234, 240, 247, 322, 333, 335, 375, 376, 651, 663, 780, 788, 789, 959-964, 966, 967, 987, 1017, 1028, 1034
Փերիջան (ռես) 237
Փիլիպոս Կաթողիկոս 996, 1085
Փիլիպպոս (գրիչ) 198
Փիլիպպոս (պարոն) 252
Փիլմիլիանոս 363
Փիլոն Ալեքսանդրացի 729
Փիլոն Տիրակացի 413
Փիր-Ալի 114, 326
Փիր Բուդաղ 33, 46, 96, 166, 168-170
Փիր-Հասան 23, 637
Փիր-Հուսեյն (Ամիր-Սաադի որդի) 45, 94, 231, 234
Փիրի-Բեկ 109-114, 161, 230, 326
Փիր-Ղարիպ (Ամիր-Սաադի թոռ) 46, 94, 234
Փիրղալեմյան Ղ. 137, 259, 265, 266, 268, 625-629, 668, 687
Փնդուխտար սուլթան 875, 876, 882
Փոլադյան Դ. 801, 820

Քալաշյան Վ. 909
Քալբակչյան Սահակ 1101
Քալպալ խան 1086
Քարիմ աղա 184

Քէխոստրով խան 1086
Քյուրտյան Հ. 819
Քոլանչյան Ս. 1016, 1033
Քրիստոսատուր (ոսկերիչ) 146
Քրիստոսատուր Կաֆայեցի 138
Քրիստափոր Կլավիուս 755
Քուշնարյան Ք. 577
Քուշակ 920
Քուրդ (պարոն) 55, 144, 659

Օբեն Ժ. 960
Օգուզ Յոհան 927
Օդորիկոս Պորդենոնցի 781, 816
Օդորիկոս Ֆրիուլացի 810
Օթման Պահատուր շահ 107
Օլջայթու խան 8, 68, 70
Օհան Թոխաթեցի 751
Օմար Շամշան 137
Օմար Միրզա (Լ. Թամուրի թոռ) 53, 658
Օսման-բեյ 29, 107, 185, 642, 643
Օրբելի Հ. Ա.. 577, 980
Օրբելյաններ 50, 52, 90, 106, 121, 136, 140, 247, 248, 293, 608, 615, 632, 645, 650, 654-657, 962
Օրխան բեյ (Օսման բեյի որդի) 185
Օրմանյան Մ. 42, 167, 672, 890
Օֆուզ Թորոս 927
Օֆուզ Տէրտէր 927

Ֆասս Ի. 331
Ֆարան (պարոն) 303
Ֆարաջի (մամլուկյան սուլթան) 87
Ֆարհատ 461
Ֆարուխ-Յասար 179, 200, 209, 220, 221, 328
Ֆինկ Ն. 554, 943, 944
Ֆնդուխտար սուլթան 598, 599
Ֆոն Զողեն 553-557
Ֆոսկալ (բնագետ) 762
Ֆռանգ (գրիչ) 150
Ֆրիկ 943, 944, 973, 1016, 1031, 1075
Ֆրոնտոն եպիսկոպոս 372, 374

Адонц Н. 482, 484
Али-Заде 9, 10, 16, 26, 27, 69, 71, 76, 78, 639, 640
Антонова К. А. 801, 838
Афанасий 365
Ашрафян К. З. 839

Бартольд В. 811, 817, 819
Бенерджи А. Ч. 839
Бичурин И. Я. 809
Болдырев А. Н. 461

Варданян С. А. 748
Волгин В. 392

Гордлевский В. 459
Гутер Ф. И. 852, 854

Дарбинян М. О. 778

Егиазаров С. А. 94

Кант Э. 819
Каплан А. Б. 799
Клавихо Рюи Гонзалес де 54, 648
Кривонос Н. К. 805
Крымский А. 30, 163, 643
Кулаковский Ю. 361
Кычанов Е. И. 814
Кюнер Н. В. 791, 806, 809, 811

Левченко М. 361
Леонтьев В. П. 811
Лебедев А. П. 368

Маркс К. 359, 382, 480
Марр Н. Я. 7, 67, 442, 446, 817
Миханкова В. А. 983, 989
Мурадян П. 144
Мюллер А. 169

Оганесян Л. А. 748, 749, 762

Папазян А. Д. 859
Пахомов Е. А. 328, 847
Петрушевский И. П. 13, 32, 49, 57, 74, 87, 91, 92, 99, 171, 179, 189, 191, 195, 203, 209, 210, 220, 322, 335, 336, 656, 662, 663
Пржевальский Н. М. 807, 809
Прокопий Кесарийский 357

Ранович А. 357
Редько И. Б. 808
Сарат Чандра Дас 811, 814
Сарксян Г. Х. 903
Симеон Лехаци 778
Синха И. К. 839
Спафарий Н. 816

Тизенгаузен В. Г. 12, 15, 73, 77
Тихомиров М. Н. 952-954
Тураев Б. А. 818

Хачикян Л. С. 952-954
Хачикян Ш. Л. 953
Хенниг Рихард 810, 816

Чистякова Е. В. 952
Чичеров А. И. 839

Шанидзе А. 669

Энгельс Ф. 359, 382, 406, 480

Andrade Antonio de 810
Angelov D. 377

Conybeare F. 256
Coulie Bernard 1041

Damieville M. Paul 815
Desideri L. 811
Dulaurier E. 218

Finck Franz Nikolaus 554

Gjandchezian Levon 554

Hefele 417
Hinz Walter 858

Kévorkian Raymond H. 1080
Khachikian L. 789

Mahler Jane Gaston 815
Müller K. 377
Minorsky V. 27, 166, 641, 859

Oudenrijn Marcus Antonius v. d. 63, 751
Outtier Bernard 1080

Pereira F. M. Esteves 810
Pordenone Odoric de 781, 810

Sakisian Arménag 794, 796
Sandberg B. A. Graham 846
Soden von 554

Ter-Mkrttschian K. 405
Ter-Stépanian Armen 1080
Ter-Vardanian Guévorg 1080
Thévenot M. 782, 811

Veliaminof-Zernof' V. 48, 227

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա 30, 86, 191, 193, 461, 644
Ագրա (Էկրայ) 780-782, 787, 788, 800-803, 806, 807, 810, 811, 828, 832, 839-841, 844
Ագուլեաց վանք 106, 138
Ագուլիս 106, 767, 769, 772, 777, 1096
Ադանա 601, 611
Ադրբեջան (Հատրպէճան) 39, 89, 171, 180, 222
Ազախ (Ազով) 302, 613
Ազիզքենդ 214, 219
Աթանանց գյուղ 262
Ալաշկերտ 93, 97, 636, 646, 1098
Ալավերդի 915
Ալեքսանդրապոլ 911
Ալեքսանդրիա 367, 370, 614
Ալընջոյ բերդ (Ալանջիկ) 103, 352, 634
Ախալցխա (Ախլծրխէ, Աղլծխա) 33, 95, 111, 118, 218, 314, 933
Ախավանց գյուղ 162
Ախառ 209
Ակն 249, 629
Ակոռի 961
Աղաղ (գյուղ)102
Աղանց (գյուղ) 52, 247, 266
Աղավնատուն 42, 106
Աղբակ 47, 103, 217, 229, 352, 647
Աղեք (գյուղ) 102, 146
Աղեստև (Աղստաֆա) 113
Աղթամար 62, 63, 67, 121, 136, 146, 162-165, 167, 168, 182, 183, 205, 206, 217, 218, 221, 229, 230, 236, 237, 240, 241, 243-245, 254, 256, 261, 266, 268, 280, 287, 289, 307, 309, 351, 352, 615-617, 652, 660, 680, 682, 718, 1002, 1020
Աղթամար կղզի 26, 27, 48, 49, 103, 105, 109, 205, 217, 230, 231, 266, 309, 640, 653
Աղձնիք 647
Աղջախալա (Աղճաղալա) 171, 172
Աղջուց վանք 1085
Աղսու 819
Աղվանք (Աղուվանք, Աղուանք) 101, 211, 295, 639, 1098
Աղց (գյուղ) 55
Ամդանագար 841, 973
Ամենափրկիչ վանք (Հավուց-թառ) 251, 254
Ամենափրկիչ վանք (Նոր-Ջուղա) 422
Ամերիկա 752
Ամիդ (Ամիթ) 25, 33, 89, 170, 119, 120, 146, 157, 169, 170, 172, 204, 216, 263, 303, 310, 639, 660, 1087
Ամստերդամ 753, 763, 769, 772, 847, 973, 974, 1023
Ամուկ 105, 109, 114, 170, 205

Այսրկովկաս տե՛ս Անդրկովկաս
Այրարատ 22, 163, 202, 459, 635
Այրարատյան նահանգ 40, 43, 45, 94, 114, 122, 133, 135, 136, 145, 165, 166, 218, 233, 234, 645, 650
Այրիվանք 139, 202, 246
Անատոլիա (Անատոլի) 29, 642, 764
Անգեղակոթ 51, 90, 645
Անդրկովկաս 12, 20, 26-28, 31, 66, 81, 85, 90, 95, 127, 301, 326, 441, 457, 458, 633, 634, 640, 641, 644, 661, 718, 723, 767, 818, 910, 960, 965
Անթափ 198
Անթիլիաս 102, 1083, 1091, 1092, 1102
Անի 11, 12, 27, 55, 56, 72, 73, 144, 145, 302, 440, 442, 445, 453, 459, 591, 608, 622, 640, 662, 878, 879, 888, 921, 1031, 1091
Անկարա 29, 30, 85, 642, 644
Անկեղի գյուղ 617
Անկյուրիա 370, 421, 769
Անճառ 1083
Անտիոք 416, 417, 420, 421, 558, 598, 875
Անտոնի վանք 134, 138, 745
Աշտարակ 106
Աշտիշատ 401, 403, 409
Ապարան 60, 262, 263, 331
Առաջավոր Ասիա 58, 200, 664, 904, 907
Առաքելոց վանք (Մուշ) 23, 637
Ասիա 58, 185, 187, 200, 302, 311, 449, 463, 664, 752, 814, 820, 844, 936
Ասորեստան 173
Ասորիք 28, 36, 84, 96, 100, 120, 124, 127, 371, 375, 456, 641
Ասպիսնակ (գյուղ) 212, 278, 701
Աստապատ 767, 769
Աստվածածնի վանք (Արտամետ) 259
Աստրախան 26, 302, 639, 719, 769, 779, 790, 795, 912
Ավագ վանք (Դարանաղյաց գավառ)150, 175, 181, 186, 259, 308, 627, 1009
Ավագ վանք (Սեպուհ լեռ) 272
Ավագ վանք (Երզնկա) 327, 1004
Ավագ վանք (Եկեղյաց գավառ) 273
Ավանասար (գյուղ) 251
Ավանի եկեղեցի 340
Ավանիկ 251
Ավճալա 314
Ավնիկ ամրոց 25, 36, 100, 226, 639
Ավստրիա 711, 1018
Ատրպատական 10, 13, 18, 20, 32, 33, 44, 74, 75, 80, 87, 89, 90-92, 99, 108, 109, 113, 114, 160, 172, 174, 179, 211, 219, 221, 313, 611, 631, 634, 645, 646, 648, 654, 817, 879
Արաբական Իրաք 180
Արագածոտն 55, 117, 144, 659
Արածանի 16, 77
Արաշ 312, 313
Արապիստան 764
Արարատյան լեռ (Արայեան) 617
Արարատեան գավառ 34, 145, 165, 166, 283, 369
Արարատյան դաշտ 106, 122
Արարատյան երկիր (Այրարատյան երկիր) 12, 42, 100, 132, 163, 202, 234, 342, 459, 961, 963
Արաքս (Երասխ) 97, 178, 215, 634, 641, 767
Արբերդի վանք 268, 289
Արզավանդ 45, 960
Արզեյանի անապատ 168
Արզեյանի վանք 276
Արդաբիլ (Արդավիլ, Արդեբիլ) 12, 16, 32, 73, 78, 89,180, 198, 199, 220, 211, 313, 879
Արծկե (Ադիլջևազ)15, 36, 38, 77, 100, 107, 114, 164, 184, 205, 236, 303, 304, 306, 351, 352, 680
Արծկեի բերդ 46, 234
Արծնի (գյուղ) 40, 111
Արղնի 33, 89, 119, 120, 157
Արճեշ (Արճիշ) 12, 25, 34, 36, 38, 73, 96, 100, 107, 114, 127, 145, 158, 160, 164, 169, 170, 182, 212, 223, 227, 236, 303, 304, 306, 323, 608, 639, 680
Արմավիր (Արգիշտիխինիլի) 904, 905, 908, 911
Արմենիկ 243, 309, 653
Արշակավան 398- 401, 906
Արշարունյաց գավառ 22, 635
Արտազ 16, 38, 53, 648, 649, 658
Արտազի դաշտ 78
Արտամետ 259, 260, 264, 265, 290
Արտամետի Կոնկեց ս. Աստվածածին վանք 259, 260, 264, 290
Արտաշատ 906
Արրաքիել 141, 142
Արցախ 19, 81, 248, 250, 325, 632
Արևելյան Հայաստան 37, 80, 121, 234, 296, 355, 615, 632, 651, 718, 777, 879, 883, 910, 943, 961, 963, 964, 978, 998, 1003, 1006
Արևելյան Վրաստան 28, 642
Արևմտյան Հայաստան 10, 25, 71, 156, 157, 185, 190, 327, 346, 639, 664, 879
Արևմտյան Վրաստան 85
Աքա (Պտղոմայիդ) 558
Աֆլիսցիխե (Ուփլիսցիխե) տե՛ս Ուփլիսցիխե
Աֆղանստան 815
Աֆրիկա 311, 752, 778

Բաալբեկ 1083
Բաբելոն 168, 180, 351, 616
Բաբերդ 12, 56, 73, 119, 120,

156, 190, 235, 307-309, 329, 652, 662
Բագավան 97
Բագարան 25, 94, 233, 234, 639
Բագու (Բաքու) 325, 458, 1018
Բագրևանդ 16, 77, 646
Բագարշայ 209, 215
Բագենի վանք 321
Բաբոինջ 42, 106
Բալխաշ լիճ 816
Բալկաններ 465
Բալու 48, 127, 231, 629
Բաղաբերդ 916
Բաղդադ (Բաղդատ)7, 14, 16, 18, 25, 26, 30, 33, 36, 67, 75, 76, 78, 80, 84, 90, 92, 96, 100, 119, 159, 160, 166, 168, 170, 180, 350, 351, 616, 639, 640, 644, 779, 861, 880, 889
Բաղեշ (Բաղէշ, Բիթլիս) 26, 27, 32, 37, 38, 46, 47, 49, 87, 100-104, 107, 115, 127, 143, 145, 146, 159, 160, 165, 166, 170, 175, 183, 184, 197, 217, 225-228, 230, 231, 235, 289, 303, 307, 330, 349-352, 629, 640, 647, 664, 682, 688, 764
Բայազետ 104, 630, 1041
Բայլական 12, 73
Բանդումահի 612
Բասդ գյուղ 343
Բասեն 25, 36, 100, 143, 191, 216, 226, 639
Բասրա 802, 827, 828, 842, 843
Բարդող (Թակալթու) 21, 634
Բեղենից վանք 321
Բեյրութ 1082, 1083, 1089
Բենարես (Բանարիս) 781, 806, 840
Բենդեր-Աբբաս (Բանդար-Աբաս) 780, 786, 798, 799, 807, 830, 831, 847
Բեսավենք (գյուղ) 286, 293
Բերամփուտ (Բուրհամփուր) 800, 802
Բերկրի 12, 73, 104, 138, 204, 303, 304, 352, 612, 647, 680
Բզնունեաց գավառ 184, 690
Բիբլոս 1083
Բիթլիս տե՛ս Բաղեշ
Բիլեջիկ 185
Բիհար 788, 823
Բիրբան 807
Բհատգաոն (Բահադգաոն, Բադգամ) 781, 808, 809, 822, 833
Բյուզանդական Հայաստան 363, 371, 381, 404
Բյութանիա 416, 822
Բյուրական 252
Բոլորաձոր (Բոլորաբերդ) 254, 275
Բոհտանսու գետ 184
Բոսնիա 186
Բջնի 11, 12, 21, 55, 72, 73, 136, 144, 252, 342, 634, 635, 1031
Բրուսա տե՛ս Բուրսա
Բութան տե՛ս Տիբեթ
Բուլղարիա 29, 643
Բուխարա 817

Բուխտան 184
Բուրսա 29, 185, 307, 311, 642, 797

Գագրիզաթ 822
Գաղ (գյուղաքաղաք) 769
Գայլ-գետ 120
Գանգես 823
Գանգրա 380-383, 385-387, 390, 392, 400, 407, 413-425, 428, 429
Գանձակ 32, 36, 100, 113, 137, 220, 264, 284, 286, 447, 459, 885
Գանձասար 40, 135, 136, 141, 240, 241, 248-250, 260, 499, 660, 960
Գառնի 21, 56, 108, 251, 452, 634, 662, 904
Գաւաշ 205
Գեղամայ ծովակ տե՛ս Սևանա լիճ
Գեղարդ 121
Գեղարքունի 175, 207, 247, 321
Գետիկ 442
Գերմանիա 406, 553, 554, 557, 933, 940, 1083
Գիլան 160, 795
Գլակա վանք 239, 273
Գլաձոր 271, 493, 608, 618, 728, 883
Գնկինփուռ 832
Գոա 810
Գոլխիբաս 822
Գողթն 629
Գորի 51, 91, 112, 191, 192, 314, 656
Գվինեա 818
Գրիգորաշեն 164
Գուգար[ք] 207
Գուսնե գյուղ 305, 728

Դադի վանք 250, 324
Դաղստան 39, 199, 200
Դամամի 822
Դամասկոս 30, 84, 156, 172, 311, 349, 553, 555-560, 566, 574, 644, 885, 1080, 1083, 1089
Դաշտ 767, 777
Դաշտ-ի Ղփչաղ 14, 19, 75, 81, 632
Դավաքար գյուղ 140
Դավրէժ տե՛ս Թավրիզ
Դատվանի վանք 264, 304
Դարանաղ գավառ 150, 175, 627, 628
Դարաշամբ 240
Դարբանգահ (Դարբանկայ) 822
Դարբանդ (Դերբենդ) 18, 26, 80, 313, 631, 639
Դեղձուտ 469, 494, 499
Դերջան (ներքին-վերին) 40, 113, 114, 119, 120, 156, 189, 652
Դիարբեքիր (Ամիդ) 10, 32-34, 70, 89, 115, 155, 170, 180, 196, 219, 664
Դոար գյուղ 383
Դորպատ 933, 998
Դսեղ 202
Դվին 395, 459

Եգիպտոս 30-32, 41, 42, 115, 186, 188, 196, 198, 310, 369, 371, 558, 598, 599, 644, 651
Եդեսիա (Ուռհա) 26, 196, 303, 375, 639
Եզդ 219
Եզդ(ը)խաս 799, 830
Եթովպիա 818
Եկատերինոդար 911
Եկեղյաց գավառ 73, 273
Եղեգիս 50, 51, 657
Եղեգնաձոր 80
Եղիան (գյուղ) 617
Եղիկանց Ձոր (գյուղ) 617
Եղվարդ (Եղիվարդ) 56, 133, 252, 617
Եղրդուտ մենաստան (Տարոն) 175
Եմաուս 572
Եվրոպա 57, 63, 185, 311, 452, 465, 466, 591, 648, 666, 751, 769, 772, 777, 787, 795, 799, 801, 823, 844, 898, 899, 900, 902, 979, 1001
Երերան 108, 253
Երզնկա (Եզնկա) 25, 30, 36, 38, 55, 71, 96, 100, 107, 119, 124, 134, 145, 146, 156, 161, 171, 188, 190, 210, 263, 303, 307, 308, 327, 329, 611, 613, 629, 639, 644, 652, 653, 882, 1004, 1091, 1098
Երիքով 572
Երնջակ (Ալանջիկ, Ալինջա) 20, 26, 27, 40, 41, 44, 102, 110, 115, 204, 214, 215, 230, 313, 352, 634, 640, 641, 648, 649, 654, 767, 1088
Երվանդաշատ 906
Երուսաղեմ 17, 62, 79, 143, 172, 201, 225, 299, 327, 343, 592, 601, 602, 683, 701, 892, 981,1018, 1022, 1035, 1075, 1079-1082, 1084, 1086, 1088-1092, 1094-1097, 1099-1103
Երևան 22, 45, 56, 108, 145, 234, 253, 331, 442, 613, 662, 671, 699, 721, 777, 910, 911, 913, 915, 934, 937, 941, 963, 966, 981, 984, 985, 1007-1009, 1021, 1024, 1025, 1027, 1029, 1030, 1035, 1085
Եփրատ 169, 357, 558, 592

Զարեհավան 906
Զարիշատ 906
Զեյթուն 1092
Զենջան 39, 108
Զիգիշայ (Զիկիշայ) 809, 822, 845
Զմմառի վանք 8, 68, 549, 779, 1079, 1082, 1083, 1090-1092, 1096-1102
Զմյուռնիա 769, 973
Զոել բերդ 48, 118
Զրվանդ (գյուղ) 305

Էգեպատ (գյուղ) 191
Էջմիածին (Ուչքիլիսայ) 106, 121-123, 130, 163-165, 216, 234, 240, 244, 254, 283, 472, 651, 652, 675, 681-685, 717-720, 899, 909, 940, 960-962, 978, 981, 982, 996-1002, 1006-1010, 1013, 1021, 1024, 1029, 1061, 1085, 1086, 1095
Էսկիշեհիր 185
Էրզրում տե՛ս Կարին
Էրնկան գյուղ 217

Ըռաչվարայ 822
Ըշտունեաց երկիր 103, 104, 218, 349

Թադևոս առաքյալի վանք 104, 256, 960
Թայվանի նեղուց 816
Թանիս-Քիրաշլի 106
Թառնիս գյուղ 251
Թավրիզ (Դաւրէժ, Թավրէզ, Թարվէշ, Թօրէզ) 12-15, 18, 20, 32, 33, 36, 44, 57, 73-77, 80, 87, 89, 90, 92, 100, 103, 104, 113, 119, 127, 146, 160, 164, 168, 170-172, 178, 190, 200-204, 209, 210, 212, 213, 219, 222, 245, 303, 304, 306-309, 313, 318, 349, 350, 352, 451, 629, 631, 634, 648, 654, 764, 961, 1002
Թեհրան 629, 1022
Թեղենիս (Քիրաշլի) 42
Թեոդուպոլիս տե՛ս Կարին
Թերեք գետ 26, 639
Թկլադ 100
Թմոք (Թմկաբերդ) 55, 144
Թոխաթ (Թոզատ)40, 114, 156, 187, 188, 764
Թովմա առաքյալի վանք 266
Թորդանի վանք 119
Թրակիա 416
Թրիփոլի 558
Թուրքիա 30, 65, 185-187, 197, 310, 314, 626, 629, 725, 763, 769, 773, 799, 935, 965, 973
Թուրքստան 88
Թուրֆան 819

Իզմիր 797, 861
Իկոնիա 29, 185, 458, 591, 611, 642
Իմերեթ 191
Ինդոնեզիա 777
Իսպանիա 54, 141, 659
Իսրայել 711
Իտալիա 186, 302, 577, 711, 725, 1018
Իրան 10, 20, 26, 28, 35, 65, 70, 95, 96, 127, 158-160, 180, 304, 310, 326, 440, 457, 458, 634, 640, 641, 663, 711, 769, 777, 780, 781, 785-787, 799, 805, 814, 829, 830, 847, 854, 865, 935, 960, 961, 963, 965-967, 973, 983, 1018
Իրաք (Իրաղ, Իրաղայ, Էրաղատուն) 9, 25, 26, 33, 69, 70, 90, 100, 158, 159, 166, 168, 170, 180, 203, 211, 212, 214, 458, 639, 640, 645, 725, 817

Լահուտփուռ 780, 802, 803, 810
Լաշկար 802
Լավոդիկե 421
Լաքայուռ 824
Լեհաստան (Պոլոնիա) 60, 310, 614, 666, 805, 973
Լենինգրադ 711, 1018, 1027, 1030, 1035
Լեսբոս կղզի 186
Լիբանան 1079, 1082
Լիմ 97, 170, 268, 617, 718, 780, 1020
Լիսաբոն 779, 791
Լիստի 809, 822, 834
Լիվոռնո 861, 902
Լհասա (Լասա) 781-783, 786, 787, 796, 808-814, 820, 821, 829, 833, 834, 844-846, 850, 851, 857
Լոմբարդիա 614
Լոյան (Սարոզ) 814
Լոնդոն 312, 601, 1035
Լոռի (Լաւռէ) 40, 52, 60, 112, 140, 234, 251, 650, 878, 1094
Լվով 805, 949, 973
Լուկկա 311
Լուսավորչի եկեղեցի (Կողբ) 242
Լուրիստան 180

Խաթայ (Կիտայ, Չինաստան) 818, 819
Խախբեան գավառ 190
Խայրաբադ (Խէրապատ) 780, 802, 803, 824, 840, 841
Խանբալիկ 819
Խաչեն 52, 53, 245, 248, 249, 452, 499, 616, 657, 658, 882
Խառաբաստի վանք 107, 137, 150, 268
Խարբերդ 40, 114, 182, 190, 275, 288, 307, 612, 629, 822
Խիզան 37, 47, 48, 57, 93, 101, 102, 124, 145, 148, 228, 229, 231, 253, 307, 309, 318, 319, 329, 330, 621, 1096
Խլաթ 8, 16, 35, 37, 46, 67, 98, 100-102, 143, 145, 159, 165, 166, 184, 226, 227, 303, 304, 307, 351, 352, 461, 608, 647, 690, 893
Խնուս 46, 102, 143, 226
Խոյ (Խոյի դաշտ) 14, 75, 162, 177, 195, 303
Խորասան 26, 29, 35, 40, 41, 75, 96, 99, 109, 115, 118, 119, 160, 174, 179, 642, 673, 817, 1088
Խորոտիկի վանք 255
Խութ 46, 165, 227, 351, 647, 817
Խուժկա վանք (Համշեն) 142
Խուղջա 780, 802, 828, 852

Ծամնդավ 591
Ծար գյուղ 53, 452, 657, 658
Ծերենցի վանք 687
Ծղաք 102
Ծովք 592
Ծործորի վանք 648
Ծպատա վանք 93

Կաթուղիկե եկեղեցի (Ամիթ) 146

Կալկաթա 785, 788, 797, 824, 850
Կախեթ 191
Կած գյուղ (Գեղարքունյաց գավառ) 175, 321
Կաղզվան 221, 1098
Կամախ 85, 119, 156, 347, 627-629, 652
Կաշկար (Կաշգար) 801, 816, 819
Կապադովկիա 155, 156, 356, 363, 364, 390, 412, 415, 669, 905
Կապոսի վանք (ս. Հակոբ) 95, 124, 273, 308, 614
Կապուտից ամրոց 22, 635
Կասպից ծով 179, 302, 769, 818
Կարաշահր (Ջալիշ) 819
Կարապետի վանք 282, 1005
Կարբի 21, 634
Կարին (Երզրում, Արզրում) 10, 23, 35, 36, 71, 100, 125, 145, 207, 208, 216, 303, 308, 447, 611, 637, 718, 764, 861, 872, 888, 1001
Կարմիր վանք 591
Կարս 25, 34, 94, 145, 233, 234, 302, 608, 639, 878, 888, 911, 913
Կաֆա (Թեոդոսիա) 134, 138, 668, 669, 671, 672, 745
Կեղի 119, 120, 156, 652
Կեմ գյուղ 256, 291
Կեչառույքի վանք (Կեչառիս) 252, 660
Կեսարիա 318, 363, 364, 370, 373, 376, 378, 379, 410, 415, 417, 418, 421
Կթան գյուղ 262
Կիլիկիա 302, 439, 588, 591, 609, 612, 618, 728, 879, 880, 884, 905, 1089
Կիլիկյան Հայաստան 42, 121, 439, 453, 549, 558, 573, 581, 588, 591, 597-599, 609, 650, 651, 727, 815
Կիպրոս 42, 187, 651, 1080
Կին 442, 815
Կյուրեղի վանք 258
Կոգ գաւառ 398
Կողրայնայ 822
Կոխտ (գյուղ) 251
Կողբ 21, 25, 64, 242, 634, 639
Կոնիա 188
Կոստանդնուպոլիս 185, 190, 198, 370, 390, 401, 413, 416, 450, 451, 614, 626, 629, 671, 672, 705, 759-761, 763, 902, 973-975, 1022, 1023, 1032, 1034
Կովկաս 191, 193, 815
Կոտայք 40, 111, 133, 657
Կորճայք 653
Կտուց (անապատ) 93, 159, 251, 718, 1002, 1020
Կումաշ 188
Կուսանաց անապատ 773
Կուտիս 251, 1102
Կուտուց վանք (գյուղ) 251
Կուր գետ 66, 91, 180, 451

Հաբեշստան 442, 778, 1098
Հազո 48, 231
Հաբերֆ 249
Հալեպ 30, 84, 156, 188, 190, 201, 303, 304, 307, 311, 312, 611, 644, 768, 769, 855, 1083, 1087, 1092
Հակոբի վանք (Ուշտունիք) 136
Հաղբատ 111, 117, 174, 216, 660, 720, 909, 1005, 1006, 1030
Համադան 160, 203, 204
Համբայ դաշտ 204, 206
Համի 819
Համիթ 116, 204, 206, 1005
Համշեն 54, 55, 141-143, 659
Հայաստան (Հայոց աշխարհ) 7, 10, 15-17, 19-22, 24, 25, 28, 31, 33, 35, 36, 39, 45, 46, 48, 50, 52, 56, 57, 59, 61, 65, 69, 76, 77, 81, 83, 87, 90, 92, 94, 95, 97, 99, 100, 103-105, 108, 109-111, 113, 115, 117, 122, 127, 130, 135, 145, 153, 163, 166, 169, 171, 174, 175, 182, 190, 193, 202, 204, 207, 208, 212, 218, 224-226, 231-235, 238, 240, 242, 245, 252, 253, 263, 271, 276, 286, 289, 295, 296, 301-304, 307-311, 315, 320, 329, 330, 335, 355, 356, 362, 364, 374, 375, 377, 387, 390, 393, 395-397, 401, 403, 405-407, 414, 421, 439, 441, 449, 450, 458, 461, 465, 466, 480, 578, 579, 581, 584, 591-593, 609, 613, 614, 616, 618, 619, 631, 633, 634, 636, 638, 640, 641, 645, 647, 648, 650-657, 659, 661, 662, 669-671, 677, 705, 709, 711, 712, 717-719, 721, 723-725, 732, 733, 735, 739, 741-743, 745, 748, 750, 751, 756, 757, 762, 767, 774, 777, 797, 810, 815, 873, 899, 901, 903, 904, 906, 907, 909, 913, 914, 934-936, 939-941, 944, 949, 950, 956-958, 960-963, 965, 974, 977, 978, 981-983, 987, 996, 1001, 1003, 1008, 1013, 1018, 1020-1025, 1029, 1031, 1032, 1037, 1094
Հայկական լեռնաշխարհ 58, 664
Հայոց ձոր 256
Հանդարբերդ 249
Հաշտյանք գավառ 653
Հաջիփուռ 781, 807, 823, 832
Հավուց թառ վանք (Հայոց-թառ) 241, 251, 254
Հարավային Հայաստան 37, 46, 50, 109, 171, 204, 217, 647, 655, 883
Հարավային Ռուսաստան 25, 638, 724, 790
Հելլեսպոնտ(ոս) 29, 416, 643
Հեռավոր Արևելք 777-865
Հերաթ (Հեր) 8, 119, 160, 647
Հերմոնի վանք 132-133
Հըսնիքեյֆ 303, 311
Հիմալայներ 807

Հաբեշստան 442, 778, 1098
Հազո 48, 231
Հաբերֆ 249
Հալեպ 30, 84, 156, 188, 190, 201, 303, 304, 307, 311, 312, 611, 644, 768, 769, 855, 1083, 1087, 1092
Հակոբի վանք (Ուշտունիք) 136
Հաղբատ 111, 117, 174, 216, 660, 720, 909, 1005, 1006, 1030
Համադան 160, 203, 204
Համբայ դաշտ 204, 206
Համի 819
Համիթ 116, 204, 206, 1005
Համշեն 54, 55, 141-143, 659
Հայաստան (Հայոց աշխարհ) 7, 10, 15-17, 19-22, 24, 25, 28, 31, 33, 35, 36, 39, 45, 46, 48, 50, 52, 56, 57, 59, 61, 65, 69, 76, 77, 81, 83, 87, 90, 92, 94, 95, 97, 99, 100, 103-105, 108, 109-111, 113, 115, 117, 122, 127, 130, 135, 145, 153, 163, 166, 169, 171, 174, 175, 182, 190, 193, 202, 204, 207, 208, 212, 218, 224-226, 231-235, 238, 240, 242, 245, 252, 253, 263, 271, 276, 286, 289, 295, 296, 301-304, 307-311, 315, 320, 329, 330, 335, 355, 356, 362, 364, 374, 375, 377, 387, 390, 393, 395-397, 401, 403, 405-407, 414, 421, 439, 441, 449, 450, 458, 461; 465, 466, 480, 578, 579, 581, 584, 591-593, 609, 613, 614, 616, 618, 619, 631, 633, 634, 636, 638, 640, 641, 645, 647, 648, 650-657, 659, 661, 662, 669-671, 677, 705, 709, 711, 712, 717-719, 721, 723-725, 732, 733, 735, 739, 741-743, 745, 748, 750, 751, 756, 757, 762, 767, 774, 777, 797, 810, 815, 873, 899, 901, 903, 904, 906, 907, 909, 913, 914, 934-936, 939-941, 944, 949, 950, 956-958, 960-963, 965, 974, 977, 978, 981-983, 987, 996, 1001, 1003, 1008, 1013, 1018, 1020-1025, 1029, 1031, 1032, 1037, 1094
Հայկական լեռնաշխարհ 58, 664
Հայոց ձոր 256
Հանդարբերդ 249
Հաշտյանք գավառ 653
Հաջիփուռ 781, 807, 823, 832
Հավուց թառ վանք (Հայոց-թառ) 241, 251, 254
Հարավային Հայաստան 37, 46, 50, 109, 171, 204, 217, 647, 655, 883
Հարավային Ռուսաստան 25, 638, 724, 790
Հելլեսպոնտ(ոս) 29, 416, 643
Հեռավոր Արևելք 777-865
Հերաթ (Հեր) 8, 119, 160, 647
Հերմոնի վանք 132-133
Հըսնիքեյֆ 303, 311
Հիմալայներ 807

Հին Ջուղա 767, 772, 777, 795, 865
Հյուսիսային Կովկաս 815, 911
Հյուսիսային Միջագետք 25, 34, 96, 639, 646
Հնդկաստան (Հնդուստան) 20, 633, 725, 777, 780-782, 784-790, 792, 796-799, 801, 805, 808, 810, 811, 817, 818, 822-824, 827-829, 831-834, 838-841, 847, 848, 854-856, 865, 967
Հոլանդիա 725, 778, 973
Հոռոմաստան 118
Հովհաննավանք 972
Հովհաննես Մկրտիչ վանք 553
Հորդանան 1079, 1080, 1082
Հռոմ (Հռոմաց տուն) 63, 85, 188, 190, 211, 314, 356, 629, 666, 768, 773, 936, 1023
Հռոմկլա 41, 558, 559, 592, 602, 891
Հուլավուի թախտ 31, 86
Հուկլի 785, 788, 797, 823, 824
Հունգարիա 29, 187
Հուսկան որդու վանք 138, 167

Ձագավանք 94, 133, 140, 233
Ձորագյուղ 247
Ձորավանք 247
Ձվըստան գյուղ 265

Ղազարի վանք 173, 310, 975
Ղազվին 39, 108, 160
Ղարաբաղ 14, 19, 31, 76, 81, 85, 86, 109, 179, 180, 202, 632, 644, 661
Ղարադաղ 331
Ղարամանիա 186-188, 198, 302
Ղափան (Կապան)159, 178
Ղոչ դաշտ 220
Ղրիմ 60, 73, 95, 134, 138, 302, 310, 608, 609, 613, 650, 666, 728, 745, 815, 995, 998
Ղրիմի թերակղզի 12, 60, 608, 609, 613, 650, 666
Ղում 817

Ճապաղջուր 23, 171, 172, 636, 653

Մաղրաս 84, 1024
Մալաթիա 188, 601
Մակու (Մակվա բերդ) 53, 63, 104, 160, 171, 178, 215, 216, 239, 648, 649, 658
Մահեար 799, 830
Մանազկերտ (Մանձկերտ) 160, 164, 205, 226, 608, 629
Մանկուս գյուղ 251
Մանչեստեր 626
Մաջառուաց (գյուղ) 288
Մավերաննահր տե՛ս Միջին Ասիա
Մատղավանք 282
Մարաղա 18, 80, 213, 313, 632, 648, 751
Մարանդ 14, 18, 75, 80, 177, 303, 632
Մարաշ 199
Մարգոտ գյուղ 289

Մարմետ (գյուղ) 281, 282, 300
Մարսել 755, 763, 973
Մաքենացոց վանք 214, 217
Մաքվանփուռ (Մաքանփուռ) 781, 806, 807
Մելիտինե 30, 84, 356, 357, 363, 371, 376, 416, 418, 643
Մեծ Հայք 357, 363, 397, 401, 404
Մեծ Մողոլ 799, 801
Մեծոփ 129, 131-135, 269, 270, 669, 675, 741
Մեծոփավանք 133-135, 269, 270, 675, 701, 705, 741
Մերդին (Մէրտին) 25, 30, 33, 35, 36, 84, 89, 98, 100, 119, 120, 156, 157, 182, 216, 303, 639, 644
Մերձավոր Արևելք 20, 66, 90, 123, 458, 547, 553, 558, 598, 814, 905, 958, 966, 1080
Մերձբալթյան երկրներ 805
Մըսըր 96, 118, 198
Մժնկերտ 48, 231
Մինափուռ 807
Միջագետք (Միջագետ) 26, 28, 30-32, 36, 75, 84, 100, 155, 156, 346, 375, 640, 641, 644, 646, 706
Միջերկրական ծով 185, 186, 308, 815, 1082, 1083
Միջին Ասիա 15, 19, 20, 29, 77, 96, 633, 642, 816
Մյունխեն 629
Մշո դաշտ (Մուշ) 10, 33, 70, 89, 127, 159, 172, 226, 237
Մշո սուրբ Կարապետ 184, 720, 1004
Մոգոլիստան 19, 633
Մոխրաբերդ 137
Մոկք 90, 93, 147, 180, 233, 292, 653
Մոսկվա 555, 711, 718, 719, 760, 763, 779, 912, 974, 947, 948, 966, 976, 977, 1001, 1002, 1018, 1020, 1021, 1027, 1035, 1080, 1092
Մոսուլ (Մօսուլ) 8, 25, 35, 63, 67, 98, 100, 639
Մուզաֆարփուռ 823
Մութ (Մթայ) գյուղ 279, 280, 342
Մուխրանիս 112
Մուղան 23, 26, 28, 179, 636, 639, 641
Մուղնի (Մողնի) 42, 56, 257, 282, 327
Մուշ 46, 49, 102, 143, 145, 159, 165, 171-173, 184, 187, 226, 227, 237, 307, 309, 637, 647, 1004, 1020

Յարքենդ 819

Նախիջևան 12, 14, 18, 20, 45, 56, 73, 76, 80, 451, 632, 634, 654, 661, 662
Նարաինգաք 822
Նարեկ (գյուղ) 146, 294, 350
Նեապոլ 187, 314, 725, 781,

785-788, 792, 807-809, 811, 820, 823, 824, 828, 829, 832, 833, 848, 849, 967
Նեպալ (Նէկպալ) 725, 781, 782, 785-788, 792, 807-809, 811, 820, 822-824, 828, 829, 832, 833, 836, 848, 849, 853, 854, 967
Ներքին Մարմետ (գյուղաքաղաք) 258, 282
Նըվան 105
Նիզաբադ 313
Նիկիա 416, 421, 423, 425, 427
Նիկոպոլիս 29, 357, 363, 371, 372, 374, 643
Նովգորոդ 442, 948
Նորագավիթ 42, 106, 651
Նորավանք (Վերին) 181, 293, 617
Նոր Բայազետ 630
Նոր Նախիջևան 719, 760, 1001, 1021
Նոր Ջուղա 236, 258, 267, 347, 422, 729, 757, 760, 777, 780, 789, 792-798, 800, 804, 812, 829, 843, 973, 979, 1001, 1061
Նուբիա 778
Նփրկերտ 303

Շահապոնք 21, 635, 636
Շահաստան 164, 172, 178
Շահզադփուր 806, 828
Շամ 34, 179, 1087
Շամախի 60, 200, 213, 215, 221, 304, 311-313, 458, 666, 999, 1098
Շամբրան 313, 319
Շամիրամի ամրոց 113, 233
Շամշադին 143
Շատախ 118
Շատվան գյուղ 338
Շարուր 222
Շաքի 27, 32, 641
Շիրազ 15, 158, 159, 166, 168, 169, 180, 187, 190, 799, 800, 830
Շիրակ 221, 453
Շիրակվան 207
Շիրվան 18, 19, 25, 39, 45, 60, 65, 70, 80, 81, 86, 93, 105, 108, 110, 199, 200, 209, 221, 222, 232, 302, 310, 313, 328, 458, 631, 632, 639, 665, 1095, 1098
Շիքոհաբադ (Շքուրապատ) 781, 806
Շողակա (գյուղ) 247
Շոռոթ 767-770, 773, 774
Շոշ տե՛ս Սպահան

Ոզմի գյուղ (Մոկք) 292
Ոստան 15, 32, 46-49, 56, 77, 87, 100, 101, 103, 105, 126, 136, 145, 146, 158, 160, 168, 177, 182, 205, 206, 212, 217, 229, 230-232, 235, 237, 244, 304, 307, 309, 344, 349-352, 612, 639, 660, 662
Որոտան (Որոտն) 19, 46, 49-51, 80, 81, 91, 145, 244, 245, 615, 619, 632, 654

Չադ 778
Չալդրանի դաշտ 91
Չամին (գյուղ) 259
Չանյան (Կումդան) 814
Չինաստան 38, 86, 644, 764, 777, 778, 783, 784, 796, 808, 810, 811, 813-820, 829, 846, 851
Չմշկածագ 629

Պամփիլիա 375
Պատրինկա 807, 822
Պարսկական Իրաք 10, 70, 158, 170, 180, 219, 638
Պարսկահայք 19, 81, 632, 647, 751
Պարսկաստան 25, 36, 75, 96, 100, 212, 308, 341, 638, 763, 764 տե՛ս նաև Իրան
Պարտավ 12, 73
Պափլագոնիա (Պեփղագոնիայ) 380, 414, 415, 420
Պեկին 782, 818, 819
Պետերբուրգ 398, 775, 779, 933, 954, 955, 957, 974, 976-978, 980, 999, 1001
Պետրա 1082
Պիզա 614
Պողոս-Պետրոս եկեղեցի 237, 255, 257, 258, 305, 339
Պոնտոս 414
Պորտուգալիա 769, 791
Պսկով 947
Պստոլկի վանք 256

Ջաբան 221
Ջահանապատ (Ջանապատ) 806
Ջահուկ 767
Ջերմուկ 48, 231
Ջիբրալթար 778
Ջիզիր (Ջեզիրե) 100, 184
Ջրաղացի ձոր 720, 1005
Ջուլամերիկ (Ջուլամերկ) 27, 38, 47, 48, 118, 352, 640, 647
Ջուղա 210, 312, 615, 792, 795, 829

Ռաջմահալ (Ըռանմել) 785, 823
Ռեյ 160
Ռեշտ 779
Ռշտունիք (Ըռշտունիք) 37, 38, 60, 62, 103, 124, 136, 177, 218, 229, 230, 284, 286, 338, 349, 350, 352, 1084
Ռույինդիզ բերդ 213
Ռուսաստան 20, 610, 633, 638, 718, 724, 725, 769, 778, 779, 790, 910, 943, 947, 951, 976, 979

Սալեռնո 614
Սալմաստ (Սալամաստ) 8, 36, 39, 56, 67, 108, 125, 217, 662
Սալնապատ 261, 305
Սահակի վանք 258
Սահարա 778
Սամարղանդ (Սամըրղընդ, Սմրղանդ) 20, 24, 28, 30, 31, 38, 39, 50, 54, 55, 99, 108, 180,

245, 633, 638, 641, 644, 650, 659, 817
Սամշվիլդե բերդ 116-118, 120, 652
Սամսուն 146, 749
Սամցխե-Մեսխեթ 191, 207, 218, 221
Սանահին 55, 111, 112, 136, 144, 660, 1030, 1031
Սանքու 809, 822, 908
Սասուն 23, 46, 156, 165, 227, 231, 647
Սատաղ 119, 120, 156, 356-358, 363, 652
Սարայ 26, 608, 639
Սարայ-Բերքե 613, 621
Սարդրուդ 89
Սեբաստիա 10, 30, 40, 71, 84, 114, 146, 155, 156, 169, 198, 288, 303, 357, 358, 363, 366, 369, 371-373, 375-377, 379-383, 385-387, 390-392, 400, 402, 410, 412, 414, 415, 417, 418, 420, 591,611, 643, 644, 702, 748, 764
Սելևկիա 370
Սեմիրեչյե 816
Սեպուհ լեռ 272
Սեւղին 690
Սերահ 12, 73
Սերբիա 185
Սերկևլի գյուղ 55, 117, 144, 147, 659
Սթունի գյուղ 299
Սինին (Սլինկ) 782, 783, 784, 796, 811, 813, 814, 820, 826, 846, 851
Սիս 42, 43, 121, 123, 130, 198, 612, 880
Սիրիա 34, 60, 196, 303, 311, 553, 598, 644, 651, 666, 769
Սղգա վանք 233
Սղերտ 103, 307
Սյունավանք 140
Սյունիք 18-20, 40, 50-52, 60, 80, 81, 91, 106, 112, 124, 132, 134, 163, 202, 245, 247, 248, 331, 616, 632, 634, 649, 650, 656, 657, 699, 767
Սյունյաց բերդ 44, 654, 972
Սնջար 100
Սովետական Միություն 713, 911, 912, 982, 993, 1024, 1035, 1064
Սպահան (Ասպահան, Իսպահան, Ըսպահան) 15, 77, 158, 159, 169, 211, 219, 306, 753, 763, 777, 779-799, 804, 807, 827, 842, 855, 861, 973, 1035
Սպանիա 38, 648
Սպատկերտ 48, 231, 320, 321
Սպեր 54, 55, 143
Սվարանց (գյուղ) 52, 247, 266
Ստամբուլ (Ստըմբոլ) 210, 347, 843
Ստավրոպոլ 911
Ստեփանոսի վանք 167
Սրինն (Սիրոնջ) 801, 802, 841
Սրկղունք գյուղ 195, 245, 254
Սուղան 778

Սուզդալ 442
Սուլթանիե 20, 32, 36, 39, 87, 89, 100, 108, 306, 313, 319, 608, 613, 622, 634
Սուխարա վանք 170
Սուկավ 216
Սուր վանք (Խարբերդ) 275
Սուրաթ 780, 788, 799, 800, 802-804, 807, 831, 840, 842, 843, 860, 861
Սուրբ Անտոնի վանք (Կաֆա) 138
Սուրբ Աստվածածին (Սալնապատ) 305
Սուրբ Աստվածածին (Նոր Ջուղա) 795
Սուրբ Գեորգ զորավարի վանք (Տուսա գյուղ) 254, 256
Սուրբ Գ' ւրգ վանք (Բեսավենք գյուղ) 293
Սուրբ Գեորգի վանք (Լիմ կղզի) 268, 617
Սուրբ Խաչ (Աղթամար) 261
Սուրբ Կատարինեի անվան կուսանաց անապատ 795
Սուրբ Կարապետի վանք 184, 258, 261, 282, 720, 1004, 1005
Սուրբ Հակոբա վանք (Ակոռի) 961
Սուրբ Համբրի վանք (Ոշտունիք) 136
Սուրբ Հակոբյանց վանք 601, 602, 1079, 1080
Սուրբ Հովհաննես վանք 284
Սուրբ Մատթևոսի վանք 817
Սուրբ Նախավկայի վանք 290-291
Սուրբ Նշանի վանք 60, 262, 331, 665
Սուրբ Սահակի վանք 258
Սուրբ Սարգիս գյուղ 251
Սուրբ Սարգիս վանք (Ուշի) 899
Սուրբ Ստեփանոսի վանք 167
Սուրբ Սուքիասանց եկեղեցի 242
Սուրբ Վարդան եկեղեցի (Վան) 268
Սուրբ Վարդան եկեղեցի (Մակու) 239
Սուրբ Վարդանի վանք (Ոշտունիք) 136
Սուրբկանց գյուղ (Մոկք) 147
Սուրխաթ 613
Սուրմարի (Սուրմալու, Սուրբ Մարին) 21, 25, 634, 635, 639, 878, 888
Սու-չժոու 819
Սևանա լիճ 220, 249, 720
Սևանի վանք 720
Սևաստ տե՛ս Սեբաստիա
Սև լեռ 204
Սև ծով 55, 186, 308

Վաղաղնի վանք 240, 244
Վաղարշակերտ (Ալաշկերտ, Վաղաշկերտ) 23, 33, 35, 44, 98, 635, 636, 646, 654
Վաղարշապատ (Էջմիածին) 8, 42-44, 164, 225, 231, 232, 278, 325, 651, 677, 682, 684, 906, 961

Վաղցան (գյուղ) 617
Վայոց ձոր 18, 50, 52, 195, 215, 245-248, 254, 257, 275, 321, 632, 657, 660
Վան (Տուշպա) 24, 37, 38, 44-47, 49, 56, 59, 100, 103, 104, 110, 118, 126, 136, 145-147, 158, 160, 167, 168, 183, 203, 205, 206, 212, 217, 229, 231-233, 237, 238, 253-255, 257, 268, 281, 304-306, 324, 334, 339, 349, 351, 352, 447, 608, 629, 637, 638, 647, 654, 655, 662, 682, 702, 718, 764, 906, 908, 1002, 1020, 1094
Վանա լիճ 38, 79, 103, 107, 109, 125, 169, 205, 228, 304, 309, 650, 653, 655
Վանանդ գյուղ 772
Վանի բերդ 23, 101, 103, 113, 162, 232, 233, 352, 637
Վառնիշատ (գյուղ) 147
Վասպուրական 27, 37, 39, 47, 49, 53, 62, 103, 104, 108, 117, 163, 164, 167, 204, 212, 217, 222, 229, 236, 245, 330, 630, 636, 640, 647, 648, 650, 653, 658, 682, 728, 982, 1002, 1020
Վատնիարյան դաշտ 91
Վարագ(ա) 110, 158, 232, 260, 261, 267, 305, 349, 350, 626, 718, 1020
Վարդանի վանք 136
Վարդխուպան 112
Վարդպատրիկի վանք 289
Վենետիկ 186, 187, 303, 311, 314, 318, 570, 614, 680, 683, 755, 757, 760, 761, 763, 765, 769, 772, 773, 794, 816, 897, 973-975, 981, 1022, 1023, 1035, 1075
Վերին Նորավանք 181, 617
Վիեննա 8, 629, 671, 703, 761, 811, 975, 981, 1022, 1035, 1046, 1061
Վխկայ (գյուղ) 342
Վոլգա 310, 769
Վրաստան (Վերաստուն, Գուր-ջիստան) 22, 28, 30, 31, 33, 51, 52, 60, 84, 88, 91, 95, 112, 115, 117, 144, 191, 193, 194, 197, 199, 247, 310, 312, 314, 458, 615, 635, 636, 641, 644, 650, 652, 656, 657, 665, 955, 956, 1018

Տաթև 52, 84, 111, 130-132, 139, 241, 245, 247, 266, 271, 315, 615, 642, 660, 675, 699, 720, 728-730, 739, 960, 972, 996, 1030, 1092
Տաթևի վանք 87, 132, 240, 271, 294, 720, 972, 996
Տաճկաստան 118
Տայշող գյուղ 177
Տայք 1000
Տանծիկ (Դանցիգ) 805
Տանձատափ (գյուղ) 52, 247, 266
Տաշու գյուղ 52, 247

Տարոն (Տարուն) 49, 173, 175, 197, 228, 237, 273, 310, 653, 1020
Տարսոն 455, 611, 612
Տեղեր 254
Տիբեթ (Բութանդ) 725, 777, 780-788, 792, 796, 797, 803-813, 820, 821, 823, 824, 826-829, 831-833, 837, 839, 844, 846, 849, 850, 967
Տիգրանակերտ 629, 764, 904-906, 908
Տիգրիս 169
Տիվրիկ 119
Տիրամոր եկեղեցի 268, 306
Տշող (Տայշող) 124, 146, 177, 350
Տոսպ 110, 167, 232, 351
Տրապիզոն 55, 146, 180, 186, 302, 308, 761
Տուսա գյուղ 256
Տուրուբերան 23, 46, 197, 637, 647, 655
Տփղիս (Թիֆլիս, Թբիլիսի, Տփխիս) 22, 23, 59, 111, 115, 144, 146, 182, 183, 191, 192, 194, 197, 275, 305, 314, 398, 453, 636, 652, 719, 761, 882, 910-912, 933, 956, 974, 980, 882, 980, 1000, 1001, 1035
Տորոս 223

Ցիպնա վանք 125, 159
Ցղնա 767, 769
Ցյուանջոու 816
Ցուրայ բերդ (Ցրւանք) 247

Ուկրաինա 310, 949
Ուռհայ 881
Ուրարտու 935
Ուրմիա 38, 47, 48, 108
Ուփլիսցիխե 51, 91, 656

Փաթնա (Փաթան, Բաթնայ) 780, 781, 785, 787, 788, 806-809, 822, 823, 827, 829, 832, 833, 835, 837, 839, 840, 845
Փայտակարան 193
Փասավանք (գյուղ) 180
Փարիզ 673, 775, 973, 1035, 1080
Փերուժ 614
Փիշպեկ 816
Փոքր Ասիա 20, 28, 29, 31, 32, 83, 85, 169, 185, 221, 301, 308, 375, 457, 591, 634, 641-644, 648, 661
Փոքր Հայք II, 30, 355-357, 359, 362, 363, 366, 370, 376, 378, 380, 392, 393, 400, 409-412, 441, 588, 643, 748
Փոքր Սյունիք (Ծար) 22, 53, 249, 615, 616, 635, 658, 661

Քաթմանդու 780, 781, 784, 787, 8[illegible], 809, 822, 828, 833
Քամպու 822
Քանաքեռ 325, 1030
Քաշան 311
Քաշմիր 781

Քաջաբերդ 916
Քաջբերունիք 16, 23, 39, 77, 108, 114, 131, 132, 135, 212, 213, 236, 269, 288, 617, 636, 650, 699, 1094
Քառասնից վանք 257
Քասա 809, 822
Քարթլի 191, 207, 251
Քարպահ 103, 229, 352
Քարվակ գյուղ 291
Քեսուն 591
Քիրման (Քրման) 15, 77, 159, 166, 180, 219, 458
Քոսադաղ 216
Քոնա 649
Քութահիա 188
Քութի 781, 808, 809, 822, 834, 837, 845
Քուչա 819
Քուռ գետ 36, 100, 193
Քուրդիստան 90, 97, 180, 208, 219, 221, 646, 764

Օշական 42, 94, 233, 234, 442, 651, 950, 1085
Օսմանյան կայսրություն 29, 30, 180, 185, 187, 210, 643, 663
Օվրանգաբադ (Օվրանկաբադ) 800, 802, 841
Օրդուբադ 767
Օքսֆորդ 630

Ֆարս 15, 77, 180, 219, 764
Ֆարսիստան 158, 170, 211
Ֆլորենցիա 794
Ֆռանգստան 771, 805
Ֆրանսիա 577, 973

Азербайджан 847
Армения 952
Греция 953
Ереван 953, 954
Индия 799, 801, 838, 839
Каменец-Подольск 954
Китай 814
Львов 805
Монголия 813
Непал 807, 808
Россия 952
Семиречье 817
Тибет 791, 807, 811, 813
Украина 954
Швеция 953

Ցանկերը կազմեց Հ. Սկազանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի քաղաքական և վարչական պատմություն

«Քաղյակ հիմտությամբ» օժտված գիտնականը I
Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIV-XV դարերում 7
Ջոբանյանների և Ջելաիրյանների տիրապետությունը Հայաստանում 65
Հայաստանը ԺԵ դարի առաջին կեսին 83
Հայաստանը ԺԵ դարի երկրորդ հիսնամյակում 153

Սոցիալական և աղանդավորական շարժում

Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից 355
Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12-14-րդ դդ. 439

Մատենագրության և մշակույթի պատմություն

Ջենոնի «Յաղագս Բնութեան» երկի հայկական թարգմանությունը 469
Հայ և արաբ մշակութային կապերը դարերու ընդմէջէն 547
Դամասկոսի թանգարանի հայկական պատառիկները 553
Հայ արվեստի պատմության կարևոր սկզբնաղբյուրները 577
Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը 591

Հայոց պատմության և մշակույթի հարցերը XIV դարի հիշատակարաններում 605
Թովմա Մեծոփեցի, Դարաշրջանը (կյանքը, գործը, «Պատմու-թյունը») 631
Ժողովրդի հին մշակույթի փառահեղ հուշարձանները 709
Ժողովրդի հոգևոր արժեքները՝ ժողովրդին 717
Հայ բնագիտական միտքը XIV-XVIII դարերում 735
Նաղաշ Հովնաթանի ծննդյան երեքհարյուրամյակը *(անտիպ)* 767
Յովհաննէս Ջուղայեցու հաշւետումարը 777
Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը 789

Գրախոսություններ

Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները 873
Կարապետ եպս. Ամատունի 897
Գ. Խ. Սարգսյան. Տիգրանակերտ 903
Արժեքավոր աշխատություն 909
Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան ժողովրդական երգեր 919

Personalia

Մեծ պատմաբանն ու հայագետը՝ ակադ. Հ. Մանանդյանի ծննդյան 100-ամյակի առթիվ 933
Խոսք Աշոտ Հովհաննիսյանի հիշատակին 939
Մ. Ն. Տիխոմիրով 947

Մեծանուն գիտնականը, հասարակական գործիչը (ակադ. Ի. Ջավախիշվիլու ծննդյան 100-ամյակի առթիվ) 955
Վաստակաշատ արևելագետը 959

Հին և նոր անելիքներ

Մեր նվաճումներն ու խնդիրները հայ հին և միջնադարյան պատմական հուշարձանների հրատարակության բնագավառում *(անտիպ)* 971
Մատենադարանը անցյալում և խորհրդային իշխանության տարիներին 995
Մատենադարանի Մայր Ցուցակի «Հին» ու «Նոր» տարբերակների հարաբերակցությունը և մեր գիտական խնդիրը *(անտիպ)* 1039
Ընդհանուր սկզբունքներ Մատենադարանի ձեռագրերի ցուցակի *(անտիպ)* 1073
Հաշվետվություն Հորդանան և Լիբանան կատարած գիտական ուղևորության մասին *(անտիպ)* 1079
Նկարներ 1105
Ցանկեր 1137

ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատոր Գ

Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան

Համակարգչային շարվածք և ձևավորում՝ Ն. Բարթիկյան, Շ. Ջաղոյան

Պատվեր 16: Չափ՝ 70×100 1/16: Տպաքանակ՝ 500: 70,125 տպ. մամ.:

Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ

Երեւան-9, Տերյան 91

ЗАО "Издательство "Наири"

Ереван-9, ул. Терьяна, 91

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն

Երեւան-9, Իսահակյան 28

Типография издательства "Наири"

Ереван-9, ул. Исаакяна, 91